



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Ա Կ Ս Ե Լ
Բ Ա Կ Ո Ւ Ն Օ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՄՍՏՐԱԿԻՉՈՒԹՅՈՒՆ,
9861-ՂՈՂԳՅԳ

Կազմող՝ Ա. Ս. Քիչոյան
Առաջարանը՝ Ս. Բ. Աղաբաբյանի

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԵՑ

Ի» գրույցներից մեկում, դասնալով Մարտիրոս Թարյանի, Ավետիք Խանակյանն ասել է. «Կովիտասի երգերի և ևս գայների կապուկցույթյամբ խոսում են իբրև այնպիսի հրաշքի մասին, որը անհնարին է արտահայտել խոսքով: Բայց, գիտե՞ս, իմ կարծիքով, դա այնքան էլ հիշատակելի չէ: Հայաստանում կար մի գրող, որի բառերը երգում էին կովիտասյան հանգով և փայլատակում էին ևս կտավների բոլոր գույներով: Այդ գրողը Ակսել Բակունցն է»¹:

Ավ. Խանակյանը դեռ տարիներ առաջ՝ 1934-ին, Փարիզում, կարդալով «Սև ցեղերի սեմնացանք» հավաքածուն, Ակսել Բակունցին հուշակեց ժամանակի հայ արձակի առաջին դեմքը: Այդ շափանիչով էին հրատակված գործությունը գնահատում ևս Դերենիկ Դեմիրճյանը, Մարիետա Շահինյանը, Եղիշե Զարեցը, որը Բակունցի «անհայտ բացակայումի» շարժառիթով ավեց վաստակի խոր ու սպասիչ մեկնաբանությունը՝ «Եվ բառերի համար ևս մարմարյա...» տաղով սկսվող բանաստեղծության մեջ:

Ակսել Բակունցն առասպելի հերոսի պես, բեղավներ մի քանի տասնամյա բնթացում, սովորական գյուղաբնակցից դարձավ հայ մեծ գրող, իր մեծության կենարար հյութերը վերաբաղեցրելով հայոց բնաշխարհի գայներից, հայոց պատմության ծախքերից, հայ ժողովրդի հոգևոր պատկերի խաբքերից:

¹ Ա. Салахян. Как песни Комитаса, как краски Сарьяна. «Литературная газета», 1954, № 132.

Բակունց Ա.
Բ228 Երկեր (Կազմ.՝ Ա. Ս. Քիչոյան: Առաջարանը՝ Ս. Բ. Աղաբաբյանի).— Եր.: Սովետ. գրող, 1986.— 672 էջ.

Ժողովածուում ղեկավարված են «Մթնշաղկ», «Սև ցեղերի սեմնացանք», «Անձրևներ» պատմվածաշարերը, «Սղախաբանական ընկուզենիները», «Կյորես», «Կարմրաբար», «Եռաշառուր Արուսյան» գործերը:

4702060200 (2) 86 «Տ»
705 (01) 86

ՉՄԴ 8427

Ակսել Բակունցը (Ալեքսանդր Ստեփանի Թեոսյան) ծնվել է 1899 թ. հունիսի 13-ին, Գորիս ֆաղաֆում: «Ոսկե մանկության» տարիները, — ինչպես վկայում են համառոտ «Ինֆանկենսագրության» գրանցումները, — անցել են «գարհուրելի շավորության» մեջ, գավառական ֆաղաֆի հասարակական միջավայրում, որ կյանքի գլխավոր լծակներն էին «կուպե-ցի արշիներ և շինվճիկի շիներ»: Նախնական կրթությունն ստացել է Գորիսի ծխական դպրոցում (1905—1910), ապա Գորիսի 152 բնակիչների Հայոց կաթողիկոսին առաջած խնդրագրի շնորհիվ ընդունվել է Էջմիածնի Գևորգյան նեմարան: Այստեղ նա հսկայական հետաքրքրություն է հանդես բերել գիտելիքների տարբեր ճյուղերի նկատմամբ, հատկապես հռոմեական պատմության և հարուստ լեզվի պաշարներով: Գևորգյան նեմարանի աշակերտները, դրանց շարքում նաև Ակսել Բակունցը, խորապես ուսումնասիրում են հնագիտական-միջնադարյան մատենագիրների, բանաստեղծների, վարժագիրների մատյանները, որոնք նրանց առջև պարզում են ազգային մշակույթի գանձերը:

Վերհիշելով նեմարանական օրերը, Բակունցը տարիներ անց գրած մի ակնարկում պատմում է. «Կասի ժամին վարդապետը մեկնում էր «Կորբերացոց բոթի» իմաստը, իսկ աշակերտները, հայր սուրբից ծածուկ, ընթերցում էին ծնկների վրա դրված «Երֆուրտի ծրագիրը»:

Գաղափարական խաչածն ազդեցությունների միջավայրում Բակունցը ննազանդ ֆրիստոնեսական վարժագծից ավելի հակվում է դեպի բմբոստ, աներկյուղ կեցվածք: Դրա արտահայտությունն էր Շուշվա «Փայլակ» թերթում 1915-ին Գորիսի ֆաղաֆազիսի դեմ Բակունցի տպագրած ֆելիետոնը, որը իրարանցում է առաջ բերում համաֆաղաֆացիների մեջ:

Այդ ֆելիետոնի շարժառիթով Բակունցին կալանավորում են: «Ինֆանկենսագրության» մեջ գրում է. «1915—16 ուսումնական տարում գաղթի պատճառով փակվել էր նեմարանը, և ես այդ տարին ուսուցիչ «հրավիրվեցի» Զանգեզուրի Լոր գյուղը: Ամառը ես «չարություն» էի արել, որը և կարելի է հաշվել իմ գրական մկրտությունը, եթե չհաշվենք «Հիմար մարդը» վերնագրով մի հեֆիաթ, որ 1913-ին տպեց «Աղբյուր» ամսագիրը: Այդ ամառ ես ֆելիետոն էի տպել կարծես սոցիալ-դեմոկրատական մի թերթում մեր ֆաղաֆազիսի և գավառական ադմինիստրացիայի դեմ: Ինձ բանտարկեցին, եղավ «փոթորիկ» և ես բանտարկության 34-րդ օրը ազատվեցի, որպեսզի ուսուցիչ գնամ այն հեռու գյուղը՝ Լոր»:

Լոր գյուղի դպրոցում նրանից առաջ ուսուցիչ էր եղել բանաստեղծ Գառնիկ Քալաշյանը, որի բացած նանապահով Ա. Բակունցը լուսավորության հունդեր էր ցանում գեղջուկ երեխաների հոգիներում:

Զորերի մեջ ծվարած Լոր գյուղակը, — ինչպես խոստովանել է Բակունցը, — վիթխարի և վնասական դեր է խաղացել նրա գրական կենսագրության մեջ՝ գյուղական կյանքի և գեղջկական հոգեբանության նանաչողության առումով:

Բակունցի կյանքի ետնեմարանական շրջանը չափազանց ուշագրավ է ազգային փրկության շարժումներին ակտիվ մասնակցություն բերելու փաստերով: Ազատագրական պայքարի ուսմանտիկական պատրաններով վառված պատանիների մեջ էր նաև Ակսել Բակունցը, որը 1917 թվականի ձմռանը հասնում է մինչև Էրզրում, իսկ այնուհետև մասնակցում է Կարսի, Մամախաթունի, Սարդարաբադի նակատամարտերին:

Պատերազմական իրադրությունը առաջին խոր նեղվածք բացեց Բակունցի հոգեկան աշխարհում և նրան բեխարեց ավելի զգաստ հայացքով նայելու անցուդարձին: Այդ օրերի անմիջական տպավորություններով գրած ակնարկներում («Անտառում», «Աշտար», «Աղոթք» և այլն) Բակունցը թեև խեթ հայացքով է գնահատում անառաքաստ շարժումները («Մենք վերադարձանք այդ համփաները նզովելով, այդ համփաները, որ հազար-հազար մատաղ կյանք լափեցին»), սակայն վերին հուսահատության պահերին իսկ պահպանում է հավատը ազգային զարթոնքի՝ սպասվող նոր կյանքի հանդեպ:

«Ինֆանկենսագրության» մեջ Բակունցը կատարել է նաև հետևյալ հղումները. «18—19-ին՝ Երևանում սերպագրիչ և ռեպորտյոր»:

1919—20 թվի հունիսը՝ ուսանող պոլիտեխնիկումի: 20—23՝ ուսանող Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի: 1923-ից հետո՝ ագրոնոմ»:

Խարկովից վերադառնալով Հայաստան, Բակունցը մի կարճ ժամանակ աշխատում է Երևանի սերմնաբուծարանում՝ անվանի սելեկցիոներ-գիտնական Միֆայել Թումանյանի ղեկավարությամբ, այնուհետև դառնում է «բափառական» գյուղատնտես Զանգեզուրի գավառում (1924—26):

Բակունցի Երկրի չորսնաստորյակի չորրորդ հատորում (1984) տպագրված է գյուղատնտեսական գործունեությունը մեկնաբանող մեծաֆանակ էջուր՝ պաշտոնական գրություններ, զեկուցումներ, ագրոգրույցներ, թղթակցություններ, հոդվածներ, նոթեր և այլն, որոնք վկայում են Բակունցի բացառիկ նվիրումը հայ գյուղի սոցիալական զարգացմանը: Լինելով 20-ական թվականների հայ իրականության ուսմանտիկ կառուցողներից մեկը, Բակունցը շնք շեր խնայում գյուղատնտեսական գիտություն-

ներք» քաղված են ֆանական քվականների գյուղի իրականությունից, այն ժամանակաշրջանի, երբ թեև հայոց բնաշխարհը բռնել էր պատմական զարգացման նոր ուղին, այդուամենայնիվ, շատ բանով դեռևս պահպանվում էին հին կենցաղի և հոգեբանության, նահապետական պարելակերպի և նախապաշարմունքների գծերը:

Ինչպես երևում է պատմվածքների սյուժեներից, Մթնածորը մի այնպիսի աշխարհ է, ուր դեռևս միմյանցից չեն անջատվել իրականությունն ու առասպելը, առօրյան ու լեգենդը, ուր մարդն ու արջը ապրում են կողք կողքի, ուր բնության և գյուղի միջև չկան էական տարբերություններ, բնությունը գյուղի մեջ է, գյուղը՝ բնության ծոցում: «Եվ եթե հողերը երկու տարի չվարեն, անտառն իր մեջ կաննի Ահարին, ֆամին լորենու սերմերը շող կտա, թռչունները կաղին կտանեն կտուրների վրա և հանգած բռնի մեջ կաղինն իր արմատները կխրի:

Մի խոսքով մթնածորյան գյուղը բոլոր կողմերով նահապետական, մոռացված, անմատչելի աշխարհ է, այնքան «մոռացված», որ «նամփի վրա կանաչ խոտ է միայն», և այնքան անմատչելի, որ «ժամանակն այստեղ ուրիշ բնթաց ունի, որի նվազ միավորը դարձ է»:

Բակունցն անդրադառնում է, նախ և առաջ, Մթնածորի բնակիչների սոցիալական բշխմանը պատկերներին:

Այս առումով առանձին շարք են կազմում «Մթնածոր», «Օրանջիա», «Տիգրանունին», «Խաղաղացի», «Այու սարի լանջին», «Հանավանք» կենցաղանկարները, հայ գյուղացու ողբերգական կյանքի մեկը մեկից ցրեցող պատումները:

Գյուղացի Վասիլը («Տիգրանունին») այնքան է խեղճացել հոգս ու պարտքի ծանրությունից, որ ձմռան մի գիշեր մտնում դնում է օրագիր պահել՝ դրա մեջ գրանցելով իր կենցաղի մանրամասնությունները:

Հին երազանանի խունացած էջերի վրա Վասիլը գրի է առնում շաբաթվա կարևոր անցքերը, ինչպես, օրինակ. «Մայրս գնացել էր իր եղբոր որդու տունը դռնաղ՝ չորս օրով: Վարսենիկը (կինս) զբաղված էր տանը մանր գործերով: Կովը տվավ 12 գրվանֆա կաթ, Մաղիկը՝ ոչ: Տիգրանունին գնացել էր շաղաց՝ այլուր աղալու, բայց նորաթ շիհեկու պատճառով եկավ տուն: Չէր աշխատում գոմեշը: Բաղալի տղան տվավ իր պարտք՝ վեցը կտա ցորեն: Առա մի բահի կոթ: Եվս մի շաբաթում հավերը 12 ձու անցին, որից 5-ը ծախեցինք, բնդամենը 10 կոպեկ...»:

Հին երազանանը լցվում է թվերով, տոկոսներով, տվյալներով, պակասում են դատողությունը՝ ու զգացմունքի գեղամները: Գյուղացին

այնքան է կրակված իր առօրյա աղբերգության մանրամասնություններով, որ ժամանակ անգամ շունի վերապրելու այդ ողբերգությունը:

Դառնալով սոցիալական բշխման հիշատակագիր, գյուղացի Վասիլը հատկապես արձանագրում է իր ֆրոշ՝ Տիգրանունու հետ կապված անցքերը, որոնք միշտ դրվում են «պարտքի դիմաց» կամ «պարտքի կողմանից» շարակարգության մեջ:

Հարազատ ֆրոշ մահն անգամ ոչ մի ցնցում չի առաջացնում Վասիլի մեջ, և նա «հանգիստ սրտով» օրագրում գրանցում է. «Տիգրանունին մահացավ առանց կարծիքի, տեղոց-տեղ, լավ թաղեցինք, եղավ ծախսը ութ մանեթ փողով, ևս մի փութ գարի տերտերին, զումարով 9 մանեթ 80 կոպեկ: Նաև առի երկու մուս»:

Եթե «Տիգրանունին» պատմվածքում Բակունցն արժարժում է հայ գյուղացուն ծննդից մինչև մահվան օրը ուղեկցող «պարտքի», «տուկսի», «վաշխի» ավանդական թեման, եթե «Խաղաղացի» նա արժարժում է գյուղացու կյանքից անբաժան սնտոի նախապաշարմունքների նշման նույնքան ավանդական խնդիրը, ապա մի շարք պատմվածքներում Բակունցը ներկայացնում է ողբերգության այն տարատեսակը, որի հարուցողը ոչ թե «բռնամանկն է» բնության հանդեպ, այլ բնության անմեացողը, բուռն սերը:

Այդպիսի բովանդակությամբ է ներկայացված ողբերգությունն, օրինակ, «Օրանջիա» պատմվածքում: Սա այն ձորակի անունն է, ուր գյուղացի Մանասը որոշում է կառուցել իր տունը: Գյուղի բնակարարի երեք թե ամենագեղեցիկ հատվածն է («Ամեն զարեան մասերենիներն են ծաղկում, բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ»), ուստի և Մանասի դեմ է հանում տանուտեր Դավոյենց Առաֆելին:

Մինչ Մանասն ապրում է իր բանաստեղծական անուրջների հետ, Առաֆելը հրդեհում է Մանասի տունը և նրան վերագրելով կազակ զինվորի սպանությունը, արտոնել է տալիս «հետավոր տունդրաները»:

Ինչպես պատմվածքի սկզբնամասում, վերջնամասում ևս հանդես են գալիս ծաղկած մասերենները: Այս «հղման» ներքին իմաստն այն է որ բնությունն իր գեղեցկությամբ կործանում է նրանով հմայված ազնիվ հոգիներին: Բանն այն է, որ գեղեցիկ բնությունը՝ կանաչով պատած ձորակը, ձորակում ծաղկած մասերենները, պարզ երկինքը, գյուղական մթնշաղը մի բան են խոստանում, իրական կյանք՝ մի ուրիշ բան:

Բակունցն անդրադառնում է նաև Մթնածորի այսպես ասած «պատմական դիմափկային»՝ նորացման խնդրին, հին գյուղի զարթոնքը ներկայացնելով հերոսների հոգեբանական ներքին գալարումներով, հաճախ

հորի էություն անըմբռնելիությունից առաջացած «անեկզորա» հասնող վիճակներով, ինչպես նաև հորի առջև հեփիաթային զմայլանքի որակով:

Հին և նոր հոգեբանությունների լուս մեծամարտի ցայտուն վավերագիր է «Մքեանորի շարքը» պատումը: Ժայռի պոնկին հստամ մի ալեար ծերունի իրենց գոյության հավիտենական անշարժությանը վարժված շինականներին պատում է ձորերի տեսիլների և նրանց մշտապես համակած ազգնապների մասին: Մերումու ցաֆուցրիվ մտապատկերի մեջ իրար են խառնվում բնությունը, լուսնյակ գիշերը, ձորերի արջը և «բազում շարքեր»: Նրա բորբոքված երևակայությունը նորանոր տեսիլներ է բարդում ասածի վրա, երբ հանկարծ հեռվից լսվում է ձիու ռաճաճայն. «Փողոցում կանգնել էր մի կին, տղամարդու գլխարկով: Կինը պինդ բռնել էր ձիու սանձը...»:

Նոր «տեսիլի» հայտնությունից տազնապած ծերունին թեև շարունակում է Մքեանորի լուսնյակի ու արջերի պատմությունը, սակայն իր իսկ պատումի բնթացի մեջ երևում է նրա շփոթմունքը նորի մուտքի հանդեպ, որը մարմնանում է ֆաղափից եկած ձիավոր հրահանգչունու կերպարանում:

Քաղաքի կինը իր հետ բերում է «ժողովակրթության շունչը», և բնության տեսիլները մղվում են ետին պլան: Պատմվածքի այս հանգույցում ալեար ծերունուն, իբրև Մքեանորի էության մարմնացում, փոխարինում է նոր «տեսիլի» առաջ արբեցած գյուղացի Սաֆանը:

Քաղաքակրթության լրաբերը՝ հրահանգչունին, տակն ու վրա է ածում նրա հոգեաշխարհը, ցրում Մքեանորի միֆական պատկերացումը և Սաֆանին կանգնեցնում Մքեանորի նորացման փաստի առաջ:

Բակունցը ոչ միայն չի հաշտվում հին իրականության հետ, ոչ միայն չի իդեալագործում հին եզերքը, այլև ողջունում է նորի արտահայտությունները Մքեանորում:

Բակունցի արձակի բնորոշ ժողովրդական աշխարհի բանաստեղծական բովանդակության պեղման երակը ես սկսվեց մքեանորյան պատումներից («Ալպիական մանուշակ», «Միքեավ», «Խոնարհ աղջիկը», «Այու սարի լանջին»):

Մինչ արդեն հիշված մքեանորյան կենցաղատեսիլներում Բակունցը դեռևս ինչ-որ չափով գյուղագրական դիրքերի վրա էր, մասավորապես հայ գյուղագիրների հին սերնդին բնորոշ «ժողովրդասիրական» զգացմունքների շարափով, մի շարք պատմվածքներում նա հաղթանակում է գյուղագրության աշխարհայացիքին այդ «սանձաճափակու-

րյունը» և եվանում ժողովրդայնության այն աստիճանը, որի ախուհներին մոտ կանգնած է Հովհ. Քումանյանի ստեղծագործությունը:

Մինչ հայ գյուղագիրների հին սերունդը՝ «Նարոդիկական կտրվածքի» դեմոկրատ-մտավորականները, տեսադաշտի նեղության պատճառով չէր նշմարում գյուղաշխարհի ներքին հարստությունը և, ի վերջո, էլեգիա էր կարդում հայ գյուղի անվերադարձ կորստյան վրա, Հովհ. Քումանյանը նայն այդ ազգագրական եզերքներում հայտնագործեց համամարդկայնության իսկական արժեքները:

Գյուղաշխարհի բանաստեղծական էությունը մարմնացնող կերպարներից է Խոնարհ աղջիկը համաճան պատմվածքից, այն աղջիկը, որի միայն արտաքին նկարագրությունը բավական է պատկերացում տալու նրա հոգու անսահման ֆեֆշության մասին:

Բակունցի մեկնաբանությամբ Խոնարհը ժողովրդական հեփիաթի ռգիացած ներսունին է, ինչպես և ժողովրդական ասֆի ներսուն է «Միրհավը» պատումի Դիլան դային: Սա ապրում է կյանքի մայրամուտը և իր այգու առաջ նստած՝ վերնիշում ամբողջ կյանքը, որի բարձրակետը եղել է Սահայի հայտնությունն իր այգում. «Կարծես հավ էր թափնվել անասուի մթին խորշում: Ապա վիզը երկարեց, ինչպես կախվել դեղնած արտերում խշշուն լսելուց, և մի շահել կին դուրս եկավ սիմինդրի խիտ արտից: Դուրս եկավ, նոնեց բարակ մարմինը, որպես եղեգ և կախվի մանր ֆայլերով սուրաց դեպի հեձանը»:

Կյանքի մայրամուտին Դիլանը նորից վերապրում է սիրո բանկման պանը և ձեռքն առնում հրացանը՝ արճակալով միրհավի հետերով որոնելու իր կարճամեծ սերը: Դիլան դային թեև շատ զարուններ և աշուններ է անցկացրել, սակայն դեռ հին երազների հետ է. «Լինեք այնպես, որ ինքը հեձվոր լինեք, նրանց արտը հնձեք, Սոնան հաց բերեք իրեն, շապիկը ֆրաներ և ֆրանած նստեք կողքին»:

Դիլան դային սիրո հպատակն է, այն սիրո, որը նրան բարձրացնում է երանության գագաթը և ձուլում հայրենի ուշ աշնան, հեձանի, անտառի, ծաղիկների, միրհավի, ոսկեդեղնաձև հյուսերով աղջկա գույներով ողորկված աշխարհի անսահմանությանը:

Բակունցյան աշխարհագրագրության պայմանականորեն ստանձրանաստեղծական երակի» բարձրակետը «Ալպիական մանուշակը» պատմվածքն է, վերին աստիճանի խորունկ և գրավիչ մի պատում, ուր լեռնային Հայաստանի ավերակ բերդերի, ալպիական գլխահակ ծաղիկների, ֆառե արժիվների, բրնձափայլ լեռների, սպիտակ ամպերի շրջեղ ֆանի վրա ներկայացված են բարդ ու հակասական կյանքի դրամաները՝ օգտ-

խի առաջ քննուի պես շոքած գեղջկունու և կորեկի արտուս մանգաղը հուսահատ շարժող հնձվորի դրամաները:

Պատմվածքում երկու տեղ՝ մեկ սկզբում, մեկ վերջում, Բակունցը դիմում է հետևյալ մետաֆորին. «Մողկեփռու մեջ բարախված գունավոր բզեզին մանուշակը նոնք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»:

Ձուգանեռ անցկացնելով բնության և մարդկային կյանքի միջև, այդ հազվագյուտ իմաստալից պատկերով Բակունցը հերժում է նման մակերեսային պատկերացումները կյանքի մասին, կյանքի հիմքը համարելով բարդությունն ու անվերջ կրկնվող հակասությունները:

8

«Մթնանորից» ուլիղ վեց տարի հետո, 1933 թվականին, Հակոբ Կոչոյանի ձևավորումով լույս տեսավ Ակսել Բակունցի մյուս նշանավոր ժողովածուն՝ «Սև ցելերի սերմնացանը», ուր նոր պատմվածքների կողքին տեղ գտան նաև մթնանորյան շարքից մի քանի վերամշակում: Նոր ժողովածուն թեև շարունակում էր «Մթնանորի» թեմատիկական-աշխարհավայցֆային գիծը, սակայն որոշ առումով էլ զարգացնում էր դա՝ հայտնագործելով մարդու «ժողովրդական կերպը»: Մինչ «Մթնանորը» հիմնագործելով մարդու «ժողովրդական կերպը»: Մինչ «Մթնանորը» հիմնականում ներկայացնում էր հայ գյուղի կենցաղակարը, իհարկե, նաև այդ կենցաղի բանաստեղծական խորհերով, ապա «Սև ցելերի սերմնացանի» բովանդակության տիրապետող շեշտը ժողովրդի աշխարհագրագուրության և բնավորության գծերի բացահայտումն է, այսպես ասած՝ «էպիկական կերպարների» վերստեղծումը:

30-ական թվականների բակունցյան ֆենադատական նոթերի մեջ հայտնվում է մի «անակնկալ» եզրակացություն, որը «անուղղակի» կերպով բացատրում է նաև իր ստեղծագործության ներքին կառուցվածքը:

Դռանալով զարգացման հեռանկարին, Բակունցն ասում է. «Որտե՞ղ է ճշգրիտ նախապահը: Վերադարձ դեպի սկզբնաղբյուրները, դեպի ժողովրդական ստեղծագործություն: Ես նկատի ունեմ ոչ թե վերադարձը դեպի ժողովրդական ստեղծագործության արդյունքները, դեպի բանահյուսությունը, այլ ժողովրդական կյանքի իսկական և նոր ակունքները»:

Բակունցն իր այս հրահանգով ամենևին էլ նկատի չունեք բանահյուսական նյութերի և ձևերի, սյուժեների և արտահայտման եղանակների կիրառությունները: «ժողովրդական ստեղծագործության նոր ակունք» բակունցյան բանածեր նշանակում էր աշխարհի և պատմության հան-

դեպ ժողովրդի ոգին խտացնող անհասաների աշխարհավերաբերմունքային կերպ ու վարքագիծ:

Էպիկականության առանձին տարրեր կային նաև «Մթնանորում», սակայն դա գեղարվեստականության հիմնական որակ դարձավ «Սև ցելերի սերմնացանի» պատումներում:

«Սև ցելերի սերմնացանի» պատումների փիլիսոփայական լայն բովանդակությունը հայ ժողովրդի պատմական մաֆաուման և պատմական լավատեսության, նրա ազգային խառնվածքից անբաժան այդ վնասական գծերի արժարժումն է՝ հասցված դարաշրջանի գաղափարական խնդիրների բարձրությանը:

Բովանդակության այդպիսի հարուստ կարելիություններ է կրում, օրինակ, «Լառ-Մարգար»՝ հայոց գյուղերի ավանդական ջրվորի պատումը: Լառ-Մարգարը կյանքի դժվարին նաևապարհներ է անցել՝ «ճամփի փոշին իր մազերի վրա»: Այդ հարկադրական թափառումների ընթացքում նա շատ բան է կորցրել իր ունեցվածքից, սակայն անխաթար է պահել հոգեկան աշխարհի ամենաթանկ արժեքը՝ տոկունությունը, որի հրաշագործ ուժով իր կորուստներից հետո անգամ նա նորից-նոր վարել է հայրենի հերկը, նորից ապավինել է գուրբանին՝ այն բարձր գիտակցությամբ, որ ժողովրդի ապագան գտնվում է նրա զավակների ձեռքին: Հարազատ օջախի ավերումը, սիրելի մարդկանց կորուստները, գաղթի ճամփաներին վրա հասած շարշարանները մի ակնբարթ անգամ չեն քեկել նրա բնավորությունը: Նրա դիմադրողականության սկզբնաղբյուրը, ինչպես մեկնաբանում է Բակունցը, եղել է սերը դեպի արդար աշխատանքը:

Հայրենի գյուղը նա թողեց աշխատանքի ամենատաֆ ժամին. «Կտավատը կապույտ ծաղիկներն էր բացել, ծիրանն արդեն դեղնել էր: Վար էր անում, արորք փափուկ հողում ամուսն ցելի ակունքներն էր ծրում: Երբ մի անգամ էլ դարձավ, աչքն ընկավ արահետին: Մասրենու մոտ պտուղը կանգնել, ձեռքով էր անում»:

— Գեղը խոսվում էր կա, մարդ,— կանչում էր պտուղը:

Եզներն արձակեց, արորք հողի մեջ խրած թողեց»:

Կիսատ թողած վարը Լառ-Մարգարի կյանքի թերևս ամենաողբերգական կետն էր: Այդ դառն հիշողությունն էլ բազմապատկում է նրա աշխատանքային եռանդը արդեն ներգաղթի գյուղում: Լառ-Մարգարը հույսի և կարոտի, տոկունության և բարության հայկական խառնվածքն է: Այդպիսին է նաև նրա տոհմածառի մյուս անդամը՝ արեգահար Հագրոն՝ «Միրանի փողը» պատմվածք-հիշատակարանից:

Հագրոյի կենսագրությունը ես ձևավորվել է ողբերգական հանգա-

մանկներում, բայց նա էլ կառ-Մարգարի նման հանդես է գալիս իբրև հայ ժողովրդի մահաւանդ և հույսերի տարերբ մարմնացնող վեհ անձնա-վորություն, որն իր ծիրանի փողով հնչեցնում է հաշտ ու խաղաղ մարզ-վորություն, որն իր ծիրանի փողով հնչեցնում է հաշտ ու խաղաղ մարզ-վորություն, որն իր ծիրանի փողով հնչեցնում է հաշտ ու խաղաղ մարզ-վորություն, որն իր ծիրանի փողով հնչեցնում է հաշտ ու խաղաղ մարզ-վորություն...

Սրևգահար Հագրոն ևս, ինչպես բախումնայն շատ հերոսներ, մեկ-նաբանվում է իբրև ժողովրդապետ ստեղծագործության բանահյուսական խոր արմատներին հավատարիմ էպիկական բնավորություն, որը կոչված է կյանքի դրամաներից կառուցելու կյանքի էպիկական ներդաշնակությունը:

Այս աշխարհայացքի յուրովի անդրադարձումներն են «Նամակ Լուսայ քաղաքին», «Նորայրության ընկուզենիները», «Սպիտակ ձին», մեկը մեկից ուժեղ պատումներ, որոնց մեջ Բախումնը ներկայացնում է այն գեղջուկներին, որոնք անգամ ամենածանր պայմաններում երևան են բերում խոր մարդկայնության, սպաստական վարձագծի, ազնվական վերաբեր-մունքի հատկություններ:

«Նամակը...» պատմում է հայ գեղջուկներից մեկի՝ Արթին աղոր, հույսի ու նվիրման, հոգեկան շարշարանքի ու մահաւանդ հավատի պատ-մությունը:

Կյանքի երկար և իմաստուն հանապարհ անցած Արթին պապը բեկ շատ շարշարաններ է կրել, սակայն նրա մեջ երբեք չի մթազնել հավատը դեպի մարդը: Այդ հավատով է նա ապրում երկնքի տակ, ինչպես և իր խղճով ու սահմաններ չհանաչող մարդասիրությամբ, բարոյական այն արժույթներով, որոնք ամրացրել են նրա բնավորությունը:

Անգամ ամենադաժան փորձության ժամանակ՝ քաղաքին գրած Քամակից հետո, հոգեկան և ֆիզիկական շարշարանների մեջ Արթին ապերը դարձյալ մնում է հույն մարդասերն ու արդարամիտը, ինչպես եղել է ամբողջ կյանքում:

Ներկայացնելով «քաղաք-Նամակ» հարաբերությունը, Բախումնը շարադրում է հայ գեղջուկների կործանման ողբերգական ընթացքը, որը հշանակում է հույսի և հավատի անվերադարձ փլուզում: Արթին ապերը բեկ դառնում է իր միամիտ հավատի, իր նամակի զոհը, այդուամենայ-նիվ, անգամ մանվան եզրին նրա էության մեջ վերակերկնվում են հույսի ապրումները («Մինչև վերջին րոպեն միամիտ ծերունին հավատում էր,

որ մի օր պատասխանը գալու է»), նա դեռ հավատում է արդարության ուժին:

Մարդկայնության բարձր գազափն հասած կերպար է նաև Արա ա-պերը՝ «Նորայրության ընկուզենիները» պատմվածքից, որը զարհուրելի սովի ժամանակ անձնագոհության և վեհանձնության դասական օրինակ-ներ է տալիս, հետևելով իր իսկ բանաձևին. «Մտոից սիրա մի բարակ կամուրջ է, էն է մարդուն մարդ դարձնողը»:

«Սպիտակ ձին» պատմվածքում ևս կյանքի և գյուղացու հոգեբա-նության անքերի իմացությամբ Բախումնը վերադարձնում է շարժային մարդու ողբերգությունը անարդարության պայմաններում: Այդ ողբերգու-թյունն ավելի է խորանում համաշխարհային պատերազմի ժամանակ: Պատերազմը շրի երես է հանում գյուղաշխարհի հակասությունները, բախման մեջ դնելով մարդու գեղեցիկ երազն ու դաժան իրականությունը, մարդու հույսն ու այդ հույսը խորտակող հասարակական շարիքը: Այս երկու սկզբունքների բախումը պատմվածքում ծավալվում է իբրև հոգե-բանական խոր դրամա:

Բախումնը նշմարություն որոնողների կողքին իր ստեղծագործու-թյան էջերում տեղ բացեց նաև նշմարության մարտիկների, հեղափո-խության զինվորների համար: Դրանք են Բրուտի տղան, Սև ցելերի սերմ-նացանը, Վանդունց Հարությունը, որոնք, զինված գյուղական բազմափորձ նահապետների դասերով, ընդառաջ են գնում հեղափոխության հողմե-րին և իրենց կյանքը նվիրում հայրենի հողի ազատագրությանը:

Դրական կենսագրության երեսնական թվականների հատվածում ևս, ինչպես ֆանտաստիկ սկզբին, Բախումնը նորից անցավ ակնարկային գրառումների, նորից սկսեց վարել թափառական կյանք՝ իմաստավորե-լու իր երկրի նոր երևույթները: Ակնարկը Բախումնի համար ոչ թե ժամա-նակին տարածված «փաստի գրականություն» հրահանգի տուրճն էր, այլ հանապարհ էր դեպի իր գեղարվեստական լայն ծրագրերը:

Բախումնյան նոր ակնարկների մեծ մասը տպագրվեց «Անձրե» գրք-ում. դրանց մեջ էին «Քեռի Դավոն», «Չորերի լույսը», «Անձրեք» և այլն: Ի տարբերություն վաղ շրջանի գյուղական նոթերի ախար հեշե-րանգների, նոր ակնարկները շեշտում են կյանքի հերոսներին՝ դաշտավա-րին և բանվորին համակած հավատի զգացողություններով:

Լուսեղեն ապրումներով է շեշտում նաև հովիվ Մարոյի պատմած «գրույցը» Լենինի մասին:

Ակնարկը Բախումնի միակ «շեղումը» չէ՝ իր գեղարվեստական նա-նապարհից. նույն՝ 30-ական թվականներին նա գրեց գիտական հետազո-

նուր համապատասխան մեջ, միաժամանակ այն պատումն է, որ Բակունցը մարմին է ավել իր էության երկու գլխավոր հասանքներին՝ քնարական ու հեզոնական գծերին:

Արդեն գրվածքի նախաբանային պարբերության մեջ Բակունցը իրարից սահմանագատում է «ազգի» երկու հասանքները. «Քաղաքն ուներ երկու անուն՝ Գորխս և Կյորես: Երբորդ անունը՝ Կորխս, — ապիս էր միայն մի մարդ՝ դեղավաճառ Քյալլա Մատուրը, որը ֆաղաֆում հոչակված էր որպես փրկիսոփա և հին գրքերի սիրահար...»:

Կյորեսը և Գորխսը աշխարհագրական հասկացություններ լինելուց առաջ ըմբռնումներ են, որոնք ներկայացնում են սոցիալական առանձին հասանքների բովանդակությունը: Մինչ «Կյորեսը» ամփոփում է ժողովրդական աշխարհը՝ կենցաղի գեղեցկություններով, ինքնատիպ և բնական ապրելակերպով, բանաստեղծական կողմերով, ազգության զարգացմանը խթանող սկզբունքներով, «Գորխսը» ներկայացնում է ամեն ինչ համահարթող «ֆաղաֆակրթությունը»՝ կենցաղի գորշությանը, բարքերի ապականությունը, բանաստեղծական փայլից զրկված ապրելակերպով: Զանգեզուրյան կենցաղի «երգիծական հովվերգությունը» Բակունցը մեկնագեղում է իբրև պատմական ժամանակաշրջանի անցման դարձակետին, սահմանագծին հատուկ պայթուցիկ ողբերգություն, որը տոնմական կյորեսեցուն՝ որսորդ Մմակի Խաչուն ուրի է հանում Գորխսի դեմ՝ «Քանդվե՛ս դու, Գորխս» էպիկական թափի անձե՛մով:

Պատմելով նանապետական աշխարհի բարոյական արժեքների կորստյան մասին, Բակունցը, իբրև սոցիալական առաջադիմության գերբարձր մասին, Բակունցը, իբրև սոցիալական առաջադիմության գերբարձր, չի դառնում նանաեղող աշխարհի ողբասացը, այլ ասպարեզ է տալիս հոգեւոր այն արժեքներին, որոնք կոչված են կառուցողական դեր խաղալու ֆաղաֆակրթության ապագա ուղիներում:

Այդ արժեքներից առաջին, վճռական տեղում է հայոց ժողովրդական լեզուն, որի բանաստեղծական ներշնչանքը («ի՛նչ չճանալ լեզու էր կյորեսերենը... Չուտեիր ու չսմեիր, այլ միայն այս լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես ֆաղք և նուրբ հեշյուններով խոսում էր լվացարանի Մինան, ասես ոչ թե խոսում, այլ նախարակի առաջ բարակ երգ էր առում...») միանգամայն նպատակալարաց է հեշում բակունցյան ժամանակագրության էջերում:

Ժողովրդական լեզվի փառաբանության հատվածը «Կյորեսի» առանցքներից մեկն է, իսկ պատումի մեջ կան մի քանի այդպիսի առանցքներ, այսպես ասած՝ «երգ-երազի» կառուցվածքներ, որոնք իբրև գործունիության ծրագիր հակադրվում են «տառակներին» վարձագծին:

Այդպիսի առանցքային խնդիր է արդար աշխատանքի, իբրև գոյության հիմքի, սրբազործումը «Կյորեսի» մեջ, որով հողի ազնիվ մշակներն ու պաշտպանները սահմանագատվում են անաշխատ խավից, տեղական «մեծատուններից»: Այս հակադրության համար շատ էական է Աքա ապուր դատողությունների կերպը. «Հայր վար կանի, ծառ կտնկի, շալակով փայտ կբերի, քերծ կփանդի, հայր խեղդ ու կրակ ուհաթ է էս ձորերում բառաչող: Խաչա Բաղիրի ծառանգներն ի՛նչ հայ են, կամ Ավագիմովներն ի՛նչ հայ են, ասենք նրանց պապի անունը հայ է»: Աշխատանքի մոտիվի հետ բակունցյան տարեգրության մեջ հեշում է նաև «հողի կորստյան» մոտիվը, իբրև ֆաղաֆակրթության ավերածությունների հետևանք. «Հողը հողագործի ձեռքից գնում էր և դա անխուսափելի էր, ինչպես մահը, ինչպես մայրամուտը...»: Այնուհետև. «Հեռոհետե տառայանում էր Կյորեսը: Անդունդն էր սուզվում հողագործների ազգը»:

Այս պարբերությունները բնութագրում են պատմական ժամանակաշրջանի ողբերգական բովանդակությունը, այդ հիմքի վրա էլ ծավալելով «ժամանակների և բարքերի» գլխավոր թեման: Բակունցն ըմբռնում էր պատմական ընթացքի ուղղությունը և ժողովրդի ապագա կենսագրության մեջ «վաշխառու-թեյ-չինովնիկ-վանառական-խոչա» կապակցության փոխաբեն տեղ էր տալիս «տավարած-սերմնացան-որսորդ-այգեպան» շարքային:

Դեռ ֆառական թվականների վերջից սկսած Ակսել Բակունցը պատրաստվում էր հանգստե գալու հայ ժողովրդի պատմական-ֆաղաֆակա-նոցիալական կյանքի լայնաշունչ ընդհանրացումներով՝ վիպական կտավներով:

«Կյորես» պատմա-գավառական բռնիկոնից բացի նա գրում էր «Որդի որսուման», «Կարմրաբար», «Խաչատուր Աբովյան» վեպերը, որոնք բողոքն էլ թեև ունեցան առանձին հատվածների հրատարակումներ, բայց մնացին անավարտ:

Մինչ «Որդի որսումանի» վիպական ձևը՝ հերոսի երգիծական ինքնամերկացումն էր, «Կարմրաբարը» ծրագրվում էր իբրև «վեպ-էպոպեա», ուր նկարագրվելու էր հայ ժողովրդի կյանքը կապիտալիստական հարաբերությունների զարգացման դարաշրջանում: «Կարմրաբարից» պահպանված ընդարձակ գլուխները վկայում են, որ Բակունցն այդ կտավի մեջ ամփոփելու էր իր գյուղագիտության-ժողովրդագիտության հարուստ պաշարները, ինչպես նաև լայն գծերով ու խորքերով մեկնաբանելու էր «...գյուղացիների ապագյուղացիացման» (Լենին) պատմական բերքացքը: «Ժողովրդական վեպի» բեկորներից իսկ երևում է Բակունցի ոնախլովի

ուծը՝ գյուղաշխարհի կազմալուծման, ճահապետական կապերի անկման երևույթները բացահայտելիս, վիպական նույն համակարգի մեջ տարբեր պատումային եղանակներն (երգիծանք, հոգեբանական վերլուծություն, քննարկանություն և այլն) ու ռեաբանական-հեղեղանգային միջոցները գուրգույզելիս:

Ակսել Բակունցի անավարտ կտավների շարքում առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Խաչատուր Աբովյան» վեպը, որից «Դեպի լյան Մասիս», «Lieber Armenier» և «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի...» գլուխները տպագրվեցին 1935-ին «Խորհրդային գրականություն» ամսագրի երեք համարներում:

«Խաչատուր Աբովյանը» Բակունցի գրական տարեգրության մեջ երեք վույթ է մի շարք առումներով՝ հայ մեծ լուսավորչի գեահատման հոր դիրքերով, պատմական կամ պատմա-կենսագրական վեպի ժանրի որույթ ըմբռնումներով, արձակի գեղարվեստական զարգացման հոր գծերով:

Բակունցի աշխին Խ. Աբովյանը հայոց պատմության ամենագրավիչ և ամենագեղիչ կերպարն էր. «Հիանալի ֆիգուրա՝ ոչ միայն իր գրական նշանակությամբ, այլև իր կյանքով»:

Այս ըմբռնումն էլ, հավանականորեն, Բակունցին կանգնեցրեց Աբովյանի կյանքի վիպական պատկերման խնդրի առաջ:

Մինչև վեպը Բակունցը հանդես եկավ Աբովյանի հարյուրամյա «առեղծվածին» նվիրված աշխատությամբ (1932), որն ունի հետևյալ վերնագիրը՝ «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» (գրված արխիվային հոր վավերագրերի և անհայտ նամակների հիման վրա): Սա սովետական ժամանակաշրջանում լույս տեսած առաջին գիրքն էր հայ մեծ լուսավորչի մասին և նշանակալից էր Աբովյանի աշխարհայացքի գեահատման առումով:

Բանն այն է, որ և՛ անցյալում, և՛ հոր ժամանակներում Աբովյանը մեկնաբանվել էր ամենատարբեր դիրքերից, և նրան էին վերագրվել մտայնություններ, որոնք բնավ չէին համապատասխանում իրականությանը:

Աբովյանին վերագրված բազմաթիվ միֆերի կողմին կար նաև նրա դերի նշմարիտ գեահատությունը, որով նրա ստեղծագործությունը և աշխարհայացքը կապվում էին հայ դեմոկրատիայի արմատական շահերի հետ: Մայր առեղծված ժողովրդի «մտածմունքներից»՝ ժամանակակիցների գրույցներից այդ տեսակետը Գ. Գոռչյանի և Մ. Նալբանդյանի, Սա. Ոսկանի և Ղ. Աղայանի ուղեգծով հասնում է մինչև Հովհ. Քումանյան և Ավ. Խաճակյան, Վ. Տերյան և Սա. Շահումյան:

Նույն ուղղության լույսի տակ էլ Բակունցը անդրադառնում է Աբով-

յանի ժառանգությանը՝ նրա վրա գցելով պատմական երկու դարաշրջանների լույսը. մեկ՝ Աբովյանի ժամանակի, մեկ՝ իր ժամանակի:

Բակունցի գիտական հետազոտությունն ունի ծանուրության երկու կենտրոն՝ Աբովյանի «անհայտ բացակայումի» «գաղտնիքների» բացահայտումը և Աբովյանի աշխարհայացքի հայտնի գեահատականների վերանայումը:

Դիմելով արխիվային փաստաթղթերին, Աբովյանի նամակներին և հիշատակարաններին, ժամանակակիցների մեմուարներին և ժողովրդի մեջ շրջող ավանդույթներին, Բակունցը առաջադրեց «փախուստի» վարկածը (Արաֆսի մի ավից մի խումբ գյուղացիների հետ տեղափոխվեց Արաֆսի մյուս ավիլը), որն այնքան անհամոզիչ էր, որ պատմաբան Աշ. Հովհաննիսյանի բանավեճային «Խաչատուր Աբովյան» (1933) գրքում որակվեց իբրև «վիպական-քելետրիստիկական» տեսակետ: Բայց, ի տարբերություն նույն Աշոտ Հովհաննիսյանի, որը Աբովյանի գաղափարական պարոսը հանգեցնում էր ցարիզմի գաղութային էֆսպանսիայի գովաբան և կովկասահայ բուրժուազիայի «ինտերեսիների» մեծարանքին, Բակունցը նորանոր վկայակոչումներով Աբովյանին տեղադրում է հասարակության պլեբեյական շերտերի՝ գյուղացիության, վերածնության երազների շրջագծի մեջ: Աշխարհայացքի գեահատման կետում իրավացին Բակունցն էր:

Նրա գիտական ուսումնասիրությունը, ամենայն հավանականությամբ, խոր հետախուզություն էր պատմության ուղիներում՝ ավելի ճիշտ ըմբռնելու համար Աբովյանի անձն ու գործը:

Այդ աշխատությունից վիպական կտավ անցան և՛ գաղափարական համապատասխան կողմնորոշումներ, և՛ արժանահավատ, ստուգված փաստեր: Հրապարակված վիպային հատվածները վկայում են Բակունցի արտակարգորեն ջանադիր աշխատանքը փաստաթղթերի և ձեռագրերի վրա:

Վիպական կառուցվածքի մեջ պատմական փաստերի նշանակության, ինչպես նաև պատմաբանի ու գեղարվեստագետի խնդիրների տարբերությունը ցույց տալու համար անհրաժեշտ աղբյուր է «Տարաս Բուլբայի» քարզմանությանը կցած բակունցյան առաջաբանը:

Բակունցը գրում է. «Տարաս Բուլբայի» մեջ հիշատակված հերոսներից շատերը ոչ միայն պատմական անձնավորություններ են, որոնց մասին Գոգոլը տեղեկություններ է փոխել հին տարեգրություններից, այլ ոմանք եղել են հեղինակի նախահայրերը և նրանց մասին ավանդել է տոհմական ֆրոնիկան... Գոգոլի ստեղծագործության համար պատկերների, ռեի և նյութի անսպառ աղբյուր էին այն անգիր վեպերն ու գրույցները.

որ նա լուսն էր բանդուրիսաներից և շնորհալի պատմող ծերունի կողակներից...»:

Իրապատում հիմքերի կողքին Բակունցը նշում է նաև գեղարվեստականության պարագան. «Նրա (Գոգոլի—Ս. Ա.) հանճարեղ երևակայությունը պիտի ստեղծեր և հագնեար այն ամենով, ինչ ամենից չհնազն է «Տարաս Բուլբայի» մեջ. ստեպը՝ արևով ողողված, նրա անսահման հարթությունը, որտեղ Գոգոլի երևակայությունը, ինչպես սանձակոտոր նրժույց, կարող էր անարգել խայտալ. նա կարող էր նախել ինչպես հպարտ ուրու, նա հողմի նման կանցներ Գնեպրի առափնյա եղեգների վրայով, վարար շերի հետ, կաղմկեր Սև ծովի վրա և կհրդեհներ ծովը: Ռուս գրողներից և ոչ մեկը չի բողել այնպիսի էջեր, որտեղ լիներ այդքան արև, այդպիսի սանձաճակ տաբեր և այդ տաբերի նման դյուցազուններ»:

Զափազանց մեծ տեղ ապով պատմական փաստերի արժանահավասարյանը, Բակունցը նաև այն մտքին էր, որ փաստի կողքին պետք է հեշեցնել դրա ոչ «փաստացի», այսինքն գեղարվեստական հատկությունը: Այս առումով ցայտուն օրինակներ են վեպի երեք հատվածներն էլ, որոնք, ինչպես վկայում են բաղդատությունները, ունեն փաստերի ամուր հիմք և միաժամանակ ենթարկված են գեղարվեստի օրենքներին: Կարելի է ասել, որ Բակունցը սկսում է իբրև պատմաբան, բայց այնուհետև «հերժում է» պատմաբանին՝ իր գեղարվեստական խնդիրները լուծելու համար:

Իսկ ո՞րն է նրա գեղարվեստական խնդիրը:

Ոչադիր հետևելով անավարտ վեպի հատվածների ներքին կապերին, զժժար չէ նկատել, որ դիմելով Արովյանի կերպարին, Բակունցը ցանկացել է հիմնավորել հայ իրականության մեջ այն անհատի հայտնությունը, որը պետք է ազդարարեր ազգային զարթոնք:

Չարբանի ազդարարը, Բակունցի մեկնաբանությամբ, նաև ողբերգական անհատականությունն էր՝ իր գործի հեռանկարների մեջ:

Ողբերգական հերոսի տեսակետի գեղարվեստական յուրացումներն են և՛ վեպի «Վեպի լյառն Մապի» նախերգանքը, և՛ հայ գյուղի իրադրությունը ներկայացնող «Գործ Մայրանա...» հատվածը, և դորպատյան միջավայրի նկարագրությունները, բայց ոչ էլ հասցված մշակվածության բարձր աստիճանի:

Բակունցի վեպը նորարարական գծեր էր բերում հայոց պատմավեպի շարժման ավանդական ուղղության մեջ, հատկապես ժանրային կառուցվածքի և արտահայտման ձևի տեսակետից: Հերոսական պարեպիկայի և բարձր հանդիսավարության պատմավեպի 19-րդ դարի ավանդույթին Բա-

կունցը «հակադրեց» վեպի մի նոր կառուցվածք, ուր նախորդների պատմական բնագծումներին և մասշտաբային պատկերումներին փոխարինում են հոգեբանական սուլումները և «կյանքի հոսանքի» պատկերագրումները:

«Նաչառուր Արովյան» վեպի բեկորները վկայում են հազվագյույս գրական վարպետություն և ոսկերչական ներույթան հասած լեզվա-աճական մշակույթ:

Ա.Վ. Իսահակյանը 1934-ին գրում էր. «Նրա ստեղծագործությունների վրա,—բեն որոշ շափով ազդված Կնուտ Համսունից,—անհատական կերիք է դրված, այնքան բարձր են և ինքնուրույն, և զգացված ամեն մի պատկերն ու արտահայտությունը: Ձեղուն, խորունկ լիբիզմով տոգորված են նրա պատմվածքները, առանց ոտքի տակից կորցնելու իրականության հողը, և նրանց վրա ծփում է բնության մեծ Պանի հզոր շունչը:

Զարմանալի գեղարվեստական-օրգանական կերպով կատարված է նրա ստեղծագործության մեջ ենթակայականի և առարկայականի ներդաշնակ ձուլումը:

Հզոր է Ակսելի մեջ բնապաշտական (պանթեիստական) զգացողությունը: Նա ապրում է, զգում է հողը, տարերքը, եղբայրական մի բուրույթյամբ համակված է դեպի բույսերը, բույուները, կենդանիները...»:

Թափ առնելով ազգային բնապաշտության մեծահարուստ ավանդուրից, որի սկիզբը հասնում է մինչև Նաչառուր Արովյան (Իսկ եթե վեր առնենք դարերի ծածկոցները՝ մինչև Գր. Նարեկացի և Կոստանդին Երզնկացի), և այդ ավանդուրից համապարելով իր իսկ ներաշխարհում խոր նրսավածքներ աված բնության անմիջական, «փորձային» տպավորություններին, Ակսել Բակունցը վերստեղծեց բնության իր արվեստանոցը, դրա մեջ տեղադրելով աշխարհի և մարդու կապերի իր յուրօրինակ պատկերացումները: Կարելի է ասել, որ նա բնության մեջ մոդելավորեց իր կյանքային կոորդինատները, բնության մեջ «ծրագրեց» աշխարհի իր փիլիսոփայական կառուցվածքը, իր, այսպես ասած, «հոգեկտն տիեզերքը»:

Իրապես, Բակունցը հափշտակված է եղել Կնուտ Համսունի երկերով, հատկապես «Պանը» պոեմ-վիպակի իսահակյանական քաղցամուրյամբ, որոշակիորեն կեել է նրա նրբանյութ, բավշային, հեթիաբային ռեաձեերի տղոցությունը, բայց ինչպես պարզում է Բակունցի երկերի գաղափարաթառախական «կտրվածքը», նրա աշխարհայացքը ավելի ազգային-հոգային ներշնչանքների ծնունդ է, քան օտար գրականության պատվաստ:

Կնուտ Համսուներ, ինչպես նրա վաղ շրջանի ստեղծագործությունը մեկնաբանում են արևմտաեվրոպական գրականության պատմաբանները, սարսափով և հարցականներով էր նայում «Նոր Դարին» և բնությունը հակադրելով կապիտալիստական արշավանքին, «բնական կյանքի» ազատությունը՝ «ֆաղափակրթության» ավերածություններին, հանդես էր գալիս «նոր ուսուցողականության» պատգամներով:

Դիմելով ֆրանսիական մեծ փիլիսոփայի գաղափարական զինարանին, Համսուներ ևս այն մտքին էր, որ արարիչը (բնությունը) ամեն ինչ ստեղծում է կատարյալ տեսով, իսկ Նոր Դարի ֆաղափակրթությունը աղավաղում է գոյության կատարյալ ձևերը, մարդուն դարձնում է դիմագրկված ուրվական:

Դարի այս էական հակասության լուծման բանալին Համսուներ համարում էր վերադարձը դեպի բնության պարզությունը, դեպի «դիցաբանական սազաների» շրջանին բնորոշ անտառային հովվերգությունը:

Ռուսոսոցիալականության համսուսյան տարբերակի կրողն է «Պանը» վիպակի լեյտենանտ Գլանը՝ նորվեգական ծովաժայռերի, անտառների, մարգագետինների մեջ ապաստանած միայնակ ու թափառաշրջիկ հերոսը, որը հեռացել է դեպի «կանաչ աշխարհը»՝ այնտեղ մարմնավորելու իդեալական կյանքի իր անուշաբերը: Բնության անդորր, խաղաղ անկյունների հետ լեյտենանտ Գլանի առնչությունները երեւում, փխրում առնչություններ են՝ ավելի զգացմունքային, քան բնական: Դրանք նաև կյանքից հեռացած փախստական անհատապաշտի առնչություններ են:

Բակունցի աշխարհագրագիտությանը միանգամայն խորք է մարդու կրավորական կեցվածքը բնության առաջ: Նրա պատմվածքների հերոսները ծերադրում են բնության առաջ, իրենց էությանը ձուլվում բնության ձևերի մեջ, բնությունից ֆաղում իրենց բնավորության ամբողջականության տարրերը՝ կարոտ, երազանք, բարություն, մարդասիրություն: Իր դավանանքով Բակունցը բնության և մարդու միասնության փիլիսոփան ու բարոյախոսն է, ասել է թե՛ նա մարդուն դիտում է ոչ թե իբրև բնությունից անջատ կենսաբանական արարածի, այլ բնությանը ձուլված, բնության հավերժության շունչը իր մեջ կրող անհատականության:

Սա, իհարկե, ոչ միայն նոր հայացք չէր «մարդ-բնություն» իրադրության մեջ, այլև շատ հին, մինչև մարդկության անտիկյան հասակը խորացող դավանանք էր՝ բնափիլիսոփայության, որը 19-րդ դարավերջին և 20-րդ դարում բուրբուկվեց նոր թափով՝ իբրև հասարակական որոշակի հոգեբանության, ավելի ստույգ՝ բնական հոգեբանության արտահայտման ձև:

Ակսել Բակունցն իր ամբողջ ներքին էությանը դիմադարձ լինելով բնությանը, նրա մեջ տեսավ, առաջին հերթին, մարդու դաշնակցին, մարդու ուսուցչին, բարոյական դասերի խորհրդատուին, մարդու ամենահարազատ, արյան պես հարազատ տարբեր: Բնության բակունցյան աշխարհայացքն ունի մի քանի առանցքներ, այսպես ասած՝ էպիկենտրոններ: Դրանցից մեկը հայացքների կոսմոգոնիական-պանթեիստական ուղղությունն է, որով Բակունցը բնոգոնության եզրեր է հայտաբերում Մարտիրոս Սարյանի գեղանկարչության հետ, ուր վաղ շրջանի «Հեփաթենբից» սկսած մինչև ամենավերջին շրջանի «Նաայուրմուրտային» վրձնահարվածները, աշխարհը ներկայացվում է իբրև ֆանտաստիկական, զարմանահրաշ տեսիլների մի անսահման շրթա, իբրև կերպարանափոխությունների պեսպեսություն և տարասեռ մասերի ներքին կարգ ու համաձայնություն: Այդպիսին էր նաև Բակունցի բնկալումը՝ մարդուն իբրև տիեզերքի մաս և շարունակություն դիտելու նրա հայացքը, որով էլ թերևս բացատրվում է երկու մեծ արվեստագետների խոր, ներքին համակրանքը միմյանց հանդեպ (դրա արտահայտությունն էր Ա. Բակունցի և Մ. Սարյանի համատեղ այցելությունը Գորիս՝ գրողի ծննդավայրը՝ 1934-ին, այն այցելությունը, որը պսակվեց մի շարք գանգեզուրյան բնապատկերներով և Բակունցի մոր՝ Բոխնազյուլի դիմանկարով):

Առանցքային մտնեա է Բակունցի ստեղծագործության մեջ պարբերաբար երևացող անտրոպոմորֆիզմի ժողովրդական տարբերակը՝ բնության երևույթների մեջ հոգեկան գծեր տեսնելու նրա առանձնակի վերաբերմունքը: Այդ հայացքի դասական ներշնչանքն է, օրինակ, «Միրհավը» պատմվածքը, ուր այնպես են նկարագրված այգին, հնձանը, արևակալը միրհավը՝ իր ոսկեփետուրներով, որ սրանք երևում են մարդու կերպարանքով և ասես թե ամբողջացնում են Դիլան դայու հոգեկան աշխարհը: Առանց «մարդակերպ» բնության այդ աշխարհը կլինեք թերի:

Բնապատկերային գեղանկարչության հազվագյուտ ձիրքի ուժով Ակսել Բակունցը վերածարժեց ազգային բնությունը՝ իր հողերով, լեռներով, ծառ ու ծաղկունքով, երկնքով ու ամպերով, անձրևներով ու ամպրոպներով, անտառներով ու մարգագետիններով, թռչուններով ու կենդանիներով, բնության մյուս տարրերով: Եվ այդ ամենը նա մատուցեց ոչ թե իբրև սոսկական վերատպություններ, այլ անհատական և փիլիսոփայական վերաբերմունքով, ժանրային տարբեր ձևերի ու ոճերի մեջ:

Ակսել Բակունցին ձուլած իր հայտնի բանաստեղծության մեջ Եղիշե Զարեհը գեանատական-բնութագրությունների կազմում առաջին տեղը

իրավացիորեն տալիս է Քառին. «Եվ բառերի համար քո մարմարյա, հնամենի, բարյան, որպես մեր հին փարաֆանդակ մատուռների անջնջելի գրե-րը հնադարյան...»:

Քեկ ամբողջովին բարսխված ազգային գրականության դարերից եկող ավանդների շնչով, Ակսել Բակունցն, այնուամենայնիվ, ասպարեզ էր մտել նաև «նոր արձակի», արտահայտման նոր լեզվի բարենորոգչական ծրագրերով: Նրա առաջ, բնականաբար, ծառայեցավ բարենորոգումների հիմքի ու հիմունքների խնդիրը:

Հազվագյուտ մի բափանցումով «նոր արձակի» արարման հիմք էա համարեց ոչ թե ձևաստեղծույթ, «արհեստի հնարանքները», գրելա-կերպի տեխնիկան, այլ Քառը՝ դրա հետ կապելով արձակի մյուս տար-րերի, կառուցվածքային-ոճային խնդիրների հիմնավորումները: Ոչ թե բառարանային լուռումունջ, շեզոֆ ու անշարժ բառամիավոր, այլ ժողովրդական խոսքի կենդանի տարերք:

Իրապես, Բակունցի լեզուն հայ գեղարվեստական գրականության լեզ-վի մեծ շղթայի կարևոր օղակներից մեկն է, բնաշխարհիկ ոգու և շնչի, ձևավորական լեզվամտածողությանը լիովին ստորադաս մի մշա-կայթ:

Լինելով ռեալիստական հայ արձակի բարձր աստիճանի՝ «սինթեզ-ների ռեալիզմի» գեղագետը, Բակունցը մարդու և միջավայրի ռեալիստա-կան գեղումները շրջանակում է մի «նոստալիզիկական շեղումով», որի բուն իմաստը հրաճալի է ձևակերպել Ավ. Իսահակյանը՝ «այնպես նուրբ են, կար-ծես հեփիաթ ես լսում, երազ ես տեսնում, այնպես կախարդորեն հալ-վում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա և իրական ներկան դառնում է երազ»:

Հայ գրականության պատմության էջերում Ակսել Բակունցի համար շատ կային եփիստական, սիրելի անուններ. 5-րդ դարի պատմագիր Եղի-շեփց մինչև 20-րդ դարի մեծ բանաստեղծ Եղիշեն նրան բաշխել են իրենց հոգու լույսն ու ժողովրդանվիրումի սրբազան պատգամները, ժողովրդա-գիտության ու հայրենասիրության դասերը:

Չնայած «հայոց մեծերի» բերած նպաստին, Բակունցի համար ամենապաշտելի կերպարը եղել է ազգային ինքնության գյուտարարն ու ազգային վերածնության համբավաբեր՝ Խաչատուր Աբովյանը, որի վա-

ռած կրակները մեկ հարյուրամյակ անց բոցավառվեցին նաև Բակունցի հոգու մեջ: Իր հզոր նախորդի պես Ակսել Բակունցը ևս այրվեց սիրո և եվիրումի, հավատարմության և երազի, տագնապի և հերոսության բոցե-րի մեջ, մի անգամ ևս հաստատելով իր մոխիրներից վերակենդանացող թռչունի «հրաշալի հարության» լեզենդը:

Նրբ «լեռան գյուղերի ամենալավ մարդը» հեռացավ աշխարհից, այդ գիշերն իսկ ժողովրդական ծովացած արցունքը «սրբագործեց մի ոսկյա առասպել»՝ Բակունցին տեղ տալով հայոց պատմության մեծ պատգամա-խոսների շարքում:

ՍՈՒՐԵՆ ԱՂԱՔԱՐՅԱՆ

ՄԹՆԱՉՈՐ

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում: Մակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել: Մառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են ընկնում, սուլում են շորանի պես, ոռնում են գայլերը, դունչը լուսնյակին խաղում, սուլում են շորանի պես, ոռնում են գայլերը, դունչը լուսնյակին մեկնած, վարազները ծանիթով փորում են սև հողը, աշունքվա փտած կաղիներն ծողովում:

Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի: Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զզում իրեն, ինչպես արջը մեր օրերում: Գուցե այդպես է եղել աշխարհն այն ժամանակ, երբ քարածուխի հսկա շերտերն են գոյացել և շերտերի վրա պահել վաղուց անհետացած բույսերի ու սողունների հետքեր:

Հիմա էլ Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլիզներ կան, մարդու երես շտեսած, մարդուց երկյուղ չունեցող: Պառկում են քարերի վրա, արևի տակ. ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարկում փորի մաշկը, թույլ երակի պես, կարող եք բռնել նրանց: Խլիզները Մթնաձորում մարդուց չեն փախչում:

Բարձր են Մթնաձորի սարերը. դրանից է, որ ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին: Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնաձորում ստվերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խաղարկ է լինում, արջերը որսի են դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր խմելու, իր որջի առաջ գլի ոռնում է գայլը, ոռնոցը հազարբերան արձագանքով զրնգում է Մթնաձորում:

Գիշեր է դառնում, և գիշերվա հետ որսի են ելնում Մթնաձորի բնիկները: Արջը տանձ է ուտում, իրար թաթով են տալիս, թավալզոր են լինում շոր տերևների վրա, դարան մտնում, հենց որ զզում են վայրի խոզերի մոտենալը: Արջը գիտե վարազի ծանիթի թափը, նախահարձակ չի լինում: Եթե տկար մի խոզ ետ մնա մյուսներից, արջը թաթի մի հարվածով ճեղքում է փափուկ վիզը, մի երկու պատառ լափում, լեշը ծածկում շոր ցախով ու տերևներով, քար դնում վրան, փնթփնթալով հեռանում, մինչև լեշը հոտի:

Եթե հանկարծ վարազները լսեն ետ մնացած խոզի ճիչը... Սրածայր թրերի պես շողշողում են ծանիթները, անշնորհք շարժումներով արջին մնում է բարձրանալ կաղնու վրա: Կատաղի ձիերի պես վարազները վրնջում են, ծանիթներով ակոսում կաղնու տակ, զարկում ծառի բնին: Մթնաձորի ծերունի անտառապահը մի գարունքի տեսել է վարազի կմախքը, ծանիթը մինչև արմատը խրված ծառի բնում, ծառի ճյուղի արանքում արջի սատկած քոթոթին:

Վայրի վարազի պես էր անտառապահ Պանինը: Մի հրեշ էր նա, անտառապետի տարազով, կոկարդով գլխարկը գլխին: Անտառում հանկարծ կերևար, փայտահատի կողքին կկանգներ, կնայեր, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը: Մեկ էլ, թաքստոցից դուրս կգար, կմոնչար այնպես, որ արջերն էլ էին քնից զարթնում և որջերում մոռում: Լեզապատառ փայտահատին մնում էր կամ փախչել, կամ օձի պես ծովառետի Պանինի մտրակի հարվածների տակ:

Պանինը որսորդ էր: Վեց շուն ուներ, մեկը մյուսից կատաղի: Շների հետ որսի էր գնում Մթնաձորի խորքերը: Չմոռն լուսնյակ գիշերներին, երբ վախից ոչ ոք չէր մոտենում Մթնաձորին, Պանինի շներն անտառի բացատում արջի հետ էին կոխ կենում, կամ հալածում էին խրտնած պախրային: Պանինը վազում էր շների հետևից, հրճվանքից ճչում: Գիշերվա որսը նրա համար հարազատ տարիք էր:

Առավոտը բացվում էր, ձյունի վրա արյան շիթեր էին երևում, այստեղ-այնտեղ խառնիխուռն հետքեր. խեղդված գայլի դիակ, կոտորատած ձզներ: Մի փշակի մոտ նստում էր Պանինը, մինչև շները որսի միսն ուտեն:

Նա սպանած և ոչ մի կենդանու ձեռք չէր տալիս և շներին կշտացնելուց հետո վերադառնում էր տուն: Եթե ճանապարհին տեսներ մեկին գողացած փայտը շալակին, Պանինի շները պիտի հարձակվեին նրա վրա, հալածեին, մինչև քափ-քրտինքի մեջ կորած, արյունվա մարդը կարողանար մի տեղ պատսպարան գտնել:

Այսպես էր Պանինը: Նրա սարսափը հեռունեբում էր տարածված, նրա մասին բերնե-բերան պատմութիւններ էին անում: Այժմ որ չգրեաք ոչ նրա ազգութիւնը, ոչ հավատն ու ծագումը: Ասում էին, որ նախկին սպայ է, մարդ էր սպանել, նստել էր բանտում, հետո անտառ գնացել: Հյուսիսի անտառներից մեկում նա իր կնոջն էր սպանել որսի մի գիշեր, ավելի ճիշտ՝ շնեքին հրամայել էր գզգզել կնոջը:

Այդպես էին պատմում անտառապահ Պանինի մասին:

* *

*

Գլուղում Ավին լավ որսորդի համբավ ուներ: Տան ապրուստի մի մասը նա Մթնածորի խորքերից էր հոգում: Բացուսնեբում մթրհավ էր որսում, արտեքի մոտ կաքավ ու լոր, Թակարդ էր լարում աղվեսի համար, երբեմն էլ Մթնածորի խորքերն էր գնում, ժամերով նստում քաքի քամակին, մինչև վարազները շրի գային:

Ավին նշանը ճիշտ էր բռնում, բերդանի գնդակը վարազի ճարպոտ կողքին մեծ վերք էր բացում: Վարազը Թաղալգոր էր լինում, ցավից ժանիքներով հողը փորում, արմատներ պոկում, հետո խոտոցով գետինը ընկնում:

Սվ եթէ Պանինից երկուդ չէր տնում, կամ տեղյակ էր լինում, որ անտառապահը Մթնածորում չի, շոր ցախերից էլ մի շալակ էր անում, ծածուկ մի տեղ պահում՝ գիշերով տուն տանելու համար:

Այդ օրն էլ նա որսի էր գնացել: Թարմ հետքեր կային ձյունի վրա: Ավին մի հեաքով գնաց և հենց որ բլրակի գլուխը բարձրացավ, տեսավ երկու աղվես: Մինչև կրակելն աղվեսները փախան: Այդ Ավու համար վատ նշան էր, որը հաշոդ չպիտի լիներ: Մի քիչ էլ ման եկավ, պախրայի հետք տեսավ, փնտրեց ու չգտավ: Սվ որովհետեւ այդ օրը Պանինը անտառ չպիտի գար (նա լսել էր, որ անտառապահը հրվանդ է), Ավին գերազան համարեց մի շալակ ցախ տանել տուն:

Երկնադեմ էր արդեն, երբ Ավին շալակի ցախը գրեց քարին, նստեց մի կոնդի՝ մի քիչ շունչ տանելու:

Որսի մի շուն երևաց, հոտոտեց Ավուն, անցավ: Ավու շունը փորձ ընկավ: Երեսաց երկրորդ շունը, երրորդը, շնորի հետեից էլ Պանինը: Ասես գետնի տակից բռնաավ:

Մեկի դեմքը քաթան էր, մյուսինը կարմիր ճակդեղ: Պանինը Թրտեց, որպես Մթնածորի արջ: Սվ երբ բարձրացրեց կնուրը, Ավին էլ մեղքը ծոց, գլուխը ձեռների մեջ առավ: Ավուն Թվաց, Թե Պանինի ձեռ-

քը քարացավ, կնուրը սառեց ձմռան իրիկնապահի ցուրտ օդում: Պանինը կնուրը ետ քաշեց, և երբ Ավին գլուխը բարձրացրեց, նրան Թվաց, Թե Մթնածորում մի սատանա է քրքրում:

Նրկընտրանքը տարօրինակ Թվաց Ավուն: Կամ քան ուրիշ տուգանք անտառից փայտ գողանալու համար, կամ էլ Մթնածորի մի արջ սպանել: Սվ երբ Պանինը մի անգամ էլ կրկնեց իր առաջարկը, շրթունքները ետ տարավ ու խուլ ծիծաղեց: Ավին տեղից վեր Թռավ, ցախը Թողեց և եկած ճամփով ետ գնաց դեպի Մթնածոր: Անտառի և ոչ մի արջ Պանինի տուգանքի գինը չուներ:

Ավին նայեց բերդանի պատրոններին, չուխայի փեշերը հավաքեց գոտու տակ, փափախը պինդ կոխեց գլխին: Նա ձյունի վրայով նույնքան Թեթև էր քայլում, ինչքան արջը չոր տերևների վրա:

Մի անգամ ետ նայեց Ավին անցած ճամփին. ոչ Պանինը երևաց, ոչ էլ շնեքը: Լուսնյակը մեծ ձյունագնդի շափ լույս էր տալիս, արտացոլում էր լուսնի լույսը ձյունի բյուրեղների մեջ: Ավին պարզ տեսնում էր ծառի բնիքը, եկած ճամփան, ընկած հաստաբուն գերանները:

Իջավ ձորք, լսեց, Թե ինչպես սառույցի տակ խոխոջում է ջուրը: Զրի ձայնը նրան հիշեցրեց եռման կաթան, տունը, վառած օջախը: Տանը երևի սպասում են արդեն:

Հետևից ճյուղի կոտրվելու ձայն լսեց: Թվաց, Թե ձյունի ծանրոցից մի ճյուղ շարվեց: Վեր բարձրանալիս Ավին զգաց, որ մեկը հետևում է փրկելու: Փախչեց, մի մարդաբոյ արջ էր կանգնել մի քիչ հեռու, ճյուղն ուղիղ, շարանի մահակի պես:

Ավին բերդանը մեկնեց, և երբ արջը Թրտեղով դեն պցեց ուսի փայտը, շորքոտանի դարձավ, բերդանը որոտաց, կրակոցի ձայնին ձորերն արձագանք տվին, ծառի ճյուղերից ձյուն Թափվեց: Արջը ոռնաց: Բերդանի ծխի միջոց Ավին տեսավ, Թե ինչպես արջը մի ոստյուն արեց, Թաթերը բերդանի փողին մեկնեց:

Մթնածորում սկզբից անհավասար մի կոնվ մարդու և գազանի մեջ: Արջը Թաթովն էր տալիս, աշխատում գետնով տալ մարդուն: Ավին մի ձեռքով պաշտպանվում էր նրա հարվածներից, մյուսով փորձում բերդանի փողը արջի երախի մեջ կոխել, կրակել մի անգամ էլ:

Մասն էր լինում արջը հետևի ոտների վրա, ձյուն շաղ տալիս, ընկնում, բարձրանում: Հանկարծ արջը բերդանի փողը բերանն առավ, սկսեց կրծոտել: Ավու ձեռքը սահեց բերդանի վրայով, մատը բնազդաբար սեղմեց կեռ երկաթին, բերդանը մի անգամ էլ որոտաց: Արջը ոռնաց առաջ-

վանից էլ պինդ, մեջքի վրա ընկավ, գլորվեց, որպես կտրած գերան։ Սառույցին որ հասավ, կանգնեց ոտքի, փորձեց վեր բարձրանալ։

Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզաց, ինչպես շիկացած խոփը դարբնոցի շրաքարում։ Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր։ Ավին մինչև վերջն էլ չիմացավ, թե ինչու շորթորդ փամփուշտը բերդանը ներս չառավ։

Արջը ոռնոցով մի ոստյուն էլ արեց։ Ավին շատ մոտ զգաց վիրավոր գազանի տաք շունչը, ծովեց, և երբ արջը թաղվեց ձյունի մեջ, Ավին ետ վազեց, ձյունի մեջ ընկնելով, վեր բարձրանալով։ Արջը հետևում էր նրան։ Ավին վազում էր, թռչում գերանների վրայով, ծառի ճղները ճանգոտմ Ավին վազում էր, թռչում գերանների վրայով, ծառի ճղները ճանգոտմ էին դեմքը սուր մագիլների պես, սայթաքում էր, նորից բարձրանում։ Նրան այնպես էր թվում, թե Մթնածորի բուրբ գազաններն են վազում իր հետևից։

Ծառի մի ճյուղ փշերը խրեց փափախի մորթուն, փափախն ընկավ։ Հենց այդ վայրկյանին նա մի ծանր հարված զգաց մեջքին, բրդոտ մի թաթ ճանկերը խրեց ծոծրակի մորթու մեջ։ Լավեց մի կրակոց, բայց Ավին ոչինչ չզգաց։

Պանինը սատանայի պես քրքշում էր, ոտքն արջի դիակի վրա։

* * *

Ավին հիմա էլ ողջ է։

Ջարհուրանքով կարելի է նայել նրան, երբ փողոցի անցուղարձ անողներից պահված, մի անկյունում քաշված, սրա-նրա համար տրեխ է գործում։

Ավու հագին շուխա է, տրեխներ, սովորական մարմին, առողջ ձեռքեր, որոնք շատ վարժ կաշին են ծակոտում, կաշվի թելերից հանգույցներ անում։ Եվ սովորական մարմնի վրա գլխի տեղ մարդկային գանգ, ամբողջովին կլաված, առանց մազի, առանց մորթու։

Արջը թաթի մի հարվածով ծոծրակի փափուկ մսի մեջ է խրել սուր ճանկերը և վիրավոր արջի ամբողջ գայրույթով իրան քաշել գանգի մորթին, մորթու հետ էլ գլխի մազերը, ունքերը, աչքերն ու քիթը։

Ավին շրթունքներ չունի։ Ոսկորների բաց ճեղքից երևում են ատամները, բաց է քթի խոռոչը, և երբ Ավին համրի պես խոսում է, շունչը քթի խոռոչովն էլ է դուրս գալիս։ Աչքերի խոռոչներում շորացած մսի կտորներ կան, ծառի վրա կիսաշոր, մաշկը ծալ-ծալ եղած ծիրանի պես։

Նրա գանգի վրա ողջ են մնացել միայն ականջները։ Նայում ես և

չես կարողանում որոշել՝ ծեր է Ավին, թե դեռ երիտասարդ, որտեղից է գալիս նրա ձայնը, գուցե մարդ չէ, այլ խրտվիլակ, գուցե շուխայի տակ կմախք է և ոչ միս ու մարմին։

Սակայն նրա ձեռքերին միս կա և մաշկ, մատները վարժ շարժուններ են անում, և երբ Մթնածորի անունն են տալիս, երևում է, որ ատամներն աճելի է գուրս գցում, կոկորդից ընդհատ ձայներ է հանում։

Ու չգիտես՝ դայրանո՞ւմ է, թե ժպտում հին որսորդը...

ՎԱՆԴՈՒՆՑ ԲԱԳԻՆ

Գյուղում բուրբն էլ ճանաչում էին Վանդունց Բադուն, գիտեին, որ նրա ատանց վերի հանդը տանող ճամփի վրա է, շաղացներին չհասած, Աթառանց մեծ ընկուզենու մոտ։

Բադին գյուղի տավարածն էր։ Ամենից կանուխ նա էր զարթնում. նրա ձայն էր հնչում գյուղի փողոցներում։

— Տավարը տարա հե՛յ, ա՛խախը, ետանաք ոչ...

Գյուղացիք այնքան էին վարժ նրա կանչին, որքան աքլորի կանչին։ Շատ անգամ ժամանակ որոշելու համար ասում էին, թե՛

— Բադին հալա տավարը տարել չէր, որես հանդումն էի,— կամ թե՛

— Հենց Բադին մի բերան կանչեց թե չէ, վեր թռա տեղից։

Բադին ինքն էլ չէր հիշում, թե քանի տարվա տավարած էր։ Նա հենց այն գիտեր, որ խուլերի տարին իրեն գինվոր էին կանչել, մնացել էր գյուղում։ Այն ժամանակ Աթառանց ընկուզենու մոտ շաղաց դեռ չկար։

Ոչ որ գյուղի հանդն ու սարը Բադուց լավ չգիտեր։ Անթիվ անգամ նա շափչիկ էր նախրի հետ սար ու ձոր։ Նախիրն էլ էր լավ ճանաչում, գիտեր, թե այս կողմն ումն է, թե շալ կովը երբ է սուբահ մնացել, քանի ծին ունի, թե Փարամենց եզան պոզն ինչու է կոտրած։

Ամեն անգամ նախիրը գյուղից քշելիս հերիք էր մի անգամ նայեր, որ կարողանար որոշել, թե նախիրը որ կողմն է պակաս։

Երբ երկնայան նախիրը գյուղ էր դառնում, աղբյուրի մոտով անցնելիս Բադին էր, որ հարս ու աղջիկներին կշտամբում էր, թե՛

— Պղնձաքարի սարում ավելուկը կանաչել ա, Սանդ աղբյուրի մոտ մոշը հասել...

Նախիրը գյուղում ցրելուց հետո, իրիկնապահին, Բադին փայտին հենած՝ մեկ էլ ետ էր դառնում տուն, Աթառանց մեծ ընկուզենու մոտ։

Տանը կինն էր և միակ որդին, որ հասնում էր ջահել տունկի պես։

Թաղու կիներ, իբ պես զառամած մի պատավ, ընթրիք եփելու ժամանակը գիտեք: Տարիներ ընթացքում ամեն ինչ ամեն օր կրկնվել էր այնքան նման իրար, որ շարժումները մեքենայացել էին:

Երբ անիվի պես ճռնչում էր դուռը, և ներս էր մտնում Բազին, մահակը գնում շեմքին ու հարցնում կնոջը.

— Հաթամի աղջիկ, հորթին ջրե՞լ ես...

Հաթամի աղջիկը իբ կիներ էր. հնուց սովորույթ ունեք նա կնոջն այդպես կանչելու: Այդ սովորույթը մնացել էր այնպես հաստատ, ինչպես հարևան հաստարուն ընկուղներին:

Հաթամի աղջկա պատասխանն էլ միշտ նույնն էր.

— Բա չե՞մ ջրել...

Հետո Բազին բեզարած մարդու տնքոցով շեմքի մոտ տրեխներն էր հանում, թափ տալիս և շտկում առավոտվա համաք: Իսկ կիներ օջախին էր նայում կամ ճրագի պատրույզը շտկում և մաքուր աղլած գետնին փռում թաղիքը հնամաշ:

Ապա համեստ ընթրիք՝ պանիր-հաց, եթե լինեք՝ տաք կերակուր, հանդից բերած կանաչեղեն, երբեմն էլ հարևանի ուղարկած մի աղիվ կերակուր, որ տարին մի անգամ կեփվիր Բաղու օջախում:

Բաղու որդին՝ Հաբուղը, հասել էր այնքան, որ օգնում էր հորը: Սակայն Բազին չէր օւզում, որ Հաբուղը հոր փեշակը սովորի:

— Թող գրաճանաչ լինի, որ հետո գերեզմանս շահի՞՛մ:

— Կմեծանա, կպսակեմ, տուն ու տեղի կլինի, մի փեշակի ծայր կբռնեք, հացի կտիրանա: Ես էլ ժերության օրերում իբ ջրեքն ընկած կառքիմ, սաքերս կդինջանան սաք ու քոլ շափեւոյ:



Նահապետական վարք ու բարք ունեք Բազին, միամիտ էր և արդար: Նա ուզում էր, որ իբ որդին էլ այդ ճամփով գնա, հյութանք լինի, ազաթ սիրող, մեծին հարգող, գյուղամիտ շինք-չնորհող մի մարդ:

Մի անգամ էլ հանգում, մի գրույթից հետո, Հաբուղը հորը հարց տվավ, թե՛

— Ապեր, էդ ինչի՞ց ա, որ մեր նախրում Իսանանք ինք կով ունեն, իսկ մենք մի կով:

Բազին ժպտաց ցի՛ր տակ:

— Բա դու նրանց թաչ մտ՞քդ ես: Հերդ մի տավարած, իսկ Իսանանց

սզորմած հողի Զաքի ապերը պատվով, կայքով մարդ էր: Գեղը որ մի մեծավոր գար, նրանց տանը վեք կգար: Զաքի ապերը մովրովի ժամանակ մեղալ էր ստացել: Դե տղերքն էլ խելոք են եղել, հոր թողած մեկը երկու են արել:

Տարին բողոր Բազի ապերը պահում էր Իսանանց ինը կովը, դրա համաք ստանում մի սոմար ցորեն, երեք գրվանքա շաքար, որ իրենց չէր հերիցում, և մի քիչ էլ փող:

Հաբուղը չէր սիրում, որ հայրն ամեն մի ամիս տնեստուն պատում էր, տավարածի բաժին հավաքում կամ թե կալին, մի պարկ ուսին, ման էր գալիս կալերում և իբ բաժին ցորենն առնում: Պատվին էր դիպչում, երբ հոր տեղակ ինքն էր ընկնում դռնեղուտ հաց կամ դրամ հավաքում:

Ամեն անգամ Իսանանց խանութը մտնելիս միջնակ ախպերը մի տեսակ ծաղրով ասում էր Հաբուղին.

— Ամիսը ե՞րբ թամամեց, որ եկար,—կամ թե՛

— Քանի՞ շաքաթ ա քո ամիսը...

Երբեք Հաբուղը չէր կարողանում հաշիվը կանոնավոր ստանալ: Կամ ասում էին, թե ստանալիք չկա, կամ էլ, շատ որ համառում էր Հաբուղը, Իսանանց ախպերը բարկանում էր նրա վրա և ասում.

— Դու ինչացո՞ւ ես, հերդ կգա, նրա հետ հաշիվ կանենք:

Հաբուղը գիտեր, որ հայրը խոնարհ մարդ է, լեղուն կարճ: Ինչ որ ասեին, համաձայն էր, մենակ թե համփա մարդկանց խաթրին չկալչեր:

— Ունևոր են, մենք էլ նրանց շվաքում կապրենք:

Այսպես էր ասում վանդունց Բազին, ստացած կոպեկները տալիս Հաթամի աղջկան, որ պահի: Մի օր պետք կգար, Հաբուղի հարսանիք կար, ապագայում տուն տեղ ունենալ կար:

— Հասնում ա հա՛, զատ չի մնացել,—ասում էր երբեմն Բազին իբ կնոջը, ու երկուսով կարոտով նայում էին Հաբուղին:

— Թե սաղ մնամ, եկող աշունք հարսանիք եմ անելու:

Հաթամի աղջիկն ասում էր, որ գյուղում սաղ աղջիկ չկա, որ պիտի հարևան գյուղից աղջիկ ուզի, տրտնջում էր, թե բան ու գործից ազատ չի լինում, որ մի գնա, տեսնի՛ ում աղջիկն է հարմար:

— Դու որ կարենաս, էս աշունք, քոչը սարովն անցնելիս մի քիչ բուրդ առ, մանեմ, համ էլ քոլից մի ձեռք տեղաշոր կապեմ:

Երկու պառավ խելք-խելքի մտածում էին գալիքի մասին, երբ տանն աղմուկ կլինի, եկող-գնացող, խարխուլ խրճիթը կլսի մանկան ուրախ ճիչ:

Երբեմն էլ գրուցում էին, թե ինչ աբհաստի գեներ Հաբուղին: Մայրն

ուզում էր, որ նա գյուղական գրագիր դառնա կամ ծառայի պրիստավի մոտ, իսկ Բաղին արհեստի էր կողմնակից:

— Հարամ հացը թող իմ սուփրիս չլինի.—ասում էր նա: Վանդունց Բաղին գիտեր, որ պիսիրը կաշառք է ուտում, գյուղում նրանից շատ են գծգոհ, չէր ուզում, որ իր մահից հետո իրեն անիծեն:

Հաբուղն էլ համաձայն էր հոր հետ, նա էլ չէր սիրում պիսիր Ավանին, որ որսկան շան պես հոտոտում էր, թե որտեղից կարող է պլոկել, երկու խոսք գրելու համար մի հավ առնել:

Պիսիր Ավանը Իսանանց հետ շատ մոտ էր, գնալ-գալ էր անում միշտ և շատ անգամ էլ հենց նրանց խանութում էր գործերը դրստում:

Բայց Հաբուղը թաքուն մի ուրիշ միտք էր անում. գնալ Բաքու արհեստ սովորել: Շատ անգամ էր հանգ անում հորից խնդրելու, բայց բնականը չէր զորում մի բան ասելու:

Նա ուզում էր աշխարհ տեսնել, ինչպես ասում էր նրա ընկերը, որ Բաքվում էր աշխատել և հիվանդ լինելու համար տուն եկել: Նրանք երկուսով նստում էին ժամերով տան կտուրին, ընկերը պատմում էր, թե ինչքան ուժով է մաշինը, թե մի բան կա, որ դարձնես, ճրագը կվառես առանց կրակի, թե ինչպես են նավթ հանում հորից և էլ հազար ու մի բան:

Հաբուղը լսում էր ուշադիր, զգում մի անզուսպ ցանկություն՝ տեսնել այդ ամենը: Բայց հենց որ տուն էր գալիս, հանգում էր կրակը բորբոք, հաշտվում էր գյուղում արհեստ սովորելու մտքին:

Մի օր էլ հոր հետ միասին դուրգար Դավիթի մոտ գնացին՝ խերով-բարով Հաբուղին նրա մոտ թողնելու համար: Ուստան մի քիչ չեմ ու շում արավ, վերջը խոստացավ երկու տարում արհեստին վարժեցնել:

Իրիկունն ուստան եկավ Վանդունց տուն, կերան, խմեցին, դարդ գարդի տվին և այդ օրից դարձան սերտ բարեկամ:

...Կես գիշերից անց էր. չէր քնել ոչ Բաղին, ոչ Հաթամի աղջիկը: Միտք էին անում էգուցվա մասին գոհ ու բախտավոր: Նրանց կողքին մուշ-մուշ քնել էր Հաբուղը՝ նեղ օրերի ապավենը միակ:

* *

*

Մի առավոտ էլ գյուղում անսովոր իրարանցում ընկավ: Գզիրը կտուրից կտուր կանչում էր զիլ ձայնով.

— Ա՛ խալխը, հե՛յ, թագավորի հրամանա, ով որ սալդաթ ա էլել, պիտի հավաքվի քաղաքում, կռիվ ա Գերմանու հետ...

—36—

Քաղաքից եկողները պատմում էին, որ ամեն տեղ մեծ թղթեր կա պատերին փակցրած, փողոցներում մարդիկ իրար տեսնելիս կռվի մասին են խոսում, շատ զինվոր պիտի հավաքեն, կռիվը շատ տերութունների մեջ է, աշխարհն խառնվելու է իրար:

Գյուղացիք խմբերով հավաքվում էին դուքանի առաջ. գրագետ մեկը սկսում էր լրագիր կարդալ, լսում էր գյուղը անժանոթ անուններ ու վայրեր, քաղաքներ ու տերութուններ և բնազդով զգում, որ թանկություն պիտի լինի, մեծ կոտորած ու զրկանք:

Իսանանց տանուտեր ախպերն ասում էր, որ կռիվը օգուտ է ժողովրդին, որ ռուսի թագավորի թախտը հաստատ է, ժողովուրդը շատ, և որ շուտով Գերմանի թագավորը հաղթվելու է:

— Սրան Ռուսեթ են ասում, մի տուտը հեն ա Սիրիր, մեկելը Հըն-զըստան. բա իսկի իսան կարա՞ դիմանա...

Ալևերներից ոմանք պատմում էին, որ «Էփրեմներդին» այդպես է ասում, գրված է, որ յոթ տերութուն իրար պիտի խառնվեն, հացը պիտի թանկանա, թագավորի խարջը շատանա:

Ամենից շատ պիսիրն էր ուրախ: Նրա շուրջն ստեղծվում էր գյուղի գոտքաների տղերքից դեզերտիրների մի խմբակ: Նրանք կաշառում էին, շափաբերականը կեղծում, իրենց տեղ ուրիշին ուղարկում, որ իրենք գյուղում մնան, ինչ ուզեն անեն: Մանր հաշիվների ու հին վրեժների հատուցման լայն ասպարեզ էր բացվել գյուղում:

Քաղաքի պատերին կպցրած թղթերը հուզել էին ճահիճն այն խաղաղ, ուր ամեն ինչ առաջ մերվել էր, և կարծես թե գայլի հետ գառն էր ապրում:

* *

*

Հաբուղն արդեն նկատում էր գյուղում եղած փոփոխությունը: Իսանանց գուլամնում ներկերը թանկացրել էին, ճոթ ու կտորը պակաս էր երկվում, իսկ շաքարը կրակի գին ուներ:

Իսանանց տղերքը ճոթը պահում էին իրենց տանը, որ հետո ծախեն: — Ճամփեքը փակվել ա. էս ներկերը Գերմանու ապրանք ա, էլ երբ կճարես դու էսպես ապրանք:

Հաբուղի աչքի գրողը գյուղի պիսիրն էր: Մի անգամ պիսիրը եաշուն մենց հարսին, որ գնացել էր ամուսնուն նամակ գրել տալու, — փիս խոսք էր ասել, ձեռ տվել, հարսն էլ լացակումած հեռացել էր նրա մոտից:

—37—

Գլուխում այդ լուրն իսկույն տարածվեց: Մի քանի հոգի ուզում էին պիսիբի հախից գալ, բայց տանուտերը սպառնաց.

— Միբիր կըշեմ նրան, ով կհամարձակվի գեղում խառնակչութուն անել: Դուք գիտե՞ք, թե ինչ տարի ա էս տարին:

Պիսիբը Հաբուդի աչքում է՛լ ավելի ընկավ, դարձավ գեղի վատ մարդը, գեղի արյուն խմողը: Իսկ Իսանանց դուքանը նա էլ չէր գնում, տանն էլ շաքարով թեյ չէին խմում:

Իսանանց մեծ ախպերն ասել էր, թե գլուխից տավարածի տղան էլ որ սալդաթ գնա, ամեն ինչ լավ կլինի:

Վանդունց Բաղին հանդից էր խոսում, թե վանքի ձորում խոտը թաղ-եկ է, ազին ծաղիկ կովը պիտի ծնի, վերի հանդի կամորջը փլվել է Երբեմն էլ պատերազմի մասին Հաբուդից էր հարցնում.

— Հաբուդ, քա էդ գերմանը խաշապաշտ չի՞:

— Խաշապաշտ ա:

— Բա ո՞նց ա միացել Թուրքի հետ: Աստուծ դա ընդունիլ չի:

Հաբուդը ժպտում էր հոր միտմտության վրա, մտաբերում Իսանանց ազգը, պիսիբին և նրանց, որոնք հետագոր գերբերում կռվում են, որ ու ձեռք գրկվում, ցրտից ստուչում, թագավորից խաշ ստանում:

Ինչո՞ւ համար այդպես եղավ: Ինչո՞ւ Իսանանց տնից մի զինվոր չկա, իսկ Խաշունենց Բախշու երեք տղան էլ կռվում են: Ինչո՞ւ է թանկ կանում շաքարը, էն ինչո՞ւ քաղաքում ժողովներ են տեսնում, փող հավաքում, էն ո՞նց եղավ, որ վարժապետ Մինասը խուճր կազմեց, գնաց Վան, իսկ գաղթական ժողովուրդը կոտորվում էր սովից, ցրտից:

Մտածում էր Հաբուդը, և նրա անտաշ միտքը մեծ ցավով ձգնում էր պատասխան տալ, հաղթել արգելքներին, պահված գաղտնիքների գտները բանալ:

Մի օր էլ գգի Զաքին եկավ Վանդունց Բաբու տանը՝ Աթաբեկից մեծ ընկերակցությամբ...

— Բարի օր, Հաթամի աղջիկ...

— Հը՛, Զաքի, ին՛ր ընի:

— Ին՛ր ա, բա ին՛ր չի, աղաք որ գա, ասի էրոց քաղաք գնա, սոք գաթ են կանչում:

Ասես մի մեծ քարով խփեցին Հաթամի աղջկա գլխին. ծնկները գո-զացին, աչքերը շաշվեց, ու հենց դռան շեմքին վեր ընկավ:

Իրիկունը տավարածի տունը սգատան էր նման, ոչ հաց, ոչ սովորական զրույց: Բաղին օջախի մոտ նստել, թրջած տրեխներ էր շորացնում ու միտք անում:

— Բա ո՞նց ա լինելու...

Բաղին ամեն ինչ կարող էր սպասել, բայց այդ քանին՝ երբեք Հաթամի աղջիկը ցնորվածի պես էր: Նստել էր Հաբուդի մոտ, նայում էր նրան, նայում անկշտում, անլիզու անասունի պես ու միտք անում: Հաբուդը պատկել էր խորի վրա, մտածում էր, թե ինչպես պիտի ապրեն աչքեր հայրն ու մայրը, եթե ինքը հեռանա:

Այդ իրիկուն ամբողջ գեղի ցավն ասես թառել էր Վանդունց տան գլխին: Մաքերը— ծա՛նր, անպատասխան, որ որոճում էին երեքն էլ խրճթի խավարի մեջ, տապալկում տեղաշարի մեջ, մեկը՝ տնքում, մյուսը՝ հառաչում ու լալիս, մե՛ղմ, զսպված հեծկտանքով:

Մյուս օրը Հաբուդը առավոտ կանուխ քաղաք գնաց: Հաթամի աղջիկը այդ օրը մոռացավ Բաղու թաշկինակի մեջ հաց կադեյո Բաղին էլ չէր նայում, թե տավարը ուր է գնում, կուշտ է թե սոված: Նա միայն սր-գու մասին էր մտածում:

— Ցարաք շափսում պիտի գա՛ թե ոչ...

Պար մի քայն, որ Բաղին ցանկացավ Հաբուդին կաղ կամ կռնատ տեսնել, որ տանը մնար: Բայց հետո ինքն էլ սոսկաց այդ մտքից և հուսահատ աչքերը երկինք ուղղեց:

— Ասաված, քո ստեղծած խեղճն եմ, դու մի ճար արա:

Վանդունց Բաղին մատաղ խոստացավ, եթե որդին զորակույցից ազատվեր:

Բայց այդպես չեղավ: Հաբուդը շափսում եկավ ու նրան էլ գրեցին նորակույցների ցանկում:

Ընկերների հետ տուն եկավ Հաբուդը, որ մյուս օրը նորից քաղաք վերադառնա, իսկ այնտեղից էլ՝ ուր ուղարկեն: Հաբուդն ուրախ էր, որ նա քաղաքներ պիտի տեսնի, լեզու սովորի: Բայց հենց որ աչքի առաջ կանգնում էին պատավ ծնողները, ուրախությունն իսկույն շրանում էր, որպես թեթե շամանդաղ:

Չափսի ժամանակ Իսանանց մեծ ախպերն ու պիսիրն իրար հետ փրս-
փրսում էին: Չլինի՞ թե նրանք մի բան խաղացին նրա գլխին: Եվ դառն
ատելությունը ալիքի պես բարձրացավ նրա հոգում դեպի պիսիրը, որ
Օհանի հարսին ձեռք էր տվել, որ նամակ գրելու համար հավ ու ճուտ
էր ուզում, դեպի Իսանանք և նրանց պես համփա մարդիկ:

Չար լուրը շուտ էր տուն հասել: Հաթամի աղջիկը շիվար, ձեռքը ծո-
ցին որդուց չէր հեռանում, ձեռքը մի բանի չէր կարողանում տալ, դա-
տարկ էր թվում չորս կողմը, ասես հեղեղը քշել, տարել էր ամեն ինչ...

Հապա Հարուզի հարսանի՞քը:

— Հարու՛զ, կոխվը հեռու ամ մեռ մահալից, — հազիվ գորեց հարց-
նել մայրը:

Որդին ժպտաց, ի՞նչ ասեր: Ի՞նչ գիտեր մայրը և ինչպես հասկանար
նա, որ աշխարհը խառնվել է իրառ, ու որդին հազար վերստից ավել
պիտի գնա, անցնի քաղաքներ ու հասնի այնտեղ, ուր թոփի ձենից մար-
դու ահանջ է խլանում:

Իրիկունը Բաղին տուն եկավ: Նա իսկույն հասկացավ ու միայն կա-
րողացավ ասել.

— Հարուզ, քե մատաղ, բա մենք...

Կես գիշերից անց էր, ոչ ոք չէր քնել: Հաթամի աղջիկը որդու կա-
պոցն էր պատրաստում՝ գուլպա ու թաշկինակ, միրգ ու գաթա: Ամեն մի
իդ ձեռք առնելիս չգիտեր, թե ուր դնի. արցունք էր, վարար ջրի պես հո-
սում էր:

Բաղին ինքն իրեն սիրա էր տալիս.

— Թագավորի ծառայությունն ա, հնար չկա: Թագավորի հողից ո՞ւր
պիտի փախչես:

— Հարուզ, քեզ լավ պահի, շատ շահելություն չանես: Օտար երկիր
ա, կոխվ ա, ո՞վ ա գիտում ինչ կարող ա պատահի: Ուշքդ տանը պահի,
նամակ ուղարկի. հալբաթ մի տեղով մեզ մի լուս կհասնի:

Ու ինքն իրեն, քթի տակ խոսում էր Բաղին՝ օջախի մոտ, գլուխը
կախ, թաց տրեխները ձեռքին: Հազար ու մի միտք գալիս-անցնում էր
նրա գլխով, սրտի խորքից թառանջ էր ելնում, և անարցունք աչքերը
ճպճպում էին, որպես մարմրուն ճրագներ:

Մյուս օրը Հարուզը գնաց:

Տարան, ճամփա դրին մինչև գյուղի վերջը, ասացին, լաց եղան, համբու-
րեցին հազար անգամ ու մենակ վերադարձան իրենց խարխուլ խրճիթը
Աթանանց մեծ ընկուզենու մոտ:

Գյուղի տավարն այդ օրն առաջին անգամ ուշ գնաց հանդ: Տավարն
էլ էր մոլորվել, ցաքուցրիվ բառաչում էր Վանդունց տան մոտերքում:

Անցան ամիսներ:

Հարուզից նամակ էր գալիս: Նրան ճակատ էին ուղարկել, մի ան-
գամ վերավորվել էր ոտից, պառկել էր լազարիթում, լավացել ու նորից
գիրքերն էին ճամփել:

Նամակների մեջ Հարուզը գանգատվում էր: Գրում էր, որ զորքը
սոված է, շոր չունեն, ամեն շաբաթ մի դիրքից մյուսն են ուղարկում,
հաշտության ոչ մի լուր չկա: Մի անգամ էլ նա գրել էր, թե շուտով ար-
ձակուրդ է ստանալու, տուն պիտի գա:

Մեռողների ուրախությունն անսահման էր: Հաթամի աղջիկն այդ հա-
մակը ստանալու մյուս օրը գնաց Իսանանց արտը քաղհանելու: Նամա-
կըն Իսանանք էին ստանում, նրանք էլ կարողում էին ու պատասխան գրում:

Հաթամի աղջիկը դրա փոխարեն երկու օր առավոտից իրիկուն ան-
վարձ քաղհանեց Իսանանց արտը:

Հարուզը գրում էր, թե թանկություն է, գորքը մի քանի տեղ կտա-
րատել է խանութները: Էլ ուրիշ շատ բան էր գրել նա. հայրը չէր հաս-
կանում, թե ինչու է այդպես: Պիսիրն ու Իսանանց մեծ ախպերը զայրա-
նում էին: Մի նամակի մեջ էլ Հարուզը գրել էր թե՛ ապեր, «մենք ինչու՞ն
պիտի կռվենք գերմանացու հետ, մեր ի՞նչ հաշիվն ա»:

— Հայվան, քեզ սաղաթ են ուղարկել, էլ գլխիդ ի՞նչ ես զոռ տա-
լիս, — ասաց Իսանանց տղան նամակը կարդալիս:

Մի օր էլ քաղաքից լուր բերին, թե հեռագիր է ստացվել, որ զորքը
հեղափոխություն է գցել, թագավորին թախտից վեր են բերել: Գյուղը
նախ շհավատաց. տանուտերը, պիսիրը, նույնիսկ գզիր Չաքին գեղամի-
ջում բուլորին էլ ասում էին, թե այդ լուրը սուտ է: Իսկ տեր Գևորգը, որ
սաղմոս ու շարական անգիր գիտեր, համոզում էր, թե առանց չորան
ոչխար չի լինի, ժողովուրդին մի գլուխ է հարկավոր, խառնակիչ մար-
դիկ են այդ լուրերը տարածում, գերմանի ագենտները:

Մի երկու օր անց քաղաքից երկու մարդ եկան, թե երին կարմիր
շորի մի կտոր կապած: Մեկը վարժապետ Մինասն էր, մյուսը էլ մի ջա-
հել տղա: Վարժապետ Մինասին գյուղացիք ճանաչում էին:

Վարժապետն սկսեց ճառ ասել, թե էլ թագավոր չկա, հիմա ազա-

տութիւնն է, հողը պիտի գյուղացուն տալ, ժողովուրդը սոված է, դրա համար էլ պիտի շարժել գերմանացուն, կոխիվ մինչև վերջ: Զահել ազան էլ խոսեց, հետո ընտրութիւն արին:

Իսանանց մեծ տղան, Խաչումենց Օհանը և տանուտերը դառան կոմիտե: Ժողովրդից մի մարդ ասաց, թե տանուտերին չեն ուզում, արնամարտ մարդ է, բայց զգիր Զաքին աչքերը նրա վրա այնպես ոլորեց, որ խեղճի լեզին ցամաքեց: Տեր Գևորգը վկայեց, որ տանուտերը խղճով մարդ է, ժողովրդին կարեկից ու հոգատար:

Ժողովից հետո նոր կոմիտեն, տերտերը, վարժապետ Մինասը, ջահել տղան, պիտերը, զգիր Զաքին և էլի ուրիշ մի քանի հոգի Իսանանց տանը ճաշ արին, կերան-խմեցին, երեկոյան դեմ վարժապետն ու ջահել տղան մի քիչ կոնծած՝ վերադարձան քաղաք:

Հաթամի աղջիկն այդ ամենը պատմեց ամուսնուն: Վանդունց Բաղին նախ չհավատաց, թե ջրի խարար է, ապա ինքն իրեն սիրտ տալ սկսեց. — Կարող ա կռվին վերջ տան, Հարուդը տուն գա:

Հաթամի աղջիկը բան չէր հասկանում այդ ամենից: Նրա ականջին էր հասնում անկապ խարարներ, լսում էր անհասկանալի խոսքեր: Փառաքի մեծավորին բռնել են, բանտ նստեցրել, հիմա էլ նորից պիտի սալ-զաքի մեծավորին բռնել են, բանտ նստեցրել, հիմա էլ նորից պիտի սալ-զաքի հավաքեն. մահ կամ ազատութիւն: Քաղաքը չկա, համա կոխիվ կա: Գյուղի կոմիտեն գործի էր անցել: Իսանանք իրենց խանութի ապրանքն սկսել էին աճելի թանկ ծախել, ոսկի էին գանձում, պարտքի դիմաց ցորեն ու պանիր հավաքում, ուղարկում քաղաք:

Վարժապետ Մինասը մի անգամ էլ եկավ, ժողով արեց, խոսեց դաշնակցութեան մասին, մենչեկիին ուշունց տվա՛վ և ասաց, թե ս՛վ դաշնակցական չի, նա հայ չի: Գեղը տեղով մի ձայն տվա՛վ, գրագետները մի թուղթ ստորագրեցին, որ պիտիք ու վարժապետն էին կազմել:

Վարժապետ Մինասն ասաց, որ շուտով գալու են հողերը շահին, հարուտից խեն, աղքատին տան, շունտերին ճոթ ու կտոր են տալու: ամեն գյուղում մի կոռուպտիվ պիտի բացվի, ամեն գյուղում երկու բժիշկ, երեք ուսուցիչ պիտի լինի, — միայն թե հարկավոր է ձայն տալ գաշնակցականի ցուցակին, որ քան, մեր ցավերը պաշտպանեն ամենամեծ ժողովում, որտեղ Ռուսաստանի բոլոր ազգերը պիտի հավաքվին:

Գյուղացիք արին այն, ինչ որ ասում էր վարժապետ Մինասը: Նրանք աճելի շուտ Իսանանց մեծ ախպարն էին լսում, ուշադիր նրա աչքերին նայում. ո՛վ կարար նրա դեմ խոսել, նրա խոսքից գուրս գալ: Մեկը նրան ցորեն էր պարս, մյուսը մի քանի արշին կտոր պիտի տաներ խոսքից, մի գրվանքա շաքար, — ս՛վ էր գժվել նրան հակառակ գնար:

Հարուդից շարունակ նամակ էր գալիս: Նա ուրախ էր, որ Քաղաքը էլ չկա, բայց գրում էր, թե այդ քիչ է, պիտի այնպես անել, որ ամեն մարդ իր հալալ քրտինքն ուտի: Հարուդն ուրիշ շատ բան էր գրում նամակում, բայց Իսանանց տղան հորը չէր կարդում:

— Տղադ սարսաղացի ա, Բաղի ապեր, խելքը գլխից թռել ա:

Վանդունց Բաղին հրբեք չէր հավատա, թե Հարուդը խելքը տանու կտա: Նա դիտեր, որ որդին աչքարաց տղա է, ս՛վ դիտե ինչ հաշիվ ունի Իսանանց տղան Հարուդի հետ: Նա հենց էն գլխից նրան չէր սիրում:

Հարուդը գրում էր, որ ինքը մի պուլկի կոմիտե է դառել, որ իրենց պուլկն էլ կոխիվ չի ուզում: Իրիկունը Բաղին գալիս էր տուն, Հաթամի աղջիկա հետ խոսում, հարցուփորձ անում, թե գյուղում ի՞նչ են տեսնում: Մի իրիկուն էլ Բաղին թե՛

— Հաթամի աղջիկ, լսե՛լ ես, որ ասում են, թե մեր Հարուդը բալլեկի ա դառել:

— Ի՞նչ...

— Բալլեկի. Իսանանց տղան էր ասում: Բոլլեկին էն ա էլի, որ ուզում ա հարուտա քյտաիք խամի իրար, հավասարացնի:

Անցավ մի ամիս էլ:

Մի օր էլ Հարուդը տուն եկավ, առանց առաջուց հայտնելու:

Նենց երեկոյան դեմ, երբ մութ էր արդեն, ներս մտավ նա, շինելը ուտին, հաղթանդամ, բեղ ու միրուքով մի տղամարդո:

Վանդունց Բաղու խրճիթն իր հիմնելու օրից այնքան ուրախութեամբ հրբեք չէր տեսել: Հարցուփորձ, գրկախառնումի արցունք և ուրախութեան անշափ:

Հարուդը հայտնեց ծնողներին, որ էլ գինվոր չպիտի գնա, էլ չի ուզում կռվել:

— Թող մի քիչ էլ Իսանանց տղերքը կռվին:

Երկու տարվա բացակայութեանից հետո, անհամար քաղաքներ թափառելուց հոգնած՝ Հարուդը հանգիստ պատկեց հայրենի խրճիթում, խարի վրա, պառավ մոր կողքին:

Մյուս օրը գյուղում ամենքն իմացան, որ Վանդունց Հարուղը տուն է եկել:

Շատերն ուրախացան, Հաթամի աղջկան շտապեցին աչքալույս տալ: Բայց Իսանանց տղան, պիսիրը, մինչև անգամ գգիր Զաքին չուրախացան: Իսանանց տղան նրանց ասում էր, որ Հարուղը բուլշևիկ է դառել, նա գյուղում խառնակչութիւն պիտի անի, ջուրը պիտի պղտորի: Եվ գգիր Զաքուն անմիջապես հանձնարարովեց հետևել, թե ում հետ է լինում Հարուղը, ուր է գնում, ինչ է անում:

Առիթը շուտով ներկայացավ:

Գյուղում մի ժողովի ժամանակ, որին ներկա էր և վարժապետ Մինասը՝ քաղաքի կոմիտեն, Հարուղը մի քանի խոսք ասեց Իսանանց տղի հասցեին:

Ժողով էին արել, որ տուրք նշանակեն քաղաքի կոմիտեի համար: Վարժապետ Մինասը ճառ էր ասում, թե հեղափոխությունը վտանգվում է, գերմանացիք կաշառք են տվել բուլշևիկներին, որ ոռոսաց զորքը քանդեն: Հարկավոր է բանակը զորացնել, կյանքը զոհել հայրենիքի համար: — Մեկը ես՝ պատրաստ եմ, երբ ինձ հրամայեն, թողնել տուն ու տեղ, գործ ու պաշտոն, գնալ կամավոր:

Այսպես էր ասում վարժապետ Մինասը և ճառում, կոկորդը պատռում, կուրծքը ծեծում, ձեռքերը քամու շաղացի թևերի պես շարժում օդի մեջ:

Իսանանց մեծ տղան էլ խոսեց, թե պետք է ազգային տուրքը տալ, այդ տուրք պարտք է, և ավելացրեց, որ խառնակիչ մարդկանց էլ գեղի միջից պիտի հեռացնել: Գյուղում մի քանի դեզերտիր տղերք կան, որոնց պիտի բռնել և քաղաք ուղարկել, թող թշնամու դեմ կռիվ գնան:

— Իսկ դո՞ւ երբ պիտի գնաս, — տեղից կանչեց Հարուղը, որ մինչ այդ գլուխը կախ լսում էր և զայրույթից շրթունքը կրծոտում:

— Զենդ, շան լակոտ, — որոտաց էն կողմից պիսիրը ու գզերին աչքով արեց, որ վրա պրծնի: Եվ մի քանի տղերք, պիսիրի մարդիկ, վրա պրծան, որ ծեծեն, բայց Հարուղն իզուր չէր մնացել ճակատում: Մի երկու հատ աչ ու ձախ խփելուց հետո գյուղացիք միջամտեցին և հեռացրին ախոյաններին:

Հարուղը հեռացավ ժողովից, տուն գնաց, մորը հանգստացրեց և գիշերում, երկու հավատարիմ ընկերոջ հետ, դուրս եկավ տնից դեպի քաղաք, մորը պատվիրելով, որ ոչ մի մարդու բան չասի, ինքը գալու է էգուց:

Այդ դեպքը Վանդունց Բադու վրա վատ ազդեց: Նա զայրացավ նրանց դեմ, որոնք օրը ցերեկով ժողովրդի մեջ համարձակվել են իր որդուն ձեռք տալ: Իսանանց տղան այդ օրից նրա աչքի փուշը դառավ:

Մյուս օրը, երբ տավարը հանդ էր տանում, նա ուզեց իր որդու երեկվա ախոյանների կովերը շուկի տավարից, բայց խիղճը շտվավ. անլեզու անասունն ի՞նչ մեզք ունի:

Տավարը քշելիս Բադին լուռ միտք էր անում, թե ինչո՞ւ Հարուղը գնաց քաղաք, ի՞նչ թղթեր էր, որ բերել էր նա իր հետ հեռու դիրքերից, ինչո՞ւ նա դժգոհ էր գյուղի կարգերից և հակառակ վարժապետ Մինասին:

Հաջորդ օրը Հարուղը տուն եկավ, մի կտոր հաց կերավ ու սկսեց գրել:

— Հարուղ, հերիք ա գրես, աչքդ գիրը կտանի, — ասում էր մայրը կեսգիշերին, իսկ Հարուղը շարունակում էր գրել, շնչել: Լույսը բացվելու մոտ էր, երբ նա թղթերը ծալեց, դրեց ծոցում և մահակն առավ, ուզում էր դուրս գալ:

— Ո՛ւր, բալաս...

— Հրես կգամ. գնում եմ քաղաք, գործ ունեմ, իրիկունը կգամ:

Բադին խնդրեց, թե մութ է, շար վախտ է, հազար թշնամի կա, սպասի, լուսով գնա: Հարուղը մտիկ չարեց:

— Բան չկա, խամ հո չեմ ես ճամփեքին, — ասաց ու դուռը ծածկեց:

Մյուս օրը երեկոյան դեմ գյուղում լուր տարածվեց, թե քաղաքում խառնակություն է եղել, բուլշևիկները զորքի հետ միասին վրա են տվել, կոմիտեի շենքը շարդել, ժողովուրդն սկսել է խանութները թալանել: Հետո բուլշևիկներին շրջապատել են, խմբի տղերքը վրա են տվել բուլշևիկի կոմիտեի վրա և բոլորին բանտարկել:

Վանդունց Բադին և Հաթամի աղջիկն անհամբեր սպասում էին Հարուղի վերադարձին: Մի քար լուսություն կար խրճիթի ներսում, նրանց սրտերում և ոչ ոք չէր զորում հարցնել մյուսին, թե գուցե մի փորձանք է պատահել:

Հարուղը շեկավ: Առավոտ կանուխ իմացան, որ նրան էլ են բանտարկել:

— Բա՛, տեսաք էն շան թուլին, մեր սաղ մահալում վարժապետ Մինասի նման խելոք մարդ չկա, իսկ Վանդունց Հարուղը՝ տավարածի տղան, նրան հավան չի, — այսպես էր ասում Իսանանց տղան, շարախինդ և ինքնագոհ, առավոտյան, երբ գյուղացիք հավաքվել էին խանութի առաջ:

— Դե հիմա տեսեք թանկություն ով ա գցում, ես, թե՞ նա: Մեկ

հազան չէր, ա՛խար, դե դուք դատավար եղեք.—կեղծ անմեղութեամբ գիմում էր նա գլուզացիներին:

Եվ հենց նույն օրը շքի գինը մեկին երկու թանկացավ:



Վանդուց Բաղին այդ օրը տավարը շտարավ, գնաց գեղամեջ ու խեղճ-խեղճ հայտնեց, որ քաղաք է գնում իմանալու, թե ինչ եղավ որդին:

— Էն ա բերդումը նստած, ի՞նչ ես դարդոտում, այ պառավ,— ասաց գլխը Զաքին:

Մի քանի հոգի խեղճացին նրան և իրենք տարան տավարը գլուզի:

Շատ տարիներ առաջ էր Բաղին քաղաք գնացել: Նա հիշում էր, որ քաղաքին շհասած խաչի աղենց քարվանսարան կա: Կգնա, հարցուփորձով կիմանա:

Բայց դեռ գլուզից գուրս չեկած, Բաղին իմացավ, որ քարվանսարան էլ է վառվել, որովհետև բուլշևիկի ձեռներն այնտեղ են կապված եղել:

Ո՞ւմ մոտ գնալ. հենց ուղիղ վարժապետ Մինասի մոտ: Մեծ մարդ է, քաղաքում կոմիտե: Կպատմի նրան, ձեռ ու ոտը կպաչի, գուցե Հաբուզին ազատեն:

Բաղին քանի քաղաքին էր մտածնում, այնքան ավելի էր զգում, որ ծնկները գողում են, ոտքերը դժվար են առաջ գնում: Մի երկու տեղ կանգնեց, փափախով ճակատի քրտինքը սրբեց, շունչ առավ ու նորից շարունակեց ճանապարհը:

Ահա և քարվանսարան: Գերանները դեռ մխում են, սևացած պատերն են մնացել միայն: Հենց քաղաք մտնելուն պես Բաղին փողոցում տեսավ մեկին, որ թևին կարմիր շոր ուներ կապած: Ուժ արեց, և ոտները քարշ տալով մոտեցավ նրան, խոր գլուխ տվեց:

— Վարժապետ Մինասի կանցելարը ի՞նչ տեղ ա,— հարցրեց:

— Ի՞նչ ես անում...

— Խեղիք ունեմ, փորձանք է եկել գլխիս...

Եվ աչքերում արցունք, Բաղին սկսեց պատմել որդու մասին լսածը:

— Հըմ...— արեց մարդը, մատով ցույց տվեց սպիտակ մի շենք:

որ այնքան էլ հեռու չէր:

Բաղին այդ շենքին մոտեցավ, բայց ներս չթողեցին, ասին՝ էգո՞ւ կգնաս:

— Ախր ես ալևոր եմ, տավարն անտեր ա մնացել, բա իմ որդուց մի խաբար չիմանա՞մ,— ասեց ու նստեց շեմքին, սալահատակի վրա:

Չուած աչքերով նայում էր շորս կողմ, անցուդարձ անողներին, լսում աղմուկը փողոցի, մտքի մեջ Հաթամի աղջիկը, աչքերը լացակումած, տավարն անտեր և Հաբուզը, որ մի կտոր շիկացած ածուխ էր դարձել, խանձում էր սիրտը, անասելի ցավ պատճառում նրան:

Ենթի ներսից մի մարդ դուրս եկավ, նայեց Բաղուն:

— Դու ի՞նչ ես շնթուկել այստեղ...

— Աղա, ես Վանդուց Բաղին եմ, տավարած:

— Վանդո՞ւց,— հարցրեց մարդը զարմացած:

Բաղին սիրտ առավ, սկսեց իր ցավը պատմել նրան, մարդը լսեց, հոնքերը կիտեց, ապա Բաղու խոսքը թերի թողեց, մոտեցավ դռնապանին, կանչեց նրան մի անկյուն, ականջին ինչ-որ բան ասաց, ապա արագ-արագ հեռացավ, ծովեց դեպի մյուս փողոցը:

Բաղին զգաց, որ մի ծանր հարված պիտի իջնի իր գլխին, կանգնեց մի ակնթարթ, ապա մոտեցավ դռնապանին:

— Քե մատաղ, ի՞նչ ասեց աղեն...

Դռնապանը երեսը մի կողմ շրջեց, շրթունքը սեղմեց, ապա հանկարծ կոացավ և Բաղու ականջին արագ ասաց.

— Որդուդ բերդում կրակել են էս գիշեր...

Դռնապանը հեռացավ: Բաղին մի պահ ասես քարացավ: Հետո հանկարծ մոնչաց ցավից՝ որպես գազան վիրավոր, և արցունքի երկու ջիթ գլորվեցին խորշումած այտերի վրայով:

Բաղին վազեց բերդի կողմը, շփոթվեց քաղաքի փողոցներում ու շատավ բերդը...

Նրան ասացին, որ էլ ուշ է, իզուր է արդեն: Եվ գլուխը կախ ետ դարձավ նա եկած ճամփով՝ մենակ ու ձեռնունայն:

Էլ ոչ ոք չկար, ամեն ինչ կորավ:

Բաղին հազիվ կարողացավ մինչև քարվանսարան հասնել, ընկավ հենց ճամփի վրա, մի քարի մոտ: Գլուղացիք իմացան, եկան ու նրան գլուզ տարան:



Գլուզի գլխով շատ բան անցավ:

Բուլշևիկը նորից եկավ, և վարժապետ Մինասը Բավրիզի ճամփան րտեց, բայց Արազի մյուս ափին մեռավ:

Բոլշևիկը գյուղ եկավ, ճամփեքը բացվեցին: Իսանանց դուքանը դարձավ խրճիթ-ընթերցարան: Իսանանց մեծ ախպերը պիսիրի հետ փախավ Պարսկաստան, և այն օրից մինչև հիմա խաբար չկա նրանց մասին:

Գլխի Զաքին էլ փախավ մոտիկ անտառը և էլ գյուղը չեկավ: Գյուղացիք չգիտեին, թե ինչ եղավ նրա դին: Հերու էր, որ երեխեքը անտառում ցախ ժողովելիս մարդու ոսկորներ գտան մի քոլի տակ: Շատերն առում են, թե գլխի Զաքու ոսկորներն են:

Վերին հանդը տանող ճամփի վրա ջրաղացներին շհասած, Աթանանց մեծ ընկուզենու տակ Վանդունց Բադու տունն է: Բադին էլ տավար չի պահում: Տանը ոչ ոք չունի: Հաթամի աղջիկը որդու մահից հետո երկար լապրեց: Վանդունց Բադին մնաց մենակ, իր հին տնակի մեջ:

Նրա աչքերը լավ չեն տեսնում, ջրակալել են: Ամեն օր շալակով սրա-նրա համար անտառից մի քիչ ցախ է բերում՝ մի փոր հացի համար, իր կյանքի վերջին օրերն է ապրում:

Երբեմն էլ անտառում ցախ հավաքելիս, երբ մի քիչ ծանր է լինում շալակը, իրեն-իրեն թոնթորում է Բադին:

— Աստված, քեզ ի՞նչ ասեմ, որ ինձ տեսար, նրան առար:

Իրիկունը տուն է դառնում մենակ, օջախի մեջ մի երկու կտոր աթար ենտում և մեկնվում խարի վրա...

Իսկ դրսում, առաջվա պես Աթանանց մեծ ընկուզենին մեղմորեն օրորում է իր ճյուղերը Վանդունց խարխուլ խրճիթի վրա...

ԱՔԱՐՈՒՄ

1

Աքար գյուղը գեղանիստ է, շրջապատված անտառներով: Անտառում գարավոր կաղնիներ կան և հին վանքի ավերակներ: Ծառերի տակով պաղ առու է հոսում, գյուղի փողոցներով անցնելիս աղտոտվում և ներքև, լիճաններում ճահճանում: Առավոտներն անտառից զովութուն է իջնում գյուղի վրա և զովության հետ մայրենու և լորենու մաշկի հոտով հագեցած առողջ օդ: Բայց արևը կեծանելիս փողոցի աղբակույտերն են հոտում, գոմի բաց դռներից ելնող ամիակով հագեցած օդը չեզոքացնում է անտառի մաշկահոտը:

Աղբակույտում որդերի գլուխը տաքանում է, որդերը համաչափ շաքար

ժումով անաչք գլուխները դարձնում են աչ ու ձախ, ասես բոժոժ են հյուսում:

Աքարում կա քոս, արևից քոսը գրգռվում է, մեջքը պատին են քսում կամ դռան շեմքին, քերում ձեռքով, մինչև արյուն գա: Աքարում աչքացավ կա, և երեխաները արևաքոս ման են գալիս, աչքերը կարմրած, մի կեղտոտ շոր ճակատին: Տավարը դարաղ է ընկնում, կաղալով է քայլում, կճղակների արանքում սպիտակ որդերը ծծում են արյունատար անոթները և կովի կուրծի մեջ ցամաքում է կաթը, կովը ցավով է լիզում կճղակները, լեզվով գետին թափում սպիտակ որդերը:

Աքարը հին է՝ անհիշելի ժամանակներից: Եվ այդ ժամանակներից էլ սովորույթ է մնացել հաճար ցանել ավազահողում, քլունգով փորել սուպատեղը և կոացած, օրնիրուն, ձեռքով պոկել սուպի կարճ ցողունները, ռոպը ծեծել և ձմռան կարճ օրերին օրը երկու անգամ սուպաճաշ ուտել, կամ հաճարը ձավար անել, ձավարը մածոնով ուտել:

Աքարն աղքատ է: Եվ եթե երկու տարի հողերը չվարեն, անտառն իր մեջ կաննի Աքարին, քամին լորենու սերմերը շաղ կտա, թռչունները կաղին կտանեն կտուրների վրա, և հանգած թռնրի մեջ կաղինն իր արմատները կխրի: Եթե անտառը չլինի, սարից եկող հեղեղը մի գիշեր կարթի Աքարը, բարերով կջարդի կուժ ու խնոցի, կխառնի տուն ու մարագ: Հեղեղի երեսին հիվանդ կովի հետ միասին տաշեղի պես կլողան սպիտակ որդերը:

Ոչ հեղեղ է լինում, և ոչ էլ անտառն է սեղմում Աքարին: Հենց որ սուպատեղում մի շիվ է բսնում, աքարեցու քլունգը շիվն արմատով է հանում և պահում այն հողը, որը լղար կովի պես ցամաք հյութ ունի:

Աքարի քառասուն ծխից մեկն էլ Հանեսի աղջիկ Շահանի ծուխն է: Թեկուզ Շահանն արդեն տարիքով է և ութ տարվա այրի, բայց նրան գյուղում շարունակում են Հանեսի աղջիկ կանչել: Գուցե նրա համար, որ Շահանի ածխագործ ամուսինը տարին բոլոր անտառի խորքերում էր ապրում և երբեմն գիշերով տուն գալիս, երեսի մուրը լվանում, մինչև լուսաբաց Շահանի հետ գլուխը մի բարձի դնում, առավոտյան էլ բարձի վրա թողնում մի քանի արծաթ, մինչև նոր գալուստ: Եվ այդ կապից շորս տարվա ընթացքում երեք աղջիկ էր ծնվել, որոնց շեկությունը Շահանի ամուսնուն հիշեցնում էր իր մանկությունը, երբ դեռ ածխագործ չէր, գառան բուրդի պես մազեր ուներ զլխին:

Մի շաբաթ էլ ամուսինը չեկավ, և երբ Շահանն անտառը գնաց, ածխահորի մոտ տեսավ ամուսնու կայծակնահար դիակը, խանձված, օււացած, ածուխի մի մեծ կտորի պես: Այդտեղ էլ Քաղեցին: Կանանց որդերը

շալակին տունն եկավ, լաց եղավ շորերի վրա, և երբ լացը հանդարտեց, ամուսնու արխալուղի գրպանում երեք աբասի գտավ:

Սեր չկար նրանց մեջ և ոչ էլ ատելութուն: Մի հարկի տակ ութ տարի ապրել էին և այդ տարիներում վարժվել էին իրար, ինչպես ձին է վարժվում ախոռին: Մի ձմեռ անցավ, կաղնու տերևները կանաչեցին, և երբ Շահանը ուրիշի համար քաղհան անելիս բլրակի գլխից նայում էր անտառի խորքից բարձրացող ծխին, իհարկե, ամուսնուն էր հիշում, բայց կարոտ չկար և ոչ էլ քաղցր հուշ:

Գիշերները դռան կապն էր գցում և աղջիկների գլուխը դնում բարձի վրա, իր մարմնին մոտ առնում ծծկերին ու տաքացնում: Դարձավ թուխս, փոնց թևերը, և թևերի տաքության տակ աճեցին Շահանի շեկ աղջիկները: Պիտի մեծանային և սպասեին, որ թևավոր մի տղա առնե՞ր առաջնակին, հետո միջնակին, փոքրին: Եվ ոչ մի թուշուն Շահանի հարկի տակ չպիտի բերեր և ոչ մի շյուղ:

Ութը տարի անցավ: Հանեսի աղջիկը հացուխ էր, և քաղհան անող, և շալակով ցախ բերող: Ութը տարի թեժ թոնիրը խաշել էր դեմքը: Դրանից էր, որ դեմքը փայլ ուներ, զոդած խոփի պես: Թոնրի մոտից հեռանում էր, մի քանի տաք լավաշ կտան տակ, բաժանում էր աղջիկներին: Սարյակին էլ կտուցով որդ է բերում, ճտերին տալիս, նրա փետուրներն էլ փայլ ունեն, բայց սարյակը թոնիր չի տեսել:

Ութը տարի Շահանի կալը ցորենի խուրձ շտեսավ, մարագի կտուրին անձրևը փոքրիկ փոսեր արեց, և շուրը կաթեց գերանների վրա: Սարդը ստալն հյուսեց, և մի ձմեռ էլ մարագի երկու գերանը ձյունի ծանրությունից կեցցին, հող թափվեց մարագում:

Երբեմն Շահանն ուշադիր նայում էր մեծ աղջկան՝ Սանդուխտին, ուզում էր նկատել, թե հասնո՞ւմ է աղջիկը՝ հունցած խմորի պես, ինչո՞ւ ուշ է ձևավորվում մարմինը, շարժումները գեռ մնում են մանկական, հարցերն անմեղ ու միամիտ: Սրա-նրա հաջատանը Շահանը լուրեր էր որոտ, և երբ խոսք էր ընկնում աղջիկ տալու և առնելու մասին, Սանդուխտին էր մտաբերում: Մի տեղ լինե՞ր, տեղաց անե՞ր երեսի շրով, բեռը թեթևանար, մնացած երկուսի մասին մտածե՞ր: Հանկարծ ոչ ոք չուզե՞ր, աղջիկները գեղնեին սերմացու վարունգի պես և անպտուղ մնային նրանք: Բայց չէ՞

որ շնորհքով էր Սանդուխտը, ամոթխած ու խոնարհ, աչքերը՝ կտավատի կապույտ ծաղիկներ:

Եվ մի օր էլ, երբ Ղազարի Օհանը փողոցում Շահանից ուզեց Սանդուխտին իր որդու համար, ոչ մի խոսք չասաց կտավատի կապույտ ծաղիկների մասին, հարցրեց, թե Սանդուխտի հետ կալն ու խանդարված մարագը կտա՞ Հանեսի աղջիկը:

Երեկոյան միտք արեց, գնաց եղբոր հետ խոսեց: Եղբայրն էլ համաձայն եղավ:

— Ինչիդ ա պետք մարագը: Դրանից էլ լավ տեղ...

Հար տնից վերադարձավ, դարձյալ միտք արեց: Եվ Սանդուխտը ընհակացավ, թե ինչու մայրը նրա մագերը շոյեց, հետո կոացավ ճակատը պաշեց: Թարմ լավաշի հոտ էր գալիս մոր ծոցերից, և երբ Սանդուխտը աչքերը կիսաբաց արեց՝ տեսնելու մորը, զարմացավ, թե ինչքան շատ փող ուներ նա: Երդիկից լուսնի կաթնագույն շողք էր ընկել, և Շահանի բռան արծաթների վրա շողքն էր ցուլում: Սանդուխտին մի դեյրացու առնելու փողը կար, մի քիչ էլ ավել:

Մյուս օրը, երբ Ղազարի Օհանը կնոջն ուղարկեց աղջկատես, Շահանց Սանդուխտին լվաց և խնամքով հյուսեց շեկ ծամերը: Օհանի կինը հավանեց Սանդուխտին: Նա տուն մտնելուց առաջ կալն ու մարագն էլ էր նայել:

Օրը շաբաթ էր, երբ Ղազարի Օհանը, աղան, Շահանն ու Սանդուխտը գնացին զագսում գրանցելու տեղը: Կալ ու մարագի վաճառման թուղթը նախորդ օրն էին պատրաստել:

Սանդուխտը նոր դեյրա ուներ: Երբ քամուց փոփոտում էր դեյրայի տուտերը, սիրտն էլ հեաը լայնանում էր: Բայց Օհանի տղին նայելիս իսկույն ընկնում էր հաճույքի ալիքը, ետ էր քաշվում, պատյանի մեջ մտնում, ինչպես խխունջի շոշափուկները: Մութ և անորոշ կասկած կար նրա սրտում, կասկածի հետ և ուրախություն, որ մոր փեշից բռնած եկել է բավական ճամփա, Աքարը թողնելով անտառի հետև Աշխարհն ինչ մեծ թվաց նրա համար, դիմացի սարերը մոտիկ:

Եվ եղավ անսպասելին: Բժիշկը ներս կանչեց Շահանին ու Սանդուխտին, աղջիկն ամաչկոտ շարժումով դեյրան հանեց, բժշկի աչքերն ակնոցի միջով տեսան վտիտ ուսերը, տափակ կուրծքը և ձյունի պես սպիտակ մարմինը: Շահանը փորձեց ստել, թե հասած է, տերտերն է սխալ գրել, Սանդուխտը հիվանդ է եղել, գրա համար էլ մարմինը չի հասել, բայց բժիշկն օրենքից էր խոսում և համոզում, որ աղջկա համար վատ կլինի:

Սանդուխտը հասկացավ և երբ կոճկեց դեյրան, շուտերը հագավ, մոր փեշից բռնեց դուրս գնաց, տեսավ թե ինչպես բժիշկը օրորեց գլուխը: Գոռան մոտ Շահանը բարկացավ աղջկա վրա, որ փեշից է բռնում ծծկերի պես:

Ղազախի Օհանն օրենքի մասին լսեց, հոնքերը վեր քաշեց, մեկ էլ աչքերը փոքրացրեց: Հենց այդ վայրկյանին նա որոշեց օրենքը զանց առնել, թոնել վրայով, որպես բարակ մի առու, կողպեք կախել Հանեսի աղջկա մարագի դռնից:

Ճանապարհին Սանդուխտն առաջից էր գնում, Շահանն ու Օհանը միասին, Օհանի տղան հետևեց: Մանրաշարժ ու ծանրամիտ էր Օհանի տղան, ոսկորը պինդ: Խոսելիս պոռշը կախում էր. դրա համար էլ պոռշի մի անկյունից ծլուլն էր թափվում, որպես կտուրի նովդան: Նայում էր Սանդուխտին, գլուխը դեյրին, և ծլուլն ավելի շատ էր թափվում պոռշի նովդանից:

Շահանը ճանապարհին պատմեց բժշկի ասածը՝ սպասելու մասին, բայց Օհանը կտրուկ հայտնեց, որ սպասել չի ուզում: Աքարում աղքատ աղջիկ շատ, ավեր կալ ու մարագ լի:

— Թող ապրեն, որ հասակն առավ, էն ժամանակ տանենք զագո. օրենքն ի՞նչ պիտի իմանա: Գուհի մա պայմանը կապիր...

Այդպես էլ արին: Սանդուխտին լացով ու խաբելով տարան, մայրը մինչև լույս մնաց նրա մոտ, խոստացավ ամեն օր գալ, ծեծով սպառնաց, մայրն էլ լաց եղավ: Լուսադեմին Սանդուխտը կտորեց իր խոսքը և վախով նայեց Օհանի տղին, որ ցորենով լի շվալների մոտ պառկել, խոսփացնում էր:

Հաջորդ գիշերն էլ լաց եղավ Սանդուխտը, բայց գլուխը խոնարհեց Օհանի տղի հետ մի բարձի վրա: Լուսաբացին սփրթնած, արցունքն աչքին մոր մոտ վազեց, փաթաթվեց նրան, բայց մայրը հտ բերեց, գարձյալ համոզեց:

Ղազախի Օհանը նորագել էր կտրած գերանները և քար թափել Հանեսի աղջկա կալ ու մարագի մոտ:

Զորս ամիս անցավ: Աքարի պատմության համար շորս վայրկյան էլ չէր անցած ամիսները: Էլի հաճար էին ուտում, իսկ նորոգած մարագը մատնաշափ չէր փոխել գյուղի ընդհանուր տեսքը:

Սանդուխտը հաշտվել էր վիճակին, անխոս էր մնում, եթե հարց տային, գլխի շարժումով էր պատասխան տալիս: Թվում էր, թե ոչ միտք ունի և ոչ էլ ցանկություն, լիմոնի տրորված կճեպ է, անշունչ մի իր: Ինքըն իր մեջ էր ամփոփվել, հայրական տունն էլ չէր գնում:

Եվ հանկարծ զգաց, որ կրծքի տակ մի բան է շարժվում: Վախեցավ, ձեռքը սրտին տարավ, հանգստացավ: Թվաց, թե ջրի մի կույտ շարժվելով կորավ կրծքի տակ: Մի քանի օրից հետո նորից շարժվեց, և մի կասկած սողաց այդ շարժումի հետ:

Սանդուխտը մայր պիտի դառնար: Մարմինը լարում էր բոլոր մկանները, հավաքում բոլոր հյութերը, արագորեն զարգանալու և հարմարվելու նոր վիճակին: Նա նմանվում էր խնձորենու մի ճյուղից կախված փոքրիկ խնձորի, որին արևը կարմիր գույն էր պարզել, բայց նիհար ճյուղը հյութ չէր հասցրել, որ մեծանա, հասունանա:

Զրի գնալիս՝ մանկամարդ մի ուրիշ հարս Սանդուխտին սովորեցրեց, թե ինչպես են վիժում: Սանդուխտը նախ վախեցավ, բայց հետո, երբ կուժը տեղը դնելիս կուցացավ ու նորից կրծքի տակ շարժվեց, մի վճռականություն եկավ վրան:

Կատարեց այնպես, ինչպես հարսն էր պատվիրել: Սոված մնաց երկու օր, երրորդ օրը դեղին ծաղկի ջուր խմեց և երբ փորում անասելի ցավեր զգաց, շրթունքներն ու փոքրիկ բուռնցքները ցավից սեղմելով, աննկատ վազեց գոմը, դուռը դրեց: Ցավը թնդելիս պիտի քարով խփել փորին...

Երեկոյան նախիրը հանդից տուն եկավ: Ղազախի Օհանը գոմի դուռը բաց արեց, հենց դռան մոտ արյուն տեսավ և հարսին՝ ուշաթափ ընկած: Սանդուխտին տուն տարան: Լուսադեմին արյան վերջին կաթիլի հետ թռավ և նրա շունչը:

Շահանը լաց եղավ, գերեզմանի մոտ էլ, տանն էլ:

Այդ գիշեր նրա ծամերից մի փունջ սպիտակեց:

ԱՅՈՒ ՍԱՐԻ ԼԱՆՁԻՆ...

Առաջին արտրականչի հետ զարթնում էր Պետին, տրեխները հագնում, տան առաջ հոսող առվակի ջրից մի երկու կից անում, երեսը լվանում, փափախով սրբում ու գեղի ծայրին կանգնում, որ կովերը դուրս անեն, ինքը սարը տանի պահելու:

— Զառի աքիր, շատ ես կթել, հեյվանը մեղք ա, ջան չունի,—ասում էր Պետին պառավ կնոջը, որ մի տուն լիքը մանուկներ ուներ և մի կով:

— Ճար չունեմ, Պետի,—ու տնքում էր Զառի բիբին, պառավ կովն առաջ արած:

Խնամողի աչքով էր Պետին նախիրին նայում: Մի նայելուց իսկույն հասկանում էր, թե որ կովն է գիշերն անհանգիստ եղել, որն է շատ քաղցած:

Եվ երբ վերջի կովերը բերեին, մահակը ճոճում էր օդում ու զիլ կանչում:

— Հո՛, մարալ...

Պետին հնուց նախրապան էր: Նա աչքը տավարի մեջ էր բացել: Երբ երեխա էր, հորթերն էր պահում, իսկ հետո գեղի նախիրն էին տվել:

Ոչ ոք չունեիր: Գեռ հորթարած էր, երբ մայրը մեռավ, և Պետին մնաց կառարչալ որբ: Գյուղն էր նրան պահում. մի օր մեկի տանը, մյուս օր մյուսի գոմում կամ մարագում քնում էր մինչև լուսարաց և էլի վեր կենում նախիրը քշում:

Իր հայրական հին տունը խանգարվել էր, կտուրը խոնարհվել, գերանները օջախի ծխից սևացած կախվել էին, կտուրի հողն ու քարը թափել նեքում: Վայրի կանեփը փարթամորեն աճում էր տան ավերակների վրա, և հարևանի հավերքը քուզուց անեղուց հետո պառկում էին կանեփի շվարում:

— Պետի՛, ա՛յ անժառանգ, բա ե՞րբ պիտի հորդ ամարաթը շինես,— հարցնում էին նրան:

— Պետու ծաղկատար դեմքը ժպտում էր, հատ ընկած աչքը ծամ էր ու բերանը ձգում, ուսերը վեր քաշում:

— Սաղ գեղն իմ տունն ա,—կասեր, և մահակը էլի կճոճար օդում: Երբ շուխան պատում էր կամ տրեխի թելն էր կտրում, շալի շալվարի հին կարկատանները մաշվում ու մազոտ ազդրերը բաց անում,— Զառի աքիրն էր միշտ հանդիմանում, թե ինչու կնիկ չի առնում, հոր անգամ օջախը շինացնում:

— Պետի, փուշ մնացած, կարողութունդ ո՞վ ա ուտելու...

Հանդիմանում էր Զառի աքիրը և շորացած ազդրերի ակունքի պես աչքերը կկոցում, բրդի թելը, ոսկրոտ մատները դողացնելով, ասեղի ականջով անցնում և կարկատում Պետու շալվարը շալի:

Գեղի հարսներն էլ էին ծիծաղում Պետու վրա, բայց նա նեղանալ չունեիր: Ժպտում էր, և ճերմակ ատամների շարքը փայլում էր մսոտ շուրթերի միջև:

Մի կաղ, ձեռքի մեկը շորացած, պառավ աղջիկ կար գեղում, ոչ սրա-երա փռած ցորենն էր պահում կամ կտուրի վրա մեկնած շորաթանը: Աղջիկները նրան «Պետու հարս» էին ասում և ծիծաղում, իսկ պառավ աղջիկը, կաղ և ձեռքը շորացած, ունքերը կիտում էր, զայրանում, հայհոյում և հետո էլ ժպտում ամոթխած:

Մի միտք, որպես ամպի ճերմակ քուլա ամառվա լազուր երկնի վրա, ցանկալի մի միտք լողում էր հանդարտ պառավ աղջկա ուղեղում:

— Եթե այդպես լիներ, Պետին իրեն ուզեր...

Մարագում, դարմանի վրա պառկած, գիշերով հանկարծ Պետու միտն էր գալիս աղջիկների ծիծաղը, Զառի աքոր խոսքը, թե՛

— Կնիկ ա՛՛ո, այ փուշ մնացած:

Միտքը ման էր ածում գյուղի ծանոթ տներում, աղջիկներին վերհիշում: Մի պահ թվում էր իրեն, որ լավ կլինի, եթե կնիկ ունենա, իրիկունը տուն գա, մեկը լինի, որ տաք ապուր եփի և տեղաշարք փռի: Բայց հարմար աղջիկ չէր գտնում: Չէին տա, գեղում իրենից լավ և ունևոր մարդ շատ կար:

Մարմինը ետում էր, քոր էր զգում և քնաթաթախ երկար եղունգներով քարում էր մարմինը, ինչպես եղն էր քորում վիզը՝ մի հաստ քարի կամ այլանի քսելով: Միտն էր բերում և կաղ աղջիկը պառավ, և հետո միտքը մեզրաճանճի պես թռնում էր ուրիշ ծաղկի վրա, շնչում նոր բույր:

Եվ այդպես էլ մնաց:

Ցարիներ անցան, տարիների հետ շահելութունն էլ անցավ, և աշնան խոտի պես շորացավ տուն դնելու, կնիկ առնելու միտքը թաքուն:



Բացվում էր գարունը, հալոցքն էր սկսվում, և առվակներով ձյունաշուրք կլչկալով հոսում էր: Գարնանը արևը մեղմ տաքացնում էր գետինը, և ձմռան երկար գիշերներից բեզարած գյուղացիք արևկող էին անում, նստում պատի տակ, մի չոր գերանի վրա և զրուցում:

Բացվում էր գարունը, և գոմերում տավարը տաքից նեղվում էր, անհանգստության նշաններ էր ցույց տալիս, շուտ-շուտ դուռն կողմը նայում և բառաչում լիաթոք: Մոզիները գիծ և արջատները խամ ջրի տանելիս թռչկոտում էին ձյունի վրա, պողահարում իրար: Բուղաները շաղ, մսոտ ազդրերով, իրենց թաց ունգերով գարնան տաք օդում դուրեկան հոտ էին որսում, բառաչում և ոտքերով ջլապինդ կփսահալ գետինը փորում:

Անհանգիստ էր և Պետին:

Տաք նրան էլ էր նեղում, ավելի շատ էր քորում սարսիքը և շուտ-շուտ նայում Այու սարին: Սարը նրա նշանն էր: Գարնան արևը հալեց-նում էր ձյունը Այու սարի, և կողերը քարոտ սևին էին տալիս:

Երբեմն գյուղի մտտակա հանդն էր գնում, ոտով ձյունը դեռ ու դեռ հրում և տեսնում, որ նոր ծլող բեղի պես կանաչ խոտը ցցվել է ձյունի տակ:

Կենդանական մի հաճույք էր ապրում Պետին գարնան սկզբին: Զյունաչրի առավակների պես նրա երակներում արյունն ավելի էր եռում և ծիծաղում էր, կոկորդալին ձայներ հանում: Այդպես ախորժով վրնչում է ձին, երբ ախորժ ոսկեհատ գարի են լցնում:

Պետին գարնան պատրաստութուն էր տեսնում, տրեխներն էր կարկատում, պարկի քուղերն էր ամրացնում, ուսին գցելու հնամաշ կարպետն էր փոում արևի տակ:

— Պետին կարպետն արևին է տվել,—ասում էին գյուղացիք, և այդ նշան էր, որ մի քանի օր հետո տավարը հանդ է գնալու:

Հոգատար մոր պես Պետին գոմից գոմ էր գնում, դիտողութուն անում կովատիրոջ, որ այս կովին շատ կեր տա կամ գոմը տաք պահի: Եթե մեկը կովի ծնելու ժամանակն էր ուզում իմանալ, Պետուն էր հարցնում, թե կովը երբ է բուղով եկել:

Պետին գիտեր, թե այս հորթը որ բուղից է, կամ այս կովը դժվար է ծնում: Կովը ծնելիս նա անպատճառ պիտի զլխավերև կանգներ, օգներ կովատիրոջը:

Եվ երբ լորձունքոտ հորթը թաց կոպերը հազիվ էր կարողանում շարժել, Պետին էր մաժում քիթն ու պոռնզը կամ կովին շոյում:

— Զան, հելվանը շատ տանջանք ա քաշել... Համա տես է, էս էն ալա բուղի հորթն ա հա՛:

Կովը ծնելուց տան տերը մի քան պիտի տար Պետուն, մի հին արխալուղ, մի աման կաթնով, կամ խոտանում էր կալին մի կոտ ցորեն: Պատահում էր, որ կովը հանդին էր ծնում: Նախիրը բերելիս Պետին հորթը ուսին էր դնում և նախիրն առաջ արած գյուղ մտնում: Այսպիսի օրերին ժպիտն անպակաս էր նրա դեմքին: Գիտեր, որ բարիք է շալազին տանում և ուրախութուն կովատիրոջ համար:

Նախիրը հանդ տանելուց մի քանի օր առաջ նա իմաց էր տալիս, որ պատրաստվեն: Եվ ինչքան շատ նորութուններ էր պատժում առաջին օրերին, եթե տաք էր վերադառնում: Զյունը հալվել էր, և ձյունի տակ

մի կմախք կար ցցված: Պետին մոտենում էր, նայում և որոշում, թե այդ այն ոչխարն էր, որ ձմեռը գայլը գյուղից տարավ:

Օրերն ավելի էին տաքանում, կանաչը բոյ էր քաշում, բացվում էին ծաղիկները՝ կապույտ, դեղին, կարմիր, հազար բզեզ ու թիթեռ էին թռչում, մասուրի թփերի վրա ծիտն էր բույն հյուսում, և նախիրը փնչոցով արածում էր խոտը համեղ:

Պետու համար գարունը երջանիկ օրեր էր բերում: Տարիներ շարունակ նույն հանդում ու սարում տավար պահելով նա այնքան էր վարժ խոտին ու ծաղկին, որ անսխալ կարող էր ասել, թե որ ծաղիկն է կանուխ բացվում, որ խոտն է ցավի դեղ:

Երբեմն երբ նրա աչքին էր ընկնում մի շքեղ բզեզ կամ թիթեռ գունավոր թևերով, կամ դիտում էր, թե ինչպես են մրջյունները աշխատում հերվա բույնը սարքելու,—Պետին գլուխը երբերում էր և ինքն իրեն խոսում.

— Փառքդ շա՛տ, ա՛յ աստված, որ էսպես հրաշք բաներ ես ստեղծել...

* *
*

Մի ամառ էլ տավարի մեջ ցավ երևաց: Ազին ծաղիկ մի կով առավոտ նախիրը քշելիս միշտ ետանում էր մյուսներից, կանգնում ճամփի կիսին, թնչում: Պետին զայրացավ, մահակով մի անգամ խփեց, բայց մինչև սարի տակը կովը չկարողացավ գնալ:

Պետին տեսավ, թե ինչպես կովի ոտքերը դողացին, շոքեց փնչոցով և էլ վեր չկացավ: Քթածակերից արնախառն թարախ էր գալիս, փորն ուռել էր, և հիվանդ կովը, որի շուխտ աչքերում մի կսկիծ կար, նայում էր Պետուն:

Պետին շիվարել էր:

— Ի՞նչ եղավ սրան, յոնջա տված չլինե՞ն...

Դանակը հանեց, որ արյուն առնի, ականջի ծայրերից պատռեց մի քիչ: Կովը ցավից գլուխը ձգեց, փորձեց կանգնել, բայց ոտքերը դողացին: Տաք արյան շիթերը ցալքուն տվին կանաչի վրա, բայց հետո արյունը լերդացավ, իսկ կովը չավացավ:

Պետին գնաց, որ շուր խմի մոտակա աղբյուրից, ցրված նախիրը հավաքի ձորի մոտ: Եվ երբ վերադարձավ, կովն արդեն սատկել էր: Արնախառն թարախը քիթի թափվել էր, լեզուն կապտել, սառել ատամների արանքում, փորն էլ ուռել էր՝ ձգված թմբուկի պես:

Պետին նոր դիրք ընկավ, որ «սե ցավ» է: Երեկոյան գլուղում էլ ուրիշ խոսելիք չկար: Բուրբի գեմքին էլ տխրութիւն կար. հարցնում էին իբր, թե որտեղից կարող էր ցավը պատահած լինի, շուտ-շուտ նախքի հրագնեքով գոմ էին գնում, նայում ապրանքին:

Ասես սառը ջուր էին մազել Պետու գլխին: Իրեն կորցրել էր, շիվարել: Մտքով հազար ու մի բան էր անցնում, թե ինչու համար ցավը պատահեց:

Զառի աքիբն էլ մի կողմից էր կրակին յուղ ածում.

— Պետի, ցավը տվովի ա, փորձանք ա լինելու գեղում:

Եվ Պետին ավելի էր մտածում «փորձանքի» համար, բայց ավելի ջուտ վախենում էր բժշկից, որ տարիներ առաջ մի անգամ էլ էր եկել գլուղը, տավարի ցավի ժամանակ:

Մյուս օրը երկու կով էլ սատկեց: Լուր եկավ, թե հարևան գլուղում էլ է կով սատկել: Իսկ երեկոյան դեմ գզիրը կտուրներէից ձեն էր տալիս, որ վաղը քաղաքից տավարի բժիշկ է գալու:

Պետին մեջքը դեմ էր արել գոմի դռան, հենվել մահակին, գզիրին էր լսում: Միտն ընկավ Զառի աքոր խոսքը, թե՛

— Պետի, գեղի վրա փորձանք ա գալու:

Այդ իրիկուն նա բերանը մի պատառ էլ չզրավ: Կուրվեց կարպետի մեջ և պանկեց հերվա շոր խոտի վրա:

Առավոտյան Պետին մուրվածի պես էր: Նրա կյանքի սովորական ընթացքը խանգարել էր հանկարծակի երևացած ցավը: Օրվա այդ ժամին նա շատ քիչ էր գլուղում եղել և անվարժ էր իրեն զգում, ման էր գալիս գոմից գոմ, ապրանքին էր նայում: Իսկ ապրանքը գոմերի առաջ կապուտած բառաշում էր սարի կանաչ խոտի համար: Եվ տավարի ամեն մի բառաչը ցավ էր ազգում Պետու սրտին:

Օրը ճաշ էր դարձել, երբ երկու պահակի հետ բժիշկը գլուղ եկավ: Պետին տեսավ նրան ձիու վրա, պսպղան ակնոցն աչքին, փայլուն կուկարդը ճերմակ գլխարկի վրա:

Պետին տեսավ և ճանաչեց նրան:

Տավարը հանեցին գլուղի վերև, մի ընդարձակ կալ, կապուտեցին առաջուց պատրաստած բիհերից: Տավարը նեղվում էր շոգից, բառաշում էր սարի կանաչի համար, իսկ տավարատերերը գլուխները կախ, ձեռները ծոցին կանգնել էին, ամենքն իրենց տավարի մոտ:

Եկավ և բժիշկը, պահակներին ուղարկեց, որ գոմերում փնտրեն, թե չկա՞ թաքցրած ապրանք: Եվ պահակները որսի շան հոտառութիւնով գոմերն ընկան:

Նրանցից մեկը, որ կես արշին բերան ունէր, մեկի գոմի դուռը բաց անելիս աչքին ընկավ շաղ աքլորը—աղբում բուշուշ անելիս: Տեսավ աքլորին, կես արշինանոց բերանը ջրակալեց և թրով աքլորի մի թևը պոկեց, արնակոլով աքլորը խուրչինի մեջ կոխեց:

Տան տերը կանչեց, աղաչեց, բայց նա սպառնաց, թե բժշկին կասի, որ ապրանքը փախցրել է ուրիշ գլուղ, սպառնաց և ահարկու բռունցքը մոտեցրեց գլուղացու քթին:

Մի գոմում գտան թաքցրած մի կով, դարմանով լի քթոցների հետև: Աղբատ մի տան միակ կովն էր, թաքցրել էին գոմի մութում բժշկի վախից:

Ամբողջ գլուղը հավաքվել էր գլուղի վերև, տավարի մոտ: Երբ պահակները վերադարձան գոմից հանած կովը առաջ արած, բժիշկը ակնոցի հետևից հերսոտ աչքերով նայեց գլուղացիներին և ինչ-որ բան ասաց, մատն էլ թափ տվավ:

— Զարանում ա, որ ապրանք են թաքցրել,—ասաց մեկը:

Նետո սկսեց քննութիւնը, որին սրտատրոփ սպասում էին գլուղացիք: Նրանցից յուրաքանչյուրի սրտում ահ կար և կասկած, թե իր կովը կաքող է հիվանդ դուրս գալ: Էլ պրծնում չկար այն ժամանակ:

Բժիշկն սկսեց ծայրից: Մոտենում էր ամեն մի տավարի, նայում լեզվին, աչքերին, պոչի տակին, ձեռքերով նշան էր անում պահակին, առողջը հիվանդից ջոկելու:

Պետին էլ էր այնտեղ: Կանգնել էր հեռուն, նայում էր բժշկին, կովերին, գլուղացուց: Ժխորի մեջ ոչ ոք ուշք չէր դարձնում նրա վրա, ոչ ոքի մտքով չէր անցնում, որ Պետու սիրտը թրթռում էր, հենց որ բժիշկը մոտենում էր մի կովի և ավելի երկար սկսում զննել:

Իրիկնադեմին քննութիւնը վերջացավ: Տասներկու կով հիվանդ էին: Վառելուց բացի փրկութիւն ուրիշ միջոց չկար:

Եվ պահակները շտապեցնում էին գլուղացուց, որոնք փոսեր էին փորում հիվանդ տավարը վառելու:

Շատերը լալիս էին: Հորթերը բակերում բառաշում էին, բառաշում էին և կովերը, ցավ կար և նրանց սրտում, որոնք բահ ու ջրունգով արագ փորում էին խոր փոսեր:

Բժիշկն էր մենակ խաղաղ. սովորական բան էր նրա համար:

Երբ փոսերը պատրաստվեցին, հիվանդ կովերին քշեցին փոսերի մոտ: Պահակներից նա, որ կես արշինանոց բերան ունէր, կացնի բութ ծայրով խփում էր կենդանու ճակատին, շմում էր կենդանին անասելի ցավից, բառաշում և գլուղում փոսի մեջ:

Հետո սև նավթ թափեցին և խոտի խուրձեր, վառեցին նավթն էլ, խոտն էլ: Մութի մեջ վառվում էին խարույկները, ճենճերահոտ էր բարձրանում, իսկ քամին նավթի ու խանձված մսի հոտը փչում էր հեռու, գեպի սարերը, ուր կանաչի վրա գիշերվա ցողն էր կաթում:

Բակում բառաչում էին հորթերը մինչև ուշ գիշեր, սուգ էր իշել գյուղի վրա:

Պետին անխոս, ցավը սրտում, կանգնել էր վառվող խարույկների առաջ, միտն էր բերում սև կովը, որ կուրծը կախ էր միշտ, և հանդից գալիս յուղոտ կաթը ծլում էր:

Երբ խարույկները հանգան, Պետին շիվար ետ դարձավ, կոլովեց կարպետի մեջ, պառկեց հերվա շոր խոտի վրա:

Որբ մնացած հորթերը բառաչում էին, և հերվա խուրձը գլխի տակ, հնացած կարպետի տակ Պետին լալիս էր անօգ մնացած մանկան պես:

* *
*

Մյուս առավոտ տավարը տանելիս Պետին սիրտ շարավ կալերի կողմը նայելու, գլուխը կախ անցավ: Աղբյուրի մոտ Զառի աքիրն էր, որ կովը բերել էր նախիրին խառնելու Եվ Պետին առաջվա պես նրան շասաց, թե՝

— Հեյվանը մեղք ա, քիչ կթի:

Բայց Զառի աքիրը տնքալով իր խոսքն ասաց, որ՝

— Փորձանք ա գալու գեղի գլխին:

Առաջին օրերը շատ ծանր անցան: Պետին չէր կարողանում մտահան անի կրակով վառած տավարը: Սիրտը մղկտում էր, նեղանում էր իրենից, երբ մտաբերում էր, թե ինչպես ինքը հիվանդ կովին սարի տակ մահակով մի անգամ խփեց:

Ժամանակն անցավ, ժամանակի հետ էլ գյուղը մոռացավ կորուստն իր: Չմեռը եկավ: էլի առաջվա պես Պետին գոմերումն էր, ծանրած կովերին էր նայում, պարապությունից նեղվում և ձմռան վերջին նայում, թե երբ են երևալու Այու սարի դուրս ցցված կողերը:

Չմեռն անցնում էր, հալոցքի հետ խոտ էր կանաչում, կանաչի հետ շահելանում էր Պետին, ետում էր արյունը: Բայց մտքից հանել էր կաղիկ, մի ձեռքը շորացած պառավ աղջկան:

Զառի աքիրն էլ մեռել էր, և էլ ոչ ոք նրան չէր ասում, թե՝

— Կնիկ առ, այ փուշ մնացած, հորդ ամարաթը շինիր:

Պետին մերվել էր նախիրին, ընտելացել: Նախիրից դուրս ուրիշ գործ չունեի նա, մտքերը նախիրից չէին հեռանում, սարերից դեմը չէին գնում:

Միայն երբեմն, ամռան պարզկա լուսաբացին, երբ օդը մաքուր է, ապակու պես թափանցիկ, երբ հեռավոր սարերի գագաթները պարզ երևում են կապույտ հորիզոնում, նախիրն Այու սարի փեշերին արածացնելիս Պետին նստում էր մի բարձր քարի վրա և դիտում հեռուն, դաշտն անծայր, որի մեջտեղ կանաչ այգիների մեջ թաղված էր քաղաքը հեռավոր:

Մի անգամ էր եղել այնտեղ, երազի պես էր հիշում քաղաքը հեռու, ասես չէր էլ տեսել, լսել էր հեքիաթի հետ, ձմռան երկար գիշերներին:

Նախիրը տունը քշելիս մի իրիկուն էլ նա գյուղում անսովոր իրարանցում տեսավ: Ամռան իրիկուն էր, հնձից, հարից տունը դարձած գյուղացիք խոսում էին խումբ-խումբ:

Փողոցով անցնելիս Պետին լսեց, որ մեկն ասեց, թե՝

— Այ անդարդ մարդ, սալդաթ էլ չի գնալու:

Պատերազմ էր հայտարարված, գյուղը զինվոր պիտի տար:

Աշխատանքի խաղաղ օրերին այնպես էր երևում, թե սարերի հետև քնկած այդ գյուղի մասին քաղաքում ոչ ոք չգիտե: Բայց այդ օր գյուղն անտես թելով կապված զգաց իրեն, և մի բռունցք, զինված բռունցք հարված էր պատրաստում գյուղի համար:

Գյուղից զինվոր տարան:

Առաջին ամիսներում ասես ուրախություն կար: Զինվորների առաջին խումբը դժուր-զուռնով ճամփա ընկավ, բայց հետո դարձան ծիծեռնակի պես երևացին կոնատ տղերք, փայտե ոտքեր: Գերութունից նամակներ եկան, օտար և անսովոր խոսքեր եկան հեռու քաղաքներից զինվորների նամակների հետ, և գյուղը կերպարանքը փոխեց: Դժուր-զուռնով էլ զինվոր չէին ճամփու դնում, լաց եղող շատ կար, գյուղում այրի մնացած հարսերի համարքը ավելանում էր:

Ամեն ինչ գյուղում տակնուվրա էր եղել: Օրերը տարի էին դարձել, աղքատությունը ավելանում, հացի գինը բարձրանում, շաքարը դառնում հիվանդի դեղ:

Եվ ասես վերջ չէր լինելու:

Պետին գլուխը քաշ իր գործին էր: Գյուղում ասես նրան չէին էլ նկատում, առաջվա հանաքները չկային, սարում ծնած հորթը տուն բերելիս տան տերն առաջվա պես չէր ուրախանում:

— Պետի՛, մի խաբար բեր է՛, էդպես մի խեր խաբար բեր գերմանու պլենից:

Պետին ուսերը թռթկում էր, անխոս հեռանում: Վարձն էլ քշացել, առաջվա շափ հաց չէին տալիս, շատերն էին փող տալիս հացի տեղ, թղթի փողեր, որի համարը Պետին չգիտեր:

Հին շոր ոչ ոք չէր տալիս, շատերն էին հնացած շորեր հագնում: Պետին ինքն էր գոմում, ճրագի լուսի տակ ասեղը թելում, շուխի հերվա կարկատանը բրդի թելով նորից կարում: Հնացել էր ուսի կարպետը, և ոչ ոք չէր մտածում Պետուն մի նոր կարպետ տալու: Պաշարի մեջ շատ անգամ էր միայն շոր հաց լինում, յուղն ու պանիրը գյուղը ոսկու հաշվով էր ծախում: Առաջվա առատ ու լի օրերը չբացել էին:

Եվ երբ Պետին նախիրի հետ բարձրանում էր Այու սարի փեշերը, միտն էր բերում Զառի աքոր խոսքը.

— Փորձանք ա գալու, Պետի...

Միտն էր բերում, նայում քաղաքին, միտքը դանդաղաշարժ ծայրը ծայրին չէր հասցնում, մի ափի չէր հանգում:

Զմեռը եկավ: Նախիրը գոմերում էր, բայց առաջվա պես չէր: Օրեր էր պատահում, որ սոված էր մնում, աշխատում էր գոմերում, բայց հացի չէին կանչում: Ինքն էլ ամաչում էր հաց ուզի:

Նստում էր գոմի տաք անկյունում, լսում, թե ինչպես են որոճում կովերը, ուտելու պահանջ պոսում:

Եվ մի հին միտք, որպես մանուկ օրերի հիշողություն, ելնում էր գլխի մեջ, շարժվում կանաչ թրթուրի պես: Այդ հին օրերի ծածուկ միտքն էր, տուն ունենալու, օջախ շինելու ցանկությունը զուսպ, որ ծնվում էր առաջ, երբ կուշտ էր, և երակների մեջ եռում էր արյունը:

Ժպտում էր ինքն իրեն: Մաղկատար դեմքի վրա ժպիտը փայլում էր մի պահ, հետո լուծվում, անէանում: Կռանում էր գլուխը, հառում էր աչքերը մի կետի, միտք անում երկար, մինչև քունը հաղթեր:

Գյուղում մի օր էլ լուր տարածվեց, թե ազատություն է ընկել, զորքը տուն է գալու, թագավոր չկա, կոնիվ չկա:

Տեսակ-տեսակ մարդիկ եկան գյուղ, հազար ու մի խոսք ասացին, ժողովներ արին: Բայց այդ բոլորից գյուղը միայն հասկացավ այն, ու դրուժյունը ծանրանում է, նոր փորձանքներ են պահված օրերում գալիք:

Զինվորները վերադառնում էին գիշերով, զենքով, առանց հրացանի:

ծածկվում էին ցրեկով մարագներում, մոտակա սարն էին փախչում, երբ լսում էին, թե մարդ է գալու գյուղ ժողովի, նոր զորքի:

Աշուն էր, երբ լուր բերին, թե մոտակա շրջանում հայ, թուրք խառն ընկել են իրար, գյուղեր են կրակում. երկուստեք խմբերը դարձել են հրեծիգներ վայրագ, արյունն են ո՞րում արանքում գյուղերի:

Գյուղում զենքը մահակից շատացավ: Գնդացիները կային, խոսում էին թեգանթի մասին: Երեխաները զենքից էին խոսում, հատ ու կենտ կրակոցները սովորական էին դարձել:

Զենքի հետ կողոպուտն էլ շատացավ: Գյուղում ապահով չէր: Քնելուց առաջ տան դռների կապերը ավելի էին պնդացնում: Գողություն կար աչքիներում, գյուղը հին հաշիվներ էր մաքրում և հրկիզում հարևանի արտը, տասը տարի սրտում պահած վրեժը հանում:

Համարյա ամեն իրիկուն դիրքապահներ էին շրջում գյուղի շորս կողմ: Նոր մարդիկ էին եկել՝ խմբապետ, վաշտապետ, որոնք լավ սենյակներում էին ապրում, յուղ ու հավ պահանջում, հեռանում գյուղից մի քանի օրով և թալանով վերադառնում:

Գյուղը կծկվել էր, վախից կուշ եկել: Բայց և կերուխում կար հարուստ տներում, ուր հրամանատարը հարբած կրակում էր տասնոցից պատահանից դուրս, օդի մեջ: Սոսկում էին ազդում գյուղի վրա գնդակները՝ թեժ արճիճ, որ վզում էին ձմռան ցուրտ օդում: Կես քուն, կես արթուն գյուղը հսկումի մեջ էր, մինչև լուսաբաց ականջը ահազանգի պատրաստ:

Տավարն էր, որ տաք գոմերում փնջացավ որոճում էր առաջվա պես, ծծկեր մանուկներն էին, որոնք անգիտ, անբան մուշ-մուշ քնում էին օրոցի տաք բարուրների մեջ:

Պետին գյուղի գործերին չէր խառնվում: Ժողով չէր գնում, հարցնող չկար, մարդատեղ չէին դնում: Առաջվա պես գոմերում էր գիշերում, տավարի հետ, կամ մարագի դարմանի մեջ:

Շնչադրում էին գյուղը, ցուցակներ կազմում, տասնյակների բաժանում: Եվ ամեն անգամ, երբ գյուղացիք հարցնում էին, թե էլ ո՞վ մնաց ցուցակ մտցնելու, մեկը հանաքով պիտի ասեր.

— Բա Պետին:

Մյուսները պիտի ծիծաղեին, շահելները սրախոսեին, թե Պետին լավ թեգանթ կնետի կամ հրաման կտա, և մեկն ու մեկն էլ հանկարծ, խոսքի մեջ պիտի ասեր.

— Հանաքը դեն, Պետին աչքիս շատ ա այլակերպ:

Պետին այլակերպ էր դարձել: Նա քաշվել էր, կծկվել, շատ քիչ էր

խոսում, շատ քիչ էր երևում մարգամեջ: Ասես ծերացել էր, աչքերը փոս էին ընկել: Ճակատի կնճիռները շատացել: Քայլելիս գլուխը կախ էր պահում, մի բան փնտրողի պես:

Երբ խոսքը Պետու վրա գար, առաջարկ էր լինում Պետուն մի շուխ տալ կամ կարպետ:

— Էն ի՞նչ ա հալը, գաղթականը նրանից լավ ա:

Բայց գյուղն իր ցավերն ուներ, Պետու մասին հոգալու ժամանակ չկար:

Չմեռն անցավ, հալոցքի հետ Այու սարի կողերն էլ բացվեցին, Պետին էլ ժիրացավ:

Կանաչը հերվա շոր խոտի տակ ծլել էր արդեն, գետինը ձմռան ամբարած խոնավությունն էր գոլորշիացնում: Կաթում էին կտուրները, ցեխ էր փողոցներում, դուրեկան էր շերմությունը գարնան արևի:

Պետին նախիրը հանդ տարավ: Այս անգամ մահակի հետ նա հրացան էլ ուներ:

Իր օրում հրացանից չէր կրակել, նա իսկի ձեռք էլ չէր տվել: Պետին շատ ուզեց հրացան շառնի, բայց ստիպեցին: Վաշտապետը հերսուռեց, ոտը գետնին խփեց, Պետին էլ վախից տապ արավ, համաձայնեց: Գյուղը վախ ուներ, թե կարող էին տավարը սարից փախցնել:

Միծաղում էին, երբ մի քանի շահել սովորեցնում էին Պետուն հրացան բանեցնել: Պետին վախվախելով ձեռք տվավ հրացանին, ձեռքը ետ քաշեց, կարծես կրակ էր, այրեց: Եվ հրացանը մահակի պես ձեռքն առած ամեն օր նախիրը սարն էր տանում:

Իր մտքում նա ավելորդ էր համարում հրացան առնել: Սարում նրա բոլորն էլ գիտեին. քանի ուրիշ հովիվ է եկել, միասին աղբյուրի մոտ հաց են կերել: Պետին խոր համոզում ուներ, թե իր ճանաչը երբեք չէր կրակի, տավարի չի մոտենա:

Շատ անգամ էլ, երբ հրացանի ծանրությունը նեղացնում էր նրան գյուղից հեռանալուց հետո մի քարի տակ պահում էր հրացանը և գյուղառանալիս էլի հանում, ձեռքին բռնում:

Երեխաները ծիծաղում էին նրա վրա.

— Պետի, քանի՞ մարդ ես սպանել:

— Պետի, բա զորքդ ո՞ւր ա...

Երբեմն Պետուն թվում էր, թե վաշտապետը դիտմամբ է գնեք տվել, որ ծաղր անեն, ծիծաղեն: Այդ մտքից նեղանում էր, կտորվում և քաշվում գոմի մի անկյուն, որ մարդ չտեսնի:

Լուսաբացին, երբ Պետին աղբյուրի մոտ երեսն էր լվանում, ի

կովերը հավաքվում էին աղբյուրի մոտ, Պետուն ասացին, որ ինքը սարում պիտի դիրքեր փորի: Նախիրն այդ օրը գյուղում պիտի մնար:

Պետին շիոթմունքից մոռացավ երեսը փափախով սրբել: Զուր ծլում էր դեմքից: Մի պահ մտածեց, ուզեց հրածարվի, բայց հիշեց, որ վաշտապետը ոտը էլի գետնով կտա:

Եվ մյուսների հետ ինքն էլ գնաց Այու սարի լանջին դիրքեր փորելու: Գարնան ամպոտ օր էր: Անձրևը մաղում էր մեղմ, խոնավության մեջ կար գարնան ծաղիկների, կանաչ խոտի բուրմունք:

Պետին հացը մի քարի տակ դրեց և տասնապետի ցույց տված տեղը սկսեց փորել: Բավական հեռու մի ուրիշն էր փորում, նրա կողքին երրորդը, և այսպես գարնան ամպոտ մի օր Այու սարի ծաղկոտ լանջի վրա երևացին խրամատի գոտիներ:

Փորում էր Պետին անվարժ շարժումներով, և քրտինքը սնդիկի հատիկների պես գլորվում էր նրա ծաղկատար ճակատից:

Ամպերը մեկ էլ ետ քաշվեցին, գարնան արևը երևաց ամպի տակից, և բուրմունքն ավելի շատացավ: Պետին թիկն տվեց մի քարի, նստեց հանգստանալու:

Շեղում, այգիների մեջ թաղված քաղաքը դաշտի վրա օազիսի նման էր երևում:

Պետու ականջին հասավ կովի բառաչի ձայն, որ գյուղի կողմից էր գալիս: Նա նայեց, բառաչի ձայնը մեկ էլ լսվեց:

— Զա՛ն, մարալ, սոված ես մնացել,— ասեց ինքն իրեն և մտքում դրեց տավարն առավոտ կանուխ Այու սարի կողմը քշելու, որ խոտը համեղ էր և առատ:

Թիկնել էր քարին, նայում էր դիմացի բլուրներին: Արևի շողերի տակ ինչ-որ վեհություն կար Պետու շարքաշ, պղնձագուլն դեմքին, փոս ընկած աչքերում անհուն բարություն կար և միամիտ սեր գեպի խոտը, կովը, ծաղկած սարերը:

...Դիմացի բլուրի հետևից լսվեց հատ ու կենտ կրակոցի ձայն, Պետին ձգվեց հասակով մի, լսողությունը լարեց:

Եվ հանկարծ ընկավ խրամատի մեջ, ընկավ երեսնիվայր, թաց հողի վրա: Այդպես ընկնում է խոտը կիսաշոր, երբ գերանդին սլալով կտրում է ներքևից:

Պատահական գնդակ էր, թե դարանակալի խելագար ցանկություն, որ շիկացած արճճի հետ թռավ հեղվից, շաղ տվավ Պետու գանգը կանաչ խոտերի վրա:

Երբ տասնապետը եկավ խրամատին նայելու, տեսավ Պետուն՝ ընկած երեսնիվայր: Նոր փորած հողը ծծել էր արյունը կարմիր: Խրամատի մի անկյունում էլ թաղեցին նրան: Գյուղը հոգս շատ ուներ, լաց չեղավ Պետու համար: Տավարն էր, որ առավոտյան բառայում էր գոմում, սարի կանաչին կարոտ: Իսկ գիշերվա անձրևը սրբեց, լվաց խոտերից կաթիլները Պետու արյան...

* * *

Այու սարի լանջին հիմա մի կտոր տեղ կա, ուր կանաչն ավելի փարթամ է, ավելի մուգ: Փարթամ կանաչի տակ փտում են ոսկրները Պետու:

ՄԻՐԱՆԻ ՏՅԺ

Թեկուզ անունը Միրանի տափ է, բայց և ծիրանի ոչ մի ծառ չկա այնտեղ: Գետի ափին, քարաժայռերի ճեղքերում մացառներ կան, զբքված ցուխավելի պես դեք-դեք ցցված: Միրանի տափի առավելությունը քամիներից պաշտպանված լինելն է և շրի մոտիկությունը: Սարում, երբ գարնան պաշտպանված լինելն է և շրի մոտիկությունը: Սարում, երբ գարնան սկզբին բորան է լինում, անձրևախառն քամի, շոբանը ոչխարը գետի մեջ է բշտում և պատսպարան տալիս լերկ Միրանի տափի ժայռերի հետև ձորն է բշտում և պատսպարան տալիս լերկ Միրանի տափի ժայռերի հետև Այժմերը մացառներ են կրծում: Ոչխարը՝ գլուխը իրար շեքի մեջ՝ որոճում է: Հոտի մեջ և ոչ մի ոչխար բորան օրերին գլուխը վեր չի հանի:

Միրանի տափը հիշատակելու արժանի ոչինչ չէր ունենա, եթե երկու գյուղի՝ Միրի և Մրոցի միջև անվերջ շարունակվող կոխվների, խոսք ու զրույցի առարկա չդառնար, եթե նրա համար տարիների ընթացքում բազմաթիվ անգամ մահակներով կոխվ շտային երկու հարևան գյուղերը Մրոցն ու Միրը:

Որկու գյուղն էլ գետի ձախ ափին են ընկած, Մրոցը վերև, իսկ Միրը ներքև:

Մրոցն ու Միրը հավասար ծխեր ունեն, և առաջներում, երբ մահակներով կոխվ էին տաղիս Միրանի տափի համար, այնպես էր պատահում, որ մի տարի Մրոցն էր հաղթում, հաջորդ տարին՝ Միրը, կամ երկուս էլ ջարդված վերադառնում էին, որովհետև Միրանի տափի համար համարյա հավասար թվով մահակներ էին զարկվում երկուստեք:

Մրոցն էլ էր այժ ու ոչխար պահում, Միրն էլ, վերի գյուղումն էր:

կար եկեղեցի, հեքթևի գյուղում էլ: Շատ անգամ միաժամանակ էին քայցվում ուշուցի պարկերը: Վերևի գյուղում, պատի տակ նստոտած ալեոքներից ոմանք հոնի կարմիր փայտերը մեկնում էին Միրի կողմը, հայհոյում:

— Միրն էլ շեն ա՞, վառես՝ խանձահոտ չի գա: Մեր աղբաշրումն են նրանք խմոր հուցում...

Գուցե հենց այդ ժամանակ Միրի ալեոքներն էլ էին անհիժում վերի գյուղերին և ջահելների սրտում պապենական ոխը թեժ պահում: Բայց նրանք առիթ չունեին ասելու, թե Մրոցը վառես՝ խանձահոտ չի գա, թե նրանք աղբաշրով են խմոր հուցում, որովհետև Միրում երեխան էլ գիտեր, թե գետը վերից է գալիս, անցնում է Մրոցի կողքով, սրբում գետի մոտ կիտած աղբախոյտներն ու մոխրանոցները և լվանում գետի միջով անցնող կովերի, եղների, ձիերի սմբակներն ու կճղակները: Միրի հարս ու աղջիկ այդ ավերի բով գիտեին, դրա համար էլ բուսաբացից վազում էին գետը՝ շուր անելու, մինչև ջրի պղտորվելը:

Միրի երեխաներն էլ գիտեին, որ գետը վերևից է գալիս, բայց հարկավոր էր մի քիչ հասակ առնելն և հասկանալին, թե ինչու իրենց ալեոքները վերի գյուղի հասցեին չէին ասում:

— Վառես՝ խանձահոտ չի գա...

Մրոցն էլ այժ ու ոչխար էր պահում, Միրն էլ, բայց Մրոցում այնպիսի մարդիկ կալին, որոնք ամբողջ Միրի շափ ոչխար ունեին: Կարելի էր առավոտ կանուխ գետից շուր վերջներով խմել նույնպիսի մաքուր և սառը ջուր, ինչպեսքն վերի գյուղն էր խմում, բայց Միրը վերի գյուղի շափ կով չէր պահում: Որք Միրի լղար կովերը քարերի արանքում բուսած շոր խոտերն էին պոկում, Մրոցի կովերի լիքը կուրծք թաղվում էր կանաչ խոտերի մեջ, պտուկները բավում էին ծաղիկների թերթերին, և ծաղկափոշի էր նստում վերի գյուղի կովերի կուրծին:

Այդ մասին Միրի երեխաները պիտի իմանալին, երբ շափահաս դառնային և հասկանալին, որ կավե կճուճի մեջ պահած շուրի պաշարը կապ ունի սառի կանաչի հետ: Որք այս հասկանում էին Միրանի տափի մասին գյուղում խոսք ու զրույց լինելուց հետո, նրանք խլշում էին ականջները, մահակի կոթն ավելի պինդ սեղմում և մյուսների հետ վազում Միրանի տափը, եթե հավարն ընկներ, ոք Մրոցի շորանները ոչխարն ու տավարը քշել են ձորի կողմը:

Սի Թեկուզ ամառվա շոգին կանաչը խանձվում է, հողք ճարճքում, էլի շոգից նեղացած նախիրը ժայռի շվաբում հանգատանում է, գետի

սառնութիւնը հովացնում է նրանց մաշկը, և արևը թեքվելուց հետո, Մի-
րանի տափում նախիրն էլի ուտելու մի քիչ խոտ է ճարում, այժեքը՝ մա-
ցառների վրա տերև:

* * *

Ոչ ոք չէր հիշում՝ ոչ Մրոցում, ոչ էլ Միրում, թե երբ ծագեց առաջին
թշնամութիւնը Միրանի տափի համար:

Եթե Մրոցին էին հարցնում, հազար ու մի պատմութիւն էին անում,
թե իրենցն է Միրանի տափը, «ինչիների» ձեռքով քաշած պլան ունեն,
իզթեր կան:

— Էս է, ես իմ ձեռքերով եմ էնտեղ կուրգանի քարերը սահմանի վրա
շարել...

— Իմ միտս է, որ հորս ուշխարը գիշերն էլ էր Միրանի տափում
մնում:

— Միրի սահմանը Միրանի տափից էլ շատ դեռն ա... Էն մեր հայ-
րական հողն ա...

Իհարկե, Մրոցը միայն այդ չէր ասում, և երեք հոգի չէին խոսում,
եթե մեկը հարցներ նրանց Միրանի տափի մասին: Վրա էին տալիս,
իրար հրմշտկում, ամեն մեկն աշխատում էր առաջ ընկնել և շինովնի-
կին պատմել իր մտքինը, իր լսածը՝ հաստատելու, որ Միրանի տափը
Մրոցիինն է: Շատերն այնքան էին հեռու գնում, այնպես էին հորինում,
որ մոտին կանգնած հարևանն էլ չէր հավատում նրա ասածին, բայց
լսում էր, մտքում ծիծաղում, գլխով անում, որ շինովնիկը հավատա նրա
ասածին: Չէ՞ որ խոսքը Միրանի տափի մասին էր, գետի ափին բուսած
մացառների, գյուղի սահմաններն էլ ավելի լայնացնելու մասին:

Բայց վեճը շատ խոսելը և բարձր կանչելը չէր որոշում: Չինովնիկի
գնալուց հետո Մրոցում շշուկով և շատ ծածուկ իրար մեջ հավաքում էին
այն գումարը, որի մասին գիշերվա կերուխումի ժամանակ ակնարկել էր
քաղաքից եկած «մեծավորը» և ավելացրել:

— Ձեր օգտի համար եմ ասում, դուք գիտեք, մենակ ինձ համար
չեմ ուղում:

Չինովնիկը Միր էլ էր գնում: Ներքի գյուղն աշխատում էր ավելի
ճոխ ընդունել նրան, սրա-նրա տնից հավաքում էին հարմար իրեր, մի
տնից մաքուր բարձ, մյուսից՝ գյուղի միակ լավ կարպետը, տունը զար-
դարում, հարսերի վրա բարկանում, որ փողի շանն, ապա, սենյակը
սարքելուց, խոնարհ գլուխ տալիս եեվորին, ներս տանում:

Ոմանք եկողների ձիերն էին տեղավորում, դարի տալիս և խոնարհա-
բար ուսմկի խեղճութիւնը ժպտում մեծավորի պահակի առաջ, նրան էլ
լավութիւն անում, մտածելով, որ գուցե այդ էլ օգնի Միրանի տափի
անվերջ վեճին:

Միրում էլ էին բարձր ձայնով կանչում, աղմկում: Նրանք գիտեին,
թե ինչ են ասել վերի գյուղում, հերքում էին «պլանի» պատմութիւնը,
մեկը մոտենում էր, իր ճղած գլուխը ցույց տալիս, պատմում, թե ինչպե-
ս են Մրոցի գյուղացիք մահակով խփել, մյուսը՝ հարևաններին բռնելով երե-
խային էր առաջ հրում, բաց անում ոտքը և շատ կծած վերքերը ցույց տալիս:

Երեսան զարմացած և վախով նայում էր շինովնիկի պսպղուն կո-
ճակներին, հայրը նրա ոտից պինդ բռնած բարձրացնում էր երեսային,
որ «մեծավորը» ավելի լավ տեսնի: Իսկ շինովնիկի աչքերը երեսայի սոթի
սպիներից սահում էին գետնի գունավոր կարպետին և մտքում գին դնում
կարպետին, կարպետը համեմատում Մրոցի խոստացած կաշառքի հետ:

Ջարմանք էլ չէր, եթե մյուս օրը, Մրոցի աչքից անտես պահելու հա-
մար, Միրից մի քանի հոգի, գիշերվա կարպետը թաղիքի մեջ փաթա-
թած տանում էին քաղաք, շինովնիկի տունը: Միրում էլ էին շշուկով ինք-
նատուրք նշանակում, կարպետի գինը տալիս սիրոջը, որ հարս ու աղ-
ջիկ ձման գիշերներին գունավոր թելերից մի նոր կարպետ գործեն և
պատմեն հնօրյա շարքերից:

Եթե պատահեր, որ քաղաքից եկողը մյուս օրը համաձայնվեր ան-
ձամբ տեսնելու Միրանի տափը, համարյա ամբողջ Միրն էր գյուղից
դուրս գալիս՝ որը ոտով, որը ձիով: Գյուղի աչքաբաց ազդեցիկ մարդիկ
«մեծավորի» ձիու սանձը բռնած դարձյալ Միրանի տափի մասին էին
պատմում և նույն հոգով այդ պատմութիւնն անում. ազդեցիկ մարդիկ՝
շինովնիկին, գյուղի գլխի՝ նրա պահակին:

Անհնար էր, որ մեկը կոտրատած ուսերենով Միրանի տափին հասնե-
լիս «մեծավորին» չպատմեր մի հին խոսք, թե ինչպես մի հարուստ մի
տգեղ կին է ունենում և մի սիրուն աղախին, ինչպես մի օր երկուսն էլ
գնում են սարը՝ ուշխարը կթելու, խանի շոբանը կարծում է, թե սիրունն
է խանի կինը և երբ խանը գալիս է, շոբանը ցույց է տալիս տգեղ կնոջը
և խանին զարմանքով հարց տալիս՝ խանն ապրած կենա, սրան էլ են
զուռնով բերել...

Եվ այդ ասելիս պատմողը պիտի հարցներ, թե Մրոցի հողերի շար-
քին Միրանի տափն է՞լ է հող, բայց «մեծավորը» քահ-քահ պիտի ծի-
ծաղեր, և Միրի մի քանի միամիտ գյուղացի, որոնք անգիր կասեին այդ
պատմութիւնը, շինովնիկի ծիծաղը հօգուտ Միրի կընդունեին:

Այսպես շատ տարիներ եկել են, գնացել, երկու գյուղից էլ շատ յուզ
ու պանիր, գորգ ու կարպետ են տարել հազար ու մի շինովնիկ և տարա-
ծի համեմատ էլ հատկացրել Միրանի տափը՝ մերթ Միրին, մերթ Մրոցին,
կոփվների աղբյուր ստեղծել, ամեն տարի մացառուտի կանաչ տերևները
բացվելու հետ երկու գյուղումն էլ թեժացրել զայրուցքը Միրանի տափի
համար...

* *
* *

Խորհրդային օրերն եկան:

Երբ որ գավառական քաղաքից թշնամու խուճապի մատնված գոր-
քերը հեռացան, և բեզարած կարմիրբանակայինները պատկեցին Ազգա-
գին Խորհրդի դիվանների վրա, բանակի շտաբը քաղաքի հետ գրաված
համարեց և հեռու ձորերը, որոնցից մեկումն ընկած էին Մրոցն ու Միրը:

Հարկավոր էլ չէր գորք ուղարկել, ու էլ թնդանոթ: Տեղացի մի ագի-
տատոր անցավ ձորերով և պատմեց այն, ինչի մասին լսել էին ձորի
գյուղերում:

Հենց որ լուր եկավ, թե գավառական քաղաքից փախել են նրանք, որոն-
ցից ոմանք առաջավ շինովնիկի պես էին մտածում Միրանի տափի խն-
դիրը որոշելիս, երկու գյուղն էլ ականջները խշշեցին նոր օրերի լուրերին,
աչքերի առաջ Միրանի տափը:

Եվ ձորերում բարոզող ագիտատորը հենց որ Միր գնաց և ընդար-
ձակ կարում հավաքված ժողովրդին ճառ ասաց, ձեռքերն օդում ճոճելով,
զայրացած մի քանի անգամ կրկնեց «արևախումներ, գիշատիչներ», Մի-
րում շատերն այնպես հասկացան, թե այդ բառերը վերի գյուղին են ուղղ-
ված: Ծառից հետո եկվորին շրջապատեցին գյուղացիք, և առաջին հարջը
Միրանի տափի մասին եզավ. պատասխանը՝ թե «հողն աշխատավորին»
— ավելի կրկնիտ գարձեց Միրի բնակիչներին: Ագիտատորի գնալուց
հետո գյուղում ոմանք նրա պատասխանը հօգուտ Մրոցի էին մեկնաբա-
նում:

Նույն ճառը կրկնվեց և Մրոցում: Այնտեղ էլ ժողովուրդը խլած
ականջներով լսեց նրան, և երբ ագիտատորը հողահավասարման անունը
տվեց, բազմութունը շարժվեց, թեև մարդիկ կային, որոնց մտքերը հեռու
էին, ցնցվեցին, մոտեցան փոստղին: Շատ մարդ էր լսում նրան, և այդ
բոլորին Մրոցում ոչ մի ուղեղ չկար, որի ծալքերում Միրանի տափի պա-
մուժությունը չգանար չվաթի պես: Լսելուց հետո շատերը խոսեցին Միրանի
տափի մասին:

Կես գիշերին Մրոցում մի քանի մարդիկ խոսում էին կտուրի վրա,
որի տակ ջուրսու վրա քնել էր ագիտատորը:

- Հը՞, ի՞նչ անենք...
- Ձի վերցնի, հերստտ ա...
- Բա էդպես գնա՞, ախր լավ չի լինի...

Առավոտյան, երբ քաղաքից եկած ընկերը ձին նստեց ուրիշ գյուղ
գնալու, նրան բարի ճանապարհ ասացին, մոտեցան ձեռք տվին:

Երբ մոտեցավ և ճա, որ կես գիշերին կտուրի վրա խոսելիս ասել
էր, թե «լավ չի լինի, թե էդպես գնա», և ուզեց աչք մեկնի և բարևելիս
ձիավորի բռան մեջ դնի այն, ինչ պինդ սեղմել էր ձեռքում, աչք մեկ-
նելիս աչքը ընկավ ձիավորի աչքին, և կիսով շափ մեկնած ձեռքը եր-
կյուղից ետ եկավ ընկավ փափախի վրա, բոփ մեջ՞ դրամ: Զիտավորին
ճանապարհելիս նա փափախը հանեց: Նույն օրը կտուրի վրա խոսող-
ները շատ հանդիմանեցին նրան, իսկ նա ուսերն էր քաշում և ասում.

— Կարացի ոչ, աչքերը հերստտ էր...

Մի գարուն էլ շուտ տվեց, և այդ գարնանը քաղաքից հողաշափ եկավ
երկու գյուղի սահմանները որոշելու: Հողաշափը դեռ գյուղ չեկած՝ երկու
գյուղումն էլ գիտեին նրա մասին այնքան տեղեկութուն, կարծես այդ
մարդը տարիներ էր ապրել նրանց հետ: Մինչև նրա գալը երկու գյուղումն
էլ նրա մասին էին խոսում:

- Ասում են շատ խղճով ա:
- Խմիչքեղենից հեռու չի...
- Որ հերստտեց, էլ պրծնում չկա, գործը կքանդի...
- Աչքի մինն էլ մի թեթև շաշ ա...

Հողաշափի գալուց հետո խոսքն ու գրույցն ավելի շատացավ: Գեո
Միրին չհասած, վերին գյուղից ձիավորներ էին եկել նրան իրենց մոտ
տանելու: Եվ որովհետև նա «խմիչքեղենից հեռու չէր», վերի գյուղը գնաց,
որի մասին լսել էր քաղաքում: Առաջին հաղթանակը թե տվեց Մրոցին,
չուր մաղեց Միրի գլխին: Միրանի տափի բախտը կիսով շափ որոշված
համարեցին:

Հողաշափը շաբաթից ավելի մնաց, երկու գյուղում էլ կերտվ ձու,
կարագ, մեղր, քնեց մաքուր տեղաշորում, շատ անգամ էլ լսեց խանի
և զուռնով բերած հարսի պատմութունը, Մրոցի ազդեցիկ մարդկանց
խոսքը, որ իրենք Միրանի տափի պլանն ունեն:

Հողաշափը վերադարձավ: Ծամփին նրա ձիու սանձից բռնում էին:
Երբ բռնողը Մրոցեց էր, Միրանի տափն իրենց գյուղի համար էր խնդրում,
իսկ եթե Միրից էր՝ Միրի համար:

Եվ երկուսն էլ համարյա նույն օրհնութիւնն էին թափում հողաշափի զավակների, տան և մեռած-կենդանի բարեկամների գլխին, աշխատում մի բան իմանալ, խոսքի միջից մի շող, որով լուսավորեին իրենց կասկածների մթութիւնը, մինչև քաղաքից մի լուր գար:

Իսկ հողաշափը հենց մի գլուխ ասում էր.

— Լավ կլինի, էնպես սահման եմ դրել ո՛ր...

Եվ այդ լավը հօգուտ Միրի եղավ...

Քաղաքից այդպես հայտնեցին Միրին էլ, Մրոցին էլ, նույն ձևով գրած, նույն թղթի վրա. «Միրանի տափն ամբողջովին տալ Միր գյուղին, որպես աղբատ և հողազուրկ գյուղի»:

Թեկուզ թուղթը շատ փոքր էր և հասարակ, բայց ամենամեծ ուժերն էլ այդպիսի աղմուկ չէր հանի Մրոցում, ինչ հանեց թուղթը: Գալիս էին նայում թղթին, ձեռք տալիս, թեկուզ շատերն էին անգրագետ, և ձեռք տալուց, ուրիշին էին վերադարձնում թուղթը, որ կեծացած թիթեղի կտորի պես խանձում էր ձեռք տվողի մատները:

Նույն երեկոյան Միրում գյուղացիք խոսում էին, կասկածներ հայտնում: Ճիշտ է, թուղթը չէր խանձում, բայց վստահութիւնն էլ չէր տալիս Այդ փոքրիկ կտորի վրա ի՞նչ գրով կարելի էր Միրանի տափի պատմութեանը վերջ տալ:

— Հը՞, ըստեղ մի բան կա որ...

— Ձէ, էսբան շուտ չէր լինի...

Մյուս օրը Միրից երեք հոգի քաղաք գնացին, մոտեցան մի երիտասարդի, որ հողային գործերն էր վարում, նրա սեղանին դրին Միրի համախոսականը: Զարմանք բան էր գրած համախոսականում. երիտասարդը կարդաց, թթի տակ ժպտալով նայեց գյուղացիներին:

— Մեզ Միրանի տափի կեսը տվե՞ք,— ասացին նրանք:

ՄԻՐՉԱՎ

Աշուն էր, պայծառ աշուն...

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը:

Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ շերմութեամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով բռնում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն կայսրի

խոնարհվում էր քամու առաջ: Ամառի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրութիւն: Զինչ օդի սառնութեան մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը:

Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Միմիկդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում: Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ և սիմիկդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ:

Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը:

Դիւան գաջին նստել էր հնձանի պատի տակ, ընկուղենու շոր կոճղին: Նա սովորույթ ուներ ուշ աշնանը վերջին անգամ այգին մտնելու, դուռ ու ցանկապատ ամրացնելու և հնձանը փակելու, որպեսզի ձմռան ցուրտ պիշերին գալլ ու գազան շպատսպարվեն ներսը:

Չորացած ոստերի և ցողունների մի կապ ժողովել էր, դրել մոտը: Եվ հողնութիւնից հանգստանում էր, աչքը հեռու սարերին: Նստել էր ու միտք էր անում՝ ականջը սիմիկդրի տերևների խշշոցին:

Աշնան արևը ջերմացնում էր նրան. ձորի խաղաղութիւնը դուրեկան էր: Ծառերին փաթաթված վազերն օրորվում էին քամուց, Դիւան դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած շոր տերև: Քամուց հնձանի դոնակը մեղմ ձոնշում էր, և մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ:

Եթե արևը շխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հողնութիւնի երկար կմնար այդ դիրքով և չէր հագնեա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից: Շուտով կիջնի ձմեռ, և ո՞վ գիտի, բացվող գարնանը նորից պիտի ի՞նչք բանա այգու դուռը, թե մի ուրիշ ձեռք:

Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր և՛ սիմիկդրի տերևների խշշոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դոնակի երգը:

Այդպես մի անգամ էլ, շատ տարիներ առաջ, ճոնչաց այգու դուռը: Էլի առէ օր էր: Հնձանի ստվերում ուռնու կողմների մեջ սև խաղողը շողշողում էր:

Ներսը՝ քարե տաշտի մեջ, Դիւան դային, մինչև ծնկները բաց ոտներով, ճմլում էր խաղողը և արնագույն շիրան քարե տաշտից ծորում էր կավե կարասը:

Հնձանը շոգ էր: Ճմլում էր խաղողը, ինքն իրեն դնդնում կայտառ մի երգ և քրտինքի կաթիլները գլորվում էին, ընկնում շիրառի մեջ: Երիտասարդ էր այն ժամանակ, երակներում արյունը եռում էր իբրև թունդ գինի:

Իրան ձայնին Դիւանը գլուխը դուրս հանեց: Այգում ոչ ոք չկար:

Ու հանկարծ, երբ սիմինդրի մարդերում երևաց գլխի զառ կապույտ ման-
դիլը, ինքը պահվեց դռան հետևը:

Կարծես հավը էր թաքնվել անտառի մթին խորշում: Ապա վիզը եր-
կարեց, ինչպես կաքավը դեղնած արտերում խշշուն լսելուց, և մի ջահել
կին դուրս եկավ սիմինդրի խիտ արտից: Դուրս եկավ, ճոճեց բարակ
մարմինը, որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը:

Սոնան էր, զառ մանդիլով նորահարսը, լույս ատամներով այն աղ-
ջիկը, որ այնպես զրնգան ծիծաղում էր, երբ առվակի մեջ կախում էր
ապխտակ սրունքները, իսկ դրացու տղան՝ Դիլանը շուր էր ցնցղում նրա
ողկույզի պես գանգուր մազերին:

Հարսը փափուկ քայլերով, ինչպես այծյամը ձյունի վրա, մոտեցավ
հնձանին: Դռան մոտ զրնգացին Սոնայի շալի շապիկի արծաթ սուրմա-
նեքը և ներս մտավ, ինչպես միամիտ հավքը վանդակի բաց դռնով:

Հանկարծ տեսավ նրան, ցնցվեց, ոստյուն արեց դեպի ետ, բայց
մի կրակված ձեռք փակեց հնձանի դռնակը:

— Թաղը մարդ կգա, Դիլան,— դողալով խնդրեց նա:

Ու լիմացավ գինուցն էր, թե հնձանն էր տաք, Դիլան դային լիմա-
ցավ: Սոնայի ականջին շշնջաց.

— Կաց, անխիղճ...

Շշնջաց ու պինդ-պինդ փաթաթվեց նրան: Այնքան դուրեկան էր
նրա շուրջ վեր շարած, լաջվարդ հալավի հոտը, այնքան տաք էր հնձանը:

Սոնան օձի պես կեռումեռ արեց, փորձեց ազատվել նրա բազուկ-
ների օղակից, կարոտով խնդրեց, խոստացավ: Որպես եղեգ ճոճվեց նրա
դալար մարմինը և մեջքը խոնարհեց... Անխմաստ մաքառումից հոգնած,
հարսը սրտաքուրե նրան ընծայեց իր մարմինը, — որպես անարատ զոհ:
Եվ նա ազահ համբուրեց հարսի կարմիր լար շրթանքը, անհագուրդ հիա-
ցավ ոսկեղեղձան հյուսերով, որ ծփում և խշշում էին լուսեղեն լանջի վրա:

Հետո թևը շարդված հավքի պես Սոնան ամաշկոտ դուրս թռավ հըն-
ձանից, մի անգամ էլ շորորաց այգու շաղոտ խոտերի վրա և ներսը թռա
ղեց լաջվարդ շապիկի բույրը:

Իսկ զրնգան սուրմաները կարտառ կոհակների նման ծափ էին զար-
կում:



Ծրանց մանկության ընկերներ էին և նրանց սերը ծնվել էր նույնքան
աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը: Առունքի
ափին, այգիներից, դաշտերից խոտը կրեղիս, ամառվա լուսնյակ գիշեր

նեղին խոտի դեզի մոտ, ամեն տեղ այդ սերը ծիծեռնակի պես ճովողում
էր, մինչև հասունացան նրանք, և մի օր էլ մեծատուն հարևանի շեմքով
նեղս մտավ Սոնան, հարսի քողը երեսին, արցունքից կարմրած աչքերը՝
պայծառ, որպես լեռնային ծովակ:

Հարսանիքից շորս ամիս հետո, պատահմամբ հանդիպել էին իրար
այգիների ճանապարհին: Դիլանը նրան կանգնեցրել, հարցրել էր հալը,
Սոնան թախիծով թոթվել էր ուսը և արագ հեռացել:

Հանդիպումը բորբոքել էր նրան, բայց առաջվա նման մոտիկ չինկա-
ցանկությունը, իբրև խոր երկնքում նազով ճախրող թռչուն, երբեք չէր
իջնում նրա շեմքին:

Ու հանկարծ այդ հավքը թառեց նրա ուսին...

Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության առվակի ջրե՞քն
էր կարտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին՝ մտածելով,
որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում: Դիլան դային մինչև վերջը լիմա-
ցավ այգ:

Մի քանի անգամ մոտեցավ, կամեցավ նրա հետ խոսել, բայց Սոնան
խուպ տվեց:

— Թո՛ղ, Դիլան, դնա քեզ համար...

Եվ էլ իրար շտեխան:



Դիլան դային միայն գիշերը տուն գնաց: Ամբողջ օրը թափառել էր
ձորում, եղել էր հարևանի այգու շրջակայքում, աղբյուրն էր գնացել, փո-
ղոցի անկյունում կանգնել էր, բայց ոչ մի տեղ Սոնային չէր տեսել:

Լուսնյակ գիշեր էր, երկինքն անամպ: Փշում էր գիշերվա հովը: Դի-
լան դային պանկեց դեզի գլխին, նոր հարած խոտերի վրա ու քունը
չտարավ:

Հազարավոր շորացած ծաղիկներ բուրում էին խոտի խորձերի միջից
և լուսնյակ գիշերով նրան այնպես էր թվում, ասես այդ նույն դեզի վրա
պանկել է Սոնան և խորձերի մեջ թողել լաջվարդի բույրը:

Կուսարացին հավիցին աստղերը, գիշերվա լազուրը գունատվեց: Երբ
ծաղիկներն արթնացան գիշերվա նիրհից, և ցողը շողշողուն կաթիլներ
շարեց նարնջագույն քարերի վրա, արևի առաջին շողերի հետ, գյուղի
գիմաց, դեղնած արտերում զարթնեց կաքավը:

— Կա՛խ-կղա, շա՛խ-կղա...

Լսվում էր կաթավի թավ երգը: Ավելի վերև, անտառի խորքից կանչում էր միրհավը:

Դիլան դային վեր կացավ, ուսը գցեց կայծքարով հրացանը և երեսը դարձրեց դեպի սարալանջի անտառը, որտեղից կանչում էր միրհավը:

Միտ շուներ իջնելու այգին, տեսնելու հնձանը:

Քայլում էր Դիլան դային շաղոտ խոտերի միջով, հնձած արտերն էր կոխ տալիս, ոսկեգույն ծղնոտները, և գլուխը կախ բարձրանում դեպի անտառը՝ արահետի կեռամաններով և թփերի միջով:

Ահա ճամփի եզրին՝ մասրենու պառավ թուփը, նրա մոտ տափակ քարը, որի վրա հովիվներն այժմ էլ աղ են ցանում ոչխարի համար... Խուրձ էին կրում միասին՝ ինքը, Սոնան: Արևը խանձել էր աղջկա երեսը, ոսկեդեղձան հյուսերի ծայրը: Դեղին ծղնոտի փշրանքներ կային մազերի արանքում:

Կալից ձիերը քաշում էին, հասնում այդ քարին, և ձիերը կանգնեցնում: Ինքը բարձրացնում էր Սոնային ձիու վրա, հետո իր ձին նստում և գնում արտերը խորձի:

Մի անգամ էլ Սոնան խնդրեց, որ միասին նստեն: Ու մի ձին հետքից քաշեցին: Առջև Սոնան էր նստել, հետևում ինքը: Մի ձեռքով սանձն էր պահում, մյուսով գրկել էր նրա բարակ մարմինը: Աղջկա ծամերը քսվում էին նրա երեսին:

Իսկ մյուս առավոտը, երբ այդ քարին հասան, և ինքն առաջարկեց նորից միասին մի ձիու նստեն, Սոնան հայտնեց, որ մայրը հանդիմանել է իրեն և խստիվ պատվիրել առանձին նստելու:

— Ինչո՞ւ:

— Ամոթ է, — սասց աղջիկը արդար ժպիտով:

Դիլան դային մոտեցավ մի դեզի, ձեռքը կոխեց խուրձերի մեջ և տաքություն զգաց: Կեծացել էին խուրձերը, գիշերվա խոնավությունից հասկերը տմկել էին:

Երբ ծանոթ արտին հասավ, հենվեց կայծքարով հրացանին, միտ արեց: Սոնան այստեղ մի ամառ քաղհան էր անում, կռանում էր ցորենների վրա, մատները փուշ էին մտնում: Սոնան հնձվորի համար հաց էր բերում, քրտնում էր արևի տակ և քրտինքից շապիկը փակչում էր լանջին:

Լինե՞ր, այնպես լինե՞ր, որ ինքը հնձվոր լինե՞ր, նրանց արտը հնձե՞ր, Սոնան հաց բերե՞ր իրեն, շապիկը քրտնե՞ր և քրտնած նստե՞ր կողքին:

Ետ նայեց Դիլան դային, եկած ճանապարհին նայեց: Մարդ չկար, աշնան մերկ դաշտերն էին: Ու միայն մասրենու կարմիր թփերն էին, և փայլուն մասուրները դեղնած տերևների արանքում:

Հանկարծ մի թփի հետևը լավեց կաթավի ձայնը:

— Կա՛խ-կղա, շա՛խ-կղա...

Դիլան դային զգույշ քայլերով, կուզեկուզ մոտեցավ թփերին: Հընձած արտում կաթավները հավաքում էին ընկած հատիկները, կտցահարում թափված հասկերը: Մեկը շէր, շատ էին: Ցատկոտում էին, օրորում գեր մարմինները: Գարնան երկու ճուտեր մի հասկի համար կոպում էին՝ կտուց կտուցի:

Դիլան դային շոքրեց, նշան բռնեց: Մի գեր կաթավ սպիտակ վիզը ձգեց, սկսեց շորս կողմը նայել: Մյուսները լռեցին, տապ արին ծղնոտների մեջ:

Քամին խշշացրեց թփերը, ինչպես Սոնան սիմինդրի երկար ցողունները... Ու խշշոցը կաթավներին հասավ թե չէ, իսկույն փռուալով մի քանի հանգույց արին օդում, իջան արև առած արտերի վրա:

Ճանապարհը շարունակեց: Քանի գնում թփերն ալելի էին շատանում, արտերի մեջ երևում էին հատուկենտ կաղնիներ՝ ծոված, կոացած, կայծակից խանձված: Ասես պահապաններ էին կանգնել անտառի և արտերի սահմանում:

Արահետը բարակում էր: Վերջին արտերն էր կոխ տալիս: Անտառից հովը փչեց նրա դեմքին, ունգներն ագահորեն ծծեցին անտառի խոնավ ու զով օդը:

* *
*

Անտառը ծանոթ էր նրան, գիտեր, թե որտեղ է սիրում բույն դնել ու կանչել միրհավը, մթին անտառների ռեկեմետուր թռչունը:

Անտառի մեջ մամոտ ժայռեր կային, արջաբներ, քամուց ընկած դարավոր կաղնիներ, որոնց վրա սունկերը շար էին ընկել: Ծառերի կիսաշոր ճղները մամոտուել էին և կիսախավարի մեջ կարծես հետին ոտքերի վրա բրդոտ արջեր էին կանգնած:

Ժայռերին չհասած՝ դիմացից լավեց հրացանի պայթյուն:

Աղմուկից դրնգաց անտառը, դեղին տերևներից ցողի խոշոր կաթիլները մետաղի ծանրությամբ ընկան խաղալի վրա: Մթնկա խորշում թպրտաց գիշերահավը:

Ո՞վ պիտի լինե՞ր: Կայծքարով հրացանի ձայն չէր: Իսկ գյուղում ուրիշ բերդան չկար:

— Տեսնես ո՞վ է որս անում, — մտածեց նա:

Տերևները խշշացին: Դիլան դային տապ արավ, պահպեց քարի հե-
տևը: Միրհավն էր. հանգիստ բուշուշ անելով փոխում էր արնագույն տո-
տիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները:

Դիլան դային թաքստոցից գուխը հանեց նշանի, հրացանի փողը
երկարեց քարի վրա: Բայց հանկարծ թռավ միրհավը, խորքից մի ուրիշը,
ապա երրորդը, շորորդը...

Զգուշ է միրհավը, դժվար է նրան խփել: Երբեմն այնքան մոտ է գա-
լիս, ահա ուզում ես կրակել, բայց մի թեթև խշշոցից, նույնիսկ որսորդի
խոր շնչառութունից, բացում է թևերը, թռչում գնդակից արագ, ծղբ-
խոր շնչառութունից, բացում է թևերը, թռչում գնդակից արագ, ծղբ-
խոր շնչառութունից, բացում է թևերը, թռչում գնդակից արագ, ծղբ-
տում, պտույտներ անում թանձր սաղարթի վրա և անձայն իջնում մի
ուրիշ տեղ: Զգուշ է միրհավը. բուշուշ անելիս՝ ձգում է վիզը, աչ ու ձախ
կռանում և ապա նորից երկարում վիզը, շորս կողմը նայում:

Դիլան դային թաքստոցից դուրս եկավ, ճանապարհը շարունակեց:
Արդեն անտառի խորքն էր. տեղ-տեղ ծառերն անանց պատենել էին կազ-
մել: Տերևները հարյուրավոր տարիներ թափվել էին իրար վրա, արևբերն
չէին տեսել ու չէին փտել: Ծառերի բնիքը թաղվել էին տերևների կույտի
մեջ և ճյուղերը թխամոր թևերի նման փռել ստվերում բուսած կապույտ
սունկերի վրա:

Դիլան դային կոխ էր տալիս շորացած տերևները, թաղվում, ինչ-
պես հարդի շեղի մեջ, սայթաքում և ճղներից բռնելով ճանապարհը շո-
քոնակում:

Հասավ աղբյուրը, կուացավ կուշտ ջուր խմեց: Քիչ հետո իջավ լորենի-
ների ձորը:

Ներքև, քարերի վրա, այնքան շատ միրհավ կար... Արևը տաքացրել
էր մամոտ քարերը, ոսկեփետուր միրհավը, թևերին սև պուտեր, թռչում
էր քարից քար, կանչում, կոցահարում հարևանին, էգի շուրջը պտույտներ
սեռում:

Նշան բռնեց: Երբ քարը կայծ տվավ և կայծից բռնկվեց վառող,
հրացանի փողից բոց ու մուխ ելավ, ձորերը որստացին ահավոր արձա-
գանքով, ձորից թռան միրհավերը՝ թևերը լայն, փափուկ բմբուլով, թևերը
փռած աշնան արևի ոսկե շողերի տակ:

Միայն մեկը թպրտաց, մամոտ քարից վայր ընկավ թփուտների
մեջ:

Դիլան դային վրա վազեց և վազելիս նկատեց, որ մի սպիտակ շան
լեզուն հանած, ցատկեց թփուտների կողմը: Որսկան շան շունչն ու Դի-
լան դայու ձեռքերը միասին ձգվեցին դեպի արնոտ միրհավը:

Նրա մատները դիպան դեղին բմբուլներին, բայց վիրավոր միրհավ

հանկարծ թևին տվեց, թռավ վեր: Երկու փետուր օրորալով վայր ընկան,
աշնան դեղին տերևների նման:

Դիլան դային ափտառնքով նայում էր արնոտ միրհավի հետևից,
երբ հանկարծ, շատ մոտիկ լավեց սոսնաձայն: Ետ նայեց, աչքերը զար-
մանքից լայնացան և հրացանը բնազդամբ ձեռքից վայր սահեց ծառի
հետևը:

Անտառապահն էր, աչքերը՝ կաս-կարմիր ածուխ...

Մոտեցավ, բղավեց, և մինչև ուշքի կգար, նրա մտրակը օգը ճեղքե-
լով շափեց Դիլան դայու ուսը, մինչև թիակների ոսկրը, մրմուռը ծակեց,
ինչպես եղինջի հարվածը բաց մսերի վրա:

Անտառապահը հարվածում էր նրան և զայրանում, որ Դիլան դային
փախցրել էր նրա զարկած միրհավը:

Անտառապահի սրսկան շունը մեկ նայում էր ափրոջը, մեկ՝ Դիլան
դայուն, մոտուժ էր, պոչը գետնով տալիս, մեկ բերանը բաց՝ հուզմուն-
քից հորանջում, մեկ էլ անհանգիստ հոտոտում թփերը, որտեղ քիչ առաջ
թպրտում էր արնոտ միրհավը:

Անախնկալ հանդիպումը նրան շշմեցրեց... Նրանք արդեն հեռացել
էին, երբ Դիլան դային ուշքի եկավ, նայեց նրանց հետևից, մտաբերեց
շան կարմիր երախը...

Դիլան դային նստեց քարի վրա: Ցավից նրա դեմքը կծկվում էր:
Մեջը կարծես շիկացած շամփուրներով խանձել էին, աչքի տակը հար-
վածից տաքացել էր: Երկար միտք արեց Դիլան դային, աչքը միրհավի
երկու փետուրներին: Մի անհուն դառնութուն և կսկիծ ավերեց նրա շքնաղ
օրը:

...Արևը խաղում էր մայրամուտի ամպերի հետ: Անտառում լուսնուն էր
Միրհավը թռել էր հեռու... Մամոտ քարի վրա երկու փետուր էր ընկած,
գեղնագույն-սև պուտերով, իսկ թփի շոր ճյուղերին՝ արյան կաթիլներ:

Դիլան դային ձորով իջավ ներքև:

Երբեմն երազ էր թվում միրհավը, բայց մտրակի տեղերը մրնջում
էին, աչքի տակ ցավ էր զգում, ոտքերը թեթև դողում էին:

Սեղմել էր հրացանի տաք փողը, ինչպես միրհավի մարմինը, որին
միայն մի վայրկյան շոշափեց և մատների ծայրով զգաց, որ բմբուլը փա-
փուկ է: Միրհավի մարմինը՝ տաք բմբուլ, Սոնայի մարմինը լաջվարդ
չապիկի մեջ:

Տոն շվնաց: Քարքարոտ արահետով իջավ այգին: Ըննչաց հնձանի
դոնակը, ներս մտավ, մեկնվեց քարի հատակի վրա:

Երբ առավոտյան արևի շողը հնձանի դոնակի ճեղքով փայլեց ներ-

սում, Դիւան դային գարթնեց, տրորեց աչքերը և աչքի տակ ցավ զգաց: Ուռուցքը չէր անցել:

Այդ օրը նա քարե տաշտում ավելի զայրացած էր ճմլում սև խաղողը և չէր զգում, թե ինչպես քրտինքը գլորվում է ճակատից, կաթում պղտոր գինու մեջ...



Աշուն էր, պայծառ աշուն...

Հնձանի առաջ նստել էր Դիւան դային, գլուխը խոնարհել կրծքին ու միտք էր անում արևի տակ՝ անցած-գնացած օրերի մասին:

Այդ աշնան հաջորդ ամառը Սոնան մեռավ երեխայի վրա և լաց լացիկ նրա մայրը, ամուսինը, բարեկամները: Ուրիշ աղջիկ գնաց նրա տեղը, Դիւան դային էլ կին առավ, բայց հիշողության մեջ հավիտյան անջինջ մնաց Սոնան, հնձանը, լաջվարդ շապիկը, արծաթե սուրմաները:

Դիմացի բլրակի լանջին գերեզմանատունն է: Սոնայի գերեզմանաքարի վրա մամուռ կա, գրերը վաղուց լցվել են հողով, քարը թեթվել է մի կողքի վրա և թաղվել հողի մեջ:

Սոնային լաջվարդ շապիկով թաղեցին: Արդեն վաղուց փտել է լաջվարդն էլ, ոսկե մամուռի նման մարմինն էլ...

Քանի աշուն էր անցել այն օրից, համարք չունի: Գիտի, որ ինքը զառամել է արդեն, քայլելիս հենվում է փայտին, աչքը չի տարբերում աշնան անտառի գույները, ականջը սուր չէ մանրիկ ոտնաձայն լսելու:

Հնձանի առաջ խոխոջալով հոսում էր առվակը, գիշեր-ցերեկ ջուրն աղմկում էր, ջրի անվախձան և անքննելի զրույցն անում մամուռներին, քարերին...

Դիւան դային առվակի կողմը նայեց, ժպտաց: Նրա հիշողության խավար անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում: Այն օրը, երբ Սոնան սրունքները կախել էր առվակի վրա և ծիծաղում էր...

Ապա միտքը սահեց, արահետով անցավ դեպի անտառը:

Միրհավ կար անտառում, թռավ արնակուլով, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա: Միրհավի պես էր Սոնան, աչքերը խաղողի սև հատիկներ, — տարիներ առաջ, մի արևոտ աշնան, երբ իր ջուրտ ոտները պղնձաքարի ծանրությամբ ճմլում էին խաղողը՝ և անապակ գինին չիթ առ չիթ ծորում էր մատների արանքով...

Միրհավի պես թռավ Սոնան, հետքից թողեց տխրություն և դառնաթախիծ հուշեր:

...Դիւան դային վեր կացավ, ետ քաշեց հնձանի դուռը, երկաթե կակրն ամրացրեց, մինչև մյուս գարուն: Ապա կոացավ, դժվարությամբ շալակեց շորացած ոստերի և ցողունների կապը, և հոգնած ոտքերը ծեփունու հուշիկ քայլերով փոխեց դեպի այգու դուռը:

Այգում էլ ոչ ոք չմնաց:

Միայն իրիկվա հովից խշշում էին սիմինդրի կոշտացած ցողունները. շորացած տերևներն անհանգիստ խմբվում էին այս ու այն անկյունում, թպրտում հուսահատ և անմոռնչ պառկում սև գուրի մեջ:

1926—1932

ՄԻՆԱ ԲԻՐՈՆ

Մինա բիբուն ասել էին, որ երեկոյան հարսն ու որդին գյուղ պիտի հասնեն: Եվ դեռ երեկո չեղած, նա կտրից տուն չէր ուզում գա:

Կանգնել էր կտուրի վրա, մի ձեռքը ճակատին՝ մայր մտնող արևի շողերից աչքերը ծածկելով, նայում էր հեռուն, կածանի կեռուսեռ պտույտին և սպասում էր, թե երբ են երևալու:

Որդին օտար քաղաքից էր գալիս: Տասը տարուց ավելի էր, որ գյուղ չէր եկել, մայրը նրան չէր տեսել: Քաղաք էր գնացել դեռ պատանի, մախմուրի պես աղվամազով, իսկ այժմ վերադառնում էր կնոջ ու աղջկա հետ:

— Ա՛յ պառավ, բա օքմին չի երևում, — ներքևից կանչեց Ավան ամին: Նա էլ սենյակում էր անհամբեր և շուտ-շուտ ձայն էր տալիս պառավին, լսողությունը սրած, ոտնաձայնի պատրաստ:

— Զինգիլա քարի մոտ հրեն երկու ձի յա երևում, մին ոտավոր էլ կա, — պատասխանեց Մինա բիրին կտուրից և լարեց առավել տեսողությունն իր: Նրա աչքերն ավելի փոքրացան, ձգվեց, ասես երկարացավ, որ ավելի լավ տեսնի, կանգնեց ոտքի թաթերի վրա:

Մի պահ հառեց կկոցած աչքերը Զինգիլա քարին, փորձեց որոշել, թե ովքեր են գալիս: Մի քիչ էլ, և հանկարծ Մինա բիրին ծնկներում թեթև դող զգաց, ափ ընկած ձկան պես սիրտը թրթռաց, ներսում հրճվանքը ալիքի պես բարձրացավ, կոկորդին դեմ առավ:

Եվ շնչասպառ կտուրից իջավ, տուն վաղեց:

— Գալիս են, ա՛յ մարդ, հրեն է...

Մյուս առավոտ Մինա բիրին սովորականից կանուխ զարթնեց: Գիշերը բունը չէր տարել:

Գիշերը երբեմն զարթնում էր, նստում տեղաշարժի մեջ և ականջը սրում՝ տեսնելու, թե ով է զարթուն, ինչպես են զննել: Մի անգամ էլ վեր կացավ, ճրագը վառեց, նայեց մեկ էլ, ասես տեսածին չէր հավատում: Մոտեցավ և վերմակի կախ ընկած տուտը կամացուկ շտկեց:

Նա մի ուզեց ալևորին զարթեցնի, մտքինն ասի, բայց հանգ շարավն ճրագը հանգցնելուց առաջ մեկ էլ նայեց, ինչ-որ բան ասաց գորովով և շուրջվեց վերմակի տակ:

Առավոտ կանուխ ջրի գնալը, կովեր կթելը Մինա բիրուն ավելի հեշտ թվաց: Ուրախությունից ջահելացել էր. երբեմն սենյակ էր մտնում, մըտքինը մոռանում, նորից դուրս գալիս: Կամ օջախի կրակին փշելիս, երբ աչքին էր ընկնում հովանոցը կամ մի ուրիշ իր, որ բերել էր որդին, տնտղում էր ուշադիր, էլի իր տեղը գնում:

Երբ օջախի առաջ ամաններն էր լվանում, թեյամանը կալավ ափսոսին և զննեց: Ավան ամին նեղացավ, թե կամաց, կզարթնեն, իսկ Մինա բիրին՝

— Չեպա չորանա:

Ասեց և շփոթուններից շեկատեց, որ կաթը եռաց ու ապիտակ փրփուրը թափեց միացող աթարի վրա:

Ավան ամին սրահի առաջ կանգնել էր և ուրախ ժպիտն երեսին բարձրույց էր առում փազոցով անցնող հարևաններին, որոնք մոտենում և աղբալույց էին տալիս:

— Փոխն էլ ձեզ լինի, ձեր զարթն էլ տուն գա:

Նկողին Ավան ամին մի թաս օղի էր առաջարկում ու մտալ՝ շոր միրգ կամ պանիր-հաց:

Դեռ անցյալ տարի նա իր մտքում դրել էր մի եզ մորթել որդու գալու առթիվ: Եվ երբ այդ մասին խոսք բացեց պառավի հետ ու ավելացրեց, թե չի՞ լինի, որ եզան տեղ մի շաղ ոչխար մորթի, Մինա բիրին բողոքեց: Խոստացած մատաղը պիտի անել, հազարից մի անգամ է այդ հարկի տակ այդպիսի ուրախություն:

Հետո Ավան ամին գոմ գնաց: Նա մոռացել էր տավարին կանուխ ապուռ տալ: Այդ առավոտ նա իր բազուկների մեջ մի առանձին ուժ զգաց, ավելի արագ գոմն ավլեց. խոտ ու դարմանը ավելի շատ տվավ:

Նրան թվաց, թե տավարն էլ է զգում, որ տանը ազիզ մարդիկ կան:

Կովերը տաք գոմում ախորժով խոտ էին ուտում, իսկ Ավան ամին կոշտացած ձեռքերով, որոնց ուռած երակներն ասես պարաններ լինեին, շոյում էր կովերի մեջքը, փաղաքշական խոսքեր ասում:

— Ապե՛ր, հո շատ շես շարշարվել...

Որդին էր՝ Տիգրանը, որ զարթնել էր ու հոր հետևից գոմ եկել:

— Մի գա, գնա, գնա տուն. սապոգներդ թրքոտ կանես, բալաս:

Մեր փեշակն ա, բա, պտի շարշարվենք, առանց էդ չի:

Գոմ գալուց առաջ Տիգրանը իրենց բակից նայեց գյուղին, խոտի սևացած դեղերին, աթարի բուրգերին, շնչեց գյուղի օդը՝ բակերում, փողոցներում՝ կիտած աղբի, վառած աթարի ու կծծած խոտի, գոմերից դուրս եկած ու մեզի անդուրեկան, ծանր հոտով լցված գյուղի օդը:

Եվ այնպես խեղճ թվաց հայրենի գյուղը, այնքան հեռամեաց:

Առաջին տպավորությունը գրավիչ չէր: Քաղաքում երկար տարիներ ապրելուց հետո նրա հիշողության մեջ վառ էր մնացել միայն գյուղի գրավիչ կողմը՝ սարերը ծաղկաշատ, աղբյուրները պաղղուր, արոտները կանաչ, ուր խոտը տեղ-տեղ մինչև գոտկատեղն է հասնում:

Նա մոռացել էր, որ գյուղում կեզտ շատ կա, սապոնով երես շեն լվանում, մի ձևք շոր ունեն, հագնում են այնքան, մինչև հնանա, սևանա. հետո կարկատում են հազար տեղից ու նորից հագնում:

Տիգրանը կանգնել էր գոմի դռան մոտ ու նայում էր, թե ինչպես հայրը աղբով լի թթոցը շալակին, ոտները կվաշրի մեջ ճլմփացնելով ներս ու դուրս է անում, գոմը մաքրում:

Նրա աչքին ընկավ հոր վզի ամուր ջիւրը, որոնք լաբերի պես ձգվում էին, երբ հայրը ծանր թթոցի տակ վիզն էր երկաղում:

— Գնա՛, գնա՛ տուն... նանին հիմա շալբ գցած կլինի...

Տարիներ հետո, երբ քաղաքում Տիգրանը մտաբերում էր գյուղը հայրենի և հորն ալևոր, նրա աչքի առաջ կանգնում էր հայրը՝ վիզը ձգած, ջղերն ուռած՝ պինդ լաբերի պես, աչքերն ավելի դուրս ընկած...

Առաջին օրերը հա գալիս-գնում էին հարևան ու բարեկամ: Նրանք բուրդն էլ նույն ձևով էին արտահանում իրենց հրճվանքը, համբուրում գյուղացու պինդ պաշով այտ ու աչք, ունք ու ճակատ:

Երբ մի անգամ էլ Անտիկին պաշեցին, նա թաշկինակով թշերը սրեց, նոթերը կիտեց այնպես, ասես տհաճ էր գյուղացու պաշը:

Մինա բիրին նկատեց: Նրան դուր չեկավ, որ Անժիկը սպիտակ, մաշուր թաշկինակ ունի: Փոքրիկ աղջկան թաշկինակ չի սազում, լավ չի սովորի:

Միտք արեց Մինա բիրին, տխրեց: Նրա մտքովն անցավ, որ որդին, հարսն ու թոռը գյուղում չեն ապրելու, քաղաքին են վարժ և էլի պիտի գյուղը թողնեն, հեռանան: Իսկ ինքը կապված է գյուղին, Ավան ամուն, խնոցուն ու հին ճախարակին, որ շատ ձմեռներ լացել էր իր հետ, տաք քուրսու մոտ, սև նավթի ճրագի տակ:

Մի անգամ էլ Անժիկը թաշկինակով իր գոլալը սրբեց: Այդ նկատեց և Շարմաղ հորքուրը, որ ժպտալով նայեց Անժիկին:

— Մինա, տեսնո՞ւմ ես. թոռդ քեզ հավան չի:

Տիգրանն ուզեց տպավորությունը կոծկել և ասաց, թե նա քաղաքում էլ էր այդպես անում: Բայց Մինա բիրին էլի տխրեց, կոտորվեց, ինչպես այն ժամանակ, երբ Անժիկը թաշկինակով երեսը սրբեց:

Անժիկի համար գյուղում շատ բան նոր էր: Նա բազմաթիվ հարցեր էր տալիս հորը, թե ինչո՞ւ գյուղում պատառաքաղ չկա, ինչո՞ւ տատը շաքարը շորի մեջ է փաթաթում ու սանդուղի մեջ պահում: Գյուղին անվարժ մանուկի հետաքրքրությամբ դիտում էր գյուղական ամեն մի աշխատանք ու հարցնում, թե ինչու են այդպես անում:

Մի օր էլ հարևանի մեկը ներս մտավ ու Տիգրանին խնդրեց մի բան գրել: Ստորագրելու ժամանակ մարդը ծիծաղեց: Անժիկի աչքին ընկավ նրա սպիտակ ատամները և այն, որ այդ մարդը գրիչը բռնել էր այնպես, ինչպես Անժիկը կրճեր գոմի թին:

— Հայրիկ, մեր առաջին խմբակում դրանից լավ են գրում:



Առաջին երկու շաբաթը շատ արագ անցավ, և ամեն ինչ մտավ իր հունի մեջ: Գյուղն իր մեջ առավ նորեկներին, այլևս դադարեցին նրանց մասին խոսելուց, աչքալուս տալուց:

Միայն երբեմն գյուղի հարս ու աղջիկ հետաքրքիր նայում էին էլյայի զգեստին, կոշիկներին, գլխարկին: Ոմանք ծիծաղում էին, գլխարկը համեմատում ծտի բնի հետ, ոմանք էլ ասում էին, թե այդպես ավելի լավ է, ավելի ազատ և աչքի էլ դուրեկան:

Տիգրանը գյուղի ժողովներին էր մասնակցում, ասում-խոսում ահեղահեղի հետ, պատմում նրանց քաղաքի մասին, հեռավոր երկրների անցուդարձի մասին:

Գյուղացիք հետաքրքրվում էին, հարցեր տալիս նրան, իրենց ցավ ու կրակից պատմում:

Եվ շատ հաճախ հուսահատությունը թանձր ջողի պես պատում էր Տիգրանին. այնքան շատ էր թերին, գյուղում աշխատանքն այնպես դժվար: Բայց մեկ էլ նրա ներսում ուժգին գրոհով զարկում էր մակընթաց մի ալիք, բնազդորեն սեղմում էր բունցքը, աչքերը կկոցում, ասես հեռվում տեսնում էր գյուղը գալիք:

Էլյան տան աշխատանքն էր անում, օգնում Մինա բիրուն: Միասին աշխատանքի ժամանակ էլյան սրտի դողով և ուշադիր լսում էր Մինա բիրու պատմածը գյուղի ներքինի մասին, թե ինչ է ապրում աղջիկը մանկամարդ, երբ նրան զոռով ամուսնացնում են տարիքով մեկի ունեցվածքի հետ, թե ինչպես են բուժում գյուղում, ինչ ծանր ցավով է վիժում ջահել հարսը՝ ծծկեր մանուկը գրկին:

Մինա բիրին միասին աշխատանքի ժամանակ՝ խնոցի հարելիս կամ բուրդ գգելիս, էլյայի աչքի առաջ բացում էր գյուղի հազարամյա գիրքը, որի յուրաքանչյուր էջը տգիտության մի զոհի մարտիրոսագիր էր, սկեսորոջ ահի տակ, բռնակալ ամուսնու կրնկի տակ կնոջ տանջանքի նկարագիր կամ ծածուկ խեղդամահ արած մանուկների պատմություն: Մինա բիրին մեկ-մեկ դեպքեր էր պատմում ու թեթև զուլաբ շարժում:

Սոսկում էր պատում էլյային, ու թվում էր, թե գյուղում, կիսամութ խրճիթների անկյուններում, դեռ մնում են դարերի թանձր խավարն ու ոգին շար:

Անժիկը պապի հետ էր լինում, երբեմն էլ հարևան երեխաների հետ: Հասակակից մանուկներ հավաքվում էին նրա շուրջը և զարմացած նայում սիրուն սանրած մազերին, փոքրիկ սանրին՝ մազերի մեջ, կոճակավոր կոշիկներին: Նայում էին գյուղի երեխաները, և ամեն մեկի սրտիկի մեջ ծնվում էր մի շատ մեծ ցանկություն՝ ունենալ այն, ինչ Անժիկն ուներ, նրա պես կաշվե սև գոտի կապել: Մանուկներից յուրաքանչյուրն աշխատում էր Անժիկի ընկերությունը ձեռք բերել, նրա հետ ավելի մոտ լինել:

Համարյա ամեն իրիկուն քնելուց առաջ Մինա բիրին Անժիկին խընդրում էր իր հետ պառկել: Պառավն ուզում էր գրկել թոռան և իր սմբած մարմնի թույլ ջերմությամբ նրա մատղաշ մարմինը տաքացնել, հուսադրել ինքն իրեն, թե վերջին շառավիղը չէ, միշտ կը փտած արմատը դեռ շատ ծիլեր է տալու:

Բայց Անժիկը միշտ էլ մերժում էր.

— Քեզ մոտ լավ չի, իմ տեղաշորից չեմ հեռանա:

Անժիկն ավելին էր ուզում ասել: Նա ուզում էր տատին ասել, որ

նրա շապկից ծանր հոտ է գալիս, որ տատը ցերեկով բորիկ է քայլում, գի-
շերն էլ առանց սուրբերը լվալու պատկում:

Քաղաքից բերած իր կապույտ վերմակի տակ Անժիկը քնելուց առաջ
մտաբերում էր քաղաքը, իրենց դպրոցը, շարքերը պիտենրական, կիսոն-
տրամվայն ու էլի հազար ու մի պես-պես բաներ: Կապույտ վերմակի
տակ Անժիկն իրեն քաղաքում էր զգում, և այդ նրան գուր էր գալիս



Գարնան արևն իրեն արգեն զգալ էր տալիս: Գյուղի ետուզեռը շատու-
ցել էր:

Գյուղը հեռից մի մեծ մրջնոցի էր նման, որ գարնան սկզբին սկսում
է շարժվել: Գարնան արևն ավելի արագ էր քայքայում բակերում կիտած
ազրը, և կծծահոտն ավելի թանձր էր թվում, գրգռում թի լորձուներոս
մաշկը և աչքերից արցունք հանում:

Գոմերում տավարը նեղվում էր, օդաներում գյուղացիք խոսում էին
սարի մասին, ուր մատաղ կանաչն արգեն ծլում էր:

Մյուսների պես Մինա բիրին էլ էր պատրաստվում սար գնալու և
մտքում դրել էր սար գնալուց առաջ Անժիկի հետ մատուռ գնալ: Նրա
կրծքի տակ որպես մի թույլ կանթիկ վառվում էր Անժիկին ազոթել սո-
վորեցնելու ցանկությունը:

Ինչու՞ և ծնվեց նրա մեջ այդ ցանկությունը. ինքն էլ չգիտեր: Պա-
ռազն ուզում էր կապել նրանց գյուղի հետ, Անժիկին գարձնել գյուղի
մի խանարհ աղջիկ և տարիների ընթացքում արմատախիլ անել այն ամե-
նը, ինչ քաղաքն է սովել:

Ինչ չավ կլիներ, եթե նրանք գյուղում մնային: Իսկ Տիգրանը միշտ
տոտ էր, թե շուտով պիտի վերագառնան քաղաք, արձակուրդը լրանում
է: Արդյոք մեկ էլ կգան գյուղ, ինքը ողջ կանա՞ մինչ աչք:



Գարնան մի գեղեցիկ առավոտ, երբ ամեն ինչ աշխույժ և գարեկան
է թվում, երբ մարդ ամենից քիչ է մտածում առօրյա հոգանքի մասին
և իրեն ավելի մոտ զգում բնության, գարնան այդպիսի մի առավոտ
Անժիկն ու Մինա բիրին գնացին դեպի ձորակ: Տանը Մինա բիրին չէր
ասել, թե մատուռ են գնում: Նա վախենում էր, որ Տիգրանն արգելի
Անժիկին:

Սրբ դուրս եկան գյուղից, Մինա բիրին սկսեց Անժիկին պատմել, որ
ինքը պառավ է, շուտով կարող է մեռնի: Տատի տարօրինակ այդ պատ-
մանքները, որ նպատակ ունեն բրկյուղած արամադրություն ստեղծել
թոռան սրտում, վառ ազգեց երեխայի վրա: Նա չգիտեր ինչ ասի և վա-
րանքով նայում էր մոտի թփերին, որ մոտ կանաչին էին տալիս ճամփի
երկու կողմին:

Հասան մատուռին: Կիսախարխուլ մի շենք էր, ավելի քարակույտի
նման: Մատուռի մոտ, կաժանից ոչ հեռու, հողի մեջ խրված էր ծխից սևա-
ցած մի խաչքար, որի մոտ գյուղի շենքը ճամփով գնալ-գալիս շատ ան-
գամ կանգնում էին, հետևի մի ոտը բարձրացնում և միջում հենց խաչ-
քարի վրա:

Մինա բիրին մտտեցավ, շոքեց, երկյուղած խաչքարը համբուրեց
մի անգամ: Անժիկը զարմացած նայում էր նրան ու չէր հասկանում, թե
ինչու է տատը համբուրում այդ սևացած քարը: Մինա բիրին ոտքի կանդ-
նեց, մտտեցավ Անժիկին և խնդրեց, որ նա էլ համբուրի:

— Զեմ ուզում, կեղտոտ է... Սա քարը շեմ համբուրի, էհետեղ ի՞նչ
կա որ...

Մինա բիրին մնաց սառած: Անժիկի պատասխանը նրա համար ան-
սպասելի էր: Եվ մի պահ նա անշարժ կանգնեց խաչքարի մոտ, խնչպես
մի երկրորդ խաչքար:

Հետո սթափվեց ու քայքայե օտարեց դեպի մատուռը, կոսցավ և կո-
ղեկուղ ներս մտավ, որովհետև մատուռի դուռը ցածրիկ էր: Անժիկը հե-
տևեց աստին: Ծա ուզում էր իմանա, թե ինչ կա մատուռում, ինչ է
անկաթ Մինա բիրին այնտեղ: Անժիկի գրեթե կապով գրտուն
քարին:

— Թո՛ւհ, էս ի՞նչ գուռ են շինել...
— Թա շեն անի, լալա, աստիպած կշանչի քեդ,— երկյուղած ասաց
տատը, կարծես սրբազան: մի գաղտնիք էր հայտնում:

— Աստված չկա, տատիկ,— բարձր և հատու պատասխանեց Անժիկը:
Մինա բիրուն թվաց, թե փուլ եկան մատուռի պատերը, և պատից
մի քար ընկավ գլխին: Սարսուռով նայեց Անժիկին, և հիմախուրց մա-
տուռի մեջ տատիկին անհարազատ թվացին թոռան աչքերը ժից:

Մտաբերեց որդուն, հիշեց, որ շուտով հեռանալու են, և անզոր գրեթե
խանարհեց մատուռի խոնավ հատակին: Մատուռի մամուսպատ քարերը
լսեցին Մինա բիրու զգալի մեծ հեղեղանքը:

Իսկ Անժիկը ձեռքը մեկնել էր մոտի կանաչ տեղեկներին, որոնց փայ-
թանդուն փուլել էին մատուռի կատարի վրա:

Տարօրինակ թվաց զուռնայի կանչը զիւ և դճուի աղմուկն ընդհատ աշնան արևոտ ցերեկին, բլրի լանջին արևկող արած գլուղում:

Հարսանիք չէր, և ոչ կերուխում կամ կնունք: Այդպես չի փշում զուռնան ուռած թշերով, մի աչքը միշտ կիսախուփ զուռնաչին, երբ պարն է զլում, թնդում:

Առաջին պահ դժվար էր որոշել, թե որ գետնափոր խրճիթումն են նվագում: Երբ զարմացած հարցմունք արի ծանոթ գեղականից, նախ շուգեց ասի, ապա մատը դիմացի տունն ուղղեց և ասաց.

— Տասն օր ա էսպես խաղում ա, գիշեր-ցերեկ...

Դիմացի տունը՝ կտուրը խոնարհած, մի քիչ թեք ընկած տուն էր, կտրին աթարի դեզ՝ շիշ փափախի պես, դեզի մոտ դեղին դուռի մի շարք: Փողոցին նայող միակ պատուհանը ներսից շորով էր ծածկած:

Չուռնան նվագում էր ներսում, դմբում էր դճուլը, ինչ-որ մարդիկ ոտքերը գետնով էին տալիս սենյակի սալաքարերին: Փակ էր դուռը տան, բակում օքմին չէր երևում: Եվ եթե մեկն անցնում էր փողոցով, շորով ծածկած պատուհանի առաջ չէր կանգնում, զուռնայի նվագը չէր լսում, այլ արագաքայլ էր անում:

Եվ՝ ծանոթ գեղականն իմ հեռացավ մի քիչ, նստեց փողոցում ընկած գերանի վրա, շփեց ճակատն ու ասաց, թե՝

— Հայվանի աղաթ ա մեզանում էդ խաղը, խաղացավը...

Զկարողացա իմանալ, թե ինչ ցավ է. բռնում է հանկարծ, ասում են, շատ միտք անելուց, հանկարծակի կորստից կամ հրճվանքից անշափ: Հիվանդի ոսկրները ցավում են:

— Ցավը, որդի պես, սաղ ջանով ման ա գալիս... Մին ծունկն ա ծակում, մեկ էլ փախնում սրտի տակ: Պետք ա էդ որդին սպանեն:

Եվ սպանում են «խաղացավով»: Կիսամութ սենյակում նստոտում են վարձովի լալկան կանայք, հիվանդը նստում է նրանց մոտ: Լալիս են կանայք վարձկան, սուգ անում, մղկտում, և հիվանդի սիրտը թուլանում է, մարելու պես լինում, մեկ էլ ծլունգ լինում ընդոստ, սկսում պարել՝ խելագարի ցատկումներով անմիտ, գետնովն է տալիս իրեն, մարմինը կոտրատում և պարում, պարում ժամերով: Քրտնում է, փրփրում, բայց թնդում է պարը: Սենյակի անկյունում նստած զուռնաչին զլում է զուռնան, դճուլը դմբում է արագ, նվագն ասես թե ոսկրի մեջ է մտնում, և մարմինը՝ դճուլի դմբոցի հետ վեր-վեր է թռչում, ֆուտբոլի գնդակի պես: Այսպես սկսվում է և երկու օր տևում: Նվագում են գիշեր-ցերեկ:

հոգնած զուռնաչուն ուրիշն է փոխարինում, դարձյալ զլում զուռնան, դճուլին խփում, և հիվանդը պարում է, մինչև ուշաթափ լինի: Հիվանդին պառկեցնում են անկողնում, մի քիչ դադար առնում և հետո նորից սկսում:

Եթե երկու օրում չի լավանում, եթե հիվանդը դարձյալ զանգատվում է «որդի» ծակոցից, խաղալ շարունակում են, այս անգամ ավելի վայրենի, ավելի անիմաստ ու այլանդակ:

Չուռնի լայն բերանը մոտեցնում են հիվանդի ականջին, մեկը ձախ, մյուսը աջ սկսում են փշել, ինչքան թոքերը կարող են շունչ պահել: Դճուլն էլ դնում են հիվանդի գլխին և փայտե կոպալներով հարվածում դճուլի պինդ քաշած կաշուն: Ինչքան ուժ ունեն, փշում են զուռնան, դճուլին կոպալները կարկտի պես են վեր թափում:

Հիվանդը ցնցվում է ցավից, հնչյուններից անախորժ, ոտքի է ելնում և նորից սկսում պարել: Այդ ժամանակ է, որ ներս են մտնում երկու ուժեղ տղամարդ, և սկսվում է «խաղալու ցավի» զարհուրելին:

Հիվանդին գետնով են տալիս, ոտնահարում, փափուկ մսից քաշում, թեկից բռնում, ձգում, հրում մի պատից մյուսը, աքացի տալիս, երակներից բռնում քաշում, մատները կոտրատում...

— Սաղ մարդը մի սհաթ էլ չի դիմանա էդ շարշարանքին,— ասում էր ծանոթ գեղականն իմ: Իրեն էլ են կանչել, մի անգամ էլ ինքն է գնացել մարմինը շարդելու:

— Էն մեջքի ճիւղից որ քաշում էի, ասում էի, թե հրես միսը պտի պոկվի... Ամա իրեն ցավ չի թվում...

Եվ ձեռքի բուժն ու ցուցամատը կեռացրեց այնպես, ասես ցինի կտուց լինի:



Շատերից եմ հարցրել «խաղալու ցավի» մասին: Բոլորն էլ նույնն են ասում: Հիվանդին շարդում են, տղամարդիկ աքացի են տալիս, կրոները կոտրատում են, մարմինը կապտում է, արյուն է գալիս, բայց իբրև թե հիվանդը ծպուտ չի հանում, «դուր է գալիս»:

Բեզարում են տղամարդիկ, հոգնում են կոները, քրտնում են սենյակի կիսամութում, ուր շնչելու էլ օդ չկա, որովհետև դուռ և պատուհան պինդ ծածկած է: Հոգնածին ուրիշ զուլգ է փոխարինում, զուռնան էլի զլում է, վարձկան կանայք անկյունի մթում ձեն-ձենի են տալիս, լալիս, երեսները շանգոտում, իսկ հիվանդը պարում է, կամ տղամարդիկ զլորում են նրան, գետնով քարշ տալիս և միշտ աշխատում «որդը որսալ»:

Մյուսպես օրեր են տեւում, գիշեր-ցերեկ անընդհատ, մինչև հիվանդը կամ լավանում է, կամ մեռնում: Պարից բնզարած, շարդ ու փշուր մարմընով պտուղում է անկողնում, դադարում է զուռնան, կանայք էլ չեն լալիս, և երբ հանգստի ժամը երկար է թվում, մեկը կանանցից մոտենում է հիվանդին, տեսնի՝ շնչո՞ւմ է դեռ...

* * *

— Հերու մեր գյուղում երեք հարս էին «խաղլացավով» հիվանդ... Մինն էլ երեխով էր, — պատմում էր ծանոթն իմ, փողոցի գերանին նստած, իսկ մի քիչ հեռու պատուհանը ներսից շորով ծածկված սենյակում զուռնան էր նվագում՝ միալար, ձանձրալի:

— Երկուսը լավացան, էն մինը երեխան փչացրեց, հիմի էլ ջան չունի...

Սովորաբար աշնանն են սկսում բժշկել, «որդը» ցուրտն ընկնելու՞մ պես սկսում է շարժվել, վերքերն են դուրս գալիս: Գյուղում պառուժ կանայք կան, գիտեն, որ այդ «խաղալու ցավ» է: Ծվ ահա սկսում են պատրաստութուն տեսնել, մոտիկ գյուղից զուռնա-դհուլ կանչել, երկու կամ երեք «գաստա», որ իրար փոխարինեն:

Ես չկարողացա ստուգել, թե ինչքան են ստանում զուռնաչին ու դհուլին: Խորհրդի նախագահի ասելով՝ օրական ութ ուրբիով են պայմանավորվել: Շատ սազանդար չի դիմանում, չի համաձայնվում նվագել, թեկուզ բարձր գնով: Նոր սովորած զուռնաչիները միշտ էլ ուրախությամբ են համաձայնվում. սովորել կարող են, որովհետև նրանցից շնորհքով նվագ չի պահանջվում, այլ դարբնոցի փուքսի պես թոքեր:

— Օտարութունից ա եկել էս կնիկը, որ հրեն խաղում ա: Քաղաքներում չեն կարողացել օգնութուն անել... Ինչքան երեկի բժիշկներք մոտ են տարել, բուրն էլ ասել են, թե «չխոտկա» լա, բժիշկվիլ չի՛ հայրենիք տարեք... Հիմի էստեղ բժշկվում ա:

Երբ ես աչքիս տակով նայեցի խոսակցիս մազակալած դեմքին, ահա՞նչներին՝ մեջը մի-մի մալանչ բուրդ, — չկարողացա իմանալ, հեգնո՞ւմ է, թե՞ համոզված է, որ «էստեղ բժշկվում ա...»:

«Ետալալու ցավ»-ով մեծ մասամբ կանայք են բռնվում, քիչ գեպտում՝ տղամարդիկ: Այդ օրվա հիվանդն իր երկու որդուն զոհ էր տվել մի դժբախտ պատահարի, ցավից դարձել մտազբազ, շատացել է հոգսը և «որդը սրտում բուն ա դրել»:

— Ինքը ջահել ա, համա որ տեսնես, էն ճիպտը քեզ օրինակ: Մաշված, դեղնած, սերկևիլի կճեպ:

Հարցրի նրան, թե ինչպես է հիվանդը դիմանում այդքան անասելի շարքարանքի, ինչպես է, որ շունչը չի տալիս:

— Տվող էլ ա լինում, առանց էդ չի... Դուր ա գալիս զուռնի հովեն, զուռնի ձենը ուկորի մեջ ա մտնում, ոնց որ շուրը պտտում ա, ինքն էլ էդ ցավից թնում ա:

Իբր թե հենց առաջին օրը հիվանդը շոկվում է: Եթե զուռնի նվագը նրան դուր է գալիս, լալկան կանայք իրենց սուգով, երգերով կարողանում են նրա աչքից արցունք քամել, եթե խաղը կոտորն է ընկնում, ուրեմն նա «խաղացավ» ունի, պառազնեբրը ճիշտ դիագնոզ են դրել, զուռնաչուն և կոտորը կոտորատող տղամարդկանց է մնում բժշկել:

Հիվանդին ուտելիք քիչ են տալիս, մի կտոր չոր հաց, մի գավաթ ջուր:

— Պետք ա սոված մնա, որ էն «որդը» դուրս գա:

Առաջ «խաղլացավը» ավելի խայտառակ միջոցով են բժշկել: Եղել է զուռնան, անվերջ քաշկոտուրք, կանանց շիվանը, բայց միացող աթարն էլ է եղել, շան շորացած կզկզանքը միացող աթարի վրա:

Ուշաթափ հիվանդը պառկելիս է եղել վերմակի տակ, զուռնը ծածկել են վերմակով և միացող աթարը՝ որպես բուլվառ, վրան վնդրուկ՝ կզկզանք, վերմակի տակ դրել կնոջ քթի առաջ, մինչև շնչահեղձ, թունալորված հիվանդը ջղաչին ցնցումներ է արել, վերմակը գեն շարտել, ծառս եղել, որպեսզի զուռնի տակ պարի երիցս նզովված «ջազբանդ...»:

Հիմա միացող աթարը մոռացված է, բայց խաղալը մնում է, օր ու գիշեր, զուռնով, դհուլով, կիսամութ սենյակում, քաղցած, հյուծված հիվանդի խելագար ցատկումներով «խաղլացավը» մնում է դեռ մեր խուլ, յոթը սարի հետևում պահված գյուղերում, որպես «հայվանի ագաթ»:

— Էսօր տասներկու օր ա խաղում ա... Երեք գաստա սազանդար են կանչել, հլա «որդը» շարժվում ա...

Վեր կացանք, ծանոթ գեղականիս հետ անցանք շորով ծածկած պատուհանի առաջ: Սենյակից լսվում էր զուռնի ձայնը միալար, ձանձրալի, դժբուն էր դհուլը և անկարգ, մերթ թույլ, մերթ ուժեղ ոտնաձայններ էին լսվում սենյակից, ասես դադանակով խփում էին հատակի սալ-քարերին...

Տունը գյուղի ծայրին է, ճանապարհի կողքին: Եթե գյուղը ման գաք, էլ ուրիշ ներկած դարբաս չեք ճարի: Կապույտ ներկ միայն նրա հաստ ու ամուր դարբասի վրա կա:

Եվ եթե բաց են դռները, փողոցից կարելի է տեսնել բակն ու տան սրահը:

Բակում բացօթյա մի արհեստանոց կա: Մեծ ու փոքր մուրճեր, սղոցներ, պայտարի գործիքներ, անիվների օղեր, սոնիներ, նոր քաշած տախտակների կույտ, կլպած գերաններ, որ շորանում են արևի տակ:

Ամեն օր մի քանի բանվոր է աշխատեցնում: Մեկը ցեխապատ է անում, նոր գոմի պատերը շարում, մյուսը քար է տաշում, իսկ ինքն էլ իր որդիների հետ լուսաբացից մինչև արևմուտ աշխատում է:

Իզուր չէ, որ գյուղում եթե մեկը լավ աշխատող է, ասում են՝

— Զորբա Օսեփի ճանկն ընկնի, մի շարաթ էլ չի դիմանա:

Ինքն էլ է աշխատում և արհեստավորին շուտ-շուտ ձեն տալիս.

— Հը՛, բեզ մատաղ, օրը պրծավ, հա՛, շուտ արա, էս շարքն էլ պատի, իրիկունը արաղ կտամ:

Վարձը կալին է տալու ցորենով: Իսկ մինչ այդ եղածից բաժին է հանում: Եթե մի ծուռ գերան իրեն պետք չի, տալիս է արհեստավորին, տանի խանգարված կտուրի գերանը փոխի: Կալին հաշվից դուրս է գալու:

Բակի անկյունում զինվորական մի խոհանոց կա՝ կաթսան ժանգոտած, խողովակը ծուռ:

Մորեխի տարին մի փութ կորեկով է առել: Մտքում դրել է կաթսաի հարմարեցնել արաղ քաշելու, իսկ մնացած երկաթեղենը ծախել:

Խոհանոցի մոտ ընկած է երկանիվ մի սալլ, կոբիլներից մնացած: Կարգի է բերել, ներկել և գործ է ածում, երբեմն էլ քրեհով տալիս:

Տան կից պարտեզն է, գյուղի ամենալավ պարտեզը, ծառերը շարի-շար, զանազան տեսակի, պատվաստած: Միայն նրա այգում կան պատվաստած ծառեր:

Պարտեզի մոտ բանջարանոցը, որի մի անկյունում մեղունների տանի-երկու արկղ կա կարգով շարած:

Պարտեզն ու բանջարանոցը բարձր ցեխապատով է պարսպած, փողոցից միայն ծառի վերի ճյուղերն են երևում:

Եթե մի հիվանդ մեղր ուղի կամ ձմեռը թթու խնձոր, Օսեփի ներկած դարբասն են ծեծելու:

— Չկա,—կասի,—ի՛նչ էր, մի քանի խնձոր.—կամ,—ճանճը էս տարի օգուտ չտվավ,—և եթե լավ գին տաս,—սպասիր տեսնեմ,—կասի և մանանը կիջնի:

Ընդարձակ բակն ընկած է տան առաջ, որ շորս լուսավոր սենյակ ունի, փեղկերով, ապակած: Սենյակներում գորգ ու կարպետ կա, պատերին խալի, երկու լավ մահճակալ, սպիտակ պղնձից ինքնաեռ, ափսեներ ու բաժակներ:

Օսեփն առաջ խանութպան էր, գյուղումն էր առուծախս անում:

Այն ժամանակից է պահել և պատերազմի տարիներում խալին ու սանդուղները լի պինդ թաքցրել մառանի մի անկյունում:

Խաղաղության հետ ամեն տարի նրա տունը լցվում է, պահածը դուրս է հանում և ավելացնում անընդհատ:

Գյուղում նրան «քոռ գալլ» են ասում: Եվ եթե խոսքը վեր է գալիս Օսեփի վրա, մի ջահել վրա է բերում.

— Նրա ամբարում հլա ինչե՛ր կա...

* * *

Իսկ իրեն որ նայես, բամփես՝ տզի պես գետնին կփակչի. լզար՝ դարմանով պահած ձիու պես, այտոսկրները դուրս ընկած, կարճահասակ, կուզը մի քիչ դուրս ընկած: Նայում ես դեմքին, ասես որդ կերած կարտոշկա լինի, աչքերը փոքրիկ, բզով ծակած, ունքերը կատարյալ բեզ, փափախի մազերից չի ջոկվում:

Բայց զորբա է: Չորս ձի ունի, սեփական գութան, որ նոր է առել: Եթե ուզենա, գութանը մենակ լծելու շափ եզներ ունի... բայց մենակ չի լծում: Հարաքաշ է անում, եզանց մի ջուխտ էլ գոմում պահում:

Ձեռքից եկածը չի խնայում: Ձեռքափող է տալիս, տոկոս առնում կամ գարնան սերմացու տալիս, կալին մեկին երկու ստանում: Եթե գյուղում մեկը որոշում է մի ոչխար մորթել միսը ծախելու և եթե մենակ ուժը չի պատում, Օսեփը միշտ ընկերանում է, աժան պատահած ոչխարն առնում և մորթում:

Ականջին է հասնում, որ գյուղում մեկը ծախու գերան ունի կամ քարն է ծախում, ուժ շունի նոր շենք շինելու, Օսեփը աչքերը ճպճպացնելով գլխին կանգնած է, գինը նաղդ է տալիս:

Ինչպե՛ս էլ գիտես հարևանի թույլ կողմը: Մի ուռի տեսնի, կկանգնի, աչքի պոշով կնայի, մտքում կհաշվի, թե քանի տախտակ դուրս կգա, և ծառի տիրոջ տեսնելիս կասի.

— Էն մարազիս մի գերան ա պակաս, ճառղ ծախիր առնեմ:
Շառը դեռ արմատի վրա Օսեփի սեփականն է, մի տարի էլ կանա,
երկու տարի էլ, ոչինչ, ավելի է հաստանում:

Կաշի է ծախում: Չմեռն էլ աղվեսի մորթի հավաքում, ծախում քա-
ղաքում:

Ջորբան հին աղաթի փեշից այնքան էլ կախված չի: Օսեփը առող
էլ եկեղեցի չէր գնում:

Եվ եթե գյուղի կոմսոմոլն ընդունի, նա իր տղաներից մեկին կգրի
նրանց շարքերում:

— Մենակ նալոզն ա, որ դժար ա, շենք դիմանում:

Տուրքն է և տուրքի հետ կապված մի շարք խնդիրներ, որ ինչքան
էլ զորբան գլխին զոռ է տալիս, չի հասկանում, թե ինչու է այդպես
Ծվ իր մտքում որոշել է, թե՛ «միջի մարդն է խառնակիչ»:

Քաղաքից գալիս են շնչազրկու, ապրանքի և հողի ցուցակ անելու
Օսեփն իրեն խեղճ է ցույց տալիս, նվազած ձայնով ասում.

— Ունեմ, կա, ինչու, ապրի էս կառավարութունը:

Եվ եթե վիճակագիրը մեկ-մեկ հարցնում է՝ ձի, եզ, կով, Օսեփը
նախ կմկմում է և պակաս գրել տալիս՝ մի ձի, երկու էլ:

Բայց հետո տեսնում է, որ հարկաթիկթի մեջ իր ասածը չեն գրել,
այլ այն, ինչ ունի: Գրա համար էլ ասում է, թե միջի մարդն է խառնա-
կիչ:

Եթե շահեկները ժողովի ժամանակ նեղացնում են և ասում, թե՛

— Օսեփ ապեր, ունես, տուր, — Օսեփը շարունում է, ձայնը երկինք
բարձրացնում և սկսում պատմել այն, ինչ հազար անգամ ասել է և լսողն
էլ հազար անգամ իմացել, որ սուս է ասում:

Ի՞նչ է ասում:

Քր աղքատը ծուլ է, ինքը օրեքուսն աշխատել է, սբ խառնաթն իրեն
օգուտ չի տվել, որ դուր են կարծում, թե ունևոր է, և վերջում էլ ասում.

— Մի սաղ գեղի շափ հարկ եմ տալիս կառավարության, էլ ի՞նչ եյ
ուզում:

Եթե այդ շափ, պիտի ասի, որ մի քանի աղքատ տուն է պահում,
իր արեփ տակ են ապրում:

Օսեփի հարեան մի քանի աղքատ տներ կան, որոնց կանաչք նրա
տանը բուրդ են լվանում, հաց թխում կամ ուրիշ գործ անում: Օսեփ
հուսադը միշտ այդ տներից կլինի, մահ քոզն էլ, ասվաք պահադն էլ:

Եթե մի վառղ գործ լինի, Օսեփը ձեն է տալիս բակից, մեկն ու մե-
կին կանչում:

Աղքատ տներ են, որոնցից յուրաքանչյուրը մի եզ ունի կամ մի
կով, երկու օրավար վար ունի, մի տուն լիքը ուտողներ:

Իրենց գործն անելուց հետո սրա-նրա համար աշխատում են, գլուխ
պահում:

Օսեփը գրանց համար է ասում, թե իր արեփ տակ են մեծանում.
լսողն էլ գիտե, որ այդպես չէ: Օսեփն է տղի պես փակչել նրանց և հա-
ցափոր աշխատեցնում:

— Բա խի՞ գողն քնկել էր ջանդ, որ ասում էին պայման կապի
բատրակի հետ...

Այդ որ ասեին, Օսեփի ջանը իրոք որ դող էր ընկնում, վեր էր կենում,
գեղամիջից հեռանում:

* *
*

Գզիրը կտուրից ժողովի է կանչում:
Մեկ-մեկ հավաքվում են դպրոցի քակում և նստոտում պատի տակ,
գետնին կամ քարերի վրա:

Ժողովը հարկի մասին է:

Քաղաքից եկած մի ընկեր այս տարվա մասին է խոսում, բացա-
տրում է, թե ինչու է քիչ:

Ուշադիր լսում են, հետո հարցեր են տալիս: Հարցնում են, թե էլի
առաջվա պես պիտի հավաքե՞ն՝ հարուստից շատ, միջակից քիչ:

Օսեփն էլ է ժողովի եկել:

Նա ոչ մի ժողով բաց չի թողնում, ամենից առաջ է խոսում, աշխա-
տում է ծուռ ու մուռ ճանապարհներով, առակներով իր մտքինն ասել,
ուզածն իմանալը եթե քաշվում է հարց տալ, մի ուրիշին է խնդրում, որ
իմանա:

Եվ ամեն ժողովի, երբ խոսք է քաջվում հարկի մասին, նա միշտ
նույնն է ասում.

— Աղքատից էլ հարկ առեք, թող մի արասի լինի, միայն առեք:

Առեք, ասում է, որովհետև աղքատը հարկ չտալով՝ ծուլության է
վարժվում, ամեն տեղ նրա խնդիրն առաջ են ընդունում:

Այդ մի յուրահատուկ տեսութուն է նրա համար, որի ճշմարիտ լի-
նելուն Օսեփը երբեք չի կասկածում:

Աղքատը դատարանին խեղիք տալիս գործատուրք չի վճարում:
Գրա համար էլ աղքատները դատարանին շատ են դիմում և ճնշում ունե-
վորին:

Կամ թե աղքատ գյուղացին համոզված է, որ կառավարութիւնը հարուստից անհետ է իրեն տա, դրա համար էլ չի ուզում հարստանալ, սեփական տնտեսութիւն ստեղծել:

Մի խոսքով՝ մի ամբողջ տնտեսութիւն իր գործնական միակ առաջարկով, որ անում է Օսեփը ամեն ժողովի, երբ հարկի մասին է խոսք է լինում:

— Մի արասի էլ աղքատից առեք:

Մի անգամ էլ խորհրդի նախագահին Օսեփն առաջարկել էր դիմում առ կառավարութեան և իրավունք խնդրել գյուղի հարկը գյուղում բաժանելու:

— Հարյուր մանեթ շեն ուզում գյուղի՞ց, թող երկու հարյուր մանեթ ուզեն, մենակ թե մեզ ասեն՝ էդ երկու հարյուր մանեթը դուք ձեր մեկ փայլ արեք:

Գյուղխորհրդի նախագահը ծիծաղել էր.

— Ուրիշ տեղ չասես, Օսեփ ապեր, թե չէ կրնանք քեզ:

Եվ մինչև հիմա ուրիշ տեղ չի ասել, բայց մտքից էլ չի հանել:



Նախիրի գալը ժողովը ցրում է: Բոլորը վազում են տավարը տեղաց անելու:

Նախագահն իզուր է կանչում.

— Ժողովը դեռ պրծել չի. հարցեր կա՞...

Բայց նախիրը «հարց հարցոց» է գյուղի համար:

— Այ տղա, բա էսպես էլ ժողովո՞ւրդ, — թոնթորում է նախագահը, ինքն էլ իր տավարի մոտ գնում, որովհետև կտուրից արդեն ձեն են տալիս: Գյուղի խոսք է, թե շինականի ապրուստի մասին նախարապանից հարցրու: Նա լավ գիտե, թե ով ի՞նչ ապրանք ունի:

Նախարապանն է, որ նախիրը գյուղում ցրելուց հետո ժողովատեղի է եկել, մնացողներից մի բան իմանա: Բայց բոլորը ցրվել են, ես եմ նստել քարին:

— Օսեփը շատ ա՞ զորբա, — հարցնում եմ նախարապանին:

— Բա հայտնի բան ա, որ զորբա յա: Էն տավարն ո՞ւմն ա, — ասում է և կողքիս նստում, տրեխի թելը կապում:

— Թամահը շատ ա է՞, հենց էն ա բերանը բաց ման ա ածում, թե որ քյասիրի թիքան կու տա: Բայց վե՞րջը փուշ ա նրա:

Եվ երբ հարցնում եմ, թե ինչո՞ւ վերջը փուշ է, նա ուսերը թոթվում է: հետո գրպանից թուփոնի քիսան հանում, լցնում շիբուխի կավե գլուխը, մթնում կայծաքարը պողպատին խփում և շրթունքները ծպպացնելով փրստացնում:

— Դա մեզ լավ հայտնի յա նրա վերջի կյանքը... Օսեփը շունչը գինջ չի տալու...

Եվ առակ է ասում, թե ինչպես ազահ մի գյուղացու ասում են՝ լուսաբացից մինչև արևմուտք ոտով ինչքան գնաս, այդքան հող կտանք քեզ: Մարդը գնում է, գնում. քանի արևմուտք մոտենում է, այնքան նա քայլեր է շտապեցնում:

Եվ մայրամուտի վերջին պահին ազահութիւնից բոյով մի մեկնը վում է, որ իր պառկած տեղն էլ զավթի:

Նախարապանը առակն ավարտեց ու մահակն առավ, որ գնա:

Մեկ էլ նայեց ինձ և ասաց.

— Հենց էն պառկած տեղն ա մնալու իրան, զորբա Օսեփին...

1925

ՕՐԱՆՋԻԱ

Օրանջիայի ձորակում ամեն գարնան մասրենիներն են ծաղկում, բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ: Երբ գարուն է լինում, տաքանում են Օրանջիայի քարերը, և խլիզները, փորի մաշկը դեղին, պառկում են տաք քարերի վրա, լեզունները հանում:

Այն ժամանակ, երբ շեն էր Մանասի խրճիթը, Օրանջիայի ձորակում մասրենիներ չկային, տան պատերի վրայով երկչոտ խլիզները չէին վազվզում, վայրի վարդերի տեղ բոստանում վարունգն էր ծաղկում:

Մի բարակ արահետ Օրանջիայի ձորակը միացնում էր գյուղի հետ: Այժմ այդ արահետն էլ չկա:

— Մանաս, ինչո՞ւ տունդ Օրանջիայում շինեցիր, չգիտեիր՞, որ Դավոյենց Առաքելն էլ աչք ուներ դրած ձորակին, ուր ձյունն ավելի շուտ է հալվում, և ձյունի տակից կանաչը ծլում:

Դավոյենց Առաքելը, եղան կաշվից տրեխները հագին, մի առավոտ աչքի տակով նայեց Օրանջիայի ձորակին, ուր նախրից ետ մնացած երկու հորթ էին արածում, և մտքում դրեց ձորակում ամառաթ կառուցել:

Իսկ երկու շաբաթ անց Օրանջիայում Մանասն էր քարն ու կիր թափել, ոտքերը մինչև ծնկները վեր քաշած ցեխ էր շինում, ուստան էլ տաշած քարերն էր շարում:

Առաքելը գյուղում չէր: Վերադարձին աչքի տակով նայեց շարած պատին, հերսոտեց և սրտում զայրույթը պահեց, որ առավոտյան Մանասի երեսով տա, կռիվ անի Օրանջիայի համար:

— Հենց գիտես, թե դատ ու դատաստան չկա, էլի՞, որ զոռ ևս անում,— ասաց Մանասը,— Օրանջիայում ես պիտի տուն շինեմ, Առաքել...

— Մանաս, իմացիր առաջդ ով ա կանգնած: Ես Դավոյենց Առաքելն եմ, բա դու ո՞ւմ լակոտն ես:

Եվ ա՛ռ հա մի հատ Մանասի գլխին, ձեռքի դազանակով: Իրար անցան, աղմուկ, աղաղակ եղավ: Մանասին արնաթաթախ տուն տարան:

Առաքելն էլ նայեց հեռացողներին, պատի տակ գերանի վրա նստատած մարդկանց, էլի սպառնաց և գնաց տուն:

Լսեցին, տեսան, բայց ծպտուն չհանեցին: Վախենում էին Առաքելից: շշուկով պատմում էին, որ Առաքելը «ջանդարմի» հետ կապ ունի, գյուղում լրտեսություն է անում, մեծամեծ շինովնիկների աչ ձեռքն է:

Երբ Առաքելը հեռացավ, մի ծերունի շշուկով ասաց հարևանին.

— Առաքելը մատնիչ ա, հերն էլ էր էղպես, հորն ա քաշել:

* * *

Երկու տան մեջ թշնամությունը հնուց կար:

Ջորակում շինվող տունը սուր փշի պես Առաքելի աչքը մտավ: Իր այգու ցանկապատի արանքից երբեմն նայում էր տան պատերին: Մանասին, որ գլուխը շոր փաթաթած, վարպետին քար ու կիր էր տալիս:

Նայում էր Առաքելը ցանկապատի հետևից և ափսոսում, որ դազանակի ծայրը Մանասի ականջատակին չկապվի: Բարձրանում էին տան պատերը, և պատերի հետ Առաքելի սրտում զայրույթն էր ծառս լինում, սանձարձակ ձիու պես: Փափախի տակ մտքերը որդեր էին, լեշի վրա վխտացող զագիր որդեր:

Գնաց իր ծանոթ պրիստավի մոտ, նրա համար լուղ ու մեղր տարավ, պրիստավի տղի համար զատկին ճակատը ներկած գառ տարավ:

— Մանաս, տապ արա, Առաքելը պրիստավի տունը ջրի ճամփա է շինել:

Բայց Մանասի չրոզացն էլի հերվա աղունն էր աղում:

— Հենց գիտեք, թե պրիստավից էլ մեծ մարդ չկա՞, իրա, գեհե, բալի դուռը կգնամ...

Առաքելը գնաց եկավ: Օրանջիայի ձորակով գլուխը կախ անցավ: Նոթերը կիտած: Ոխ ունեք սրտում, աչքն էլ ուրիշ բան չէր տեսնում:

Մանասը տուն շինեց, կտուրը ծածկեց փայտով, չոր ցախով, կինն ու երեխան էլ հայրական հին տնից հանեց և արահետով անցավ, տեղավորվեց նոր տան մեջ:

Ասում են, որ հենց այդ օրերին պրիստավն իր մոտ է կանչում գյուղի մի քանի ազդեցիկ մարդկանց և մատը թափ տալով ասում.

— Հա՛, Առաքելին որ տանուտեր չեք ընտրել այս անգամ, էլ պրծնում չկա ձեզ:

Շատերն էլ ասում են, թե պրիստավը չի ասել, Առաքելի կողմնակից մարդիկն են այդ լուրը տարածել գյուղում:

Մանասը ձորակում բոստանատեղն էր փորում, երբ ականջովն ընկավ այդ: Աչքի տակով նայեց գետնին, քարը մի պահ ձեռքին մնաց, քարը պատին դնելիս մտքում տպվեց, որ Առաքելը ոխը մի տեղից պիտի հանի:

Իրիկունը Մանասը դռան երկաթ կապին նայեց ու կնոջն ասաց.

— Ա՛յ կնիկ, մեզ մի շուն ա պետք, գյուղի ծերին ենք, ճամփի բերան:

...Ո՞վ էր՝ կանչեց, թե Առաքելը պիտի տանուտեր լինի: Ժողովին մեկը կանչեց, հետո մի ուրիշ խումբ միացավ, վերջում որոշեցին կողմերի բաժանվել:

— Առաքելին ուզողը դեպի պատը,— կանչեց մեկը: Մի խումբ քաշվեց պեպի պատը, հետո մի քանի հոգի միացան, և երբ գյուղի «իշխան» մարդիկ իրար բռթելով շարժվեցին դեպի Առաքելի պատը, ժողովուրդը հետևեց նրանց, աղի վրա գնացող ուխարի պես:

Մանասի ոտքերը թուլացան, և ոտքերը քաշ տալով ինքն էլ գնաց բուրի հետ, հոտից ետ ընկած կաղլիկ ուխարի նման:

— Ենն կենա Առաքել քոխվան,— ձայն տվին այս ու այն կողմից, փափախները գետնով տվողներ էլ եղան:

Մինչև հիմա էլ գյուղում պատմում են Առաքելի մասին:

— Ցաման քոխվա էր, ջանի կրակ էր: Քանի՞ մարդ ա փչացել նրա ձեռքից: Մի ձեռքը խանչալի կոթին էր, մինն էլ դամշու:

Պատմում են, թե ինչպես Առաքելը գիշերով հանդ էր գնում: Եթե տեսներ, որ մի ուխար է ընկել իր կամ բարեկամի արտը, ուխարն արտի մեջ մորթում էր: Սարում, երբ լսում էին, թե Առաքել քոխվան ման է դալիս, շոբաններն ահից ուխարը մի վերստ էլ հեռու էին քշում:

Եվ պատմելիս ծերերից մինն ավելացնում է.

— Խեղճ Մանասն էլ նրա ձեռքով չփչացա՞վ, տունն էլ ավերակ թողեց...

Մանասը երբեմն միտք էր անում, թե Առաքելը ոխը հանելու համար գնաց տանուտերի եղավ: Մտածում էր, բայց մտքինը ոչ ոքի չէր ասում:

Իսկ եթե ազգ ու բարեկամ էլի ասում էին.

— Մանաս, տապ արա, թրի սուր ժամանակն է...

Մանասը փափախը գետնով տալ չէր ուզում, էլի իր հին ասածն էր կրկնում:

Բայց Առաքելը չէր էլ ցույց տալիս, թե ինքը հաշիվ ունի Մանասի հետ: Այն օրից, երբ տանուտերի շղթան վզովն անցկացրեց, պղնձե կնիքն էլ գրպանը դրեց, Առաքելն այդ օրից ձևացնում էր այնպես, որ իբր թե Մանասին չի էլ տեսնում:

— Մանաս, զարթուն կաց, Առաքելը հանկարծ է քեզ նեղը պցելու:

...Երբ լուր եկավ, թե քաղաքներում գործադուլ կա, հեղափոխություն է ընկել, Առաքելն ականջները խլշեց: Նույն գիշեր Առաքելի ձիու սմբակների տակից կայծեր թռան: Պրիստավը հուսադրեց նրան.

— Ձեր գործին կացեք, ժողովուրդ, տարին խառն ա, չլսեմ, չիմանամ, թե լոթի-փոթի մարդիկ են գալիս, գիշերով թաքուն ժողով անում:

Իր շվաքից խրտնեց, թե իրոք վտանգ կար գյուղում, երբ մի շաբաթ հետո Առաքելը նորից գնաց պրիստավի մոտ:

— Պրիստավն ապրած կենա, գյուղում էլ են երևում խառնակիչ մարդիկ. մի տասը հատ դազախ թող հետս գա, գյուղում երևան մի անգամ, ժողովուրդը զարզանդի:

Պրիստավը բեղերը ոլորեց, բեղը փաթաթեց մատին և ձգեց մինչև աչքատակ, ասես աչքն էր ուզում կոխի: Բեղերը ոլորելիս թշերն ուռեցրեց, զուռնա փչողի պես:

Առաքելը կազակների հետ դեռ գյուղը չհասած, բոլորն էլ գիտեին, որ գալիս են: Այդ երեկո շատ տներում ճրագ չվառեցին, շատերը մինչև լույս աչք էլ չփակեցին:

...էյ, պլստուն կազակ, ինչո՞ւ այդքան շատ խմեցիր Առաքելի տանը, արյունդ գլխիդ տվավ, տաքացար: Մանաս, կինդ այդ օրը երանի լվացք շաներ և լվացքը չփռեր պատին: Որովհետև դիմացի ցանկապատի արանքից Առաքելը կազակին մատով ցույց էր տալիս կնոջդ, որ լվացք էր փռում: Կազակ, մոռացա՞ր միթե, որ Գունյաշայիդ երկրում ձորակներ չկան, ինչպես Օրանջիան, ցանկապատի հետև վերջին անգամ էիր պոռչեցրդ լիզում:

Մինչև այժմ էլ գյուղում, երբ պատմում են Օրանջիայի մասին, մի ականատես միշտ ավելացնում է.

— Սարքովի էր բոլորը, Առաքելը սատանի հունար ուներ...

— Մթնում էր, դռները կապում էինք, մտնում տները: Լակում էին զազախները, ընկնում քուշեքը: Շաշկով էնքան հավի վիզ թոցրի՞ն...

— Էն տարին իմ մի երինջս տարան, որ էլ ինչ ասեմ է՞, աչքերս էլ հետը տարան...

Այդ տարուց շատ բան են պատմում, երբ խոսք է վեր գալիս Օրանջիայի մասին:

Մանասն այդ օրն անտառ է գնացած լինում: Հունձը վերջացել էր, կալի ժամանակն էր:

— Ի՞նչ էլ բերք կար էն տարին... Կտուրների վրա, պատերի տակ զեզեր էին...

Մթնել էր, մեկ էլ Օրանջիայից մի ծկլթոց եկավ, հավարի ձայն:

— Հենց էն ա, ականջս ծկլթոցին էր, մեկ էլ մի անգամ կրակեցին: Կրակոցից ձորերը դրնգացին: Օրանջիայի ձորակը վառվում էր, ալավը երկինք էր հասնում:

Ամբողջ գյուղն էր այդ գիշերը թափվում ձորակը, բայց արդեն ուզ էր: Խրճիթը, որի կտրին դեզեր կային, պատերի տակ թափված խուրձեր, խրճիթը վառվեց, նավթոտ փալասի պես: Երբ լուսո դեմ կրակը հանդարտեց, խանձված ընկած էին Մանասի կինը, երեխան, կազակը:

— Է՛, ի՞նչ շարշարանք քաշեց գյուղը, քանի՞ մարդու ծեծեցին, ինչեր չարին... Մանասին տարան, ինչ ասես չարին, վիզ շառավ: Հենց ասում էր, թե ես անմեղ եմ, ես չեմ դազախին սպանել: Ղազախներն էլ վկայել էին, որ Մանասն է սպանել: Բա, էսպես բաներ...

Երբ Մանասին վազոն դրին դեպի հեռավոր տունդրաները, իզուր էր կայարանի ժխորի մեջ աչք ածում ծանոթ մեկին:

— Գնաց, էլ թե ինչ եղավ, տեղեկություն չկա...

...Հետո քամին սերմեր բերեց, և Մանասի տան ավերակների վրա ծաղկեց մատրենին: Ամեն գարնան Օրանջիայում այնքա՛ն վարդեր են լինում, դեղին, սպիտակ:

1926

ՄՐՈՑ

Մրոցը մի ուրույն աշխարհ է, և երբ ձորի ափով անցնում եք, մի անգամ էլ բարձրանում սարը և իջնում մի ուրիշ ձոր, այնպես է թվում, թե վերջին սարը ձեզ ծանոթ աշխարհի սահմանն էր, իսկ սարից դեներ,

դեպի ներքե, ընկած է անմարդաբնակ մի երկիր, որի անտառներում արջերը վայրի տանձ են հավաքում և լուսնյակ գիշերներին հաստարուն կաղնիների մոտ գլորվում, կիսաշոր տերևների վրա արջապար խաղում:

Առաջին հանդիպած մարդն այն ձորում տարօրինակ է երևում. բայց շարունակեցեք կածանը, ձիու սանձը պինդ մի բռնեք, թողեք, որ ձին կածանը հոտոտելով ձեզ տանի Մրոց:

Եվ երբ անցնեք սրբնթաց մի գետակ, նրա ափին այգիներ տեսնեք, անպատճառ շան հաչոցի ձայն պիտի լսնեք, եթե օրը ցերեկով էլ լինի Մրոցի շներն զգաստ են, նրանց ժանիքները շատ անգամ են գայլի մաշկ քերծել:

Հաչոցի ձայնը լսում է ձին, ականջները խլշում, սմբակներն ավելի արագ են դոփում կածանի քարերին, ձին բնազդաբար պատկերացնում է ախոռը, մեջը լի գարի:

Ումից էլ հարցնեք, ոչ ոք ձեզ չի ասի, թե ինչու գյուղի անունը Մրոց է: Գուցե տերտերը մի պատմութուն անի այն մասին, թե ինչպես «անօրենների» հարձակման ժամանակ շատ դարեր առաջ իրենց պապերը փախել են մի ուրիշ երկրից և պատսպարան գտել այդ հեռու ձորում, — գուցե տերտերը այդ փախուստի մասին պատմի, բայց այդ թեական է, և ոչ մի փաստ չի կարող բերել նա, բացի բանավոր վկայութունից, վաղուց մեռած պառավների ավանդական գրույցներից:

Ստույգ է միայն այն, որ Մրոցը հնուց ի վեր իր տեղն է, և երբ դիտում եք տների հաստ պատերը, անտաշ քարերը, թվում է, թե անհիշելի ժամանակ, երբ Մրոցի լեռներն են գոյացել, լեռները զոգածե հարթութուններ են կազմել, որ գագաթների ձյունը հալչի և հոսի ձորերով, — լեռների գոյացման հետ միասին ապառաժի կտորներից ծնվել են Մրոցի բնակիչները, հարթավայրերում հաճար ցանել, ժայռի գլխին ցատկող վայրի քարայծներին ընտելացրել և սերունդների փորձով սովորել մաժունից կարագ ստանալ: Գուց այդպես եք մտածում, որովհետև Մրոցը հեռու է, մոռացված, ճամփան դժվար, ճամփի վրա կանաչ խոտ:

Հարկավոր չէ բարձրանալ ժամի կտուրը՝ տեսնելու համար, թե ինչքան ձորեր կան Մրոցից վերև: Եվ եթե ժամանակին հսկաներ են ապրել, իհարկե այդ ձորերը նրանց համար հասարակ առուներ են եղել:

Գուցե ժամանակին և ոչ մի հսկա չի եղել, լեռան առվակներն են դարերի ընթացքում բերել փեշերը, ժայռեր գլորել, մաշել իրենց փրփուր ալիքներով կարծր քարեր և փորել խոր անդունդներ, ուր կուսական անտառներ կան, անտառներում նույնքան կուսական արջեր, եթե կուսական՝ նշանակում է մարդու երես շտեսած:

Այդ ձորերում է սնտի հավատալիքների, քաջքեռի և շարքի աղբյուրը, և հիմա էլ Մրոցում շատ ուամիկ անտառի մամուսպատ քարանձավների մոտից անցնելիս՝ եղկուղած, շունչը փորն է նետում, տրեխներով զգույշ հուպ տալիս շոր տերևներին և շուկ լսելիս ծնկներում դող զգում, թեկուզ այդ շուկը տրեխի տակ ճոացող շոր ցախից լինի:

Եվ երբ ձմեռ է լինում, և ձյունի ծանրութունից անտառում շատ ծանր են շարդվում, Մրոցում քուրսու մոտ նստում են, մի ալևոր, որ հազար անգամ է շալակով ցախ բերել անտառից, սկսում է պատմել այն մասին, թե ինչպես գիշեր ժամանակ անտառով անցնելիս ականջով մի ձայն ընկավ, կարծես մի կին, մի շատ ծանոթ կին բարակ ձայնով կանչեց իրեն, ինչպես ինքն ասպանդակեց ձիուն...

Պատմում է, ոտքերը կախ տալիս թունրի վրա: Նրան ի՞նչ, թե աչքերը կիսախուփ անող թուր վախից կուչ է եկել տատի փեշի մոտ, չգիտե՞ լսի՞ պապի գլխով անցածը, թե քնի տաք քուրսու մոտ: Եվ եթե պապի պատմածին լսում է և գյուղի կոմսոմոլը (իսկ Մրոցում դեռ կոմսոմոլ քիչ կա), գիտկապ անելով սեռոտում իր գիրքը՝ «Ազատ ենք մենք, մենք ազատ ենք», — նրա մի ականջը դառնալ պապի պատմածին է, թեկուզ ժողովում լսած էլ լինի, որ անտառի քաջքը չիք է, հնարովի և սնտի:

* *
*

Մրոցն, իհարկե, գյուղխորհուրդ ունի, խորհուրդն էլ նախագահ: Բայց և ոչ մի զեկուցում չի ասի այն, ինչ կտեսնեք, եթե ապրեք Մրոցում, թերթեք նրա հնադարյան գիրքը:

Գյուղի վերևում հին քարայրեր կան, որոնց շվաքում նախիրից ետ արած հորթերն են նստում: Անտաշ քարեր կան, կարգով շարած, շրջանաձև, շրջանի մեջտեղ մի մեծ տափակ քար, որի վրա աղ են շաղ տալիս ոչխարի համար: Այն մարդիկ, որոնք այդ քարերը ժայռերից պոկել, ցցել են գյուղի վերևը, գուցե ոչխար էլ չեն ունեցել: Մրոցը դրա մասին չգիտե ոչինչ, միայն հնուց քարակույտերը հայտնի են որպես «Կուսպաշտանոց»:

Մրոցը՝ նեղլիկ փողոցներ, փողոցներով առվակներ: Նախիրը հանդից գալիս թրքոտ կճղակները վանում է փողոցների ջրերում և ամեն առավոտ-իրեկուն ջրերը պղտորվում են: ասես առուներով աղբաշոր է հոսում:

Գյուղի մեջտեղ հինավուրց ժամբ, ժամի դուռն հարյուր տարվա թրիք: Ժամի շվաքում մակաղել է ոչխարը, սար գնալուց առաջ աղը է կիտել, ապրիների ընթացքում աղբը հավաքվել է, գիզվել, և բորբիկ ոտ-

քերով շատ կանայք աղբը կոխ տալով, մոտեցել են ժամի դռան, խաչքարը պաշել:

Գյուղի մեջտեղ, ժամից քիչ հեռու Մրոցի խրճիթ-ընթերցարանն է: Մովորական մի խրճիթ, որ մարագ էլ կլիներ, ներսում քարերի վրա ձգված տախտակներ, պատերին մի քանի պլակատ:

Մարդի աչքին մի պահ տարօրինակ է թվում, որ «Կոապաշտանոցի» տները կանգուն են մնացել մինչև խրճիթ-ընթերցարանի գալը, թեև խրճիթում լրագրեր քիչ են լինում, որովհետև գյուղում գրաճանաչ քիչ կա: Հեթանոս կրակարանը, խաչակիր եկեղեցին և նոր խրճիթ-ընթերցարանն ասես հազարավոր դարերի պատմություն գիտեն՝ այն օրից, երբ ապառաժի պես մի մարդ առաջին անգամ երևաց Մրոցի ձորերում, բրդոտ արջին դուրս քշեց քարանձավից, ինքը մեջը պահվեց:

Հարցրեք այդ մասին թեև Մրոցի գիտունին, և նա զարմացած կնայի ձեզ, պատասխան տալ չի կարող, կշաղվի: Եվ պարծենկոտ կպատմի, թե ինչպես «Նիկոլ թագավորի երեք հարյուր տարվա գոյության ընթացքում» Մրոցը մի զինվոր էլ չի տվել, ծննդյան մատյանները սխալ են գրվել, որ գյուղից ոչ մի մարդ «չգնա Սիբիր, ռուսանա»: Կպատմեն ձեզ, թե ինչպես ամեն տարի զորակոչին մի քու, մի քաշալ ներկայացել են զինվորական ատյան սրա-նրա սուտ անունով, ազատել Մրոցի չորանին, կամ ինչպես մեկը ծախել է իր ամբողջ կայքը, կաշառք տվել՝ որդուն զորակոչից ազատելու համար:

Էլ ուրիշ զարմանք քանի կպատմեն Մրոցում, կզարմանաք, եթե իմանաք, որ Մրոցում շատ տներ մինչև այժմ էլ տոնում են մի ուրիշ նոր տարի, որին նավասարդ են ասում, ինչպես հեթանոս նավասարդի գիշերը զարթնում են, ճրագները վառում և լուսադեմին ճաշ անում:

* * *

Մեծ դեպք էր Մրոցի համար, երբ մի օր էլ, ձիերի վրա բարձած, մի մեքենա բերին:

Նախագահը գիրկապ անելով կարգաց ստացած գրությունն այն մասին, թե «Ուղարկում ենք մի տրիբր. առաջարկում ենք, նախագահի անմիջական պատասխանատվությամբ, հսկել մեքենային ցնոր կարգադրություն»: Եվ քանի որ թուղթը կնքված էր կնիքով, գրված էր պատշաճ ձևով նախագահը բացեց մտից մատյանը և գրեց. «Շրջանից առ այն, որ գյուղումս եկավ մի մաշին ցնոր կարգադրություն»:

Եթե Մրոցի անտաններից հանկարծ մի փիղ դուրս գար և տնկվե

ժամի առաջ, այնքան էլ չէին դարմանա: Ալևոր մարդիկ կհավատացնեին, օր փիղը մեծ արջ է, և գյուղը կհավատար:

Բայց ոչ անտառում, և ոչ էլ ձորում, ոչ մի ալևոր մեքենա չէր տեսել: Եվ երբ նախագահը մեքենայի մոտ հավաքված շտեյն բազմությունը տեսավ, որ շրջապատել էր և ձեռքը վախվխելով մոտեցնում էր մեքենային, պարտք համարեց ցրել շտեյն բազմությունը:

— Զարմացք մարդիկ եք. կասես տեսել չեք, մաշին ա էլի,— ասաց նա: Երբ հարցնող եղավ, թե ինչու համար է մեքենան, ինքն էլ չիմացավ, թե ինչպես հնարեց, որ այդ մեքենան նամակներ է տանում ուրիշ քաղաք, ազդ ու բարեկամի և «ծտի թևով» նրանցից լուր է բերում: Երբ հավատաց շտեյն բազմությունը, նախագահն ինքն էլ ճշմարիտ համարեց իր հորինածը և ուրախացավ էլ, որ Մրոցում միայն ինքն իմացավ մեքենայի ինչ լինելը: Նա մենակ չէր: Առավոտյան շրի գնալիս նախագահի կինը մյուսների առաջ պարծենալու առիթ ունեցավ:

Գիշերով մեքենան թողին նույն տեղը, գզիրը մի քանի անգամ հեռացրեց նրանց, որոնք զարմանքով շարունակում էին նայել, և մտածեց, թե ինչպես է այդ մեքենան նամակներ տանելու հեռու քաղաքներում ապրող իրենց բարեկամներին:

Տները ցրվելուց առաջ նրանք հազար ու մի ենթադրություն արին, նույնիսկ գզիրն հարցրին, բայց գզիրն ուսը թոթվեց հեռացավ:

Իհարկե, Ատլանտյանի մյուս ափին բանվորը երբ մեքենայի վրա գրել էր «Made in U.S.A.», մտքով երբեք չէր անցել, թե ծովերով և երկաթուղիներով մեքենան այդքան հեռուները պիտի ընկնի՝ Մրոց:

...Թեև կուզ մի շաբաթ էր անցել, բայց արդեն գզիրը բեզարել էր ժողովրդին մեքենայի մոտից հեռացնելուց, արգելելուց, որ ձեռք չտան: Մրոցը դեռ մեքենայի մասին էր խոսում:

Երբ ազրոնոմը վերջին սարը բարձրացավ, սարի գագաթից երևաց Մրոցը, մտածեց այն մասին, թե ինչ պիտի ասի գյուղացիներին, կտա՞ն արդյոք ցորեն կամ գարի տրիբրով մաքրելու, ինչպես պիտի զարմանան կանայք, երբ տեսնեն, որ տրիբրը ցորենն ավելի լավ է զտում, քան իրենք:

Նրա գալուստն էլ զարմացրեց Մրոցին, մանավանդ, երբ իմացան որ մեքենան աշխատելու է: Նախագահը երկմտեց, հետո հավատաց, որ «ցնոր կարգադրությունը» հենց այդ երիտասարդն էր:

Երբ գզիրը սրան-նրան հրելով ճանապարհ բաց արեց, ազրոնոմը մոտեցավ տրիբրին: Աշխատեցնելուց առաջ պտուտակը մի քանի անգամ դարձրեց և զարմացավ, երբ մեքենան մի անգամ դառնալուց հետո կանգ առավ:

Ավելի մեծ եղա՞վ նրա զարմանքը, երբ ձեռքը կոխեց մեքենայի ներսը և հանեց մի կերպ ծրարած, ծրարը խմորով փակցրած, հասցեն ճրագի վրա շորացրած նամակներ...

ՄԹՆԱՋՈՐԻ «ՉԱՐՔԸ»

Կտուրի վրա նստած մի ալևոր, որ եզան մազոտ կաշի էր քերում և պատմութուն անում քարերին նստոտած շինականներին,—երբ կանգնեց փեշերից մազը թափ տալու, աչքն ընկավ դիմացի ճամփին, ձեռքը ճակատին պահեց, որ արևի շողերը ջրակալած աչքերին շխանաբան ճամփով եկողներին ավելի լավ տեսնելու:

— Կասես է՞ն մինն էլ կնիկ ա...

Մյուսներն էլ ետ նայեցին, մի պահ մոռացան ալևորի պատմութունը:

— Ի՞նչ էլ անխիղճ մարդ են, ենիշումն (վայրէջք) էլ ձի կնստե՞ն:

— Չին իրենցը լինե՞ր, նստիլ չէին...

Ալևորը կաշին նորից սկսեց քերել ապակու կտորտանքով, և երբ եկողները պահվեցին դիմացի անտառակում, կտուրի վրա նստողներն առաջվա դիրքն ընդունեցին, ծերի պատմածը լսելու:

— Սաքան, դու կիմանաս, հըմի նրանց մեջ մի բան չի պատահե՞լ, որ էն անմարդ ձորերով, սարերով մենակ գալիս են,—գարձավ ծերը Սաքանին և ծիծաղեց:

— Դե ջահել են, առանց էդ չի...

— Հա՛, էդ ժամանակ էլ,—շարունակեց ծերունին իր պատմութունը,—ձորում շատ վախ կար: Այ տղա, դուրս եկա Մթնաձորի գլուխը, աչքիս մի շողք երևաց: Լուսնյակ էլ գիշեր էր... Հըմի ոչ շողքն ա հեռահում, ոչ էլ ես եմ կարում ետ դառնալ: Ասում եմ արջ ա, ինձ հլա չի տեսել: Մին էլ...

Բայց հենց այդ րոպեին կտուրից լսեցին ձիու ոտնաձայն, ետ նայեցին: Փողոցում կանգնել էր մի կին, տղամարդու գլխարկով: Կինը պինդ բռնել էր ձիու սանձը, իսկ ձին ոտքով դոփում էր փողոցի թրիքը:

— Բարև ձեզ,—ասաց կինը: Կտուրի վրա նստողները գլխով թեթև շարժում արին:

— Խորհրդի նախագահը տանը չի՞,—հարցրեց կինը:

Սաքանը, որ մտտեցել էր և ձիու սանձը բռնել, ասաց.

— Չէ՛, խոտատեղից դեռ չի եկել:

Կինը հարցրեց մի ուրիշի տուն: Սաքանը մատով ցույց տվավ.

— Հրեն է՞ն մեծ տանձու մոտ:

Եվ երբ կինը կոշիկների ծայրով հրմշտկեց ձիու կողերին, Սաքանը տեսավ կնոջ բարակ գուլպաների վերի մասը, մի մատ լայնքի ժապավեն՝ գուլպայի վրա, ժապավենից վերև էլ վարդագույն միսը, որ կարծես նույն ժապավենն էր, մի քիչ բաց կարմիր:

Սաքանը վերադարձավ, նստեց տեղը, կտուրի քարին: Հարցրին նրան, թե կինն ո՞ւմ էր ուզում:

— Կնանոնց ժողովի համար ա եկել,—պատասխանեց Սաքանը:

Ալևորը շարունակեց Մթնաձորի պատմութունը պատմել այնքան դանդաղ, ասես ոչ միայն դժվար էր վերհիշում հինը, այլև հնարում էր, գարդարում հազար ու մի անակնկալ և միջանկյալ դեպքերով:

— Ես վազում եմ, ինքը իմ հետևից, կանգնում եմ, նա էլ է կանգնում: Եվ ի՞նչ շարք ա, ի՞նչ հնարք ա... կուացա, որ քար վեր ունեմ...

— Սաքան, Սաքան,—ձայն տվավ մայրը կտուրից,—եկ է՛, կովը ծնում ա...

Սաքանը տեղից վեր թռավ, մահակն առավ և կտուրից կտուր անցնելով գնաց:

— Չթողաս, որ հորթին կոխ տա, հեյվանը խամ ա,—կանչեց ծերը հեռացող Սաքանի հետևից և ապա սկսեց պատմել, թե ինչ արեց «չարքը», երբ ինքը կուացավ մի քար վեր առավ:

Իրենց կտուրին երբ հասավ, գոմի երդից Սաքանի ականջովն ընկավ կովի բառաչը:

— Սաքան, մի բան չպատահի,—ասաց մայրը, որ կովի ամեն մի բառաչը լսելիս բռունցքով կրծքին էր խփում և ասում.

— Ջա՛ն, Մարալ...

— Էսօր օրը չի,—ասաց Սաքանը և գոմի դուռը բացեց: Դռան ճոռչի վրա կովը ետ նայեց, իրիկնամուտի լուսնն ընկավ դեմքին, և եթե Սաքանը կովի աչքերին նայեր, աչքերում առաջին երկունքի դժվարին ցավը կտեսներ: Բայց Սաքանը մոտեցավ, ձեռքը կովի փորին դրեց, կախ ընկած պտուկներին նայեց, կաթով լի կրծին:

— Խոտ բեր, նանի,—և մինչև մայրը խոտ կբերեր գոմի քարերին փռելու, Սաքանը թեքրը վեր քաշեց, էլի շողափեց կովի կախ ընկած փորը:

Մարալի ցավերը ավելի շատացան: Կովը հաճախ տեղը փոխում էր, ետ ու առաջ անում, գլուխն ախոռի տախտակներին դեմ տալիս, փնչոցով հոտոտում գոմի քարերը, իսկ երբ արգանդում հորթուկը ավելի էր շարժվում, Մարալը խրտնում էր ինքն իրենից, պոչով փորին խփում, կար-

ձեռն շարժվողը մեջքի վրան էր և պոչի հարվածից պիտի թռներ, հեռանար: Սաքանի փոքրիկ տղան երևաց գոմի դռան մոտ, պորտը քորելով ուզեց ներս մտնի, բայց նանիկն թևից բռնեց, տուն տարավ:

— Ճրագը բե՛ր, ո՞ւր ա էն հարսը,— հարցրեց Սաքանը: — Եսիմ: Կնանոց ժողով ա Սրանոնց տանը, մի կնիկ ա եկել քաղա-

քից: Սաքանը մտաբերեց ձիու վրա նստած կնոջը, գլխին՝ տղամարդու գլխարկ, որի տակ ծամերը հավաքել, գունդ էր արել, կնոջ գուլպան, ծայրին կարմիր երիզ:

Կովի կծկումները շատացան: Ուռած փորը հեալու պես էր լինում, Մարալը ցավից թուլացել, հազիվ էր կանգնում ոտքերի վրա:

Սաքանը չկարողացավ էլ իր դժգոհությունը հայտնել կնոջ բացակա լինելու առթիվ: Բայց մայրը հասկացավ նրան և ասաց.

— Ախր էսօր օրը չէր...

Քիչ հետո Մարալը լիզում էր չոր խոտի վրա պառկած լորձունքոտ հորթին, որ աչքերը մերթ բաց էր անում, մերթ խփում:

— Վո՛ւյ, վո՛ւյ, նանի, պոչը ծաղիկ ա,— կանչեց Սաքանի տղան, որ կովի ծնելու ժամանակ հորից և տատից աննկատ ներս էր մտել և պահ-վել գոմի անկյունում:

Սաքանը ձեռքերը լվաց, գնաց կովի համար մարագից մի քթոց դար-ման բերելու:

— Չթողաս, որ շատ լզի:

Սրանոնց տան մոտով անցնելիս Սաքանը կուցավ, թղթած պատու-հանից ներս նայեց: Գետնին նստտուել էին կանաչք, նոր եկածը խոսում էր, ձեռքերը շարժում, երբեմն էլ նայում ձեռքին բռնած գրքին: Կինն առանց ղլխարկի էր: Սաքանին թվաց, թե շորերն էլ է փոխել: Ձիու վրա նա սպիտակ շեր հագնված, թևերն էլ մինչև արմունկը բաց շեր:

Գետնին նստտած կանանց մեջ Սաքանը իր կնոջն էլ տեսավ, շալը գլխին: Այնպես խեղճ-խեղճ նստել էր:

Դռան մոտ ոտնաձայն եկավ, Սաքանն արագ ծովեց փողոցով, կո-րավ մութի մեջ: Մարագում դարմանը քթոցի մեջ լցնելիս Սաքանի աչքի առաջ սպիտակ շորերով կինն էր, գիրքը ձեռին:

Եթե դիշերով մեկը հանդիպեր Սաքանին, կնկատեր, որ քթոցը թարս է շալակել: Սրանոնց տան մոտով անցնելիս Սաքանը ուզեց մոտենա, բայց պատուհանում լույս չտեսավ, անցավ:

Կովը նստել էր խոտի վրա և որոճում էր, երբ Սաքանը դարմանով լի քթոցը դրեց գոմի անկյունում:

— Տանը դռնաղ կա,— ասաց մայրը, հորթուկին գրկեց հորթանոցը տարավ: Կովը հորթի հետևից կամաց բառաչեց:

Սաքանը շհարցրեց, թե ով է հյուրը: Չուխայի փեշերից դարմանը թափ տալով ներս մտավ տան շեմքից և հենց այն էր, որ մի անգամ էլ պիտի թափահարեր շուխան,— երբ գլուխը բարձրացրեց, տեսավ հյուրին, և ձեռքերը բարձրացրած մնացին:

— Ընկեր Ասյան էս գիշեր մեզ մոտ ա մնալու,— ասաց կինը Սաքա-նին:

Ասյան ժպտաց:

— Էն դո՞ւք էիք, որ կտուրի մոտ ճանապարհը ցույց տվիք:

— Հա՛, ես էի,— ասաց Սաքանը, մոտեցավ բարով տալու և երբ սեղմեց հյուրի ձեռքը, Սաքանին այնպես թվաց, թե նրա ձեռքը նոր ծնած հորթուկի պես փափուկ էր:

— Ի՞նչ լավ հորթուկ է,— ասաց Ասյան:

— Կարելի ա, լավն ա,— պատասխանեց Սաքանը տեղավորվելով նրանից մի քիչ հեռու:

— Էդ էլ մեր դասն ա էլի, ընկեր Ասյա, սերտում ենք,— անկյունից ձայն տվավ Սաքանի կինը, սանդուղից բաժակները հանեց և ավելացրեց.

— Գնացել ա, հորթին պաչել...

Մի պահ երեքով էլ լռեցին: Ասյան կարպետի վրա շորերով քնած փոքրիկին էր նայում, որ կրծոտել էր հացը, մորը սպասել և նստած տեղն էլ քնել: Սաքանը ունքերի տակից Ասյային էր նայում, նրա սպի-տակ բլուզին, թևերին և մատով սրբում կարպետի երեսը, թեկուզ սրբե-լու էլ բան չկար:

— Տեղավորեցի,— ասաց նանին, շեմքի մոտ հանգցնելով ձեռքին բռնած սև նավթի ճրագը: Նանին ինչ լավ արեց, որ եկավ և խախ-տեց լուծությունը:

Սաքանը թեթև հազաց, թուքը կուլ տվավ և հայացքը Ասյայի գլխի վրայով դիմացի պատին գցելով հարցրեց.

— Ասիլն էլ ամոթ ա, բա ձեր հետի ընկերն ո՞ւր ա...

— Նա ձորում բաժանվեց, մոտիկ գյուղը գնաց...— պատասխանեց Ասյան և տեղում ուղղվեց: Գետնին նստելու անսովոր էր: Սաքանի կինը նկատեց այդ, ծալքից մի բարձ հանեց, դրեց նրա մոտ:

— Թիկն տուր,— ասաց:

Երբ Ասյան ուզեց թիկն տալ, ոտքերը մի քիչ մեկնեց և ձեռքով շրջազգեստի փեշերը հավաքեց: Սաքանը աչքը կարպետի նախշերին

պցեց, շտեմանելու համար այն, ինչ ձին բռնիս էր տեսել: Միտն ընկավ
ալևորի հարցը, թե՛

— Սաքան, դու կիմանաս, հըմի նրանց մեջ մի բան չի պատահել,
որ սարերով...

Սաքանն ի՞նչ իմանար, գուցե չի՞ էլ պատահել, գուցե հարևան գյուղ
գնացող ընկերը Ասյայի եղբայրն է, կամ հորեղբոր որդին: Ասյան կար-
պետի փունջերի հետ էր խաղում մատներով, երբ Սաքանը նայեց նրան,
ասես ուզում էր ստուգի, թե ում հետ էր սարի ճամփին, գուցե պատահել
է մի բան:

— Ուրեմն մշտական շրջում ես գյուղերը, ժողով անում, քարոզ
տալիս,—հարցրեց Սաքանը: Ասյան ծիծաղեց և ծիծաղի միջից «հա»
ասեց, գլխով արավ: Թեկուզ Սաքանը նկատեց, թե ինչ մաքուր էին նրա
ատամները և թե գլխով անելիս ինչպես մի փունջ մազ ծամից պոկվեց,
ընկավ ճակատին,—տեսավ այդ, և դուր չեկավ Ասյայի ծիծաղը:

Եթե կտուրի վրա եզան կաշի քերող ալևորը այդ բուպեին Սաքանին
հարցնեք, թե պատահել է մի բան նրանց մեջ, Սաքանը ոչ միայն կասեր,
թե.

— Զահել են, առանց էդ չի...—ալև կհնարեր, կերակայեր այդ
բանի պատմությունը և կտուրի վրա նստոտած մարդկանց կպատմեր
նույն եռանդով, ինչպես ալևորը Մթնածորի մոռացված «չարքի» մասին:

Սաքանի կինը սփռոցը պցեց, շարեց հաց, պանիր, մածոն: Սաքանը
մոտեցավ սփռոցին, հացի լավ տեղերից կտրեց, Ասյայի առաջ դրեց,
ուզեց մածնի ամանն էլ դնի նրա մոտ, բայց քաշվեց, ամանը ետ տվավ:

Հաց ուտելիս Սաքանի աչքը Ասյայի փոքրիկ պատառներին էր: Զար-
մանում էր, թե ինչպես է ուտում: Ասյան լավաշի բարակ կտորները ուտ-
րում էր, կծոտում մի քանի անգամ և ծամում, հետո աննկատ կուլ տալիս:
Սաքանը լավաշը երկու կտոր էր անում, մատներով լավաշի վրա պանիր
փշրում և հացը կուլում, ինչպես խոտի խորձ:

Երբ որ Սաքանի կինը երեխան տեղավորեց և մոտեցավ սեղանին,
սկսեց ուտել, Սաքանին այնպես թվաց, թե իր կինը որոճում է պառավ
կովի պես, հացը շաղախում թքի հետ և կուլ տալիս էլ վիզը մի քիչ
երկարում:

Սփռոցը հավաքելուց հետո, մինչև Սաքանի կինը տեղաշար բաց
կաներ, մայրն Ասյային հարցուփորձ արեց: Երբ նա հարցրեց, թե երե-
խա ունի՞ թե ոչ, Ասյան ծիծաղելով պատասխանեց.

— Նանի, ես պսակված էլ չեմ:

Նանին միայն մտքում ասաց «ոնց թե», և զարմացավ, որ հասակ
առած աղջիկը անպսակ է դեռ, երեխա չունի:

— Ես կուսակցություն մարդ եմ, նանի, ես իմ տերը չեմ,—ասաց
Ասյան, կարծես հասկացավ, որ նանին իր մտքում տարակուսեց, գուցե
և կասկածեց նրա վարքի մասին: Բայց նանին նրա խոսքի իմաստը չը-
հասկացավ, թեկուզ հարսը շտապեց ասելու, թե ինչ է կուսակցությունը:

Երբ որ Սաքանի կինը քաշվելով, գլուխը մի քիչ կախ, սկեսուրին
բացատրում էր և աչքի տակով նայում Ասյային, ասես ուզում էր հարցնի,
թե ճիշտ է սերտել դասը,—Ասյան ներքին հրճվանքով էր նայում նրան:
Սկեսուրն էլ էր հարսին նայում. նա և՛ ուրախ էր, որ հարսը կուսակցու-
թյան մարդ չի, և՛ կասկածոտ, թե չլինի վերջը ժողովներում շատ բան
սովորի ու միտքը փոխի:

Սաքանը քուրսու վրա գցած կարպետի ծոպերի հետ էր խաղում,
ականջը կնոջ պատմածին: Եվ երբ կինը ասելիքը վերջացրեց, Սաքանը
տեղից վեր կացավ, գոմի ճրագի տեղը հարցրեց և ուսը թորելով գնաց
գոմ:

Խոտի վրա աղվամազոտ հորթուկն էր պառկել, լեզվով պոռնգներն
էր լիզում: Կովը մերթ խոտ էր ուտում, մերթ գլուխը դարձնում հորթի
կողմը, մնչում: Սաքանը ախոտի մեջ խոտ լցրեց, մի քիչ էլ կանգնեց կո-
վի մոտ, ճրագը ձեռքին:

Երբ տուն եկավ, Ասյան արդեն պառկել էր: Անկողնու մոտ նրա շա-
րերն էր, միջին սպիտակ շրջազգեստը, որ Սաքանի աչքին ձյունի կիտու-
կի պես երևաց: Երբ անցավ նա անկողնի մոտով դեպի սենյակի մյուս
անկյունը, ուր իր տեղաշարն էր և երեխայի օրորոցը, թթով դուրեկան մի
հոտ ընկավ, կասես մեկը քաղել էր սարի ծաղիկները, սեղմել, հյութը
հանել և ջրի պես շաղ տվել քուրսուն, հատակին, ծխից սևացած օճորքին:
Բայց երբ նստեց իր տեղաշարի վրա, տրեխները հանեց, թթովն ընկավ
գոմի կծածհոտը, տրեխներին կպած աղբի, հարդի կծած կտորների հոտը:
Այդ անկյունում չվացած վերմակի, հազար անգամ քրտինք ծծած շապկի,
արևի տակ խանձված շուխի, անլվա մարմնի հոտը կար:

Սաքանը մոռը պատվիրեց, որ մանգաղը հազիր անի՝ առավոտ կա-
նուխ կովի համար կանաչ խոտ բերելու: Շուրջվեց հաստ վերմակի տակ,
բունը կամաց իջավ բեզարած մարմնի վրա: Նրան թվաց, թե օրորվում
է ջրի երեսին, վեր ու վար լինում, ջրի երեսին օրորվում է և մի սպիտակ
շոր:

Երբ կինը բարձրացրեց վերմակի մի տուտը և մեկնվեց Սաքանի
կողքին, Սաքանն աչքերը կիսաբաց արեց, տեսավ, որ ճրագն արդեն հան-

գել է: Նա կամացուկ հարցրեց կնոջը, թե ինչու գլխատակին բարձի տեղ կարպետն է:

— Մեր բարձը նրան եմ տվել, — ասաց կինը և ավելի մոտեցավ նրան: Սաքանի քթովն ընկավ կնոջ բերանից մի ծանր հոտ, թվաց, թե նրա ատամները ժանգոտել ու փտել էին: Դարձավ մյուս կողքին, երեսը դեպի պատը և ինքն էլ զարմացավ, թե ինչպես մինչ այդ չի զգացել կնոջ բերանի հոտը:

* * *

Լուսաբացի շողը երդիկից ներս էր ընկել, կարպետի վրա կաթնագույն շրջան գծել, երբ Սաքանը զարթնեց, տրեխները հագավ:

Ասյայի մոտով անցնելիս նա տեսավ սպիտակ շորը, վիզը, ուսի մի մասը, ուսի վրա սպիտակ շորի բարակ մի կտոր: Արագ մոտեցավ դռանը, մանգաղն առավ, դուրս եկավ:

Տան առաջ, առվի մոտ երեսը լվաց, սրբեց շուխի ծայրով, իջավ ձորը, այգում խոտ քաղելու: Ճանապարհին Սաքանը մի միտք էր անում՝ մե՞րկ էր քնել Ասյան, թե շապիկ կար հագին. եթե շապիկ կար, ինչո՞ւ ուր բաց էր, գուցե կողքի սպիտակ շորը նրա շապիկն էր:

Կովը շուտ-շուտ գոմի դռանն էր նայում, հորթուկին լիզում, վիզը ախոռի փայտերին քսում, քերում: Տանն արդեն զարթնել էին, տեղաշորը հավաքել, կինը օջախն էր վառել. թեյի պատրաստություն էր տեսնում, երբ Սաքանը թարմ խոտի խուրձ շալակին եկավ տուն:

Խոտի խուրձը կովի առաջ շաղ տալիս Ասյան էլ էր կանգնած Սաքանի կողքին: Նա ծիծաղում էր, երբ հորթուկը դուռնը մեկնում էր կանաչ խոտին, հոտոտում և ոտքերը երեքալուծ փախչում, գլուխը թաղում մոր կուրծի մեջ:

Ասյան խոտից մի քանի ծաղիկ ջոկեց, մոտեցրեց հորթին, կովն զգաց այդ, պռը շարժեց, գլուխն արագ շարժումներով ծոց: Եթե ախոռից կապած շիներ, գուցե և զարկեր գլխով: Ասյան ետ կացավ, ծաղիկները ձեռքից ընկան:

Թեյը տաքացնելուց հետո Սաքանի կինը ջուր բերեց Ասյային՝ երեսը լվալու: Թեկուզ Ասյան հակառակեց, ամանը վերցրեց, որ ինքը ջուր լցնի ձեռքին, բայց կինը մերժեց:

Սաքանը կանգնել էր գոմի դռան: Նա տեսավ, թե ինչպես է լվացվում Ասյան: Մի քանի անգամ բերանը ջուր առավ, թշերն ուռցրեց, մատով

քսեց ատամներին, ողողեց, ջուրը թափեց: Սաքանի միտն ընկավ, թե ինչքան վատ հոտում էր կնոջ բերանը:

— Դե ամեն ինչ սովորի յա, մորուց ի՞նչ ա տեսել...

Առավոտ թեյին Ասյան էլի քիչ կերավ: Մայրը մի կողմից էր ստիպում, կինը մյուս կողմից:

— Կեր, ճանապարհ ես գնալու, կսովես:

Ասյան, ծիծաղելով թե՛

— Իմ կերածը ինձ երեք օր հերիք է:

Նանին զարմացավ և մտքում որոշեց, որ Ասյան վատառող է, ներսը փուչ է, երևի մի հիվանդություն ունի, որ շատ չի ուտում:

Հետո Սաքանը գնաց հարևանի գոմից Ասյայի ձին բերեց: Կտուրի վրա հավաքվել էին մի քանի կանայք: Ասյան ինչ-որ բան էր ասում նրանց: Սաքանը ձիու թամբն էր սարքում. նրա ափանջին հասավ այն, որ Ասյան խոսք տվավ նորից գյուղ գալու:

Ձին թամբած էր արդեն, երբ կանայք կտուրից իջան: Ասյան ձեռք տվավ նանուն, կոացավ երեխայի թուշը պաշեց, մոտեցավ, որ ձին նստի: Սաքանը սանձն էր բռնել: Ասյան ձեռքը ձգեց թամբին, փորձեց բարձրանա և հենց քիչ էր մնացել, որ ոտքը դուրս պրծնի ասպանդակից, երբ Սաքանը պահեց նրա ոտքը, օգնեց բարձրանա:

Ասյան ցտեսություն ասեց Սաքանին, ձեռք տվավ և իջավ ճանապարհով: Կանայք ուղեկցեցին նրան մինչև գյուղից դուրս գալը, ձին պահեցին, մի քիչ էլ խոսեցին, հարևան գյուղի ճանապարհը ցույց տվին և բաժանվեցին: Կանայք ցրվեցին գյուղի փողոցներով: Ասյան ձիու սանձը պինդ սեղմած, կոշիկի կրունկով զարկեց ձիու կողքին, ձին քայլերն արագացրեց:

Սաքանը մի պահ մնաց տեղում կանգնած, հետո մոտեցավ գոմի դռանը, բայց հիշեց, որ գնալիք տեղը այգին է, ետ դարձավ, իջավ ձորը: Երբ որ նա Ասյային օգնեց ձին նստելու և ոտքը պահեց, նրան այնպես թվաց, թե մատները խրվեցին մի փափուկ բանի մեջ: Երբ կոացավ, ոտքն ասպանդակի մեջ դնելու, Ասյայի զգեստի տուտը բարձրացավ, և Սաքանի աչքին ընկավ նրա սպիտակ շորը:

Ամբողջ օրը այգում ջուր արեց Սաքանը:

Ջուրը կապած էր ծառերի տակ և մինչև ջուրը տեղ կհասներ, Սաքանը մեջքի վրա պառկում էր, աչքերը կիսախուփ անում:

Մտաբեր ճղներն իրար էին տալիս, տերևները քսվում էին իրար: Երբ ճղները մի քիչ հեռանում էին իրարից, և ճղների արանքից Սաքանի աչ-

քին էր ընկնում երկնքի կապույտը, Սաքանին թվում էր, թե ամպը սպիտակ շոր է, որ գիշերով իրենց տանն էր, անկողնի մոտ:

Մութն էր արդեն, երբ վերադարձավ տուն: Բահը մի կողմ գցեց, գնաց կովին նայելու: Վերադարձավ տուն, թոնթորաց կնոջ վրա, թե կովին ծարավ է թողել: Կինն ուզեց ասի, թե ինքը բոստանն է քաղհան արել, տանը չի եղել, բայց տապ արավ, սփռոցը գցեց, շարեց հաց, պանիր, մածոն:

Սաքանը կերավ կուշտ, ուտելիս չժպտաց, գլուխը քաշ պահեց և վերջին պատառը կուլ տալիս բեղի տակ փնթփնթաց:

— Տեղս գցի. էն սրաքարը դիր դոան մոտ, որ առավոտը տանեմ:

Ասեց և գոտին արձակեց:

Երբ գլուխը դրեց բարձին, Սաքանը նորից զգաց այն հոտը, որ Ասյայի շորերից էր գալիս: Երեկ այդ բարձը նրա գլխատակին էր:

Սաքանը գլուխը թաղեց բարձի մեջ, լայնացած ունգերով և խոր սկսեց շնչել: Նրա աչքի առաջ օրորվում էին ուսը, մի սպիտակ շոր, փափուկ ոտքերը:

Կինը ճրագը հանգցրեց և կամացուկ շուշալվեց վերմակի տակ: Սաքանն զգաց, որ մեջքը տաքանում է, երեսը դարձրեց կնոջ կողմը: Վերմակի տակ դուրեկան հոտ կար, և երբ Սաքանը գրկեց իր կնոջը, նրան այնպես թվաց, թե իր կնոջ ուն էլ բաց է, հագին ձյունի պես սպիտակ շապիկ ունի: Կինը չհասկացավ, թե ինչու այդ գիշեր Սաքանը այդքան մոլեգին էր: Եվ իր մտքում նա ներեց նրա երեկվա արածը, երբ երեսը շրջեց պատի կողմը:

Կինը մշտաբար քնել էր, խրճիթի մի անկյունում նանին էր քնել: Գիշերվա լուսթյան մեջ գոմի պատի արանքից Սաքանը լսում էր, թե ինչպես է կովը գոմում որոճում:

Միտն ընկավ, թե ինչպես կովն ուզեց հարու տա Ասյային, երբ նա ծաղիկն էր մոտեցնում հորթի դնչին: Սաքանը հիշեց և առաջին օրը, ինչպես էին նստել կտուրի վրա: Երբ պատմություն էր անում, թե ինչպես լուսնյակ մի գիշեր Մթնածորում «չարք» երևաց, ինչպես շարքը հետևում էր նրան:

— Ես վաղում եմ, ինքն իմ հետևից, կանգնում եմ, ինքն էլ աս կանգնում:

Հենց այդ խոսքին էր, որ երևաց ընկեր Ասյան:

Մինչև ես գիշեր Սաքանը կես քուն կես արթուն էր: Լուսնյակը շողք էր գցել երդիկից, շողքը խաղում էր կարպետի վրա: Լուսադեմին քնեց:

Երազում Սաքանի աչքին երևաց Մթնածորը. սպիտակ շոր հագած մի կին ձորով վազում էր իր հետևից, մոտենում էր, որ բռնի, կանգնում էր կինը, ծիծաղելով ետ փախչում ձորն ի վեր:

ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿԸ

Գարնանային առավոտը խոստանում էր պայծառ և արևոտ օր: Կուշտ կերած մեր ձիերը արագ քայլերով բարձրանում էին քարոտ արահետը և ամեն քայլափոխին փնջում: Քրտինքից խոնավացել էր ձիերի մուգ-կապույտ վիզը:

Արահետն օձապտույտ ոլորվում էր: Ինչքան հեռանում էինք գյուղից, այնքան ավելի խտանում էր անտառը, հանդիպում էինք հաստաբուն ծառերի, որոնց ճյուղերն իրար էին խառնվել և կախվել արահետի վրա: Հաճախ էինք կանանում թամբից, գրկում ձիու վիզը, որպեսզի կախ ընկած ճյուղերը չքերծեին մեր դեմքը և փշերը չծակեկեին:

Լուռ էինք: Ես մտրակի ծայրով զարկում էի ծառերի տերևներին, պոկում տերևները կամ թափահարում ծառի կախ ընկած ճյուղերը, և գիշերվա ցողը անձրևի նման թափվում էր ձիու վրա, ինձ վրա:

Ընկերս կամաց սուչում էր մի երգ և ձիու քայլերի համեմատ թամբի վրա օրորվում:

— Այս կածանով տասներկու տարի առաջ քնացի Ձորագյուղ, — ասաց ընկերս: Թվում էր, թե ինքն իրեն էր խոսում:

Նայեցի նրան: Ժպտում էր. կարծես միտն էր ընկել մի երջանիկ դեպք, որին ականատես են եղել արահետը և հին անտառը:

Ես հարցրի, թե ո՞ր քամին էր նրան շարտել հեռու ձորերում ընկած այն գյուղը:

— Հենց այդ օրը բանտից նոր էի դուրս եկել: Տասնյոթ-տասնութ տարեկան երիտասարդ էի: Այնքան եռանդ ունեի աշխատելու և այնպիսի կորով... Եթե մնացած լինե՞ր այդ երիտասարդությունը:

Արահետը վերջացավ և անտառի խորքում խառնվեց ավելի լայն ու փափուկ ճանապարհի, որ գալիս էր գետերի հովիտներից: Ձիերը կանգ առան, խոր շնչեցին և ապա շարունակեցին քայլերը:

— Գիտես, երբեմն մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխվում, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում ես նույնքան պայծառ, ասես երեկ ես տեսել: Մարդ մոռանում է անունը, տեղն ու տարին, թե երբ է տեսել այդ գլուխը, աչքերը. մոռանում է մանրամասնությունները,

սակայն մնում են միայն գլուխը, աչքերը. կարծես մինչև մահ գերեզման անջնջելի պիտի մնա այդ առաջին տպավորութիւնը:

Նա ինձ շնորհեց, որ հարցնեի այդ դեպքի և նրա անջնջելի տպավորութեան մասին, որ այդ րոպեին լույս էր տալիս նրա հիշողութեան մեջ, ինչպես արևի ոսկե շողը՝ ծառերի մթնում:

— Շատ պարզ հիշում եմ այն օրերը, երբ որոշեցի Չորագլուղ գնալ: Հարկավոր էր քաղաքից հեռանալ, միառժամանակ չերևալ այնտեղ: Եվ սիրով ընդունեցի բարեկամիս առաջարկը՝ ուսուցիչ լինել այդ հեռու գյուղում: Երկու միտք ինձ ոգևորում էր: Նախ՝ որ ոչ մի աչք ինձ չի հետևի, հետքերս չի փնտրի, և երկրորդ՝ գյուղում պիտի աշխատեի:

Երբ որ դպրոցների տեսուչն ինձ պատմեց Չորագլուղի մասին, թե տեղն անառիկ է, օդը լավ, կողքին մթին անտառներ կան, որտեղ առատ է որսը, ես իսկույն համաձայնեցի: Կարծեմ նույն օրն էլ ճանապարհ ընկա:

...Ձմռան սկիզբն էր, ձյունը նոր էր եկել: Գիշերը հասանք հենց այս արահետին և բաժանվեցինք անտառի գլխավոր ճանապարհից: Լուսնյակի տակ ձյունը շափաղ էր տալիս, ասես սպիտակ մարմար էր, որի մեջ արտացոլում էին ծառերի սև բները: Չորագլուղի ձիապանը արահետի գլխից մատը մեկնեց ներքևի ձորը:

— Հրեն է՛, մեր գյուղը:

Ձյունի սպիտակութեան վրա վերևից ես նշմարեցի փոքրիկ սև կետեր: Գյուղի տներն էին, խոտերի և աթարի դեզերը: Մի տան պատուհանից ճրագի սպիտակ լույս էր երևում, կարծես այդ մթին ստվերների մեջ մոլորվել էր մի մանրիկ աստղ: Մի քիչ իջանք լանջով, և լսելի եղավ շան զրնգան հաչոցը, որ անտառում արձագանք էր տալիս, ինչպես կացնի զարկերը:

— Էն մեր Բողարի ձայնն է, — ասաց ձիապանը: Ձին էլ կարծես հասկացավ, որ գյուղը մոտ է, որ Բողարն է հաչում, և քայլերն արագացրեց: Իսկ ինձ թվում էր, թե գնում եմ շատ հեռու երկիր, որի մասին հեքիաթի պես պատմում էր աշխարհագրութեան դասատուն: Մանուկները հաճախ ցնորում են հեռավոր երկրների մասին, ուր կարմրամորթ մարդիկ են ապրում, ծառերի վրա՝ գույնզգույն փետուրներով թռչուններ: Եվ երբ նրանք տնից հեռանում են, նրանց թվում է, թե շատ մոտ է ցնորքի այդ աշխարհը:

Ես էլ այդպես էի մտածում, թեև արդեն պատանի էի: Երևի անտառն էր այդպես տրամադրում, ձմեռային գիշերվա վեհությունը, քարածայրերի անձև կերպարանքը և այն անորոշ ձայները, որ գալիս էին ձորի-

րից ու անտառից: Գուցե և հոգնածութիւնն էր մշուշել իմ գիտակցութիւնը: Չեմ հիշում, միայն գիտեմ, որ առաջին անգամ Չորագլուղ գալը դարձավ իմ կյանքի լավ գիշերներից մեկը:

Ձիապանն ինձ տարավ իրենց տունը: Ինչպե՛ս անուշ մրափեցի թոնրի մոտ, քորսու վրա: Բավական ուշ աչքս կիսաբաց արի ու նայեցի երդիկին: Ձմռան գիշերից մի քիչ դեռ կար: Ծս նորից փաթաթվեցի վերմակի մեջ, ոտքերս կախեցի տաք մոխրի վրա, և քնի ու երագի սահմանում օրորվեց գիշերվա անիրական աշխարհը:

Ամաչեցի, երբ աչքերս բաց արի: Վաղուց զարթնել էին մյուսները և սպասում էին ինձ, որպեսզի թոնիրը վառեն:

Դուրս եկա. բակից տեսա գյուղը, գիշերվա մեր ճանապարհը: Հավաքնի մոտ Բողարը հաչեց ինձ վրա: Նրա հաչոցն այլևս ահավոր արձագանք չունեց և ոչ էլ կախված ժայռերն էին տձև: Ձյունի վրա, կտուրների կարասների վրա շողում էր ձմեռվա նարնջագույն արևը. երդիկներից ծուխ էր բարձրանում:

Ինձ նույն օրն էլ տեղավորեցին մի տան մեջ, որտեղ և պիտի ապրեի: Տան տերը՝ Օհան ապերը նահապետական բարքով մարդ էր: Հիմա մեր գյուղերում նրա նման մարդիկ այլևս չկան: Ձմեռը նստում էր բուխարու մոտ, շոր փայտը դարսում կողքին: Փայտերը մեկ-մեկ գցում էր կրակի մեջ և պատմութիւններ անում շահի ժամանակից, անցած, գնացած օրերից, որսից և անտառից: Իսկ եթե ոչ ոք չէր լսում նրան, մենակութիւնից թե ձանձրութից, բուխարու առաջ բաց էր անում շարականի գիրքը:

Տանը չորս հոգի էինք: Ծս, Օհանը ապերը, նրա պառավ կինը և տասը տարեկան Աշոտը, որ հավատարիմ ընկերս էր, երբ գնում էինք դպրոց, որովհետև շները դեռ ինձ վարժ չէին, հաչում էին կտուրներից և հետևի ոտքերով ձյուն մաղում ինձ վրա:

Դպրոցը գյուղի ծայրին էր, բլրակի վրա: Հին գերեզմանատունը դպրոցի բակն էր: Մի ընդարձակ սենյակ էր, փայտե հասարակ նստարանների երկու շարք, դիմացի պատից՝ գրատախտակը: Անսվաղ պատերին ուրիշ ոչ մի զարդ չկար: Պատուհաններին ապակու տեղ խմորով փակեցրել էին յուղած թուղթ:

Միակ ժամացույցն ինձ մոտ էր: Մի օր էլ բլրակը բարձրանալիս, ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա, գրպանիս մեջ ժամացույցը փշրվեց և մինչև տարվա վերջը մնացի առանց ժամացույցի: Արև օրերին ստվերով էինք ժամ որոշում, թխպած ժամանակ՝ երբ հոգնեինք:

Երկու շաբաթ հետո քառասունի չափ իմ աշակերտներին անունով էի

կանչում, շատերի տունը գիտեի, ոմանց ծնողներին ճանաչում էի: Ժիր երեխաներ էին, բոց աչքերով, և այնքան արագ ընտելացանք իրար:

Օրապահի գանգին ես իջնում էի տան սանդուղքով, բլրակի գլխին չհասած տեսնում էի դպրոցի առաջ խմբաված երեխաներին: Խմբով էլ ներս էինք մտնում:

Դասերից հետո ես համարյա միշտ տանն էի: Օհան ապերը գնում էր գոմք՝ տավարին ապուռ տալու: Աշոտը մարազից քթոցով դարման էր կրում, պառավը վառում էր օջախը կամ լվանում ընթրիքի ձավարը: Օհան ապոր շոր ցախերը դարսում էի բուխարիկում, պառկում կրակի առաջ և նայում, թե ինչպես են մոխրանում փայտի կտորները, ինչպես կրակի լեզվակները կայծերը թոցնում էին երդիկով:

Մութն ընկնելուց գալիս էին Աշոտն ու Օհան ապերը, տրեխները հանում և նստում կրակի մոտ: Եվ մինչև պառավը ձավարի ճաշը եփեր, Օհան ապերը սկսում էր մի հին պատմություն, որի վերջը լսելու համար ես և Աշոտը երբեմն խանգարում էինք նրա քունը:

— Հա, ո՞րտեղ մնացի, — արթնանում էր և, մինչև մենք հիշեցնեինք, գանգատվում էր.

— Պառավել եմ, քունս շուտ է տանում: — Եվ շարունակում էր կիսապատմությունը:



Ես ուշադիր լսում էի ընկերոջս, և թեպետ ծառերը դարձյալ ճյուղերը կախել էին ճանապարհի վրա, բայց այլևս մտրակով չէի պոկում նրանց տերևները: Արեք բավական բարձրացել էր, ցողի կաթիլները գոլորշիացել էին:

— Ձորագլուղում մի որսորդ կա, վիզը ծուռ Անտոն են ասում: Հիմա էլ մնում է, թեպետ բավական ծեփ է: Նրա աչքերը լավ չեն տեսնում, դրա համար էլ որսի չի գնում:

Նրա մասին Օհան ապերը շատ էր պատմում: Անտոնը մի անգամ անտառում արջի հետ է կոխ կացել, արջը շարդել է նրա հրացանը, կոսցել է, որ գերանը վերցնի Անտոնին խփելու, բայց նա սպանել է արջին: Օհան ամին պատմում էր, թե ինչպես է նա բնում աղվեսին բռնել:

— Իրեն որ տեսնես կզարմանաս: Կղար, բոյը կարճ, վիզն էլ ծուռ Կասես, որ բամփես գլխին, տափին կփակչի, — ասում էր Օհան ապերը նրա մասին:

Ես մտքումս դրել էի նրա հետ որսի գնալ, թեև մինչև այդ որս քիչ էի արել: Պառավը խոստացավ խնդրել հարևանի կայծքարով հրացանը: Հենց հաշորդ կիցակի, առավոտ կանուխ, երբ երդիկներից դեռ նոր էր բարձրանում ծուխը, ես և Անտոնը բռնեցինք անտառի ճանապարհը: Այդ օրը ես շորս անգամ կրակեցի: Կրակոցից ծառի ճյուղերից ձյուն թափվեց, բայց իմ վառողը շխանձեց ոչ մի աղվեսի մորթի:

Անտոնը սիրտ էր տալիս, թե առաջին անգամ այդ էլ շատ է: Բայց ես տեսնում էի նրա ծաղկատար դեմքի խորամանկ ժպիտը: Ինքը մի ծեր աղվես սպանեց և երկու մոշահավ: Մեր աղվեսն այնքան շարժարեց մեզ:

Անտոնը կրակեց, մուխի մեջ ես տեսա, թե ինչպես աղվեսը գլորվեց: Վրա վազեցինք, աղվեսն ատամները կրճտացրեց, պոչը կոխեց ետևի ոտքերի արանքը և փախավ: Ձյունի վրա մնացին նրա հետքերը և արյան շիթեր: Մի քանի տեղ ուծասպառ ընկել էր, արյունն ավելի շատ էր հոսել, և ձյունի վրա թափվել էին մորթու մազերը:

Աղվեսին փնտրելու ժամանակ Անտոնը մի մոշահավ էլ սպանեց: Միասին վազեցինք դեպի այն կողմը և փոսի մեջ տեսանք ծեր աղվեսին, որ կծկվել, կուշ էր եկել ու դունչը մոտեցրել էր վերքին: Նրա կախ ընկած լեզուն արնոտ էր: Երևում էր, որ լիզել էր վերքի արյունը: Անտոնն աղվեսին ուսովը գցեց, ես մոշահավերը վերցրի, և մենք վերադարձանք:

Գլուղին չհասած, անտառի քացուտում, շոր ճյուղերի կտորատելու ձայն լսեցի: Ինձ թվաց, թե պախրան եղջյուրներով ծառի ճյուղերը դեն է հրում, որպեսզի շոր տերևներ հանի ձյունի տակից: Ետ նայեցի:

Ութ-տասը տարեկան մի տղա ցախ էր դարսում ձյունի վրա մեկնած պարանին: Մի քիչ հեռու կանգնել էր մի աղջիկ՝ պարանի շափ բարակ ճյուղը ձեռքին: Նրանք մեզ ավելի վաղ էին տեսել և կանգնած նայում էին:

Ահա այդ դեմքն է, որ մեխվել է հիշողությանս մեջ, թեև այն օրից անցել է տասներկու տարի և այն էլ ի՞նչ տարիներ:

Ընկերս լռեց. ես նրա դեմքին տեսա երանության նույն ժպիտը, ինչպես առաջին անգամ, երբ մենք դեռ բարձրանում էինք արահետով: Անես աչքի առաջ, ձյունոտ անտառում տեսնում էր աղջկան, ձեռքին շոր ցախը:

— Տեսա ու կանգնեցի, — դանդաղ շարունակեց նա, — և թեպետ Անտոնն ասաց, թե ում աղջիկն է, ասաց, որ ցախի են եկել, բայց ես նրան չէի լսում: Հիշում եմ, որ մի անգամ էլ երբ բացուտն անցանք և փչնում էինք գլուղի կալերի վրա, ետ նայեցի: Չգիտեմ աղջիկը ժպտաց թե չէ,

բայց ինձ այդպես թվաց: Գլուխը խոնարհեց ու փշրեց ձեռքի բարակ ճյուղը:

Մեր տան պատշգամբից ես տեսա աղջկանը՝ ցախը շալակին: Մեր հետքերով նրանք իջան կալերի վրա: Մոխրազույն շորեր ունեն, գլխին՝ տանը գործած բրդե շալ: Ես պատշգամբից նայում էի այն կողմը, իսկ Օհան ապերը ինձ հարցնում էր մոշահավի մասին, Աշոտը նրանց փետուրներն էր պոկում, ես կցկտուր պատասխան էի տալիս և աչքի տակով հետևում, թե ո՞ր տունը պիտի մտնի ցախով աղջիկը:

Որքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ մյուս օրն իմացա, որ նրա փոքր քույրը սովորում է դպրոցում:

Հենց այդ օրից էլ գլխին կարմիր շոր կապած աղջիկը, որ մինչ այդ իմ քառասուն աշակերտներից մեկն էր, բոլորից շոկվեց և իմ աչքում դարձավ այն կետը, որի շուրջը պտտվում էր իմ ներքին աշխարհը:

Ուզում էի իմանալ աղջկա անունը: Ես հորինեցի մի դաս, երբ աշակերտները պատմում էին իրենց ընտանիքի անդամների մասին: Եվ որովհետև նրանք երկու քույր էին, դժվար չէր իմանալ, որ անտառում տեսած աղջկա անունը խոնարհ էր: Մյուս աշակերտներն էլ մատ բարձրացրին իրենց տան մասին պատմելու և դարմացան, երբ ես գրատախտակի վրա գրեցի գումարման նոր վարժություն:

Խոնարհ, Խոնարհ... Նայում էի գրատախտակի թվերին, աչքերիս առաջ բրդե շալով աղջկա գլուխը, ոտքերը ձյունի մեջ և ձյունի ճերմակության վրա օձի պես սև պարանը:

Այդ դեմքը մերթ սուզվում էր անդունդը, որը սովորական էր դառնում, հիշում էի, որ անտառում մի ծեր աղվես ենք սպանել, երկու մոշահավ: Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի իմանալու՝ ծպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե միայն ինձ թվաց:

Անտոնի հետ մի անգամ էլ որսի գնացի: Բացուտին երբ հասանք, ես մոտեցա այն գերանին, որի մոտ կանգնել էր աղջիկը: Որսորդն իմ հետևից կանչեց, թե ճանապարհն աչ է ծովում: Գերանի մոտ ձյունը ծածկել էր աղջկա հետքերը: Ոչինչ չէր երևում: Միայն ծառի տակ ընկած էր մի շոր շյուղ: Կոացա վերցրի:

Վերադարձին եկանք գյուղի ծուռունուտ փողոցներով, որպեսզի անցնենք նրանց տան առաջով: Այդ թաղի շները հաշոցով ինձ վրա վազեցին: Բայց և այնպես կիսաբաց դռնից նրան տեսա բակում՝ գրկին մի խուրձ խոտ: Ինձ տեսավ՝ դեմքն իսկույն մյուս կողմը դարձրեց, տուն մտավ: Ես նկատեցի, թե ինչպես կարմրեց նրա դեմքը:

Այդ օրն այնքան ուրախ էի: Օհան ապերն էլ նկատեց իմ ուրախությունը և ծիծաղելով ասաց, թե վիզը ծուռ Անտոնի հետ անտառում երևի մի օյին ենք սարքել: Ընթրիքից հետո բուխարու մոտ երբ նա ննջեց, ես արագ թերթեցի նրա շարականի գիրքը, բրդե թելը ուրիշ թերթի արանքում դրի, որպեսզի առավոտյան Օհան ապերը զարմանա, թե ե՞րբ կիսեց շարականի հաստ գիրքը, կարդա ու կասկածով նայի մեկ ինձ, մեկ՝ Աշոտին:

Ձմեռվա ընթացքում խոնարհին երկու անգամ տեսա: Մի ամիս հիվանդ էր և առողջացավ բարեկենդանի տոներից առաջ: Ես շատ անգամ էի նրա մասին հարցնում նրա քրոջից: Եվ ամեն անգամ տարբեր պատրվակով, հեռվից հեռու, շատ անգամ իբրև թե պատահաբար, մեջ բերելով ուրիշ խոսք:

Դժվար էր միշտ պատրվակ գտնելը: Հիշում եմ, երեք օր տեղեկություն չունեի, քաշվում էի հարցնել: Հանկարծ փոքրիկ աղջիկը գնար և տանն ասեք... Չորրորդ օրը սովորականից շուտ եկա դպրոց: Քույրը դեռ չէր եկել: Կանգնել էի մուտքի դռան մոտ: Աշակերտները վառարանի կողքին տաքանում էին: Աչքս բլրակին էր: Հանկարծ երևաց քույրը, ինձ տեսավ և կարծեց, թե հանդիմանելու եմ ուշանալու համար: Աղջիկը քայլերն արագացրեց և ինձ երբ հասավ՝ շնչակտուր ասաց.

— Խոնարհն արդեն վեր է կացել...

Հետո ես իմացա, որ նա դեռ չորս օր պառկել է: Աղջիկը սուտ էր ասել:

Բարեկենդանի մի օր խոնարհին տեսա: Մեր դիմացի կտրան աղջիկները խաղում էին, իրար ձյունով տալիս և երգեր ասում: Շատերի ձեռքին խնձոր կար: Նրանք նոր շորերով էին՝ կարմիր, կապույտ, կանաչ: Նրանց մեջ էր խոնարհը. նրա հագին երկար զուլերով կարմիր շիթ էր: Ձեռքերը պահել էր գոգնոցի տակ, կանգնել կտուրի ծայրին և նայում, էր ավելի փոքրահասակ աղջիկներին, որոնք զվարթ ծիծաղով իրար հըրմըշտկում էին և վազվզում կտուրների վրա:

Պատշգամբից ես նրան գունատ տեսա և մի քիչ նիհար: Նոր շորերի մեջ նա երևաց ավելի բարձրահասակ, մեջքը բարակ, Կապույտ գոգնոցի թելերը մեջքին հանգույց էր արել: Պատահամար նայեց պատշգամբի կողմը, տեսավ ինձ, հեռացավ կտուրից և խառնվեց աղջիկների խմբին:

Նորից տեսա խոնարհի սպիտակ դեմքը, նրա մանրիկ աչքերը: Կարմիր շորերով այդ աղջիկը ինձ թվաց որպես մի բարձրահասակ երեխա՝ գլխին նույն բրդե շալը, ինչ որ առաջ: Տուն մտա, նրան չխանգարելու:

համար, որովհետև մյուս աղբիւնները քշվացին, փոքրահասակներից մի քանիսը, որոնք դպրոցում սովորում էին, գոգնոցով իրենց դեմքը ծածկեցին և պահպանեցին ինձանից:

* * *

Անտառն արդեն վերջացել և սկսել էր լեռնային փարթամ մարդագետնի, որի հատուկտուր թիւերը ապացույց էին, թե ժամանակին մարդագետնի սեւահողում աճել է կաղնին:

Կանաչների միջով հոսում էր գետակը, որի ակունքները անաստի մթին ձորերի աղբյուրներն էին: Դրա համար էլ դետակի երեսին, կանաչ խոտերի հետ լողում էին և շոք տերևներ:

Ձիերը հոգնել էին: Լեռնային կանաչը գրավել էր և՛ մեզ, և՛ հոգնած ձիերի համար:

— Իջնենք, ձիերը թող հանգստանան, — ասաց ընկերս: Ձիերը լեզվով դուրս հրեցին սանձի երկաթները և ազահուլթյամբ պոկեցին խոտը: Մենք պառկեցինք գետակի ափին, խոտի վրա:

— Օհան ապերը գրքեր շատ ունեն, հին գրքեր: Մի կիրակի պատշգամբում նստած կարդում էի նրա գրքերից մեկը, կարծեմ Հուստինյանոս թագավորի մասին: Ձյունը դեռ չէր հալվել, բայց երևի ջերմությունն արդեն զգացնում էր, որ գարունը հեռու չէ: Այդպիսի օրերին կատուն էլ հեռանում էր թոնրի տաք քարից և աչքերը փակած փովում արևի տակ:

Մեկը բարձրանում էր սանդուղքով: Գլուխս վեր հանեցի: Գիրքը ձեռքի դողաց: Կողքիս կանգնել էր Խոնարհը և մատներով խաղում էր գոգնոցի եզրի հետ: Երբեք նա ինձ այդքան մոտ չէր կանգնել: Դրանից էր, որ գրքի տառերը շաղկեցին և գիրքը դողաց:

— Հայրս խնդրում է ճաշին գաս մեր տունը:

Նքս էլ լիմացա թե ինչու պատճառ բանեցի գիրքը, ասեցի, որ չեմ կարող գալ: Խոնարհը ձեռքի արագ շարժումով գիրքս ծալեց, և ես դեռ ուշքի չեկած բակից կրկնեց հոր խնդիրը:

Զգնացի, բայց գիրքն էլ բաց չարի: Անելիքս չգիտեի:

Փորձեցի տետրակներն ուղղել, չկարողացա: Օհան ապերը եկավ և մինչև իրիկուն միասին էինք: Այդ օրը ես նրա հետ գամը քնացի կովերին խոտ ու գարման տալու:

Զգիտեմ ամեն տարի Ձորագլուղում գարունն այնքան սիրուն է, ինչպես այն տարին: Քարերն էլ էին շնչում գարնան բույրը: Անտառի

հազարավոր լորենիների հոտը գիշեր-ցերեկ գլուղի վրան էր: Երբ դասերից հետո պառկում էի անտառում, լորենիների տակ, գլուխս պտտվում էր:

Ձորակներում հիմա էլ կան այգիներ: Գարնանը ուռել և հասել էին խնձորենու բողբոջները: Հարկավոր էր մի շաբաթ տաք եղանակ, որպեսզի բացվեին խնձորենու ծաղիկների կարմիր թերթերը և ձորակները բուրեփն: Հեռվից ծաղկած ծառերի սպիտակ ճյուղերը երևում էին ձյունով ծածկված, ասես գարունը ձյուն էր թափել ծառերի վրա, գունավոր և հոտավետ փաթիլներով ձյուն:

Գլուղի փողոցներից արևը գոլորշիացնում էր աղբաջուրը, կովերը ջրի գնալիս շլանում էին արևի լույսից, մնչում էին արջառները, հոտոտում, դետուղեն վազում և ոտքերով փորում թաց գետինը: Եվ ինչ դժկամությամբ էին նրանք ներս մտնում գոմի ցածր դռնակներից:

Գարնան արև օրերը հիշեցնում էին ինձ, որ շուտով մայիս է: Դպրոցն արձակելուց հետո նույն ճանապարհով պիտի վերադառնամ և էլ երբե՛ք, երբե՛ք չպիտի տեսնեմ Ձորագլուղը:

Նրանց տունը չգնալու համար փոշմանել էի: Մի օր էլ փողոցում մայրը հանդիմանեց, որ հրավերը չեմ ընդունել: Ըս ուղում էի, որ մեկ էլ կանչեր, թեկուզ մի թեթև ակնարկ աներ:

Այն ժամանակ սովորություն կար տարեվերջին դպրոցում կազմակերպելու հանդես: Ըս էլ էի պատրաստվում, և աշակերտները սովորում էին երգ ու ոտանավոր: Հետո մեծահասակ աշակերտները տախտակներ բերին, տներից հավաքեցին գորգ ու կարպետ և սարքեցին բեմ: Աշակերտներին պատվիրել էի, որ շատ մարդու կանչեն: Եվ ամեն անգամ աչքս նրա քրոջ կողմն էր:

Կիրակին եկավ: Գուցե և ոչ մի տառի այդ օրը այնքան բազմություն չէր հավաքվել գլուղի դպրոցում: Բաց պատուհաններով գարունը այգիներից բերում էր ծառերի բույրը, դպրոցի կտուրի տակ սարյակները բնից բույն էին թռնում աշխույժ ձովողունով: Նրանք էլ էին զուգվել և այնպես փայլում էին սարյակների սև փետուրները:

Բազմության մեջ ես միայն մի գլուխ էի տեսնում, այս անգամ առանց շալի, մազերը կիսած և խնամքով սանրած: Եվ ի՞նչ բարակ էին նրա շրթունքները:

Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ, որ արտասանելու էր նրա բույրը: Կարպետը շարժվեց, բեմի հետևում երևաց Խոնարհը, իր գլխի սանրով կոկեց քրոջ մազերը: Մանկան գիլ ձայնով և համարձակ փոքրիկ աղջիկը ինչ-որ բան էր

առում: Բազմութիւնը լուռ լսում էր: Չէի լսում ես: Կողքիս խոնարհն էր: Նրա աչքերում ուրախութեան ծպիտ կար: Աչքերը փայլում էին սարյակի փետուրների նման սև: Չեղբ բռնեցի:

— Խոնարհս... — Չախն դողաց:

— Թո՛ղ, — ասաց ու ձեռքը մեկնեց քրոջը, որ ավարտել էր արտասանութիւնը և որի դեմքը անսովոր հաճույքից կարմիր էր: Դահլիճում ծափահարում էին. ոմանք զանազան ձայներով, նույնիսկ ձեռնափայտի շարժումով իրենց գոհունակութիւնն էին հայտնում:

Քիչ հետո հանդեսը վերջացավ: Ինձ թվաց, թե հանդեսը տխուր անցավ և պղտորվեց զարնան օրը: Ականջիս տակ նրա խոսքն էր՝ Թո՛ղ, Չեղբս էի նայում և ուզում էի ստուգել՝ բռնե՞լ եմ արդո՞ք նրա ձեռքը: Ինչո՞ւ այդքան ջերմ էին նրա մատները:

Հանդեսից հետո խոնարհին մի քանի անգամ տեսա: Պատահամա՞ր իմացա նրանց այգու ճանապարհը: Դասերից հետո գնում էի ձորակը, պառկում Օհան ապրի այգու կապույտ քարին, որից վերև ցանկապատի կողքով նա պիտի վերադառնար իրենց այգուց: Ոչ մի խոսք չէի կարող կողքով նա պիտի վերադառնար իրենց այգուց: Ոչ մի խոսք չէի կարող կողքով նա պիտի վերադառնար իրենց այգուց: Ոչ մի խոսք չէի կարող կողքով նա պիտի վերադառնար իրենց այգուց: Ոչ մի խոսք չէի կարող կողքով նա պիտի վերադառնար իրենց այգուց:

Մի անգամ միայն ցանկապատի հետևից ինձ նայեց և ծպտաց: Թվաց թե հացի շորը դիտմամբ վեր գցեց, որ կոանա և մի քիչ ավելի կանգնի: Գուցէ այդպես չէր, գուցէ իրոք շորը սահեց, ընկավ: Հիմա էլ պարզ տեսնում եմ նրա դեմքը ցանկապատի փշերի արանքից: Նույն աչքերն էին, ինչպես բարեկենդանի օրը կտուրի վրա: Նրա աչքերի մեջ մանկական արտահայտութիւն կար, թեև տասնհինգ տարեկան էր, և ամուր կոճկած զգեստի տակ երևում էր հասուն կուրծքը:

Ընկերս լռեց: Չեղբով տրորեց ճակատն ու աչքերը, ասես ուզում էր հեռացնի այն դեմքը, որ հին տարիներից ծպտում էր այդքան պայծառ: Գարնան ջինջ երկնքի վրայով սահում էր մի սպիտակ ամպ, ասես արար աշխարհին հպարտութեամբ ցույց էր տալիս, որ անհաս բարձունքում լողանում է արևի շողերի մեջ:

— Եկավ և վերջին օրը: Դպրոցն արդեն արձակել էի. աշակերտներին բաժանել էի հին տետրակները, վերադառնալու պատրաստութիւն էի տեսնում: Օհան ապերը առավտը շարական չէր կարողում: Վաղ լուսաբացին նա գնում էր այգի, կամ վարուցանքի հողափ հետևից էր:

Հրաժեշտը դժվար էր: Տանն ընտելացել էին ինձ, ես դառել էի մտե-

րիմ մարդ և՛ Օհան ապեր, և՛ Աշոտի, և՛ պառավ նանի համար: Բակում ձիապանը բարձում էր իրերս, նանին պայուսակի մեջ դարսում էր գաթա և ճանապարհի պաշարը:

Խոնարհին մի քանի օր չէի տեսել: Ինձ թվում էր, թե ես նրան էլ չեմ տեսնելու: Եվ մի անգամ էլ տեսնելու պահանջը ինձ ստիպեց արագ-արագ անցնել գյուղի փողոցներով, մի վայրկյան կանգ առնել նրանց տան առաջ և բաց դռնով նայել բակին:

Խոնարհին բակում շտեսա: Փողոցում մարդ չկար, բոլորն աշխատանքի էին, արտերում սկսվել էր քաղհանը, այս ու այն սարալանջից լսվում էր հորովի ձայնը: Մի տեղ աշունքվա մուգ-կանաչ արտերն էին, մի տեղ գարնան սև ցելը:

Օհան ապերը մի քանի խրատներ կարդաց: Երբ նա կոացավ ու ճաշատեսակ համբուրեց, ես նրա բարի աչքերում արցունքներ տեսա: Նանին ձիապանին պատվիրում էր ինձ լավ տանել և զգուշ մնալ, որ պայուսակը չընկնի, միևնույն ժամանակ գոգնոցով սրբում էր թափվող արցունքը:

Անցանք փոքրիկ ձորակը, աղբյուրը և ուռենու հաստ նովը, ուր ձմեռը կովերը ջուր էին խմում: Ահա և Օհան ապրի այգու դռնակը: Արագ բարձրացա ձորակով, դռնակը բաց արի, մոտեցա այգու կապույտ քարին. ցանկապատի հետևը մարդ չկար: Այգում խաղաղութիւն էր, ծաղկաթափ էին ծառերը և բողբոջների փոխարեն նշմարվում էին կանաչ ու մանրիկ պտուղները:

Դպրոցի մոտ երեխաները խմբվել էին. նրանք ինձ տեսան և իջան բլրակով: Որպիսի՞ միամիտ պարզութեամբ նրանք ինձ բարի ճանապարհ ասեցին: Մի քանիսը ծաղիկներ էին բերել: Հենց որ մեկը ինձ մեկնեց ծաղիկը, մյուսներն էլ նրա օրինակին հետևեցին:

Աղջիկներից ոմանք լաց եղան: Նրանք և՛ ծպտում էին, և՛ ծպիտի հետ սրբում էին արցունքը, որ ծորում էր աղբյուրի պես: Լաց էր լինում և խոնարհի թուրքը:

Մեկը թե՛ «Ուսուցիչ, մեզ շնորհակալ»: Կով հիշում եմ ձուտիկին, որը միշտ դպրոց էր գալիս հոր մեծ փափախը գլխին և երկար, հնամաշ տրեխներով: Որք էր ձուտիկը, լռիկ-մնջիկ մի երեխա, որին բոլորը սիրում էին: Խմբի մեջ ձուտիկն էլ էր: Մյուսների պես նա մոտեցավ ձեռք տալու, տրեխի ծայրերն իրար դիպան, քիչ մնաց ընկներ: Ձուտիկը փաթաթվեց ձնկներին: Մեծ փափախի տակից տեսանրա խելոք աչքերը: Եվ այնքան խեղճութիւն կար ձուտիկի աչքերում:

Ձիապանի կանչը ինձ հիշեցրեց, որ ժամանակն է հրաժեշտ տալու:

Մանուկները մի անգամ էլ ձեռք ավի՛ն: Կոացա և համբուրեցի Ճուտիկի ճակատը, ինչպես Օհան ապերը՝ իմ ճակատը: Իմ աչքերում արցունք երևաց, արցունքի միջից մի անգամ էլ տեսա այգու դռնակը, դարձող ներկած թիթեղները: Հետո ծառերը ամեն ինչ ծածկեցին:

Քայլում էի ձիապանի հետևից: Մինչև զառիվայրի սկիզբը ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով: Կանաչ արտերում քաղհան էին անում: Մի քիչ վերև, սարալանջին, եզները դանդաղ քաշում էին արորը, և հանգստացած հողը շրջում ակոսի մեջ: Արտերում կանաչի մեջ երևում էին կարմիր-կապույտ ծաղիկներ: Բացվում էր պուտը:

Սպիտակ քարի մոտ, գոգաձև ընկած երկարադարձ արտերում քաղհան անող կանանց մեջ տեսա Խոնարհին: Մեր հայացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում ժպիտ չտեսա: Ի՞նչ էր ասում. նրա համար դժպիտը, և ես նրա աչքերում ժպիտ չտեսա: Ի՞նչ էր ասում. նրա համար դժպիտ էր, որ ես հեռանում եմ Չորագյուղից, չէ՞ որ ինձ ոչինչ, ոչինչ չէր ասել այդ խոնարհ աղջիկը: Հագին նույն գորշ զգեստն էր, ինչպես առաջին անգամ անտառում: Արտի մեջ կանգնել էր, ձեռքին քաղհանի բիրը, կարմիր պուտ և մոլխոտի մի կապ:

Ոչինչ շասացի, հեռացա: Արահետով բարձրանալիս միշտ ետ էի նայում: Կոացած կանայք կանաչին ընկած թռչունների էին նման: Եվ այդ երամից մեկը, գորշ շորեղով մի աղջիկ, ավելի հաճախ էր բարձրանում, ձեռքը դնում ճակատին, որ արևի շողերը չխանգարեն տեսնելու անտառի մեջ հավիտ արահետը և միայնակ անցվորին: Չորի գլխին կանգնեցի, և երբ աղջիկը մի անգամ էլ բարձրացավ, նայեց իմ կողմը, ձեռքով արի: Խոնարհն իսկույն կոացավ արտի վրա: Ես արագացրի քայլերս ձիապանին հասնելու:

Երբ ընկերս լռեց, ինձ թվաց, թե գետակը նույն հանգով է պատմում, խոսում է նույն կերպ, ինչպես նա, որ մեջքին ընկած փակ աչքերը երկնքին, անգիր ասում էր մի ծանոթ պատմություն, գրված Օհան ապոր հին գրքերում:

Վեր կացա, թուլացրի ձիու թամբի կասյերը: Չիբրը հագեցել էին կանաչից և մեկ նման մեկնվել էին գարնան արևի տակ:

— Հետո, տասներկու տարի... Եվ ի՞նչ տարիներ: Կոիվ, քաղց, երկրների ու քաղաքների, հազարավոր դեմքեր, տարբեր ցեղից, անցքեր՝ մեկը քաղցր, մյուսը դառը հիշողության հետ կապված... Եվ նրանց մեջ Խոնարհի դեմքը, ցանկապատի փշերի արանքից երկու մանրիկ աչքեր, որպես սև ձիթապտուղ, և բարակ, կարմիր շրթունքներ:

Հանկարծ ընկերս կողքի դարձավ, վիզը ձգեց իմ կողմը: Նրա աչքերն ավելի մեծացան:

— Գիտես, ես Խոնարհին տեսա:

— Ծ՞րբ:

— Երեկ: Վերին գյուղում: Դու քնել էիր, դպրոցի բակում հավաքվել էին գյուղացիները: Խոսում էին հողի մասին, գանգատվում էին, որ հողը առաջվա բերքը չի տալիս: Այս տարվա ժանտախտից էին խոսում: Շատ կովեր են սատկել, ոմանք ցել անելու եզ շունեն: Հետո ինձ մոտեցավ մի կին, ցնցոտիների մեջ, ոտքերը բոբիկ, ոտքերի կաշին ճաքճաքած: Կնոջ փեշերից կախվել էին երեք կիսամերկ երեխա: Նրանք մերթ ինձ էին նայում, մերթ մորը:

Կինն արցունքն աչքերին չորս փութ ցորեն էր խնդրում, մինչև հունձը:

— Հետո մի ճար կլինի,— ասաց:

Ամուսինն անցյալ տարի էր մեռել: Ժանտախտից սատկել էր նրանց միակ կովը: Իսկ տանն ուրիշ աշխատող չկար:

Ես ճանաչեցի Խոնարհին... Աչքերն էլի առաջվանն էին, բայց առանց փայլի: Ես ճանաչեցի Խոնարհին: Բայց չգիտեմ նա ինձ ճանաչե՞ց, թե ոչ:

...Անխոս նստեցինք ձիերը և անցանք գետակը: Արևն արդեն դեպի մայրամուտ էր կախվել:

1926—1928

ԼԱՌ-ՄԱՐԳԱՐ

1

Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր: Երբ բոբիկ, արևից խանձված ոտքերով քայլում էր առվի եզերքով, բահով ճումերը առվից դեն գցում, որի ջրի հոսանքը սահուն լինի,— Լառ-Մարգարին այնպես էր թվում, թե ջրի պապակ արտերն ու ծարավ այգիները տապ արած իրեն են սպասում:

Առվով ջուրը կապելիս նա ջրի հետ էլ գնում էր, մինչև ջուրը այգուն հասնի: Արևից շորացած հողը, տեղ-տեղ ճաքճաքած, ագահությամբ ծծում էր ջուրը, ճեղքերից օդի պղպղակներ էին դուրս գալիս, ձայն հանում, ասես հողը հազար պոռչ ուներ և անհագ ծարավ:

Չուրը ծառերի տակ կապելուց հետո Լառ-Մարգարը պառկում էր ծառի ջվաքի տակ, երկար բահը կողքին, աչքերը կիսախուփ անում,

ննջում, մինչև ջուրը հասնելու: Հետո վեր էր կենում, ջուրն ուրիշ առվով անում, էլի ջրի հետ գնում:

Ամռան շոգին, երբ արևն այնքան մոտ է, ջերմութիւնը շատ, երբ շները շոգից տան ստվերում պառկում են, լեզուն հանած թնչին տալիս, — առվի եզերքին միշտ էլ կարելի է տեսնել կառ-Մարգարին, ոտքերը մինչև ծնկները բաց, գլխին մի սպիտակ շոր, բաճն ուսին:

— կառ-Մարգարը լազլագի պես ջրերից ձեռք չի քաշում, — ասում են գյուղացիք: Եվ ճիշտ որ, կառ-Մարգարը մի քիչ նման է արագիլի, ոտքերը բարակ ու երկար, ասես ոտքի վրա երկու ծունկ կա:

Լայն առվի վտայից շատերը չէին կարողանում անցնել, իսկ կառ-Մարգարը մի մեծ քայլ էր անում և առվի մյուս ափին կանգնում: Արևից խանձված դեմքի վրա սրածայր քիթը երկար կտուցի էր համեմատ, եթե սպիտակած բեղերը չլինեին:

Գյուղի ջրվորն է: Գիշեր-ցերեկ առունների վրա է լինում, հսկում առուններին, ջուրը բաժանում, առունների մաքրութիւնն նայում:

— կառ-Մարգար, արտս խանձվեց, ջուր հասցրու, — գանգատվում էին երբեմն:

— Կեցիր դհա, կրակ չեղավ, սրադ ուրբաթ է, — ասում է կառ-Մարգարը:

կառ-Մարգարը տեղացի չէ: Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես կառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել, վերջը ւլիթը լափու է տվել և կառ-Մարգարին իր թոռան հետ գցել այդ գյուղը:

Անցյալ գարունքին էր այդ: Գյուղը նրան ջրվոր է վարձել:

— Ղարիբ մարդ է, ազգ ու բարեկամ չունի, ջուրը արդար բաժին կանի:

Երբ առաջին անգամ առվով ջուր էր կապել, ոտքերը մինչև ծնկները վեր քաշած, բաճն ուսին անցել առվով, գյուղում մի հանաքչի ասել էր.

— Տեսեք հա՛, գաղթական բիձեն լառի լազլագ լինի կասես:

Գյուղը նորեկին ավելի անուն էր դրել՝ կառ-Մարգար:

Քչերն էին փորձում ջրվորին խաբել, հերթից դուրս ջուր գողանալ: Վայ թե իմանար կառ-Մարգարը. կթոնթորար, կկանչեր, բաճն գետնով կտար:

— Ծառդ պտուղ չի տար, յավրիս, գողութիւն մի՛ վարժեցուր:

կառ-Մարգարի համոզումն էր այդ: Եվ երբ բարկանար, այդ խոսքը կասեր, իսկ եթե խոսքին կասկածող էր լինում, ավելացնում էր.

— էս հասակս քաշեր, նո՛ր պիտի սուտ խոսիմ...

Այդ ասելիս կառ-Մարգարը հանկարծ խեղճանում էր, ձայնը երբում

էր: Թողնում էր խոսակցին, բաճն առնում և առվի հետ գնում, թեկուզ փախն էլ միտք չունենար:

Հեռու չէր գնում: Նստում էր առվի մոտ, նայում ջրի հանդարտ հոսանքին, շոր ծղոտներին, որոնք գալիս էին հեռուններից և ջրի հետ գնում: Նայում էր առվի եզերքին բուսած կանաչին, և մտքերը նորից հանդարտվում էին:

* *
*

Լուսնյակ գիշերներին, երբ գյուղը քնած էր բեզարած մրափով, հովը սառնութիւն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին, լուսնյակ գիշերներին, երբ բարդու վրա իր բնի մեջ հանգստանում է արագիլը, որ լուսաբացին լառ-լառ թևերը փռած իջնի ճահճուտի վրա, — կառ-Մարգարը մինչև լուսաբաց աշխատում էր:

Ջրուտքի այդ գիշերներին լուսինը շողք էր գցում առվի մեջ, ջրվորի պողպատ բաճի վրա, արծաթ փայլով պսպղում էին սերկելու տերևները, հովից հասկերը քսվում էին իրար, խշխշում: Ամառի արտերի միջով անցնում էր կառ-Մարգարը, ջուր տալիս ծարավ հասկերին:

Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կոանա, մատներով տրորի թաց հողը, տեսնի՝ խո՛րն է ծծել ջուրը, կառ-Մարգարը ջուրը վարար չի կապել:

Լուսաբացին հավում էին աստղերը ձյունի գնդերի պես, շառագունում էր արևելքը, արևի առաջին շողերը խաղում էին ամպերի հետ, ասես մի անտես ձեռք բյուր շողերով ամպի սպիտակ քուլաների վրա հազարավոր նախշեր էր նկարում, որ մի քիչ հետո ավրի նույն շողերով, մի ուրիշը նկարի, մինչև արևը ծագի:

Արևի առաջին շողերի հետ գոլորշի էր բարձրանում տերևների վրայից, ծաղիկների գունավոր թերթերից, արտերից ու այգիներից գիշերվա խոնավութիւնն էր գոլորշիանում: Գլխահակ ծաղիկները բարձրացնում էին իրենց գլուխը, նայում արևին, որ կեսօրին, երբ արևը թեժանա, նորից խոնարհեն:

կառ-Մարգարը գիշերվա ջրուտքից բեզարած պառկում էր բարդիների տակ, ոտն ու ձեռք փռում, լայն ու հանգիստ: Բարդիների մոտ հերվա շորացած գերաններ կային, փշակով գերաններ:

Եվ երբ կառ-Մարգարը պառկում է գերանների մոտ, բարդիների

տակ, այնպես է թվում, թե ինքն էլ փշակով մի գերան է, շորացած քարդի:

Ինչու էին օրեր, երբ Լառ-Մարգարը ջուրը տալիս էր հերթի համա-
ձայն, ինքը չէր ջրում:

— Քեֆսըզ եմ,— կասեր և կպատվիրեր, որ հերթով ջրեն մինչև ինքը
գար:

Առվի ափնիվեր քայլում էր, մինչև մոտակա ձորակը, ուր ծիրանի-
ներ կային: Պառկում էր ծիրանու տակ, կամ քնում ժայռի շվարում,
կամ էլ մեջքի վրա դառնում, ոտքերը ձգում, հսկա մկրատի պես: Կարծես
մեկը խաչել էր ծիրանու տակ:

Մառի ճղների արանքից վեր էր նայում Լառ-Մարգարը երկնի կա-
պուլտին: Մի ճերմակ ամպ, թափանցիկ ու անձև, հանդարտ լողում էր
լազուրի մեջ: Լառ-Մարգարին թվում էր, թե երկինքը մի հսկա տաշտ
է, մեջը լի լեղակած ջուր և ամպը՝ լվացքի մոռացված կտոր տաշտի ջրի
մեջ: Լառ-Մարգարը նայում էր ամպի կտորին, ինչքա՞ն հանդարտ էր
լողում, ձևը փոխում, մերթ պոռունկը ձգում, մերթ ետ քաշում:

Եթե բարձրանար ամպի վրա, Լառ-Մարգարը հեռու սարերի հետև
պահված իրենց գյուղը կտեսներ, կտուրները եղեգով ծածկած, գյուղի
մոտ բարդիները, իր ծիրանուտը, տան դռնակը, որի մոտ կարասի կտոր
կար, մեջը ջուր՝ հավերի համար:

Ամեն առավոտ կանուխ Լառ-Մարգարի կինը հավաքնի դռնակը բաց
էր անում, հավերը կղկղալով վազում էին նրա հետևից մինչև կարասի
կտորը, ուր պառավը հավերին կուտ էր տալիս:

Մի հավը թռչում էր, օդի ոլորտում պտույտներ անում: Եվ երբ Լառ-
Մարգարը նայում էր ծիրանի ճղների արանքից, նրա ծերացած աչքերին
այնպես էր թվում, թե հավը Լազուրի վրա միայնակ սահող ամպի կտորի
հետ է խաղում:

...Կտավատը կապույտ ծաղիկներն էր բացել, ծիրանն արգեն դեղնել
էր: Վար էր անում, արորը փափով հողում ամռան ցելի ակոսներ էր
ծրում: Երբ մի անգամ էլ դարձավ, աչքն ընկավ արահետին: Մասրենու
մոտ պառավը կանգնել, ձեռքով էր անում:

— Գեղը խոռվառու կա, մարդ,— կանչում էր պառավը:

Եզներն արձակեց, արորը հողի մեջ խրած թողեց: Վարից բեզարած
եզները երկոյան տան իրերով բարձած սալ էին քաշում գեպի անձանոթ
հեռունները:

Տեղահանության օրերն էին:

Սայլը ճռնում էր օր ու գիշեր, փոշի կար ճանապարհին, շիվար

գեմքեր: Գյուղերը խառնվել էին իրար, ճանապարհին նոր խմբեր էին
միանում քարավանին, նորեկներից հարցնում էին ետ մնացած հարա-
դասների մասին, հարցնում էին գնալիք ճանապարհի մասին: Եվ ոչ ոք
հաստատ ոչինչ չէր ասում, մարդիկ կասկածից ավելի էին շվարում:

— Մարդ, թո՞ղի թարը մոռացա վրա դնել,— ասաց սյառավը
սայլի վրայից:

Լառ-Մարգարը որդու մասին էր մտածում ամեն անգամ, երբ սայլին
նայելիս տեսնում էր կնոջը՝ թոռանը գրկած:

— Ամուր նստե, նայե, Թորոսիկը շմբես...

Թորոսիկը մերթ քնում էր տատի գրկում, մերթ զարթնում, զարմա-
ցած հարցնում:

— Պապե՛, դ՛հա կերթանք... Հո՞ ա՛ս ինչ երկեն գացինք, պապե...

Եվ երբ պապից պատասխան չէր ստանում, Թորոսիկը խռովկան էր
դառնում, շոթոնքը կախում, նայում սայլի վրայից գլխիվայր կախած
հավերին:

Սայլը ճռնաց շաբաթներ, փոշին ճամփի վրա անպակաս էր գիշեր-
ցեքեր: Թրիշ ջրեր էին, ուրիշ երկրներ: Մարգարը, ինչքան էլ խմում էր,
ժաբավը չէր հազեցնում:

Երբ շունչ առան մի ամայի ավազուտում, ոչ սայլ կար, ոչ զույգ
եզները: Փոքրիկ կապոցներ էին մնացել, Թորոսիկի երեսն արևն այրել,
մաշկահան էր արել:

Պառավի մազերի վրա ճամփի փոշին նստել էր, մազերը դեղնել,
աղտոտ գույն էին ստացել: Մարգարը տեսավ, որ աղետը կնոջ դեմքին
նոր ակոսներ է ծրել:

...Լառ-Մարգարը երբ «քեֆսըզ եմ» կասեր և ծիրանուտի տակ պառ-
կած՝ ցերեկվա շոգին ծիրանի ճղների արանքով կնայեր երկնքի կապույ-
տին, ամպի ափտակ քուլային, որ ճերմակ լաթի պես մեկ սուզվում էր,
մեկ էլ պոռունկները հանում, թռչուններին, որոնք բարձրում պտույտներ
էին անում և հագիվ երևում սև կետի շափ,— Լառ-Մարգարը մտաբերում
էր հարափի ավազուտները, շարվեշար վրաններ, վրանների վրա գունա-
վոր լաթեր, որ տարագիրները բերել էին հեռավոր գյուղերից: Ավազուտի
մեջ հատ ու կենտ ծառեր կային, որ Մարգարի աչքին մեծ ավելներ էին
թվում՝ խրված ավազի մեջ:

— Քար պիլա չկա, աս ու՞ր բերին մեզ,— գանգատվում էր Մարգարի
կինը, որ ամեն իրիկուն իր տան բանալիներին նայելիս ափսոսում էր
հավերին, տանը թողած իրերը:

— Գիտե՞նալի նե, հետս կառնեի,— ասում էր:

Մի անգամ Մարգարը փորձեց որդու մասին խոսել, բայց պառավը փղձկաց, հեծկլտոցը կոկորդը սեղմեց, գոգնոցի ծայրով աչքերը սրբեց և պինդ, շատ պինդ գրկեց Քորոսիկին: Մարգարն էլ խոսք չասեց որդու մասին:

Ձմեռն անցավ, բայց և ոչ ոք չնկատեց գարնան գալը: Ավազուտների վրա կոշտ, փշոտ բույսեր կանաչեցին, հետո շորացան: Նրանց հետ էլ անցավ հարավի կարճատև գարունը, ավազուտները նորից լերկացան, կեծացան հրավառ արևի տակ:

Մարգահավաք արին, վրանների աշխատող ձեռքերը հանեցին նոր շինվող ճամփի վրա բանելու: Մարգարն էլ գնաց, Աշխատում էին օրնիրուն, հեռուներից քար էին կրում, հող էին բերում: Հազարավոր բահ ու բրիչ ամեն օր փորում էին, ճանապարհը սարքում: Մյուսների հետ Մարգարն էլ էր աշխատում: Մանթներ կային, շինականներ: Խիճ էին պատրաստում, և երբ արևը պահվում էր շեղջակույտերի հետև, ծառերը երկար սավերներ էին ձգում, վերադառնում էին վրանները, որ արևածագին նորից գնան:

Մի իրիկուն էլ պառավն իրեն վատ զգաց, գանգատվեց սրտի ծակոցից: Մարգարը ելավ վրանի առաջ քար փնտրելու, տաքացնելու, պառավի կրծքին դնելու: Իրենց գյուղում այդպես էին անում: Փնտրեց, ձեռնունայն ներս մտավ:

— Քար պիլա չկա, մա՛րդ, աս ո՛ւր եկանք,— տնքաց պառավը: Ել շխոսեց:

Եթե այդ ժամանակ այգիներից մի մարդ ձայն էր տալիս, թե՛

— Լառ-Մարգա՛ր, չուրը բարակեց...

Լառ-Մարգարը հանկարծ վեր էր թռնում տեղից, բահն առնում և գեպի ջրի բանդը գնում: Եվ ոչ ոք չգիտեր, որ Լառ-Մարգարը առվի բանդը սարքելիս մտքով ուրիշ տեղ էր, գյուղից հազարավոր վերստեր հարավ:

Մարգարն էլի խիճ էր շարդում, պառավն աչքի առաջին: Ի՞նչ լավ կլինեք, եթե ճամփի քարերից գիշերով գողանար, պառավի գերեզմանի վրա գներ: Ավազուտը կբացվեր, շնագայլերը կբռբռեին պառավին: Քար պիտի դնել, ծանր բարձր ավազի շեղջակույտի վրա:

Իր կյանքում Մարգարը երկու անգամ է ծեծ կերել. մեկ երբ տղա էր, շան պոչից ցախավել էր կապել, մեկ էլ պառավի գերեզմանին քար գնելուց հետո:

Էլի արևի տակ խիճ էր կտորում, երբ երկու հոգի մոտեցան իրեն:

— Այս ծերու՛կը,— հարցրեց մեկը, և երբ մյուսը գլխով նշան արեց,

գինվորականը կրունկը մեխած սապոզը կրծքին զարկեց, կրծքի տախտակը զնգաց պարապ կարասի պես: Քթից արյուն եկավ, և երբ երկրորդ անգամ սապոզով խփեցին, խիճը ճղեց Մարգարի բուժ մատը:

Բահով առուն մաքրելիս հիմա էլ երբ Մարգարի աչքին է ընկնում բուժ մատի սպին, մատերն ավելի պինդ են սեղմում բահի կոթը, բայց զայրույթն անցնում է, երբ միտն է բերում շեղջակույտի վրա դրած քարը:

— Կմնա՞ դեռ, քամին չմաշե՞ց, չգողցա՞ն:— Շատ կտար Լառ-Մարգարը, թե հարցին պատասխան տվող լիներ:

Երբ վրանները հավաքեցին, և վրանների տակ ծվարած ժողովուրդը նորիշ երկրների ճամփան բռնեց, Մարգարն էլ շալակեց մնացած կապոցները, Քորոսիկի ձեռքը բռնեց:

Մարգարի շալակին՝ կնոջ աղյուխի մեջ ծիրանի կորիզներ կային: Գյուղի ծիրանուտում մի ծիրանի կար, պտուղը մեծ ու համեղ: Պառավն այդ ծիրանի կորիզներն էր հավաքել, պահել, որ գալ տարի տնկի տան առաջ: Միրանի կորիզներն էլ պառավի հետ ճոնչան սայլի վրա շաքաթներ էին լուսացրել մինչև հեռավոր ավազուտները:

Երբ վրանները հավաքեցին և հեռացան, Մարգարը երկու միտք ուներ՝ Քորոսիկին պահել և ծիրանի կորիզները պահ տալ մի ապահով հողում:

Տարիներ անցան: Մի տեղ չգտավ Մարգարը, որ շունչ առներ: Հեղեղի բերանն ընկած մրջյունի պես վեր ու վար էր անում, մագլցում մի ծղոտի վրա, բայց հեղեղը ծղոտն էլ էր քշում, մրջյունին էլ:

Մարգարն աշխատում էր, զրկում իրեն և բերանի պատառը պահում Քորոսիկի համար, որ պապի թևի տակ մեծանում էր: Մի օր էլ Քորոսիկը շոգենավի տախտակամածի վրա ելավ:

Պապն էլ էր, ուրիշ հարևաններ էլ, որոնք Կավալայի մոտերքն էին ապրում վրանների տակ, պատմում անցած-գնացած առասպել-օրերից, ցերեկով աշխատում ագարակներում, նավահանգստում, քաղաքում:

Մարգարն ուրախ էր, երիտասարդացել էր: Եվ երբ Քորոսիկը հարցրեց, թե՛

— Պապե, նավը մեզ ո՞ւր պիտի տանի,—

Մարգարը նայեց թոռան կայտառ աչքերին, աչքերի մեջ տեսավ անհետ կորած որդու պատկերը և զսպելով իրեն՝ ասաց.

— Մեր երկիր, յավրիս...

Այդ երկրի համար Մարգարը Թորոսիկից և Ժիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չունի բնծա տանելու:

Նավը օրորալով ալիքներն էր ճեղքում իր սուր թիթով, ալիքները հեռանում էին մի պահ, հետո մտտենում, զարկում նավին, փշրվում կռահակներին:

Մարգարը տախտակամածից նայեց ծովեզրի լեռնաշղթային, որի սրածայր զազաթներին ամպը նազով էր նստել, նայեց և իր հին տան բանալիները կամացուկ հանեց գրպանից, տրորեց բոխ մեջ, նետեց ծովը: Փոքրիկ օզակներ ելան նետած տեղից, օղակները լայնացան, հավիցցին, մի մեծ ալիք եկավ, ծածկեց բանալու ընկած տեղը: Բանալիներն արդեն սլվել, ընկել էին անդունդ:

Լառ-Մարգարը ոչ ոքի շատեց, թե ինչու արցունքներ երևացին ալքերին, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից Արարատի ձյունոտ զազաթը տեսավ: Այդ երկրում պիտի ծլեին Ժիրանի կորիզները:

...Եվ եթե մեկը հերթից դուրս շուր էր գողանում, զայրանում էր Լառ-Մարգարը, խրատում:

— Ծառդ պտուղ չի տա, յավրիս...

Եթե իր խոսքին կասկածող էր լինում, և Լառ-Մարգարն ասում էր, թե՛

— էս հասակս քաշեր, նո՞ր պիտի սուտ խոսիմ,— իհարկե գյուղում շատ քշերն էին իմանում, թե ինչ դառնությամբ է Լառ-Մարգարը այդ հասակը քաշել:

Իսկ եթե մեկին մի լավություն էր ուզում անել, Լառ-Մարգարը ժպտալով ասում էր.

— Կեցիր, Ժիրաններս բոյովանան, քեզ մեկ հատ պիտի տամ: Նայե՛, հետոք համեղ են: Ատտեզվանքը հիշ չկա իմինիս պես Ժիրանի:

Լառ-Մարգարի փոքրիկ, ջրակալած աչքերում փայլատակում էր մի մեծ հրձվանք, մանավանդ, երբ վարնան ջրտուքին, առվի բանդը սարքելու համար դպրոցի մոտովն էր անցնում և ցեխապատի ճեղքից նայում, թե ինչպես դպրոցի բակում վազվզում են երեխաները, խազում, կանչում, և երեխաների հետ խազում է Թորոսիկը:

Իսկ դպրոցից մի քիչ հեռու, իրենց տան առաջ Ժիրանու տունկերն են ձգվում արեհ տակ...

Գաբալաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամ-նաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բառձր բուրգերը: Հեռվից ավերակներ շեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, զոչ են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափր բարձրացողին:

Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հավվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները: Ո՛չ մի երկաթյա դուռ և ո՛չ մի պահակ աշտարակի գլխին:

Լուսթյունե կա Գաբալաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմբկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հղկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա օպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփոռներ և կրծում քարե շղթաները:

Պարիսպների գլխին բույն են դրել ցիճը և անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կոնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահաբեկ պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը կեռ թուր, մագիլները՝ սրածայր ճիզակներ, փետուրները որպես պողպատե զրահ:

Գաբալաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պե՞ս՝ կարմիր, ծաղիկը Ժիրանի գույն: Քարի մոտ է բնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հեծում քարին: Մաղկափոշու մեջ թաթախված գունափոք բեզդին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ Ժիրանագույն բուրաստան:

Ենթերը, ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարածալուների վրա թառել են մի քանի տներ: Առավոտյան ծուխ է ելում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հավվում ամպերի մեջ: Ծոց կեսօրին գյուղում կանչում է աքլորը, աքլորի կանչի հետ պառավ մի շինական հորանչում է տան ստվերում, ձեռնափայտով ապազի վրա նշաններ գծում, նշանների հետ փորփորում գլխով անցածը:

Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարի-

ներք նույն ծառի միանման տերևներն են: Դրա համար էլ խառնվում է ծերունու հիշողութունը: Գետն աղմկում է առաջվա հանգով, նույն քաբերն են և նույն քարն արծիվը:

Քանի՜ սերունդ է ապրել Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքները փռել ցեխերի վրա, եղեգնով պատել վրանները, և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը, այժ ու աշխարհ քշել են բերդի լանջերը, պարկը պանրով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այժի պանիր:

* * *

Արև մի կեսօր Կաքավաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիավոր: Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են և շեն տեսել ո՛չ Կաքավաբերդը, ո՛չ նրա քարափը:

Երրորդ ձիավորը նրանց ուղեկցում էր, և մինչդեռ առաջինները պինդ բռնել էին ձիերի բաշից, համարյա թե կոացել՝ հավասարակշիռ մնալու,—վերջին ձիավորը քթի տակ մոմուում էր մի երգ, մելամաղձոտ ու հուսահատ, ինչպես ամառի ձորը, տխուր քարափը և հեռավոր գյուղը:

Բերդի գլխին նստած ամպը վարագույրի պես մեկ ետ էր քաշվում: Երևում էին պարիսպները, մեկ ծածկում էր կատարը: Առաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում: Նրա գլխում բերդի պատմութունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մառին, երբ զրահապատ ձիերի սմբակները դոփում էին երկաթյա մուտքի առաջ և ավերից դարձող նրա համհարզները ճոճում էին նիզակները: Ակնոցի արանքից նրա ուսյալ աչքերը տեսնում էին զրահավորներին, մագաղաթյա մատենագրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս և նա լսում էր հնօրյա ձիերի դոփյունը: Ինչ դժվար էր նրա համար քարափը, որով քարայծի նման մազլցում էին երբեմնի տերերը:

Երբ հասան վրաններին, առաջին ձիավորը շարունակեց ճանապարհը: Նա փնտրում էր հին ճանապարհը և չէր տեսնում վրանների առաջ, մոխրի մեջ խաղացող կիսամերկ երեխաներին, այծերին, որոնք զարմանքից վեր ու վար էին անում գլուխները:

Չնտրե գլխարկով երկրորդ ձիավորը Կաքավաբերդի գլխին հնութուններ չէր որոնում: Նրա ամբողջ հարստութունը ծոցի հաստ տետր էր և սրածայր մատիտը: Հերթը էր աչքն ընկներ մի դեմքի, տեսնե՞ր

զեղեցիկ մի անկյուն, մամուսապատ մի քար, որպեսզի թղթի վրա մատիտով նկարեր այն, ինչ տեսել էին նրա աչքերը:

Առաջին ձիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ:

Երբ նրանք հասան վրաններին, շները հարձակվեցին ձիավորների վրա: Շների ձայնին մի քանի հոգի դուրս եկան վրաններից, նայեցին նրանց կողմը: Մոխրի մեջ խաղացող երեխաները տեսան, թե ինչպես շները հաշիվով վագեցին ձիերի վրա: Երրորդ ձիավորն իզուր էր մտրակով փորձում շներին հեռացնել: Շները հաշիվով մինչև բերդի պարիսպները ուղեկից եղան ձիավորներին, հետո իրար հետ խաղալով վերադարձան:

Կաքավաբերդի քարերն ասես կենդանացել ու խոսում էին հնագետի հետ: Նա մոտենում էր այս ու այն քարին, կոանում, նայում, շափում, ինչ-որ գրում, ոտքով փորում հողի փլվածքը, բաց անում հողի տակ թաղված տաշած քարի ծայրը: Նա բարձրացավ պարսպի վրա, գլուխը դուրս հանեց բուրգի դիտարանից և բարձր կանչեց, երբ բուրգի անկյունում, քարի վրա տեսավ փորագիր խոսքեր:

Երրորդ ձիավորը—որ ձիերի սանձեռն արձակել ու պարսպի մոտ նստած ծխում էր—հնագետի կանչից վեր թռավ: Նրան թվաց, թե օձը խայթեց ակնոցավոր մարդուն:

Չնտրե գլխարկով մարդը նկատեց պարիսպների փլվածքը, սրածայր բուրգը և պատերի հետքերը: Բերդի մուտքը նկարելիս, մատիտը մի պահ ձեռքին մնաց, որովհետև նրա ոտնաձայնից մի անգը կոնչլունով թռավ բնից, պտույտներ արեց բերդի գլխին: Նրա ձայնին մյուսներն էլ հավաքվեցին:

Ձիերը, անգղների կոնչոցից վախեցած, խլչեցին ականջները, իրար մոտեցան: Եվ երբ հնագետը բուրգի ծայրից կանչեց, թե ինքը գտել է Կեկոլ իշխանի դամբանը, նկարիչը չհասկացավ նրա խոսքը: Աչքն անգղների պտույտի հետ էին, նրանց թևերի հզոր շարժումի, կեռ ու արնադույն կտուցների հետ: Ի՞նչ ահեղ թափ կար նրանց պտույտում: Մի պահ մատիտը ձեռքին մնաց և շնկատեց, թե ինչպես գլխարկը սահեց և ընկավ քարի վրա:

Վրաններից մի մարդ, մանգաղը գետու մեջ խրած, գլուխը փաթած թած կեղտոտ թաշկինակով, մահակին հենվելով բարձրացավ բերդի քարափով և մոտեցավ ձիերի մոտ նստած պահակին: Մարդը տեսավ ակնոցավորին մի քար տեղահան անելիս: Եվ երբ պահակին հարցրեց, թե ո՞վ էր են եկվորները, ի՞նչ են փնտրում բերդի ավերակներում, պահակը

նախ հանկարծակիի եկավ և պատասխանեց, որ գրքերում գրած է, թե Կաթավարերդի գլխին կարասի մեջ թաղված են ոսկե գանձեր:

Հնձվորը միտք արեց, ուսը քորեց և գարձավ դեպի ձորը՝ հնձելու կորեկի արտը: Ու գնում էր ինքն իրեն խոսելով: Ի՛նչ կլինեք, եթե ինքը գտնելու գանձը: Քանի անգամ է նա նստել հենց այն քարի վրա, որ տեղահան արեց ակնոցավորը: Եթե իմանար, ապա գանձերը կլինեին նրա արխալուղի գրպանում: Քանի՛ կով կառնեք...

Միտք էր անում հնձվորը, երբ նկատեց, որ կորեկի արտի կողքին էլ նա շուխան շարտեց, շուխայի հետ էլ ավելորդ մտքերը, մանգաղով զարկեց մի կապ կորեկ ու կտրեց:

Ուրդի քարերի մոտ բուսել էր ալպիական մանուշակ, ծաղիկը ծիրանի գույն: Հնազանդ շէր տեսնում ո՛չ մանուշակ, ո՛չ խոտ: Նրա կռիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ:

Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր շկար ոչինչ, կենդանի և ոչ մի բնույթ: Նա պոկոտում էր քարերին փաթաթված բազեզը, փայտի ծայրով արմատախիլ անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում և սրբում գրերի հողը:

Ձևորե գլխարկով մարդը երբ նկարեց այն ամենը, ինչ հարկավոր էր հնազանդին, տեսրի նոր էջի վրա նկարեց և պարսպի մի մասը, ատամնաձև քարերի արանքում, քարե արծվի բույնը, պարսպի ոտների տակ՝ ալպիական մանուշակներ:

* * *

Պեսոսից անց երանք բերդից իշան: Հնազանդը մի անգամ էլ պտույտ արեց բերդի շորս կողմը, տեսրում մի բան նշանակեց և ապա արագ քաջերով հասավ ձիերին:

Այս անգամ ամենից առաջ գնում էր երրորդ ձիավորը: Եթե հնազանդը գլխում Բաֆուր իշխանն էր և մատենագրի մագաղաթը, նկարիչը հիշում էր մանուշակները և լսում Բասուտա գետի խուլ աղմուկը, — երրորդ ձիավորի աչքի առաջ թարմ լավաշներ էին, պանիր ու մածուկ:

Նա հենց առաջին վրանի մոտ ձիերն արձակեց, սանձով կապեց ձիերի ոտքը ու եկու մտավ վրանի եզրից գոնից: Քաղցած ձիերն ագուցվածք մտաթները կախեցին թարմ կանաչի վրա:

Վրանի մուտքի առաջ, օջախի կողքին, մի փոքրիկ աղա մոխրի մեջ ստեղծ էր խորովում: Անձանթ մարդկանց ներս գալը երան գարմաքրիկ:

Վիճացավ սունկը թողնի՞ կրակի վրա, վազի մոր հետևից, թե՞ սունկն էլ հետը տանի: Երբ վրանի մոտ նա լսեց մոր բոբիկ ոտքերի ձայնը, զգեստի խշշոցը, տղան սիրտ առավ, խորոված մի սունկ հանեց մոխրից և դրեց օջախի քարին:

Մայրը ներս մտավ, գլխի շորը մի քիչ իջեցրեց աչքերի վրա, մոտեցավ և վրանի անկյունում դարսած ծալքից երկու բարձ մեկնեց հյուրերին: Երրորդ ձիավորը հնազանդի պայուսակից կոնսերվ հանեց:

— Մենք սոված ենք, քույրիկ: Թե մածուն ունես, տո՛ւր, համ էլ թեյ գցիր: Շաքար ունենք... — սասավ նա:

Կինը մոտեցավ օջախին, տղայի սունկերը դնել դրեց, կռացավ ու փշեց մխացող աթարներին: Նրա գլխի շորը ետ ընկավ, Ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը:

Նրա հայացքը սևեռած մնաց մխացող օջախին, մոխրի մոտ չոքած կնոջը: Ո՛րտեղ էր տեսել նա նման մի դեմք, բարձր սպիտակ ճակատ և մուգ մանիշակագույն աչքեր: Երբ կինը վեր կացավ, եռոտանի կասկարան բերեց օջախի վրա դնելու, հանեց ծխից սևացած թեյամանը, նկարիչը շատ մոտ տեսավ նրա աչքերը և մոխրի փոշին ունքերի վրա, մազերի վրա:

Ինչքա՛ն շատ ժամանակ էր անցել այն օրից: Եվ մի՞թե հնարավոր է այդքան նման երկու դեմք, նույնիսկ նույն շրթունքները: Կաթավարերդի կնոջ դեմքն արեւը մի քիչ այրել էր: Բայց աչքերի ձևը նույնն էր, ինչ որ մյուս կնոջ, որ դարձյալ բարակ մեջքով էր և բարձրահասակ:

Կինը թեյի պատրաստութուն էր տեսնում, անխոս և արագ շարժումներով: Ամեն անգամ, երբ նա կռանում էր, բարձրանում կամ բոբիկ ոտքերով քայլում էր խսիրի վրա, գրնգում էին նրա թևերի արծաթագույն սուրմաները, փոքրիկ զանգակների ձայն հանում: Խշշում էր նրա զգեստը, որի փեշերը իջնում էին մինչև մերկ ներբանները:

Այն կինն էլ ուներ խշխշան շորեր, հագնում էր գորշ գույնի վերաբկու, սև թավիշ գլխարկ, որ երկար քորոցը նարնջագույն գլուխ ուներ: Հեռու էր, շատ հեռու: Գուցե Բասուտա գետը ուրիշ գետի հետ խառնվելով հասնում է այն ծովին, որի ափին, ավազի վրա, մի օր նստել էին՝ կինը և նկարիչը:

Պահակը բաց արեց կոնսերվի երկրորդ տուփը: Հնազանդը սփռեցից ու պզնձե ամաններից գլուխը շէր բարձրացնում: Տղան սունկը կերավ և աչքերը սևեռեց կոնսերվի փայլուն տուփին, սպասելով որ դատարկեն: Վերջը տեսավ նրա հայացքը և կոնսերվի տուփը մեկնեց տղային:

Տղան տուփը թափահարեց, վրանի առաջ պատկած շունը կուլ տվավ մտի կտորները և լիզեց քիմքերը: Ապա դատարկ տուփը ձեռքին նա վազեց երեխաների մոտ, նրանց ցույց տալու սպիտակ թիթեղյա տուփը, որ շտեսած նորութուն էր այդ քարափնների վրա:

Կինը նստել էր օջախի առաջ, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին: Նա խառնում էր կրակը, աթարներն իրար մոտ քաշում և երբ ծուխն ամպի պես բարձրանում էր ու դուրս գալիս վրանի եղեգնյա պատերի արանքով, կինը, աչքերը մուխից պահելու համար, ձեռքը բռնում էր ճակատին:

Ճետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թվում էր քրմուհի՝ հոտանու առաջ ծխի շարժումները գուշակող:

Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի՝ քայլել, չի՝ նստել մխացող աթարի առաջ: Առավոտյան ծովը բրոնզե հալոցքի պես տարուբեր էր լինում և լիզում ափերի կրաքարերը: Մովափին սև թավիշե գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում: Իսկ ինքը ջարդում էր ձեռքի շոր ճյուղը, մանրիկ փշուրներ անում, և երբ ալիքները կաթիլներ էին ցողում նրանց ոտքերին ու հոտ վազում, ալիքներն իրենց հետ տանում էին շոր ճյուղերի փշուրները: Այն կինը ծովափին խոստումի բառեր ասաց, աշխարհը թվաց լայնարձակ մի ծով և սիրտը ձուլվեց ծովի հետ:

Հետո ուրիշ օրեր եկան: Այնքան պատահական եղավ ճամփաբաժանը և այնպես պարզ: Մտքի մեջ մնացին մի զույգ մանիշակագույն աչքեր, գորշ գույնի վերարկու և հովանոցի ծայրը, որով կինը ավազի վրա խոստումներ էր գրում և ավերում:

Թեյամանի մեջ ջուրը եռաց, կափարիչը ձայն հանեց: Կինը կողովից հանեց պնակները և ծաղկավոր բաժակները շարեց սփռոցի վրա: Երբ նա կռացավ սփռոցի վրա, թիկունքից ծամը թեքվեց, կախվեց ուսն ի վար: Մովափի կինը կարճ խուզած մազեր ուներ և սպիտակ պարանոց, որի բարակ մորթու տակ երևում էին կապույտ եղակները: Տղան դատարկ տուփը ձեռքին ներս վազեց: Վրանի դուխից մի խումբ մանուկներ զարմանքով նայում էին խորի վրա նստած հյուրերին: Որքան մեծ եղավ տղայի ուրախութունը, երբ նա ստացավ երկրորդ տուփը: Այս անգամ նա դուրս չվազեց, այլ նստեց խորի վրա, մայրը նրա համար ևս թեյ լցրեց, իսկ Ֆետրե գլխարկով մարդը շաքարի մի մեծ կտոր գցեց տղայի բաժակը:

Տղան զարմացավ և երբ շաքարից պղպշակներ բարձրացան թեյի երեսը, նա մատը կոխեց բաժակի մեջ՝ շաքարը բերանը տանելու: Թեկով

տաք թեյը վառեց մատը, բայց ժպտուն չհանեց: Այնքան համեղ էր կիսահալ շաքարը: Հնագետը քթի տակ ծիծաղեց, ինչ-որ բան հիշեց մարդու նախնական օրերից: Կինը նորից ջուր լցրեց թեյամանի մեջ և ուրախ ժպտաց երեխայի շարձման արաքի վրա:

Ճետրե գլխարկով մարդը տեսավ այդ ժպտը, ինչքան ծանոթ էր... Երևի նույն դեմք ունեցող մարդիկ նույն կերպ են ժպտում: Կնոջ վերին շրթունքը աննկատ դողողաց, ժպտից շրթունքները կարմրեցին, որպես արնագույն մեխակի թերթեր, ժպտից աչքերը փայլեցին:

Հանկարծ նա ծոցից հանեց տետրը, թերթեց քարերի և քանդակների նկարներ, թերթեց և քարե արժվի բույնը պարսպի գլխին ու սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին: Մանոթ էին դիմագծերը, միտքն այնքան էր աշխատել նրա վրա տարիներ առաջ: Փակ աչքերով էլ նա տեսնում էր կնոջ պրոֆիլը:

Միայն տղան տեսավ մոր նկարն սպիտակ թղթի վրա: Նրան այնպես թվաց, թե Ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ, ինչպես աղբյուրի վճիտ ջուրը:

Քիչ հետո ձիերը վրանի առաջ էին: Երրորդ ձիավորը ձիերի գլխին հագնում էր սանձերը, պնդացնում թամբի կաշվե կապերը: Եվ երբ պայուսակը կապեց թամբին, մոտեցավ մնաս բարով ասելու օջախի մոտ նստած կնոջը: Կինը տեղից վեր կացավ, գլխի շորն արագ իջեցրեց ճակատին և մատների ծայրով բռնեց երրորդ ձիավորի մեկնած ձեռքը: Մյուսներն էլ հետևեցին նրա օրինակին: Այս անգամ կինը ձեռքը կրծքին սեղմեց և խոնարհեց գլուխը: Ճետրե գլխարկով մարդը տղային տվեց արծաթ դրամ ու շոյեց նրա մազերը:

Ձիերն իջնում էին Կաքավաբեղդի քարափով դեպի Բասուտա ձորը: Ձիերի սանձից բռնած իջնում էին երեք հոգի, որոնցից ամեն մեկը մշտքերի մեջ հյուսում էր իր նախը: Ծանապարհի երկու եզրին բուսել էին ալպիական մանուշակներ: Ճետրե գլխարկով մարդը կռացավ, պոկեց մեկը և դրեց տետրի այն թերթի արանքը, որի վրա նկարված էր հոտանալիս և այն բարակիրան կինը:

Ձիերի սմբակի տակից քարեր էին թռչում, քարերն աղմուկով գլորվում էին ձորը: Մով կար նրա մտքում և այդ ծովը ափ էր շարժում մերթ սև թավիշե գլխարկով մի գլուխ, մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ, թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ, կիսավեր պարիսպներ, նրանց հիմքի մոտ ալպիական ծիրանագույն մանուշակներ...

Իրիկնացալ: Երկնային ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ, նույն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ, ամբողջ գտնվում պողպատե փայլուն մանգաղը: Բեղարած էր մարդը, ամբողջ օրը հնձել էր կարճ ցողունով կորեկ և մեջքը ցավում էր: Գրա համար էլ նա դանդաղ էր բարձրանում, մահակը դեմ տալիս քարին, երբեմն կանգնում շունչ առնելու: Երբ կանգ էր առնում, նրա կորացած ծնկները դողում էին:

Հնձվորը ցերեկվա մարդն էր, որին երրորդ ձիավորը պատմել էր բերդի գանձերի մասին: Իր արտից նա տեսավ ձիավորներին, և նրան թվաց, թե ձիու թամբին կապած պայուսակներում հենց այն գանձերն են, որ հարյուր տարիներ մնացել են քարի տակ, որի վրա ինքը շարունակ նստել է, երբ բերդի ավերակներում պահում էր այժ ու ոչխար: Այդ միտքն էր նրան զայրացրել, թե հոգնությունը,— մարդը մոռալ էր, որպես իրիկնացա՛հին անտառում որսի դուրս եկող սոված արջը:

Նա հասավ առաջին վրանին, ոտքով զարկեց շանը, որ պոչը շարժելով առաջ էր վազել տիրոջը դիմավորելու, ապա գոտուց մանգաղը հանեց, շարժեց մի անկյուն, փայտը դրեց օջախի մոտ և լուռ նստեց խսիրի վրա:

Օջախը մխում էր: Թեյամանում ետում էր տաք թեյը: Մալքատեղում բարձի վրա երկու կտոր շաքար կար: Հնձվորը դեռ տրեխները չէր հանել և գուլպաներից թափ չէր տվել կորեկի փնջերը, երբ սուրմանների զննողով, երկար զգեստի ծալքերն իրար քսելով, ներս մտավ նրա կինը, կնոջ փեշից կախված տղան, կոնսերվի երկու դատարկ տուփ ձեռքին:

Տղան դեպի հայրը վազեց, տուփերը ցույց տալու: Հայրը հասկացավ, որ ձիավորները նստել են իր խսիրի վրա: Տղան ցույց տվեց և արծաթ դրամը, որ տվել էր նրան մի բարի քեռի:

Հայրը ոտքով դեն հրեց որդուն էլ, դատարկ տուփերն էլ: Գլորվեցին տուփերը, աղան էլ զլորվեց: Ապա տղան ցատկեց և վազեց տուփերի հետևից: Երկու տուփը ձեռքին նա փաթաթվեց մոր փեշերին և սկսեց լալ: Հայրը ձայնը մեղմացրեց, տղային կանչեց, խնդրեց նրա արծաթ դրամը: Տղան արցունքների միջից ծպտալով մոտեցավ հորը, դրամը բռն մեկ: Ապա նա պատմեց, թե հյուրի ծոցում կար մի փայլուն իր, մեջը սպիտակ թերթեր: Արծաթ տվող մարդը մոր պատկերը հանեց թերթի վրա և դրեց ծոցը:

Նանդը կայծակի պես փայլատակեց մոռալ հնձվորի սրտում: Աչքերը լախացան, նա գունատվեց: Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը, հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը: Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ուստյուն արեց, նրա մաշուտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին:

Սուրմաները զննեցին, ցնցվեցին կնոջ երկար ծամերը: Ետտանու վրա դրած թեյամանը թեքվեց: Մահակի շարված ծայրը թռավ ծալքի վրա: Կինը աղաղակ շհանեց, այլ ցավից գալարվեց: Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ վրանի դռանը անձայն հեկեկալու:

Տղան դատարկ տուփերը ձեռքին հետևեց նրան և պահվեց մոր փեշի տակ: Մարդը մի քիչ էլ դժգոհեց, ապա կերավ կորեկ հացը և փափախը զլխի տակ, մեկնվեց խսիրի վրա:

Հետո Կաքավաբերդի զլխին լուռթյուն իջավ: Օջախներում հանգավ կրակը, եղավ խավար գիշեր: Գազանների ահից շները կուչ եկան վրանների առաջ: Ոչխարը պտուկեց կանաչի վրա: Խսիրի վրա մեկնվեց և կինը, թաղիքի տակ ծածկելով տղային:

Կաքավաբերդի զլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների վրա և մակաղած ոչխարների բրդի վրա նստեց գիշերային խոնավությունը: Ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա:

Քուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջքների մեջ և նրան ախպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ...

1925—1927

ՍԵՎ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

ՄԻՐԱՆԻ ՓՈՂԸ

Ես թերթում եմ ուղեգրությունների իմ տետրը և նրա էջերի արանքում գտնում եմ սուսամբարի երկու տերև՝ շոր ու գորշ, ինչպես հանգած մոխիր: Կռանում եմ թղթի վրա, ունեզերս լայնանում են սուսամբարի հոտից ու զողալով թերթում եմ տետրը... Հետո պատից վերցնում եմ ծամի նման պիրի մտրակը: Ես շորշափում եմ մտրակը, և Ցոլակը խելոք աչքերով նայում է ինձ, նայում է և հանդիմանում: Ինչո՞ւ էիր մտրակում: Մտրակը դառնում է սև օձ, որ զարկում էր ձիու ողորկ մարմնին:

Ես նորից եմ թերթում իմ տետրը, և սրտիս վրա իջնում է անդորր: Ցոլակը կայտառ վրնջում է, խաղացնում ականջները: Անընդհատ բարձրանում ենք, անցնում առապար ու քարափ: Քրտնած ձին մուռթը կոխում է ջրերի սպիտակ փրփուրի մեջ և սանձերի երկաթների միջով ծծում սառցահամ ջուրը: Ինչքան վեր ենք բարձրանում, այնքան մոտ է արևը, և արևը խանձում է դեմք, զգեստ, ձեռք,— այնքան սառն են ջրերը, օրջ ջինջ և լսելի է ծաղիկների մեջ մոլորված մեղվի հանդարտ բզզոցը:

Ցոլակը վրնջում է և արագացնում քայլերը: Ծանապարհը լայնանում է: Ահա մի արտ՝ քարե պատով: Նոսր հասկերը սվսվում են լեռան հովից: Գյուղը մոտ է, ձին փոռացնում է ունեզերը և խայտալով կրծոմ սանձը:

Ծանապարհից վերև, բլուրի լանջին մեկը ջրում է մուգ-կանաչ առվույտը: Ես լսում եմ, թե ինչպես առվի ավազի մեջ զրնգում է նրա ծանր բահը: Իսկ երբ բարձրացնում է բահը, արևը լուսավորում է բահը և թվում է, թե ջրվորի ուսին բռնկված շահ է:

— Սա՞ է Ձյանբերդի ճանապարհը...

Ջրվորը բացականում է ոչ «հա», ոչ «հո»: Հարցս կրկնում եմ: Մարդը բահը խրում է առվի ավազի մեջ և գալիս է դեպի ինձ: Ինչքան մոտենում է ջրվորը, այնքան ավելի բարձրահասակ է երևում: Ես նայում եմ նրա բաց կրծքին. թվում է, թե նրա ձայնը պիտի խրոխտ թնդա: Ջրվորը լայն ու ծանր ձեռքը մեկնում է ինձ, ասում է «մեր աչքուն» ու ձեռքը տանում դեպի ճակատը:

Ամենևին էլ խրոխտ չի նրա ձայնը, այլ բարակ ու քաղցր: Մերունի է. սպիտակ են ոչ միայն բեղերը և ունքերը, այլև կրծքի մազերը, որ հիշեցնում են խճճված մացառուտ:

Հարցս կրկնում եմ:

— Հա,—ասում է,—մըր գուղն ի... Իդա դար լե շրջվի...—ու գըրպանից հանում է ծխախոտի քիսեն: Առաջարկում եմ գլանակ: Նա ծպտում է, կարծես ուզում է ասել, որ բարակ գլանակը նուրբ է նրա համար, սակայն վերցնում է և դնում ականջի հետևը: Ապա ոլորում է մատի շափ հաստ «ծգարան»:

— Ցոնջան քո՞նն է:

Նա կուշտ ծծում է ծխախոտը, կուրծքն ուռչում է, շոր կաշվի նման ճոռում են թոքերը: Թունեզերից և բերանից ծխի քուլաները բաց թողնելով, գլխով է անում:

— Վարկայության նախակահ բերեց հերու: Անուշ բուս է: Ինձ կուտ (ցորեն) լե մեր է,—գլխով նշան է անում քարոտ սարալանջի կողմը, որտեղ կանաչին են տալիս ցորենի մանր արտերը: Ես դժվարանում եմ որոշել նրա արտը, բայց գիտեմ, որ ջրվորը հեռվից ճանաչում է նույնիսկ իր արտի կարմիր պուտերը:

— Մըր բախտ կապած ենք գգալ ջրի... Մըր հողեր լե ցըրվուկ: Ե՛հ, հացի տեղ արուն շատ կերանք: Հիմա որ սերմ թալինք, սերմ վերունք, էլի գոհություն:

Նրա ուսից կախված է հարդի տոպրակը: Տարվա այս ժամանակ նրան ինչի՞ է պետք հարդը և ինչո՞ւ է տոպրակը ուսից կախ:

Նա ինձ պատասխանում է, որ ինքը գյուղի ջրբաժանն է և գիշերները առունների ջրերն ինքն է բաշխում մանր և ցրված հողակտորների վրա:

— Իսկ հա՞րդը:

Հարդը ջրաշափն է: Ջրբաժանը ոսկեգույն հարդը շաղ է տալիս առունների ջրերի վրա և որոշում հոսանքի արագությունը, ջրի ծավալը:

— Մուրո՞ո... Մո՞ւ...րո՞ո,—վերևից լսվում է մի զիլ ձայն,—չուր խլա՞վ:

— Տգա լաո՛... —

Մերունին առավ բահը ու վազեց վերև, երկի շրթ բանդը:

Հետո ես է ծուլակը շրջեցինք «գարը», իշանք ձորակը, նորից բարձրացանք, և սարահարթի վրա երևաց լեռնային գյուղը՝ առանց ծառերի, առանց այգիների, օղակված կանաչ մարգագետիններով և բաց առուններով, որոնց ջրերը արևամուտին վարարում են, կես-գիշերին աղմկում խոր ձորերում, իսկ երբ արևը զարթնում է, լուռ են՝ լեռան սառույցներից իջնող այդ առունները:

* * *

Սպիտակ եզան հետ մտանք բակը: Եզը գնաց դեպի միակ դուռը, որի ճակատին փակցրած էր աղբ, աղբի վրա՝ ձվերի ներկած կճեպներից խաշ: Եզը միակ դռնից ներս մտավ, և մենք՝ նրա հետևից: Գնացինք մութ միջանցքով, ապա մի դուռ բացվեց դեպի ձախ, մթնի մեջ կորավ սպիտակ եզը, նրա հետևից իմ հոգնած ձին, որ լեռների մաքուր օդից հետո անախորժությամբ էր շնչում գոմի կծու հոտը:

Հետո միջանցքի աջ կողմը նույն հանգով երգեց մի այլ դուռ և բոցերի լույսով, մութի մեջ երևաց ոսկե ծամիկներով մի աղջիկ, Ազնոն, դուռը իմ վաղեմի ծանոթի, որի տանը գիշերելու էինք ես և իմ ձին:

Ազնո, Ազնիվ... Երբ հիմա թերթում եմ իմ ուղեգրությունների տետրը, որի էջերի արանքում գտնում եմ շորացած ծաղիկներ և սուսամբարի տերևներ, ես երկա՛ր, երկար նայում եմ դաշտային թիթեռնիկի թևին, որի ոսկեփառին փայլում է, ինչպես այն օրը, երբ մարգագետնի վրա թիթեռը ծծում էր ջրախոտի ծաղիկները: Թիթեռնիկի թևի վրա ես կարդում եմ՝ «Ազնո»... Եվ մտածում եմ, որ Ազնոն հիմա դպրոց է գնում և կտուրների վրա ջինջ ձայնով այլևս չի երգում:

Քանց լուսին ամպի տակով,
Գու շուր կերթաս շուխտ գորակով:

Եվ այլևս չի պատասխանի այնպես, ինչպես այն օրը, երբ միասին նստել էինք իրենց բարձր կտուրին, և լեռան միամիտ աղջիկը պատասխանում էր իմ հարցերին:

— Ազնո, կինո տեսե՞լ ես:

— Հաբա օրի չըմ տեսե. շուր մը զարկեր է պատ, կցուցե ձի, աղջիկ, օրիորդ, կարտոֆել:

— Կարմիր բանակ լսե՞լ ես:

— Կարմիր բանակ շուր է, քցեր են դրոշակի վրա:

— Ազնո, աստված կա՞:

— Հաբա: Աստված էանաչ ճնճղուկ է:

— Հապա երկի՞նքը:

— Երկինքը գինջիլով կապուկ է եզան կոտորին:

— Ազնո, որ մեծանաս ի՞նչ ես դառնալու:

— Կեղնիմ օրիորդ:

Ազնո, Ազնիվ...

Բոց էր բարձրանում խոր թանրից, գվվում էր օդը սնդուի խողովակների մեջ և թվում էր, թե գվվում էր գետինը բոցերի ուժից, մխի սև քուլաներից, որ հրեղեն սյունի հետ դալարվելով՝ ձգվում էր մինչև լեռնային երկնքի սառն աստղերը:

Իմ վաղեմի ծանոթը կրակի մոտ պատմում էր ջրի և ջրածանության, քարոտ հողերի և հանդերի մասին:

— Ինչ եղեր է շեղեր է, գացեր է: Եղանք գոմշու կոտոր, կպանք զիրար: Մե թոն եկավ, արուն առու ելավ: Մըր փողպատ ազատինք Մոտկանա երկրեն, մըր Տալվորիկի հուղերեն: Ախ ու փախ, գիշեր ցերեկ չփլախ, սոված, ուռթ: Լենինի լույս մեզ ազատություն տվեց: Մենակ մըր սահման նեղ է, շնորհիվ սահմանի նեղության, ժողովուրդ կնեղվի: Մըր հողերի սահման զըռ քար է: Ժողովուրդի նեղություն քարից է: Մըր հոգին լե կառավարության, մըր ջան լե...

Նա հույս ուներ, որ Չյանբերդի քար ու քարափ կանաչով կպատեն, լեռան գագաթին, սառույցների տակ կկառուցեն ջրամբարներ և լեռնային լճակներ, և այլևս գիշերները ձորերով անպտուղ չեն հոսի սառույցների ջրերը:

Նա պատմում էր, որ գյուղի երկու թայֆաները՝ «բարակ» և «հաստ» թայֆան հետգհետ հաշտվում են, առաջանում է նոր սերունդ, որն իրեն չի համարում ո՛չ Մոտկանա երկրից և ո՛չ Տալվորիկից, այլ Չյանբերդից: Եվ որ ինքը և իրեն հասակակից մարդիկ դեռ հիշում են իրենց ձորերը և դուրանը, որտեղ խոտը բարձրանում էր մինչև կովի կուրծք, այնպես, որ կովերը հորթ էին բերում խոտերի միջին, և կովի հետքով գտնում էին հորթին՝ խոտերի մեջ նստած:

— Երեկ ամպ էր, էսօր՝ պարզ արև...

Իմ ծանոթը պատմեց այնպիսի բաներ լեռների մարդկանց մասին, որ այժմ էլ, երբ թերթում եմ իմ տետրը, սիրտս լցվում է կսկիծով և դառնությամբ: Նրա սերունդը տեսել է և՛ հուր, և՛ պատերազմ, և՛ ջարդ,

և՛ գաղթ: Երբ նրանց թշոււմ էին հարավ, խփում էին և՛ հարավից, և՛ հյուսիսից: Հրդեհվում էր մի անտառ, և նրանք եղնիկների խմբերի նման, այրվող ծառերի միջից, եղջյուրներով բացում էին իրենց ճանապարհը: Նրանց թշոււմ են արևմուտք, ապա ձիերի գլուխը դարձրել են հյուսիս և բնակութուն հաստատել այս բարձր լեռան վրա:

Իմ ծանոթը պատմում էր, որ Չյանբերդում ես կտեսնեմ շատ խաչեր՝ դռան ճակատին, եզների եղջյուրներից կախ, կավե կարասների վրա, թոնրի շրթունքներին, նույնիսկ այն խրովիլակների կրծքին, որոնց ցցում են արտերում՝ ճնճողուկների դեմ: Որ Չյանբերդում ապրում է մունջ Սևդոն, որը հագնում է մազեղեն կոշիկ՝ «խարուկ», ինչպես Մոսկանա երկրում, որն «իդ բերնին նալ է գարկել» և շի խոսում նրանց հետ, որոնք Մոսկանից չեն:

Չյանբերդում միայն մի մարդ կա, որի առաջ խոնարհվում է համառ Սևդոն: Այդ մարդը Հազրոն է, ինչպես անվանեց իմ ծանոթը՝ լեռան գյուղերի ամենալավ մարդը:

Բայց մեր զրույցը խանգարվեց, որովհետև լավեց ոչխարների մայունի աղմուկը: Ազնոն տեղից թռավ, դուրս եկան և մյուսները, նրանց հետ՝ ևս:

Լեռներից գյուղի վրա իջնում էին այծերի ու ոչխարների հոտերը: Ի՛նչ աշխույժ աղմուկ էր, ինչպիսի՛ զվարթութուն, կանչեր, շան կազկանձ, պղնձե կովկիթների զրնգոց, բառաշ, մայուն և հովիվների սուլոցներ: Կարծես ավար էին բերում գյուղ, և կին, աղջիկ, երեխա ու տղամարդ փռողներից դեպի բակերն էին թշոււմ այծ, ոչխար, հորթ:

Իմ ծանոթի բարձր կտուրից ես նայում էի Չյանբերդին, Արարատյան դաշտին, որտեղ կանաչներով շրջապատված գյուղերը հետզհետե սուզվում էին երեկոյան մութի մեջ, և ավելի պայծառանում էին քաղաքների կրակները:

Երբ հիշում եմ այդ երեկոն, քաղաքների կրակները և դաշտի վրա իջնող գիշերը, Չյանբերդի ներքևի կտուրի վրա տեսնում եմ մի մարդու, թիկունքը դեպի ինձ, դեպի լեռան գագաթը, երեսը դաշտի կողմը, և լսում եմ լեռան գյուղերի ամենալավ մարդու նվագը:

* * *

Նրա հայրենիքը եղել է քաղոտ Սասունը, այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր և լեռների գագաթները՝ ապառաժներ: Տաք կիրճերում, լեռնային վտակների ափերին,

կանաչում էր վայրի խաղողը, և նրա որթը մագլցում էր պղնձագույն ժայռերի վրա: Աճում էր և վայրի հոնը, երբեմն թուզը: Իսկ բարձրերում որտեղ քարափների վրա ցրված էին նրանց աղքատ հյուղակները, ցանում էին կորեկ ու վաղահաս ցորեն: Երբ հասնում էր կորեկը, ձորերից բարձրանում էին գազանները: Մարդիկ արտերի եզրին խարույկ էին վառում, որպեսզի արջերը շարորեն կորեկը:

Նրա մանկութունը խաղացել է այդ քարափների վրա: Ինչպես ֆավն, այդ պատանին փող է նվագել քարանձավների ստվերում, և նրա պարզ երգերին արձագանքել են ձորերը: Երբեմն կարկուտն է ջարդել նրան, երբեմն քարերն են քերծել դեմքը, ցուրտը և արևը խանձել են նրա կուրծքը, ինչպես լեռան լանջը: Նա կովել է գազանների հետ և նրանց հետ, որոնք հրացանների կրակոցների աղմուկով թշոււմ էին նախիրը, ոչխարը, առևանգում կին և երեխա:

Թվում էր, թե մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, ինչպես իր պապերը, կցանի կորեկ, աշնանը կիջնի ձորերը, կհավաքի միրգ և ցախ, ձմեռը կլիս հին զրույցներ՝ Չենով Օհանի, Մարա Մելիքի և Թլոր Մանուկի մասին:

Բայց պայթեց պատերազմը, եղավ զորաժողով, բռնութուններ, հրդեհեցին դաշտի գյուղերը, հրդեհաձիգները ձորերով բարձրացան մինչև լեռների գագաթները, մինչև նրանց խեղճ խրճիթները, հրացաններ որոտացին, և շողացին սրեր, ամպերի փոխարեն քարափների վրա նստեց այրվող գյուղերի մուխը: Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:

Հազրոն առավ իր կնոջն ու աղջկան և ծերպերով, քարայծի արահետներով անցավ լեռից-լեռ, քարանձավից-քարանձավ, կերավ ընդեղեն, և՛ ալուճ, և՛ մասուր,—ապա հոգնած, ահր աչքերի մեջ գնաց հարավի կողմը, գնաց մերթ իբրև ջուրդ հովիվ, մերթ իբրև քաղցած գայլ և հասավ անծանոթ մի աշխարհ, որտեղ ոչ լեռներ կային, ոչ լեռնային լույս աղբյուրներ: Շոգ հարթավայր էր, պղտոր դեղին գետերով, որոնց ջրերի մեջ չէին երևում այն կապույտ առվակները, որ իջնում էին իրենց լեռների սառույցներից:

Նա հանեց ծիրանի փողը, այն կարմրավուն սրինգը, որի վրա նվագել էր կապույտ լեռների երգերը, և նրա մատները խաղացին ծիրանի փողի վրա: Հազրոն շոգից խանձված շրթունքներով գրկեց փողի բերանը, ինչպես լեռնային գյուղերում ջուր են խմում կավե դորակներից: Զրի նման զլզլում էր նրա նվագը, լեռների երգը՝ շոգ հարթավայրում:

Լաց լացեց կինը, փոքրիկ աղջիկը քնեց մոր ծնկների վրա, լացեց

և Հազրոն, հետո թեթևութուն իշավ սրտի վրա, ինչպես կապույտ ամպը նստում էր Մարութա բարձր սարին: Ապա սրբեց արցունքը, ուսն առավ աղջկան, առաջ՝ կնոջն և ետ նայեց: Փռշի էր նստել հեռվի լեռների վրա, և շէին երևում իրենց բարձր լեռները:

Հազրոն ասավ կնոջը.

— էսօր դուման է մեր լեռան վրա, վաղը նորից արև կժապի: Բռնեցին մի ճանապարհ, մուրրվեցին հազար ճանապարհներում, հետո, երբ արդեն սպիտակ մազեր կային նրա գլխին, Հազրոյի ջուրը ելավ այս բարձր լեռը:



Հանդարտվում էր գյուղի երեկոյան աղմուկը:

Լեռան սպիտակ սառույցները լույս էին տալիս: Մարգագետինները ծխում էին դադձի բույր: Բարակ լուսինը դողդողում էր, և նրա լույսի տակ եզների շողիքը օրորվում էր արծաթյա օղակների նման: Դադրած եզները ննջում էին և լույսի տակ նրանք նման էին մարմարե արձանների: Ներքևի կտուրի վրա հավաքվել են գյուղի հոգնած մշակները: Երեկոյան մութի մեջ նրանք ավելի հաղթամարմին են, ինչպես գեր եզները: Ես բարձրանում եմ կտուրը:

Այնտեղ չորս փոքրիկ աղջիկներ կան և մի տղա: Մի բարձրահասակ մարդ զբաղվում է նրանց հետ: Աղջիկները հարձակվում են փոքրիկ տղայի վրա, իսկ տղան հրում է նրանց, ապա իրար են խառնվում ու դուրսում կտուրի վրա: Բարձրահասակ մարդը քրքջում է, մյուսների խոսակցությունը դադարում է, և լեռնեցու բոց աչքերով նրանք նայում են երեխաների կովին: Ցավից ճշում է մի աղջիկ և վազում կտուրի վրա նստածներից մեկի, ըստ երևույթին հոր, գիրկը: Հայրը ծիծաղում է.

— Հաբա աղջիկ, գո՞րծ տխո՞ք է:

Բարձրահասակ մարդը բաժանում է մյուսներին, գրկում է տղային, որ կորյունի նման կովում էր հասակակից երեք աղջիկների հետ:

— Բարեն դուրբան, հերի՞ք,—ասում է մարդը: Իսկ տղան նրա գրկի մեջ թաքտում է, կարծես հիմա պիտի թանի շիվար աղջիկների վրա:

Մեկը աղջիկներին պատվիրում է տուն գնալ, և նրանք փայտե սանդուղքով իջնում են ցած:

Տիրում է լուսություն: Միայն բարձրահասակ մարդը զվարթ քրքրյալ ճանգատացնում է տղային.

— Բարեն դուրբան, չէ՞ աղջիկ լե մեղք է...

— Մինչև էնի չզարկեր, ես լե չզարկի,—բողոքում է տղան:

— Հազրո,—կանչում է նստած սավերներից մեկը,—չալե՞ս:

Ուրեմն այս բարձրահասակ մարդն է Հազրոն, որի մասին պատմել էր ինձ իմ վաղեմի ծանոթը:

— Խնամին, խնամին...

— Յար խուշտա...

Տղան արագ իջնում է նրա գրկից և վազում ներքև: Հազրոն մոտենում է ինձ և մեկնում ձեռքը:

— Բարի տեսանք:

Նա ունի լայն ճակատ, որ լուսնի տակ պղնձագույն է երևում, ճերմակ մազեր և կեռ առժվաքիթ: Նրա աչքերը փայլում են երիտասարդական ավյունով:

— Կխաղա՞ք,—նայում է մյուսներին:

Ես երբեք, երբեք չեմ մոռանա այդ լուսնյակ գիշերը բարձր լեռան մի գյուղում, Հազրոյի տան կտուրը, նրա նվազը և հսկաների հին պարը:

Տղան տնից բերեց սրինգը, այն ծիրանի փողը, որ քիչ ավելի երկար էր մեր հովիվների սովորական սրինգից: Նա կանգնեց կտուրի ծայրին, փողի բերանը դարձրեց դեպի գյուղի կողմը, և հետզհետե, ինչպես լուսաբացը լեռներում, զարթնեց «Յար խուշտան»: Նա սկսեց դանդաղ և մեղմ, հետո ձայները զորացան, արագացավ չափը: Հետո վայրենի կանչով վեր թռավ շրբածանը, կանգնեց կտուրի մեջտեղ, նրան հետևեց երկրորդը, երրորդը և շուտով նրանց երկու շարքը, ինչպես երկու վիթխարի ապառաժ, զարնվեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով և կրծքով: Նվազն ավելի թնդեց. դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրա արշավում էին բանակներ: Նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից:

Հարևան կտուրների վրայից, տների բակերից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը: Երբ մի շարքը մյուսին ետ էր մղում ձեռքերի հարվածով, կարծր կրծքերի զարկով, նահանջողները արշավում էին նոր թափով, որպեսզի վրիժառու լինեն ամոթի և պարտություն համար:

Հազրոն նվազում էր իր ծիրանի փողը, նվազում էր նոր զվարթությանը այն երգը, որ իբրև երիտասարդ ֆավն նվազել էր իր հայրենի բարանձավներում, այնտեղ, ուր ամպերը հյուղակներից ցածր են լողում և երբ զարկում է կայծակի լախտը, մի վայրկյան բռնկվում են ձորերը:

* * *

Նրանք գնացին:

Կտուրի վրա մնացինք Հազրոն և ես: Տուն գնաց և այն փոքրիկ տղան, նրա թոռը: Լուսնի տակ ես գիտում էի նրա կարմրավուն փողը: Նա ծանր էր և կարծես ձուլված էր ծանր մետաղից: Ես բռնում էի այդ փողը գիշերային զովի դիմաց, և փողը մեղմ քամուց մետաղի ձայն էր հանում: Իսկ Հազրոն պատմում էր, որ իր կյանքում ամենածանր հարվածը եղել է կնոջ մահը: Աղջիկն ամուսնացել է դաշտի գյուղում: Պապի մոտ հաճախ է լինում այն փոքրիկ տղան, նրա առաջին թոռը:

Աստղերի և լուսնի տակ փովել էր Արարատյան դաշտը: Մասիսների ձյունոտ գագաթների սպիտակ ցուլը լույս էր գցում մինչև երկնքի խորքը: Հեռվում, ուտերի քարավանի նման ձգվել էին Հայկական պարի լեռները:

— Կտեսնե՞ս էն գուղ, կրակների ձախ կողմ:

Հովվական կրակների ձախ կողմը, դաշտի վրա երևում էր մի սև կետ:

— Հոնի գիմ նշանածն ա թաղուկ:

Երբեմն նա իջնում է լեռան գյուղից, վերցնում է շոր ցախ և կնոջ գերեզմանի գլխավերևը կրակ վառում: Նա նստում է այնքան, մինչև հանգչում է կրակը, հետո տխուր նվազում է ծիրանի փողը և այն երգերը, որ նվագում էր իրենց հետո երկրում, որտեղ ինքը հովիվ էր, կինը՝ գյուղական աղջիկ: Հետո թեթև հոգով գնում է աղջկա տունը, լսում է նրա տան աղմուկը, խաղում է թոռների հետ և մենակ ճանապարհ ընկնում գեպի լեռը, դեպի լեռան գյուղի իր պարզ խրճիթը:

— Հազրո, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում:

— Մեր քարափների վրա՞:— Եվ լուում է:

— Հեյ վա՛խ ջահելություն, թոռա...

Եվ նորից վերցնում է փողը:

Նվագում է, այս անգամ ոչ թե լեռնականների կորույթի երգը, որից բորբոքվում է արյունը,— այլ հովվական պարզ մի երգ: Կա և՛ թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և՛ ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարտոի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:

— Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու:

Եստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն զիմ շորս բուր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ զուլալ ախպրտոնց պես գրկեն զիրար, շեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն: Փշեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բարձրանա երգիկներեն, խմեմ մըր լուս աղբբրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրեն, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ...
— Հազրո, իսկ ո՞ւմ կտաս քո ծիրանի փողը:
— Զիմ փող կիտամ իմ քաջարծիվ թոռնիկին:

* * *

Փողոցում խաղաղություն է:

Քնել են հոգնած մարդիկ, և փողոցի լապտերների լույսի տակ օրորվում են քաղաքի տները, նրանց սև պատուհանները: Լեռներից զով է իջնում քաղաքի վրա, և գիշերային զովը բերում է սուսամբարի բույրը, լեռների հստակ օդը և մաքուր ջրերի ձայնը:

Ես գոցում եմ ուղեորության իմ տետրը, նրա մեջ սուսամբարի երկու տերև՝ գորշ ու շոր, ինչպես հանգած մոխիր: Լեռների վրա վրնջում է իմ ձին՝ ինչպես սանձարձակ ուրախությունը, ինչպես սպիտակ ջրվեժը, որ իջնում է բարձրերից, թափով կտրում դաշտը, խառնվում մի պղտոր գետի և ուրիշ ջրերի հետ գնում դեպի անեզր ծովը:

Չյանբերդ... Չյանբերդ...

Գու դառնում ես անպարտելի ամրոց, քո բարձր լեռները զարթնել են, և քո լանջերին հնչում են հաղթության երգերը:

Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի և նոր խնդությամբ հնչեցնում է մեր արդար երգերը:

1981

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՅ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Իրիկնապահին՝ Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարբասի նիշն էր, որի ներքևի մասը, գետնից մետրաչափ բարձր, կոկիկ տաշած էր, քարե աթոռի պես սարքած:

Կեստեր իր տեղը, կկոթներ հոնի կարմիր մահակին, գլուխը մի կողմի վրա կթեքեր, և եթե զրույցը կեր շունենար, ինքն իրեն կխոսեր

ու թքի տակ հծպտար: Երբ նա ծպտում էր, նրա կապույտ աչքերը փոքրանում էին, և աչքերի տակ շարժում էին բարակ հնճիւններ:

Գարբասի մոտ իրիկնապահին նստելը պատիւ հին սովորութիւնն էր: Կովորը արոտից էին տուն գալիս, վարից՝ հոգնած ու դանդաղ քայլերով եղննոր, պառավ ատամների տակ ծամելով ճամփի եզրից պոկած խոտը: Ու նստած տեղից պապս մեզնից մեկին մի բան էր պատվիրում.

— Էգուց Ալա եզր վարի շտանեք,— կամ թե՛ մի տեսեք էն քուռակն ինչի՞ է կաղում:

Հետո պիտի վեր կենար, խոտը հոնի փայտով հավաքեր և մոտեցնէր Ալա եզին կամ շոյեր քուռակի հիվանդ ոտքը:

Մութն ընկնելուց ժամի զանգերը ծննդում էին: Առաջին ծննդոցին պապս փափախը կհաներ, կխաշակնքեր, թեկուզ այդ պահին կանգնած լինէր Ալա եզան մոտ: Եվ խաշակնքելիս հոնի փայտը ձեռքից բաց չէր թողնում:

Մենք բոլորս էլ գիտեինք, որ խաշակնքելուց հետո ձայն է տալու.

— Նազու աղչիկ, դոնեք բաց արա...

Նազու աղչիկը տատս էր, ծերութիւնից մի քիչ կառցած, ախանի մեկը խուլ: Եվ Նազու աղչիկը դոնակը բաց էր անում, դոնակը ճոռած էր, ինչպէս սայլի անիվը սառույցի վրա:

Դռան շեմքին նստելն ունեւր և մի ուրիշ նպատակ: Գլուխի մեծ փոզոցը մեր տան առաջուկն էր անցնում: Ուրիշ գլուխից եկողը մեր անկողնով պիտի գնար: Հանդից տուն դարձողները՝ որք մի խորձ խոտ շապակին, որք՝ լուծի կապերն ուսին ու բեզարած եզներն առաջն արած, որք էշի վրա, ոտները գեանին քսելով,— մի խոտքով, իրիկնապահին ով անցնէր փողոցով, պապիս պիտի ասեր «բարի իրիկուն»: Պատը էլ նքանց պիտի հարցնէր, թե վարը պրծա՞ն, կամ թե այսինչ սարի խոտն ինչպէս է: Մի անձանով մարդ եթէ անցնէր փողոցով, պապս մեզանից մեկն ու մեկին շտապ կասեր.

— Հենց էր զարիք լինէր... Շուտ հասի կանչի, թող մեր տունը գա...

Վազում էինք և մինչև լիմանայինք, թե ո՞ւմ հլուրն է, նրան բաց չէինք թողնում:

— Պապի, Էն զարիքը Իսաչանենց դոնաղն էր, նրանց տունը գնաց: Եվ պապս պիտի միտք անէր, թե նորեկը Իսաչանենց որի՞ հլուրն է, մի՞ք է եզել նրանց տանը, ի՞նչ ծանաթութիւն կար նրանց միջև: Թի կասկածեր, Էնոր պիտի հարցնէր.

— Նազու աղչիկ, հերո՞ւ էր, թե մեկը տարին էն որ Իսաչանենց Ազամի տղան սարուչենցի բրուտին կանչեց:

էն զարիքը նմանեցնում էր բրուտին:

Տատս եթէ խուլ ախանջն էր դարձրել նրա կողմը, պիտի գլուխը թեքեր, մի անգամ «հը» ասեր և ապա հայտնեք իր կարծիքը սարուչենցի բրուտի մասին:

Մնասունները տեղավորելուց հետո, եթէ ամառվա գիշեր էր, պապս տնքալով բարձրանում էր թախտը, արխալուղի կոճակներն արձակում, և ճեճվորի նման գլխին կապում սպիտակ շորը: Հողի գավաթի մեջ սառած պապից մի քանի գգալ ուտելուց հետո թիկնում էր բարձին և ննջում:

Առավոտ ծեղին ամենից կանուխ նա էր վեր կենում: Քաղցր քնի մեջ, մանավանդ երբ լուսաբացին զովք պաղեցնում էր օդը և քունն ազելի տնուշ դարձնում, պապս ձայն էր տալիս մեզ.

— Դե, վերեք, հրեն արևը դուրս եկավ հա՛...

Մենք ազելի էինք նեղս խցկվում վերմակի տակ ու սկսում սուս խամփացնել: Ու մեկ էլ մի ձեռք վերմակի տակ խողաացնում էր մեր կրունկները: Մլոնդ էինք անում, նստում անկողնում և տրորում մեր քնատ աչքերը:

— Դե հա՛ վերեք... Տղամարդն էլ էդքան քնի՞, Հրես ձմեռը էնքան արշաբուն տա՛ր...— ասում էր և հոնի փայտի ծայրով դիպչում մեր մարմնի բաց մասերին և ինքն էլ մեզ հետ ծիծաղում:

— Վերեք, ես ձեր ժամանակ կարգին տղամարդ էի: Հրես ձեր պսակ-վիլու վախտը մոտենում ա հա՛, վերե՛ք...

Մենք այն ժամանակ ութ-տասը տարեկան երեխաներ էինք: Ու պիտի վեր կենայինք, քնաթաթախ աչքերով շոկեինք, թե ով ում տրեխն է հագնում, պիտի կովեինք իրար հետ, թե ո՞վ է եզները տանելու և ո՞վ է գնալու վարի: Բայց ազելուրդ էր մեր խոտքն ու կոխվը, որովհետև պապս արդեն որոշել էր աշխատանքը, իսկ Նազու աղչիկը մեր պաշարի կապոցները կախել էր բակի ցից փայտերից:

Եվ արևածագին սկսվում էր գլուղի ծանր աշխատանքի առօրյան:

Ձմեռն էր լավ: Աշխատանք քիչ կար, տավարը գոմումն էր, խոտն ու զարմանը՝ մարագում: Պապս ոչ նստում էր դարբասի քարին և ոչ էլ պռոկում բակի թախտի վրա: Արև օրերին նրա փոխարեն հավերը, սառած գետինը կոխ տալով, մոտենում էին, վիզները երկարում, թռչում ու շարժվում թախտի վրա, գլուխները ծածկում թեքի տակ:

Պապս քուրսու մոտից չէր հեռանում: Նա սովորութիւն չունէր գլուղի հրապարակը գնալու: Քուրսու մոտ կնստեր, բրդե շալը ուսին կգցեր ու կեճատար, երբեմն ինքն իրեն կծպտար, բարի և անշար մարդու ծպիտով:

սահմանն անցել և գնացել է Իրանի հողը, և իբրև թե նամակ է ուղարկում մեզ, բայց նամակը ճանապարհին բռնում են:

Սոսկալին այդ անհայտությունն էր, որովհետև եթե ստույգ իմացվեր, որ նա այլևս չկա, լաց կլինեին և տարիների հետ կհալվեք մորմաքը: Սակայն մերոնց վիշտն անթեղած կրակ էր, որ մերթ բոցավառվում էր որպես պայծառ հույս, մերթ դառնում մարմրին տվող տկար կայծ:

Պատահում էր, որ ձմռան գիշերներին մեզնից մեկն ու մեկը հանկարծ զարթնում ու գլուխը հանում էր վերմակի տակից: Այդ գիշերներին շատ անգամ տեսնում էինք տատիս ու պապիս քուրսու մոտ նստած: Երբեմն նրանք լուռ ննջում էին: Տատս հանկարծ սթափվում էր, աչքերը տրորում, մտեցնում բրնձով լի ամանը և մատով մեկ-մեկ ընտրում բրինձը: Նրանք իրար հետ խոսում էին, ամեն գիշեր համարյա նույն ձևով, նույն հանգով:

— Բա ի՞նչ ասաց:

— Կտեսնեմ... Ասում էր շատ ա դժվար...

— Հը՞:

— Դժվար ա, դժվար...

— Տվածնիս աչքերն առնի, բա հիմա ի՞նչ է ուզում...

— Ծարներս ինչ, պիտի տանք... Տեսնեք մի խաբար կրեիրի՞:

Ու մենք հասկանում էինք, թե կա մի մարդ, որ եթե մտքում դի, ստույգ լուր կրերի մեր Եզոր քեռուց: Ո՞վ էր այդ մարդը, մենք չգիտեինք: Հայտնի էր, որ երբեմն գզիր Իբիշը մեր տնից յուզ ու պանիր էր տանում նրա համար: Մի անգամ էլ երկու ոչխար տարավ ու հենց գոմի շեմքին երգվեց. որ անպատճառ նրան կասի: Գզիրը ոչխարը քշեց հարևան գյուղը, որտեղ ապրում էր տանուտերը, և որի տանը շատ անգամ լինում էր պրիստավը:

* *
*

Աշնան մի օր պապս, որ առավոտ կանուխ ձի էր նստել ու գնացել հարևան գյուղը, ուրախ-ուրախ ձիուց իջավ, սանձը հանեց ձիու գլխից ու մինչև ձին նեղ կմտներ գոմի դռնով, շտապեց մեզ հայտնելու, որ տանուտերից տեղեկացել է, թե քեռիս ողջ է և գտնվում է այսինչ քաղաքում:

— Անունն ինչ էր էն անտերի... Տես է՛, հուշ եմ ասել: Լեզվիս պտկին էր, ամբողջ ճանապարհին ասում էի, որ մտահան շանեմ:

Նարկավոր էր խնդիր ուղարկել ամենաբարձր տեղը՝ հենց իրեն՝ ուսաց թագավորին, ինչպես ասել էր տանուտերը: Պապիս պատմածը մեզ թվում էր հեքիաթ: Եվ մինչդեռ տատս ուրախությունից շփոթվել ու անվերջ աղ էր լցնում ապուրի մեջ ու խառնում, մենք զարմացած նայում էինք մեր կարճիկ, մազը սպիտակ պապին, որի կապույտ աչքերը պայծառացել և վառվում էին հույսի հրճվանքով:

— Պապի, թագավորը նամակդ որ ստանա, ի՞նչ պիտի անի:

— Կկարդա, հրաման կտա պրիստավին, որ Աղամով Եզորին, որտեղ որ է, սաղ-սալամաթ հասցրեք իրեն հորը:

— Բա ո՞նց է գնալու նամակը:

— Է՛հ, դուք հլա աշխարհքի որտե՛ղն եք... Փոշտ կա, յասաուլ կա, պրիստավ կա: Տանելու են թագավորի ձեռքին դնեն: Քյոխվան ասում էր, որ պիտի լավ թղթի վրա գրել տաս, դալամն էլ ոսկի պիտի լինի, թե չէ ընդունիլ չեն:

Ու մանկական երևակայությամբ պատկերացնում էինք ոսկե գրիչը, որով փայլուն թղթի վրա գրում են պապիս խնդիրքը, բառերը պսպղին են տալիս, նամակը սարերի վրայով և թռչունի թևով հասնում է ոսկե մի տուն, և թռչունը նամակը դնում է թագավորի թախտին:

Այդ իրիկուն տատս ջոկեց պանրի յուղոտ կտորները, լցրեց մի մորթու մեջ և բերանը կապեց: Երբ պապս պատվիրեց պոչը ծաղիկ երինջին գիշերը կուշտ խոտ տալ, մենք հասկացանք, որ նա յուղ ու պանրի հետ քաղաք է տանելու և պոչը ծաղիկ երինջին, որը մեր բուրբի սիրելին էր, մեր աչքի լույսը:

Սակայն ոչ ոք չառարկեց: Առավոտ կանուխ բոլորս ոտքի էինք և մեզնից ամեն մեկն աշխատում էր ավելի շոյել երինջի մեջքը. խոտը մեջ եղած չոր ծաղիկները ջոկել ու տալ նրան:

Պապս ձիու թամբին կապեց յուղն ու պանիրը և երինջին առաջ արավ: Դարբասից դուրս գալուց, երինջը ետ նայեց դեպի կիսաբաց դուռը ու բառաչեց: Գոմից նրան ձայն տվեց նրա պառավ մայրը:

Երբ ձին ու երինջը ծածկվեցին բոստանների պատերի հետևը ու միայն երևում էր պապիս փափախը, որ սև կատվի պես վաղում էր պատի վրայով, — մենք մի քիչ էլ կանգնեցինք ու ներս մտանք:

Երկու օր հետո պապս վերադարձավ: Իր խնդիրքը գրել էր տվել Միզա Դավիթին և տանուտերի օգնությամբ հանձնել փոստը: Պոչը ծաղիկ երինջն էլ էր գնացել, յուղն ու պանիրն էլ: Փոխարենը պապս բերել էր թղթի մի փոքրիկ կտոր, որ նրան տվել էին նամակն ընդունելուց հետո:

— Նազու աղջիկ, լավ տեղ դիր, աչքի լույսի պես պահիր: Պատասխանն էդ թղթովն ա գալու: Թե որ կորած...
Եվ փոքրիկ թուղթը, որ շորի մեջ ամուր փաթաթելուց հետո տասու դրեց սնդուկի մեջ, մեզ համար դարձավ և՛ ամենից թանկը, և՛ ահավորը:

Ի՞նչ կար այդ փոքրիկ թղթի մեջ, ո՞ր է մեր պոռը ծաղիկ երինջը, մորթեցի՞ն, թե՞ բառաչում է ուրիշի գոմում: Մտածում էինք այնքան, որ հոգնում էինք, քնում ու երազի մեջ տեսնում երինջին, որ խոտի տեղ ախոռում ուտում էր թուղթ...
Մի ձմեռ անցավ, բայց նամակի պատասխանը չեկավ: Ամբողջ գյուղը այդ մասին և պապս էլ միամիտ պարծանքով պատմում էր, որ ինքը ուսաց թագավորին նամակ է ուղարկել: Մեր տունը հյուր եկողներին նա նկարագրում էր, թե ինչպես է Միրզա Դավիթը խնդիրքը գրել:

— Է՛, մենք էլ ասենք ապրում ենք: Էնպես դալամ ունի, որ քարին դնի, քարը կճաքի... Ինձ որ տեսավ, երեսիս նայեց, թե Արուսյուն ապր, ուզում ես ասեմ, ինչի ես եկել ինձ մոտ: Ասաց, թե դու ուզում ես, որ թագավորին նամակ գրեմ տղիդ համար: Մնացի զարմացած: Օրենքի գրքերը բաց արեց, կարդաց, կարդաց, մինը դրեց, մյուսը վերկալավ, վերջը գտավ: Ոսկե դալամը դրեց թղթի վրա... Մի զարմացք էր որ էդպե՛ս էլ գիր, էդպես էլ գորություն...
Ունկնդիրն իր հիացմունքն էր հայտնում Միրզա Դավիթից և նրա գրչից, ինքն իր հերթին անում մի պատմություն նրա իմաստությունից և հնարագիտությունից:

— Ասենք թե անունը միրզա է, բայց աղվակադից էլ գիտուն է:
— Պապի, բա պատասխանը ինչո՞ւ չի գալիս...
— Ա՛յ որդիք, հենց իմանում եք թե թագավորը ունի-չունի էդ հոգան ունի՞: Կոնիվ կա, ժողովուրդին կերակրել կա: Օրը ես հազար ասեմ, դու երկու հազար իմացի,— էդքան նամակ ու խնդիրք ա ստանում: Հալբաթ մի օր էլ մեր ձեռքը կհասնի... Բա էս թուղթն ինչի՞ համար են տվել: Էդպես էլ վրան գրած է. Արուսյուն Ագամովից նամակ ուսաց թագավորի վրա:

* * *

Եկավ գարունը: Մի օր էլ գզիր Իբիշը ձայն տվեց, որ հարևան գյուղում ժողով կա:

— Թագա պրիստավ են դրել, ա՛յ ժողովուրդ, թագա քյոխվա են ընտրելու: Տունը մի մա՛րդ...

Տանուտերի ընտրությանը պապս չգնաց: Այա եզն այդ օրը տնքում էր, նրա պնչերից ծորում էր ժահրոտ լորձունք: Պապս տաք մոխիր էր կապել եզան ճակատին, շոյում էր նրա մեջքը և փաղաքշական խոսքեր ասում:

Մի քանի օր անց, երբ հիվանդ եզը ոտքի կանգնեց, ու ոտքերը զգուշությամբ փոխելով սկսեց լիզել բակի քարերը,—պապս դարձյալ նստել էր իր սովորական տեղը, աչքը հանդից տուն դարձողներին: Ու մեկ էլ երևաց գզիրը:

— Թագա պրիստավը քեզ էգուց առավոտ կանչել ա: Վախտով էն-տեղ լինես, թե չէ ասում են հերստան ա...

— Խեր լինի, Իբիշ...—հարցրեց պապս, տեղից վեր կենալով:

— Հաստատ տեղեկություն չունեմ: Ինձ էդպես ա հրամայել:

— Ո՞վ:

— Թագա քյոխվան, Մուքելանց Առստամը:

Պապս էլ ոչինչ չհարցրեց: Իբիշը հեռացավ: Լավ նշան չէր Առստամի մասնակցությունը: Նա հին հաշիվ ուներ պապիս հետ:

— Ինչե՞ր էր ասում բայդուշը,—հարցրեց տատս:

— Առստամը կանչել ա, թագա քյոխվան:

— Հը՞,—պապս նորից կրկնեց:

— Պատասխանը եկած չլինի՞,—ասաց տատս:

— Կարող ա: Վախտն ա. եկած էլ չլինի, հրես որտեղ որ ա կհասնի: Համա ասեց պրիստավն ա կանչում: Հը՞,—դարձավ նա մեզ:

Մենք հաստատեցինք, որ Իբիշն այդպես ասաց. և որպեսզի ավելի ստույգ իմանայինք, պապս մեղ ուղարկեց նրա մոտ մի անգամ ևս հարցնելու: Գզիրը նախ մեզ վրա բարկացավ, թե չենք թողնում, որ հանգիստ հաց ուտի, ապա մեզ հայտնեց, որ պապիս կանչողը պրիստավն է, բայց ինքը հրամանը ստացել է Մուքելանց Առստամից:

— Հենց բու ասածն ա լինելու, նազու աղջիկ,—ասաց պապս մեզ լսելուց հետո:—Երևի պատասխանը եկել է, կամ թե ո՞վ գիտի, թագավորի կողմից մի հարցմունք պիտի անի:

Քնելուց առաջ պապս ինձ պատվիրեց առավոտը կանուխ վեր կենալու ևս նրան պիտի ուղեկցեի և այնտեղ նրա ձին պիտի պահեի, մինչև պապս ներկայանար պրիստավին:

Ուրախությունս անշափ էր: Ես պիտի տեսնեի հարևան գյուղը, պապիս թարթին նստած պիտի բարձրանայի սարի գագաթը, որ մեր բակից անշափ հեռու էր երևում: Վերջապես ես պիտի տեսնեի պրիստավին: Այս մտքի վրա ուրախությունս տեղի էր տալիս ահավոր երկյուղի:

Հուսարացիին մի անգամ ձայն տալուց իսկույն վեր թռա և արագ հագնվեցի: Բակում պապս հագցնում էր ձիու սանձը: Քիչ հետո երկուսով նստեցինք ձին ու ճանապարհ ընկանք:

Երբ հեռացանք գյուղից, ամեն ինչ ինձ համար նոր էր և անծանոթ: Իմ հարցերին վերջ չկար: Ու դեռ մեկի պատասխանը շատացած, մյուսն էի տալիս, իսկ պապս դողդոջ ձայնով պատասխանում էր, երբեմն կանչում ձիու վրա ու սանձը ձգում, երբ ձին ոտքը դիպցնում էր քարին:

— Հրեն է՞, էն սպիտակ տունը, կտուրն էլ կարմիր,—ցույց տվավ պապս սարի գագաթից,—պրիստավն էնտեղ է նստում:

— Պապի, որ թագավորը գրած լինի, թե իրավունք եմ տալիս, քեռին քանի՞ օրում կգա:

— Մի աչքը ճակելում: Թագավորի համար ինչ: Ուզենա մի օրում հազար ոչխար մորթել կտա:

— Հազար ոչխար...

Քիչ հետո մենք սպիտակ շենքի մոտ էինք: Ինչքան նորություն կար ինձ համար: Այստեղ փողոցներն ավելի լայն էին, տներն ավելի գեղեցիկ: Փողոցում շատ ժողովուրդ կար: Խանութների առաջ մարդիկ խնկնել էին իրար՝ յուզ էին ծախում, կով, բուրդ, մեկը գոլում էր իր ապրանքը, մյուսը բարձրաձայն սակարկում գնորդի հետ: Մի քանի հոգի բարևեցին պապիս: Այդ ինձ ուրախություն պատճառեց:

— Էս հեռու տեղը որտեղի՞ց են իմ պապիս ճանաչում,—մտածեցի ես:

Սպիտակ տան առաջ իջանք, ձին քաշեցինք բակի սովերը: Սանդուղքի վրա նստել էին գյուղացիներ՝ հայ, թուրք, ոմանք զրուցում էին իրար հետ, ոմանք պատի սովերում պառկել էին, զխատակին աղլուխի մեջ փաթաթած պաշարը: Պապս մոտեցավ և խառնվեց նրանց: Մի բուպե ես նրան իմ աչքից կորցրի. սիրտս ահ ընկավ և երբ տեսա նրա սև փափախը, կանչեցի.

— Պապի՛...

Ժպիտոն երեսին մոտեցավ, պատվիրեց, որ ձիուն լավ նայեմ և շփոզենմ, որ մոտենա մյուս ձիերին:

— Քեզի քացի կտան, աչքդ վրան պահիր,—և հուսադրելու համար ասաց.—Թե որ պատասխանը եկած լինի, քեզ համար խուրմա եմ առնելու...

Նրա խոսքը կիսատ մնաց. սանդուղքի զլխից մեկը կանչեց:

— Աղամով Արուստյուն:

Ես տեսա, թե ինչպես պապս շտապեց արագ հասնելու սանդուղքին:

Աստիճանների վրա նստած գյուղացիները նրան տեղ տվին անցնի: Հետո պապիս սև փափախը ծածկվեց դռների հետևը:

Ձիու սանձից պինդ բռնած, ես աչքս չէի հեռացնում փակ դռներից: Երբեմն դռները բացվում էին, ներս ու դուրս էին անում պսպղան կոճակավոր մարդիկ, աստիճաններին նստած մարդկանցից ոմանք ոտքի էին կանգնում և նրանց խոնարհ գլուխ տալիս: Իմ աչքին բոլորն էլ պրիստավ էին, ու ես չէի կարողանում ջոկել, թե նրանցից որն է ավելի մեծավորը:

— Պրիստավն էն է՞,—հարցրի ես կողքիս նստած մի գյուղացու, որի զլխին փաթաթած կեղտոտ շոթի վրա և երեսին կային արյան շորացած կաթիլներ:

— Էն ուրյադնիկ վասոն ա. պրիստավն օթախումն ա,—ասաց նա: Ես չհարցրի, թե ուրյադնիկը պրիստավի ի՞նչն է: Սակայն հետաքրքրություն ավելի սաստկացավ: Եթե ուրյադնիկը այդքան շատ ոսկի կոճակներ ունեն, ապա ինչեր կլինի պրիստավի հագին: Իսկ թագավորը...

Ինձ թվաց, թե սպիտակ տան ներսը մեկը գոռգոռում էր և ոտքը խփում գետնին: Սանդուղքի քարին նստած մարդկանցից ոմանք իջան և կանգնեցին բակում:

Հանկարծ դռները բացվեցին, երևացին մի քանի ձեռքեր, իրար խառնված մարմիններ, անթիվ փայլուն կոճակներ և այդ ամենի մեջ պապիս ալեհեր գլուխը:

Ձեռքերն իջնում էին նրա գլխին:

Ու մինչև ես բառեր կանչեցի և ձիու սանձից բռնած վազեցի սանդուղքի կողմը,—պապս արդեն թափ էր տալիս փեշերը: Վերևից մեկը ոտքով շարտեց նրա սև փափախը: Դռները նորից փակվեցին:

Մի քանի հոգի սիրտ արին ու մոտեցան մեզ: Սակայն ոչ ոք ծպտուն չհանեց: Իսկ երբ սանդուղքի վրա երևաց ուրյադնիկը, նրանք իսկույն հեռացան: Պապս փոշոտ զլխարկը թափ տվեց ու դարձավ ինձ.

— Ձին պահի, բալաս... Պատասխանը չկա:

Բերանից արյուն եկավ: Ես տեսա նրա ջարդված ատամը: Արյունը թթի հետ խառնված կաթում էր նրա արխալուղի վրա:

Ձին մոտ քաշեցի: Մեր գյուղացի մեկը օգնեց ինձ ու պապիս՝ ձին նստելու:

Մենք անխոս ճանապարհ ընկանք:

Պապս գլուխը կախել էր և ձախ ձեռքով բռնել ծնոտը: Ես պինդ գրկել էի նրան, գլուխս հենել մեջքին: Լսում էի ընդհատ շնչառությունը: Նա հեկեկում էր:

Էլ չկարողացա ինձ զսպել, և արցունքներս, ամբարտակը պատռած

չրի նման, ժայթքեցին դուրս: Ես ավելի պինդ փաթաթվեցի նրա մեջքին: Երեկոյան, երբ պապս, ատամների ցավից տնքալուով, հազիվ լսելի պատմում էր, թե ի՞նչ եղավ ներսը, երբ ներկայացավ պրիստավին, երբ Մուսքիլանց Առստամը պրիստավի ականջին փսփսաց, — պրիստավը փրփրեց, հայհոյեց և ոտքը գետին տալով բղավեց:

— Ես քեզ ցույց կտամ, թե ինչ ասել է թագավորին նամակ ուղարկել:

Պապս իզուր էր փորձել թարգմանի միջոցով հայտնելու, թե ինքը ուսաց թագավորին նամակ է ուղարկել միայն իր որդու՝ Եգոր Աղամովի մասին:

— Բերանս բաց արի թե չէ, մի անգամ խփեց: Աչքերս սևացան... էլ միտս չի, թե ինչպես դուրս գցեցին... Առստամը բեղի տակ ծիծաղում էր...

* * *

Այն օրից շատ տարիներ են անցել: Պապս վաղուց է մեռել: Նրա գերեզմանի հողը նստել է և թեք է ընկել գերեզմանաքարը:

Մինչև վերջին րոպեն միամիտ ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է: Երբ հիշում էր այն օրը, դեմքն այլայլվում էր և աղոտանում էր նրա հույսը: Սակայն հետո նորից հուսադրում էր իրեն էլ, մեզ էլ:

— Նազու աղջիկ, ես մեռնում եմ: Հուր հավիտյան պարտական մնաս, թե պատասխանն ստանալիս չգաս և իմ գերեզմանին իմաց չտաս, — ասել էր նա վերջին լուսաբացին:

Նրանից մի տարի հետո մեռավ և տառու:

Նազու աղջիկն էլ դատարկ ձեռքով էր պառկել նրա կողքին: Ու նրա հետ թաղել էին և թղթի այն կտորը, որ իբրև թանկագին ավանդ, պառավը պահում էր սնդուկի մեջ:

Եվ այդպես էլ շիմացվեց, թե ինչ եղավ Եգոր Աղամովը:

...Շատ տարիներ են անցել: Այդ անցյալը ինձ համար դարձել է հիշողություն, որ հետզհետե ընկղմվում է մոռացություն անդունդը: Միայն երբեմն աչքիս առաջ երևում է իմ Արթին պապի ալեհեր գլուխը, նրա կապույտ աչքերը և խեղճ ժպիտը: Սակայն հանկարծ ավերվում է և այդ պատկերը, նրա ժպիտը դառնում է ցավ, և ծերունու շարժված ատամից նրա արխալուղի վրա ծորում է արյունը:

Քամին հալածում է մառախուղի թանձր քուլաները:

Նրանք խրտնած ոչխարի պես փախչում են ձորերով: Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի կոնունները: Քարափոր աներից կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը: Լուսանում է. լեռան հետևից ելնում է արևը, մամուռից պոկվում են անձրևի կաթիլները և շինջ արցունքի նման շողշողում:

Տերրասաձև բարձրանում են ժայռերը՝ մեկը մյուսից խոժոռ և ահառելի: Ահա մեկը՝ ոնգեղջյուրի մոռթը հառել է մի ուրիշի, որ նման է վիթխարի գորտի: Նրանց մոտ մի ժայռ՝ կարծես ծագող արևի դեմ խոնարհվել է հեթանոս քրմուհին: Նրանցից բարձր՝ քարե արծիվը ճիգ է անում թևերը թափահարելու և չի կարողանում:

Այս մեր գյուղի, մեր Գյունեյ թաղի թիկունքն է, մի խավար լաբիրինթ, որի խոր ձորերում բարակ առուն վշշում է փրփրած հեղեղի նման, ուր ծոխ ոտքի տակից գլորված ավազը խուլ արձագանքում է:

Ավելի խորը Դրնգանն է, լուսկյաց, հիվանդոտ և աղքատ մարդկանց բնակավայրը, ուր ամառվա երկար արևը հազիվ մի ժամ ջերմացնում է: Տարին բոլոր այդ ձորերում ստվեր է, խոնավություն: Մարդիկ ապրում են քարանձավներում և բարձրանում են քարե սանդուղքներով: Ուռենու մամոտած փշակով ժայռից ժայռ շուր են բերել ու քարերի վրա բազմացրել ընկուզենի: Հորդ անձրևին ավազախառն հեղեղը ահագին վշշոցով իջնում է ժայռերից, աղմկում, քամուց ընկուզենիները խշշում են, ձգում են արմատները և կռանում ձորի վրա:

Մեր Գյունեյ թաղն արևոտ է, գետի ափին: Ծանապարհը ձգվում է գետի եզրով, անցնում կամուրջի հին կամարների վրայով և քարափի լանջով գնում դեպի քաղաքը: Զրաղացները սահմանն են: Քարափի պլինի նավթի պահեստն է, որի ստորոտով ջուրը շառաչելով իջնում է շրաղացների վրա:

Արևը չորացնում է ժայռերի խոնավությունը: Տաք ու փափուկ գոլորչի է բարձրանում աթարի դեզերից, բակերից ու բոստաններից: Անա զիզին փեշերը շաղաթաթախ, քաղում է կանաչ պոմիդորը, գոգը լցնում: Շեմքի առաջ շոր խսիրի վրա մեկնվել է կատուն, մոռում է, աչքերը կիսախուփ անելով:

Անա զիզին կուզեկուզ բարձրանում է քարի վրա և կանաչ պոմիդորները շարում պատուհանի փայտերին, որ ավելի շուտ կարմրեն..

* *
*

Յոթ-ութ տարեկան երկու մանուկ բարձր ժայռի գլխից նայում են Գյանեյ թաղին, դողողացող գոլորշուն, Անա զիզու բոստանին, աթաթի դեզերին... Գիմացը, ընդարձակ տափարակի վրա քաղաքն է: Արևի տակ շողշողում են թիթեղյա կաուրները, կարծես տները ծածկված են ապակիով: Ապակեշող տների մեջ ցուլանում է «առուաց ժամի» ոսկեզօծ գմբեթն ու խաչը: Արևի ճառագայթներն արտացոլում են այնպես փառահեղ, կարծես գմբեթն է արևը, որ հրդեհվում է տների և կանաչ պարտեզների մեջ: Գետի ափին կանայք ցորեն են լվանում: Նրանք կուսցել են և ձեռքերը ջրի մեջ ետ ու առաջ են տանում: Մի քանի կաուրների վրա դեղին են տալիս դուրմենները. ամայի բազիրում օրորվում է արևի տակ փռած գուլջագույն լվացքը:

Մանուկները միատեսակ են հագնված՝ երկուսն էլ տրեխավոր, լիճ հասարակ շապիկ: Նրանցից մեկի գոտին ծուլավոր է, կապույտ փնջերով: Աչ ու ձախ խոր ձորեր են... Ահա Գայլաբունի ձորը՝ հատակը մութ ու խոր. վշտը է գալիս ներքևից, ջուր է վազում, թե՛ սառը քարանձավներում շաշում է քամին: Քար են պոկում և կուսցած ախանջ դնում: Ապա լուռ իրար են նայում. նրանք չեն կարողանում որոշել՝ ջուրն է վշտում, թե քամին:

Վայրի աղավնիների երամը փոռոցով անդունդից դուրս է թռչում և գլորվող քարի աղմուկից վախեցած, ճախրում արևի տակ, ապա նորից իջնում մութը: Արևի տակ փայլվում են նրանց ճերմակ թևերը: Հետո ներքևից հարյուրավոր թևեր թափահարում են և հետզհետե սուզվում անդունդը: Մանուկները լուռ են լուռ և երբ այլևս ձայն չի գալիս ներքևից, կամաց հարցնում են.

— Ո՞ւր կորան...

Վեր են կենում մանուկները, հացի կապոցն առնում և բարձրանում դեպի բրուտի քարանձավները: Մարդկանց ոտքերը և ձիերի սմբակները փոքել են նեղ արահետ: Որտեղ քարը փոխք է, փոս է ընկել: Իսկ կարծր տեղերը պսպղում են կապույտ փայլով: Այդ արահետի կապերն են՝ սանդուղքաձև, որոնց հասնելիս ձին գլուխը կուսցնում է, հոտառում և ապա զգուշությամբ ոտքը փոխում, ինչպես՝ սառույցի վրա:

Այլ ինչ շատ են արահետները, որ կաշտացած ձեռքի երակների նման ցանց են կապել քարափների, ժայռերի ու քերձերի վրա, հյուղավորվում են, բաժանվում իրարից, մեկը մի ձոր է իջնում, մյուսը բարձրանում

մի քարափ, մի տեղ լայնանում, մյուս տեղը բարակում, — և դարձյալ խանկում իրար:

Կա ձմեռվա ճանապարհ, որ անցնում է արևելոց տեղերով, վտակների ավազոտ հունով, կա գարնան ճանապարհ, կա այժի արահետ, որ բանուկ է, երբ կանաչում են քարափի ծերպերին բուսած թփերը: Այժմերը ժայռի ողորկ լանջով քայլում են, դունչը մեկնում մի ծաղկի, որ գլուխը կախել է անդունդի վրա:

Մանուկները գնում են ծանոթ արահետով. մյուս կածանները նրանց անծանոթ են և երկյուղալի: Ո՞վ գիտե ինչ մութ ձորեր են մտնում. ա՛յ, հենց այս մեկը, որ կեռամաներով իջնում է Հյուսիսային ձորը, այնտեղ, ուր ապրում է լիսեմներ, գանգուր մազերով այն կենդանին, որ գալիս նման չորեքթաթ է գնում, իսկ ծիծաղում է ինչպես մարդ:

Ձինչ ուրախություն է պատում ինձ, երբ գրում եմ այս տողերը ժայռերի մեջ կորած երկու մանուկների, գանգուր մազերով լիսեմների և բրուտների քարանձավի մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պատեցնում է փայտե «շարխ»-ի կլոր սախտակը և դեղին կավից կերտում գավաթ ու կուժ:

Ես և իմ բնկեր Անդոն հաց ենք տանում նրա հոր՝ բրուտ Ավագի համար: Գունավոր աղբուխի մեջ Անա զիզին փաթաթել է լավաշ, խորոված սիմինդր, սխտորած լոթի, մի քանի վարունգ և մի քիչ պանիր:

Բրուտի քարանձավը երկու մասից է՝ առաջինն ավելի ցածր, երկրորդը բեմի շափ բարձր: Առաջին մասում «շարխ»-ն է, ջրի կուժը և կավի ցեխը. երկրորդ մասում բերնի վրա շարված են դեռ շիճած կծեր, կուլաներ, գավաթներ և դարակներ: Քարանձավը դուռ չունի: Տուն գալուց բրուտ Ավագը մի քանի քար է դարսում իրար վրա, վերևն էլ դնում ցաքի փոշ, որպեսզի ինչպես ինքն է ասում, «քամին խաղա» և չորացիի ամանները:

— Ա՛յ արևնիդ կծե՛մ, եկա՞ք, — կանչում է բրուտ Ավագը քարանձավի ներսից: Իսկ մենք հեփհե ներս ենք մտնում: Էլ սարսափելի շեն ժայռերը, երբ հնչում է այդ թավ, կրծքային ձայնը:

— Ա՛յ ձեզ մատաղ, էս կողմը նստեք, էդտեղ փոս է...

Դրսի արևից հետո մեռ աչքերը դժվար են տեսնում քարանձավի ներքո: Փակ բրուտը կառծես ուրախացած մեր ներկայությունից, ավելի արագ է շարժում ձեռքերը: Նրա ոսկրոտ մատների արանքից լարծուն կավը հոտում է անընդմեջ, ապա մատները գրկում են կավն այունը: Դառնում է շարիք, հզգում է կավն այունը, բարակում, ապա նստում է նրա բուռնցքի տակ: Այս անգամ ձեռքը թաթախում է կավաջրի մեջ և կոխում կավն գնդի

մեջ: Անորոշ է ձևը, բայց ձևաբերը այդ հարափոփոխ զանգվածին կերպարանք են տալիս:

— Էս ա հա՛, — ճշգրտում է կավը, կարծես ճահճուտում բազ է կորնչում: Քոչում են ցեխաջրի շիթերը: — Էս կուծն էլ պրծնեմ, — և տնքում է բրուտը, ամբողջ ուժով սեղմում կուծի ներսը, — վեր եմ կենալու...

Արդեն շարխի վրա ֆոտում է կծի նման մի բան: Ոսկրոտ մատները սեղմում են վիզը և հլու կավը ձգվում է, բարակում է կծի վիզը: Մնաց ունկը շինի և ոսկրով նախշի կողերը:

— Հե՛-հե՛-հե՛յ, Եգոր հե՛յ, — դմբղմբալով, պատեպատ գնում է նրա կանչի արձագանքը: Բոլոր կծերը, դորակները գվգվում են: Եգորը նրա հարևան բրուտն է. ապա լսվում է պատասխանը, կարծես արձագանքը ետ է գալիս՝ «հո՛ւ-հո՛ւ...»

— Անդո՛, վազի ասա գա, հաց ուտենք...

Ես մնում եմ մենակ: Տեսնում եմ ինչպես է հագցնում ունկը, քարանձավի ճեղքից հանում է հին ոսկորները, որոնցով նրա պապերը դորակների և կծերի վրա գծել են նույն նախշերը: Բրուտը ոսկորի ծայրը սրբում է թևով և գծում ո՛վ գիտի որպիսի քարանձավաբնակ մարդու խազ:

Իսկ շարխը շարունակ դառնում է: Բրուտի աջ ոտքը իջնում է փոսը, բարձրանում, մարմինն օրորվում է: Ապա հանկարծ շրխկում է մի բան, շարխը դանդաղում է, ձևաբերը պոկում են կուծը և բարձր պահում: Այդ բոլորը տևում է մի ակնթարթ:

— Բարի վայելում, — նույն ակնթարթում ասում է բրուտ Ավագը և քարից բռնելով դուրս գալիս փոսից:

Գինի՞ պիտի խմեն այդ կծից, թե աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի և ո՛վ է այն հարսը, որ մեջքը օրորելով այդ կուծը պիտի կրի, — բոլորին, այդ անհայտ հարսներին և աղջիկներին է ասում բրուտ Ավագը պապերից լսած խոսքը:

— Հո՛-հո՛-հո՛, — հռհռում է Եգորը, փակելով մուտքը: Նա հանկարծակի է հայտնվում, և հոնդոցը սարսուռ է մաղում ինձ վրա:

Արև ենք դուրս գալիս: Չոր ցեխից տախտակ դարձած գոգնոցը թխթխկացնելով, մեր հետևից լոք-լոք է անում Եգորը, կաղ ոտը քաշ տալով:

— Հը, բաջողի, Գյունեյ թաղը ո՞նց ա... Մեռնողն ա շատ, թե ապրողը:

Ես աչքերս բարձրացնում եմ նրա կողմը և չեմ պատասխանում: Նա նորից է հոնդում՝ «հո-հո-հո», բայց արևի տակ սարսափելի չէ նրա ժողը: Խղճահարուժյուն է իջնում ինձ վրա, երբ տեսնում եմ նրա գզգզ

ված մազերը և ցեխի շիթը այտի վրա: Նա ինձ թվում է բարի մարդ, ինչպես բրուտ Ավագը, և ես մտածում եմ, թե ինչո՞ւ նա գյուղում չի երևում, ինչո՞ւ նրան անվանում են «շաշ»:

— Անդո, աշխարհում խելո՞քն է շատ, թե՞ սարսաղը...

— Սարսաղը: — Իսկ բրուտը բաց է անում Անա զիզու պաշարը:

— Ա՛յ մալաղե՛ց, — բղավում է նա: — Պահ, պահ, խիա՛ր, կանաչ խիա՛ր... — և առողջ ատամներով կիսում է վարունգը:

...Այժմ էլ, երբ գրում եմ մեր հին Գյունեյ թաղի մասին, օրերի մշուշից մոտենում է ինձ չուխս Եգորը, ելնում է, ինչպես մեր ժայռերը սպիտակ մառախուղի միջից: Ես տեսնում եմ նրա ցեխոտ մեջքը, խոնավութունից փտած շապիկը և կավի նման մաշկը, որ դեղնել էր բարանձավի խոնավութունից: Եվ նորից հոնդում է անասնական խրխիջով, ցցվում են մազերը, ինչպես տատասկի թուփը:

Պրոմեթեո՛ս էր նա, բանտարկված բրուտի քարանձավներում, թե՞ մի խեղճ սատիր...

* *
*

Ահա մեր գետը, մեր զուլալ գետը: Կարող ես ջրի տակ խիճերը մեկմեկ համբել: Հորթերը վախվխելով, պոչները վեր պահած, մտնում են ծանծաղուտը, ջուր խմում, սարսալով ետ գալիս: Սառն է ջուրը, բարձր սարից է գալիս, ուր միշտ մռայլ ամպ է նստում, ամպի տակ սառույցի հաստ շերտեր:

Իսկ երբ վարարում է... Կոճղեր է բերանն առնում, գազազած բաշը մեկ այս ափին տալիս, մեկ այն, նոր հուն ճեղքում՝ ավերելով բոստան ու մարգագետին: Հին կամուրջի գերանները դողում են շյուղի նման, գետը ծանր քարեր է շարտում կամարի հիմքերին, ասես զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի:

Գարնան մթնկա գիշերներին ջրի վշտոցը ահարկու սարսափ է տարածում գետափի տներում, Դրնգանի ձորերում: Զաղացները լուռ են, ջազացյանը վառած լապտերը ձեռքին գիշերը մոտենում է գետին՝ տեսնի լի՞ բարակել:

Գյուղից ներքև, մի բարձր ժայռի մոտ գետն արմունկ է կազմում ու կորչում ժայռերից պոկված հսկա քարերի արանքում: Ամեն տարի հեղեղն այդ քարերի վրա կիտում է ջարդված ծառեր, կոճղեր, թփեր, թյունների քանդված բներ: Գետը հասնում է քարե մաղին թե չէ, կորչում է, ջրերը շառաշով ներքև են թափվում և կատաղած դուրս գալիս նեղը:

Նեղրը, Լաստի խաւքի կարանը... Բնական այդ մեծ քարայրում, որից
ուկ ջուր է դուրս հոսում, իբրև քն ապրում է օձերի թագաւորը, գոհարու-
պատ թագը գլխին: Անա զիզին ձեռքերը ծնկներին է խփում և աղաչում,
որ Նեղում շողանանք, ոչ էլ կարանի մոտ, այլ բաց տեղերը, ուր գետը
փոխում է և հանդարտ հոսում ալազուտի վրայով:

— Հա՛ գիզի, հա՛... Մտտիկ տեղ ենք գնում:

Եվ Անդոն, ծագկատար Երեսով իմ ընկերը, նստում է ինձ, շարժում
հաստ ու կարմիր շրթունքները, ձեռքով նշան անում դեպի ներքև, դեպի
գետի արմունկը, փրփուր ջրվեժների մոտ:

Կուրծքը սպիտակ ջրածոտերը թռչում են քարից-քար, պոչը երերում,
ծվծվում ու գնդակի պես իրենց նետում ջրի երեւոյն պտույտ անող մթնո-
ների երամբ: Մեզ հաճելի է դիտել, թե ինչպես նրանք թռչում են փրփուրի
վրայով, կորչում ջրվեժի փոշու մեջ, նստում ցից քարերի ծայրին և ան-
վախ ծվծվում, աչնինչ շուրջը գետը կատաղությամբ կրծում է քարերը:

— Անդո, ա՛յ էն մեկին կարա՛ս խփես...

Անդոն կուղեկուզ մոտենում է, քաբը բռան մեջ: Քարի հետ ջրածիտը
թռչում է և կորչում փրփուրի մեջ:

— Թե իմացար նրանք որտեղ են քնում...

— Նրանք չեն քնում:

Իսկ Անդոն օրորում է գլուխը:

— Նրանք ջրի վրա ճոճ են շինում, ժեշը քնում... Թե զիզին թողար
մթնով գալի, բոլորին կրճնեի...

— Բա լիսե՞մներ:

— Լիսեմներ էստեղ չի գա: Նրա տեղը վերի ձորն է:

Ժայռերի ստվերոտ կողերը պատած են մամուռով: Ջրի ցնցուղները
թռչում են վերև, հասնում նրանց: Ու երբ ծայրի տակով անցնում են,
մամուրի ջուրն արճճի ծանրությամբ կաթում է մեր բաց գլխին:

— Էն ի՞նչ էր Ֆշշաց...

— Սո՛ւս, օձ կլինի... էստեղ օձի բներ են: Որտեղ քեզ կա, էնտեղ
էլ օձը:

Ու սարսափով, վախից զգուշ կոխելով, ցատկում ենք քարից քար, ընկ-
նում գետափի բանուկ ճանապարհը:

— Անդո՛, քեզն ո՞վ է տնկում:

— Օձը,— լրջությամբ և մեծի շեշտով պատասխանում է ընկերու-
նի համոզում, որ օձը հողի մեջ թաղում է քեզի սերմը, ինչպես զիզին
կոտեմը, ու հետո ծլում և մեծանում է լայնեզր, ճեղքված տերևներով

քեզը, որի տերևի կպած տեղը մոմոում է,— այդ համոզումն արմատանում
է իմ մեջ:

— Անդո՛, էդ քեզ ո՞վ է ասել:

— Չուխն Եգորը:

— Բա նրան ո՞վ է ասել:

— Ո՞վ պիտի ասի: Իրա գլխինցն է դուրս բերել:

Ու Նեղը չհասած, շորներս հանում ենք, կոնաաակին դրած վազում:
Արդեն փրփուրների միջից մեզ են կանչում արևից խանձված մանուկ-
ները:

Անդոն քարից գցում է իրեն, օդի մեջ պտույտ անում և թաղվում
փրփուրի ամենախոր տեղը: Ապա գորտի նման դուրս է թռչում, պատկում
տաքացած քարերի վրա:

— Անդո՛, կովը քեզ կուտի՞:

— Չէ՛, կսատկի:

— Գոմե՛ջը:

— Չէ՛:

— Չի՛ն:

— Չէ՛... Մենակ ուղտը կուտի:

— Բա նա չի սատկու՞մ:

— Չէ՛, ուղտը ոչ օձից կվախի, ոչ քեզից: Նրա թուրը լեղի է, օձի
կեածի նման կվառի:

— Ո՞վ ասեց է՛ր:

— Ուղտապանը,— և մեջքի վրա ընկնում է ջուրը:

Իսկ ես նայում եմ ամառվա հստակ երկնքին: Մի ծուռվիզ ամպ
բողում է, կարծես տափարակում արածում է և տկոթ ուղտը: Նայում եմ
ամպին և մտածում, թե Անդոն ե՞րբ է հարցրել ուղտապանից: Երևի նալթ
առնելուց, պահեստի առաջ հաճախ շոքում են ուղտերը, որոնք տիկերով
նալթ են բերում:

Մեր լողալու շափը կապտելն էր: Խշրտոցով իրար էին կաշում մեր
առամները, և ինչքան էլ սեղմում էինք ծնտաներս, չէր հաջողվում առամ-
ների կտկտոցին վերջ տալ: Արևը թեքվում էր, ստվեր էր ընկնում գետի
վրա ու սկսվում էր բարակ քամին:

— Է հերի՛ք... Դուրս ե՛կ:

Վերադառնում ենք այգիների ճանապարհով: Քար ենք գցում այս
թիկնուն, այն ընկուզենուն, ցանկապատի վրա կախ ընկած մոռն ենք
ուտում, ամեն աղբյուրից ջուր խմում, մինչև հասնենք կամուրջի գլուխը:

— Անդո՛, Անա զիզին հրեն դռանը:

— Դու առաջ անցի: Որ հարցնի, ասա Մեծ ապոր բաղում թու՞ք էինք ուտում:

Իսկ Անա զիզին երեկոյան դեմ մեր բակն էր գալիս ու մորս հանդիմանում:

— Ո՞ւր է էն փուշը... Ձեռս ընկնի, ականջը հլորեմ: Հալավը քար ու քոլի են գցել, ճղոտել:

— Մեր անիրավն էլ գոտին է կորցրել,— պատասխանում է մայրս: Երկուսով անիծում էին մեզ, պատմում մեր շարահճի արարքները, թե առավոտից մինչև իրիկուն անհաց կորչում ենք այգիներում, «վաթսուն անգամ մտնում ջուրը դուրս գալիս» և կապտած վերադառնում: Նրանք գանգատվում էին մեզանից, իսկ Անդոն գլուխը պատից վեր էր հանում և աչքով անում:

— Աղչի, ծեծած աղ շունե՞ս, մի բուռը տաս,— վերջացնում էր Անա զիզին:

Նրանք տուն էին մտնում, իսկ մենք ժլկվում էինք դեպի ձիթհանքը, մեր խաղերի իրիկվա տեղը:

* * *

Նստել եմ ծիրանի ծառի տակ, տաքանում եմ ինչպես քարը, ձյունից մրսած գետինը, ծառերը, որ դեռ մերկ են և արդեն թխանում են արևի ջերմությունից:

Մերկ ծառերի արանքից երևում է քաղաքը, գունավոր տները: Միի ու փոշու կապտագույն շղարշ է փոված քաղաքի վրա: Ավելի հստակ են երևում մոտակա կավե տները, այգիների մեջ ընկած ամայի հնձանները:

Քամին խշշացնում է շոր տերևները, որոնք թռչում են քարերի վրայով, իրար հրում, փաթաթվում ոտքերիս և քշվում, ինչպես առվակը գարո՞ւն է, գարո՞ւն է...

Քաղաքի կողմից քամին ձայներ է բերում: Լսելի է, թե ինչպես մեխում են տախտակը: Թա՛խկ, թա՛խկ, հնչում է թիթեղագործի փայտե մուրճի խուլ ձայնը: Մի շուն կաղկանձում է: Բլուրի վրայից ես տեսնում եմ կաղկանձող շանը, որ ոտը քարշ տալով դուրս է թռչում մի փոքրիկ հյուղակից: Նրա հետևից դուրս է գալիս մի կին, որ ինչ-որ բան է շարտում շան կողմը: Մի՞թե այդ հողաթումբը տնակ է և մարդիկ են ապրում այնտեղ: Նույնիսկ դուռ ունի, որովհետև կինը դուռը վրա է գնում և մի բան շալակած իջնում գետի կողմը: Այնտեղ երկու կին լվացք են

փում քարերի վրա: Նրանցից մեկը կոանում է, լվացքը լողողում գետի մեջ, մյուսը քամու առաջ փոփոացնում է կապույտ, կարմիր լաթերը, և ապա մեկնում: Առաջին կինը մոտենում է նրան, նա ձեռքերով ինչ-որ բան է ասում նրան: Երևի անիծում է շանը: Նթե այդ կինը բարակի վրա լիներ, կտեսներ, որ շունը վերադարձել է, պառկել փակ դռան առաջ, իբրև հավատարիմ պահակ և լիզում իր՝ ցաված ոտքը:

Ան ծապավենի նման սողում է գնացքը: Մուխը բարկ-բարդ ետ է գնում ու նստում դաշտերի վրա: Շոգեմեքենան սուլում է. քամին բերում է նրա խուլ փնչոցը: Երևի հիմա ուղևորները վագոնների պատուհաններին են սեղմել իրենց ճակատը և սպասում են, թե երբ կերևան կայարանի շենքերը: Երևի կա մի աղջիկ, որի համար ամենից դժվարը այդ բուլեններն են: Նա էլ ունի մի խրճիթ, որի դուռը փակել ու հեռացել է: Պերրոնի վրա կդիմավորի նրան մեկը և աղջիկը սրտի դողով կբացի սիրո դռակը:

Քամին խշշացնում է տերևները: Չքանում է գնացքը... Փակում եմ աչքերս, և տերևների խշշոցը հիշեցնում է ինձ լուռ ընթերցանության ժամը դասարանում:

Դասարանում... Միրանի ծառը ստվեր է գցել տետրակիս վրա: Արևի շողը փայլփլում է մատիտի ծայրին և արտացոլում եղունգիս վրա: Մեկը քոթում է թևս.

— Մեծատառ Ժ-ն ո՞նց է:

— Է՛...

— Մի շվի կտամ:

— Այ, տե՛ս,— և ցույց եմ տալիս:

— Վերջին նստարան, լուռթյո՛ւն,— սաստում է ամբիոնին կոթնած ուսուցիչը: Ճոռում են նրա կոշիկները: Մենք թեպետ վայելագրության տետրակի վրա գլխահակ ենք, բայց գիտենք, որ նա դեպի մեզ է գալիս:

Շատ է խանգարում ծիրանի ծառը, որ բուսել է մեր դասարանի միակ պատուհանի առաջ: Երբ փչում է քամին, աղմկում է ծառը, ճղնեբով թրխկացնում պատուհանը: Նրա ստվերն ու արևի զեղին բծերը թըրթըռում են իմ տետրակի վրա, օրորվում, ինչպես ջրածտի ճոճքը:

— Վագի՛ր, գանգը տուր,— և օրապահը թռնում է տեղից:

Սկսվում է ամենից զվարթ և աղմկալի երկու բուլեն, մինչև զանգը հնչի և վազենք բակը: Բոթում ենք իրար, կամքում, մի խոսքով ելք է ստանում հոգնությունից և ակամա լուռթյունից զսպված մեր մանկական զվարթությունը:

Այս շոր ծիրանի տակ նստած, զարնան այս պայծառ օրը, երբ

ուրախ արեք մեզմեջ է՝ բարերի մուսուլմաններ, ես գրում եմ իմ մանկություն, ծիրանի ծառի և իմ ընկեր Անդոյի մասին, և ինչպես դեղին տերեւները խշշալով փարվում են ոտքերիս և քըշում, այնպես էլ երկու բարակ ձեռքեր ձգվում են դեպի ինձ և խնդրում:

— Ինձ էլ գրի՛ր:

Նուշիկն է: Վիզը բարակ, դեղնած աղջիկը: Նրա սև աչքերը խոշոր են ու տխուր: Նա հաճախ է լաց լինում: Հայր շուճի, իսկ մայրը ուրիշների դռանը լվացք է անում: Երբ ցրտում է, կամ խոնավ է գետինը, նուշիկը ներս է մտնում, մրսած մատները գոգնոցի տակ: Երբեմն նախաճաշ չի բերում, իսկ երբ բերում է՝ հաց է և խորոված կարտոֆիլ:

Նուշիկը մեզ հետ է լինում: Մնացած աղջիկները վախենում են Անդոյից և նրան ձեռք չեն տալիս: Մի անգամ Մաշոն (նրա հայրը նստում էր նավթի պահեստի առաջ և երբ հաճախորդ չէր լինում, նարդի էր խաղում «ուսաների» հետ),—Մաշոն մի անգամ դասարանում նուշիկին ասաց, որ նրա մայրը լվացքից մի կտոր գողացել է: Նուշիկն արտասովոր վեց:

— Մամաս գող չի՛:

Ուսուցիչը ներս մտավ: Դասն սկսվեց: Իսկ Նուշիկի նիհար ուսերը ցնցվում էին: Կուշ էր գալիս, կարծես մրսում էր:

— Մաշո՛, — ասաց դասամիջոցին Անդոն, — տեսնո՞ւմ ես էս դանակը:

Մաշոն տեսավ դանակը և արտասովորով վազեց ուսուցչի մոտ:

— Դու քեզ լավ շես պահում, Անտո՛ն... Փողոցային երեխայի նման ես:

Ուսուցիչը խլեց դանակը, իսկ մյուս օրը Անա զիզին եկավ մեր տունը:

— Աղջի, մեր դմալթին ձեր տանը չի՞...

«Դմալթին», — կեսը ժանգոտ դանակ էր, կաթը սուկոր: Անա զիզին նրանով էր քաղհանում կոտեմի մարգը:

Անդոն Մաշոյին ցույց տվեց «դմալթու» ծայրը և վախեցրեց:

— Թե վարժապետին ասել ե՛ս...

Նվ Մաշոն վարժապետին շասաց: Անա զիզին գարնանը դմալթին փոխարինեց սուր սակրով:

* *

*

Իրեկո է. սարերի սպիտակ գագաթներից կապույտ ցուր է բարձրանում: Պարզ երևում է լեռնաշղթայի թելը:

— 174 —

— Հորիզոն կոշվում է երկնքի և երկրի միացման գիծը...

Կրկնում եմ մտքիս մեջ այն, ինչ շատ տարիներ առաջ բարձրաձայն պատասխանում էի աշխարհագրության դասին:

— Գո՛ւ ասա, Անդո...

Անդոն կրկնում է:

— Նստի՛ր:

Ներս է մտնում ավագ ուսուցիչը: Ոտքի ենք կանգնում: Մինչև շաբաթվա վերջը թոշակ չբերողը կհեռացվի դասարանից: Ավագ ուսուցիչը գլուխը բարձրացնում է, նայում լուռ դասարանին: Այլա նա հեռանում է: Կապույտ գլորուսը պտտվում է աշխարհագրության դասատվի ձեռքին, և մենք խմբով կրկնում ենք.

— Երկրագունդը կլոր է...

Նուշիկն ուշանում է և «է»-ն ասում է առանձին՝ դողացող ձայնով: Աղջիկները ծիծաղում են. Նուշիկը գլուխը խոնարհում է, իսկ վարժապետի քանոնը բարձրանում է, քանոնի հետ բացվում են մեր բերանները, և մենք նորից ենք կրկնում, որ երկրագունդը կլոր է:

Երեկոն կապույտ է: Մուխը ծալվեծալ փաթաթվում է ժայռին, ինչպես վայրի խաղողի որթը: Մխում է Գրնգանը, կրակները շարժվում են: Այնտեղ մարդիկ իջնում են գետափի գոմերը: Մի կով աղիողորմ բառաչում է... Գյուղը գիտե, որ բառաչողը նարգիզն է, որի հորթը քարով է ընկել: Կովը լիզում է հորթի խոտով լցրած մորթին և չի զգում անասնական ջերմություն:

— Անդո՛, բա թոշա՞կը:

— Թող նանը վերջացնի:

Անա զիզին կթում է բառաչող նարգիզին, խոսում է նրա հետ, աղաչում, և կովը հանդարտում է, կարծես հասկանում է նրա լեզուն:

— Նանի՛:

— Հե՛յ:

— Բա թոշակն ուզում են: Վարժապետն ասել է...

— Նանին քեզ մատաղ: Նարգիզն էլ ցամաքել է, որ կաթը ծախենք: Սպասի, հրես հերզ կծերը կտանի Գետերը:

Աշնանը բրուտները կուժ ու կարաս են տանում Գետերը և բերում են բրինձ, բուրգ, ցորեն: Գետերը հեռու է: Չուխի Եզորը պատմել է, որ այնտեղ բուսնում է բամբակ, որ բրնձի արտերում թևավոր օձեր կան, քարերի տակ՝ սև կարիճներ:

Երեկո է... Քաղաքի փողոցները լույս են: Խանութներում շոգշոգում են պղնձե սամովարներ, հայելիներ, ափսեներ: Անդոն հոգնել է: Ձեռքին

թաշկինակն է, մեջը թարմ ձվեր: Վերջացել է վայելչագրության տետրը: Իսկ ձվերը շին առնում:

Հոգնած գնում է բարձր տների առաջով: Մեծ լուսավոր պատուհաններ են: Նրանք էլ են շողշողում ինչպես խանութները: Այնտեղ ապրում են «ուսաներ», Մաշոն, խանութի տերերը: Այս մեկը Ներսես բեյի տունն է, իսկ նրա կողքին ապրում է պրիստավը: Նա շատ շներ ունի, բարակ, նիհար շներ, որոնք ամբողջ օրը քնում են և թռչկոտում են, երբ պրիստավը գնում է որսի:

— Այ տղա, ի՞նչ ես ծախում,— կանչում է մի ծանոթ ձայն:

Մաշոն է: Աղջիկն իջնում է վերեւից: Դարբասի դուռը բացվում է:

— Էս իմ տյոտյայի տունն է:

— Քանի՞ ես տալիս ձվերը,— հարցնում է կինը: Անդոն կարմրել է: Նա չի ուզում, որ Մաշոն իմանա, թե ինքը ձու է ծախում: Անդոն չի ուզում, որ դասարանը խոսի: Իսկ ուսուցիչը պահանջում է վայելչագրության տետրը:

— Ձվերը ծախու չեն,— կտրուկ ասում է Անդոն և գլուխը բարձր սլահած գնում է դեպի կամուրջը, դեպի մեր թաղը:

— Ես ուսումնարան չեմ գնում,— ասում է նա առավոտյան: Բայց Անա գիզին թախանձում է, և նա գալիս է ինձ հետ:

— Անդո, նանին քեզ մատաղ, հրես հերզ կծերը կտանի...

* *
*

— Հայոց «ժամը»:

Սպիտակ կամարներ և նկարներ՝ ոսկեզօծ շրջանակների մեջ:

Նուշիկի մայրը լալիս է... Մի քանի կանայք հեկեկում են, ինչպես կհեկեկան ուրիշի զագաղի վրա:

Մեր դասարանը երգում է տխուր երգեր, երկա՛ր, երկա՛ր...

Նուշիկի համար ենք երգում: Աղջիկը ձեռքերը խաշել է, ինչպես թևերը ծալում է սառած թռչունը: Գլուխը մի քիչ թեքել է և հանգիստ քնել: Երևար առաջվա դեղինն է, բայց գլխավերևը կարմիր ծաղիկներ են և սպիտակ մոմեր: Մաղիկների կարմիրը խաղում է նրա դեմքին, երբ թրթռում են մոմի կրակները:

Նուշիկի զագաղը հասարակ տախտակ է: Վարպետը լավ չի ունդել,— մեխը երևում է:

— Ոտքը կծակի,— մտածում եմ ես և տխուր երգում Նուշիկի համար:

Անդոն չկա, նա չի եկել:

— Ես չեմ երգի... Չեմ ուզում:

— Դու քեզ անկարգ ես պահում,— բարկացավ ուսուցիչը: Իսկ Անդոն լուռ հավաքեց գրքերը: Դասարանն սպասում էր: Ուսուցիչը նորից պահանջեց, որ նա էլ միանա խմբին, որովհետև Անդոյի ձայնը զիլ է և քաղցր:

— Չե՛մ գա՛,— համառեց Անդոն:

Ուսուցիչը դասացուցակը ամբիոնին խփեց և գնաց ուսուցչանոց: Որտեղ որ է կգա ավագ ուսուցիչը:

— Անդո՛...

— Ասացի չեմ գնա:

Մտնում է «ավագը»: Նա նրան անվանեց կամակոր, համառ, պահանջեց, որ խմբին միանա:

— Դո՛ւրս կորիր այստեղից,— գոռաց «ավագը»: Աղջիկներից մի քանիսը գունատվեցին: Անդոն վերցրեց գրքերը և գլուխը բարձր բռնած անցավ նստարանների արանքով:

— Անպատկա՛ռ,— շարտեց նրա հետևից «ավագը»: Անդոն դասարանի դուռը պինդ փակեց:

...Մենք ուղեկցում ենք զագաղը: Փոքրիկ փոս է: Կարծես ծառ պիտի տնկեն: Դագաղն իջեցնում են: Հեռանում ենք. մնում են մայրը և հարևան կանայք:

Գերեզմանատանը շատ մանուշակներ են բուսել: Մենք մոռանում ենք Նուշիկին և փնջեր ենք կապում: Իբրև փոքրիկ գազան՝ պատի վրայից ներքև է թռչում Անդոն: Աղջիկները նրանից փախչում են:

— Ես ուսումնարան էլ չեմ գնա՛,— տխուր կրկնում է իմ ընկերը:

* *
*

Քաղաքից խճուղին դուրս է գալիս, սլաքի նման ձգվում, կամուրջի մոտ կեռ տալիս, ապա ոլոր-մոլոր բարձրանում բարձր սարը: Ու գնում է, գնում է խճուղին, ինչպես գետը, բազմաթիվ լեռնային արահետներ խառնվում են նրան, և ինչքան գնում է, այնքան շատ է ծեծված, այնքան հին է ճանապարհը, և բազմաթիվ բանակներ, ժողովուրդներ տրորել են ճանապարհը, անցել՝ մեկը հյուսիս, մյուսը՝ հարավ:

— Բունի էս ճանապարհը, գնա՛, գնա՛ ու չի վերջանա: Աշխարհը մեծ է, աշխարհը ծայր չունի:

Բրուտ Ավագը ինձ հողե փարչ է տվել և հողի մաքրու օրհնութուն:

— Մարավես՝ կիմես: Կուռդ դալար մնա...

Գիշերն անձրև է եկել, խոնավ է գետինը: Կառքը աղմուկ չի հանում: Ընկղմվում է Գրեզանը, քարերը ծածկում են մեր արևոտ թաղը, միայն գետափի տներն են երևում և ընկուզենիները: Եվ ինչքան բարձրանում ենք, այնքան խոյանում է Ցից քարը: Նրա տակն են բրուտների քարանձավները:

Երեկոյան հորթերն եկան, նրանց հետ հորթարած Անդոն:

— Գնո՞ւմ ես:

— Հա՛:

— Գնա՛:

Տխուր է Անդոն: Հոգնել է, բայց չի գնում տուն:

— Էգուց հորթերն էն կուռը կտանեն...

Կառքը բարձրանում է: Սարի վրա ամպ է նստում: Մեր թաղը չի երևում: Շուտով այս ամպը կիջնի սարի վրայով և կփռվի մեր ձորերի վրա:

Մեկն ամպի միջից վազում է, ձեռքով անում, կանչում է: Չարմացած կառապանը քաշում է ձիերի սանձը: Կառքը կանգնում է:

— Անդո՛, — և դուրս եմ թռչում կառքից:

Գյուղի երեխաները երբ հրածեղտ են տալիս, ոչ համբուրում են իրար, ոչ ձեռք են սեղմում: Նրանք նայում են իրար, ինչպես մունջ մարդիկ: Հեռացողը հեռանում է, ով մնում է տեղը, նայում է նրա հետևից մինչև սարի հետևն անցնի կամ իջնի ձորը:

Կառապանը մեզ բաժանեց:

— Ճանապարհին կուտես, — և Անդոն իր տոպրակից հանում է բոված սիմինդր, որ ամեն առավոտ պատրաստում է Անա զիզին:

— Ունեմ, քեզ պահի...

— Չէ՛, իմը ա՛ռ, — և գլորվում են անիվները:

Ամպը կախվում է, Անդոն ու մեր հորթերը կորչում են ամպի մեջ: Չորը լցվում է կաթնազույն ամպերով: Թաց գետինը խլացնում է վաղը ձիերի դոփշունը: Իսկ կառքը գնում է. լավում է զանգակների ծխողոցը, կաբժես աղչիկները մանր ծափ են տալիս:

Հոգնածությունը նինջ է բերում: Գլուխս հենում եմ մեկի տաք թևին: Քնում եմ, ինչպես ծիծեռնակի ձագը մոր թևի տակ: Երազում կառքը ամպերի վրայով է թռչում, գեպի խոր երկինքը:

Ահա աստղերը... Նրանք մեծանում են, նրանք շարժվում են: Նրանք աստղեր չեն, այլ դեղին ու սպիտակ գառնուկներ, որոնք ձիերից խրտնած փախում են և զրնգում են նրանց պղնձյա զանգակները:

Աչքերս բաց եմ անում: Մթնում է, ուրիշ սարեր են: Մեր եկած տեղը ամպ է: Երեկ անձրև է մազում մեր սոսնստ թաղի վրա:

* * *

Քաղաքը տափարակի վրա է:

Դեպի արևելք, ուր մինչև հիմա էլ մնում են անհայտ շենքի ավերակները, տափարակը հանկարծ կտրվում է, կախվում խոր ձորի վրա, որի անդնդում մուշլ խոխոչում է մեր գյուղի գետը:

Տափարակը վերջանում է քարափի գլխին: Ուղղաձիգ ժայռերի լանջով ընկնում է սպիտակ արահետը, որ տաք անձրևից հետո շողշողում է կրաքարի փայլով:

Միայն մարդիկ են անցնում այդ ճանապարհով: Ոչ ոք չի կարող շալակին բեռ տանել այդտեղով: Նեղ է, դժվարին կապեր, օձապտույտ կեռամաններ: Իսկ ներքև՝ ձորի երկու ափին այգիներ են՝ քարերի վրա, քարակույտերի մեջ: Չորը խոր է, ձորը տաք է... Մինչդեռ քաղաքի փողոցներում դեռ սևացած ձյուն կա, — ձորից տաք գոլորշի է բարձրանում և սառած օձերը պառկում են քարերի փափուկ մամուտի վրա:

Չորն ահա՛վոր է, ձորում ամայի տխրություն է:

Մի քանի քարափոր սարագներ կան, որոնց մեծ մասի դռները կանաչի են: Նրանց տերերը վաղուց չկան, խոնավ քարայրները նրանց մահից հետո տաք հարդի շեղջակույտ շեն տեսել: Մառագների առաջ հին թթենիներ են, դարձյալ անտիրական: Ով սիրտ ունի, ոտքի շլերը պինդ են, իջնում է կեռամաններով, թափահարում թթենին և քարերի վրա թափվում է սպիտակ, սև ու կարմիր թուփը:

Այգտեղ են կարանները...

Բնական խոռոչներ են, որոնք խոր գնում են քաղաքի տակը: Ո՛վ գիտե որտեղ է վերջը այդ մթին անցքերի: Ամառվա շոգին այնտեղ սառն է, պատերը լպծուն: Բազմաթիվ ոսկորներ կան նեղսր, ամբողջ կույտեր ժանիքների, ծնոտների, ողբերի: Դուռ վառում եք կապե ճրագը և կուսցած ներս մտնում, շոքեղոք գնում, քարերի վրայով մազլցում, կորչում քարի հետևը: Դուք մեկնում եք ձեր ձեռքը մի դեղին կույտի, կարծում եք քար է, ձեր մատները խրվում են թաց տափաղի մեջ, որ բարակ շերտով ծած-

կել է ոսկորների կույտը: Եվ ճրագի լույսի տակ շողշողում է վարագի փայլուն ժանիքը, ու սարսուռը քարայրի սառնության հետ թափանցում է ձեր ոսկորների մեջ:

Առաջներում քաղաքի տափարակը, մեր թաղերը, ամբողջ ձորը խիտ անտառներ են եղել, մթին խոռոչներ ու թավուտներ: Մարդուց առաջ ձորերում ապրել են գաղանները և քարայրները եղել են նրանց որջերը:

Արևը թեքվում է սարի հետևը: Քաղաքում զարթնում է երեկոյան աղմուկը: Ձորանոցների կողմից լսվում է գիշերահավաքի փողի ձայնը... Բոլորովին մոտիկ կողպում են մի դարբաս: Իսկ «ոռուսաց ժամի» ոսկեփայլ գմբեթն ու խաչը դեռ լողում են արևի ալիքների մեջ:

Քարափի վրայով լայն ճանապարհ է, որ գալիս է հեռվի այգիներից, անտառից, մեր գյուղի ցրված հանդերից: Գյուղի ճանապարհն է, որ թեև քաղաքի փեշով է անցնում, բայց չի տարբերվում գյուղի մյուս ճանապարհներից: Նույն խոչն ու խուժը, նույն քարերը, տաք փոշին, շարդված հասկերը, շորացած խոտը և անասունների աղբը: Նույնիսկ գետինը գյուղի հոտն ունի:

Այդ ճանապարհը միայն մեր գյուղիցն է: Առաջ, երբ քաղաքը չկար, երբ քարափի կարաններում ապրում էր գանգուր մագերով լիսեմներ, մեր ճանապարհը հեշտ էր և անցնում էր այնտեղով, ուր քաղաքի բուլվարն է և «ոռուսի ժամը»: Տարեցտարի ճանապարհը ետ է գցվել և եթե մի քիչ էլ քաղաքը հրեր, գյուղի ճանապարհը պետք է ընկներ հեղեղատի վրայով:

Ամառ երեկոները սպիտակ շորերով աղջիկներ ու տղաներ գալիս են ու քարափի վրա նստում: Նրանք նվագում են մանդոլին, կիթառ, նրանք երգում են ոռուսերեն, ապա բարձր ծիծաղում են և ձորի քարանձավներում նրանց առույգ ծիծաղն արձագանք է տալիս ահավոր կերպով, ասես ձորը քրքրում է նրանց հիմարության հանդեպ:

Ենում են աստղերը: Երեկոյան դեմ նրանք դեռ աղոտ են, բայց շարժվում են, կարծես տիեզերքի անհուն խորքերից նրանք մոտենում են մեզ, ինչքան մթնում է՝ այնքան ավելի մոտ են աստղերը, այնքան ավելի շողշողում են՝ դեղին, սպիտակ, կապույտ...

* *
*

Անդոն պառկել է կողքի վրա:

Նրա դեմքը կոշտացել է, շրթունքները հաստ են: Վերին շրթունքի վրա դեղին աղվամազը փայլում է, ինչպես նոր ծլած սիզախոտը: Աչքերն են առաջվանը՝ սև, ժիր, անհանգիստ: Նա պոկում է խոտը, թափում է:

Այդ նրան ձանձրացնում է. աչքն ընկնում է ծղնոտի փշրանքին, ծղնոտը մոտեցնում է շրթունքին: Հանկարծ լսվում է աղջկա հնչուն ծիծաղ: Միծաղում է մի առողջ կուրծք:

Գլուխս դարձնում եմ այն կողմը:

— Ճանաչեցի՞ր,— հարցնում է Անդոն:— Մաշոն է...— պատասխանում է և ծամծամում ծղնոտի կտորը:

— Քիֆլիս է կարգում... Երկու տարուց կվերջացնի գիմնազը:

— Իսկ էն տղերքն ո՞վ են...

— Էն մեկը ներսես բեյի տղան է, էն երկուսը սմատրիտելի տղերքն են, էն կանգնածը Սոնան է:

— Նա մի դասարան ցածր էր:

— Ասում են լավ աղջիկ չի:

— Ի՞նչ է անում որ...

— Տղաների հետ միշտ գնում է բաղերը:

Այնտեղ կիթառ են նվագում: Մաշոն երգում է, մի թավ ձայն մեղմ երկրորդում է նրան:

Անձանաչելի են թվում Սոնան, Մաշոն: Ինչպես ընկղմվող քարը, իմ հիշողության մեջ դողդողում է մեր դասարանը, ծիրանի ոսկեգօծ ծառը և ապա սուզվում մոռացության խավար խորքը: Նրանք ուրիշ աշխարհից են, մենք ուրիշ:

Առաջ էլ այդպես էր... Ատելություն է ծնվում իմ ներսը դեպի այդ խումբը, որ ուրախ նվագում է, երգում: Եվ օտարի պես նայում եմ նրանց կողմը:

— Անդո՛, հիշո՞ւմ ես Նուշիկին:

— Նուշիկը լա՛վ աղջիկ էր...

— Մայրը մնո՞ւմ է:

— Հա՛, էլի վացք է անում:

Մեր հարևանները հեռանում են, մեր խոսակցությունն ընդհատվում է: Մաշոն մեծացել, գեղեցկացել է: Նայեց մեր կողմը, երեսը շրջեց: Նա թափ էր տալիս փեշերը, ինչպես առաջ, երբ նստարանից վեր էր կենում: Նրանք հեռանում են, մթնում դեռ երևում է Մաշոյի սպիտակ սիլուետը: Ինձ թվում է, որ նա գլուխը խոնարհում է և հիշում մեր դասարանը, մեր մանկությունը:

Էլ ուրիշ շատ զգացումներ են զարթնում իմ սրտում, ջերմ զգացումներ: Իմ սրտում էլ ատելություն չկա, և ես անտարբեր նայում եմ մթնում հալվող սպիտակ շորերով Մաշոյին:

* *
*

Ամեն երեկո մենք հանդիպում ենք իրար նույն տեղը՝ ես ու Անդան
Նա պառկում է կողքի վրա, ես նստում եմ քարին: Նա դեպի քաղաքն
է նայում, դեպի գյուղի ճանապարհը, որով անցնում են այգիներից և
արտերից վերադարձող հոգնած մարդիկ և եզներ:

Ներքեք, ուր հին մաքաղներն են, առավոտ կանուխ հավաքվում
են մշակները: Անդոն նրանց հետ է: Քար են շարդում և պայթեցնում են
քարափները նոր առվի համար: Անդոն գիշերը քնում է տախտակների
վրա և հսկում մուրճերի, քլունգների կույտը:

«Իլիստրիկի» են կառուցում Բաղիրովի տղաները: Նրանք քաղա-
քում աներ ու խանութներ ունեն, նրանց մեծ եզքայրը Բաբու հարստու-
թյուն է դիզել և վերադարձել է մեր քաղաքը էլեկտրակայան կառուցելու
քարափի տակ, ուր գետը սահանքներ է գոյացնում:

Անդան մշակ է, քար է շարդում ցեղեկը, երեկոյան ինձ պատմում է
«Իլիստրիկի» մասին, մշակների մասին և այնպիսի բաներ, որ չեմ կար-
դացել իմ գրքերում:

Երբեմն ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարգացած գրք-
քեթի մասին: Ես նրան պատմում եմ գիտեցածիս ամենայալը, կարծես
ընծայում եմ իմ վեգերի ամենագեղեցիկը, ինչպես երեխա ժամանակի
Նա տնտղում է իմ ընծան և կարծես դժգոհ է, որ ուզածը չեմ պատմում:
Իսկ ինքն ինչե՞ր գիտի...

Վերի գյուղի ուսուցիչն ասել է, որ պատերազմը շուտ չի վերջանա
և պիտի լինի «ասեղ հեղափոխություն», որ անտառում երկու զինված
մարդ հարձակվել են փոստի վրա, սպանել են ստրամենիկին, փոստը կտրել,
որ ներքի կարանում գիշերը մինչև լույս կարտ են խաղում, որ Միրզա
Դավիթի տղա գիմնազիստ Վանոն ամեն օր հոր դախլից փող է գողանում
և տանուլ տալիս, որ մեր հայոց լեզվի վարժապետ Միևաթի տանը «հոմի-
տե» է նստում և նրանց ներքնահարկը լիքը զենք է...

— Ո՞վ քեզ ասաց, Անդո՞...

— Իմացել եմ:

— Զի կարող պատահի, վարժապետին խեղույն կբռնեն,— առաջիկում
եմ ես:

— Վարժապետը զենքը հենց կառավարությունից է ստանում:

Անդոյի աշխարհն ավելի հետաքրքիր է, ավելի խորք: Մարդիկ եր-
կուանում են իմ աչքին. վարժապետը ցեղեկը դաս է տալիս, իսկ մթանը
իջնում է ներքնահարկը և փամփուշտ հաշվում, Վանին գրքերը թևի տակ

առավոտը գնում է «ամատրիտեի» տունը, իսկ գիշերը կարանում թուղթ
է խաղում:

— Անդո, ուզո՞ւմ ես սովորել...

— Իմ սովորելը վերջացավ: Ապերը հրեն հիվանդ...

— Արի քեզ դաս տամ:

— Գիշեր-ցերեկ բանի եմ, ո՞նց սովորեմ... Հրես մոնսյորից թե
կարողացա մի բան սովորեմ...

...Այն ամառը ես մենակ էի բարձրանում բրուտների քարայրը, նրս-
տում էի բրուտ Ավագի դուանը, ծերունին ցեխոտ ոտքով դարձնում էր
շաբիրը և անսպաս հետաքրքրությամբ լսում իմ պատմածը: Երբեմն Չո-
լախն էր գալիս:

Ամպամած մի օր մենակ իջնում էի բրուտների կածանով: Քարերը
զարգվում էին դեպի խորխորատները և նրանց ազմուկից վախեցած աղա՛վ-
նիները անհանգիստ ճախրում էին:

Ես զգացի մի ծանրություն, մի ծանր տխրություն: Կարծես մի բան
հասել էր, ինչպես պտուղը, ահա վայր պիտի ընկնի և թեթևացած ճյուղը
պիտի ձգվի: Ես շգիտեի, որ իմ սրտի ծանրությունն այդ մուսյլ ձորերն
էին, ախուր արահետը, որով շատ քիչ մարդ է անցնում: Ինչքան իջնում
էի, այնքան արագացնում էի քայլերս, կարծես հետևում թողնում էի այդ
ծանրությունը:

Երբեմն, տաքիներ ընգմեջ, եղեկ եմ մեր թաղեհում: Սակայն ամ-
պամած այդ օրից հետո էլ չեմ բարձրացել բրուտների ճանապարհով:
Ինձ պատմել են, որ այնտեղ էլ ոչ մի շարիս չի պատվում, որ մի մեծ
ժայռ փլվել և տակովն է արել այն քարայրը, որտեղ աշխատում էր շուախ
Եզրը:

* *
*

Իմ հիշողության մթազնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատ-
կեր: Դժվարությամբ եմ ճանաչում դիրքը, կապակցում մարդուն ու շրջա-
պատը... Մեր քարափն է, խավար ձորը, որտեղ ոչինչ չի երևում: Մյուս
ափը լույս է: Քարերը սպիտակ են, ինչպես ձյունի կույտերը գարնան
հալոցքի գիշերը: Կարմիր ու սև եզները նստել են քարերի մոտ, նրանք
անշարժ որոճում են և թվում է, թե քարերը կարող են եզներ դառնալ կամ
թե եզները, եթե շատ նստեն, կբարանան: Մեկը փաթաթվել է մաշված
կարպետի մեջ և քարի տակ քնել է...

Որքան պրպտում եմ, շեմ կարողանում որոշել, թե ե՞րբ եմ տեսել մթին ձորի լուսավոր ափը, կանաչ խոտերի վրա հանգստացող սև եզները: Իսկ քարափի գլխին կանգնած ստվերն իմ ընկերն է, բրուտի տղան: Նա սեղմում է իմ ձեռքը: Ես փողոցի անկյունից ետ եմ նայում: Դեռ կանգնել է քարափի գլխին և դժվար է որոշել, թե որ կողմն է ուղղված նրա հայացքը: Նա ձեռնափայտ շունի, բայց կոացել է այնպես, կարծես ծնոտը հենել է փայտին:

Նույն կառքը, նույն ճանապարհը, որ շողշողում է մթի մեջ, ինչպես փրփուր ջուրը: Նույն զանգուլակները և տխուր ձանձրույթը:

Եվ հանկարծ մթնում վառվեցին ճրագները, կարծես միանգամից լույսի ալիքներ ծփացին քաղաքի վրա, ինչպես քամուց ծփում է հասած արտը:

Ես մտածում եմ, որ Անդոն իջել է ձորը, Դամուրի ավերակ մարազը, որ կենդանացել է, խորացել, որովհետև ներսը մեքենաներ են դարսել և պողպատներ հագցրել ժայռերին: Հիմա բանտարկված գազանի նման մոտորը մռնում է խոնավ քարանձավում, որի կտուրից ջուր է կաթկթում:

Անդոն կրակ է արել դուրսը, մուտքի մոտ, որտեղ քարը փորել են և խոռոչում օջախ սարքել: Նա պղնձե սևացած թեյամանը կախել է կրակի վրա և բոցը թրթռում է ձորում:

Շուտով բոլորովին կմթնի, օջախի կրակը կհանգչի, Անդոն կփաթաթվի մեքենայի ծածկոցի մեջ և հոգնած աչքերով մինչև լույս կնայի կարմիր լամպին, պղնձյա սլաքներին և փոկերին: Հոգնած կոպիներ կժանրանան աչքերի վրա, սակայն նրա զգաստ լսողութունը կհետևի փոկերի աղմուկին:

Սարից փչում է սառը քամին: Կառքը բարձրանում է դեպի կառաքը... Ներքևում թարթում են բազմաթիվ ճրագներ, նրանք հսկում են քաղաքի վրա: Ծրագները հանկարծ ուժեղացնում են լույսը, ապա մեղմում: Կառքը գլորվում է սարի մյուս երեսը: Իմ մտքում հրաժեշտի խոսքեր եմ ասում քաղաքին, Գյունեյ թաղին, մեր Ցից քարին և իմ մանկության ընկեր Անդոյին:

— Երեք անգամ եթե լույսերը սպիտակեն, ուրեմն իմացիր...

Այդպես ասաց Անդոն, երբ դուրս եկանք քարանձավից: Նա ինձ համար էր անում, այդպես ինձ էր հրաժեշտ տալիս:

Երրորդ անգամ ես շտեսա, թե ինչպես հանդարտեցին ճրագները: Քաղաքի վրա սպիտակ, կաթնաման լույս էր...

Սարի մյուս երեսը խաղվար էր: Լուսինը ցածր էր և սարի կատարը

ծածկում էր ձորը լուսնի սպիտակ մանգաղից: Կառքը գլորվում էր ցած, թվում էր, թե անդունդն ենք իջնում, անհաստակ անդունդը:

Այսպես անդունդում սուզվում էր մեր Գյունեյ թաղը, երբ իջնում էր խավարը, քաղաքը ողողվում էր առատ լույսով, իսկ գյուղում հանգչում էր վերջին կավե ճրագը:

Քարափի գլխից Անդոն նայում էր գյուղի կողմը և դառնացած ասում, որ պղնձե լարերը շեն անցնում գետի մյուս ափը, քարերի մեջ կորած մեր խավար գյուղը:

* * *

Իբրև վաղեմի պատմագիր, դողացող ձեռքերով ես գրում եմ իմ պատմության վերջին էջերը: Հարկավոր է պատրույզը բարձրացնել և մինչև ձեթը հատնի, ավարտել անկրկնելի օրերի պատմութունը:

Հիմա էլ մնում է մեր քարափը, իբրև հսկայի մատ՝ Ցից քարը մեր թաղի գլխին: Ուզում եմ, որ այս անգարդ տողերը մնան այնքան, որքան կմնա մեր քարափը:

Վրա հասան դառնաշունչ օրերը, ինչպես ցուրտ աշուն: Արտերում հասած ցորենները ծլում էին, հողի մշակները մրսում էին խրամատներում և անվարժ ձեռքերով շարժում հրացանի փակաղակը: Արձիճե կարկուտը ծեծում էր քարերն ու քարափները, հրանոթի գնդակը շառաչելով պայթում էր ծմակներում, սարսափահար անում մարդկանց ու գազաններին, ջարդում դողահար ծառերը:

Չորեք ձմեռը, մահվան նման սառն ու անողորմ:

Քաղաքում գզգզված մազերով մի մոնտյոր, մազութից սևացած շորերով, սանդուղքն ուսին, իբրև լապտերավառ, տնետուն էր ման գալիս: Մի տեղ բուքը պղնձե թելերն էր կտրատել, մյուս տեղը գնդակը փշրել էր լամպը: Երապնելը ճեղքել էր սյունը, սպիտակ բաժակները ցած էին կախվել և աղիոողրոմ զրնգում էին, երբ քամին իրար էր խառնում թելերը:

Մոնտյորն ամեն տեղ լինում էր: Նա լսում էր, թե ինչ են խոսում տներում հավաքված մարդիկ. նա տեսնում էր, ով ինչպես է ապրում: Մի անգամ նա տեսավ Մաշոյին ձյունի նման սպիտակ շորերով, մազերի մեջ՝ թառամած մանուշակներ: Նա իջնում էր սանդուղքով, մի սուլայի հետ թևանցուկ, իսկ Անդոն կապկպում էր էլեկտրալարը:

Կինը գլուխը վեր բարձրացրեց: Նրա հայացքում կար պաղ անտարբերութուն, կարծես սյունի վրայից նայողը Անդոն չէր, այլ անմարմին

մի խրտովիակ: Սպան որսաց կնոջ հայացքը, զննող աչքերով նայեց վերև: Անդոն դանդաղ կապկպեց լարերը, աչքերը չհեռացնելով սպայից:

Քշնամին էր, Լեոնա-Հայաստանի հետախույզ բաժնի սպան: Եթե նա գիտենաւ, որ բոլորովին մոտիկ, սյունի տակ ընկած կաշվե պայուսակի մէջ պահւած թուղթը կմատնէր մոտայորին, ինչպիսի գազանային ուրախությամբ սյունից կիջեցներ նրան և կքշեր խոնավ զնդանը:

Երբեմն ճրագները թարթում էին երկու անգամ, երեք անգամ: Ամբողջ քաղաքն ընկզմվում էր խավարի մեջ և ապա հանկարծ լույսերը բռնկվում էին: Անդոն էր այդպես անում, երբ նրան պատվիրում էր մեկը, որին Անդոն երբեմն տեսնում էր քաղաքի խուլ թաղերից մեկի ներքնահարկ տանը:

Եվ այդ գիշեր քաղաքի զանազան անկյուններից մի քանի հոգի զարտուղի ճանապարհներով, այգիների արանքով, իջնում էին ձորը: Հին քարանձավում ձեթի ճրագի լույսը ճոճովում էր սևացած պատերի վրա: Ճրագի շուրջը նստողների սովերները թրթռում էին պատերի վրա, կարծես սովերները ճիգ էին անում խոնոց թևերը կտրելու ճրագից:

Ամենից բարձր խոսողը մի վիթխարի տղամարդ էր, որ ցերեկը իջևանատան կամարի տակ նստած պայտ էր ծեծում: Մեղմ, ջերմ ձայնով խոսում էր այն ընկերը, որ ապրում էր ներքնահարկ տանը և ցերեկը դնում էր սև ափնոց: Նա հաղորդում էր տեղեկութուններ զինվորների ու զենքերի մասին և հրահանգներ, որ ստացվում էին ընդհատակյա ճանապարհով: Երբեմն քաղաք էին գալիս գյուղերից և հեռու հանքերից. գալիս էին զարտուղի ճանապարհներով, երբեմն օրը ցերեկով՝ իբրև ածխավաճառ, իբրև ձին պայտարի մոտ բերած գյուղացիներ:

Անդոն անխափան շէր լսում նրանց: Եթե ձորում մի շշուկ լսվեր, նա դուրս էր թալում: Դրսի հսկողութունը նրա վրա էր: Նրանից լավ ոչ ոք չգիտեր ձորի ժայռերը, մութ քարայրները և նեղ արահետները:

Բուքը խաղում էր ձորում: Մրսած գալչերը իջնում էին Դրնգանի անտառից, հոտոտում մարդկանց հետքերը, մոտենում քարայրին: Ապա տարսափահար փախչում էին մեքենայի աղմուկից, լույսից, թեթև սուլոցից փախչում էին և նորից ոռնում քնի մեջ ընկղմած թաղերի վրա:

Լուսադեմին քարանձավի մարդիկ մեկ-մեկ ցրվում էին: Նրանք նեղ առապարներով և այգիների ճանապարհով գնում էին դեպի քաղաքի լուս փողոցները: Գնում էին և հետքերը կորցնում: Զորն իսպառ ամայանում էր: Անդոն հանգցնում էր ձեթի ճրագը, պահում սլատի ճեղքի մեջ և վերագառնում մեքենայի մոտ:

Երբեմն քարի տակից հանում էր ապագիտ առափն լողուններ, որ

ստացել էին սուրհանդակի հետ: Նա փակում էր դուռը, թուղթը մոտեցնում կարմիր լամպին: Խունացած թուղթը արնագույն էր դառնում և սև տառերը պողպատի սառնությամբ ասում էին.

— Խաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին...

Դրսում ոռնում էր բուքը: Քաղաքի ու նրա բնակիչների վրա ծանրացել էր երկաթի խեղդող մի կափարիչ, ծանր, ինչպես ձմռան խավար գիշերը:

Պայծառ վառվում էր միայն մի կարմիր ճրագ, որի լույսի տակ մի երիտասարդ կամբ հզորանում էր փշրելու խավար կափարիչը: Ու նորից էր կարգում տպագիր թուղթը բրուտի տղան, Անա զիզու շար Անդոն: Զնշում էր լուսաբացը:

* * *

Այն գարնանը ձյունը դժվար վեր կացավ: Քարերը մերկացել էին, բայց նրանց հյուսիսային կողմը մնում էր ձյունը, որ լուսնյակ գիշերներին կապտին էր տալիս:

Բրուտ Ավագը էլ վերև չէր բարձրանում: Գետերի ճանապարհը փակ էր, ամեն քարի հետևը մահ էր: Էլ չէին առնում ո՛չ գավաթ, ո՛չ կարաս: Նա Գյունեյ թաղի եզների հետ մասն էր գալիս տաք ձորերում: Մաշված եզները կոշտ լեզվով լիզում էին կանաչ մամուռը:

Նրանք հոգնում էին և փնշալով նստում քարերի արևադարձ կողմը, որոճում անշառժ, ինչպես քարերը: Եզնարած Ավագը փաթաթվում էր կարպետի մեջ և կուշ գալիս եզների արանքում:

Երբեմն եզները մոտ էր քշում ձորին: Դիմացք՝ մյուս ափին ամբարտակն էր, քարափի տակով անցնող առուն և փայտե նովը, որով ջուրը շառաշով թափվում էր և դարձնում «իլիստրիկու մաշինը»:

Ցերեկը քարայրն ամայի էր, դուռը կողպ: Բրուտ Ավագը նստում էր քարի գլխին, ինչպես մեկը այն հեքիաթային ձևերից, որ կերտել էր մութ տարերքի քմահաճույքը: Այդ արձանացած մարդը ամայի ձորի վրա մաղում էր այն տխուր երգերից, որոնց հնչյունները մաքուր են, ինչպես աքցանօրը, և հնամյա, ինչպես անտառի խշշոցը, գետի անվախճան գանգուռը:

Քառեր շկային և ինչի՞ էր պետք բառը, երբ այդ ձորում ամեն ինչ ասում էր որդու մասին, նույնիսկ քարանձավի փակ դուռը, օջախի սևա-

ցած պատերը: Մի՞թե բառը կարող էր անոթ դառնալ և պարփակել նրա հուզվածը, որ խռնվել էին, ինչպես վերևում հանդիպած կոունկների երամբ:



Կարմիր բանակի 84-րդ բրիգադը վրան էր զարկել լեռնաշղթայի ներկարուծյամբ: Հյուսիսից և արևելքից կարմիր զինվորը կիրճերով, ծեր-պերով առաջ էին գալիս, փշրելով սպարապետի զորամասերի հուսահատ դիմադրությունը: Արևմտյան ճակատում, ուր անխորտակելի պարսպի պես կանգնել էր 84-րդ բրիգադը, առաջին թեթև ընդհարումներն էին թնդանոթների երախները մուռնջ նայում էին քաղաքի կողմը:

Օղակված քաղաքը դարձել էր ռազմական ճամբար: Ու թեև վխտում էին զինավառված խմբեր, գայլավաշտեր, սակայն նրանց բոլորի դեմքին խարանված էր անխուսափելի պարտությունը, ինչպես վախճանը՝ մահամերձի երեսին: Մի կանաչ հիդրա շղաձգությամբ շարժում էր ծանր մարմինը, կծկվում էր, ինչպես փախուստ փնտրող օձը:

Իսկ ռազմաճակատը մոտենում էր, ինչպես ամեհի ալիքը:

— Գալիս են,— ասում էին իրար: Ու մանք ավելացնում էին «մերոնք», ու մանք՝ «նրանք», իսկ մնացածները միայն հաղորդում էին, որ գալիս են:

Գիշերը քաղաքում լույսեր չէին վառվում: Լիալուսինն էր ցոլում պղնձյա լարերի վրա և պարտեզներում հոսող ջինջ առունների մեջ:

Ու մի օր, արևի հետ, թնդանոթի արկը թռավ քաղաքի վրայով և պայթեց զորանոցների մոտ: Առաջին պայթյունը կարծես նրա համար էր, որ հաստատեր, թե գալիս են...

84-րդ բրիգադը խոսում էր արձիճի լեզվով:

Սաստիկացավ խուճապը: Գայլավաշտերը հրաման ստացան նահանջի ճանապարհը բռնելու:

Մարդիկ փակեցին դուռ և լուսամուտ, ու վազեցին ունեին դուռ ու լուսամուտ: Փողոցներից դեպի տները քաշվեցին նրանք, որոնց համար զենքը ծանր բեռ էր: Զարթնեց հույսը, թե շուտով նորից կանեն մանգաղն ու գերանդին:

Անա զիզին քաղաքի փողոցներում մոլորվել էր՝ վախից, անհանգրստությունից: Այդքան երկար նա երբեք չէր եղել քաղաքի փողոցներում: Խեղճ մայրն ազահ լսում էր այն ամենը, ինչ խոսվում էր առաջխաղացող բանակի մասին:

Իր սենյակում, հետախույզ բաժնի սպան, ատամները կրճտացնելով, պատմում էր գունատ Մաշոյին, թե ամբողջ ձմեռը ձորից սիգնալ է տվել այն տղան, որ իրենց տան առաջ լուռ ու մուռնջ կապում էր էլեկտրալարը: Պատմում էր և պատուհանի վրա ամրացնում զնդացիները:

Իսկ շտապ ու շիվար Մաշոն լցնում էր սնդուկները, կողպում, կապկռպում: Նա լավ չէր հասկանում ամուսնու ասածը, ինչպես դժվար դասը...



Մյուս օրը լեռան հետևից հրետանին սկսեց ուժեղանալ: Քաղաքում այս ու այնտեղ լավեցին պայթյունի որոտներ: Եկեղեցու խաչը թեթվեց, ճոճվեց, ինչպես ճյուղը: Ապա հանկարծ ընկավ ընկուզենու վրա՝ խրվեց գետին:

Միանգամայն անսպասելի կերպով ձորի կողմից քաղաք մտան չորս ձիավոր: Նրանց առաջից գնում էր մեկը, ոսկեգույն ձիու վրա: Նրանք մի վայրկյան կանգնեցին քաղաքի սահմանագլխում, ապա երբ որոտացին թնդանոթները, նրանցից երկուսը քշեցին գերեզմանատան կողմը, փրկափրկացնելով փոքրիկ կարմիր դրոշակները: Նրանք դրոշակները խրեցին գերեզմանատան բլուրի վրա, որպես հրետանու նշանացույց: Ապա քարափի բաշով քշեցին դեպի կամուրջը:

Այս անգամ թնդանոթը խփեց ուղիղ քարափին: Քարից կտորներ թռան դեպի ձիավորները: Ներքևից լավեց պայթյուն:

— Դրոշակը շարժի՛ր,— գոռաց ոսկեգույն ձիավորը, արագ նայելով ձորի կողմը:

Մուխի մեջ կանգուն էր էլեկտրակայանը:

Ու ձիավորը փրփրած ձին ասպանդակեց դեպի կամուրջը, որտեղով քաղաք պիտի մտներ կարմիր հեծելազորը:

Ոսկեգույն ձիավորը ճեղքեց ամայի հրապարակը և քշեց կարճ փողոցով դեպի կամուրջը:

Այդ վայրկյանին պատշգամբից արձիճ տեղաց զնդացիները: Մի կին ճչաց:

— Վա՛յ, բալա ջան...

Ձիավորը թեթվեց մի կողմի վրա և կախվեց, ինչպես հնձած հասկը: Փրփրած ձին խրտնեց ու սլացավ: Հեծվորի ոտքը մնաց ասպանդակի մեջ: Տաք մարմինը քարեքար դիպչելով շաղ տվեց արյուն և ուղեղ:

Փողոցի մեջտեղը շնչահեղձ պառկել էր Անա զիզին և լիզում էր որ-

դու տաք արյան առաջին շիթը... Կրղում էր հողը, արյունը, երեսը քսում էր գետնին և շանգոտառում անմոռուչ գետինը:

* *

*

Այն կողմերում այժմ էլ գարնանն ամպ է նստում: Մեր Գյուղն էլ թաղը կորչում է, ամպի միջից երևում է Յից քարը: Բայց երբ քաշվում է ամպը, երևում են քաղաքի տների կտուրները:

Ռուսաց «ժամի» տեղը կանաչ պարտեզ է: Չորը փոխվել է: Այնտեղ սպիտակին են տալիս եկեղեցու տաշած քարերը: Նոր հիդրոկայան է, արևառ և ընդարձակ: Քարափից ներքև է իջնում լայն ճանապարհը: Գարնանը դպրոցական երեխաներին տանում են ձորը և նրանց բացատրում են, թե ինչպես են աշխատում մեքենաները:

Նորոգ երկիր, նոր մանուկներ...

Դիպվածը ինձ էլ նետեց մեր հին թաղը: Ըս հաստատ քայլերով կոխում էի այն ճանապարհները, ուր խաղալով անցել է իմ մանկությունը: Ահա նեղը, փոփոան շուրք, քեզի թունավոր թփերը: Իմ ընկեր Անդոն առում էր, որ օձերը իրենց լեղին պատրաստում են նրա տերևից:

Բիրլիական Հովրի նման խարխուլ տան առաջ նստել էր բրուտ Ավագը: Նա գրկեց ինձ և ինչպես կույրը, շոյեց դեմքս:

— Անդոն, իմ Անդոն...

Արցունք շերտաց նրա ցավից կծկվող դեմքի վրա, թեև ձայնը խուլ հեկեկանքից զողում էր: Կարծես աչքերի հետ ցամաքել էին արցունքի ակները:

Մեր թաղի գերեզմանատանը թաղված է Անա գիզին: Գերեզմանաքար չկա, ո՛չ գիր, ո՛չ հուշարձան: Գարնանը կանաչում է թումբը, մուխտտերը խեղդում են վաղաճաս ծաղիկներին, ասես ապահով են, որ չի զարթնի Անա գիզին և նրա ոսկորն «ղմալթին» էլ չի քաղհանի:

Երեկոները քարափին շարվում են ուրիշ աղջիկներ, նրանց մանդրլինը նվագում է նոր երգեր: Ծվ երբ հոգնում են, սկսում են պարզ զրույցը: Տղաներից մեկը ցույց է տալիս ձորի ճեղքված քարը և պատմում է բրուտի տղա Անդոյի կյանքն ու մահը:

— Կարմիր հեծեկազորը քաղաք մտավ կամուրջի կողմից... Հրացանների վրա նրանք բերում էին Անդոյի արյունոտ մարմինը:

Էլ ի՞նչ: Վա՛յր դեմ գրիչս...

Բայց ինչո՞ւ են զողում մատներս այս ծով ուրախությունից: Որ ես

ժամանակի խոր ծալքերից իմ թույլ գրիչով վե՞ր հանեցի իմ մանկու-
թյան ընկեր Անդոյի հերոսական դեմքը:

Ախ, ինչքան նոր Անդոններ կան այս թուխ պատանիների մեջ, որոնք հին քարափի գլխին, իբրև անգիր զրույց, թերթում են սկզբի լույս էջերը: Ու դեռ մի անգամ ևս համայն աշխարհում մեր թնդանոթները հզորագույն կշառաչեն հին խոսքը:

— Խաղաղությո՞ւն խրճիթներին, պատերա՛զմ պալատներին:

1931

Սեվ «ՀԱՅԸ»

1

Հանգչում էր քաղաքի աղմուկը:

Կարծես դաշտ էր, ուր լուսաբացին՝ առաջին ավտոյի աղմուկից սկսվել էր ճակատամարտի ժխորը, կեսօրին թեժացել, երեկոյան դեմ միսկարները հավաքել էին պղինձը, դարբինները դարսել էին մուրճերը, լուել էին մեքենաները:

Երեկոյի տաք անձրևը նոր ծաղկած ծառերին, մայթի քարերին ու ծանր կավահողին բաշխել էր զով, պղտոր ջրի լճակներ ու ծանր ցեխ: Սպիտակ ամպերը սարերից սողացել էին դեպի քաղաք և անգլուխ կարավանի նման դանդաղ ու մունջ պտույտ էին անում փողոցներով, քսվում կտուրներին:

Տների բարձր հարկերը չէին երևում ամպի սպիտակ ջուլաների մեջ: Նրանք օրորվում էին, իրենց հետ օրորում տները, հեռագրասյուները, էլեկտրական լամպերը և նրանց ցուլքը՝ անձրևաջրի պղտոր լճակներում:

Ամբողջ քաղաքի վրա բարձր աշտարակից ռադիոն թափում էր գարնանային երգի տաք ելևէջներ: Աշտարակի ներսը մի աղջիկ մաքուր ձայնով երգում էր բամբակի գաշտերի և հասած արտերի երգը: Բազմաթիվ ուսպորներ այդ զվարթ երգը մաղում էին քաղաքի վրա:

Բարձրախոսների տակ խումբ-խումբ մարդիկ լուռ լսում էին, մշակը՝ հենված պատին, լրագրավաճառը՝ թերթերը թևի տակ, տղան՝ ազգաթևը գրկած, կառապանը՝ «կողու» վրա, — նույնիսկ ձիերը կախել էին ականջները, քրտինք էր գոլորշիանում նրանց մարմնից, ձիերը մրսում էին խոնավութունից, բայց նրանք էլ անշարժ լսում էին:

— 191 —

Լեոնը գլխավոր փողոցից ծովեց դեպի ձախ:

Անկյունում նրա ականջին ընկավ երգը, տեսավ լուռ լսողների խումբը: Նա գլուխը վեր բարձրացրեց և զարմացավ, կարծես առաջին անգամ էր տեսնում սյունին կապած բարձրախոսը: Երգը վրդովեց նրա մտքերի ընթացքը, բայց երբ ծովեց դեպի նեղ փողոցը, մտքերի հոսանքը նորից մտավ ծանոթ հունը: Ու գլուխը կախ գնաց, կոխտուելով թանձր ցեխը և անձրևաշուրը:

Թևի տակ պորտֆելն էր: Եվ նրա միտքը շարունակում էր աշխատել այն թվերի և հաշիվների հետ, որոնցից նոր էր բաժանվել:

Նա շատ անգամ է նստում մինչև կես գիշեր այն սենյակում, որի պատուհանից երևում է քաղաքի մեծ մասը, բլուրները, ճանապարհները, որոնք կեռ ու մեռ գնում են, գնում են անվախճան՝ դեպի ուրիշ քաղաքներ ու գյուղեր: Այդ ճանապարհներով Լեոնն ուղարկում է բազմաթիվ մեքենաներ դեպի գյուղերը և նրանց դաշտերը, որտեղ կա շուր, արև և քրտինք:

Այդ սենյակում Լեոնի գրասեղանն է: Նա փռում է բազմաթիվ աղյուսակներ, ցուցակներ, վերցնում է մատիտը, գլուխը կախում նրանց վրա և հաշվում: Եվ գնում են տրակտորները, գուլթանները, քաշում են երկաթն փոցիները և շարքացանները, զարնան խոնավ հողի մեջ թափվում են սերմեր, ծլում է բամբակը, աղջիկները քաղհանում են, ծաղկում է բամբակը, աղջիկներն իրենց գոգը լցնում են սպիտակ բամբակով և բամբակը գնում է դառնալու գույնզգույն շիթ, աղջիկները հագնում են նախշուն շիթը և երբ խաղում են նրանք, թրթրում է մարմինը, քամին փռվառացնում է դեյրան և ծաղկավոր դեյրան ծփում է, ինչպես արտը:

Լեոնը կանգնեց դռան առաջ, ձեռքը տարավ գրպանը, շոշափեց բաշալին, որ գրպանում տաքացել էր:

Բանալին դարձավ երկու անգամ և ապակյա դուռը բացվեց: Մուժ նախասենյակում նա վարժ շարժումով իր մշտական տեղը հանեց կալոշները: Մի փափուկ բան քսվեց ոտքերին, մոռաց: Մաշխաա մայրիկի Վանա կատուն էր:

— Փիսո՛...

Կատուն հետևեց նրան մինչև սենյակի դուռը, ապա առաջինը ներս մտավ, երբ Լեոնը քաշեց սենյակի դուռը:

Ճրագը վառեց և պորտֆելը գցեց սեղանին:

— Փիսո՛...

Փիսոն մեջքը ուռցրեց. նրա ծովի գույնի մորթը, որ լույսի տակ ծխագույն էր, ալիքածև շարժվեց, ուսերից մինչև պոչը:

Իսկ Լեոնը շշոյեց կատվի ուռուցիկ մեջքը: Կատուն ցած թռավ թախտից և ծանր պոչը քարշ տալով դուրս եկավ սենյակից, իր կատավային դժգոհությունն արտահայտելով խոռով քայլերով:

Լեոնը նստեց թախտի ծայրին: Նա զգաց անտարբեր հոգնություն և ինչպես օտարական սկսեց դիտել իր բնակարանի իրերը: Աչքն ընկավ կանաչ ծաղկամանին, որ կնոջ բազուկի ձև ուներ՝ բարակ մատները միացել էին իրար, կարծես նրանք կենդանի մատներ էին և բռնել էին դաշտային ծաղիկների փունջը:

Լեոնն ավելի խոր դիտեց ծաղկամանը: Մինչ այդ՝ նա չէր նկատել, որ ծաղկամանը շի մերվում սենյակի մյուս իրերին,—կոշտ և շներկած սեղանին, երկաթյա մահճակալին, որի նման հազարները կան հիվանդանոցներում և զորանոցներում: Իսկ գրքերի դարակին հենած հրացանն ուղղակի թշնամաբար էր թեքվել դեպի ծաղկամանը: Փողի բերանը գազազած աչքի պես նայում էր կնոջ ապակյա մատներին:

Բոլոր իրերը իրենց կարճ և գորշ պատմությունն ունեին, բացի ծաղկամանը: Եթե նրա սենյակի իրերն իրենց կյանքը պատմեին, մահճակալը պիտի ասեր, որ ինքը երկաթից է շինված, շորս տարի վրան պահել է վիրավոր զինվորների մարմինը: Ապա նրա վրա պառկել է կուրսանտը, մի համազումարի պատգամավոր, հետո երեք ամիս ընկած է եղել ձյունի և անձրևի տակ, մինչև ընկեր Լեոնի գալը: Թեթև նորոգումից հետո նա անխոռվ իր վրա պահում է Լեոնի շորս փուժը:

Գրքերի դարակը կարճ կվերջացներ՝ «ուտի էի և դարձա դարակ»: Սեղանը կզանգատվեր իր կոտրած ոտքից և մլեկներից, որոնք ձմեռը քնում էին նրա ճաքճաք տախտակների արանքում, որպեսզի ամառն անհանգստություն պատճառեն կենվորին: Միայն մահճակալի տակ ընկած շինողանն ու կողովը կարող էին պատմել արկածներով լի ճանապարհորդությունների մասին:

Վերջապես պատից կախած մաշված գորգը կարող էր պարծենալ, որ իրեն գործել է Լեոնի մայրը, որ բարձր քարափների գլխին թառած գյուղում, արևի տակ իրեն փռում էին և հավերը կոխտոտում էին, մի երեխա լորեթթաթ գնում էր հավերի հետևից, և երբ հավերը հեռանում էին, երեխան աշխատում էր բռնել արևի շողերի մի խուրձ, որ պսպղում էր գորգի վարդերի և նուտերի վրա:

Իսկ ծաղկամանը...

Նա օտարական էր, անակնկալ պայմաններում ձեռք բերված: Փողոցում վիճակախաղ էր անապատան երեխաների օգտին: Լեռնը հասնող պեց Լուսիկի ընկերուհուն և հարցրեց, թե ի՞նչ լուր Լուսիկից: Աղջիկը, որ վիճակախաղի կազմակերպողներից էր, հաղորդեց լուրը և նրա թևից բաշելով մոտեցրեց սեղանին:

Հինգ տոճս միանգամից վերցրեց. երեք՝ փուշ էր, մեկին բաժին ընկավ ուտինն տիկնիկ, մյուսին՝ ծաղկամանը: Տիկնիկից հենց այնտեղ նա նվիրեց մի փոքրիկ աղջկա, իսկ ծաղկամանը Լուսիկի ընկերուհին դրեց նրա պայուսակը, խոստացավ ծաղիկներ բերել և ավելի մանրամասն պատմել Լուսիկի մասին:

Խոստացավ ու շեկավ:

Այստեղ հրացանը կորոտար և կփշրեր ծաղկամանը, եթե նրա հետ փապված շիներ մի ուրիշ անձնավորություն, որի հանդեպ սենյակի բոլոր իրերը, նույնիսկ կողովն ու շամոզանը խորապես երախտաբարո էին, որովհետև այդ անձնավորությունը ամեն օր սրբում էր նրանց փոշին և տեղափոխում, երբ արևը անհանգստացնում էր:

Մյուս Մաջիտա մայրիկն էր, որի այդ սենյակ մտնելը եղավ ծաղկամանը բերելու մյուս օրը: Ներս մտավ պառավը, վանա կապույտ փիտն հետնից: Գատվի ոտնաձայնն ավելի լսելի էր, քան Մաջիտա մայրիկի թեթև քայլերը:

— Էսնա խորոտ ի,—ասաց պառավը և առանց հարցնելու ծաղկամանի մեջ խրեց հասարակ ծաղիկների մի փունջ:

Մենյակի տեսքը միանգամից փոխվեց: Նույնիսկ լերկ պատերը զվարթացան, որովհետև արևը ծաղիկների և ծաղկամանի ստվերը գցում էր պատի վրա: Կարծես գրքերի հետևը թաքնվել էր մի կին և վեր բարձրացրել մերկ բազուկն ու ծաղիկփունջը:

— Միայն մանկություն գորգի վարդերը դժգոհ էին: Թարմ և իսկական ծաղիկները խլում էին նրանց առաջնությունը:

4

Վանա փիտն խոռված դուրս գնաց և նորից նեցս մտավ, խաղալով Մաջիտա մայրիկի կծիկի հետ:

— Ի՞նչն էր նա, տղա: Չայ պիրն՝մ:

— Եթե տաք է:

— Տաք է: Խալվոր նոր խմեց... Գենա դուրսուց իմ խեղճ: Իմ նար ի՞նչխ կելնի, Լեռն:

— Ծն զանգահարել էի բժշկին, շեկավ:

— Եկավ, աստժու լուս խասնի էնոր մեռելաց... Դեղ իտուր. էլմ էնի... Լերդն ի ասաց,—և ապա դառնալով կատվին.—Քելի՛, փիսո՛, քելի՛, լայ պիրենք...

Հիվանդը պառավի ամուսինն էր, նույն միջանցքում ապրող դերձակը, որին համառոտ բոլոր տնվորները, մանավանդ երեխաները՝ «պապե» էին կանչում: Նիհար, քնքուշ դիմագծերով մարդ էր «պապեն», ամբողջ տարին նույն մաշված վերարկուն ուսին, նույն բրդե շալվարը, որ բազմաթիվ կարկատաններից ծանրացել էր:

Մաջիտա մայրիկը և «պապեն» Բաղդադից եկած գաղթականներից էին: «Պապեն» լուկ էր, ավելի հաճախ երեխաների հետ էր խոսում: Մեծերին տեսնելուց մի կողմ էր քաշվում, կարծես ամաշում էր: Իսկ Մաջիտա մայրիկը, կամ ինչպես «պապեն» էր ասում՝ «հանըմը», հաճախ էր բակ դուրս գալիս և զրուցում հարևանուհիների հետ:

Նրա խնամքի առարկան հավերն էին, որոնց համար «պապեն» բազում բույն էր շինել: Հավերը նրա երեխաներն են,—ծիծաղելով ասում էին հարևանները:

Նրանք շատ սխալ չէին: Մաջիտա մայրիկը ոչ միայն կերակրում էր, այլև հավերին խոսեցնում էր: Նրա հավերը անուններ ունեին, բնավորություն:

— Էսոր կապուտս քեֆսըզ էր, կուտ իսկի չկերավ:

— Խմոր թալե առաջը...

— Էն իմանաբզ խորոզ շարչերի գիշերը,—զայրանում էր Մաջիտա մայրիկը:

Եվ ամբողջ բակը պիտի իմանար, որ «խորոզը շարչարել է կապույտ հավին», որ հերվա թխսամայրը ձուի է նստել, որ «էն կանդար կուտ կուտի անիրավ Չայը, մի խատ ծյու չի թալի...»:

Մաջիտա մայրիկը սպառնում էր Չայը մորթել, բայց անցնում էր գարունը, ամառը, հավերը պառավում էին, ծանրանում, իսկ նրա սպառնալիքը չէր իրագործվում: Հավը մեռնում էր բնական մահով, պառավը լաց էր լինում ճշմարիտ և անարատ արցունքով:

Նրանց կյանքի սկիզբը պարզ և հանդարտ էր հոսել: Ապա հանկարծ սևացել էր երկինքը, սևացել էր և գետինը, պայթել էր շարդը, հրդեհը, գաղթը: Անցած ճանապարհներին թողել էին բազմաթիվ անջար գամբարաններ, որոնց մեջ ամփոփված էին սովից, սրից, տապից և ծարավից մահացած մշակներ ու մանուկներ: Բաղդադում պապեն ստացել էր տեղ, որից հյուսիս էր և դեղնել:

Փոխադրվելու առաջին օրից պապեն ու «հանրմը» սկսել էին անկաշառ բարեկամություն և կոնի հետ: Մաջիտա մայրիկը ավելում էր նրա սենյակը, սրբում էր փոշին, երբեմն թեյ էր առաջարկում, փոխարենը և կոնը հատուցում էր բժշկին զանգահանելով, բնակարանի, լույսի և առօրյա այլ կարիքների օգնելով:

— Մաջիտա հանրմի հոգեորդին է և կոնը,— ասում էին հարևանները: Իսկ պառավը խանդաղատանքով էր խոսում նրա մասին, ակնածությունը տալիս նրա անունը և նույնիսկ հարևանների առաջ պարծենում այդպիսի մարդու բարեկամությունը:

«Պապեն» նրա սենյակը ոտք էր կոխում ամիսը մի կամ երկու անգամ և բավականանում էր բարևով: Իսկ մայրիկը պատմում էր իր աշխարհից, որի սահմանները հասնում էին մինչև դարբասը: Մանր պատուհաններ, կցկտուր խոսքեր, հարևանի տան լսածը և վերջապես հավերի զխովն անցածը,— ահա նրա գրույցի առարկան:

Սակայն կար և մի մտեղիմ «թեմա», որի շուրջը Մաջիտա մայրիկի խոսակցությունը ակնարկներից այն կողմը չէր անցնում և որին և կոնը պատասխանում էր բարյացակամ ժպիտով:

5

— Դհա կուզե՞ս...

— Չէ՛, մայրիկ, տաքացա:

— Տնավեր, էն կազախի կիսու շափ է՞լ չկաս... Էն կանդար շայ, ես իմ աստված, հավատալու չի...

«Կազախը» նույն միջանցքում ապրող բարձրահասակ ոռու ոսանողն էր, որից Մաջիտա մայրիկը քաշվում էր: Ոչ մի բառ ոռուներեն չի մանալով, Մաջիտա մայրիկը մտերմացել էր միայն նրա փոքրիկ աղջկա հետ, որի թևերից բռնած հրեմն տանում էր հավաքնի կողմը և կուտը տալիս աղջկանը, որ նա ցրի:

— Լցե՞մ:

— Չէ՛, մայրիկ,— և կոնը տեղից վեր կացավ:— Էսօր ոտքս ցավում է:

— Յարալու ո՞տքդ է...

— Հա՛:

— Ոսկորն է... Եղանակ որ նամացավ, իսա ոսկորիս մեջն է: Որ արե էլավ, օդը չոր՝ հե՛շ...

Մաջիտա մայրիկը բաժակը վերցրեց սեղանից, սրբեց շաքարի փըշ-

րանքը: Լեոնը մոտեցավ գրքերի դարակին, մեջքը դարձրեց դեպի պառավը: Չէր երևում՝ գրքերի՞ն է նայում, թե ծաղկամանին:

Պառավի մտքովն անցավ, որ առիթը հարմար է ավելի որոջ ակնարկելու նրա մասին, բայց այդ ընդհանր և կոնը հանկարծ շոքվեց.

— Խոնավ է, բայց լավ գիշեր է...— Եվ կարծես ինքն իրեն վերջացրեց.— քնել չեմ ուզում, թեև շատ եմ աշխատել...

— Գարուն է... Անուշ օր կբացվի վաղ:

— Ամպամած է երկինքը:

— Մասսի կլոխ պարզ ի... Լուսո մոտ լուսնակ կելնի...

— Այո՞ո՞...

Այդպիսի անորոշ բացականչություններից Մաջիտա մայրիկը խորշում էր: Նա այնքան էր հասկանում, որ այդ ընդհանր և կոնի միտքը անմատչելի հեռուներն է:

— Քելի՛, փիսո՞...— Կատուն մոռաց: Լեոնը մատներով թմբկահարում էր դարակի տախտակը:

— Նայի, որ «պապեն» շուտ առողջանա...

— Ղուրբան քեզի, և կոն, օր շուրիլուս միտքս էտաի:

Եվ պառավը դուրս գնաց «բարի գիշեր» ասելով: Միջանցքում փոմանած կանգնեց և հանդիմանեց իրեն, որ առիթը բաց թողեց և ակնարկ չարեց, որ և կոնին պակասում է «խորոտ կնիկ», որպեսզի օրերը ուրիշ լինեն, ուրիշ...

Իրոք, որ Մաջիտա մայրիկը կորցրեց ամենահարմար առիթը, որովհետև և կոնի վրա իջել էր այնպիսի խաղաղ ժամ, երբ մարդ բացում է ներսը և հանդարտ թերթում, ինչպես իմաստուն մի գիրք:

Գարնան գիշերն էր առիթը, ուղիղի ե՞րգն էր դաշտերի մասին, թե՞ ծաղկամանն էր,— գժվար էր ասել: Գուցե բոլորը միասին, ավելացրած այն գոհ տրամադրությունը, որ ունի մարդ, երբ հաջող ավարտում է աշխատանքը: Գուցե և ուրիշ մութ բան, ինչպես բողբոջի բացվելը, չրերի խոխոջը:

Լեոնը բաց արեց պատուհանի փեղկը: Սառը քամին ներս խուժեց հողի խոնավ բույրով: Մի ընդհանր թարմացավ ճակատը: Մոտեցավ սեղանին, քաշեց արկղը:

Քղթերի, բլուկնոտների, նամակների և նկարների խառնիխուռն կույտեր էին: Կային նազանի փամփուշտներ, որսորդական դատարկ պատրոններ, զմուռսի կտորներ և այլ անպետք ու պիտանի մանրուք:

Նա ետ տվեց մի փաթեթ: Փոքրիկ թերթիկի վրայից իրեն էր նայում և կոնիկը, այնպես, ինչպես այն տարին:

— Շուտով երեք տարին կլրանա,— մտքում ասեց Լևոնը:

Եվ այն, որ շուտով երեք տարին կլրանա, այն, որ Լուսիկի բաց ճակատին մի խոպոպ էր կախվել, որ նրան խանգարում էր գրել, և այն անկրկնելի գարունը,— այդ ամենը նրա սիրտը վրդովեցին անհանգիստ հույզերով: Նա աչքին մոտեցրեց նկարը, ապա դժվարությամբ ետ տարավ, պահեց թղթերի տակ, թափով ետ մղեց սեղանի արկղը: Թափից մեզմ զրնգաց կաթնագույն լուսամփոփը:

Լևոնը տեղում կանգնեց, ձգվեց, մկանները տրաք-տրաքվեցին: Մի ախորժ ջերմություն զգաց և չքացավ անհանգիստ վրդովմունքը:

— Քունս չի տանում... Գնամ Ասաքի մոտ:

Նայեց ժամացույցին. ժամանակ կար: Կարծես այն, որ ժամանակ կար, ավելի հաշտ դարձրեց իրեն այդ վրդովմունքի և վերհիշողության հանդեպ:

Եվ վարագույրը ընկավ ծածկված նկարներից: Առաջին պահ նա զարմացավ. ինչքան բան է հիշում Լուսիկից: Իսկ ինքը կարծում էր, թե չնչին են հետքերը:

Նկարներ են՝ կախված հիշողության պատից: Ահա կատաղած պղտոր գետը ձորի մեջ: Դեղին քարերը փրփուրի միջից ցցել են իրենց շողշողուն գլուխները: Այդ քարերի վրայով, պղտոր գետով անցնում է ինքը, Լուսիկի թևեց բռնած: Եվ դեռ քրքշում են: Ահա Լուսիկի ոտքը սայթաքեց, քիչ մնաց գլորվեք փրփրած ավազանը: Գրկեց մեջքը և ցատկեց ափը: Զոր ցախ ժողովեցին, փոքրիկ խարույկը թեժացավ, փոռեցին Լուսիկի թաց գուլպաները: Իսկ աղջիկը բոբիկ ոտքերը դրել էր տաք մոխրի վրա: Բոցը խաղում էր աղջկա մերկ սրունքների աղոտ հայելու մեջ:

Այս նուրբ նկարը... Լուսնի տակ ճանապարհը սպիտակել է, կարծես մաքուր գետ է հոսում մութի մեջ: Հորիզոնի խորքում շողշողում է Արարատի սպիտակ գլուխը: Կապույտ երկնքի կոր հայելու խորքում արտացոլվում է ուրիշ գագաթ:

Սայլը ճռոտում է ամառվա հանգով: Գյուղից են գալիս: Բացօթյա միտինգ էր, իբրև հանդեսին երգ ու պար: Ոմանք ոտով են: Աղջիկները սայլի վրա էին: Լուսիկը երգում է.

Նուսն կլեպ պոռոչ

Նեխիմ ամա՛ն-ամա՛ն...

Երգում է հագնած, բարակ ձայնով: Սայլը ճռոտում է երգի հանգով օրորալով գնում են եզները:

Այս մեկը խավար է: Այս ամենատաք նկարն է: Գույները կարծես

զոգում են, ինչպես Լուսիկի շրթունքները, երբ ծաղկած ծիրանների փոքրից մտնում էին լուսավոր պողոտան:

Սաղկած ծիրանիների փողոցը... Նույնիսկ փողոց չի կարելի հաշվել, որովհետև ծայրը հետզհետե բաժանվում է նեղ ճանապարհների, որոնք պատերի արանքով տանում են դեպի այգիները և այնտեղից ձգվում լերկ բլուրի առապարները, ուր զարնանը մակաղում է քրդերի ոչխարը:

Այս նկարը խավար է, որովհետև նրանք մութն ընկնելուց էին մտնում այդ փողոցը, որի բնակիչները արևի մայր մտնելու հետ փակում էին տների և պարտեզների փոքր դռնակները: Փողոցը մինչև լուսաբաց մնում էր նրանց ու նման զուլգերի, որոնք իրար շէին ճանաչում, լուսմ էին, երբ լսվում էր ոտնաձայն և քաշվում էին այն խորշերը, որտեղ մութն ավելի թանձր էր, և ծիրանի ճյուղերը ծածկում էին լուսնյակի ու աստղերի լույսը:

Լսվում էր մի ոտնաձայն, Լուսիկը սեղմում էր նրա թևին, շունչը պահում: Անցորդը ուշ մնացած մարդ էր, որ շտապում էր փոքրիկ դռնակներից մեկը բախելու և կամ հարբած էր՝ գնում էր օրորալով. գնում էր՝ կամ հայհոյում, կամ տխուր երգում:

Պատի տակ առուն էր, երեսը բաց, ջուրը սառը: Սարերից էր գլորվում առուն և նա բլուրի այգիներում շառաչում էր իբրև լեռնային վտակ: Իսկ հետո ներքի տափարակում, բրնձի ու բամբակի դաշտերի մեջ, նրա շառաչը մեռնում էր և հանդարտվում էր աղմկոտ խոխոջը:

Նրանք նստում էին առվի եզրին, և երբ հանգում էր զրույցը, լուսնում էին շրերի ձայնը: Նայած թե ի՞նչ էին խոսել, Լուսիկն ի՞նչ էր ասել: Լևոնը սրտնեղել էր նրանից, թե երկուսն էլ ոգևորված խոսել էին սովորելու, աշխատանքի և ո՞վ գիտե, էլ ի՞նչ պայծառ ապագայի մասին:

Եթե սրտնեղել էին, թվում էր, թե առուն էլ շարացել է... Երբ խոսք էր լինում, որ պիտի բաժանվեն, որովհետև Լևոնը գնալու է Մոսկվա սովորելու, կարծես առուն վշտակցում էր Լուսիկին, իսկ երբ ծիրանների տակ զրույցը դառնում էր առօրյա դժվար աշխատանքի և պայքարի շուրջը, լսել էր, թե ինչպես այիքները խփում են քարերին, որոնք խանգարում էին նրանց անարգել ընթացքը:

Եվ ինչ խոսել էին՝ ջուրը տարավ: Համբույրները, հանաքները, այն, որ կավն պատը փոշոտում էր Լուսիկի դեյրան, շունը, որ ցած թռավ և նրանց վախեցրեց,— բոլորը չքացել են, մնացել է զինչ հիշողությունը և մի կսկիծ, որ երբեմն մրմռում է, ինչպես ոտքի սպին: Սակայն այդ սպին նա տեսնում է, շոշափում է և մեղմում է ցավը: Իսկ այն մյուսի հետք... Այ, հենց հիմա, շրթունքները շեն ասում, բայց մտքում կրկնում է:

— Ինչքան լավ աղջիկ էր Լուսիկը...

Մտքում կրկնում է, կարծես թե այդ լավ աղջիկը մեռել է: Բայց Լուսիկը կա. շուտով ինժեներ կդառնա այն քնքուշ աղջիկը: Նրա մատները գծագրելու են, նրա հատակագծով տներ են շինելու:

Այսպես հասարակ եղավ բաժանումը:

Ցտեսություն, ընկեր և տ'ն...

Առաջին և վերջին անգամ նա այդպես ասաց: Իրեն ուղարկեցին շրջան, աղջիկը գնաց Մոսկվա: Հետո ի՞նչ... Խնդրել է, գուցե թե հաշտվի և ինքն էլ գնա: Բայց այնտեղ կարո՞ղ է կրկնվել ծիրանինների փոշո՞ղը...

Անցյալ տարի Լևոնը մի անգամ անցավ այդ կողմերով: Պատահաբար եղավ... Փողոցի աջ կողմը բարձրանում էին նոր տները: Նրանց մի մասը կիսավարտ էին: Փողոցի երկայնքով շարել էին կապույտ որձաբարր: Մնում էր ծիրանինների փողոցի ձախ պատը, պատի հետևը՝ ծառերը: Նույնիսկ տեսավ առուն և այն պատշգամբը, որի տակ մի անգամ հորդ անձրևից պատսպարվել էին:

Ցերեկը, աշխատանքի ժամերին, նա հիշում էր Լուսիկի խոսքերը, երեկվա պատահածը, ուրախությունից և երիտասարդական ավյունից շապտում էր ինքն իրեն, և ավելի թեթև էր ընթանում աշխատանքը: Եթե սենյակում մարդ չէր լինում, նա երբեմն սուլում էր... Սուլում էր և՛ հեռախոսի փողի մեջ ու խնդրում էր, որ Լուսիկը փողը պահի ականջի մոտ:

Նրա հիշողության մեջ տաք ներկերով այդ նկարն էր, ծաղկած ճիւղանինները, երեսը բաց առուն և կավե բարձր պատերը, որ պարփակում էին իրենց մեջ և՛ խոխոջ, և՛ ծաղիկների բույր, և՛ անթափանց լուսություն: Կարծես քաղաքը և նրա ձայները չէին հասնում մինչև այդ խուլ փողոցը:

— Կշտացա՞ր, — ծաղրի տոնով հարցրեց Լևոնը և տեղից վեր կացավ: Կարծես ուրիշն էր հիշողը և նա համբերություն մը սպասում էր, որ այդ ուրիշը հագուրդ տա ներելի թերությունը:

Վարազույրն իջավ նկարների վրա:

Սենյակի մեջտեղը կանգնել էր ուրիշ մարդ: Նրա աչքը՝ ծաղկամանի վրա չէր, ոչ էլ միտքը՝ ծաղկած ծիրանինների փողոցում: Սենյակի մեջտեղն այն մարդն էր, որի մասին ոմանք ասում են, թե բնավորությունը խիստ է, նույնիսկ կոշտ: Նա տոկուն և համառ աշխատողի համբավ ունի: Այն հարյուրները, որոնք աշխատում են նրա հետ, զարմանքով են պատմում նրա անսպառ եռանդի մասին:

Նրանք գիտեն, որ ընկեր Լևոնի ամբողջ եռանդը լափում է հազարավոր մեքենաների հայթայթման և մատակարարման բարդ աշխատանքը:

Ցերեկը բազմաթիվ մարդիկ ներս են մտնում նրա սենյակը: Հեռախոսները զանգահարում են, աղմկում են դռները, մեքենագրուհիները, մարդիկ: Մի տեղից հեռագրով պահանջում են տավրտ և բենզին, ուշանում է տրակտորների տեղափոխումը և աճաթափում են ահագանդի հեռագրեր, որ հողը եռում է, կորչում են օրերը: Եվ հարյուրավոր վայրերից այսպիսի բազմաթիվ թելեր, ինչպես ճառագայթներ, կենտրոնանում են այս կիզակետի մեջ: Ներս ու դուրս են անում մարդիկ, որոնք եկել են շրջաններից, աշխատանքի վայրերից: Ահա մեկը մանվածապատ սկսում է «նաղլը», իսկ Լևոնը մի քանի շեշտակի հարցերով տեղն է գցում խոսակցությունը: Լում է նրան, հեռախոսը զանգահարում է նորոգման արհեստանոց և մտքի խորքում միաժամանակ բարձրանում է նոր խնդիր, նոր աշխատանք:

Սենյակի մեջտեղը ահա այդ մարդն է, որի մի օրը վերջացել է և ահա վերադարձել է տուն՝ հանգստի: Կբացվի առավոտը և հարյուրավոր մարդիկ նրան կտեսնեն նույն տեղը, նույն մտազբաղ դեմքով:

Միջանցքում կախված է շինելը: Դուրսը խոնավ է: Լևոնը հագնվեց և կոճկվեց մինչև վերջին կոճակը:

Տաք շինելը ձգում է մեջքը և այդպես նա իրեն կայտառ է զգում:

Հանգցնում է լույսը և զգուշությամբ բացում ապակյա դուռը: Հարևանները քնել են: Միայն «ղազախի» ձայնն է լսվում: Երևի կարդում է:

6

Դիմացը՝ փողոցում էլեկտրական խոշոր լամպն է: Սպիտակ մշուշը շարժվում է վերերով: Նա շարժվում է, իսկ թվում է, թե օրորվում է լամպը: Եվ մշուշը մաղում է նուրբ անձրև:

Լևոնը գոհ է, որ վերցրեց շինելը: Եվ գոհունակությունը նա արտահայտում է ձեռքերը գրպանը կոխելով, թևերն ավելի սեղմելով իրանին:

Նա գլուխը վեր բարձրացրեց: Դիմացի սպիտակ տունը ձգվել էր և մշուշի մեջ ավելի բարձր էր թվում: Վերի հարկում մի քանի պատուհաններ լուսավոր էին. նրանք մշուշի միջից էին երևում և կարծես մի ուրիշ տան հարկ էր:

Մշուշն անցնում էր ծվեններով: Ահա մի ամպի վերջին քուլաները՝ շղարշի նման թափանցիկ: Նրանց արանքից երևում էին աստղերը: Իսկ Արարատի լեռի կատարը շողշողում էր աստղալույսից:

— Ճշմարիտ էր Մաջիտա մայրիկը... Վաղը արև պիտի անի:

Լևոնը մայթի վրայով գնաց դեպի վեր: Առվի եզրին երիտասարդ

լորիններ էին, իրարից հավասար հեռավորության վրա: Եւ հիշում է, որ աշխանք անկեցին բարակ լորինները: Գարնանը նրանք ծաղկեցին, բացի մեկից:

Երրորդ դարուն է: Տասը դարուն հետո նրանք այնքան կբարձրանան, որ կհասնեն երկրորդ հարկի պատուհաններին և մարդիկ լորինների հովի տակ անց ու դարձ կանեն: Փողոցը կդառնա անփոշի, մաքուր, լորինների փողոց, նրանք էլ կծաղկեն, ինչպես ծիրանին...

Լեռնը ձեռքը մեկնեց մի ծառի, մատներով սեղմեց: Մտին ոչինչ չասաց, որովհետև ծառի հետ չեն խոսում, բայց եթե խոսեր, նա աշխատանքի մարդու անսահման ուրախությունը պիտի հայտնեք, որ ծառերը մաքրում են օդը, հով են անում և շոյում են աչքերը:

Նա կտրեց փողոցը, գուշությամբ կոխելով անձրևից թրջված և լապտերների փայլիչող սալաքարերը: Դիմացը վիթխարի շենքն էր, որի կեսը դեռ չէին ծածկել: Մի քանի պատուհան արդեն լուսավոր էր:

Հեռք փողոցից նայեց: Դեռ չսվաղած սենյակում սեղանի վրա դուխր կոպրեբլ էր Սողոմոնը: Նա կամ հաշվում էր, կամ գրում: Միայն ձեռքն էր շարժում:

Խճուղային վարչության Սողոմոնը՝ հաղթանդամ, ծանրախոս, դանդաղաբայլ: Երկու օր առաջ Կոմիտեի նիստում նրա զեկուցումն էր: Մի քիչ «սեղմեցին»: Սողոմոնը նեղն էր ընկել: Լեռնն էլ ուզեց խոսք վերցնել և ավելացնի, որ ճանապարհների նորոգման վրա անհրաժեշտ ուշադրուկ տանել միայն ճանապարհ չի կարելի: Սողոմոնի պատճառով, բայց ականջին հասավ Սողոմոնի ռեպլիկը՝ ուղղված մի ուրիշին.

— Բուչե չկա, բուչե... էտ անգիրը հիշա՞վ շինեմ...

Հոգնած ժողովը ծիծաղեց նրա բարբառի, նրա պարզամտության և գայլալի վրա:

Բայց և այնպես նույն օրը Լեռնը զանգահարեց նրան: Պատուհանի հետևից երևում էր Սողոմոնի դուխրը: Լեռնը հիշեց այն նիստը, սակայն միտքը թռավ ետ, քաղաքացիական կռիվների տարին, այն լեռնոտ գավառը, որտեղ այն տարին ապրում և պայքարում էին ինքը, Սողոմոնը, որին Սուղի էին ասում, Ասաքը, որին քաղաքում ճանաչում են իբրև ընկեր Սահակ, և ուրիշները: Մի քանիսը սպանված, ոմանք այստեղ, ուրիշները ցրված խորհրդային անծայրածիր երկրներում թուրքեստանից մինչև Սառուցյալ օվկիանոսի ափերը:

Եվ շարունակեց քայլերը, մտքում՝ Սուղին, Ասաքը, այն լեռնոտ գավառը, քաղաքացիական կռիվների տարին:

Այն ժամանակ Սուղին հաղիվ գրաճանաչ էր: Ամառ-ձմեռ հազին անտինն տարօրինակ թիկնոց էր, որի նմանը անցյալ աշնան ինքը նավի վրա տեսավ, նավաստիների հագին: Ո՞րտեղից էր ընկել այդ թիկնոցը: Ծսում էին ժողովի, Սուղին ձանձրանում էր վեճերից, բայց երբ հարցը գալիս էր ապստամբության, նրա աչքերը լայնանում էին, ոտքի էր կանգնում և բռունցքը ճոճում:

— Հուպ տո՛ւ... Իմ ասմունքն էլ էդ ա:

Առաջին տարիները գավառում նրան այդպես էլ կանչում էին. «հուպ տու, Սուղի»:

Իսկ Ասաքը ծանր էր, տարիքից ավելի ծանրախոս: «Ուրբաթխոս» էր, ծխախոտը բերանից անպակաս: Ինչ էլ ձեռքն ընկներ, ծխում էր. մախորկա, տերև... Նրա ծխախոտի կծու հոտը ջղայնացնում էր Սուղուն: Երբ մի ժողովում հարց էր դրված թշնամու թիկունքը մարդ ուղարկելու, Սուղին Ասաքի թեկնածությանը հակառակեց:

— Նրա բերանից մրահոտ ա գալիս... Փառասուն վերստի վրա նրան էդ շնահոտից կճանաչեն:

Մի ուրիշ լայն փողոց վերևից գալիս և կիսում էր այն փողոցը, որով գնում էր Լեռնը: Խաչաձև կտրվածքի մեջտեղը ետ ու առաջ էր գնում հերթապահ միլիցիոները: Նա ձանձրացած էր քայլում, կարծես կարոտում էր ցերեկվա ժխորին:

Փողոցների խաչաձև կտրվածքն անցնելուց Լեռնի ընդհատված մտքերը նորից ծանոթ հունն ընկան: Ասաքը շատ է փոխվել... Այն տարին նրա երեսին ժպիտ չէր երևում. այժմ կենսուրախ է, անհոգ: Գուցե այդ անհոգությունն է նրա նիհար մարմինը գիրացրել, կլորացրել:

Տուն ունի, կին ունի, շորս երեխա... Սենյակների ներսը խառնիխառն, գրքերը երեխաների կոտորատված խաղալիքների կողքին, այստեղ-այնտեղ մանր ու մեծ մահճակալներ, որոնց վրայից կախված են լաթեր, երեխաների սպիտակեղենը ու ուրիշ շորեր, որ Ասաքի կինը չի հավաքում, երբ Լեռնը ներս է մտնում, որովհետև նրանից չեն քաշվում:

— Երևի երեխաները քնած են... Կիմիկը չէ՛:

Կիմիկը եթե քնած լինի, Լեռնի ձայնից կզարթնի, կկանչի մյուսներին և կսկսեն կախվել, քաշքշել, աղմկել: Կակավի այն, ինչ Ասաքը ժթաղելով անվանում է «զարալու բազար»:

Այդ աղմուկի մեջ Ասաքը կարողանում է աշխատել, երեխաները թաղկոտում են, բարձրանում նրա վրա, քաշքշում, իսկ նա երեսը պատի կողմը դարձրած կարդում է: Երբ շատ են աղմկում, վեր է կենում, դուռը բաց անում և բոլորին թշում բակը: Քշում՝ ինչպես հավի ճտերը:

Կենսութեան է Ասաքը: Այդ կենսութեան մեջ չի կորել նրա երբեմնի լրջութունը: Կես հանաքով, կես լուրջ նա գանգատվում է, որ «փոքրի մակարդակը նորից է բարձրացել», բայց հանաքից հետո խոսքը դարձնում է առօրյայի խնդիրների շուրջը:

Եվ հին «ուրբաթախոսք» հառնում է Լևոնի առաջ...

Ահա սարալանջը. հրաբուխային ավազ է: Գծվար է բարձրանալ, որովհետև ավազը սահում է, ոտքերը կարծր գետնին չեն հասնում: Բայց նա չի կարողանում ոտքի կանգնել: Մի ոտքը ծանրացել է, ծունկից ցած տաք է: Լևոնը չի նայում, բայց զգում է, որ արյուն է լցվում կոշիկի մեջ և ավազը խառնվում է արյունին:

Մեկը նրան վեր է բարձրացնում: Գրկել է մեջքը և բարձրացնում է. ամեն րոպե դժվար շնչելով ասում.

— Հրես հա՛, հրես հա՛... Ծուռ եկանք սարի հետևը:

Ներքևի այգիներից անկարգ կրակոցներ են: Գնդացիները կրակներ է մաղում լեռան լանջին: Լևոնը հիշում է, որ լուսաբացին թշնամին անակրնկալ ներս խուժեց: Նահանջեցին: Բայց ո՞րտեղից հայտնվեց Ասաքը: Նա ուզում է հարցնել, բայց վերջը ցավում է: Ու չի տեքում: Ատամները սեղմել է... Ասաքի գլխին ծղնոտից գործած մի շտենված գլխարկ է: Երբեք այդ գլխարկը նա չէր ծածկում: Լևոնը մինչ այդ նման գլխարկ չէր տեսել: Եվ ատամները սեղմելով նա հարցնում է նրան, թե ո՞րտեղից է այդ գլխարկը, և ինքն էլ զարմանում է այդ անպատեհ հարցից:

— Հրես, հա՛... Ծուռ եկանք սարը:

Տարիներ հետո Լևոնը մի անգամ էլ Ասաքին հարցրեց այդ գլխարկի մասին: Ասաքը դժգոհ և թթի տակ ասաց, որ «կազմակերպել» էր մալական ֆուրգոնչուց:

— Գլխի մեջ մեխվել էր, որ անգղակ փախչելն ամոթ է...

Այլևս չէր հիշվում «մալականի» գլխարկը:

7

Այստեղից սկսվում են նոր տները: Նրանց ուղիղ շարքերը ձգվում են դեպի բլուրները և այգիները: Լամպերի շարքը ձգվում է հեռու ինչքան հեռուն ես նայում, լամպերն ավելի սեղմ են իրար: Վերջին լամպը չի երևում: Նշանակում է շատ երկար է լամպերի շարանը:

Լևոնի սիրտը լցվում է չեբո ուրախությամբ, ինչպես փողոցի լորենին շոշափելուց: Տների կառուցմանը նա չի մասնակցել, բայց նրա սըրտում էլ զարթնում է հաղթողի զվարթ ուրախությունը:

— Մենք ենք շինել... Մերն է:

—204—

Այստեղ էլ մշուշը հոսում է կտուրների վրայով, մաղում է գարնանամուտի տաք շաղը: Ենթերի պատերը, թիթեղյա կտուրները թացանում են: Թիթեղներն էլ առաջին անձրևի տակ են, իսկ քարերը մթին ընդերքում ոչ անձրև են տեսել, ոչ մշուշն է լիզել նրանց:

Լևոնը կանգնել է նոր փողոցների սահմանագլխին: Այս կողմը հին տներ են: Ահա մի տան փայտե նովղանները ծովել են: Դարբասը կախվել է: Ներսը մարդիկ գուցե դեռ արթուն են, սակայն ձայն չի լսվում ներսից և ոչ էլ ճրագ է երևում: Նեղ պատուհանները փոքր են, ինչպես մութ զնդանը:

Ահա մի ուրիշը, նոր տան կողքին... Քանդել են նրա բակի պատերը, ցանկապատը հանել են և հազարավոր սայլեր, մեքենաներ այդ հին բակով կրել են ավազ, քար, ցեմենտ, տախտակ: Կուշ է եկել հին տունը: Նրա ճակատի կողմը երևում է կայծակնաձև ճեղքը: Կարծես կնճիռի ծայր է: Երևի մի մեքենայի ղողոցից, քարերի գետին ընկնելուց հին տան պատերը ճաքել են:

Իսկ այս մեկը շրջապատված է տաշած քարերի կույտով: Ահա փողոցի մի մասը կտրել են տախտակներով և թողել են փոքրիկ դռնակ, որպեսզի տան բնակիչները երթևեկեն: Ուրեմն այստեղ էլ պիտի կառուցեն:

Նոր քաղաքը հրում է: Նրա բարձր տները նայում են քաղաքի մյուս մասերում անկարգ ցրված նոր տներին և կարծես ձայն են տալիս սեղմելու, իրար միանալու և գետնի երեսից վնասնելու հողաշեն փլեկները:

— Այն փողոցը այս կողմերն է...

Մաղկած ծիրանիների փողոցը: Նայում է վեր, Ասաքի տան կողմը: Մի քիչ տատանվում է և քայլերն ուղղում ներքև: Եվ արդարացնում է իրեն.

— Ես չեմ տեսել այն կողմի տները...

Ու քայլում է, ձեռքերը գրպանը: Քայլում է և չի զգում, որ շաղ է նստում շինելի վրա, ցեխ է թռչում փեշերին: Մի պատուհան բաց է... Լևոնը նայում է վերև: Նրան դուր է գալիս, որ կենվորը գարնան այդ մշուշին բաց է արել պատուհանը և մշուշը ներս է մտնում:

Ռադիոն երգում է բաց պատուհանից:

— Ուրեմն դեռ ուշ չէ,— մտածում է Լևոնը: Մի քանի կանայք և տղամարդիկ ծիծաղելով անցնում են դեպի նոր տները: Նրանք կինոյից են գալիս և ուրախ են, որ նոր տներում լուսավոր, ընդարձակ սենյակներ ունեն:

Լևոնը մեխվում է տեղը.

—205—

— Այլ քեզ սատանա, — ասում է և շարունակում քայլերը:
Ռադիոյի աղջիկը երգում է.

Նուսն կեւ պոռչ
Նեխիմ, աման-աման...

Լեոնը դանդաղ է քայլում և ափսոսում է, որ այդ խոսքն ասաց:
Նայում է աչ ու ձախ: Ո՛հ է ծաղկած ծիրանիների փողոցը... Զախ
կողմն էլ բարձրացել են շենքեր, նույնիսկ բարձր տներ վարդագույն
տուֆից, կապույտ բազալտից: Ահա այն պայտածե տունը... Տունը եր-
կար-երկար պատշգամբներ ունի, հարյուրավոր պատուհաններ բացվում
են փողոցի վրա:

Բայց ո՛ր են ծիրանիները...

Կարծես երկար տարիների օտարությունից վերադարձել է և փնտրում
է այն տունը, որտեղ անցել էր իր մանկությունը: Փնտրում է և չկա, և
սրովհետև չկա, ավելի է բարձրանում նրա հուզմունքը, նրա կարոտը:

Մինչ այդ՝ նա երբեմն հիշում էր այդ փողոցը: Այն միտքը, թե ծա-
ւերն ու կապի պատը, և այն փորձիկ պատշգամբը գեռ մնում են, — այդ
ամենը հեշտ էին դարձնում մոռանալ Լուսիկի հետ կապված կյանքը:
Կուզենա՞ մի անգամ էլ կզա ծանոթ փողոցը:

Բայց հիմա չկա ո՛չ պատը, ո՛չ այն տունը, որի պատշգամբի տակ
հորդ անձրևին պահվել էին, իսկ Լուսիկը սառը ձեռքը կոխել էր նրա
թևը:

Լեոնը հասավ մինչև անկյունը: Պատշգամբով տան տեղը սև քարից
կիսավարտ տուն էր, որի մի թևը մյուս փողոցի վրա էր շրջվում: Նրա
կողքին երկհարկանի տուն էր: Այնտեղ արդեն բնակվում էին: Երևում
էին թաղարի մեջ դրված ծաղիկներ և թփեր: Նրանց կանաչ տերևները
կպել էին լուսամուտի ապակիներին: Կարծես դժգոհում էին սենյակի
օդից և կարոտում դարնանամուտի տաք մշուշը:

6

Երկհարկանի տան կողքին մշուշի միջից ցցվում էին բարձր սյուները:
Սպիտակին էին տալիս հանգած կրի գուլբերը: Գետնից մի քանի մետր
բարձրացել էր պատերի դուխը:

— Մե՜ծ տուն է...

Լեոնը առխտակների, բարբրի արանքով մոտեցավ: Մի փորձիկ սան-
գուղը էր դրված, որով ցերեկը բանվորները քար են տանում, մինչև պա-
տերը բարձրանան և սյունից կախեն վերելակները:

— 206 —

Նա բարձրացավ սանդուղքով: Ու միտն ընկավ մի մոռացված դեպք,
որ երբեք չէր հիշել: Ի՞նչպես էր ընկել մտքից... Գնացել էին ձորի
կողմը: Ամառ գիշեր էր: Այնքան թափառեցին... Լույսը բացվում էր,
երբ իջան քաղաք: Տներն պատուհանները բաց էին: Առավոտի այն ժամն
էր, երբ գիշերվա տապը գիշում է հովին և խոր քուն են առնում մանա-
վանդ երեխաները:

Այսպիսի մի սանդուղք հենված էր հողի պատին: Լուսիկը խնդրեց
բարձրանալ կտուրը: Ներքևը լույս փողոցներն էին, կիսաքուն զննապան-
ները ավլում էին փողոցները, չուր ցանում:

Ցածր կտուր էր, բակում բարդիներ, որոնց տերևները գեռ նոր սկսել
էին գողալ լուսաբացի հովից:

— Լավ է մեր քաղաքը, չէ՞... — հոգնած հարցրեց Լուսիկը:

Լեոնի պատասխանը քաղաքին չէր վերաբերում: Լուսիկի դեմքին
կարմիր պուտեր էին, գիշերվա հետքերը:

— Ի՞նչնեք սառը ջրով լվացվե՞ք...

Բարդիների տակով գնում էր չուրը: Մի կին չուր էր առնում, քանի
մտորդիկ չէին զարթնել և չէր պղտորվել առուն: Նա նայեց, հասկացավ
և ժպտալով տասց.

— Փեշքի բերե՞մ...

— Ո՛վ է, — լավից մի ձայն առխտակների կուլտի հետևից:

Լեոնը կանգնել էր պատի վրա և կիսամթնում հիմքերի ձեկից, գերան-
ներից փորձում էր հաշվել սենյակների թիվը: Մի ստվեր գորշ անձրևա-
ծայր մեջ փաթաթված մոտեցավ:

— Բարև, ընկե՞ր...

— Բարև: Ո՛վ ես, — հարցրեց անձրևանոցով մարդը:

— Շենքին էի նայում...

— Վայ, ընկեր Լեո՛ն, չձանաչեցի... Ներողություն: Գնանք, գնանք
բուդկան... Կրակ եմ արել, — մարդը նորից մեկնեց ձեռքը, իջեցրեց
նրան պատից:

«Ձայնը ծանոթ է, բայց չեմ հիշում» — մտածեց Լեոնը և խոսքը
զարթնեց շենքի վրա.

— Ի՞նչ շենք է...

— Սա, ընկեր Լեոն, Բնակչինկոտան է շինում... Համա ասում են
ուսումնարան է: Էդքանը մեզ հայտնի չի: Էլ ո՞նց եք, լավ եք... Մի ան-
գամ ձեզ տեսա, ասի մոտենամ, մեկ էլ... էս էլ իմ բուդկան:

Նրանք առխտակների հետևն անցան: Մարդը սառեղներին կրակ
էր արել, վրան թեյամանը կախել...

— 207 —

— Հիմա էլ ըստի եմ բանում... Գիշերապահ եմ:

Կրակի մոտ ճանաչեց: Օսեփն էր, զազախեցի Օսեփը: Երեք տարի առաջ նրա մոտ էր եկել տրեխներով, մորթի վիթխարի փափախը գլխին: Ներս էր մտել և սարեցու զրնգան ձայնով ասել.

— Ինձ քու մոտ են դարկել...

— Ի՞նչ կա:

— Ինձ պիտի ունթունես...

— Ո՞րտեղ:

— Հո մեծամեծի գործ չեմ ասում... Ղարաուլ, բան: Կարամ լավ փայտոն քշիլ, ձի պահիլ: Մի խոսք ամեն բան ձեռովս վեր է գալիս...

Նվ իսկույն ավելացրել էր, որ գյուղից նոր է եկել, և որ տնից հեռացել է «կնկա պատճառով»:

Օսեփը դարձավ գիշերապահ: Մի երեկո, երբ ինքը ներս մտավ հիմնարկը, Օսեփը միջանցքի ծայրից բղավեց.

— Ընկեր Լեոն, էս սհաթիս մի կնիկ թելեպոնով քեզ հարցրեց: Ասի ըստի չի... Նճենց քաղցր էր խոսում:

Լուսիկն էր հարցրել:

— Ընկեր Լեոն, բախտս բերեց... Գնացի Աշտարակուց մի աղջիկ տոա. իմ ուզած օղլուշաղն է... Դեյրա եմ առել, մի ջուխտ բատրինկա: Տես, — և նա արձակեց անձրևանոցի կոճակները, — իստակ մաքուր... էս սաղ նրա շնորհքն է... Համա էս գործս ուզում եմ փոխած... Այսուհետև ինձ հարմար չի: Ես ըստի մենակ, նա ընդի... — և կրակը խառնելով ավելացրեց. — ասենք պատահած վախտը գալիս է... Դե տան հաշիվը ուրիշ... — Ապա անհամբեր հարցրեց. — Հմի՞ որդի ես, ընկեր Լեոն. քո կուտը որ գործ լինի, էլի կգամ...

Լեոնը նայում էր կրակին: Նրա ականջովն էր ընկել մի խուլ ձայն, որ գետնի տակից էր գալիս:

— էս ջրի ձա՞յն է, Օսեփ...

— Հա, ըստի մի արխ կար... Խանգարում էր, տափի տակը պցեցին: էս նրա ձենն է:

Մաղկած ծիրանիների փողոցի առուն: Քարերի տակ, մութի մեջ գնում են ջրերը և նրանց ձայնը խուլ է հնչում:

Լեոնը վեր կացավ:

— Չայ խմի...

— Չէ, գնում եմ: — Նվ մի քիչ մտածելուց հետո հարցրեց. — Օսեփ, էստեղ ծիրանի ծառեր կային...

— Ծձմարիտ, քո ասածն ա, ընկե՛ր Լեոն... Հրե մի հատը մնում է...

Տախտակների կույտերի հետևը մնացել էր մի ծիրանի: Երևի նա մնացել էր, որովհետև տախտակները դարսել էին առաջը: Իսկ պատի հետևի շարքը չկար: Նրանց տեղը խիճերի, ավազի շեղջեր էին:

— Ըստի աղաք էլ եկած կլինես, որ հարցրիր...

— Հա, ես էս փողոցում ապրել եմ... Ասի տեսնեմ ինչ կա...

— Ինչ կա... Պալատներ կան, ընկեր Լեոն... Սրա մի հատը մեր գեղում լիներ, սաղ ժողովուրդը մեջը կհավաքվեր:

— էդ էլ կլինի, Օսեփ...

— էն վախտը կնիկս կառնեմ կգնամ գեղը... Սիրտս մեր սարերը շատ ա ուզում, է՛...

Օսեփը նրան ուղեկցեց մինչև փողոցը: Դժգոհեց, որ Լեոնը թիչ չխմեց:

Լեոնը վերադարձավ դեպի Ասաքի տան փողոցը: Քայլում էր խաղաղ ուրախությամբ, իր այցելութունից գոհ: Մի անգամ էլ նայեց նոր շենքերին:

— Եթե Ասաքը քնած չլինի... Երևի նա էլ ինձ նման քիչ է լինում այս կողմերը: Մեր ընկերներից շատերը չեն տեսնում այն բուրբը, ինչ կառուցում ենք: Չեն տեսնում...

Ապա նորից հիշեց ծիրանիների փողոցը, Լուսիկի կապույտ զգեստը և առուն, առուն, որ կայտառ շառաշով գալիս էր անարատ ձյուններից: Մի՞թե այդքան խոր հիշողութուններ է թողել այն աղջիկը, այն անհոգ գարունը: Ո՛ւր մնաց ծաղկած ծիրանիների փողոցը... Նրա սրտում խոթողաց կարոտի մի մթին հուշ, ինչպես հին առուն գետնի տակ:

Քայլում էր և շէր զգում ոչ մշուշ, ոչ շաղ: Չլսեց և ռադիոյի երգը: Իմաստուն տխրությամբ նա հարցնում էր, թե նրանք, որոնք ապրելու են քարակոփ այս բարձր շենքերում, պիտի գիտենան, որ այստեղ եղել է կառուցողներից մեկի ծաղկած փողոցը և ոչ թե ցամաք անապատ...

Լեոնը ծովեց Սահակի տան կողմը:

Բեռնատար ավտոները, որոնք շինարարության համար քար, ավազ էին բերում, այդ փողոցով էին անցնում: Նրանց անիվները խոր ակոսներ էին գծել ցեխի մեջ: Այդ փողոցով էին անցնում և գյուղերից եկող սայլերը, որովհետև հին ճանապարհը նորոգում ու լայնացնում էին: Հաղորդակցութունը գետի նման իր հունը շուտ էր տվել այդ փողոցով:

Լեոնը գնում էր սայլաքելով, ոտքերն զգուշ կոխելով ցեխի մեջ. շարած քարերի վրա: Լապտերների լուսից ցեխն ու գուբերի պղտոր շուրը փայլում էին խավար փայլով:

Վերևը մութն էր: Տներն ավելի նոսր էին, լապտերները քիչ Շատով պիտի ծավել... Արդեն երևում է Ասաքի տունը... Կույտեր կան, ուրիշներ ընած չեն: Երեխաները պիտի աղմկեն: Ասաքի կինը պիտի վառի պրի-մուսը... Եվ նույնը պիտի ասի ինչպես միշտ:

— Լևոն, խելք ես արել, որ ընտանիք չունենա... Մենակ ապրելը հանգիստ է:

Վերևը մութն էր: Մթնում լավեց մտրակի շառաչ: Անիվներ ճռչա-ցին: Մեկը բզավեց..

— Դեներ պահի՛, դեներ պահի՛...

Անիվները ճռչալցին: Մի բոպե հետո մթնից դուրս եկան մի զույգ ոռմեշներ: Լապտերը լուսավորում էր նրանց լայն ճակատները և սև եզ-չույտները: Մի քիչ առաջացան: Երևաց երկրորդ զույգը, բայց սալը լկար... Ապա երրորդ զույգը, նույնիսկ զրնգաց շղթան, որով միացրել էին լուծերը: Գոմեշները ուժ էին անում, ձգվում առաջ: Նրանց ոտքերը ցեխի մեջ սայթաքում էին: Նրանցից մեկն ընկավ հետևի ոտքերի վրա և ամբողջ ժանրությամբ կախվեց լուծից: Մթնից մի մարդ դուրս թռավ և մտրակեց: Գոմեշը փնչաց:

— Ի՛նչ են քաշում...

Լևոնը կանգնել էր քարի վրա և հետաքրքիր նայում էր: Գոմեշները գանգաղ էին շարժվում: Խավարի մեջ այնպես էր երևում, կարծես վերջ չունի նրանց շարժը և մի ահեղ ծանրություն գետնի մթին խորքից գո-մեշները քաշում են լույս աշխարհ, քաշում են և դեռ ծայրը չեն Գանել:

Լևոնը մի քանի քայլ արեց: Մի խումբ երիտասարդներ վազեցին գոմեշների վրա: Մի քանիսը մոտեցան առաջին անիվներին: Վերջին անիվները բավական հեռու էին: Նրանք առաջին անիվների հետ միացված էին հաստ գերաններով, որոնց վրա մի վիթխարի և տարօրինակ բռն էր, որ մշուշի մեջ աղոտ էր երևում: Կարծես փոքր շոգեմեքենա էր, ջարդված խողովակով:

— Արտա՛շ, քար դիր տակը, քա՛ր...

— Սպասի գոմեշները նաֆաս առնեն...

— Ի՛նչ էլ ցեխ է...

— Մրանց ցեխը մերից շատ է,—ասաց մեկը, որ հենվել էր գոմեշին:

— Ի՛նչ է էդ, ընկերներ,—հարցրեց Լևոնը:

— Սև «հաց», ընկե՛ր,—պատասխանեց նա, որ կանգնել էր առաջին լուծի կողքին:

— Արտա՛շ, մի հարցրու՞ տեղը... Գուցե իմանա,— մթնից կանչեց մի երիտասարդ:

Առաջին կանգնողը՝ Արտաշը, Լևոնից հարցրեց, թե ո՞րտեղ են հանձ-նում հավաքած մետաղը: Լևոնը հիշեց իրենց պահեստի մոտ մի կիսավեր շենք, որտեղ կիտված էին ժանգոտած մետաղի կտորներ:

— Շրջաբերական են ուզարկում, արարում են շնորհքով գրեն տե-ղը,—հանդիմանեց Արտաշը:

Երիտասարդները Ախտայի շրջանի գյուղերից մեկի կոմերիտական-ներն էին: Տարիներ շարունակ նրանց գյուղի ներքևն ընկած էր եղել այդ հնադարյան ձևի կատակը, որի շորս կողմը գարնանը խոտ էր կանաչում և հովվի շները շոգից նեղվելով թաքնվում էին ներսը:

Ընկած էր եղևի, ժանգոտվել էր, ծանրությունից մի քիչ թաղվել հողի մեջ: Կոմերիտականները մեծ դժվարությամբ հանել էին, գրել գերանների վրա և նույնպիսի դժվարությամբ, ցեխ կոխոտելով, հրելով գոմեշներին և աղմկելով՝ իջեցրել էին քաղաք:

— Արտա՛շ, տեղն իմացա՞ր,—կանչեց նույն ձայնը: Մթնից կան-չաղը ծիծաղեց: Նա ինչ-որ բան ասաց, բայց չսովեց:

— Բաց կլինի՞ է՛նտեղ...

— Տո դե սպասի է,—ընդհատեց Արտաշը, որ ոգևորված պատմում էր իրենց կրած դժվարությունները:

— Երկու հարյուր փութ կլինի,—և երեսը դարձրեց դեպի ետ:

— Երեք չես ասում,—վրա բերեց մի ուրիշը:

Գոմեշների շնչառությունը հանդարտվում էր: Հոգնած կենդանիները ոտները փոխնեփոխ բարձրացնում էին: Նրանք մինչև կուրծքը ցեխի մեջ էին: Կարծես ճեղքել էին ցեխի հեղեղը:

Արտաշն էլ էր ցեխոտված: Այտի վրա պարզ երևում էր ցեխի շո-րացած շիթը: Մթնից նորից կանչեցին, թե իմացա՞վ պահեստի մասին:

— Իմացա՛, բայց պարզ չի...

— Գե հա՛... Գոմեշները սառան:

Այդ կանչին բոլորը շարժեցին: Ոմանք բարձրացրին մտրակները գոմեշների վրա, ոմանք վազեցին՝ անիվները հրելու...

— Գեսը հա՛, դե՛սը...

— Հը՛, հը՛...

— Մարալին, Մարալին...

— Մարալ հա՛...

Գոմեշները ձգվեցին, շղթան զրնգաց, անիվները ճռչալցին: Լավեց մի խոր տնքոց: Տնքացին մարդիկ, անասունները և առաջին անիվները պտրկեցին: Լևոնի ձեռքերը խրվել էին անիվի ճաղերի ցեխին: Նա մյուս-նեքի հետ մի կողմ քաշվեց, երբ անիվները դուրս եկան ցեխից:

Շարժվեցին գոմեշները...

Արտաշի հետ փողոցի մեջտեղով մտազբաղ գնում էր Լեոնը, գնում էր ցույց տալու պահեստի տեղը, գնում էր Արտաշի հետ խոսելով և երբ գոմեշները դժվարանում էին քաշել, նա ետ էր գալիս՝ անիվը հրելու՝
Ո՛չ ցեխ կար, ո՛չ անորոշ կսկիծ...

* * *

Մաջիտա մայրիկը առավոտ կանուխ զարմացած նայում էր Լեոնի շինելին, որից գիշերը շուր էր կաթկթել հատակին:

— Էս կանդար շամուռ... Դյո՛րի կնացե գիշերը մեր տղեն:

Եվ գլուխը խորհրդավոր շարժեց:

Դուրսը արև էր, ինչպես նա գուշակել էր: Արևի ճառագայթները պատուհանից ներս էին ընկել և խաղում էին գորգի վարդերի և նուռերի հետ: Լեոնը խոր քնի մեջ էր: Թախտի առաջ ցեխոտ սապոգներն էին: Նա ուշ էր վերադարձել ու չէր հանվել: Վերարկուն էր քաշել վրան:

Երբ գորգի վարդերի վրայով ցած սահեց արևը և խաղար նրա ունքերի և արտևանունքների հետ, Լեոնը պիտի զարթներ և պիտի սկսվեր աշխատանքի առօրյան:

1930

ՍՊԻՏԱԿ ՁԻՆ

1

Շարմաղ բիբին երեկոյան, երբ ժամհարը քաշում էր եկեղեցու զանգերը,—խրճիթի ծանր դուռը տնքալով բաց էր անում: Երկար ու կերկեր, իբրև արևելյան թախտոտ երգ, ձոնշում էր հին դուռը, երբ պառավի դողացող ձեռքերը ձգվում էին դեպի դռան մաշված ունկը: Խավար խրճիթում դռան երգին արձագանքում էր պղինձների զնգոցը և Շարմաղ բիբու շինջ ձայնը:

— Քո փառքը շա՛տ, էսօր էլ զանգերը զարկին,—մրմնջում էր այդ լուսերես կինը, որին իրիկնապահի զանգերն ավետում էին անանձնական անդորր:

Նա կանգնում էր դռան շեմքին, աչքը դեպի ներքևի բլուրները, որոնք անսահման հեռվում ձուլվում էին մայրամուտի մուգ-կապույտ երկնքի

հետ և կազմում եզրը մի անգոտ աշխարհի, որին յոթանասուն տարի անգավաճան հավատում էր այդ միամիտ կինը:

Կանգնում էր դռան շեմքին և կարծես թե տեսնում էր պղնձյա զանգերի տխուր դողանջները, ինչպես մթնող երկնքի տակ նազով ճախրող աղավնիները: Նա հավատում էր, որ երեկոյան զանգերի հետ երկնային մի օրհնութունը թրթռալով ներս է մտնում ու քսվում հին տան սևացած քարերին, նրա այրվող օջախին, ինչպես ներս կմտներ գետնի երեսով սողացող մշուշը:

Եվ այդ հին հավատով էլ վերջանում էին Շարմաղ բիբու կրոնական զգացումները: Եկեղեցի չէր գնում. ոչ աղոթք գիտեր, ոչ ծանոթ էր եկեղեցական ծեսերի, Բայց և այնպես մի խորհրդավոր ակնածանք էր ապրում, երբ երեկոյան երգում էին զանգերը, երգում էր և հին դուռը, բլուրների և աշխարհի վրա իջնում էր մի խաղաղ երեկո, ճախրում էին ոսկեթև աղավնիները. և այդ ամենը ռամիկ հավատով նա ընդունում էր որպես անքննելի խորհուրդ, որ մնացել էր գյուղական աղջկա անուրախ մանկությունից:

Այդ երեկո, երբ Շարմաղ բիբին դուռը ետ քաշեց և ոտքը շեմքին դրեց, հանկարծ ետ քաշվեց մի ահարկու ձայնից, որ անակնկալ որոտաց հենց նրանց կտուրի վրա և խոպոտ աղմուկով խլացրեց զանգերի ծանոթ դողանջը:

Տանեցիները, որոնք սփռոցի շորս բոլոր նստած լուռ ընթրում էին, արձանացած զարմացած իրար նայեցին: Ահ կար նրանց աչքերում: Նույնիսկ փոքրիկ Երեմը բնազդով զգաց, որ խոպոտ ձայնը բոթ է գուժում:

— Է՛-հե՛-հե՛յ,—ալիք-ալիք դիզվեց ձայնը,—ժողովո՛ւրդ... Թագավորի հրամանով առավոտը կանուխ ձիատերը ձիով քաղա՛ա՛ք, հե՛յ-հե՛յ... Ով շտանի, թագավորի հրամանով տունը, տեղը, է՛-հե՛-հե՛յ...

Եվ ձայնը հեռանալով նվազեց, որովհետև զգիբը ուրիշ կտուր բարձրացավ և երեսն ուրիշ թաղի կողմը դարձրեց:

Շարմաղ բիբին չլսեց, թե զանգերն ինչպես լռեցին և ո՛ր կորան նրանց վերջին թավ ելևէջները: Դուռը դժգոհ վրա դրեց, և դուռը շերտեց երկար ու կերկեր, այլ դժգոհ վնգստաց պառավ շան նման:

— Չո՛ռ, բայդուշ, հենց էս սհաթին էր...

Երբ Շարմաղ բիբին եկավ, տեղը նստեց և երեխաները տատի ներկայութունից սիրտ առան,—Սիմոնը խոր հառաչելով, կարծես ինքն իրեն, ասաց.

— Էսօր Մինասի տղան էր պատմում... Ասում էի սուտ կլինի, ա՛ռ քեզ...

— Ապի, յանի թագավորն էդքան ձի ինչի՞ ա հավաքում,— հորը դարձավ անդրանիկ աղջիկը՝ ուժ տարեկան Շողերը:

— Եսի՞մ,— ուսերը վեր քաշեց հայրը,— կոխի՞ ա, բալա ջան... Մարդ են շարդում, ձիեր են կոտորում: Ժողովուրդ տո՛ւր... Թագավորի հրաման աս:

— Փո՛ւ, փո՛ւ...

Անհայտ էր, թե Երեմը այդ բացականչությամբ իր զարմանքն էր արտահայտո՞ւմ, թե՞ պաղեցնում էր տաք ապուրը: Մայրը սկսեց նրան կերակրել և ահը սրտում, ամուսնուն հարցրեց.

— Մեր Ցուլակը շափումը կգա՞,— բայց Սիմոնը, որ անակնկալ մտքերի հետ էր, շտեց նրա հարցը:

Ցուլակը նրանց ձին էր, կապտավուն մորթով, որի վրա, ինչպես ասողերը՝ ցրված էին սպիտակ նշաններ: Երկար ալիքաձև պոչ ուներ Ցուլակը: Եվ ասում էին, թե մի հին և ազնիվ ցեղի շառավիղն էր այդ ձին, որ Սիմոնը գնել էր երկու տարի առաջ, փոխարենը տալով իրենց էջը, մի անմայր հորթ, մի կարպետ և երկու բեռ ցորեն:

— Տուն եմ, երեխաների տեր եմ, առանց ձիու հնար չկա,— ասել էր նա և ուրախության ժպիտով առաջին անգամ ձին քաշել աղբյուրը: Հենց այդ օրն էլ նրան անվանել էին Ցուլակ, այն ձիու անունով, որ եղել էր նրանց տանը՝ Սիմոնի մանկության տարիներին:

— Հակառակի պես հայվանն էլ ջանով ա,— ասաց Սիմոնը և սթափվելով խոր մտքերից, դանդաղությամբ հացի փշուրները փեշից սփռոցի վրա թափելով,— տարվա էս ժամանակ ձին էլ էդքան ջանով լինի: Հալբաթ էսպես պիտի լիներ...

Ասաց ու վեր կացավ, փափախի մորթու միջից ծղոտները մեկ-մեկ դեն պցելով, դուրս եկավ գյուղամեջ, դրացի հարևաններից իմանալու ավելի ստույգ տեղեկություն:

Դարբասի մոտ Սիմոնը մի պահ կանգնեց, նայեց ձիուն, որ արտոցի վերադարձել և ախորժակով խժոռում էր սարի թարմ խոտի խուրձը, երբեմն մուրթով քրքրում խուրձը և փնտրում սուսամբարի տերև: Սիմոնը ախոր նայեց. Ցուլակի ողորկ մարմինը և մորթու սպիտակ բծերը աստղալուսին մեղմ շողշողում էին:

Նա մի անգամ էլ տեսավ, որ ձին նիհար չի և շար վրդովանքով կանչեց.

— Սատկած, զիչ կեր էլի, արաքվելու չե՞ս հո...

Կանչեց ու խուրձը դրեց գոմի կտրան: Ձին մեղմ վրնջաց և վիզը մեկնեց դեպի խուրձը:

— Հը՞, բոյը կարճ չի, նանի... Չափումը թե չգա,— դարձավ նա մորը, որ հավաքնի մուտքը կալել ու կանգնել էր նրա կողքին:

— Եսի՞մ, այ որդի...

— Թուսի դազախը սրա վրա կարո՞ղ է նստի... Ձէ՛, չեն տանի,— հուսադրեց իրեն Սիմոնը և քայլեց փողոցով:

Շարմաղ բիբին նայեց ողորկ օրորվող մարմնին, մինչև նա հավից մթնում և կենդանական խանդաղատանքով ինչ-որ բան մրմնջաց, որ չգիտես աղո՞թք էր, օրհնությո՞ւն, թե՞ աղոտ հույսի ակնկալություն:

2

Մուժն էր, երբ Սիմոնը տուն եկավ: Գոմում կապած ձին լսեց տիրոջ սոնաձայնը, նորից վրնջաց: Սիմոնը խղճահարմեց. նա ճրագը վառեց, խոտի խուրձը գրկեց և ներս մտավ գոմը: Ցուլակն ուրախությունից վրնջաց, մի քանի քայլ արեց, փորձեց կապը կտրել, բայց չկարողացավ: Սիմոնը խուրձը մուտքը դրեց և երբ ձին մուրթը կոխեց մեջը,— ձեռքով շոյեց Ցուլակի փափուկ մեջքը:

Ընդարձակ գոմի անկյունում նստել էր պառավ կովը: Երկու այծերը, որոնք բարձրացել էին մսուրի վրա, Սիմոնին տեսնելով ցած թռան և միրուքներն օրորելով մոտ վազեցին: Սակայն Սիմոնը չմտտեցավ ոչ կովին և ոչ էլ այծերին: Նա մի պահ կանգնեց, ապա ձիու ոտքերի տակ թափված խոտը ժողովեց և դուռը դրեց:

Երեխաները քնել էին: Շարմաղ բիբին, աչքերը կկոցելով, դժվարությամբ թելում էր հաստ ասեղը, որպեսզի կարկատի որդու գուլպաները: Նրանց տան վաղուցվա կարգն էր այդ: Երբ Սիմոնը քաղաք գնար, մայրն էր հոգում նրա ճանապարհի պատրաստությունը:

Խրճիթի հին դուռը ճռճոաց, պառավը ասեղը թողնելով՝ անհանգիստ հարցրեց.

— Հաստա՞տ ա...

— Բա հո սուտ չի...

— Խ՞նչ են ասում:

— Ասում են բոյը հաշիվ չի, եթե ձին առողջ է, կտանեն...— և դարձավ մորը.— նանի, Ցուլակի էն մեծ տուպրակն ո՞ւր ա, հետս դարման եմ տանելու:

Շարմաղ բիբին վեր կացավ մեծ տուպրակի միջի բուրդը թափելու:

Քնելուց առաջ Սիմոնը մի անգամ էլ գնաց գոմը: Պառավ կովը այդ անտուր այցից զարմացած, մինչև վեր կենար ու օրոճալով մոտենար

գոմի դռան, Միմոնը ձիու համետն ու շվանները սարքեց, դրեց ախոռի մոտ ու դուրս եկավ:

Դուրսը աստղալույս գիշեր էր:

Գյուղում մեկ-մեկ հանգչում էին կրակները և կրակների հետ լուռ մեկնում էին ձայները: Ներքևը, գետափի մարգերում կանչում էր գիշերահավը: Արտերից, դաշտերից և հեռվի անտառից հովը բերում էր զով սառնություն և հազարավոր խոտերի բույր, որի մեջ ավելի սուր զգացվում էր սուսամբարի և արդեն շորացող դաղձի կծու հոտը:

Միմոնը նստել էր դարբասի քարին և քարի նման հոգսը ժանրացել էր նրա սրտին: Հազիվ էր ծայրը ծայրին հասցնում, երբ հավասար աշխատում էին ինքն ու Յուլակը: Իսկ ա՞յժմ... Եվ Միմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը, իր որդուն, այնպես, ինչպես անցյալ ամառ շատ տներից տարան նրանց որդիներին ու եղբայրներին:

Սակայն հոգնությունը հաղթեց, ու ներս մտավ տուն:

— Հակառակի պես անիրավի մեջքը կասես հինայած լինի,— նորից հիշեց Միմոնը:

3

Լույսը դեռ չէր բացվել, երբ Միմոնը ճրագը ձեռքին մտավ գոմը, Յուլակին համետեց ու դուրս քաշեց: Հարևան բակերում ճրագներ էին շարժվում, ճոնչում էին դռները, ինչ-որ ձայներ էին գալիս:

Միմոնը լսեց իր հարևանի՝ Սաքու տղայի ձայնը: Նա բարկացած կանչում էր հարսի վրա, թե ինչու ձիու շվանը լույսով չի գտել:

Դռանը կանգնել էին Շարմաղ բիբին, կինը և նրա փեշից բռնած քնաթաթախ Շողերը, որ անսել էր մոր խոսքը և լացով հագել շորերը, որպեսզի տեսնի, թե ինչպես են ճանապարհ գցում Յուլակին:

Տխուր ժամ էր, երբ Միմոնը դռնից հանեց ձիու: Կարծես ներսը նա զարդարել էր մի դագաղ, իսկ դուրսը սպասում էին այդ ծանր վայրկյանին, որ աղի արտասվեն:

Յուլակը գոմից երբ դուրս եկավ, վրնջաց և ականջները խլշեց: Շարմաղ բիբին ձեռքը կրծքին խփեց և աղիողորմ ասաց.

— Զա՛ն,— ու սրբեց արցունքը:

Շողերը մոտ վազեց, երեկվա խոտի փշրանքից մի բուռ մոտեցրեց

ձիուն: Յուլակի տաք ունգներին մի ջերմ շունչ շոյեց աղջկա սառած ձեռքերը:

Միմոնն ամբացնում էր ճանապարհի պաշարը, կապում հարդով լի պարկը և միաժամանակ տնեցիներին պատվիրում, որ ցերեկն այժմբը հետև չքշեն, որ եթե արև լինի՝ հնձած խոտի կիտուկները շրջեն և եթե շրի հերթն իրենց տան, լոբու մարգերն անպատճառ ջրեն: Հենց այդ խոսքին Սաքու տղան կանչեց.

— Միմոն, բա չպրծա՞ր...

— Եկա՛, եկա՛...

Եվ Յուլակի սանձը քաշեց: Տանեցիները դանդաղաբայլ հետևեցին մինչև հարևանի դուռը, ասես հուզարկավոր էին մի թանկագին դագաղի, որին ուղի էին գցում մահվան անվերադարձ ճանապարհով:

Շարմաղ բիբին անընդհատ լալիս էր, լաց էր լինում և Շողերը, լալիս էր նրա մայրը: Փողոցին չհասած, մայրը լսեց Երեմի ձայնը.

— Ապի՛, ապի՛...

Դռան շեմքին կանգնել էր մերկ երեխան ու բարձր-բարձր հեկեկում էր և կանչում հորը: Բայց ուշ էր: Միմոնը Սաքու տղայի հետ արդեն իջնում էր ձորակը, որպեսզի միանա ուրիշ ձիավորներին:

Մայրը վերադարձավ, գրկեց տղային ու տուն մտավ: Շարմաղ բիբին ու Շողերը կանգնեցին այնքան, մինչև ձիավորները դարիվերը բարձրացան և պահլեցին բլուրի հետևը:

Արևը նոր-նոր շողերով ոսկի էր թափում բարձր սարի կատարին, երբ վերջին ձիավորը երևաց դարիվերի գլխին և անհետացավ, ինչպես սև ուրու:

4

Ձիավորները սկզբում լուռ էին, ոմանք առավոտի զովից ընդարմացել ու կարկամել էին: Սակայն բոլորն էլ իրենց դժվար մտքերի հետ էին, ձիերն էին համեմատում իրար, ուշի-ուշով դիտում, որպեսզի որոշեն, թե ո՞րը նորից կվերադառնա այս ճանապարհով, և որի՞ սանձն ու սարքը տերը շալակած տուն կբերի, որպես մնած մարդու զգեստներ, որոնց վրա այնպես դառնաղի ողբ են երգում գյուղի կանայք:

Գնում էին մեկ-մեկ, խումբ-խումբ: Մեկը գրպանից հաց էր հանել, մյուսն ազահությամբ ծծում էր շիբուխը, երրորդը կախ էր արև ոտքերը, աչքը ձիու ականջներին և լուսաբացի նինջով օրորվում էր ձիու հետ:

Բայց երբ սարի հետևից առևր բարձրացավ, կարծես ջերմացավ

տխուր ու լուռ ձիափորների սիրտը: Ամենից առաջ խոսեց դարբին Ավագի տղան՝ շիլ Իվանը, որ սարը բարձրանալիս սահել և հասել էր մինչև ձիու գավակը:

Նա ընդհատեց իր տխուր երգը և միամիտ պարզութամբ ասաց.
— Ես աստուծու քոռ հավատն անիծեմ... Ի՞մ աչքս էսպես արեց: Ի՞մ ձին որ քոռ լինեք, ես էս սարի գլխին ի՞նչ ունեի:

Մի քանիսը ծիծաղեցին: Սաքու տղան մտքում բարկացավ նրա վրա.
— Անդա՛րդ հեյվան...

— Հրեն Հիբանի ձիուն տեսեք,— շարունակեց Իվանը, ուրախ, որ ընդհատեց ծանր լուռությունը,— կասես զազախի ձի լինի: Հիբան, պրիստավը քեզ էդ ձիով տեսնի, քեզ էլ հետը կտանի...

— Ի՞նչ պակաս կավալեր աս,— ձայն տվավ մեկը:— Էն օրը քարուտի առվով էնպես թռավ, որ մնացինք արմազած:

— Մի տեսեք է՛... Տերտերն իրա ձին ժամհարին աս տվել: Այ, ինչ եմ ասել հալալ ախպերություն,— խոսքը փոխեց դարբնի տղան:

— Ա, քիչ յավա-յավա խոսիր, է՛յ...— կանչեց Շուղունց Աքելը, որ գյուղում ավել անունով հայտնի էր, որպես «ազվես խեղդող», երիտասարդ ժամանակ ձեռքով աղվեսը խեղդելու համար.— Տերտերը հիվանդ տեղով կարո՞ղ աս ձի նստի:

— Դե ասի մնացել աս, որ մեզ համար աղոթք անի էլի՛,— կծու հեգնեց մի ուրիշը:

Ընդհանուր խոսակցությունից բացի, ծայր առան և մասնակի զրույցներ: Ոմանք ճանապարհն աննկատ անցնելու համար մի պատմություն սկսեցին, ոմանք էլ խոսում էին պատերազմի և նրա արհավիրքների մասին:

— Մեր Անդրին անցկացած շաբաթը մի նամակ էր ուղարկել Վարշավու կողմերից... Լավ չի գրում. ասում է՛ էս է մի ամիս է ժամակի մեջ, գիշեր-ցերեկ թոփերը տրաքում են: Մինչև անգամ չու դուրս դալն էլ աս երկյուղալի...

— Իմ հորեղբոր Սիմոնն էլ աս գրել: Լազարեթից աս գրում, համա տեղը հայտնի չէ: Մի տեսակ անուն են ասում... Էն օրը տերտերը ինչքան ման եկավ գրքերում, չգտավ: Ասում աս էդպես քաղաք Ռուսեթու հողումը չկա:

— Նրա ի՞նչն աս որ...

— Ոտիցն աս կպել: Ֆրում աս, որ ծանր չի, մի ամսից պիտի դուրս գա:

— Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, էս կոփվն ինչո՞վ կվեր-

ջանա,— դարձավ նրան դարբնի տղան: Շատերը ծիծաղեցին, որովհետև Շուղունց Աքելը իր ողջ կյանքում իրենց գյուղից և գավառակային ավանից այն կողմը չէր եղել:

Ինքը՝ Աքելը դժգոհ սաստեց.

— Անհամ անհամի տղա...

Քիչ հետո խոսք ընկավ ձիերի պետական գնի մասին:

— Թեկուզ անունը փող, ի՞նչ կառնվի դրանով...

— Երկու բեռ գարի...

— Էդ էլ շես առնի:

— Դե գոնե գինը տային:

— Տային էլ, որտեղից ես ձի առնում: Մեր գյուղից որ էսքան ձի են պահանջել, դու տես ամբողջ գավառից քանիսն են բերելու...

— Այ տղա, էս հո կարգին զորք ենք,— և դարբնի տղան բարձր կանչեց.

— Սլուշա՛յ... Ափիցեր Աքել Շուղունցով...

— Ա, հերիք տնազ տաս Աքել ամուն:

— Աքել ամիս նեղանալ չի... Դե, շարքով գնացեք, տեսնեմ ով աս ետ ընկել,— ասաց Իվանը և ձին ճանապարհից հանեց:

— Թամամ հաշիվ... Աբրահամի ձին չկա՛ էն աս բազարում, Իսախանենց ձին՝ ոտը գեղը ցրիվ աս տվել, մեկ էլ Կոստանդ աղայի սպիտակ ձին...

— Կոստանդը հիմա քնած, ձին էլ ոսկի գարին առաջը... Վեր կկենա, յուզ ու մեղր կուտի, ձին կթամբբի և Կաթնաղբյուր մեզ կհասնի: Նա հո թո հովառարը չի՞,— ասաց Գիլանց Մուքին:

— Մի հաշիվ չի՞... էս գլխից հենց նրա ձին են տանելու,— ասաց Փիմոնը և տխուր նայեց Յուլակին, որ ականջները խաղացնելով գնում էր մյուս ձիերի կողքով:

— Ոնց չէ,— առարկեց Իվանը,— թո Յուլակը առաջի նոմերը կհանի, նրանը չէ... Թող Շարմազ հոքերն ինչքան ասես լաց լինի,— ձայնը տխուր մեղմացրեց Իվանը:

Սիմոնը վրդովվեց:

— Ուրեմն Կոստանդի սպիտակ ձին ու Յուլակը մի հավասարի են... Նա սպիտակ ձիու արծեքը մի բեռ ոսկի է տվել: Ես ի՞նչ եմ տվել...

— Էս է, սև ու սպիտակ էնտեղ կշռկվի,— ասաց դարբնի տղան և խոսակցությանը վերջ տալու համար սկսեց պատմել, թե իբրև գերմանացիք պայթեցրել են մի ահռելի պարիսպ և ծովը կապել ուսաների հազար-հազար զորքի վրա...

Արևը բավական բարձրացել էր, երբ ձիավորները հասան Կաթնաղբյուր և Գիլանց Մուրու առաջարկով իջան հանգստանալու: Նրանք ձիերն արձակեցին աղբյուրից ներքև ընկած արոտներում, իսկ իրենք տեղավորվեցին աղբյուրի մոտ և բաց արին ճանապարհի պաշարը:

Այդ աղբյուրը, ուտելու պահանջը, գուցե և այն, որ ճանապարհին հոգնելու շափ խոսել էին պատերազմից, ձիերի հավաքից և օրվա շարիքներից,—այդ ամենը աղբյուրի մոտ նրանց զրույցը փոխեց խաղաղ և սովորական առօրյայի հունով:

Կարծես հունձի ժամանակն էր և ինչպես միշտ, ծփում էին լեռան լանջերի բարձր խոտերը: Եվ ինչպես ամեն տարի, ահա նրանք ձիերով եկել են սարը: Հիմա կզրնգան գերանդիները, լորը կթռչի խոտերի միջից և լեռնային կաթավը կկարդա կանաչ սաղմոսը:

Դարբնի տղան հանկարծ նկատեց, որ Շուղունց Աքելը շտապելուց մթնում տրեխները թարս է հագել: Եվ այդ բուն զվարճութուն պատճառեց մյուսներին:

Նրանց զվարթ ծիծաղը լուեց, երբ Գիլանց Մուրին, որ արդեն ալեհեր ծերունի էր,—բարձրացրեց օդու առաջին թասը:

— Բարի լույս բացվի մեզ վրա և մեզ նման շարքաշ մշակների վրա... Բարով տեսնենք մեր զավակների ազատութունը սրի բերանից: Ողջութուն լինի և արդար լիութուն: Դու մեր սրտովն անես,— և ալեհեր գլուխը դարձրեց դեպի ջինջ երկիրքը, կարծես՝ նրա անհուն խորքից: մի աչք քաղցր նայում էր այդ խեղճ մարդկանց:

Սիմոնը լուռ էր: Նա թիկնել էր քարին, թրջում էր հացը պաղ ջրի մեջ և դանդաղ կրծում: Երբեմն նայում էր արածող ձիերին, որոնք գլուխները չէին բարձրացնում ցողապատ խոտից: Գյուղի ձիերի հետ արածում էր և Ցոլակը:

Սիմոնը մերթ աչքի տակով համեմատում էր ձիու բարձրութունը մյուս ձիերի հետ և տեսնում, որ Ցոլակը նույնիսկ Գիլանց Մուրու ձիուց էլ կարճ է, մերթ հայացքը գցում էր սարալանջի կողմը: Եվ դժվարին մտքերը խոնվում էին ուղեղում ու ելքը չէր տեսնում: Ահա՛՛ նորից դռանը կշռքի դռան աղբատութունը, վիզը կծուի ուրիշին, որ իր խուրձերը տուն բերեն, որ խոտը սարից բերեն: Ցոլակին կտանեն և հնձած արտում խուրձերը անձրևից կսևանան...

— Թե Գիլանց Մուրու ձին հավասարվի Ցոլակի հետ... Թե չէ՛ նրանից կարճը չկա...

— Սիմոն, հրե՛ն,—հանկարծ կանչեց դարբնի տղան և Սիմոնը ցրնցվեց:

Նա գլուխը ետ դարձրեց:

Հեռվից խաղաղով և խայտալով վազում էր սպիտակ ձին, քամին փոփոացնում էր բաշը և ձին լայն կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները: Փոշի չէր բարձրանում գետնից և թվում էր, թե ձիու արագավազ ոտները շեն դիպչում գետնին, և պայտերը զրնգում են օդի մեջ:

Արևը դեմից էր և արևը ոսկեվորել էր ձիու մարմար ճակատը, արծաթաձուլլ ասպանդակները և պողպատյա սանձը: Զիավորը ձիու հետ միաձուլլ էր և թվում էր, թե արևմուտքի գորշ ամպերի պատվանդանից պոկվել էր մարմարիտեն մի հեծյալ և արշավում էր որպես շքնաղ տեսիլք:

Գյուղացիների զրույցը դադարեց: Բոլորը նայում էին նրա կողմը: Նույնիսկ ձիերից մի քանիսը բարձրացրին իրենց գլուխները և հափշտակված, անասնական ահով նայեցին սպիտակ ձիուն:

Շուղունց Աքելի բերանում հացի պատառը սառել, մնացել էր:

— Այ ձի... Հազար մանեթ գին ունի:

— Տերն էլ պակաս փող չունի:

— Էդ ձին ինձ տան, կռիվ չգնացողը մարդու տղա չի,—ասաց դարբնի տղան:

— Նրա վրա ամենաքաշը գեներալ կնստի...

— Վրան նստողն էլ գեներալ է:

Երբ ձիավորներին հասավ, Կոստանդ աղան սանձը ձգեց և հագիվ կարողացավ պահել ձիու գլուխը: Կապույտ քրտինքի փրփուրը նստել էր ձիու սպիտակ մորթի վրա, Զին կարմիր ունգները փնչացնում էր, կանգնած տեղը ոտքերն անհանգիստ դոփում:

— Դուրս գալը մի սհա՞թ կա, Կոստանդ աղա,—շողորթրթ կեղծությամբ հարցրեց Շուղունց Աքելը, որին շճեցրել էր այդ տեսարանը:

— Սհաթին չեմ նայել... Մինչև դուք ձիերը նստեք, ես բազար կհասնեմ: Չեմ կարողանում գլուխը պահեմ, ձեռքերս կոտորեց...

Դարբնի տղան կամաց վրա բերեց:

— Տո՛ւր ինձ, ես կպահեմ:

Կոստանդն ուզեց ինչ-որ բան ասի, սանձը մի քիչ թուլացրեց. սպիտակ ձին նույն վայրկյանին զգաց այդ և տիրոջ խոսքը մնաց կիսատ: Գյուղացիները տեսան սպիտակ ձիու ամեհի ոստյունը: Մի ակնթարթից ձին պահվեց սարի հետևը:

— Հրեղենն ձի սրան կանն... —

Քիչ հետո գյուղացիները քաշեցին իրենց ձիերն ու ճանապարհ ընկան:

6

Երկու լեռնաշղթայի արանքում, նեղ հովտի վրա, որի մեջտեղով գլորվում է լեռնային կապույտ գետը,—ընկած է այն փոքրիկ քաղաքը, դեպի ուր այդ օրերը լեռնային կածաններով և դժվար արահետներով գնում էին մարդկանց և ձիերի անընդմեջ շարքերը:

Նրանք իջնում էին բարձր լեռներից, որոնց գագեթում, ինչպես լեռնային արծվի բնեք, ծվարել են քարակոփ գյուղերը: Նրանք ելնում էին մթին ձորերից, ուր խավար խեղճություն կար: Նրանք գալիս էին բարձրավանդակի տափարակից, որի մեջտեղը աղամանդի նման ջինջ լիճն էր, եղեգների երիզով, քարոտ ափին՝ հին գյուղը, որի կիսավեր վանքը քարափից ցուլ էր պցում ջրերի վրա և թվում էր, թե ջրերի տակ սուզվել է մի մեռած վանք, ու սպիտակ բազրեր գիշերում են նրա մուսլ խորաններում:

Եվ ով հայրենի ճանապարհով հասնում էր այն ծանոթ կետին, որտեղից հանկարծ բացվում էր գետահովիտը, շողշողում էին քաղաքի տների ապակեպատ պատշգամբները, թիթեղյա կտուրները,—ով հասնում էր այդ կետին, ահով էր նայում ներքև, ինչպես արջուք, որին քշում են սպանդանոց և ահա թաց ունգներով շնչած է թարմ արյան հոտը:

Վրնչում էին ձիերը՝ մետաղաձայն և երկարածոր, ինչպես տխուր երգը, կարծես վերջի հրածեղան էին ուղարկում լեռնային կապույտ լճերին, որոնց ջրից խճել էին, տափաստաններին, որտեղ անցել էր նրանց մանկությունը և ամայի գոմերին: Մեկը թավ էր վրնչում, մյուսը՝ արծաթահնչյուն և բարձրանում էր հետևի ոտքերի վրա, ինչպես գազազած ցուլ, ձգում էր սանձը և չէր ուզում իջնել այդ անվերադարձ ուղիով:

Երբ ձիավորները քաղաք հասան, հրապարակում առեղ պցելու տեղ շկար: Փողոցները, արտերի միջնակները, նախնիսկ տների բակերը սևացել էին ձիերի հազարավոր խմբերից:

Կային հազար գույնի ձիեր՝ որձ, էգ, ծանրած և ծեք, քուռակներով և դեռ անծին, թամբած ու մերկ: Նրանց կապտուել էին՝ որին քարից, որին ծառից կամ գետնին խրած սեպից: Կային և իրար կապած ձիերի խմբեր: Մեկի առաջ խոտ էր, մյուսինը հարդ, երրորդը նեղվում էր քաղցից, շոգից և անսովոր միջավայրից: Քաղցած ձիերը պոկոտում էին փողոցի շոր և հազար սմբակի տրորած խոտը:

Ձիերն իրար հետ կոճում էին. ամեն անկյունից վրնչոցի ձայն էր լսվում: Մի տեղ, ձիերի բազմության մեջ, քուռակն իր մորն էր կորցրել և բարակ վրնչոցով կանչում էր, վազվզում, մոռվթր մոտեցնում ուրիշ ծայրերի: Շոգից կատաղած որձաձիերը կտրատում էին կապերը և ամենհի կրթով հալածում էգերին, իրար կրծոտում և արնոտում բաշ ու ազդերիք:

Այդ ժխորին խառնվում էր տերերի կանչն ու աղմուկը, հարայհրոցն ու բազմոցը: Հայ, թուրք իրար էին խառնվել: Պետական հրամանը բոլոր գյուղերում կրկնվել էր պաշտոնական կարգադրության գորշ նմանությամբ և մարդկանց ու ձիերի այդ ահագին բազմությունը քշել քաղաք:

Հրապարակի մի անկյունում տախտակներից շինած փոքրիկ բարձրության վրա, դազադի նման նեղ սեղանի շուրջը նստել էին իշխանաժողովները: Նրանցից հեռու ոտքի վրա էր ստորագրաս պաշտոնյաների՝ ուրյաղնիկների, տանուտերերի և գյուղական գրագիրների խումբը, իրենց պաշտոնական տարազով, շքանշաններով և պղնձյա ծանր մեդալներով: Ավելի հեռու՝ հպատակների բազմությունն էր,—որ ծովի նման ծփում էր: Եվ բոլորի աչքերն ուղղված էին սեղանի շուրջ նստած շինովնիկների կողմը, որովհետև նրանք էին որոշում ձիու և ձիատիրոջ բախտը:

Գյուղի տանուտերը կարգում էր ձիատիրոջ ազգանունը, բազմության միջից մեկը, ձիու սանձը բռնած, առաջ էր գալիս, ինչպես կրկեսում ըմբիշը: Ապա նրա ձիուն մոտենում էին մի քանի հոգի, տնտղում, ասամները նայում, թղթի վրա ինչ-որ նշումներ անում: Մի վայրկյան խորհրդակցելուց հետո՝ սեղանի մոտ նստած պրիստավը ձեռքով նշան էր անում:

Ահա այդ նշանն էր, որ հայտնի էր դարձնում ամեն ինչ:

Եթե նշանը բազմության կողմն էր, ուրեմն ձիու անպետք էր: Ձիու տերը սկզբում երկյուղով, ապա ուրախությունից դողացող ոտքերով բաշում էր ձիին և արագ հեռանում: Իսկ եթե նշանը տախտակների մոտ կանգնած ոռու զինվորներին էր ուղղված, ապա նրանք իսկույն մոտենում էին, նոր սանձ հագցնում ձիու գլուխը, հինը շարտում տիրոջ կողմը, ձիին հեռացնում էին, հանձնում ուրիշ զինվորների, որոնք բազմության և տիրոջ աչքի առաջ միահավասար կտրում էին ձիու պոչը, բաշը խուզում և բաշի մազերից կախում տախտակի մի փոքրիկ կտոր:

Ձիատերը փորձում էր գնալ իր ձիու հետևից, սակայն քաղվում էին նրա վրա և ինչպես պարտված ըմբիշ, նա մնում էր գլուխը կախ: Բազմությունը լուռ դիտում էր այդ տեսարանը, Ապա տանուտերը կանչում էր նրան և շքած մարդը սթափվում էր, հավաքում այն, ինչ հանձնում էին՝ ձիու սանձը, շվանները, համետը,—և այդ իրերը շալակած անց-

եում էր հրապարակով դեպի բազմությունը, ձեռքում բռնած թղթի կտորը, որի վրա նշանակված էր ձիու գինը և նրա նախկին տիրոջ ազգանունը:

Գյուղացիները երբ քաղաք իջան, ձիերը կապեցին հրապարակից հեռու: Գիլանց Մուքին և Աքելը առաջ ընկան՝ ամբոխի մեջ գտնելու հարևան գյուղերի մարդկանց:

Առաջին հանդիպած ծանոթին, որ նրանցից կանուխ էր եկել, իսկույն հարցրին.

— Հը՛, շա՛տ են տանում...

— Էլ մի ասեք, զուլում ա...

Միմոնը տեսավ իր վաղուցվա ճանանչ թուրքին և նրան մի կողմ քաշելով առանձին հարցրեց, թե ինչպիսի ձիերն են ազատվում, արդյո՞ք կարճահասակ ձին է՞լ են տանում:

— Զիրուդ ոտքը պիտի կտորած լինի կամ խոր վերք ունենա, որ ազատվի... Թե չէ՛ բոլոր հաշիվ չի...

Միմոնի ոտները թուլացան:

Մինչև այդ խոսակցությունը՝ նա դեռ աղոտ մի հույս ուներ, որ այնուամենայնիվ հույս էր: Այժմ այդ էլ ցնդեց: Նա հուսահատ մոտեցավ ձիուն:

— Ցուլա՛կ,— և ձին վրնչաց այդ ծանոթ կանչից: Կարծես հիմա խոտ պիտի գցեին նրա առաջը: Միմոնը հարդով լի պարկը կոխեց նրա գլուխը:

— Ցուլակ... Գնում ես էլի...

Քիչ հետո Գիլանց Մուքին հոգնած վերագարձավ: Նրա ալեհեր դեմքի վրա դառն անհուսություն կար: Եվ հուզված, հեացող շնչով ասաց գյուղացիներին.

— Հիմա Քարագլուխն են կանչում, հետո գլխի բեղիք են գնալու, նրանցից հետո՝ մենք...

Միմոնը մի վայրկյան մտածեց, տուրակը ձիու գլխից հանեց և ձին քշեց:

— Էդ ո՞ւր, Միմոն,— ձայն տվավ Սաբու տղան:

— Տանեմ գետը... Կաթնաղբյուրից ջուր լիսմեց:

Այդպես փախչում են սարսափից: Այդպես փախչում է հոտը, երբ կայծակն ահռելի որոտով խփում է մոտակա ժայռին: Այդպես դողահար վազում է գազանը, երբ հրդեհվում է անտառը:

Սարսափահար փախչում էր Միմոնը, մոլորվելով քաղաքի փողոցներում, անվերջ մտրակելով ձիուն: Կարծես նրա հետևից էին ընկել

հրապարակի բոլոր զինվորները և նրանք, որոնք նստել էին դագաղի նման նեղ սեղանի շուրջը:

Ահա հասավ գետափի խուլ փողոցը: Այնտեղ էլ ձիեր կային. նրա նման գյուղի մարդիկ, յուրաքանչյուրն իր ձիու սանձից բռնած և ստրուկի հեզությունից իր հերթին սպասող: Նրանք տեսան փախչող ձիավորին և ոմանք կարծեցին, թե ահից սարսափած ձիավորը փախչում է դեպի հեռվի լեռները, ինչպես կփախչի պարտվածը դեպի փրկության բերդը:

Հոգնած ձին մտրակի հարվածից մի քիչ արագացնում էր քայլերը, ապա նորից գնում բեռան տակ մեծացած գյուղական ձիու ծանր քայլերով:

Ահա ետ մնաց վերջին տունը և բացվեց կարտոֆիլի դաշտը: Միմոնը գանդաղեցրեց ձիու ընթացքը և շունչ քաշեց: Նրան քաղաքի սահմանից դուրս ավելի հեշտ թվաց: Այն հեռվի լեռներից, որոնց լանջին իրենց գյուղն էր, մի անապական զով գարկեց նրա քրտնած դեմքին:

Միմոնը ծովեց դեպի աջ, գետը տանող նեղ ճանապարհով: Ձին զգաց գետի սառնությունը և առանց մտրակի արագացրեց քայլերը:

Գետակի հունն իջնելուց առաջ Միմոնը երկյուղով շուրջը նայեց և տեսավ, որ ամայություն է: Միայն ներքևը, ուռիների ստվերում ննջում էին կովերը: Ու երբ ծարավ ձին գլուխը կոացրեց ջրի վրա, Միմոնը ցած թռավ, սանձն ամուր կապեց ձիու առաջին ոտքից և սկսեց հետևի ոտքերը կապոտել:

Ցուլակը կուշտ խմելուց հետո փորձեց գլուխը վեր հանել, բայց չկարողացավ: Եվ մոռվեց հնազանդ ու մունջ նորից կախեց գետի կապույտ ջրերի վրա:

Միմոնն անսովոր արագությամբ ձիու համետը հանեց: Արևի տակ փայլփլեց ձիու ողորկ և գեր մեջքը: Ապա նույն արագությամբ կոացավ և գետնից վերցրեց մի շեշաքար: Երբ առաջին անգամ նա շեշաքարը Ցուլակի մեջքին քսեց, ձին հովություն զգաց, խաղացին նյարդերը և հաճելի գրգիռից մեջքի մաշկը դողողաց:

Ապա հանկարծ ձին մեջքին զգաց ծակծկոց: Ձին փորձեց հեռանալ, բայց չկարողացավ, որովհետև ոտքերն իրար պինդ կապված էին: Նորից փորձեց գլուխը վեր հանել, դարձյալ չկարողացավ: Իսկ ցավը հետզհետե սաստկանում էր, որովհետև Միմոնը հուսահատ կատաղությամբ շեշաքարը քսում էր նրա մեջքին: Մի քանի րոպեից մաշկը պլոկվեց և արնոտեց քարը:

Ցուլակը տնքում էր, պոչն ուժգին խփում այս ու այն կողմ, գա-

վակն աչ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում: Միմոնն ամբողջ ծանրութեամբ ընկել էր ձիու մեջքի վրա և քարը հա՛ քսում էր: Արդեն նոր բացված փեղքից արյան կաթիլները գուրս էին ցալտում և գործում հեղուկ կողերի վրայով: Իսկ Միմոնն ավելի արագ էր քերում, կարծես չեչաքարն ուզում էր թաղել Յուլակի այնքան գեր ու ողորկ մեջքի մեջ:

Ձին այլևս չգիմացավ, շրջվեց կողքի վրա և մեջքը կիսով չափ թաղեց գետի մեջ: Ցավից և անսովոր վիճակից Յուլակը ցնցում էր ոտքերը, փոնչում ունգներով, վիզն ու գլուխը քսում գետափին և փորձում ոտքի կանգնել:

Միմոնն արնոտ չեչաքարը մի կողմ քցեց, ինչպես մայրաստեղծը դաշույնը և սարսափով նկատեց, որ գետի ջուրն անվերջ կարմրում է, կրթալիքը զարկում է ձիու մեջքին:

— Չլինի՞ տամար տրաքեց...

Յուլակի աչքերի առաջ մթնեղ էր: Գլխիփայր դառնում էին քարերը, գետափը, և թվում էր, թե գետափի փափուկ մամուռը կախվել է կրկրներէ: Հաճելի էր ջրի մեջ և քնազգաբար կենդանիին ավելի փորն էր թաղվում լայծուն տիզմի և ջրային խոտերի մահիճում: Իսկ վիզն ու գլուխը չէր բարձրացնում կապույտ քարերի բարձից:

Միմոնն արագ արձակեց կապերը, սանձը, փնքը կիսով չափ մտավ ջուրը և շոտալով, աղերակելով, հրեղով սու քաշելով մի կերպ բարձրացրեց ձիուն:

Յուլակը դողում էր:

Նրա մեջքի աչ կողմը ամօտե՛ի չափ վերք էր բացվել և նրկում էր փարմիր, տեղ-տեղ փոս լնկած, ճաքճաք միտը: Մրուներ շարունակում էր կաթկթել, բայց մի քանի տեղ արդեն լերդանում էր:

Միմոնը հանցազործի հապճեպությամբ արյան հետքերը լվաց ձիու կողերից, իր ձեռքերից, տիզմի բարակ շերտով ծածկեց վերքը, ջրախոտերով ծածկեց, ապա շտապ համետեց ձին և դուրս եկավ ճանապարհը:

Ձին հագիվ էր քայլերը փոխում: Միմոնն ինչքան էլ կանչում էր ոտքով փորին խփում, փաղաքշական խոսքեր ասում, ձին չէր արագանում քայլերը:

Եվ Միմոնն ու Յուլակը նույն փողոցներով գնացին գետի հրապարակը: Երկուսն էլ գլխիկոր էին: Մարդն իր դաժան խոհի հետ էր՝ կտանեն՝ այժմ, թե ոչ, ձին՝ հագիվ տնքում էր, պղտոր աչքերի առաջ գլխի վայր կախված մի շնաշխարհիկ արտու...

Իսկ հրապարակն այդ ժամանակ ծփում էր մի արտասովոր գեպքից: Փողոցներում խնկած բազմությունից ոմանք բարձրացել էին պատերի և պատուհանների վրա, որ ավելի լավ տեսնեին, թե ի՞նչ է կատարվում մեղտեղքա Ոմանք բարձրացել էին ձիերի վրա: Ոտքի էին և կենտրոնում՝ սեղանի շուրջը բոլորած մարդիկ:

Մի կապտավուն ձի՛ երկար, ծալվեծալ բաշով, բոլորովին մերկ, կատաղած վազում էր հրապարակով: Նա երամակի ձի էր, սնվել էր լեռներում, երբեք հեծվար չէր նստել մեջքին, սանձը չէր դիպել մոտեթին, սմբակները պայտ չէին տեսել: Այդ ձին էին ուզում բռնել գինվորները, որոնք երկար պատանները թևերին փաթաթած շարտում էին գերոթյան օղակը, հենց որ ձին մոտենում էր նրանց: Բայց ձին ամենի ուսույն էր անում, թռչում օձի նման գալարվող օղակի վրայով և փախտառի ելք փնտրում: Զինվորների մյուս խմբերը զազանային ունոցով կարում էին նրա ճանապարհը և ետ փախցնում դեպի նրանք, որոնք ոլորում էին նոր օղակ:

Գյուղացիները շու՛նք պահած, անսահման հետաքրքրությամբ դիտում էին կապտավուն նժույզի գազազած վազքը: Նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը, երբ ձին թռչում էր օղակի փրայտի: Նրանց բոլորի թաքուն ցանկությունն էր, որ ձին ճեղքեր գինվորների շոթան և հրեղեն հրաշքի պես աներևութանաթ, թռչե՛ր դեպի հայրենի լեռները և այնտեղից պղնձաձայն վրնջար հատուցման և անսահման ազատության երդք:

Մարդիկ մի պահ մոտացել էին իրենց ձիերը, որոնց գինվորները կայել էին փշալարի ցանկապատի հետևը, — մոտացել էին, որ ձիերի սանձերն ու շվանները շալակած, օտքով պիտի քարձրանային դեպի լուռ գյուղերը, որոնց դաշտեղում այլևս չէին վրնջալու փշալարով անջատված ձիերը:

Հանկարծ բազմությունը հռուռեց, լսվեց խուլ գվվոց, ինչպես հողմի շոռաչն անտառում: Զինվորները վազեցին փշալարի կողմը: Մի վայրկյան ճեղքվեց բազմությունը: Ինչպես ծովի սև ալիքները, երբ երկվում է մութ անդունդը, — ապա նորից կլանեց ամեն ինչ:

Գապտավուն նժույզը վերջին հուսահատ ուսույունն էր արել փորձել էր թռչել փշալարի վրայով և ընկել էր լարի երկաթյա սուր փշերի վրա... ճեղքվել էր կուրծքը, փորը և վշշում էր արյունը լարերի վրա, մահվան հրապարակի վրա և մեռնող նժույզի ջինջ աչքերում ընդմիշտ սառչում էր հեռվի կապույտ լեռնաշխարհը...

Զինվորները ձիու սառած մարմինն իջեցրին փշալարից: Բծիշկն արձանագրություն կազմեց և վերադարձավ սեղանի շուրջը, որպեսզի նույն գորշ տաղտկությամբ շարունակեն գործը:

Միմոնը յուրայիններին նույն տեղը չգտավ: Նրան ասացին, որ արդեն իրենց գյուղացիներին կանչում են: Եվ բազմությունը հրելով, ձին հետևից՝ հասավ հրապարակը, որի մի կողմը կանգնել էին դարբնի տղան, Գիլանց Մուքին, Աքելը և մյուսները: Գրագիրը կարդում էր անունները:

— Այ մարդ, ո՛ւր կորար, քիչ մնաց քեզ շտրաֆ անեն: Ասացինք հրես կգա:

Ամենից առաջ Շուղունց Աքելին կանչեցին: Դողողալով նա առաջ անցավ, մի անգամ էլ ետ նայեց համազուղացիներին, կարծես նրանց ներկայությունը հուսադրում էր նրան:

Մոտեցան և զննեցին նրա ձիուն: Ու մեկ էլ զինվորները վրա տվին, ձիու համետն արձակեցին և շարտեցին Աքելի կողմը: Ձեռքը վերևից հայտնեց վճիռը: Զինվորները քաշեցին ձին: Աքելը հրապարակում մնաց մի րոպե, նայեց ձիու հետևից և անխոս վերադարձավ, մեջքին ձիու համետը:

Դարբնի տղան սրախոսեց.

— Ափիցեր Աքել Շուղունցով, — բայց ոչ ոք չծիծաղեց: Դարբնի տղայի ժպիտն այլանդակ կծկվեց և դեմքի վրա սառեց, որպես դանու-թյան կնիք:

Հետո Ռոստամենց ճակատը նշան ձին տարան: Գնաց և տերտերի ձին: Ժամհարը գլուխը կախ եկավ:

— Հիմա ես տերհորն ի՞նչ պատասխան եմ տալու...

Չորրորդ հերթը Կոստանդինն էր: Գյուղացիները զարմացան, երբ լսեցին նրա ազգանունը, որովհետև Կոստանդը նրանց մեջ չկար: Դարբնի տղան նկատեց, որ սեղանի շուրջը նստողների մեջ ինչ-որ փսփոսոց ընկավ:

Հրապարակի մյուս կողմից երևաց Կոստանդը՝ լղար, մեջքը փոս ընկած, մոխրագույն մի ձի հետևից: Թվաց թե նույնիսկ չնայեցին նրա կողմը և ձեռքը վերևից նշան տվեց, որ Կոստանդն ու ձին հեռանան հրապարակից:

Այդ այնքան արագ կատարվեց, որ գյուղացիներից շատերը չհավատացին իրենց աչքերին, թե այդ «խեղճ» գյուղացին Կոստանդ աղան

է: Նրանք մնացել էին ապշած, Իսկ Կոստանդը կեղծ ուրախությամբ ետ տարավ ձին և անհայտացավ:

Դարբնի տղան Միմոնի ականջին շնչեց.

— Տեսա՞ր, որ ասում էի...

Բայց Միմոնը չսեց: Նրա ականջին հասավ իր ազգանունը և Ցոլակի սանձից բռնած, մտավ հրապարակը:

Երբ մոտեցավ, վերցնել տվին ձիու համետը և մի ականցավոր առա, որ անասնաբույժն էր, քիթը վեր քաշելով կուցավ վերքի վրա:

— Չտարան, — անցավ Միմոնի մտքով: Բայց մարդը բարկացավ և մատը թափ տվեց Միմոնի վրա: Նա հայհոյում էր:

Միմոնը վախից դողաց, գունատվեց և նստեց համետի վրա:

Զինվորները Ցոլակին տարան: Միմոնը տեսավ, թե ինչպես իր ձիու երկար պոչը սուր մկրատով կտրեցին: Եվ իսկույն աչքին այնպես երևաց, սաես Ցոլակը մեծացավ և դարձավ դադախի ձի:

Գյուղական գրագիրը բղավեց նրա վրա: Նա սթափվեց և բեռը շալակին վերադարձավ յուրայինների մոտ:

8

Արևն արդեն թեքվել էր, երբ գյուղացիները ճանապարհ ընկան տուն: Ազատվել էին միայն ութ ձի, որոնց վրա բարձել էին մնացած ձիերի համետները: Գյուղացիներից ոմանք իրենք էին շալակել ձիերի սանձերն ու շվանները:

Ազատված ձիերը, որոնցից երեքը ծուռոտ էին, մեկի մեջքն էր փոս ընկած, երկուսը քոս էին, իսկ Հաբեդանց ձիու երկու կողոսկրը չկար, — ազատված ձիերը հազիվ էին քայլում ծանր բեռան տակ:

Միմոնը գլուխը կախ գնում էր մյուսների հետ: Դարբնի տղան էլ լուռ էր, որովհետև ոչ ոք սիրտ չունեի նրան լսելու:

Նրանք անընդհատ բարձրանում էին լեռը, կարծես պիտի գնային մինչև մութ երկինքը: Մայրամուտի արևը աչ կողմից նրանց ոսկեվորել էր: Նեղ արահետով գնում էին նրանք իրար հետևից, ինչպես կուռնկի երամ և թվում էր, թե բեռների տակ կքած սև ստվերները հավիտյան պիտի բարձրանային մութ լեռը, մինչև մի խավար անդունդ հանկարծ կաններ նրանց:

Միմոնը ձիու շվաններից և սանձից զգում էր Ցոլակի ողորկ մարմնի ծանոթ հոտը: Եվ մի միտք, ծանր բեռից ավելի դժվար ծանրությամբ,

նստել էր նրա գլխում և նա խոնարհել էր գլուխը: Բայց փակ աչքերով էլ տեսնում էր արևոտ շնչաբարդը:

— Հենց իմ փիսուկյունը մնաց, Յուլի... Հիմա հազար ձիու մեջ անտեր խրխնջում ես... Յարաք տեսնես արյունը ցամաքե՞ց:

Եվ նա բուռը լայն բաց արեց, այն բուռը, որով բռնել էր քարը...

Բո՛ւ մեջ սաապականի կտորն էք, վրան Յուլիի գինը և իր ազգանունը:

Արևի մայր մտնող շողերը հրդեհել էին ամպերը, ներկել արնոտ գույնով: Լեռների սև ստվերները ազելի վառ էին ցուլացնում ամպերի կարմիրը: Կաթնաղբյուրի արոտներում և սարալանջում էլ ոչ մի կաքավ չէր կարողում և ոչ լոր էր ճկում: Քնել էին քարերը, խոտերը, անբան հավքերը և լեռների վրա իջել էր իմաստուն մի երեկո:

Կաթնաղբյուրից նրանք ջուր խմեցին և հացի փշրանքները թաթախեցին սառը ջրում: Մութն ընկնում էր և ճանապարհ դեռ շատ կար:

Սիմոնը նայեց ներքև... Ա՛յ այստեղ արածում էր Յուլիկը, նրա առամների արանքում երևի դեռ մնում է այս դաշտերի խոտը: Իսկ ինքը պառկել էր այս քարի տակ և մի լույս ճառագայթ խոստանում էր զվարթ վերադարձ:

Ու ետ նայեց Սիմոնը: Այնտեղ, ներքև խավար էր, խավարի մեջ քաղաքը և քաղաքի փշալարյա վանդակում աղիողորմ վրնջում էր իր հույսը, իր Յուլիկը:

Հանկարծ Կաթնաղբյուրից ներքև քարերի վրա գրեգացին ծանր պայտերը: Գյուղացիները ճանապարհից դառնա եկան և մի փոքր քաշեցին բեռնած ձիերը:

Հեծվորք Կոստանգ աղան էր, սպիտակ ձիու վրա...

Միայն Շուգունց Աբելը կիսաբերան ընդունեց նրա ողջույնը: Մյուսները քարի նման լուռ էին: Գարբի տղան առամները տեղափոխելով դառապացավ:

— Տեսա՞ր, Սիմոն, սեն ու սպիտակը...

Սպիտակ ձին մի վայրկյան ցուլաց մթնոլ արևի շողերում և շրջալվ դեպի նարնջագույն ամպերը: Կարծես մարմարիտնե մի արձան արշավում էր դեպի պատվանդանը, որ իր անհաս բարձունքից ա՛հ ա սարսափ մազի ուսմիկ գյուղացիների վրա:

9

Կես գիշեր էր, երբ տուն հասան:

Դռան մոտ կանգնել էր Շարմաղ բիրին, ճրագը ձեռքին: Սիմոնը

ներս մտավ, տուպրակն ու սանձը գցեց մի անկյուն: Անկողնից վեր թռավ Շողերը:

— Ապի՛ր, բա Յուլիկը:

Աղջկա միամիտ հարցին, որպես պատասխան, դուրսը, լեռնալիճ գյուղի սառը խավարում, վրնջաց անմայր մի բուռակ: Կարծես բազմաթիվ մանր զանգակներ երգեցին անեզրական տիրություն:

Շարմաղ բիրին սարսուռով վրա դրեց դուռը, և հին դուռը մի անգամ էլ երգեց երկար ու կերկեր, արևելյան թախծոտ մի երգ:

Պատույր լալիս էր...

Հետո քանի երեկո իջավ ու զանգեր զարկեցին, բայց մինչև մահ, իրիկնապահին նա ոչ դուռը բացեց և ոչ էլ զանգերի դադանջը որպես անանձնական օրհնություն ներս մտավ նրանց սև խրճիթը...

1928—1930

ՊԵՏԱԿԱՆ ԳԵՂԱՆՆԵՐ

1

Ճշմարտության դեմ կմեղանչենք, եթե այս տարածությունը, որ կոչվում է Աստաֆյան, անվանենք փողոց, որովհետև մեր քաղաքում այս փողոցը հուշակված է նաև իբրև ժամադրավայր, նավահանգիստ, այն հին մակույկների համար, որոնք հանդարտ օրորվում են վերից վար, այսինքն ասնցնում են և բարձրանում: Նա և պատկերասրահ է, այն տարբերությամբ, որ պատկերները զբոսնում են և մի օրվա ընթացքում հետաքրքրասեր մեկը կարող է տեսնել նախրյան հոգևոր կուլտուրայի բազմաթիվ ներկայացուցիչներին: Այս փողոցն ունի նաև վատ համբավ. եթե մեկը կամենում է ցույց տալ իր բացասական վերաբերմունքը մի տեղեկության կամ կարծիքի մասին,—ասում է՝ «Աստաֆյան փողոցի զրույց է»: Վերջապես կարելի է մեջտեղ բերել մի այլ ապացույց, որով աներկբա կդառնա այն, որ այս տարածությունը սովորական առումով փողոց չէ, այլ ունի այնպիսի հատկանիշներ, որոնցից զուրկ են քաղաքի մյուս փողոցները: Նկատված է, որ այստեղ երկար տարիներ ժամադրափոփոխներին, հանգստացողներին, փողոցում վիճարանողներին և առհասարակ այս տարածության սիրահարներին հատուկ է մի առանձին բողբոջ՝ մի տեսակ հոգևոր երթ, երբ մարդը թեքում է վիզը, գնում

է իրանը օրորելով, աչքերի առաջ մեռած մառախուղ և մառախուղի մեջ անիրական մի աշխարհ: Մեր ծանոթներից մեկը, որ մասնագիտությամբ բժիշկ է, տպագրութեան համար պատրաստ ունի մի գիտական շարադրութիւն, որով ապացուցված է համարում մի առանձին՝ նրա տերմինով ասած՝ «էրիմենյան ախտի» գոյութիւնը և միանգամայն դիտականորեն բացատրում է այն պակասութիւնները, որ հատուկ են այս փողոցի սիրահարներին:

Կարող ենք թեթևակի պտույտ անել մեր քաղաքի մի քանի փողոցներում, որպեսզի համոզվենք, որ քաղաքի փողոցներից ոչ մեկը չունի այն առանձնահատուկը, միակը և անկրկնելին, ինչ որ այս թյուրիմացաբար փողոց կոչվող տարածութիւնը:

Քաղաքն ունի Կույր փողոց, որ վերջանում է այգիների ճանապարհով. Տպագրիչների փողոց, որտեղ մեծ մասամբ ապրում են պղնձագործ արհեստավորներ. Բաղնիքի փողոց, ուր երկու ատամնաբույժ կա և պարսկական հին բաղնիսից մնացել է միայն մի խոր գուբ, որ հետզհետե լցվում է բակերի աղբով: Կան փողոցներ, որոնց բնակիչները տառապում են հարատե հարբուխով, լուսկյաց և տխուր մարդիկ են, ինչպես գերեզմանափորները և ժամագործները: Կան զարմանալի փողոցներ, որոնք ունեն ցածր դռնակներով պատեր և երգող ջրեր: Կանուխ է ինչում մութն այդ փողոցներում և խավարն ավելի թանձր է, քան հարևան փողոցում, որտեղ գիշերային ժամերին կարելի է տեսնել արթուն և զվարճացող բնակիչների: Պատահել է մեզ տեսնել հին փողոցներ, որտեղ ամեն քայլափոխի մի բան գրավել է մեր անզբաղ ուշադրութիւնը: Մի տափակ կտուրով տան ամբողջ ճակատը զարդարված է գունազեղ աղյուսներով, որոնց համակարգութեան մեջ կա թաքնված իմաստ, մի ուրիշ տուն ունի երազային պատշգամբ, կապույտ ճաղերով և թվում է, թե ահա ցածր դռնակը կբացվի և նշաձև աչքերով մի աղջիկ դուրս կգա պատշգամբ, և, ինչպես երազ, նորից կանհետանա: Ահա մի գետնափոր տուն, որ դրսից լուսամուտ չունի և գորշ պատի մեջ չի երևում դուռը: Կարծես ղեղնած այգիներում ամայի հնձան է, որտեղ այլևս չկա ո՛չ միրգ, ո՛չ երգ: Սակայն գետնի տակից լսվում է երեխայի լաց, և գետինը թնդում է փայտե օրորոցի զարկերից: Ու չբանում են պատերը, տեսնում ենք մորը՝ կռացած օրորոցի վրա, և մոռացված մի երգ օրորում է ձեր մանկութիւնը: Ահա մի ուրիշ փողոց, որի միջով գնում է բարակ գետը: Տները գետափին են և շատ պատշգամբներ կախված են ջրերի վրա: Տնից տուն կամրջակներ են, որ գարնան հեղեղին բարձրացնում են վեր: Ի՛նչ քաղցր է զով գիշերը քնել ջրերի վրա կախված պատշգ

ամբում, լսել ջրի ձայնը և զգալ գետի հունով սարերից իջնող հովը: Իսկ եթե պատշգամբի վրա շողք է գցել դեղձենին և նրա ստվերի միջով ջրերի մեջ լողանում են աստղերը, իսկ եթե գետի մյուս ափին, կավե պատի հետևը, քնել է մի աղջիկ, ինչպես եղնիկը անտառի խալալի վրա...

Այդ փողոցից կարելի է մտնել մի ամբողջ քաղաք, քաղաքի մեջ քաղաք, բազմաթիվ խճճված անցքերով, ինչպես մրջնոցը, մանվածապատ և բոլորովին նեղ փողոցներով, որոնցով հազիվ է անցնում պաղպաղակ վաճառողի սայլակը,—կավե տների և կիսաշոր շինարների մի լաբիրինթ, որտեղ խլրտում է արհեստավորների ու մանր տնատերերի մի ահուկի բազմութիւն: Այստեղ մի տուն կբեւ է ռադիոյի կայմի ծանրութեան տակ, մի ուրիշի փոքր դռնակին կպցրել են թիթեղի կտոր՝ «նորոգեմ պրիմուս», իսկ տերը մտել է կիսաքանդ պատի ճեղքը: Այս փողոցներում ապրում են ամենաօրինապահ և միլիցիոնների կարգադրութիւնը երկյուղած բարեխղճութեամբ կատարող քաղաքացիներ: Սրբ քաղաքի կենտրոնական փողոցներում դեռ նոր են կախում տոնական դրոշները, այս թաղի տների վրա արդեն ծփում է դրոշակների ծովը: Ու թեև երիտասարդները զլխավոր փողոցներից լուր են բերում, որ տոնը վերջացել է, այստեղ դրոշակները դեռ ծածանվում են, մինչև գա ինքը՝ հերթապահ միլիցիոնները և կարգադրի, որ հանեն դրոշակները:

Բայց կան և լուրջ փողոցներ՝ քարակոփ տներով և մայթերը սալահատակ: Այդ փողոցներով անշշուկ սուրում են շքեղ ավտոներ, այնտեղ ծառերն անգամ միահավասար և միանման են ու չեն շարժվի ամեն պատահական քամուց, մինչև շարժվի ծայրինը, և սոսափը, որպես հրաման, շանցնի սաղարթից սաղարթ: Նրանց գրանիտե քարերը զրնգում են գեղեցիկ նժույգների դոփյունից և ներշնչում ակնածալի պատկառանք:

Մենք ակամա շրջեցինք քաղաքում՝ Տպագրիչների փողոցից մինչև գետափը, եղանք ասիական թաղի լաբիրինթում, տեսանք այն խաղաղ փողոցի երազային պատշգամբը, նույնիսկ հասանք այն փողոցը, որտեղ կան վանդականման տներ և պատուհաններ, որոնց հետևից, երբ լուռ է փողոցը, կարելի է լսել աղջկա սրտամորմոք երգ և դռան ճեղքից տեսնել արևելցու գեղեցիկ բակը՝ վարդենիներով, որոնց վրա դեռ կարմիր են վարդերը, երբ թափվում է առաջին ձյունը: Մենք եղանք և այն փողոցներում, որտեղ չկան բարդիներ և որտեղ գրանիտե հունի մեջ գնում են ջրերն առանց խոխոջի, առանց շառաչի: Բայց այդ փողոցներից և ոչ մեկը չի կազմում քաղաքի հպարտութիւնը և մեր նկարագրութեան առարկան: Ավելին, նրանք բոլորը փողոց են, հաղորդակցութեան անոթ-

ներ, և նրանցից ոչ մեկի անունը չի կապված երազներքի, բամբասանք-
ների, այլատեսակ շաղակրատութիւնների, դատարկատրու թափառում-
ների և ժամանակի վատնման հետ, ինչպես այս փողոցն է, որի նկա-
րագրութիւնը հիմա կանննք, աստ կպատմենք մի ուրախառեթիք գեղք
և նրա հետ կապված մի անանուն մարդու ելերական վախճանը:

2

Տները նշմարվում են առաջտառի մշուշով, բախտեքներով բարձր ազա-
տանում է: Չի շարժվում և ո՛չ մի տերև, ո՛չ մի ծառ: Ամեն ինչ քնած է
լուսաբացի խոր քնով: Հոգնած ձիերը սրտկուռ են տաք աղբի վրա և
վզները երկարում: Այդ նշան է, որ շոտով կբացվի առաջտար: Հեռի
ճահճուաներից, բախում է գորտերի կոկոսը, որ ափելի վեհաշառք է դարձ-
նում լուսաբացի խորհրդավոր երկունքը: Կուտնը շրային շոշանի նման
լուջ տալիս տիեզերական օվկիանոսում: Իսկ աստղերը սկսում են ան-
էանաբ, որովհետև վաղուց է ասված՝ «երեւելն արեգական անէանան
աստեղունք»:

Ահա ճահճուաներից բարձրանում է տաք գոլորշին, որ գողորդում
է շատ բարձրում: Ա՛ի թուփ, և աստք հասանքը ցած է իջնում: Արդեն
խշում են բառաքնների բարձր կատարները, իսկ ներքեի ճյուղերը, խա-
վարի մեջ, դեռ անշարժ են: Ապա լուսափորվում են վերին ճյուղերը,
տերևները դադում են և դողը կանաց-կամաց սահում է ցած: Կարծես
մի խափառ քող բնկնում է ծառերից և նրանք հագնում են ծիրանի շա-
պիկ: Փողոցը դեռ նիրհում է: Կուտերի գոլորշի քաղցր նինջ է իջնում
ժամապահ միջոցիտներների վրա, որոնց սև սիլուետներն ընդունում են
գանաղան դիրք: Ահա մեկը հենվել է հեռագրասյունին և անշարժ է,
ինչպես սյունը: Մյուսը ծեր գրենագիրի նման կոթնել է հրացանին, եր-
րորդն անշարժ նստում է առջի ջրին, որ նրա համար երգում է սեր և
խնդրություն: Վաղ առաջտարան ո՛վ գիտե, որ Եռշանն է միտն ընկել
Չորրորդն արձանի պես է, որպես մի ահեղ մտնում ենա՝ ճանապարհի
մեջտեղը: Ա՛ի խոսքով լուսաբացին փողոցը նման է գրեթե արագան ար-
ձանների հաղթական ալլելիա:

Գետի երեսով արդեն փչում է սառը հոտանքը և խոնավանում է
գետինը: Փողոցի ծայրին երևում է անտիրական մի շուն, որ գունդը վեր
ցցած ըջում է ուղիղ ներքև: Երա զթովն է ընկել ինչ-որ բաղցր բույր,
որ մերթնել կողմից բերում է քամին:

Ահա լուսափորվեցին այս փողոցի ծառերը, որոնց գեղեցկութիւնը

վաղեմի մի օր գովել է այն նշանավոր պոետը, որի անունը մեզ հա-
ճարձակութիւն ներշնչեց ավելի մանրամասն նկարագրելու լուսաբացը,
քան այդ թույլատրում է շափի զգացումը: Եվ վերջապես մի այլ բանա-
ստեղծ, որից առավել քանքարով ոչ ոք չի նկարագրել բարդիները, լու-
սինը, ջրերի երգեցիկ գրույցը, — մեր ներկայութիւնը մի թուխ մաշկով
աղջկա, որ նման էր եթովպոհու, ասաց:

— Չեր մազերը նման են այս ծառերին, — հետո թափահարեց ծառը,
և հազարավոր նարնջագույն տերևներ տեղացին կայտառ աղջկա ուսերի
վրա...

Ահա լուսավորվեցին այդ ծառերը, ելան դոնապանները՝ ավելներով,
թիակներով, դուլլերով և սկսեցին հարդարել փողոցը: Նրանք էլ գնացին
և ապա արևը ոսկի տեղաց Արարատի գագաթին: Արդեն սուլեցին գոր-
ծարանները՝ մեկը դիւ և ուրախ, մյուսը խոպոտ, երրորդը՝ երկարածոր,
ինչպես տխուր սեզյահ: Փողոցում զարթնեց աղմուկը: Տասը, քսան,
հետո հարյուրներ, միայնակ կամ խմբերով, ելան տներից, եկան մյուս
փողոցներից և բանվորների բազմութիւնը լցրեց այս փողոցը:

Ոմանք դրսում են կոճկում բաճկոնը, ոմանք տրորում են աչքերը
և գնում են լուռ ու լուրջ: Կան տարիքավոր մարդիկ, որոնք հազար-
հազար անգամ անցել են այս փողոցով, և տարիների ընթացքում նրանց
ոտքերը վարժվել են մի շափի, որով անվրեպ հասնում են աշխատանքի
վայր: Հինգ թուփ և փողոցը լցնում են կաշեգործները, հյուսները, դար-
բիները, մոնտյորները, հնոցապանները, — գործարանային աշխատանքի
բոլոր ներկայացուցիչները: Կան հյուսներ, որոնք երեսուն տարի նույն
կողմը ձեռքին, նույն հաստ մատիտը ականջի հետևը, գնացել են այս
փողոցով: Կարելի է տեսնել ներկարարների, որոնց բարձրավիզ կոշիկ-
ների վրա երևում են բոլոր ներկերի հետքերը՝ գաշից մինչև օլիֆ: Ահա
«արձիճ» բանակը, ահա և կաշեգործները, որոնք վաղնչական ժամա-
նակներում եղբայրակից էին բանաստեղծական արվեստին:

Աշխատանքի այդ բանակը անտարբեր է փողոցի գեղեցկութիւնը:
Եթե մեկը երագում է այս փողոցում՝ նրան անվանում են «ավարա»: Եթե
վարպետը բարկանում է աշակերտի վրա և հանդիմանում, ապա
հիշատակում է և այս փողոցի անունը. «Թու լավ կարաս Աստաֆյանը
շափես...»: Գործարանները շտապող այս մարդիկ չեն սիրում փողոցի
երկարութիւնը: Նրանք, երբ վերադառնում են աշխատանքից, հատկա-
պես տարիքավորները, շատ են գանգատվում այս երկար փողոցից.
«Գնա՛, գնա՛ թե վերջանա...», «Ե՛րբ կազատվենք սրա ձեռից...», «Ա՛խ,
մի ոտքերս կտրվեն գետնից, գոռալով գնամ, գոռալով գամ...»: Եվ այս

բուրն այն փողոցի հասցեին, որ համբերատար լսում է և մյուս փողոցներից ավելի մաքուր է, մայթերն ամուր են, իսկ լանջը՝ արծաթյա պնակի նման ողորկ: Եվ այս բուրն այն ժամանակ, երբ նկարների ծանր կոշիկներն ամուր դոփում են, այնինչ փողոցը, կարելի է ասել, կուլ է տալիս իր սեփական փոշին, որ հեշտ լինի նրանց երթը:

Սակայն բարակում է այն հոսանքը և միայն հեռվից, կաշեգործարանի մոտերքից լսվում է ներկարարների հաստ կոշիկների դոփյունը՝ նրանք դեռ գործարան չեն հասել: Փողոցում երեքում է փոշու ծխագույն շղարշը: Դարձյալ երևում են հատուկենտ մարդիկ: Նրանցից մի քանիսը շտապում են, մյուսները ծանրաբայլ են: Շտապողները ետ մնացած բանվորներն են, ծանրաբայլ անցնողները՝ ծառայողների բանակի առաջապահները, որոնք թևերի տակ մատյան, համրիչ կամ թղթի կապոց՝ գնում են իրենց հիմնարկը կիսատ բալանսը լրացնելու, կամ քաղվածքներ գրանցելու և կամ հենց այնպես, մի քանի ռուպե վարիչի աթոռի վրա նստելու և երազելու ո՛վ գիտե որպիսի հեռանկար:

Նրանք առաջապահներն են, իսկ բանակը դեռ թեյ է խմում և հաճախ նայում ժամացույցին: Մի քանի ռուպե ևս և ահա փողոցը հեղեղում են գործավարները, մեքենագրուհիները, հաշվապահները, վիճակարիները, հաշվետարները, քարտուղարները, մանր բաժինների վարիչները, որոնց մեջ, ինչպես սարյակը ճնճողկների երամում, կարելի է տեսնել և վարչութայան պետերին: Այս բանակը առաջինի ո՛չ կարգապահությունն ունի, ո՛չ ծանրախոհ լրջությունը: Միայն գլխավոր հաշվապահներն են իրենց քայլվածքով ներշնչում ուժ և վստահություն: Իսկ մանր հաշվետարները, որ միայն թվաբանական շորս գործողություն են կատարում հաշիվների հետ,—կարծես դպրոց են գնում: Հապա մեքենագրուհիները... Կա այնպիսին, որ փողոցումն է ավարտում իր տուայետը, կա, որ հենց գլխավոր հաշվապահի քթի տակ վեր է քաշում գուպան և կորցնում է իր ոտքը (և ի՞նչ ոտք, սրտեր խոցող կեռ յաթաղան...) Կա և այնպիսին, որ մինչև հիմնարկի մուտքը զարմանալի արագությամբ տեղեկանում է գիշերային պատահարների մասին, մի քիչ բամբասում է, մի քիչ զվարճացնում և մի քիչ նախանձում: Ահա սրանց են ասում «Աստաֆյանի օրիորդներ», սրանք են, որ փողոցը լցնում են երկնաբույր օծանելիքներով, օդի մեջ թողնելով աննյութական ժապավեն, երբ նրանց բարակ մատներն արդեն խաղում ունդերվուդի ստեղների հետ:

Առավոտյան այդ ժամին փողոցում կարելի է լսել զանազան տեմբլերի ծիծաղ, գլխավոր հաշվապահի կուշտ վրնոցից մինչև մանր հաշ-

վետրի անպատեհ քրքիչը: Սակայն այդ ամենը ոչինչ են այն խոսակցությունների աղմուկի մեջ, որով հեղեղվում է փողոցը: Ահա Մատթողկոմատի գործակատարը հանդիպեց Պտուղբանշարկենտրոնի գործավարին. մի բարև և նրանք ընդհարվում են գրութայան սխալ նոմերի, առդիրը շինելու, «մեր պատասխանը» ուշացնելու և էլ ով գիտե ինչպիսի՞ առիթով: Մի ուրիշ տեղ բռնվել են իրար վասիլ Պետրովիչը և Կոյուղու վարչութայան ծախսարարը: Վասիլ Պետրովիչը սպառնում է Բողոքների բյուրոյով և ավելի բարձր ինստանցով, եթե Կոյուղու վարչությունը չմոծի տախտակների արժեքը: Իսկ ծախսարարը կրկնում է. «Վարկը բաց անեն, իսկո՛ւյն, իսկո՛ւյն, Վասիլ Պետրովիչ, հե՛նց նույն օրը...»: Ահա Պետարխիվի աշխատակիցը պատմում է գիշերվա երազը, պատմում է և միաժամանակ ընկերոջ թևից քաշ տալով մոտենում՝ կարգալու թարմ մահազոյր: Մենք կարող ենք այս օրինակները բազմացնել, որպեսզի չկարծեն, թե այդ ժամին Աստաֆյան փողոցով անցնում են միայն սեթևեթ մեքենագրուհիներ և կամ թե մանր հաշվետարներ. ո՛չ, այդ բազմություն մեջ կան պետական բարձր խելքեր, գլուխներ, որոնք ջնդունակ են կառավարելու մի ամբողջ նահանգ, ոչ թե միայն մի գրամարկու: Կարող էինք բազմացնել գործի մարդկանց թիվը, բայց մինչդեռ մենք խոսքով էինք, նրանք արդեն անցան իրենց գործին:

Անցավ և մարդկային այս ալիքը, եղավ ժամը տասը: Աստաֆյանը նորից ամայացավ: Արդեն արևը բավական ճանապարհ է կտրել և գնում է դեպի այն սառն ամպը, որ մուրրվել է վերևի կապույտում: Ծառերը ստվեր են գցում մայթերի վրա, և մայթերի ստվերով ծանրաբայլ անցնում են կոլեգիայի անդամները, որոնք վաղ առավոտյան իրենց բնակարաններում ընթացք են տվել մեծամեծ գործերի: Արագ վազում են ցրիչները՝ դեպի հիմնարկները, փոստը, բանկերը,—տանելով հեռագրեր, ծրարներ և բազմաբովանդակ գրություններ: Բայց ահա գալիս է այն ժամը, երբ կոլեգիայի անդամը լսել է երկու բաժնի գեկուցում, երբ կենսաթոշակ ստացողը նստել է «հառաչանքի ծառուղու» նստարանի վրա, երբ դպրոցում աշակերտները կորցնում են ուշադրությունը և խժժում են նստարանների վրա,—մի խոսքով այն ժամը, երբ փողոցի մաքուր հայելին շողշողում է և լրագրային կիոսկի ստվերում քուն է մտել մշակը,—այն ժամը, երբ քաղաքի ամենաչքձաղ կանայք, ընդամենը ութ-ինը հոգի, իրենց մանուկների հետ, և եթե չունեն՝ մենակ, դուրս են եկել արևին ցույց տալու իրենց զգեստները, իրենց երեսները, քայլվածքը և իրենց:

Այդ ժամին Աստաֆյանը դառնում է լեռնային լիճ: Եվ լողում են այդ լճի վրա նրբիրան կանայք, այնպես, որ նույնիսկ արևը խանդավ

է նայում այդ փողոցին: Եվ ի՞նչ բույր, մշկեհու ի՞նչ հոտ... Ահա գնում է մեկը և գիտե, որ քաղաքի ամենագեղեցիկ ուղիներն իրենն են. գնում է և ոտքերը փոխում այնպես կաքավաքայլ, կարծես ափսոսում է կոխիք գեանիւր: Ահա մի ուրիշը՝ երկար և սև արտևանունքներով, որոնց տակից նայում են մթին աչքերը, ինչպես աստղերը ջրհորի մեջ: Կան և կապույտ աչքեր, այնքան վճիտ, որ նրանց մեջ արտացոլում է զգեստի ծիփանքը, ինչպես անտառի շորթը լեռնային լճակի մեջ: Կան և հոլանդի բազուկներ, և էլ ինչե՛ր չկան ու ի՞նչ ձևեր, ձևերի որպիսի կորուժումն, ամենը նուրբ...

Կա՛մ է դադար առնել այստեղ:

3

Հետաքրքիր չեն մյուս ժամերը՝ մինչև երեքը, շորթը, և մուլմիակ այդ ժամերն էլ Հետաքրքիր չեն, որովհետև բանականները աշխատանքից հոգնած շտապում են հացի և հանգստի: Նրանք արագ են անցնում և ուշադրություն չեն դարձնում փողոցի եռուզեռին, այլևս բարձրաձայն չեն խոսում. իրենց ծառայության և առանի գործերի մասին: Եթե որևէ մեքենագրուհի մի քիչ կանգնում է վիտրինի առաջ և դիտում կանացի գլխարկները, — ուշադրության արժանի չէ նրա տխուր դեմքը: Կարելի է լսել զուսպ տրտունջներ, որ շոգ է, սակայն այդ լի վերաբերում փողոցին, որովհետև շոգը արևն է թափում: Նրանք չեն նկատում, որ հենց այդ ժամին փողոցի ծառերը շարժում են իրենց ճյուղերը՝ որպեսզի զովանան ծառայական անձանց հոգնած մարմինները:

Հետո երկարում են ստվերները, արևը հանգստի է գնում: Հետք հետե կենդանանում է փողոցը: Դուրս են գալիս նրանք, որոնք հեռու կեսօրյա քնից ծանրացել են, և նրանք, որոնք սպասել են ձմրոտ ստվերներին: Ակտում է Աստաֆյան փողոցի խակական կյանքը, նրա վեհաթյունը, այն ժամանակը, երբ նա դադարում է փողոց լինելուց և դառնում է զրոսարան, ժամադրավայր, երազատուն, մի խոսքով հայրենի առև, որտեղ շրջում են հորեղոր որդիները և մորաքրոջ աղջիկները, հորեղբայրները, քեռիները և պապերը: Ամենից անհամբերը երիտասարդներն են: Ահա Գեառուի կողմից արագ գալիս է մի դեռատի պատանի: Ես սանրել է մազերը, փայլում են կոշիկները և ձեռքին ծաղիկների փունջ ունի: Նա չի տեսնում ո՛չ խոշրնդոտ, ո՛չ մյուս փողոցների երթևեկը: Նրան թվում է, թե Աստաֆյանը մի անմարդ աչքի է, որտեղ ծառերը բուսել են ստվերի և հառաչանքների համար: Մի անմարդ աչքի, որտեղ

նրան սպասում է մի մանկահասակ աղջիկ և միամիտ մի դրույց: Այդ գեռակիզքն է. և երբ վառվում են լապտերները, Աստաֆյան փողոցում կարելի է տեսնել նման պատանի զույգեր, որոնք հեռունները չեն գնում և ոչինչ չեն զգում մարդաշատ մայթերի վրա, բացի առավոտի նման քացվող իրենց սերը: Նրանք իրարից որոշ հեռավորության վրա են կանգնած և շատ-շատ աղջիկը երկարում է իր բարակ բազուկը ծառից մի տերև պոկելու, իսկ տղան ծառի բունը գրկած շարունակում է սիրային շատախոսախոսելու: Իջնում է գիշերը, երևում են ուրիշ զույգեր, որոնք գնում են փողոցն ի վեր դեպի համալսարանի բարդիները և ուշաթափվող աղբյուրը: Գիշերային տարածամին այդ կողմերում կարելի է տեսնել արձակի նման անշարժ զույգերի, որոնք բռնկվել են անհաղթահարելի կրակով: Եթե բարդիները կարողանային խոսել և քարերը լեզու առնեին, այն ժամանակ կարելի էր լսել զարմանահարալ պատմություններ՝ ավելի մետաքսերի, քան հազար ու մի գիշերների հեքիաթները: Իսկ եթե յուրաքանչյուր զույգ իր այցելությունը հավերժացնելու համար մի քար գցեր այդ կողմերը, այն ժամանակ մենք կունենայինք Բաբելոնի աշտարակի յուրաքանչյուր և հյուսիս-արևելյան քամին փոշի չէր մազի մեք քաղաքի վրա:

Իսկապես դր զարմանալի փողոց է Աստաֆյանը...

Այնուամենայնիվ ամենահարաշալի այդ ժամերի նկարագրությունը չի կարող գերել մեր գրիչը և մեզ ստիպել մոռացության տալու մի էակի, որին մենք պետք է անվանենք անանուն մարդ, որովհետև մի առանձին քան չի ավելանա, եթե հիշատակենք նրա անունը և ազգանունը, նկարագրենք նրա դեմքը և պատմենք նրա կյանքը, թեկուզ համառոտագրած: Ահա վրա հասան այն ժամերը, երբ փողոցում, չհաշված նրանց, որոնք շտապում են տուն, մնացել են նրա հավատարիմ երկրպագուները: Այդ մի քանի զույգ սիրահարներ են, որոնք իրարից չեն կարողանում քանակելու, ապա մտախորական խավի ներկայացուցիչներ, որոնք ճեմելով վիճում են ո՛վ դիտե ինչպիսի անլուծելի խնդիրների մասին, ապա նրանք, որոնք նվճում են, ինչպես գիշերային բուն, և վերջապես նրանք, որոնց զգացմունքների կապանքներն արձակվել են և այդ տաքածոյի վրա գրունելով գոհ են, որ վերկից ժպտում են հայրենի տառերը, ստեղծի տակ հին հողն է, շրերը գալիս են երկրի խաղաղից և ցեղը նրանց պատում են հին օրերի մասին:

Գիշերային այդ ժամին քաղաքի այն խուլ փողոցներից, այն ասիական լարիրինթից, որ ինչպես ասացինք քաղաք է քաղաքի մեջ և որտեղ խլրտում է մանր տնատերերի մի բազմություն,—ղուրս է գալիս մի վտիտ մարդ. մի անանուն մարդ: Նա կանգնում է երեք բարդիների առաջ, նայում է ներքև, տեսնում է փողոցի գետինը, որ շողում է լույսերի տակ, և շտամ է ջրերի ձայնը: Հետո նա բարձրացնում է բարակ վերարկով օձիքը և մայթի վրայով գնում է դեպի վեր: Փողոցի վերջում նա անհայտանում է և երկար ժամանակ չի երևում: Նա նստում է մի փոքրիկ բարձրության վրա և այնտեղից նայում է քաղաքի լույսերին, դաշտին և հեռվի լեռներին:

Մութի մեջ ցցվում է Արարատի սպիտակ գագաթը: Ստորոտը, որտեղ ձյուն չկա, կորչում է մութի մեջ և երևում է միայն ձյունոտ գագաթը, որ հեռունեքում դողում է, ինչպես վիթխարի ամպ: Նրա աչքին ահա երևում է այդ սպիտակ գագաթը և քաղաքը, որի կրակները քանի հեռանում, այնքան խառնվում են իրար և ստացվում է կրակների ծփացող ծով: Սակայն այդ անանուն մարդը խորշում է կրակների ծովից և հայացքը դարձնում է դեպի լեռան գագաթը: Ապա նայում է Աստաֆյանի ուղիղ սլաքին և փակում է աչքերը:

Ի՞նչ էր նրա ցնորքը, ի՞նչ կզարձներ նա այս փողոցը:

Նա կփակեր փողոցի բոլոր մուտքերը կավե պատերով, կթողներ միայն մի դռնակ, որով մտներ միայն սալը: Նա հողին կհավասարեցներ բոլոր քարաշեն տները և նրանց փոխարեն կկառուցեր կավե խրճիթներ, նրանց կտուրին շարդախ, որպեսզի լուսնկա գիշերներին բնակիչները բարձրանային վերև և լուսնյակը շողք գցեր փայտե օրորոցների վրա: Նա կկտրատեր բոլոր լարերը և բնակիչներին կհրամայեր, որ ձմեռը ձեթ վառեն, մնացած ժամանակ ելնին արևի հետ և պառկեն մթնով: Ելնեն արևի հետ և աշխատեն իրենց պարտեզներում, այգիներում, ցանեն սոխ ու սխտոր, ոսկեհատ ցորեն և հնձաններում ոտքերով ճմլեն խաղողը: Նա կցանկանար տեսնել համեստ աղջիկներ, արժաթյա մախչալով, գլխանոցներով, երկար-երկար ծամերով, որոնց ծայրերին լինեին ուլունքներ: Աղջիկները սափորներով գինի բերեին հնձաններից, մարեն մառանից հաներ սպիտակ լավաշ, և՛ յուղ, և՛ պանիր, ինքը նստեր կտուրի վրա, ներքևը ջրեր խոխոջային, վերևը երկնքի խոր կապույտը: Եվ ցուր տար Բարձր լեռը: Հավիտյան այդպես մնար այս փողոցը, բերդի պես դրսից անշատված խոր խրամատներով, կապույտ ծուխը բարձրանար վերև և ծխի միջից ինքը նայեր Արարատին ու հիանար: Թող ամբողջ աշխարհում թագավորներ երկաթը, և միայն այստեղ

իշխեր կավը, քաւը, փայտը... Դրսից չհասներ ոչ մի հնչյուն, ոչ մի օտար աղմուկ և ոչինչ շփոթվեր նրա հանգիստը:

Անեղծ մնար պրովինցիան...

Այդ էր նրա ցնորքը:

Հետո նա լսում էր այն ձայները, որ բերում էր քամին լեռներից: Նա զգում էր քամու բույրերը և որոշում, որ լեռան վրա արդեն բացվել է մանուշակը, որ բաղբը բարձրացել են գետի հոսանքով մինչև լեռնային մարգագետինները, որ հասկերը լցվում են կաթնազույն հեղուկով, ահա գալիս է տաք շեղջի բույրը, ուրեմն ցորեն են ծեծում և կարմրել է խնձորը:

Նստում էր այդ անանուն մարդը բարձրության վրա և մտածում էր մի անէական աշխարհի մասին: Նրա աչքի տառք բացվում էր բլուրների, լեռների և դաշտերի մի ընդարձակ տարածություն, մի ամբողջ երկիր: Սպիտակ և բարձրահասակ եզները ահա քաշում են արորը, պարարտ սևահողը ծալվում է իրար վրա, երգում է մշակը պարզ երգեր, հետո աղջիկները հաց են բերում, մշակ և սերմնացան նստում են սև հողերի վրա, աղջիկները ժողովում են դաղձ, եզներն արածում են կանաչ արտոններում: Մայր է մտնում արևը, հողած մշակները և եզները տուն են վերադառնում, օջախներից բարձրանում է ծուխը և լսվում է շների ուրախ աղմուկը:

Նրա անիրական աշխարհում միայն այդ կար՝ գյուղեր՝ խաղաղության մեջ, ծառեր՝ երգերի համար, ջրեր՝ որ ոռոգում են արտերը և պարտեզները, շներ՝ որոնք հաշում են լուսնի վրա, մարեններ՝ հաց թխելու համար և գզարներ, որոնք ձմեռը նստեին օդաներում, գզեին բուրդ և մինչև լույս հեքիաթներ պատմեին:

Ամեն գիշեր այդ անանուն մարդը լինում էր այդ երկրում: Ահա գնում է ջրելու պարտեզը: Ձյուն է նստել, և ձյունի վրա նա տեսնում է գագանների հետքեր: Անձրև է իջել և տաք գոլորշի է բարձրանում ձիերի մեջքից, որոնք սեղմվել են իրար և ննջում են: Խշշում է անտառը. մինչև լույս նրա խորքում վառվում է հովիվների խարույկը:

Երբեմն նրանք, որոնք կես գիշերից ուշ անցել են այդ փողոցով, լսել են տխուր երգի և նվագի ձայն: Ոմանք ենթադրել են, որ այն կույր երաժիշտն է փշում իր սրինգը, ոմանք վերագրել են մենավոր սալապանին, որ ջրել է սալը դեպի գյուղական ճանապարհը և սալի հետ օրորալով երգել իր միամիտ երգը, ոմանց նույնիսկ թվացել է, որ այդ խուլ ձայնը գալիս է աստղերից,—սակայն ստույգ է, որ երգողը այն վտիտ մարդն էր, որ ուներ մաշված հնաձև վերարկու և նիհար մարմին:

Քիչպես բաց, ինչպես մորմոք ու կարոտ հնչում էր նրա խեղճության երգը և նա գոհ էր, որ իրեն լսում են լեռներից իշնող քամին, ջրերը, բարդինները, այն ձյունոտ գագաթը, որ սահմանն էր նրա անիրական աշխարհի: Այդ վտիտ մարդը իշնում էր փողոցի վրա և հիացած փողոցի խաղաղությամբ, ջրերի ձայնով ու ծառերի սոսափով, քայլում էր դանդաղ և չէր տեսնում անցնողներին: Նա հասնում էր մինչև այն երեք բարդին և ապա կորչում էր նեղ փողոցների լաբիրինթոսով, կարծես մանուկ էր գետնի տակ, ինչպես մի ոգի կամ մի սև բզեզ:

5

Այն բանակը, որ առավոտյան կանուխ աշխատանքի էր գնում և քեզոհում էր հեռավորությունից, — մի օր շրջվեց գեպի այս փողոցը: Ակամեց այն, ինչ անչնչելի կմնա մեր քաղաքի պատմության մեջ: Բաճերով և բրդեղենով գինված մի բազմություն գրոհի դիմեց: Փորեցին գետնին և արևի տակ շողաց այն հողը, որ երբեք արևի երես չէր տեսել: Շող լցվեց մայրիկի վրա, առաջացան խրամատներ և գուրբեր, խճաքերի կույտեր, որոնք վերջ տվին այս փողոցի սիրահարների հոգևոր ներքին: Փողոցը դարձավ հեռացող աշխատանքի կաթսա և նրանք, որոնց ուրախացնում էր այդ դժվար աշխատանքը, ապրում էին գործի հաղթողությամբ, պաշարում էին հաղթանակի համար: Քաղաքից դուրս արդեն հաստատ քայլերով, մետր առ մետր, քաղաքին և նրա փողոցներին էին մոտենում պողպատյա գծերը: Հողաթումբերը և խրամատները ուղեկոչներ էին, և սրբան քարձրանում էին նրանք, մինչև վեր, մինչև քաղաքի վերջը, այնքան լեռնանում էր ուրախությունը:

Մեկավ և այն օրը, երբ առաջին վագոնը սուրբաց այս փողոցով... Ենդություն էր և ազատության աղաղակներ: Կարծես պահապանաց էր որ քաղաքի բնակիչներին բերում էր փրկություն բազմադարյա օտարաբնությունից:

Փողոցն ուրիշ դարձավ: Թեքվեց պրովինցիալի գեղևած արևը: Բացվեց մի վիհ և այդ վիհը կլանեց այն միակը և անկրկնելին, որ հայտնի էր տարբեր Երևան քաղաքի Աստաֆյան փողոցը:

Մի գիշեր այն անանուն մարդը, որ վերջին սիրահարն էր այս փողոցի, դուրս եկավ նեղ փողոցների լաբիրինթից, որտեղ ամեն մի տան մեջ, ամեն մի ներքնահարկում խոսում էին այդ վիթխարի հաղթանակի մասին: Թուրս եկավ մարդը, նայեց իր երեք բարդիններին: Նրանք հանգուն էին և երբ սլացավ լույսերով ողողված վագոնը, նա բնազդաբար

սեղմվեց բարդիններին: Ապա արագ-արագ բարձրացավ վեր, դեպի այն բարձրությունը:

Այնտեղից նա տեսավ ուղիները, որ ձգվում էին փողոցի ամբողջ երկարությամբ: Նրանք գնում էին հեռու, խառնվում ուրիշ ուղիների, անցնում աշխարհից աշխարհ: Հետո նա հենվեց քարին, տեսավ դաշտը, տեսավ և այն ձյունոտ գագաթը: Նա նույնն էր, ինչպես ամեն գիշեր: Ապա կամեցավ կավե պատերով փակել բոլոր մուտքերը, որպեսզի դրսից ոչ մի հնչյուն չհասնի իր փողոցին: Եվ ճանապարհ ելավ դեպի այն անիրական աշխարհը...

Հանկարծ, ներքևում, կապտագույն ուղիների վրա նա տեսավ մի վիթխարի տուն, լույսերով ողողված, որ շարժվում էր ամենի թափով, գալիս էր աղմուկով և զանգերի զողանջով, գալիս էր, որ բարձրանա լեռ, խլի իրենից և այդ բարձրությունը: Նրան թվաց, թե ուղիների վրա լույս գալիս է մի անհղ դազաղ, որից փրկություն չկա, անհղ զողանջում են զանգերը, և այդ վտիտ մարդը տեսնում է դազաղի բաց կափարիչը:

Նրա սավերը անհետացավ:

Հետո պատահամբ գտան մի վերարկու, որ կոթնեղ էր քարին, մի զույգ մաշիկներ և մի հնաձև գլխարկ: Այդ ամենն այնպես էր, որ կարծես մեզը մարդ կա, գլխարկի տակ՝ գլուխ, վերարկուի մեջ՝ իրան, և կոշիկները մեջ՝ ոտներ: Բայց ոչինչ չկար: Կարծես մարդը շորերի միջև հրաշքով դուրս էր եկել և անհետացել: Այդպես իր հին շապկից դուրս է գալիս օձը:

Բայց ասում են, որ մի վտիտ մարդ, այլ տարազով, երեկոները, երբ հանդարտվում է քաղաքի աղմուկը, Արտվյան փողոցի վերջում ապաստում է արամվաջի վագոնին: Մարդը մտնում է ներս, նստում է, պատուհանից նայում է դուրս: Տրամվայը նրան տանում է քաղաքից դուրս և այդ մարդն անհանգստության նշաններ է ցույց տալիս, երբ երևում է այն Բարձր լեռան գագաթը: Նա խնդրում է արագացնել ընթացքը, ուրախությունից զողում է և համոզված է, որ ինքը բարձրանալու է այն լեռան գլուխը և տեսնելու է իր ցնորքի աշխարհը:

1902

Ես հարցնում եմ Ավագին.

— Մնո՞ւմ է այն վարագույրը...

— Մնում է:

— Իսկ մա՞յրը...

— Մայրը դեռ հավատում է:

Հետո բարձրանում է մի այլ վարագույր և երևում են արևի շողերով ողողված Արաքսի տափադակը, առափնյա դեղնած եղեգները, որոնք հազիվ օրորվում են գետի զովից:

Ավագի հետ հասնում ենք հնձած արտերի սահմանին և նստում միայնակ շինարու տակ: Ընկերս սրբում է քրտնած ճակատը և արևից այրված աչքերը դարձնում մուժ սաղարթի կողմը: Ճյուղերի վրա նստել են գեր սարյակներ և դաշտային գորշ ճնճողուկներ: Նրանք անհանգստանում են և թվում է, թե հարցնում են իրար, թե ի՞նչ մարդիկ ենք, հրացան չկա՞ մեր ձեռքին, կամ քար չե՞նք առնի: Ապա հանդարտվում են, որովհետև ծեր սարյակը հանդիմանում է նրանց անտեղի հուզմունքի համար: Այնուամենայնիվ թռչունները բարձրանում են վերևի ճյուղերի վրա: Նրանք կորչում են տերևների արանքում և չի դադարում թռչնալին անհանգիստ զրույցը:

Շոգից և հոգնությունից ծանրանում են իմ կոպերը և երբ փակում եմ աչքերս, լսում եմ հազարավոր գերանդիների խշշոց, նույնիսկ հասկերի վայր ընկնելը: Հետո սաստկանում է այդ խշշոցը, զով է լինում և լսում եմ բազմաթիվ նիզակների իրար զարկվելը: Աղմկում են եղեգները... Երևի գետի հունով լեռներից իջնում է սառը հոսանքը:

Ապա մեկնվում եմ Ավագի կողքին և աղմկող եղեգների արանքից նայում Արարատին: Երևում են լեռան մուգ-կապույտ ստվերները, վրան ձյունի նման սպիտակ ամպ: Երբ օրորվում է եղեգը, օրորվում է և լեռան կապույտ ստվերը, հազիվ նշմարելի դողում է գագաթի սպիտակ ձյունը, որ ցուրտ ցուլ է տալիս շիկացած օդում:

Ու լիաթոք շնչում եմ զովը, որ իջնում է լեռան բարձր գագաթից, ամպի նման սպիտակ ձյուններից և այն կապույտ, ինձ համար հավիտյան անհասանելի ամպերից...

Գետնի կավն արևից ճաքել է: Խոր ճեղքերից բարձրանում է խանձված հողի բույր: Մի սարդ հյղանել է ոստայնը ճեղքի վրա. ծղնտուի ծայրը

մտեցնում եմ ոստայնին և հողի մթին խորքից դուրս է վազում քաղցած գազանը՝ բրդոտ մի սարդ և ամենհի արագությամբ պտույտ է անում սակեգույն թելերի վրա, անհամբեր փնտրելով որսը:

Մղնոտների արանքում մի սև բզեզ գլորում է աղբի կլոր գունդը: Ահա նա, աղբակեր սկարաբեյը, այն բզեզը, որին եգիպտացիք անվանում էին սրբազան, որովհետև հավատում էին, թե նա է գլորում երկրագունդը, ինչպես այս կլոր աղբը: Մի բուսիկ նա սևին է տալիս ծղնտուների մեջ, ապա աղբագունդի հետ գլորվում հողի ճեղքը:

Ես մատներով տրորում եմ կավը, ամենահին նյութը, որ կա այս տափարակում: Քանի՞ ոտքեր, քանի՞ սմբակներ և անիվներ անցել են այս կավի վրայով, ինչքա՞ն է ծեծել ձյունը, և՛ հողմը, և՛ արևը, և՛ անձրևը:

Անմոռնչ, հավիտյան համր կավ...

Ահա հեռվում երևում են այգիների գորշ պարիսպները և տների գատերը՝ կառուցված նույն հին կավից: Արևը խանձել է, քամին և անձրևը պոկել են պարիսպների կատարները, մի տեղ փոս արել, մի ուրիշ տեղ թողել սրածայր:

Նստել են կավի հին պատերն այս ընդարձակ դաշտում, ինչպես չոքած ուղտեր: Նրանցից մեկը ցցել է վիզը, մյուսի միայն սապատն է երևում, երրորդը չոքել է առաջի ոտքերի վրա, կարծես հիմա պիտի իջցնի և հետին ոտքերը:

Գնա մինչև հին Բաբելոն, էլամների աշխարհը, մինչև Աղի լիճը և Միջագետքի խանձված դաշտերը, ամեն տեղ կտեսնես այս բիրևական կավը, մահարձանի պես մի լինար և սրբազան բզեզներ:

Իսկ այս դաշտում ինչքան արագ են մահանում պարիսպները, երկաթե անիվները տրորում են բրդոտ սարդերին և արգավանդ կավը ուռճանում է նոր սերմերով:

— Վե՛ր կաց, Ավագ, զովն ընկավ...

* *

*

Նրան անվանում էին Սեթ և որովհետև հայրը վաղուց էր մեռել, կոչում էին մոր՝ Երանուհու անունով՝ Երանի տղա Սեթ և կամ՝ Երանի Սեթ:

Կարճ էր հասակը, թե բարձր, թավ էր ձայնը, թե բարակ, և գիտե՞ր նա սրինգ նվագել, սիրե՞լ էր նա մի աղջկա և հենց այդ շինարու տակ մեղ նման հանգստացե՞լ էր նա, երբ վերադառնում էր Արաքսի ափերի

արարելով, աչք բոլորն քնն շավանդից իմ ընկեր Ավագը, կամ գուցե
և արամեց, սակառն իմ հիշողութեան մեջ ժամանակը խոնաքրեց այդ
պատմութեան պաշտօնագրուները: Եվ հիմա, երբ գրում եմ նրա մասին,
տրին չեմ տեսել, ես իս քնեհող պատմածից հիշում եմ այն, որ Երանի
Անթը գյուղի ամենալավ սորսաւորանն էր:

Այս կողմերում Արաքսը զարնաքը էլնում է իր ափերից, վարար
ջրերը սիզմ են փռում շայն տափարակի վրա և առափնյա շղեզնուտները
դառնում են կանաչ կողմեր: Սերմնացանը ցանում է սերմը, երբ ետ են
գնում ջրերը և գետնին նստում է թաց տիղմը: Նա հանում է ոտքերը,
մինչև ծնկները վեր բաշտում և փաթոյա կտուր պարանոցից կախ գնում
է օտոր և հավասար քայլերով: Գնում է և աջ ձեռքով քիպրուռն վերցնում
ծանր հատիկները, որ մի վայրկյան շողում են արևի տակ, ինչպես ճրճ-
ղուկների երամը, և ծանրութեամբ ընկնում հողի մեջ:

Ահա այգիպիտի սերմնացանն էր Անթը, հողի մշակ: Ուներ մի մայր,
վի հին առակ, երկու բարձի, ողի կատարին ամեն տարի ծանոթ արա-
քսը նորագում էր բույնը և պատավ Երանի համար բերում զարնան
խնդութուն, ինչպես մյուս արագիլները գյուղի մնացած տների համար:

Երբ արագիլը սղմուտ հողերում աչքս գարտ շէր բռնում, ուրեմն
ես էին գնացել Արաքսի ջրերը և ժամանակն էր, որ Անթը կախեր կոտը,
սեզմ ցաններ, փակ մայրը էլներ փորկու բակի մարգելը, որոնց կնք
փչացնում էին հարևանի հավերը, իսկ սոխի մարգում պատկում էր իր
Սրանի կատուն:

...Այս ամենապարզ պատմութունն է, ամենից հասկանալին:
Գյուղը դաշնակների թիկունքում, գյուղում գազանի պատրաստութուն-
ներ սպաստմութեան, հրո հարավից արշավեր կարմիր հեծելազորը:
Ահի գեղերներ, բռնութուն, վախ, կոշտատու Գիշերներ, երբ դեպի գի-
թերն էին թշում սովահար մի բազմութուն, երբ գիրքերից ետ էին փախ-
չում նրանք, որոնք ուզում էին քրտինք թափել հողի վրա, արտերը ջրի
և ունենալ խաղաղութուն իրենց խեղճ խրճիթներում:

Երբ գյուղում հարավից լսեցին թնդանոթի առաջին որոտը, և նա-
հանջող-թշամին ետ դարձրեց ձիերի զլուխը, թշնամու թիկունքում
պայթեց ապստամբութունը, որպես առձազանք այն առաջին որոտի,
որ խրճիթներին ալեհեց ազատութուն դաշնակցական գերութունից:

Արև էր, էլի արագիլներ կային և յուղոտ փայլով արևի տակ շո-
ղում էր արգավանգ տիղմը: Հանկարծ գնդակների տարալի տեղաց եղե-
նուտների կողմը, որտեղ սպիտակ ձիավորների դեմ ամբացել էին մի
խումբ ապստամբ գյուղացիներ:

Թեթը շոքեց այն շինարու հետեր և որոտաց նրա հրացանը: Արշա-
փո ձիավորների վախեցած երամը շաղ եկավ, ապա նորից գունդ կող-
մեցին և թաց հողերի վրայով ձիերը բշեցին դեպի միայնակ ծառը, որ
եւ սողերը նետել էր ամայի դաշտում:

Երեկոյան կարմիր հեծելազորը գյուղը մտավ:
Միայն մյուս առավոտ, երբ եկան և ծանր թնդանոթները, դաշտի
բարակ արահետով, եղեգնյա պատգարակի վրա, ընկերները տուն բերին
սպանված սերմնացանի մարմինը: Նրա սրունքները մերկ էին, մի կողքի
վրա շորացած տիղմ էր և խառնված արյուն: Երևում էր միայն սառած
աչքը, որ նայում էր անշարժ, ինչպես գորշ ամպը անհունի խորքից...

Սա արնաքամ սողացել էր թաց հողերի վրայով դեպի եղեգնները,
դեպի ջուրը, կոշտ մատներով շանգոն էր գետինը, ցիխտոն էր մատ-
ները և անզգայության մեջ ցիխոտ մատներով սեղմել էր թրատված ուտը:
Հետո երեսներվայր թաղվել էր սառը հողում՝ որպես ոսկեհատ սերմ:

Սա նայում էի մի ցածր գանակի, որի հետեր ո՛չ ձայն կար, ո՛չ
շարժում: Արևամուտին այնքան բարձր էին երևում բակի երկու բարդի-
ները:

— Երան հորաբույրը ոչ տղայի դիակը տեսավ, ոչ թաղումը: Երբ
նրան հայտնում են, որ ահա բերում են, նա ճշով դուրս է վազում, բայց
մինչև շեմքը չի հասնում... Զորս օր մնում է ուշաթափ: Անում էին, որ
կե՛նտի...

Ընոնային գյուղերում այս շինքը կմանակներ հին մարագի կտորին
կե՛նտի կլոր անցք, և տափակ մղաններով բարձր կալից հարդի տաք
շեղներն ալիք-ալիք կմղանեին ներս: Հետո անցքը կփակեին շոր ցափնով
և մի անտիրական շուն կմեռեր հարդի վրա. մարտի վերջին շունը
կցնկներ վեց ապօրինի լակոտ, որ հղիացել էր ցուրտ աշնանը, ցանկա-
պատի տակ:

Այդպես կլինեի լեռնային գյուղերում:
Այս շինքը եղել է հարթավայրի գյուղի եկեղեցին: Համեմ են վարա-
բույրը, սրբերի պատկերները: Դատարիք տարել է մկրտութեան բարձ-
րավազանը և այժմ կարմրած խոփերը նետում է աղազանի սղաոտը ջրի
մեջ: Մնացել են բարձ երեք աստիճանները, որով իջնում են գետնա-
փո աղտերը, երկու սղանյա աշտանակները, որոնցից կախում են
նախի լամպեր. մնացել է եղեգնյա կտորը և շահերի նեղան կախված
եղեգները, որ ճոճվում են, երբ բացվում է դուռը: Անտամբի եղեգնյա

կտուրի տակ ապրում են հին աղավնիները և երբ դուրսը բուք է լինում, նրանք ծվարում են մխից մզած նիշերում, այնտեղ, ուր պահում էին արծաթյա անոթները:

Նոր նկարներ են զարդարում սպիտակ պատերը և հին կամարների տակ հնչում են նոր խոսքեր: Այդ գետնահարկ շենքում աղմկում են հրիտասարդ սերնդի զվարթաձայն զրույցները:

Դռան գլխին, քարի վրա, առաջին տարին քանդակեցին մի մուրճ և մի մանգաղ, ներքևը՝ անպաճույճ գրերով գրեցին «կեցցե»: Այդ անզարդ քանդակից այժմ ցուլում է առաջին հավատացողների սրբազան պարզութունը, այն անկրկնելի հմայքը, որ ունի սկզբնական օրերի անվարժ ոճը, երբ նոր մարդը հնի թանձր խավարից թռչում է դեպի նոր արշալույս և առաջին հետքերն է դրոշմում քարերի վրա, թղթերի վրա և պայծառ խնդությամբ սկսում է իր նոր էջը:

Առաջին դրոշները դառնում են սրբութուն, հերոսներն անմահանում են և գալիս են նորոգ գուսաններ՝ նրանց և այն հերոսական օրերի մեծարման երգերով:

Եվ ահա Նոյեմբերյան տոներին եղեգնյա կտուրով այդ ակումբում եղավ մի սովորական դեպք:

Վառել էին բոլոր ճրագները և կամարների տակ դեռ մութ էր: Նույնիսկ թվում էր, թե ճրագների լույսից ավելի էր թանձրանում խավարը: Լուսավոր էր բեմը և բեմի լույսը հազիվ էր հասնում առաջին շարքերին, որտեղ փայտյա ցածր նստարանների վրա իրար էին սեղմվել կանուխ եկած հանդիսականները:

Դռնակն անդադար բացվում էր, նոյեմբերյան քամին ներս էր փչում, օրորվում էին եղեգները և ճրագների լույսը դողում էր: Մարդիկ, որոնք ներս էին մտնում այդ դռնակով, իջնում էին քարե երեք աստիճաններով, նրանք կորչում էին մութի մեջ, երևում էին ծխախոտի կրակներ, ինչպես գիշերային լուսավոր բզեզներ: Հետո առաջանում էին դեպի լույսը:

Աղջիկները զարդարում էին բեմը: Ի՞նչ կարող է լինել դաշտերում, նոյեմբերյան օրերին... Դեղնավուն փշատերև թուփեր, դեռ կանաչ մասրենու ճյուղեր և դաշտային արցանգեզներ, որոնք ծաղկում են ցրտերի հետ և միայնակ վայելում աշնան արևը: Աղջիկները դեղնավուն փշատերև թփերից, մասրենու կանաչ ճյուղերից և աշնան դաշտի ծաղիկներից հյուսել էին մանյակներ ու պսակներ, բամբակի բացված կընգուղները հագցրել էին պսակներին և այդ ամենը նկարների կարմիր երիզների հետ հյուսած՝ կախել պատերից:

Անկյունում դրոշներն էին, որոնք հսկումի էին կանգնել մի պարզ և արդեն կարմիրը մաշված դրոշակի, որի վրա նույն անպաճույճ մուրճն էր ու մանգաղը, ինչպես քանդակել էին դռան ճակատին: Այդ ապստամբության առաջին դրոշակն էր, որ պարզեց գյուղը, երբ հարավից որոտաց ազատության առաջին թնդանոթը:

Դուռը բաց էին անում, ներս էր մտնում նոյեմբերյան քամին, օրորվում էին եղեգները, նվազում և ապա բռնկվում էր ճրագների լույսը և ծփում էին դրոշակները: Ինչպես հին գինվոր, որ խանձվել է ահեղ մարտերում, ապստամբության խունացած դրոշակը կարծես մեղմ շշուռով ավանդում էր ոսկեգօծ նորերին այն պայծառ օրերի դաժան պարզութունը, երբ իրեն բարձրացրին հողի մշակները, որպես փրկության փարոս և ապստամբության նշան, ինքը փողփողաց խրճիթների վրա, լսեց գնդակների մետաղաձայն աղմուկը, տեսավ առաջին զոհերի արյունոտ մարմինները և, երբ պղնձե փողերը հնչեցին թաղման նվաղը, խոնարհվեց նրանց գերեզմանների վրա:

Բեմի մարդկանց հետաքրքրության առարկան այն նոր վարագույրն էր, որ քաղաքից նվեր էին բերել երկու երիտասարդ բանվոր: Նրանք վերևից ամրացրել էին վարագույրը, մնում էր, որ ձգեին պարանը և վարագույրը ծալվե՞ծալ իջնե՞ր: Սակայն այդ հանդիսավոր րոպեն թողել էին վերջը, երբ կհավաքվեին բոլորը և իրենք՝ քաղաքից եկած երիտասարդները խոսք կառնեին ողջույնի և կասեին իրենց այդ, ինչպես և մյուս նվերների մասին:

Դռնակը նորից բացվեց, մեկը լուցկի վառեց քարի սուտիճանները լուսավորելու և մի ամբողջ խումբ իրար հետևից ներս մտան: Կսվում էր ծանր կոշիկների դոփշուն. ապա նրանք դուրս եկան մթնից և հանդիսականները նրանց մեջ տեսան մի անծանոթ մարդու, որ հասարակ շինել էր հագել և ձմեռային գլխարկ: Նա խորխափելով էր գալիս, որովհետև ներսի տաքից գոլորշի էր նստել ակնոցի հաստ ապակիներին:

Մյուսների հետ այդ մարդը բարձրացավ բեմը և նրանք, որոնք զրուցում էին կամարների տակ, առաջ եկան ու խիտ նստեցին, այնպես որ վերջի շարքերը հազիվ էին նշմարվում: Նա սրբեց ակնոցը և հետաքրքրությամբ նայեց շուրջը: Աղավնիները լուսավոր բեմից և այդքան մարդկանց աղմուկից անհանգիստ թպրտացին կտուրի տակ, մի քանիսը ձախրեցին լույսերի և մարդկանց վրա, ապա կորան մութի մեջ:

Մարդը ժպտա՞ց աղավնիների թպրտոցի վրա, թե՞ չե՞րմութուն զգաց և հստակ ձայնով սկսեց իր պարզ զրույցը:

Լսե՛լ եք դուք այն արթուն խոսքը, որ հոսում է, ինչպես իմաստուն

գրույցը. երբ առաջին վայրկյանից խոսողն իրեն է բեռում բոլորի ուշագրությունը, երբ չկա ինքը՝ խոսողը, իսկ նրա ճշմարիտ մտքերը մտրճի նման հարվածում են և բախում խոր դռներ, երբ խոսքի մեկ կա անխորտակելի ճշմարտություն, որ հարթում է իր ճանապարհը ուրիշների սրտում և ուղեղների մեջ, երբեմն փայլում բարձր մտքերով և երբեմն զարմացնում իրերի ու մարդկանց ճշգրիտ ճանաչողությամբ:

Նա խոսում էր այնպես, կարծես պատմում էր միայն մեկին, այն սրտագին մտերմությամբ, որ ունի պատմողը լսողի հանդեպ: Նա պատմում էր այն շարքաշ օրերի մասին, որ անդարձ անցել են, խաբեբայության, սուտի, շահագործման, հոգևոր այլասերման, ծեծի և բռնությունների այն ժամանակների, երբ սով կար, և՛ սուր, և՛ բանա, և՛ կեղեքում: Երբ պատմում էր այդ ժամանակներից, շատերը վերհիշում էին պատկերներ, որոնք անջնջելի դրոշմ էին դրել նրանց հիշողության մեջ: Ով քաղց էր հիշում, ով որդուն՝ որ անվերադարձ գնաց պատերազմ, ով հիշում էր իր դառն ապրուստը, երբ բախում են ունևոր դուռը և ում մեջքի վրա խարազանի հետքերը ցավում էին, որպես հին վերք:

Հետո նա դարձավ ապստամբության օրերին, իբրև միակ ելք, իբրև հոյակապ թռիչք դեպի ազատությունը, որպես միակ ճանապարհ, որ մարդուն հաննց լուսավոր ափը: Նա հիշատակեց ստեղծագործ աշխատանքը, երբ անապատները հագնում են ջրից և ուրախանում է մարտի իր ոռոգած դաշտերով, երբ ծուխ է բարձրանում գործարանների ծխնալույզներից և հերոսը դժվար աշխատանքով հալում ու կոփում է իր կամքը որպես ամրակուռ պողպատ:

Նա անսպասելի վերջացրեց... Բոլորովին հանգիստ, առանց ձայնը բարձրացնելու: Մի վայրկյան լուռ մնացին, հետո բարձրացավ ծափերի աղմուկը: Կարծես հազար-հազար աղավնիներ թպրտացին ու թափով ճախրեցին:

Հնչեց երգը, եղավ նվագ, ապա նոր ողջույններ, դարձյալ զվարթ երգ, դուրս եկավ այն երիտասարդ բանվորը և խոսեց հախուռն ավլունով: Նա թվեց նվերները և այդ վայրկյանին ժանրությունը իջավ նոր վարագույրը, որ բերել էին նրանք գյուղական ակումբի համար:

Զարմանքի ալիքը գնաց մի՞նչ և վերջին շարքերը:

Վարագույրի վրա ամբողջ հասակով նկարված էր մի վիթխարի սերմնացան, փայտե կտոր պարանոցից կախ, մի՞նչ սրունքները բաց օտքերով: Լույսի տակ շողում էին այն ոսկեդուն հատիկները, որ ալ ձեռքով նա շող էր տալիս արգավանդ ցելերի վրա:

— Երանի Անթի... է...

— Իսկը Սեթը...

— Աչքերը, աչքերը...

— Էս մեր հողերն են... Ա՛յ էն դամիշները, էն մեր լեռը...

Գիտե՞ր այդ անհայտ նկարիչը Երանի Սեթին և այս գյուղը, նրանց հողերը,— դժվար է ասել: Գուցե նրա համարձակ երևակայությունը ազատ ճախրել և երկնել էր այդ պատկերը, որպես ամենից հարմարը գյուղական բեմի համար:

Առաջին տպավորությունը մնաց անջնջելի:

Թեթև ծփում էր վարագույրը, սերմնացանը ծալվում էր և ներքևից այնպես էր թվում, կարծես քայլում է սերմնացանը, և գետի զովից օրորվում է եղեգնուտը: Իսկ խորքում՝ կապույտ մշուշի մեջ հաղիվ նշմարելի երևում էր զույգ Արարատը, ինչպես նոյեմբերյան պարզ գիշերների երևում է գյուղի կտուրներից:

Երկու կին, որոնց ազգական էր պառավ Երանը և նրա նահատակ որդին, ջերմ հավատով ընդունեցին ամբողջ կարծիքը, որ իրոք վարագույրի վրա Երանի Սեթն է: Նրանցից մեկը վեր կացավ և փոքրիկ ձեռքը մտեցրեց սերմնացանի բոբիկ ոտքերին: Կարծես իր ձեռքի ջերմությունն ուզում էր հաղորդել անկենդան պատկերին, իբրև ջինջ սիրո նշան: Մյուսը և մի ուրիշ կին մեղմ հառաչեցին ու լաց եղան մեռած սերմնացանի համար:

Այդ գիշեր արցունքը սրբագործեց մի ոսկի առասպել:

* * *

Քանի Նոյեմբեր անցավ...

Ու դեռ մնում է այն հողաշեն ակումբը, եղեգնյա կտուրով, և ծփում է վարագույրը, և բոց աչքերով մի սերմնացան սև հողերի վրա առատությամբ շող է տալիս ոսկի հատիկներ:

Գալիս է արդեն խուլ մի պառավ, եղեգնյա ավելը ձեռքին: Սրբում է հատակը, զայրանում է աղավնիների վրա, երբ նրանք նստում են պղնձյա աշտարակների վրա, որ դրված են վարագույրի երկու կողմը: Նա ավլում է ակումբի բակը, ապա նորից ներս է մտնում և մաքուր ձեռքով սրբում վարագույրի փոշին:

Երբ ոչ ոք չի լինում ներսը, պառավ Երանը հանդարտ գրուցում է որդու պատկերի հետ:

Հետո մայրը համբուրում է որդու անկենդան ոտքերը:

* * *

Փողոցի անկյունում ինձ հանդիպում է իմ ընկեր Ավագը: Ես հարց-
նում եմ նրան:

— Մնո՞ւմ է այն վարագույրը...

— Մնում է:

— Իսկ մա՞յրը...

— Մայրը դեռ հավատում է...

— Լավ է, որ ոչ ոք չի փշրել այդ առասպելը:

Հետո Ավագն ինձ պատմում է նորութուններ գյուղից և գյուղի
մարդկանցից:

Փողոցով անցնում են մարդկանց զորասյուներ, թնդում է նվագա-
խումբը և ես լսում եմ պղնձե փողերի հաղթական երգը:

Հետո իմ աչքի առաջ հառնում է մի հաղթանդամ սերմնացան, որ
Մեր սե ցելերի վրա ցանում է ոսկեհատ սերմեր:

1933

ԱՆՁՐԵՎԸ

ՉՑՈՒՄԲԱԹԻ ՉՈՐԸ

Գյուղը երեք թաղ ունի՝ Հյուսիսային ձոր, Միջին մահլա և Գյունեյ
թաղ: Երեք թաղն էլ ձորերի մեջ են, տները՝ գետնափոր, փողոցները՝
քարայծի ճանապարհ: Հնուց բերդ է եղել Հյուսիսային ձորում, ապահով
թաքստոցներ, որոնց հետքերն այժմ էլ մնում են, որպես նեղիկ անց-
քեր սեպածե ժայռերի լանջին:

Սրածայր ժայռեր են կողք կողքի շարված, փոքր ու մեծ, մեկը
ծուռ, կողքին թեքված, փուլ եկող դեզի նման, մյուսն ուղղաձիգ, որպես
բարակ բարդի: Չյունն ու անձրևը դարերի ընթացքում քերծել են ժայ-
ռերի կողերը, լվացել և դարձրել սղորկ, հազար ու մի ձև տվել, կերտել
ու քանդակել տարբեր պատկերներ: Թվում է թե մեկը հսկա թռչուն է՝
թառած քարի գլխին, մյուսը՝ գորշավուն գորտ, երրորդը՝ կնոջ կիսան-
դրի:

Մի քիչ ներքև, տակ ժայռերի տակ Հյուսիսային է, բլրակի վրա՝
Միջին մահլան, արևկող երեսին՝ Գյունեյ թաղը: Մուժն ընկնելուց ինչ-
քան մոայլ են թվում վերի ժայռերը, ինչպես հսկումի կանգնած առաս-
պելական հրեշներ: Հին քարանձավներից, ուր առաջ մարդն է ապրել,
մթնով ելնում է գայլը, դունչը գյուղի կողմը դարձնում և երկա՛ր ոռնում:

Անհիշելի ժամանակներից մարդիկ ապրում են Հյուսիսային ձորում:
Նույն քարանձավում այժմ էլ ապրում է մի սերունդ, որի հին պապերն
այդ քարանձավում իրենց մերկութունը ծածկում էին գազանի մորթով,
մարդիկ, որոնց բրածո բազուկների հաստ ոսկորները այժմ երանու-
թյան ու նախանձի ժպիտ են հարուցում մանրացած սերնդի աչքերում:

Հին անտառից ոչինչ չի մնացել: ավանդութիւննից բացի: Այնտեղ, ուր այժմ մի զուգ լլար եզ ծանր կամն է քաշում, կամի վրա նստած ծերունին շոգ օրին միտն է բերում պապի պատմածը կալատեղի և այն օրերի մասին, երբ Գլունեյի լանջերին խիտ անտառ էր, ձորում շամբուտներ, որտեղ վարագ էին որսում մելիքները:

Այժմ լերկ են լանջերը, արևը խանձել է ժայռերի մամուռը, անտառի հետ անհետացել են ծառերի ստվերում բնող խոտերը, կուրացել են աղբյուրները, որոնց երակներն անտառի խոնավութիւնն էին ծծում և շուրջ ցայտում քարի ճեղքերից:

Հյուսիսային ձորում ոչ կոխ է եղել և ոչ կոտորած: Տարիների հետ պառավել է գյուղը, ուժասպառ եղել տարիքն առած ծերունու պես: Դրա համար էլ այնքան շատ են ավերակները, դուռը հողով ծածկած գոմեր, որոնց մտուրում քանի տասնյակ տարի ոչ մի հորթ դարման չի կրծել:

Ահա երբեմնի փողոցը... Ամեն գարնան վերից իջնող հեղեղը մի քիչ խորացրել է հունը, տարիների ընթացքում դարձրել: խորտորատ: Կամարակապ աղբյուրի մի պատը փլվել է, քարն խողովակից իզուր է ջուր ձլում, որովհետև ոչ մի մարդ չի կուսում խողովակից ջուր խնկելու: Հեղեղը փորել է տան հիմքերը, կրապատը կախել է խորխորատի վրա: Մի տարի, երկու-երեք ձյունաշատ ձմեռ, գարնան արագ հալոցք վարար հեղեղի մի զարկ, և կիլիխ խարխուլ պատը:

Աղբյուրի կողքին հին ձիթհանքն է: Մելիքներն են շինել և ստիպի որ շոջակա գյուղերից կտավառ հավաքեն ձիթ: քաշելու: Զիթհանքի թանձր պատերն են մնացել և կոր քարը, որ դարձրել են գոմեշները գիշեր-ցերեկ պտույտ տալի, քարի տակ տրորել բոժած կտավատը:

Հիմա էլ ժայռի գլխին մնում են մելիք: Բախտամի ամառաթի բարձր պատերը, նրա բանուր, մելիքի ախոռները, մուտքը սրբատաշ քարերից և գեղեցիկ քանդակներով: Կա մատուռի պես մի շենք, ծաղկա-նկար քանդակներով, հատակը սալքար, դիմացի պատիճ՝ ժանդոտ երկաթի օղ: Մատուռի պես այդ շենքում մելիք: Բախտամի: ձին կերել է ուսիկի մատներով մեկ-մեկ ընտրած ոսկեհատ քարի և Իրանից քար վանով բերած քիշմիշ:

Հյուսիսային ձորով գետ է անցնում, որի մյուս ափին՝ այգեստանների մեջ, գունավոր կտուրներով փոքրիկ քաղաքի տներն են: Հյուսիսային ձորում, Միջին մահլալում և Գլունեյ: Թաղում ոչ կոխ է եղել և ոչ է կոտորած: Այն ժամանակ, երբ քաղաքի տեղը շամբուտ էր և անտառ ձորի բոլոր տները, ձուլ էր բարձրանում: Եվ երբ առաջին մոկիտը

հրամայեց տափարակի վրա կառուցել սպիտակ քարե զորանոցը, Հյուսիսային ձորի աստղը թերթից:

Պետի կամրջով գյուղից հեռացավ նա, ուղ ոսկի ուներ, և երբ քարծրացան մելիքների ջրաղացի գլուխը, մի անգամ էլ նայեցին հսկումի կանգնած ժայռերին, քուր վայր դրին սպիտակ զորանոցի մոտ և տափարակի վրա փորեցին նոր տների հիմքը:

Այսպես առաջացան քաղաքի տները: Եվ ուղտերը, որոնք Քիրմանի ջալ քարձած, ծանր հակերի տակ տնքալով շոքում էին Հյուսիսային ձորի հրապարակում՝ փոքրիկ կրպակների առաջ, իրենց գլուխները սպիտակ քաղաքի կողմը դարձրին և շամբուտները կոխելով մտան քաղաքի սառսին փողոցը:

Այդ օրից սկսվեց և Հյուսիսային ձորի արնաքամ լինելը, որովհետև քաղաքը նստում էր կոկորդին, տները փոխում էին ամենալավ հողերի վրա, աղբյուրի աղուցից ամենից առաջ ջուր էր խմում քաղաքը:

Հյուսիսային ձորի հին կրպակները հիմա էլ մնում են, կիսով չափ խանգարված, պատերը խարխուլ, կտուրների վրա կաննիփի փարթամ թփեր: Նեղիկ փողոցներում, ուր աչ ու ձախ հին խանութների հետքերն են, մելիքների շուկան, հիմա անցուղարձը քիչ է: Լծից բեզարած մի եզ գործից դառնալիս գուցե վիզը քսի կրպակի սուր անկյունաքարին, վիզը քորի այնտեղ, ուր գունավոր շալի հոտը բուրում էր, որպես Իրանի սարգա:

Ապիտակ զորանոցն այն ապահով վայրն էր, որի մելիքների դրաղացի ճակատով գնում էին կրպակների տները, քաղաքում մեծ խանութներ քաշում, խանութների փեղկերը ներկում, ոսկետառ ցուցանակներ կախում և ոսկիները հողե կճուճների մեջ դարսելու փոխարեն պան տալիս քանակին:

Վաղուց արդեն համարձակ մի սովորաբար բացել էր մեծ քաղաքները տանող ճանապարհը և առաջին ապրանքի հետ ուրախ լուր էր տրվել մտրազովից ու Յիսրայիլից: Վերջին մելիքները հազան Մոսկվայից տրած գորգամներ և նրանց ջրակալած աչքերը տեսան, թե ինչպես կամարակապ ախոռում ձմեռան գիշերին վրնչում է ձին, գարու մեջ փրնտրում ձեռքը: Բախտամի քիշմիշը:

Բերդի քարերը մեկ-մեկ ընկան, երբ տափարակի վրա քարձրացան սպիտակ զորանոցի պատերը: Մելիքների բանտում սարդը ուտայն հյուսեց, ժանգը գեղին սերմեր մաղից բանալի երկաթ բանալիների վրա: Մելիք Բախտամի վերջին ժառանգը մեռավ հեռու մի քաղաքում, որպես ստանական գեղի հրամանատար:

Հյուսիսային ձորի ժայռերը տեսան, թե ինչպես գունավոր գորգերը հանեցին քարանձավներից, շալակով տարան և փոխարենը քաղաքից ստացան նավթ, շաքար: Գորգերն ուրիշ քաղաքներ ուղարկեցին: Ուշադրությունը քաղցան, ձորում ապրողներին մնաց քաղաքում ձեռք բերել բոլորն էլ, նե՛րկն էլ, և գարնանը պատրաստ գորգեր տալ բրդի տերերին:

Թվաց, թե այդ օրից տորթի կրկաթներն այլ կերպ զնգացին և երբ ձմռան գիշերով սպիտակահեր մի կին ձորի աղջիկներին հին նախշերն էր սովորեցնում,— ձմռան գիշերին ճրագի պատրույգի հետ մխում էր պառավի սիրտը, երբ հիշում էր շքնաղ գորգերը, սր տարան:

Քաղաքը մեծացավ: Հյուսիսային ձորում, Միջին մահալում և Գյունեյ թաղում մնացին հացթուխներ, գզրար կանայք, լվացարարներ, գորգագործ պառավներ, անտառից շալակով ուրիշի համար ցախ բերող մարդիկ, սրա նրա դռանը օրհացի աշխատող աղջիկներ և մանուկներ, որոնց ամենամեծ հրճվանքը քաղաքում օրնիբուն լվացք անող մոր վերադարձն էր, գոգնոցի ծալքում պահած համեղ պատառը:

Այսպես հավից ձորի գյուղի աստղը:

* *
*

Մեկիքների շաղացի գլխից մեկ-մեկ կարելի է համրել երեք թաղի տները, ավերակները, տեսնել, թե ինչպես դանդաղ քայլերով մի էջ բարձրանում է կածանով, հետևից տերը բզում է, կանչում և կածանի դժվար տեղը հրում էշին, օգնում բարձրանալու:

Գետի ափին կանայք ցորեն էին լվանում աշնան արևոտ մի օր, երբ երեք թաղն էլ քարափից դիտելուց հետո, իջանք ձորը:

Խաղաղություն կար ավերակներում, կրպակներում, ձիթհանքում, ջուրն իզուր ծլացող աղբյուրում: Ամեն տարի մի քար է ընկել պատից, մահը թեթև է թվացել, բողոք չի եղել, ոչ մի թաղ չի տեսել հրդեհ, գերանները փտել են առանց մխալու, քարերը չեն շիկնել կրակից և նստել է մամուռը: Մի կրպակի դուռ գոց էր այնպես, ասես սովորաբար տերը ճաշի էր գնացել կամ գերեզմանօրհնեցի:

Ման եկանք գյուղում, տեսանք շեն տները՝ հատ ու կենտ, պառավ շների դեղնած ատամների պես: Հարևանի ավերակ տունը դարձրել են գոմ ու մարագ: Այնքան շատ են պարապ, կիսախարխուլ տները, դարբասը գոց, ծանր կողպեքները վրան: Թվում է թե հանդ են գնացել

ներսից ձայն չի լսվում, տան առաջ՝ դարբասի քարերի ճեղքում բուսել է խոտը:

Մի քանի կտուրների վրա դդում կար շարած, տեղ-տեղ արևի տակ փռել էին գունավոր լաթեր: Մի հին ու մեծ տան միակ պատուհանի քարին, արևի տակ պոմիգոր էին շարել: Եվ միակ ապացույցը, որ կարող էր համոզել, թե այդ տանն ապրողներ կան, պատուհանի կիսակարմիր պոմիգորն էր:

Թեև քաղաքը հեռու չէր, եկած ճանապարհը մեզ ծանոթ, բայց և այնպես ուրիշ աշխարհ թվաց Հյուսիսային ձորի այդ անկյունը, որի բնիկները կարծես ուրիշ ցեղի մարդիկ էին: Եվ միակ հարցը, որ դառնում էր մեր գլխի մեջ, մի «ինչու» է այն մասին, թե ինչպես են մարդիկ ապրում այս քարերի տակ, ինչու՞ չեն հեռացել մի ուրիշ, հարմար տեղ: Հանկարծ եթե ժայռերից մեկն ընկնի կամ մի քար գլորվի վերևից:

Բակում խաղացող երեխաները մեզ տեսան, զարմացած խաղը թողին: Երբ մեզնից մեկը ջուր ուզեց, ջուր բերող երեխայի անունը հարցրեց, թվաց թե նա ջուր չէր ուզում, այլ ստուգում էր, թե արդյոք այդ երեխան մեզ նմա՞ն է խոսում:

— Որ տան կտուրին դդում եք տեսնում, ուրեմն էնտեղ ապրում են,— ասաց բնիկներից մեկը, որ կամրջի գլխին միացել էր մեզ:— Երեկոյան էլ կրակներով կիմանաք: Քանի ճրագ են վառում, էնքան էլ տուն կա: Մնացածը արջաբներ են:

Երեկոն հաստատեց այդ: Մութի հետ հատ ու կենտ ճրագներ վառվեցին: Մութը շասեց մեզ արջաբներում կենողների մասին, բայց մանրիկ լույսերի թարթոցը կամացուկ պատմում էր, որ Հյուսիսային ձորում քսան ճրագ կա, Միջին մահալի գետափի մասն է ողջ, Գյունեյ թաղի ծայրը: Մնացածն ավերակ տներ են ու մութի մեջ խառնվում են ժառերին և չի լինում որոշել՝ ո՞րն է ժայռ և որը երբեմնի բնակավայր:

Մեկ-մեկ հավաքվում էին հեռու թաղերից, ներս մտնում ընդարձակ սրահը, տեղ բռնում փայտե նստարանների վրա: Երբ զգիրը մի անգամ էլ պտույտ արեց փողոցներում բարձր կանչով, շներն այս ու այն կողմից ձայն տվին ու հանդարտեցին. զգիրի հետ մի քանի հոգի եկան հեռու քարանձավներից: Սրահի կիսամութում փափախները մակաղած ոլխարի պես էին, չիբուխների կրակները՝ խոտերի մեջ լույս տվող բզեզներ:

Նոսքը հողի մասին էր, հարմար մի տեղ նոր գյուղ հիմնելու մասին:

Երևի շատ հնում, երբ վաչկատուն ցեղերը երկրե-երկիր էին գաղթում, նոր աշխարհներ գրավում, այդ աշխարհի մասին հազար առասպել բերնե-բերան էր անցնում և ոգևորում անցնելու դժվար կիրճեր, սար ու ձոր, անջուր ավազուաններ:

Նոր գյուղի խնդիրը Հյուսիսային Դորի համար երջանիկ աշխարհի առասպելի պն էր, նրանք իրենց հանդերի անուններն էին տալիս, մեկի շուրջ գովում, մյուսի խոտը:

— Մենակ էս ձորից դուրս գանք...

Փափախների տակ պսպղում էին աչքերը, որպես շիրուխի կրակներ, երբ մեկը ծանոթ բանտի նկարագիրն էր անում և ուրվագծում վաղվա գյուղը, լայն ճանապարհը և ճանապարհի նման ազատ կյանքը:

Երբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախագահը քվեարկության դրեց նոր գյուղատեղը փոխադրվելու հարցը, ճրագի թույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի հետև մի պահ շերեացին փափախները, թվաց թե հսկա մի մարմին բյուր ձեռքեր է պարզել դեպի սևացած օձորքը:

Ճրագը թարթում էր լույսի հետ և տաքություն տալիս: Ճրագի հետ վաղվա հույսը ջերմություն էր սփռել սրահում: Եվ ուրախ աղմուկով գուրս եկան: Այսպես էր սկսում իր շուն վաչկատուն ցեղը անցած դարերում:

Մանգուղթի գլխին Գյունեյ թաղից մի ալևոր մոտեցավ մեզ:

— Մի ուսս գերեզմանումն է, ես կարող է շտեմանեմ էն նոր տեղը, բայց տարեք... Գնացե՛ք Հյուսիսային Դորի դժոխքից:

Մանգուղթի գլխից մի պահ նայեցի, թե ինչպես մահակով քարերը շոշափելով ձեռունին կորավ մութի մեջ: Լսելի էր, թե ինչպես նա մահակի ծայրով զարկում էր քարերին, ճանապարհը փնտրում:

Կրակները չէին երևում: Մութի մեջ հազիվ էին նշմարվում գյուղի գլխի ժայռերը, մեկիքների ամարաթի պատերը: Ժայռերը թանձր ստվեր էին կախել գյուղի վրա, ամարաթը թվում էր որպես կանգուն դղյակ, որի խավար խուցերում գուցե շրջում է մեկիք Բախտամը, որպես ուրվական...

1926

ՏԻՊՐԱՆՈՒՆԻ

Տնտեսությունը պլանով վարելու համար, ձմռան մի գիշեր Վասիլը մտքում դրեց օրագրի պես մի բան պահել, նշանակել եզան վարն ու կերը, ինչքան հաց են ուտում ամեն ամիս, քանի՞ խորձ խոտ է՝ հար-

կա՞նք իր երկու կովին, և՞ որ է ծնելու կովը, քանի՞ ձու է քաղաք տանում ծախելու և այլն:

Ապագա հեռանկարների մասին մի քիչ մտածելուց հետո՝ Վասիլը շուտ եկավ կողքին և գլուխը բարձի վրա հարմար տեղավորելով, քնեց այն խոր ու հանգիստ քնով, որպիսին Երևի ունենում է նավի կապիտանը փոթորից հետո նավի սարք ու կարգը դիտելով, մինչև խաղաղ նավահանգիստը:

Վասիլի տնտեսության միակ ճեղքը հարևանի պարտքն էր և այդ ճեղքից հազար ու մի անախորժություն էր ներս մտնում, վրդովում նավի կանոնավոր ընթացքը, ճոճում, ուղղությունը կորցնում, ահ ու սարսափ տարածում նավաստիների՝ մոր, կնոջ, քրոջ ու երեխաների մեջ:

Այդ գիշեր, երբ ձմռան քամին ուռնում էր այնպես, ինչպես հազար պարտատեր միաբերան կոռնային, Վասիլի գլխում ծագած միտքը՝ օրագիր և հաշիվ պահելու մասին, անշուշտ ներքին և անբախտելի կապ ուներ պարտքի անխուսափելի հատուցման հետ: Ամենայն հավանականությամբ բարձի վրա գլուխը հարմար տեղավորելուց առաջ, նրա գլխում ծագել է և երկրորդ միտքը՝ նավի ճեղքը Տիգրանուհու ծածկելու մասին:

Նրա օրագիրը հին, թերթերի ծայրերը մաշված երազահանի լուսանցքների վրա է գրած և կազմի կողմին: Վասիլն ամեն օր չի գրել: Երևում է, որ գարնան սկզբին, երբ առավոտից մինչև իրիկուն քրտնել են ինքը, գոմեշը և տան անդամները, ժամանակ չի եղել ամեն օր գրելու: Մտենազիրը բավականացել է միայն շաբաթվա կարևոր դեպքերն արձանագրելով լուսանցքի վրա, մինչև քունը հաղթելու: Իսկ գարնան սկզբին միշտ էլ քունն է հաղթել և երկու-երեք բառ գրելուց հետո գրիչն ընկել է ձեռքից, նույնիսկ միտքը կիսատ թողնելով:

Վասիլի օրագիրը սկսվում է տան անդամների ցուցակով, որ ըստ երևույթին կազմված է հաջորդ առավոտյան, ուտելուց հետո, քանի որ թերթի անկյունում Վասիլի բուժ մատի հետքը կա, թաթախված ինչ-որ պղտոր և մի քիչ էլ յուղոտ հեղուկի մեջ:

Ըստ այդ ցուցակի նավի վրա ութ մարդ էր՝ ինքը, մայրը, կինը, չորս երեխան և Տիգրանուհին: Անունների դիմաց տան անդամների տարիքն է և այն կապը, որ ունի տան անդամը Վասիլի հետ: Այսպես՝ «Տիգրանուհի, քույր, 16 տարեկան»: Վասիլի կենդանի ինժեներարը երկու կով է, մի գոմեշ, ութ հավ: Կովերն ու գոմեշը անուններով են, տանից տարիքի և տան անդամների ցուցակին անմիջապես կցած: «Տիգրանուհի, քույր, 16 տարեկան» և հետո «Մաղիկ կով»:

Որովհետեւ Վասիլը գեղագիտական նպատակի հետամուտ չի եղել, օրագրից չի կարելի որոշել, թե ինչպես էին Տիգրանուհու մագերէ՝ սե թե շեկ, աշքերը կապույտ էին, թե թուխ: Միակ հիշողութիւնը նրա արտաքինի մասին գրված է մայիսի 6-ին. «Տիգրանուհու համար առա դեյրա»: Իմացը նշանակված է գինը, որից երևում է, որ կտորը հասարակ չիթ է եղել:

Կա մի ուրիշ հիշատակութիւն, առանց ամսաթվի. «Տիգրանուհու համար շուստ շառա»: Երազահանի այդ երեսին տպված է հետևյալը. «Կոշիկ կամ տրեխ տեսանելը մեծ կորուստ է, երազն յոթն օրն կատարի»: Կարելի է ենթադրել Տիգրանուհու տխրութիւնը շուստեր շունենալու համար և թե ինչպիսի երազ է թվացել մի զույգ շուստը: Ստույգ է, որ Տիգրանուհին բոքիկ ոտքերով է գնացել քաղհանի, ինչպես նշանակել է Վասիլը մի քանի օր հետո:

Վասիլը շատ օրեր մանրամասն է գրել: Օրինակ, հունիս 11-ին նշանակել է. «Մայրս գնացել է իր եղբոր որդու տունը դոնադ 4 օրով: Վարսենիկը (կինս) զբաղված էր տանը մանր գործերով: Կովը տվավ 12 գրվանքա կաթ, Մաղիկը ոչ: Տիգրանուհին գնացել էր շաղաց ալյուր աղալու, բայց նորաթ շիինելու պատճառով եկավ տուն: Չէր աշխատում գոմեշը, հանգստացնելու համար գնացել էր դաշտն արածելու: Եկավ անձրև: Բադալի տղան տվեց իր պարտքը—կես կոտ ցորեն: Առա մի ուսհի կոթ: Եվս մի շաբաթում հավերը 12 ձու ածեցին, որից 5-ը ծախեցինք, ընդամենը 10 կոպեկ»:

Ամբողջ օրագրի մեջ հունիս 11-ը նշանավոր է երկարապատում և մանրամասն շիինելով: Խոսելով ապահովագրման թերթիկի մասին, որ երեկ նույն օրն է ստացել, Վասիլն ավելորդ չի համարել հետևյալ խորհրդածութիւնն անել. «Կառավարութեան կողմից եկավ շրջիկ և խոսեց ապահովագրման մասին նաև բուրժուական կողմանից: Ժողովուրդը բոլորը հասկացան միաբերան, կեցցեք դուք միութիւն»:

Անցյալ տարվա օրացույցով հունիսի 11-ին կիրակի էր: Ըստ երկույթին այդ կիրակին Վասիլն անմահացրել է գինով և երեկոյան դեմ փիլիսոփայել «միութեան» և «բուրժուական կողմանից»: Մի քանի օր հետո, հունիսի 16-ին Վասիլը գրել է. «Տիգրանուհին անորոշ աշխատանք էր անում: Գաղթականը տարավ կես կոտ ցորեն գինու դիմաց»:

Այդ ամսին Վասիլն առաջին անգամ հիշատակում է պարտքը: Գրելով, որ թրթուրն ուտում է կաղամբի տերևները, Վասիլն ավելացնում է. «պարտքից դուրս եկանք տասը մանեթ Տիգրանուհու աշխատանքի դիմաց, ևս տվի 12 մանեթ փողով»:

Տիգրանուհու մասին տեղեկութիւնները հուլիսին կցկտուր են: Երևում է, որ ամբողջ ամսվա ընթացքում աղջիկն աշխատել է եղբոր պարտքի դիմաց: «Տիգրանուհին քաղհան էր անում հարևանի բոստանը պարտքի դիմաց»: «Առա եղան մի հատ: Տիգրանուհին լոբի էր քաղում պարտքի կողմից: Առա ծամոն վերքի համար: Փոր եմ արել, հետո գնացի ցախ բերելու: Մաղիկը ցամաքեց անհայտ պատճառից»:

Հուլիսի վերջին նա գրել է. «Տիգրանուհին գնաց վերին արտը խորձի, պարտքի դիմաց: Եվս տվի 3 մանեթ»: Թե ի՞նչ խորձ է վերին արտում և ի՞նչ աշխատանք է արել Տիգրանուհին այդ արտում,—պարզ չի երևում: Նույն օրը Վասիլը գրել է. «Վարսենիկը հիվանդ է. Տիգրանուհին եկավ ոտքին վերք: Առա ծամոն վերքի համար»:

Վարսենիկի հիվանդութիւնը վերջացել է հաջորդ օրվա լուսաբացին: Վասիլը գրել է. «Մնվեց ինձ ևս մի աղջիկ»: Եվ ուրիշ ոչինչ: Այդ ամբողջ շաբաթը նա մի նախադասութիւն է նշանակել. «Պարտքից մնաց քառասուն»:

Աղջիկն ըստ երևույթին մի շաբաթից ավել չի ապրել: «Գիշերս մահացավ նորածինը, առանց անուն գնելու»,—գրել է Վասիլը: Հին երազահանը նույն երեսի վրա, Վասիլի գրածից մի քիչ ներքև ասում է. «Երազն բարի է և կատարվի ավուրն», իսկ Վասիլը դիմացը նշանակել է. «Առա կաղին երեխաների համար 16 կոպեկ, ևս նավթ, գրվանքում մի կոպեկ պակաս, գումարով 30 կոպեկ»:

Տիգրանուհու մասին հետագայում եղած հիշումները միշտ էլ «պարտքի դիմաց» են կամ «պարտքի կողմանից»: Նա բուրդ է լվանում, կալ է կալսում, լոբի է քաղում բոստանում: Ինչ-ինչ նկատառումով Վասիլը կարևոր է համարել օգոստոսի 21-ին նշանակել, որ այդ օրը Տիգրանուհին չի աշխատել, «ոտքը մտել է փուշ»:

Օգոստոսը Վասիլի տարեգրութեան մեջ նշանավոր է դրամական հաշիվներով: Համարյա ամեն երեսի գրել է փոքրիկ հաշիվներ օրվա ծախսը. «Հնձվորին մի օր ներքի արտում մի մանեթ 60 կոպեկ», «Մանուշարից առա գերանդի, պարտք մնացի 60 կոպեկ», «Զրվորներին մի փութ ցորեն»:

Վասիլի մատչանում Տիգրանուհու շուստերի մասին մի անգամ էլ հիշատակված է օգոստոսի վերջին: Թեև Վասիլը օրագրի շարունակել է մինչև տարվա վերջը, սակայն շատ քիչ են հիշատակումներ Տիգրանուհու և նրա շուստերի մասին:

Վերջապես Վասիլը գնում է մի զույգ շուստ, սակայն Տիգրանուհու անունով գնած շուստերը դառնում են Վարսենիկի սեփականութիւնը,

իրրև թե նրա ոտքին մեծ լինելու պատճառով: Այդ առթիվ շատ մական-
րեսային դատողութիւնն է արել Վասիլը, մոտավորապես այն ձևով,
թե աշխարհը փուշ է, լավութիւնն էլ է կորչում, վատութիւնն էլ:

Չենթադրել՝ արդո՞ք, որ ընդհարում է եղել Վարսենիկի և Տիգրանուհու միջև շուտերի համար, մեկը լաց է եղել, նորից բորիկ ոտքերով
(«առի ծամոն վերքի համար») արտը գնացել «պարտքի դիմաց», մյուսը
շուտերը պահել է հայրական տնից բերած սնդուկի մեջ: Ինչպե՞ս հաս-
կանալ Վասիլի գրածն այն մասին, թե «Տիգրանուհին խոտվեց, զոռով
բերեցինք կալատեղից»:

Սեպտեմբերին ծնում է Վասիլի երկրորդ կովը: Այդ օրը նա ուրիշ
բան չի արձանագրել: Սեպտեմբեր ամսվա նշանավոր դեպքերից է և
խոտի հաշիվը: Անցյալ տարի ցանած առվույտը երկու անգամ հարելուց
հետո Վասիլը շատ մանրամասն ելք ու մուտքի հաշիվ է կազմել: Եվ
մուտքը գերազանցել է («մաքուր եկամուտ խոտի կողմանից»):

Մի շաբաթ հետո ստացած գարու մասին գրելիս, հանկարծ մի՞տն
է բնիկ Տիգրանուհին, թե գարու հաշիվն անելիս տանը վայնասուն է
ընկել, ձեռքը դողացել է, ծածկել է երազահանը, վեր կացել: Ինչպե՞ս
է եղել, այդ ամեննեկն հայտնի չէ: Գրված է միայն հետևյալը.

«Տիգրանուհին մահացավ առանցի կարծիքի, տեղոց տեղ, լավ թա-
գեցինք. եղավ ծախս ութը մանեթ փողով, ևս մի փութ գարի տերտերին,
գումարով 9 մանեթ 70 կոպեկ: Նաև առի երկու մոմ»:

Տիգրանուհու մասին էլ ուրիշ ոչինչ: Տասնվեց տարի ապրեց, աշ-
խատեց, մահացավ նույնպես հանկարծ, ինչպես այն նորածինը, որի
մասին հուլիսի վերջին հայրը գրել է՝ «Գիշերս մահացավ նորածինն
առանց անունը դնելու»:

Օրագրում Տիգրանուհու մազան առթիվ ուրիշ մանրամասնութիւն չկա:
Վասիլը երազահանի այդ երեսն էլ շրջել է նույն բութ մատով, որի
կնիքը կա երազահանի շատ երեսների վրա:

Հաջորդ երեսը, որ գրվել է երկու օր հետո, սկսվում է այսպես.

— Պարտքից մնաց տասնչորս...

1925

ՄԱԻՐՈՅԻ «ՉՐՈՒՅՑԸ»

Երկրորդ օրն էր՝ Մաղդայում էինք: Ալագյազի լանջի ամենաբարձր
գյուղերից մեկում, որտեղից բացվում է հիանալի տեսարան դեպի
գառառ: Ենթեք փոված էր Արազդայանի տափարակից մինչև Անի կա-

յարանը հասնող ընդարձակ տափարակը, գյուղերն ու քաղաքները, որ
ցամաք դաշտում կանաչ պարտեզների էին նման, երկաթուղու սպիտակ
կայարանները, անբաժան ակացիաներով ու բարդիներով:

Ես և ընկերս նստել էինք քարին, հիացմունքով դաշտին էինք նա-
յում և փորձում գտնել ծանոթ գյուղերը: Արևը կախ էր ընկել մայրա-
մուտի կողմը: Սարից զով քամի էր փչում, ողջ դաշտը ողողված էր
արևի լույսով և արծաթի հալոցքի նման պսպղում էր ոչ միայն Արաքսի
օձանման հոսանքը, այլև մի քանի փոքրիկ լճակներ ու գյուղական
առուներ:

Մեր հետևը Մաղդան էր՝ տափարակ կտուրներով նոր տներ կա-
նաչների մեջ: Երկու կին կտուրների վրա ցորեն էին քամում: Օղբ ջինջ
էր և թափանցիկ. արևի տակ փայլվում էին ցորենի քիստերն ու թեփը,
երբ ոսկեգույն փոշու հետ խառնված ցորենը կանայք մաղում էին և
օրորվում:

Մեզնից մի քիչ հեռու արտերն էին: Ոտքերը վեր թշտած մի մարդ
չուր էր տանում, կում էինք, թե ինչպես էր բահը գրնգում, երբ խրվում
էր ավազոտ հողում: Զորակից երգի ձայն էր լսվում.

Կռունկն իշի է գլուխն...

Ցարս ման կզա շուխն...

Երբ մերթ ընդհատվում էր, մերթ շարունակվում: Ընկերքս հետա-
բերբերութիւնը շարժեց այդ:

— Ի՞նչ անելիս կլինի էն երգողը,— հարցրեց նա: Ես փորձեցի երգի
ընդմիջումներից որոշել, բայց չկարողացա: Ընկերս չհամբերեց, մի
քայլ արեց ու նայեց ձորակի կողմը:

— Հնձվոր է,— կանչեց նա:— Հենց որ կռանում է, լուռ է...

Մեր գլխավերևը՝ բլրակի հետևից լավեց մի ձայն՝ «հոլե՛, հոլե՛...»:
Մեկը սուլեց: Ետ նայեցինք: Ուշաբթի հոտը բլուրից իջնում էր: Մի այծ
բարձրացել էր քարի գլուխն ու ամբամբացնում էր միբուքը: Բլրակի
գլխին կանգնել էր հովիվը՝ մահակին կոթնած: Կանգնել էր արձանի
նման ու նայում էր մեզ: Երևում էր, որ նա վաղուց է տեսել մեզ: Ապա
սկսեց իջնել: Հեռվից արդեն նկատելի էր, որ նա կաղում է:

— Ես կաղ շոբան կյանքումս չեմ տեսել,— ժխտաղեց ընկերս:

Հովիվի հագին տեղական, թևերը կտրած «փոթ» էր, մորթը դեպի
դպրս: Պայուսակը ցնցվում էր, երբ նա քարից քար էր թռնում:

— Տեսնես էս սարի գլխին նա մեր օրերից ի՞նչ գիտե,— ասաց

ընկերս ու արհեստանքով ավելացրեց,—շվին չեմ տեսնում, թե ունեցել էր՝ քչի կտայինք...

Հովիվը մոտեցավ:

— Բարի տեսանք,—ասաց և դամփոխն սաստեց: Շունը նստեց:

— Անունդ ի՞նչ է,—հարցրեց ընկերս:

— Մուրո՛:

— Մուրո, բա շվի շունն՞ս:

— Փո՞ղ:—Եվ ծպպացրեց:

Նրա մի ոտը կարճ էր: Կանգնելուց մատերի ծայրը հագիվ էր գետնին դիպչում: Դեմքը ծաղկատար էր, ձախ աչքի տակը՝ ճոթոած: Նրա զգեստը, գդակը, դեմքը, ձեռքերը համարյա հողագույն էին, արևից խանձված, քամուց ծեծված: Սակայն մի քաղցրություն կար նրա միամիտ, մի քիչ կոշտ դեմքին:

Մուրոն նստեց:

— Մուրո, կարգալ գիտե՞ս:—Նա ծիծաղեց:

— Ուստի՞ց:

Ընկերս սկսեց հարցուփորձը: Մուրոն գլուղի հովիվն էր: Գլուղում մի թռչիկ» ունի, որի դուռը գեռ չի կախել: Քնում է ոչխարատիրոջ տանը՝ հերթով: Ոչ ոք չունի: Սասունում էլ որբ է եղել:

Հանկարծ ընկերս հարցրեց նրան.

— Մուրո, դու կենիսի անունը լսած կա՞ս...

— Հրա իմա՛լ,— մի քիչ սրտնեղեց նա:— Ես կենիսի զրուց լե գիտեմ...

— Ի՞նչ զրույց, մի ասա լսենք,—խնդրեց ընկերս: Մուրոն ամաշխուղ մեղանից «ծգարա» խնդրեց ու սկսեց.

— Կենին ուռուս էր: Յուր հեր լե չբավոր էր, պապ լե. գնաց կարգալու, էս յան, էն յան, մի հուսումարան ուստ եկավ, ասավ՝ չբավոր եմ, ինձի կառնե՞ք, կուզեմ կարգացվոր էղնիմ: Առան. մի քանի վախտ կարգաց, որ ուսում թամմեց, խելքի էկավ:

«Որ խելքի էկավ, իմացավ, թե աշխարքի վնաս ուստից կեղնի: Մտածեց, մտածեց, տեսավ, որ վնաս ուռուսի թագավորից կեղնի: Թոփ արեց իրենց հուսումարանի տղոց, թե՛ ընկերներ՝ էնքան որ կարգացվոր եք, իմա՛լ կեղնի, որ չբավոր դառը դատի, հարուստ ուտի, ինքը մնա չլուտ, սոված, ուրթ, մի կարկատած լեֆ լե շունի, որ մեջ պառկի:

«Ընկերներ ասին. էղեր, շէղեր է, էղպես էղեր է, էղպես լե մացել է: Կենին ասավ. աշխարհն էղպես չի մնա, էսօր ամպ է, էգուց պարզ արև: Մի՛նչի մենք ընկերություն շաննք զիրար, թագավոր լե մզի կմորթե, հարուստ լե մզի կճնշե, հող լե մզի շօգնի: Մկրատ իրեն է, կտոր լե

իրեն է: Զուգը ուղիղություն կասեմ, որ մի՛նչի թուր հարուստի բերան լանի, պարզ խոսք չի ասի:

«Ընկերներ համոզվեցին, ասին կազմակերպություն սարքենք: Սարքեն. կենին ասավ, ընկերներ, ուժով կացեք, որ պիտի կոխվ տանք:

«Էդ վախտը թագավոր մի հավատարիմ մարդ կուենեա: Կանչի էղոր, կասի, որ երթա պտուտ գա երկիր, կուզեր իմանա թե՛ ժողովուրդն ի՞նչ կասի չի ասի թագավորից: Էդ մարդ յոթ տարի ժան կգա, վերջը կոտ թե՛ թագավոր, չավ խոսք քիչ ինացա: Թագավոր թախտից կիջնի, թե ինչ տեսել ես, շես տեսել՝ զմե՛ն լե պատմի:

«Կասի՛ թագավոր, իմացած եղիր, որ էսպես տավերկու տարեկան մի տղա, անուն կենին, քեզ փորձանք կբերի: Թագավոր վախուց հրաման էտուր, թե տավերկու տարեկան կենին քշեք աքսորյան...»:

Արևը թեքվում էր կարմիր ամպի հետևը, իբրև հոգնած հնձվոր, որ վրան է անում թաղիքը: Ծկում էին ծտերը, քարից քար թռչում, կարծես չէին ուզում, որ երեկո լինի:

Մուրոն ծուխը խոր քաշելով, շարունակեց.

— Քշեցին աքսորյան, էլի շխրատվավ: Կենինի ախպեր որ իմացավ, թե պստի ախպեր աքսորյան է, ասավ. էլնիմ էրթամ ինչքան թագավոր կա մորթեմ: Էդ խաբար լե շուտով հասուցին թագավորին, թագավոր էս անգամ կատաղավ, ոտքը գետին զարկավ, թե բռնեք բերեք, իդա մանչ վի՛ր է:

«Բռնին բերին: Թագավոր հարցուց, ո՞վ ես, ասավ՝ կենինի ախպերն եմ, ասավ՝ անունդ ի՞նչ է, ասավ՝ Ալեքսան: Աս խոսք ասել էր, լի ասել, թագավոր թուր հանեց զարկեց, արյունք ծով արեց: Կենին իմացավ, ասավ. «Վա՛յ իմ Ալեքսան...»: Շատ արցունք թափեց ախպոր համար, բայց էլի ուժովցավ, ասավ՝ ընկերներ, եկեք գաղթ սարքենք:

«Ընկերներ համոզվան, գաղթե՛ք հանին, ասին՝ դու ամբողջի գլխավորն էղի: Կենին ասավ՝ թե կոխվ պիտի տանք, ով զենք շունի, թող անե, ուժով միանանք, թագավորի վրա քշենք: Էս էլ որ իմացավ թագավոր, կատաղեց, մարդ ձամփեց, որ աքսորյան կենինին մորթեն:

«Էս անգամ չբավոր բանվորներ ասին, որ թագավոր մեր կենին սպանե, հարա մզի ուղիղություն ո՞վ ցույց կիտա: Չընքի թորգի, ասին, մենք լե կերթանք կոխվ կիտանք թագավորի վրա: Կենին ժողովք արեց, նամակ գրեց զմե՛ն չբավոր բանվորներուն, թե պատրաստ կացեք, էս փյան ամիս կոխվ կէրթանք թագավորի վրա:

«Առավ իր ընկերներ, իր զենք կապեց, էդ ֆլան ամիս կենին էկավ ուռուսի թագավորի պալատ: Կանչեց՝ ե՛լ, ես աքսորյան կենինն եմ:

Ուժեղ կայան գրառո, շատ արուն թափին: Լենինի թուր ճեղքեց թագավորի գլուխ, երկու կես արավ, թագավորին տապալեց, էնոր տուն ու թուփաթ զարկեց, շարժեց, լավ հողեր, լավ դուբրններ, ինչ որ թագավորն ուներ, գմմեն ոսկի, հարստութուն բաժանեց շքավորներուն, ասավ՝ գնացեք ձեր քեֆին ապրեք... Զքավոր բանվորներ ուհաթցան Լենին հաճաքեց իր ընկերներ, ժողովք նստան, որոշում գրին, որ է կոիվ չէղնի: Էլավ մի բարձր քար, ասավ.

— Ժողովուրդ, խաղաղ ապրեք... էլ մզի կոիվ չկա...

«Ճղավ խորհրդային իշխանութուն...»:

Մուրոն լոեց ու գլուխը ուշխարների կողմը դարձնելով, հոտի տառնորդ այծի վրա կանչեց այնպես, որ հասուն է լեռան հովիվներին և որի հնչյունը ոչ մի կեթալ չի կարելի տառերով գրել: Տեսնելով, որ կաննան հետևանք անցավ, Մուրոն նստած տեղից քար շարժեց այծի կողմը:

Մարմնի մյուս պակասութուններից բացի, Մուրոն նաև ձախկ էր: Սակայն այդ շխանգարեց նրան քարը հասցնելու ճիշտ այն կետին, որ հարկավոր էր՝ այծը ետ տալու համար: Եվ ուշխարներն էլ այծի հետևից գլուխները դարձրին դեպի արևմուտք:

— Մուրո, իսկ ի՞նչ պատահեց Լենինին հետո, — անհամբեր հարցրի ես:

— Զրուց չխալավ գհա, կեցի... — և շարունակեց.

«Թագավորին որ զարկեց, հարուստ շխալավ: Որ փախավ, որ է ահուց մահացավ: Մնաց մի հարուստ մարդ: Զոր նստեց միտք արակ գիշեր շուրի լուս միտք արավ, թե հնարքով Լենին ջնջի հողի երեկոս վերջը հնաք գտավ: Կանչեց մի աղջիկ, ասավ՝ աղջիկ, ոսկի կուզես. ասավ՝ կուզեմ: Աղջիկ էլավ գնաց Լենինի դուռն մոտ կեցավ: Պահպաններ ելան հարցրին՝ աղջիկ, դու վի՞ր ես. ասավ՝ չլուտի աղջիկ եմ, Լենին իկա խեղիբ ունեմ: Լենին իլավ գուս, ֆայտոն նստավ: Ծալուն նստեր էր, չէր նստեր, աղջիկ էզարկ: Լենին ասավ՝ դուս մի սպաներ իմացեք, թե ո՞վ ճամփեց: Իմացան, որ էն հարուստ ճամփեց, հարուստ փոր-փոքր լե տրոթին, եզավ հավար:

«Մի բանի վախտ անց Լենին հիվնդցավ: Որ հիվնդցավ, կանչեց իր ընկերներ, իր կնիկ, իր զոքք, ասավ՝ ընկերներ, ես կմեռնեմ, ի խրատներ, իմ խոքք կմնա աշխարհի երես:

«Լենին մեռավ... Յոթ օր, յոթ գիշեր սուգ արին, տարան մի բարձր տեղ թաղին, որ արևուց մոտ էղնի...»:

Մուրոն տեղից վեր կացավ, պալատակն ուտք նետեց:

— Համյա գրուց (այսպիսի գրուց), — ասաց և խանութ գլուխ տ...

ով հետաքցավ, փայտը քարեքար դիպցնելով: Քայլելուց նա ցնցվում էր, փարձեռս ամեն քայլափոխին պիտի ընկներ, եթե մահակը քարից փակ շատար:

— Տղա չատ, իդա կուտ (ցորեն) վի՞ր է, — առունների մոտից կանչեց մեկը:

Մուրոն հավաքում էր ուշխարը: Դսելի էր նրա մեղմ սուլոցն ու ձայնը, — «հոլե՛, հոլե՛... քը՛սս, քը՛սս...»: Քիչ հետո ուշխարի գլուխը թեքեց գեպի գյուղը:

— Հը, ո՞նց էր... — հարցրի ընկերոջս:

— Երբեք չի սպասի...

Մենք նստեցինք, մինչև իրիկվա նրբին լազուրը հալվեց մութի մեջ, թանձրացավ խավարը, և դաշուն ու դեմացի լեռնաշղթան սուզվեցին մթնում: Արաքսի արծաթ գոտին նիրհող թռչունի նման պահվեց եղեգնուտների մեջ:

Եվ ինչքան թանձրանում էր մութը, այնքան վառ էին փայլում էլեկտրական լույսերի շղթաները: Ահա Երևանը, Սարգսրաքաղի կալարանը, Վաղարշապատը, Այլրի ջրհանը:

Կարծես մութ օվկիանի վրա լողում էին հրավառ նավեր...

ԱՆՁՐԵՎԸ...

Մթին սարերի ամպերից, կապույտ ձյուններից և սառը աղբյուրների ակունքներից գլոր-գլոր իջնում է Զորագետը, գարնանը՝ հեղեղների ազմուկով, ամառվա տապին՝ զով կոհակներով և աշնանը՝ դեղնակարմիր տերևներով, որ հավաքում են ջրերը ձորերում: Հետո ջրերի վրա, նուրբ արաճետների վրա ծանրանում է ցուրտ մառախուղը և լոռեցիները քարձր աղջարհում մաղում է ձյունը:

Տխրութուն, ահ, լեռնային երկրի երկա՛ր ձմեռ...

Արդեն տերևաթափ են թղեհինները: Անտառում փրկում են հացենի ծառերը նարնջագույն տերևներով, կազնիները՝ բաց գեղին և կարմիր տերևներով, տանձիները, որոնց շուրջը չար խազալի վրա գիշերում է մի զազան: Ծառից ընկնում են տերևները, ահավոր կանչում է կույր մոշահավը, և բոլորովին մոտիկ, դեղնած սաղարթի մեջ փայտահարը կուսով թմրկահարում է կեղևը: Անտառում մառախուղ է: Կաթում է

խոնավութիւնը մամուռների վրա, ծառերի վրա և քարափների լանջին: Մի խանգարված մատուռի առաջ դեռ մխում է շոբան Սաքոյի կրակը: Ծառերը և մառախուղը անձրևից տաքացած բրդի հոտը: Հետո իրար ետ հավաքում կրակը և մոխիրների տակ կարդում գերեզմանաքարի երկաթագիրը՝ «Երեմիա սուրբ ծերունի»... Խոչընդոտ են քարափի ուռիները, Բարձրերում բուք կա, և լեռնային բազիրը մուռախուղի միջով իջնում են դեպի տաք ձորերը:

Ահա քարանձավը... Նստել է որսկան Չատին, ոտքերի առաջ եղջերուն փռել է բարակ վիզը և սառած աչքերով նայում է գորշ մշտչին: Քամուց ծխում է որսկանի սպիտակ միրուկը, նրա ոտքերի վրա բուսել է մամուռը: Կարմիր մասուրներ կան մատների վրա: Նա նայում է ինչպես եղջերուն, չգիտես խեղճ աղերսով, թե՞ անբարբառ աղոթքով: Գուցե խարույկ է եղել նրա մոտ: Վտան է շիրուխը խարույկի կրակից, և գիշերվա ահից կուշ եկած թուխ մանուկներին պատմել քարանձավներում քրքրացող այսերի և մարդագող ալքերի հեքիաթը, երկար, ինչպես լեռնային երկրի ահավոր ձմեռը:

Գվվում է ձորն անհայտ աղմուկից, դողում է գետինը, դողում են ծառերը և տարափով տեղում աշնան անձրևի ծանր կաթիլները:

Գվվում է քարանձավը և լսում եմ մի ձայն, որ արձագանքի պես հնչում է մութ փշակից:

...էս խոր ձորերում
էս է՛ շոբա քսան տարիս լրացավ,
Ոչ մի խնդութիւն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ:

Խոչընդոտ են մասրիները, որ բուսել են քարափի լանջին, որոնց խառվել են այն տեսիլք ծերունու մեռած մազերը: Հետո աղմկում է ամբողջ անտառը, քամին է շառաչում և հողմահալած մառախուղը կորչում է փշակներում, մթին քարանձավներում: Կաղնիների բաց դեղին սաղարթի միջից աշնան արևը լուսավորում է փափուկ արահետները:

Խաղաղ խնդութիւնք իջնում եմ գետափը:

Վերևում՝ քարանձավների առաջ, մնացին այն ծերունիները, որոնք ապրեցին «ամեն մեռնողին երանի տալով», ոտքերի առաջ մի մեռած եղջերու...

Գետը:

Գետի վրա, սլողպատյա լարերից կախված օրորչում է մի կամուրջ: Այն փին բարձրացել է հիդրոցենտրալի բազմահարկ շենքը, որի վիթխարի ապակիներն արտացոլում են լուռու ձորի ծայրերը, անտառը, ավերակ մատուռը և այն երեք տունը, որ ծվարել են քարափի զլխին:

Շենքի ներսը՝ այս ձորերին անծանոթ եռուզեռով խլրտում են մարդիկ, որոնք հերոսական ջանքերով և դժվար զրկանքներով հաստատեցին լույսի այս ամրոցը: Ահա երկաթակուռ բետոնի անկործան և անփոփոխ հունով Չորագետի շրերը բարձր ծայրից իջնում են ծանր տուրքիներին վրա: Ամեհի թափով պտտվում է սյունը, հարյուրավոր մեքենաներ դարձ են անում, ուրիշով դառնում և վերևի ընդարձակ դահլիճում գնեքատորը երկնում է հազար-հազար կիլովատ:

Մեքենաների ժխորի մեջ լսում եմ տարիների համառ աշխատանքի պատմութիւնը— երեք ագրեգատ, յուրաքանչյուրը 10.500 ձիու ուժ... բացի այդ՝ մի պեյլտոն ագրեգատ... ընդամենը 32 հազար ձիու ուժ: Օդային ֆիդերները տանում են այդ ուժը դեպի պղնձածուլարանները, դեպի ցիանամիդի և գրանիտի զործարանները, դեպի Ստեփանավան: Հետագայում մի գիծ կմիանա Քանաքեռի հիդրոկայանին, իրար կմիանան Լենինականը, Երևանը և հիմք կդրվի Հայաստանի էներգետիկ հզոր հանգույցին:

Չվարթ աղմկում են մեքենաները, և դժվար է լսվում այդ պատմութիւնը: Բաց պատուհանից ներս է մտնում անտառի գաղջ բույրը և նոր, ներկած վահանների հոտը:

Մեկը կանգնել է ամպերումների մարմարե տախտակների մոտ՝ և ուշադրութիւնք նայում է պղնձե սլաքների ընթացքին: Նա երբեմն բաց պատուհանից նայում է դիմացի լեռներին, անտառին և այն երեք տանը, որ կուշ են եկել քարափի զլխին:

Նրա կապույտ աչքերից, նիհար և բարձր հասակից երևում է այդ լեռների մարդը, անբան հովիվների շառավիղը՝ լոռեցի բանվորը: Ոչ ահ կա սրտում, ոչ խոնարհ վախ աստծուց, թավադից, շարքից ու շարչուց:

Լուռու ձորում կնստի ձմեռը և ծմակներում կոռնա քաղցած գազանը, հոտառելով նա կհասնի մինչև քարափի եզրը և ահից ետ կդառնա, երբ աննի լույսերով ողողված ձորը:

Չման գիշերը լուսավոր դահլիճում մարդը կլսի մեքենաների

զվարթ աղմուկը, ապա նոր ճանապարհներով կդառնա տուն և իր թուփ մանուկներին կպատմի, որպես մի առասպել, այն ժամանակները, երբ ջար ու քարահինների վրայով, մեջքը կքած, մեջքին ծանր բեռ, բարձրանում էր լոռեցին իր գյուղը՝ խավարի ու աղքատության մագիլներում: Այն ժամանակները, երբ «մի տուն լիքը մանուկներ» ահով էին լսում և բուքի ոռնոցը և պարտքատիրոջ ոտնաձայնը... Ապա կանցնի նորոգ օրերի պատմությանը, երբ կոռու ձորում մի խեղճ Չատի սպանեց թավաղին և «զակոնը» նրան քշեց Սիբիր: Կավանդի և հերոսական նոյեմբերը, որպես նոր պատմության սկիզբ, կպատմի և նրանց մասին, որոնք այս ամառի ձորում բարձրացրին լուսսի առաջին ամրոցը...

...Դուրսը մաղում էր բարակ անձրև ջրերի վրա, արահետների վրա և դեղնակարմիր անտառի վրա...

Այն կապուտաչլը՝ լոռեցին մերթ նայում էր պղնձե սլաքներին և մերթ արահետին, որով մի օր իշավ քարափի գլխին ծվարած տներից և այստեղ, այս նոր ամրոցի կառուցման հետ, նրա ներսն ամրացավ մի նոր հավատ, նոր բարբառ...

* * *

Ես նայում եմ նրան ու հիշում իմ երկրի հին պատմությունը: Քարերն ու մագաղաթներն ավանդում են նրա քաղաքների կործանումը և սուր, և գաղթ:

Ինչպես մի եղեգն՝ նա խոնարհել է զլուսը հողմերի առաջ և խաղաղության ժամին նորից հառնել: Նա սարսափահար փախել է իր գյուղերից, ինչպես նախիրը՝ հրդեհվող անտառից, ապա տուն է շինել քարափների վրա, և անձրևախառն քամին ծեծել է նրա հողաշեն խրճիթը:

Մեր երկրի ժայռերի վրա հաղթողները սնապարծ ոճով փորագրել են ավարառության և կողոպուտի պատմություններ, իսկ խավար խոցերում պատմագիրը հորինել է նույնքան սնամեջ առասպելներ հին փառքի մասին:

Ռամիկն անմոռնչ պառկել է խանի, թավաղի և սպիտակ ցարի մտրակի տակ, երբեմն ըմբոստացել, որպեսզի մյուս օրն ապավինի իր ետևում երգերին և նորից քաշի հին լուծը: Նա հերկել է ուրիշների հողը, անձրև է արյուն-քրտինք, իսկ առյուծի բաժին առել են ռեսը, վանքը և ուրբու արքան:

Նրա գորշ հյուսիսի վրա երկինքը մաղել է տրամուսյան անձրևը: Ես նայում եմ այս նորոգ մարդու աչքերին և կարգում նոր պատմությունը:

մոթյունը: Դեռ ինչպիսի շենքեր պիտի բարձրանան մեր լեռների լանջերին և ձորերում, ինչքան քաղաքներ պիտի հառնեն տափարակների վրա և զվարթաձայն հնչեն կառուցողների նոր երգերը:

Երկրի և մարդկանց վրա, հերկած հողերի վրա իջնում է աշնան բարեբեր անձրևը...

1932

Քեռի Դավոն

Ոչ քո մասին, Հայկ, ոչ Ալեքի և ոչ օղակավար Մարինայի և ոչ էլ նույնիսկ Մխոյի «թուլացիկ բրիգադի» տղաների մասին է, որ ահա գրում եմ, այլ այն մարդու մասին, որը խրճիթում խոնված բազմության մեջ իմ աչքին չէր ընկնում, մինչև ներս վազեր գոմի պահակը և լեղապատառ կանչեր:

— Քեռի Դավոն, քեռի Դավոն, էն անիրավ «եմբապետի» կապ փրկե՛ք ինձ, ելիր, թե չէ Արաբ էնոր փոր-փսոր կթափա:

Նլավ միջահասակ և ամրակազմ մի մարդ, մեկը նրանցից, որոնք լրացնում են քառասունը, հետև են թողնում հիսունը և նույնիսկ վաթսույնին հասնելով չեն փոխում իրենց քայլվածքը, դեմքի արտահայտությունը և առհասարակ իրենց: Նրանք ունենում են խիստ սև և ձյունի նման սպիտակ մազեր, և սևն ու սպիտակն իրար խառնված, նրանք ապրում են դեռ երկար, և այն տարիքում, երբ ուրիշ ծերունիներն ունենում են զառամյալ մառմին և հենվում են ցուպին, — այդպիսինքը գեա առույզ են և ունեն արթուն միտք:

Նլավ այդ ամրակազմ մարդը, որն էր ինքը՝ քեռի Դավոն: Նրա հեռուից դուրս եկավ նաև Մխոն, որին անվանում են «Կես կոիվ», որովհետև նա հանդարտ չի կարողանում խոսել և նույնիսկ երբ ժողովում խոսք է առնում, նույնիսկ այդ ժամանակ թնշում է նրա ահագնադորոգ ձայնը և թվում է, թե գոռում է մի ամբողջ լեռ: Ես ևս դուրս եկա «զկնի», ինչպես ասում են այդ գյուղում: «Կես կոիվ» Մխոն արդեն որոտալով ունում էր, և լսելի էր, թե ինչպես նա անարգում էր ինչ-որ լողր Միհրանի, նրան անվանելով «կուլակի թեկնածու», «կոլխոզի տիգ» և այլ այսպիսի խոսքեր:

Իսկ քեռի Դավոն գնում էր միջահասակ մարդու սովորական քայլերով, այն վարժ քայլով, որով այդպիսի մարդիկ լուսաբացից մինչև օր-կեսօր կարող են կտրել լեռներ և ձորեր և նոր միայն նեղանալով

շագից և ո՛չ հոգնածութիւնից՝ պառկել մի թփի ստվերում: Դժվար չէր գուշակել, որ «Կես կոփվ» Մխոն պիտի փոթորիկ գցեր և ավելի բարձր որոտար լողորբի, ծուլլերի, ավարաների և այլ այդպիսի մարդկանց հասցնէին և հենց այդ ժամանակ պիտի վրա հասներ քեռի Դավոն և լուռ ու մունչ գործ աներ:

Պատահել էր ահա թե ինչ:

«Խմբապետը», որ մի կիսախելագար երիտասարդ ցուլ էր, անպատիվ համարելով եղների շարքը դասվել և կամ գայթակղված այն ազնիվ և ընտիր կերով, որ ախոռապանները լցրել էին ձիերի առաջ, կտրել էր վզի կապը և հարբած արջի նման ծառս եղել կոլխոզի ընդարձակ գոմում, որից և վախեցած պահակը վազել էր հավարի: Ձիերից ոչ մեկը նրան մոտ չէր թողնում, իսկ Արաբը, չքնաղ մի նժույգ,— դեռ շարունակում էր զայրագին վրնջալ, դոփելով գոմի սալ քարերը:

Սրբ քեռի Դավոն ներս մտավ, տեսավ հետևյալ պատկերը: Գոմի մյուս ծայրին, կիսամութի մեջ ցուլը կռացրել էր վիզը և բռնում էր մութի մեջ բոցկլտում էին նրա արնախառն աչքերը: «Կես կոփվ» Մխոն դռան մոտ աղմկում էր ավելի բարձր, քան վրնջում էր Արաբը: Եղների և ձիերի երկար շարքերը, որոնց վերջը չէր երևում, հանդարտ խժոժում էին կերը: Միայն մի երիտասարդ բուռակ, որին ավելի կվայելեր սնվել՝ օրինակ առնելով հասակավոր և պատկառելի ձիերից— շղային անհանգրստութեամբ ցցել էր ականջները և ուզում էր ցույց տալ, որ ինքն ևս բաժանում է երևելի նժույգ՝ Արաբի զայրույթը: Իսկ եղներից ոչ մեկը որևէ կերպ ցույց չէր տալիս իր վերաբերմունքը և նույնիսկ կարելի էր ասել, որ նրանք ատելութեամբ էին լցված դեպի «Խմբապետը», որին օրերից մի օր պիտի ամորձատեին և նա ևս պիտի դառնար շարքաչ եղ:

Քեռի Դավոն, առանց փոխելու քայլերի ուրիշը, անցավ գոմի երկայնքով և ուղղակի մոտեցավ ցուլին: Նույնիսկ «Կես կոփվ» Մխոն սարսափից լուց և այլևս չվրնջաց Արաբը: Քեռի Դավոն բռնեց «Խմբապետի» ականջներից և առաջ եկավ՝ հետևից ցուլը: Ապա նա ցուլին հրեց ետև պառավ եղների արանքը, առավ ճիլ խոտից հյուսված թելի կծիկը, զրպանից հանեց կեմրարը և զարմանալի արագութեամբ ու ավելի զարմանալի վարպետութեամբ ուղորեց այնպիսի ամուր կապ, որ հուր-հավիտյան «Խմբապետը» չէր կարող քանդել: Նա ցուլին կապեց երկաթե սեպից, և միայն այդ ժամանակ նորից «փոթորիկ փրթավ» Մխոն ու դուրս գնաց:

Այդ ժամանակ քեռի Դավոն ոչ մի բառ չարտասանեց և միայն, երբ կապեց ցուլը, զրպանից հանեց ծխախոտի տուփը և հաստ մատներով

փաթաթեց ծխախոտը և ապա, այն էլ կես հեգնանքով, ասաց գոմի պահակին.

— Հարա հորի՞ ծողովքին կըսեիր ընցեր է քեռի Դավոնի ժամանակ,— և թեթև զարկեց նրա մեջքին,— սովորի, տղաս, սովորի...

Ապա մոտեցավ մի ծանր ձիու, որն ահագին աղմուկով կրճտացնում էր ատամները, կարծես գարու հատիկները փշրվում էին շրաղացի քարերի տակ, և շոյեց ձիու բաշը:

— Քրտնած է ձին, տղա,— և ասաց նաև, որ գոմն արդեն նեղ է, հարկավոր է ձիերի նոր գոմ կառուցել:

— Քեռի Դավո, դու ա՞յս բրիգադի մեջ ես:

— Չէ, ես դաշտավար եմ:

— Հապա ինչո՞ւ եկար գոմը:

— Չէ՞ էս էլ մերն է,— և ձեռքը մեկնեց ձիերի ու եղների կողմը,— բոլորը իմ է:

Քեռի Դավոն գնաց:

Գոմի պահակը, որն իսկույն թողեց բարբառը, պատմեց այն ճանապարհի մասին, որով նրանք ընթացել են, սկզբում՝ շորս տարի առաջ՝ միայն տասներկու տուն, որոնք ունեին միայն մի եզ և որոնց ծաղրելով անվանում էին «չլուտի խումբ»: Ահա այս գոմը և նրա քակը հրաշակված իջեան էր Շարուրից և Օրդուբադից եկող քարավաճախների համար: Այժմ այդ ծածկերի տակ հանգում են մեքենաները և մի նախորդ գումակ: Նրանք էին տասներկու տուն և ունեին միայն մի եզ. առաջին հիմնադիրները մեջտեղ դրին ինչ որ ունեին՝ վերջին պարկ գարին և նույնիսկ փշուր ձավարը փոխեցին գարու հետ և համայնական առաջին դաշտում սերմնացանը լի բուռով շաղեց սերմը: Հետո երեսուներից անցան և այս ձմեռ նրանք արդեն հարյուր վեց են, և հիմնադիրները պարծանքով նայում են ետ՝ շորս մեծ տարիներին:

Պահակը պատմում էր այդ տարիների մասին, և այդ թվում էր մի պարզ պատմություն: Լեռ չի փլվել, չի եղել ամենի պատերազմ, հրաշք չի եղել, և միայն քրտինք են թափել հողի մշակները և նրանք, որոնք ունեին միայն մի եզ, այժմ իրենց վաստակով տեր են դարձել երամակի և նախիրի, սայլաշարքի և մեքենաների, ունեն ցորեն և գարի, կանաչք կով են կթում, իսկ նաղարաչի Չուրն նրանց զվարճացնում է և թնդում է «գյոնդը»: Այդ թվում էր մի պարզ պատմություն և դժվար է հաղորդել այն ներքին ուրախությունը, որով համակված էր այդ երիտասարդը, ինչպես այն մարդը, որ խեղճութեան, հոգու այլասերման և ծայր չքավորության անդունդի ափից անդարձ անցել է մի ուրիշ ափ և ուրախու-

թշուհից կոխում է այն հողը, որ իրենն էր, բայց իրեն չէր կերակրում, տեսնում է նույնպիսի մի ձմեռ, երբ լեռները ձյունոտ են, ահա դարձյալ Արազի ափից բարձրանում է տաք գոլորշի, բայց իր դառնն այլևս չի շոքել սովի ահը և նրա վաղը չի երևում որպես անօգնական կրակ մթազնած բուրբ մեջ, այլ բացվում է որպես նորոգ զարնան առավուտ:

Երբեքում հավաքվածների խորհրդակցությունն ավելի նման էր պարզ գրույցի, բայց այդ հասարակ խոսքերը որոշում էին հարյուրավոր մարդկանց անելիքն ամբողջ տարվա ընթացքում: Որոշում էին այս տարվա նորմաները և միաժամանակ ուղղագծում էին կուլեկտիվի ողջ արտադրության պլանը: Նստել էին՝ ով ինչպես ուզում էր, և միայն նրանք էին սեղանի մոտ, որոնք գրում էին: Նույնիսկ մեկը խրճիթում գնում գալիս էր և երբեմն բարձրացնում էր գլուխը—այդ ժամանակ նա հայտնում էր իր դիտողությունը, և նրան ևս լսում էին ախպես, ինչպես մյուսներին, որոնցից ոմանք նստել էին պատի տակ, ոմանք՝ վառարանի շուրջը, իսկ մի քանիսը հաստ արկղի վրա, որ անհայտ է, թե ինչու էր այդտեղ: Ամենքից գեղանկար տեղավորվել էր մի թիկնեղ մարդ: Նա շոքել էր և միևնույն ժամանակ համարյա պտուկել մեջքի վրա, այնպես, որ նրա գլուխը ցցված ծնկների հետ հավասար էր:

Եվ ներկաները, որոնք կոխողի ակտիվն էին, նրա առաջատար ուժը, բոլորը՝ համաբյուր առանց բացառության խոսում էին խելացի ծանրություններ: Ներող չկար, ինչպես գյուղական այն ժողովներում, երբ զեկուցողի միայնոր ձայնից կախվում էին ունկնդիրների հոգնած գլուխները, և արդեն մի անկյունից լսվում է մրափի աղմուկ, կարծես այն կողմից գնում էր մի մենավոր սայլ և սայլը խուլ ճնշում էր: Պատասխանատվության զգացումի հետ, նրանց խոսքերի մեջ կար մի խստություն, և երբ լսում էին՝ այդ լուրջությունն ևս վկայում էր, որ մարդիկ կշռում և կշռադատում են: Եվ նույնիսկ «Կես կոնի» Մխոն այլևս երկար չէր աղմկում, այլ բավականանում էր ընդհատ բացականչություններով, որ թեպետ որտառձայն էին, բայց և այնպես խելացի էին: Իսկ քեռի Դավոն արդեն գրավել էր իր տեղը և լայն դանակով տաշում էր մի սեպ, աշում էր և մտածում:

Հեշտ չի այն աշխատանքը, որի համար նրանք ուղեղ էին մաշում: Չլուսի բարակ շերտի տակ լուռ քնել են այն դաշտերը, որտեղ վաղը նրանք պիտի քրտինք թափեն: Իսկ հարկավոր է ավելի լավ կազմակերպել համայնական դաշտերի վարը, հարկավոր է բարձր բերք ստանալ: Հարյուրավոր հեկտար դաշտերի վրա աշխատելու են տաքքեր մարդիկ և ահա պետք է այդ մարդկանց դասավորել այնպես, որ ստացվի առա-

վել արդյունք: Կա բեղով Տիգրան, կա և Թիմարցի Տիգրան, կա Տիգրան, որ անհայտ է, թե ինչու կոչվում է «հայու տղա», վերջապես շորորոգ Տիգրանին կոչում են «կոմսոմոլ Տիկո», և ահա շկա ավելի լավ չովոր, քան բեղով Տիգրանը: Թիմարցուն չի կարելի քաղհանի ուղարկել, որովհետև նա կոչվում է քաղհանավոր կանանց հետ, այնինչ նրանից լավ ֆորգոն քշող շկա: «հայու տղան» բամբակի «հոգու մեջն է», իսկ կոմսոմոլ Տիկոն օրնիբուն մեքենաների հետ է: Կա տափ, բամբակի առաթ, պետք է որոշել, թե ո՞ր պատանին ձեռնհաս է հորիկ լինելու, քանի՞ տղամարդ կարող է գետափի խոտատեղը հնձել, ո՞վ է դարսում բարձր բարդոց և այնքան ամուր, որ նույնիսկ հարավի քամին չթանդի: Սեղանի մոտ նստած մեկը, որ ղեկավարում է խորհրդակցությունը, հարցնում է.

— Քեռի Դավոն, երկար արտի ներքևի մա՞սը պիտի թանձր սերմել, թե՞ վերեի:

Քեռի Դավոն մի քիչ մտածում է և պատասխանում: Եվ դուրս է գալիս, որ ոչ վերևը պիտի թանձր սերմել և ոչ էլ ներքևը նոսր, այլ երկու ծայրերը հավասար խտություններ, իսկ մեջտեղը թանձր:

Եվ դեռ հարյուրավոր այսպիսի հարցեր՝ բամբակ ցանողների, քաղհանավորների, սերմնացանների և հնձվորների, դարբնի և սայլապանների մասին, աղյուս թափողների և տուն կառուցող վարպետների աշխատանքի ու նրա վարձատրության շափի մասին և այն մասին, թե ինչպես սերմել, որ արտերում անսերմ «խեց» չմնա, որ հողի բոլոր գուղձերը փշրվեն. ով է քաղցր հնձում, ով է լավ առու քաշում, լար տալիս և մարգոց անում, ե՞րբ է հարկավոր ցելաշուր և ե՞րբ ակոսով շուր,— և մի՞թե հնարավոր է միամտի թվել աշխատանքի այն բոլոր տեսակները և նկարագրել աշխատանքի կազմակերպման դժվարությունները և նրանց փորձը, որոնք շորս տարվա ընթացքում եփվել են այն դժվարությունների բովում և որոնցից յուրաքանչյուրը փակ ալքերով էլ տեսնում է իրենց հողերը, իրենց մեքենաներն ու մարդկանց, որոնք միացրել են աշխատանքը:

Եվ դեռ երկար ժամանակ և ոչ թե մի օր, անձրևից ծեծված և արեվառ զեմքերով այդ փորձառու մարդիկ, համայնական հողի մշակների այդ նոր ցեղը պիտի ուղեղ մաշի և նրանց աշխատանքը պիտի ուռձանա լիքը հասկերով:

Երբ ներս մտանք թեոի Դավոյի տունը, տնեցիներէ դեմքի վրա նկատեցինք մեր գալու հետ ընդհատված հետաքրքիր պատմութեան հետքերը, իսկ թեոի Դավոն այնպես էր նստել և մյուսներն այնպես էին նայում նրան, որ մատնում էին, թե այդ հետաքրքիր պատմողը հենց ինքը՝ թեոի Դավոն էր, որի երկու կողքին, թախտի վրա, բոթոթների նման կծկվել էին երկու թուխ մանուկներ, ըստ երևույթին թեոի Դավոյի թոռները: Նրանցից մեկը դեռ բավական երկար մնաց այդ դիրքով և նրա լայն շոած աչքերից երևում էր, որ մանուկը դեռ պատմածի ազդեցութեան տակ է:

Նրանց սենյակը շատ բան էր ասում իր տիրոջ՝ թեոի Դավոյի նկարագրի մասին: Նույնպես ամուր նստել էին պատերը, ինչպես թեոի Դավոյի կազմվածքն էր, և ամեն ինչից հայտնի էր, որ տերը տունը կառուցել է խնամքով, ամեն ինչ իր տեղն էր և մտածված, ինչպես նրա խոսքերը, և դեռ շատ վաղուց, երբ թեոի Դավոն անօթեան, թափառական էր, այդ դռան նախը եղել է նրա մտքում:

Տան կառուցվածքի կոշտութունը մեղմացրել էր կանացի մի ձևը, որը պատուհաններից կախել էր մաքուր վարագույրներ, պատերին նկարներ և գույնզգույն թղթերից զարդեր: Լիքն էր տան ներսը, դռան մոտ կախված էր մի փափուկ երեսաբրդ, իսկ վերեկից դաշտային շորացած ծաղիկների միջից նայում էր Բուլդոններն: Այդ լիքը տան բոլոր իրերի և մարդկանց վրա կար ապահով կյանքի կնիքը, իսկ փայլուն սամովարը կարծես ավելի զարդ էր և նորափեսայի նման ուռած-փքված նայում էր:

Երկար կլինի պատմել մեր զրույցը, որ սկսվեց, ինչպես սկսվում է պարզ զրույցը. թեոի Դավոն հայտնեց, որ հենց նույն օրը նրա առաջարկով կոլխոզի ակտիվի խորհրդակցութունը որոշել է կառուցել ձիերի նոր գոմ:

— Էլ ո՞նց ես:

— Գոհութուն,— և հաստ մատներով սեղանի վրա հավաքում էր հացի փշրանքները: Միշտ անհանգիստ են նրա ձեռքերը, միշտ ինչ-որ մի բան է անում. ահա հավաքեց հացի փշրանքները և սկսեց հարդարել սփռոցի խճճված ծոպերը:

Նա պատմում է այն, ինչ արդեն հայտնի է, ինչ որ վկայում են նրա տունը, տան իրերը, տանեցիները, նրանց հագուստը, նրա թոռները,

և վերջապես իր՝ թեոի Դավոյի անվրդով ու գոհ դեմքը, նրա զրույցի խաղաղ ընթացքը:

Պատահե՞լ է ձեզ ձմռան բուքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ ձյունախառն բուքը ծածկում է բոլոր ճանապարհները, ձյունի փաթիլները սուր ավազների նման ծեծում են ձեր դեմքը, սառչում է ձեր շունը և ահա թվում է, որ այլևս փրկութեան ուղի չկա, փրկութեան ուղի՝ այդ խավար գիշերը, երբ ոռնում է բուքը և ահա հանկարծ ցուլում է մի վիթխարի կրակ. դժվարութեամբ հասնում եք կրակին, և երբ արդեն տաքացել են ձեր ձեռքերն ու մարմինը, երբ հնարավոր մահը դառնում է անցյալ, իսկ փրկութունը՝ հրաշք, կրակի մոտ ուրիշներին հանդարտ ձայնով պատմում եք այն ուղիների մասին, որտեղ խավար էր և ոռնում էր մահվան բուքը: Ահա այդպես իբրև մի մարդ, որ հասնում է ապահովութեան ափը, թեոի Դավոն պատմեց իր և իր նմանների կյանքը: Նրանք և նրանց պապերը այդպիսի տուն չեն ունեցել, նրանք ապրել են մի մութ երկրում, մրոտ տների թոնրածխի մեջ: Նրանք ունեին եղեգնյա խսիր, որ փողում էին օջախի առաջ և ամբողջ գերդաստանը պառկում էր խսիրի վրա, ինչպես քարայրի գազանը շոր տերևների վրա: Եվ նույնիսկ այդ կյանքը շատ եղավ նրանց համար, և ինչպես կրակվող եղեգնուտից փախչող թռչուններ, նրանք հեռացան իրենց բարձր քարափներից և քարափների խեղճ տներից:

Երբեիցե մի գրիչ կպատմի թեոի Դավոյի կյանքը և այդ գրիչը շատ կատնի հերոսութուններ նրա կյանքում: Եվ նա կզարմանա, թե ինչպե՞ս է, որ բոլոր պատուհասների ընթացքում չի անհետացել թեոի Դավոյի զարմը: Բարձր ոգևորութուն կհոսի նրա երակներում, երբ այդ պատմիչն իր պատմութունը հասցնի մինչև այն օրը, երբ իրար հետ միացան տասներկու ծուխ և այս հողերի վրա վառեցին նոր կյանքի կրակները և առաջին տասներկուսի հետ թեոի Դավոն լսեց համայնական կյանքի կոչը:

— Իսկ ի՞նչ ես անելու այն ավելցուկը, որ ունես...

Այստեղ մեր զրույցին խառնվեցին և կանայք՝ թեոի Դավոյի կինը և նրա հարսը, այն թուխ մանուկների մայրը, որի կանացի մատները քնքշութուն էին տվել Դավոյի կառուցած տան հաստ պատուհաններին և պատերին: Երևաց, որ կանայք տարբեր կարծիքի են ավելցուկ ցորենի մյուս մթերքների օգտագործման մասին. նրանք պահանջում էին «կարի մեքենա» և «կռավաթ», իսկ հարսը՝ նույնիսկ պատեֆոն: Այնինչ թեոի Դավոն հակառակ է մտածում. նա կամենում է իր նոր տան կողքին Կառուցել մի ավելի ընդարձակ սենյակ, գետնից բարձր, որ ներքևը

լինի մառան, իսկ կտուրի վրա ամառվա շարժախը: Եվ երբ պատրաստ կլինի այդ սենյակը, այն ժամանակ նա կգնի երկաթյա մահճակալ: Նրա թոռները գլոր-մլոր փաթաթվեցին պապին, կարծես այդ եղանակով հայտնեցին, որ իրենք չեն ուզում ոչ խոր մառան և ոչ երկաթե մահճակալ, այլ միայն ուզում են, որ միշտ ունենան այդպիսի պապ, բարձրանան նրա ուսերի վրա, գլորվեն նրա գոգում և պապը նրանց զարմանալի պատմություններ պատմի:

Ճրագները վառվեցին:

Երբ սեղանի արկղից հարսը լուցկին հանեց, իմ աչքին ընկավ էլեկտրալարի կապոցը, կոճակները, դեղին պատրոնը և նույնիսկ մի էլեկտրալամպ:

— Ինչո՞ւ ես հավաքել, քեռի Դավո:

— Հաբա մեզ լուս կիտա Սիմիստրոն...

Սիմիստրոն, Ցեմստոյը, Ցեմշինը...

Քեռի Դավոյի պատուհանից երևում էր հայկական հին գյուղին օտարոտի պեյզաժ: Դիմացի բլուրների ստորոտում թարթում էին բազմաթիվ ճրագներ, բլուրների վրա երևում էին ավելի զորեղ կրակներ: Քվում էր, թե ամբողջ դաշտում փռվել է արդյունաբերական մի մեծ քաղաք և նրա բազմաթիվ կրակները վառվում են գիշերային մթության մեջ: Պատուհանից նայում էին այդ հոյակապ տեսարանին, իսկ քեռի Դավոն պատմում էր, որ գործարանի շաղափին քիչ քրտինք չեն խառնել և իրենք. նաև ինքը, և ահա այդ վաստակի փոխարեն «Սիմիստրոն» նրանց լույս է խոստացել:

— Է, բարով մնաս, քեռի Դավո:

— Բարով, բարով տեսանք:

Քակից ավելի փառահեղ էր Ցեմշինը: Քեռի Դավոյի տան պատուհանից երևում էին միայն տների մի մասը և բլուրները, բայց չէր երևում վիթխարի ծխնելույզը, որից թանձր ծուխը բարդ-բարդ բարձրանում էր. Լսվում էին պայթյուններ և խուլ աղմուկ. երևի վազոնետների մեջ լցնում էին կրաքար:

Գյուղի նոր թաղով դառնում էի տուն: Երկու կողմը միանման և մաքուր տներ էին և յուրաքանչյուր տան զույգ պատուհանից լույսի բարակ շերտ էր ընկել նոր փողոցի վրա: Եվ ինչպես մի նետ, այդ փողոցը ձգվում էր դեպի եղեգնուտը և Զույգ լեռը կարծես փողոցի ծայրն էր:

Մուգ-մանիշակագույն շղարշ էր նստել լեռան լանջերին և նրանց ստորոտներն ընկզմվել էին շղարշի խավարի ծալքերում: Բայց այնքան սպիտակ էր լեռան գագաթը, որ նույնիսկ այդ մուգ շղարշի միջից ցուլում

էր նրա սպիտակությունը, ինչպես անարտու մարմինը՝ թափանցիկ քողի միջից: Ոսկեղեն լուսինը, որ արևի նման էր, բայց առանց ճառագայթների,—լուսինը դողողալով իջնում էր խոր անդունդի վրա: Այն կողմերում հովիվները հրդեհել էին եղեգնուտը և թվում էր, թե ծով է բռնկվել: Այրվող եղեգնուտից բաղերը կանչելով էր և պտտվում էին իրենց կրակվող բների վրա: Քամին բարձրանում էր և այրվող եղեգնի ու խավարի մեջ նրանք նման էին հրաթև թռչունների: Լեռը բարձր էր բոլորից և նույնիսկ այդ հրդեհվող ծովը չէր լուսավորում նրա խավար լանջերը:

Մի տնից լսվեցին խուլ ձայներ. կարծես բազմաթիվ կանայք միաժամանակ և խմբով ասացին նույն բանը: Պատուհանից երևաց սենյակի ներսը, որ հիշեցնում էր քեռի Դավոյի տունը. միայն շկային երեխաներ և տղամարդիկ: Ութը-տասը գեղջկուհիներ հասարակ սեղանի շուրջը բոլոր և տղամարդիկ: Ութը-տասը գեղջկուհիներ հասարակ սեղանի շուրջը բոլոր նստել էին և երբ Մարինան բարձրացնում էր ձեռքը, նրանք խմբով ընթերցում էին: Մեկը նույնիսկ մատը շարժում էր տողերի հետ, ինչպես դպրոցական երեխա.

— Մեր կոմունան վար կանի...

Եվ խուլ դադաջին այդ բառերը, ինչպես բազմաթիվ սրբազան երգումը, երբ ծովի նման ծփում է այդ բազմաթիվներ, նրանց քայլերից թնդում է գետինը, հրդեհ է բռնկվել նրանց հոգիներում և հողմը կրակին է մատնել հին եղեգնուտները, և տիղմը, և թունավոր ճահիճը, հուրը խանձում է ճահիճների գեռուններին, կրակի լեզվակները ճեղքում են դարավոր խավարը և կարիքից ազատազրկված մարդը ճախրում է որպես հպարտ բազն:

ԻՎԱՆ ԲԵՅԸ

Գաժառական մի քաղաք. լայն և ուղիղ փողոցներ, կանաչ խոտ մայթերի վրա, տների առաջ բոստաններ և բարձր, ստվերախիտ ծառեր, որոնց շվաքի տակ իրիկվա հովին նստում են հարևան կանայք, զրուցում, մինչև նախրը հանդից գա, կիթ անեն, թեյ գցեն ու թեյից հետո խաղան նարգի, հետո՝ խոր քուն, մինչև լուսաբաց, մինչև նոր կիթ:

Մի քաղաք, ուր այսօր երեկվա պես է, վաղն էլ դժվար թե մի բան լինի: Մի խուլ անկյուն, ուր ավտո տարին մի անգամ է գալիս, փողոցներում մարդ էլ չկա, որ անցնելիս դիպչես:

Ընն ու արձակ, տան կարած վերմակի պես, իրա քեֆին քաշվել է սարերի հետև, միտք էլ շունի մեծ քաղաքին միանալու: Զարթնում է արևի հետ, մի քիչ շարժվում և երեկոյան նարդուց հետո քուն մտնում:

Այդ փոքր քաղաքում մի խուլ փողոց... տասներկու տուն: Իրար լավ գիտեն, հարևանի աբլորն էլ են ճանաչում ու գիտեն, թե դրկիցն այսօր ճաշին ինչ է եփել, կամ ինչպես երեկ նրանց տանը մի բաժակ ընկավ, կոտրվեց:

Այդ խուլ փողոցում՝ դարձյալ կանաչ խոտ, ցածիկ տներ, պատերի տակ բանջար վայրի, ցերեկվա տոթին հաճելի շվաքարան՝ նախրից փախած հորթերի համար:

Մի պատյան, որի մեջ քաշվում է խխունջը, հենց որ անդուրեկան մի ինչ է շոշափում:

Իվան բեյի տունը այդ խուլ փողոցի տներից մինն է: Տան այգին է, փողոցից քարե պատով բաժանված: Եվ ամեն տարի այգում ու բոստանում փարթամորեն հասնում են արևածաղիկն ու գլուխ սոխը, խնձորն ու սերկևիլը, վայրի խաղողի ճյուղերը, շղերի պես, փաթաթվում են պատին, կախվում փողոցի վրա:

Ամռան զով երեկոյան Իվան բեյը սիրում էր նստել դարբասի առաջ, քարի վրա և թագբեհի հատիկների հետ խաղալ, մինչև որ տեից ձեն տալին, թե սամովարը սառչում է կամ մի հարևան գար, Իվան բեյի հետ նարդի խաղար:

Շեյ գիտի ժամանակ: Ասես երազ էր, իսկի շեր եզել: Ի՛նչ մարդիկ էին գալիս Իվան բեյի տունը, նրա այգում ինչ քեֆեր են արել, քանի պրիստավ է լեզգինկա պարել՝ խանչալով կամ գինու շիշը գլխին:

Իվան բեյի այգում մի տանձենի կա, բունը ճեղքված: Տարիների ընթացքում այդ ճեղքվածի շուրջը շուրջը ուռել է, հաստացել նեգրի պուշի պես և սպի կազմել:

Երմուղով պրիստավն էր, թրով ծառը ճղեց,—կասեր Իվան բեյը ու գանդաղ, ծերի դողողոջ ձայնով, ծոր տալով կպատմեր, թե Երմուղով պրիստավն ու՞ր շուն էր պահում, լավ որսկան էր, կնիկն էլ թաթար էր, համեղ խմորեղեն էր պատրաստում:

Ներիք էր հիշողության տուտը բացվեր. կծիկը վերջ շուներ: Ետ կտար, ամեն մի հանգույցի մի պատմություն կաներ ու գլուխը կերերար, աչքերում հին օրերի կարոտը կփայլեր մեղմ, լուսաբացին հալվող աստղի պես:

Տունն էլ էր հին: Սանդուղքի գերանները փտել էին, տախտակները տեղ-տեղ վայր թափել, ինչպես Իվան բեյի ատամները ժանգոտ, տան սյուների վրա տեղ-տեղ բորբոսը բույն էր դրել:

Սանդուղքով բարձրանալը դժվար էր: Իվան բեյի ոտքերում առաջվա ուժն էլ չկար:

Շին տանը երկուսով էին ապրում՝ ինքը և պառավ կինը, որ միշտ թոնթորում էր իր վիճակից, ամեն օր ամուսնու երեսով էր տալիս, թե ինչ է շաքարավազ չի բերում, որ ինքը մուրաբա եփի: Ցավն ավելի էր շատանում, երբ պահարանի դարակների վրա դարսած պնակներն ու մուրաբի դատարկ ամաններն էր տեսնում:

Մաղկում էր կեռասը, բալը, կարմրին էր տալիս կեռասը, հետո բալն էր սեանում, իսկ իրենք կարոտ էին մնում մուրաբի: Հարևանի ժիբ մանուկ-

ներն էին պլոկում Իվան բեյի ընդարձակ այգին, օգտվում նրա բարի-
ներից և գրպան ու ծոց պտուղներով լցնում, ծլկվում մի ապահով տեղ
Սրբեմն էլ ճղակոտոր էին անում մի ծառ, պտուղ քաղում, իսկ ճյուղը
թողնում ընկած, մորթած անասունի պես:

Իվան բեյը տուն էր գալիս, կինը լացակուլած կոտրած ճյուղն էր
ցույց տալիս և ասում, որ գանգատ տա... Իվան բեյը նայում էր, երերում
գլուխը, սուս անում:

Հե՛յ գիտի ժամա՛նակ: Առաջ ծիտն իր թևով կվախենար Իվան բեյի
ծառից մի կենաս կտցելու:

Այսպես էր մտածում Իվան բեյը, մտքի ծովն ընկնում, լող տալիս
գեպի ետ, տասնյակ տարիներ ետ, երբ պրիստավի գրագիր էր, կանցի-
լարի շեմքով ներս մտնելիս գետնին պազած գլուղացիք պիտի ոտքի
կանգնեին, մինչև գոտկատեղ խոնարհ գլուխ տային:

Իսկ ինքը հազում էր խրոխտ, աչքերն աչ ու ձախ ման ածում, տեսի
թե ի՞նչ նոր մարդ է եկել, կամ ո՞վ է երեկվա խոսք տված փեշքեղ
բերել: Նայում էր ու կանցելարի դուռը բաց անելիս, դռան շեմքին ար-
ձանի պես կանգնած ծառային ամեն օր հարց անում.

— Ակո՛փ, օթաղս լավ ես սրբե՞լ, տես հա՛...

Ու մատը թափ էր տալիս: Իսկ Հակոբը մեջքն ավելի էր դեմ անում
պատին, ձգվում, վիզը երկարում հնդուհավի պես և աչքերը առաստաղի
զցելով ասում.

— Հրամե՛լ ես, աղա, քո ուզածն ա...

Այդ էր վերհիշում Իվան բեյը դարբասի քարին նստած ժամանակ
Քաղբեհի հատիկների միալար ձայները ասես զանգերի ծանոթ դողանդներ
էին՝ հարազա՛տ ու հին:

Փողոցում, իրիկվա դեմ քամին էր սուրում մեղմ, իրար էին քսվում
անրեններ վայրի խաղողի. մի հաճելի խոշոր կար իրիկվա կիսամութին
Իվան բեյը կիսախուփ էր անում աչքերը, այդ ձայնին ունկնդրում:

Այնքան մոտիկ, այնպես հարազատ էին թվում օրերը, որ անցան
Սրազ էր, ասես չէր եղել...

*
*

— Իվա՛ն, գե ե՛ի էլի, սամավարը սառավ,— ձայն էր տալիս կինը
ներսից:

Իվան բեյը անբաշտ վեր էր կենում տեղից, Քաղբեհը պահում գրպա-
նում և դարբասով ներս մտնում:

Ամեն իրիկուն դարբասի երկաթ կապն ինքն էր գցում ու մի քար էլ դռան
դեմ անում: Առաջ հեշտ էր քարը տեղից ժած տալ. կոներում ուժ կար,
տանը ծառա կար:

Պարբասն ամրացնելուց հետո պարտեզի դռան պիտի նայեր ու տես-
ներ, թե պառավը չի՞ մոռացել հավարունը ծածկել: Հետո տնքալով
բարձրանում էր գերանները փտած սանդուղքով, նստում սեղանի
առաջ և դեղնած, կաշին կուշ եկած ձեռքերով պինդ բռնում տաք բաժակը:

Իվան բեյը մի փոքրիկ կտոր շաքար էր դնում լեզվի վրա և ծպաց-
նելով թեյը կում կում խմում, կում անելիս գլուխը բարձրացնում, իջեց-
նում:

Իսկ կինը միշտ թոնթորում էր, թե էլ առաջվա թեյը չկա, կամ միսն
է լըար, կամ էլի մուրաբի պատմութունն անում:

Քեյից հետո Իվան բեյը սովորութուն ուներ հին ժուռնալներ նայելու
ծվանպատճառ ակնոցը պիտի դներ քթի ծերին ու պատկերին նայեր ակ-
նոցի վրայից:

— Այ թե հա՛,— ասում էր երբեմն, նրա փոքրիկ, ջրակալած աչքերը
ժպտում էին, մատը դողալով դնում էր նկարի վրա և պառավին ցույց
տալիս այն, ինչ հազար անգամ տեսել էին միասին: Հետո շրջում էր
նկարը, մի ուրիշը բաց անում և էլի ուրախացած ասում.

— Ա պառավ, մի տես է՛...

Հետո պառավը ժուռնալն իր տեղն էր դնում, իսկ Իվան բեյը հան-
վում էր քնելու: Բայց առաջվա քունն էլ չկար. անկողնում տապակ-տա-
պակ էր գալիս, օֆ անում, մի կողքից մյուսը դառնում ու հանկարծ, միտը
մի բան ընկնելուց, պառավին զարթնեցնում էր, ասում թե.

— Էգուց իմ պալտոնիս էն կոճակը կարի, այ պառավ:

Իվան բեյի վերարկուն...

Օձիբը մաշված, վրան մի մատ շորացած քրտինք ու կեզտ, որ փայ-
լում էր մոմած հատակի պես: Իվան բեյը վերարկուն ուսին էր գցում,
կամ մի թեք հագնում, իսկ մյուս ազատ թևով վերարկուի տակ էլի թազ-
բեհի հատիկները գլորում:

Այդ տեսքով թեք շարդած օագի էր նման Իվան բեյը, մի պառավ
ուտքի, որ շնչնալենն է դնում ու կախ ընկած թեք գետնի վրայով քարշ
տալիս:

Փռան տարուց ավել էր, որ այդ վերարկուն նրա ուսին էր: Պարզև
էր ստացել իր վաղեմի ծանոթից: Այնքան պսպղան կոճակ կար վրան և
այնպես լավ էր սազում այդ վերարկուն Իվան բեյին:

Օրը թագավորը գահընկեց եղավ, Իվան բեյը գոմի մի անկյունում
թաղեց արքայական նկարները և իր պղնձյա կոճակներն էլ մի ամանի
մեջ լցրեց ու թաղեց նկարների հետ:

Այն օրվանից նա սովորույթ էր դարձրել վերարկուի մի թևը հագնել,
իսկ մյուս ձեռքով վերարկուի տակ թագբեհի հատիկների հետ խաղալու:



Իվան բեյը ծառայում էր:

Ո՞վ էր, խղճացել էր նրան և տեղ տվել մի հիմնարկի արխիվում
Նրա պաշտոնն էր արխիվը կանոնավոր պահել:

Հիմնարկում առավոտյան նրանից կանուխ եկող չկար: Ամեն առ-
վոտ նա իր ձեռքով պիտի սրբեր թանաքամանը, գրչածայրը մաքրի
թղթով, ապա շտկեր աթոռն ու փալասի կտորը, որ աթոռի վրա էր դնում,
տեղն ավելի փափուկ լինելու համար:

Հետո սկսվում էր Իվան բեյի աշխատանքը: Եթե մեկը նայեր նրան,
անշուշտ կմտածեր, թե Իվան բեյը սովորական մի գործավար չէ, որ
համարագրում է արխիվը հին, այլ ուսյալ գիտնական, որ դեղնած, մզու-
տած թղթերի մեջ փնտրում է վաղուց մոռացված վավերագրեր:

Իվան բեյի ձեռագիրը...

Ասես ավետարան արտագրող, մաքրակրոն դպիրի գիր էր. դպիր
որ դարեր առաջ խուցի կիսախավարում արտագրել է, ժողկանկարք
համոզված, որ գալ սերունդը փոշեպատ մատյանի մեջ որոնելու է գա-
րերի մոռացված անցուդարձը:

Սակայն Իվան բեյը գալ սերունդի համար չէր սովորել գեղեցիկ և
վայելուչ գրել: Տասնյակ տարիների ընթացքում նա այն համոզման էր
եկել, որ վայելուչ դիմումը շատ ավելի ուժ ունի, քան նույն դիմումը մի
քիչ անփութ գրած:

Ամբողջ քաղաքում Իվան բեյի ձեռագիրը հայտնի էր: Ինքն էլ միշտ
տիրում էր պատմել, թե ինչպես բարձրաստիճան մի պաշտոնյա մեջ
էր շփել և խոստացել պարգև՝ գեղեցիկ գրելու համար:

— Առաջվա գիրն էլ չկա, այ կնիկ,— գանգատվում էր Իվան բեյը:—
ձեռքս հիմա դողում է, ես էլ չեմ իմ գրածին հավան:

Աշխատանքի ժամանակ, երբ հին թղթերն էր համարագրում, Իվան
բեյը երբեմն ինքն իրեն ժպտում էր, ակնոցը շտկում և թուղթն ավելի
մոտեցնում աչքերին: Դողում էին ձեռքերը, աշնան տերևի պես երկրում

էր թուղթը հին, իսկ Իվան բեյի գլուխը հանդարտ շարժումով դառնում,
էր մեկ աչք, մեկ ձախ:

Ժպտում էր Իվան բեյը երանության ժպիտով, աչքերը փայլում էին
ակնոցի ճաքած ապակու հետև, միտքը թե առած թռչում էր դեպի ետ,
երբ Իվան բեյի վերարկուն դեռ նոր էր, կոճակները պղնձափայլ, ձայնը
խրոխտ:

Նա ժպտում էր, որովհետև արխիվի թուղթը հին հանկարծ հիշեցնում
էր վաղուց մոռացված մի պատմություն: Նայում էր ստորագրության,
թվականին, մի պահ դեն դնում թուղթը և թողնում, որ մտքերը տաշեղի
պես լողան հիշողության ծովում:

Եվ այդ օրը նա ուրախ էր տուն դառնում, ճաշի ժամանակ էլ պատ-
մում պատավին:

— Միտդ է, էն տարին մի ուկրոն եկավ... Դու էլ ասում էիր, թե
ինչ աղոթասեր մարդ ա...

— Էն, որ արդ խմելուց առաջ խաչակնքում էր երեսին,— ավելաց-
նում էր կինը և հիշողության ուժ տալիս: Ու նրա մտքի առաջ, քարվանի
պես անցնում էին ծանոթ դեմքեր՝ կոկարդով, մեծ բեղերով, ակնոցավոր
և առանց ակնոց, քեֆ սիրող, որսկան, ձիարշավի սիրահար: Պատավի
մաշված միտքը կառչում էր մեկին, փոշին թափ տալիս, մոտեցնում աչ-
քերին, ավելի լավ զննում:

— Էն, որ մի գիշեր մեր բալկոնից քիչ մնաց ընկներ...

— Հա՛, հա՛, խմել էր, ուշուց էր տալիս օրհնածը...— ասում էր
Իվան բեյը և երանության ժպիտը դեմքին խաղում էր, մայր մտնող արևի
պես:

Պատմում էր Իվան բեյը, որ այդ օրը արխիվի թղթերի մեջ նրա
գրածն է կարդացել, ուղղած գավառապետին, մի թուրքի տուգանելու
մասին:

— Գրագիրն էլ էն ժամանակ Սարգիս աղան էր:

Հետո գրույցը խորանում էր, և եթե մի բան նրան շափափեցներ, Իվան
բեյը չէր էլ նկատի, որ խոսում է:

Այդպիսի դեպքերում կինն էր նրան սթափեցնում, էլի դժգոհում, որ
մեծ հետ ոսկոր շատ են տվել, կամ թե հավարունի տախտակը կտորվել
ե պետք է նորոգել:

Իվան բեյի մտքի թելը կտրվում էր, չքանում էր հինը, անիմաստ
հայացքով նայում էր ապուրին՝ կարծես ուզում էր ստուգի, թե իրոք մտի
հեղ օսկոր շատ են դրել: Մի քանի անգամ գդալով ապուրն էր խառնում
և մի բան տեսած լինելու համար դառնում էր կնոջը:

— Ա կնիկ, կերակուրն էօօր անի է...

Սակայն այդ շէր մտքինը: Այդ ավելորդ խոսք էր, հենց այնպես:

Մտայլվում էր Իվան բնի դեմքը, ասես թունդ հարբելուց հետո քնկ չէր խոր, ինչպես առաջ, և զարթնել թթված դեմքով:

Առաջ վա՛յ եթե մեկն այդ ժամանակ նրան խնդրեք աներ: Քիթ ու մոտիլը կծոմոներ, կխոսեր կոշտ ու բարձրաձայն, իսկ դիմացինը՝ մի պուզացի անօշ, դիտաբաց, գգաղը թևի տակ, կկռանար, գլուխ կտար ձեռքերը կրծքին, ինչպես պառավ կանայք են կանգնում գլուղի եկեղեցու սեացած խաչքարի առաջ:

Մտայլվում էր դեմքը և էլի հին հարցն էր տալիս իրեն, ծանոթ հարցը, որ կրծում էր նրա ուղեղը, ինչպես որդն է կրծում տերևը կաղամարի:

Ինչպես եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՛ր գնացին երբանիկ օրերը երբեմնի, եթե սանգուղում զրնգում էր սսկին, ամեն օր գառ ու յուղ էր ընծա ստանում գլուղներից, քայլերը հաստատ էին, կեցվածքը հպարտ:

Ի՞նչպես եղավ... Հարցնում էր, ճգնում շողկապել երբեմնին՝ դառ ու յուղով, այսօրվա ոսկրոտ մսի հետ, բայց թելը կտրվում էր, ծայրերը ձեռքից բաց ընկնում:

Եվ Իվան բնիին այնպես էր թվում, թե երբեմնին է երազ, բայց միտ էր բերում արխիվում տեսած թուղթը դեղնած, մզոտած ու հաշիվ չէր կարողանում տալ ինքն իրեն, թե ինչու առաջ, այն լի օրերին իբ մտքով երբեք չէր անցնում այսօրվա օրը:

Մի կասկած օձի պես աննկատ սողում էր, սրտի մեջ կծիկ դառնում, մի ծանր կասկած, թե խանգարված է միտքը իր, մաշվել է մեքենան, շարժումները անկանոն են, ընդհատ: Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը սառել է ձյունի տակ մնացած դղումի պես, էլ երբեք չպիտի իմանա, թե ինչ է բերում օրը վաղվա:

Սոսկում էր Իվան բնիը իր մտքից ահավոր, կծկվում էր, կուշ գալիս ինչպես հավը հավաքից հետո, առնում էր ուսին հնամաշ վերաբիտն, գլուխը կախում էր կրծքին, աչքերը կիսախուռի անում և ակնապիշ նայում մի կետի:

Այդ օրերին նա հնամաշ ժուռնալին էլ չէր նայում:



— Մամա՛, ավթանաբիլ...

Եվ փոքրիկ ու փայլուն ավտոն, փափուկ անիվների վրա մի արև առավոտ սահեց քաղաքի փողոցով, կանչեց գիւ և կանչեց անսովոր: Մամա՛

չվաքի տակ նստած հորթերը կիտ արին, պոչը կեռ բարձրացրած փախան քաղաքի փողոցներով:

Ավտոն դեսուդեն վազեց, նորից կանչեց և ոչ ոք գարածի դռները չբացեց, որովհետև գավառական քաղաքում գարած դեռ չկա: Նորից ետ եկավ, կանգնեց ծառի շվաքի տակ, ուր հորթերն էին նստած, փրթիփրթաց գզոճ ու շունչը կտրեց:

Ասես ուում էր, որ հեռվից մեկը շարտեց փոքրիկ քաղաքի վրա: Թումբ պայթեց և աղմուկի անսովոր ականջները գավառական ցնցում զգացին, պատուհանի վարագույրները ետ քաշեցին սահող ավտոն տեսնելու, մանուկները դուրս թափվեցին և ճղրտոցով ուրախ՝ ավտոնի հետևից սկսեցին վազվզել:

— Մամա՛, ավթանաբիլը...

Կարմրաթուշ մի մանուկ էր, առավոտվա մածոնը շուրթերին, ոտաբորիկ ու գլխաբաց, որ մոր փեշից բռնած փողոց էր քաշում և կանչում:

Իսկ մաման, որ տասը ծին է անցրել և լիմոնի սմբած կճեպ դարձել, մաման, որ իր օրում ավտոն դեռ տեսած չէր, շատ էլ չէր վազում, թանովն էր խառնում:

— Ավթանաբիլը չի փախչի, կտեսնենք...

Մի մեծ դիպված էր ավտոնի գալը: Իզուր էր շոֆերը մանուկներին դնելը: Մի քիչ հետո նրանց խիտ շարքերը օղակաձև սեղմվում էին ավտոնի շուրջը, իսկ մի քանիսն էլ մատով դիպչում էին ավտոնին ու էլի ետ փախչում:

Մի մեծ դիպված էր ավտոնի գալը: Խոսում էին հազար ու մի աասպկ, բերն-բերան լուրեր էին պտտում և այդ ամենը ավտոնի շուրջը, որ քնկ էր ծառի շվաքի տակ:

Ավելի շատ խոսք ու զրույց կար գրասենյակներում, ուր գրագիրը տեղացի ալարկոտ շարժումով շորտորդ անգամ նույն գրովթյունն էր մուծում մտից մատյան և նոր թուղթ ծալում ուղարկելու «համաձայն մակազրովյան»:

Մանր շահերի, բամբասանքի, քարացած ըմբռնումի ի՛նչ մեծ աղբալույտ կար զանգերում երբեմնի սրատամ գայլերի, որոնք թև առան խուկույն, շարժվեցին և պատի ճեղքում սմբած միկկի պես արյան հոտ առանչ կենդանացան:

Դող, ներքին դող զգացին նրանք, ավբեր ճահճուտում այդ խուկ գամեղի փնչոցով պառկել էին ապահով և ցեցի պես կրծում էին հիմքերը նոր շինություն:

Մի պահեստապետ, ստորակետի պես կախ բեղերով, որ ամսավերջի

զեկուցման մեջ գրում էր, թե «չորացել է այսքան փութ, մկները կերել են այսքան փութ և թափվել է այսքան», մի գիրուկ նախկին, որ հագիվ էր մազլցել հիմնարկի պատից և տաքուկ անկյուն պատրաստել, ինչպես նապաստակը ձմեռելուց առաջ, մի հաշվապահ, որ մայր մատյանի լուսանցքում սովորույթ ուներ «Տիգրանին տվի հիսուն կոպեկ», «բրինձի համար առա մի մանեթ», «ևս առա մի մանեթ», «ձեռաց տվի Ն-ին մի մանեթ» և այլն.— պահեստապետը բեղավոր, նախկինը գիրուկ, հաշվապահը «ևս տվի» խառնվել էին իրար: Միտ էր, որ տրոփում էր, մտքեր էին, որ խառնվում էին: Երեկ էլ արև էր, մյուս օրն էլ... բայց ոչ մի ավտո չեկավ և ով էր սպասում, թե պիտի գան:

Ավտոն երեք հոգու բերավ, երեք սովորական մարդու, աչք ու ունքով, շարժ ու ձևով հասարակ: Նրանցից մեկը, երբ իջավ ավտոյից, շուրջ-կալ արած մանուկներից մեկին առավ և նստեցրեց կաշվե բարձին:

Այդ էլ տարածվեց քաղաքում ռադիոյից էլ արագ, հավելումով ձրի, որ երեխին գրկողը գթառատ է, քաղցրաբարո:



Իվան բեյն էլ իմացավ, որ ավտոն մարդիկ է բերել:
Մտան էր, հիմնարկի ծառան, որ կուլան ջրով լի դրեց սեղանի վրա և Իվան բեյին ասաց շշուկով.

— Քննիչներ են եկել...
Իվան բեյը նախ չհասկացավ, նայեց ծառային, որ ժպտում էր խորամանկ, ակնոցը շտկեց ու նորից հարցրեց:

Լուրը նրա վրա սկզբում չազդեց: Նա շարունակեց համարազրել և դարսել թղթերն ըստ «գործի», բայց հանկարծ մտաբերեց, որ քննիչներ են եկել:

Նա փորձեց վանել այդ միտքը, նույնիսկ ժպտաց, որովհետև էլի աչքովն ընկավ մի ծանոթ գիր, բայց այս անգամ ժպիտը շուտ հալվեց և դեմքի վրա քարացավ մի բութ արտահայտություն:

Նոր միտքը էլի եկավ, աներես ճանճի պես թառեց գլխի կատարի վրա և էլ պոկ չեկավ, տիզի պես կառչեց մորթուն:

Գրեխ սխալվեց, ուրիշ երես պիտի բաց աներ: Այդ ավելի շփոթեց նրան, ձեռքը շփեց ճակատին և շփեց լորձունքի պես սառը քրտինքը ճակատի: Իվան բեյը վեր կացավ, աթոռը շտկեց, փալասի կտորն ավելի սղղեց, գրիչն էլի ձեռքն առավ: Նա զգաց, որ քիմքը շորանում է, լեզուն

չաբժեց բերանում, շրթունքները շարժեց, բայց դարձյալ չկարողացավ հավաքել իրեն:

Այդ օրը նա չորս գրություն միայն համարագրեց: Ամեն մի գրության վրա ժամերով կախում էր գլուխը, թերթում, իբր թե կարդում է (նա չէր ուզում ընկերներին իր հուզմունքը մատնել) և ապա դեն դնում:

Նույն օրը, ճաշից առաջ դուռը բացվեց և նորեկ երեք հոգին ներս մտան, բարեկեցին և անցան վարիչի մոտ: Իվան բեյը փորձեց ոտի կանգնել, բայց չկարողացավ, ծնկները դողացին և նստեց:

Երեք հոգուց և ոչ մեկը չտեսավ Իվան բեյի ջրակալած աչքերը, որ ակնոցի ճաքած ապակիների հետևից նայում էին նրանց, մինչև դուռը ծածկեցին:

Փայտե վանդակների հետև, անկյունում, ուր ջրի կուլան էր և ավելը, նստել էր Իվան բեյը իր սեղանի առաջ, ուժը կորցրած թղթերի հետ, որպես թևը ջարդած թռչուն:

Տուն գնալուց առաջ տեղկոմը հայտարարեց, որ երեկոյան ժամը 6-ին բոլորը հավաքվեն:



Իվան բեյը շճաշեց էլ:
Նստել էր պատշգամբում, նայում էր բակին, ուր հավերն էին քուլուչ անում, բակում բուսած խնձորենուն, որ պտուղի ծանրությունից ճղերն էր կքել: Նայում էր, բայց միտքը բակից ու պարտեզից հեռու էր թռչում:

Երբ կինը հարցրեց նրան, թե ովքեր են եկողները, Իվան բեյը չկարողացավ իսկույն պատասխանել, նայեց կնոջը, կարկամեց և լեզուն թուրվելով պատասխան տվավ:

— Այ մարդ, վրադ գույն չկա,— ասավ կինը:— Հերվա մուրաբից մի քիչ կա, ուզում ես մուրաբով շայ...

Իվան բեյը ավելի երկյուղեց, մեջքն ասես ասեղներով ծակծակեցին: Հետո ինքն իրեն սիրտ տվավ, նույնիսկ ձեռքերը շփեց:

Հանկարծ որդուն մտաբերեց, միակ որդուն, որ փախել էր սպիտակների հետ և տարին մի նամակ էլ չէր գրում: Իվան բեյի սրտում հույսը փայլեց մի հատիկ շողի պես, հույսը տկար, թե լավ օրեր էլ կգան, որդին կդառնա ետ, կփոխվի աշխարհը, էլի հին ճամփով կերթա ջուրը առաջվա: Հույսը առկայծեց մի պահ, մարվող խարույկի պես, ջերմություն տվավ ու հանգավ:

Սառնութիւնն զգաց Իվան բեյը, մարմինը փշաքաղովել էր: Վերարկուն ուզեց, կոլովեց վերարկուի մեջ և անմիտ հայացքով էլի նայեց բակի խնձորենուն, կիսակարմիր խնձորենուն:

Մտածում էր. մտքերը ցրիվ ուստոստում էին, ինչպես ճնճողիկները ցանկապատի վրա. չէր կարողանում կապակցել իրար:

Ժողով պիտի լինի, գուցե հարց ու փորձ անեն, հին արածները երեսով տան, բանտարկեն, տանեն ուրիշ քաղաք, պաշտոնից արձակեն:

Ուրիշ քաղաք տանելու մասին մտածելիս քիչ մնաց լաց լինելու: Նա գլուխը թեքեց խոհանոցի կողմը, ուր կինը տնօրէնով սամավարն էր տաքացնում Իվան բեյին հերվա մուրաբով շայ տալու: Այդպես նայում է հորթը այն դռնակին, որով մայրը պիտի գա: Այդքան խեղճութիւն կար նրա հայացքում և այնպես թշվառ զգաց իրեն Իվան բեյը:

— Մի վեր կաց, բախշեն գնա, քամին տա, աչք ունքդ բացվի,— կինն էր ասաց Իվան բեյին,— Ի՞նչ ես միտք անում, տղադ սաղ լինի...

— Հե՛շ, ասում եմ տես ինչքան խնձոր կա ծառի վրա,— շփոթված ասաց Իվան բեյը և մտքում ավելացրեց,— ո՞վ է այսքանն ուտելու...

Եվ խարխուլ սանդուղքներով վար իջավ, մի քանի անիմաստ քայլեր արավ բակում ու մոտեցավ մառանի դռան: Սանդուղքով իջնելիս նա ուզում էր հավաքել կոտորած տախտակը տեսնել, բայց մառանի դռան մոտեցավ, դուռը թեթև հրեց ու ներս մտավ:

Ինքն էլ զարմացավ հանկարծ, թե ինչու է առանց ճրագ մառանը մտել, դատարկ մառանը, ուր գերանների վրա սարդերը ուստայն են հյուսել: Մի քիչ էլ կանգնեց ու մառանից դուրս եկավ:

Պարտեզի դուռը բանալիս նա հիշեց, որ մառանի աջ անկյան մոտ հողի տակ մի փոքրիկ տուփ է թաղել, միջին լուսանկարների՝ որդու և իր հին մեծավորների, էպոլետով ու շքանշանով մեծավորների, թղթադրամ և պղնձե կոճակների փայլուն: Նա մեկ էլ ուզեց ետ դառնա, բայց կինը վերից ձայն տվավ, թե.

— Էն քաղցր սալորից մի բուռ քաղի, շայի հետ լավ է լինում:

Իվան բեյը սալորենուն մոտեցավ, ցածիկ ճյուղից մի քանի հատ սալոր պոկեց: Հանկարծ աչքին ընկավ ծառը, բունը ճեղքած, որ Երմուլով պրիստավը թրով խփել էր: Սալորենին դեռ չկար այն ժամանակ, տեղը մի հին կոճղ էր:

Սազանդարը դրմբացնում էր դճուլ ու զուռնա, թոռ Աթան համ թա էր ածում, համ բլբուլի պես կլկլացնում, Երմուլովի կնիկն էլ նստել էր կոճղի վրա, քահ քահ ծիծաղում էր, իսկ մարդը գինու կուլան ձեռքին պարում էր կանաչի վրա:

Երմուլովի կինը կոացավ, թեքվեց Իվան բեյի վրա, քիչ էր մնում ընկնի, իսկ Իվան բեյը երբ ուզեց պահել նրան, տեսավ Երմուլովի կնոջ սպիտակ կուրծքը, ոնց որ ճերմակ խմորի երկու գունդ:

Պարեցին մինչև կես գիշեր, Երմուլովը բոլոր մին մեկնվել էր կանաչի վրա, իսկ Իվան բեյը ձիաճանճի պես պոկ չէր գալիս նրա կնոջից, բլբլացնում էր լեզվով և ուզում էր իրիկվա կիսամութին մի անգամ էլ տեսնել այն, ինչ պատահմամբ աչքին ընկավ:

Այդ նույն գիշեր Իվան բեյի կնիկը թոնթորաց, կոխվ սարքեց, չեկավ նրա մոտ: Եվ Իվան բեյը մենակ քնեց ընկուզենու լայնարձակ մահճակալի վրա:

— Սամոզարը սառավ, Իվան,— կանչեց կինը պատշգամբից:

Իվան բեյը վեր ելավ սանդուղքով խարխուլ, ձեռքին մի քանի սալոր: Եվ երբ կինը հարցրեց, թե ինչու քիչ է բերել, Իվան բեյը շփոթված պատասխանեց.

— Լավերը չկային...

Ժողովի մասին Իվան բեյը կնոջը ոչինչ չէր ասել: Գործից գալուց ուզեց ասի, բայց փոշմանեց: Կնիկ է, Ի՞նչ պիտի հասկանա ժողովից:

Թեյ խմելու ժամանակ, երբ կինը հերվա մուրաբան մեծ գալուով էր լցնում բաժակի մեջ, Իվան բեյի սիրտը կակղեց և նա որոշեց հայտնել:

— Ժամի 6-ին ժողով են մեզ կանչել էն նոր եկած քննիչները,— ասաց և ունքերի տակից հայացքն ուղղեց կնոջը, ասես ուզում էր խմանալ, թե լուրը նրա վրա ինչպես պիտի ազդի:

— Դե ասի կանչված ես էլի, դրա համար ես ախորժակ պահում,— պատասխանեց կինը:

Այդ միտքը հանկարծ հավանական թվաց նրան: Գուցե ժողով չէ, այլ ընթրիք: Առաջ ընդունված ձև էր. գուցե տեղկոմն էր սխալվում:

Բայց ներքին հրճվանքը կարճատև եղավ: Ընթրիք չպիտի լինել: Եթե լինել, ծառան կասեր Իվան բեյին:

— Երևի մի բան կա, որ... — և բաժակը թեյի ետ տվավ:

Ժամանակից շուտ նա պատրաստվեց ժողով գնալու:

— Այ կնիկ, ասում եմ պալտոս չհագնեմ, էն անտեր կոճակների տեղերը եթե եմ են,— ասաց նա գնալուց առաջ:

— Բան չկա, գնա, կմըսես առանց պալտո:

Եվ Իվան բեյը դուրս եկավ դուրսասից, վեցարկուն ուտեցին, մի թեղ կախ, ձեռքին թագրահը անքաժան:

Գեո ոչ ոք չէր եկել: Միայն ծառան էր ավուում:

— Ի՞նչ շուտ ես եկել, Իվան բեյ,—ասաց նա:

— Մի քիչ գործ ունեմ, եկել եմ վերջացնեմ,—պատասխանեց Իվան բեյը, իր սեղանին մոտեցավ, գզրոցը քաշեց, որ գրիչը հանի: Բայց ծառան չհավատաց և ժպտաց խորամանկ:

Քիչ հետո մեկ-մեկ սկսեցին հավաքվել: Վեցից անց էր, որ ցերեկվա պես դուռը բացվեց և վարիչի հետ միասին երեք հոգին ներս մտան:

Իվան բեյը նայեց նրանց, բայց նրանք դարձյալ շտեսան նրան, փայտե ցանկապատի հետևում, իր սեղանի առաջ:

Մերք հոգին առանձնացան մի սենյակում: Քիչ հետո նրանք կանչեցին տեղկոմի նախագահին և խնդրեցին մեկ-մեկ ներս կանչել հիմնարկի աշխատակիցներին:

Ամենից առաջ կանչեցին գլխավոր հաշվապահին: Տասը ըոպե շանցած նա դուրս եկավ, քափ քրտինքի մեջ, ասես բաղնիք էր գնացել: Գոռն առաջ սպասողները շրջապատեցին նրան: Գլխավոր հաշվապահը մի խոսք միայն ասեց.

— Խիստ են քննում, մինչև յոթը պորտը:

Ասաց ու հեռացավ:

Իվան բեյն էլ լսեց այդ: Ի՞նչ են հարցնելու իրեն, գիտե՞ն արդյոք: Քե ինչ է արել ինքը անցյալում, ի՞նչ պատասխան պիտի տա: Թիկնել էր պատին, մերթ մի ոտի վրա էր հենվում, մերթ՝ մյուս:

Հերթը Իվան բեյին հասավ: Տեղկոմի նախագահը դուռը բացեց և երբ Իվան բեյը ներս մտավ, վերարկուն ուսին, երեք զույգ աչքեր ժպիտով նայեցին նրան: Աթոռ առաջարկեցին:

— Ոչինչ, կկանգնեմ,—ասաց Իվան բեյը և նոր միայն զգաց, որ վերարկուն ավելորդ ծանրութուն է: Հանկարծ մեկը հարցրեց, թե ծեծե՞լ է գյուղացուն այնքան, որ նա հիվանդանա և անկողին մտնի: Հարցրեց և ուղիղ Իվան բեյի աչքերին նայեց:

Իվան բեյը կմկմաց, լեզուն կարծես սառել էր, չէր շարժվում: Հետո մի ուրիշը հարցրեց, թե քանի տարեկան է, և մինչև կպատասխանե՞ր, ակնոցը կուղղեր,—մյուսը, որ ամենից ջահելն էր, ասաց.

— Ազատ եք, կարող եք գնալ ձեր տուն և հանգստանալ:

Իվան բեյին կրճատեցին: Այդ մասին հայտնեցին նրան հենց նույն իրիկուն:

Նա չկարողացավ ոչինչ ասել և դանդաղ քայլերն ուղղեց դեպի տուն: Հեռվից նայողը կկարծեր, թե Իվան բեյը հարբած էր:

Ավտոն, որ գիշերը մնաց ծառի տակ, որովհետև զավառական քաղաքում դեռ գարած չկա, հաջորդ առավոտ նորից կանչեց զիլ, փրթփրթաց, ոնց որ ձին էր վրնջում հեծվորին սպասելիս և երբ երեք հոգին տեղավորվեցին ավտոյի մեջ, մեկ էլ կանչեց զիլ, մնաս բարով ասաց քաղաքին և փափուկ անիվների վրա սուրաց արագ:

Մանուկը կարմրաթուշ, որ առավոտյան մածուն էր ուտում, նորից կանչեց ուրախ.

— Մամա՛, ավթանաբիլը...

Ավտոյի առավոտյան կանչը Իվան բեյն էլ լսեց, ցնցվեց և մնաց անշարժ, քարացածի պես: Հեռացող ավտոն իր հետ անվերադարձ տարավ տանյակ տարիներին մի պատմութուն, հեղեղի պես ավերեց այն, ինչ տուրյա էր և հաստարմատ, որպես դարավոր կաղնի:

Իվան բեյը գիշերը չէր քնել:

Ժողովից տուն եկավ՝ գունատված, ջրատար: Մի քանի ժամում ասես ավելի էր ծերացել, կոացել: Պատմեց, ինչ ասել էին:

Պառավը փորձեց հուսադրել, նույնիսկ երեքի եկած ճամփան նզովեց և ավելացրեց.

— Հողեմ դրանց գլուխը, միշտ հո աշխարհն էս ճամփով չի գնալու: Բայց Իվան բեյի մոտ չազդեց այդ: Եթե սրտի խորքում, որպես ապահով թաքստոց, պահել էր մի միտք և առանձնության մեջ շոյել այն, թե աշխարհն այս ճամփով միշտ չի գնալու,—այժմ այդ միտքն էլ էր շարժվել, հալվել գարնան ձյունի պես:

Էլ ոչինչ չկա վաղվա համար, կտրվեց թելը այնքան սովորական օրերի:

Նստել էր Իվան բեյը անկողնի ծայրին, աչքերը հատել հատակին: Եվ միտք էլ չէր անում, որովհետև դատարկ էր ոչ միայն վաղը, այլ այսօր,

դատարկ էր և գանգի խոռոչում, սրտի մեջ, շկար մի շող անգամ, որ լուսավորեր խավարը թանձր:

Նստել էր և թազբեհի դեղին հատիկներն էր համարում:

Չքնեց մինչև լույս:

Մեկ մտածում էր գնալ, խնդրել, գուցե մեղքանան, բայց երբ հիշում էր երիտասարդին, որ ժպտալով հարցրեց, թե ինչպես է ծեծել մի գլուղացու...

Մտքի առաջ բացվեց մի էջը հին օրերի: Սեպտեմբեր և անսովաղ պատեր, ծալքատեղում մի քանի ձեռք կեղտոտ տեղաշոր, անկյունում կոծկած կճուճներ և սենյակի մեջտեղ քուրսին՝ կարկատած թաղիքով ծածկած: Ոտաբոբիկ, պորտը բաց, անվա մանուկներ կուչ են եկել տան անկյունում, իսկ փափախի մորթին ցրիվ եկած մի գլուղացի գալարվում է իվան բեյի մտրակի հարվածների տակ, ցավից մեջքը ծամառտում, բառաշում մորթվող անասունի պես: Երեխաների վայնասուն, վախից շոած աչքեր, որ նայում էին անկյունից, և մտրակի ձայնը, կտրուկ և խիստ:

Վերմակի տակ տապակվում էր իվան բեյը, շուտ ու մուռ գալիս, բայց քուն չէր գալիս աչքին:

Մութի մեջ աչքին մտրակի հարվածի տակ ծամառտող գլուղացին էր երևում, մանուկները՝ անպաշտպան գառներ, իսկ սենյակի կիսամութ անկյունից երիտասարդն էր ժպտում:

Մինչև լուսաբաց իր ապրած տարիները հազար անգամ վերհիշեց, արարքն անարդար, երզումները սուտ, կեղծիքները անհամար:

Փոքրիկ գիշերալամպը լույս էր տալիս աղոտ և նրա աչքին երևում էին կարկատած ձեռքեր, որոնք մեկնվում էին, ձգվում դեպի իվան բեյը, կոկորդը դուրս ընկած: Շուտ էր գալիս մյուս կողքին, չբանում էին տեսիլքները վառ, աչքերը խուփ էր անում և դարձյալ անկյուններից կիսամութ ձգվում էին բազուկներ՝ մաշված, դեղնամորթ:

Վեր կացավ երկու անգամ, վերարկուն ուսին գցեց և շապկանց դուրս եկավ պատշգամբ:

Քնել էր քաղաքը հոգնած, տներում լույս չէր երևում, ոտնաձայն չէր լսվում փողոցներում: Միայն իվան բեյն էր կես գիշերին արթուն պահակի պես հսկում քնած քաղաքին:

* * *

Օրերն անցան, իվան բեյը էլ գործի չէր գնում: Առավոտյան թեյից հետո նստում էր պատուհանի առաջ և նայում աշխատանքի գնացող պաշտակյաներին, որոնք թղթերի մի-մի կապոց կռան տակին գործի էին շուտապում:

-204-

Իվան բեյը նայում էր նրանց հեռեկից, նախանձում սրտի խորքից: Օրվա ընթացքում նրա համար ամենից ծանր բոլորներն էին առավոտն ու ճաշվա երեքը, երբ գործից տուն էին դառնում իր ընկերները նախկին:

Ձերեկով փողոց դուրս չէր գալիս, աշխատում էր ոչ ոքի չհանգիպել: Ծրբեմն, երբ ծառան ծրարները թեկ տակ, անցնում էր պատշգամբի տակով գեպի փոստը, իվան բեյը ներս էր կանչում նրան, մի թաս արաղ տալիս կամ թեյի կանչում և հարցուփորձ անում, թե ինչ կա այնտեղ, ով է նստում իր սեղանի առաջ, ինչ նորություն կա:

Ծրբ մութն իջնում էր, փողոցում երթևեկը դադարում, իվան բեյը դուրս էր գալիս փողոց և զգուշ քայլերով մոտենում հիմնարկի դռան, կանգնում դռան առաջ և հենց որ ոտնաձայն էր լսում, շտապում էր մի տեղ պահվել կամ տուն վերադառնալ:

Իզուր էր վիզը երկարում, որ տեսնի շենքի ներսը, սենյակը ծանոթ և սեղանը անկյունի մոտ, շրի կուլան և ավելը կողքին: Մի հատիկ ճրագը, որ կախված էր առաստաղից, շատ թույլ էր լուսավորում:

* * *

Չմեռն եկավ, ձմռան հետ էլ ցրտերն եկան: Իվան բեյի տան կտուրը ձյունի հաստ շերտի տակ թաղվել էր, ծառերի ճյուղերին ձյուն էր նստել, կտորի անկյուններից սառուցե լույաներ էին կախվել: Թիթեղյա վառարանից ծուխը բարակ ելնում էր, հալվում ցուրտ օդի մեջ:

Մրսում էր իվան բեյը: Վառարանի մոտ նստած՝ վերարկուն ուսերից չէր հանում: Շատ քիչ էր շուկա գնում, գնալիս էլ մի քանի օրվա պաշար միանգամից էր առնում...

Եվ օրերով դարբասի կապը գցած էր մնում, ներս ու դուրս անող չկար: Առավոտյան սրբում էր սանդուղքների ձյունը: Հավերհին էր կուտ տալիս. պառապն էլ շրի էր գնում և հետո գալիս թեյ գցում:

Իվան բեյը շաքարի մի փոքր կտորով մի քանի օր էր թեյ խմում: Եկամուտ չունեց, ունեցածը սպառվում էր, հարկավոր էր խնայել, ձիգ տալ, մինչև մի լավ օր:

Բայց քանի գնում լավ օրվա հույսը հալվում էր, խողովակից ելնող ծուխի պես: Եվ երբ մտածում էր այդ մասին, նրան թվում էր, թե սենյակին ավելի ցուրտ է, կռանում էր վառարանի վրա, փայտի նոր կտորներ գնում և կողովում վերարկուի մեջ: Վառարանի մեջ փայտը ճարճատու էր, բոցը թրթռում էր կարմիր լեզվակներով: Իվան բեյը մտքի ծովն էր

-205-

ընկնում, փորփորում մարած հուշերը, անցած ճամփին ետ նայում, երանի տալիս:

Պառավն էր, որ էլ չէր թոնթորում առաջվա պես: Նրան պահողը, խոսեցնողը պառավն էր, որ օրնիրուն շարժման մեջ էր: Կվանում էր ափսեաները, որ իսկի չէին էլ գործածվում, սանդուղն էր քրքրում, պահարանի շորերը դարսում, ուտելիքի հոգս քաշում:

Իվան բեյին երբեք այնքան հարազատ չէր թվացել իր կինը, այնպես մտերիմ չէր եղել, ինչպես այդ ձմռան: Երեխա էր դարձել, մի երեխա, որ մոր փեշից է բռնում և մոր գրկում էլ քնում: Երբեմն ինքը զարմանում էր, թե ինչու մինչ այդ չի մոտեցել պառավին այդպես, սրտին այնքան մոտ չի եղել:

Պառավն աշխատում էր նրան միշտ մի բանով զբաղեցնել, հին ծուռնալներ էր բերում, կամ թե բրինձ էր տալիս ջոկելու: Իվան բեյը խոնարհ երեխայի պես նստում էր վառարանի մոտ, սինու մեջ լցրած բրինձը մատով մեկ-մեկ ջոկում:

Ձմռան երկար գիշերներին, երբ ձյունամարրիկը սուլոցով ուժգին զարկում էր պատուհանի ապակիներին և գայլի պես ոռնում բուխարիկի անցքում, Իվան բեյը երկյուղ էր զգում և ցուրտ, գլուխը կոխում էր հաստ վերմակի տակ, կծիկ դռնում և աշխատում չլսել, թե ինչպես է ոռնում ձմռան քամին:

— Այ պառավ, մեջքդ ծածկի,—ասում էր վերմակի տակ և ավելի մոտենում պառավին:

Ժամերով քունը չէր տանում: Աչքերը կիսախուփ, վերմակի տակ կծիկ դռած, Իվան բեյի մաշված միտքը շարունակում էր աշխատել: Հին օրերի գեպքերը թաղբհի հատիկների պես մեկ-մեկ դարսվում էին իրար վրա:

Ցերեկով նա եթե սրտնեղում էր, թղթի մի կտորի վրա լրագրից կամ հին ծուռնալից արտագրություն էր անում, գրածը դարսում, համարակալում, ճիշտ առաջվա պես: Սակայն երբ սթափվում էր և զգում, որ այդ միայն ժամանակի համար է, սիրտը կոտրվում էր, հեռանում էր սեղանից և էլի ձեռքերը թիթեղյա վառարանին մոտեցնում:

Հին ծանոթներից երբեմն այցելության էին գալիս: Բայց ամեն անգամ, երբ ծանոթը դուրս էր գնում և Իվան բեյը մնում էր մենակ իր մտքերի հետ, սիրտը տակն ու վրա էր լինում, ալեկոծվում էր լճի մակերեսը: Որի վրա տեղ-տեղ ջրախոտերը արդեն ճահիճ էին գոյացրել:

Զկամ էր ընդունում եկողին, նրանք էլ հաճախ չէին գալիս:

Ձմռան մի գիշեր էլ պառավը մեռավ: Հիվանդ չէր, միայն քնելուց առաջ սրտի ծակոցից էր գանգատվում:

Իվան բեյը ուշք չդարձրեց, որովհետև պառավն այդ հիվանդությունը վաղուց ուներ և շատ անգամ էր սիրտը բռնում, տնքում:

Առավոտը կանուխ վեր կացավ Իվան բեյը, հավերին կուտ տվավ, կիավ, որ պառավին զարթնեցնի:

— Վեր է՛, այ պառավ,—ասաց ու թեթև շարժեց:

Հանկարծ աչքին ընկավ պառավի դեմքը և աչքերը բաց, ապակու անկենդան փայլով: Իվան բեյը հասկացավ, ցավից կանչեց զիլ և ընկավ պառավի դիակի մոտ:

Մանոթ ու հարևան հավաքվեցին և ձմռան մի ցուրտ օր, երբ նոր եկած ձյունը պսպղում էր աչքի տակ, որպես ասեղի ծայրեր և ճռճում նոր գնած կոշիկի պես, պառավին թաղելու տարան:

Ցուրտ էր, տերտերը շտապում էր: Սառել էր գետինը, գերեզմանն էլ խոր չէին փորել:

Երբ դագաղն իջեցրին և ձյունախառն հողը բահով փոսի մեջ լցրին, Իվան բեյը, որ գլխաբաց կանգնել էր և լցվող փոսին էր նայում, մտածեց, թե ինչքան ցուրտ է լինելու պառավի համար: Ավելի կուշ եկավ վերարկուի մեջ, արցունքները գլորվեցին այտերի վրայով:

— Մի բուռն հող էլ դու լցրու, Իվան բեյ,—ասաց տերտերը:

Իվան բեյը կուացավ, որ հող վերցնի: Այնքան դժվար թվաց նրան այդ Մի պահ կանգնեց, հողը բուռն մեջ, ասես չէր ուզում գերեզմանին լցնել:

— Անհաղորդ մեռավ,—ասաց հարևան մի կին, գոգնոցի ծայրով կարմրած աչքերը սրբելով:

Տուն վերադարձան: Ծամփին տերտերը հին պատմություն էր անում, բայց Իվան բեյը չէր լսում, մտքերը ետ էին, թարմ հողարլուրի շուրջը: Գլխաբաց էր և չէր նկատում այդ: Գլխաբաց էլ տուն եկավ:

Հարևանի կանայք մնացին մինչև իրիկուն: Նրանցից մեկը վառարանը վառեց, իրիկվա համար փայտ դարսեց, մյուսը ինքնակուր տաքացրեց:

Իվան բեյը անպաշտպան մանկան խեղճ հայացքով մեկ սրան էր նայում, մեկ նրան: Անճարություն կար նրա դեմքի վրա, կսկիծոտ մի հարց:

— Ես ո՞ւր մնացի...

Երբ կանայք հեռացան, քիչ հետո էլ տերտերը գնաց և գնալուց

առաջ Իվան բեյին ասաց, թե ինչ լավ թեյաման ունես և որ ինքը փող չի ուզում,— երբ տերտերը սանդուղքի ձյունը ճոճոացնելով գնաց և իր հետևից էլ դարբասի դուռը ծածկեց,— Իվան բեյին այնպես թվաց, թե դարբասի դռան հետ փակվեց և ամեն ինչ:

Պարապ զգաց, անասելի դատարկութիւն սրտի մեջ, կսկիծ, որ մըրմուռ ունի:

Հանգավ վառարանի կրակը, մարեց և լույսի ճրագը: Մութի մեջ, անկողնու վրա, հին վերարկուով կոլոված պառկեց Իվան բեյը, գլուխը թաղեց բարձի մեջ:

Էլի քամի էր փողոցում, քամին ձյուն էր շարտում և պատուհանի ապակիները զնգում էին կամացուկ: Կոշմարի պես ծանր էր սենյակի խավարը Իվան բեյի համար և մի միտք չէր հեռանում գլխից.

— Ինչքան ցուրտ է պառավի համար...

Եվ ոչ ոք չէր Իվան բեյի զսպած հեծկտանքը ձմռան ցուրտ գիշերին:



Մանր օքեր էին Իվան բեյի համար: Ձմեռվա կարճ ցեղեկն անցնում էր մի կերպ և երբ իրիկուն էր դառնում, մութի հետ էլ երկվուղն էր իջնում Իվան բեյի սրտին:

Երբեմն վառարան չէր վառվում.. իրիկնանալու պես տեղաջրորի մեջ էր մտնում, որ քնի: Բայց քունը չէր գալիս աչքին, գլուխն էլ վերմակի տակից չէր հանում՝ սենյակի մութը շտանակելու համար:

Մրսում էր Իվան բեյը, կծիկ էր դառնում առաջվա պես, բայց էլ պառավը չկար, որ մոտենար նրան և ասեր առաջվա պես.

— Կմրսես, ա՛յ պառավ...

Հարևաններն էին օգնում: Մեկը մի բաժակ կաթ էր ուղարկում, մյուսը մի աման տաք կերակուր: Երբեմն հարևանի երեխան գալիս էր փախ կտրատում վառարանի համար կամ ջուր բերում:

Իվան բեյը ոչինչ չէր ասում, կարծես չէր էլ տեսնում եկող գնացողին:

Նստում էր առաջվա տեղը, վառարանի կողքին, գլուխը կախում վառարանի մոտ:

Գնացող եկողից մեկն էլ, հարևանի մի կին, մի օր կամացուկ հայտնեց իր ծանոթներին, թե Իվան բեյը ցնդվածի պես է դառել: Ժպտում է ինքն իրեն, ձեռքերը մոտեցնում է սառը վառարանին և շփում իրար:

Մյուսն էլ լսել էր, որ Իվան բեյը խոսում է ինքն իր հետ: Մեկն էլ ափելացրեց, թե ինքը տեսել է Իվան բեյին իր նախկին հիմնարկի դռան առաջ գլխաբաց կանգնած:

Իվան բեյը ժամերով վառարանից չէր հեռանում: Ցուրտ սենյակն էր, թե սովորույթը հին, որ մեխում էր նրան աթոռին, վերարկուն ուսին, թագբեհն էլ ձեռքին:

Մի իրիկուն էլ, երբ փողոցի անցուղարձը դադար էր առել, կողպ էին աղէն դարբասները, երբ սառած ապակիների հետևից կաթնանման լույս էին տալիս ճրագները, Իվան բեյը իջավ բակ, դեսուդեն խլշած նայեց, ասես մարդու սովեր էր փնտրում բակում կամ լսում, թե մարդ կա՞ արդյոք այգում և փողոցում:

Չնտո կամացուկ մոտեցավ և դարբասի դռները բացեց: Մի քիչ կանգնեց փողոցում, դարձյալ նայեց շորս կողմ և ժպտաց ինքն իրեն:

Տարօրինակ էր այդ ժպտը. զարգանդ կար դեմքին, աչքերի մեջ մի անկմառու փայլ: Ժպտաց, մտածեց, ծոռատեց շրթունքները, ատամները կրճտաց և արագ քայլերով իջավ փողոցով:

Գողի պես էր գնում, պատի տակով: Մի ոտնաձայն կամ խշշոց լսելիս հենվում էր պատին, անշարժ մնում, մինչև վտանգն անցներ:

Քիչ հետո նա իր պաշտոնատան դռան առաջ էր: Վիզը երկարացրեց և փողոցից տեսավ ներսի ճրագը, որ առաստաղից էր կախված:

Ապա վճռական մոտեցավ և դռանը զարկեց բուռնցքով՝ մեկ, երկու, հետո սկսեց դուռը թափահարել: Գողում էր ամբողջ մարմնով, բայց ցուրտ չէր զգում: Նրան թվում էր, թե բազուկների մեջ ուժ կա անշափ, ասես ուզում էր կրճկահան անի դուռը:

Յիզուկի վրա ծառան ներսից ձայն տվավ և դուռը կիսաբաց արավ:

— Ակո՛փ, լա՛վ ես սրբել,— հարցրեց Բիվան բեյը և դուռը հրեց:

Ծառան ճանաչեց նրան և դուռը նորից կողպեց: Եվ դռան հետևից կանչեց վախից դողացող ձայնով.

— Իվան բեյ, գնա՛ քնիր, գնա՛...

Էլի կանգնեց մի պահ, հետո սկսեց նորից ծեծել, խոսել ինքն իրեն: Մեկ էլ վերարկուն, որ ընկել էր ձյունի վրա, ուսին գցեց, ճղրտաց, հեռացավ արագ: Ծառան մինչև վերջ էլ չէր հավատում, թե այդ ձայնը Իվան բեյինն էր, այնպես զիլ էր, խոպոտ:

Իվան բեյը արագ վազելուց քրտնել էր: Ներս մտավ, դարբասի դուռը կողպեց ու սանդուղքով վեր բարձրացավ: Բայց մեկ էլ հանկարծ ետ դարձավ, իջավ բակը և էլի սկսեց ուշադիր լսել, թե ոտնաձայն չկա՞ այգում, սովեր չի՞ երևում:

Յեկ էլ ետ նայեց և նրա աչքին ընկավ մառանի բաց դուռը: Իվան բեյը ներս մտավ և մառանի մութի մեջ պատեպատ ընկնելուց հետո հասավ անկյունին, կոացավ, նստեց, ձեռքերով շոշափեց գետինը, հոհոաց և սկսեց փորել գետինը:

Նա չէր փորում: Չանգոտում էր մատներով, եղունգներով: Մութի մեջ տնջում էր, թնչում և շանգոտում: Հանկարծ մատները մի կոշտ բանի դեմ առան: Իվան բեյը մի վայրկյան մնաց, հետո սկսեց ավելի արագ փորել: Նրա ձեռքը խրվեց մի փոքրիկ կճուճի մեջ: Ձգեց և հանեց կճուճը, մութի մեջ զրնգաց կճուճը և պղնձե կոճակները փայլուն բզեզների պես դեռուղեն շաղ եկան:

Իվան բեյը կոճակները հավաքեց բոի մեջ, մոտեցրեց աչքին, որ ավելի լավ տեսնի, մատներով շոշափեց: Սիրտը բաբախում էր արագ, սարը մի շնչով վեր էլնողի պես:

Քրտինքի կաթիլները գլորվում էին ճակատից, քրտինք էր դուրս գալիս և վաղուց չվացված մազերի միջից: Ռունգները լայնացել էին, շնչում էր հեփհե:

Կանգնել էր մառանի անկյունում, բուռը լի պղնձե կոճակներին էր նայում, որոնք մութի մեջ փայլում էին պսպղան:

* * *

Առավոտյան, երբ հարևանի տղան կաթ էր բերել Իվան բեյի համար, քարբասը փակ գտավ: Սեծեց մի քանի անգամ, հետո կաթը ետ տարավ:

— Էսօր Իվան բեյը շատ է քնել, — ասաց:

Մյուս առավոտ մեկը պատով իջավ և դարբասի դուռը բացեց:

Իվան բեյի վերարկուն ընկած էր մառանի դռան առաջ: Գիշերվա քամին ձյուն էր լցրել սենյակի բաց դռնով:

Մառանի անկյունում սառած ընկած էր Իվան բեյը, մատներն արնոտ, չոած աչքերով: Բռունցքի մեջ սեղմել էր պղնձե երկու կոճակ, կողքին՝ չարդված կճուճի փշրանքներ, թղթի կտորներ, հին թղթադրամ:

...Իսկ հավերը բնում քաղցից ու ցրտից կշկշում էին, կուտ ուղում:

1926

Դաժուկնց Տիտոսի հագին տարին բուռը ուրիշի շոր էր: Հորթարած էր: Կարծի դիմաց մեկը նրան մեջը ծակ հին փափախ էր տալիս, մյուսը տասն անգամ կարկատած տրեխ կամ հնամաշ, գունավոր կարկատաններով շավար: Ուրիշի մեծ փափախը ծածկում էր ականջներն ու ճակատը: Եվ թեկուզ երկար շավարը պարանով կապում էր կրծքի տակ, ծայրերը ծալում, դարձյալ նրա բարակ ոտքերին շավարը նստում էր, ինչպես ճիպոտին հագցրած պարկեր: Տրեխներն էլ անձրև օրերին թրջվում էին, լապո մսի պես ծայրերը դեհուղեն ծովում: Տիտոսը ոտը դեռ գետին չդրած, տրեխի կախ ընկած ծայրն արդեն ցեխումն էր:

Տեսնողն այնպես էր կարծում, թե ծաղրի համար են Տիտոսին կուրել շորերի մեջ, փափախի բրդի տակ ծակեր թողել, որ նրա ծիր աչքերը հսկեն հորթերին: Մաղրի համար, որ հորթերը բերելիս, գլուղի փողոցում կանգնած մարդկանցից մեկը բամփեր նրա գլխին և ծիծաղելով ասեր:

— Տիտո՛ս, չմեռնես դու, ճակատդ էլա մի բաց արա...

Տիտոսը միայն մայր ուներ, որ ամուսնու մեռնելուց հետո մի քանի տարի հավատարիմ էր մնացել առաջին մարդու կիսավեր տանը, բայց որովհետև նրա միակ ժառանգությունը՝ պոչը ծաղիկ կովը հորթատել էր ու սատկել, սառած թոնրի պատերին էլ խմոր չէր փակցրել, — մի օր դրժել էր հավատարմության ուխտը, կուժ ու փալաս շալակել, փողոցն անցել և մտել մի տուն, որի դռնից իր ամուսնուն թաղելուց մի շաբաթ հետո հանել էին երկունքից արնաքամ եղած մի կնոջ դագաղ: Տան տերը հյուրընկալեց Տիտոսի մորը, սա էլ իր կուժը նոր տան կծերին խառնեց, փալաքը փռեց հողե հատակին:

Դրսում մնաց Տիտոսը: Այդ իրիկուն նա հորթերը բերեց գլուղ և երբ հորթերը բուռն էլ շրթունքները կախ արին մոր կուրծից, Տիտոսը տուն եկավ և կիսավեր տան մեջ միայն պառավ կատվին տեսավ, թոնրի սառը մոխրում նստած: Կատուն մլավեց, մի անգամ էլ ապացուցելու այն խոսքը, թե ավերակում կամ բուն է կանչում, կամ կատուն մլավում:

Իհարկե, մոր սրտի տեղը քար չէր, երբ վախվխելով, որպես շուռը կորցրած հորթ, Տիտոսն ուրիշի դռնակը բացեց և կանգնեց: Մայրը լաց եղավ. այդ տեսավ Տիտոսը, մայրը ուրիշ խոսքեր ասաց, բայց խոսքերից ավելի քաղցրը յուղով հացի այն պատառն էր, որ մայրն արցունքները սրբելով գոգնոցի տակից ծածուկ հանեց և կոխեց Տիտոսի տոպրակը: Այդ փշեր հարևանի դեզի վրա, կարպետի տակ Տիտոսը ծամեց յուղոտ հացը, աչքերը երկնքին, բայց միլիոն աստղերից և ոչ մեկն էլ չնշմարելով:

Նույն գիշեր մայրն ուրիշի բարձի վրա մի անգամ էլ լաց եղավ: Ճիշտ է, բար չէր մոր սիրտը, բայց մարմինը միայն սրտից չի կազմված:

Եվ այդպես սկսվեց Տիտոսի նոր կյանքը: Որք մնալուց հետո ուրիշների կարեկցութեան շափը նրա հանդեպ մի քիչ ավելացավ: Եղան մարդիկ, որոնք մորը նախատեսցին: Սակայն այդ կարեկցությունը կարկատած տրեխներից ու փոստե ծակ փափախից հեռու շանցավ: Պատահում էր, որ սրա նրա շեմքին, տոն մի օր կամ հարսանիքի գիշեր հորթարածը կաթսայում մնացածն էր սրբում մատներով և մատները լիզում, բայց այդ միայն դիպված էր նրա կյանքում:

Իսկ այդ կյանքը կանաչ սարերն էին, բազմատեսակ խոտերը, որոնցից մեկի արմատն էր քաղցրահամ, մյուսի ցողունը: Կանաչ սարերում թոն ու անձրե, արև օրեր, երբ կարպետը փոում էր քարին շորանալու, աղբյուրի ջուր, ցամաք հաց և հորթեր, հորթեր, որոնցից ամեն մեկն իր տեսքն ուներ և բոլորը միասին ընդհանուր սովորույթ՝ շոգ օրին տուն վազելու, մոր բառաչը լսելիս պոչը կեռացրած դեպի բառաչը փախչելու:

Հորթային հրճվանք, հորթի ոսկե մանկություն, որից զուրկ էր Տիտոսը, որ ամենից շատ հենց այդ օրերին էր վազվզում, ցրիվ հորթերը հավաքում, կանչում, սուլում, վազելիս սայթաքում, վազելիս լաց լինում և հայհոյում հորթի հրճվանքն էլ, տիրոջն էլ: Հորթերը հասունանում էին, հորթերն ուրիշ նախիր էին գնում, ցուլով էին դալիս հորթերը՝ Տիտոսի համար նոր հորթեր ծնելու:

Ե՛րբ պիտի ծներ վերջին կովն այն հորթը, որի հրճվանքն այլևս չպիտի ստիպեր Տիտոսին վազելու սար ու ձոր և որին այլևս նա կանաչ սարերը չտաներ: Փիտակցական վերաբերմունք իր վիճակին Տիտոսն առաջին անգամ այս կերպ հանդես բերեց: Այնպես հանկարծ ծնվեց այդ միտքը նրա գլխում և այնքան հանդարտ: Երևի կա այդպիսի մի վայր՝ կյան, երբ ծլում է սերմը, ասեղի ծայրի շափ արմատիկը խրում հողում, որ հետո տարիների հետ հզորանա ու դառնա հասարմատ ծառ:

* * *

Շարունակությունն էլ հասարակ եղավ: Առաջին ծիրը ձգվեց, հող կոշտակները հրելով, մի օր արև տեսավ, շերմություն զգաց:

Տիտոսը՝ խոտի խորձը շալակին, ձյունաշուրը կոխ տալով, ձմառն մի օր անցավ դպրոցի կողքով, պատուհանից տեսավ հորթատիրոջ որդուն դասարանում, կանգնեց, ժպտաց: Տղան էլ ներսից պատասխանեց նույն ժպտով: Եթե ներսում ժպտացողի միտքը Տիտոսի ճաների շուրջ

էր և կտուրի գլխին տեղի ունեցած խաղերի, ապա Տիտոսի ժպիտը ուրիշ պատճառ ուներ:

Երևի լավ է ներսում, որ ամեն օր հավաքվում են իր հասակի տղաներ, երգ են ասում, գրիչները թաթախում թանաքի մեջ, տետրակներում արտագրում այն, ինչ գրում է ուսուցիչը պատից կախած տախտակի վրա, սպիտակ կրաքարով: Վերի սարում այնքան շատ կա այդ քարից ու այնպես պարզ է խաղում Տիտոսը, սպիտակ բժևր անում գետի կապույտ ու ողորկ քարերի վրա:

Այդ իրիկուն գոմի դռանը կատարվեց տարօրինակ մի գործարք: Իր բոլոր ճաները Տիտոսը փոխեց տիրոջ տղայի վաղուց քովորած, թերթերը պակաս գրքի հետ: Եվ երբ ախոռները խոտով լցրեց, կոճերի տակ շոր հարդ ցրեց, գոմի ճրագի տակ Տիտոսը բաց արեց գիրքը: Ճրագի լույսի հետ տառերը թրթռացին նրա աչքին: Ինչքան շատ էին, իրար նման, բոլորն էլ սև: Գիրքը թերթեց, տեսավ ծանոթ նկարներ՝ ուլ ու ծառ, աղջիկը կուժն ուսին, պառավ նանը թոնրի առաջ: Համր նկարներն այնքան հարազատ թվացին: Գուցե դրանից էր, որ գիրքը գոմի պատուհանում դեկուց առաջ նա ստուգեց՝ արդյոք շոր և ապահով է թաքստոցը:

Առավոտյան Տիտոսն աչքերը տրորելով ձեռքը մեկնեց գոմի պատուհանին: Կովերը կոշտ լեզվով լիզում էին մսուրի շոր փայտերը, կարծես մեկը խոզանակով էր սրբում: Տիտոսը մոռացել էր կովերին: Գրքի թերթին էր նայում, այն թերթին, որի վրա երկու հորթի գուլիս կար նկարած: Նայում էր և լարում ամբողջ ուշքը, ասես հավատում էր, որ շատ նայելուց տառերը լիզու պիտի առնեն ու խոսեն: Այդ օրը ջոկեց միայն այն, որ սև նշաններն իրար նման չեն, մեկը կեռ է, մյուսը տափակ, երրորդը ձեռնափայտի պես գուլիսը կլոր: Գոմի դռանը ոտնաձայն լսեց, գիրքը ծալեց, թռավ տեղից, մսուրին մոտեցավ:

Այդ գարնան Տիտոսն արդեն գրաճանաչ էր: Նրա հացի պայուսակում թերթերի ծայրերը կտրտած գիրքն էր, որի առաջին երեսից մինչև թոնրի մոտ նստած պառավի նկարը Տիտոսը վարժ կարդում էր, նույնիսկ առանց մտքը տառերին տանելու: Ուրիշի գրած տետրակների լուսանցքում երկրորդ անգամ Տիտոսը գրել էր այն, ինչ տետրակի տերն էր գրել դպրոցում:

Աշխարհն ուրիշ տեսակ երևաց նրա աչքում, երբ տեսավ ծանոթ առև, կանաչ արտերն ու սարերի լերկ կողերը: Հողի կոշտերի տակ մոփ կար և առաջին արևոտ օրը հալեց մոփի հետքերը: Տիտոսը նույն փափախն ուներ գլխին: Չմեղվա ընթացքում նրա գուլքը ավելացել էր երկու գուլք կարկատած գուլպայով, որ ուրիշի ձեռքով ծածուկ ուղարկել էր մայրը: Մնացածը նույնն էր, աղբից տեղ-տեղ կարկատանների թևերը:

փտել էին, կախ ընկել: Եվ երբ առաջին օրը Տիտոսը հորթերն առաջ արած գլուղի ծայրին հասավ, փողոցում կանգնած մի մարդ մտքում նրան գամակը կախ ուխարի հետ համեմատեց:

Հին փափախի տակից սրա՝ աչքերը գրբին ընկնելիս՝ հորթերն ուզածի շափ կարող էին ցատկոտել, ցրիվ գալ, իրար պողահարել, մինչև սթափվեր, գիրքը խնամքով ծալեր, տեղավորեր պայուսակում և ապա առաջվա պես սուլելով, կանչելով հավաքեր ցրված հորթերին: Սպիտակ փափուկ քարը, որով գրում էին պատից կախած տախտակի վրա, Տիտոսը հենց սարի տակի հանքից վերցրեց այնքան, որքան հերիք էր գետի ողորկ քարերի վրա ոչ թե բծեր ու անկարգ խազեր քաշելու, այլ գրելու գրբի բառեր, ամբողջ երեսներ, մինչև անձրևը գար ու ավերեր գրածը:

Ամեն իրիկուն՝ հորթերը տեղաց անելուց հետո, պատահած տղից հարցնում էր չմացածը: Հերիք էր միայն մի անգամ ասելին, որպեսզի ասածը պինդ նստեր նրա մտքում: Սկահողում լլար հատիկն էլ փարթամ է աճում:

Գրած տետրակները, եթե ապակու տեղ պատուհանին չէին փակցնում կամ տետրակի հաստ կողը ձվի դեղնուցով հիվանդի մեջքին չէին փակցնում, գրած տետրակները Տիտոսի պայուսակում էին հավաքվում, մինչև անգիր աներ վարժութունները, մինչև ծվեն-ծվեն շինեին տետրակի թերթերը: Նրա միտքը ազահուժյամբ էր կլանում գիրք ու տետրակ: Ինչքան զարմացավ տիրոջ որդին, երբ գարնան վերջին Տիտոսը երկրորդ գիրքը խնդրեց:

Հենց այդ երեկոյան էլ նրա մայրը ծննդյան ցավից կանչում էր Հաջորդ առավոտը, լուսանալուն պես, երբ Տիտոսը լսեց, որ մի նոր մանուկ է ծծելու մոր կաթը, սառնութուն զգաց մոր հանդեպ, վերջին բարակ թելերն էլ կտրվեցին, մայրը հեռացավ, դարձավ երկնքի երեսին լողացող թռչուն:

* * *

Ամառվա շոգին գլուղ եկավ Տիտոսի մանկութան ընկերը՝ Անտոնը: Ծրեկոյան բեզարած գլուղ վերադարձավ Տիտոսը, ոտները քարշ տալով քարձրացավ հերվա շոր խոտի դեզի վրա, կարպետը գլխին քաշեց:

Եվ միայն առավոտ կանուխ Անտոնենց դռանը Տիտոսը տեսավ չրի կուժերն ուսին երկու կանանց, որոնք աչքալույս էին տալիս Անտոնի մորը:

— Անտոնը եկել է,— մտածեց Տիտոսը, մոտեցավ, նրա մորը հարցրեց: Ինչպես կոտրվեց Տիտոսի սիրտը, երբ մայրը գլխին բամփելով ասաց:

— Հենց դու էիր մնացել, որ գնաս նրան քնատեղից վեր կացնես:

Տիտոսը միայն հեռվից էր ուզում տեսնել Անտոնին: Ինչքան են խաղացել միասին, քանի ծոփ բույն են քանդել, գետում լողացել այն ժամանակ, երբ իրենց թոնիրն էլ տաք էր:

— Ով գիտի՝ հիմի մեծացել, մեծ մարդ է դարձել: Տեսնես ի՞նչ շորանի հագին:

Այդ մտքերից հետո Տիտոսին այնքան խեղճ թվաց տրեխների ծուռ ծայրը և այնպես կարոտեց մորը. նրա լացը հիշեց, երբ ուրիշի դնակի մոտ յուղոտ պատառ տվեց: Այն օրից նրան չէր տեսել, նրանց փողոցովն էլ չէր անցել:

Տիտոսը հորթերը հեռու շտարավ: Գլուղի մոտիկ կանաչուտին հասնելուց հորթերը կանգ առան. Տիտոսը բաց արեց գրբի այն երեսը, որի արանքում բրդի թելի նշանը կար:

Քիչ հետո գլուխը վեր հանեց հորթերին նայելու: Գլուղի ծայրին սպիտակ գլխարկով մեկն երևաց: Եկողը ձեռքի ճիպոտով մոշի թփերին էր զարկում և արագ քայլերով մոտենում կանաչուտին:

Տիտոսը հեռվից ճանաչեց Անտոնին: Այդ օրը երկրորդ անգամ նա ամառից կարկատած տրեխների, մորթին ճղած մեծ փափախի համար:

Հանդիպումն այնպես պարզ էղավ, այնքան հասարակ: Անտոնն առաջին կանչեց, ձեռքը մեկնած մոտեցավ: Նա՛ առաջին խոսքն ասաց, որովհետև Տիտոսն անակնկալ հանդիպումից շփոթվեց, գիրքն արխալուղի թևի տակ առավ:

Եվ ոչ մի կարկատան չկար Անտոնի շորերի վրա: Էլի առաջվա պես ծիծաղելիս կոտրած ատամը երևում էր: Կոտրած ատամի պատմութունը Տիտոսի միտն ընկավ:

Անտոնը ոչ նրա գիրքը տեսավ, ոչ էլ հետևից կախ ընկած կարկատանները, որի համար մեկը նրան դմակավոր ուխարի էր նմանեցրել:

Պատմելու այնքան բան ուներ Անտոնը, իսկ անցած տարիներն այնքան նման էին անցել Տիտոսի համար: Եվ ինչ որ ասում էր Անտոնը «Բևանո՞ւ կողմի» մասին, Տիտոսին երազի պես էր թվում: Գլուղի սարերից դեն ոչինչ չէր տեսել:

Այդ հեռու կողմերում եղել էր Անտոնը. նրա աչքերը տեսել էին մեծ սներ, որոնց նման գլուղում չկա:

— Փողոցներում էնքան մարդ կա՛, հազար, երկու հազար: Ամեն օր ուրիշ քաղաքներից մաշին է գալիս: Կառքեր կան, մեծ խանութներ, ուր ուզածդ կա ու շտես բաներ: Ոնց ասեմ քեզ: Դե մեր գլուղում երեք հար-

* Զանգեզուրի շատ գլուղերում Երևանը հնչում են որպես Բևան:

յուր մարդ չկա, երեխա, կնիկ, բոլորը հաշված: Համա մենակ մեր ուսում-
նարանում էդքան աշակերտ կա... Հետո վագոնները... Տիտո՛ս, ավա-
նաբիլի խժժոցից խամ մարդը կվախի: Խաղող ինչքան ասես, ձմերուկ
էնտեղ մեզ նման չեն վար անում, կորեկ սերմելը սովորույթ չի: Բամբակ
են ցանում, մաշիկի գութան էլ ունեն: Վերջը ի՞նչ ասեմ, է՛, ես որ
գնացել էի շորս օր աչքերս շաղված էին... էսպես զարմացք բաներ:

Տիտոսը շունչը պահած լսում էր: Թեի տակից գրգռը սլաց, ընկավ:
Տիտոսը նստած տեղից մի քիչ շարժվեց, գիրքը տակն առավ, նստեց
վրան: Պատմելիք շունչը: Ուզեց ասի, որ ինքն էլ է սովորում, բայց ան-
կարևոր համարեց: Եթե Անտոնը հարցներ, կասեր:

Իր տեսածից ոգևորված, գյուղում մնացած նախկին ընկերոջ առաջ
Անտոնն այնքան հրաշքներ պատմեց «Րևանու կողմերի» մասին:

Երբ հեռացավ Անտոնը, Տիտոսը մի քիչ էլ նստած մնաց, հետո
սթափվեց, նայեց Անտոնի հետևից: Երազի պես թվաց հեռավոր Րևանը,
վագոնները, որոնք ամեն օր մարդ են տանում, բերում: Բայց չէ՞ որ Ան-
տոնը տեսել էր, Անտոնն էր պատմում: Տիտոսն էլ ականջով լսեց, նրա
կոտրած առամբ տեսավ: Ա՛յ, էլի ձեռքի ճիպոտով մոշի թփերին է խփում:

— Րևա՛ն, Րևա՛ն...

— Հստեղից մի օրում կհասնես Սիսիանի մհալին, էնտեղից էլ օր ու
կիսովա ճանապարհ է, մինչև մաշիկին հասնես: Մի սար է, բարձրանա
իջնես, սարի տակին կոտրած քարվանսարա կա, էնտեղ կքնես: Հետո
լայն ճանապարհ է, մինչև մաշիկին հասնես: Վագոնը որ նստես, ուղիղ
քեզ կտանի Րևանու մեջը... Բիլեթ են տալիս փողով, պետք է բիլեթը
պինդ պահես, որ չկորչի, թե չէ կտանեն, շտրաֆ կանեն: Ես իմս ծոցումս
էի պահում, քնելիս էլ ձեռքս վրան էի դնում: էսպես հասա Րևան...

Անտոնի խոսքերն էին, որ խժժում էին Տիտոսի ականջի տակ, որ
պես ձագ տված մեղու: Փակեց աչքերը, միտքը լարեց, թև առած մտքերը
թռան սարերի վրայով հեռուն, գեպի ուր մեկնեց Անտոնն իր ձեռքը, պատ-
մաթյունն անելիս:

— Տեսնես Կատարի խաչի ուխտավորի շափ մարդ կլինի՞, — մտածեց
Տիտոսը, պառկած տեղում նստեց, գիրքը բաց արեց: Գրքում Անտոնի
ասածներից ոչինչ չկար: Ծառերի մասին էր զբված, ազին ծաղիկ աղվեսի
մասին և ոչ մի խոսք Րևանու կողմերից:

— Երևի ուրիշ գրքերում կլինի:

Լսեց գյուղից մի ձայն.

— Տիտո՛ս, էհէ՛յ, հորթերը արտի կանաչումն են, կանաչումն են,
էհէ՛յ...

Տեղից վեր թռավ, թռնելու հետ էլ մտքերը հորթերի պես շաղ եկան:
Րևանը չբացավ, որ մի քիչ հետո նորից փակվի նրա ուղեղին տիզի պես,
բույն դնի և օրնիբուն միտքն զբաղեցնի իրենով:

* *
*

Աշունքամուտ էր:

Սարերի բարձր կատարներին ամպը ցող էր շարում, լուսաբացին
ցողը սառչում էր, դառնում եղյամ: Արտերը հնձել, վերջացրել էին, գյուղը
կալ էր կալում, այգիների բերքը ժողովում: Դրանից էր, որ հնձած ար-
տերում ոչ մարդ էր երևում, ոչ անասուն:

Արահետը օձապատույտ ոլորներով բարձրանում էր սարի ստորոտից
մինչև գագաթ, իչնում ձորը, նորից բարձրանում էր Տիտոսը,

Մահակը գետնին դեմ տալով, կածաթով բարձրանում էր Տիտոսը,
հացով լի պալուսակը մեջքին: Արեք բաղական ճանապարհ էր կտրել,
բայց արեից չէր, որ քրտինքի կաթիլներ էին շարվել Տիտոսի ճակատին,
այլ արագ քայլելուց: Մեջքը քրտնել էր, շապիկը կաշում էր, էլի պոկվում:

Տիտոսը ոչ քրտինքն էր զգում, ոչ էլ արևի տաքութունը: Նրա միտքը
եռ էր, եկած ճաժփին, որի վրա կրած խուրձերից ընկած հասկեր կային,
մի քիչ հեռուն գյուղը, կալերը, խրձան դեզեր, իրենց հիսաավեր տունը:

Օգոստոսի կեսին Անտոնը գնացել էր: Գնալուց մի օր առաջ Տիտոսը
նրան տեսավ դռան մոտ:

— Տիտո՛ս, էգուց գնում եմ...

Տիտոսը շիմացավ ինչ ասի: Մոռեցավ Անտոնին՝ բարի ճանապարհ
տեսելու: Ձեռք տալուց հետո, երբ մայրը ներսից Անտոնին կանչեց և Ան-
տոնը տուն գնաց, Տիտոսը դռան մոտ մի քիչ էլ կանգնեց: Քարերը կճա-
տին, եթե նրանք էլ այնքան ուժեղ ցանկանային Անտոնի հետ գնալ,
ինչպես դռան մոտ ցանկացավ Տիտոսը: Յակայն Անտոնը դուրս շեկավ
տնից: Տիտոսը գլուխը կախ հեռացավ:

Տիտոսը միայն մորն ասաց, որ գնում է, ինչքան դժվար էր վերջին
օրը: Հորթերն էլ էին մի տեսակ մոլորվել: Երեկոյան՝ հորթերին տեղաց
անելուց հետո, անցավ այն փողոցով, ուր մայրն էր ապրում: Դռնակից
նայեց, մարդ չտեսավ: Հենց ուղում էր հեռանա, մայրը դիմացի ան-
կյունից դուրս եկավ:

— Նանի, առավոտյան գնում եմ:

— Ո՛ւր:

— Րևան:

— Բա մենա՞կ. հաց, ճանապարհի ծախս...

— Բիլեթի փող ունեմ, ամառս եմ հավաքել, դե տոպրակս էլ հացով լիքն է:

Տիտոսը տեսավ մոր արցունքները:

— Բա շոր, գուլպա... Ընկեր ունե՞ս, ճանապարհը...

— Լիքը մարդ է, ինչ կա որ... Հրեն էն սարն է, սարը որ անց կացար, Բևանը մոտ է,—ասաց Տիտոսն այնպես վստահ, կասես Երևան գնալը նրա համար գյուղի շաղացի ճանապարհն էր:

— Դե էդտեղ ոտը կաց, տեսնեմ էն Ազրայելը տանը լի՞...

Ազրայելը նրա երկրորդ ամուսինն էր: Տիտոսը գիտեր, որ մայրը նրա ձեռքին լավ օր չի քաշում: Ճիշտ է, այդ հանգամանքը նրա մեջ բորբոքում էր սեր ու կարեկցություն մոր նկատմամբ, բայց և իր մտքից նա չէր կարողանում ջնջել այն գիշերը, երբ ուրիշի դռնակի մոտ մորը տեսավ, ինքն էլ քննց դեզի վրա, որպես որբ: Թեկուզ Ազրայելին հանդիպելիս նա խոսո՞ւ աչքերով էր նայում նրան, բայց հերիք էր մտաբերեր այն գիշերը, որպեսզի կարեկցության ալիքն իջներ, մոր հանդեպ զգար անտարբեր սառնություն:

Տիտոսը հասավ կայծակի հարվածից ճաքած քարին, որից դեն արահետը իջնում էր ձորի վրա, մի ուրիշ սարով բարձրանալու համար: Ծաքած քարը նրա ամենից հեռու սահմանն էր, որից դեն Տիտոսի ոտքն առաջին անգամ էր կոխում:

Քարի մոտ մի քիչ շունչ առավ, նստեց: Բավական ճանապարհ էր անցել: Առաջին անգամ հայրենի գյուղը նրա աչքում շատ փոքր թվաց: Ահա գետակը, Անտոնենց այգին... Սարի տակին սպիտակին էր տալիս քարհանքը, որտեղից դպրոցի աշակերտները կավիճ էին տանում: Տիտոսը տեսավ և գետի մեծ քարը, որի վրա կավիճով մի օր նա արտագրեց «պառավի ուլերը»: Աչք ածեց իրենց տունը տեսնելու, շերեաց: Հարևանի բարձր պատը խանգարում էր:

Քրտինքը ցամաքեց, Տիտոսը վեր կացավ, մի անգամ էլ նայեց գյուղին: Այնքան ցանկացավ, որ մեկը կտուրի վրայից նայեր իրեն, մինչև սարի հետևն անցներ: Գուցե Ազրայելից ծածուկ մայրը կալից նայում է: Երևի լաց է լինում, գոգնոցի ծայրով սրբում արցունքը, որ մարդ շտեմեի...

Փողոցում կանգնել էր: Մի քիչ հետո մայրը շտապ քայլերով դուրս եկավ, հացի կապոցը թևի տակ: Լաց եղավ:

— Էս երկու արծաթն էլ առ, ճանապարհին պետք կգա...

Իր մաշված գոտին կապեց Տիտոսի մեջքին, կուացավ, աչքերը համբուրեց:

— Չմրսես, եկողով իմաց տուր, որ հասել ես... Դե՞...

Բայց խոսքը կիսատ մնաց, ոտնաձայն եկավ: Մի անգամ էլ համբուրեց ու դուռը ծածկեց:

Գյուղն արդեն մնաց սարի հետևում: Բայց սարի հետևում մնաց և նրա տխրությունը: Թեև արցունքը սրբեց և մեծ քայլեր անելով իշավ կածանով: Ձորակում մի ուրիշ կածան էլ էր միանում և երկուսի խառնուրդից ճանապարհը մի քիչ ավելի էր լայնանում:

Ջրի մոտ Տիտոսը քաղց զգաց, մոր շինած պաշարը բաց արեց: Երբ կոացել էր ջրի վրա, կողքին ոտնաձայն լսեց, վեր կացավ:

Հարևան գյուղից մի իշավոր գնում էր նույն ճամփով, ինչ որ Տիտոսը: Նա հացը մեջքին կապեց, միացավ իշավորին:



Բարձր սարերը ջրբաժան սահման են երկու մեծ գավառների մեջ: Սարերի արևմտյան փեշերից սկիզբ առնող մանրիկ գետակները ստորոտում միանում են իրար, որպեսզի ներքև, սարահարթում կազմեն հանդարտահոս և լայն տարածվող մի գետ:

Հաջորդ առավոտյան ջրբաժան սարերի գլխից Տիտոսը ետ էր նայում սարահարթին, որի գնդաձև փոսերի մեջ ընկած էին մեծ ու փոքր գյուղեր: Այդ գյուղերից մեկումն էր գիշերել Տիտոսը, առավոտ կանուխ վարթնել, շարունակել ճանապարհը:

Մի պառավ կին հյուրընկալել էր նրան, քնելու տեղ տվել, հարցուփորձ արել: Լուսաբացին պառավը թանով ապուր էր եփել: Եվ երբ Տիտոսը փայտի գդալով տաք ապուրն էր ուտում, պառավը սիրտ էր տվել նրան.

— Ծանապարհը լիքը մարդ է, գնացող եկող շատ կա: Հենց մի ճանապարհ է գնում մինչև սարի գլուխը, էնտեղից քեզ ցույց կտան...

Այդ մի ճանապարհով էլ բարձրացել էր Տիտոսը, ճանապարհին մի քանի հոգու տեսել, որոնք զարմանքով էին նայել նրան:

— Էս հասակին, որ սա վախ շունի մենակ գնալու, ուրեմն սրտոտող պիտի լինի,—ասաց մեկը, որին Տիտոսը հարց տվավ, թե երբ կհասնի կտորած քարվանսարին:

— Արևով կհասնես... Առաջիդ իշավորներ են գնում, որ ուզենաս՝ նրանց կհասնես,—ասաց մարդը:

Տիտոսը քայլերն արագացրեց: Ինչքան բարձրանում էր սարն ի վեր,

օգն այնքան սառնանում էր, կանաչն ավելի շատանում, թեկուզ աշնան սկիզբն էր:

— Ա՛յ հորթերը էստեղ լինեին, ի՞նչ կուտեին,— մտածեց նա, ետ նայեց մի ուրիշ լեռնաշղթայի, որի գագաթներին ամպ էր նստած և որի հետևին հայրենի գյուղն էր:

— Տեսես հիմա հորթերն ո՞վ է պահում....

Կածանով մենակ էր բարձրանում, ինքն իրեն միտք անում: Հեռվից նա անտառից մոլորված արջի թոթոթի էր նման, որ ընկել էր բացուտի մեջ, բրդոտ ոտքերն արագ էր փոխում, մյուս անտառին հասնելու համար: Չլինի՞ թե բացուտում տեսնեն իրեն:

Գագաթին ամպերը թանձրացան, բրդի գորշ մաշանշների պես իջան գետնին, փաթաթվեցին ոտքերին, շորերի վրա խոնավություն մաղեցին, տրեխները թացացան: Ճանապարհը հազիվ էր երևում, ամպը մեկ խտանում էր, մեկ նոսրանում: Նոսրանալիս նա ճանապարհն ավելի հեռուն էր տեսնում, բայց երբ խտանում էր, Տիտոսին թվում էր, թե ճանապարհն էլ է հալվում ամպի մեջ:

Եթե հանկարծ մոլորվեր, հեռանար ճանապարհից, մութն իջներ ու մնար սարում: Այդ միտքը վախեցրեց նրան, ուզեց կանչի, քայլերն ավելի արագացրեց: Գուցե հասներ իշավորներին: Միայն թե չմոլորվեր, ամպած գիշերը սարում չմնար: Հանկարծ գայլերը քարի տակից ցցվեին ճամփի վրա: Ի՞նչ պիտի աներ... Ինչո՞ւ նստեց ամպը սարին: Արև լինեք, ինչպես երեկ, ոչ մենակություն կզգար, ոչ վախ:

Տիտոսն իր մտքերի հետ էր. հսկա քայլեր էր անում, հանկարծ տեղում մեխվում, երբ ականջին շշուկ էր հասնում կամ աչքն ընկնում էր ճամփից հեռու ընկած տձև քարերին: Գուցե գայլեր են մրափած:

Նա արդեն սարի չորբաժան սահմանն անցել էր, ետ էր թողել սարահարթն ու ծառաստանների մեջ թաղված գյուղերը, մհալի հանգարտահոս գետը: Եթե արև լինեք, գագաթից վերջին անգամ կտեսներ այդ ամենը, հեռու կապույտի լեռնապարը, որի հետևին հոր կիսավեր սառած թոնիրն էր, մայրը, պառավ կատուն, որ արդեն վայրենացել էր:

Մի շուն հաչեց, երկորդը նրան ձայնակցեց: Տիտոսը կանգ առավ լսողությունը լարեց հաշոցի կողմը: Գուցե գյուղ է, բայց ինչու Անտոնը ոչինչ չասաց: Այդ մտքին հաջորդեց մի ուրիշը, ազվեսն էլ շան նման է հաչում: Հանկարծ շատ մոտ լսեց հաշոցի ձայն, երկու սովեր կլանչեցին և միեւն Տիտոսը կկոտնար քար վերցնելու, ձախ ազդրի փափուկ մի մեջ զգաց սուր ծակոց. վայր ընկավ ու ցավից բարձր ճչաց:

Շները ետ փախան, տասը քայլի վրա նստեցին խուլ մոտոցով: Տիտոսի կանչին ամպի միջից երևաց հովիվը, թաղիթի վերարկուն ուսին: Նրան թվաց, թե հովիվը երկնքից իջավ: Շները վնգստոցով հեռացան, հովիվը մոտեցավ Տիտոսին, ոտքի վերջին նայեց:

— Բան չկա, հիմա արյունը կկտրվի,— ասաց նա:

Տիտոսը վախից գունատվել էր: Ոտքի կանգնեց և նոր միայն զգաց, որ ձախ ազդրը ցավում է, ասես մեկը եղինջի փշերով ծալճկվել էր փափուկ միսը:

Հովիվը թաղիթից մի քիչ բուրդ հանեց, փաթաթեց վերջին:

Եվ երբ Տիտոսը կարողացավ մի քանի քայլ անել, մարդը հարցրեց.

— Բա ո՞ւր էլզպես մենակ...

— Մենակ չեմ, ընկերներս հրես հետեիցս գալիս են,— ասաց Տիտոսը, աչքի տակով նայեց հովիվին, ստուգելու՝ արդյոք հավատա՞ց նա: Հետո նրան հարցրեց, թե ուր է տանում ճանապարհը, հեռո՞ւ է կոտրած քարվանսարան:

— Դեռ օր շատ կա, արևը մայր չմտած կհասնես: Հենց էլզպես վեր արի... — ասաց հովիվը, մի քիչ էլ կանգնեց, միեւն Տիտոսը ձախ ոտից կաղալով կորավ ամպի մեջ: Հետո փաթաթվեց փերարկուտում, սուլոցով բարձրացավ ոշխարի մոտ:

Տիտոսը քանի իջնում էր, ամպն այնքան էլ նոսրանում էր: Սարի քամին ծվեն-ծվեն էր անում ամպի դեզերը, թշում ներթև, ուր ամպի մանրիկ բուլաները հալվում էին, կորչում:

Մի քիչ հետո ամպի միջից երևաց արևը: Դիմացը չոր, ցամաք ժայռեր էին, կարմիր ու գորշ քարեր, որոնց վրա անկարգ բուսել էին կարճ-լիկ մացառուներ: Զորակները շատ հեռվում հալվում էին, աստիճանաբար ցածրանում և ձուլվում տափաստանի հետ:

Տափաստանը Տիտոսի աչքին անծայր թվաց: Հեռվում դժվար էր որոշել տափարակի կապույտ հորիզոնը: Հարթ երկիրն աննկատորեն միանում էր կապույտ երկնքի հետ, հեռուներում կազմում մի այլ աշխարհ, որ ո՛չ ծով է, ո՛չ երկիր է, ո՛չ էլ անծայր անապատ:

Հեռեն ամպոտ սարն էր, որի վրայից նա անցավ: Սարի գլխին դարձյալ ամպ կար: Մի պահ Տիտոսին այնպես թվաց, թե սարը մինչև երկինք է հասնում, շները բարձր ամպերի մեջ վրա տվին իրեն:

— Չո՞ւ, չո՞ւ,— լսեց Տիտոսը, երբ մի քիչ ցածրացավ ճանապարհով: Բարձրացավ քարի գլուխը, նայեց ձորին: Իշավորներն էին:

Արևը մայր էր մտել, երբ հոգնած քարվանսը հասավ կոտրած քարվանսարին: Քարվանսի հետ իջևանի բակը մտավ և բեզարած Տիտոսը:

Գիշերով քարվանսարա ուրիշ ուղևորներ էլ եկան: Հայեր կային, թուրքեր՝ իշով, ձիով: Ուղտապաններ եկան, որոնք ուղտերով նավթ էին տանում այն մահալը, որտեղից ինքն անցավ: Գուցե ուղտապաններից մեկն էլ իրենց գյուղը նավթ տանի:

Տիտոսը պառկեց խսիրի վրա, պայուսակը գլխի տակ: Միտն եկավ, թե ինչպես էր ուղտապանը գյուղում կանչում.

— Նավութ ալան, ա՛յ նավութ ալան*...

Հավաքվում էին նրա գլխին և մինչև գյուղը նավթի գինը շորոշեր, ոչ ոք նավթ չէր առնում: Ուղտապանը բարկանում էր, սպառնում հեռանալ:

Ցեխապատ սենյակում հատակի խսիրների վրա պառկել էին բեզարած ուղևորները, ով որտեղ ազատ էր տեսել: Մեկը ձիու հարդով լի պարկն էր դրել գլխի տակ, ուղտապանը նավթոտ ջվալն էր գցել մեջքին: Շատերը խոր քնի մեջ խոխուացնում էին, ոմանք օջախի մոտ նստած դեռ թեյ էին խմում: Քարվանսարայի տերը շուտ-շուտ ներս ու դուրս էր անում, գիշերով ճանապարհվողներից հարկն առնում, հարդ շունեցողներին հարդ տալիս, էլի նստում տախտակների մոտ, նավթի փոքրիկ ճրագի կողքին, մի քիչ ննջում, մինչև մեկը գոմից կանչի և կամ օջախի մոտ թեյ խմողները մի կտոր շաքար ուզեն:

Տիտոսի կողքին պառկածը ջորեպան էր, աղ էր տանում ցորենի հետ փոխելու: Առավոտյան ջորեպանը պիտի անց կենար նույն սարով, որի վրայից անցել էր Տիտոսը, ամպի քուլաների միջով:

Տիտոսն աչքերը նոր էր փակել և ոտները հանգիստ մեկնել խսիրի վրա, երբ զգաց, որ մեկը ոտները կոխ տալով եկավ, կողքին պառկեց: Ցավից զարթնեց, ոտքը ետ քաշեց, տեսավ, թե ինչպես մարդը մեկնվեց:

— Որտեղացի՞ ես,— հարցրեց նա:

Նա թեկուզ ցավ էլ զգաց, բայց մարդու հարցի մեջ կարեկցանք տեսավ, մոռացավ ցավն ու պատասխան տվավ:

— Ո՛ւր ես գնում, մենա՞կ ես,— հարցրեց նա, գլխատակի կապոցը պատին հենելով:

— Բևան:

Մի քիչ հետո մարդը հարցրեց.

— Ճանապարհի ծախս, ձեռքափող ունե՞ս...

* Նավթ առնող, ա՛յ նավթ առնող:

— Ունեմ, հա՛, բիլեթի փող: Հրես ծոցումս կարած է,— ասաց Տիտոսն ու ձեռքը ծոցին տարավ, մատերով շոշափեց փալասի կտորը, որ մի քանի տեղից թելով կարած էր ծոցին: Շուտով կհասնի մաշինին: Ահա կտրած քարվանսարան, որի մասին ասել էր Անտոնը:

— Ուղիղ ճանապարհ է, կգնաս, կհասնես մաշինին:

Գուցե Անտոնն էլ է գիշերել այդ իջևանում, պառկել նույն խսիրի վրա: Ինչքա՛ն պիտի զարմանա, երբ տեսնի Տիտոսին:

Ուրախության ալիքը բարձրացավ այնքան, որ սրբեց ետ վանեց քունը: Ինչո՞ւ կողքին պառկած մարդը էլ ուրիշ ոչինչ չհարցրեց: Գուցե Բևանու կողմերից է գալիս: Չի՞ տեսել արդյոք Անտոնին: Եթե նա գիտենար ինչ մտքեր կան Տիտոսի գլխում, եթե հարցներ: Տիտոսը բոլորը կպատմեր:

Սակայն մարդը քնել էր, ջորեպանն էլ քնի մեջ անկապ խոսքեր էր ասում: Օջախում կրակը մերթ հանդարտում էր, բոցը գետնի երեսին էր պակում, ճիգ անում օջախի մոտ ընկած, կեսը վառված ցախերին հասնելու: Եվ երբ կրակի լեզուները հասնում էին ցախին, օջախը նորից բոցավառվում էր, լույսի տակ Տիտոսը տեսնում էր տան ցեխապատը, եղեգնով ծածկած կտուրը:

Իրենց գյուղում պատերը քարից են, շատ տների վտուրներն էլ է ալ քար, հաստ գերանների վրա: Ինչքան կզարմանային գյուղում, եթե մեկը իր կտուրը եղեգնով ծածկեր:

Քնելուց առաջ Տիտոսի վերջին միտքն այն մասին էր, թե չի՞ կաթում այդ կտուրը անձրև օրերին: Հետո քունն իջավ, միտքն օրորաց, հալվեց, ուր կես գիշերին դառնա երազ:

Երազի մեջ Անտոնն էր, ձեռքի ճիպոտով խփում էր մոշի ճյուղերին, տերևները փրցնում: Կանչում էր, Անտոնը պատասխան չէր տալիս: Ձեռք էր թե հորթի ոտք կրծքի վրա, ձայնը լավ չէր հնչում: Քնի մեջ շարժվեց, երազը փոխվեց...

Առավոտյան Տիտոսն ուղ զարթնեց, քունը հաղթել էր նրան: Նստեց խսիրի վրա, աչքերը տրորեց, մի պահ զարմացած նայեց շորս կողմը: Հետո վերհիշեց քարվանսարան, օջախի գիշերվա կրակը: Կողքին քնած մարդ չկար: Բակում ուղտապանները նավթի պարկերն էին բարձում ուղտերին: Իշավորները տոպրակի մեջ դարման էին լցնում:

Իջևանի առաջ՝ առվի ջրում, Տիտոսը երեսը լվաց, ձեռքը տարավ պայուսակի հացին: Ճամփի պաշար դեռ ունեցր: Պառավի տված բլիթները մնում էին, թեկուզ գլխատակին մի քիչ փշովել էին:

Երբ մի քիչ հետո իշավորները ճանապարհ ընկան, Տիտոսն էլ պա-

յուսակը ուսին նետեց, փայլը ձեռքն առավ, որ հետևի նրանց: Իշևան տերը տեսավ այդ, կանչեց.

— Ա ջահել, քնելուդ փողը...

Տիտոսը զարմացած կանգնեց: Նա չհասկացավ, թե ինչու պիտի փող տա քնելու համար: Այնքան մարդ էր գնում գալիս ու գլուզում ոչ որի մաքովն էլ չէր անցնում փող տալ: Ի՞նչ կասեին: Բայց երբ ուղտապանները ծիծաղեցին, մեկն էլ սրախոսեց, թե՛

— Քեռու տունն է կարծել,—Տիտոսը համազօգեց, որ այդ օրենք է, սահմանված կարգ: Ինչո՞ւ Անտոնը չէր ասել այդ մասին:

Ուղտապանները տեսան, թե ինչպես նա երեսը մյուս կողմը դարձրեց, ձեռքը տարավ ծոցին: Մի վայրկյան հետո Տիտոսը բարձր ծլկթաց, օձից խայթվածի պես:

— Վա՛յ աման, փողս...

Փայլը ձեռքից ընկավ, փայտի հետ էլ Տիտոսը: Նա ոտքերը գետնովն էր տալիս, քարերը շանգում, կանչում, լաց լինում, լացի հետ էլ օգնություն կանչում:

— Վա՛յ աման, փողս...

Ուղտապանները նախ չհավատացին, քարվանսաբայի տերը կարծեց, թե տղան դիտմամբ է անում: Բայց հետո հավատացին, ուղտապանների երկուսը մոտեցան, սիրա ավին:

— Ինչքա՞ն էր:

— Բիլեթի փող, Բևանի մաշինի փող: Ես ոնց անեմ, վա՛յ աման...

— Տղա մի լինիր, լավ... Կաշխատես, մի մեծ փող չի: Կասես՝ բեղ անփող կտանեն, մի մարդ կճարվի...

Արխալուղի կոճակներն արձակված, մի ձեռքը ծոցին բռնած, Տիտոսը շոտած աչքերով մեկ սրան էր նայում, մեկ նրան:

Ո՞վ տարած կլինի: Զոքեպանը, բայց նա խոր քնի մեջ էր: Գուցե այն մարդը, որ այնպես սրտանց հարցրեց, թե ուր է գնում, հետո կողքին գտնվել, քնեց:

Իշևանները հեռացել էին: Ի՞նչ անել. ետ վազել սարն ի վեր, հասնել ջրեպանին, ոտքերն ընկնել, աղաչել, գուցե ետ առ: Բայց ո՞ր հասնի նրան, գուցե ուրիշ ճանապարհով է գնացել, գուցե տեղեկություն էլ չունի փողից:

Քարվանսաբայի տերը վկայեց, որ մյուս մարդը լույսը չբացված է գնացել: Վճարել է իր հարկը: Նրա ձին բեռան տակ չէր, ո՞վ էր, ո՞ր գնաց, ոչինչ չի կարող ասել:

— Էսքան տարի է էստեղ եմ, էդպես բան չեմ տեսել...

Եվ իշևանի տերը նորից կասկածեց—գուցե Տիտոսն է հորինում: Բայց տղան լալիս էր, աչքերով օգնություն աղերսում, մի էլք:

— Լավ, գնա՛, իշավորներին հասի: Ինձ հասանելիքն էլ քեզ եմ բաշտ խում,—ասաց տերը և ներս մտավ:

Տիտոսը մի քիչ էլ սպասեց: Ուղտերը տեղից վեր կացան, դանդաղ քայլերով ճամփա ընկան: Նա մեկ ուղեց հետևել ուղտերին, ետ վերադառնալ, մի ուղտապանի հետ գնալ գլուզը: Մեկ էլ ետ վանեց այդ միտքը, դեռին ընկած փայտն առավ և արագ քայլերով իջավ ձորի լայն ճանապարհով:

Արևը կեծացել էր: Գլուզում արեն այդպես խանձում է միայն ամռան օրերին: Արևից քարերը տաքացել էին, ձորը թվում էր երկար կոկորդ, որի միջով երբեք սարի հովը չի անցել: Չէր երևում աշնան կանաչը և եթե ամառի մի քուլա էլ մոլորվեր, հասներ ձորին, տաքը սարի ամպին պիտի հաչեր:

Ձորի միջով հոսող պղտոր գետակի ափերին բուսել էին դեղձի ու միրանի ծառեր: Տիտոսի տեսածը խնձորի էր, կեռասների ու տանձիս էլավ ձորը, մոտեցավ ծիրանի ծառին, նայեց և շկարողացավ որոշել խնձորենի է, թե տանձի: Կոացավ գետակից ջուր խմելու: Սարի հետևին կանաչի հետ մնացել էին և սառնորակ ջրերը: Ձորի գետակի ջուրը փրած խոտի համ էր տալիս: Տիտոսը միայն բերանը ողողեց, ճանապարհ ընկավ...

Եվ երբ իշավորներին հասավ ու նրանց էլ պատմեց փողի մասին, մի քանիսն իսկույն հարցրին, թե ինչքան էր:

— Ոչինչ, անցածն անցել է,—ասաց ծերունի իշապանը, որի երկար, կախ ընկած ոտքերն իշու քայլերի հետ օրորվում էին:

Արևը նեղացնում էր: Տիտոսը փափախով սրբեց ջրտինքը, արխալուղը հանեց: Ուսին գցելուց առաջ մի անգամ էլ նայեց աստառին, որից բարակ թելերով կապել էր փողի փալասը: Թելերից երկուսը կախ ընկած մնացել էին:

Արևի տակ ավելի շատ հոգնեց: Փորձում էր ոտքերը գետնից բարձր վերցնել, բայց չէր կարողանում: Տրեխները թավում էին ճանապարհին, փոշի հանում, փոշին նստում էր բրդի շալվարի վրա: Մարավից լեզուն լորտեում էր, պոռչներն էր լիզում, գլուխը երբեմն թեքում ձորի կողմը, դեռ պղտոր ու անհամ ջրին նայում:

— Հիմա սարի աղբյուրի մոտ լինեի, ինչքա՞ն կխմեի,—մտածեց Տիտոսը: Միտն ընկան հորթերը, աղբյուրը, որի սառը ջրում հաց էր թափում, խաղ անում ջրի հետ, շաղաց շինում կամ ձեռքով մաքրում. աղբյուրի ակը, խիճ ու ավազ դուրս թափում: Ձուրը նախ պղտորում էր:

հետո պարզում, աղբյուրի ակն ավելի խոր էր թվում, բայց շուրջ նորից փլցնում էր ավազի պատերը:

Էշերն էլ էին հոգնել: Հենց որ մեկի տերը մի քիչ ետ էր ընկնում կամ իշու վրա ննջում, մահակը գետնով քաշ տալիս, էջը զգուշությամբ մոտենում էր ճանապարհի կողքին բուսած մացառին, մի քանի տերև պոկում, մինչև տերը կհասնեն կամ կզարթնեն և ձեռքի մահակով մի կշափեր իշու փորին:

Տիտոսն աշխատում էր ետ շմնալ: Ուժ էր տալիս ոտքերին, երբեմն վազում, երբ նկատում էր, որ իր և իշավորների միջև եղած տարածությունն ավելի էր մեծանում: Վազելիս փոշի էր կուլ տալիս, պայուսակը համալրափ ցնցումներով զարկում էր թիկունքին:

Ճանապարհը ձանձրալի էր, միապաղաղ: Թվում էր թե ձորը վերջ չպիտի ունենա, թեկուզ ամեն մի պտույտ թվում էր որպես վերջինը, որից հետո պիտի սկսվի տափարակը: Բայց պտույտը վերջանում էր, որպեսզի մի ուրիշը ծայր առնի:

Ճանապարհին մի քանի գյուղեր տեսան, քարերի գլխին, ծիրանի այգիների մեջ: Իրենց գյուղի նման չէին: Տները ցածիկ, առանց կալ ու մարագ, իրարից հեռու, մեկը մի քարի տակ, մյուսը առվի եզրին:

Ո՛ւր էին Անտոնի պատմած բարձր տները, փողոցները, ուր հազար մարդ է անցնում, ավելի քան Կատարի խաչի ուխտի օրը: Ո՛ւր էին կառքերը, ավտոմոբիլները, որոնց վժժոցից մարդ վախում է, ետ փախչում:

Եթե իշավորներից ետ մնալու հոգսը չլիներ, գուցե Տիտոսն ավելի երկար նայեր, թե ինչպես են ձորի գյուղում մի զույգ եզով վար անում: Մի քիչ վազելուց հետո, երբ ծերունի իշապանը Տիտոսին ձայն տվեց, թե իջևանը հեռու չի, իրենք պիտի գիշերեն այնտեղ, նա քայլերը դանդաղեցրեց:

Արևը կարմրին էր տալիս և արևի շողերից քարափի կատարները փայլում էին պղնձի կարմիր փայլով, սուվերներ կախում ճանապարհի վրա:

Տիտոսը ճանապարհի կողքին բոստաններ տեսավ: Ահա թե որն է սեխը: Աշնանը հեռու տեղից սեխ էին բերում գյուղ, փոխում գարու հետ: Տիտոսը և ուրախ էր, և հպարտ: Նա տեսավ այն երկիրը, ուր բոստաններում սեխ է բուսնում: Եթե վերադառնա՞ր գյուղ... Ինչե՞ր պիտի պատմեր և ինչքան պիտի զարմանային ընկերները:

Ճամփի կողքին հինայած մորուքով մի մարդ էր շոքել: Նրա շրթունքները շարժվում էին, մարդն իրիկվա նամազն էր անում, անթարթ աչքերը գեպի հեռուն: Երբեմն ձեռքերը կրծքին էր դնում, զլուխը խոնարհում

գետնին, մի քիչ մնում այդ դիրքով, ապա բարձրանում, նորից շրթունքները շարժում:

Երբ Տիտոսը մոտեցավ նրան, մարդն ասես ոչ տեսավ և ոչ էլ նրա ոտնաձայնը լսեց: Տիտոսի աչքն ընկավ նրա կողքին, հենց ճամփի վրա դարձած սեխերին, որոնց մոտ հասարակ կշեռքն էր, քարե գրվանքաներով:

Եթե փողը լիներ, կառներ,—այն դեղինը, որի կելպը հասնելուց ճամփի էր, մի տեղն էլ սևացել: Ի՛նչ համեղը պիտի լինի... Գյուղում նա միայն մի անգամ էր սեխ կերել, ավելի ճիշտ՝ սեխի կելպ:

Տիտոսն ինքն էլ չիմացավ, թե ինչպես ձեռքը դեղին սեխին մեկնեց հենց այն ժամանակ, երբ մարդը մի անգամ էլ երկրպագեց: Եվ երբ թևի տակ զգաց հասած սեխի փափկությունը, քայլերն ակամայից արագացան: Ճանապարհն աչ թեքվելիս, Տիտոսը մի անգամ էլ ետ նայեց: Մարդը շարունակում էր աղոթել:

Մի քանի քայլ էլ արեց, հետո նստեց, դանակը գրպանից հանեց և խրեց սեխի մեջ: Իրոք, որ սեխը և՛ հասած էր, և՛ համեղ: Սեխը կրծելիս հանկարծ նրա ականջին վազող ոտքերի ձայն ընկավ, թվաց թե նախիրից փախած հորթ էր վազում: Պատառը դեռ կուլ չտված, մեկ էլ առաջը ցցվեց աղոթող մարդը, թևերը քամու շաղացի պես իրար տալով: Մարդը բարձր կանչեց Տիտոսի ականջի տակ և ոտքը թափով վրա բերեց նրա թիկունքին: Տիտոսը փովեց գետին և տեսավ, թե ինչպես իր գլխի վրայից թռան սեխի շարդված կտորները:

Ուղղափառ սեյիդը, հավատարիմ հնօրյա նամազին, սեխի համար աղոթքը չէր ընդհատել:

* * *

Մուփ էր, երբ Տիտոսը հասավ իջևանին: Երունի իշապահը դեռ չէր քնել: Եվ երբ Տիտոսը մեկնվեց խափի վրա, ծերունին ասես ինքն իրեն հաշվեց, թե լուսաստղը դուրս չեկած եթե ճանապարհվեն, կարո՞ղ են թեյին հասնել քաղաք:

— Մաշինն էլ հենց էդ ժամանակն է ճանապարհվում Բևանու կողմը: Թե բիլիթ ճարես, կնստես... Աստված մեծ է, մի լույս կհասնի,—ավելացրեց ծերունին, կողքին դարձավ, լիաթոք հորանջեց ու լսեց:

Իջևանի տերը, որ կաղլիկ ոտը քարշ տալով ներս ու դուրս էր անում, վրա բերեց:

— Ինչալլահ, ինչալլահ...

Տիտոսին այնպես թվաց, թե կաղն իր մտքերն էր անում, որոնց ճեղքներից նա ասաց «ինչալլահ»:

Վաղը... Ուրեմն վաղն առավոտյան նա կտեսնի վագոնները, որոնք հարյուրներով մարդ են տանում երկաթ գծերի վրայով: Եթե փողը մնացած լիներ: Ի՞նչ է անելու վաղը: Եթե՞ պիտի ետ մնա Իսկ եթե ճամփի պաշարը վերջանա՞:

Տիտոսը ձեռքով շոշափեց պայուսակը, հացը նրան սիրտ տվավ: Եվ տոները մեկնեց, ձեռքը կամացուկ տարավ ազդրի վերքին, այնքան թեթև թվաց վերքը: Նույնիսկ ժպտաց, երբ միտն ընկավ շների վրա տալիս, ինչպես ինքը վախից գետին ընկավ:

Կաղիկ մարդը կողպեց իշկանի դուռը, ոտը քարշ տալով մոտեցավ և տախտակների վրա պակեց:

Տիտոսը շուտ եկավ տեղում, գլուխը մոտեցրեց ծերունու թիկունքին, կուշ եկավ: Կաղիկ մարդը պակեկուց առաջ մոտեցավ, ճրագը իջեցրեց, նայեց Տիտոսին, հետո պատի նիշին նայեց և երբ Տիտոսը պակեած տեղից ձայն տվավ, թե ինչ է փնտրում, կաղը պատասխանեց.

— Հե՛լ, մի փետ կար...

Հետո նա հարցրեց Տիտոսին, ախ անգամ ճրագը հանգցնելուց և տեղում պակեկուց հետո:

— Մայր ունե՞ս, տղա...

— Ունեմ:

— Հա՞յր:

— Չէ՛:

— Բա էդ ալևորը քո ի՞նչն է...

— Հե՛լ,—ասաց Տիտոսն այնպիսի շեշտով, որ նշանակում էր, թե թող քնեմ:

«Ինչալլահ» լռեց: Քիչ հետո Տիտոսն էլ քնով անցավ, մոռացավ արթցին էլ, հոգնածությունն էլ...

Տիտոսը դեռ երկար չկարողացավ քնել:

— Կոտրած քարվանսարից մի ուղիղ ճանապարհ է, մի օր կգնաս: Լքենս, մյուս օրը կհասնես վագոնին...

Ճանապարհն ուղիղ էր, սակայն այդ ճանապարհի վրա այնքան խուժուխտոջ կար, օրերն այնպես փորձանքներ էին պահել և այնքան արկածներ: Առաջ ի՞նչ հանդարտ էին հասում օրերը, որպես պաղ ասու կանաչ խոտերի մեջ և ինչպես պղտոր էր ձորի գետը, ջուրը դառնահամ:

Լուսաստղը չէր ծագել, երբ ծերունին տեղում նստեց, հորանջեց և ձայն տվեց ընկերներին: Տիտոսն իսկույն վեր կացավ, պայուսակը-թափ տվավ:

— Ականջդ ինչքան թեթև է,—ասաց ծերունին Տիտոսին:

— Ես կանուխ էի զարթնել,—ասաց նա և դուրս եկավ իշկանից: Աչքերն ուռած կաղիկը մեջքը քորելով մոտեցավ իշապաններից քնկու փողն ուզելու...

— Տեսա՞ր, բալա,—ասաց ծերունին, երբ էշերի քարվանը ճանապարհվեց,— Աստծո լույսը սրան են ասում: Միտն էլ չէր, որ փող առնի քնկից:

Տիտոսը լուռ քայլում էր ամենից առաջ: Նրան թե էր տալիս այն միտքը, որ շուտով արևը պիտի ծագի և հենց արևը մի քիչ բարձրանա թե չէ, պիտի հասնեն վագոնին: Էլ ոչ մի սար, ոչ մի շուն ու իշկան:

Չորն էլ էր այդ ասում: Քանի գնում, բլրակները տափականում էին, խոնարհում էին գագաթները, ձորի բարձր ժայռերը մանրանում էին, նոսրանում:

Երբ լուսաստղը դժգունացավ ու կորավ կապույտի մեջ, Տիտոսի աչքի առաջ բացվեց այն անծայր տափաստանը, որի հորիզոնը հեռվից դժվար եղավ որոշել, իմանալ հեռվի կապույտը երկի՞նք է, թե հարթավայր:

Լուսաբացին, օդի մեջ եղած փոշին ցողի հետ իջել էր գետին: Օդը մաքուր էր և թափանցիկ, որպես սրբած ապակի: Եվ երբ Տիտոսը հարթավայրի վրա կանաչ այգիներ տեսավ, ուրախությունից ձեռքը մեկնեց այգիների կողմը, կանչեց ծերունուն: Իշավորներից մեկը շտապեց պատասխանելու.

— Մաշինը հենց էնտեղ է:

Ճամփի կողքին Տիտոսը բամբակի մարգեր տեսավ: Բացվել էր բամբակը, կնգուղների սպիտակությունից ասես դաշտում ձյուն էր եկել: Վաղեց, քացված կնգուղներից մեկը պոկեց:

— Բամբակն էդ է էլի՞,—ասաց ծերունին:

— Տեսնես մեր կողմերում կբսնի՞,—հարցրեց Տիտոսը, կնգուղը քորելով:

— Չէ՛, բամբակը սար տեղում չի բսնում:

Տիտոսի միտն ընկավ դյուզի ձմեռը, սպիտակած գաշտերը: Խուրձը շալակին անցավ դպրոցի կողքով, մեկը ժպտաց ներսից, ինքն էլ ժպտավ պատասխանեց:

Ի՞նչ են ասում իր մասին գյուղում: Մայրը սպասում է մի լուրի: Երկր ուրիշ հիշողներ էլ կան: Հենց այդ ժամին, երբ արեւելքում ամպերը ոսկու փայլ ունենին, գյուղում կովերին խոտ են տալիս, ծուխը հերդեց բարձրանում է: Ջանունց պառավը արմունկները վեր քաշած պատին անավոտյան թիքն է ծեփում:

Անցներ մի քանի տարի, մեծանար, Անտոնի շափ իմանար, վերագառնար գյուղ, տեսած տեղերը ման գալու: Ո՞վ պիտի ճանաչի հորթաբաժ Տիտոսին:

Արևի բարձրանալու հետ ճանապարհն էլ քշանում էր: Էշերը փորնշացնում էին քթածակերի փոշին, ոտով գնացողները փոշի էին հանում: Տիտոսի քայլերը ետ չէին մնում մյուսներից: Ոտքերն այնպես պինդ էր կոխում, ասես ամեն մի քայլը ուժեղ կամքի մի որոշումն էր անընդհատ քայլելու, բարձրանալու սանդուղքն ի վեր, մինչև գագաթ:

Ճանապարհը քաղաքի այգիների մեջ մտավ: Չորի գետը քաղաքին հասնելիս մանրիկ առունների էր բաժանվում, ջուր տալիս առուններին, խաղողի վազերին:

Տիտոսն առաջին անգամ ոտք կոխեց քաղաքի փողոցը: Թեկուզ քաղաքն ընդարձակ գյուղի պես էր, փողոցները ծուռ ու մուռ, տները ցեխով շինած, ջուրը կեղտոտ, բայց և այնպես նրա համար նոր բան շատ կար ասիական քաղաքի նեղիկ փողոցներում:

Ահա կառքը, մի զույգ ձի լծած: Ինչպես հանդարտ է սլում, ասես անիվները գետնին չեն դիպչում: Ինչքան շատ գլխարկ կար այն խանութի դռան. ինչ լավերն էին: Մեկը միս էր խորովում, սպիտակ գոգնոցը հագին:

— Ճանապարհը շխալվես, բալա,— ասաց ծերունին, որ իշու վրա նստած հետևում էր Տիտոսին: Եվ եթե առաջինը գրուխը բարձր էր պահում, քայլերն ամուր կոխում, ժիր աչքերը խաղացնում բնում, եթե Տիտոսն այդ դիրքով լեռնի աշխարհակալ էր, իշու վրա նստած ծերունին ապացուցում էր, որ իրոք հին դարերում էլ էշը հարգի է եղել և Մարգարեն իշու վրա նստած է մտել հրեական մի խուլ քաղաք:

Շուկայում Տիտոսը բաժանվեց իշապաններից: Նրանք կայարան շափտի գնալին: Մերունին մահակով ցույց տվեց քաղաքի ծայրին ընկած տունը:

— Հրեն է, մաշինն էնտեղ է կանգնում,— ասաց և հարգի տուրակը հագցրեց իշու գլխին:

Տիտոսն իշավ դեպի սպիտակ տունը: Ահա թե որն է երկաթուղու ճանապարհը: Հեռվից արևի տակ պսպղին էին տալիս երկաթի զույգ գծեր: Թվում էր, թե երկաթ չի, այլ շափաղ տվող ապակի:

Սպիտակ տան առաջ մի քանի կառքեր կային: Ներսում մարդիկ շարք էին կանգնել, մոտենում էին նեղիկ պատուհանին, որի հետևից մի ձեռք ներս ու դուրս էր անում:

— Երևան, մի հատ,— լսեց Տիտոսը: Նա էլ է գնում նույն ճանապարհով: Եթե մարդը նրա համար էլ տոմս ստանար:

— Բիլեթը պինդ պահի, որ չկորչի: Թե չէ ճամփին կմնաս...

Անտոնի խոսքերն էին: Հետո մի զանգ եղավ, ճիշտ ժամի զանգի պես: Մարդիկ խոնվեցին իրար: Փնշոցով մոտեցան վազոնները, մաշինն այնպես պինդ ծկլթաց, որ Տիտոսը ետ քաշվեց, աչքերը վախից շոց:

— Սա է տանում Բեանու կողմը,— մտածեց Տիտոսը, մոտեցավ մուտքին:

Մի մարդ Տիտոսին ետ տվավ: Տիտոսն էլ վազեց, ամբոխի մեջ փոփախավոր մեկին տեսավ:

— Բա իմ բանը ինչ կլինի, ես առանց բիլեթ... Ցանի թողիլ չե՞ն,— հարցրեց նա: Մարդը ծիծաղեց:

Ետ գնալ չկար Տիտոսի համար: Հարյուր մարդուց ավելի է գնում, ինքն էլ կխառնվի նրանց հետ: Հո չի կտարվի, քանի փութ է, որ... Հացն էլ պրծնելու վրա է:

Այդ ամենը հայտնեց նա մուտքի մոտ կանգնած մարդուն, բայց մարդը չլսեց: Ուրիշներին էր բաց թողնում: Տիտոսի աչքն ընկավ դահլիճի բաց պատուհանին: Մոտեցավ, ցատկեց վրան, ասես գետնից մի ուսույունով իշու վրա նստեց, մի քիչ սահեց և երբ տեսավ, որ նայող չկա, ոտքերը մյուս կողմի վրա կախեց, ցատկեց ու խառնվեց մարդկանց մեջ: Բեանն այնքան մոտ թվաց նրան, բոլոր արգելքներն ընդմիշտ վերացված:

— Մաշինն ուղիղ տանում է Բեանու մեջը...

Մարդիկ բարձրանում էին սանդուղքով. ներս մտնում: Սանդուղքի կողքին կանգնած մեկը, որի գոտում կանաչ կարմիր փայտեր էին կախված, Տիտոսին թույլ չտվավ սանդուղքով բարձրանալ:

— Ո՞ւր կվազես, լապստրակ,— ասաց մարդը ու ետ հրեց նրան:

— Բեան,— կանչեց Տիտոսը, ձեռքով փափախը մի քիչ ետ տանելով:

— Բիլեթ ունե՞ս,— հարցրեց նա:

Տիտոսը ետ քաշվեց, մի քիչ կանգնեց, տեսավ, թե ինչպես են մարդիկ գալիս, սանդուղքով բարձրանում: Աչքն ընկավ մյուս կողմի սանդուղքին, որի մոտ ոչ ոք չէր կանգնած: Կոացավ վազոնի տակ, անցավ մյուս կողմը, ձեռքը մեկնեց սանդուղքի երկաթին: Դուռը փակ էր: Տիտոսը սանդուղքի վրա նստեց:

Այսպիսի երջանիկ ըրպե նա ապրել էր և այն ժամանակ, երբ գոմի ճրագի տակ՝ գրքի սև նշաններին նայելուց հետո, նա հասկացել էր, որ շատերն իրար նման են, հարկավոր է միայն երկար նայել, որ գրքերը լեզու առնեն ու խոսեն:

Երկրորդ զանգին մեքենան սուլեց, անիվները գողգոցով շարժվեցին, վագոնները ձգեցին մեկը մյուսին: Տիտոսը քիչ մնաց ընկներ: Տեղն ամբացրեց, թեև պատ տված սանդուղքի երկաթին:

Առաջին պահ նրան թվաց, թե կամնի վրա է նստած, եզների փափուկ խորձերի վրայով կամն են քշում: Բայց երբ գնացքն արագացավ, նրան այնպես թվաց, թե իրենք մի տեղ կանգնել են, անիվներն ազմկում են ջրաղացքարի պես, հողն է միայն ետ շարժվում և հողի հետ էլ պիտի մոտենար Քանը:

Բայց երբ ճանապարհի կողքին սայլեր տեսավ, սայլերը ետ մնացին, սելվորները գոակներն օդում ճոճելով կանչեցին, Տիտոսը տեսավ, թե ինչպես սայլերը ետ մնացին:

Ընդարձակ դաշտ էր, դաշտի վրա գյուղեր, այգիներ, ճանապարհ: Բամբակը բացվել էր, կանայք կռնում էին, բարձրանում, գոգնոցները լի բամբակ: Հենց որ գնացքը մոտենում էր, նայում էին անշարժ, ձեռքերը ճակատին դնում, մինչև վերջին վագոնն անցնել:

Հորթերը փախան... Տիտոսի աչքին հորթերը լզար երևացին:

— Կավ չի պահում,— մտածեց նա, նայեց հորթարածին, որ մահակին հենած, ոտքերը մկրատի բերանի պես լայն բաց արած, վագոններն էր համարում: Եթե նա իմանար, որ ուրիշ աշխարհից մի ուրիշ հորթարած է գնում վագոնի սանդուղքին նստած:

Առաջին կայարանում կանգ առնելը Տիտոսին զարմանալի թվաց: Նա այնպես էր կարծում, թե գնացքը մի շնչում տեղ պիտի հասնի: Նոր մարդիկ նստեցին, մի քանիսն իջան: էլի երկու անգամ զանգ տվին, գնացքը շարժվեց:

— Ուր մնացին իշավորները, ալևորը, որ քնում էր իշու վրա, ոտները կախ անում: Նրանք նորից պիտի վերադառնային նույն ճամփով...

— Հիմա մեր կատուն պառկել է կտուրի վրա, արևի տակ... Ազրայիլը կալ է կալսում: Եթե հայրը տեսներ իրեն վագոնի մեջ, Հանկարծ վագոնը նստած գնար գյուղը: Սեյդի սեխերը կլցնեք մեջը, թող հետևից վազի: Մարի շները ոնց կփախչեին մաշինի ձայնից... Ամպն ի՞նչ նրա համար, անձրևն ի՞նչ...

Կամուրջի վրայից արագ անցնելիս Տիտոսին թվաց, թե անիվները շարժվում են: Քնազով ետ քաշեց գլուխը: Կամուրջի երկաթները նրան բարակ ճաղերի պես թվացին: Քիչ մնաց փափախն ընկներ:

Գնացքը մի անգամ էլ կանգնեց:

— Երկու,— մտքում հաշվեց Տիտոսը: Միտն ընկավ, թե ինչպես մանուկ ժամանակ մորը հարցնում էր, թե երբ է լինելու զատիկ, ձու ներկեն:

— Քնես վեր կենաս, մեկ էլ քնես, կդառնա զատիկ,— պատասխանում էր մայրը:

Տիտոսը պայուսակին նայեց: Պառավի բլիթները փշրվել էին: Չեղբը կոխեց, բուռը լցրեց: Մոր տվածից մնում էր շոր պանրի մի կտոր և առանց յուղ գաթա, քարի պես պինդ: Գրքերը տեղն էին: Բլիթի փշրանքները կուլ տալիս Տիտոսը բռի մեջ տեսավ կավիճի կտորը, նորից տեղը դրեց: Գրիչն էլ էր պայուսակում: Տիտոսը նայեց գրչին, որի կոթը մասրենու ճյուղ էր, վրան սև թելով փաթաթած ծայր:

Հանկարծ դուռը բացվեց, Տիտոսը քիչ մնաց ընկներ:

— Հը՛, լապստրակ, բռնվեցիք,— ասաց մարդը, որ մուտքի առաջ տոմս էր ստուգում:

— Դե՛, ներս եկ, հիմա հոգեառդ կգա...

Տիտոսը սանդուղքից ցած նայեց: Գետինն արագ էր դառնում, անիվները դղրդում էին: Եթե ցած թռներ...

Բայց մարդը նրա թևից բռնեց, ներս հրեց և դուռը կողպեց: Ներս հրեցիս Տիտոսի փափախը գլխից պակվեց, ընկավ: Նա միայն այն տեսավ, թե ինչպես փափախը ողնու պես գլորվեց ավազի կույտերի վրա:

Մարդը գնաց: Տիտոսը զգաց, թե ինչպես ոտքերի տակ անիվները թափով զարկվում էին տախտակներին, ասես հիմա պետք է տախտակները շարժեն: Ոտքի մեկը բարձրացրեց, աչքը ման ածեց, ավելի ապահով տեղ գտնելու:

Մի ուրիշն եկավ: Առաջին մարդը ցույց տվեց նրան դռան մոտ կուլ եկած Տիտոսին:

— Ո՛ւր ես գնում,— հարցրեց նորեկը:

— Բեան,— պատասխանեց Տիտոսը: Թե մի քիչ արտապնդեց: Ինչու ուզում են ասեն, միայն հասնի քաղաք, Անտոնին տեսնի:

— Ո՛վ ես,— հարցրեց մարդը:

— Տիտոսն եմ, Դաժուց թոռը...

Ու չհասկացավ, թե ինչու մարդիկ ծիծաղեցին իր պատասխանի վրա: Ինքն էլ ծիծաղեց: Նորեկը նրա պայուսակը քրքրեց: Չոր հացի կտորտանք կար, թերթերը մաշված մի գիրք, մի քանի գրտած տետրակներ:

— Կավ, էնտեղ կքնենք,— ասաց մարդն ու հեռացավ:

Տիտոսը ոչինչ չհասկացավ: Եվ երբ մարդիկ հեռացան, գնացքը կանգնեց, Տիտոսը բարձրանալիս համրեց:

— Էս էլ շորս...

Մի քիչ հետո գնացքը շարժվեց: Մարդը մի անգամ էլ եկավ, անցավ մյուս վագոնը: Նա ոչինչ չասաց:

Բաց պատուհանից Տիտոսը գլխարաց նայում էր դուրս: Քամի էր փչում, քամին իրար էր խառնում նրա անլվա մազերը: Տիտոսն այդ չէր զգում: Նրա աչքերը հեռվում փնտրում էին բարձր սպիտակ տներ, փողոցներում հազար մարդ և հազարի մեջ Անտոնին...

Եվ շրթունքները անիվների միալար զրդրոցի հետ կրկնում էին միայն մի բառ.

— Բևան, Բևան...

1928

ՄԱՅՐԸ

Երբ գարնանամուտին Ունանը տնքտնքալով մաշված, ցեցը կերած փայտե սանդուղքը տեղափոխում էր սրահից բակ և պատին դեմ անում, որ վեր բարձրանա ու իրենց տանը վարժված արագիլի բույնը սարքի, — հարևաններն իրար ասում էին.

— Գարունն եկավ... էլի Ունանը լազլազի բունը շքեց: Հրեն հա՛, օճորքի գերանները դմբումբում են, կտուրին որ խաղան:

— Մինն էլ նրանց տունը շքե՛ր...

— Հրեն Ռուշանը կմեծանա՛, կսարքի:

— Է՛, նրանց ցեղը ես գիտեմ, — ասում էր Ունանի զրույցընկեր և դրկից Մեծլումբը, որի աչքերը ծերությունից շորացել, ճաքճեք էին, ձմեռը ճյուղքին մնացած ծիրանի նման: — Գլուխը թափահարելով, Մեծլումբը կրկնում էր իր վաղեմի խոսքը:

— Բարի Յճանի կողմն են քաշել Ռուանի երեխեքը: Առուշանը հլա թե շունի, Ջանու փեշի տակին է սթարվում: Որ մեծացավ, թեին է տալու, թո՛նի ով գիտե ո՛ր աշխարհ...

Բարի Օհանը Ջանու հայրն է եղել, անհանգիստ, ինքն իր ասածի և հակառակ մարդ: Եզան նման աշխատել գիտեր, նրա շալակը ոչ որ չէր կարող տեղից շարժել: Չեղբը եթե ձիու մեջքին էր դնում, ուժով ձին էլ կռանում էր, փորը գետնով տալիս: Երբեմն անհայտանում էր, մի քանի օրից հետո նորից երևում: Ոչ բան էր բերում, որ ասեի թե գողության կամ որսի է գնացել, և ոչ էլ նրան շրջակայքում տեսնող էր լինում: Տուն էր գալիս նիհարած, աչքերը փոս ընկած: Վա՛յ թե մեկը նրան հարցներ գնացած տեղը: Աչքերն այնպիսի դաժանությամբ էր ոլորում, որ հարցնողը լեղապատառ ետ էր քաշվում: Ու միայն քնի մեջ անկապ խոսում էր, մոմտում, այս ու այն կողմը դառնում, ձեռքերը շարժում, ասես կոխ էր բռնել իր նման մի անդաճայի հետ: Մի օր էլ բարի Օհանը գե՛ում է

ու չի վերադառնում: Շատ են փնտրում, հայտնում օրենքին, գյուղերն ու անտառը մարդ ուղարկում, բայց իզուր: Ու հետքից մնում են միայն տապալի նման պատմություններ նրա կյանքի և առեղծված մահվան մասին:

Եթե հարևաններից մեկը խոսք ընկնելուց Ջանուն հայտնում էր Մեծլումբի ասածը, պառավի սիրտը կտորվում էր, շաղվում էր միտքը և մոլորված վերադառնում էր տուն, կանչում որդուն՝ Ռուշանին, նստեցնում սրբը, և մատները նրա մազերի մեջ կոխելով, շոյում, հարցնում, թե սոված չի՞... Հարցնում էր, աչքերը հառում մաքուր ավլած գետնին, որի պատկերն այնքան ծանոթ էր, որ կնկատեր, եթե մի շյուղ էլ ընկած լիներ:

Ռուշանը մոր մոտը շատ չէր մնում. ծլկվում էր կամ փողոց, կամ այգի: Պառավը նայում էր նրա հետևից և ապա ինքն իրեն թոնթորալով, որ նստել է պարապ, վեր էր կենում անխուսափելի դարձած աշխատանքն անելու:

Մի փոքրիկ տուն ունեին և տան մոտ՝ պարտեզ, որի մի մասը բանջարանոց էր: Տարին բոլոր Ունանը պարտեզից դուրս ուրիշ տեղ աշխատանքի չէր գնում: Թեկուզ պարտեզը փոքր էր, ծառերը ծեր, մամուռած փլակներով, բայց Ունանի համար աշխատանքն անպակաս էր: Քանզված ցանկապատն էր նորոգում, շորացած ճյուղքը կտրում, ծառի տակը փորում և մատներով փափկացնում հողը, ավելորդ խոտերը պոկոտում, — մի խոսքով պարտեզն ու բանջարանոցը նույնքան մաքուր ու խնամքով պահում, ինչքան կինը՝ Ջանին դուռն ու բակը:

Եվ ամեն տարի ծառերի ճյուղերը ծանրանում էին խնձորից ու տանձից: Ունանը փայտյա հենարանները մեկ այս ճյուղին էր դեմ տալիս, մեկ՝ այն: Ազոավ ու կաշաղակ, ծիտ ու ծիծեռնակ խմբերով ուրիշ պարտեզներից հավաքվում էին, որովհետև այստեղ և՛ քար գցողն էր քիչ, և՛ խնձորներն էին համեղ:

Նրանց միակ կովը, պողը կտրած նարգիզը, սերվում էր այն նախշուն երինջից, որ Ջանին որպես օժիտ բերել էր Բարի Օհանի տնից: Ամեն իրիկուն նախիրը գալուց կովը դարբասի մոտ բառաչում էր, Ռուշանը բուկից ձայն էր տալիս հորը.

— Ապի՛, նարգիզն եկավ:

Հայրը կանաչ խոտի մի կապ թեկ տակ, պարտեզից բակ էր մտնում, խոսք գնում գետնին և մոտենում դարբասը բաց անելու: Իսկ պառավ Ջանին փեշերն այնպես էր վեր քաշում, պղնձե մեծ կովկիթը մի քանի սեղան լվանում, ասես բակում տասը կթի կով էր կապած: Մինչև Ջանին

կի՞թը վերջացնենք, Ունանք շոյում էր կովի ձակատն ու վիզը, իսկ որդին կրանաչ խոտը մանրիկ փնջերով մոտեցնում էր նարգիզի թաց դնչին:

Կովը տեղաց անելուց հետո Չանին թեյ էր գցում, իսկ Ունանը տղայի հետ խոսում էր այն մասին, թե վաղը որ մարգը պիտի չրվի: Եվ երբ Ռուշանը հոր խոսքը կիսատ թողած փողոց էր վազում, Ունանն էլ շուքան ուսերին գցած դուրս էր գալիս, դարբասի քարին նստում, մինչև Մեծուանն էլ երևար: Դրկիցներն սկսում էին զրույցը, ամեն մարդ իր դարբասի քարին նստած:

Օրերը խաղաղ էին անցնում, մանավանդ ցերեկը, երբ Ռուշանը դպրոց էր գնում: Չանին նստում էր բակի կեռասենու տակ, գուլպա գործում կամ կարկատան անում: Մտերն ուրախ ճուղողում էին, երբեմն գետնի երեսով թռնում: Չանին գործում էր գուլպան, քթի տակ դնդնում մի երգ: Կատուն նրա փեշերի վրա փռվում էր, ննջում ու երբ բեզարում էր ննջելուց, թաթերով կծիկի հետ խաղում էր: Իսկ Չանու աչքերը հոգնում էին ճաղերին նայելուց և պուխը կախ էր գցում կրծքին:

Եթե պարտեզի դռնակը բացվեր, կամ մի հարևան տուն գար, Չանին տեղից վեր էր կենում, փեշերը թափ տալիս ու բարկանում կատվի վրա:

— Մի՞ծ ուտող երեխի պես փեշիցս կախ ընկի:
Եվ աչքերը տրորելով մոտենում էր եկողին, բարի ժպտով ասում.

— Էս նինջը որտեղից եկավ, հաղթեց ինձ:
Երբեմն էլ ինքն էր գնում պարտեզ: Երկուսով նստում էին վարունգի թաղի մոտ, Ունանը շիրուխն էր լցնում, իսկ Չանին գուլպայի մատերը խաղին հագցնելով, զրույց էին անում: Չարմանալի սեր ու հաշտութուն կար նրանց միջև: Երբ պառավի աչքովն էր ընկնում՝ ամուսնու մաշված արմուճկը, զրույցը կիսատ թողնելով ասում էր.

— Իրիկունը մի քիչ շուտ պառավիր, լուսով էդ արմուճկդ կարկատեմ... ճրագի տակ աչքս չի տեսնում, որ ասեղը թնկեմ:

— Դու էլ շատ մի գուլպա անի: Տուր թող Մեծուանի հարսերն անեն... Բայց և այնպես իրիկունը նա մի քիչ կանուխ էր պառկում, իսկ Չանին կովը կթելուց հետո կարկատում էր արխալուղի մաշված արմուճկը: Ինչպես ճնճողակների կայտառ երամբ կհարձակվի կեռասենու վրա, այնպես էլ դպրոցական ընկերների իր խմբով Առուշանը երբ տուն էր գալիս, մայրը չէր թոնթորում, եթե նրանց ոտնաձայնից հավ ու թուխը իրար էին անցնում, կշկշում, թռնում պատուհանի ու ցանկապատի վրա, եթե երեխաները ձեռք էին տալիս բակի ու սրահի իրերին, գցում, նույն իսկ կոտորում: Արտաշարժ համբերատարությամբ պառավը կռանում էր և գետնից հավաքում թղթի, փայտի կոտորուանքը, ոչ բերում էին նրանք

իրենց հետ: Եթե պարտեզ էլ գնային, Չանին գիտեր, որ ալևորը չի տրորալիջալու: Ու միայն նրանց հետևից կանչում էր.

— Երեխեք, սոխի մարգերը կոխ չտաք...

Օրերն իրենց խաղաղ ընթացքը փոխում էին, երբ դարբասի երկաթե իրնակը ծեծում էին և մի ձեռք մեկնում էր ծրարը: Ռուշանը եթե տանն էր լինում, ամենից առաջ նա էր վազում և նամակը վերցնում:

— Անտոնիցն է... տես ինչ մեծ-մեծ է գրել: Վաղոն էսպես չի գրում, նրանք իսկի մեր ուսուցիչն էլ չի կարգա...

Պարտեզի դռնակը բացվում էր և Ունանը բահը ձեռքին մտնում էր: — Բահն ո՞ւր ես բերում: Անտոնն է գրել... Քոռանամ, էս նրա ձեռքն է:

Ունանը զողոզալով ծրարը բաց էր անում, մինչև Ռուշանը նրա թևով կապկպած, մի ապակին ճաքած ակնոցը տնից բերեր: Մրարը բացելուց հետո մատները զողում էին, երբ հանում էր նամակը, ակնոցը հագցնում քթին, գիրկապ անում: Ռուշանը վիզը մեկնում էր, աչքը գցում նամակին, բարձր կանչով նա ընդհատում էր ընթերցումը, եթե հայրը սխալ էր կարդում:

«... Իմ աշխատանքին եմ, նույն քաղաքում: Հետևեք Ռուշանը լավ սովորի: Եթե արձակուրդ ստացա, կգամ ձեզ մոտ կարճ ժամանակով... Վաղոն Մոսկվա է, նրան նշանակել են պոլիկ կոմիսար: Նանի գուլպեքը ստացել եմ, ինչո՞ւ ես շարշարվել, էստեղ էլ կա... մնամ...»:

Ու նամակը կարդալուց հետո Չանին պիտի աճներ, նայեր, աչքերը պիտի ջրակալեին:

— Ի՞նչ ասեմ Բարի Օհանին... Մեզ խավար թողաց: Բա գիր չիմանամ...

Եվ նա դեռ երկար պիտի նայեր անհասկանալի գործին, նշաններին, պիտի լարեր տեսողութունը և փնտրեր այնպիսի բան, որ միայն ինքը կարող էր տեսնել:

Ապա հանում էր Անտոնի պատից կախված նկարը, սրբում փեշով, թելուց ապակին պլպլում էր: Երբեմն նա մեղմ երգում էր, եղունգով բերում շրջանակի վրայի աղտոտ բծերը: Անտոնի նկարը տեղը կախելուց հետո մեծ որդու՝ Վաղոյի նկարն էր վերցնում: Նրան նայելուց Չանու դեմքի արտահայտությունը փոխվում էր: Վաղոն ալելի կանուխ էր գնացել: Մոր հիշողության մեջ որդու շատ հետքեր ավերվել էին ու միշտ մրմունք էր հին վերքի սպին:

Ոչ միայն այդ երեկո, այլև մյուս օրերը խոսակցութունը նամակի շուրջն էր: Պատահում էր, մանավանդ Չանու խնդրանքով, որ Ունանը նամակը մեղուկից հանում էր ու մի անգամ էլ կարդում: Այդ երեկո նրանք

Քեյը սառած էին խմում, իսկ Ունանը միշտ շորերը հանելուց էր նկատում, որ ակնոցը դեռ քթին է հագցրած: Ու երբ Զանին ճրագը հանգցնում էր, մթնում շորերը հանում (այդ նրա սովորությունն էր այն օրից, երբ հարս եկավ. ոչ ոք երբեք լուսով չէր տեսել նրան շոր հանելուց կամ հագնելուց), պառկելուց առաջ մի անգամ էլ մոտենում էր Ռուշանի վերմակը շտկում. մթնում երկու պառավ դեռ երկար էին քշվում, մինչև Ունանը հորանջի և կողքին դառնալով կնոջը պատվիրեք իրեն կանուխ գարթեցնելու:

— Տանձիքը պիտի ջրվի... էգուց ջրի հերթը մերն է...

Իսկ պառավը դեռ միտք էր անում... ուրեմն գուլպաները ստացի է... իր գործած գուլպաները, ձյունի նման փափուկ ու սպիտակ... Հասել են, գուլպաները գնացել են ու հասել Անտոնին... Ուրեմն կարոտ կա, որ ասում է, թե ինչո՞ւ ես ուղարկել, նեղություն ես քաշել... Անտոնը հենց փոքրուց էր սրտով: Մի անգամ փուշ էր մտել Զանու ոտքը... մրմնում էր ու ինքը ասեղի ծայրով ուզում էր փուշը հանի... Երբ գլուխը վեր հանեց, Անտոնը հարցրեց, թե ցավը կտրե՞ց, նանի... Վաղոն էլ էր շիգայրով... Լեզուդ պապանձվի, ինչո՞ւ ես նրան շոկում Անտոնից... էն որ չէր թողնում իրեն ալյուրի պարկը շալակի: Ունն առավ ու մի շնչով շաղագից տուն բերեց... է՛հ, հիմա տեսնես քնել ե՛ն... Ձէ, քաղաք է, ո՞վ գիտե երբ են քնում... էդ լավ չի, որ գործի վրա է... կոխվ կա... պատերազմ կա... Մի բան չպատահի՞, մի բան չպատահի՞...

Պահարանում շարած պղնձե ասիսները զրնգացին... կատուն էր կիզում էր ու վեր գցեց:

— Փի՛շտ,— ձայն տվավ Զանին: Կատուն հեռացավ: Նրա մտքի թելը կտրվեց: Հիշեց, որ երեկոյան ասիսները չի լվացել սամավարի ջրով: Ռուշանը քնի մեջ ծանր էր շնչում: Մայրն ականջ դրեց ու վեր կացավ բարձր շտկելու: Ու երբ գրկեց գլուխը, երեխան քնի մեջ շրթունքները շարժեց ու խոր շնչելուց հետո նորից թանձր քուն մտավ... Մայրը համբուրեց նրան ու բորիկ ոտքերը մթի մեջ զգուշ փոխելով, հասավ տեղը:

— Ռուշանը... Հանկարծ կատուն զնա, դոշին նստի... էգուց ակվորին ասեմ փենջարան ձիւղպով ծածկի... էնտեղով է մտնում, թե է դուռը փակ է... Ռուշանը... կմեծանա... Ապրեմ էնքան, մինչև նրա կանալ կարմիրը կապեմ, իմ ձեռքով մի փափուկ բարձ ցցնեմ...

Զանին հիշեց, կոտրած կարասի մեջ պահած բմբուլին վազուց մ նայել... ցեց մտած լինի՞: Հետո միտքը սահեց, ինչպես հանդարտ լողացող ամպի քուլա... Հիշեց Ռուշանի խոսքը, երբ ինքը հավերին էր կուտալիս:

— Նանի՛, որ մեծանամ քեզ համար ինչքա՞ն հավ եմ ասնելու...

Ու քունը թեթև փետուրի պես իջավ Զանու հոգնած կուպերին:

Արևը մայր էր մտնում:

Զանին գուլպան ձեռքին նստել էր կեռասենու տակ: Կաշաղակներն ու ծոնը թռչկոտում էին ճյուղից ճյուղ, կոցահարում կիսակարմիր կեռասը: Երբ նրանց աղմուկը սաստկանում էր, Զանին կողքին դրած բարակ ճիպոտը ճոճում էր, «հուշտ» անում... Մտերն ու կաշաղակները փոռալով թռչում էին, պահվում մյուս ծառերի ճյուղերին ու հետո նորից մեկ-մեկ հավաքվում... Կտուրի վրա, բնի կողքին կանգնել էր ծեր արագիլը ու պլլած նայում էր, երբեմն գլուխն այս ու այն կողմը դարձնում: Զարմանում էր կաշաղակների հանդիմությունը, թե զայրացած էր, որ անհանգրստացնում են պառավին,— միայն երբ Զանին ճիպոտ էր վերցնում, արագիլն էլ թևերն էր թափահարում, կարծես ինքն էլ էր քշում աներես ծոներին:

Հանկարծ արագիլը վիզը երկարեց, դժվարությամբ թևին արավ ու թռավ: Հենց այդ վայրկյանին մեկը մոտեցավ դարբասին, կոշնակը ծեծեց.

— Զանի՛ մոքիր, դուրը բաց արա, աչքալույս եմ բերել...

Պառավին թվաց, թե ծնկները պոկվեցին: Ու քիչ մնաց ընկներ... Գուլպան ձեռքից սահեց գետին: Պարտեզի դռնակը բացվեց ու Ռուշանը գեղակի թափով վազեց դարբասի կողմը: Ու հեհեհ ներս ընկավ. ներս մտավ Մեծլումի հարսը:

— Զանի՛ մոքիր... Անտոնը, ձեր Անտոնը հրեն գալիս է... Ֆայտունում նստած: Աչքալույսս տուր... ես բուրդն էի լվանում, մին էլ Ֆայտունը կամրջի գլխով անցավ: Տեսնելս ու ճանաչելս մին եղավ: Հրես որտեղ որ է ձեներ կլսվի... Ասի բուրդին նայեք, ես վազեմ... թե որ չէի՞ ճանաչել, էն ա աչքալույսս...

— Ռուշան՛ն, ա՛յ ալեուր...

Ռուշանը չկար: Մեծլումի հարսի հենց առաջին խոսքից նա գուրս էր վազել: Պարտեզի դռնակը բացվեց, երևաց Ունանը: Մերունին մի վայրկյան զարմացած նայեց:

— Անտոնը, ա՛յ մարդ,— իսկ Մեծլումի հարսը ձեռքով հասկացրեց, որ աչքալույսն ինքն է բերել: Մերունին քայլերն արագացրեց, շապիկը կոճկելով: Լավեց զանգակների ձայնը...

Վաղուց, շատ վաղուց պարտեզի դռնակը կիսաբաց չէր մնացել... Մովերում նստած հորթը վեր կացավ ու կամացուկ ներս մտավ երբեք լուսած մի աշխարհ, ուր աճում էր համեղ ու մսոտ տերեւներով կաղամբը:

Կառքը դարբասի մոտ կանգնեց: Ներս մտավ հաղթանդամ մի տղա-
մարդ ու ներս մտնելով դիպավ դարբասի դռներին, կոշնակը թույլ զար-
կեց: Նա գրկեց Զանուն, պառավի ոտքերը գետնից կտրվեցին: Անտոնի
աչքին մայրն ավելի փոքրացած երևաց, սմբած ու թեթև բմբուլի նման
գրկեց վեր բարձրացրեց:

— Նանի, ո՞նց ես... — մոր դողացող շրթունքների համբույրը շոր
տերևի նման հպվեց որդու այտին: Զանին մի վայրկյան աչքերը փակեց
և մանկան նման գլուխը հենեց Անտոնի կրծքին: Ու հանկարծ արցունքը
կաթեց:

— Նանի՛...

— Հա, քեզ մատաղ,—իսկ մայրը մեղմ ժպտում էր:

Անտոնի աչքին հոր տունը փոքրացած ու ցածրիկ երևաց, սանդուղք-
ները բարակ ու մաշված: Ու մտածեց,— կղիմանա՞ն, եթե բարձրանա
սրահը:

Հարևանները հավաքվեցին: Ռուշանը հուլի նման ֆռում էր, մեկ
փողոց դուրս վազում, մեկ տուն, նորից մոտենում եղբորը, վազում ու
ներս իրերը տնտղում:

— Օ՛... Մեծլում ապի... պառավել ես...

— Է՛հ, այ որդի... Աչքերիցս եմ խեղճ, թե չէ կոնքրումս հլա ուժ կա:

Անտոնը նրա թևը բռնեց, մտավ ու բարձրացրեց սանդուղքով: Ունանը
հետևեց նրանց: Բարձրացան և ուրիշները: Հայրը զարմացած լսում էր
Մի՞թե դեռ հիշում է որսորդ Ավուն... Հարցնում է թե բժիշկը քանի՞
անգամ է գյուղ գալիս, ի՞նչպես են ցորենը մաքրում... մաշինից է հարց-
ում:

— Ապի, բա ե՞րբ են բերելու լույսը,— հարցրեց Անտոնը:

— Ինչը՞,— և ավելի մոտեցավ նրան:

— Էլեկտրականը, էն, որ ձորումը շինում են...

— Ստիմ ինչ են շինում ձորումը... Ո՞վ է էլետեղեք գնացողը,—
սրտնեղած պատասխանեց հայրը: Որտեղից գիտեր նա... Հիմա երևի
մտքում հանդիմանում է հորը, թե ես հեռու քաղաքում եմ ապրում,
բայց գիտեմ, թե ձորում ի՞նչ են շինում... Ինքը նրան իր նամակում
այդ մասին ոչինչ չի գրել:

Զանին ներս ու դուրս էր անում: Երբեմն կանգնում էր որդու մոտ,
թեկուզ մտքում թեյ դնելու հույան էր, կամ մի այլ գործ: Եթե Անտոնը
նրան էր դառնում իր հարցով, Զանին բարակ, դողացող ձայնով պատաս-
խանում էր, ավելացնելով. «Հա՛, քեզ մատաղ...»: Մեծլումի հարսը ան-
ներ, նա երևի շատ կփնտրեր շաքարամանը:

Նարգիզն եկավ, դռան մոտ բառաչեց, Զանին կովկիթն առանց լվա-
նալու իջավ սանդուղքով, նրա հետևից Ունանը: Երբ կովի երկրորդ բա-
ռաչին հորթը պոչը ցցած դուրս եկավ պարտեզից, երկուսով իրար նայի-
ցին:

— Կավ, անցել է,—ասաց Ունանը և սկսեց Նարգիզի ճակատը
բերել:

Պառավ արագիլը զարմացած նայում էր բակին, երբ սանդուղքով
իջում էին ու բարձրանում, վախեցած ետ էր քաշվում, մոտենում բնին:
Այդպիսի եռուզեռ նա չէր տեսել, օ՞վ է այն բարձրահասակը, որի ծանր
սապոզներից ճոռում էին սրահի տախտակները:

Հարևանները մեկ-մեկ հեռանում էին: Մթնում էր: Անտոնը մոտեցավ
իրերին, սկսեց կապոցներն արձակել:

— Ռուշան, պիտե՞ր ես...

— Հլա շեն ընդունել...

— Գիտե՞ս որտեղ է կոմիտեն:

— Էն, որ ընկեր Սահակը նստում է, է՛ն,— Անտոնը ծիծաղեց:

— Հա՛, էն:

— Մեր դպրոցի կողքին է,—ինքնագոհ պատասխանեց Ռուշանը,
իսկ հայրն ավելացրեց:

— Իվան բեյի օթախներում...

Սերունինները նայում էին Անտոնի իրերը. մի բարձ էր, փափուկ վեր-
մակ, մի երկու կտոր շոր, գրքեր, զանազան մանրուք: Զանին միտք էր
անում, թե Անտոնը ինչ գործի է քաղաքում, որ լավ ու հարուստ զգեստ
էլ չունի: Մեկ էլ հանկարծ դարձավ Ռուշանին.

— Իվան բեյի օթախները դու ո՞րտեղից ես ճանաչում...

— Ե՛ս,—մանկան ինքնագոհությամբ պատասխանեց տղան,—հլա
մեջն էլ եմ մտել... Տակին պիտենքների շտաբն է, վերը ընկեր Սահակն
է նստում: Հլա մի անգամ էլ հարցրեց, թե նամակ չկա՞ աղբորիցդ,—ու
հորը դառնալով ավելացրեց,—ապի, էնտեղ մեծ թմբուկ կա, ա՛յ էսքան...

Ռուշանը թևը բարձրացրեց:

Դարբասը նորից ճոռաց: Մի քանի հոգի ներս մտան, Անտոնը մոտե-
ցավ նրանց, սանդուղքի գլխին մեկին գրկեց ու համբուրեց, ապա ամուր
սեղանի գեպի իրեն մեկնած ձեռքերը:

— Էս քանի՞ ժամ է, որ երևացել ես մեր երկրի սահմաններում ու
չես ներկայացել մեզ,—դարձավ նրան առաջին բարձրացողը և ավելաց-
րեց,—դա՛, բրատ, դու էլ ես պառավել...

Ռուշանը ճանաչեց ընկեր Սահակին:

— Ինչի՞ եք մինչև հիմա գարթուն,— դարձավ նա ծերունիներին:—
Մայրի՛կ, տեսնո՞ւմ ես ինչ տղա է դառել:

— Հա՛, քեզ մատաղ...

— Դե ի՞նչ ունես, բեր, նանի՛, թաքուն տեղ պահած կլինես:

Պառավը արախ սենյակ մտավ, սնդուկը զնգաց, ապա գոգնոցը բռնած մոտեցավ օջախին: Ենձքի մոտ նստել էր Ունանը և զննող հայացքով նայում էր մեկ Անտոնին, մեկ Սահակին ու նրա ընկերներին: Նրանք երբեմն ուռեերեն էին խոսում, Անտոնն ավելի հաճախ. ու բոլորովին տարի էր նմանվում նա այդ րուպին, ասես բոբիկ ոտներով, երեսին քերծվածքն անպակաս երեխան չէր... Ի՞նչ մարդիկ են նրա ընկերները... Եվ ո՞րտեղից է այդ ընկերությունը... Թե հին ճանաչներ են, ինչո՞ւ մի անգամ Սահակն իրենց տուն հյուր չի եկել:

Անտոնը ծոցից թղթի կտոր հանեց, կոացավ վրան, մյուսները գլուխները մոտեցրին: Մատիտով գծում էր, սևացնում... պատմում էր, իսկ Սահակը գլխով նշան էր անում: Ունանի աչքին ընկավ Անտոնի ճակատի սպին, որ կռանալուց ուռել էր... Ինքը ջաղացումն էր, մեկ էլ խաբարը բերեցին, թե ծառիցը ընկել է... Հիմա տեսնես ի՞նչ գործի է... Ինչի՛նք է, աղվակատ է... Ինքն ինչ իմանա, միայն եկողներից միշտ լավն է լսել: Գուցե ինքը լավն է, իսկ այդ դարիք մարդիկ, նրա ընկերները... Հը՞, ով գիտե... Աշխարհն այնպես խառնվեց, այնպես բորան եղա՞վ, և զցեց որտեղից որտեղ... Ոչ մեկն էլ մի նշան, մի մեղալ չունի, որ ինքն իմանա թե ով է և ումից մեծավոր... Սահակի պաշտոնն է բարձր, թե որդուն... Սահակն իր ոտով եկավ, ուրեմն... թե մեծավոր են, ինչո՞ւ հարցրեց, թե ժողովուրդը ոնց է ապրում: Երևի թաքուն քննիչ է Անտոնը, քաղաքից ուղարկել են: Հալբաթ մեծ գորություն ունի:

Իսկ Անտոնն ընկերներին պատմում էր այն մեծ ճանապարհի մասին, որի կառուցման խնդիրը դրական լուծումն էր ստացել և որը ետ ընկած գավառը միացնելու էր երկաթգծի գլխավոր մագիստրալին: Նա խոսում էր քարհանքերի մասին, գավառի խիտ և անանցանելի անտառների օգտագործման մասին: Այդ բոլորը քանի անգամ քննության էին առել Սահակը, նրա ընկերները... Իսկ Անտոնը պատմում էր վերջին նորությունները, գործի մանրամասնությունները, որ անհայտ էին շրջանի ընկերներին: Զանին մի անգամ կամացուկ ասաց.

— Անտոն, սմավարը սառչում է... փետով եմ գցել,— բայց նրանց չլսեցին: Ունանն էլ պառավին հանդիմանեց.

— Մի երկու կտոր տաշեղ գցի, տեսնում ես պլան են քաշում... Խոսում են:

Հանկարծ Անտոնի աչքն ընկավ Ռուշանին, որ գլուխը ծանրացել էր նեոքերի վրա, մեկ ննչում էր, մեկ աչքերը լայն բաց անում, միտքը լալում՝ նրանց ասածներից մի բան հասկանալու:

— Գնա քնի, Ռուշան, — ասաց Անտոնը:

— Քունս չի տանում, — ու տեղում շտկվեց: Զանին առիթից օգտվելով սմավարը դրեց սեղանին: Զրույցը հանդարտվեց, մոտեցան սեղանին: Ունանը տեղից վեր կացավ ու նստեց իր անփոփոխ տեղը՝ սեղանի ծարին:

— Ռուշան, Անտոնը որ քեզ հետը տանի, կգնա՞ս, — հարցրեց Սահակն այն աշխույժ տրամագրությամբ, որպիսին ունենում է աշխատանքից հետո հանգստացողը:

— Կգնա՞մ, — կտրուկ պատասխանեց Ռուշանը և շնկատեց, որ սամոկարի հետևից իրեն հառած մոր աչքերը զարմանքից լայնացան:

— Որ քեզ տանի, ի՞նչ ես դառնալու...

— Միլիցա, — լուրջ ասաց տղան:

Սահակն ու Անտոնը ծիծաղեցին, Ունանը ժպտաց նրանց ծիծաղի վրա, իսկ Զանին ձեռքը մեկնեց սամավարի ծորակին ու սառավ:

— Աչքդ վրան պահի, չես տեսնո՞ւմ, — ասաց Ունանը, ձեռքով ծորակը շրջելով: Բաժակը լցվել էր ու ջուրը թափվում էր սեղանին: Զանին շփոթվեց ու նրա թորշոմած դեմքը պղնձագույն դարձավ հուզմունքից:

... Ուշ էր, երբ նրանք զնացին:

— Նանի, տեղերս գցիր... է, ապի, դո՞ւ ոնց ես... Մազերդ սպիտակել են, բայց էլի պինդ ես:

— Ինչ դժար գործի ենք որ... — պատասխանեց հայրը և դարձավ կիտը, — թախտին գցի տեղերը: Էն պատուհանն էլ փակի. լուսաղեմին բաժի է լինում:

— Նանի, դու ո՞նց ես... բա շե՞ս բեզարել, էսքան որ աշխատում ես:

— Նանին քեզ մատաղ...

— Բա վաղոյից չես հարցնո՞ւմ:

— Հը, բան կա՞, — ու բարձր մնաց ձեռքին:

— Ամուսնացել է, — ժպտալով ասաց Անտոնը:

— Արի՞ է, այ ալեքոր, — կանչեց Զանին, — հարսը լավ տնի՞ց է:

— Ի՞նչ տուն, նանի: Անհեր, անմեր մի ոուս աղջիկ է...

— Ռո՞ւս...

Անտոնը ծխախոտի տուփը դրեց կողքին ու շուլավվեց վերմակի տակ:

— Օխա՛յ... էսպես փափուկ տեղ վաղուց է չեմ քնել... Նանի, Սահակն առավոտը կանուխ է գալու, միասին տեղ պիտի գնանք: Զայր կանուխ կգցես... — ու գլուխը ծածկեց վերմակի ծայրով:

Ունանն էլ պառկեց: Միտք էր անում ծերունին, թե էս ի՞նչ մարդիկ են... Զհարցրեց, թե բազր ոնց է, ծառերը, հողը... Տան ապրուստի, մուրի կողմանից... ոնց որ մի զուռադ: Իսկ փոքրուց էդպես չէր: Ոնց փոխվեց, հը՞... Մտռերն ում պիտի մնան,— ու նրա միտքն արթնացավ ծանոթ ճաչ նապարհով, դո՛ւսեկը բաց արեց,— ջրի բանդը պիտի կախնել... Անտեր շնեքը գալիս են լրբու մարգերը կոխ տալի...

Պատավը ճրագի տեղը փոխեց: Աչքը դարձյալ ընկավ Անտոնին, տխրուով քնեղ էր: Ու շատ մաշված, այտերը փոս ընկած թվաց նրա աչքին Անտոնի հոգնած դեմքը: Մայրը կամաց հառաչեց, կոացավ նրա կոշիկ-էրին նայեց, գոգնոցի ծայրով փոշին սրբեց:— Վաղոն պսակվել է: Շրջանակի միջից մի զույգ աչքեր նայում էին մորը: Իր ասածը շեղավ... է՛, ինչ թաքուն մտքեր ունեւր Զանին անգրանիկ որդու հարսանիքի հետ կապված:

Ճրագը ձեռքին մայրը մտտեցավ Թուշանի վերմակը շտկի, ամեն օրվա պես Թուշանը քնաթաթախ աչքերը բաց արեց ու ծոր տվեց...

— Հիմա հո չեմ գը-նո՞ւմ... որ մեծանամ, էն ժամանա՞...

Մայրը կռացավ, ճակատը համբուրեց ու ականջին շնչեց.

— Բա ե՛ս, բախկ...

— Դու ապորը մոտ մնա... էնքան համա...— խոսքը թերի մնաց, աչքերը փակվեցին:

Մայրը մի պահ նայեց նրան: Ճրագը ձեռքում դողում էր: Սրբխան քնի մեջ ժպտաց: Սվ անլուծելի առեղծված դարձավ այդ ժպտը մոր համար:

Զանին ճրագը հանգցրեց:

Կ1929

ԵՂՐԱՅՐՈՒԹՅԱՆ ԸՆԿՈՒՉՆԵՆԵՐԸ

1

1919 թվի ձմեռը, Շուշանց քաղաքից, ու հրոտն տարուց ավելի հարգանոց էր, նորից դարձավ գյուղի հավաք: Երեւոնիները պատմում էին, որ նույնիսկ օսմանլուի մեծ կովի տարին այդքան մարդ չէր հավաքվում այդ քաղաքի մեջ: Շուշանց քաղաքակն այժմ օգտ չէր ինչպես հրոտն տարի առաջ, այլ շտաբ, բազար և մինչև անգամ կէտեր, ինչպես անվանում էր Բալթա թիվին, որը Բաքվում խոհարար կեղել և հետը գյուղ էր բեքեղ արժամք գրառնեք, ճենապակի գաղաթներ է

ափսններ, որոնց մեջ նրա ընտանիքն ուտում էր ձաղարով հիլաթ, անխեն չորվա և խաշած սոսյ՝ այլ անունով աղբատի փլավ:

Քարանձավի այդ բոլոր անունները՝ շտաբ, բազար և մինչև անգամ կէտեր,— ունեին իրենց հիմքը: Շուշանց նախկին հարգանոցում պատերազմական գործի հանճարեղ ղեկավարներ կային, որոնք քարայրի հատակին չքուխի կոթով խազում էին լեռնաշղթաներ, ձորեր և խոր գետեր, ապա որ խազերի ցանցում տեղավորվում էին շողշողուն քարեր՝ որ փոխարինում էին Նժդեհի ձիավոր խմբերին, պղնձագրամ՝ Դալի Ղարղաշի տղանում էին Նժդեհի ձիավոր խմբերին, կտես կապիտանի զորամասի կամ, ինչպես անվանում էին՝ «տրեխավոր բառալիտնի» տեղ: Աթա ապար բոնոթամանը միշտ նշանակում էր խանլար փաշայի դիվիզիան, իսկ նրա հոնի կորիզներից «տեք ողորմյա»-ն մուսավաթի բանակն էր: Սրբ Աթա ապերը գրգանից հանում էր «տեք ողորմյա»-ն և փռում մի խազի վրա, միշտ ձայն խոսքն էր ասում.

— Ա թեզ մատաղ, էս մեր թուրքերը հի՛նչ են ուզում մեր ձորերից... Ախր հի՛նչ կա էս ցամաք ձորերում:

Սվ այդ խոսքերից հետո սկսվում էր զինվորական խորհուրդը, որին մասնակցում էին Աթա ապերը, Քոլուն Բադին, Չետանց Վանեսը և Զանչալ Մանգուն Կլիրոն, խորհրդական ունենալով զինվորների, որոնք արևմտյան Ֆրոնտում («գ եր մ ան ու փ ո ո ն թ» — ինչպես ասում էր Աթա ապերը) թողել էին ոտքը կամ թևը: Այդ խորհուրդն էր քարատակը դարձրել շտաբ, որի աշխատանքին, եթե կարելի է այդպես ասել, երբեմն մասնակցում էին ուրիշները, երբ նոր լուր էին ստանում իրական ռազմաճակատից և կամ եթե Աթա ապերը կովի էր բռնվում Չետանց Վանեսի հետ և քարանձավի մեջ ահարկու որոտում էր նրա ձայնը.

— Սու իմ հոր տղան չլինեմ, եթե խանլար փաշայի զորքը Դրնգանի ձորով անց կենա... Դալի սիրտ կերած պիտի լինես, որ արևով մտնես էն ձորը: Ինչո՞ւ, չե՞ս հիշում,— և Աթա ապերը բոթում էր ջրաղացպանին, որը տեղը տաքացրել և ննջում էր, ինչպես եթե ազմկող ջրաղացում լինեք, իր հին ջրաղացում, որի զուռն ինչքան ժամանակ է փակ էր, որովհետև ով մի պարկ կորեկ ունեւր, գերադասում էր սանդի մեջ ծեծել,— չե՞ս հիշում Դրնգանի ձորը,— և Աթա ապերը բոթում էր ավեր ջրաղացպանին, որը չէր հիշում Դրնգանի ձորը, այլ հիշում էր միայն ջրաղացի ընկուղենիները...

Աթա ապերը, ընդհատելով ռազմական խորհրդածախցունները, պատմում էր, թե ինչպես մի տարի ինքը և ջրաղացպանն ուլարած տղաներ էին, ուներք տարան Դրնգանի կողմերը, ուներք մտան Դրնգանի ձորը...

Ի՛նչ ձոր, ի՛նչ ահի ձոր... —335—

— Իրիկունը, ողորմի իրեն, Օհան ապերը (Աթա ապոր պապը), որ տեսավ ուլեռից երկուսը չկան, դանակը դրեց սև ուլի վզին, ասաց. «էնքան ուլը որ Դրնգանի ձորից հանել եք, դուք էլ ողջում տուն եք եկել, էս մի ուլն էլ ձեզ մատաղ...»: Հիմա ասում ես թե Խանլար փաշան...

Եվ Չետանց Վանեսը պարտվելով լուռ էր, լուռ էին նաև շտաբի մյուս անդամները և միայն ջրաղացպանը, որ Աթա ապոր մանկության ընկերն էր, երկա՛ր-երկար հորանջում էր, քաղցր և բարակ ձայնով կարծես շտաբի հարևանը չէր, այլ ամառվա շոգին քնել էր ընկուզենիների ստվերում և զարթնելով միտք էր անում՝ նորի՞ց քնի, թե վեր կենա նայի ջրաղացի դամբին...

Այդպես էր այն ռազմական խորհուրդը, որի պատճառով Շուղանց հին քարանձավը կոչվում էր շտաբ: Իսկ եթե կոչում էին նաև բազար, շպեռք է կարծել, թե Մելքումովներն իրենց մ ա դ ա զ ա ն կողպել էին և ապրանքը դարսել քարանձավի խոռոչներում: Ծշմարիտ է, 1919 թվի ձմեռը և դեռևս նույն թվի գարնանը Մելքումովները փակել էին խանութը, բայց ապրանքը նրանք հակերով դարսել էին խոր մառաններում և դեղի համար գյուղացիներին վաճառում էին չերթ շաքար, երկու խան արշին կտավ պատանքի և մի վարդ թաշկինակ՝ նորահարսի համար: Որովհետև ինչքան էլ կյանքը դժվար էր և շատերը կիսաքաղց էին օրը մթնեցնում, — այնուամենայնիվ հիվանդի սիրտը շաքարով թել էր ուզում, ննջեցյալին սովորություն էր պատանքով թաղել, իսկ եթե աղչիկ էին ամուսնացնում, նորահարսին վարդ թաշկինակ ընծայելն անհրաժեշտ էր, ինչպես հարսների զուռնա նաղարան:

Բայց և այնպես Շուղանց քարատակը նաև բազար էր: Քարատակի մարդիկ կովի լուրերի հետ իրար էին հաղորդում ցորենի, կաշվի, աղի, նավթի և շաքարի մ ա զ ա ն դ ա ն, — թեև նրանց մեծ մասը ոչ գնորդ էր և ոչ վաճառող: Միայն երբեմն փոխանակում էին նորսի գինին, որ անհայտ է, թե ինչ կերպ, նույնիսկ ռազմադաշտով անց էին կացնում ճարպիկ գինեվաճառները, որոնք լավ գիտեին, թե աշխարհում ավելի շատ խմող ուժ կա, քան կովող: Նորսի գինին և Քարահունջի «բեջան» Շուղանց քարատակում մինչև անգամ փոխանակում էին ավանակի փորքաշի հետ:

Եվ այդ պատահում էր այսպես:

Գալի Ղարզաշի տղաները հանդից տանում էին մի որևէ Մանգասարի գառամյալ էշը, որի նոր փորքաշը տերը պահել էր շահել էշ գնելու հույսով: Բայց ահա խորտակվում էր նրա հույսը, քանի որ ժամանակն անկ էր և այնպիսի ժամանակ էր, երբ շատ հույսեր էին խորտակվում: Սակայն գալիս էր անխուսափելին: Մանգասարի կինը ծնում էր մի սպիտակ-

երես տղա՝ «քուիշ», ինչպես Չանգեզուրում ասում են այն աստղով մանուկներին, որոնք անարատ սպիտակ են, ինչպես գառան վեզը:

Մնվում էր Մանգասարի «քուիշ» տղան և հետը բերում էր անխուսափելին՝ կնունքը: Եվ էշի նոր փորքաշը նա հանում էր ծալքատեղից, փոխարենը տուն էր բերում մի փարշ նորսի գինի:

Այս և այսպիսի առևտուր էին անում քարատակի բազարում ամենքի ներկայությամբ և երբեմն մի բահի կոթի վրա քարանձավում աղմուկը դեղում էր, կարծես Աթա ապերը Չետան Վանեսին լեզվակոխ էր արել Խանլար փաշայի գործի և Դրնգանի ահավոր ձորի համար:

Իսկ եթե ոմանց համար քարատակը նաև կլուր էր, ապա այդ ոմանց մեջ առաջինը Բալթա Թիվին էր, որը և հեղինակն էր քարատակի այդ անվան: Բալթա Թիվին ամենևին չէր խառնվում գինեվորական խորհրդի կամ Աթա ապոր շտաբի նիստերին: Նա այն կարծիքին էր, որ այդ ահագին պատերազմը ո շ ի ն չ բան էր, միաժամանակ համամիտ էր, որ Դրնգանի ձորը Խանլար փաշայի ճաշը չի: Նրա կարծիքով ուսուները շուտով պիտի սուփրան գցեն և այն ժամանակ ամեն ազգ իր գզալից կուտի: Գրանով էլ վերջանում էր Բալթա Թիվու և նրա համախոհների վերաբերմունքը Շուղանց քարատակում արժարժող քաղաքական խնդիրներին:

Սակայն նրանք բերել էին այնպիսի սովորություն, որ քարանձավը երբեք չէր տեսել նաև հիսուն տարի առաջ, երբ դեռ հարդանոց չէր, այլ Շուղանց նշանավոր տոհմի օդան էր:

Բալթա Թիվու խումբը թուղթ էր խաղում: Քարատակի ժխորի մեջ մի կողմից հնչում էին ռազմական վեճերը, մյուս կողմն առևտուրն էր անում, երրորդ անկյունում ոչ վիճում էին և ոչ առևտուր էին անում, այլ դալաբ իսոն Ալուն թրով թրատում էր Գլղան Գոգու վեսուտը՝ և պատմում էր Չնդան Ավթանդիլի կոիվներից, — քարատակի ժխորի մեջ լավում էին և այսպիսի բացականչություններ:

— Շամաթայ բալթայ... Պրիբոր շտա՛ս... էս փոսիկի բերին, էս էլ կավալերը... Խոա՛փ, բաջօղի: Չերվոնի տետ դու շան տրեզ... Ինքն էլ իսկական պերսոն... — և հանկարծ Բալթա Թիվին հաջողակ խաղաթղթերը զարկում էր գետնով, ամբողջ քարատակը լուռ էր, և խոր լուռության մեջ հնչում էր միայն նրա կանչը:

— Խոա՛փ, բաջօղի...

— Անդարդը հո պողավոր չի, — մեղմ հանգիմանում էր Աթա ապերը, և բալորը լսում էին նրա խոսքը և լսողը հասկանում էր, թե ով է անգաբը:

Բայց չի կարելի ասել, թե քարատակ եկողն անպայման պիտի հարեր

խմբերից մեկն ու մեկին: Մեծ մասի համար Շուշանց երբեմնի հարգանքը տաք անկյուն էր, որտեղ կարելի էր մի առ ժամանակ մոռանալ տան հոգսը, կարելի էր մի բարի լուր լսել և ապրել հույսով, թե շուտով կվերջանա տեր նորընծայի ասած «աշխարհավեր պատերազմը» և մանգաղներն այլևս չեն ծանգոտի: Այդ մեծ մասը երբեմն մասնակցում էր զինվորական խորհրդին, եթե օրվա լուրը շատ կարևոր էր, — և այդ ժամանակ քարատակում ոչ բազար էին անում և ոչ թուղթ էին խաղում: Իսկ երբեմն մի պարկ կորեկի և կես փութ ազի փոխանակումը գտնում էր ամենքի մտահոգության առարկա, երբեմն էլ նույնիսկ Չետանց Վանեղ նայում էր Բալթա Թիվու օիններին...

Քարատակ եկողների մեջ միայն մի մարդ կարող էր ընդհատել նույնիսկ զինվորական խորհրդի նիստը: Այդ մարդը Նիազանց Անդրին էր, գլուզի սրախոսը, որի պատմությունները մինչև այժմ ասում են, թեև այլևս չկա այդ քաղցրախոս լեզուն: Անդրին մտնում էր, ողջունելով «աստծու ծեծած խեղճերին».

— Հը՛, Աթա ապեր, Ղարսը անա՞ք, թե տվիք... Սպասի ես թիվպոնով խոսեմ տեսեմ հի՞նչ կա աշխարհում... — և արձակում էր այծեմազ պարանը, որ գոտու փոխարեն փաթաթված էր մեջքին, պարանի փայտե կեռը հագցնում էր քարատակի դռան ունկին.

— Հը՛, ցենտրալնի, ա՛յ ցենտրալնի, դավալ Բաբու... Բարիչնա ջան, Բաբու դա՞, Բաբու... Հը՛, Բաբու: Ա՛յ Բաբու, ախր մարխի ծխում կատրվեցինք, բա հի՞նչ ես ասում... Արա, ո՛ւր ա պանիրը: Պանրի երեսներ տեսնում: Որ ազոավի ծերտ ենք տեսնում, վրա ենք տալիս... Ղարդալ, ա՛յ ղարդալ, բա ե՛րբ ես խոնկ տալի էն խանլարին: Հը՛, գնում է անգլիացու վրա: Ո՞նց թե. Անգլիայի ճանապարհը հո մեր ձորերով չի: Մենք խոնկ տվինք մեր բաժին անգլիացուն*... Հա, քեզ մատաղ, ղարդալ շուսեին, իվանին բեր, բեր է՛ սարու ուսին: Էնքան շտորի տերև քաշեցի, լյարդս սեւացավ: Հա՛, քեզ ղուրբան, հաց կլինի, նավթ կլինի, շաքար կլինի: Հրեն Անա գիզին տկլոր է, ամաշում է ազբուրը գնա... Հը՛, օրիորդ, Հայաստանի կողմերում ո՞վ կա... մարդ-մուրդ մնա՞ց, թե բոլորն իրար կերան: Դրովի գործը գալիս է Չանգեզո՞ւր... Քո շունը լինեմ, Բևան, էդ կրակը մեզանից հեռու պահի: Խումբի տղերքը մեզ կերան, Մանգասարի էջը փալանով կերան, արտերը կանաչ կերան, մի խակ տանձի համար տեր նորընծայի... տանձը կերան...

Քարատակը դարձում էր ժողովրդի ծիծաղից, մինչև անգամ ջրաղաց-

1919 թ. մայիսի 4-ին Չանգեզուրից վտարեցին բրիտանական զիներալ Շասկի-Վորտի միսին:

դանն էր ծիծաղում և ուրախության արցունքը գլոր-գլոր ընկնում էր նրա սոխաակ միտուքի վրա: Այս և այն կողմից բացականում էին.

— Այ թե հա՛...

— Դամբի լինի, Անդրի,— և նույնիսկ Բալթա Թիվին, խաղը թողնելով, ասում էր.

— Ցիրկի կլովուն կլինի, երևելի կլովուն...

Իսկ Նիազանց Անդրին ծիծաղի աղմուկի մեջ շարունակում էր «հեռախոսել».

— Բևան, քանդե՛ս դու, որ քանգեցիր մեզ... Ամեն մի շանորդի երկաթի կտորը քամակից կախել է, ժողովրդի գլխին կամիսար է դառել: Զինվոր տո՛ւր, հաց տո՛ւր, եղ տո՛ւր, ձագար տո՛ւր— էլ շմաց է՛, շմաց, մենակ սեւացած օճորքը մեաց և մեր հարսի... — և նա այնպիսի խոսք էր ասում, որ Աթա ապերը նրան անվանում էր «շեթ անամոթ», իսկ քարանձավում նորից հնչում էր ժողովրդի ծիծաղը:

Բայց ի՞նչ ուրախություն էր, եթե Նիազանց Անդրին ներս էր մտնում սազը մեջքին: Այդ ժամանակ ամեն զրույց վերջանում էր, և այնպես լուռ էին լսում, որ նույնիսկ Աթա ապերը գետնից շեր վերցնում բռնոթամանը, ո՛չ նրա համար, որ կմոռանար Խանլաք փաշայի բանտկատեղը, այլ որովհետև բռնոթի քաշելուց հետո Աթա ապերն այնպես էր սարք գալիս, այնպես աղմուկով էր սարք գալիս, որ մինչև անգամ փոստի տրակատով անցնողները լսում էին նրա փռշուտը, ինչպես եթե մի քերթ փլվեր:

Եվ ամենքը լուռ լսում էին Նիազանց Անդրու նվագը... Մրեխաները, որանք մեծների ահից մուտք չունեին Շուշանց քարատակը, հաժաքով էին դրսում, դռնամուտից լսում էին այդ նվագը և զարմանում էին, թե ի՞նչ կա Նիազանց Անդրու ճոռթած, կոշտ և կոպիտ մատների մեջ, ի՞նչ զորություն կա, որ այդպես լացացնում է մարդկանց:

Այդ երգերը հիմա չկան և լավ է, որ հիմա այդպես չեն նվագում: Գուցե թե մի հեռավոր գյուղում գոռես մեկը սաղ է նվագում, բայց ոչ այդ սաղն է Անդրու սաղի նման և ոչ երբ նվագը: Թրք քարատակում Անդրին նվագում էր, մեկը հիշում էր անհայտ կորած որդուն և սուգ էր ասում, մյուսի աչքերի առաջ հառնում էին լեռներն աշունքին, երբ քոչք արդեն գետեղ է, ցուրտ ամպերը լիզում են ու լք թի տեղերը, հիշում էր օշախի քարը, որի մոտ ամառը լուսնկա գիշերով կրակ էր արել մի շարմաղ աղջկա... Ես այդ էր հիշում, իսկ նրա կողքին նստողը միտք էր անում, թե ե՞րբ կրացվի իր կյանքի փակ դուռը, աաշտում ե՞րբ հաց կլինի, երեխաները մերկ չեն լինի, ծառ կանկի, ծառք պտուղ կտա և երբ հասնի արդար ծնություն, իր տեղած ծառի ստովերում կնասի գահ և երջանիկ:

Ծրք Անդրին այլևս չէր նվազում և արդեն սազը կոխում էր պարկի մեջ,— դեռ ոչ ոք ձայն չէր հանում, կարծես ամենքն ուզում էին լսել մինչև վերջին հնչյունը, որ արդեն պոկվել էր լարերից և քարանձավում թրթրում էր, ինչպես արևից զարթնած ոսկե թիթեռ: Եվ նույնիսկ այն ժամանակ նրանք չէին խոսում, երբ Անդրին, սազը պարկի մեջ տեղավորելուց հետո, ասում էր.

— Ինչո՞ւ եք լռել, ա՛յ սրտամեռ խեղճեր...

Միայն այդ ժամանակ ոմանք հառաչում էին, կարծես զարթնում էին խոր քնից, ծխելով թեժացնում էին շիրուխների սառած կրակը, իսկ ո՞վ քարատակն էր եկել կաշվե ձողով, շարունակում էր քերել տրեխացու կաշին: Չետանց Վանեսը գրպանից հանում էր զավը, ահագին պողպատը զարկում էր կայծքարին, իսկ Աթա ապերն առնում էր բռնոթամանը...

— Մաղկես դու Անդրի... Երեխայի նման մեզ մղկտացրիր... Զորանաս, մեղչիսներում մշտական զա՛... ասար... դաա՛— և պատահում էր այն, որ փոստի տրակտով անցնողները կարծում էին, թե քերծ փլվեց:

Այդ ամենից հետո Բալթա Թիվին դարձյալ շարունակում էր թղթախաղը: Իսկ մյուսները հավաքվում էին Աթա ապոր շուրջը և ծայր էին առնում այնպիսի զրույցներ, որոնց լսողը կմտածեր, թե 1919 թվի ձմեռը չէ, այլ շատ վաղ ժամանակ և գյուղում ոչ կոմիսար կա, ոչ Ֆրոնտ կա և ոչ սովի ահ,— այլ քարանձավների դարն է, դուրսը ցուրտ ձմեռ է, մուժ խավար,— մարդիկ մտել են այդ թաքստոցը և կրակի շուրջը բոլորած պատմում են որսից, գազաններից, քաջերից, որոնք բնակվում են հենց այդպիսի քարատակներում, կարող են պարել, զուռնա փչել, մթնում կարող են մենակ մարդուն խաբել և քարափից գցել ձորը...

2

Մտավ 1920 թիվը, ձմեռը զոռեց և սովը սաստկացավ:

Թեև Խանլար փառայի գործը նահանջել էր, սակայն հաղթանակն ուրախութուն չբերեց: Կարծես այդ պատերազմը, որի վախճանին քաղաքում թափոր և զորահանդես եղավ և գինի խմեցին հաղթողների պատվին,— կարծես այդ կոփվը եղել էր յոթ սարից այն կողմ մի աշխարհում, որի միայն անունն էին լսել քարատակի մարդիկ:

Հաց չկա՛ր,— ցամաք հաց, գարեհաց և նույնիսկ կորեկի բլիթ չկար: Իսկ ձյունը գալիս էր և գարնան ոչ մի նշան չէր երևում: Այդպիսի ձյուն Աթա ապերը իր կյանքում չէր տեսել: Իզուր տեր նորընծան ամեն օր գուշակում էր «քարեխառնություն օդի և ջերմություն ջրի»: Ցերեկը ձյունը

գողարում էր, երևում էր սառն արևը և նոր ձյունի ցուլքն ընկնում էր ժայռերի լանջին: Մարդիկ հազիվ էին մաքրում դուռ ու բակ և ցրտին կուշ գալով մի կերպ արահետ էին բացում դեպի հարևանի տունը, երբ գորշ ամպերը նորից էին կախվում. սկսվում էր ձյունը, լեռնային երկրի ձյունը, որ իջնում է անընդմեջ,— այն սպիտակ ձյունը, որ փայլում է աստղերի լույսով և թվում է, թե ձյունը կաթկթում է ցուրտ աստղերից:

Ահավոր ձմեռ էր. դաշտերից ծտերը փախչում էին դեպի հարդանացները, նապաստակները գիշերով թաքնվում էին դեզերի մեջ և դաշերը պտտվում էին տաք գոմերի շուրջը և նույնիսկ նրանցից հանդուգն էլ գիշերով վազում էր գյուղի միջով՝ իր հետևից ձյունամորթիկի նման բարձրացնելով շների կաղկանձը:

Ոչ դիրք էր մնացել, ոչ դիրքապահ զորք: Այդպիսի ձմեռը Սուլթան Մուրադի բանակն էլ չէր անցնի Չանգեզուրի լեռներով:

Աթա ապոր շտաբն այլևս չկար: Պղնձե բռնոթամանը նա այլևս գետնին չէր դնում, որովհետև բազմաթիվ ձեռքեր մեկնվում էին նրա կողմը, մանավանդ Քալանթար Բեդին թաթն այնպես էր կոխում, կարծես Աթա ապոր բռնոթամանը վայրի մեղրաբուն էր: Միայն նրա ձեռքին հոնի «տեր սղորմյա» էր: Կորիզները գլորելով՝ Աթա ապերը գուշակում էր, թե երբ պիտի բացվի լավ օրը և վերջին կորիզը միշտ ընկնում էր աստծու անվան և ապագան մնում էր մուժ: Աթա ապերը լուռ էր և եթե խոսեր, միայն ջրաղացպանին կասեր.

— Էլի փառք, որ շառի վրա չեկավ...

Բազար էլ չկար: Ոչ առնելու բան կար, ոչ ծախելու: Միայն Բալթա Թիվին էր աննկուն: Քարատակում որքան ավելի խոսում էին հացի մասին, նրա խումբը ավելի համարձակ էր խաղում: Արդեն խաղում նա տարել էր Մեղրումովների մաղազան, Կատարի Խաչի ուռինները, տեր նորընծայի շորին, մինչև անգամ Կուտուռուզ Սաքոյի Բողար շունն էլ տարել էր և Խաղը մեծացնելով տեղափոխվել էր Բաքու և մեկը մյուսի հետևից տանում էր կիսնոգովների նավթահորերը:

Երբեմն մեկը քարատակում հառաչում էր թոքերը կտրատելով և այնպես խոր, որ հարևանը նրան էր նայում, կարծես այդ հառաչի հետ դուրս էր թռել հառաչողի շունը:

— Իսոն ասում էր էգուց եզը պիտի մորթի,— լուռության մեջ լսվում էր մի ձայն:

— Իսո՞ն...

— Ասում են եզը պիտի մորթի...— և ասողը նայում էր հարևաններին, աչքերով հարցնում էր, թե եթե Իսոն եզը մորթի, ի՞նչ կլինի:

— Իսոյին ի՛նչ... Եղ էլ կմորթի, գոմեշ էլ կմորթի: Իսոն կանի:
— Դու ինչո՞ւ չես մորթում... Քո տավարն Իսոյից շատ, մի բեռ գարի էլ ավել,— անհայտ է թե ինչու, առաջինի վրա հարձակվում էր մի ուրիշը, որը քարանձավի մթնում մինչ այդ չէր երևում: Նա Իսոյի ազգակա՛նն էր և առաջին թշնամին, թե՛ բաժին էր ակնկալում Իսոյի մորթելիք եղից, մութ էր և միայն ներկաները մտաբերում էին, որ խոսողի փոքր երեխան երեք օր է կապտած բնկած է և ինչպես կանայք էին ասել, մնացել է երեխայի կաշին և ոսկորը:

— Ա՛յ ժողովուրդ, ես պակաս խոսք հո շասացի, որ էն մարդը տեղն էքվեց...

— Ես քո մտքինը լավ գիտեմ,— և մթնից դուրս էր գալիս դեղնած երեխով մի մարդ, որի նույնպես կաշին և ոսկորն էր մնացել:

— Մտքինդ լավ գիտեմ... Եզներդ ուղարկել ես աներոջդ տունը, երեխեքդ կուշտ, էգուց էլ վար ես գնալու ուրախ-ուրախ, իսկ Իսոն ձեռքը ծոցում պիտի մնա,— նրա աչքերը վառվում էին մթնի մեջ:— Պա՛հի, պինդ պահի, քո երեխի արյունն իմից կարմիր է, չէ՛...

Ներկաներն ուզում են նրան հանգստացնել: Նրանք գիտեն, որ խոսողն այն խեղճ մարդը չէ, այլ սովից գազազած նրա ոգին: Իսկ նա բորբոքվելով հետզհետե բարձրացնում է ձայնը, հայհոյում՝ անհայտ է թե ում մեռել-կենդանը և ձայնը մինչև վերջ խզելով դուրս է թաչում, կարծես քարից իրեն գեցեց անդունդը:

Այդպիսի ժամանակ մարդիկ քարատակում լռում էին և նույնիսկ Բալթա Թիվին էլ չէր խաղում: Մարդիկ իրար էին նայում. նրանց դեմքերը համր էին և մռայլ, ինչպես քարանձավի պատերը:

Աթա ապերն առաջինն էր խոսում.

— Ժողովուրդ, հապա էն խելագարն ո՞վ էր, մեր տղան չէ՛ր... Ուրեմն թողնենք, որ նրա երեխան մեռնի: Ուրեմն մենք մեռած պիտի լինենք, որ մեր երեխան սովից մեռնի:

— Ի՛նչ անենք է՛, Աթա ապեր, ինչ անենք...

— Ում տանը մի բուռ կորեկ կա, թող նրա տունը կրակ ընկնի...

— Լավն էն չէ՛ր, որ սրով կոտորվեիր:

— Մենք սրով չենք կոտորվել, սովից էլ չենք կոտորվի: Ուրեմն արագ աշխարհը պիտի մթնի, որ մենք սովից կոտորվենք: Առաջ էլ է սով եղել, պատերազմ է եղել, ինչպե՛ս են ապրել մեր պապերը: Ողորմի իրեն, իմ Օհան պապին, մի պինդ սովի ժամանակ գալիս է տեսնում ժողովուրդը տավարի նման արածում է, իրա հերն էլ ցորենի հորը բաց է արել, թաշի իրն էր ին ցորեն է ծախում՝ սոմաքը մի արասի: Մահակը վեր է առնում

իմ Օհան պապին, Թաջիրներին առ՛ւր թե կտաս, էն օրն է գցում, որ եկած ճանապարհը մոռանում են:

— Այ թե հա՛...

— Ողորմի Օհան պապին,— սրտի խորքից գոհ կանչում էր ունկնդիրներից մեկը, կարծես անհայտ թաջիրները նրա թշնամիներն են և ինքն էլ մասնակցել է ծեծին:

— Հա՛, Օհան պապին ցորենը ետ է ածում հորերի մեջ և հորն ասում է՝ վե՛ր կաց, հիմա ես պիտի չափեմ: Նստում է հորի բերանին, ժողովուրդին կանչում է, որին մի կտա, որին երկու, լցնում է պարկերը, թե շահով կարգով ետ կբերեք, երբ ունենաք:

— Ա՛յ արդար դատաստան...

— Առաջ էլ սով է եղել, հապա ո՞նց են արել...

— Ո՛ւր է հիմա Օհան պապի, ո՛ւր էն ժամանակի հորերը... Աշխարհի վերջն եկել է, Աթա, գուր հենց մենք ենք շարշարվում,— ասում էր Չեստանց Վանեսը, որ շտաբի անդամ եղած ժամանակ էլ կարծում էր, թե Խանլար փաշան Դրնգանի ձորով կանցնի և այդ անխուսափելի համարելով՝ առաջարկել էր գյուղը վաղօրոք տեղահանել Մեղրաքերծի անտառը:

— Հորեր շա՛տ... դու հանելն ասա, Աթամի...

1920 թվի սկզբին դիրքերից տուն էին վերադարձել այն զինվորները, որոնք կազմում էին ինքնապաշտպանության կանոնավոր զորամասերը, վերադարձել էին նաև նրանք, որոնք պարտադիր զինվորական ծառայության մեջ չէին, այլ Զանգեզուրի զինված ուժերի հրամանատարի առաջին հրամանին պարտավոր էին «իրենց հացով և ջրով» բարձրանալ լեռները և զորք պահել գյուղերին մոտիկ: Նրանց մեծ մասը արեմտյան Փրոնտում մասնակցել էին այնպիսի պատերազմների, որոնց համեմատությամբ տեղական կռիվները սոսկ «զլխացավանք» էին: Առաջիններից էր կազմված «տրեխավոր բատալիոնը», իսկ երկրորդներն ունեին իրենց յուրահատուկ կարգը, որ նմանվում էր քրդական աշիրեթին. «բառկալոն» և բոլորը բարձում էին քոչը, այսինքն՝ մի քանի օրվա պաշար մեջքերին բարձրանում էին լեռները:

Այդ զինվորներից ոմանք երևում էին նաև Եուզանց քարտակում, թեև նրանք գերադասում էին հավաքվել ընկերներից մեկի տանը, այդ տունը վերածելով զորանոցի: Քարատակ մտնելով, նրանք բերում էին ոչ միայն շինելի և ստպոգների հոտ, այլև մասնակցում էին գյուղացի-

ների գրուցին և Աթա ապերն զգում էր, որ նրանց հետ դժվար է զուրկ դնել:

Աթա ապերը զգաստացավ, երբ Անդոն, այդ զինվորներից մեկը և հենց Աթա ապոր եղբորորդին, ասաց.

— Հորեր շատ, դու հանող ասա, Աթամի...

— Այ տղա է՛... — և Աթա ապերը ձայնը բարձրացրեց, որովհետև հակառակորդն իր արյունն էր. — ես գլխի եմ, թե ուր ես ծնում, համա առաջդ քար կա... Կամաց, վեր կընկնես...

— Աթամի, թե հորի բերանի քարն ես ասում, կգլորեմ Սանդ աղբյուրի ձորը: Թե չէ ուրիշ քար չկա:

Մի քանիսը ծիծաղեցին Անդոյի այլիմաստ պատասխանի վրա: նրանք հասկացան, որ Անդոն ակնարկում է եղբոր՝ Մելքումովների հորերը, քանի որ Սանդ աղբյուրի ձորը նրանց տան առաջն էր:

— Քեզ ո՞վ է էղպես խրատել... Ուրեմն Մելքումովների ցորենը դո՛ւ ես աշխատել: Դու խնձորին լ ո լ ո էիր ասում, որ նրանք մաղազա բաց արին, ցորենատեր, փողատեր եղան: Հիմա ասում ես...

— Աթամի, ախր Օհան պապի հորերը չկա է՛...

— Օհան պապին չկա, ողջ մնա շենք: Հապա էսքան մարդ մի Օհան պապի շարժի՞:

— Շատ էլ արժի, հաց տուր է, հա՛ց...

Եվ քառատակում սկսվում էր սուր վեճը, «կոսմոսներ»-ը, — ինչպես ասում էր աշխարհի շար ու բարուց հեռու չբաղաճապանք: Անդոն մի կողմից, Աթա ապերը մյուս և երկուսին էլ միանում էին կողմնակիցներ, վեճն այնպես էր թնդում, որ հեռվից լսողը կկարծեր, թե երկու գյուղի միջև ջրի կռիվ է և ահա ուր որ է պիտի տրաքեն մահակները:

Վեճի թունդ ժամանակ Աթա ապերն սկսում էր հայհոյել Անդոյի քեռիներին, որոնց կողմն էր քաշել Անդոն. իսկ նրանք, Անդոյի քեռիները, Աթա ապոր ասելով, քարավան կտրողն եր են: Նա հայհոյում էր Անդոյին ճանապարհից ծոռղներին, նրա խրատիչներին՝ մեծից մինչև փոքրը, ապա շուտ էր գալիս Անդոյի պաշտպաններից մեկի կողմը. ն եր կ ու մ էր նրա յ ո թ պ ո Ր տ ր, անվանելով բակլայի գ ո Պ մ ա տ ա ղ ու տ ո ղ, մ ա ղ ծ ա խ ո ղ բ ո շ ա և էլ ինչեր չէր ասում Աթա ապերը, երբ գազազում էր և սկսում էր հակառակորդին հայհոյել:

— Աթամի, եկել է, եկել... Հրեն դուան կանգնած, — և Անդոն նայից դուան կողմը: Եվ նրանք, որոնք չհասկացան Անդոյի հնարը, բոլորը նայեցին դեպի դուռը:

— Ո՞վ է դուանը կանգնած, — և Աթա ապերն էլ նայեց դեպի դուռը:

— Ժողովրդի թշնամիների հոգեհարը, — և Անդոն իսկույն թաքնվեց հարեանի հետևը, որովհետև Աթա ապերը գլխի ընկնելով, որ Անդոն իրեն կապ գցեց, ձեռքը մեկնեց մահակին:

Ժողովուրդը քրքշաց:

— Անդո տղա, հալբաթ ձեռքս կընկնես... Հո չեմ վախելու քո խրտկիցից: Ես իսկի Ալիսազով պրիստավից չեմ վախեցել: Կամիսարին ասեմ էդ փափուկ տեղերիդ մի տասը ճիպոտ տա, որ իմանաս, թե ճանապարհը որն է... Աչքերդ հենց պատրաստի վրան է: Աշխատեք է՛, դուք էլ աշխատեք, Մելքումովների նման դիզեք: Էս էլ դառավ էն բունթի տարին: Մի քանի շահել եկան ժողովուրդին խելքահան արին, իրար մսի գցեցին, հետո էլ թողին փախան: Չէ՛, ճանապարհն էդ չի...

— Ասա է, խոսքդ ասա, Աթա ապեր, — և ծերունին հանդարտվում էր:

— Իմ խոսքս նա է, որ էլի մենք իրար ցավ կիմանանք: Սրտից սիրտ մի բարակ կամուրջ է, էն է մարդու մարդ դարձնողը: Էն էլ որ չլինի, գետը թող քշի տանի մարդուն: Էն ող կունկը թուխպի մեջ ցրիվ է գալիս, լսե՛լ եք, ոնց են իրար կանչում ու մինն էլ է չի կորչում: Ուրեմն մենք էն երկնային թռչունի շափ էլ չկա՞նք... Իրար ձեռք բռնեցեք, մինչի դուրս գանք էս դժվար տարին: Իմ խոսքս սա է...

Եվ Աթա ապերը տուն էր գնում, առնում էր մի բուռ ձավար, մաշ, լորաթան, — ինչից որ տանը ճարվեր, շատ անգամ թոռներից ծածուկ, ուզարկում էր այն տունը, որտեղ մի երեխա կապտած նվում էր և նման էր շոր պարկի, որի մեջ ոսկորներ են լցրել:

Այն դժվար ձմեռը Աթա ապերը ձյունի մեջ զլորվելով բարձրանում էր հին եկեղեցու թաղը, նա երևում էր Միջին մահալայում, գնում էր այն աղքատ թաղը, որ հայտնի էր Մոխրաթաղ անունով: Նա դրացիներին համոզում էր իրար օգնել, ստիպում էր, հանդիմանում էր հրապարակով և ավելի հաճախ հուսադրում էր.

— Հրե հա՛... Մեղրաքերծը կարմրեց: Էսօր Վերին թաղում ասում էին, որ Եղջաքար ձյուն չկա: Դիմացեք հա՛, ձեզ մատաղ, շատը գնացել է, մնացել է քիչը: Եղջաքարում որ ձյուն չկա, ուրեմն էսօր էգուց Միջկառի հանդերը կբացվեն, Եզնարածի առվի տակ դաղձ կլինի, ի՛նչ դաղձ... Քիչ է մնացել, Աթա ապերը ձեզ մատաղ: Մանր մունդին մի կերպ պրեք, դուք էլ գոտիներդ պնդացրեք... Դուք որ քարից կակուղ ամեն ինչ էլ ուտեք, կապրեք, ձեր ոսկորը պինդ է: Երեխաներին նայեք... Էսօր էգուց ճանապարհները կբացվեն, էշերը առաջ կաննեք, կգնանք Բարկուշատ, է՛, Աթա ապերը ճանանչ թուրքեր ուներ, որ ամեն մինը մի խան, մի սուլթանի: Հիմա հարյուր ուղտաքեռ բրինձ են դարսել...

Մայրերը լսում էին նրան, լսում էին և հոգսի տակ կբաժնալու հայրերը, և թեև ապրելը ծանր էր, բայց էլի Աթա ապերը հույս էր, կամ ինչպես ասում էին՝ «ցորեն լեզու էր, որ նման էր ցորեն հացի»:

3

Մարտի վերջին երեք օր արև արեց: Արեգունի ձորերում ձյունը հալվեց, Եզնաբաժի առուն բացվեց և երևացին մուգ-կանաչ դաղձի առաջին թփերը:

Բայց հենց այդ երեք օրում մեկը մյուսի հետևից մեռան հինգ երեխա, որից երկուսը մի տնից էին: Գյուղի համար այդ ամենաժանր օրն էր: Պատահել էր, որ կայծակը խփել էր ոչխարի հոտին և հոտի կեսը այրվել էր,—պատահել էր, որ արև կեսօրին հանկարծ հեղեղը սրբել էր հասած արտերը և մինչև անգամ հնձվորներին էր խեղդել: տարի էր եղել, որ նախիրի մեջ սև ցավը հունձ էր արել և ինչպես հնձվորի աչքից վրիպած հասկեր, ամբողջ գյուղում մնացել էին մի քանի նիհար երիներ,—բայց որ սովից երեխա էր մեռնում՝ այդ ավելի էր պատահասից:

Ամբողջ գյուղը հավաքվեց դժբախտ տան բակը: Երբ տնից հանեցին այդ զույգ դազաղները երեսները բաց,—մարտի արևն օժեց և ոսկեփայլ շողաքիթ մանուկների դեղնած արտեանունքները: Տանը սուգ բարձրացավ: Թշվառ մայրը ձեռքերը շեմքից դուրս պարզած կանչում էր. «Ո՛ր եք տանում, իմ ձագերին ո՛ր եք տանում...»,—կանչում էր ձեռքերը դեպի արևը, կարծես արևին աղերսում էր կյանք տալ սառած մանուկներին:

Այն լեռնային երկրի սովորության համաձայն դիակին ուղեկցում էին միայն տղամարդիկ: Կանայք մնացին տանը ողբ ասելու նոր և հին մեռելների համար, որոնք ննջել էին ո՛վ գիտե որ տարին: Իսկ թաղման թափորը դանդաղ բարձրանում էր դեպի ժայռերը, դեպի գյուղի հինավուրց գերեզմանատունը:

Աթա ապր սիրտը լցվել էր: Նա այն լեռնցի ծերունիներից էր, որոնք իրենց կյանքում շատ անգամ են նայել մահի երեսին, կոխ են բռնել գայլի հետ, գիշերը մենակ գնացել են մութ անտառներով, գիշերել են ձորի արխաչներում, տեսել են թրատված և արնաշաղախ դիակ,—և ոչ լաց են եղել, ոչ հառաչել են: Բայց մի փոքր երեխայի լաց կարող է նրանց հուզել:

Աթա ապերն այդ լեռնցի ծերունիներից էր և երբ թափորը գյուղից դուրս եկավ, հանկարծ նրա սիրտը փլվեց և ծերունին սկսեց ողբ ասել: Դեռ էր օրը լեռնցիների ողբը, ո՛չ այն ողբը, որ կանայք են ասում, շար ընկներով պատի տակ կամ գերեզմանի շուրջը: Նրանք բարակ ձայնով են երգում և ինչքան ողբան, այնքան բորբոքվում է սուգը և ոչ վերջ կա, ոչ

հագրա հանգիստ: Այդպես են ողբում լեռնցի կանայք, և լսելով նրանց, թվում է, թե մոլորվել եք մի անտակ ձորում և ուր էլ գնաք՝ բարձր ժայռեր են և փրկության դուռ չկա: Բայց այդպես չեն ողբում լեռնցի տղամարդիկ և այդպիսի ողբ շատաց Աթա ապերը: Նա սկսեց խոր ձայներից, հանդարտ, ինչպես հողմի առաջին ալիքը, որ անցնում է անտառի վրայով և արտերի վրայով, երբ ծփում են խոտերը և լոբը դեռ չգիտե, որ ահա ձագերի վրա կթափվի սև կարկուտ: Աթա ապերը խոր սկսեց, ինչպես հորովելի սկիզբը, ապա բարձրացավ, կեռամաններով ուր-մուր բարձրացավ, և ինչքան բարձրացավ, հզորացրեց ձայնը և վերջում, ինչպես սևակնած երկնքի որոտ, դրդացրեց և արձագանքը դրնգալով գնաց մինչև Մեղրաքերձ, մինչև Զինգիլա քարերը գնաց և յոթ անգամ Պղնձաբարը դրնգաց:

Այդ ողբ չէր, այլ ահարկու բողոք կապույտ երկնքին, բողոք, որին ձախակցում էր ձմեռվա քնից զարթնող բնությունը և քարե արծիվը, որը երգի ազմուկից դուրս էր թռել:— քարե արծիվն իր թևերի վրա տանում էր մարդու բողոքը մահի դեմ:

Գերեզմանատանից Աթա ապերը գնաց Խուռուփի ձորը, որտեղ արևադարձային հողերն արևից տաքացել և ձյունը հալչում էր: Ձորում մարդ չկար: Տաք էր. Աթա ապերը գնաց ձյունների վրայով, սև ավազա-հողերով գնաց, կոխելով կածանը, որ տեղ-տեղ բացվել էր, և նստեց գեատափի քարին:

Խատուտիկ ջրածուկը քարից-քար թռչելով որսում էին մծեղներ: Մի ագռավ ձյունի վրա կացահարում էր շորացած տանձը: Հերսա մատուրները կարմրին էին տալիս, իսկ մոշի տերևները կարծես նոր էին կանաչել:

— Փա՛ռք քեզ, որ ամեն բան կարգին սարքել ես, մինչև անգամ մծեղներին էլ անտես չես արել...—Ո՛ւմ հետ էր խոսում Աթա ապերը՝ ասածն, որ ապրում էր Խուռուփի ձորի արխաչում,—հին թթնու հե՛տ, պի փշակում գուցե ապրում է այն ոգին, որ Աթա ապր նման սպիտակամոցու ծերունի է և տրեխներ է հագնում և մինչև անգամ արխաչուղի գրպանում պղնձե բռնոթաման ունի: Ո՛ւմ հետ էր խոսում Աթա ապերը,— ինքն էլ չգիտեր, բայց խոսում էր, որովհետև չէր կարելի գարնանամուտի արևին լինել Խուռուփի խաղաղ ձորում, լսել ջրի ձայնը, այն խորհրդավոր ձայները, որ հնչում են քարանձավներում,— տեսնել ձորը խոր լուսվյան մեջ և շխտել:

— Մա՛հ էիր բաժանում, արժանի մարդու տալիք... Հրեն Գիշունց պարավր երկու տարի աղատ-պաղատում է հոգին աննես... Հապա դու կե՛լք էիր, թո ձեռքն ինչպե՛ս բարձրացավ անմե՛ղ փոքրերի վրա: Հիմա

ես ի՞նչ պատասխան տամ խալխին: Առաջից սուր, հետևից սով. ձեռք պարանի ես գցում, օձ է դառնում: Ո՞ւր պիտի գնա էս ժողովուրդը. վեր-վից կամիսարն է մեր գլխին կրակ թափում, ներքևից էս կրակն է մեզ խորովում: Ասա է՛, ասա... 4

Ջրածոներն ուրախ ճկում էին, խաղացնելով պոչը: Ուրիշ ծառից թռավ մի ագռավ և առաջինից խլեց նրա ուտելիքը: Ապա երկուսն էլ թևերին արած թռան ծառերի խորքը: Եվ ուրիշ էլ ձայն չկար, բացի այն խորհրդավոր ձայները, որ գալիս էին հուռուփի քարանձավներից:

Աթա ապերն սկսեց ձորով բարձրանալ: Չորի արևկող լանջերին ձյուն չկար: Երևում էին աշնանացան գարու արտերը, փոքր այնքան, որ թթենու սովերը ծածկում էր արտը:

Աթա ապերը կանգնեց մի արտի եզրին:

— Ե՛րբ պիտի հասնես... Ախր մի տնից զույգ դագաղ հանեցինք...

Նա դուրս եկավ բլուրի գագաթը: Վերևը դեռ թանձր ձյուն էր: Աթա ապերը շրջվեց և այդպես էլ կանգնած մնաց, կարծես այն, ինչ նրա աչքին ընկավ, ծերունին տեսնում էր առաջին անգամ:

Հեռվում գետահովտի վրա փովել էր քաղաքը: Թիթեղյա կտուրները մայրամուտի արևից փայլվում էին և այդ փայլը տարածվում էր հեռու, ընդարձակելով քաղաքի սահմանները: Այդ փայլուն դաշտում, ինչպես ցորենի դեղին շեղջ, երևում էր եկեղեցու ոսկեգօծ գմբեթը: Եվ ուրիշ չի՞նչ չէր երևում և չէր որոշվում մի առանձին ձայն այն խուլ աղմուկի մեջ, որ փայլի հետ միասին քաղաքն արձակում էր դեպի հեռուները: Մարդկանց աղմուկ էր, դարբնոցների՞ց էր գալիս, թե՞ փողոցներով անցնում էին բեռնած ֆուրգոններ, — չէր լինում որոշել, ինչպես և չէր կարելի համատարած փայլի մեջ նշմարել մի որևէ տանիք:

Աթա ապերը նայեց, խոր նայեց և արագ քայլերով իջավ գլուղի վրա: Նա նման էր անտառաբնակ եղջերուի, որ մոլորվելով դուրս է եկել անտառից, աչքն ընկել է օտարտի մի բանի, որ շլացնում է, և՛ հմայում է, և՛ ահ է ներշնչում նրան, և եղջերուն կանգնած միտք է անում՝ ի՞նչ է այդ թակա՞րդ, բարեկա՞մ, թե՞ դարանամուտ որսորդ... Միտք է անում և իրեն գցում է ծանոթ թավուտները:

4

Իսկ գլուղում այդ ժամանակ իրարանցում էր:

Մի խումբ զինվորներ գերեզմանատնից վերադառնալով, գլուղացիների գլուխն անցած գնացել էին դեպի Մելքումովների բարձր դարբանը: Նրանք պահանջել էին կոմիսարին և տեղեկանալով, որ կոմիսարը բացակա

է, ազմկելով ներս էին մտել: Մելքումովների մեծ եղբայրը ամբոխից ահարկված, մի բառ անգամ չէր կարողացել ասել: Նրան կիսամեռ ներս էր տարել նրա եղբայրը: Նրանց կանայք և հրեխաները վայնասուն էին բարձրացրել, իսկ ամբոխից գոռացել էին:

— Հորերը բաց արեք... Մերոնք սովից կոտորվում են...

— Ես հոր չունեմ, — պատշգամբից բղավել էր Մելքումովի փոքր եղբայրը, — եթե այս երիտասարդները չգիտեն, դուք հո գիտեք, — և նա մի քանիսին մատով ցույց էր տվել, նրանց անուններն ասել էր և այսպիսով երկպառակել էր բազմությունը: Նրանք, որոնց նա անուններով կանչել էր, ներքևից բղավել էին, որ այդ գործում խառը չեն և եկել են հաց խնդրելու իբրև բարեկամներ: Այդ խոսքից գազազել էին մյուսները և զինվորներից մեկը Կուտուռուզ Սաքոյի երեսին թքել էր:

— Թող հորերը բաց անեն, թող բաց անեն, — ներսից ասել էր մեծ եղբայրը. իսկ ամբոխն ինքնագլուխ հարձակվել էր հորերի վրա, որոնցից երկուսի բերանին Մելքումովները խոտ էին դարսել:

Սակայն չորրորդ հորն էին բացել և շորսի մեջ էլ մի հատիկ չկար: Մի հորը լիքն էր բրդի պարկերով, այն երկու հորը, որի վրա խոտ էին դրել, բեռներեբրան լցված էր պղնձե կաթսաներով, փարչերով, կծերով և ուրիշ պղինձներով: Իսկ չորրորդ հորը՝ ամենից մեծը՝ դատարկ էր և երբ մեկը կոացավ հորի վրա և բղավեց «հաց չկա՛, չկա՛», — հորն արձագանքեց՝ «կա՛... կա՛...»:

Դատարկ հորից սիրտ առնելով նրանք, որոնք հայտնել էին, թե իբրև բարեկամ են եկել, — սկսեցին հանդիմանել նախաձեռնողներին: Կուտուռուզ Սաքոն բղավում էր այնքան բարձր, ասես կամենում էր, որ Մելքումովների տնից լսեն նրա խոսքը:

— Չկա՛, չկա՛... Այ մարդիկ, բա դուք հա՛յ չեք: Ուրեմն սրանք մեզ ի՞նչամի են, որ հաց ունենան և թողնեն, որ մենք սովից կոտորվենք...

Ասում են, որ այն զինվորը հենց այդ խոսքից հետո է թքել Կուտուռուզ Սաքոյի երեսին:

Հորերի դատարկ լինելը շատերին հուսահատեցրեց: Մի մասն իսկույն սրվեց տները, անիծելով այն ժամը, երբ խառնվեց տաք գլուխ երիտասարդներին: Իսկույն մնացին զինվորների խումբը և գլուղացիներից նրանք, որոնց պարագլուխը Կուտուռուզ Սաքոն էր: Զինվորները պահանջում էին ցույց տալ իսկական հորերը. նույնիսկ մեկն սպառնաց տունը հրդեհել, իսկ Մելքումովների փոքր եղբայրը միայն կրկնում էր, որ այլ ուրիշ հոր չկա, որ իրենք էլ քաղաքից են հաց բերել: Ավելի համոզելու համար նա պատշգամբից զինվորների կողմը նետեց բանալիների կապը և բղավեց.

— Բայց առիթ տարեք, ինչ ուզենաք, բայց հաց չկա...

Անդոն բանալիների կապը ետ շարտեց և նրանից ավելի հզոր կանչեց.

— Քեզ լինի քո մաղազան... Մենք աղքատի պղինձը կողոպտող ավազակներ չենք:

Անդոյի այդ խոսքից կարող էր բռնկվել ավելին, քան խոսքի կարիք էր, բայց այդ ժամանակ ներս թափվեցին զինվորների կանայք և մայրերը, որոնք մինչ այդ մեռնչատանը դառնադի ողբում էին մանուկների մահը: Նրանք ներս թափվեցին, ինչպես սագերի վախեցած երամ, աղմկեցին, կախ ընկան իրենց որդիներից և ամուսիններից, աղերսեցին, լաց եղան, իսկ Անդոյի մայրը ճշաց.

— Անդո, խեղճ եմ, արյուն մի անի,— և գրկեց օրդուն:

Կանայք նրանց դուրս տարան:

Աթա ապերը գյուղին մոտեցավ այն ժամանակ, երբ գյուղացիները կտուրների վրա փոքրաթիվ խմբերով աղմկում էին: Ամբոխն, ինչպես պղտոր հեղեղ, բաժանվել էր մանր ճյուղերի. մի տեղ արգեն հանդարտվել էր, մի ուրիշ տեղ առվակը նույն աղմուկով շառաչում էր, մի երրորդ գնում էր վճիտ և ոչ ոք չէր ասի, թե նրա սկիզբը եղել է պղտոր հեղեղը:

Աթա ապերը մոտեցավ զինվորների խմբին: Նրան արդեն պատմել էին դեպքը:

— Անդո,— և ծերունին բարձրացրեց փեշը,— իմ բաժին ցորենը տա՞ս,— ապա խիստ ասաց.— ծոփ էլ ճանապարհից. ա՛յ ջահել, Աթամին հին մարդ է, գիտի ինչ է ասում...

Անդոն ոչինչ չպատասխանեց և զինվորներից ոչ ոք ոչ մի բառ չասաց:

Աթա ապերն սկսեց պատմել, թե խուռուփի ձորում գարիներն արդեն երկու մատ բարձրացել են, թե ամբողջ ձորում համարյա ձյուն չկա և եթե այդպես արև անի, խուռուփի ձորի գարիները շուտ կհասնեն, շատ շուտ...

Նրբ ծերունին խոսքը վերջացրեց, զինվորները դարձյալ լուռ մնացին: Այնպիսի քար լռութուն էր, որ Աթա ապերը վարձացած աշօրով նախեց Անդոյին, նրա ընկերներին, կարծես այդ մարդիկ հանկարծ օտար թվացին Աթա ապորը, ինչպես ուրիշ ազգի մարդիկ, որոնք չեն հասկանում նրա լեզուն,— և ինքն էլ օտարական է ու մոլորելով ճանապարհն՝ ընկել է այս անծանոթ գյուղը:

Մերունին նայեց շուր կողմը, կարծես ուզում էր ստուգել, թե իրա այդ մարդիկ իրենց գյուղից են և գյուղն այն ժանոթ գյուղն է՝ Շուղանց քարատակով, նովավոր աղբյուրով և հին ջրաղացով գյուղը:

Աթա ապերը տեսավ եկեղեցու պատի տակ նստած գյուղացիներին և շատապես նրանց պատմի ձորի գարիների մասին...

Մարտի հետ վերջացան այն արև օրերը, որ Աթա ապոր հույսն էին: Ապրիլն եկավ պ ա ո ա վ ի ց ր ո տ վ: Ամպերից թափվում էին թփերի նման բյուրեղներ:

Ապրիլի սկզբին գյուղերից ետ կանչեցին զինվորներին: Կոմիսարը ջուցակը հանձնեց նրանց ավագին և Անդոյին նայելով ասաց. «Պարապ մնալուց բուղա էիք դառել, պողահարում էիք անմեղ մարդկանց: Գնացեք ձեզ ֆրոնտում ցույց տվեք»:

Նորից լուրեր էին տարածվում, որ մուսավաթը Ղարաբաղում գործ է կուտակել և գարնան հետ ձորերում պիտի որոտային թնդանոթները: «Ին միանգամից կուտարվենք վերջանանք է՞»,— ասում էին Շուղանց քարատակի մարդիկ և նույնիսկ Բալթա Թիվին այլևս թուղթ չէր խաղում, որովհետև արդեն սաղ ա շ խ ա ր հ ը տ ա ր ե լ է ր:

Շուղանց քարատակը դատարկվում էր: Ոմանք գյուղեգյուղ շրջում էին մի կտոր հացի հոգսով. ոմանք գուլթանի սարքն էին նորոգում, որովհետև ինչքան էլ սովը զուրբ, նրանք այնուամենայնիվ պիտի սերմեին աշնան ցելը, թեկուզ թնդանոթի կրակի տակ:

Առաջիկա պատերազմով ոչ ոք այլևս չէր հետաքրքրվում: Քարատակում նույնիսկ այնպիսի խոսքեր էին ասում, որ մինչ այդ ոչ ոք չէր ասել: Երբեք Անդրին սպառնում էր Մեղրաքերծի գլխին կախել իր դ ա դ ա ք ստեղծաբեկ, իբրև սպիտակ դրոշ. «Կանաչ մատուռը վկա, որ պիտի թուրքանամ... Պիտի թուրքանամ, որ ականջներս հանգստանան: Իմ գեշի անունը կգնեմ Ասմար, շարսավը գլխին կբաշնեմ, կդառնա նորահարս: Էլ ոչ բերանի սեպերը կտեսնեմ, ոչ շեշաբար երեսը: Կդառնա հյուրի փերի...»: Եւ այդ ասում էր բոլորովին լուրջ և չէր իմացվում՝ դառն հեզնանք էր նրա ասածը, թե ճշմարիտ ցանկութուն:

Մերունիների համալը հալլում էր: Նրանց լսում էին, երբ պատմում էին շատ հին օրերից, երբ այնքան ցորեն կար, որ մոռանում էին հորերի թիվը և նույնիսկ մի սաստիկ ձմեռ իբր թե ցորենը ձյունների վրա շաղ են ավել թռչունների համար:

Նրանց այդ ժամանակ էին լսում, իսկ մնացած ժամանակ քարատակում աղմկում էին այն զինվորները, որոնք կազմում էին ինքնապաշտպանության զորամասեր և առաջին հրամանին պարտավոր էին դիրքեր բազմաթիվ «խրենց հացով և ջրով»:

— Էսօր հարսը ասաց, որ տանը մնացել է շուր հաց...

— Հիմա որ պատերազմ տեսնեմ մոլլա-զատուճեցի թուրքերի մեջ հա-

ցով փոխեմ, պիտի ասեն ազգի դավաճան էր... Մինչև լույս էն փոքր սովից չքնեց:

— Փոքր ասեցիր, հիշեցի,— ասում էր մի ուրիշը,— տասն օր է մեք հաշույի երդիկից ծուխ չի բարձրանում: Չեմ իմանում մեռած են, թե ապրում են...

— Երեկ տեսա... Ոտքերն ուռած գնում էր: Ասում էր հարսի ճակատանոցը տանում եմ գարով փոխեմ:

— Ասա մինչի հիմա ինչո՞ւ ես պահել ճակատանոցը:

— Դե ի՞նչ աներ: Եզը ջրօրհնեքից առաջ մորթեց, երեք ոչխարը Սայու Սիմոնին ծախեց, խոտ ու դարման ծախեց, Խուռուփի ձորում մի քանի թթենի ունեք ծախեց, հիմա էլ ճակատանոցն է ծախում...

— Դու էդ մի սաս: Դու սաս թե ճակատանոցի փողերն էլ որ կերան, վաղն ինչ պիտի ուտեն...

— Խաշոն մինչի հունձը չի ապրի: Երեկ որ տեսա, ասես գետինը պատռել, մեջից մեռել էին հանել:

— Էլ կա էդպես, միայն Խաշոն չի...

Եվ պատմում էին ընտանիքների մասին, որոնք կերել էին մինչև վերջին փալասը և անկողին շունենալով քնում էին հարդի մեջ: Պատմում էին տների մասին, որոնց եթե կրակ տայիր, խանձահոտ չէր բարձրանա, որովհետև տան մեջ այրվելու բան չկար: Եվ դեպք էր լինում, որ մեկը լսելով պատմում էր, թե իբր հարևան գյուղում կատվի միս են կերել, բայց հենց այդ էլ սահմանն էր: Նույնիսկ նրանք, որոնք սովամահից էին պատմում, — նույնիսկ այդպիսիները անհայտ է ինչու, հարձակվում էին այդ լուրը հաղորդողի վրա, նրան հանդիմանում էին սուտ լուրի համար և բռնորդ էին վկայում, թե հարևան գյուղում խեղդամահ կլինեն, որ քարով կզցնեն իրենց, բայց այդպիսի անառակ բան չեն անի:

Աթա ապերը գալիս էր տուն և քունը չէր տանում: Պառավը մի կտոր կորեկ հաց էր մեկնում նրան, բայց ծերունին այդ էլ չէր ուտում, խարելով, թե տեր նորընծայի տանը ոսպով ճաշ է կերել: Եվ երկա՞ր, շատ երկար, մինչև աքորականչ, երբեմն մինչև լուսո մոտ, երբ արդեն ճոռում էր հարևանի դուռը, — Աթա ապերը նստում էր օջախի առաջ, իրենց հին տանը, ողի պատերն այնպես էին սևացել և կրակի լույսով այնպես էին փայլում, ասես պատերը ձյութած էին:

Օջախի առաջ Աթա ապերը միտք էր անում հին օրերից մինչև ներկան. նրան թվում էր, թե իր ամբողջ կյանքը եղել է մի արև ճանապարհ ծաղիկների մեջ, սառն աղբյուրների երկրում, որտեղ լեռնալանջին կարմ-

րում է մարին, ձորերում մոշը և երբ կովերը տուն են գալիս, կաթը ցողի եման կաթկթում է ծաղիկների վրա...

Նրան այդպես էր թվում, և երբ մտքով գնում էր ծուրտ աղբյուրը, մահ էր գալիս Շահ յուրդի տախտերում՝ աչքերի առաջ ծուրտ աղբյուրը գլզում էր ոչ այնպես, ինչպես առաջ... Առաջ աղբյուրը ծաղիկների մեջ չէր երևում, հիմա շորս կողմը փուշ է և ծուրտ աղբյուրը վարար չի: Եթե այսպես գնա քսան տարի, հիսուն տարի, — ծուրտ աղբյուրը մի օր կցամաքի և մի մարդ չի մնա, որ վկայի, թե այս ամառի առապարում երբեմն կար մի զանգակ աղբյուր. Շահ յուրդի տախտերում ձին ձիավորով կկորչեր, այնքան խոտը բարձր էր... Հիմա այն տախտերը վարում են, հեղեղատի ձորակները հետզհետե խորանում են և ով գիտե ուր կհասնի այսպես:

Աթա ապերը երբ ուզում էր հասնել մինչև ակունքը, որտեղից ջուրը պղտորվեց, — գտնել սաբաբին, որից սկսվեց ծուրտ աղբյուրի ցամաքելը և այլևս չկար առաջվա փարթամ խոտը, — Աթա ապերը պտտվում էր գետահովիտի շուրջը, որտեղ փոված ընկած էր քաղաքը: Ամեն ինչ այնտեղից եկավ: Իբրև ժայռ այդ ակունքի մոտ երևում էր ինքը՝ Օհան պապին, որ ասում էր, թե հացը եթե կշեռք տեսավ, արտերը կչորանան: Եվ ինքը՝ Օհան պապին էր գուշակել մի մեծ պատերազմ և սով, մի ահավոր ժամանակ, երբ հայրը որդուն կուրանա, աղբյուրները կցամաքեն, գետնի շարժ կլինի և կվերջանա երկաթի թագավորությունը:

Ապա մտքով ետ էր գալիս մինչև գյուղի խառնակ առօրյան: Մեկընթացների մաղազան նա համարում էր քաղաքի կտորը, սահմանանիշ այն ձուրը, որից այն կողմն արգելված էր վարել: Գալիս կանգնում էր այդ սահմանում, որտեղից ջուրը շրջել էին ուրիշ անվով և այն հին ջուրը կորչում էր խոր ձորում: Աթա ապերը հասնում էր այդ սահմանին և մոլորված կանգնում էր:

— Աթա, ալևորել ես, — ինքն իրեն խոսում էր ծերունին, — շատ ես ապրել, Աթա... Դու էն ժամանակ պիտի մեռնեիր, երբ ոչ կո՞վ կար, ոչ սով կար: Աչքերդ լիության մեջ կփակեիր և հիմա երկնքից քաղցր կնայեիր հողի երեսին շարչարվող մարդու որդուն... Հայր որն է, թուրքը որն է, գաշնակցականը որն է, մուսավաթը որն է, — դու չէիր իմանա: Դու միայն կիմանայիր, որ աշխարհում թողել ես ցուրտ աղբյուրներ, ծաղկած սարեր և ախպեր մարդիկ... Շա՞տ ես ապրել, Աթա...

Մի գիշեր, երբ Աթա ապերը մենակ նստած հիշում էր իր ճանաչ թուրքերին, որոնց երբորդ տարին էր շէր տեսել և ոչինչ չէր լսել նրանց մասին՝ ո՞վ է մեռել, ո՞վ է մնում,—միտք էր տնում, թե օրերը երբ տաքանան, պատերազմ էլ լինի, պիտի գնա Գետամեջերը, որտեղ մեծ ու փոքր նրան ճանաչում են,—և մի ձեռքով բրինձ կբերի,—մի այդպիսի գիշեր շունը հանկարծ կոխեց: Մարդահաշ էր: Աթա ապերը ականջ արեց, ոտնաձայնը լսվեց բակից, շունն ավելի սաստիկ հաշեց և մինչև Աթա ապերը ներսից կանչեց, դուռը ծեծեցին:

Ներս մտավ մի մարդ, ոտքից մինչև գլուխ սպիտակ: Նա դուռն իր հետևից իսկույն ծածկեց, որովհետև քամին ձյունը ներս էր շարտում: Աթա ապերը զարմացած նայում էր անծանոթին, որը ոտքերը գետնին զարկելով թափ էր տալիս ձյունը:

— Զճանաչեցի՞ր,—հարցրեց ներս մտնողը
— Օրուջ քիրվա՛,— և ծերունին նրան գրկած մոտեցրեց օջախին: Ներս մտնողը Շոթանանի թուրքերից էր: Աթա ապեր և նրա գլուխ անշատված էին բարձր լեռնաշղթայով, որ ազգամիջյան կռիվների վայրն էր:

Նրանք հին «քիրվաններ» էին: Հայերի և թուրքերի մեջ բարեկամության այդ ձևը հին էր, այնքան հին, որքան հին էր նրանց երկիրը: Գուցե թե դաշնի այդ ձևը գալիս է այն ժամանակներից, երբ լեռնցի խաշնարածները և դաշտի երկրագործները բարեկամ դարձան, համագլխով, որ լեռն և դաշտը մի մայր երկիր են: Նրանք բարեկամացան և այդպիսով աշխարհում հիմնվեց առաջին եղբայրությունը ոչ ըստ արյան: Քիրվանը եղբայր էր, թանկագին հյուսիս էր, նա կսկծում էր քիրվայի անբախտության համար և ուրախանում էր նրա ուրախությանը:

Աթա ապերը աչքերին չէր հավատում:
— Էս ո՞նց, էս ձյուն ձմեռը ո՞նց տեսար կրակի սահմանը...—Աթա ապերը երեք տարի նրան չէր տեսել.—երեխաներն ինչպե՞ս են, Զավաթի բաջին ինչպե՞ս է...
— Դու ողջ մնաս, շատ-շատ սալամ են ուղարկել:
— Ախր ո՞նց եկար, Օրուջ:
— Աթա քիրվա, քո անունը տվեցի եկա:
— Ինչպե՞ս, ո՞ր ճանապարհով...
— Սարի ճանապարհով... Նրկու օր եկա: Գիշերը մնացի կոտրած քարվանսարայում:

— Էլ ո՞նց ես:
— Դո՞ւք ոնց եք, Աթա քիրվա...
— Վեր է՛, այ պառավ, վե՛ր... Մի տես ով է եկել,— և պառավը մթնում ճրագ արեց, ապա աչքերը տրորելով մոտեցավ,— Օրուջ քիրվան է՛... Բա չէի ասում էլի խաղաղություն կլինի, էլի բարին կմնա:

— Ծշմարիտ խոսք է, Աթա քիրվա, այս ամենը կանցնի և սեր բարեկամությունը կմնա,— Օրուջը գրպանից շիբուխը հանեց, ապա հանեց մի փոքր կապոց,— Զավահիր քույրդ է ուղարկել...
Աթա ապերը երեխայի նման ուրախացավ:

— Այ պառավ, մի տես է՛, մի տես ինչ բռնութի է ուղարկել... Այ շեն կենա Զավահիրը: Ոնց էլ չի մոռանում: Պառավ, գե կբակը խառնի, տես ինչ կա չկա... Օրուջը սոված կլինի:
Աթա ապերն այդ խոսքն իզուր ասաց: Պառավն արդեն կրակը խառնում էր:

— Աթա քիրվա, մի ասա տեսնեմ ո՞նց էք, եղբայրդ ո՞նց է, ձերոնք ո՞նց են... ինչպե՞ս եք ապրում:

— Է, ոնց ենք ապրում, Օրուջ,— Աթա ապերն ուզեց գանգատվի, բայց ժամանակը չհամարեց և միայն ասաց.— Էս գժար ժամանակ որ ողջ ենք, էլի՛ փառք ալլահին...

— Փառք ալլահին, Աթա քիրվա, թող մեր սև օրը սա՛ լինի:
Եվ Օրուջն սկսեց պատմել այն գառնությունները, որ երեք տարի շարունակ նրանք կրել էին լեռնաշղթայի մյուս երեսին: Այդ գառնությունների նույն շարանն էր՝ նույն կռիվը, նույն բռնությունները, սովը, իրար նման, ինչպես լեռնաշղթանի երկու կողերը:

— Հապա Գետամեջերում բրինձ բան...—զգույշ հարցրեց ծերունին:
— Որտեղի՞ց, և ո՞վ է աղքատին բրինձ տվել... Բրինձը հավաքել են զորքի համար, ուղտերով տարել են Բաբու, լցրել են այնպիսի հորեր, որ ա՛յ,— և Օրուջը ձեռքով ցույց տվեց այնքան խոր, ասես բրինձը լցրել էին ծովի խորքը:

— Խե՛ղճ ժողովուրդ,— Աթա ապերը հայացքը դարձրեց կրակին: Պառավը սուփրի վրա դրեց մի աման պեթի, մածուն և կորեկ հացի երկու բլիթ: Նրանք լուռ էին: Կրակն ուրախ աղմկում էր, ինչպես աղբյուր:

— Էս սուփրան ինձ ու քեզ, Օրուջ, ուրախ շատ է տեսել, էս անգամ էլ ուրախ սրտով ուտենք,— և Աթա ապերը մի կտոր հաց կտրեց:

— Ինչալլահ, ինչալլահ,— և նրանք ուրախ սրտով կերան պարզ ընթրիքը:

Ապա երկու հին բարեկամները քնեցին օջախի առաջ՝ մեջք մեջքի, ինչպես հովիվ ժամանակ շատ անգամ քնել էին:

Առավոտյան Օրուչն ասաց, որ մութն ընկնելուց ուզում է տուն վերադառնալ: Աթա ապերն առարկեց: Օրուչն ասաց, որ տնից անհանգիստ է:

— Զավահիր քրոջդ հիվանդ եմ թողել... — և լռելուց հետո, հանկարծ, ասես սիրտ առնելով, թուրքը դիմեց իր բարեկամին:

— Աթա քիրվա, ախր... Ես բանի եմ եկել... Ես քո անունդ տվել եմ եկել...

Աթա ապերն ուզեց խոսք ասի, բայց Օրուչը վրա բերեց:

— Աթա քիրվա, ի սեր աստծու, մի ճար... Սովից մեռանք... Զավահիր քրոջդ անկողնում պառկած եմ թողել: Չեմ իմանում ողջ կգաննեմ նրան, թե մեռած... Նա ասաց, ա՛յ մարդ, աշխարհում թե մի մարդ մեզ ճար անի: Աթա քիրվան կանի... Հիմա տեսնում եմ, որ դու էլ դառը տեղ...

— Օրուչ, կաց, — և Աթա ապերը վեր կացավ դեպի տան անկյունը: Պառավը հասկացավ, երկու քայլ հետևեց նրան և կանգնեց:

— Բաց արա պարկդ, Օրուչ, — Աթա ապերը ետ եկավ՝ թևի տակ կորեկով պարկը, — սա է մեր հույսը, մեր հացը...

Երուսնին պարկի կորեկը կիսեց. պառավին պատվիրեց մի քիչ ավար բերել, մի բուռ շորաթան և նույնիսկ կորեկի երկու բլիթ կոխեց պարկի մեջ, ասելով թե ճանապարհին նա կուտի:

Աթա ապերը միայն խնդրեց, որ եթե իր հարևաններից տունը մարդ գա և Օրուչին հարցնի Գետամեջերի մասին, թող Օրուչը նրանց ասի, որ թուրքերի գյուղերում շատ բրինձ կա, ցորենի արտերը ծփում են և շուտով այնտեղ գարին կհնձեն:

— Մենք ձեր հույսովն ենք ապրում, Օրուչ քիրվա, այդպես ասա, որ նրանք հույսով ապրեն, որ գոնե մեռնողը հեշտ մեռնի...

Եվ այդ օրն ով եկավ Աթա ապր տունը, տեսնելու նրա հին ճանանչին, բոլորին Օրուչը պատմեց, որ երբ ձյունները վեր կենան և այլևս պատերազմ չլինի, ճանապարհները կբացվեն և քանի-քանի ուղտեր հարավից կբերեն բրինձ, ցորեն և մինչև անգամ թուզ կբերեն:

Մեկն ասաց.

— Օրուչ քիրվա, դու առաջին կոտնկն ես... Դու որ եկել ես, մենք համարում ենք, թե բրինձ էլ ունենք, ցորեն էլ ունենք, մինչև անգամ թուզ էլ ունենք:

Միայն նիազանց Անդրին սրախոսեց.

— Երբ քարվանը գա, Օրուչ քիրվա, իմ գուռնային մի պիպիլ՝ կուզարկես...

Երեկոյան մթնով Աթա ապերն իր բարեկամին ճանապարհ դրեց, շատ-շատ բարևներ ուղարկեց Զավահիր քրոջը, նրանց ազգականներին և Գետամեջերի իր հին ծանոթներին:

Աթա ապերը Օրուչին պարզեց իր մաշված ձեռնոցները, որովհետև նա պիտի սարովն անցներ և վերջին բոպեին, երբ թուրքն արդեն շեմքի մոտ էր, նրա գրպաններն ընկույզով լցրեց:

— Երեխաներին կտաս, երեխաներին...

7

Օրուչ քիրվան ինչպե՞ս ընկավ քաղաք և քաղաքի բանտը, — մինչև հիմա էլ անհայտ է: Նրան գյուղի մո՞տ էին բռնել, թե ձորում հանդիպել էր զինվորական պահակների, որոնք հսկում էին ճանապարհների վրա և իշնում էին ձորերը:

Ապրիլի կեսերին գյուղի կոմիսարը Աթա ապրը կանչեց, հարցրեց, թե ո՞վ էր այն թուրքը, որ եղել էր նրա տանը, մենա՞կ էր, թե ուրիշ մարդ էլ կար, ի՞նչ էր ասում և ո՞ւր գնաց: Աթա ապերը դեռ չգիտեր, որ իր քիրվան տուն չի ընկել և հասել է քաղաքի բանտը:

— Մի խեղճ մարդ էր, պարոն կոմիսար, — պատասխանել էր Աթա ապերը, — հետը ոչ ոք չկար և ինչ պիտի ասի մի մարդ, որ տանը հաց լուծի և էս ցրտին անցել է սարը... Նա ի՞նչ գիտի և կամ ես ի՞նչ գիտեմ, պարոն կոմիսար: Էս ձորերում ի՞նչ կա, որ մարդ ինչ իմանա: Թե սով ես ասում, նրանք մեզանից խեղճ, մենք նրանցից...

— Իսկ դու չգիտե՞ս, որ թշնամու երկրից գաղտնի անցնողը կամ լրտես է, կամ...

— Ի՞նչ թշնամու երկիր, ինչ լրտես... Կարելի է որ դու չես իմանում, պարոն կոմիսար, բայց արար աշխարհն իմանում է, որ Օրուչն իմ քիրվան է, նրա տունն իմ տունն է...

— Տարիքիդ եմ խնայում, ժերուկ, թե չէ քեզ հետ ուրիշ լեզվով կխոսի:

— Ուրիշ լեզու չեմ իմանում, պարոն կոմիսար, ես քեզ մատաղ, էս է իմ լեզուն:

Հինգ օրից հետո Աթա ապրը կանչել էին քաղաք և միայն այդտեղ էր նա իմացել, որ իր քիրվային կալանավորել են: Ինչքան խնդրե՛ աղաչեց, ծանոթների դիմեց, որ միջնորդ լինեն, բայց բան չեղավ:

— Դեռ եթե քեզ չենք պատժում, շնորհակալ եղջք,— և հետախուզական բաժնում նրան դուռն էին ցույց տվել:

— Աթա ապեր, մութ գործ է, էս գործին դու մի խառնվիր,— խորհուրդ էին տվել քաղաքում:

— Աստված, երկինք, գետինք, ճրագի նման արդար մաքր է իմ քրվան, նրանում մեղք չկա՛, չկա՛,— և Աթա ապերն արտասովել էր:

Շատ ժամանակ անցավ, այնքան, որ պատահական ականատեսն առանց երկյուղի կարող էր պատմել այն, ինչի մասին եթե չուր ժամանակ ծպտուն հաներ, գլուխը մահաւ կտար:

Այդ պատահական ականատեսը՝ Մինասի տղա Ստեփանը, որի այգին գտնվում է Սորանի ձորում, այսպես է պատմել:

— Մայիսի 4-ին երեկոյան դեմ ես գնացել էի մեք բազի քանդված պատը նորոգեմ... Մութը որ քնկավ, ասի աչքս մի քիչ փակեմ, մինչ լուսնյակը դուրս գա, լուսնյակով բանս վերջացնեմ: Շատ էի քնել թե քիչ, մեկ էլ քնիս մեջ ձայներ եմ լսում... Արթնացա, ասի էս ի՞նչ մարդիկ են մտել բաղը: Ուզեցի կանչեմ, մեկ էլ մի քանի հրացանավոր տեսա, որ պատի տակով կամաց գնում էին: Էլ չկանչեցի. ասի ո՞վ գիտե ինչ մարդիկ են... Տապ արի մնացի: Չեմ իմանում նրանք ինչու պատի տակ կանգնեցին: Մեկը ուսերեն մի քանի խոսք ասաց. հենց մենակ էս հակացա, որ ասեց «սկարեյ, սկարեյ», ուրեմն թե շուտ արեք... Էն առջին տարիները, դադախը որ եկել էր, ես նրանց ձիերի համար խոտ էի հարում. էդ խոտը էն ժամանակից գիտեմ: Որ սկարեյ ասաց, միտք արի, թե քանք փախած զինվորներ են, ասի կանչեմ, ինձ ինչ պիտի անեն որ... գուցե ճանապարհը մոլորեց են, ճանապարհը ցույց կտաք... Չեմ իմանում Սորանի ձորում եղել եք, թե չէ... Թե եղել եք, պետք է տեսած լինեք, որ մեր բաղի տակով ճանապարհը գնում է խանդակի վրա: Էլ էն կողմը բող չկա... Իսկ խանդակի միջով վերևի ճանապարհն է... Հա՛, մեկ էլ էն տեսնեմ, որ հետևեց էլ են զինվորներ դալիս... Էս որ տեսա, ասի դաշնակցականի զինվորը փախչում է: Հիմա նրանք պատի տակով են գնում, ես էլ պատի էն մի երեսով փորսող տալով գնում եմ... Նրանք էլ եկան կանգնեցին: Մին էլ լսեմ, որ մի հալեր տնքում է: Հստեղ սրտումս կտկած մտառ: Ասի բան կա: Գլուխս մտեցրի պատին... Էն հալերը խոտում էր, զինվորներն էլ հեռու կանգնած են: Էն հեռվի մարդիկ էլ ձորում քանդում են: Հալերը թուրքերեն ասաց. «Ալլա՛հ, արքայությունը մեռնեմ...» Թե ես ավազակ եմ, բա ձեզ ինչո՞ւ են բերեց: Թե հայերը թուրքի են սպանում, ախր դուք էլ հույ եք, բա ձեզ ինչո՞ւ են սպանում»: Միտած մի ջահել հալերին ասաց. «Օրուջ քիրվա, ոչ մենք ենք ավազակ, ոչ դու

քեզ էլ, մեզ էլ սպանում են, որովհետև մենք պատերազմ չենք ուզում»: «Ա՛յ որդի, ախր ե՛ս ո՞վ, պատերազմն ո՞վ... Ես մի խեղճ, աղքատ... Լա՛վ, տոնք ես պառավ եմ, կյանքս ապրել եմ՝ ես հե՛շ, բա ձեզ նման ջահելներին ինչո՞ւ են սպանում... Ասենք թուրք եմ, բա ձեզ նման հայերին ինչո՞ւ են սպանում...»: Էն կողմից մի ջահել թե՛ «Ա՛ հայր, մենք էն քո ասած հայերից չենք, մենք նոր հայեր ենք»... «Ափսո՛ս, ափսոս ձեր որբերին, ձեր հայրերին, ա՛յ որդիներ...»: Էդ խոսքին ձորից ուսերեն կանչեցին. նրանց առաջ արին տարան... Էսքան ժամանակ ինչ պատմում եմ, էդքան ժամանակ չէր քաշել արանքը, որ ձորից հալերը թուրքերեն կանչեց. «Ինձ թաղեք իմ էս ջահել տղաների հետ»: Մինն էլ հայերեն կանչեց. «Կեցցե կոմունիստը, կեցցե հեղափոխությունը, կեցցե...»: Բայց էն ուսերեն խոսողը հրաման տվեց, հրացանները կրակեցին, էլ ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն: Մենակ ոնց որ թե հող էին լցնում: Էլ ես բան չիմացա. էդպես մնացի պատին կպած, չիմացա ոնց հետ գնացին: Մեկ էլ տեսնեմ արևը տվեց. քլունգն առա ներքևի ճանապարհով գնացի տուն: Մեր բաղի պատն էլ էնպես թերի մնաց...

Մինասի տղա Ստեփանի պատմածը ճշմարտանման է: Նա խառնել է միայն ամսաթիվը. գնդակահարությունը եղել է ոչ թե մայիսի 4-ին, այլ 27-ին, ինչպես հայտնի է անում Զանգեզուրի զինված ուժերի հրամանատարության կից ռազմադաշտային դատարանի որոշումից և նրան կցված հետևյալ ակտից.

«Սույն որոշմամբ գնդակահարության դատապարտված 2-րդ վաշտի զինվորներ Ռուբեն Հայրիյանցի և Տիգրան Թոխունցի կոմունիստական բայթայիչ աշխատանքի համար և թուրք Օրուջի՝ Շոթանան գյուղից լրտեսության համար,—վճիռն ի կատար է ածված 1920 թվի մայիսի 27-ին և նույն օրը դիակները հանձնված են հողին...»:

* * *

Մի տարի հետո, Սորանի ձորում, ճանապարհից դուրս ժլեցին մի թուփ ընկուզենիներ: Մինասի տղա Ստեփանի ասելով կարծես հողի տակ մի բուռ ընկույզ էին թաղել... Չորով անցնող նախիրը տրորել էր այդ տունկերը և միայն երկու ընկուզենի դիմացել էին անասունների ավերածության:

Նրանք հիմա ահագին ծառեր են և ստվեր են գցում ճանապարհի վրա և պատահում է, որ ճանապարհով անցնողը նստում է նրանց ստվե-

րում: Այն ժամանակ Մինասի տղան ցանկապատի հետևից զրույցի է մտնում անցորդի հետ, հարցնում է ո՞վ է, ո՞ւր է գնում և եթե անցորդը չգիտե, թե ինչ ընկուզենիներ են, Մինասի տղան պատմում է, ինչպես հին զրույց.

— Մեր գյուղում կար մի Աթա ապեր... ողորմի նրան: Էն խառը տարին մի թուրք, անունը Օրուզ...

Եվ նրա զրույցի հետ աղմկում են եղբայրության ընկուզենիները, ասես նրանք լրացնում են այն, որ շես պատմի ոչ մի լեզվով և շես գրի ոչ մի գրչով...

1935

ԿՅՈՒՆՍ

O tempora, o mores...
Օ՛ Զանգեզուր, օ՛ Կյորես...

1

Քաղաքն ուներ երկու անուն՝ Գորիս և Կյորես: Երրորդ անունը՝ Կորիս,—տալիս էր միայն մի մարդ՝ դեղավաճառ Քյալլա Մատուրը, որը քաղաքում հռչակված էր որպես փիլիսոփա և հին գրքերի սիրահար: Գուցե այդ գրքերից էր նա հանել քաղաքի Կորիս անունը, որ իզուր ճշգրտում էր տարածել: Նրան համամիտ էր միայն ժամհար Պարսեղը, որը և միակ ունկնդիրն էր Քյալլա Մատուրի ձեռագիր խորհրդածությունների՝ ճշմարիտ հավատի, ամուսնալուծության և «Երից տարրի փոխակերպման մասին»:

Քաղաքն ուներ երկու անուն և այդ երկու անվան մեջ, ինչպես ընկուզի երկու կճեպի մեջ, պարփակվում էր մի քաղաք երկու իմաստով, մի բնակավայր՝ երկու տարբեր ժողովրդով, որոնք ունեին իրենց առանձին սովորությունները, առանձին շահերը և մինչև անգամ նրանց անունները տարբեր էին և պատահում էր, որ այդ երկու ազգերը իրար լեզու չէին հասկանում: Մի կողմը «տարականներն» էին, կամ ինչպես կյորեսցիք էին ասում՝ դարիբականներն էին,— մյուս կողմը բուն Կյորեսն էր և նրա միջնաբերդը՝ Շենը և նրա նշանավոր պարագլուխները՝ Ղաթրինի Աղալոն, որ բռնած էլը գետնից բարձրացնում էր, Պարան-Պարան Ավանեսը, որի ձայնը հասնում էր մինչև Գրնգանի ձորը, Գյուրջի Օրին, որի լեզվից վախենում էր մինչև անգամ քաղաքագլուխ Մատթևոս բեյը:

Ղաթրինի Աղալոն, Պարան-Պարան Ավանեսը, Գյուրջի Օրին և շատ ուրիշ կյորեսցիներ, լինելով բուն Կյորեսի պարագլուխները, ժամանա-

կակից չեն եղել: Այդ մի դիմաստիա էր հողագործների, բրուտների, ներկարարների, դարբինների և տավարածների, ցեղային դիմաստիա, որ ի դեպ գլխավորում էր բուն Կյորեսի և նրա միջնաբերդ Շենի կոնիլը Գորիս քաղաքի և նրա «օտարականների» դեմ: Ղաթրինի Աղալոյի ժամանակ Գորիսը դեռ քաղաքագլուխ չուներ և քաղաքը դեռ չէր տարածվել մինչև Մեծ կամուրջը: Ղաթրինի Աղալուն դեռևս կարող էր Գորիսի վաճառականներից երեքին խորձի թոկով շալակել և սպառնալ նրանց թափել ձորը, եթե վաճառականները Թավրիզի կտավը չծախեն յուղի հետ բարաբար: Նրա ժամանակը հեշտ էր. ինքը Շենն ուներ իր կտավագործները, իր դերձակները, իր իջևանատները, որտեղ գիշերում էին ուրիշ երկրներից բարավաններ: Վերջապես Ղաթրինի Աղալոյի ժամանակ վաճառականների մեծ մասը դեռ «ղարիբական» չէր, այլ կյորեսեցի էր, այսինքն վարուցանող ուներ և մինչև անգամ ապրում էր Շենում, առևտուրն անելով Գորիսի շուկայում:

Այլ էր Գյուրջի Օբին և նրա ժամանակը... Գորիս քաղաքն ուներ երեք հարկանի բանտ, այնքան քնդարձակ, որ կարող էր Շենի կեսը մեկն առնել, ուներ ուրիշ կալանատուն՝ ս ա լ բ ա հ ա ն ո Յ, միաձուլ կալանավորների համար,— այնտեղ էր նստում քաղաքապետը, ագնտեղ էր ձիավոր պահակների զբաղմունքը և Պենզայի 686-րդ գրասենյակը: Գյուրջի Օբին գրգռված շարժումով, ինչպես հետին ժամանակներից, հարթած դուրս էր գալիս Շենի միջնաբերդից և ժամանելով զգեստի ծվենները, քաղաքի հրապարակում հայհայում էր քաղաքի հիմնողին, նրա գլխավորին, Կյորեսը կ ու յ Ր դ ա ն ա կ ո վ մ ո թ Թ ո Ղ ն եր ի ն... Այն ժամանակ իրենց մաղազաններից գուրս էին գալիս Գորիսի առևտրականները՝ Եփրատ Երեմը, Մալակրովնի նիկոլայը, Բագիրին Զանթա-Ռեխ Գալուստը, եղբայր Բագիրովները և զվարթ ժիծաղում էին, ինչպես եթե հրապարակում կապիկ պար ածեին: Բայց երբ Գյուրջի Օբին սկսում էր խաղ ապեղով ա թ ա ն ն է լ Գորիսի անվանի քաղաքացիներին,— այն ժամանակ նրա շուրջն էին հավաքվում հացթուխները, խմոր հունցողները, կոշկակարի աշակերտը, որին վարպետը չրի էր ուղարկել, մշակները, որոնք անկյուններում սպասում էին, քե նրանց ով հացափոր աշխատանք կտա և մինչև անգամ քաղաքագլուխ Մատվեյ Մատվեյիչը, նույն ինքը՝ Մատվեյս բնջը չէր կարող կարել Գյուրջի Օբու այդ լեզուն:

Կար Գորիս և կար Կյորես: Երկու ասարերն ժողովարդ էին և տարբեր էին նրանց լեզուն, սովորությունները, անունները և մշտաբարբար կրակի նման նրանց միջև վառվում էր հին կոնիլը: Թե ինչ ազգի մարդիկ

թե և ինչ լեզվով էին խոսում նրանք, այնքան էլ հեշտ չի պատմել: Շենում առում էին, որ գորիսեցիք խոսում են շա ն լ ե զ վ ո վ:

— Խոշա Բագիրի թոռները մեր Բողարի նման են հաշում... Նրանք ինչ մարդիկ են: Մեր կծուտողի ճակատը նրանց ճակատից արդար է,— այդպես էր ասում Աթա ապերը, երբ Գորիս քաղաքից վերադառնում էր:

— Կյորեսի լեզուն շենավարի է... Ափսոս չի՞ մեր բլաղարողն ի վերջ,— այդպես էր ասում տիկին Օլիական՝ Մատվեյ Մատվեյիչի կինը, Անիկա տյոտյային, երբ նրանք նստում էին Ֆրայա խաղալու:

— Հայ Գրիշա, Միշա, Մաշո, շեմ իմանում է ինչ շաշո... Ափսոս չի՞ մեր Մանգասարը, մեր Մանուշաբը, մեր Մոնան... Հերս որ հարսին կանչում էր Մանիշա՛կ, Մանիշա՛կ, տասը մանիշակ էր բացվում,— այդպես էին խոսում ամենամոռեկաներ կյորեսեցիք, որոնց ծաղրում էին Գորիսի օտարականների ոմանց շեյապան, անվանելով կ լ ի բ ո և ծ ղ ա մ ա ն, ոմանց կանանց՝ անվանելով շ ի ն ո վ ի տ ի կ ն ի կ, ոմանց միրուքն էին ծաղրում, անվանելով կ ու տ ու ու ո լ և այլ այնպիսի խոսքերով, որ պրի մեք քնդունված չեն: Կյորեսեցիք ծաղրում էին քաղաքացիներին, հորինելով մականուններ՝ Պրիտատվի Թազի, Թեփոսած Եփրեմ, Ամբարի կատա Սողոմոն՝ ալվազ եղբայրը Ափապիմովների, որոնք վաճառում էին ալյուր և բրինձ:

Եթե մի այդպիսի հին կյորեսեցու հարցնեիր, թե ինչ ազգից ես, նա կտեսք սոհմի անունը՝ Անիտանց, Եալտանց, Բաիտանց և ո՛վ պիտի ինչպիսի ազգանուններ,— որովհետև նրանց լեզվով ա զ գ նշանակում էր սոհմ, քերթասատան, տուն, որի բուր անդամներն իրար հետ կապված են ազգան կապով: Իսկ եթե նրան քայաարեիր, որ ազգութունն ես հարցնում, ալ ոչ թե սոհմը, նա կպատասխաներ.

— Կյորեսեցի եմ... Զանգեզուրի մարդ կեմ,— կարծես «Զանգեզուրի մարդ» առջ նույնպիսի ազգ է, ինչպիսինքն րոսաք, անգլիացին, թուրքը:

— Աթա ապեր, բա դու հա՞յ չեա:

— Ա թնգ մատար, դե ես ի՞նչ իմանամ ինչ եմ է՞... Թողնում են ին մեք հուշ մնա, որ իմանամ, թե ես ինչ եմ... Էտպես որ դեա չեմ իմանա, թե ես Աթա՞ն եմ, թե՞ էն արքամոցում հաշողը...

— Վերջը, Աթա ապեր, բա դու հայ չե՞ս...

— Դե հայ եմ մի տավրով մի գլխով: Որ ափապանում մկրտված եմ, ուրեմն հայ քրիստոնյա եմ, էլի՞: Հո անհավատ նասրանի չեմ... Հիմա որ հայ եմ, ի՞նչ եմ արել: Գրոխա հո մեղորոտ չեմ արել: Թշ ա զոտը լինի խոշա Բագիրի Թաք, երկուս բեռ ցորեն տարա... — Բայց ընդհատենք Աթա ապերը, որովհետև բնիկ կյորեսեցի լինելով նա խոսում է ծոր աալով և

ժանր ծանր, կարծես բառերը ձուլելով թափում է և դեռ երկար կպատմի, թե ինչպես խոջա Բաղիրի թողը նրան խաբեց և երկու բեռ ցորենի դիմաց տվեց մի ոչ ինչ բան՝ մի քանի արշին չիթ, պառավի համար հավաքու, երկու գրվանքա շաքար, մի քիչ բոնոթի, այն էլ կեսը հող: Հնդհատենք Աթա ապորը և հարցնենք, թե խոջա Բաղիրի թողներն ի՞նչ ազգից են.

— Շան ազգից են խոջա Բաղիրի ձտերը... նրանք էն ազգիցն են, որ խիղճ ասածդ շունի: նրանք նասրանի են, նրանք մոլթանի են, նրանք մարդ պլոկող ազգից են...

— Աթա ապեր, նրանք էլ հայ են, տեղացիներ են, հայ վաճառականներ են Գորիս քաղաքից, մինչև անգամ կարող է, որ խոջա Բաղիրը քո Օհան պապի խաչեղբայրը եղած լինի:

— Որ նրանք հայ լինեն, ես հայութունից դուրս կգամ,— Աթա ապերը սկսում է զայրանալ.— հայը ես եմ, Ղուրդանց Իսոն է, որ ցամաք հացին աստված է կանչում,— չկա՛: Հայը վար կանի, ծառ կտնկի, շալակով փայտ կբերի, քերծ կքանդի, հայը խեղճ ու կրակ ոահաթ է էս ձորերում բառաչող: Խոջա Բաղիրի ժառանգներն ի՞նչ հայ են, կամ Ավագիմովներն ի՞նչ հայ են, ասենք նրանց պապի անունը հայ է: Իսկ եթե ասում ես, որ խոջա Բաղիրն իմ Օհան պապի խաչեղբայրն եղած լինի, ուրիշն էլ ասի, չհավատաս: Իմ Օհան պապի խաչեղբայրը եղել է Բակունց Վիշապը, որ մի նստելում յոթ հաց կուտեր... Ա՛յ թե ով է եղել իմ Օհան պապի խաչեղբայրը... Իսկ խոջա Բաղիրը ուրիշ ազգից է, և կարող է, որ զիւանի եղած լինի:

Կյորեսն ուներ իր սուրբերը՝ Կանաչ եկեղեցի, սուրբ Մարտիրոս (սիմ երեսս նրա ոտի տակ)— կասեր Անա գիզին, երբ սուրբի անունը տար, Եզան Սուրբ, Ճգնավոր և այլ այսպիսի ուխտատեղեր՝ հին և հնավանդ, ինչպես այն ընկուզենիները, որ ով գիտե, քանի հարյուր տարի աղմկում էին Մատուռի ձորում: Ոչինչ եկեղեցական չկար այդ ուխտավայրերում՝ ոչ գիր, ոչ խաչ: Քարափոր այրեր էին բարձր քերծերի լանջին և կամ խոզ ձորում խոխոզող մի աղբյուր և մի քարակույտ: Միայն Կանաչ եկեղեցին ուներ ժայռի մեջ փորած սանդուղքներ, որ իբրև թե յոթը տարի փորել էր մի մենակյաց, թեև Սայու Մադին, Կյորեսի նշանավոր քերծ քանդողն ասում էր.

— Չորս փութ կորեկ տվեք, թե յոթ շաքաթում էղթան չքանդեմ, իմ հոր տղան չեմ:

Կյորեսն ուներ այդպիսի ուխտատեղեր, մրոտած պատերով, հողի սև ճրագներով, օջախի քարերով, որը երբեմն տաքանում էր մատաղների կրակից և երբ ծուխը բարձրանար, մի ծերունի նայում էր, թե քամին

որ կողմն է քշում ծուխը: Այդ միամիտ ծերունին հավատում էր, թե ծուխը որ կողմը գնար, այն կողմի արտերն այդ տարի շատ բերք կտային...

Եվ պատահում էր, որ ծուխը գնում էր դեպի Մլանգի տախտը, որտեղ խոջա Բաղիրի քսան օրավար արտերն էին: Մերունին բարկանում էր.

— Ես պիտի իմ ոչխարը քեզ մատաղ անեմ, որ դու հացը խոջա Բաղիրի որդիներին տաս:

Եվ ասում են, որ մի անգամ, երբ մատաղի ծուխը փարթամ բուլաներով գնացել է քաղաքի վրա և մինչև անգամ փովել է քաղաքի շուկայի վրա, Ջոհն Հարուզ անունով մի բնիկ կյորեսեցի սուրբ Մարտիրոսի մատուռի առաջից կիսաեփ կաթսան գրկած տարել է Եզան Սուրբի ձորը, ասելով.

— Եզան Սուրբ, եթե դու էլ սուրբ Մարտիրոսի նման լիրբ ես, մատաղը կածեմ շների առաջ...

Երբեմն պալտոն ավորը, այսինքն Գորիս քաղաքացիք՝ Եփրատ Երեմը, Անիկա տյոտյան, տիկին Օլինկան, Կիզիկով Իսակը հանգերձ ընտանյոք, Սահակ Սերգեյիչը՝ թագավորական ուսումնարանի տեսուչը, Ավագիմով եղբայրները, Ճաղարին Մուղղովը՝ արծաթյա մեղալներով, Կարճիկ Կեբր բեյի աղջիկները, նավթավաճառ Գեորգին, Լալազարանց տունն իրենց նշանավոր աղջիկներով, որոնցից մեկը՝ Հերսելյան ամենաչքնաղն էր քաղաքում և կոչվում էր «Թեք կոտրած հրեշտակ», որովհետև Հերսելյան քայլում էր ձախ ուար մի քիչ բարձր, երբեմն այդ ահագին բազմութունը լիքը զամբյուղներով ուխտ էր գնում սուրբ Մարտիրոս, գնում էր զուգված, զարդարված, գույնզգույն հովանոցներով, որոնցից ամենագեղեցիկը՝ երկնագույն մետաքսե,— հով էր անում օրիորդ Հերսելյային, և երիտասարդ շինովնիկների ու գործակատարների մի խումբ, որ հետևում էր Լալազարանց աղջիկներին և մանավանդ թեք կոտրած հրեշտակին,— հիանում էր Հերսելյայի խշխշան շորերով, բարակ մարմնով և նրա երկնագույն հովանոցով:

Երբ պալտոնավորն ուխտ էր գնում, Շենը դժգոհում էր, կարծես եկողներն այլադավան էին: Գորիսեցիք էլ էին մատաղ անում. մինչև անգամ Լալազարանց Հերսելյան, բարձրացնելով զգեստի փեշերը, ծնկալոք մտնում էր Կանաչ եկեղեցին և այդ ժամանակ երիտասարդ շինովնիկներից մեկը փռում էր մի թերթ, որ ավազը չձակձկի նրա մարմար ծունկը: նրանք էլ էին մոմ վառում, ոչ այն դեղին մոմը, որը ճրագուից թափում էր սապոն եփող Սավաղը, այլ սպիտակ և զառ նշանով մոմեր:

Պատահում էր, որ օրիորդ Հերսելյան և կամ Սահակ Սերգեյիչի դուստր

տըրը՝ Սուսաննան համբուրում էին մատուտի քարը և մինչև անգամ խաշակնքում էին:

— Հողս գիսիդ,— նրանց հետևից ասում էր մի կյորեսեցի պառավ,— տեսնես բուլվարում քանիսին ես պաշաչել: էլ սուրբը քեզ հի՛նչ անի...

Եվ դուրս էին գալիս եկեղեցուց, գորիսեցիք ընկուզենիների տակ մատաղը մորթում էին, իսկ նրանք, որոնք կյորեսեցի էին, քաշվում էին վեր իրենց գուռնա նաղարայով, հին պարերով և հարս ու աղջիկ ծառերից կախելով պարանները, ճոճվում էին խոր անդունդի վրա, փոփոացնելով զգեստները: Քաղաքացիները նայում էին նրանց և օրիորդ Հերսելյան ստուղենտ Ռուբենին ուսերեն ասում էր.

— Երանի նրանց...

Երբեմն կյորեսն ու Գորիսը ընդհարվում էին հենց ուխտավայրերում: Եվ նույնիսկ քահանաները չէին կարողանում հաշտեցնել նրանց: Սաղրով, ծիծաղով կյորեսեցիք քշում էին բուլվարի ուսողներին: Այդ ժամանակ մի հարբած բրուտ մտնում էր Կանաչ եկեղեցու քարանձավը և այսպես էր գոռոզում.

— Ապա դու սո՛ւրբ ես... էն որ նավթ ծախող Գևորգը քո պատին մո՛տ կպցրեց, ինչի՞ նրա մատները չբռնեցիր չկպցրեցիր քո պատին: Ապա չե՞մ ասել քեզ, քսան մանեթի դիմաց երկու եզս տարավ, ինձ սոված թողեց: Ի՛նչ է, նրա մո՛ղբ ոսկի զատով էր, հա՛... է, Կանաչ եկեղեցի, դու էլ ես դալբացել,— և հարբած բրուտն սկսում էր հանգցնել քաղաքացիների մո՛մբը, գետնովն էր զարկում մո՛մբը և շարունակում էր նախասել սուրբին,— ա՛յ, ասում եմ, դրա վերջը որ շտաս, գուռգ կպատեմ... Գուսո՛ւրբ ես, թե յոթը դասն հաշող շուն...

Այդպես ամեն ինչով տարբեր էին Գորիսն ու կյորեսը և մանավանդ Շենը՝ կյորեսի միջնաբերդը: Տարբեր էին նրանց լեզուն, սովորությունները, տարբեր ազգ էին և նույնիսկ նրանց հավատն ուրիշ էր: Նրանք կողք-կողքի ապրում էին և նրանց միջև կախվն անպակաս էր, հին կոխվը, ինչպես հին էր ձորը և ձորի գետը:

2

Ինչպես ձորը և ձորի գետը...

Բայց նույնիսկ ձորի գետը քանդում էր կյորեսի կողմը, որովհետև Գորիսը փովել էր բարձրագիր տափարակի վրա միանման տներով, որոնք բաժանվում էին հավասար քառակուսիների և ամբողջ քաղաքը նման էր գինձորական ճամբարի: Այնտեղ ամեն ինչ այնպես էր, ինչպես քաղաքի

Սփռակ բանտում: Փողոցներն ուղիղ միջանցքներ էին՝ հավասար լայնությամբ, տները միանման կամերներ՝ մեծ ու փոքր, երկու-երեք կամ յոթս պատուհանով, որոնք պատած էին երկաթե խիտ վանդակով, ինչպես քանտի պատուհանները: Փողոցներում մայթերը նույն չափի էին՝ նույն քարով սալած: Տների առաջ միանման ծառեր էին՝ ուռենի, բալ, ընկուզենի և երբեմն դեղին ակացիա: Յուրաքանչյուր տուն զբաղեցնում էր յոթ հարյուր քառակուսի սածեն, որի անկյունում, փողոցի վրա, տունն էր, մի կամ երկու միանման հարկ,— իսկ մնացածը՝ պարտեզն էր նույն ծառերով, ինչ որ փողոցում՝ ուռենի, բալ, ընկուզենի, խնձոր և երբեմն փայն ակացիա:

Գորիսն ուներ մի թագավորական ուսումնարան՝ ուսուցչի և մի հայոց դպրոց: Ուներ մի բանտ, մի ուսուց ծամ, մի հայոց եկեղեցի, մի բիլիարդանոց, որի պատուհանները փակ էին, որովհետև անտիրական կատունները սիրում էին օփևանել այդ ապահով ներքնահարկում,— մի հյուրանոց երեք սենյակից, մի բաղնիս, որի դուռը ժանգոտել էր իբր թե ներսի գուրջուց, բայց դռան առաջի խոտերը վկայում էին, որ այլ էր պատճառը. գուցե ճշմարիտ էին նրանք, որոնք իբր թե բաղնիսի ավազանների մեջ տեսել էին կանաչ գորտեր: Քաղաքն ուներ մի ժամագործ՝ Սահաթազ Սանդրոն, որը նաև ոսկերիչ էր և սրում էր թարաքյամա քոչվորների դաշույնները: Կար մի կանդիտեր, որ սրճատան հետևի մասը դարձրել էր գինետուն, որովհետև Գորիսի բնակիչները սուրճը համարում էին տիկի Օլիխեկայի խմիչքը, իսկ տիկին Օլիխեկան միայն կիրակի օրերն էր սուրճ խմում: Քաղաքն ուներ լիմոնագի մի գործարան, որ հիմնել էին Շոր աղբյուրի կողքին: Երեք տարուց հետո տերը գործարանը ծախել էր ուրիշին և գնացել Բաբու, պատրաստի հագուստեղեն վաճառելու Քաղաքում պատմում էին, որ նա իր հետ փափուկ փող էր տարել և իբր թե հեռանալուց առաջ նա համբուրել է Շոր աղբյուրի քարը և ասել էր. «Ե՛նե մնաս, Շոր աղբյուր, իմ հարստությունը դու տվիր»... Քաղաքն ուներ միայն մի գործարան և այն էլ լիմոնագի գործարան՝ առանց ծխնիլ-բուլբու և երջանիկ այդ քաղաքում ուրիշ ոչ մի ծխնեղույզ չէր մրոտում փրփուկ երկինքը:

Բայց ոչ այդ գործարանը, ոչ հյուրանոցը և ոչ նույնիսկ «Մասուն» տարածանը, որտեղ ապրում էին հարսանյաց հրավերներ, գավառային վարչության բլանկներ և զանազան պուրլիկացիների տուրքի, քոչի և դինվո-բուկուլայան մասին,— ոչ այդ ամենը և նույնիսկ Օլիխեկայի Հայ կանանց միությունը քաղաք չէին կազմում, Գորիսը չէին, որի միջուկը, այսպես ասած պարունակությունն էին վաճառականները և շինովիկները, գյուղացի-

յան դարները և մեծամեծերը, ինչպես կասեր Աթա ապերը: Նրանք էին բուն օտարականները. որոնց դեմ կոչվում էր իսկական Կյորեսը և նրա միջնաբերդը՝ հին Շենը:

Ինչքան էլ ձորի գետը քանդեր բուն Կյորեսի կողմը և Գորիսը բարձրագիր լինելով գերծ մնար,—այնուամենայնիվ գետը չէր քանդում կյորեսացիներին, այլ «պալտոնավոր օտարականները», որոնք հետզհետե դուրս էին մղում Շենը իր հին հողերից և ջրովի խոտհարքներից, փակում էին ճանապարհները և այլևս ոչ Ղաթրինի Աղալո կար, ոչ Պարան-Պարան Ավանես, որ դիմադրեր նրանց, այլ մնացել էր մի խեղճ Գյուրջի Օրի՝ շորերը գզգզված, աղքատ, արքա՝ օրավարձ մշակների, ջրկիրների, այրիների և որբերի, որոնք դեռ մնում էին Կյորեսի միջնաբերդում, իբրև պաշարված զորք, որ սպառել է հացը և վերջին կաթիլ ջուրը և դեռևս մի քանի զինվորներ շարունակում են կրակել, իրենց աղաղակներով խլացնելով բերդի մեջ մեռնողների կանչերը:

Գորիսը հաղթել էր: Ու թեև հին կոթվը շարունակվում էր, բայց այդ պաշարվածների հուսահատ դիմադրություն էր և ոչ թե հավասարների պատերազմ: Պատահում էր, որ Կյորեսի տղաները գետում լողանալու ժամանակ ընդհարվում էին «բուլկի ուտողների» հետ, մինչև անգամ նրանց ձեռնում էին, քարերով քշում էին դեպի քաղաքը,—բայց այդ մանկական խաղ էր, ինչպես արդեն խաղ էր և այն, երբ Կյորեսի հարբած ռիստավորները ծաղրով և ահադին գոռում գոչյունով Կանաչ եկեղեցու ուխտից քշում էին Կիզակով Իսակին, հանդերձ ընտանյոք, նավթավաճառ Գեորգուն, Եփրատ Երեմիին, Ավագիմով եղբայրներին, և մինչև անգամ քշում էին Ճաղար Մուղղովին, որի կուրծքը զարդարված էր մեղալներով:

Կյորեսը մեռնում էր, ինչպես մեռնում էր Խուռուփի ձորի վերին կաղնին... Ամեն տարի մի ճյուղ չորանում էր, անձրևները մերկացնում էին անտառի հողը և հողի խորքից հետզհետե ցցվում էին տձև ժայռի սապատավոր և ահեղի:

Տեսնելով վերջին կաղնին, ոչ ոք չէր ասի, որ երբեմն Շհարի Տախտը, որտեղ քաղաքն էր, և նաև Տախտի հարևան ձորերը պատած են եղել խիտ անտառով, որից մնացել է միայն մի կաղնի Խուռուփի ձորում: Այդպես էլ ոչ ոք չէր ասի, թե երբեմն Կյորեսը, նրա միջնաբերդը՝ Շենը իր թաղերով եղել է աղմկոտ փեթակ, և այնտեղ, ուր միայնակ խոխոչում է Ղաթրինի աղբյուրը, մի ահագին գյուղ կար քարանձավների մեջ, քերձերի գլխին... Որ Սալ կամուրջը, որից մնացել է միայն մի կամար,—եղել է ժողովուրդների կամուրջ, քարավանների կամուրջ և անհամար

բազմություններ են անցել այդ կամուրջով, ինչպես հետո անցնում էին Բազավորական ճանապարհով:

Նետզհետե ամայանում էր Կյորեսը: Անդունդն էր սուզվում հողաբորձների ազգը: Ով մեռնում էր, առանց բարձրացնելու այն քարը, որ ընկնում էր հին տան պատից, ով ծախում էր վերջին հորթը պարտքի դիմաց և կամ գերի էր գրվում մի վաճառականի, կամ գլուխը փեշի տակ գնում էր օտարություն՝ Բաբու և Անդրկասպյան մի երկիր, մինչև Քերքի, մինչև Բուխար և ավելի հեռուներն էր գնում քարանձավում ծնված կյորեսացին: Այսպես «օտարականները» բնիկներին մղում էին օտար երկրներ, և իզուր էր Գյուրջի Օրին սպառնում, թե մի օր նրանք գերությունից ետ կան և բուլվարի ծառերից մեկ-մեկ կկախեն «պալտոնավորներին»:

Այդ սպառնալիքը վաճառականներին միայն զվարճություն էր պատճառում և երբեմն Բանդիրին Չանթա-Ռեխ Գալուստը՝ ճոթի մաղազայի տեր,—մի շիշ օղի էր խոստանում Գյուրջի Օրուն, եթե նա խանութի տեր կանգներ և երգեր «Գորիսի գովքը»,—մի երգ, որ կապել էր Նիսազանց Անդրին և որով ծաղրում էին Գորիսի վաճառականներին և շինովնիկներին՝ ո՛րի ազահությունը, ո՛րի պարտքը ուրանալը, ո՛րի կաշառակությունը և ո՛րի ընտանեկան կեղտը...

Հատ ու կենտ կյորեսացիներ էին մնացել, որոնք հավատում էին, թե Գորիսի վերջն էլ կգա. բայց թե ի՞նչ վերջ կլիներ այդ,—նրանք չգիտեին: Միայն Աթա ապերը, մի հարգևոր ծերունի, իբրև տեսիլք նկարագրում էր այն ժամանակը, երբ բազարի տեղն ինքը կամ մի ուրիշ կյորեսացի վար կանի, պրիստավ վասիլի տներից վեր նորից խոտհարքներ կգառնան և Կանաչ աղբյուրը, որի աղը խցկել են Սպիտակ բանտի տակ,—նորից կհորդա: Այդպես էր ասում Աթա ապերը՝ ծոր տալով և երգելով, ինչպես երգելով խոսում էին հին կյորեսացիք: Բայց ո՞վ պիտի բացեր Կանաչ աղբյուրի աղը և ինչպես պիտի բացեին,—Աթա ապերը չէր ասում, այլ միայն պատմում էր այն օրերի մասին, երբ ինքը հոտաղ տղա էր և եղները պահում էր այնտեղ, ուր հիմա Սպիտակ բանտն է... Պատմում էր Սալ կամուրջի և կորած ճանապարհների մասին և պատահում էր, որ նրան լսելով մեկը մոռանում էր առօրյայի հոգսը:

Իսկ Կյորեսն այնուամենայնիվ մեռնում էր: Մի կողմից գետն էր քանդում գետափի պարտեզները, երբեմն փլվում էին քերծերը՝ ծածկելով լանջերի փոքրիկ արտերը. հողը հողագործի ձեռքից գնում էր և այդ անխուսափելի էր, ինչպես մահը, ինչպես արևի մայրամուտը... Բայց նրան ամենից ավելի մաշում էր Գորիսը՝ վաճառականների և մեծամեծների բազաքը, որի մոտ Կյորեսը՝ ինչպես մի բուռ ձյուն խաբարուփի մոտ:

Մի անգամ Կյորենում եղավ մի դեպք, որից հետո նույնիսկ Գյուրջի Օրին այլևս չըրևաց քաղաքի հրապարակում և այնպիսի աճ պատեց Կյորենին, ինչպես՝ եթե հանկարծ պայթեր կաստի խուժը:

Խաչի անունով մի մարդ՝ բուն Կյորեսից, — որին անվանում էին Մմակի Խաչի, որովհետև տարին բոլոր նա շրջում էր անտառներում և վայրի ձորերում և այնքան էր մենակ շրջել, որ ասում էին, թե Մմակի Խաչին խոսել չգիտե, այլ մոռնում է գազանի նման, — Մմակի Խաչին աղվեսի, կզաքիսի և լիսեմնի մորթիների մի շալակ տանում է Միրումովների մաղազան: Շատ վաղ ժամանակ Մմակի Խաչին նրանցից պարտք էր առել տասնմեկ մանեթ: Եվ այդ ժամանակից տարին երկու անգամ գարնանը և խոր աշունքին, Մմակի Խաչին երկու շալակ մորթի էր բերում:

— «Նրա վիզը կմաշի, բայց Միրումովների դրած լուծը չի մաշի», — ափսոսում էին կյորեսցիք, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր լուծը և իք մաշվող վիզը:

Մմակի Խաչին մտածում էր, որ այս անգամ կազաաղի պարտքից, որովհետև մորթիների մեջ կային երկու աղվեսի արծաթափայլ մորթի, որ հազվագյուտ է: Միրումովների մաղազարում նրան ասում են, որ պարտքից դեռևս մնում է քառասունչորս մանեթ և երեք արասի:

— Երեք արասին էլ քո գլխին մատաղ, — և Միրումով Կյուրին, որին անվանում էին Կույր գայլ, համրիչը դնում է տեղը:

Առում են Մմակի Խաչին գոռացել է, ինչպես՝ եթե վրան կրակ թափիր: Եվ փախել է առանց ետ նայելու...

Երեք օր փնտրել են Երան: Փնտրել են որսորդ ընկերները, փնտրել են եզնարածները: մինչև անգամ տանուտերերին են հայտնում, երբ մի օր մի հորթարած լուր է բերում, թե Լաչին քերծի տակ երևում է մի դիակ: Գնում և քերծի գլխից ճանաչում են Մմակի Խաչու դիակը: Զորն այնքան խորն է և անառիկ, որ հնար չի լինում իջնել՝ ոչ պարանոճ և ոչ այլ կերպ: Եվ վերևից հող են թափում դիակի վրա:

Այդ օրերին ջրաղացպանը պատմել է, որ ինքը գիշերով Լաչին քերծի կողմից լսել է մի ամեհի գոռոց.

— Բանդակն ու դու, Գորիս, — լսել է ջրաղացպանը:

Այդ դեպքից հետո Գյուրջի Օրին այլևս չըրևաց քաղաքի հրապարակում և այնպիսի աճ պատեց Կյորեսին, ինչպես՝ եթե հանկարծ պայթեր կաստի խուժը:

Գորիս քաղաքի միջուկը, այսպես ասած պարունակութունը կազմում էին վաճառականները և պետական պաշտոնյաները՝ գյուղանդարները և մեծամեծները, — ինչպես նրանց անվանում էր Աթա ապերը: Այդ մի ամբողջ բանակ էր, որ իր քարաշեն զորանոցները կառուցել էր գետահովտում և Շհարի տախտից ոմբակոծում էր մինչև խուլ գյուղերը՝ անտառների խորքում, բարձր լեռների լանջին և այնպիսի խոր ձորերում, որի բնակիչներն իրենց գյուղի ճանապարհի մասին այսպես էին ասում.

— Մեր շենի ճանապարհը կարգին ճանապարհ է... մինչև անգամ բեռած էշն էլ կանցնի:

Գորիսը կենտրոն էր՝ վարչական, ռազմական և տնտեսական կենտրոն մի լայնածավալ գավառի, որ ամենաբնդարձակն էր Անդրկովկասում և արթածվում էր Սևանա լճի հարավային լեռներից մինչև Արաքս: Լեռնաշղթաներով և խոր ձորերով կտրված այդ աշխարհում ապրում էին այլաթեզ և այլազավան ժողովուրդներ՝ նստակյաց և վաչկատուն, խաշնարած և հողագործ և այնպիսի ժողովուրդ, որ ոչ հողագործ էր և ոչ խաշնարած, այլ անտառաբնակ էր, և ոչ ոք նրանց մասին ստույգ բան չգիտեր և նույնիսկ ասում էին, որ նրանք առանձին ազգ են՝ այլ ում են և երկրպագում են բարձր ծառերի և իբր թե մութ ծմակներում նրանք շրջում են տանց զգեստի:

Այդ ընդարձակ գավառը՝ Չանգեզուրը լեռնաշղթաներով և խոր ձորերով բաժանված էր բազմաթիվ մահալներով: Իրենք՝ մահալները բաժանվում էին իրարից անշատ մանր գյուղախմբերի և հաճախ կարելի էր լսել այսպիսի խոսք.

— Մինչև սարի սեռը մեր երկիրն է, էն երեսը Աղվանու երկիրն է: — Նույն գյուղացիները իրենց գյուղին «հայրենիք» կամ «երկիր» էին ասում. հարևան գյուղին՝ «օտար երկիր» կամ «ղարիք տեղ»:

Շհարի տախտի բնակիչները գրավել էին այդ ամեն «երկիրները», — ինչպես մի իրական պետություն զենքի ուժով գրավում է իսկական երկրներ: Մահալները և գյուղերը՝ մինչև վերջին բնակավայրը, որ նույնիսկ գյուղ չէր հաշվում, այլ ձմեռանոց, — այդ ամբողջ երկրներն իրար մեջ բաժանել էին Գորիսի վաճառականները և շինովնիկ մեծամեծները: Բաժանել էին կովսով և ուժեղին բաժին էր ընկել ամենից հարուստ մահալը: Այսպես՝ Միրումովները հնուց անտի տիրում էին Մինքնիդի բուր գյուղերին, — այն լեռնային մահալները, որոնք այժմ կազմում են Փյուրդիստանի հյուսիսային մասը: Բայանդուրից մինչև Շոթանան սե-

փական ժառանգութիւնն էր Բաղիրովների առևտրական տան: Միսիանի մի մասը՝ Որոտան գետից ձախ, — տիրում էին Յրանգուլովները: Զորերը՝ Ավագիմովների միահեծան թագավորութիւնն էր, Կյուրեսը և քաղաքամերձ շորս գյուղ բաժանված էին առևտրական երկու տների միջև: Յուրաքանչյուր առևտրական տուն իր մահալի գյուղերում ուներ մանր ու մեծ խանութներ և ահագին թվով մանր վաճառականներ, որոնք խանութ չունեին, այլ ձիերի վրա, երբեմն սեփական մեջքի վրա այդ խանութների ապրանքը բարձրացնում էին մինչև լեռան ծերպը, եթե այնտեղ ծխում էր մի օջախ:

Նրանք ոչ միայն վաճառում էին շիլեյ, մահուղվարի, Իրանի դադաք, փոնձա, շալ, շաքար, նալ ու մեխ, սաղսի, նավթ, սաղրի քոշ և այլ այսպիսի ապրանքներ, որ քարավաններով ստանում էին Քավրիդից, Շուշուց (ոռուական մանուֆակտուրան՝ Պրոխորովի, Կրատնիկովի, Վիտովի, Յինդելի և ուրիշ ֆիրմաների մեծաքանակ պահեստները Անդրկովկասի հարավի և Հյուսիսային Իրանի համար կենտրոնացված էին Շուշի շահաստան քաղաքում), — ստանում էին Բաքվից և մինչև անգամ Տրապիզոնից էին ստանում, — նրանք ոչ միայն վաճառում էին, այլ յուրաքանչյուր առևտրական տուն իր մահալում մենաշնորհ իրավունքով գնում էր բուրգ, ցորեն, անասուն, յուղ, պանիր, հավաքում էր գորգեր՝ թիրմահի, եան, խորասան, մարդաշենք, պատնոց, — կարպետներ՝ դարախլու, շղթաշղթա և առանց զարդի, — նրանք հավաքում էին պղնձե ամաններ՝ կոժ, կոլա, ջամ, մարթաք, սինի, բադիա, կաթսա, — ինչ որ ձեռք ընկներ և հալելով՝ իբրև կարմիր պղինձ ուղտերի նույն քարավանով ուղարկում էին Քավրիդ, Խորասան և Նզդան շահար:

Այդ առևտրական տները նաև յուրատեսակ բանկեր էին: Նրանց ձեռքում էր դրամը. նրանք վաշխ էին առնում՝ մանեթին երեսուն, քառասուն և ավելի: Միրումով Կյուրին, որին անվանում էին Կուլը գալլ, իր որդիներին սիրում էր ասել պապից լսած խոսքը.

— Որտեղից լացի ձայն լսես, ներս մտիր. կամ մարդ է մեռել, կամ սոված են, կամ տան տիրոջ ձեռքը նեղ տեղն է: Տո՛ւր, պարտք տուր, շարմեխիր, էնպես մեխիր, որ հուր հավիտյան դռանդ կլանչի:

Նվ մեխում էին, շղթայում էին ծանր շղթաներով և որոնք սարերում ազատ վրնջացել էին, — նրանք դառնում էին բեռան ձի: Հետզհետե ուղտում էին սասանգի դավթարները և դաբաղի մյուշրին երբ, այն փոքրիկ սնդուկները, որոնց մեջ հազար մուրհակ և հազար անոն կար:

Պատմում են, որ Յրանգուլով Բաղալ ապերը մի անգամ նստած բաց ու խուփ էր անում աջ բուռը:

— Ապեր, էդ ի՞նչ ես անում, — հարցնում է որդին:

— Ա՛յ որդի, նայում եմ բոխ և փառք եմ տալիս աստծուն, թե էս ահագին մահալը ո՞նց եմ պահում բոխ մեջ...

Ջամբա Մատուրը՝ հուշակավոր վաշխառուն, երբ բաց էր անում մյուշրին, մուրհակների դարսը զսպանակի նման վեր էր թռչում:

— Կա՛րդա, — ասում էր որդուն: Նվ որդին առնում էր առաջին մուրհակը.

— Վեր առիմ և պարտ եմ քառասունվեց մանեթ... էյվազ Խզրը օղի...

— էդ չի, — ընդհատում էր հայրը:

— Վեր առիմ... Հիսունմին մանեթ... Գիշունց Տանիել...

— է՛դ չի...

— Վեր առիմ... Մեհտի Ղուլի Իմամվերդի:

— Թիվը քանի՞ է, — հարցնում էր Ջամբա Մատուրը:

— Հուլիսի 25-ը:

— էսօր 16-ը չի՞:

— 15-ն է:

— է՛դ մեկը հանի... ասում են Մեհտի Ղուլի Իմամվերդին երկու լավ մատակ ունի, — և այդ մուրհակը հանում էին:

— Կա՛րդա, — և շարունակում էր ընթերցումն, ինչպես միալար ժամեր-գութիւն:

Կային այնպիսի առևտրականներ, որոնք իրենց մահալում միահեծան տեր էին, բառիս լրիվ իմաստով: Նրանք դատ էին անում, եղբայրը եղբորից բաժանում էին, խառնվում էին ամուսնության գործերի, կալանավորում էին, ծեծում և արյան գին էին որոշում, — մի խոսքով մահալում խան ու սուլթան էին: Նրանց ձեռքի տակ էին գյուղական գրագիրները, տանուտերերը և մինչև անգամ պրիստավը լսում էր նրանց, — որովհետև նրանք բոլորը կերակրվում էին խոշալի հարուստ սեղանից:

Առևտրականների շափ, գուցե և ավելի, Գորիսն ուներ բեյեր և պաշտոնյաներ: Կային երեք Ներսես բեյ՝ Հաստ Ներսես բեյ, Խուրդա կամ Կարճիկ Ներսես բեյ և Պրիստավի Ներսես բեյ: Կային Կեեր բեյ՝ ձաղար, այսինքն կապուտաշյա և Բալասան Կեեր բեյ: Կային երկու Զիլֆուզար բեյ՝ հայ և թուրք, որոնց միջև կար միայն մի տարբերություն. տարին հրկու անգամ հայ Զիլֆուզար բեյի անունն օրհնում է տեր Ջավեն քահանայի (Տեր գի բազումը՝ ինչպես նրան անվանում էին), իսկ թուրք Զիլֆուզար բեյի տունն օրհնում էր մոլլա Մուսին: Ուրիշ և ոչ մի տարբերու-

թղտն շկար: երկու Ձրթուտար բեշերի միջև: Վերջապես կաշին բեյեր, որոնք մի հատ էին, ինչպես Գորիսում մի հատ էր տիկին: Օլիմպիան, Փոռտի Անտոնը, Եփրատ Երեմը, նավթավաճառ Գեորգին և ուրիշները... Կար մի Ասատուր բեյ, որը անունաս չէր խաղում, այլ սիրում էր որձ ածի միս, կար Պավլի բեյ՝ որ «Մշակ» թերթի անխափան բաժանորդն էր: կար Վաղարշակ բեյ՝ զառ գցող, կար Խանլար բեյ՝ շուն պահող, կար... և այլ ինչպիսի բեյեր չկապին երանելի Գորիս քաղաքում:

Այդ բեյերից ոմանք շառավիղն էին ազնվական հին տոհմերի և ունեին կավածքներ, որոնց հասույթով անկարոտ ապրում էին: Այդպիսին էր, օրինակ, Պավլի բեյ: Օրբելյանը, «Մշակ» թերթի հավատարիմ բաժանորդը, որ առանձնացած ապրում էր իր տանը, ինչպես իշխանը զոյակում, հագնվում էր հին տարազով և ասում էին, թե իբր գավառապետը նրան չի սիրում, որովհետև Պավլի բեյը իր այգում վեճի էր բռնվել ուս քահանայի հետ և հաստատել էր, թե հայոց կրոնն ավելի հին և ավելի ճշմարիտ է: Այդպիսին էր նաև Համբարձում բեյը, որ երբեմն գյուղ էր գնում՝ տ ա ք ա ց ր ա ծ թ ա ն ու տելու իր ազգի տանը: Այդ ժամանակ նրա շուրջն էին հավաքվում ազգական ծերունիները: և մունդիրը հանելով Համբարձում բեյը ննջում էր բարձրի վրա, իսկ ծերունիները շարունակում էին պատմել վ ա դ ի ժ ա մ ա ն ա կ ն ե թ ի ց:

Կային այդպիսի բեյեր՝ հին տոհմերից, բայց բեյերի մեծ մասը կեղծ ազնվականներ էին, որոնց հայրերը 1851 թվի բեկական հանձնաժողովին (бекская комиссия) ներկայացրել էին ինչ-որ թղթեր իրենց ծագման մասին՝ Տաթևի վանգից, խանի ժամանակներից և նույնիսկ գնդապետ Ասրոկինի ձիապան Խուրի հաջողացրել էր բեյի կոչում ստանալ և վերադարձել էր իբրև Խուրաբախչի բեյ: Բեյերի մի մասն այդպես էր ձեռք բերել կոչումը, իսկ մյուսները նախկին տանուտերերի, գրագիրների և հարուստ հողատերերի որդիներ էին, որոնք պետական ծառայության մտնելով, կոչվել էին բեյ, մի սովորութիւնն, որ մնացել էր պարսկական տիրապետության ժամանակից:

Առևտրականների նման բեյերը ևս ունեին իրենց ազդեցութիւն մահալները և գյուղերը: Ոմանք այդ ազդեցութիւնն ունեին ի ծնե, որովհետև այդ գյուղերի շրջրբի հողերը նրանց հայրական սեփականութիւնն էին: Ոմանք այդ ազդեցութիւնը ձեռք էին բերել «քրտինքով» և մի անգամ ձեռք բերածն արդեն անքակտելի էր:

Բեյերի բույր բոռերի նման վիստում էր գավառային վարչության դիվանում (դ ա վ թ ա թ ա ն ա), գիւղապետական և հաշտարար ատյաններում (ս տ ւ դ ա թ ա ն): հարկապին տեսչութիւն մեջ, — վիստում էին

ազնիւրով սապոգների պղնձե խթաններով, ոմանք թրերով, ոմանք ճուռացնելով սապոգները: Ընդարձակ սենյակներում գործավար, սեղանապետ և քարտուղար բեյերի խմբերը մինչև ճաշ հնչեցնում էին իրենց ձայներ՝ թավ, կր Համզա բեյ Մահմուդբեկովը պատմում էր մի օանա-ասակ՝ անեկդոտ, խոպոտ, երբ Հաստ Ներսես բեյը վերջացնում էր ուս-գրոտի պատճենը և մեջքը հենելով աթոռին, ասում էր. «Դա՛-աս...երեկ լավ ժամանակ անցկացրինք... և не скучала душа моя...»: Իսկ մի լավ ժամանակ լավում էր աղվեսահա՛ճ՝ արագ-արագ և սուր ձայնով, հետ սենյակից լավում էր արաբական կատվի վրա, որ նայում է պատի գլխից ինչպես հաշում է տնային շնիկը կատվի վրա, որ նայում է պատի գլխից և բեղը չի շարժում: Եվ բոլորն էլ ճանաչում էին ավագ գրագիր Նազար բեյի ձայնը և առանց տեսնելու գիտեին, որը նա բարկացել է շինա-կանի վրա...

4

Գորիսը կենտրոնն էր Զանգեզուրի ընդարձակ գավառի, որտեղ ապրում էին այլապես և այլադաս բազմաթիվ ժողովուրդներ: Բայց այդ կենտրոնն ուներ իր կենտրոնը, այսպես ասած քաղաքի միջուկը և այդ՝ Գորիսի շուկան էր:

Գորիսի շուկան...
Ո՞ր ծայրից սկսել և ո՞ր ճանապարհով մտնել շուկա, որովհետև յոթ ճանապարհ էր մտնում շուկան՝ յոթ միանման և լայն փողոցներ, որոնցով մտնում և դուրս էին գնում ահագին քարավաններ, բեռներ, մալապանի ֆուրգոններ, Խաչենի սայլեր և մարդիկ՝ հազար, տասը հազար մարդ, — մանավանդ ամառը, երբ Սալյանից, Մուղանից, կենքորանից հազար-հազար քոչվոր բարձրանում էր Զանգեզուրի ամառային արոտները, — և ամբողջ ամառը նրանք առնում և ծախում էին Գորիսի շուկայում:

Ո՞ր ճանապարհով մտնել շուկա և ո՞ր ծայրից սկսել... մտնել լեռան ճանապարհով, որտեղով բերում էին պանրի և յուղի բեռներ, բուրդ, հազարավոր ձիեր, ոչխարներ, — և այդ ամենն այնպիսի աղմուկով, որ մինչև անգամ շներն իրար էին խառնվում և հենց քաղաքային ինքնավարության առաջ բարձր գոռոցով թեմիր-միսկյանու մի շորան ժուրի մեջ կանչում էր իր շանը՝ «Ալաբաշ հե՛յ, Ալաբաշ, Ալաբաշ...», կանչում էր այնքան բարձր, որ քաղաքագլուխ Մատթևոս բեյը դուրս էր գալիս քաղաքապետի դռնում այլ պատշաճաբը, որպեսզի հանցավորին պատժի, բայց հան-

ցավոր չէր գտնում, այլ գտնում էր անասունների հեղեղ, որ սարերից տրաքված մտնում էր քաղաք:

Արդոյք սկսե՛լ հարավից, որտեղից շուկա էին բերում ձմերուկի և սեխի սարեր, Բարկուշատի բրինձ, Օրդուբադի շիր, թուզ և ուրիշ ինչ մրգեր չէին բերում, ուղտերի մեջքին, զրնգ-հա-զրնգ՝ գանգերով, բոժոժներով և փնջերով զարդարված ուղտերի մեջքին: Բայց առաջին քաղաքականներն արդեն վայր են դրել բեռները, ուղտերը նստել են և փակել են ճանապարհը: Ուղտերը տ ո ռ ն գ ու մ են և մի ուղտապան կեռզուխ մահակով խփում է նստած ուղտին, կատաղած խփում է և ուղտը կեռ ու մեռ ոլորում է վիզը և հեռվից այնպես է երևում, թե մի վիթխարի օձ գալարվում է բեռների արանքում... Արդեն այնտեղ է քաղաքային ոստիկան գարադաբուզի Մուխանը՝ որին հրամայված է կարգ պահել հրապարակի այդ մասում և բաց պահել ճանապարհը: Բայց Մուխանը տեսել է Օրդուբադի շրի և թուզի բեռները՝ լցնում է գրպանները և նույնիսկ գլխարկի մեջ է լցնում:

Ո՞ր ճանապարհով մտնել այդ հարուստ շուկան...

Լավ է շուկա մտնենք ոչ լեռներից իջնող ճանապարհով, ոչ հնարավի և ոչ թագավորական ճանապարհով, որով Շուշի քաղաքից բերում էին շաքար, մանուֆակտուրա և երկաթեղեն: Մենք շուկա մտնենք Կյուրեսի ճանապարհով, — այն հին ճանապարհով, որով Գորիս էին մտնում ձորերի մեջ կորած գյուղերից՝ ցաքուտեցիք, մեղաբեցիները, նորուեցիք, ձորկեցիները և ուրիշները:

Գետից այն կողմը ճանապարհը բարձրանում է ջրաղացների կողքով: Այստեղ դեռևս հին Կյուրեսի հետքերն են... Ահա կանաչ ընկուզենու տակ ննջում է ալրոտ ջրաղացպանը: Ծառից կապած երկու էշ գլուխ գլխի կանգնել են, կարծես խոր մտքի են և այնքան են խորասուզված, որ չեն զգում ճանձերի խայթոցը: Այստեղ դեռևս հին Կյուրեսն է... Ճանապարհին ընկած է մի կոտորած նալ, այստեղ այնտեղ թափված են խորձերից վայր ընկած հասկեր: Եենից մի աղքատ կին ջրաղացի առաջ փռել է վերջին պարկ ցորենը, այն ցորենը, որին ջրաղացպանն անվանում է հավի կուտ...

Արդեն ետ մնաց վերջին ջրաղացը՝ այն իմաստուն ջրաղացպանով, որ հազար հեթաթ գիտեր: Նա իր կյանքն անց էր կացրել այդ ձորում և ձորի ջրաղացում: Գիշերը մինչև լույս ջրաղացը բանում էր, իսկ ջրաղացպանը եթե չէր ննջում, — ջրաղացի դռանը նստած կամ օջախի մոտ պատմում էր իր հեթաթներից մեկը, — պատմում էր հայերեն և թուրքերեն, — որովհետև նրա ջրաղացն աղուն էին բերում և՛ հայերը, և՛ թուրքերը:

Նա հնագույն կյուրեսցի էր և նրա ասելով Ղաթրինի Աղալոյի մահից հետո Կյուրեսում ապրելը հարամ էր: Նրա կարծիքով առհասարակ մարդ-օլանը քանի գնում ժեռանում էր, այսինքն փոքրանում և վայրենանում էր... Մարդ՝ առաջվա մարդն էր, ոսկորը հաստ և զորեղ: Մարդ էր Ղաթրինի Աղալոն, մարդ էր Ցուլ Օհանը, որի ձայնից Գրնգանի ձորում գազանները թաքնվում էին: Եվ նա պատմում էր Ցուլաքարի և Ցուլ Օհանի մասին, որ և մենք կպատմենք, լսած լինելով ջրաղացպանից, — որովհետև՝ այդ վերջին ջրաղացից մինչև քաղաք ուրիշ նշանավոր բան չկա և երկրորդ՝ մի անգամ լսած լինելով այդ պատմությունը, չի կարելի չվերհիշել, — երբ դեպք է լինում անցնել Կյուրեսի վերջին ջրաղացի կողքով:

Վաղ ժամանակ Եենում՝ հին Կյուրեսում ապրել է մի մարդ, անունն Օհան: Այն ժամանակ Եենն այժմվա ձորերում չէր, այլ ավելի հյուսիս, այնտեղ, ուր ձորի մեջ երևում է մի կոտորած վանք, որի ճակատաքարին դեռևս կարդացվում է. «Քիւ ՌժԴ... Ես Մելիք էգան կառուցի»...»: Այդ ձորի գյուղում ապրել է Օհանը, որ կոչվել է Ցուլ, նախ որ նրա ձայնից Գրնգանի ձորում գազանները թաքնվում էին և ապա նույնիսկ երեցկինը նրանից հանգիստ չուներ: Եվ մի պատարագի երեցին հայտնում են, որ Ցուլ Օհանը թշել է վերին թաղի կողմը: Քահանան շուրջան ուսին, ինչպես պատարագում էր, թշում է դեպի տուն և ձեռքն առնելով բահի կոթը՝ վազում է: Նրա հետևից վազում են վերի թաղի մարդիկ, որոնց կանանց նույնպես շարշարել էր Ցուլ Օհանը: Քահանայի տնից նրանց դեմ է դուրս գալիս Ցուլ Օհանը, գրկի մեջ երեցկինը, որի կիսամերկ մեջքը դեպի քահանան էր: Այդ տեսնելով, երեցը բացականչում է. «Ցուլ Օհանի բահի կոթն իմից զորեղ է, ժողովուրդ, և քանի այդպես լինի, աշխարհում շատ մարդու կին իմ կնոջ նման կնստի...»: Երեցը շուրջաուր գետնին է պցում, հեռանում է գյուղից: Այլևս նրան չեն տեսնում: Իսկ Ցուլ Օհանն ապրում է շատ տարիներ և այդ տարիներում, երբ դրդար նրա ձայնը, կանայք անհանգստանում էին՝ նույնիսկ իրենց ամուսինների գրկում:

Նրան միայն ծերությունը հաղթեց: Բայց նույնիսկ օր ծերության, երբ աչքերը պարզ չէին տեսնում և քայլելու ուժ չունեին, Ցուլ Օհանը չէր մոռանում կանանց: Իրենց տան առաջ նա ցցել էր մի քար, աղբյուրի ճիշտ դեմը: Երբ կանայք աղբյուրն էին գալիս կամ աղբյուրի ջրում լվանում էին ցորեն, բուրդ, Ցուլ Օհանը պառավ գայլի նման քարանձավից դուրս էր գալիս և քարի գլխից նայում էր աղբյուրի կանանց, որոնք բարձրացնում էին կուժը և օրորվելով գնում, ոտքերը մերկ մտնում էին ջուրը և քնքը քաշած ցորեն էին լվանում: Ասում են քարի գլխից Ցուլ Օհանը

տեսնելով աղբյուրի կանանց, հիշում էր նրանց մայրերին և ոմանց անունը շնչում էր*:

Ահա ետ մնաց և վերջին ջրաղացը, նրա հետ և այն ամենը, ինչ մնացել է Ղաթրինի Աղալոյի և ավելի վաղ ժամանակներից: Այստեղից սկսվում քաղաքը: Առաջինը՝ հենց քարափի զլխին, նավթի պահեստն է: Չորս-հինգ գյուղացի երեխաներ, շշերը մատերից կախած կանգնել են: Նրանք մի քանի անգամ համրել են իրենց սև փողը, ստուգել են խցանը՝ կարտոֆիլից կամ մատուրի փայտից, — բայց դարձյալ սպասում են, — որովհետև նավթավաճառ Գեորգին նարդի է խաղում Բալասանի Կներ բեյի հետ:

— Սե-բիր Սիրիրստան, Գեորգի Մինայիչ... Զա՛ն, գուքարա, քարերը թուփ արա...

Իսկ նավթավաճառը միայն կրկնում է.

— Զառ, քեզ տեսնեմ, գառ, — և զաները «գուշեշ» շեն բերում: Թրխաններն սպասում են և զեռ կսպասեն այնքան, մինչև խաղից կշտանա Բալասանի Կներ բեյը և կամ երևա մի հաճախորդ, որ նավթ է գնելու բեղունով...

Նավթի պահեստից մինչև նազար բեյի տունը հին շուկան է, շուկա՞յն այն մասը, որ վաղ ժամանակ միակ շուկան էր, բայց արդեն դարձել էր իսկական շուկայի արհամարհված ծայրը, որտեղ առևտուր անելը հավասար էր կտոր ընկնելուն: Հին շուկայում մեծ մասամբ բնիկ կյուրեսեցիներ էին, որոնց Գորխա քաղաքի իսկական շուկան թշու՛մ էր դեպի Շենը և վաղ թե ուշ նրանք պետք է կամ օտարություն գնային կամ ետ վերադառնալին հայրենի տունը ձորերի մեջ: Ներկարարներ, հաճեռ կարողներ, սաղրի շառչի վարպետներ, հնակարկատներ, դարբիններ, որոնք զոդում էին խոփը, բայց անիվ չէին կապում, որոգհետև շինականները՝ ցաքուտեցիք, մեզարացիները, նորուցիք և ձորկեցիները օալ շունենին, — փափախ կարողներ, որոնք փափախ էին կարում ոչ թե բուխարաչի, ալ գառան հասարակ մորթուց («մոթալ փափախ»), եղան, էլի՛ ձիու և շորու պայտարներ, որոնք գետինն ձիու մաշված նալը հարմարեցնել էլի մանր ոտքին, — երկու վարսավոր՝ Գալլաք Բողին և Քթևան Աօրին, որոնք մանգաղի նման ածխիներով թրաշում էին շինականներին, սղրուկ էին պահում և աշնանը՝ կաղի ժամանակ իբրև մուրացիաններ շրջում էին տնե-տուն, հավաքելով ամբողջ տառվա վարձը, — և այլ այսպիսի վար-

* Ղաթրինի ձորից հյուսիս, երրորդ ձորում, որտեղ մնում են անհայտ գյուղի քարայրները և կոտրած վանքը, դեռ մնում է Ցուլ Օհանի ցից քարը, որին անվանում են Ցուլաքար: Մի ժամանակ լքեր կանաչք ուրտ էին գնում և ինչպես ոմանք վկայել են, Ցուլաքարը դեռ գործար էր, ինչպես ինքը՝ առասպելական Ցուլ Օհանը:

պետներ զարգարում էին հին շուկան: Միակ ճոթավաճառը Մանգասար գային էր... Նրա խանութի նման երկրորդը չկար ամբողջ Գորխում և կարծես Մանգասար դային խանութն այգպես պահել էր, որպեսզի ցույց առ, թե ինչպես էին ճոթի խանութները Աղա Մամմադ խանի ժամանակ: Կամարակապ թաղ բանդի հատակը ծածկված էր գորգերով: Գունափեղ կտորները դարսված էին իրար վրա՝ մինչև առաստաղը: Ինքը՝ Մանգասար դային նստում էր գորգի վրա՝ մի ծունկը ցցած... Գալիս էր մի մուշտարի, նստում էր նրա կողքին և նրանք զրուցում էին: Ապա մուշտարին հարցնում էր զա՛ն և վա՛ղ արխալուղացուի գինը: Մանգասար գային չէր շտապում:

— Կտամ է՛, կտամ տանես... Վերջին թոփն է, տար հագի: Մանգասար դային որ մեռնի, էլ պրծավ դանավուզը, թո՛ւ՛վ թիրմահին, — և զույցը շարունակում էին:

Այդ հին շուկայում կային և մի քանի խանութներ, որոնք ցուցանակ ունեին, ինչպես իսկական շուկայի խանութները, բայց ներսը դարակները դատարկ էին, եթե չհաշվենք ճրագի յոթանոց ապակիները ծղոտների մեջ, դազանի սապոն, մի երկու կապ պարան և այդ ամենք թանձր փոշու մեջ, որ նշան էր, թե այդ ապրանքներին վաղուց ձեռք չէին տվել: Բայց խանութները ցուցանակ ունեին. նրանցից մեկի վրա առեքին գրված էր՝ «Մանրուքի խանութ թեյ շաքար Ակուր Ալալուց և» և ինքը՝ Ափունց Ակուր-ամին առավոտ կանուխ խանութը բաց էր անում, ինչպես մյուսները, բարի լույս էր տալիս հարեաններին և անցնում դախլի գլուխը, ինչպես մյուս խանութպանները:

Ափունց Ակուր-ամին վաղուց էր մոտացել զազանի սապոնի և ճրագի յոթանոց ապակիների առքի գինը: Նա ապրում էր այն նամականիով և ծանրացնեքով, որ օտարություն տեղից հայրենիք էին ուղարկում ձորկեցիները: Ցարաքանչյուր փոստի Ակուր-ամին իր դրացուն խնդրում էր «աչք խանութի վրա պահել», ինչպես առաջ, երբ Ակուր-ամին գնում էր խաչա Յաղթի մազազայում մազանգա իմանալու... Ակուր-ամին փնտրում էր փոսաք և ստանում նամականիի և դրամական ծանուցագրերի մի կապ, ապա վերադառնում էր խանութը և աչքի էր անցկացնում հասցեները. — «Գորխա քաղաք մանրութի խանութ Ակուր Ապինցևին» ուսերեն և առկը՝ ծրարի վրա, հայերեն՝ «Ակուր-գայի նամակա շուտ հասացնես մեր գյուղը իմ հայր Առաքել Գիլունցին» («Յրևի խեղճի ականջով դիպել է Առաքելի մեռնելը», — ասում էր Ակուր-ամին, վերցնելով մի ուրիշ ծրար): «Գամակա հասնի ի ձեռն Վարդազարի Տերակուփին ի գյուղն Չարիկ» («Չարիկ հենց Վարդազարն էստեղ էր...»): «Շատ բարեւ կհիշեմ քեզ

Ակու-ամի» և ուրիշ ոչինչ,—բայց Ակու-ամին ձեռագրից ճանաչում էր, որ գրողը որբեկայրի Հերիքնագի փոքր տղան է:

Ակու-ամին ստանում էր նամակները, դրամը, ծանրոցները: Ձորկեցիները գալիս էին և առնում իրենց նամակները, դրամը և ծանրոցները: Ակու-ամին գիտեր, թե որ ձորկեցին է գրագետ: Եվ նամակների մեծ մասը հենց այդտեղ էլ կարդում էր Ակու-ամին միալար ձայնով և միայն, երբ դժբախտ լուր էր, նա ցամաք հազում էր և ակնոցի վրայից նայելով նամակատիրոջ գունաթափ երեսին, կարդում էր. «որ իմանաս ապեր մեր Անդրիասի աչ կուռը մնաց շարխի տակ և նա լազարեթում պառկած է»...

— Էս լավ է, որ լազարեթում պառկած է,—ընդհատում էր Ակու-ամին,—ուրեմն փորձանքն անցել է, որ լազարեթում պառկած է,—և շարունակում էր ընթերցել. «Շատ բարև մեծ քեռականոջ, Ավանին և երեխաներին և շատ բարևս նմանապես Ավետիսին; Ոսկանին և Ասար բիշուն ասա Կաքավ աղբյուրը դեռ միտս է և նաև բարի կամեցողաց...»

— Ձա՛ն որդի,—ասում էր նամակատերը, անհայտ է նրա համար, որ տղան դեռևս կարոտում է գյուղի Կաքավ աղբյուրը, թե՛ նրա՝ որ «մեր Անդրիասի աչ կուռը մնաց շարխի տակ»...

Ափունց Ակու-ամին ստանում էր ձորկեցիների նամակները, հարեանը՝ ցակուտեցիների, նրա հարեանը՝ Բաղամ Բախշին ստանում էր նորուցիների նամակները... Այդ խանութներում նամակները կարդում էին, ուրախանում էին, եթե լուրը բարի էր, դժբախտության դեպքում մխիթարում էին և բոլոր դեպքերում նամակների պատասխանն ինքը՝ Ակու-ամին գրում էր ձորկեցիների համար, հարեանը՝ ցակուտեցիների և Բաղամ Բախշին՝ նորուցիների համար:

Ի՛նչ վարձ էին ստանում նրանք,—հայտնի չէր: Միայն հայտնի էր, որ Ակու-ամին, նրա հարեանը և Բաղամ Բախշին երբեմն տասը-տասն-հինգ օր, նույնիսկ մի ամիս ժամանակով ինչ-որ գումարներ շահով տալիս էին մյուս մանրավաճառներին և նրանք ճիշտ ժամանակին վերադարձնում էին ձեռաց փոխ առած գումարը: Երբեմն էլ, երբ գյուղից Բաբու կամ Անդրկասպյան երկիր ուղարկում էին մի ծանրոց, մեջը շորաթան, ձավառ, փոխինձ, բրդե գուլպա,—ուղարկողը մի թաշկինակ ձավար կամ մի տասնյակ ձու բերում էր Ակու-ամուն, ասելով.

— Էս էլ քո բածինը, Ակու-ամի... Քույրդ խնդրեց երեխայի հացն լավ գրես...

Այսպես էր այն հին շուկան՝ նավթի ամբարներից մինչև նազաբ բեյի տունը, որ արդեն դարձել էր Գորիսի իսկական շուկայի արհամարհված ծայրը, որտեղ դեռ բուրում էր հին Կյորեսը և Շենը՝ նրա մեռնող միջնաբերդը...

Այլ էր իսկական շուկան՝ Գորիսի սիրտը:

Նազար բեյի տնից մինչև դավթարխանան, այնտեղից ուղիղ փով մինչև Մատթևոս բեյի տունը, ապա մինչև դրուժինայի զորանոցը և հայոց եկեղեցին,—մի կատարյալ քաղաք էր, փոքր Մոսկովա, ինչպես ասել էր քաղաքագուլիսը մի խնջույթի,—Այս րկովկասի Հայպետի էր քաղաքագուլիսը մի խնջույթի,—Այս րկովկասի Հայպետի էր քաղաքագուլիսը մի խնջույթի («բժիշկ Տիկուլ»),— որը չէլ բեր գը,— ըստ բժիշկ Տիգրան Պետրիչի («բժիշկ Տիկուլ»),— որը նույնպես քաղաքի զարդն էր, ինչպես «Սասուն» տպարանը, լիմոնագի արձարանը, ինչպես Սպիտակ բանտը և ուսաց եկեղեցին:

Այդպես էին քաղաքի հուշակավոր վաճառատները, ինչպես, օրինակ՝ Կիլիկի մագազինը («Նագեթոգ»), Ֆրանսիական ապրանքների մագազինը, «Գրուժբա» ընկերությունը, Ավագիմովների վաճառատունը և Պասաժը՝ նորագույն շուկան, ակնեղենի և գոհարեղենի խանութներով: Իրար հետևից ձգվում էին հարյուրավոր խանութներ միայն ուսական մանուֆակտուրայի, ապա գալիս էին մանրուքի խանութներ, այնպես ճոխ զարդարված, որ մինչև անգամ խանութի դռներից կախված էին ժանյակներ, մետաքս թել, գուլնզգուլն երիզներ և ուլունքներ այնքան առատ, որ խանութի դուռը չէր երևում: Շատ խանութների առաջ, հենց առատ, որ խանութի դուռը չէր երևում: Շատ խանութների առաջ, հենց հրապարակում դարաված էին ապրանքի հակերը, որովհետև խանութները լիքն էին և լիքն էին պահեստները... Շուկայի բազմությունը խըսելով էր հարուստ խանութների առաջ, մոլորվում էին անցքերի լաբիրինթի մեջ, գնում էին հակերի կամարների տակով և հանկարծ դեմ էին առնում ավելի շքեղ խանութի:

Մի խանութի առաջ ուսական ալյուրի բուրգեր են՝ այնքան բարձր, որ խանութից երևում է միայն գավառապետի դիվանի վերին հարկը: Բուրգերի շուրջը խոնված մարդիկ մրջյունի մեծության և մրջյունի պես կրում են ալյուրը, որ թեև մի քիչ կծված է, բայց Ամբարի կատու Սողոմոնը, Ավագիմովների ավագ եղբայրը, երզվում է, որ ֆուրգոնները շուրթ են ընկել և ալյուրը մի քիչ խոնավացել է, «թե չէ ալյուրն իսկական Կուբան է և սամեռնի, եթե վնասով չեմ ծախում»... Ամբարի կատուն ասում է «սա մեռնի» և ձեռքը խփում է մտտ ալյուրին: Նա երզվում է, ըստ սովորության, ինչպես բոլոր վաճառականները, թեև կարող է շերտվել, որովհետև գիտե, որ Սիսիանի, Տաթևի և Գորիսի մահալներում արտերը խանձվել են և հաց չկա: Ամբարի կատուն այդ շատ լավ գիտե, ինչպես և լավ գիտե, որ յուրաքանչյուր փութի մեջ ունի երեսուն կոպեկ մաքուր շահ: Նրա գործակատարները կշռում են, վաճառում

են, իսկ ինչը դաւալի գլխին՝ առաջափոխ սրբունքն սրբունքն սրբունքն բաղադրում է փողի մեջ:

— Քեզ թաղեմ, խնամի, եթե մի քոս կոսիկ օգուտ ունեմ էս գործում... իմ օգուտս այ էն առաջին տեսակ ալյուրի մեջ է, որ շեն աւնում,—խոսք է ասում մի մարդու, որն ուզում է խնամի Սողոմոնին առանձին տեսակ ալյուրը ապառիկ խնդրել: Ամբարի կատոն վաղուց է նկատել այդ, բայց ուշացնում է առանձին խոսելը և խոսում է նրանց հետ, որոնք դժակով են: Նա և՛ դրամ է ընդունում, և՛ հաշվում է, և՛ խոսում է հաճախորդի հետ:

— Չե՞ս երևում, գալօ ղլի... վեց արասի, վե՛ց արասի երկու մանեթ, վեց արասի, էս էլ մի վեց արասի: Կնուքն էլ մենակ կերար... վեց արասի... Ա՛յ բարով: հազար բարի...— և Ամբարի կատոն ձեռքը մեկնում է գեյվեցի Իսաջանին.— որ սա էլ է եկել՝ ուրեմն Ղափանի մահալում էլ հաց չկա,— և գործակատարին կարգադրում է.— տարութես տուր Իսաջանին... Ո՞նց ես, քե՛ֆ հալ... վեց արասի, վեց արասի...

Իսաջանը դեռ անտարբեր նայում է դախլի առաջ հավաքված մարդկանց, որոնք վճարում են ով երկու փութի, ով երեք, ով նույնիսկ մի փութի գին:

— Դու ես պահում էս հացապակաս ժողովրդին... Օրհնյալ լինես, Սողոմոն...— Ամբարի կատոն ժպտում է:

— Կարո՞ղ եմ չպահել, Իսաջան... Շան շարչարանք եմ քաշել, մինչ Արմավիրից ալյուրը բերել եմ... Տալի՞ս են որ: Չեն տալիս, ասում են չկա: էնտեղ էլ պինդ սով է: Բայց ի՞նչ արած. որին խնդրելով, որին տեսնելով, մի կերպ հասցրել եմ էստեղ, թե ինչ է բարեկամներս կուշտ մնան էն կանաչ մեռոնը վկա, որ վնասով եմ ծախում...

Ավագ գործակատարը քթի տակ ժպտում է: Միայն նա գիտե, որ Ավագիմովները ալյուրը Կուրանից շեն բերել, այլ Շուշի քաղաքից և ջրի գնով գնել են կայազորի համբարակից, որը գործի համար ստացել է նոր ալյուր... Միայն գործակատարը գիտե և քթի տակ ժպտում է Մանուֆակտուրայի խանութներից ելնում է լաստիկի, սատինի և գունավոր շիթերի բույր: Ներսում հատակը, դիմացի պատը և երկար զաստոյկան պատած են հաստ գորգերով: Դրանից է, որ այդ խանութներում ձայները խլանում են և նույնիսկ լեռնցի մարդիկ շշնջում են, ինչպես մեռելատանը: Գորգերի վրա փափուկ աղմուկով փռում են կտորների հակերը, ապա մի թոփի ծայրից բռնելով ծաղկավոր շալը ծալ-ծալ նստում է և գուլները ծփում են: Լսվում է մկրատի զննոց. «Շնորհավոր լինի, բարով մաշես...» և ուրիշ անկյունից է լսվում խուլ աղմուկը:

չի՞ կտորի ծաղիկները մարմանդ փայլում են և նորից է ծփում գուլները ծովը:

Ներսը կիսամութ է: Արևի լույսը մինչև խորքը չի հասնում. խորքում կապույտ ցուրով վառվում է մի ճրագ, որից ափելի խորունկ է թվում երթի մաղազան: Այնտեղ ինչ-որ դանակ բացվում ու փակվում է: Չայներն իշնում են գետնի տակ, ձայները կորչում են և ապա նորից բարձրանում են խորքից: Մաղազաների տակ խորունկ պահեստներ են, որտեղ գիշեր-ցերեկ մութ է: Ի՞նչ գանձեր կան այնտեղ... Ահա հեռու անկյունից, սրտեղ կապույտ ցուրով վառվում է ճրագը, դեպի դուռն է գալիս գործակատարը, ուսին կտորների հակեր: Հաճախորդներին այնպես է թվում, թե գետնի տակ մաղազայի շափ տասը մաղազա կա՝ խորունկ, շատ խորունկ, որտեղ զառ-ատլասները մթնում լույս են տալիս, ինչպես ոսկու շղջեր: Չորեն-գրբեն ոսկին և արծաթը և պղինձը կաթկթում են դրամորդի մեջ, թղթադրամը խշխշում է, ինչպես ծաղկավոր շիթը:

— Դրեի շորս շարեք... իսկական Տիեզերի՝ արջանշան: Սրանից լավ վերմակի երես կլինի: Ուզո՞ւմ ես բուժա-մախմուր տամ,— և բաց է անում թափիչը՝ կանաչ-ոսկեգույն, նշաձև պուտերով: Մի այլ գործակատար ձեռքին խաղացնում է պարսկական թաշկինակների փունջը: Ի՞նչպես են խշխշում, ի՞նչ նախշ, ի՞նչ բույր: Մի հաճախորդ, որ հարսանիք ունի, գնել է ինչ որ տանը պատվիրել են և դեռևս նայում է դարակներին՝ չի՞ մոռացել ոչինչ, իր պառավ մոր համար արդյոք չգնի՞ այն սև շալը, թե մայրը հին շալը մի՞նչև մահ հազիվ մաշի...

Գործակատարի աչքից վրիպում է նրա տարակուսանքը: Եվ ահա փափուկ քայլերով մոտենում է ինքը, մաղազայի տերը, անվանի խոջա-Մակիչը: Նա բրդի նախշուն գուլպաներով է, ինչպես տանը,— քայլում է՝ տես ման է գալիս իր պարտեզում:

— Անխի՞ղճ, էսքան ապրանք որ ծախել ես, ինչո՞ւ մի վարդ թաշկինակ չես նվիրել,— գործակատարին հանդիմանում է խոջան: Հաճախորդները ետ են քաշվում: Խոջա-Մակիչը գործակատարի ձեռքից խլում է թաշկինակների փունջը:

— Էս էլ ի՞մ խալաթը... Ուրախ ծամի լինի,— և նա, որ հարսանիքի համար ամեն ինչ գնել էր, ընդունում է նվերը, խոջա-Մակիչին և նրա ձեռքով մարդկանց հրավիրում է հարսանիք,— պառավ մոր համար գնում է սև շալը, նաև ուրիշ ապրանք, խոջա-Մակիչի նիստալի գաղթաբարում իր անվան դիմաց թողնելով մի թեթև պարտք:

— Հազար անգամ ասել եմ մի թողնեք մուշտարին դատարի ձեռ-

քով խանութից գնա,—խոշա-Մակիչն ինքն է անցնում զաստույկայի հետևը, իսկ մուշտարին, որ արդեն մոտեցել էր դռանը, ետ է վերադառնում:

— Առքի գնից էլ պակաս տուր, միայն դատարկ ձեռքով մի թղթի գնա... Մեզ համար է ամոթ: Գինը քանի՞ ես առել...

— Գյազը վեց շալի,— վախեցած պատասխանում է գործակատարը:

— Բա սրա գինը վեց շալի՞ է, որ ասել ես,— խոշա-Մակիչը զայրանում է, որ գործակատարը գյազն ու՞թ շահանոց մահուղվարի ու բեռնակը առաջարկել է վեց շալի:

— Սխալմունք է, կպատահի, Մակիչ-ապեր,— այն կողմից միջնորդում է ավագ գործակատարը:

Իսկ նա, որ այդ գնից դժգոհ գնում էր ուրիշ խանութ, արդեն տնաքոցում էր կտորը:

— Սա խալիս մահուղվարի է, քո իմացած թանձիֆը չի: Դե որ բերանից դուրս է թռել վեց շալի, թող վեց շալի լինի: Էդ էլ քո բախարնս կհամարեմ, թե չեքիցս փող եմ կորցրել. քանի՞ գյազ կտրեմ:

— Կտրի ինը գյազ...

Խոշա-Մակիչը գյազը շուլալում է կտորի մեջ, ծալ-ծալ թափվում է կարմիր հալավացուն: Ապա խոշան վերադառնում է մաղազայի խորքը, որտեղ մարմանդ ցուլք է տալիս կապույտ ճրագը:

Իսկ ի՞նչ է կատարվում արհեստավորների խանութների առաջ և խանութների մեջ... Կարծես լեռներից մի ամբողջ զորաբանակ է իջել բոբիկ, մերկ և առանց գլխարկի և մի օրում հարկավոր է այդ բանակը հագցնել:

Ահա թափվել են դերձակների խանութների վրա: Քսան-երեսուն կարած արխալուղ է դուրս հանել Դարդի Հանեսը. «Պահ-պահ-պահ... Եղար խանի տղա»,—կանչում է դերձակը, արխալուղը հագցնելով մի լեռնցու: Իսկ նա զմայլված կանգնել է և շողում են նրա առողջ ատամները: «Իսկը քեզ վրա է կարած...»: Լեռնցին թևերը չի շարժում ու թեև թևերի տակ սեղմում է, բայց արխալուղն այլևս ուսերից չի հանում, այլ ուզում է այդպես, իբրև խանի որդի երևալ հայրենի լեռներում:

Մի ուրիշ տեղ Չաքմաշի Վեսկանը նստեցրել է մի թուրք սարվորի և երկու հոգով նրա ոտքին են քաշում սապոգը. «Հը՛...»,— և երկուսով տնքում են, տնքալով քաշում են: «Մտավ հա՛, մտավ... Մատներդ մեջը խաղացրո՛ւ, խաղացրո՛ւ...»— և նորից են քաշում, զոռով հագցնում են, և ահա սարվորը զարմացած նայում է, թե ո՞ր կորան ոտները:

«Մի քիչ ման գաս կրացվի»,— քրտինքը սրբելով ասում է Չաքմաշի Վեսկանը, մի ուրիշին նստեցնելով:

— Վեսկան քիրվա, ա՛յ Վեսկան քիրվա,—ներս է մտնում մի վիթխարի հովիվ, հետևից շունը.—կոշիկ կկարե՞ս...

— Կարեմ, կարեմ... Մատներդ մեջը խաղացրո՛ւ, խաղացրո՛ւ—և Չաքմաշի Վեսկանը քաշում է ութերորդ զույգը.— կարե՛մ, կարե՛մ...

— Համա մի քիչ ճրոճը կդնես տակը:

Ճոճուս կոշիկն առանձնապես հարգի էր սարվորների մոտ: Նրանք սիրում էին, երբ կոշիկը ձայն էր հանում, և հովիվը, որ շունն հետևից մտել է խանութ, այդ է խնդրում:

— Էդ մի քիչ դժվար է:

— Ինչի՞ է դժվար, չաքմաշի քիրվա:

— Դրա համար հարկավոր է քսան ձու, մի գրվանքա յուղ...— և հովիվը բերում է քսան ձու և մի գրվանքա յուղ:

— Հիմա կլինի՞:

— Հիմա որ կլինի... Երեք օրից կոշիկներդ պատրաստ են: Էնպես ճրոճը դնեմ մեջը, որ մինչի Ղարաբաղ ձայնը լսվի,— և հովիվը, ոտքի շափը թողած, գնում է: Իսկ Չաքմաշի Վեսկանը աշակերտներից մեկին պատվիրում է «մի լավ ձվածեղ քսան ձվից»: Հովիվի բերած ձվերը և յուղն ոտում են, ապա կոշկակար վարպետը դանակով կտրատում է մի բարակ կաշի, թաթախում կեղտոտ նավթի մեջ և շարտում աշակերտին.

— Էս կդնես էն հայվանի կոշիկի տակ: Էնպես ճոճա որ...

Մայր հրապարակում ուրիշ առևտուր է: Սարբից և գյուղերից քշած բերել են հազարավոր ոչխար, կով, ձի, եզ: Չ ող ա ո ն երբ գործի են: Նրանք մոտենում են ոչխարի հոտին, ձեռքով տորում են ոչխարի մեջքը և կողքը, մի ակնթարթում հաշվում են հոտը և հարցնում են. «Հիսուն ոչխարին ի՞նչ տամ... Միջնորդները, որոնց ձեռքով են առնում և վաճառում անասունները,—իսկույն մոտենում են:

— Աստված բարի տա,— և իրար են միացնում շողառի և ոչխարատիրոջ ձեռքը:

— Հատին շորս մանեթ, որը հավանեմ:

— Հատին հինգ մանեթ:

— Լավ գին է, ես իմ աստված: Առավոտյան Հաշի Բաղիրը ծախեց շորս մանեթով:

— Չորս մանեթ մի արասի:

— Աստված բարի տա,— և միջնորդը համարյա զոռով իրար է միացնում նրանց ձեռքերը և բղավում է.

— Չորս մանեթ երկու արասով հիսունը շոկիր:

Կանչ, աղմուկ, շների կլանչոց: Հովվական շները, որոնք ոչխարի

հետ սարից իջել են, անհանգիստ են, երբ օտար մարդիկ քշում են սլախարը և տերը նրանց չի կանչում՝ «Չամբար քուս, Ալաբաշ հասի»,—ավարկանում է շների վրա և նույնիսկ նրանց վրա մահակ է բարձրացնում, Շները լուռ են և գլուխը կախ միտք են անում, թե ի՞նչ կատարվեց, որ տերը իրենց վրա մահակ բարձրացրեց, այնինչ ուրիշները ոչխարը քշեցին:

Մի այլ անկյունում ձիերը վրնջում են և նրանց հետ զիլ և արծաթահնչյուն վրնջում են քուռակները... Շո՞գ է, ծարավ են, նրանց ճնշում է բազմության աղմուկը, անհանգիստ են այն խորթ ձեռքերից, որ ահա քանի անգամ բաց արին ձիու բերանը,—թե՛ նրանք կարոտել են լեռնային արոանները, որտեղ փոփոում է խոտը և ոչ սանձ կար, ոչ այսքան մարդ:

Հրապարակում կլանչում է մի շուն, կով է բառաշում, մարդիկ բարձրադու աղաղակում են հայերեն, թուրքերեն, ժխորը հետզհետե սասկանում է, ժխորը հասնում է մինչև Մեղրաքերձ և ժխորին խառնվում է գինվորական փողը, որ հնչում է զորանոցի կողմից... Երբեմն հանկարծ լուռ են, ինչպես ճնճողակների երամը, երբ գետնի երեսով անցնում է անզղի ստվերը: Չիավոր ոստիկանների գլուխն անցած, հրապարակը ճնդքելով սլանում է գավառային պահախմբի պետ Ավթանդիլ Խուրշուդ բեյը... Ավազակները սարից նախի՞ր են քշել, մա՞րդ են սպանել, հարձակվե՞լ են փոստի վրա, թե՛ ուրիշ դեպք է եղել,— դեռ ոչ ոք չգիտե և ժողովուրդը ճանապարհ է տալիս. «Խուրշուդ բեյը Բարկուշատ գնաց»,—ասում են իրար և բոլորը հասկանում են, որ այն կողմերում «բան կա»...

Երբեմն շուկայի հրապարակով անցնում էր Պենզայի 686-րդ դրուժինայի շոկատը՝ թմբուկի սուր կտկտոցով, բահերի ու զենքերի զրնգոցով: Առջևից գնում էր երիտասարդ սպան, որ դիտմամբ ծռել էր ճանապարհը, որովհետև ճանձրալի էր անցնել Գորիս քաղաքի խուլ փողոցներով:

Չոկատը վերադառնում էր գինվորական վաքթուֆյունից, կամ երևում էր բանտարկյալների խումբը գորշ խալաթներով, ստներին շքա (նրանց տանում էին հող փորելու) կամ սլանում էր Ավթանդիլ Խուրշուդ բեյը՝ հետևից ձիավորները,—հրապարակում աղմուկը դադարում էր, ինչպես ճնճողակների ժվժվոցը, երբ գետնի երեսով անցնում է անզղի ահարկու ստվերը:

Այդ ժխորից՝ մարդկանց և անասունների կանչերից ազատ էր Պասաժը: Այնտեղ ազնիվ լուռություն էր: Այնտեղ ամեն ինչ ազնվացեղ էր և առաջին պրոբի: Ակնեղենի և զոհարեղենի խանութների կողքին կային խմբիկի և նպարեղենի մեծ խանութներ, որտեղ չէին վաճառում ոչ տեղա-

կան դիմի և ոչ տեղական ձուկ, այլ վաճառում էին ֆրանսիական լիկյորներ, Հալանայի սիգար, Հոնոսի դիմի և այսպիսի կոլոնիալ ապրանքներ, որոնց գնորդները բեյերն էին և չինովնիկ մեծ ամեծները, նաև առաջահանան, որի մասին ժամհար Պարսեղը լուր էր տարածել, թե նա եփած խխունջ է ուտում:

Երբեմն մի լեռնցի կամ քոչվոր մի թուրք՝ մոլորված մտնում էր այդ խանութներից մեկնումեկը, օրինակ Կուրգը բեթա, որ Պասաժի հարուստ խանութներից էր.— «Բաշլըզ ունի՞ս, քիրվա»,— և հովիվը շմածնայում էր շողշողուն դարակներին.— «Ա՛յ, էնտեղ կա...»—կուր դը բեթայից ցույց էին տալիս ժամազործ Սանգրոյի խանութը.— «էնտեղ լավ բաշլըզ կա, լավ ծամոն կա, էշի փալան էլ կա»...

Պասաժի վաճառականները Բուխարա փափախ չէին ծածկում, ինչպես բուն շուկայի առևտրականները, որոնց ժողովուրդը վազեմի սովորությամբ անվանում էր խոջա: Պասաժում մահուդ շուխա չէին հագնում, այլ կոստյում և ծածկում էին շլյապա, իսկ Եփրատ Երեմը խանութ էր մտնում սպիտակ ձեռնոցներով և այնպես անթերի հագնված, որ կապիլլա կվովնան, գավառային նոտարի կինը, ամուսնուն հանդիմանում էր, օրինակ բերելով Եփրատ Երեմին: Պասաժում ամեն ինչ ազնիվ էր և ազնվացեղ. այնտեղ ուսուերեն էին խոսում և նույնիսկ հայոց կոնստիտուցիոնալ քարտուղարը, որ ուսուերեն չգիտեր, Պասաժի կողքով անցնելիս խոսում էր այդ լեզվով:

Երբեմն խոջաններից մեկն այցելում էր Պասաժի խանութը, որի տերը նրա որդին էր, նոր վաճառականը, հին վաճառականի ոսկե ճյուղը: Խոջան նստում էր վեհնակի աթոռի վրա, որ նրան մատուցում էր որդին.— «Ապեր, լիկյոր բաց անե՞մ...»: Ապերը լուռ նայում էր դարակներին՝ անհայտ, անծանոթ իրերին:

— Ա՛յ տղա, էն գիդի-բիդի բաներն ի՞նչ են,— և խոջան մահակը մեկնում էր գեպի ժորձ Բորմանի շոկուազները:

— Ապեր, շոկուազ են... էս էլ Գեպի կանֆետ է, էս էլ Դվարժուլու հալվա է Աղեսից,— և որդին արծաթի պատառաքազով մեկնում էր մի կտոր Դվարժուլու հալվա:

— Հալվան ի՞նչ է, նրա տված օգուտն ի՞նչ լինի,— ապերը վերադարձնում էր հալվայի կտորը.— զանազուկ կտոր լինեք, Իրանի գաղաք լինեք հա՛... Կանգիտ ծախելով մարդ շես դառնա, ա՛յ որդի...

Բայց այդ խոսքին ներս էին մտնում կուլովիլա կվովնան և բոխիկ Տիգրան Պետրոյի կինը՝ Սաաա Կասպարովնան, նուր մի փոքրիկ շնիկ կաղույտ ծապավենով: Ապերը զարմացած նայում էր շնիկին:

— Փառքդ շատ, աստված... սա էլ կասի, որ շուն է և շան ազգից է...
Շնիկն սկսում էր հոտոտել կոնֆետի թղթերը՝ վազվզելով խանութում, ապա հաշում էր մի տղայի վրա, որ դրսից պատուհանով ո՛վ գիտի ինչու նայում էր խանութին:

— Պուշոկ, ն ե ս մ ե՛յ, Պուշոկ... Երեմ նիկիտիչ, խավիարը հիպնալի էր...

Խոջան զարմացած նայում էր տիկիններին. նրանք բուրում էին ինչպես խանութը և նրանցից յուրաքանչյուրը մի ոսկեզառ կոնֆետ էր: «Երեմ նիկիտիչ...» և խոջան ինքն իրեն մի քանի անգամ կրկնում էր: «Ուրեմն խոջա Մակիչը, Մուգումին Մկրտիչը դառավ նիկիտ... Քեզ փա՛ռք, աստված...»: Եվ աթոռի վրա խոջան ննջում էր, ու նրան օրորում էին կանանց և յուր որդու կշկշան ձայները:

Այդպես էր Պասածը, Գորիսի բուն շուկայի ոսկե զարդը:

Բայց և այնպես նա բուն շուկայի ճյուղն էր, ինչպես հին շուկան՝ ներկարարների, համետ կարողների և պայտարների գետնահարկ խանութներով հին շուկան արմատն էր, արդեն զառամյալ արմատը, որ այնուամենայնիվ կապված էր բունի հետ: Եվ այսպիսով նավթի պահեստներից մինչև Մատթևոս բեյի տունը, այնտեղից դրուժինայի զորանոցը և հայոց եկեղեցին՝ մի ամբողջութուն էր, մի ամբողջական շուկա, որ կենտրոնն էր Զանգեզուր ընդարձակ գավառի՝ Սևանա լճից հարավ մինչև Արաքս:

6

Բացվում է առավոտը:

Զորերի մթնում հագլիվ է նշմարվում Շենը: Բարակ ծուխը խանվել է գիշերվա մշուշին և շեն երևում ոչ քարափոր տները, ոչ կյորեսի հին եկեղեցին, այլ միայն նշմարվում են ժայռերի կատարները մշուշի մեջ: Իսկ քաղաքում արև է... Տների թիթեղյա կտուրները ցոլցում են, գոյացնելով կաթնագույն լույսի ծով, որի մեջ, ինչպես դեղին յուղագունդ, լողում է ուսաց եկեղեցու ոսկե գմբեթը:

Հետզհետե զարթնում է Գորիսը:

Մասվաճառներն, առաջինն են բացում խանութները: Ահագին կեռերից գլխիվայր կախված են եղներ և ոչխարներ, որոնք դեռ երեկ մայրում էին: Արևն ընկնում է նրանց կարմիր մսերին և հասգին դմակները, ինչպես պղնձե վահաններ, արևի ցուրը նետում են դեռ քնած տների վրա: Խանութի հատակին ընկած են եղների գլուխներ՝ վիթխարի եղջյուրներով:

Մեկի շնչափողից կաթկթել է արյունը: Մի ոչխարի գլուխ՝ սառած աչքերով զարմացած նայում է արևին: Եզան կճղակի մեջ դեռ կանաչ է խնձորախտոի տերևը:

Ահա գալիս են առաջին գնորդները, որոնք միս չեն առնում, այլ փորտիք, աղիքներ, ոտքեր և գլուխ: Շուկայի պահակ Կետանը խսիրի մեջ փաթաթում է մի գլուխ և ութ ոտք: Մասվաճառ Պետրուսը նրանից դրամ չի վերցնում, այլ միայն Կետանին պատվիրում է ցերեկով իրենց այգին ջրել: Գալիս է խարչ և նի պահող Թևատորոսը, որի ճաշարանում երկու կոպեկի «կես պորցի» բոզբաշ են ուտում Ամիր Աստանը, սալգաթ Երանոսը, Ճոլուն Կեին, Քյաթառան, քարահունջեցի Ճաղար Պետին և այս կարգի մարդիկ, որոնք գիշերում էին կիսավերակ քարանձավներում, խոտի դեզերի մեջ և բուլվարի ցանկապատի տակ: Գալիս է Թևատորոսը և յուր ճաշարանի համար շալակած տանում է ճարպի կտորներ, աղիք և եզան գլուխ:

Մասվաճառների խանութների առաջ գլխահակ շրջում են շները, որոնք դեռ գիշերն են զգացել թարմ մսի հոտ և անհանգիստ խլրտացել են մսի խանութների շուրջը: Շները գլուխը կախ ման են գալիս, կարծես նրանք ինչ-որ լուրջ բանի են, ինչպես Սպիտակ բանտի պահապանները, որոնք գիշեր-ցերեկ պարիսպների վրա գնում գալիս են: Շներից ոչ մեկը չի հանդգնում մոտենալ մսի խանութներին: Շները հին են, ինչպես Գորիսում հին է «գավթարխանան»: Նրանք սեփական կողերի վրա փորձել են, որ եթե մոտենան մասվաճառների խանութներին, դասաբ Պետրուսը կարող է նրանց գլխով զարկել տասը գրվանքանոց կշոռքարը, քիթը մեծ եվանը կշպրտի մեծ դանակը, իսկ Դանգա-Բուռուն Ասրին իր երկար ոտքով շանն այնպես կխփի, որ շունը երեք անգամ օդի մեջ կպտտվի և այլևս երբեք չի պտտվի: Շներն այդ լավ գիտեն և դրա համար հեռու են շրջում և կամ շեն շրջում, այլ սովից լիզում են իրենց ոտքը կամ կլափելով բերանը՝ ճանճ են որսում, այն ուռած ճանճերը, որ մինչև անգամ դավթարխանայից առավոտները հավաքվում են մսի խանութների վրա... Միայն երկու շուն հեռվից հեռու, ինչպես հուղարկավոր, հետևում են խարչների Թևատորոսին, որ տանում է եզան մորթած գլուխը:

Արևը հետզհետե բարձրանում է և արդեն երևում են առաջին միս առնողները:— Պետրուս ամի, մի լավ կ ո լ ո լ ա կ ա ց ու կ տքի,— ասում է բախկալ Այազը: Ահա եկավ Փոշտի Անտոնը, որից հետո մեկ-մեկ երևում են մանր աստիճանավորները: Շուկայում խանութներն իրար հետևից բացվում են: Առավոտի ջինջ օդում լսվում են մետաղի սուր և անզուգական ձայներ: Այստեղ մի դուռ ծալեցին և կպցրին պատին, այն-

տեղ աղմուկով ետ քաշեցին երկաթե կապը (և բալոթը գիտեն, որ խանութն աղմուկով բացողը մեկ ոչնի Բախշին է), մի այլ տեղ զնգաց ցուցահակի թիթեղը, վերջապես ահա Պասաժի խանութների դռներն էլ բացվեցին, բայց ոչ կողքի, այլ դեպի վեր, որովհետև նրանք հնարով են շինված և հնարով էլ զնգում են:

Արդեն միս, հաց և կանաչի է առել ոուս քահանայի աղախինք՝ զո՞մ Մարուսյան, որի և ոուս քահանայի մասին անտակ լուրեր են տարածում տիրացու Պարսեղը՝ Տեր գի բազումի հավատարիմ օգնականը, մոլեռանգ հավատացյալ և խիստ ոուսատյաց: Արդեն միս, հաց և կանաչի են առել Մարուսյան, ստրածնիկ Վասիլի կինը, Պաշխտի Ավանեսը, կոնսիստորիայի Ղալամդանը, Վաղարշակ բեյի ծառան, Փայտոնչի Իբիշը, Չաբմաչի Վեսկանը կես ոչխար է տարել, որովհետև երեկոյան նշանդրեց կա: Ահա հայոց ուսումնարանի վարժապետ պարոն Արշակը ևս երկու գրվանքա միս առավ և ոսկորից բռնած տուն է տանում՝ հետևից մի պառավ շուն, որը ճանաչում է մսավաճառ Պետրուսի բոլոր հաճախորդներին, որոնց մեջ ամենաբարին պարոն Արշակն է:

Հայոց ուսումնարանի վարժապետ Արշակն էլ միս առավ, և հանկարծ մսավաճառի խանութի առաջ ծանր-ծանր քայլերով երևաց ինքը՝ ներսես բեյը, ոչ այն ներսես բեյը, որ կոչվում է Խուրդա կամ Կարճիկ ներսես բեյ և ծառայում է դատարանում և ոչ էլ այն Պրիստավի կոչված ներսես բեյը, այլ Հաստ ներսես բեյը՝ գավառային վարչության սյունը:

— Պետրուս,— կանչում է ներսես բեյը և կես բուրբակ այլևս ոչինչ չի ասում:

Եվ կարիք չկար, որ ասեր: Նրա փոխարեն ասում էին նրա ուռած և արյունով լցված աչքերը, հաստ շրթուները, որ կարծես շորորդ կզակն էր, ձյունափայլ բրյուկը և նույնպես ձյունափայլ տյուժուրկան՝ խնամքով արգուկած և կոճկած մինչև վերջին կոճակը: Հանդարտ ծիծում էր նրա մարմինը, ինչպես ահագին ժայռը, որ ցցվել է ծովի մեջ և շողորում է արևից: Ներսես բեյը ոչինչ չէր ասում և չէր նկատում այն մանր շինովներին, որոնք նրա կողքից ահով են անցնում: Գարադաբողի Մուխանը, նա, որ գրպանները սփրում էր լցնել Օրդուբադի շիրով, արձանացել է և այդպես մի շաբաթ արձանացած կմնա, եթե ներսես բեյը հրամայի: Բայց ներսես բեյը ոչ մանր շինովներին է նկատում, ոչ տեսնում է Մուխանի արձանը, այլ խոր հազում է՝ խոռալով և շատ լսոր,— ներսես բեյը դեռ հազում է «հարուստի հազով», իսկ մսավաճառ

Պետրուսը բարձրացրել է սպիտակ քաթանը, որի հետևում, մյուս գնորդներին աչքից հեռու, կախված էին երկու ոչխար՝ ոսկեգույն դմակներով:

— Գումացու ուղարկի,— և ներսես բեյը երեսը շրջում է դեպի դավաճարխանայի շենքը՝ շուկայի դիմաց: Ներսես բեյը զնաց և գավառային վարչության առաջ խոնված ժողովուրդը պատկառանքով դեռ նոր է նրան ճանաչարհ տվել, այնինչ գումացուն արդեն նրա տանն է և զարադաբողի Մուխանը քրտինքը օրբելով խանութի՝ տիկին Վարսենիկի առաջ գովում է միսը:

Մսավաճառ Պետրուսը Հաստ ներսես բեյից ետ դրամ չէր առնում, ինչպես շուկայի պահակ Կետանից, որ ոչխարի մի գլխի և ութ ոտքի դիմաց ցերեկը պիտի շրեր Պետրուսի այգին: Իսկ գումայի, կոլոլակի, բողբաջի, յախնիի մացուցի դիմաց Հաստ ներսես բեյը տարվա սկզբին, երբ չուր տակտարականները պատենտ էին առնում, հարկային տեսչին ի միջի աղոց ասում էր.

— Ի՞նչ առևտրական է այդ Պետրուսը որ... խեղճ աղքատի մեկն է, սփրեչի նիկիֆոր Վասիլիչ, և դուք ինքներդ եք իմանում...

Ահա երևաց ինքը՝ քաղաքի հայրը, քաղաքագլուխ Մատթևոս բեյը, նրա հետևից կիսահամր-կիսախուլ Գիրին, որ քաղաքային այգու պահակն է, քաղաքային ինքնավարության (դումա) ծառան և միաժամանակ տիկին Օլինկայի սպասավորը՝ ծանրություններ տեղափոխելու, գորգերը լվալու. Շոր աղբյուրից կժերով ջուր բերելու շաբաթ օրերը, երբ տիկին Օլինկան փրեկ երեք լվացարարուհու կարգադրիչ, սկսում էր լվացքը... Այն ի՞նչ էր կատարվում քեզ հետ, իմ հայրենի քաղաք: Այդ օրերին չէր կարելի անցնել ոչ միայն նրանց տան առաջով, այլ նույնիսկ հարևան փողոցով չէր կարելի անցնել... Անհամար բարձերից միլիոն բմբուլ թրոշում էր քաղաքի և տների վրա, ինչպես ուռնու սերմերը մայիսին: Բըմբուլը թռչելով հասնում էր մինչև դատարանի շենքը և նստում էր խեղճ գրագրի սենյակի վրա: Եվ ամբողջ քաղաքը գիտեր, որ նրանց տանը լվացք կա: Իսկ երբ բմբուլի ամպերն անցնում էին՝ բակը, ցանկապատը, նույնիսկ փողոցի պատերը սպիտակում էին փռած լվացքից:

Մինչդեռ մենք զբաղվեցինք տիկին Օլինկայի լվացքով, արդեն շուկա մտավ քաղաքագլուխը և նրա անբաժան թիկնապահ Կիրին: Մատթևոս բեյը մոտենալով մսավաճառների խանութին, միայն վերահասու է նրանց մաքրության: Նա գերադասում է մրգավաճառների խանութները, որոնց տները, նրա անձնական թուլլովությանը, գրավել են նաև հրագորակի և մայթի մասը՝ ձմերուկի և սեխի դեղերով և խաղողի կողովներով: Խանութի ճակատից մինչև հրապարակը, որտեղ ձմերուկներն

են,— փուլած է հաստ կտավ, մրգերն արևից պաշտպանելու համար: Այդ անուշահոտ բուրգերի և մրգավաճառի խանութների միջև ընկնում է մի նեղ անցք, այնքան նեղ, որ երկու մարդ կողք-կողքի դժվար են անցնում: Բայց հենց այդ նեղ անցքն էլ քաղաքագլխի սիրած վայրն է ամբողջ քաղաքում:

Մատթևոս բեյը, նրա հետևից Կիրին շտապում էին ոչ թե մասվաճառների մոտ, այլ անմահության այդ դրախտը: Առանց զմայանքի չի կարելի նկարագրել այն տեսարանը, երբ Բիժո Ակյալը, նշանավոր մրգավաճառը, Մատթևոս բեյի թիկն էր մոտեցնում դեղին կանաչ սեխը, որի վրա դեռ մնում էր ցողի մի քանի կաթիլ: Եվ Մատթևոս բեյը, որ այնչեղ էր, երեխայի նման հիանում էր, Բիժո Ակյալի ձեռքից սեխն առնում և հոտոտում էր: Ապա այդ սեխը խանութպանն առանձնացնում ու բերում էր ձմերուկ, ի՛նչ ձմերուկ... Իսկ Մատթևոս բեյն արդեն մտել է հարևան խանութը, որովհետև նրա աչքին են ընկել մուգ-մանիշակագույն սալորները: Եվ նա մանրամասն հարցնում է, թե ո՞ւմ այգուցն է, արդյոք սառը մառանում կդիմանա՞ մինչև նոյեմբերի 4-ը (տիկին Օլինկայի ծննդյան օրը), կարելի՞ է մուրաբա եփել այդ սալորից, այդ Ֆեհնոմենալ շլոբից, ինչպես ասում էր Մատթևոս բեյը:

Օրվա այն ժամն էր, որին ժողովուրդը կոչում էր դատավորի թեյի վախտ, այսինքն ժամը 11-ը անց էր և դատավորները դեռ նոր էին գնում դատարան, որի առաջ խոնված սպասում էր հազար մարդ Դատավորի թեյի վախտն էր, բայց Մատթևոս բեյը դեռ չէր հասել մրգավաճառի վերջին խանութին: Հակառակի նման այդ խանութները շատ էին, բոլորը մի շարքի էին և կարծես դիտմամբ հավաքվել էին հենց դումայի շենքի տակ, քաղաքագլխի ճանապարհի վրա: Քաղաքում՝ դումայի մի քանի անդամներ, որոնք պրոգրեսիստ էին, բամբասում էին Մատթևոս բեյի այդ պակաս կողմը և պատրաստվում էին նոր ընտրություններին նրան սև քվե տալ: Բայց այդ միայն բամբասանք էր, իսկ Գորիսում ում չէին բամբասում, մինչև անգամ նավթավաճառ Գեորգուս էին բամբասում, թե իբրև նավթի պահեստը նա կառուցել է ջրաղացների առվի մոտ, որպեսզի... Ջարմանայի քաղաք էր Գորիսը:

7

Առավոտից լսվող առանձին ձայները՝ մի անհանգիստ շան հայոց, քաղաք մտնող նախիրի բառաչը, քարավանների ղողանջը, ներսես բեյի հազը, խանութների բացվող դռների աղմուկը, վերջապես այն ձայները:

որ հետզհետե բարձրանում են դարբնոցներից և թիթիղագործների արհեստանոցներից,— այդ ամենը, դեռևս անախորժ աղմուկ են, նման այն աղմուկին, որ արձակում է նվազախումբը վարագույրից առաջ: Բայց անհանգիստը բարձրացնում է ձողիկը և նվազախումբը ներդաշնակ հնչեցնում է բարդ սիմֆոնիան:

Այդպես էլ ժամը 11-ից անց, երբ քաղաքագլուխն ստորագրում էր սուաշին թուղթը, քաղաքի անկարգ ձայներն իրար հարմարելով սկսում էին ներդաշնակ հնչել, գոյացնելով մի քաղցրալուր նվագ: Պատահում էր, որ մի ձայն դուրս էր թռչում այդ աղմուկից, ինչպես կեղծ հնչյունը նվագախմբում: Պատահում էր, որ մի հովիվ սարբից իջնող մարդկանց և անատնների հեղեղի մեջ կորցնում էր իր շանը և հենց փողոցում կանչում էր. «Ալարաշ, հե՛յ, Ալարաշ...»: Այդ ձայնին պատշգամբ էր դուրս գալիս քաղաքագլուխը. որպեսզի խլացնի այդ աններդաշնակ ձայնը և մինչև անգամ զայրանում էր, ինչպես զգայուն դիրիժորը, բայց նույն մարդկային ժխորն ինչպես հեղեղ խլացնում էր այդ անպատեհ և անհարիր կանչը: Եվ նույնիսկ եթե այդ ժամանակ բոլորովին մոտիկ մի աքլոր շողից կատաղած կանչեր, եթե երկու շարաճճի գիմնագիստներ, անցնելով դալլաք Բոզու վարսավիրանոցի կողքով, կանչին՝ «դալլաք Բոզի, գլուխ խոզի» և ինքը՝ հին շուկայի պատվելի վարսավիրն ընկներ նրանց հետևից և բարձրաձայն ասեր. «Այ, ես ձեր խրատողի...»,— միևնույնն է, ոչինչ այլևս չէր խանգարի այն ռիթմը, որով ընթանում էր քաղաքի աղմուկը:

Նա շուկա էր մտել յոթ ճանապարհով, նա հոսում էր դավթարխանալի, քաղաքային ինքնավարության, դատարանի, ոստիկանական վարչության, հարկային տեսչի, պետական գանձարանի և սուբահանոցի՝ նախանական կալանատան յոթ դարբաններից, որոնք բացվում էին շուկայի վրա: Ինչպես բարակ առու, այդ աղմուկը գալիս էր ճոթի մաղազանների խորունկ խորքերից, որտեղ լեռնցիների խրոխտ ձայները խլանում էին... Եվ ինչքան արևը բարձրանար, այնքան զորեղանում էր նվագը և արևի թեթևություն հետ, երբ դեպի լեռներն էին վերադառնում գյուղացիները և բոլորները... այդ սիմֆոնիան մոտենում էր իր վախճանին:

Այդ պահին քաղաքի ամենահետաքրքիր անկյունները ոչ մանուֆակուրայի խանութներն էին, ոչ պետական հիմնարկները և ոչ էլ նույնիսկ Պատժը: Դատարանում դատավորներն առանձնացել էին խորհրդակցության և մի ամբողջ ժամ նրանք չէին կարողանում քրեական դատավարության կոճղ Օրինացի մեջ գտնել այն հոգվածը, որով կարելի է հարևանի գոմշի պուր թրով կտրող հանցագործին պատժել և արդեն երգվյալ

հավատարմատար Տեոկոստ Իվանիչն առաջարկում էր գործն ուղարկել նոր քննություն, որովհետև շատ մ ու թ էին հանցագործության հանդամանքները... Գավառային ինքնավարության մեջ այն ժամն էր, երբ Համանքները... Գավառային ինքնավարության մեջ այն ժամն էր, երբ Համանքները... Գավառային ինքնավարության մեջ այն ժամն էր, երբ Համանքները... Գավառային ինքնավարության մեջ այն ժամն էր, երբ Համանքները...

Նույնիսկ փողոցները խաղաղ էին: Ծառի շվաքում կարելի էր հանդիպել մի քանի գյուղացիների, որոնք կամ սեխ էին ուտում, կամ փռել էին գնած ապրանքը և նորից նոր հաշվում էին՝ անընդհատ կրկնելով. «Հո չխաբե՞ց մեզ էն շան որդին...»: Բայց հետաքրքիր չեն սեխ ուտող գյուղացիները և կամ նրանք, որոնք իրար երեսի նայելով դժվարանում են գտնել, թե գյազը 27 կոպեկով մահուղվարին ինչքա՞ն կանի, եթե իրենք գնել են 5 գյազ և մի շարեք:

Քաղաքում այդ պահին ամենահետաքրքիր տեսարանը խոհանոցներումն էր և ոչ թե սենյակներում, որտեղ նույնիսկ Հերսելյան «Քեք կտորած հրեշտակը» շրջում էր տնային զգեստով և շուներ այն հմալքը, որ ուներ, երբ հագնում էր խշխշան շորերը և պահում էր երկնագույն մետաքս հովանոցը:

Ամենահետաքրքիրը խոհանոցներում էր... Ներս մտնենք Հաստ Ներսես բեյի տան դարբասով: Արդեն դարբասի մոտ դգացվում է այն բույրը, որով անսխալ կարելի է որոշել, թե ի՞նչ վիճակումն է դուման: Արդյոք ա՞յն, երբ փակ կոկոնի նման հազիվ էր երևում մի կտոր վարդագույն միս, երբ հետզհետե փքվելով իր մեջ է կանում շոգին և շոր մրգերի հյութը և խաղողի տերեւների արանքներում բրնձի հատիկները խաղում են... Կաթսան փրփրում է, շոգին երեմնքարծրացնում է կափարիչը պուֆ անելով և կափարիչը զնգալով նրատում է: Կաթսայի այդ շնչառությունը հիշեցնում է Ներսես բեյի հետգետությունը, երբ հաստ շրթունքները ուռցնելով քնի մեջ նա պուֆ էր անում, արձակելով հոտավետ շունչ:

Մեծ կաթսայի կողքին շար են ընկել բազմաթիվ ջամեր, բադյաններ, կոթավորներ, պղնձե պնակներ, որոնց պարունակությունը և կետ նպատակը նույն դրժման է: Մեկի մեջ տաքանում է սերկելիլի և նուսն շոգ, որ պիտի եռա միայն մի անգամ, ապա ժաղկավոր կոթամանի մեջ աղոր խիճը պիտի իջեցնի մառանը, սառեցնելու: Նա պիտի երևա այն բողբոջի, երբ մեծ ափսեի մեջ խոհանոցից դուրս կգա դուման, և Ներսես բեյը նրա

գլխին կհանգցնի նուսն և սերկելիլի սառած ջրով: Նրա կողքին տաքանում է հիլի և դարչնի լուծույթը, ավելի հեռու շորանում է այն կարմիր հացը, որ Ներսես բեյը մատներով պիտի փշրի դումայի ջրալի հյութի մեջ: Խոհանոցում այլ պնակների մեջ կանաչի է՝ քաղցր սոխ, կինձ, կոտեմ, առանձին դարսված են սպիտակ բողկի պահունակները, — ոչ այն բողկի, որ հասնում է մի ամսում, այլ այն, որ մի տարում հագիվ է հասնում, բայց երեք տարի համը պահում է:

Խոհանոցում Ներսես բեյի կինը ձեռքի աղացով սուրճ է մանրում և գանգատվում է, որ ֆրանսիական ապրանքների մագազինից այլևս հարկավոր չէ սուրճ անել, այլ հարկավոր է անել Եփրատ Երեմից, որի սուրճը կյուրմիլլա կովման շատ է հավանել: Նա գանգատվում է, բայց ակնաչը կաթսայի կողմն է. յուրաքանչյուր քլթոց, կափարիչի յուրաքանչյուր զրնգոց նրա համար նշաններ են դումայի ձևավորման: Տանտիկինը ձեռքի փոքրիկ շերտիով շափ է տալիս այդ բարդ շարժմանը: Ինչպես նավավար նա վարում է ճաշի նավը մինչև վերջին նավահանգիստը, մինչև...

Բայց այդպես էր բախտը Գորիսի շատ առաքինի և անվանի տիկիներին, նրանց այդ էր վիճակված՝ բմբուլի բարձրը փքված պահել, անկողինը փափուկ, ճաշն անթերի և առատ, տունը հարուստ, — իմանալ սուրճ եփել և հյուրերին զբաղեցնել մինչև սուրճը և ապա լոտո կամ թուղթ խաղալ: Այդ էր նրանց վիճակը և նրանցից շատերը նույնիսկ ամուսնու պաշտոնը շփոթեին, այլ միայն գիտեին, որ նա դավթարխան այլ մեծ երից է և նրանից բարձր միայն երկու բնկա՝ այսինչը և այնինչը, իսկ մնացած բոլոր բեյերը նրանից քաշ են, նրանց կանաչ՝ իրենից քաշ են, նրանց երեխաներն ի՞նչ են, որ խաղան իր երեխաների հետ: Նրանք կարող են ունենալ գիլան առի մուրաբա, իսկ իրենք՝ սերկելիլի, նրանց սերվիզն արծաթից է, իրենցը՝ արծաթ ոսկեյրած, — մի խոսքով մի աստիճան պիտի բարձր լինեին այն բեյերից, որոնցից աստիճանով բարձր էր տան տերը:

Այդպես էին այդ կանաչ՝ բազմաթիվ երեխաների մայր, խոհանոցի տնօրեն, հյուրընկալուհի և զեռես ինչքան պարտականություններ ունեին նրանք... Ահա դիմաց դիմաց պատուհանից խոսում են երկու այդպիսի տանտիրուհի.

— Վարսենիկ, էդ ինչ ա՞նձեր լույսերը ամբողջ գիշեր վառվում էին... Հյուրերդ ուզ գնացին հա՞...

— Ի՞նչ ուզ, սհաթի տասնհրկուսին շարեք էր պակաս, ոք գնացին... Աղջի տաք էր, տաք... Սիրտս ուզում էր ճաքի:

— է, տաք ասում ես պրծնում... Գիշերը աչքերս չեմ փակել: Դու դեռ լավ ես: Ուզում եմ գնամ Շուշի. ասում են պրոֆեսոր Բահաթուրովը եկել է... Ժ ե ն ս կ ի յ հիվանդությունից նա լավ է...

— Բախտավոր ես... Ես էլ կգայի, եթե երեխան չիներ...

Պատուհանները փակում են և երկու սիրելի հարևանուհիները իրար հասցեի շնչում են.

— Հողեմ գլուխդ, թե քո մարդը քեզ Շուշի կուղարկի... Դու երեխան մահանա բռնի:

— Էդ դեղնած կերպարանքիդ Բահաթուրովն էր պակաս...

Եվ միայն կարելի է զարմանալ, թե որքան խելոք էին այդ կանայք և ինչ եռանդի տեր էին, որ այդքան զբաղմունքից հետո դեռևս ժամանակ էին գտնում կտրելու փողոցը, որպեսզի փորձեն հարևանի մուրաբայի համը, այն մուրաբայի, որի եփելու կերպը քաղաքն երից բերել է վառվառա Մինանևան, տիկին Վառնիկան, Վառնի-բաջին, ինչպես նրան կանչում էր լվացարարուհի Մինան: Նրանք ժամանակ էին գտնում վերջին մոդայի պելերին այն ձև և ընդօրինակելու, նույնիսկ մտնում էին կանացի դերձակ Մացակի տունը, իբրև թե պատահամա՞ք, բայց նպատակ ունենալով տեսնել այն կոֆտան, որ պատվիրել է տիկին Օլիկան և որի մասին այնքան շատ էին խոսում կալազարանց տանը: Եվ ինչ մասին կարծիք չէին հայտնում և ինչ կարծիքներ չէին հայտնում նրանք...

— Ստուգենտ Ռուբենը շատ կսխալվի, եթե Հերսելյային առնի: Նրա մեջն առողջ չի...

— Ամբրումովի տղան չի բարիշում խորթ մոր հետ: Ասում են տեր Զավենը գնացել է հաշտեցնի...

— Սահակ Սերգեյի մեծ աղջիկը լիստված է... Երեկ գիշեր նրան բուլվարում տեսել են ուս օֆիցերի հետ...

— Է՛, ժամանակս փոխվել է, զարգացել են, լուսավորվել են... Մեզնից ծնվածն էլ մեզ չի հավանում...

— Տեղն է, Սահակ Սերգեյի կնոջը տեղն է... Ասում էին աղջկազ հեռու մի ուղարկի, կլկսովի, թե թող ուսումը տեղ տա, բժիշկ պիտի գտնա: Դե հիմա թող բժիշկ դառնա... Կդառնա՞, ինչպես չէ:

Այդպիսի կարծիքներ հայտնում էր նաև տիկին Վարսենիկը, ոչ միայն պատուհանից զրուցելով հարևանուհու հետ կամ այդ նպատակով հյուր գնալով մի տուն, որտեղ իրար էին փոխանակում լուրերը, լուր էին փոխառնում, ինչպես փոխ էին առնում մի աման նավթ, որովհետև ցերեկով մոռացել էին գնել,— առժամանակով առնում էին լուրը, ինչպես մի անգամի համար հարևանից վերցնում էին փլավ քամելու պղնձե մազը: Տի-

կին Վարսենիկն այդ բանով զբաղվում էր նույնիսկ խոհանոցում, դումայի ձևավորման ամենապատասխանատու ընկերին, երբ կրակի հզորացումը կամ մի ավելորդ համտես կարող էր փռացնել ամեն ինչ, ինչպես եթե նավարարը՝ աչքը դեպի ծովային ճայերը, նավը հանկարծ զարկեր ստորջրյա քարի...

Բայց տիկին Վարսենիկի դիրքն էլ հենց այն էր, որ նա կարող էր ֆրանսիական ապրանքների մագազինի սուրճը վատաբանել և նույն ժամին կրակից հանել մի փայտ, որի շերմությունից նուան և սերկևիլի չորը կսեանար: Տիկին Վարսենիկն իր աղախինին պատմում էր.

— Ասում են երեք օր առաջ Շենում մի կին գնացել է բանջարի, հասել է մինչև Մատուռի ձորը... Քանի միտս է, գինու փարչը դիր առվի մեջ, մի քանի էլ դամբուլ քաղի էն ծայրի ծառից,— իսկ ինքը բաց է տնում կաթսայի կափարիչը և գոլորշուց, բույրից, ավելի ճիշտ եռացող ջրից հասկանում է, թե ինչ է կատարվում կաթսայի խորքում:

— Գալիս է, պապան գալիս է, հետն էլ մի մարդ կա,— ճշարտվ ներս է վազում և լիճխ Վարսենիկի փոքրիկ աղջուկը, որին մայրը պահակ էր դրել փողոցի անկյունում:

— Գալիս է, պապան գալիս է և հետն էլ նազար դյադյան է,— ճշարտվ ներս է վազում տիկին Վարսենիկի փոքր տղան, որ ավելի հեռվում էր դիրք պահել:

— Գալի՛ս են,— ճշում են երեխաները, ինչպես նավաստիները կկանչեն.

— Ցամաքը երևաց, ցամաքը...

Այստեղ տիկին Վարսենիկի ձիրքը հասնում է կատարելության, մինչև տանտիկինության արվեստի բարձունքները:

— Կաթսան մի կողմ դիր,— և հյուրի համար ավելացնում է ճիշտ ախպիսի գավաթ, ինչպիսին դրել է ամուսնու համար:

— Բողկը ջրից հանի,— և շտապում է հինգ ընկերացիներին զգեստը փոխել, հարգարել հրեն, փոքր տղայի գոտին շտկել, աղջկանը հիշեցնել, որ նազար դյադյային հարկավոր է բարևել և այդ տագնապի մեջ մոռանում է բուլ մատի մուրը, որ կնկատի երեկոյան, երբ շարունակի պատմել այն կնոջ մասին, որ երեք օր առաջ գնացել էր Մատուռի ձորը...

Ներսես բեյի և նրա հյուրի՝ նազար բեյի ներս մտնելուց հետո ճաշն իսկույն չի սկսվում, թեև ներսես բեյը դեռևս ուսպորտ գրելուց էր քաղց դացել. ավելի ճիշտ նրա քթովն էր ընկել դումայի հոտը, ինչպես տիկին Օլիկայի բարձրից մի բմբուլ հասել էր մինչև դատարան և նստել խեղճ դատարի ունքին: Ներսես բեյը քաղցած էր, բայց կային անխուսափելի ծեսեր, ինչպես բողկը անխուսափելի էր դումայից: Այդ ծեսերից վեհա-

գույնը կատարւում էր այգում, երբ ներսես բնյն իր սեփական ձեռքով վարունգի թփերի մեջ փնտրում էր երկու-երեք փոքր վարունգ, ծագիկը գեռ պոչին, փոքրիկ փշեքով, ինչպես երեխայի ազվամազը, այն նոր վարունգը, որ բերանի մեջ հավում է՝ և որին ներսես բեյը մեծարում էր տանյակ փաղաքշական բառերով՝ պիկուլիա, կուլուլիա, պիծի-միծի Բաղդասար, Կլապիգոն Իվանիչ, բիբուլի և այլ այսպիսի բառերով, որոնցից մի քանիսը յուր ժամանակ ուզզված էին տիկին վարսենիկին: Բայց ահա նա գտավ այն վարունգները, որոնց ներսես բեյի ասելով, աստված Քարահունջի օղու հետ միաժամանակ աշխարհ է ուղարկել, որպեսզի մարդկային հոգին չձանձրանա...

Նվ ճաշը սկսվում էր...

Սկսվում էր այն ճաշը, որից հետո վարսենիկի աղախինը կանգնում էր լվացարարուհի Մինային և երկուսով միասին առվի շրում մոխրով լվանում էին պնակները, կաթսաները, մեծ ու փոքր ափսեները... Նվ ճիւղն արևը մայր մտնեք, նրանք լվանում էին: Իսկ ներսը, հով սենյակում, դիվանների մեջ ընկղմած քնել էին ներսես բեյը և Նազար բեյը, տիկին վարսենիկը գնացել էր իմանա, թե արդյոք չե՞ն այրվել տիկին վարսենիկայի գաթաները, մեծ տղան պապայից ծածուկ ընկուզենու տակ ծխում էր, փոքրը փետում էր թիթեռի թևերը, մեծ աղջիկը պատուհանից քիչ դիտի ինչու նայում էր դուրս, իսկ փոքրն սպառնում էր պապային ասել, որ ժորժիկը ծխել է և մամային ասել, որ մեծ քույրը դարձյալ պատուհանից չէր հեռանում:

Փողոցում լուսնուն էր: Լսվում էր միայն ամանների զնգզնգոցը և ներսես բեյի միալար պուֆերը, կարծես դեռևս կաթսայի մեջ գլումն ետում էր:

8

Ամբողջ քաղաքում բեյերը քնել են հետկեսօրյա քնով և քանի նրանք քնած են, — հարկավոր է պտույտ անել քաղաքի փողոցներում, որովհետև թիւն էլ քնած են: Իսկ Գորիս քաղաքի շները կատվի ձագեր չէին, ինչպես Լյուդմիլա կովնայի շնիկը, որի մասին խոշա-Մակիլը մի անգամ ասել էր.

— Փառքը շատ, աստված... Մա էլ կասի, որ շուն է և շան ազգից է

Գորիսում հայտնի շներ կային, ինչպես օրինակ Միմոն բեյի Թորոջ, որից ամբողջ թաղը դողում էր և նույնիսկ մուրացկանները սիրտ չէին տնում նրանց բակը մտնել: Նրանք շներ չէին, այլ շղթայած առյուծներ

և վագրեր, ինչպես եանլար բեյի Ջինգառ շունը, որ տիրոջ հետևից գնում էր գյուղերը հավ հավաքելու, այսինքն աչքին ընկած հավը կուլ էր տալիս և մնում էր անպատիժ, կարծես թա գա վորական խարջ հավաքող էր: Հապա պրիստավ Աղալոյի Զանգի-Ջրանգին, նրանց փողոցով անց ու դարձր դադարում էր, երբ լուր էր տարածվում, որ պրիստավ Աղալոն էլ մեղք է եկել շներին և նրանց արձակել է: Վերջապես փաստ է, որ 1913 թվի դեկտեմբերի 4-ին Գորիսի քաղաքային դուման քննութայն առավ շների հարցը, որովհետև Միմոն բեյի Թորոջը կծել է Փոշտի Անտոնի թիթը պարտականութայն կատարման, այսինքն նամակատարութայն ժամին: Այդ առթիվ դումայում մեծ կոիվ ծագեց պրոպրիետարների և հետադիմականների միջև և միայն արհեստավորութայն դեպուտատ Չաքմաչի Վեսկանը, որ ոչ առաջադիմական էր և ոչ հետադիմական, այլ պազվալական էր (նա այդպես էր ասել Բարի աջողումի գինու նկուղում), — և միայն Չաքմաչի Վեսկանի առաջարկով դուման որոշեց դեղամահ անել քաղաքի անտիրական շներին (պարոն Արշակի ասելով այդ էլ ունեի իր բուն արմատը. շներից մեկը ցերեկով գողացել էր դուրս, տակառի մեջ թրջոց դրած պագոշը):

Այդպիսի անվանի շներ կային Գորիսում, որոնք որպես որդի ապրելով միևնույն տանը, վարժվել էին իրենց տերերի բնավորութայն, իսկ մի քանիսն այնքան էին երես առել, որ իրենց վարքն ու բնավորությունը նմանեցնում էին տերերին: Օրինակ, Նազար բեյի շունը, երբ գյուղացին փափախով մտներ նրանց բակը, աղվեսահաշ էր տալիս՝ արագ-արագ և սուր ձայնով և ձայնը կտրում էր, երբ գյուղացին փափախը հանում էր: Տեք զի բազումի Չամբարը ոռնում էր, երբ լսում էր ոռուաց եկեղեցու զանգերի ձայնը: Զիլֆուլար բեյը (հայ) մի շուն ուներ, որ երբեք չէր հաչի, եթե նույնիսկ կես գիշերին գյուղացիները թափվեին նրանց բակը: Բայց եթե նրանք գային առանց ոչխարի, առանց պանրի և յուղի, շունը թիչ էր մնում շղթան կտրեր, կարծես նա էր կաշառք հավաքում:

Գորիսում այնպիսի շներ կային, որոնք լափում էին դումայի մնացորդը և տիրոջ նման հետկեսօրյա քնով քնում էին և նույնիսկ քնի մեջ պուֆ էին անում, ինչպես ներսես բեյի շունը: Ծները զարթնում էին, երբ հնչեր տիրոջ ձայնը: Այնուհետև նրանք պահակ էին մինչև լուսաբաց: Տերը կարող էր կանաչ սեղանի շուրջը նստել մինչև վերջին ուրվին, կարող էր բիլիարդ խաղալ, կարող էր հարբած տուն գալ, — ամեն ինչ առաճուկ կարող էր անել, քանի շունը կար... Մի խոսքով եթե դատական հին գործերում ձեզ պատահի հանդիպել այսպիսի արտահայտութայն՝ «նա

ինձ համար շուն չէր, այլ բերդ էր»,—իմացեք, որ այդպես ասողը գործ-սեցի էր:

Քանի շները քնած են, հարկավոր է պտույտ անել քաղաքի փողոց-ներում և մի քանի տուն մտնել: Բայց հարկավոր չի մտնել Հաստ Ներսես բնյի հարևան տունը, որտեղ ապրում է եւրոպա կամ Կարճիկ Ներսես բնյը, որովհետև այստեղ էլ ամեն ինչ նույնն է՝ աննշան տարբերություն: Կարճիկ Ներսես բնյը դումա չի կերել, այլ կոլուակ, նա մեջքի վրա չի քնած, այլ կողքի և նրա շան երկու աչքերը կապույտ են, իսկ Հաստ Ներսես բնյի շան մի աչքը երկնագույն է, մյուսը՝ կապույտ: Մնացածը նույնն է, նույն այգին, նույն շորս երեխան, որից մեծ աղջիկը պատուհանի առաջ սպասում է, թե երբ կանցնի հարևանի գիմնազիստ տղան,—այն բակից: Եւ մի աղջիկ տեսնում է Ժորժիկի ծխախոտի ծուխը:

Հարկավոր չի ներս մտնել այս տունը նաև այն պատճառով, որ երկու հարևաններ իրար թշնամի են և դառն է պատմել նրանց թշնամու-թյունը, որովհետև կարող են կարծել, թե երկու Ներսես բնյերը շնյին մարդիկ էին, եթե նրանց երկարամյա գծտույթյան առիթը եղել էին նրանց շները, ավելի ճիշտ՝ Հաստ Ներսես բնյի շունը, որ մի գիշեր կապը կտրել և թռել էր հարևանի այգին և այնտեղ հարևանի շան հետ շնություն էր արել և այդ ոչ թե այգու մութ խորքում, այլ նոր մարգերի մեջ, այնտեղ, ուր Կարճիկ Ներսես բնյի կինը ցանել էր Երուսաղեմի լոբի, ռեհան, կինձ և գլխավորն է՝ կատաղած վարունգ, այն վարունգը, որի սերմերը Քուժախից ուղարկել էր հարկային տեսչության ավագ ռեֆոր իշխան Ալլախիարին, երբ պաշտոնական գործով եկել էր Գորիս և յոթ օր հյուր էր եղել Կարճիկ Ներսես բնյին: Իշխանը դեռևս Գորիսումն էր, երբ ամբողջ քաղաքը խոսում էր Քուժախի կատաղած վարունգի մասին, որը բերանում չի հալվում, ինչպես Հաստ Ներսես բնյի սիրած պիծի-միծի Բաղդասարը, այլ հասնելու մոտ պայթում է ահագին աղմուկով, ինչպես նկարագրել էր իշխանը,—պայթում է ինչպես ումբը և ամբողջ քաղաքն անհամբեր սպասում էր այն օրվան, երբ ինչպես ումբ պիտի պայթեր առաջին կատաղած վարունգը, որի սերմից Կարճիկ Ներսես բնյի կինը հինգ հատիկ էլ չէր տվել իր հարևանուհուն և մինչև անգամ կալազարանց տանը այդ առթիվ ասել էր.

— Անցյալ տարի կոֆեն կրակի վրա մի գցելու ցիկ որիս ուղեցի, թե՛ ես էլ հյուր ունեմ, ինձ հերիք չի... Հապա ես էդ կմոռանամ...

Բայց գծտույթյան առիթն այդ չէր, այլ շների մոլուկությունը, որի ընթացքում կատաղած վարունգի ծիլերը արմատախիլ տրորվել էին: Կարճիկ Ներսես բնյի կինն այդ համատեղ էր նախանձից տրաքված

հարևանուհու գործը և յոթ օր երկու հարևան պարտեզներից լավում էին մերթ հանդարտվող և մերթ բորբոքվող կովի աղմուկ, անծծք և անվայել խոսքեր... Յոթ օր, յոթ գիշեր երկու տունը նման էին երկու բերդի, որտեղից լավում էին ումբակոծության ձայներ: Հաստ Ներսես բնյը նիհարեց, որովհետև նրա կինն այդ օրերին ոչ դումա էր եփում, ոչ կոլուակ, այլ եփում էր այնպիսի խառնափնթոր կերակուր, որ կվայելեր խարշ և նի պահող Թևատորոսին: Ներսես բնյը միայն սովից խեղճացավ և խեղճանալով հանձնատու եղավ, որ Կարճիկ Ներսես բնյը մի ոչինչ մարդ է, գնչու է և նույնիսկ ասաց, որ հարկային տեսուչ Նիկիֆոր Վասիլիչը նրանից շատ է անգոհ...

Իսկ հարևան բերդում ումբակոծությունը դադարեց միայն այն ժամանակ, երբ Կարճիկ Ներսես բնյը խոստովանեց, թե անցյալ տարի իշխան Ալլախիարին գիշերվա կեսին գնաց պարտեզ և որովհետև շատ ուշացավ, ինքը ևս գնաց պարտեզ և ջրածակի մոտ, այսինքն այնտեղ, ուր առուն պատի միջով մտնում է հարևանի պարտեզը,—այդտեղ ինքը տեսավ իշխանին, և տիկին Վարսենիկը նմանապես իրենց պարտեզումն էր... Կարճիկ Ներսես բնյն ուրիշ ոչինչ չխոստովանեց իր կնոջը, որովհետև նախ այդ նկատելուց հետո նա անմիջապես տուն էր վերադարձել և ապա նա շկամեցավ անառակ պատմությունով վարակել իր կնոջը: Նա միայն այդ խոստովանեց, որովհետև կինն իսկույն դեմքը ձեռքերով ծածկեց, ինչպես ամոթխած կին, որ այդ ձևով պաշտպանում է իր կուսական լսողությունը:

Գրանից հետո երկու բերդերի միջև սկսվեց խրամատային խուլ կռիվ և երբ տիկին Վարսենիկը մի աղջիկ ծնեց, թվաց թե նրա կողմը հաղթեց և հույս կար, որ կնունքի առթիվ կարող էր վերջանալ նրանց կռիվը, բայց երկու շարաթ հետո Կարճիկ Ներսես բնյի կինը ևս մի աղջիկ ունեցավ և նրանք այդպես էլ չհաշտվեցին:

Ի պատիվ երկու Ներսես բնյերի պետք է ասել, որ անձնատուր լինելով իրենց կանանց, նրանք այնքան հեռու չգնացին և իրար ոչ մի անվայել խոսք չասացին: Նրանք նույնիսկ իրար հետ խոսում էին, երբ հարկային տեսչության տեղեկագիրը Կարճիկ Ներսես բնյը ռապորտով ուղարկում էր իր հարևանին: Մինչև անգամ լինովելիների կլուբում, երբ բազարա էին խաղացել, Հաստ Ներսես բնյը հարևանին շատ ազնիվ և քաղաքավարի ասել էր.

— Թուղթը ձերն է, հավաքեցեք...

Ահա այդ շնյին թշնամության պատճառով հարկավոր չի մտնել Կարճիկ Ներսես բնյի տունը: Նաև կարող ենք խառնաբերել Լուսիկին, Կարճիկ

Ավետիսի ահռելի բուժի դրոշմը և ապա դեռ մինչև այժմ էլ ոմանք գրեթեցիներին հիշում են, թե երբ Հայաստանցի Ավետիսին աղջիկ էր ծընվում, հարևաններն ասում էին.

— Ավետիսն էլի մի հնգանոց աշխատեց...

Եվ վերջապես Կյորեսից մինչև Նորու, այնտեղից Ձորեկ և Յաքուս այժմ ինչքան գեշ, սև և պեպենոտ աղջիկ ու կին կա, ամենքը սերվել են Հայաստանցի Ավետիսից:

Կարելի է նաև այլ վկայություն բերել. այդ գյուղերում, ինչպես և Կյորեսում, կա հայրստուենցու հարսանիք արտահայտությունը, որ նշանակում է անաղմուկ հարսանիք առանց կերոնների, առանց մակարենների, այսինքն հրավիրված հարսանիքավորների, որոնք ունեին իրենց նշանը՝ վառած մոմը և ունեին մակարապետը, որի նպատակն էր խմել և խմեցնել մակարներին, շարդել և փշրել զավաթները, երբ հարկ լիներ, պարել տալ ամենամոթիած աղջիկներին, հարսանիքը ձգձգել, եթե հարսանքատանը գինին սպառելու վրա էր, իսկ աղջկա հայրը ժլատ էր, կովեցնել երկու տոնձի և հաշտեցնել հին թշնամիներին. — մի խոսքով մակարները հրոսախումբ էին, որ տիրում էին հարսանքատանը և տնեցիներին այնքան, մինչև գինու զորությունից պարտվեին: Եվ երբ պատահում էր, որ գինին քիչ էր, մակարապետը կանչում էր.

— Մենք հո հայրստուենցու հարսանիք չենք անում...

Եվ գինին գալիս էր ով գիտե որտեղից և ինչպես, աղջկա հոր բարեկամներն էին օգնում, թե՛ հենց ինքը՝ մակարապետը ուղարկում էր մի նշան, որով Շոր աղբյուրից էլ կարելի էր գինի հանել, — բայց գինին գալիս էր և հարսանիքը շարունակում էր բորբոքվել:

Այդպես էր այն տունը ներքնահարկում, որի տերը թեև Գորիսի բնակիչ չէր հաշվվում և ոչ էլ կյորեսցի էր, այլ միայն Հայաստանցի, — սակայն 1897 թվից ապրում էր միևնույն զերզամբայում: Ու թեպետ Ավետիսը մի էշով քսան տան քար էր կրել, բայց ինքը ոչ տուն ուներ, ոչ տնատեղ, այլ ուներ յոթ աղջիկ, միշտ յոթը, որովհետև մեկին մարդու տալուց հետո, դեռ տարին չբոլորած, ծնվում էր նրա նման մի աղջիկ և նույնիսկ պատահում էր, որ հարսնամայրը աղջկա հարսանիքին պարում էր երկու հոգով:

— Հերիք է, մեղք ես, աղջի, — ասում էին հարևանուհիները Ավետիսի կնոջը, երբ Ավետիսը նորից մի հինգանոց էր աշխատում, իսկ կինն սկսում էր անիծել ամուսնուն: Կինն այնպես դառն էր դժգոհում և այնպես էր նկարագրում ամուսնու զորությունը, որ հարևանուհիները տիկին Վարսենիկը, Խոսրուդ բեյի կինը, Անիկա տյոտյան երբ լսում էին

բոր կրող Ավետիսի ոտնաձայնը, բարձրանում էին պատշգամբ՝ լսում խաղալու:

Հայաստանցու բնակած զերզամբայի գլխին ապրում էր ինքը տանտերը՝ Պավլի բեյ Օրբելյանը: Ամեն կողմից նշանավոր այդ բեյը ոչ միայն «Մշակի» անխափան ընթերցողն էր և չէր ծառայում պետական հիմնարկում, այլ առանձնացած ապրում էր տանը, ինչպես իշխանը զղայկում, — Պավլի բեյը ոչ միայն հայտնի էր ողու քահանայի հետ ունեցած ընդհարումով, այլև ուներ իր անձնական նպատակը: Ինչպես Հաստ ներսես բեյը, նա միայն ուսուցիչ չէր գրում, չէր ուսում և չէր քնում և քնելուց հետո բակարա չէր խաղում, այլ ուսելուց և քնելուց հետո Պավլի բեյն առանձնանում էր այգու խորքը և այնտեղ մտածում էր... Սյունյաց նախարարություն հին և գալիք ժամանակների մասին:

Գորիսի բեյերի մեջ նա միակն էր, որ պատրաստի ծխախոտ չէր ծխում, այլ Եփրատ Երեմի խանութից գնում էր դատարկ գլանակներ, որոնց Պավլի բեյն իր ձեռքով լցնում էր մեղրաջրով թրջած ծխախոտ: Այդ գլանակների տուփի մեջ լինում էր մի անակնակալ՝ թղթի թիթեռ, գունավոր դրոշակ և այլն... և ահա ամբողջ փողոցի երեխաները հավաքվում էին Պավլի բեյի բակը, երբ նրանք լսում էին, թե Պավլի բեյը բաց է անում նոր տուփ: Եվ այդ օրերին վա՛յ էր Հայաստանցի Ավետիսի աղջիկներին, որովհետև մինչև անգամ վեց տարեկան տղան կծծծեր հարսնացու աղջկան, եթե նրանք չմտնեին ներքնահարկը: Իսկ Պավլի բեյը սպասում էր այնքան, մինչև բակը լցվեր տղա երեխաներով և տուփը բաց էր անում: Տուփի միջի գունավոր դրոշակը կամ թղթի թիթեռը Պավլի բեյը պատշգամբից գցում էր ներքև, երեխաներն իրար վրա էին թափվում, իսկ տան տերը զվարճանում էր: Ամեն կողմից նշանավոր Պավլի բեյը եթե երեխաների մեջ նկատում էր 12—14 տարեկան տղաների, նրանց մեկ-մեկ կանչում էր պատշգամբ և նրանց ականջը թեթև ուրելով, պատվիրում էր.

— Ականջդ կկտրեմ, եթե լսեմ, որ ուրիշ ազգից ես աղջիկ առել... Հայ աղջիկ կառնես, իմացա՛ր...

Իսկ տղաները՝ ականջները քորելով իջնում էին և միտք էին անում, թե ի՞նչ պիտի անեն Հայրստուենցի Ավետիսի գեշ, սև և պեպենոտ աղջիկը:

Այն փողոցը, որտեղ մեծ մասամբ բեյերի տներն էին և նրանցի: մեկի՝ Պավլի բեյի տան ներքնահարկերում ապրում էր Հայաստանցու ընտանիքը. — այդ փողոցը կոչվում էր Մանուչար բեյի փողոց:

Որքան էլ քաղաքը փոքր էր և շուներ ոչ մի ծխնելույզ և գործարանի շշակ շուներ, այլ ուներ հարուստ շուկա, զորք, բանտ, եկեղեցի և ներկայացուցչական վարչություն, այսինքն պետական հիմնարկներ,— այնուամենայնիվ քաղաքը քաղաք էր, ուներ քաղաքագուլիս, քաղաքային գումա, փողոցներն անուններ ունեին՝ հաստատված քաղաքային դումայի և նորին գերագանցության՝ գեներալ-նահանգապետի կողմից: Այսպես՝ մի փողոցը կոչվում էր Մանուշար բեյի փողոց, մյուսը թագավորական, երրորդը՝ նահանգապետ Կավալյուզի անվան, չորրորդն այն առաջին գավառապետի, որը ռազմա-աշխարհափով նկարահանել էր գետահովիտը, ապա քանոնով բաժանել հավասար վանդակներին, յուրաքանչյուրը շորս հարյուր քառակուսի սաժեն: Բայց թեև գեներալ-նահանգապետը հաստատել էր և փողոցների անունները փակցրած էին պատերին, տները համարակալած էին (և դեռևս պրոգրեսիստները դժգոհ էին քաղաքագուլիս Մատթևոս բեյի պակաս կողմից),— այնուամենայնիվ ժողովուրդը, այսինքն Կյորեսը՝ Շենը իր բոլոր թաղերով և հարևան գյուղերը ոչ փողոցի անուն էին տալիս և ոչ տան համար. նրանք ասում էին կալին պաբուլորը պատկերացնում էին հին կալերը քարափների գլխին, որ դարձել էր քաղաքի զոսավայրը, ավելի ճիշտ, այն վայրը, որտեղ գիմնազիստները մեջքի վրա պառկում էին և կամ նվագում էին կիթառ, ձանձրույթից թքելով դեպի ձորը, դեպի ձորի հին մարագները:

Կյորեսներից եթե ցույց էին տալիս մեկի տան տեղը, ասում էին՝ Միմոն բեյի տան գլուխը և բուլորը գիտեին, որ խոսքն այն Միմոն բեյի տան մասին է, որի շան ահից մինչև անգամ մուրացկանները մուտք չունեին: Մի րաքին թումբը,— և նույնիսկ նրանք, որոնք երբեք չէին տեսել այդ երբեմնի բուլորը, գտնում էին քաղաքի այն մասը, որտեղ Ավագիմովների տներն էին, ուսաց դպրոցը և փոստը: Գոմեշի փոստեր՝ շուկայի նոր մասն էր, Պասաժը, մինչև քաղաքային դումայի շենքը: Այդ տեղն այդպես էին կոչել շատ հնում, այն ժամանակ, երբ այնտեղ աղբյուրներ կային, որոնց ջրերում նստում էին Կյորեսի գոմեշները: Այժմ ոչ գոմեշներ կային, ոչ նրանց աղբյուրները, բայց հին անունը մնացել էր և դեռ հնչում էր այդ անունը, ինչպես Պասաժի հիմքերի տակ խոխոջալով գնում էին հին աղբյուրները...

Այն փողոցում, որ կոչվում էր Հին ճանապարհ, ապրում էին արհեստավորներ, մեծ մասամբ բնիկ կյորեսների: Նրանք ընտրել էին այդ Գետափը գուցե նրա համար, որ հեղեղման վտանգի պատճառով այդ փողոցի տնատեղերն աժան են եղել,— գուցե և այն պատճառով, որ փոստից այն կողմ նրանց հայրական բոստաններն էին՝ բակլայի, կարտո-

Ֆիլի և դումաի անսպառ բերքով, որ այնուամենայնիվ գարնանամուտին սպառվում էր, որովհետև արհեստավորների մեջ այնպիսի ուտողներ կային, ինչպես օրինակ Չաքմաշի Վեսկանը, հյուսն Ասանը և թամբագործ Քեհն. որոնք եթե երեքով միասին մակար գնային, հարսանքատիրոջ շունը սոված կմնար:

Այդ փողոցում ապրում էին հյուսններ, քարտաշներ, կոշկակարներ, թիթեղագործ, ներկարար, նաև մի քանի բեյեր, որոնք մյուս բեյերի շերտներից դուրս էին, ինչպես օրինակ՝ երրորդ ներսես բեյը, որ կոչվում էր Պրեստավի ներսես բեյ, որովհետև մի ժամանակ նա եղել էր պրեստավի գրագիրը: Բայց այժմ մնացել էր միայն անունը և ոչ ոք նրան բանի տեղ չէր դնում՝ ոչ իրենք բեյերը, ոչ կինը և ոչ հարևանները: Մի ուրիշ ավելի նրան կաշառք չէին տալիս, ավելի հաճախ տալիս էին մի արծաթ աբասի և երբեմն ոչինչ չէին տալիս, այլ միայն ասում էին.

— Ներսես բեյ, էս անգամ կներես...

Հին ճանապարհի տները մի հարկանի էին՝ առանց բացառության: Թեև այնտեղ էլ տնատեղերը գնել էին հավասար մեծության՝ յուրաքանչյուրը շորս հարյուր քառակուսի սաժեն, բայց որովհետև եղբայրներն իրար մեջ բաժանել էին միասին գնած տնատեղը, ուստի տների թիվն ավելի էր: Եվ երբ ծայր էր առնում երեխաների մահալակուիվը՝ կոճիք տարբեր փողոցների երեխաների միջև, ձմեռը՝ ձյունագնդերով, աշնան դեմ՝ արևածաղկի գլուխներով, եգիպտացորենի կոթերով, նետաղեղով, երբեմն քարերով և նույնիսկ շներով, երբ յուրաքանչյուրն իր շան շղթան թևին փաթաթած գնում էր կովի,— Հին ճանապարհի տղաները միշտ հաղթում էին և պատահում էր, որ հաղթողները հակառակորդին ջրում էին մինչև շուկա և մանկական մի նետ դիպչում էր գարադաբուլդի Մուխանին, կամ դումաի կլեպը թռչում էր քաղաքային դումայի պատշգամբը:

Նրանք կոչվում էին «Նոուսն երի» դեմ, այսինքն բեյերի և վաճառականների տղաների դեմ, որոնք սովորում էին թագավորական դպրոցներում՝ Գորիսում և այլ քաղաքներում, իսկ Հին ճանապարհի տղաները՝ Կյորեսի հայոց ուսումնարանում: Վերջիններս շունեին ոչ համազգեստ և ոչ էլ դպրոցի նշան՝ գլխարկի և գոտու վրա: Հայոց դպրոցի երեխաները տրեխներով էին, տարվա մեծ մասը գլխաբաց: Դպրոցից հետո նրանք աշխատում էին տանը և բանջարանոցում, օգնում էին մեղրներին՝ արհեստանոցներում և պատահում էր, որ դպրոցից վերադառնալով, ներկարար նեսու տղան հագնում էր հոր մեծ կոշիկները և ներկի դուլլերը ձեռքին հոր հետ գնում էր աշխատանքի:

Եվ պետք էր լինում, որ տուն գալուց Մանուչար բեյի փողոցում «Ռուսները» կարում էին նետու տղայի առաջը... Այն կողմից մեկը լուր էր բերում և ահա Հին ճանապարհից թռչում էին նրա ընկերները շնորով, քարերով, նետ-աղեղով, մահակներով և նույնիսկ մեծերը դժվար էին դադարեցնում նրանց քարե կարկուտը:

Ամառը կովի վայրը գետն էր, Հին ճանապարհի տակով անցնող գետը: «Ռուսները», այսինքն գիմնազիստները, որոնք ամառային արձակուրդին տուն էին եկել,— խմբերով գալիս էին լողանալու: որսն էլ շատ լինեին նրանք և նույնիսկ իրենց հետ բերեին մեծահասակ մեկին, այնուամենայնիվ այդ էլ նրանց չէր փրկում կովից, երբ նրանք մտնում էին Հին ճանապարհի տղաների կառուցած լողարանները:

— Մեր ջրեղից դուրս եկե՛ք,— գետի մյուս ափից բղավում էր այդ տղաներից մեկը, երբ վաճառականների և բեյերի տղաներն արդեն հանվում էին, ավազի վրա շարեւոր իրենց փայլուն գոտիները, սպիտակ գլխարկները, որոնց պղնձե նշաններն արևից փայլում էին:

— Կորի, ու՛ր իլ,— բղավում էր մի գնդիկ գիմնազիստ՝ ձյունաթույր մարմնով, ինչպես ձյունաթույր էր նրա սպիտակեղենը, որ տաժանելի աշխատանքով լվացել էր լվացարարուհի Մինան:

— Ասում եմ դուրս եկե՛ք մեր գլուխից,— զայրացած բղավում էր Հին ճանապարհի տղան, որ առավոտ կանուխ տնից փախել էր, որովհետև գետափի ազատ պարտեզները նրան կանչել էին կեռաս ուտելու, փրցնելու մի քանի պատիճ բակլա, մի բանջարանոցից գողանալու կարտոֆիլ և գետափին՝ քարակույտերի հետևը խորովելու բակլա և կարտոֆիլ, որ նրա և՛ ճաշն էր, և՛ ընթրիքը:

— Չե՛ք գնում,— և զայրույթից նրա դեմքը կարմրում էր, ինչպես եթե տղան երեսին քսեր գողացած բալը: Ապա առաջին քարն այն կողմից վզզալով ընկնում էր գետի մեջ, լողացողներից մեկ-երկուսը, որոնք սրտով էին, դուրս էին թռչում և նրան քշում էին դեպի պարտեզների խորքը: Եվ հաղթանակով վերադառնում էին...

Բայց նրանք դեռ նոր էին մտել ջուրը, երբ պարտեզներից Հին ճանապարհի տղաների խումբը, որ մինչ այդ, ով գետի որ պարտեզն էր ասպատակում,— նրանց խումբը, ինչպես վայրենիների ցեղ, շրթունքները բալի հյուսից կարմրած, բորիկ և ցնցոտիների մեջ, իսկ ոմանք առանց ցնցոտիների, այլ մի շապիկով,— և արևից սևացած մարմիններով այդ սևամորթներն, ինչպես վայրենիների ցեղ, դուրս էին թռչում պարտեզներից, մոռի թփերից, թրմփալով վայր էին ընկնում ծառերից և վազում էին դեպի գետը՝ ով ձևորին արևածաղկի կոթ, ով բանջարանոցից պո-

կում էր մի ձող, որի վրա փաթաթվել էր լորին, ով կարում էր ուռնու էյուղը, ով վազում և գոգը լցնում էր մանր քարերով և նրանք թռնում էին՝ պատերի վրայով, շամբուտների միջով, բորիկ ոտքերով կոխելով և՛ ավազ, և՛ խոտ, և՛ փուռ: «Ուռու»... հնչում էր նրանցից մեկի ձայնը և սևամորթները սլանում էին: Սպիտակներն ահաբեկված իրենց զցում էին մյուս ափը, ոմանք շորերն առած փախչում էին հեռու, ոմանք քարերի հետև դիրք մտած՝ փորձում էին ընդդիմանալ հեղեղին, որ գալիս էր ազմուկ աղաղակով...

Նրանց բաժանում էր գետը, բայց հաճախ Հին ճանապարհի տղաները գետին չէին նայում, և շոր չէին հանում, այլ շորով իրենց զցում էին շուրը և լողում էին՝ ջրի մեջ բարձր բռնած ուռնու էյուղը և արևածաղկի ցողունը, որով մյուս ափին նրանք պիտի ծեծեին:

Երբեմն կոխվել բորբոքվում էր, անցնում էին ձեռնամարտի կամ խլում էին նրանցից մեկի գոտին, մյուսի գլխարկը կամ գերի էին վերցնում մի սպիտակ գիմնազիստի, որ վախից թարս էր հագել շապիկը և չգիտեր ո՛ւր է կոշիկի մեկը: Սպիտակը լալիս էր, կանչում էր մամա... Իսկ Հին ճանապարհի տղաները խոսում էին, թե ինչո՞վ ծեծեն նրա բաց մսերը՝ եղինջի թփո՞վ, թե՞ եգիտացորենով: Սակայն պատահում էր, որ նրանցից մեկը մեղքանում էր, թե՞ հիշում էր իր մորը, որ այդ գիմնազիստի հոր տան լվացարարուհին էր կամ նրանց վաղեմի հացթուփն էր: Եվ նա երեսը շրջելով ասում էր.

— Թողե՛ք կորչի գնա...— և նրանք թողնում էին, որ գերին արցունքը սրբելով շորերը հագնի:

Նրանցից ոմանք զարմացած նայում էին նրա սպիտակ շապիկին՝ եզերքը կարմիր կար, նայում էին մաթուր կոշիկներին, գուլպաներին և նախանձում էին: Նրանց մեջ տղաներ կային, որոնք միայն մի շապիկ ունեին, քաթանե հաստ շապիկ, որ հագնում էին միայն ձմեռը: Եվ այդ փոքրիկ վայրենիներն այնպես էին նայում, ինչպես նախամարդը կնալի Տեր զի բազում ավազ քահանային:

«Ռուսները» հեռանում էին, սպառնալով հեռվից, երբեմն ապահով հեռվից քար էին շարտում և այն ժամանակ Հին ճանապարհի տղաները նրանց քշում էին մինչև թագավորական փողոցը, մինչև Մանուչար բեյի փողոցը և վերադառնում էին գետափ, որտեղ նրանք թագավոր էին:

Հին ճանապարհը թեև խուլ փողոց էր, բայց նշանավոր էր իր ալամ Եսիր տղաներով: Նրանց հայրերը՝ արհեստավորներ, ապա խաչների թևատորոսը, որի ճաշարանում երկու կոպեկով «կես պորցի»

բողբաշ էին ուսում Ամիր-Աստանը, սալգատ Երանուր, Ճուլուն Վեֆե, Քյաթաուան, նաև Բազարնիկ Խաչին, որ ս ե փ ա կ ա ն տուն ունեք Հին ճանապարհի վրա,—այդ մարդիկ կազմում էին մի առանձին խավ, մի քարացած շե տ որ դալիս էր հին Կյորեսից, ինչպես: Հին ճանապարհը Կյորեսի հին ճանապարհն էր դեպի Միջնահանդ, դեպի Սպիտակ քաղաքը՝ այն խոտհարքներն ու արտերը, որ վաղ ժամանակ եղել էին Կյորեսի հողագործների կալվածքը:

Այդ փողոցը տանում էր դեպի Շենը հին շուկայի հրապարակով, այնտեղ, որ ներկարարի կարտաններն էին, Մանգասար դաշու հնաձև խանութը, համես կարողներ և դարբիններ և որտեղ Ափունց Ակու-ամին աշխարհի շորս ծայրից ստանում էր ձորկեցիների տխուր նամակները...

Հին ճանապարհով էր անցնում Շենի նախիրը, երբ տավարածը նախիրը քշել էր Սանդ աղբյուրի ձորը: Կյորեսեցիներից նրանք, որոնց կալերը ջրաղացների մոտ էին, այդ փողոցով էին խուրձ կրում, որովհետև քաղաքի մյուս փողոցներով արգելված էր երթևեկությունը խոտ և խոտի կրողների, նախիրի և նախրապանի: Հին ճանապարհը Կյորեսն էր Գորիս քաղաքի մեջ, Կյորեսն էր երկարածոր լեզվով, դժվար անուններով և խրթին բարբառով, իր գեղի երեխաներով, որոնք Շենի տղաների հետ միացած կոպում էին բուլկի ուսողներ զեմ, շարունակելով հին կոպը, որ գալիս էր Ղաթրինի Աղապոյի առասպելական ժամանակներից:

Այդ հին փողոցներում էին այն մի քանի տները, որոնց մասին դժվար է ասել, թե ինչպես էին ապրում, բայց խոսք պիտի ասել, որովհետև նրանք ըստ ամենայնի հետաքրքիր մարդիկ էին, նրանք հին կյորեսեցիներ էին և իրենց գործերով անուն էին հանել, ինչպես Աղապուզար բեյը՝ կաշառակերությամբ, Պավլի բեյը՝ «Մշակ» կարդալով, Քյալու Մատուրը՝ ձեռագիր շարագրություններով, իմոնապի գործարանի տերը՝ Շոր աղբյուրի ջրով և այլն:

Հին ճանապարհի այդ բնակիչները ո՛չ արհեստավոր էին, ո՛չ վաճառական և ո՛չ բիլ: Նրանք երբեք մաճ չէին բռնել և ոչ էլ գիտեին իրենց պապեկան կալի տեղը: Նրանք միայն լավ գիտեին Բարի Աշողումի գինետունը, որի առաջ մեծ բնկուզենին նրանց համար միշտ ստվեր ունեք, ինչպես Բարի Աշողումը՝ գինի: Նրանք լավ գիտեին գետը և գետափի պարտեզները, Կյորեսի բուր ձորերը՝ հեռու և ահավոր, գիտեին անտառը, որ ինչպես մութ ճանապարհ սկսվում էր քաղաքի կողմից և անընդմեջ գնում էր մի օր, երկու օր, տասն օր գնում էր և անցնում էր Արաքսը՝ ռուս-պարսկական սահմանը և այնտեղից էլ ով գիտե ով էր գնում անտառն իր գաղտնի ճանապարհներով:

Նրանք գինի խմողներ էին, նրանք անվանի մակարապետ էին, պխալորն այն հրոսախմբի, որը, երբ հարսանիքի գինին պակասում էր, բղավում էր՝ «մենք հո հայրստունցու հարսանիք չենք անում...»:

Նրանց սննդատու մայրը գետն էր և անտառը: Գարնանամուտին, երբ գետը պղտոր գալիս էր, հունը մինչև ավերը լի և պատահում էր, սք ավերից դուրս գալով գետը հեղեղում էր եզերքը, քանդում էր թույլ կամուրջները, արմատահան պոկում էր ծառերը և խորքում քարեր դնում այնպիսի զրդոցով, որ թվում էր թե փլվում են լեռները,—այդ աճարկու ժամին, երբ հին ճանապարհի բնակիչներն ահ ու դողով էին լսում գետի որոտը,—նրանք՝ ազ ու հացի եղբայրները ջրի մեջ դրում էին այն ձուկը, որ հարավից բարձրանում էր դեպի լեռնային աղբյուրները:

Գարնանամուտին Սալյանից, Ղարաբաղի տափաստաններից, մինչև անգամ շագ կենդորանից հազար-հազար մարդ, ոչխար, ուղտ, ձի քոչով և քաղաքներով բարձրանում էին Չանգեզուրի լեռնային արտուները: Այդ ահագին բազմությունն անցնում էր Գոլուն Կարի, Խանձատ Խուզու և աղ ու հացի մյուս եղբայրների կառուցած փայտոն հասարակ կամուրջով: Նրանք կամուրջի վարձ էին հավաքում, բուրդ, ոչխար, դրամ և այդ ամենը գնում էր գինու և զվարճություն:

Նրանք փորձված ձիավարներ էին և պատահում էր, որ Հաստ Ներեսես բեյը կամ մի ուրիշ բեյ Բարկուշատի խաներից ընծա էր ստանում այնպիսի հրեղեն նժույգ, որին բեյը վախենում էր մոտենալ: Եվ ահա կանչում էին Հին ճանապարհի վարժ ձիավարներին, բազմությունը հավաքվում էր հրապարակում և Գոլուն Կարին, մահն աչքի առաջ, խեղճացնում էր կատաղի նժույգին: Վերջապես նրանք որսորդներ էին խուլ ծամակներում և ձորերում, որտեղ ոչխարի մոռացված աղաքարի վրա գիշերով իջնում էին պախրաները:

Ձմեռը գետը սառնում էր, ձուկն իջնում էր հարավ, որսը թաքնվում էր ով գիտե ինչ որջերում և պակասում էր նրանց գինեղրամը: Այն ժամանակ լուրեր էին պտտվում, թե Չորեկից կորել է մի երինջ, կորել է խոջա Բաղիրենց կովը, գիշերով մարդ է մտել Տեր զի բազումի մեղվանոցը և ձմեռն ի՛նչպիսի լուրեր չէին տարածում Գորիս քաղաքում: Եվ նաև շշնջում էին, թե Խուռուփի ձորում գտել են կորած երինջի դուկը, կովի հետքերը գնացել են մինչև գետափ և իբր թե Տեր զի բազումի մեղվանոցից մի արկղ մեղու թափել են ջուրը և ջրի ավին Բազել են դատարկ արկղը: Եվ ով շշնջում էր, ավելացնում էր նաև Գոլուն Կարիի, Խանձատ Խուզու և մյուս եղբայրների անունը և լսում էր:

ձի՞շտ էր այդ, թե չար բամբասանք էր,— դժվար է ասել... Բայց ստույգ է, որ ամառ ձմեռ, ամեն երեկո Հին ճանապարհով հարթած տուն էին վերադառնում եղբայրներից երկուսը, երեքը, երբեմն մի ամբողջ խումբ: Նրանք քայլում էին, շուխանների փեշը կրծքով պատած մինչև ուսը, գլխակները ծուռ, դանդաղ օրորվում էին, որոտալով երգում և հանկարծ փողոցի մեջտեղը կանգնելով անհայտ է ինչու հայհոյում էին, ինչպես մի ժամանակ Գյուրջի Օբին հրապարակում հայհոյում էր:

Սրբ որոտում էին նրանց ձայները,— ներսես բեյը,— այն, որ կոչվում էր Պրիստավի ներսես բեյ,— նա էլ թաքնվում էր դարբասի անկյունում կամ շտապում էր տուն մտնել: Նրանք բեյերին չէին սիրում, նաև չէին սիրում, երբ իրենց փողոցում հանդիպում էին մի վաճառականի, որին մի մութ քամի բերել էր այդ խուլ փողոցը:

— Թող կորչի գնա՛...— ասում էր ընկերն ընկերոջը, իսկ վաճառականն արագացնում էր քայլերը, ինչպես սպիտակ գիմնազիստը, որ ահից կանչում էր մորը...

10

Մենք սկսեցինք հին ջրաղացներից, որոնք գետի աջ ափին են, ընկուզենիների տակ, և որտեղ ծերունի ջրաղացպանը, երբ չէր ննջում, պատմում էր Յուլ Օհանի ժամանակներից, երբ ցորենն իբր թե հոնի կորիզների շափ էր և չկար այն հավի կուտը, որ շալափով ջրաղաց էր բերել մի աղբատ կին: Ապա անցանք նավթի պահեստի մոտով, որտեղից սկսվում էր քաղաքը և նկարագրեցինք հին շուկան՝ Գորիսի շուկայի արհամարհված ծայրը, որտեղ առևտուր անելը հավասար էր կտոր ընկնելուն:

Այնտեղ կային ներկարարներ, որոնք ներկում էին կարասի կապույտ և թուխ մրուր և տորոնի կարմիր և ապա ներկած կտավները զուլ-զուլ փռում էին քարափների վրա և գույների խաղով զվարթացնում էին հին շուկան: Այնտեղ կային կանացի շմուշկ կարող վարպետներ, որոնք կարմիր քոշ էին կարում նորահարսի համար, կանաչ՝ միջահասակ կնոջ և նուան կլեպի գույն՝ այն պառավ այսաների համար, որոնք գուցե հագնում էին վերջին գույգը: Այդ շուկայում էր այն դանավուզը և թիրմահին, որ ամբողջ քաղաքում այլևս չկար, միայն Մանգասար դային ուներ:

Այնտեղ էին հին դարբինները, որոնք անիվ կապել չգիտեին, բայց խոփը զոդում էին ինչպես պողպատե թուր և այնպիսի շղթաներ էին կտում, որ յոթ զույգ եզ քառասուն օր ծանր գութանը քաշում էին քար

հողերում— և շղթան չէր կտրվում: Այդ շուկայում էին դալլաք Բոզին և նույնպես դալլաք Ասրին, որոնց երբեմն կանչում էին հիվանդից արյուն անելու, նաև կանչում էին զարդարելու նորափեսայի մազերը:

Շատ հին մանրավաճառներ կային այդ հին շուկայում՝ ընտիր ծամոնի, մեղրամոմի, մախաթ ասեղների, ոսկրե կոճակների, ծխավոր կոնֆետի և թթախտոի այնպիսի մանրավաճառներ, որոնք մի ծամելու ծամոնը փոխում էին երկու ձվի, կես գրվանքա մեղրամոմը՝ մի ծաղկավոր գուլպայի հետ: Նրանք գիտեին, որ ձորկեցի Ադի դային քաշում էր արաբուն թի, իսկ նորուցի Բադի դային՝ կապովի բուն թի:

Այստեղ նաև կային երբեմնի մանրավաճառներ Ափունց Ակու ամին և Բադամ Բախշին և նրա հարևանը, որոնք ոչ լամպի ապակի էին ծախում և ոչ Ղազանի սապոն, այլ նամակը հեռու բռնած կարդում էին խանգարված ձայնով, կարծես ճոռում էր խանութի ծանգոտ դուռը:

«Սվ կհարցնեմ ձեր որպեսութունը, նաև ինձ բարի հիշողաց...»

Այդպես էր Կյորեսի հին շուկան՝ խեղճ և խարխուլ ու թեև այնտեղ շաքարի գրվանքան մի կոպեկ թանկ էր բուն շուկայից, այնուամենայնիվ Ցաքուտ, Նորու, Մեզար և Չորեկ գյուղերում, ինչպես և Շենում՝ Կյորեսի մեռնող միջնաբերդում գյուղացիներ կային, որոնց ասելով նոր շուկայի շաքարը երեխաների բերանում շուտ է հալվում և նրանց ատամների տակ կապույտ կայծ չի տալիս, ինչպես հին շուկայի շաքարը: Իսկ ձորկեցի Ադի դային ասում էր.

— Կյորեսի դարա բունթի որ չլինեիր, հիմա Ադի դայի չկա՛ր...

Այդ գյուղերովն էր ապրում Կյորեսի հին շուկան: Նրան պահում էր Շենը, որ ամենից մոտիկն էր: Պատահում էր, որ երեկոյան Յենից մի երեխա վազելով բարձրանում էր հին շուկան:

— Վարդան դայի, նանին ասաց մի չերթ շաքար տա:

— Դու ո՞ւմ տղան ես:

— Ցամաք Ավանի տղան եմ:

— Հիվանդ ունե՞ք...

— Չէ՛, Վարդան դայի, տո՞նք մարդ է գալու...

— Չլինի՞ մեծ քոջող ուզող կա:

— Սա՛մ... — և երեխան նիհար ուսերն իրար էր անում և նրա տխուր աչքերի մեջ Վարդան դային տեսնում էր իր հարցի պատասխանը:

— Նանուդ ասա՛ թե ձու կա, ձու ուղարկի... Ուզող կա: Հա, է՞՞ սապոնի պարտքն էլ թող ուղարկի:

— Էգուց նանին գնալու է Սիմոն բեյի տանը խմոր Գոնցի...

Այդպես էր առուտուր անում հին շուկան, որի մանրավաճառները

երբ ճանճրանում էին, բերանն էին պցում ծամոնի մի կտոր կամ սկում էին լույսի դեմ պահել ձկերը, որոնց անարատութունը նրանք ստուգել էին քսան անգամ... Եվ կամ վերցնում էին եզան պոչից ճանճաքշին և ճանճերի հետ բարձրանում էր փոշու ամպը: Երբեմն Բաղամ Բախշին քոշերը քստացնելով մոտենում էր պայտարին, որը ծառի ստվերում նկշում էր.

— Հերիք քնես, հարևան...

— Է՛...— և պայտարը ճմլթկալով հորանջում էր, հորանջում էր կտորտելով մեջքի և բազուկների մկանները և շէր վերջանում նրա հորանջյունը, ինչպես արձագանքը, որ դալիս է բարձր սարից՝ նախրապանի կանչից և դեռ յոթ ձորում յոթ անգամ պիտի դրնգա:

— Տաքը գոռում է հա՛...

— Մի բազյա նոր քաղած թուփ լինեք, ի՛նչ կուտեի...

Մոտենում էր երրորդ հարևանը՝ ա ս փ ա կ ա ն գերձակ Գարգի Վաները, որ շալե շալվարի աղվեսիքի վրա նեղվել էր քաղցր նինչից և ջրափաղած աչքերով այլևս չէր ջոկում ասեղը:

— Վաներ, ասում եմ մի բազյա թուփ լինեք...

Իսկ Վաները դեռ ննջում էր: Եվ հանկարծ քնից զարթնելով, Գարգի Վաներն ասում էր.

— Ա՛յ թե մի բազյա նոր քաղած թուփ էր եղել...

Բայց պատահում էր նաև, որ Բաղամ Բախշին, Գարգի Վաները և այն պայտարը վճռում և գնում էին Մեղրաքերծի տակ թուփ ուտելու և հետո, մի քանի ամառ, նրանք պատմում էին, թե ինչպես մի անգամ կերթով գնացին Մեղրաքերծի այգիները...

Մենք սկսեցինք գետափի ջրաղացներից և Կյորեհի հին շուկայի միջով մտանք իսկական շուկան, որ Գորիսի թափն էր, նաև տեսանք այդ թափի գոհարը՝ Պասաժը գոհարեղենի և ալեհեղենի խանութներով, Եփրատ Երեմի կոլոնիալ մագազիններով՝ Կ ու ռ դ ը բ ժ ա, Գ Ր ու ժ բ ա, Ն ա դ ե ժ դ ա և նույնիսկ Ս ա ս ու ն անունով, որ մյուս անունների մեջ օտարտի էր, ինչպես Հայաստանցի Ավետիսը բեյերի և վաճառականների փողոցում: Որքան մեր ունե էր, աշխատեցինք ճշմարիտ նկարագրել Ավագիմովների ալագ եղբայր Մողոմոնին, որին մենք շնք անվանել Ամբարի կատու, այլ գործ ենք անել ժողովրդական անունը. — Մամբարի կատու Մողոմոնի փանր զբաղմունքը և անկաշառ մտահոգությունը՝ սոված գլուղացիներին ապահովել աշխարհով և այն վաճառել առքի գնից պակաս, ինչպես երբեքում էր նա, ձեռքը խփելով մեռու աշքրած երեսին: Ոչինչ չենք ավելացրել խաղա Մակիշի քնածին բա-

բաթյան վրա և նորից վկայում ենք, որ նրա սահմանած հաստատուն կանոնն էր հաճախորդին դատարկաձեռն ետ շվերադարձնել, որովհետև այդ նրա համար անպատվություն էր, ինչպես եթե հյուրը նրա սեղանից վեր կենար առանց մի կտոր հաց կտրելու: Իսկ ինչ վերաբերում է նորահարսին նվիրած վարդ թաշկինակին, այդ կարող է հաստատել հենց, օրինակ, նորուցի Սիմոն Նարինյանը («Նարինի թոռ Սիմին»), որն ի տրիտուր երեք արշին պատանքի կտավի, երեք տարի հետո խոջա Մակիշին նվիրել էր իր միակ կովը, նաև ասել էր.

— Ասոված թող գլխիդ խոռով շանի իմ կովը, խոջա Մակիշ...

Նույն արդարամտությամբ նկարագրեցինք Եփրատ Երեմի: առևտրական կշիռը Գորիս քաղաքում, նրա խոսակցությունը կյուրմիլա կլովնայի հետ, հոր՝ խոջա Մակիշի ներկայությամբ: Ասում ենք առևտրական կշիռը, որովհետև Եփրատ Երեմը քաղաքում այլ կշիռ ևս ուներ, ավելի ճիշտ՝ կշիռներ ուներ: Նա պարագլուխն էր երիտասարդ վաճառականների, քաղաքային դումայի դեպուտատն էր, և պրոգրեսիստները, որոնք դժգոհ էին քաղաքագլուխ Մատթևոս բեյից և սպանում էին նոր ընտրություններին նրան սև քվե տալ, իրար մեջ գաղտնի խոսում էին, որ նոր քաղաքագլուխ պիտի լինի Եփրատ Երեմը՝ կյուրմիլա կլովնայի բարեկամը և գավառապետի հետ բակարա խաղացողը:

Երա խանութը հավաքատեղի և կենտրոն էր քաղաքի բարձր մտավորականության՝ բժիշկ Տիգրան Պետրիշի, անտառապետ Արամ Արկազիշի, թագավորական դպրոցի տեսուչ Սահակ Սերգեյիշի և հաշտարար միջնորդ Մուղակիների, որը լի բերալ էր, հիանալի գիտեր լատիներեն և իբր թե ոտանավորներ էր գրում... Այդ ընտիր հասարակության ժամադրավայրն էր Եփրատ Երեմի խանութը: Իսկ ինչ վերաբերում է կյուրմիլա կլովնային, նա այդտեղ միշտ գալիս էր իր շնիկի հետ, տիկին Սառա Կասպարովնայի ընկերակցությամբ և սուտ է, թե իբր Եփրատ Երեմը այգիներում շոշափել է կյուրմիլա կլովնայի պատիվը:

Գավառային պահակախմբի պետ Ալթանդիլ Խուրշուդ բեյի և Պենզայի 686-րդ դրոմիլայի երիտասարդ սպայի մասին հարևանցի ակնարկեցինք, ինչպես հարևանցի հիշեցինք այն հովվին, որ հրապարակի ժխորի մեջ կանչում էր իր կորած շանը՝ անհանգստացնելով քաղաքապետի Մատթևոս բեյին: Այդ այն պատճառով, որ նրանք՝ Ալթանդիլ Խուրշուդ բեյը, երիտասարդ սպան և շուն որոնող հովիվը պատահական էին շուկայում, ինչպես գետնի երեսով անցնող անգլիս սովերը: Այդ սակայն չի նշանակում, թե Ալթանդիլ Խուրշուդ բեյը աննշարելի անձ-

նավորութիւն էր Զանգեզուրում... Նա այնքան ահարկու էր, որ, օրինակ, անտառից գութանի փայտ կտրած գլուղացիներին կանչում էր հարցաքննութիւն: Նա ծառ շատ էր սիրում և մինչև անգամ ափսոսում էր դալար ճյուղերին, ուստի և գլուղացիներին ծեծում էր եզան ջիւրից հյուսած մտրակով...

Գորիսում առավոտն էլ այդպես էր բացվում՝ մսագործների խանութների հետ միաժամանակ: Արևն ընկնում էր դեղին դմակների վրա և առաջինը մոտենում էր շուկայի պահակ Կետանը, ապա մյուսները միևնույն կարգով ու ծեսով, ինչպես նույն ծեսով ճաշում էր Հաստ Ներսես բեյը: Գուցե միայն կիրակի օրերն այդ կարգը խանգարվեր, որովհետև երբեմն կիրակի օրերը միս էին առնում ներկարար Նեսին, լվացարարուհի Մինան և պատահում էր, որ Հայաստանցի Ավետիսն էլ մի գրվանքա միս էր առնում: Այդ ժամանակ խոշաներից մեկն ստում էր.

— Ենն քաղաք ես, Գորիս, որ մինչև անգամ դարիք Հայրստունցին էլ է միս առնում...

Գարադաբուլդի Մուխանի ձեռքով միսն ուղարկեցինք Հաստ Ներսես բեյի տունը ոչ այն դիտումով, որ ցույց տայինք, թե ինչքան սերտ բարեկամութիւն կար Ներսես բեյի՝ գավառային վարչութիւնն ղեկավարողի՝ Զանգեզուրի կես-գավառապետի և մի խեղճ պաշտոնյայի միջև, որը թեև ոստիկան էր և թուր ունեւոր նարնջե ծոպերով, բայց լինելով բուն կյորեսեցի, երբեմն տրեխ էր հագնում և գնում էր խոտհրձի: Մեր դիտումը չէր ցույց տալ երանելի համերաշխութիւնը սանդուղքի երկու ծայրերի, որովհետև այդ նպատակով կարող էինք ասել, որ Ներսես բեյը, հետկեսօրյա քնից առաջ, երբ արձակում էր տուժուրկայի կոճակները, հարցնում էր կնոջը.

— Վարսեն, Մուխանին բան-ման տվի՞ր...

— Տվի, Ներսես բեյ, մի հին շավար ունեիր, տվի...

Միսը Մուխանի ձեռքով ուղարկելով՝ մեր բուն նպատակն էր խոհանոցի խոռոցից լույս աշխարհ հանել տիկին Վարսենիկին, որը թեև Հաստ Ներսես բեյի կինն էր և ունեւոր շորս երեխա, բայց միևնույն ժամանակ Գորիսի Հայ կանանց միութիւնն փոխ-նախագահուհին էր և շնորհիվ նրա եռանդուն ջանքերի, Զանգեզուրի գավառապետը մուծել էր տասը ուսուցիչ՝ հօգուտ սրբերի և այրիների... Պատահում էր, որ տիկին Վարսենիկը ճաշից հետո շտապում էր իմանալ, թե արդո՞ք չե՞ն այրվել տիկին Վառնիկայի գաթաները, բայց միաժամանակ նույն տիկին Վառնիկայից նա տեղեկանում էր միութիւնն առկա գումարի մասին, որովհետև տիկին Վառնիկան կանանց միութիւնն գանձապահուհին էր և

արածը պահում էր իր սեփական դրամների հետ, հնաձև սնդուկի մեջ, որի բանալին ոսկե շղթայով կախված էր տիկին Վառնիկայի կրծքից, իսկ նրա կուրծքը՝ ամենաապահով վայրն էր Գորիս քաղաքում:

Ներկայացնելով Պավլի բեյ Օրբելյանին, նպատակ ունեինք ցրելու այն կարծիքը, թե Գորիսի բեյերը միայն ուտում և քնում էին, որպեսզի երեկոյան բակարա խաղան, մի քիչ բամբասեն, ապա կուշտ ուտեն և քնեն խոր քնով: Այդ կարծիքը կարող է ստվեր գցել Օրբելյանների առջի վերջին շառավիղի՝ Պավլի բեյի անվան և մոռացութեան տալ այն, ինչ նրա պատմական արժանիքն էր: Պավլի բեյը «Մշակ» էր ընթերցում և ոչ «Ելիզավետպոլի նահանգային տեղեկատու» ուսերեն լրագիրը. փողոցի տղաներին նա քարոզում էր հայ աղջիկ առնել, և վերջապես նա էր Հայաստանցու ընտանիքին օթևանել, որովհետև այն ամենի ժամանակ, երբ Զանգեզուրն ուսանում էր, Պավլի բեյ Օրբելյանն օր ու գիշեր մտածում էր հայոց թագավորութիւնն, ավելի ճիշտ՝ Սյունյաց նախարարութիւնն վերականգնման մասին:

Նրա մահից հետո մնացած գրութիւնները և մանավանդ անձնական օրագրերը վկայում են, որ երբ Հաստ Ներսես բեյը փոխ-նահանգապետին ռապորտով գեկուցում էր, թե Միծեռնավանքի ուխտագնացութիւնն օրը անհայտ ավազակները հարձակվել են ուխտավորների մատաղացու անասունների վրա և երկու կողմից հրացանաձգութիւն է եղել, — նույն այդ դեպքի մասին Պավլի բեյ Օրբելյանը, գուցե հենց նույն օրը, այսպես է գրել.

«Արյունարբու և զազանաբարտ ավազակներ, ազգով թուրք ու դարա-մամադ ցեղից, զինված հարձակվեցան ուխտավորաց վրա և քաշն Ավան Ղուրդանց ի գեղջեն Մխիթարա սպարապետի, Թորոս Թելունց նույն գեղջեն, Աբեթնակ Տաթևացի և երևելի Զոհրաբ, մականվանյալ Զինչիլ-Ղոան՝ Աղվանից գեղջ, միահամուռ արշավելով դարբադադարին ավազակներաց, ետ խլելով գերի վարյալ ոչխարն և ուխտն կատարեցին Սյունյաց Սահակ իշխանի գերեզմանի վերա: Նաև այս իմանալի է, որ Հաջի-Սամլուի գավառամասի պրիստավն Վոսկրեսենսկի, ազգով ռուս, հովանավոր է վերոգրյալ դարա-մամադ ավազակաբարտ ցեղին և ինքն է մեծ կաշառու և հայատյաց: Ուրիշ փաստեր նմանապես կհիշատակենք ժամանակին»:

Այդպես է գրել Պավլի բեյն այդ սովորական դեպքի մասին, իսկ շատ բեյերի նա այնպես է պախարակել, որ նրա գրածը, ինչպես Գորիսում էին ասում, գազեթ գցելու բաներ են:

«Մեկիք-Հյուսիսային խանչալ բեյի պապն եղած է մատուռից մտմ

գողացող և Մուհամմեդի կրոնն ընդունելով եկած է հայրենիք մեծ անիրավութեամբ: Ռուսաց տիրապետութեան օրոքն նա կրկին հավատափոխ է լինում. բայց ժողովուրդն նրան միշտ անվանում է հաջի-Հյուսեյն... Խուրշուդ բեյի հայր Աթա բեյը յուր կոչումն ձեռք է բերած յուր կնոջ անբերովն, որն եղած է գեղեցկագոնն և թեթևաբար...»:

Պավլի բեյի օրագրերից հայտնի է անում և այն, որ նա մասամբ ծանոթ էր հին Սյունիքի պատմության: Վարարակնի կառուցումը նա մանրամասն է գրել, ըստ երևույթին նյութեր քաղելով տոհմական ինչ-որ ձեռագրերից: Պավլի բեյը հետաքրքիր բացատրություններ է տալիս որ ձեռագրերից: Պավլի բեյը հետաքրքիր բացատրություններ է տալիս որ ձեռագրերի հարավում ապրող այրու մեհրի մասին, նրանց համաբնույթի վաղեմի արևորդիների մնացորդներ: Տաթևի շարժական սյունի մասին նա մի մեկնություն ունի, որ վերջանում է այսպես.

«Փիլիպպե Տեր Սյունյաց, դու որ քո սուրն խրեցիր հայրենի հողն և քարն սյուն դարձավ քո սուրն, այժմ մինչև երբ պիտի ճոճես այն և երբ պիտի հասնի այն օրն, երբ Սյունյաց ազատանին նորից տիրե Գողթան երկրին, Երնջակին, Վայոց ձորին, Կապանին և Հաբանդին մինչև Փայտակարան...»:

Բայց մենք վերջին անգամ դարձյալ դառնանք Գորիս քաղաքի երկտես հասարակության:

Առաջին հարցը, որ ինչպես ասում են ծառայողն է մեր առջայն է, թե ի՞նչ մարդիկ էին Գորիսի բնակիչները և այդ ոչ այն իմաստով, թե ինչպես էր նրանց արտաքինը, — որովհետև աշխարհի բոլոր անկյուններում էլ կան հաստ ու նիհար մարդիկ, մարդիկ, որոնք հոգնում են քնելուց և որոնք իրենց կյանքում մի անգամ կուշտ քնելու կարող են:

Գորիսում էլ կային տեսակետով տանեցող տիկիներ, ինչպես, օրինակ, տիկին Օլինկան և տիկին Վառնիկան, որից առաջինը գերադասում էր մաղաղար թթուն, իսկ երկրորդը՝ չոր թթուն: Եվ նույնիսկ նրանք կարող էին վիճաբանել և մինչև անգամ կարող էին իրար ծանր խոսք ասել:

Սակայն մեզ ոչ այդ է հետաքրքրում և ոչ էլ այն, որ Հաստ Ներսես բեյը մի քանի գավաթ խմելուց հետո երբեմն յուր կնոջն անվանում էր բիրուլի և պիկուլիս, — անվանում էր նույնիսկ հյուրի հերկայությունը, որից շառագունում էր տիկին Վարսենիկի երեսը: Մեզ հետաքրքրում է Գորիս քաղաքի բնակիչների հոգևոր շահերը և թե հա-

նա ինչի նրանցից շատերը պուֆ անելով մրտում էին այն փիրուզե երկնքը, որ քաղաքի վրա կախվում էր արծաթ և ոսկի աստղերով և որին մի անգամ անարգել էր նույն Հաստ Ներսես բեյը, Ճաղար Մուղրովի մեղալնեղով զարդարված կուրծքը նմանեցնելով Գորիսի երկնքին:

Ի՞նչ հոգևոր շահեր ունեին Գորիսի բնակիչները և ի՞նչ ազգի մարդիկ էին և ի՞նչ լեզվով էին խոսում... Ոչ մի հոգևոր շահ չունեին Գորիսի բնակիչները, ընթերցող, և նույնիսկ քաղաքի ավագ քահանա Տեր զի քաղաքում տեր Ջավենը, լուսավորչական հավատի գավազանը երկու Զիֆուդար բեյերի տները կորհներ, եթե թուրք Զիֆուդար բեյը նրան աղահամբույր տար: Իսկ ինչ վերաբերում է բեյերի հոգևոր շահերին, ապա նրանք հոգի չունեին, որ հոգևոր շահ ունենային: Միայն Պավլի բեյն էր, Օրբելյանների վերջին շառավիղը, որ առանձնության մեջ ակնկալում էր Սյունյաց նախարարության վերադարձը: Իսկ Հաստ Ներսես բեյը և մյուս բեյերը գիտեին, որ աշխարհում կա պետ և ստորագրյալ և արանքում հարկավոր է թուղթ խաղալ, ուտել և ձանձրանալ, ձանձուրթից հորանչել, հորանչելով բամբասել, աղջիկներին տեղաց անել, տղաներին դարձնել ավելի բարձր պաշտոնյա, այսինքն դարձյալ տեղաց անել նահանգային դեպարտամենտներում:

Նույնն էին նաև խոշաները և միայն նրանց որդիները, որոնք պրոպրետար էին և Պասաժում խանութ ունեին, — պատահում էր, որ Եփրատ Երեմի խանութում զրուցում էին Պետական դումայի օրինագծերի մասին և հաշտարար միջնորդ Սուղակինը՝ սարսափելի լիբերալ, ինչպես անվանում էր Լյուդմիլա Լվովնան, — կարծիք էր հայտնում, թե Պարկով 2-րդի ճառից հետո զեմստվոյի իրավունքները կսահմանափակվեն, այնինչ Տիգրան Պետտիլը, որ ոչ պրոպրետար էր և ոչ էլ լիբերալ, այլ ահա ի մտածող էր, հակառակ կարծիքի էր:

Պատահում էր, որ Եփրատ Երեմի խանութում ծայր էր առնում այդպիսի վեճ համապետական խնդիրների և ոչ, օրինակ, մազաշարի և չոր թթուի շուրջը, բայց այդ վեճն էլ վերջանում էր հորանչյունով և եթե նույնիսկ հորանչյունով չվերջանար, այլ վերջանար մի շիջ խերբեսով, որ Եփրատ Երեմը բաց էր անում ի նշան հաշտության, — դարձյալ հոգևոր շահից չէր այդ վեճը; այլ այն ահեղի ձանձուրթից, որ քաղցր ծորում էր ամբողջ Գորիսում:

Նույնիսկ եթե ասենք, թե տարին մի անգամ Հաստ Ներսես բեյն ունենում էր հոգևոր շահ, երբ, օրինակ, պարոն Արշակը նրան մաստուրում էր մի պատվավոր տոմս, որի վրա գեղեցիկ գրչագրով նույն պարոն Արշակը գրել էր. «Մեծապատիվ պարոն Ներսես բեյ, Գորիսի հայոց

ծիական դպրոցի սիրող-սիրողուհիների խումբը խնդրում է Ձեզ Ձեր ներկայությամբ պատվել թատերական հանդեսը հօգուտ...» — երբ ներսես բեյը հետևածորյա քնից հետո ընդունում էր պատվավոր տոմսը, հարցնում էր, թե ուրիշ ո՞ւմ են հրավիրել, համեմատում էր իր աթոռը և կարգը մյուս բեյերի աթոռների ու կարգերի հետ և ապա մի արծաթ ոտբլի էր տալիս, — տարին մի անգամ հոգևոր սովերի նման երևում էր և այդ կարելի էր մանրամասն պատմել, որովհետև այդ պատահում էր տարին մի անգամ, — բայց դարձյալ չի կարելի ասել, թե ի՞նչ ազդի էր ներսես բեյ Ձումշուգովը և ի՞նչ լեզվով էր խոսում և առհասարակ ի՞նչ լեզվով էին խոսում Գորիսի բեյերը, որոնց տները տարին երկու անգամ օրհնում էր քաղաքի ավագ քահանան և տնեցիները՝ մեծից մինչև փոքր կոանում և համբուրում էին հայ լուսավորչական խաչը:

Այդ ամենադժվարն է ասել, թե ի՞նչ ազդի էր Զիլֆուղար բեյը, որը վարժ խոսում էր թուրքերեն և ռուսերեն, իսկ հայերեն թե մական հաջորդին ասում էր աճուրդ, հայ դպրոցի աշակերտին՝ մոնթ, հայ գյուղացուն՝ էշ հայվան, հայ ուսուցչին՝ վարժապետ, Գորիսի Հայ կանանց միությանը՝ Տիկին Օլիկայի կուրս, հայերեն թերթին՝ վարժապետի գազեթ, որի տան դահլիճի պատերը զարդարված էին էջմիածնի, Լոռի-Մելիքովի, Մաղաթովի և այլ գեներալների նկարներով, որոնցից մեկին՝ Ֆիդել-աղյուտանտ Բեթանբեգովին զարմանալի նման էր Զիլֆուղար բեյը. նույն նեղ ճակատը, ունքերը՝ ողու փշերի նման ցից, քիթը բարձր, բայց ոչ մտոտ, այլ շոր և կաշին պիղկ, այնպես որ, երբ Զիլֆուղար բեյն ասում էր՝ «իմ հորս պապը Խաչնի Մելիք-Քյունանն էր», — ձայնը քթի մեջ դմբումբում էր, ինչպես կարասի մեջ:

Իսկ Ասատուր բեյը ոչ մի լեզվով չէր խոսում, այլ արձակում էր հնչյուններ և ձայներ բը՛ռո... որ նշանակում էր, թե նա ճաշից դժգոհ է, որովհետև Ասատուր բեյը ոչ ասունաս էր խաղում և ոչ նարդի, այլ սիրում էր որձ այծի միս. դա՛աս, որ նշան էր հավանության, նաև վկայում էր աշխարհի ունայնությունը, որովհետև այդ ասելով Ասատուր բեյը հառաչում էր: Քառասուն տարի նա եղել էր գավառային արխիվարիուս և ոմանք դրանով էին բացատրում նրա լեզու լիմանալը, որովհետև քառասուն տարի նա մեռած թղթերի հետ էր խոսել, այսինքն ասել էր բըռո, երբ գտել էր, որ ժամանակին նոտարը սխալ էր վավերացրել հողի վկայագիրը. ասել էր դա՛-աս, երբ ձեռքն էր ընկել քսանհինգ տարի առաջ գավառապետի ռապորտը Գորիս գետի վրա կամուրջ կապելու անհրաժեշտության մասին և վերջապես հը՛մմ էր ասել, որ

եղանակում էր, թե կասկածում է հաշտարար միջնորդի հաշվետվության՝ աղետյալներին հատկացրած նպաստի մասին:

Այդպիսի լեզվով էր խոսում Ասատուր բեյը և ոմանք այդ բացատրում էին գավառային արխիվի միջավայրով, բայց Ասատուր բեյի կնոջ ասելով նա հենց սկզբից այդպես էր: Այդ կարծիքը ճշմարտության մոտ է, որովհետև երբ վրա հասավ Ասատուր բեյի վախճանը, այսինքն երբ ուրիշ մարդիկ նրան կանչեցին հարցաքննության, Ասատուր բեյը ոչ մի բառ չկարողացավ արտասանել և միայն ասաց հոլ-հոլ, աբի-հոլ: Այնքան ասաց, որ նրան ազատ թողեցին և նա յոթ օր էլ իր տնեցիներին ասաց այդ մութ հնչյունները և մեռավ, իր հետևից հավիտյան անմեկնելի թողնելով շորս հնչյունը՝ հոլ-հոլ, աբի-հոլ:

Ավագ գրագիր Նազար բեյը ոչ մի լեզվով չէր խոսում, այլ աղվեսահաչ էր տալիս: Բալասան Կեբր բեյն ասում էր՝ «Սե-բիր-Սիբիրուտան... Ձառ, դու բարա, քարերը թուփ արա...»: Եվ միայն Պավլի բեյ Օրբեյանն էր խոսում և գրում գրոց լեզվով, որից մի նմուշ արտագրեցինք: Բայց այդ լեզուն մեռած լեզու էր՝ ինչպես Տերզի բազումի լեզուն, երբ նա թագի և շուրջառի ծանրությունից քրտնած սկսում էր իր քարոզը.

— Փողովորդ հավատացյալ, որպես տեր մեր Հիսուս Քրիստոս ասացյալ է օղտն ոչ անցանի ասղի ծակովն, նմանապես և...

Իսկ ինչ վերաբերում է վաճառականներին, ապա նրանց երիտասարդ սերունդը, որ պրոգրեսիստ էր, խոսում էր շալ հայերեն, այսինքն ռուսախառն հայերեն, ինչպես, օրինակ, Եփրատ Երեմը, որ այսպես էր խոսում, երբ ի նշան հաշտության բաց էր անում խերեսի շիշը.

— Պա մոեմու գրուժբա լուչչե դալմադալ... Տիգրան Պետոհի, համարի թե մի ոչինչ դարազումեննի էր էդ Մարկով վտարոյի ասածը... հմենք, գասպադա...

Մենք արդե՛ն տեսանք, թե ի՞նչ լեզվով էր խոսում Ավագիմովների ավագ եղբայրը՝ Ամբարի կատու Սողոմոնը. յուրաքանչյուր խոսքից հետո նա ասում էր՝ վեց արասի, վեց արասի, — և ինչպես պատմում էին, առավոտյան, երբ բացում էր խանութը, նա հարևանին ասում էր.

— Բարի լույս...վեց արասի, վեց արասի:

Իսկ Քյալլա-Սատուրը՝ դեղագործ և փիլիսոփա, խոսում էր մի հազվագյուտ լեզվով և միայն նա էր այսպես խոսում.

— Բարոնայք, Ձանկազորու կավառի Կորիս քաղաքն լուսավորյալ է...

Իսկ խոջաները՝ խոջա Մակիշը, Միրումով Կյուբին, Ֆրանգուլով Բագալ ապիրը, մինչև անգամ Ձամբա Սատուրը, որ խոջա չէր, այլ վաշ-

խառու էր, նրանք բոլորը խոսում էին թուրքա և պարսկախառն մի լեզվով, որ պրոգրեսիստ վաճառականների լեզվից տարբերվում էր այնքան, որքան Իրանի և Մոսկովի կտավը. մեկն ասում էր սանադ, մյուսը՝ վեկ սեել, մեկը դրամը թումանով էր հաշվում, մյուսը՝ ուրբիներով, հայրը կտավը շափում էր գյազով, որին ասում էր խանարշին, իսկ որդին ուսական կտավը շափում էր ուսական արշինով: Այնքան էր զանազան նրանց լեզուն, որոնց Աթա ապերն անվանում էր շան լեզու:

Ուրիշ էր Կյորեսի լեզուն, որով խոսում էին Հին ճանապարհի բնակիչները, հին շուկայի արհեստավորները և խոսում էին կամուրջից այն կողմը՝ Շենի բոլոր թաղերում, Ցաբուտ, Նորու և Չորեկ գյուղերում, այն լեզուն, որին տիկին Օլինկան անվանում էր շենավարի լեզու, ստորագասելով իրենց քաղաքավարի և բլաղարողնի լեզվին:

Ինչ չքնաղ լեզու էր կյորեսերենը... Չուտեիր և շիմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես քաղցր և նուրբ հնչյուններով խոսում էր վացարարուհի Մինան, ինչպես էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում և բառերը նստում էին, ինչպես փափուկ մալանչները: Հապա Գոլուն Կարին... Կռանում էր սառն աղբյուրի վրա, կուշտ խմում և ջուրը բեղերից կաթկթելով ասում էր խուվա՛յ... և այնպես էր ասում, այդ բառն այնպես էր զրնգում, որ եթե աղբյուրը նորահարս լիներ, ամոթից քողը կքաշեր երեսին... Իսկ Աթա ապերը, երբ բարկանար, այնպես մի քմբո կասեր, որ Մեղբաբերծը կզրնգար:

Գորիսի ոչ մի փողոցում լեզուն այնքան վճիտ չէր, ինչպես Հին ճանապարհի վրա: Այդ լեզու չէր, այլ կարոտ, տխրություն, զայրույթ. այդպես Ղաթրինի ձորում երգում էր կաթավը և մթնում կարկաշում էր ծուրտ աղբյուրը:

— Տիեկերի հացերը մրսել են,— կասեր Աթա ապերը, չուխայի փեշից պոկելով փուշը, որ կպել էր արտի մեջ, բայց այնպես կասեր կարծես խնդրում էր մի կարպետ, որ ծածկի արտերը:

— Հորա՛ է, հորա՛,— և էլ ուրիշ ոչինչ չէր ասի Աթա ապերը, բայց այդ մի բառը կասեր դանգաղ, ծանր և արքայավայել, կասեր ինչպես հանդերի պատրիարք, և ով կյորեսեցի էր, նա հասկանում էր, թե մ'պ կորան վաղեմի պարարտ հողերը և շարմաղ ալյուրը:

«Իրանի թուրանում չկար քեզ բարբար,
Դառնես դառել, հե՛յ Չանգեզուր...»

Աթա ապերը կարտասաններ երկու տող «Գորիսի գովերց», բայց

այնպես կասեր, որ իբրև իշխում է խոր ձորերը և բարձրանում է բարձր լեռները, և լեռնային քամու նման լեզուն պտույտք է անում դեպի երկինք:

Այդքան գեղեցիկ և հնչեղ էր Կյորեսի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր՝ նախշերով և վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Մինայի աղբիկ ժամանակ գործած գորգը, որ փոված էր Հաստ Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնանում և մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները և պատահում էր, որ Մինան, երբ այդ հին գորգը տանում էր գետը և լվանում էր,— Մինան լաց էր լինում և նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն...

Կարմրաքար գյուղի մասին առաջին անգամ հիշատակում է գրե-
նադիր գնդի պետ Երմուղով 2-րդը իր այն ռապորտում, որ 1823 թ.
ապրիլի 17-ին ներկայացրել է Կովկասյան Մարզի պետ՝ ինֆանտե-
րիայի գեներալ Ալեքսեյ Երմուղովին: Ըստ այդ ռապորտի, այն ժամանակ
Կարմրաքարն ուներ 19 ծուխ, որոնցից հարկատու չէին միայն 3 ծուխ:
Ոչ ռազմական և ոչ էլ տնտեսական նշանակություն չտալով, գնդապետը
Կարմրաքարը համարել է ոչ որպես գյուղ և դիմացը նշանակել՝ «մշտա-
կան ձմեռանոց»: Երևի այդ ակնարկ էր այն մասին, որ Կարմրաքարը
շրջապատված էր անտառով, զուրկ էր հաղորդակցության համար մի-
ջոցներից և միայն երկու բարակ կածանով էր կապվում արտաքին աշ-
խարհի հետ:

Այդ թվականից մի քանի տարի հետո նույն վայրով անցել է և մի
վարդապետ, որի ճանապարհորդական հիշողությունների մեջ կարելի
է գտնել Կարմրաքարի անունը: Այդ գյուղի մասին նա գրել է հետևյալը.
«Խորաձոր անդունդ և դաշտաձև հովիտ, զարդարյալ ծաղկոք և առատ
բուսոք: Գարունն աստանոր բերե զնմանությունն Եդեմի»... Ապա հիշա-
տակում է գյուղից վերև ընկած լեռների կլոր պարը, որի ամենից բարձր
գագաթին կա սպիտակ լիճ՝ որպես հսկա մատանու աղամանդ: Նույն գրքի
մի այլ գլխում անդնդախոր ձորերում ընկած գյուղերի նիստ ու կացը
նկարագրելով, հեղինակը մի նախադասություն է ասում Կարմրաքարի
կանանց մասին, թե իբր ամոթխած էին, որպես անտառի պախրա:

Թե՛ Երմուղով 2-րդի և թե՛ հոգևոր հոր գրածը հայտնի էր Կարմրա-
քարի ծխատեղի բահանա Տեր Գևորգին, որին գյուղում կոչում էին Տեր
Նորընծա: Քահանան շատ անգամ էր ասել, որ ինքն իր աչքով կարդացել է

վանքի խորանում պահած մի գիրք, գրված ոսկե տառերով, շեյրանի
կաշվի վրա, ուր հիմից ավանդվում է աշխարհի երեսին եղած և կորած
բոլոր ազգերի պատմությունը, թագավորների գահ բարձրանալը, քա-
ղաքների կործանումը և այլն: Եվ իբր թե այդ գրքի մեջ գրված է, որ
Կարմրաքարը «աթոռանիստ և բերդաքաղաք» վայր է եղել, որ գյուղի
այժմյան եկեղեցին կառուցված է մի հին տաճարի ավերակների վրա:
Նա նույնիսկ ասում էր, որ այժմյան եկեղեցու ամբիոնի քարերը շատ
հնուց են, վրան փորագրություններ կան, որ ծածկված են բարակ սվա-
ղով:

Տեր Նորընծայի ասելով Կարմրաքարի ներկա բնիկները գաղթել են
«Նազարացոց աշխարհից» դեռ այն ժամանակ, երբ լեզգիների թագա-
վորությունն էր այն կողմերում: Իբր թե լեզգիների երկրում խառնակու-
թյուն է սկսվում, այնտեղ «խաշապաշտ ազգաբնակությունը» գլուխ է
առնում և ցրիվ գալիս շորս կողմի վրա: Նրանց մի մասը գալիս է մի
մեծ և վարար գետի դեմ առնում: Գետի ափին այնքան են սպասում,
մինչև չուրը բարակի: Շատ դառն տանջանք քաշելուց և կորուստ տա-
լուց հետո, անցնում են գետը և նրա ափով շարունակում ճանապարհը,
հանդիպում զուլալ մի գետակի, որ հանդարտ հոսելով միանում է այն
մեծ գետին: Հենց ջրախառնուտի մոտ խմում են գետի և գետակի ջրից,
տեսնում, որ գետակի ջուրը քաղցրահամ է և որոշում՝ գետակի ընթացքը
քնած գնալ մինչև ակունքին հասնելը: Իսկ հայտնի է, որ Մարցա ջրի
ակունքները գտնվում են Կարմրաքարի հանդում:

— Ո՞ր կողմն է էդ հազարացու աշխարհը, տերտեր,—հարցնում էր
Ավան ամին, եթե հանդիպում էր տերտերին Կարմրաքարի պատմու-
թյունն անելուց: Եվ որտեղ էլ լինե՛ր՝ կնունքի նստած, թե հարսանքա-
տանը, եկեղեցու գավթում՝ պատի տակ շար ընկած, թե Բոլոր-քարի
մոտ, որ գյուղի հրապարակն էր համարվում և ուր այժմ էլ հավաքվում
են գյուղացիք,—որտեղ էլ լինե՛ր, Տեր Նորընծան աչքերը պիտի խոժո-
ռեր, ունքերն իրար տար և երեսը դարձնե՛ր Ավան ամու կողմը:

— Սկսվեց,—մտքում ասում էին մի քանիսը և հետաքրքիր լսում
այն, ինչ շատ անգամ էին լսել:

— Ա՛, դե հերիք լի՛,—Ավան ամու վրա տրտնջում էր նրան հասա-
կակից մեկը:

— Չէ՛, թող մի ինձ ասի, էդ ո՞ր կողմն է...

— Չաքաթալու թեմումը,—պատասխանում էր տերտերը:

Իսկ Ավան ամին ավելի էր տաքանում:

— Էդ ի՞նչ մարդիկ էին... էն լեն ու բոլ երկիրը թողես, գաս էս

ապառաժին դեմ առնե՞ս... Չէ՛, տերտեր, իմ գլուխը չի մտնում, էն-տեղից էստեղ մարդ չի գա: Հենց իմ ասածն է, որ կա:

Իսկ Ավան ամու ասելով, Կարմրաքարի տեղը շատ առաջնորդում անանց անտառ է եղել և անտառի միջով, գետի ափով միայն մի նեղ արահետ: Ո՛չ բերդ է եղել, ո՛չ քաղաք և ո՛չ էլ տաճար: Հիմնադիրը մի գնչու է եղել, որն իր կնոջ և էջի հետ անցնելիս է լինում արահետով և անկարծ կնոջ ցավերը բռնում են, գնչուն խոսք է տալիս, որ եթե կինը տղա բերի, ինքը ձեռք է քաշելու թափառական կյանքից և հենց այդտեղ էլ տուն է շինելու:

— Չվանը ետ է տալիս, ծառից կապում... Կնիկն էլ գնում է ծառի շվաքարանում պառկում: Մինչև էջի փալան վերունելը, կնիկը մի տղա է բերում... էն օրից էլ էս գյուղն ստեղծվում է: Դե հաշիվդ ա՛ռ...

Գյուղացիներից շատերն էին համամիտ Ավան ամու ասածներին: — Ենիքը գլխին մարդը չի գա էս քար ու քոլի մեջ տուն շինի... էն է ոտքերը շարված բոշա պետք է լինի, որ էստեղ վեր ընկնի ու մեռնի... Թե չէ Կարմրաքարն ապրելու տեղ չի:

Այս խոսքն ասելուց, զրույցն հին օրերից դառնում էր առօրյայի շուրջը և ամեն մարդ մի պատճառ էր բերում, թե ինչու Կարմրաքարում ապրելը դառն է:

— Տարին տասներկու ամիս քարի, քոլի հետ կոխ կենաս, մաճը բռնած, է՛ս ցաքուտը վարես, է՛ն քարի տակ սերմ գցես, էլի ձմեռվա կեսին տաշտը ցամաք, պարկը դատարկ: Ծս իմ աստվածք, արանի թուրքերը որ չլինեին, մեր օրը սև էր, — ասում էր Ունանը, որը ոչ միայն Կարմրաքարում, այլև շրջակա գյուղերում հայտնի էր որպես լավ մաճկալ: Ինչքան էլ քարոտ և կոշտ լինեի հողը, ինչքան էլ տափը սարալանջ լինեի, Ունանը և ոչ մի ակոս ծուռ չէր տանի: Ակոսն ակոսի վրա շարում էր ու գետինը նախշում սև ցելի ուղիղ գծերով: Պատահում է, որ խոփը գեմ է առնում հողի տակ ծածկված քարի կամ փշի արմատին: Եզները հանկարծ ձգում են, խոփը թափով քարին է դիպչում, կտրատվում են փո-կերը, մաճկալն ընկնում է մաճի վրա և եթե մի տեղը չվնասվի, ատամ-ները թափով իրար պիտի կպչեն, աչքերի առաջ մթնի: Իսկ Ունանի վարը միշտ առանց փորձանքի էր: Մաճից կախ ընկած, աչքը խոփի ծայրին, լուռ հետևում էր վարին և ճիշտ ժամանակին զգում, թե քար կա հողի տակ, փորձանքը մոտենում է. խկույն մաճը վեր է հանում, կողքին թեքում, եզները քաշում էին և նորից խոփը խրում հողի մեջ: Այդքան աշխատելուց հետո, նրա մեկը երկու չէր դառնում: Ամեն ձմեռ Ունանը պարկերը շալակին գնում էր տափաբակի թուրք գյուղերը:

Ունանը մարդկանցից ցորեն կամ գաբի փոխ առնելուս Ամեն տարի այդ նույն պատմությունը կրկնվում էր: Ունանը խոսք էր տալիս՝ որ վերջին անգամն է մաճ բռնում, էլ երբեք վար չի անելու:

— Գնամ նոքար մտնեմ, սրանից տասնապատիկ լավ կապրեմ... Չկա՛, չկա՛, Կարմրաքարում ապրուստ չկա, — ասում էր նա, բայց հենց ձյունահալը վերջանում էր թե չէ, խոնավությունն սկսում էր գոլորշիա-նալ, հողը փափկանում էր, մեղմանում էր և Ունանը, օրը մի քանի ան-գամ նայում էր սևին տվող գյուղի հանդերին, — ուր դեռ ձյունի կիտուկ-ները մնում էին ձորերում ու փոսերի մեջ, — հողը տրորում էր կոշտ մատ-ներով և մոտենում՝ ամբողջ ձմեռը ձյունի տակ ընկած արորի սարքը նայելու:

— Ասում ես թուրքերը որ չլինեն... էլի նրանք են ձեռք բռնում, — վրա էր բերում մի ուրիշը, — ախր քա՛նի մին, քա՛նի մին... Մեր գյուղում էլ կա ձեռք բռնող... Սև լինի էն օրը, որ մարդ էդ ձեռքը բռնի լավ է կրիսեքը տկուր մնան, քան նրանց դուռը գնաս...:

Բուրն էլ լռելյայն հասկանում էին, թե խոսքն ո՞ւմ մասին է: Հաս-կանում էին և լուռ: Ամեն մարդ իր մտքի հետևից էր ընկնում:

Բայց եթե գյուղի հիմնադրման մասին Ավան ամու և Տեր Նորըն-ծայի վեճը համարյա ամեն տեղ կարող էր ծայր առնել, միայն լսող փնիր, — Հիբանի որդիների մասին խոսք լինում էր միայն սակավա-թիվ խմբակի մեջ և այն էլ՝ եթե լսողները յուրային էին: Օրթ-նակ, եթե երևար Գողին՝ լերկ երեսով, դեմքի մաշկը ծալ-ծալ ու ման-րիկ աչքերով Գողին, որ շատ քիչ էր խոսում և ինչ էլ ասեին, միայն ժպտում էր, աչքը հեռուն գցում, իբր թե չի լսում, — եթե Գողին երևար, մեկը պիտի զրույցը հաներ տկոսից, Ունանի մաճի պես թեք գցեր, մինչև Գողին հեռանար:

Եթե նա մոտենում էր Ունանի խոսքի վրա (իսկ Գողին այնքան աննկատ էր մոտենում, որ մի պահ չէին տեսնում և տեսնելուց էլ խո-սողը դժվարանում էր որոշել, թե նա որ խոսքի վրա եկավ), — այդ կարճիկ, թիկունքը լայն և ոսկորը պինդ մարդը, որ ծանր արորն ակո-սից այնքան հեշտ էր հանում, — Ունանը՝ խեղճանում էր, մի կողմի վրա քաշվում և ասում.

— Նստի՛, Գողի... Չես երևում... Ասում եմ էս տարվա աշունք-վարը մի քիչ ետացավ:

Գողին քթի տակ ժպտում էր, հետոն նայում և կամաց հեռանում: Իսկ Ունանը փշաքաղվում էր, մեջքն ալիլի ամուր հենում Բուր-քա-րին:

Բայց երբեմն Ավան ամուսնու և Տեր Նորրնծայի խոսակցութունը Կարմ-
րաքարի առօրյայի մասին տաքանում էր, մանավանդ, եթե նստած-
ների մեջ երիտասարդներ էին լինում, որոնք ավելի շուտ Ավան ամու-
սնու հետ էին և պաշտպանում էին նրա խոսքը, թե Կարմրաքարն ապրելու
տեղ չի:

Նրանք ավելի տաք էին խոսում:

— Տերտեր, հենց թող քո ասածը լինի. էն ժամանակ քա՞նի ծուփ
կար մեր գյուղում:

Տեր Նորրնծան դանդաղ պատասխանում էր.

— Ըստ շնչակրական մատենույս և իմ ասմունք գրքի 19 ծուփ
արքունի գյուղացի, որպես ալհադդա ցուցակ... Նաև գյուղացվոց վա-
յելման տակ գետնաբաժին հարյուրը հիսուն օրավար բարահիր հող...
Մեր Ցաքուտը, Երկայն տափերը, Քառասնաշուրը... Մի առ մի գրված
և Կովկասու փոխարքայից հաստատված...

— Հիմա էլ հարյուր տասը խարջ տվող տուն ունենք... էլի էն Ցա-
քուտն է, էն Քառասնաշուրը... Դե Հիբանի տղորց արտերը բեր բաժին
անենք, տես ո՞նց ենք կառավարվում...

— Այ որդի, հողը չի պատճառը... Ազգաբանություն մեզ սեր, միա-
բանություն չկա: Առաջվա լիությունն էլ չկա. ահա քեզ արմատ շարյաց:
Թե չէ ինչ ես տակից և գլխից խոսում,—մի քիչ շարանալով ասում էր
Տեր Նորրնծան, ավելի արագ գյուղում թագբեհի հատիկները:

— Տես ինչեր են խոսում... Մեր ժամանակն ո՞ւր... Հեզ էինք, որ-
պես գառ,—մտածում էր քահանան և ապա թագբեհի հատիկները մեկ-
մեկ իրար վրա դարսելով դանդաղ ավելացնում.

— Հիբանի հողերը բաժանք անես, ամենայն մի շնչի մին օրավար
չի հասանի... Դորանով յարան չի սաղանա, ա՛յ օրհնյալ... Ազգաբա-
նությունը թող հաշտարար ապրի, տես, թե ինչպես առատություն լինի
ամենայն մին բանի:

Իսկ երիտասարդն ավելի էր տաքանում:

— Էս քեզ միաբանությունն, տերտեր. բա որ մինը ձմեռը սխտորած
ավելուկ էլ չի ճարում, որ փորը տաքացնի, մինն էլ գառան փլավ է
ուտում, վրան էլ նուան ջուր խմում, որ մարսի... Սրան ի՞նչ կասես:

Ավան ամին ժպտում էր, տեղը շարժվում և ավելի հարմար նստում:

— Այ թե հա՛... տերտեր,—և ժպիտը դառնում էր թեթե ծիծաղ,
կապույտ աչքերը փոքրացնում էր, ավելի արագ թարթում, ասես երե-
տասարդին աչքով էր անում, որ ավելին ասի:

— Էս էլ քու հագարացու աշխարհը չի, որ լեզվակոխ անես... Ասի՛,

էդ է, արևդ կծեմ... Թե մեր ծուրը դող լինի, էլի ձեզանից մի հույս
կա... Մենք հեշ, զուր ենք հաց ուտում: Ի՞նչ ես ասում, Անդրի, իմաս-
տուն մարդ ես:

Վերջին խոսքը Ավան ամին բարձրաձայն էր ասում, որովհետև
ուղղում էր ջաղացպան Անդրուն, որի լսողությունը ծանր էր: Զաղաց-
պանը բարձրահասակ էր ու նիհար: Նա ավելի բարձր էր երևում այն նեղ
ու հնամաշ քուրքի մեջ, որ ամառ-ձմեռ վրայից չէր հանում: Ալրոտ
փափախն այնքան խոր էր կոխում, որ ականջի բլթակներն անգամ
չէին երևում: Փափախի տակից թաղիքի կտորների նման կախվել էին
անլվա, քրտինքից իրար կպած ու կեղտոտ մազերի փնջերը: Նրա փա-
փախը, դեմքը, քուրքը, տրեխները, ինքն ամբողջովին՝ ալրաթաթախ
էր: Փողոցով անցնողը հեռվից էլ կարող էր Բուլուր-բարի շուրջը նըս-
տածների սև ու դեղնավուն շուխանների մեջ ջոկել Անդրու ալրոտ քուրքը:

Նա սակավ էր մասնակցում այդ գրույցներին: Զաղացը Մարցա
քի մյուս ափին էր, գյուղի դիմաց, և եթե գյուղամեջ էր դուրս գալիս,
ապա կամ ջաղացում աղուն չկար և կամ աղունատերն այնպիսի մարդ
էր, որ ջաղացում մի բան պատահելուց կարող էր ջրատունը կալնել,
մինչև նրա գալը: Պատահում էր, որ գրույցի նստած ժամանակ գետի
մյուս ափից կանչում էին: Նստածներից մեկը նայում էր ջաղացի կողմը,
տեսնում, որ փափախով են անում, թևով բռնում էր ջաղացպանին:
Անդրին խոսքը կիսատ էր թողնում, վեր կենում և դանդաղ քայլերով
գլուխը կախ հեռանում, փայտը կույրի նման քարից քար խփելով:

Այդ գրույցների ժամանակ ջաղացպանը երիտասարդներին ավելի
լավ էր լսում. նրանք տաքանում էին և ձայնը բարձրացնում: Նրանց խո-
սելուց ջաղացպանը հասկանում էր, թե ինչ պատասխան է տվել Տեր
Նորրնծան: Եվ երբ գրույցի տաք ժամանակ Ավան ամին նրան էր դիմում,
Անդրին մի պահ ձեռքի փայտով ավերում էր գետնի վրա գծած նախշը:
Նա շատ դանդաղ էր մտքինն ասում, ասես գետնի նախշը իր մտքերն
էին, և զգույշ ջնջում էր այն, ինչ որ չէր ուզում ասել:

— Առաջ հողը պտուղ էր տալիս, հիմա հողը խոռվել է: Հին խոսք
է, որ հողը կոփվ չի սիրում... Հիմա էլ կոռածունքը շատ է, մարդոց
մեջ լիությունը խանգարված է: Կովը, որ կով է, էլի շարացած ժամանակ
կաթը քաշում է... Հողն էլ էդպես: Երեսը հազար մեղավոր մարդ է կոխ
տալիս, թքում են, արյուն են թափում... Արտի մեջ սատկած շուն են
գցում... էլ էն հողը պտուղ կտա՞: Մի խոսք, հողը խոռվել է:

Խոսելուց նրա բարակ շրթունքները կլորանում էին, ներքին ծնոտի
մի հատիկ գեղնած ատամի հետև, բերանի խոռոչում, խմորի գեղի պես

թուլվում էր լիզում: Կարծես ոչ թե խոսում էր, այլ ծամծամում մի պատան, որ հիմա պիտի կու տա: Եվ եթե չլիներ մի հատիկ ատամը, այդ պատանը պիտի սահեր, ընկներ:

— Հնում մարդը ուսմիկ էր, միամիտք, — շարունակում էր մի քիչ շունչ քաշելուց հետո: — Հիմա մարդու ոսկորն էլ է փոքրացել. չեմ իմանում ինչի՞նչ է, խորամանկությունի՞ց, թե՞ ուսմունքից: Պապս էսքան էր, — և փայտը բարձրացնում էր վեր, — հորս էլ հո տեսել ես, տերտեր... Դե ինձանից արշա եկածն ի՞նչ պիտի լինի:

— Ինչո՞ւ, Անդրեաս, Բարիկոն հասակով է, — պատասխանում էր Տեր Նորընծան: Նա ոչ ոքի չէր կանչում գյուղում ընդհանրացած անուսով, այլ ըստ իր շափարեղական մատյանի:

— Է՛հ, ո՞սկորն ասի, ոսկորը... Ամեն ինչը ոսկորի վրա է... Այրումի ջուրը մին-մին որ խփում է գերեզմանատան կողմը, տեսնում եք ի՞նչ ոսկորներ է հանում: Մարդ մնում է զարմացած... Հավատալու չի, թե էն ոսկորքը մարդ աբարածինն են... Արմունկը մի տղամարդի գլուխ, թե էն ոսկորքը մարդ աբարածինն են... Աղանձած հասմարդ է եղել, ինչ ուժի տեր: Հիմա ասում ես Բարիկոն... Աղանձած հասմարդ տերտեր... Լցվել են՝ էս սարի տակ մի գյուղ, էն քարի տակ մի շհար, էլ տեղ չկա: Առաջ ի՞նչպես էր: Ողորմած հոգի պապս էր պատմում, որ էր երեք գիշեր մեր գյուղից որ կողմի վրա էլ գնայիք, ճանապարհին մի մարդու շէր աաստ գա, բարի օր ասեիր: Հրեն Ձրիկը, էս թումբի հետևը Ձեյթան, հրեն հա՛, ծուխը... Դե շհարի մասին խոսք չեմ ասում: Ապականությունը, որ էնտեղից է... Բա՛... հիմի ասի, թե Հիրանի տղերքը: Նրանք չլինեին, մի ուրիշը տեղը պիտի բռներ: Անհնարին բան է: Մարդը որ էս ոսկորի տերն է, նա սոված էլ կմնա, նրա գլխին կրամփեն էլ, նրա արյունն էլ կխմեն: Բա ո՞նց... Երկու սոված կատու որ փեն էլ, նրա արյունն էլ կխմեն: Բա ո՞նց... մինը մեկեիին պիտի ուտի: Մենք գցես պարկի մեջ, անհնարին բան է, մինը մեկեիին պիտի ուտի: Մենք երկու շենք, հազար շենք, շատացել ենք, էս ձորերն ապականել...

— Չէ՛, էսօր գիրդ շաղվել է, Անդրի: Մին նալին ես խփում, մին մեխին, — պատասխանում էր Ավան ամին: — Ուրեմն ոնց անենք, բո ասելով մեր հիմիկվա հազարը մինին էլ շարժի՞: Բա ուսմունքի օգուտն ի՞նչ է, լուսավորությունի: Ուրեմն քո ասելով էս շահելները մեզանից վա՛տ օր են ապրելու... Պա հո՛... վա՛յ ձեզ, վա՛յ ձեզ օրին, ա՛յ շահելներ:

— Անդրի ամի, Հիրանի տղերքն էլ են մեր ոսկորքից, չէ՛, — հարցնում էր մեկը:

— Հը՞, — շաղացականի դեմքի մկանները կծկվում էին, լսողությունը լարում էր: Հարցը տվողը կրկնում էր և ավելացնում.

— Դե թող նրանք էլ մեզ պես ապրեն... Շալուն Սիմոնի ոսկորն է հաստ, թե՞ Եփրեմի:

— Այ հա՛յ... Անդրի՛, դե պատասխանը տո՛ւր:

Շալուն Սիմոնը Կարմրաքարի այն բնիկներից էր, որոնք ընչազուրկ զանալով, տնից ու հողից զրկվելով, տեղավորվում էին գյուղից մի քիչ ներքև, գետի ափին ընկած հին և կիսավեր մարագներում: Գյուղի այդ մասում ապրողների ամենից «հարուստը» մի քանի ժանգոտած պղինձ ուներ, կոծկած կարասի և կուժ ու մի ջրունգ, որով փորփրում էին անտեր և անբերրի հողերը ու ձեռքով շաղ տալիս կորեկ:

Ջաղացականը նեղն էր ընկնում և փայտի ծայրով գետնի վրա մի քանի խազ ավելի արագ քաշելուց հետո, շարացած պատասխանում.

— Նրանց էլ պատիժ է ուղարկել, որ միշտ գլխիդ վայ տաս...

Հենց այդ ասեր թե չէ, Ավան ամին գրույցի նյութը փոխելու համար, ասում էր շաղացականին.

— Քո ի՞նչ բանն է էս շահելի հետ գլուխ ես դնում: Քոնը Ռուստամ Մայիֆի պատմությունն է: Մի ասա է՛, շահը ոնց կանչեց նազիր վեզիր-ներին...

Ավան ամին գիտեր նրա թույլ կողմը: Ջաղացականի դեմքը ուրախությունից պայծառանում էր, գրույցն էլ հանդարտում էր, ինչպես ծանծաղուտում կորչող լեռան սրընթաց գետակ:

Կարմրաքարում ոչ ոք շաղացականի նման պատմություններ չգիտեր: Ավան ամին էլ էր ծանոթ հին կյանքին, Տեր Նորընծան կարդացել էր «Սրբոց վարքը» և ուրիշ գրքեր, բայց շաղացականի նման ոչ ոք չէր կարողանում պատմել: Նա հնարում էր, ստեղծում: Ինչքան ավելի էր հնարում, ավելի էր ստեղծում, նրա ոգևորությունն այնքան կրկնապատկվում էր, ձայնը դողում էր, և լսելն ավելի ախորժելի էր դառնում: Նա պատմում էր ամեն տեղ՝ շաղացում, ձմեռվա երկար գիշերներին, նրանց համար, որոնք աղուն էին բերել, գյուղի պատերի տակ՝ եթե ազատ էր և գյուղամեջ էր գուրս եկել, գետի ափին, ուր նա ժամերով նստած հայում էր Մարցա չրի պղտոր ալիքներին:

Նա գիտեր ինչ ասող երբ է դուրս գալիս, եթե լուսադեմին մառախուղ է լինում, ապա ցերեկով ի՞նչ եղանակ պիտի լինի, եթե երաշտ է ու հանկարծ պարզվա երկնքում որոտում է կայծակը, ինչու պիտի դեղառուր թափի և ոչ մաքուր անձրև: Մարցա չրի բնույթը նա ուսումնասիրել էր շատ մանրամասն: Ձմեռվա կեսին, երբ սար ու ձոր ձյունով

մեանում: Հոր մահն ուղքի է բերում նրան: Տուն է գառնում և գլուխը բաշ ապրում, տիրություն անում հորից ժառանգութուն մնացած շաղապին:

Շատ տարիներ հետո, երբ սպիտակած մազ սեներ, Անդրին համաձայնվում է ամուսնանալ, լսելով Տեր Նորբենի հորդորը, բայց ավելի շատ Ավան ամուսնանալը և կնութան է առնում Զրիկ գյուղից որբակարի Նդանին, որից և ծնվում է Բարիկոն:

Ջաղացն Անդրու համար կենարոն էր, ուր ամեն ինչ կարելի էր իմանալ: Բերում էին ազալու ցորեն, գարի, գալիս էին մոտակա գյուղերից հայ, թուրք: Բազմաթիվ ճանանչ ունեք և բոլորի տան ու տեղին, ունեցվածքին, նրանց հետ պատահածին նա տեղյակ էր: Բերած աղունից նա գիտեո, թե բերքն ինչպես է: Երբ նոր ցորենի բնաներն իջեցնում էին,— շաղացականը մտտենում էր, ձեռք կոխում պարկի մեջ, ապա բուռը մոտեցնում աչքերին: Ցորենի ձևը, մաքրությունը, լզարակն ու տառազը, բարակ փոշին, որ նստում էր ձեռքին,—բոլորը մի-մի նշան էին, որից նա հասկանում էր, թե տարին ինչպես է անցել, ինչ հողումն է ցանած և ինչից է, որ ցորենի հատիկը մեծ է, բայց մեջը փուշ: Աղքատին և հարուստին նա գիտեր ջոկել ոչ միայն պարկերից, հագուստից, ձիերի և շորիների սարքից, այլև ցորենից: Հարյուր միանժամ պարկ եթե կողք-կողքի շարեին, նա կճանաչեր այն պարկը, որի մեջ էր Դերվիշ Հյուսեյնի ցորենը: Դերվիշը Զեյթա գյուղից էր: Նա ոչինչ չէր ցանում. նրա պարկինը հարյուր կալից մի-մի գուշով էր հավաքված:

Մարդը շատ լինելուց, գրույցն էլ հետաքրքիր էր անցնում: Եթե լուսնկա և զով գիշեր էր, նստում էին շաղացի դռանը, ընկուզենու տակ: Երբեմն կրակ էին անում և փոքրիկ թոնրի մեջ ջաղացի անալի բլիթներ թխում, նոր ազած և տաք ալյուրից: Զրույցն ավելի հետաքրքիր էր դառնում, երբ եկողների մեջ լինում էին այնպիսի մարդիկ, որոնց հետ դեռ անցյալ տարի ու գեո ավելի առաջ շաղացականը վեճի էր բռնվել: Նա հիշում էր ում հետ ինչ խոսակցություն է անեցել: Զեյթա գյուղի մուլայի հետ քանի անգամ էր վեճի նստել ու նրան նեղը պցել, համառվով, որ աստված ամեն քանի մեջ կա, նույնիսկ ծառի փշակում: Մուլան երկյուզում էր, երբ շաղացականը մատը մեկնում էր ծառի փշակին: Եթե Դերվիշ Հյուսեյնը գար, Անդրին նրան կամուրջի մոտ տեսնելուց նույնիսկ առաջ էր վազում, թևից բռնած բերում, նստացնում, քեֆ հալ հարցնում: Դերվիշը շէո տրտնչում, երբ շաղացականն իր աղունի հերթն ուղացնում էր: Երկուսի գրույցը երբեմն մինչև լուսաբաց էր տևում: Դերվիշն էլ աշխարհի և մարդկանց մասին շաղացականի նման էր մտածում, նրանցից յուրաքանչյուրը տարբեր ճանապարհներով խլուրդի պես համառո-

րեն փոքրիկ, փոքրիկիցով հասել էին նույն բարձրության, որից շատ հարձար էր դիտել իրերն ու դեպքերի ընթացքը:

Երիտասարդ օրերի բուռն ցանկությունը՝ իմանալու, թե որտեղ է վկայանում աշխարհը, նրա հետ պատահած դժբախտությունը, շաղացը և այն բազմաթիվ մարդիկ, որոնք գալիս էին, գնում, որպեսզի մի օր էլ նրանցից մեկնումեկը շղա և մյուս եկողները շաղացականին պատմեն, թե ինչից նա մեռավ, ծեր ընկուզենիները, որ ամեն գարնան տերևակալում էին, պտղակալում և ուշ աշնանը դողալով տերևաթափ լինում, Մաքցա ջուրը, որ գարնանը ուռչում էր, ամբերից դուրս գալի, խոկ ամառը բարակում այնքան, որ հորթերն էլ էին անցնում,— այս ամենը մի խորհուրդ ունեին, մի՛ ներքին իմաստ, որ ոչ միայն վաղուց ծանոթ էր երան, այլև ինքը մերվել էր այդ իմաստի հետ: Վարարում է գետը, հետո բարակում, ձմեռը սառչում է, սառույցի տակ մտռում... Ինքն էլ ջահել էր, հիմա աշնան գիշերներին ցուրտ էր զգում և դուրեկան է կրակը, ընկուզենիներն էլ են դողում: Ոչինչ չկա ասարսպելի, ո՛չ ծանր կսկիծ և ո՛չ անսահման ուրախություն: Շատ կածաններ կան, բայց մի լայն անապատ հա և բալոր կածաններն էլ վերջ ի վերջո գալիս են միախառնվում այդ ճանապարհին, ինչպես Այրումի տառն Մաքցա ջրին: Մաքցա ջուրն էլ ով գիտե որ մեծ գետին:

* * *

Այսպես էին ապրում կարմրաքար գյուղում: Անեին մի եկեղեցի և մի Տեր Նորբենի, որ այդ եկեղեցու մասին պատմում էր, թե նա կառուցված է հին տաճարի ավերակների վրա և շնորհի կաշվից կազմած գրքից վկայություն բերում, որ դարեր առաջ «հապարացոց աշխարհից» իրենց պապերը Մաքցա ջրի ընթացքով հասել են մինչև գյուղի տեղը, անտառը կարատել, շքել՝ աչգի և անգատտու: Խաղաղ այդ պատմությունը երբ հասնում էր Կարմրաքարի առօրյային, դառնում էր խճճված և շատ մտթ, համարյա անլուծելի տոկոզված, որի մասին ոչինչ չէր ասել ոչ այն վարդապետը և ոչ էլ Կարմրաքար տեսած մի ուրիշ մարդ:

Տեր Նորբենի, երբեմն, մանավանդ այն ժամին, երբ երեկոյան արարողությունն արագ վերջացնելուց հետո Ավան ամուս հետ մոտենում էր Բալոր-քարի շուրջը նստածներին,—հեղ էր և հանդարտ, եթե զրույցը թեթև էր և սահուն էր, ինչպես ձյունի գնդակը տառույթի վրա: Բայց այդ

խաղաղութիւնը պղտորվում էր, երբ հանկարծ մի հարց էր ընկնում մե- տեղ: Օրինակ՝ մեկը պատմում էր, որ հարևանի տանը նամակ են ստացել իրենց որդուց և ահա ծայրը քայքայում էր, կծիկը ետ էին տալիս... Խո- սակցութիւնն սկսվում էր այն քաղաքից, որտեղից նամակ է եկել, հետո անցնում նամակ գրողին և վերջապես Ավան ամին ձևակերպում էր.

— Մի խոսք՝ Կարմրաքարն ապրելու տեղ չի, էստեղ ապրելն էլ հա- րամեց:

Խոսակցութիւնը այդ կետին հասնելու թե չէ, Տեր Նորընծան կամ շոյում էր ծալ-ծալ մորուքը և թազբեհը խաղացնում ոսկրոտ մատներով արանքում և կամ փնտրում էր թամբաքուի ամանը փարաշայի երկար ու խոր գրպանների մեջ և շփոնելով, տնեցոց հասցեին թոնթորալով կողքին նստողից խնդրում էր թամբաքու:

Նրան հաճելի չէին այդ խոսակցութիւնները և ոչ էլ այն հարցերը, որ տալիս էին իրեն: Ո՞րտեղից գիտենար Տեր Նորընծան, թե ինչ է լի- նելու Կարմրաքարի վերջը, մինչև ե՞րբ, ինչպես Ունանն էր ասում, «տարին տասներկու ամիս քարի քոլի հետ կոխվ տաս, էլի ձմեռվա կեսին տաշտը ցամաք»... Այդ մասին ոչ «Սրբոց վարքի» մեջ կար գր- ված և ոչ էլ ինքն էր կարողանում պատասխանը գտնել:

Իհարկե, Տեր Նորընծան չէր լուռ: Մեկին համոզում էր, թե ամեն տեղ են մարդիկ այդպես ապրում, ջաղացպան Անդրու հետ համաձայն- վում էր, որ Կարմրաքարի դառը կյանքը վերուստ ուղարկած պատիժ է, երրորդին մխիթարում էր և հոգոց քաշելով հայտնում, որ վերջ ի վերջ հողն է մարդուն պարտակելու, «հող էիր և անդրեն հող գար- ձար»...

Բայց ինքն իր հետ մնալուց, երբ հաշիվ էր տալիս, թե ինչ փոփո- խութիւններ են կատարվել ծուխի մեջ, տեր հայրը սոսկում էր և գո- ղացող մատները մեկնում թամբաքուի տուփին: Իր մանկութիւնն էր հիշում... Լիութիւն կար, աղքատը քիչ էր, ամեն ինչ տանից էր գուր գալիս: Եվ ինչպե՞ս եղավ, որ գետափի մարագներում մարդիկ բնակու- թիւն հաստատեցին... Առաջ այնտեղ խոտ ու դարման էին լցնում: Ու մի օր էլ գյուղում «հայաստանցի» մի գաղթական եկավ իր մոր հետ: Ինքը դեռ ջահել քահանա էր, տերտերակիւնը առաջնակով ծանր: Մի քանի ամիս գաղթական նազարն ու մայրն ապրեցին իրենց տան ներքին հար- կում, հետո խնդրեցին մի մարագում տեղ տալ: Մարագները դեռ կան- գուն էին: Եվ այն օրից մարագների թաղը կոչվեց Ղարիբանոց: Շալած Սիմոնի հայրը հիվանդ էր, պարտքատերը եկավ հիվանդի տակից կոր- պետը քաշեց, եղած պղինձները հավաքեց. մի հորթ էլ ունեին, այն էլ

տարան: Ինքը գնաց, որ հորդորի, խնդրի... Խոշա Հիրանը պառավ մարդ էր, վրան նեղացավ և ասաց, թե հոգևոր մարդը աշխարհի գործերին լրիտի խառնվի: Հետո մի քանի հոգի էլ գնացին... Որի տունն էր փլվել, որն էլ հորից բաժանվել և մի կարպետ թևի տակ՝ երեխաների ձեռքից բռնած, գյուղից առանձնանում էր, որ իրեն էլ շտեմանն գյուղամիջում:

Մի անգամ Տեր Նորընծան գնացել էր Ղարիբանոց: Մեկը մեռնում էր, հաղորդութիւն էր սպասում... Աստված իմ, ի՞նչ աղքատութիւն... Տկոր երեխաներ, մի քանի պղինձ, մի կապ ցախ և աթարի մուխով լցված կիսաքանդ մարագ: Ոչ ծալք ունեին, ոչ փալաս ու կարպետ, երե- խաները մտնում էին հարդի մեջ, կուշ գալիս... Ի՞նչ աներ Տեր Նորըն- ծան: Այդ օրը դառնացած եկավ: Երեկոյան տիրուհին հիվանդի համար հաց ուղարկեց: Ինքը մյուս օրը քարոզ կարդաց եկեղեցում և շվերջացավ. աղքատութիւնը շվերջացավ... Ղարիբանոցի մի քանի մարագներից բացի, գյուղում էլ կային աղքատ մարդիկ: Հարևանի տանը երկու ամիս կորեկ հաց էին կերել, մինչև տղան քաղաքից օգնութիւն էր հասել: Ո՞ր է վերջը: Ուրեմն ճիշտ է ասում ջաղացպանը, որ արքայութիւնը գնաց և մարդուն միայն տերը բաժին է պահել կուպրի վառվող կարասներ: Կարմրաքարի ծխատեր քահանան մտածում էր իր հոտի մասին. սրտանց ուզում էր դարման գտնի, մտածում էր երկար, բայց տիրու- հին վրա էր հասնում, մտքերը խանգարում:

— Ծրագում նավթ չկա, վե՛ր կաց հացդ կեր:

Տերտերը մոտենում էր սեղանին և՛ ուրախ, որ ազատվեց հոգսից, և՛ շարացած, որ նավթ չեն լցրել ճրագի մեջ ու տիրուհին ասեղի ծայ- րով պիտի պատրույզը բարձրացնի: Երբ հոգնածութիւնը հաղթում էր, կոպերը ծանրանում էին, մոտենում էր անկողնուն, գիշերվա աղոթքը համառոտ ասում և հանգստանում այն մտքի վրա՝ թե «հող էիր և անդրեն...»:

Կարմրաքարում կար և՛ Ավան ամի, և՛ Ունան, և՛ ջաղացպան Անդրի: Լող ունեցողը վարում էր, ցանում, հնձում: Տարվա շորս եղանակները անփոփ պես դառնում էին և ամեն մեկն իր հետ բերում էր ցավ, ուրա- խութիւն, աշխատանք: Մնվում էին, մեռնում: Գյուղի գլխի գերեզմա- խութիւն, աշխատանք: Մնվում էին, մեռնում: Գյուղի գլխի գերեզմա- խութիւնը նոր հողաբուրներ էին ավելանում, մի կողմից էլ Այրումի նստանը նոր հողաբուրներ էին ավելանում, ոսկորները բերանն առած, ո՞վ գիտե որ քարի տակ պահ տալիս: Անտառը տարեցտարի փեշերը քնշում էր, գյուղից ավելի հեռանում և սարերի ստորոտները մերկա- նում էին... Զորերում կամ անմատչելի առապարների վրա սակավաթիվ ծառեր գեռ մնում էին, որպես ցնցոտիներ, սարի մերկ սրունքները ծած-

կելու Ոմանք հարստանում էին, ոմանք աղքատանում: Հարստացող մի աչք ապիլ էր տուն շինում կամ մի կտոր հող առնում, զույգ եղբայրներն էր կրկնում, ընկնում էին, բարձրանում: Մեկը մյուսին սոսնակ էր տալիս: Կովում էին, գլուխ շարդում, պատահում էր, որ մարդ էին սպանում: Ոմանք ուրիշ քաղաքներ էին գնում վաստակի և այդ վաստակը, որպես հնչուն արծաթ, քանդում էր, խարխլում այն, ինչ սպասում էր թեթև շնչի՝ փլվելու համար:

Ավան ամին էլ էր տեսնում, որ Կարմրաքարը փոխվել է: Նա հիշում էր այն, ինչ եղել է և համեմատում էր առօրյայի հետ: Նրա համար պարզ էր այն ճանապարհը, որով Կարմրաքարը եկել էր և հասել այդ առօրյային:

Ի՞նչ էր այդ հինը... Սամովար չկար, մարդիկ չգիտեին, թե ինչ է թեյը... Եկավ խոլերի տարին, փախան, պահվեցին տեսառի խորքերում: Առաջ մարդիկ զողաք էին հագնում, կանայք՝ դարայի: Մարցա ձորը մի անանց անտառ էր, հիմա քարերը երևում են... Հեղեղը որբի է հողն էլ, արմատներն էլ: Տեր Նորընծայի հայրը երեխաներին սովորեցնում էր «Ութ կանոն սաղմոս»: Կխտորից թանաք էին շինում և փետուրի գրիչներով հաստ թղթի վրա ընդօրինակում ժամադրքի գլխատառերը... քաջքուտ մարդ էր Տեր Նորընծայի հայրը. աշակերտի մտներն իրար էր հավաքում, երկաթ օղ հագցնում և մատների ծայրին հոնի ճիպտով այնքան ծեծում, մինչև արևոտեին: Մի անգամ էլ Ավան ամու եղունգը պոկ եկավ:

Այն ժամանակ քաղաքը մեծ չէր, դերձակը դուքան շուներ, ձեռքի մի ասեղ էր, մի մկրատ, տնետուն ման էր գալիս, և՛ աշխատում, և՛ տանն էլ հաց ուտում: Երեք օրում մի արխալուղ էր կարում: Քաղաքում մի քանի դուրգար կային և ներկարար, բայց դուքանդարը շատ էր թավրիզից ուղտերի քարավանով ճոթ ու կտոր էին բերում, շիլեյի, գյուլի աղուխ, շաքարը փափուկ էր, մի քիչ դեղին... Հիմա Հիբանի որդի Մկրատումի խանութում տասը փութով էլ կարելի է շաքար տանել և այն էլ լավը, կապույտ խալերով, շուտ չհավոդ... Նրանք հիմա շիլեյ շեն ծախում, ուզող չկա:

Առաջ նեղ կածան էր, բայց քանի-քանի մարդ ծեծեցին ու կածանը չի քիչ լայնացավ, ճանապարհ շինվեց մրջյնի քաղաք: Իսկ ի՞նչ էր գառու այդ քաղաքը, ինչ տնե՛ր, ինչ խանութնե՛ր, ո՞ր էր առաջվա գիծակը, որ մկրատը թևի տակ տնետուն էր ման գալի: Ծանապարհը բացվեց, Կաքմաքաքից շատ մարդ դուրս գնաց: Եվ Ավան ամին մտքում

մեկ-մեկ հաշվում էր նրանց, որոնք հեռացել էին գյուղից: Տասներկու հոգի Բաբու են, Սատուրի թոռը Պետրպուլ է լինում:

Ավան ամին այդ իրադարձությունների մեջ աշխատում էր կարգ սահմանել, գտնել մի ձող, որի վրա կարելի լիներ դեպքերը քաշել: Նա լավին էր սպասում ու միտք էր անում, թե ինչպես պիտի գա այդ լավը: Երբեմն մտածում էր, որ ուսումով մարդկանց թիվը ավելանում է և համոզված հայտարարում էր, որ ճանապարհը ուսումով առածները պիտի քաշեն, երբեմն կասկածում էր և ավելի ճշմարիտ համարում այլ ուղի: Իրենց գյուղից դուրս պիտի գա աստղով մի մարդ և ամեն գյուղից պիտի հավաքվեն աստղով մարդիկ, խելք-խելքի տան:

— Ինչպես պլան քաշե՛ն, Անդրի,— ասում էր նա շաղապանին, եր սրանեղում էր մենակությունից և գնում էր նրա հետ գրուցելու— Ինչպես ամեն ինչ իր տեղը գցե՛ն, որ մնաս զարմացած... Թե չէ էսպես ս'ը կհասնենք... Մարդիկ իրար միտ կուտեն: Հրեն էսօր վարժապետն էր ասում, թե Հնդկաստանում շեմ իմանում ո՞ր քաղաքում, իրար մեջ ծեր են գցել, թե ո՞ւմ ուտեն:

Գյուղ վերադարձող երիտասարդին նա գալու մյուս օրը պիտի տընտղեր, ծանր ու թեթև անիք, հարցուփորձ՝ տեսածից ու լսածից, և հայտներ իր կարծիքը՝ կամ մեջը փուշ է (այդ դեպքում նա պիտի ասեր, թե ս'ւմ կողմն է քաշել) և կամ տարակուսանքով եզրակացներ, որ դեռ խալ է, սերմը չի բռնել:

Երբեմն էլ հուսահատվում էր, հուսահատությունից շարանում ու շարունակում, որպես մաղձ, թափում աշխատանքի ընթացքում: Ինչ գործ էլ աներ, արագ էր կատարում, չէր խոսում, գանգատվում էր բոլորից: Նրա բարի դիմագծերն էլ էին փոխվում, կապույտ աչքերը փոքրանում էին, ներս քաշվում, մարդիկ ուրիշ կերպ էին երևում աչքին: Այդ օրերին նրա դեմքին չէր երևում այն ժպիտը, որ լուսավորում էր նրա երեսը, լուսապակ կազմում սպիտակած գլխի շուրջը:

Նրան թվում էր, թե կյանքը խեղդ է, մի նեղուստ, ճիշտ այնպես, ինչպես շաղացի կամուրջի տակ... Երկու կողմից բարձր ու կապույտ ժայռեր ու մի ժայռ այնքան է կուցել ջրի վրա, որ ալիքները գալիս են ու գեմ առնում և ինչ որ բերում են՝ տերև, ճյուղ, խոտ,—այդ ամենը պղտոր փրփուրի հետ դեմ է առնում ժայռին... Զուրը քարի տակով անցնում է, իսկ փրփուրն ու տերևը, ճյուղը, խոտը մնում են, պատվում, դատվում, իրար վրա դարսվում, մինչև քամին կամ ջրի թափը նորից շարժի քարի վրա: Գուցե կյանքն էլ այդպես է... Իզուր տեղը պտտվում են, իրար միտ կրծում:

Այդ օրերին նա շիրուխը միշտ թեժ էր պահում, մատը կրակի վրա նստում էր տան առաջ, երբ մութն ընկնում էր: Նայում էր խավարին, լսում էր ինչ-որ ձայներ, մարդու, կովի, շան, դիտում էր գյուղը, մինչև թանձր խավարը ծածկեր ամեն ինչ, հանդարտվեին ձայները, կրակները մարեին ու միայն խավարի մեջ վշշար Մարցա շուրը:

2

Խոջա Հիբանի տունը, կամ ինչպես Կարմրաքարում ասում էին, ամառաթը գտնվում էր գյուղի վերի թաղում, մի փոքրիկ բլրակի վրա, որ գերեզմանատան թմբից բաժանվում էր բարակ ձորով: Տան հետևի անցնում էր Քառասնաչորի անտառը տանող ճանապարհը, որ հենց տան մոտն էլ ծովում էր և կորչում ծառերի արանքում: Եվ ձմռան լուսնիկ գիշերներին գալլերն առանց վախի ոռնում էին տան բարձր պատերի տակ և ոտնաձայն լսելուց մի ոստյուն անում ու կորչում անտառում:

Հիբանի ամառաթից վերև տուն չկար, իսկ ներքև՝ դեպի գյուղի գլխավոր փողոցը, որ միևնույն ժամանակ և քաղաք տանող ճանապարհն էր Կարմրաքարից հյուսիս ընկած գյուղերի համար,—նրա որդիների խանութն էր: Տնից խանութ գնացող կածանը կեռամաններով իջնում էր, անցնում բարակ ձորակն ու միանում փողոցին:

Կարմրաքարի շինությունների մեջ Խոջա-Հիբանի տունն իր մեծությամբ և նստվածքով ետ էր մնում միայն եկեղեցուց: Տան շորս բուրբ բարձր և ամուր պարիսպն էր, որի գլխավոր դուռը նայում էր գյուղին, իսկ փոքր դուռը բացվում էր անտառը տանող ճանապարհի վրա:

Պարսպի տակ ցածր կտուրով, զանազան կառուցվածքներ էին՝ գոմ, մարագ, ախոռներ, փառախ, ամբարներ և այլն: Այդ ամենը միանգամից և միակերպ չէր շինված: Գլխավոր դռնից մտնողը պիտի անցներ աջ ու ձախ ընկած շինությունների միջով, հասնել փոքրիկ հրապարակին, որի կենտրոնում, ճիշտ դռան դիմաց, նրանց երկհարկանի տունն էր: Երկրորդ հարկի քարե սանդուղքը բակի կողմից է, ներքին տան պատուհանի դիմաց: Գրա համար էլ ներքին տան նստողը կարող էր տեսնել, թե ով է իջնում և բարձրանում սանդուղքով:

Թե տունը և թե մնացած շինությունները Խոջա Հիբանի օրոք էլ կային:

Իսկ ավելի առաջ նրանք ապրում էին ներքին տանը, որի ծիփց սևացած օճորքի հաստ գերանները այն ծառերից էին, որ հենց այդ բլրակի գլխին էլ բուսել էին և կտրված էին այն ժամանակ, երբ «Տա-գարացու աշխարհից» եկել էին Կարմրաքարի նախահայրերը: Հիբան

էր կառուցել երկրորդ հարկը՝ սրբատաշ քարերից, նեղիկ ու փոքր պատուհաններով երեք սենյակ, որոնցից մեկը, ամենափոքրը, պատուհան էլ չունի և ցերեկով կիսամութ էր ներսում:

Այդ սենյակում էր պահում Խոջան իր ունեցածը՝ գորգերի ու խափների կույտը, արծաթեղենը, կնոջ զարդեր, թանկագին մորթիներ, մի խոքով այն ամենը, որի մասին գյուղում առասպելներ էին պատմում: Այդ սենյակումն էր և պղնձե մեծ սամովարը, որ Հիբանի օրոք Կարմրաքարում նորություն էր եղել և հարստության նշան: Երբ թեյի գործածությանը շատերին ծանոթ չէր, Խոջա-Հիբանը տուն եկող հյուրերին ցույց է տվել մեծ ու անճոռնի սամովարը և բացատրել, թե շուրը որտեղ են լցնում, ծորակը ինչու համար է... Նրա կենդանության ժամանակ սամովարը երբեք չէին գործածել: Ու միայն թաղումից հետո, երբ պատվավոր հյուրերի համար վերին հարկում սեղան էին բաց արել, Մկրտումի կինը առաջին անգամ սամովարի զուխը բաց է անում: Բաց է անում և կանչում է ամուսնուն... Սամովարը մինչև ունկերը լիքն էր արծաթե փայլուն արասիներով:

Խոջա-Հիբանը այդ սենյակումն էր պահում փոքրիկ, գունավոր թիթեղներով պատած սնդուկը, որի մեջ էին սանադները: Երբ մեկը ներս էր մտնում և հասկացնում, որ եկել է պարտքը տալու, Խոջան սիրալիք ժպտում էր, տեղից վեր էր կենում ու կանչում Մկրտումին: Սարսափելի էր այդ ձայնը: Եթե փողոցով անցնողը լսում էր Հիբանի ձայնը, քայլերն արագացնում էր և միտք անում, թե ում վրա է շարացել Խոջան: Մեկն ու մեկը բարձրանում էր սանդուղքով, Մկրտումը ներքի տան պատուհանից տեսնում էր նրան, հետևից գնում և դռան մոտ սպասում: Երբեմն էլ նա հյուրերի հետ ներս էր մտնում: Հայրը բարձր չէր կանչում, այլ քթի տակ խոսում էր, նախատիք թափում որդու երեսին, գանգատվում, որ ուժից ընկնում է և առաջվա նման չի կարողանում հյուրերին պատվով ընդունել: Երբքով ներս էին մտնում կիսամութ սենյակը: Հյուրն ու Մկրտումը կանգնում էին շեմքի մոտ, Հիբանը մոտենում էր բուխարիկին, ձեռքը մեկնում և ծխնելույզի միջից հանում փոքրիկ սնդուկը, որից հետո միայն որդին մոտենում էր:

— Կարդա՛,—ասում է Խոջան և մեկնում մի սանադ: Եվ հենց Մկրտումը սկսեց կարդալը՝ «Վեր առիմ և պարտ եմ...», հայրն ընդհատում էր:

— Էդ չի,— և մի ուրիշն էր տալիս: Երբ գտնում էր սանադը և տալիս որդուն, Հիբանը ծնկներին կռթնած սպասում էր, մինչև Մկրտումը դիպապ անելով կարդա խոնավությունից դեղնած ու տեղ-տեղ խմո-

րով կպցրած սանազը... «Վկա եմ... վասն անգրագիտութեան և խնդրանք նորա սույն արբը հաստատեմ և արքունական կնքովս դրողմեմ...» Կարգում էր որդին, իսկ հայրը վիզը թեքած լսում էր, աչքերը ճպւղկացնում, սեղմում էր աչքերը, ասես արցունք կա, որ հիմա պիտի քամի, աչքերի շորութունը մեղմի: Վեհ և պատկառելի էր նրա դեմքը այդ վայրկյաններին: Կարծես մահվան վճիռ էին կարգում: Եվ թեկուզ վճիռը թելադրել էր այդ ծերունին, նրա դեմքին նայողը կմտածեր, թե նա զղջում է ու սիրտը ցավում է:

Պարտաթուղթը կարդալուց հետո Հիբանը փակում էր սնդուկը, թուղթը մոտեցնում եկողին ու մի խոր հոգոց քաշում: Այդ հոգոցից հետո պատկերը փոխվում էր: Հիբանի աչքերն էլ շին ճպճպում այլ բացվում էին, անթարթ սեևում նորեկի սեղմած բունցքին: Սկսում էր հաշիվը: Ամեն մի կոպեկը տնտղում էր, նայում գրին ու նշանին: Եթե թղթագրամ էր, ծնկան վրա էր դնում, ծալքերը հարթում, բուխով և ցուցամատով տրորում, մի քանի անգամ հարցնում:

— Հո դալը շե՞ն... Մկրտում... Անունդ քարին գրեմ, մի տես, իմ աչքերը լավ շեն չոկում, տես նշանը տեղն է...— ու մինչև Մկրտումը թղթագրամի վրա կգտներ հոր ուղած նշանը, երջան սրտնեղած ասում էր.— ափսոս չի ոսկին... մաքուր հաշիվ, ոչ ծալվել ունի, ոչ կեղտոտվել է... Խեր բարաքյաթը կորած, հազար...—ից փող են կտրում, ամոթ չլինի ասել:

Իսկ դիմացինը ամեն մի դրամի համար մի պատմություն է անում, պատմում, թե սպիտակ արասին ումից է ստացել, ինչքան է խոտ հարել նրա դիմաց, թե հինգանոցն իր մոր հոգապահուստն է, որ ստացել է հարսանիքի օրը հորից:

— Հա՛, հա՛... Ողորմած հոգին լավ մարդ էր: Ա՛յ փուշ աշխարհ, փուշ էլ կմնաս: Դե նայի՛, նայի՛... էս ոսկին ու հիմիկվանք մին ե՞ն: Փողերը ստուգելուց հետո Հիբանը սկսում էր հաշիվել: Եթե գումարը մեծ էր, գոպանից հանում էր թաղթեհը և հատիկները գլորելով համարում, իսկ եթե փոքր էր, նրա հաշիվում ձեռք հասարակ էր:

— Վեց արասի, էս էլ տասը շահի, էս էլ վեց շահի, տասնվեց շահի: էս երկու մանեթ, էս էլ հնգանոցը, չէ՛, քեզ մատաղ... Դու էլ միտղ պահի, որ շխալվեմ... Հարամ կոպեկ իմ փողին ես չեմ խառնի,— հանկարծ դառնում էր որդուն:

— Ի՞նչքան էր գրածը:

— Տասնչորս մանեթ:

— Հիբան աղա, բա խոտի վաթքը,— վախվախելով ասում էր գյու-

ղացին և հիշեցնում, որ պարտքի դիմաց անցյալ տարի երկու օր նրա համար խոտ է հարել:

— Խո՛տս որն է, — հոնքերը կիտում էր Հիբանը,— էն թո՛ղ... Խոտը չոկ, փողը չոկ, խալխի ձիերը խոտը կերել են, ես պիտի շարման քաշե՛մ... Իմ փողը պետք է թամամ լինի:

— Ախր...

— Է՛հ, դե հաշիվը մի խառնի է՛... էս տասնըմին մանեթ վեց շահի... Մկրտում, միտղ պահի... էս երկու արասի, տասնչորս կոպեկ. տե՛ս, տե՛ս, էս շահանոցի գլխին ինչ օրն են խաղացել... Ասա, շան որդի, փողը ոսկո՞ր է, որ կրծել ե՛ք...

— Հիբան աղա, երեխեքն են...

— Պա՛, պա՛, պա՛... Երեխու ձեռք փող չդնե՛ս, տունդ կքանդես: Հրես տես, պսակելու եմ էս աշունքը, իրա օրումը ջերը մի թոռ չեթ էլ չի տեսել... Վախտը կա, ամեն բանի ժամանակը կա... Մեռնելուց հետո թող տիրութուն անի... Մկրտում, ինչքա՛ն եղավ. գրուցով ընկանք:

— Տասներեք մանեթ վեց շահի:

— Հիբան աղա, դե մնացածն էլ բաշխի, երեխատեր եմ. տանը հիվանդ ունեմ, ուզում եմ մի գուշ ոսպ առնեմ:

— Չէ՛ չէ՛, թափ տուր, ջերդ թափ տուր: Ես ո՞վ եմ, որ փողի հետ խաղ անեմ: Ուզում ես ինձ էլ, քեզ էլ խայտառակ անե՛ս:

— Հիբան աղա, մեր հարսը մի քանի օր բուրդ է լվացել ձեր տանը. նրան էլ է խղճացիր... Երաթից ավել է ճրագ չենք վառել:

— Դե բավական է էլի՛,— ձայնը բարձրացնում է Հիբանը.— ես էլ չեմ ճրագ վառում... Լուսով հացդ կեր, տեղերդ մտի... Փեզ վեց շահի, նրան մի մանեթ: Ես շահի խաղնադարը չեմ: Ջերդ թափ տուր... Վեց շահու արժեքն ինչ է, որ դրա համար խոտք ու գրույց ես անում: Ուզո՞ւմ ես էլի ետ տամ, թազա սանաղ սարքենք... Թքած փողի վրա. դու մարդու լավութունն ասա... Փողն ի՞նչ բան է, քեզ պես մի մարդու հետ նստելը, վեր կենալը հազար մանեթի թայ չեմ անի...

Եվ թաշկինակի ծայրին կապած երկու արծաթը գլուղացին հանում էր, լրացնում պարտքն ու տոկոսը, որից հետո Հիբանը սանաղը միջից երկու էր անում, կտորները տալիս նրան և ստիպում, որ նա էլ մանք կտորներ անի: Ապա հավաքում էր կտորները, լցնում նրա բոխ մեջ: Երբ վեր էին կենում, Հիբանը սնդուկը բուխարու մեջ տեղափորելուց հետո գառնում էր գլուղացուն:

— Գնո՞ւմ ես... Մնայիր, էն թազա սամովարից մի շայ կխմեինք: Հա, լավ ես ասում... Գործի ժամանակ է, գնա, գնա բանեղ: Չայը թամ-

բալ թուրքի բան է: Է՛, քեզ նման ջան ունենայի, մի տարում երկու տուն կսարքեի... Ի՞նչ ես էրպես խեղճացել: Աստված կունեբրիդ ուժ տա, էլի կամ, մի վախենա: Էս փողն ո՞ւմ համար է: Թե հարկավոր լինի, արի... Հալալ մարդու համար իմ դուռը բաց է,— և ձեռքով մի քանի անգամ փափուկ զարկում էր նրա թիկունքին, ճանապարհ դնում:

Հենց հյուրը գնար թե չէ, Խոջա-Հիբանն սկսում էր զայրանալ որդու վրա: Մի առիթ միշտ կգտներ. կամ ուշ էր եկել, կամ կարգալուց կմկմացել էր և կամ գումարը պարզ չէր ասել:

— Էսքան թուք ու մուրն ո՞ւմ համար է... Դու որ մեծն ե՛ս, էգպես ես, բա էն փոքրին ի՞նչ օրինակ ես լինելու: Շան ծիծ ես ծծել, ես քո խրատողի... Կորի՛, աչքիցս հեռացի:

Խոջա-Հիբանն ազահ էր ամեն ինչի հանդեպ: Կես գիշերին հանկարծ տեղից վեր էր կենում և թեկուզ լուսանալուն շատ կար, զարթնեցնում էր տնեցոց, ծառաներին ստիպում, որ տավարը մթնով տանեն ու մինչև լուսանալը գյուղի մոտակա հանդերում կշտացնեն:

— Արջերն էլ են շատ քնում... Ասենք տեղներս ծմակ է, ուրեմն պետք է արջաքուն տա՛ք...

Տնեցիք վեր էին կենում, մեկը քնաթաթախ երեխաներին էր հագնում, մյուսը ծառաների համար կերակուր պատրաստում: Իսկ ինքը թամբած ու տան սյունից կապած ձին նստում էր գնում կամ հարևան գյուղը ապառիկն առնելու մեկից, կամ բուրդի կանխավճար տալու, կամ գերաններ պատվիրելու, որպեսզի մի շաբաթվա ընթացքում, գյուղական աշխատանքի թեկուզ ետուն ժամանակ, մի քանի հարյուր գերան եզներով քաշել տա և Կարմրաքարի կածաններով տանի քաղաք:

Խստաբարտ մարդ էր Հիբանը: Նրա մասին գյուղի պառավներն ասում էին, թե աչքը չար է: Եթե երևար փողոցում, նրանից ավելի տարիքավոր կանայք անգամ տեղից վեր էին կենում և դռան հետևը պահվում՝ մինչև անց կենար: Շատ կանայք երեխաներին էլ էին տանում, իսկ անցնելուց հետո նորից էին դուրս գալիս: Մի տղամայր անպատճառ պիտի կոանար, մի քար շրջեր՝ նրա շար աչքի դեմ:

Խոջա-Հիբանի մասին գյուղի կանայք զանազան լուրեր տեղեկանում էին նրա կնոջից, երբ գնում էին նրանց համար բուրդ լվալու, զգելու, կարպետներն ու գորգերը թափ տալու, հաց թխելու: Կինը չէր քաշվում և ընկեր հարևանին ցույց էր տալիս իր մարմնի կապտած տեղերը: Մեծն ու նախատինքը նա անտրտունջ տանում էր և միայն բազմականանում էր իր ցավը ուրիշներին պատմելով: Ամուսինը գիտեր այդ, գիտեր և լուռ էր: Նա իր հաշիվն ուներ: Հիբանը գիտեր, որ կինը

մեկը տասն է շինում, դեպքը ծաղկեցնում, իսկ այդ նրան ձեռնառու էր: Որքան շատ գողային իրենից, որքան շատ երկյուղ ներշնչեր հարեվաններին, այնքան ավելի ազդեցիկ ու անվանի կլիներ:

Հիսուն տարվա ընթացքում Հիբանի կինը միայն մի անգամ էր ըմբատացել իր ամուսնու դեմ և նույնիսկ մի օրով էլ տանից հեռացել: Այդ այսպես է պատահել: Հիբանն աշխատանքից տուն գալուց (նա գնացել էր կամրջի մոտ ուղտապաններից բուրդ առնելու) լսել էր զուռնայի ձայն. կամացուկ մոտեցել էր ձայնի վրա և տեսել, որ նվագողը որդին է՝ Մկրտումը, տասը-տասներկու տարեկան տղան: Հայրը զայրացել էր, ձեռքի գրվանքանոցը շարտել որդու վրա: Երկաթը կպել էր ճակատի անկյունին և ոսկորը ճեղքել: Վրա էր վազել մայրը և արնակուլ որդուն ազատել գազազած հոր ձեռքից: Այդ գիշեր Հիբանը ծեծել է և կնոջը:

— Էս լակոտն ինձանից չի... Ուրիշից ես բերել, ջա՛ն ազդիկ, իմ ցեղում զուռնա ածող չի եղել:

Մայրը գրկում է վիրավոր երեխային և կես գիշերին գնում ծնողների մոտ: Սակայն Հիբանի ահից ծնողները չեն համաձայնվում նրան տեղ տալու և մյուս առավոտ նորից վերադառնում է ամուսնու հարկի տակ: Ծշմարիտ է, այդ դեպքից հետո Հիբանը քիչ մեղմանում է, նա հիվանդի համար նույնիսկ քաղաքից մրգեղեն է առնում, բայց հենց երեխան առողջանում է թե չէ, ձեռքերն իրար զարկելով կնոջը հայտարարում է, որ Մկրտումի ոսկորն իրենից է, և շարունակում է մի անգամ բռնած ճանապարհը:

Հիբանի կինն ավելի կանուխ է մահանում: Վերջին տարիներում պառավը չորացել, մնացել էր կաշին ու ոսկորը: Կնոջ մահն ազդել էր նրա վրա: Ծիշտ է, նա առաջվա պես ազահ էր և խիստ, բայց ավելի էր մոռլլ, հաճախ՝ դաժան: Դարձյալ գիշերները զարթնեցնում էր, գործի ուղարկում: Այս անգամ մի տեղ գնալուց, նա Մկրտումին իր հետ էր ման ածում և ճանապարհին խրատում, թե ինչպես պետք է իրեն պահի այսինչի մոտ, ո՞վ է Ջրիկում ամենահարուստը, ինչի՞ց է նա երկյուղ կրում, ո՞վ է իրեն պարտ:

Այդ խոսակցությունը հաճելի էր Մկրտումին: Նրա մեջ զարթնում էր փոքրիկ գազանը, որի ճանկերը դեռ ոսկրացած չէին և որը սակայն ավելի ազահությամբ էր հարձակվում հոր կողմից հոշոտված որսի վրա: Դրանից էր, որ նա ավելի համարձակ էր կարդում մուրհակը, արագ գումարում, երբեմն փողը ստուգում: Հիբանն աչքի տակով նայում էր և

ինքնագոհ ժպիտը մեղմացնում էր նրա դեմքի խոճոռ արտահայտությունը:

Մի առավոտ էլ, երբ հոր հանձնարարությունը հսկում էր, թե ինչպես են խուզում տան առաջ նստած ոչխարներին, Եփրեմն եկավ և կանչեց եղբորը: Երկուսով ներս մտան: Հայրը պառկել էր կարպետին... Սանամ հորթուրը բարձ էր դնում նրա գլխի տակ. ծերունին արխալուղի կոճակներն արձակել էր ու խոր շնչում էր: Գոան ձայնից գլուխը մի քիչ բարձրացրեց, տեսավ որդիներին: Եփրեմի ճակատը համբուրելուց հետո ձեռքով նշան արեց, որ դուրս գնան... Սանամ հորթուրն էլ հետևեց նրան: Մկրտումը հասկացավ հոր հայացքը և թաթերի ծայրով մոտեցավ դռանն ու կապը գցեց: Ծերունին ձեռքով կարպետին խփեց, հասկացրեց, որ Մկրտումը նստի: Ու գլուխը նրա կողմը դարձնելով շնչաց.

— Ուզում էի ոչխարի մոտ գամ... Հը՞, բուրդը հո երեսից չեն խուզում, Գոգին էնտե՞ղ է...—Մկրտումը գլխով արեց: Հոր գունատ դեմքը նրան սարսափեցրեց: Մի՞թե մեռնում է... Ուրեմն մենակ պիտի մնա... Ու նա հիշեց պարսպի և տան կտուրի մասին եղած խոսակցությունը:

Մի անգամ հոր հետ գնացել էր քաղաք: Վերադարձին նա ցանկություն էր հայտնել տան շուրջը պարիսպ քաշելու, իսկ կտուրն էլ թիթեղով ծածկելու, ինչպես քաղաքումն են անում: Հիբանը բարկացել էր նրա վրա:

— Շհարո՞ւմ... Շհարում հազար լրբություններ են անում: Իմ կարողությունը ես էն սկացած տանն եմ հավաքել: Թող մի զիչ էլ կտուրը կաթի, հոգիդ դուրս չի գա, որ ձյունը մաքրես:

Բայց քիչ հետո համաձայնվել էր պարսպի կառուցման մտքի հետ:

— Հազար մարդ է անցկենում, հազար աչք է նայում... Էդպես ափսիս ապահով կլինի:

Եվ խոսք էր տվել եկող գարնանը քար ու կիրը հավաքելու: Թեկուզ քար ու կիրը պատրաստ էր, բայց հայրը դարձյալ հետաձգում էր: Մկրտումի առաջին միտքն եղավ պարսպի կառուցումը: Հիբանն ասես որդու միտքը հասկացավ:

— Չէ, դեռ ժամանակը չի... Էդքան շուտ չի լինի: Ծա ժամանակը գիտեմ...—Մկրտումին թվաց, թե հայրը հասկացավ իր միտքը՝ նրա մահվան մասին: Ու նրա մտքովն անցավ, որ հոր մահը մոտ չի, և նա գիտե, թե երբ է գալու ժամանակը:

— Սանամ հորթուրիդ կպահես, Թող տերություն անի, մի՞նչ... Հը, բան-ման կա՞, թե չէ...
Այդ մտքին հաջորդ մի անգամ էլ էր հարցրել իրեն, Կոք միտքին

գնացել էին անտառը գերանները շոկելու: Խոսքը Մկրտումի կնոջն էր վերաբերում: Երկրորդ տարին էր, ինչ ամուսնացել էր, բայց երեխա դեռ չունեին: Հիբանն իր քրոջն էր մի քանի անգամ հարցրել այդ մասին և թեկուզ Սանամը եղբորը հանգստացրել էր, թե դեռ հարսը երեխա է, բայց և այնպես նրա հետ խոսելուց հետո, հարսին այնպիսի հարցեր էր տվել և այնպիսի խորհուրդներ, որ մանկամարդ կինը ամաչելուց կարմրել և արցունքն աչքին հեռացել էր, տան անկյունում դառը հեծկլտալու:

Հոր հարցին Մկրտումը շատասխանեց: Կարմրեց ու սկսեց կարպետի ծայրը մատներով տրորել:

— Կլինի, կլինի... Իմ ցեղն անժառանգ չի... Սանամ հորթուրիդ կպահես: Մի քիչ խելքը պակաս է, համա աշխատավոր է... Եփրեմին բռանդ մեջ կպահես, խելքը խակ է, բայց ո՞վ գիտե ինչ դառնա... Դե գնա՞, գնա՞, բուրդը ցրիվ չտան: Մեծարուրդը թող շոկ դարսեն. անվա էլ գի՞նը թանկ է... Տե՛ս, նորընձան տա՞նն է, ասա թող գա... Էդ հոգսից էլ պրծնենք,— և ասես ինքն էլ սարսափելով իր մտքից, որ մահը մոտ է, դեմքի մկանները կծկելով, ասաց,— չէ՞, ժամանակը ե՛ս գիտեմ... Թող գա... Թող գա,— և պինդ, շատ պինդ սեղմեց որդու ձեռքը: Մկրտումը մեջքը ձգեց ու թեքվեց հոր կողմը: Հայրն անզոր ժպտաց:

— Տեսնո՞ւմ ես ինչ ուժ ունեմ... Դե գնա՞, գնա՞...

Մկրտումը դուրս գնաց: Ենթե մոտ Սանամ հորթուրը գոզնոցի ծայրով սրբում էր արցունքը: Մկրտումը տեսավ այդ և այն թափը, որով նա դուրս եկավ բուրդը խուզողներին կարգադրելու հոր ասածը, այդ թափը կտորվեց, ոտքերը թուլացան: Ու շվարած հայտնեց միայն, որ հայրն ուղարկում է քահանային կանչելու:

Լուրն ամբողջ գյուղում արագ տարածվեց: Ծաշի մոտ քահանան նրան հաղորդություն էր տվել և երբ դուրս էր եկել, գյուղացիներին հայտնել էր, որ խոշա Հայրապետը դեռ շատ է ապրելու, գույնը տեղն է, հիշողությունն առաջվա պես: Մի քանի ծերունիներ քշիչացել էին, որ հոգին ծանր է տալու, շատ պիտի տանջվի:

Բայց և այնպես գալիս էին նստոտում կարպետի վրա, գրուցում: Զրույցն ընդհատվում էր, երբ ներսից լսվում էր հիվանդի ձայնը... Բեռնք աշխատում էին Մկրտումի աչքին երեւալ: Մի քանի կանայք, մանավանդ հարսի ազգականներից, ներս ու դուրս էին անում, ափում, սրբում, կարպետի վրա նեղլիկ ներքնակ գցում, եթե եկողը գյուղի աղոթքիկ մարդկանցից էր: Ոմանք առաջին անգամ էին տեսնում նրանց տունը և օտարոտի հայացքով դիտում էին պատերը, օճորքը, պատեց կախած զորգերը, գետնի լայն կարպետը: Անկյունում նստած երկու մարդ քրս-

փստում էին, հազիվ լսելի ձայնով մեկը պատմում էր մյուսին, որ դիմացի պատից կախված ծաղկավոր կարպետը Ջեյթա գյուղացի Աբասինն է և Հիբանը վերցրել է այդ տասը ուրլու պարտքի դիմաց:

Երեկոյան հիվանդի դրուժյունն ավելի ծանրացավ: Ենչառությունն ընդհատ էր. մերթ կորչում էր շունչը, հիվանդն աչքերը խփում էր, դիմքին և ոչ մի մազ, ոչ մի մկան չէր շարժվում,—մերթ խորանում էր, կրծքի վանդակն ուռչում... Հիվանդը դեռ էր գցում վերմակը, փորձում տեղում նստել, ինչ-որ բան էր ուզում ասել, բայց լեզուն կապ էր ընկնում: Կողքին կանգնողներից ամեն մեկը իր կերպ էր հասկանում հիվանդի միտքը. մեկը բարձն էր ուղղում, մյուսը պատուհանն էր բաց անում, իսկ երրորդը պատվիրում էր ջուր տաքացնել: Մկրտումը մեկ հորն էր մոտենում, մեկ դուրս գալիս, Ծփրեմին, Գողուն և ծառաներից հենց առաջին հանդիպողին կարգադրություններ անում, որից և ոչ մեկը հիվանդի առողջությանը չէր վերաբերում: Սակայն բուրդն էլ գիտեին, որ ինչ էլ պատահի, կովերը պիտի կթեին, ոչխարին փարախն անեին, ձին թիմարեին, շան տեղը փոխեին:

Վերջին հյուրը՝ Տեր նորընծան, բարի գիշեր ասաց, մի քանի խոսք էլ ավելացրեց այն մասին, թե հիվանդն ամուր է, հարվածը կանցնի և դեռ շատ տարիներ կապրի: Մնացին մոտ ազգականները: Կես գիշերին իրոք որ Հիբանն իրեն լավ զգաց: Հայրը Ծփրեմին հարցրեց, թե ձիուն ինչ խոտից են տվել: Մկրտումը մեկ-մեկ թվում էր, թե ովքեր էին եկել:

— Ասում ես Առուստամն էլ էր— և հոնքերը կիտեց: Առուստամը Ավան ամու հայրն էր: Հիբանի և նրա մեջ խուլ թշնամություն կար, չնայած դրան, Առուստամը մի քանի ծերունիների հորդորանքը լսելով, եկել էր իր թշնամու վերջին տեսությանը, բայց գալուց հայտնել էր, որ հիվանդի հետ չի խոսելու:

— Ո՞վ գիտե, ինչ էր մտածում... Մարդ է, հողեղեն է, չէ՞, Սանամ.— հարցրեց Հիբանը:—Երևի ուզում էր հաշտվի, հը՞... Թե եկել էր, որ հետ ծիծաղի: Հը՞, Սանամ, խոսի է՞... Ինչ ես պապանձվի:

— Հայրապետ, շար ես մտածում... էն խեղճը ամենից շատ էր թառանչ քաշում:

— Հա՛, լավ, լավ, ուրեմն մարդ է, խիղճ ունի... Վերջին դատարանը միտն է բերել:—Ու մի քիչ հետո հարցրեց.

— Տեր նորընծան զնա՞ց...

— Հա, կանչե՞մ,—ասաց Մկրտումը:

— Չէ, էնպես... Ուզում էի մի բան հարցնեմ:— Մի պահ էլ աչքերը

ման ածեց, կարծես մեկին փնտրում էր, հետո կողքին դարձավ: Սանամը մոտեցավ, թիկունքը ծածկեց ու Հիբանը խոր քնեց:

Մյուսներն էլ ցրվեցին, ամեն մեկը մի սենյակում քնելու: Միայն Սանամն ու հարսի մայրը կուշ եկան հարևան սենյակի անկյունում, ննջում էին և թերի թողած գրույցը շարունակում: Սանամը պատմում էր, որ եղբայրը առավոտ կանուխ կանչել էր իրեն և գանգատվել, թե գիշերը լավ չի քնել:

— էն հարսն, ասում է, երազիս եկավ... Մարավ էի: Մեր էն մեծ գավաթով ջուր տվեց... Խուով քնաց, գավաթն էլ շառավ ձեռիցս... Ասում է, քանի՞ տարի է, երազումս նրան իսկի չէի տեսել:

Հարսի մայրը աչքերը լայն լռած իր կասկածն էր հայտնում այն մասին, թե երազը վատ է, նշանը՝ չար:

— էլի գավաթն առներ... փորձանքն առած կլիներ:

Լուսաբացին, երբ Սանամ հորքուրը հանկարծ զարթնում է և քունը դիտն վազում է հիվանդի սենյակը, նա սարսափած ետ է կենում: Գորգի վրա սպիտակահալավ նստած է լինում Հիբանը, արխալուզն ուսերին... Քրոջը տեսնելուց գլուխը վեր է հանում և հազիվ լսելի ասում.

— Մկրտումի՛ն...

Սանամի ձայնից զարթնում է և հարսի մայրը, հետո Մկրտումը: Բայց հենց այն վայրկյանին, երբ Մկրտումը ներս է մտնում, հիվանդը ձեռքով ետ է տանում գորգի ծայրը և ընկնում: Ու միայն Մկրտումն է տեսնում գորգի տակ ծածկված ինչ-որ բարակ կապոցներ:

Երկու օր դիակը մնաց նույն սենյակում: Մարդ էին ուղարկել առաջնորդից թույլտվություն առնելու, Հիբանի մարմինը եկեղեցու բակում թաղելու համար: Մինչ այդ բակում կանայք ու տղամարդիկ եփում էին, թխում, լվանում, մորթում և պատրաստություն տեսնում Խոջա-Հիբանին այնպիսի շուքով թաղելու, որի նմանը, ինչպես հայտնել էր Մկրտումը քահանային, Կարմրաքարն իր օրում չէր տեսել:

...Այդ օրից շատ տարիներ էին անցել: Խոջա-Հիբանի գերեզմանաբարը մի քիչ թաղվել էր, ոտքերի կողմն ավելի, քան գլխավերևը: Զաղացականի ասելով, այդ նրանիցն էր, որ մարդու ոտքի ոսկորներն ավելի շուտ են փտում, քան գլխի ոսկորը: Գերեզմանաքարի գրերը տեղ-տեղ հողով ծածկվել էին: Ամառվա շոգին գյուղում մնացած մի կաղ ոչխար, կամ հիվանդ հորթ, տապից նեղվելով մտնում էր եկեղեցու գավիթը և ոտքերը հազիվ փոխելով գնում, հյուսիսային գավիթի հովում. Հիբանի տափարակ գերեզմանի վրա նստում և ննջում, մինչև իրիկվա հովն ընկներ և տերը գար նրան գավիթից տուն քշեր:

Քեկուզ Հիբանի գերեզմանաքարն էլ թեքվել էր, բայց նրա անունը դեռ հիշվում էր թե՛ Կարմրաքարում և թե՛ շրջակա գյուղերում: Հիբանի տեղը Մկրտումն էր բռնել: Ծիշտ է, նրան հոջա չէին ասում, այլ հոջա-Հիբանի տղա, բայց շատերն էին խոստովանում, որ Հիբանը խստովան հետ ուներ և բարի սիրտ, համենայն դեպս «միամիտք էր և ուսմիկ»՝ ինչպես ասում էր շաղապանը:

Որդիներն ավարտել էին պարիսպը, տան կտուրը թիթեղել: Կարմրաքարում առաջ էլ ամեն օր հիշատակում էին նրանց անունը, երբ ասում էին՝ «Հիբանի տղի եզները», «Հիբանի հողերը», «Հիբանի ձին» «Հիբանի ժամանակվա պարտքը» և այլն, — բայց այդ ամենի վրա որդիներն ավելացրել էին խանութն ու առուտուրը:

Խոջա-Հիբանն էլ էր առևտուր անում, բայց նա խանութ չունեց: Բարդաններով բուրդ էր հավաքում և ուղտերին բարձած ճանապարհ գցում քաղաք իր ծանոթ վաճառականին հանձնելու: Գերան էր ծախում, գարնան սկզբին փող էր բաշխում և աշնանը փողի դիմաց վեբցնում մսացու, բուրդ, ոչխար, պանիր: Ու միշտ էլ գյուղամիջում քահ-քահ ծիծաղում էր քաղաքի վաճառականների նիստ ու կացի վրա:

— Ամեն միևն մի ծակ են մտել, մի քանի թոփ չիթ ու կտորի վրա նստել, արշինը ձեռքին, աչքը բուլղվն անցկացողին, թե ինչ է, մի քանի շահի փող գցեն դախլը... Գուքանս ո՞րն է... Ծս որ ձին նստում եմ, փափախս թեք դրած, իմ ոչխարի կողքովն անցնում, հազար դուքանի թալ չեմ անի:

Քաղաքի առևտրականների մասին նա այն կարծիքին էր, թե բոլորն էլ խեղճ ու կրակ մարդիկ են, ըստ մեծի մասի աղքատ, և միայն իր նման խոջա ապրանքատերերն են (կամ ինչպես ինքն էր ասում «մյուլ-քաղաք և դովաթուկ» մարդիկ), որ մի կտոր հաց են տալիս նրանց: Ինչպես կփրփրար ժերունի մյուլքաղաքը, եթե հրաշք պատահեք, գերեզմանից դուրս գար, անցներ գյուղի փողոցով և իրենց բլրակին շհասած, բարակ ապի մոտ, տեսներ քարաշեն մի տուն, կապույտ ներկած երկու մեծ դռներով, դռան ճակատից ցուցանակը՝ վրան գլուխ շաքար, մի քանի կապ թեյ և ուսերեն գրած՝ «Մանրուքի խանութ երբ Մանգասարովների»... Խանութի մի անկյունում աղաքարի կույտեր, մեծ տակառներ, մեջը լի ցորեն, գարի, ապա բարակ միջնորմը՝ վրան շատ ծանոթ գորգեր, գորգերի վրա պղնձե փալլուն կշեռքը, իսկ դարակներում՝ ճոթ ու կտոր, գույնզգույն չիթ, թոփեր՝ մահուդ, ատուա, օսպարումը թաշկինակներ, շաքար, պնակներ, լամպի ապակի, բաժակներ, կոճ ու թել, մի խոսքով այն ամենը, ինչ վաճառում էին քաղաքում: Ծվ ախ

խանութում՝ Եփրեմը, բուխարա փափախով, սև մահուդե պիչակով, ինչպես հագնում էին քաղաքի վաճառականները և որի համար էլ նա ծաղրում էր նրանց (պիչակը մարմինը մինչև սրունքները չէր ծածկում, ինչպես Խոջա-Հիբանի շալի չուխան և մեջքից վար բաց էր անում, որի համար էլ քաղաքացիներին Հիբանը մի անգամ ծաղրական ու ծանր խոսք էր ասել): Եփրեմը՝ չիթ թոփերն առաջը թափած՝ հաճախորդին գովում էր, ֆիրմայի անունը տալիս՝ Ցինդելի սատին, Մորոզովի «ամենապերվի» հալավացուն: Գովում էր և շափում, արշինը հոտավետ չիթ մեջ այնպես ֆոռացնում, ասես մանկուց նրա հետ էր խաղացել... Իսկ անկյունում, դախլի մոտ նստած էր Մկրտումը, որը հին ճանաչ Սուլեյման քիրվայի որդու երկու հարյուր ուրբու մուրհակը ծոցի հաստ «կնիշկայի» մեջ պահելուց հետո, այդ նույն տեղից հանում էր և մեկ-մեկ հաշվում 15 հատ տասնոց, նույն կարմիր տասնոցներից, ինչպիսիք կային հոր ժամանակ...

Խոջա-Հիբանի մահից հետո այդ խանութն էր ավելացել Կարմրաքարում, որի շաքարն ու չիթը գնված էին այն դրամով, որի մասին Խոջա-Հիբանը իր վերջին ցանկությունն անգամ չկարողացավ որդուն հայտնել:

Օրը մթնում էր:

Իրար հետևից վառվում էին ճրագները: Երբեմն ճրագը ձեռին մեկն անցնում էր բակով: Հեռվից այնպես էր երևում, ասես մութի մեջ լույսն ինքն իրեն է շարժվում ու հանկարծ հանգչում: Նախիրից ետ մնացած մի կով բառաչում էր գյուղի ծայրին: Գետի մյուս ափին, գյուղի դիմացն ընկած անտառի բացուտում խարույկը բոցավառվում էր: Կրակը մեկ հանդարտում էր, մեկ վեր սլանում և միլիոնավոր կայծեր ցրվում էին խավարի մեջ: Ասես հսկա մի աստղ էր թալրտում ծառերի արանքում:

Իսկ քիչ հետո, երբ խավարը թանձրացավ ու ճրագները մեկ-մեկ հանգան, որպես հսկումի կրակ մնաց միայն անտառի խարույկը, որի շուրջ բոլորը նստոտել էին խոզարածները, և Հիբանի ամառաթի լուսավոր պատուհանը, որ բլուրի բարձունքից անթարթ աչքի պես դիտում էր գլուղին:

Վերին հարկի այն սենյակը, ուր մահացել էր Խոջա-Հիբանը, անճանաչելի էր դառել տարիների ընթացքում: Հիբանի ցածրիկ և հաստ տախտակներից սարքած թախտը Մկրտումը քանդել և ցորենի ամբա-

րում միջնորմ էր շինել: Նրա տեղը դրված էր երկաթե մահճակալը, վրան՝ բարձրի կույտը: Անկյունում կողք-կողքի շարված էին բուլբուլիկներ սթոններ: Սեղանի վրա փողը կապույտ ներկած գրամաֆոնն էր, կողքին գիպսե մի հորթ: Խանութից տուն դառնալուց, երբ հարկավոր էր լինում արխալուղը փոխել, Մկրտումը քրքրում էր գրպանները և կեղտի մեջ մոռացված մի քանի պղնձադրամ հանում, գիպսե հորթի մեջ պցում:

Սենյակի պատերը զարդարված էին խալիներով ու կարպետներով: Հատակին, պատերի տակ փռված էին բարակ ներքնակներ, ծածկված նեղ ու երկար գորգերով: Թեկուզ մահճակալը, սենյակի մնացած կահ-կարասիքն առել էին քաղաքի մեծ մագազիններից, իսկ գրամաֆոնը Եփրեմն էր Բաքվից բերել, բայց և այնպես սենյակն անճաշակ էր կահավորված: Գրամաֆոնի և աթոռների վրա մի մատ փոշի կար: Ոչ նվազել էին և ոչ էլ նստել աթոռների վրա: Մկրտումը և նրա մոտ եկողները գերադասում էին ծալապատիկ նստոտել փափուկ գորգերի վրա, թիկնել պատին: Միայն Եփրեմն էր աշխատում «աբրազոնների» և «քաղաքավարի» լինելու, ինչպես ինքն էր ասում:

Առաստաղից կախած ճրագն առատ լույս էր տալիս: Ու թեկուզ զարնանամուտ էր, բայց և այնպես բուխարիկում վառվում էին կաղնու շոր փայտերը և տաքացնում տունը: Բուխարիկի մոտ, մութաքային թիկն էր տվել Մկրտումը, կողքին՝ համրիչը: Նա լուռ նայում էր երկար ու նեղլիկ մատյանին, շրթունքները շարժում, և ապա թերթը շրջելուց առաջ համրիչի հատիկները ետ ու առաջ տանում, հաշվում:

Լուսնունը խանգարվում էր համրիչի շրխկոցից և այն ձայներից, որ լսվում էին ներքին տնից: Այստեղ էր ապրում Եփրեմի ընտանիքը՝ օրվա մեծ մասն այնտեղ էր անցկացնում և Մկրտումի կինը՝ Ծոզերը: Սանամ հորքուրն էլ եթե ցուպին հենվելով շաբաթը մի անգամ գալիս էր հորանց տունը, ներքի տունն էր գնում: Նա գանգատվում էր, որ մահճը մոռացել է իրեն, ոտքերում այնքան ուժ չկա, որ քարե սանդուղքը բարձրանա և մի անգամ էլ տեսնի այն սենյակը, ուր մահացավ իր եղբայրը:

Մկրտումը ապառիկների մատյանն էր թերթում: Եթե մի օր կորչեր Տեր Նորընծայի շափաբերական մատյանը և քահանան ձեռքի տակ ու շինչ շունենար որոշելու համար, թե մի քանի տարի առաջ գյուղում ի՞նչ ծնունդ կամ մահ էր պատահել, — հեշտ կլիներ պահանջած տեղեկությունը քաղել Մկրտումի «նիսիանների դավթարից», որի նեղ ու երկար երեսների վրա գրանցված էին ոչ միայն Կարմրաքարից, այլև հարևան

հայ ու թուրք գյուղերից շատ տնտեսություններ, ըստ նրանց գորուբյան կարգի: Մատյանի առաջին մասում ունեւոր տնտեսություններն էին և շատ «պաշտոնի» (ինչպես ասում էր Եփրեմը) մարդիկ, որոնց ամենօրյա առուտուրը նրանց խանութիցն էր: Վերջում մի քանի էջ հատկացված էր նրանց, որոնք Եփրեմի ժարգոնով կոչվում էին «Ղարթանոցի խումբ»: Մատյանը միօրինակ ձևով չէր գրված. կային երեսներ, ուր Մկրտումի բարակ ձեռագրով նշանակված էր. «ձեռաց առավ 15 մնթ. հօգոստոսի 9-ին»: Բայց ավելի հաճախ, մանավանդ եթե ապառիկն ապրանքով էր եղել, մատյանն ավելի մանրամասն էր ասում: Օրինակ՝ «Մալուն Սիմոնին մի դրվ. շաբաբ կնունքի համար, ևս հիլ զանաֆիլ 10 կոպ.»... «Թարիվերդի Սուլեյմանին հարսանիքի համար 10 արշ. զոլավոր, Պրոխորովի լաստիկ 8 արշ., գյուլի այլուխ—3 հատ, մի դոխ շաբաբ Բրոդսկու, լավը, խոշկայաբար— 4 գրվ. նաբաթ 1 գր., ևս լամպի շուշա տասանոց—1 հատ, բուլբուլի գումարը,—22 մանեթ 34 կոպեկ.»:

Առանձին էր քոչվորներին բաց թողած ապառիկի ցուցակը: Ամեն զարնան ամպ ու փոշու մեջ կորած հազարավոր բազմություն հեռավոր տափաստաններից ոչխարը, ուղտը, եզն ու ձիու երամակներն առաջ արած բարձրանում էին այն լեռնաշղթան, որի մասին վաղեմի ճանապարհորդ վարդապետն իր հիշողությունների մեջ գրել էր, թե մատանու նման օղակում է Կարմրաքարը և աղամանդի պես սպիտակ լիճը բարձր պահում: Քոչն իրար էր խառնվում. հետև մնացողները նեղվում էին տափարակի տոթից, անասունները փնչոցով շտապում էին, օր ու գիշեր ճանապարհ կտրում սարի թարմ կանաչի համար: Հետինները քշում էին առաջիններին, ճամփի նեղ կապերում տավարն իրար էր խառնվում, բարձրանում էր շտեմնված աղմուկ-աղաղակ: Եվ հենց հասնում էին լեռնաշղթայի փեշերին, ամեն «օյմաղ» ցրվում էր իր պապերի ոտքերով ծեծած կածանով և նորից վրան զարկում սարում թողած նախահայրերի գերեզմանների մոտ:

Այդ քոչը Կարմրաքարի միջով չէր անցնում, բայց նրա ծայրը երկվար թե չէ, աշխուժանում էին շատերը: Եվ շարչիների մի ամբողջ խումբ ասեղներով, հայելիներով, գունավոր կոնֆետներով, թաշկինակներով ու այլ մանրուքով լի տուպրակները շալակած նրանց առաջն էին ելնում, խոնվում բազմութան մեջ, ծախում, փոխանակում, ծանոթներին հանդիպում և մի շաբաթ հետո գյուղ վերադառնում՝ պարկերը նորից լցնելու եղբայր Մանգասարովների խանութում:

Եվ թեկուզ բազմությունը Կարմրաքարի վրայով չէր անցնում, բայց

և այնպես փոքրաթիվ խմբերով երևում էին գյուղում: Ոմանք աղոճ էին բերում ջաղացպան Անդրու մոտ, ոմանք գալիս էին Կարմրաքարի իրենց ճանանչ մարդկանց պատվիրելու, որ անտառում վլանների համար երկար ձողեր պատրաստեն, ոմանք հենց այնպես, միայն իրենց ծանոթներին այցելած լինելու համար: Սակայն ինչ գործով էլ գալին, նրանք սար բարձրանալուց պիտի անցնեին Խոշա-Հիբանի որդիների խանութի առաջով, որպեսզի ծովեն աչ ու Քառասնաչրի նեղ կածանով, անտառի միջով հասնեն իրենց «օյմաղին»:

Այդ օրերին մի քանի տասնյակ ձիեր կապված էին խանութի առաջ ընկած գերաններից: Ներսում եռուզեռ էր: Հարցնում էին քեֆ հալ, իրար ձեռք տալիս, որդիների ու հարազատների առողջությունից տեղեկանում, հյուր կանչում իրար: Մկրտումը քուն ու դադար չունեի: Նա ընդունում էր ներս եկողին, ոչ միայն անունը տալիս, այլև տեղեկանում, թե ինչ էր մայրը, լավացած արդյոք այն կապույտ ձին, որ անցյալ աշպես է մայրը, լավացած արդյոք այն կապույտ ձին, որ անցյալ աշպես էր մի քիչ կաղում էր: Բոլորը զարմանում էին նրա հիշողության նանր մի քիչ կաղում էր: Բոլորը զարմանում էին նրա հիշողության վրա: Նրան առանձնապես հաճելի էր, երբ այդ ժխորի մեջ մեկը բարձրաձայն իր գոհունակությունն էր հայտնում, որ հիանալի «քիրվա» է Խոշա-Հիբանի որդին և չի մոռանում իր լավ ծանոթներին: Եթե հաճախորդը հարուստ և անվանի աղալար էր, Մկրտումը ճարպիկ շարժումով ինքը պիտի դարակներից հաներ բազմատեսակ կտորներ, փոքր նրա առաջ, շլացնելու գույնով, փայլով ու հոտով:

Առուտորն այնքան թեժանում էր, որ նույնիսկ Գոգուն էին կանչում և պատվիրում աչքի տակով հսկելու: Գոգին հյուրերին էր ընդունում, եթե եկողը «մեծամեծ» էր, վազում էր ձիու սանձը բռնելու, օհերն իրար հետ կովելուց կատվի ճարպկությամբ նրանց փորերի տակով անցնում էր և բաժանում իրարուց: Նրա աչքերը ծանր ու մինչև բերանը ճոթ ու կտորով լցված խուրջինների վրա էր, որ տերերը կապում էին սարի կանաչից կայտառացած ձիերի գավակին և անտառի կածանով գնում հարսների ու մանուկներին ուրախացնելու «Հիբան քիրվալ» որդիների պարզևած փոքր թաշկինակներով, մեջը լի մրգեղեն, կամ գոթավոր ու կլոր սապոններով, որ հատկապես նրանք պահում էին նվերների համար:

Երբ գնորդը ձեռքը մեկնում էր Մկրտումին կամ Եփրեմին մնաք բարով ասելու, նրանցից մեկն ու մեկը շտապ կռանում էր և անկյունի նախօրոք պատրաստած կապոցը, որ համեմատ էր գնորդի անձնակալ բարեմասնության և հարստության չափի,—մեկնում նրան ու ժպտում, թեկուզ միտքն այդ րոպեին ծայր աստիճան լարված էր, և խնդրում

փոքրը հանձնելու «Աթաբիչի կզուն» կամ «Սոնա-Խալային» ու հայտնելու «տալամ դովա» մեծ ու փոքրին:

Փոշի բարձրանալու հետ միասին ծայր էր առնում և դժգոհությունը: Ճիշտ է, քոչից ոմանք օգտվում էին, դարբինը նրանց համար հարյուրներիով էր պայտեր կտրատում, կտրած մանգաղները նորոգում: Ոմանք գաղտնի կերպով անտառում նրանց համար ցախ էին կտրատում, մի քանի շարժի մանրուք էին վաճառում, նույնիսկ Շալուն Սիմոնին էին կանչում «նոսակա օյմաղներից», որովհետև նա անասունների բուշկությունից բան էր հասկանում, ու թեկուզ նրա գործիքը մի կտրած դանակ էր, որով կտրում էր ականջի ծայրը կամ քթածակը ճեղքում, «հիվանդ» արյունը դուրս թափելու համար,—Կարմրաքարում շատեղն էին օգտվում քոչվորներից, բայց հենց նրանք սարը բարձրանալին թե չէ, սկսվում էր և դժգոհությունը: Գյուղից սար գնացող քոչվորը մի քիչ հեռանալ թե չէ, ձիու սանձը թույլ էր թողնում և ձին մուսթը մեկնում էր ճանապարհի կողքին, անտառի բացուտում ցանած կանաչին: Արտի տերը կանաչից մի փունջ ձեռքին շտապում էր գյուղի հրապարակը, գոտում, բարկանում, անթիվ անգամ կրկնում, որ գիշերը քսան-երեսուն օր են բաց թողել զարու մեջ, կերել են, տրորել, ձիերը թավալ են տվել, և լիք փողոցում տեսնում էր տանուտերին կամ նույնիսկ գզիրին, նրա սանների առաջ էր գցում խուրձը, գոյում էր գարին և նորից պատմում այն մասին, թե որքան են կերել: Գյուղի իշխանավորը նրա բողոքը լուր արում էր, խոստանում, որ կարգադրություն կանի ակտ կազմելու, կհայտնի պրիստավին, միայն հարկավոր է երեք-չորս մարդ տանել, որ նրանք էլ վնասը տեսնեն և վկա լինեն նրա խնդիրին: Բայց այստեղ էլ ամեն ինչ վերջանում էր, գանգատավորը բարձրաձայն հայտնում էր, թե ամբողջ գյուղն է վկա և որպես վերջին ապացույց գրպանից հանում էր փնջավոր կոնֆետի թղթեր, որ հավաքել էր արտից:

— Մի դաստա հրեն էնտեղ ա թափած... Սրա ուտողին ես ուժ ունեմ դատաստան անելու: Իմ իշխանն էլ դու ես, այ քոյոխվա, բա ի՞նչ երեխքը ձմեռն ո՞ւմ հույսին ես թողնում:

— Կանփետ տվողին ասա, ուտողն ի՞նչ մեղք ունի... Դու էլ որ ուտիր, հավատա, մի օրավար կորեկ կոխ կտայիր,—վրա էր բերում գանգատին ունկնդիրներից մեկը:

Պատահում էր, որ վնասը մի քանի տնտեսությունների էր հասնում և կամ ամբողջ համայնքին: Սարից մի քանի սուրու ուխար գիշերով քշում էին և արածացնում Քառասնաչրի մոտերին ընկած այն բացուտները, որ ամեն օտորի Կարմրաքարում թողնում էին անասունների աշնան կերի

Համար: Աղմուկ էր ընկնում գյուղում, դուրս էին թափվում, գոռում-գոռումով գնում ոչխարատեր «օջմաղից» վնասը պահանջելու: Երբեմն աղմուկի արյունով էր վերջանում, երիտասարդները տաքանում էին և մահակները սուսերների նման կայծեր էին հանում, զարկում իրար գլուխ շարդում: Շատ սակավ դեպքում էր օրենքը միջամտում ու դատաստան անում: Սովորաբար տաք կովից հետո կրքերը հանդարտվում էին, այս ու այն կողմից մարդիկ էին մեջ ընկնում և հաշտեցնում:

— Հազար անգամ եմ ասել, թե թուրքերից օգտավետ ազգ աշխարհի երեսին չկա: Նրանց ձին էլ որ թրքում է, էլի մեր ցորենն է ուժովանում: Նրանք որ կան յոնչա են, մենք էլ քյոհլան ձի... Մի դրաղից կե՛ր, մի դրաղն էլ պահի: Երեսի նման ժողովուրդ են, խոսքին ջան ասա, էի՛ք քու ասածն արա: Էդ էլ չի փողով: Այ է՛... Մեր հայությունը շատ անհասկ է,— թոնթորում էր Մկրտումը:

— Քու արտը քանի անգամ կերած կլինեն,— հարցնում էր Ավան ամին:— Ինչ որ գալիս է, քյասիրի գլխին է: Յարա ունեցողը կիմանա մրմուռը: Քեզ ի՞նչ կա...

— Իմ ու քոնը չկա էստեղ: Ես մարդավարության, նստիլ վեր կենալու մասին եմ ասում: Տեսնո՞ւմ ես ոնց են իրար պատիվ պահում. մեծը ջոկ է, փոքրը ջոկ: Մերոնք հենց շաշ եզան նման քարն են պողահարում: Թուրքը էնպես մի ազգություն է, որ կախ տաս, մին ծուռ խոսք չի ասի անժամանակ:

Երբեմն Մկրտումի երեսին ավելի խիստ խոսքեր էին ասում, հանդիմանում էին, որ նրանց խանութի պատճառով են քոչվորները գյուղ գալիս, որ նա քոչվորների շահին չի ուզում դիպչի: Եվ նրա ականջով էր հասնում գյուղում տարածված այն լուրերը, թե ինքը կաշառված է, նույնիսկ թե իբր նրա գիտությունը են գիշերով Կարմրաքարի խոտհարքն արածացնում:

...Բուխարիկում բոցն արդեն հանգել էր: Փայտի շիկացած կտորները մեղմ ճաքճքում էին, փշրվում և մոխրի բարակ շերտով պատում: Մկրտումը վերջացրել էր ապահիկների հաշիվը. գորգի վրա դրած համրիչ հինգ շարը սառել էին և ցույց էին տալիս եղբ. Մանգասարովների առևտրական հզորությունը թե Կարմրաքարում, թե հարևան գյուղերում և թե վրանաբնակ այն բազմության համար, որ յուրաքանչյուր գարուն «քոչ ու բարխանով» բարձրանում էր լեռնաշղթայի փեշերը և վրան գարկում լճակի եզրին:

Մկրտումը ձեռքերը մեկնում էր կրակին, իրար շփում: Երբեմն էլ

տաքացած ձեռքը երեսին էր տանում. և շոյում այտերը: Հավասար ու խոր շնչառությունից զրնգում էին գոտու արծաթ գինդերը:

Նրա ականջին էին հասնում ներքին տան աղմուկը, երեսաների ձայնը: Հաստ գորգերի արանքից այդ աղմուկը խուլ էր լսվում, կարծես շատ հեռու տեղ էր: Բակում բառաչում էր մի կով: Երբեմն լսում էր շղթայի զրնգոց: Չամբարն էր, պառավ շունը, որի տեղը մութն ընկնելուց փոխում էին, և բակի լայնքով կապած երկաթի լարին շղթան բսելով, շունը ետ ու առաջ էր գնում, երբեմն հաշում: Չամբարի հաշոցին Մկրտումը երեսը պատուհանին էր դարձնում և աչքերը լայն բաց արած լսում: Բայց շունը դադարում էր հաշելուց, հատ ու կենտ և անորոշ ձայներ էին լսվում հեռվից: Փակվում էին աչքերը, սակայն միտքն արթուն էր և շարունակում էր հյուսել, ծանր ու թեթև անել հազար ու մի գործ:

Գարբասի երկաթին մտրակի կոթով իրար հետևից հարվածեցին, կարծես գնդացիների կրակ էր: Մկրտումը մոտեցավ պատուհանին. Գողին ճրագը ձեռին վազեց դարբասի կողմը: Շունը հաշաց ու շղթան բաշելով հասավ մինչև ներքին տան դուռը: Ներքին տնից դուրս եկավ Եփրեմի կինը: Քիչ հետո դարբասը բացվեց, երևաց ձին, որի սանձից բռնել էր Գողին, ձիու հետևից՝ Եփրեմը:

Խոշա-Հիբանի մահից հետո երկու եղբայրների մեջ լռելյայն աշխատանքի բաժանում էր սահմանվել: Քաղաքում գնումներ կատարելը, պետական հիմնարկների և պաշտոնատար անձանց հետ գործ վարելը, ինչպես և խանութում առուտուր անելը Եփրեմին էր բաժին ընկել: Ծիշտ է, տարին մի կամ երկու անգամ Մկրտումն էլ էր քաղաք գնում, բայց այդ ավելի շուտ բարեկամական այց էր իր հոր բարեկամ վաճառականների որդոց: Մկրտումին էր մնում գյուղի տնտեսության կառավարելը, վարուցանքի եկամուտը և քոչվորների ու շրջակա գյուղերի բնակիչների հետ առևտրական գործարքներ կատարելը: Մկրտումի պրպանումն էին դախլի բանալիները, միայն նրան էր հայտնի ստացվածքի վերջնական չափն ու կանխիկ դրամի գումարը: Նա մեծ եղբայրն էր, գյուղում ավելի կշիռ ուներ, քան Եփրեմը, իսկ թուրք թարաբանայի հետ Եփրեմը չէր կարող վարվել իր եղբոր նման: Տանը, բարձր պարիսպների հետև, ոչ մի բան չէր կարող կատարվել առանց Մկրտումի գիտության: Եվ այդ ազդեցությունը հազար ու մի ճանապարհով տան սահմաններից դուրս էր գալիս, տարածվում շրջակայքում:

Մկրտումը ձիու վրնշոցը լսեց թե չէ, համրիչը սեղանի վրա դրեց, դավթարը՝ երկաթե սնդուկի մեջ, որ ծածկված էր նուրբ գործած շալովը

ներքին տանը երեխաների աղմուկն ավելի սաստկացավ, լսվեց թրմփոցի ձայն, ասես մի պարկ վերևից ընկավ՝ ապա բարձր ծիծաղ: Եփրեմն էր: Ամեն անգամ քաղաքից վերադառնալուց հետո նա նախ երեխաների մոտ էր գնում, մրգով լի գրպանները դատարկում, տնեցոց պատվիրած և քաղաքում գնած իրերը հանձնում կնոջը կամ Շողերին: Նրա խորջինում տան մեծ ու փոքրի համար միշտ էլ մի բան էր լինում: Նույնիսկ Շողերն էր հետևում և անհամբեր սպասում իր բաժնին: Գողին ձին գոմում կապելուց իսկույն վազել էր ու դռան մոտ կանգնել: Նրան էլ մի բան պիտի հասներ: Պառավ Չամբարը կոնձկոնձում էր, ասես ուրախ այդ ժխորի մեջ իմաց էր տալիս, որ իրեն շնորհակալ:

Բայց հերիք էր, որ Մկրտումը վերից կանչեր մեկն ու մեկին, որպեսզի աղմուկը դադարեր: Սովորաբար նա Գողուն էր ձայն տալիս, սակավ դեպքում՝ կնոջը: Եթե նրա կանչելը Եփրեմի գալուց հետո էր, ոչ Գողին էր վեր բարձրանում և ոչ էլ Շողերը: Եփրեմն ունքերը կիտում էր և իբր խռոված երեխա բարձրանում վերև, մտքում թոնթորալով իր վիճակից:

Մկրտումը մի ներքին հրճվանք էր զգում իր մեծութունը և ուժը ցույց տալուց: Ամեն անգամ, երբ նա տեսնում էր եղբորը երեխաների հետ կամ տնեցոց հետ ուրախ զրույց անելուց, նրա ներսում երկու զգացում իրար հետ պայքարում էին: Մեկ նախանձում էր եղբորը, դաժնություն զգում, որ ինքը զուրկ է այդ հաճույքից, մտաբերում վաղուց մեռած իր մանկան և ինքն իրեն հարցնում՝ մի՞թե մինչև վերջ պիտի անժառանգ մնա, — մեկ նախանձում էր եղբորը և մեկ էլ ցամաքում էր այդ զգացումը, մի ուրիշն էր ելնում, նրան խեղդում, մի ուրիշ զգացում՝ հանուն գործի, անդուլ աշխատանքի, հարստության ու հզորության: Առաջինը նրան թուլացնում էր, կորցնում իր հավասարակշռությունը, երկրորդը նրան խրոխտ կերպարանք էր տալիս:

— Ցեխը շա՛տ էր վերին կապում, — հարցրեց նա, երբ Եփրեմը մտավ ու մոտեցավ բուխարիկին: Վերին կապը քաղաք տանող ճանապարհի այն մասն էր, որ անցնում էր անտառի խիտ թավուտով և որ միայն ամառն էր գետինը մի քիչ շորանում:

— Չորտ նա խաբար, — քթի տակ ասաց Եփրեմը: — Երկու տեղ ձին խրվեց... Քիչ մնաց ինձ էլ տակովն աներ: Մո՛ւթ, ոչ ճանապարհն է երևում, ոչ ցեխը... Ոտդ որտեղ գնում ես, խրվում է...

Եթե Մկրտումը շնորհատեր, Եփրեմը դեռ կշարունակեր ճանապարհի նկարագրությունը, մեկը տասը շինելով: Մկրտումը գիտեր նրա սով-

րությունը: Ինչքան ավելի էր պատմում, այնքան նա համոզվում էր, որ քաղաքում նա մի «օին» է արել:

— Դու էլ լուսով գայիր...

— Թողնում են... Մինչև էն շան որդուն թուղթը գրել եմ տվել, հոգիս բերանս է հասել: Ամենապատելոյնի պաղլեցի հետ գործ արա, էջ, լինովիկների դուռը մի գնա: Քոստա, փալինքը կախ, տանը լակոտները հաց չունեն ուտեն, էնպես փաստնով է խոսում, ծանրացնում, կասես գնեիրալ գուբերնատոր է իմ գլխին:

— Վե՛րջը... փեշատե՞ց:

— Աչքն էլ շհանեցի... Փորացավը մի կարմիր տասնոց էր: Առաջ չեմ ու չում էր անում, ա՛յ ուզալովնի բան է, վերջն էլ թե հացից հետո արի տուն, օրենքին նայեմ... Որ Բեկտարեգովի անունը տվի, ստատյան գտալ:

— Բեկտարեգովն ի՞նչ ասաց:

— Ի՞նչ պիտի ասեր: Չեստ շեստի գրեց... Թե գասպադին նիկիտա Մանգասարովին իմ կողմից պերեդայ պակլուն: Ափսոս չի, էդպես մարդուն պերվի մինիստր դնես, ոչ թե պամոշնիկ: Դուրս գալուց էջ, թե ասում է ձեզ նման բարեկամ ունենալը մե՛ծ պատիվ է ինձ համար:

• — Մաշինքն ի՞նչ արիր...

— Բեկտարեգովից հետո էլ գնացի նրանց մոտ... Ա՛ մեք հայերը... էդքան նիզգի, ցիզան ժողովուրդ յարաբ աշխարհի երեսին կա՞ թե չէ: Ինձ տեսավ թե չէ, ոտը կախ գցեց:

— Ո՛րը...

— Էն մեծը, Արշակ Օսիպիչը... — Թե մի քիչ դարազումեննի է եղել, պրեսկուրանտի գինը պրիկաշնիկը չի իմացել... Երդում, աստված, թե էն կանաչ մեռոնը՝ Ռոստովի առքի գինը շորս հազար երկու հարյուր է...

— Վե՛րջը:

— Էլ ի՞նչ վերջը... Թե ասում է երկու տրեսում կարող եմ վե՛կ-վիլով տամ... Թե որ չեք ուզում, խանլար բեյն է ուզում տանի...

— Չտվի՛ր...

— Չէ...

— Չոտ, — ու փրփրաց Մկրտումը: — Գնում ես շհարում քուլեքը լափիտա: Բա քեզ ինչո՞ւ համար էի ուղարկել... Դե մի՛ գծվի, — ու ձեռքը բարկեց ճակատին: — Երկու հարյուր մանեթի համար գործը պիտի քանգվ... Ե՛րբ է խեղդը տուն գալու, հը՛... — ու մոտեցավ նրան: Եփրեմը մի քիչ ետ քաշվեց, աչքերը կկոցեց: — Խանլար բեյը որ տանի, ուրախ

կլինես հա՛... Նա ո՛ւմ շունն է, որ իմ ուզածն առնի: Քրած նրա բելո-
թյան վրա... Սոված, սովածի մինը:

— Դե մի թող է՛... Ի՞նչ ե՛ս կարկուտ թափում,—ընդհատեց Եփրեմը:

— Հը՞:

— Թողթ եմ առել, որ մինչև մի շաբաթը իրավունք չունի ուրիշին
ժախի, մինչև ինձանից պատասխան չտանա...
— Հա՛...— ու մի վայրկյան հետո հանդարտ ձայնով ասաց.

— Լավ է, էդքան էլ խելթդ կտրել է...

— Իմ խելքս էդքանը հասկանում է... Ասա վերջը էդ մաշինները
մեր տունը չբանդի,—պատասխանեց Եփրեմը:

— Ինչ էլի...—այս անգամ ձայնը բարձրացնելով վրա բերեց Եփ-
րեմը: Մեծ եղբայրը կանգնել էր անկյունում, գլուխը կոացրել և ուն-
քերի տակից աչքը գցել Եփրեմին.—ամենահայտնի մանուֆակտուրիստ
մարդուց մինչև էն պյան գարադավոյը մեզ վրա ծիծաղում են... Ասում
են Կարմրաքարն ինչ մաշինի տեղ է... Փող ունեք, բերեք քաղաք, թե
ուժենքդ չի պատում խող առեք, ձեր ծմակի կաղինն ուտի: Չորտ նա
խաբար... Մարդ աչքերը բաց չորս հազար երկու հարյուր մանեթ տա,
ինչ է գավող եմ բաց անում էս վայրենի աշխարհո՛ւմ... Ի՞նչ մարիֆաթ,
ինչ մարդավարությունն ես տեսել էստեղ:

— էլի՛ բռնեց... Քորի, լեզուդ բորի մի քիչ:

— Վերջը իմ ասածին կգաս: Գյուղն ի՞նչ է, որ մարդ էնտեղ բնակ-
վի: Փող ունես, տար քեզ բարերար մարդոց հետ գործ արա: Երեկվա
սողան ծախողն էսօր վտարոյ գիւղի կուպեց է դառել, իսկ մենք էս վայրենի
ծմակից դուրս չենք գալիս: Չե՛ս տեսնում... Շատը սոված է, մի թիքլա
պանիր էլ չի ճարում, որ ցամաք հացը կու տա... Օղգյա լազա՛թ կա
քաղաքում... Շիկ, լուսավորություն, նստել, վերկենալ, հանգիստ: Փողդ
ապրանքի տուր, մի բոյկի ուզավոյում մագազինիդ դռները բաց արա,
թող պրիկաշիկների հոգին դուրս գա... Դու հենց աչքիդ տակով նայիր:
Թե չէ էս ի՞նչ կյանք է... Ես ինձ նման ընկերների հետ մի անգամ նստել
վերկենալը չեմ փոխի քո ճանաչած մարդոց հետ... էստեղ մնացողը
մարդու կերպարանքից էլ կընկնի: Մի օր էլ տեսար՝ ը՛հ, աղբյուրը
ցամաքե՛ց:

— էդ օրը մեզ համար չի,—կտրուկ պատասխանեց Մկրտումը:

Տիրեց լուսթյուն: Եփրեմը վանդակի մեջ ընկածի նման քայլում
էր սենյակում, երբեմն կանգնում գետնին նայում և ապա ձեռքերը
մեջքին նորից շարունակում քայլել: Մկրտումն աչքի տակով նայում էր
եղբոր բարկացկոտ շարժումներին:

Ոչ ոք չէր ասի, թե երկու եղբայրն էլ մի մորից ու հորից էին սեր-
վել: Մկրտումը կարճահասակ էր, ոսկրոտ: Նրա շարժումները կոպիտ էին.
երկար և մազոտ ձեռքերը վայրենի տեսք էին տալիս նրան և հակա-
պատկերն էին Եփրեմի աճելի նուրբ կազմվածքի: Մեծ եղբոր գլուխը
պատած էր կուպրի նման սև և կոշտ մազով, այնինչ Եփրեմի մետաքսի
նման կակուղ մազերը տեղ-տեղ սպիտակել էին: Առաջինը զուսպ էր,
խորամանկ, ծանր ու բարակ կշռող և պողպատ կամքի տեր, երկրորդը՝
չուտ հուղվում էր, մտքինն ասում մինչև վերջ, կրակի պես լափում մինչև
վերջին շյուղը և հանգչում, հանդարտվում, դառնում խոնարհ գառ:

— Չեմ իմանում... Մի պաշտոնի մարդ շտեսա, որ մօր ասածին
հավանի,—խանգարեց լուսթյունը Եփրեմը:

— Խալխի հացը չես ուտում, որ խալխի խելթով էլ գործ բռնես,—
ասաց Մկրտումը և մի քանի քայլ արեց դեպի եղբայրը:

— Պրծա՛ր... Դե հիմա իմը լսի: էգուց, ծեղը ծեղին, եկած ճանա-
պարհով ետ կդառնաս, մի տրետը կտաս, պայմանը կկապես, ե՛ չն
սհաթին էլ ետ կդառնաս... Իմացա՛ր:

— Որ էգուց չլինի, երկու օր հետո լինի չի լինի՞... Լավ մտածի,
արի՛՛ ձեռք քաշի էդ բոլորից... Քաղաքում տարա՛ն կերան, ով աչքը
բաց է անում, վազում է մարդի շարք ընկնում... Մեզ կարողություն է
պակաս... էգուց երեխաներին ուտում տալ կա՛, կյանք ու աշխարհ տես-
նել կա:

— Կարմրաքարից լավ տեղ աշխարհումս ինձ համար չկա. թող
ում գլուխը ցավում է, գնա քաղաքում դուքան դնի... Քաղա՛ք... Մի
հարցնող լինի, թե ինչ կա էդ պրիշակում... էնքան բան կա՛ էս ձորերում,
իմ պիլին խող գցեմ, երկու տարուց հետո էնպես զավող բաց անեմ,
որ թամաշա... Քառասնաչուրը իմը լինի, Մանթաշովի բուրողներին էլ
թամահ չեմ անի... Սա երկիր չէ, ոսկի է տեղովը մին. ասենք անհասկա-
ցողը մենք ենք:

— Ոսկի է, հավաքի,—հեզնեց Եփրեմը:

— Կհավաքեմ, սպասի՛,— այնպես վճռական հայտարարեց Մկրտ-
ումը, որ եղբայրը մի պահ տատանվեց ու սկսեց կասկածել, թե մի-
գուցե Քառասնաչուրը իրոք ոսկեհանք ունի և ինքը տեղյակ չէ՞ Նա
ձեռք տարավ ծոցը, շոշափեց նոտարի կողմից հաստատված այն թուղթը,
բոտ որի Քառասնաչուրի երկու ափին ընկած մոտ 60 դեսյատին պետա-
կան անտառը պատկանում է նրանց:

— Դու նղջություն ասա... Աշխատող մարդը քարից էլ նավթ
կհանի, Կարմրաքարի ի՞նչն է պակաս... Ո՞վ ունես քո դիմաց... Չէ՛,

գնամ քաղաք հազար չոթու բնկեր դառնամ... Ապերը լավ էր ասում, թե նրանք մեզանով են ապրում: Մանթաշովը մի շուխտ տրեխ էլ շուներ, որ գնաց Բաքու... Հրես ոսկին դռանդ թափած, սարքի, ստեղծի, թող քո անունն էլ բարձրանա, մի քսան երեսուն աղբատներ էլ էն փշրանքովդ ապրեն, հորդ ողորմի տան...

— Է՛հ, չեմ իմանում,— ասաց Եփրեմը. նա արդեն տատանվում էր և զգում, որ եղբոր ձեռքից չի ազատվելու՝ մինչև թղթերը շտա և տարած փողի հաշիվը չներկայացնի:

— Չես իմանում, իմացի՛ր... Էս ո՞ւմ համար ենք աշխատում. ես ի՞նչ ունեմ մեզը: Մի դատարկ անուն: Թող քո ժառանգները մեծանան, տիրություն անեն:

Այս ասելուց Եփրեմը զինաթափ եզավ: Նա շատ էր սիրում իր երեսխաներին: Այդ գիտեր և Մկրտումը, և երբ ուզում էր նրան կակզեցնել և իր ասածին բերել, նա տրտմությամբ հիշեցնում էր այն տարբերությունը, որ կար երկու եղբոր մեջ և հուսադրում, որ իր մահից հետո ամեն ինչ մնալու է նրան: Եփրեմը ծոցի գրպանից հանեց թուղթը, ցուց տվավ, թե ում ստորագրությունները կան, ինչ ասաց Բեկտաբեզովը, երբ կնքեց:

— Էգ փեշատը, ասում է, որ դեռում եմ, ինքը պրակուրորն էլ չի կարող քանդի: Նա զգարովյե, ասում է, ձեզ հալալ լինի... Չորտ եվո, էդպես ազնիվ մարդուն գուբերնատի շինը քիչ է:

— Վեկալը տվի՞ր,— հարցրեց Մկրտումը:

— Տալը քիչ էր... Կտոր-կտոր արի, ճակատամիջին շարտեցի: Նա եւս շունն է, որ մեզ վրա հաշի... Ծոցեկվա ձեթ ծախողը: Ասում է սուփ կտամ, որ ինձ խայտառակ ես անում:

— Հետո՞:

— Իսկյանդարովների պրիկաշչիկն եկավ, էնպես նրան անպատվեց, ո՞ր: Ասում է ամբողջ գուբերնիում Մանգասարովների նման ակուրատնի սովեստով գործ անող չկա. դու ո՞նց էիր ուզում նրանց վեկսիլը պրոտեստ անես: Լավ խայտառակեց: Ես էլ շաքարը նրանց սկլադից առա: Խազեինն ասում է, մինչի հարյուր հազարը դավերյա կանեմ, ինչ ուզում ես տար, կորած տեղ չի: Տարավ մարդը, շնորհակալ եմ, լավ պատվեց:

— Դու էլ կակզեցիր, հը՞,— հեզնանքով ասաց Մկրտումը և համրիլը վերցնելով սեղանից, մոտեցավ նրան:— Ինչքա՞ն փող ունես մտո: Եփրեմը սկսեց գրպանները դատարկել. դրամը մեկ-մեկ դնում էր սեզանի վրա, իսկ Մկրտումը հաշվում էր:

— Չորտ մանեթ էլ գցի գերբովի մարկա, մնաց 11, նրանից 5 ձանեթ քանի կոպեկի պակաս-պուստ եմ առել տանը համար:

— Ի՞նչ պակաս... չեն կարող դուբանից տանե՞ն:

— Գորու համար մի լակիրովնի պոյես եմ առել:

— Գորո՞ւ... նա ի՞նչ է անում:

— Ասում է, ուզում եմ տնավորվեմ:

— Բ՞ւմ աղջիկն է:

— Շալուն Սիմոնի...

— Հա՛, լավ, մնացածը:

— Անացածն էլ Իսկյանդարովի պրիկաշչիկի հետ զնացինք ռեստորան, դակուսկի արինք: Շաքարի սկլադը նրա ձեռքին է:

— Լավ, հո ավել չե՞ս ծախսել, պարտք չե՞ս արել:

— Չէ, չիստի եմ. կոպեկը կոպեկին բռնում է. ուզում ես մեկ էլ գցի:

— Չէ, էս անգամը լավ ես, խելոքանում ես... Դե գնա, բեզարած կեցես. էգուց ուզում եմ հիմերը քանդել տամ: Դու էլ, ոնց որ ասի, առավոտ կանուխ կգնաս, մի տրետը կտաս, ճանապարհը շորանալուց կտարակեն, մնացածն էլ կստանան:

Եփրեմը դուրս եկավ: Նա ուրախ էր, որ հաշիվները «չիստի» հանձնեց: Ճիշտ է, քաղաքում նա ավելի էր ծախսել, ռեստորանում նրա հետ եղել էին Իսկյանդարովի գործակատարից բացի և մի քանի ծանոթներ, խմել էին ու զնացել բիլիարդ խաղալու և մուֆն ընկած հազիվ էր կամպանիայի ձեռքիցն ազատվել, բայց և այնպես հաշիվը տեղը բերեց և դուրս եկավ «կրուգոմ շեստնադցատ», ինչպես ասում էր Իսկյանդարովի գործակատարը: Նոտարի մատենավարին, որին Եփրեմն անվանեց փայքոտ ու քոսոտ, նա ամենևին չէր էլ կաշառել:

Եղբոր դուրս գնալուց հետո Մկրտումը մի անգամ էլ նայեց թղթին, ստորագրություններին ու կնիքին, զգուշությամբ թուղթը պահեց սնդուկում: Շոշափելու շափ պարզ նա զգաց այն հզորությունը, որ ձեռք է բերելու այսուհետև: Նրա վաղուցվա միտքն էր Կարմրաքարում հիմնելու սղոցարան և պատրաստելու գերան ու տախտակ: Քառասնաչրի երկու փոխ, մինչև ձյունոտ գագաթները ձգվում էր խիտ անտառը և միանում այն մեծ անտառամասին, որի փեշերին ընկած էին մլուս գլուղերը և որից դեն հյուսիսից հարավ ընկնող լեռնաշղթան դարձյալ պատած էր անտառով: Դեռ անցյալ աշնանը նա քաղաք էր գնացել հատկապես իմանալու գները, շոշափի պահանջը և մտքում հաշվել էր օգուտը ու գործել գնելու ոչ միայն անհրաժեշտ ստանոկն ու երկաթե մասերը, այլև

այն անտառամասը, որ ընկնում էր Քառասնաչրի մոտ և որտեղ մտադիր էր կառուցելու սղոցարանը:

Եփրեմի բերած թուղթը իր ծրագրի մի մասն էր: Ստանդը դեռ չկար, սղոցարանի տեղը դեռ կանաչ էր, ձորակում, դեղնած տերևների տակ՝ գորշ սառույց: Շուտով կզրնգան սղոցները, անիվը կդառնա, փոկերն ետ ու առաջ կվազեն և հաստաբուն կաղնիները կսղոցվեն, կգանան բարակ ու լայն տախտակներ... Բազմաթիվ սայլեր կձուռան, կտեղափոխեն տախտակները, գոմեշները քարշ կտան ծանր գերանները և ամեն տեղ կտանեն նրա ապրանքը:

Մկրտումը կանգնել էր սանդուղքի գլխին ու նայում էր գյուղին: Գիշերվա սառը քամին ծեծում էր նրա կուրծքն ու դեմքը: Նա ազատ շնչում էր անտառից եկող թարմությունը: Լուռ էր գյուղը. ոչ մի ճրագ չկար և ոչ մի ձայն: Թույլ կաղկանձոց էր գալիս ներքի թաղից, կարծես մրսում էր մի շուն: Մոտակա խրճիթից լսվում էր մանկան ճիչ: Զաղացի առաջ մի փոքրիկ կրակ պեծին էր տալիս:

— Երանի նրան,—մտածեց Մկրտումը,—մինչի՛ լուս էլ մասլահաթ կանի...

Գիւմացի սարի հետևից լուսինը պոռնկը հանել էր: Սարից խավարը կախվել էր, ծածկել ձորը, շաղացը, գյուղի մեծ մասը: Եվ ինչքան բարձրանում էր լուսինը հորիզոնի վրա, այնքան խավարը ետ էր քաշվում: Հեռվից խուլ վշտոց էր գալիս. քամին անտառում ծառերի դեռ լերկ ճյուղերը իրար էր տալիս և բացվող բողբոջների բույրը թևերին առած տանում հեռուները:

Մկրտումն իջավ սանդուղքով: Զամբարը շղթան երկաթե լարին քսելով մոտեցավ նրան, ոտներին փաթաթվեց:

— Զամբար, Զամբար... Անիրավ,—փաղաքշական ձայնով ասաց նա: Շունը հասկացավ նրա փաղաքշանքը, ավելի արագ սկսեց հոտոտել ու իր հավատարմությունը ցույց տալու համար վազեց դարբասի կողմը, մի քանի անգամ հաչեց, էլի ետ վազեց:

Վերևից Շողերը կանչեց.

— Գլխաբաց ե՛ս... Քամի է...

Նա ետ նայեց ու աստիճանների գլխին տեսավ կնոջը, սպիտակաշոր, շալի մեջ փաթաթված, ինչքան նման էր նա առաջվա Շողերին, այն գիշեր, երբ մայրն իրեն մոտիկ գյուղն ուղարկեց մշակներ վարձելու: Շողերը կանգնել էր սանդուղքի գլխին, ճրագը բռնել էր ու լույս էր անում: Լույսի տակ՝ բարակ ու սպիտակ ձեռքը կարմիր շալի տակից:

Մկրտումը կայտառ մանկան պես վեր բարձրացավ... Նեքքին տնից

նա լսեց Եփրեմի ծիծաղն ու մանկան լացը... Հայրը փոքրիկին անկողնից հանել էր, գլորում էր ու փափուկ տեղերից ցավացնելու շափ համբուրում:

Խոշա-Հիրանի ամարաթի վերի հարկի ճրագն էլ հանգավ: Մնաց միայն շաղացի խարույկը, որի շուրջ նստած մարդկանց շաղացպանը պատմում էր իր ամենից սիրած հեքիաթն այն մասին, թե ինչպես մի հովիվ ոչխարը լճի մոտ տանելուց տեսնում է սպիտակ աղավինների, որոնք անհայտ է, թե որտեղից իջնում են, փետուրները թողնում լճի ափին, դառնում փերի աղջիկներ, ջրի մեջ լողանում, ինչպես հովիվը գողանում է մեկի թևերը, և աղջիկն էլ չի կարողանում սպիտակ աղավինի դառնալ...

Գարունը բացվել էր:

3

Արբեցնող բույր էր բարձրանում այգիներից ու գետափին ընկած ծառաստաններից: Սարերը մուգ-կանաչ էին հագել, և միայն բարձրերում, ամպերի տակ, ձյունի մանրիկ շերտերը դեռ սպիտակին էին տալիս: Քարաքտան ու մամուռը գարնան խոնավությունից ուռճացել ու պեսպես գույներով ներկել էին ժայռերն ու քարերը: Անտառի թանձր կանաչի միջից երևում էին հատ ու կենտ ցցաշոր ծառերը: Օդում աղմուկ կար, որ գոյանում էր անթիվ անհամար բզեզների ու մեղուների բզզոցից, թռչունների կանչից ու վար անողների երկար ու ձիգ հորովելից:

Կարմրաքարն էլ էր կերպարանափոխվել: Տերևակալել էին տների առաջ եղած հատ ու կենտ ծառերը, փտած գերանների վրա սունկները շար էին ընկել, կուուրներին կանաչ էր բուսել ու կախվել: Եկեղեցու գավթում խոտն այնքան շատ էր, որ Ավան ամին ըստ վաղեմի սովորության, Տեր Նորընծային խորհուրդ էր տալիս կանաչը խոտհարք պահելու և արգելելու, որ կաղ ոչխարներն ու գյուղամիջի էշերը կոխ տան ու թավալեն:

Բացվել էր գարունը, աշնան ցանած արտերը ծփում էին ծովի նման, մոխրագույն կոհակներ տալիս: Ունանը քուն ու դադար չունեիր. վարում էր, հա վարում, հորովել տալիս... Մտերն ու ազոավները երամներով հետևում էին նրա վարին և թաց հողի միջից, խոփի հենց բերանից թոցընում ճիճու և որդ: Գարնան փարթամ բնությունը ավելի էր խոտացնում այն կոնտրաստը, որ գոյություն ունեիր Կարմրաքարի ու նրա հանգիստի միջև: Գեղեցիկ էին արտերը, մարդու ձեռքով տնկած ծառաստանները,

— 485 —

նրա կապած մարգերը, ուր արդեն կանաչել էր լորին, սարյակները ճովողում էին կտուրների տակ կամ տանձենու ճյուղերի վրա և միայն մարդու բնակարանն ու ինքը մարդն էր. որ գարնան պայծառ արևի տակ փռելու ուրիշ բան չունեն, մաշված կարպետից ու միթիլը պատած վերմակից բացի:

Գյուղի ամենավատ ժամանակն էր: Տաշտը դատարկ էր, օրը մի քանի անգամ աչք էին գցում գարու արտերին, որ շուտով պիտի գորշանար ու հասկ գցեր: Մաքուր էին փողոցներն ու բակերը, որովհետև արբը կրել էին բանջարանոցները, գարնան արևը ծծել էր աղբակույտերի կծածհոտն ու խոնավութունը: Մաքուր էր տների ներսը. ձմեռվա հաստ շորերն արևին էին տվել ու հագել հնամաշ արխալուղները: Ոմանք ծանր փափախները դեն էին գցել, կապույտ թաշկինակ կապել գլուխներին:

Ավան ամին կացինը գոտկատեղում խրած, մեծ դանակը ձեռքին այգուց այգի էր շտապում, պատվաստները ստուգում: Ամբողջ գյուղին էր հայտնի, որ Ավան ամու նման ոչ ոք ոչ պատվաստը գիտեր, ոչ էլ ծառի «խասիաթը»: Անտառը նա գիտեր հինգ մատի նման: Տեր Նորրն-ժայի հետ երբեմն վեճի էր բռնվում և գրազ գալիս, թե ինքը կարող էր ասել այսինչ անտառամասում քանի ծառ կա և ինչ ծառեր են, իսկ տեր-յանը չի կարող ասել, թե ծամագործի այսինչ երեսին ինչ աղոթք է գրված:

Ամեն այգում էլ նա պատվաստած ծառեր ունեն. յուրաքանչյուր գարնան այցի էր գնում իր պատվաստած ծառերին, ճյուղերը կտրում, խոռհուրդներ տալիս և զայրանում, երբ տեսնում էր, որ չեն արել իր ասածը:

— Տանձն ուտելուց ճյուղերն էլ հետն ես մաշկում... էս ձեռքդ կկտորի, որ տակը փեյնես...

Գյուղի ամենալավ այգին նրանն էր: Փոքր էր, բայց խնամքով մշակած: Գարունը բացվելուն պես ծառերի շոր կեղևը մշակում էր, քերում, կոխ տալիս մաշկի տակ ձմեռած միջատներին և շոր տերևները վառում: Եվ երբ մեղվի թթոցները սհարից այգի էր տեղափոխում, այդ նշան էր, որ մինչև խոր աշունը օրվա մեծ մասն այգումն է անցկացնելու:

— Ավան ամին քոչը բարձեց հա՛... Գարեքը հրես կհասնեն...

Արևը չինչ երկնքի վրա հուրհրին տալով լողում էր և դանդաղ բարձրանում դեպի գագաթը: Գյուղի փողոցներում մարդ չէր երևում: Թուր-քարի ստվեքում մուշ-մուշ քնել էր հարյուրամյա մի ծերունի, որ աշխատանքի այդ եռուզեռին եկել էր և, գրուցընկեր չգտնելով, քնով անցել: Խանութի առաջ մի քանի ձի արևից նեղվում էին և պրթալ ու պոթ

լարժումով քշում ճանճերին: Քոչն արդեն բարձրացել էր. ձիավորները սարից էին իջել տնեցոց համար թեյ, շաքար ու կտոր գնելու:

Արդեն սկսվել էր քաղհանը: Հարս ու աղջիկ առավոտ կանուխ քաղի էին գնացել. նրանք տարել էին և փոքրերին ու տան դռներից կախել ժանգոտած կողպեքներ, բանալին պահելով հավաքի մեջ: Ոմանք էլ դուռը միայն վրա էին դրել և բարակ թելով կապել, որ շունն ու հավը ներս չմտնեն: Այգիների կողմից լսվում էր բայաթու ծործոր ձայնը, գետի մոտ՝ մեկը հա կանչում էր էշին՝ «թոշ-թոշ...»: Զաղացի դռանը մարդ չէր երևում:

Քառասնաչրի կողմը, Խոջա-Հիրանի մեծ արտում քաղհանավորի երկար շարքն էր ձգվել: Այնքան դանդաղ էին շարժվում, որ նայողին թվում էր, թե գույնզգույն շորերի շարքը կանայք չեն, այլ գունավոր քարեր արտի կանաչի մեջ: Շարքի ձախ ծայրին, ձորակի մոտ, սպիտակ շորով մի կին ավելի հաճախ էր բարձրանում, երբեմն ձեռքը ճակատին ասնում՝ արևից պաշտպանվելու համար և նայում ձորակի կողմը, որ-տեղից լսելի էր տխուր երգի ձայն, ուրախ ծիծաղ ու մուրճի միալար զրնգոց: Աղջիկը ձայներից ջոկում էր, որ տխուր երգողը ուստա Նազարն է, «հայաստանցի գաղթականը», որի տունը գտնվում է Ղարիբանոցում, իրենց տան կից: Ուստան ազատ օրերին էլ էր նստում տան պատի տակ և թթի տակ մոմոում նույն երգը: Ուրախ ծիծաղը, որ ձիու վրնջոցի էր նման, Արզումանինն էր, իսկ զրնգացողն իրենց ծանր մուրճն էր:

Երրորդ օրն էր, որ ուստա Նազարը, Մկրտումի պատվերով ու նրա տված չափով աշխատանքի էր անցել Քառասնաչրի ձորակում, այնտեղ, ուր անտառի և նրանց հողի սահմանն էր: Տեղը նա էր որոշել և ուստա Նազարի հետ միասին քողով չափել պատի երկայնքը, ցույց էր տվել, թե որտեղ պիտի շինեն ջրի ամբարտակն ու երկարավուն ծածկը: Նրա ցույց տված տեղով հիմքը փորել էին, անտառի միջից մի նոր առու հանել, որպեսզի մինչև ամբարտակի կառուցումը Քառասնաչուրը նոր առվակով հոսի:

Աշխատանքը ետում էր: Արզումանը, որ այդ գարնանն էր զինվորությունից վերագարձել, ուժով հենվում էր ծանր լինզին և մեծ քարերը տեղահան անում: Նա ձորակի մյուս ափին էր, մի քիչ բարձր: Ամեն անգամ քարը գլորելուց քահ-քահ ծիծաղում էր և կանչում ուստա Նազարին, երբեմն էլ հայհոյում էր քարին, լինզին և հենց այնպես, ըստ սովորության:

— Ուստա Նազար, ես քեզ համար բաղ ստարատցա... Գրիկաղը տեղ՝ ոտում ես քերծերը թափեմ ձորի մեջ... Յա սալդաթ 117 պենզեն-

սկի պոլկ տրետի բատալիոն ավտարո ըոտա պալուչիտ Արզումանու
Նդգագարովու սելեննի Կարմիրկար Սլիսավետպոլսկի գուբերնի... Այ, ես
քու իմանը... Սիմոն ապեր, մեզ մին Ֆելդֆեբել ունեինք, գլուխն էս քարի
չափ չկար... Որ նո՛ւ էր ասում, սաղ զվողը դողում էր... Իսկական վրա-
սելյակի խող... է՛ Իվան Իվանիչ, էս էլ քո հոր գլոռին...

Նվ քարը դղողալով գլորվում էր ցած: Կիտված քարերը մեջքով
կրում էր մի դեռատի պատանի: Նրա պատռոտած շորերը փոշոտվել ու
ցեխոտվել էին, քարերը քերծել էին թևերը: Պատանու մեջքին ջուլի կտոր
էր, որի վրա շարում էր քարերը և տնքալով բարձրանում: Երբ Արզու-
մանը վերից ձայն էր տալիս, թե քարն եկավ, պատանին վեր էր բարձ-
րանում և դիտում, թե ինչպես է քարը քարին դիպչում, ցլանքներ ցրում
ու կայծ տալիս:

— Եզոր, հեռո՛ւ... Քսան փութանոցն եկավ,—կանչում էր Արզու-
մանը և պատանին ետ էր կենում:

Եզորն ինքն էր քարը բարձրացնում, դնում մի ուրիշ քարի վրա, ապա
մեջքը դեմ անում ու ձեռքերը ետ տանելով քարը գրկում: Արզումանը
վերևից դիտում էր նրան: Մեծ քարին մոտենալուց, կանչում էր:

— Էդ քո ճաշը չի, մալախոլնի... Թեթևը տա՛ր... Ուզում ես գրիծա
ստանա՞ս... Ախ տի սիմոլյանտ... Ռուսի թագավորն անունդ հրեն ծոցի
դավթարում պահում է: Եզոր Մուրազով, մի պատառ էլ պանիր հաց
ուտես, մեծանաս, կասի, իդի գալուբչիկ, կավալերիստ խարոշի... Մի
ձի կտան, շաշկեդ էնքան տանես, բերես, որ կոներդ թուլանա... Փախի,
քարն եկավ...

Ու նորից քահ-քահ ծիծաղում էր:

— Սմիրնո գասպադա ափիցերի,—այնպես բարձր գոռաց Արզու-
մանը, որ ձայնը հասավ քաղհանավորներին: Ու Սալբին հանկարծ մեջքն
ուղղեց, նայեց ձորի կողմը: Արզումանը լինզը ուսին կանգնել էր քարերի
մէջ: Նրան նկատելուց նա լինզն իջեցրեց ու ձեռքը տարավ զինվորական
բարևի. Սալբին ժպտաց, նորից կռացավ, երեսը թաղեց կանաչի մեջ:
Կողքին կռացած կինը նկատեց այդ և ասաց.

— Էդքան մի ծալվի արտի վրա... Աչքդ փուշ կմտնի...

Արզումանի հրամանը Ավան ամու համար էր, որն այդ ըոպեին
վայրի տանձենիներից մի կապ ձեռին դուրս եկավ անտառից ու իջավ
ձորակը:

— Այ գյափդ լինի հա՛,— ասաց նա Արզումանին և մոտենալով
ուստա նազարին, հարցրեց.

— Բարի աչողում, ուստա նազար... էս ի՞նչ ես շինում... Մարագ

է՛, կալատեղը գեղումն է, թե ասեմ ամբար է, էս ճամփի բերանն ամ-
բարի տեղ չի...

Ուստան ուսերը թոթվեց.

— Եսիմ... Շքենք... Խաղչինի քեֆ: Մեզ ի՞նչ... Կուզես ուսումնա-
րան շինեմ, կուզես դուսադխանա: Պատը պատ է...

— Մարդ մաշկելու զավոդ է, Ավան ամի,— ասաց Արզումանը,
վերից իջնելով:— Գեղումը մարդուց էժան ինչ կա՛... էնքան իզուր հաց
ստող կա՛... Մկրտումը բերելու է, գցի մաշինի ուխը, կլպի կարտուշկու
նման, ոսկորից ձեթ հանի... Վիդալ մենդալ, ախ տի զեմլյակ... Օշերե-
ղով կանգնելու են, ըոտա ստրոյսա... Ում ժերբն ընկավ, վիզը դնելու
է տակը: Բա՛ս... Հիմա էսպես է թագա պրիկազը: Հենց գիտես տանձի
տնկելով աշխարքի թագավորն ե՛ս... Այ ըստեղ տրուբան տնկելու է,
ծուխը մինչև երկինք հանի, աստծու միրուքն էլ խանձի... Եյ բող... Հս-
տեղ մաշին պիտի գալ, դու հլա որտե՛ղ ես...

— Ադա օին բաներ մի՛ ասի: Կարմրաքարը մաշինի երեսը իրա
օրում տեսած չի... էնա ասա աղաղի զավոդ եք շինում էլի՛...— Նվ
փորած հիմքերին ուշադրությամբ նայելուց հետո ասաց.— էսքան մե՛ծ...

— Բա էստեղ ինչ պիտի շինեք,— ու ձեռքը մեկնեց ձորակում թա-
փած քարերին:— Սիմոն... Սիմոն, էլի դու մի բան գլխի գցես, էս Ար-
զումանը հո էն գլխից էր շաշ, ասենք թե թագավորին շորս տարի սալ-
գաթություն է արել...

— Շա՛շ... Հիմա եմ տեսնում, որ հալիվորել ես, Ավան ամի... Պիշի
պրապալ... էս ինչիներ Մանգասարովի զավոդն ա, իմացա՞ր... էն քա-
րերը որ տեսնում ես, ըսենց պիտի ձորի առաջը կտրե՛նք, շորս արշին
պատ քաշենք, որ ջուրը գյոլ տա...

— Այ տղա, ճամփու բերան է, հարևան բան կընկնի մեջը,— ասաց
Ավան ամին, ուշադիր նայելով ձորի քարերին և նոր առվի հետքին:

— Սիմոն, բա լսում չե՞ս... Քեզ եմ ասում... Գլխի չե՞ս...

— Եսիմ... Հրեն ասում է էլի՛... Ես ո՛վ եմ, որ նրանց խորհուրդն
իմանամ:

— էստեղ մի բան կա՛, գլխի չեմ... Իմ լսելովս աղաղի զավոդ
պետք է շինի... Համա զավոդի նման չի: Տերտերն էլ ասում էր, թե մեծ
ավազան է շինում, որ ամառը ջուրը շցամաքի բոստանների համար...

— Հա, քո ասածն է, Ավան ամի: Նրանց քունը չի տանում, գիշեր-
ցերեկ դումիտ են անում, որ Ղարիբանոցի սովածները մեծ պասին լոբով
շորվա ուտեն: Դու էդ ասա, էդ տանձիքը ո՛ւմ համար ես տանում...
Կարմրաքարի ստարշիքն էլ որ քեզ նման լինեն, ասա ժողովուրդը գնա

Մարցա ջուրն ընկնի: Տակիդ կարպետը քաշում են, հանում. որս հը
երազ էս պատմում...

— Դե որ ուսումնագետ լինենք, հալբաթ մենք էլ յարի գարմանը
կհմանայինք: Յա էս, յա էն շուրմ բառանչողը, հը, ի՞նչ կասես, Եգոր...

Եգորը հոգնել էր: Նա ուրախ էր, որ խոսակցությունով են բռնվել
ու հանգստանում են: Նստել էր քարին ու մեկ-մեկ պոկոտում էր Քար-
թանջուկի թևերը, ծամում: Սովել էր և անհամբեր սպասում էր, որ ու-
սան հացի նստի:

— Հիմա ինչ ժամանակներ են... Առաջ որ քու տանդ պատիժ էլ մի
քար դնեիր, առանց շամհարթի խոսքի իրավունք չկար: Մառն ինչ է,
էլի տնկելուց հարևանիդ խաթրը պետք է առնեիր, թե հաշտություն չի-
ներ, գյուղի իշխան մարդկանց մեջ էիր գցում, համոզն առնում... Բա
ո՞նց... Մառը շվաք կաներ բոստանի վրա: էն ժամանակն ս՛ւր... Եթե
թոփխանն են շինում, իսկի մի իրավունք, մի հարցմունք: Ամեն ինչ
իր գլխի տերը, ուտողն ուտողի: էգուց էլ շափարը կապելու է, թի իմ
հողից դուռն իր թեով պետք է շանցնի, էս իմ հայրենիքն է:

— Է՛, Ավան ամի, էջը կորցրել, շվան կհարցնես... Ասա Քառանա-
ջուրը մերը լինե՞ր... Թե չէ ձորի մեջ պատ շարելով գեղին ինչ վնաս: Քսան
տարի օրն աշխատի, օրը կերա, մի հավաքուն շքի...—ասաց ուսուսան,
ծխի քուլաները պնշերից առատորեն հանելով:

— Մալը չևտ սիրտդ ուզում է... էս սհաթիս մի տաք բորջ լինե՞ի, էլ
բող, կաշկարին էլ հետք կուտի: Տվողն ս՛վ է... Հրեն Եգորը տավարի
նման սաղ թարթանջուկը կերավ:

Եգորը կարմրատակեց:

— Խարչին խաղեսյակի է... Հրես հա՛.— և նա ոտքը մեկնեց սփա-
ռուն: Մենակ ինձ չի հերիք,—Եգորն աչքը պեղեց սփռոցին:— Հը, բե-
րանիդ ջրերը գնա՞ց... Սովամահի տղա. պինդ քաշի, փորդ էնպիս քաշի,
որ ֆելդֆեբելի մատներն արանքով շմտնեն: Ավան ամի, թագավորին
ծառայելը սրանից լավ է... էլի մի կուշտ փորով հաց ուտում էիր: էնքան
բորջ էին տալի՞ս... Չէ, միտքս ծովել է: Աշունքն ուզում եմ Բաբու
գնամ, ինչքան շինի հացափոր կաշխատե՛մ, զատոք քեփ էլ կանեմ. հը,
ի՞նչ ես ասում:

— Ի՞նչ եմ իմանում, որ ի՞նչ ասեմ... Ոչ առաջինն ես, ոչ էլ վե-
ջինը: Վակզախ ճանապարհը շաղաքի ճանապարհից էլ հեշտացել է:
Հենց ամ տեղը մի քիչ ենդանում է, հացը մեջքն է կապում, լալլա՛...
էստեղ էլ կանդ ու շախան են մնում, ինձ նման հալթց ընկածը: էնքան
գնացին, որ տակին մնացողը հերիք չի նրանց փակ դռներին մտնի
տալուս:

Թմբի գլխին ձիու ոտնաձայն լավեց ու մի վայրկյան հետո երևաց
Մկրտումը:

— Լավ ե՛ք... Ուզած վախտը ճաշթող եք արել,—ասաց նա և ցած
բռնելով, ձիու սանձը ձգեց Եգորի կողմը, քթի տակ «բարի օր» ասելով:
Նրան գուր չեկավ Ավան ամու ներկայությունը, բայց ծածկելով այդ-
դարձով նրան.

— էլի փեշակիդ ե՛ս...—ու մտրակի կոթը մեկնեց քարի մոտ դրած
սանձնու տունկերին:— Երանի՛ քեզ... Անմահական հիշատակ ես թող-
նում հուր հավիտյան... Տանձն ուտելու են, քեզ էլ օրհնանք տան: Մենք
հի՛շ, ավետարանի թևում գրված չի մեր անունը: Ի՞նչ կասես, ուստա:

— Ճշմարիտ է, արդար գործը միշտ կմնա...

— Անարդա՞րը,—կտրուկ հարցրեց Մկրտումը:

— Ի՛վ գիտե աշխարհի բանը...

Նա աչքի տակով նայեց թափած քարերին, փորած հիմքը տեսավ,
մտավ մեջը, կոացավ և աչքի շափով ստուգեց պատի ուղղությունը:

— Խեղդ ի՞նչ է կտրում,—դարձավ նա Ավան ամուն,—էլի ինչքան
լինի ինձանից փորձված ես... էս իմ պլանից ի՞նչ գուրս կա:

— Ի՞նչ ես շինում,—հարցրեց Ավան ամին դժկամությամբ:

— Ուզում եմ Կարմրաքարը լուսավորեմ,—ու ծիծաղեց,—մի թեթե
զավող ամալլու բան եմ սարքելու... Գերան կպատահի, տախտակ կբու-
շենք, ճանձի բանի համար յաշիկ կշինենք: Չի պատահի, կրահոր կշի-
նենք, ուղղին կտանք: էս ձորը լիքը կրաքար է... Ումենքս տա, անելու
շտո բան կա... Ով գիտի, բախտի բան է, մեկ էլ տեսար մի ինչիներ
կեղ, ասեց թե էս հողի տակին մադան կա:

— Դե հո սուտ չի, Հրեն ասում են Զեյթալի վերի հանդում քարի
բոժուրի մադան են գտել,—ասաց Արզումանը:

— Որ վնաս էլ անեմ, մի քանի աղբատ էլ է հաց կուտեն: էդ էլ
թող իմ վարձը լինի: Աշխարհը հո հետս գերեզման չեմ տանելու, ասենք
մարդու թամահն է շատ... էս է, Արզումանին զավեղուչի եմ գնելու:

— Եգորին էլ ստարշի մաստեր,—վրա բերեց Արզումանը ու ծիծա-
ղեց: Նրա ծիծաղը հաճելի չեղավ Մկրտումին: Փշաքաղվեց, աչքերը խորն
ընկան, ճակատի ճեղքվածքի շուրջն արյուն հավաքվեց:

— Բա ջուրը ո՞նց ես անում,—հարցրեց Ավան ամին, ծածկելու
համար Արզումանի ծիծաղի տպավորությունը:

— Զուրը ձորով էլի թող գնա... էս պատը քաշում եմ, որ ամառը
բողք քարակելուց զավողը պարապ չմնա:

— էս ջուրը զավող չի բանեցնի, Մկրտում:

— Զի բանեցնի՞ր... Վերի առուն էլ շուռ կտամ:— Վերի առուն սարից էր գալիս և անցնում Խոջա-Հիբանի մեծ արտով, իջնում գլուղի վրա:

— Վերի առուն, — ու բոլորը զարմացան: Նույնիսկ Եզորը տեղից վեր կացավ ու մոտեցավ նրանց, հետևից քաշելով ձին: Վերին առվակն անցնում էր նրանց բակով և բակի երկու պառավ տանձենիները ամառվա տապին լիուլի ջուր էին արբում:

— Ոնց կլինի է՞ր...

Սիմոնը դադարեցրել էր մուրճի զրնգոցն ու երեսը դարձրել խոսող ների կողմը:

— Բա ժողովո՞ւրդը...

— Ուրեմն կժերով պիտի ջուր բերեն, կալերը ցեխապատեն...

— Տանձիքը կշորանան...

Համարյա միաժամանակ հարցրին Ավան ամին, Արզումանն ու Եզորը: Մկրտումն ունքերն իրար տվավ ու գլուխը թեթելով Եզորի կողմը, կանչեց.

— Զին հեռու տար... Սրան տե՛ս... Կաթը պոռչին շորացել չի, խոսքի է խառնվում... Զահրումար տանձիքը: Մմակը լեքը տանձ է, էնքան կե՛ր, որ զխկրտի:

— Ո՞նց ես ուզում: Էն էլ իրենց տան փափախավորն է, ոնց թե ծմակից տանձ բեր, — ձայնը բարձրացնելով ասաց Ավան ամին: Արզումանը մի քայլ էլ մոտեցավ:

— Է՛հ, ասենք նրա խելքը էղբան չի հասնում, դու էլ նրա թայը հս չես, — դարձավ նա Ավան ամուն ժպիտն երեսին: — Ուրեմն հավատացիր էլի՞... Վաշշ, դե էնա ասի Կարմրաքարի դուշմանն է էլի: Էդ իսկի ես կանե՞մ, ուրեմն ես պետք է քոչեմ էս գեղից: Է՛հ, էդպես է՞... լավութուն էլ անես, վատն ես, վատութուն էլ անես, աչքից ընկած ես... — սրտնեղած վերջացրեց նա ու շատ խոր նայեց Ավան ամուն, ապա հանկարծ շրջվեց Արզումանի կողմը, ասես ուզում էր իր խոսքի ազդեցութունը ստուգել:

— Կարմրաքարում թե մի բարեկամ ունեմ, հրեն է, — մտրակի կոթը մեկնեց Սիմոնի կողմը, — է՛ Սիմոն...

Սիմոնը չպատասխանեց:

— Մտքումս կա, որ քաշած տախտակից ուսումնարանի համար նստաբաժնի շինեմ... Թե չէ էն ինչ է: Ոչ բարով ես էլ եմ հոգաբարձու Հերու, ամառը Բեկտարեզովն էլ տեսավ... Ասում է հայոց ուսումնարանի ֆմշտական աղբատ է, լավ կանեք միրսկի պրիզովոր տաք, թագավորա-

կան շկուլ բաց անենք: Ասի չէ, էդ լինելու բան չի, մեր երեխեքը թող մայրենի լեզվով ուսում անեն...

— Մին չի՞, — ուսերը թոթվելով ասաց Արզումանը, — դու հաց ասի... Փորին ի՞նչ լեզու...

— Խեղառ ես, ինչ է, — հարեց ուստա Նազարը, — մարդ յուր օրենք մտանա, ոսի լեզվով ուսում անե՞ն... Մեր երկիր բոլոր հայի լեզուսի:

— Հա, Մկրտում, գերանը ո՞ր ծմակից ես բերելու, — խոսակցութունը փոխելով հարցրեց Ավան ամին:

— Փողի բան չի՞... Թագավորական ծմակը շեն մնա: Փող տուր էգուց կուպչի կրեպոստը հանեմ, ինչքան քեփոդ ուզի հա կտրի...

— Հարկի փողի բան է, երեխան էլ է իմանում, որ աշխարհս փողի վրա է շուռ գալիս: Իմ ասմունքս դա չի: Օրինակ, զակոնը թույլատրելի չի, որ Քառասնաչորի ծմակը ծախվի... Շատ էլ թագավորական է: Մեր եզնիքը, մեր տավարը, կալից որ դուրս ենք հանում, ալբհալ ծմակն են մտնում: Հավերն էլ են գալիս... Աշունքը տավարի յաթաղն է էս ծմակը: Հերու էր թե մեկել տարին, մեր Օհանի հավը երկու ամիս ձու չէր ածում: Վերջը քառասուն թե հիսուն ձու ճարեցին ծմակում: Անիրավը մտել էր մոշուտի մեջ... Հա, էն եմ ասում, որ Քառասնաչորը ժողովրդի հուսատեղն է, օջախի շոփը էստեղից են հավաքում: Ուրեմն զակոնի կողմանից թույլատրելի չի...

— Ի՞նչը:

— Օրինակ, որ տուլի դնեն, Քառասնաչորը ծախեն:

— Խազնեն ինչ ուզի կանի... Մմակը թագավորական է, ում ուզի կուս... փողի բան չի՞...

— Հա է՞, թող էլի փողի լինի: Ժողովրդի մեջքն էլ հո կտարա՞ծ չի... Փարթ կանենք, կհավաքենք: Եթե տուկումը դնեն, մենք կանենք...

— Կարելի է՞...

— Դե ես էլ էդ եմ ասում է՞...

— Որ կորպուզի կամանդիրն էլ գա, մի շյուղ էլ չեմ թողնի կտրի... Սաղ ժողովրդին թոփ կանեմ, բոտա ստրոյսա... պլի, — ու լինգը մեկնեց, նշան բռնեց:

Մկրտումը բարձր ծիծաղեց.

— Ա, հերթք է... Ուրիշն էլ կլսի, կասի խառնակիչ խոսքեր են ասում տերության մասին, հանաքը կդառնա դազանակ: Քառասնաչորն ում ուզում են տան, տերության հոգան ինձ չեն տվել, հո՞, — ու ձայն տվավ Եզորին. — Ժին քաշի: Ուստա, դե մի քիչ ջահտ արա, էս շաքաթ գլուխը

ծածկի: Հայ արևդ կծեմ, գործին տաք կպի,— ասաց Եգորին, ձին նստե-
լուց,— ողորմած հոգի հերդ գործի մեջ ասլան էր: Հինգ փթանոց ջվալը
մի ձեռքով էր ուսին դնում:

Ձին փնչոցով վեր բարձրացավ, սմբակները մագիլների պես խր-
լով հողի մեջ:

— Եեքդ ի՞նչ է կտրում, Արզուման, ես էնքան էլ գլխի չեմ...—
հարցրեց Ավան ամին ու գրպանից հանեց արծաթազուխ շիբուխը:—
էնպես ափսոսնել գիտի ո՞ր, օձը ծակից կհանի: Հը՞...

— Այ, նո՛ւ եվո... Ի՞նչս է կորչում: Մի գլուխ ունեմ, կառնեմ որ:
տեղ քեփս տա, էնտեղ էլ կապրեմ: Վերջը կերածնիս մի փոք հաց լի՞...
Քանի ուժ ունենք, սոված չենք մնա... Վեր կաց, Եգոր... էն քարերն էլ
տանենք, հետո տեսնենք ուստա նազարի փորը երբ է սովածանում: Զէ՛,
էգուց ես հետս հաց եմ բերելու... Ուստան ուղտի ջինս է, մի շաբաթ
էլ չուտի, կդիմանա...

— Ես էլ գնամ,— ասաց Ավան ամին, ձեռքը մեկնելով տունկերին:

— Գնա, ծառերդ տնկի... Աշխարհի դարդը քեզ չեն տվել, աշխարհի
հերն անիծած... Մինը քոհյան ձին նստած կանաչ տախտերում ման գա,
էն մինի մեջքն էլ էնքան քար շալակի, որ փալանը հարի, ջիղավ դառ-
նա:

Սվ բարկացած իջավ ձորակը: Եգորը ոտքերը քարշ տալով հեռուեց
նրան:

Արզումանը զարմանալի փոփոխական բնավորություն ուներ: Նա
հանկարծ հուսահատվում էր, թքում ամեն ինչի վրա և կատաղած աշ-
խատում, եթե աշխատանք կար ձեռքին: Զինվորության մեջ, երբ նրա
վրա իջնում էր այդ տրամադրությունը, նույնիսկ Ֆելդֆերել Իվան Իվա-
նիչը վախենում էր նրան մոտենալու: Ծայրահեղ հուսահատությանը
հանկարծ հաջորդում էր այնպիսի ուրախություն, ասես աշխարհն իրենն
էր: Հոյթի նման թռչկոտում էր: Մերթ սուր հանաքներ էր անում և երբ
լսողները սրտանց ծիծաղում էին նրա ասածի վրա, հանկարծ զայրանում
էր և գոռում:

— Շան որդիք... Ի՞նչ է, ես ձեր մասխարան ե՞մ:

Անարդարության ինչ դեպք էլ լիներ, նա մի կերպ իր վերաբերմունքը
պիտի ցույց տար, ներսի մաղձը թափեր: Նրան գիժ էին ասում, բայց
ասողներից և ոչ մեկը չէր կարող համարձակ աչքերով նրա երեսին
նայել այն ժամանակ, երբ նա զայրացած էր: Երբ նրան զինվոր էին
տանում, տանուտերի երեսին գլուզի հրապարակում այնպիսի խոսքեր

ասաց, որ նույնիսկ ամենահամարձակ մարդիկ վախեցան և կարծիք
հայտնեցին, թե նա զինվորությունից այլևս չի վերադառնա:

Արզումանը գլուզում տուն ու տեղ ուներ, բայց այդ տանն ապրող
լորս շնչից և ոչ մեկն էլ նրան հարազատ չէր: Մոր մահից հետո հայրը
երկրորդ անգամ էր կին առել, և այդ կնոջից էլ սերել էին այն փոքրերը,
որոնք նրան եղբայր էին ասում, բայց ինքը ոչինչ ազգակցական շուներ
նրանց հանդեպ: Զինվորության առաջին տարին մահացել էր և հայրը:
Առաջ էլ նա խորթ մոր հետ չէր հաշտվում և երբ ծնվեց առաջին մա-
նուկը, խորթության վիճը դարձավ անզուսույզ, և նա մեծացավ բարեկամ-
ների տանն ու դռանը: Ու երբ լուր ստացվեց, որ Արզումանը զինվորու-
թյանից վերադառնում է, և լուրն իրար հաղորդեցին աղբյուրը գնացած
կանայք, ոմանք հառաչանքով կարծիք հայտնեցին, որ կգա, հոր ավե-
րակները կտեսնի, գլուխը կառնի ու կանհայտանա: Պառավ կանայք
ուրիշ բան էին ասում:

— Ոտը կկապի, էլ չի կարա հեռանալ...

Վերադարձի երկրորդ օրը ևե՛ք նրան խորհուրդ տվողներ եղան ամուս-
նանալու: Նա Ավան ամուս մոտ գնաց, վերջինս անողեց նորեկին, հար-
ցուփորձ արեց «Ռուսաստանու կողմերից, էժանից ու թանկից, ժողովրդի
ավճալաթից» և երբ զինվորության մեջ սովորած կիսատ-պոստ ուսնրենդ
խոսքին խառնելով Արզումանն ավարտեց իր պատմությունը, և որպես
աշխարհի հրաշալիքներից մեկը նկարագրեց «Աղես քաղաքը. թոփով
պարախոդն ու ուսաց հողի հարստությունը, որտեղ ցորենն այնքան
բարձր է բուսնում, որ ձին ձիավորով միջին կորչում է» — երբ ավարտեց
իր պատմությունը, Ավան ամին տխրությանմբ ասաց.

— Բաղդադ էլ խուրմա շատ կա, մե՛զ ինչ... Շատ էլ Ռուսերը մեծ
երկիր է, որ էլի հայրենիք չի դառնա՞: Գլուխդ կախ արա, քո ակոսդ
ձեք... Հրեդ եքա մարդ ես դառել, տնավորվի, մի կերպ կառավարվի,
հայրաթ մի լույս էլ մեզ կհասնի: Էսպես նեղում չենք մնա՞...

Արզումանը հայտնել էր իր միտքը Բաբու գնալու մասին: Ավան
ամին առարկել էր, խորհուրդ էր տվել հայրական այգին նորոգել:

— Ձեր էն բաղի կողքով որ անց եմ կենում, քիթս մխում է: Զա-
փաքը շարդած, մեջը քար... Ծառերը՝ էն ցաթի փուշը քեզ օրինակ, իրար
պիտով են դառել... Կոներումդ ուժ կա, գնա ավազ արա, էլի հուսատեղ
է նեղ օրվա համար:

— Է՛հ, բաղս որն է... Երկու լափո՛ի կա, մի տանձի: Խուրձ կրող-
ներն էլ էնքան քարով են տվել, որ կեսը չորացել է: Նու եվո, սավանձա՛:
Վեք պեքվի կորպուսը տարել էին մանեթի վարչավու կողմերը... Ա՛յ

բաղեր: Օխտն օր օխտը գիշեր ձիւղորն անցկացավ, բաղի շափարը պրծավ... Պակրայնի մերե մարդ էդպես բաղ պահի:

— Դու գիտես... Իմ խելքս էլ էդքան է կտրում: Ամենայն մի երկիր մին պլան ունի: Էս էլ մեր երկրի պլանն է...

Արզումանը հեռացել էր Ավան ամուց այն հաստատ որոշմամբ, որ գյուղում կմնա մի քանի օր էլ, կտեսնի բարեկամներին, հյուր կգնա նրանց տները, կպատմի «Ադես քաղաքի և թոփով պարախոդի մասին», մի քիչ էլ կզարմացնի իր ուսերենով, կոշտ սապոգներով և այն նշանով, որ ստացել էր լավ հրաձիգ լինելու համար ու կհեռանա գյուղից, ամեն ինչ թողնելով խորթ մորն ու նրա ժառանգներին:

Այդ քանի օրը նա ուշ էր վեր կենում, փալասի կտորով սրբում էր կոշիկները և բարձի տակից հանում զինվորական շալվարը, որ քնելուց ծալում էր խնամքով, գլխատակին դնում՝ ծալը շկտորելու համար: Փոքրիկ երկաթե սանրով մազերի փնջերը ոլորում էր թեք ու միահավասար, կարտուզը ծուռ դրած փողոց ելնում: Գյուղում լուրեր էին տարածվում, որ Արզումանը աղջիկ է շոկում: Ոմանք հավատում էին, մայրեր կային, քրոնք սրտատրոփ սպասում էին, թե ահա կանցնի նա իրենց տան առաջով, կմտնի և գուցե թե մի բան լինի:

Իսկ Արզումանն իրեն հասակակից ընկերներին պատմում էր այն մասին, թե ինչպես իրենց վաշտը մաների ժամանակ լեհական մի գյուղ տարան: Պատմում էր և աչքերը փայլատակում էին հիշողության հրճված քից:

— Ա՛յ աղջիկներ, թամամ հրեշտակ... Սավսեմ սլաբոդնի գալիս են, հետդ խոսում, ասում... թե մի քիչ արսըզ ես, կուռդ ճտովը գցի... Իսկի չի խոսում: Հորը մորը առաջ քեզ պողորուկա է անում: Սպիտակ, սպիտակ... Երեսհատին որ նայում ես, պատկերդ միջին շողշողում է: Աբմունդիրավաններն էլ թագա էինք ստացել, կոճակները պսպղում էին սակու նման... էլ ինչ կերուխում, ինչ արգան, մուզիկ, դուխավոյ արկեսոր...

Եվ պատմում էր, թե ինչպես է մի տուն ընկել, ուր երեք քույր են եղել, մի պառավ մայր:

— Կավկազի մարդի համար խելագարված են...—որպես իրական ապուցուց իր ասածների, հանում էր ծոցի գրպանից նրանցից ստացած մի նկար: Ծիշտ է, դարձյալ երեք քույրեր էին, բայց այդ նրանց լուսանկարը չէր, այլ սովորական բացիկ, որ նվիրել էին նրան երեք լեհուհիները:

Այդ օրերումն էլ պատահեց այն հանկարծակի հանդիպումը, որ և

կենց նրա գյուղում մնալու հարցը: Զաղացպանին տեսության գնաց, նա անցավ Զարիբանոցի այգիների միջով ու հանկարծ դեմ դուրս եկավ բարձրահասակ, լիքը մի աղջիկ, որ ձեռքերը վեր էր բարձրացրել ու բռնել կուժի ունկից: Աղջիկը նրան տեսավ թե չէ, կարմրեց, գլուխը խնարհեց... Արզումանը տեսավ նրա երկար արտևանունքները, լիքը կուժքը, որ ավելի էր ուռել, որովհետև աղջիկը ձեռքերը վեր էր բարձրացրել և բռնել կժից: Տեսավ ու տեղը մեխվեց: Աղջիկն անցավ. կժի մեջ շուրը խուլ արձագանք էր տալիս՝ կըլթ-կըլթ, տարուբեր լինում աղջկա ոտնափոխից: Արզումանը ետ նայեց. շորորալով գնում էր աղջիկը, կուժն ուսին ու ոտաքոբիկ: «Նա է՞ր... չէ՞, նման էր», մտածեց Արզումանն ու ետ դարձավ: Նա տեսավ, թե ինչպես աղջիկը մտավ Շալուն Սիմոնի դռնից: Նա էր՝ Սալբին:

Արզումանը գիտեր, որ Սիմոնն աղջիկ ունի: Զինվորության ժամանակ, երբ երեկոները հերթապահը փոստը բաժանում էր և հավաքվում էին նամակ ստացողների շուրջը, նամակի ընթերցումից հետո կազարմայում խոսակցություն էր բացվում կանանց մասին: Ամեն մարդ իրենց պողերիցն էր պատմում, տեսած կանանց գովքն անում: Զինվորներից մեկը աշխարհի ամենից երևելի գեղեցկուհուն համարում էր իր խորթ քրոջ և նրա մասին այնպես էր պատմում, այնպիսի շարժ ու ձևով, շրթունքները շմպացնելով, որ լսողներն իրենց կասկածն էին հայտնում, թե նրանց մեջ ինչ-որ բան է պատահել: Արզումանն էլ էր պատմում ու պատմելուց հետո, երբ քնելու փողը փշում էին, պակուում էր ու ժամերով վերհիշում գյուղը: Այդ ժամերին նա մտաբերում էր և Սալբուն, հիշում էր փոքրիկ այն աղջկան, որի հետ մի ամառ խորձ էին կրել:

Զաղաց հասնելուց հետո էլ ինքն իրեն հարց էր տալիս, թե ինչքան շատ է մեծացել: Այդ օրից նա խոր պահեց «հրեշտակների» նկարը: Ծիշտ է, նրա ուրախությունը խորացավ, նա լուսությամբ էր անցնում այն փայտերի վրայով, որ պատահել էին վարչավայի մանյովրի ժամանակ: Նրա գնալն ուշանում էր: Գյուղի կանայք ասում էին.

— Շուտ է գալի գյուղի վրա, տեսնենք որ թխսամոր ճուտը կփախչեն...

...Արզումանը քարի գլխից բարկացած իջավ ու այնպիսի մի մեծ բար գրկեց, որ Եզորը մնաց զարմացած: Վերև տանելուց գոտու կապերը կորվեցին, և գոտին ընկավ:

Քարի գլխից նա աչք էր ածել քաղհանավորներին ու տեսել էր Նույն շաբթը, մի քիչ ավելի խոր գնացած: Ոչ ոք չէր բարձրանում: Մկրտումը փու վրա նստած խոսում էր Շողերի հետ: Արզումանը երկար նայեց.

նա ուզում էր, որ Սալբին վեր բարձրանա ու մի անգամ էլ նայի ձորակի կողմը: Սպասեց... Ու հանկարծ Մկրտումը տեսավ: Արզումանը ձեռքերից, թե քար է գլորում ու զայրացած իջավ: Մեծ քարը հիմի փոսի մեջ շարտելուց հետո, թևով ձակատի քրտինքը սրբեց:

— Երիզ չունե՞ս դու... Մեռանք է՛ սովից: Եզոր, արի՛, Միմն ապե՛ր, վեր կաց... Դու էլ ուստա դատար մեր գլխին էլի՛... Պարավո՞ղ տրուբան դրել ես բերանդ, էս ձորերը մուխով լցրել, էլ հացն ինչ ես անում...:

— Կերե՛ք, բան չեմ ասի... էս քարն էլ դեմ... Ես էլ անոթեցա, ասաց ուստան ու քթի տակ շարունակեց մոմուալ մեխամաղձուտ երկ՝ ադանդանավեր ա՛յ նանա՛:

Մկրտումը դժգոհ հեռացավ: Ավան ամուն ի՞նչ, թե ինչ է մտադիր անելու: Ինչո՞ւ էր եկել... Ժպտաց: Հիշեց նրա խոսքը՝ փարթ կաննեք, Քառասնաչորը տերութունից կառնենք... Ձին խայտալով գնում էր, աչ ու ձախ դունչը մեկնում, փրցնում ծաղիկ ու խոտ: Հարկավոր չէր խիստ լինել... Կավ էր: Հիմա նա իր մտքում թող մտածի գյուղի համար: Ժամանակը կգա: Ի՞նչ պիտի անեն, ի՞նչ կարող են անել, որ ուզենան էլ Միայն արյուն են պղտորում: Ձիու ոտքը քարին դիպավ, քիչ մնաց ընկներ: Մկրտումը սանձը պինդ ձգեց և փորի տակով մտրակեց, մտրակը վզզաց գնդակի պես, ձին թռավ: Այդպես... Ու մի քիչ հանգստացավ: Ասես մտրակը ձիու տեղ այն աներևույթ թշնամին ստացավ, որ խոզ դժգոհում էր, փնթփնթում, խեթ նայում, բայց ճակատ առ ճակատ դուր չէր դալիս:

Միացող արտի տեսքը նրան հանգստացրեց: Գարունը խոստանում էր առատ բերք: Նա ձին պահեց արտի ծայրին, մասրենու ծաղկած թփի մոտ: Կոացավ զարու ցողունը պոկելու: Ձին ետ-ետ քաշվեց, ականջները խլշեց, թփի մյուս երեսին մի բան շարժվեց, ուստերն իրար դիպան և սպիտակ վարդի թերթերը օրորալով վայր ընկան: Մկրտումը ձիուց իջավ: Մյուս երեսին, թփի ստվերում, քաղհանավորներից մեկի մանուկն էր, փոքրիկ ճոճքի մեջ: Մանուկը զարթնել էր, տրորում էր աչքերը, ու ճոճքը շարժում էր, ուստերն իրար էին դիպում և թերթերը թափվում էին: Մկրտումն ու մանուկը մի վայրկյան իրար նայեցին. մանուկը ժպտաց, Մկրտումն ուզեց կոանալ ու մատը կարմրած թշին դնել, բայց մանկան դմբից ժպիտն հանկարծ անհայտացավ, երևաց վախի արտահայտություն: Փոքրիկը տեսել էր ձիու գլուխը՝ Մկրտումի թիկունքի հետև:

Ձին հետքից քաշելով Մկրտումը մոտեցավ քաղհանավորներին: Շողերը նրանցից բաժանվեց ու մի քանի քայլ արեց դեպի նա: Թելունց պառավը, որ մինչ այդ պատմում էր ընկերներին իր ամուսնական կյանքից, պատմում էր ու ծիծաղում, ու երբ ծիծաղում էին և աղջիկները, նրանց վրա բարկանում էր ու դեմքին կեղծ լրջութուն տալով սաստում, որ չսեն,—Թելունց պառավն ամենից առաջ տեսավ Մկրտումին:

— Այ դո՛ւ բարով ես եկել... էս արտը քեզ փեշքե՛շ...— ասաց նա: Մկրտումը ժպտաց: Պառավի խոսքին քաղհանավորներից ոմանք ետ նայեցին ու նրան տեսնելով, նորից գլուխները կախեցին: Մկրտումի աչքին ընկավ և Սալբին, որ արեցից ու տաքացած հողից կարմրած, զբոսնած երեսը մի վայրկյան միայն շրջեց նրա կողմն ու նորից շարունակեց աշխատանքը: Գարու կանաչ ցողունները փնջերով դուրս էին գալիս նրա դեյրայի կախ ընկած փեշի տակից, երբ նա մի քայլ առաջ էր անում ու փեշը քաշում: Կանաչ ցողունների արանքից երևում էր նրա բորբկ սոթն ու սպիտակ սրունքը:

— էն կոացածը Միմոնի աղջիկը չի՞,— հարցրեց նա կնոջը, այնպես որ Սալբին էլ լսեց:— Ինչ բո՛յ է քաշել մեռածը...

— Մկրտում, ա՛յ Մկրտո՞ւմ... էսօր էզուց մեռնելու եմ, է՛... Մի երկու արշին քլթան տուր, օմբեքս ծածկեմ: Տես հա՛, սաղ բաց է,— կանչեց Թելունց պառավը և առանց քաշվելու փեշը վեր բարձրացրեց, ցույց տվեց իր ոսկրացած ու մերկ ազդրերը: Ոմանք փոթկացին, ոմանք էլ ամոթից մինչև ականջի բլթակները կարմրեցին:

— Ի՞նչ եք հոհոհում,— դարձավ պառավը կանանց,— ես պետք է Մկրտումից ամաչե՛մ... նրա պորտը ե՛ս եմ կտրել...

— էս քանի օրս Եփրեմը ապրանքի է գնալու. որ բերի, կգաս, կտանես, նա՛նի...— պատասխանեց Մկրտումը:

Ու մտաբերեց դավթարի այն էջը, ուր դեռ անցյալ տարվանից Թելունց պառավի ազգանվան դիմաց գրել էր՝ «շաքար— 1 գրվ. և շայ կապովի— 12 մսխալ, գումարով 36 կոպեկ»:

Ձին նստեց ու մի անգամ էլ աչքով չափեց ժպացող արտը, նայեց Քառասնաչորի անտառին, որի առաջապահ ծառերը ստվեր էին գցել արտի վրա, մի թեով էլ իջել մինչև տան պարիսպը: Ձիու վրայից նա տեսավ և Արզումանին՝ քարի գլխին: Ասես մի սև ամպ երևաց նրա մտքի հորիզոնի վրա. նա ձգեց ձիու սանձը և ձին գլուխը թեքեց գյուղի կողմը:

Այդ երեկոն ավելի շուտ մթնեց: Սեւացած ամպերը ծանր վարագույրի պես ծածկեցին երկինքը, սարերը, ձորը լցվեց սև ծխով: Նախիրը կանուխ իջավ սարից, կիթը մթնով կատարեցին: Հանկարծ սպիտակ ավազնակով երկնքից, եկեղեցու խաչն ու զանգակները փայլվեցին, որոտը դրդաց այնպես, որ դարակներում դարսած պղնձե ամանները զրնգացին: Եվ սկսեց անձրևը, նախ դանգաղ, ծանր կաթիլներով, ապա որդեգր վարար հեղեղ:

Գվվում էր անտառը, ձորը: Անձրևի աղմուկի մեջ չէր լսվում Մարցա ջրի վշտոցը: Երբեմն բացվում էր մի դռնակ և ինչպես բռնկված լուցկի, խավարի մեջ տան աղոտ լույսը փայլում էր ու հանգչում: Մուկի մեջ մարդիկ նովզաններն էին ամրացնում, շրածակերը կաշնում, հավաքումի առաջն աթար դնում,—մի խոսքով կատարում կանխող այն բոլոր գործողությունները, որ տարբեր էին յուրաքանչյուր տան և բակի համար:

Տեր Նորընծան երկաղ շալն ուներին ետ ու առաջ էր քայլում նեղլիկ պատշգամբի վրա, երբեմն գլուխը վեր բարձրացնում և սեւացած երկնքի վրա փնտրում աստղեր, կամ մոտենում պատշգամբի ճաղերին, ձեռք մեկնում և տեղացող կաթիլներից որոշում անձրևի թափը:

Պատուհանի ճրագը լուսավորում էր պատշգամբը, որի սյունների երկար ստվերներն ընկել էին ծառերի սև սաղարթի վրա: Հեղեղի ընթացքում փայլատակում էր փայլակը, լսվում էր խուլ որոտ, մի վայրկյան շքանում էր խավարը և սպիտակ լույսի տակ Տեր Նորընծան տեսնում էր քամուց խշշացող ծառերը, դիմացի տան կտուրն ու երդիկին դրած կարմիր կարասը: Ապա թանձրանում էր խավարը, և ճրագը քահանայի երկար ու թրթրացող, մի քիչ այլանդակ ու սապատավոր ստվերը սյունների արանքից նետում էր մինչև այնտեղ, ուր հավելում էր ճրագի լույսը:

Ներս ու դուրս անող տղամարդ ու կին իրենց բակերից նկատում էին քահանայի վիթխարի ու սև ստվերը: Ոմանց այդ ստվերը հանգստացնում էր և մեղմում արհավիրքի սարսափը: Թելունց պառավը, որ մինչև ծնկները վեր քաշած, ծլլացող անձրևի տակ բակում դարսած աթարն էր ծածկի տակ տանում—մի պահ կանգնեց տեղում և երկյուղածությամբ նայեց պատշգամբի ստվերին, թեկուզ սառն անձրևը ծեծում էր բաց կուրծքը: Ոմանք էլ նույնիսկ դժգոհում էին, որ ծանր ծախն, երբ մեղուներն էլ էին փեթակում հանգիստ բզզում, մի մարդ ապահով անկյունում ետ ու առաջ էր քայլում և դիտում:

Նրանցից յուրաքանչյուրն իր գործն ուներ, իր ստացվածքի փրկության մասին էր մտածում: Մեկը բակում նստած կովերն էր գոմը քշում, կովերը փնշացնում էին, չէին ուզում ներս մտնել, տերը մուկի մեջ, ձեռն ընկած բահի կոթով կամ թիակով խփում էր նրանց կողերին, եղջյուրներին, ոտքերին: Տներ կային, ուր շփոթմունքից հորթերին ներս էին քշել, և քահանարամ երեխաները զարմանքով դիտում էին, թե ինչպես հորթերը ցեխոտ ոտքով կոխ էին տալիս քեշա ու կարպետ: Մի քանի մայրեր կուրծք էին ծեծում և շտապ-շտապ, մանավանդ երբ փայլատակում էր կայծակը, իրենց որդիների անունը տալիս, որոնցից մեկն այգիներումն էր մնացել, մեկելը հարևան գյուղից պիտի գար և ո՛վ գիտե, որ ծառի տակ կուշ եկած, սպասում էր, որ անձրևը դադարի:

Եզորը շեմքի առաջ կանգնած, լսում էր այն խուլ վշտոցը, որ նրանց բակում ավելի սաստիկ էր: Պառավ տանձենիները ճղերն իրար էին տալիս, քամու թափից կռանում, անձրևի կաթիլները շարտում դռնից ներս: Երբեմն նա ճրագը մոտեցնում էր, վազում և նայում գետնին թափած տերևներին ու դեռ նոր ծաղկաթափ եղած պտուղներին: Բակով անցնող սառն պղտոր էր: Փողոցով անցնող հեղեղը լափին էր տալիս պատին ու վշտոցով գլորվում դեպի ցած:

Մայրը կայծակի փայլատակման հետ դուրս էր վազում և որդու թևից բռնած տուն քաշում: Խեղճ կինը երկյուղից մի բառ էլ չէր ասում. միայն փաթաթվում էր, կուշ գալիս և այդպես ներս տանում: Երբ Եզորը շորս-հինգ տարեկան էր, այդ խարխուլ տունը տեսել էր սոսկալի պատահար. այդպիսի մի մուկ գիշեր հարևանները ներս էին բերել Եզորի հոր կայծակնահար դիակը, խանձված, կուշ եկած և այլանդակ մի կոճղ:

Եզորը շատ աղոտ էր հիշում թե հորը և թե այդ գիշերը, երբ ինքը մոր կանչից զարթնեց և տունը մարդկանցով լցված տեսավ: Նրա հիշողության մեջ պայծառ էր մնացել այն խոսքը, որ Թելունց պառավն ասաց մորը. «Երեխուն առ, գնա հացատունը...»: Հետո մի անգամ էլ պառավն եկավ ու մուկի մեջ լաց լինող մորն ասաց.

— Այսուհետև էլ նոր տուն տեղի մասին հոգս քաշելդ գուր է... Հա ջահել ես, շատ մարդ շատ խոսք կասի, բալբամ արյունդ էլ կպղտորվի... Զէ՛, քեզ հավաք արա, թխսամոր պես նստի բնիդ մեջ, թեկո՛ղ փոփ սրա վրա... Դառ մի շվաքարան էս երեխի համար...

Եզորը հիշում էր մոր փղձկալը: Նա կարծեց, թե պառավը ծանր խոսք ասեց մորը: Ի՞նչպես հասկանար շորս հինգ տարեկան տղան, որ մայրը լալիս էր աղետի համար և այն դառն վիճակի, որ իր հետ բերում էր այդ գետը: Անցած տասներկու տարվա ընթացքում և ոչ մի անգամ

մայրը որդուն չէր պատմել, թե ով էր հայրը, ինչպես մահացավ: Եզրը լսել էր սարիշներից, որ նա ուժով էր եղել, որ մի անգամ գրագ նե գալիս, եզան մեկն արձակում ու նա լծվում է մյուսի հետ և հաստ փրանը Քառասնաչրից մինչև եկեղեցու գավիթը քարը տալիս: Ետեքից էր լսել, որ նա, ջաղացպանը և Ավան ամին, անբաժան ու սրտակից ընկերներ են եղել, շատ անգամ միասին որս արել և սպանած կիստարը անտառում մաշկել, կաղնու ճյուղից կախել և միասին մի օրում կիստարի միսը խորովել ու կերել: Եվ որպես մութ պատմություն, մի անգամ նրա ակնջովն էր ընկել այն, որ իբր թե իր հայրը խոջա Հիբանի մեծ որդան, Մկրտումին կապել է ծառից, նրա աչքի առաջ շոր ցախ հավաքել, ոտների տակ դարսել, որ նրան կենդանի վառի: Ավան ամին այդ պատմությունը չէր հաստատում, նրա ասելով հայրը միայն բահի կոթով մի անգամ խփել է Մկրտումին, նրա անպատկառ ակնարկի համար, թե իբր հայրը զազախի տղա է և սերվել է մովրովի զազախներից, որոնք անցյալում հարկահավաքման ժամանակ մի քանի օրով գյուղում գիշերել են:

Ամեն անգամ, երբ կայծակի փայլատակումից վախեցած մայրը խնդրում էր նրան տուն մտնել, նա հնազանդություններ էր կատարում մոր խնդիրը, սակայն քիչ հետո նորից էր դուրս ելնում: Նրան դուր են գալիս և վարար անձրևը, և կայծակի լախտը: Հաճույքի հետ կար և ներքին ահ, երբ մտաբերում էր իր մանկության առաջին շարադեռ գիշերը:

— Հեյ, հեյ... Բանդը տրաքե՛ց, ժողովու՛րդ,— հեղեղի տարափի մեջ զրտտի նման լավեց դարբին Վանեսի ձայնը: Ու սարսափը տարածվեց, տներում մարդիկ մի վայրկյան սառած մնացին: Տեր Նորընծան տեղում մեխվեց, կտրվեց մտքի թելը: Այդ բուպեին մի անգամ էլ կայծակը փայլեց և ճեղքելով իջավ այգիների վրա... Երեցկինը ներքի տնից դուրս վազեց:

— Բահր տուր, ա՛յ կնիկ... Մեր այգեստանը... կայծակն էն կողմին ընկավ,— քահանայի ոտքերը դողացին ու նստեց ծանր թախտին:

— Տունը մի բահավո՛ր, է՛... Ձեզ շեն ասո՛ւմ... Ծուռ...— կանչում էր զգիրը, վառվող կերտնը ձեռքին պտտացնելով: Մթնում կերտնը կտորից կտոր էր ուտոտում, ասես քամու բերանն ընկած հրդեհվող թուփ էր, Տեր Նորընծայի տան առաջ երևաց մի ուրիշ ջահակիր, ձիու վրա նստած: Քահանան վերևից ձայն տվավ:

— Անտո՛ն... Օրհնյալ, էս ի՞նչ փորձանք հասավ ժողովրդի գլխին...

— Բան չկա, տերտեր... Դու ապահով կաց: Կես սհաթ չի քաշի բանդը կշինեն... էնտեղից եմ գալիս,— ասաց յափնջու մեջ կուլված

դամշնիկ Անտոնը, որ պտտվում էր գյուղի փողոցներում, օգնութան հասնողներին շտապեցնում և մտրակի կոթով փակ դարբանները ծեծում:

Եվ շտապում էին, որը բահով, որը քլանգով, լուխայի մի թևը փողոցում հագնելով, մեծ մասը ոտարթրիկ, ոմանք յափնջիներով: Դուրս եկողներից մեկը լապտեր էր առել, մյուսը՝ շտապելուց, սև նավթով լիքը թաղարը: Վազում էին ինչպես խրտնած նախիր, նույնիսկ հասակավոր մարդիկ էին ցատկում, ճղփոցով ընկնում փողոցով հոսող պղտոր ջրի մեջ, հենվում բահի կոթին: Ոչ մի ձայն, ոչ մի խոսակցություն: Զահերի լույսի տակ փայլում էին բահերն ու քլունգները: Պամշնիկ Անտոնը կանգնել էր եկեղեցու մոտ և ջահը բռնած լույս էր անում նրանց, որոնք խավարի միջից, զանազան մութ ու նեղլիկ փողոցներից, բահերը զրնգացնելով դուրս էին ելնում, մի վայրկյան երևում ջահի լույսով և ապա շտապում դեպի վեր: Կարծես կալանատնից փախչող բանտարկյալների բազմություն էր, որ գնում էր անխոս, զնգացնելով ծանր շղթաները:

Դարբնի առաջին կանչին Եզրը դեպի բահը վազեց, բայց մայրը կախ ընկավ թևից: Ու կայծակը լուսավորեց: Եզրը կայծակի լույսի տակ տեսավ մոր սպիտակ դեմքը, ձեռքը թուլացավ: Դարբասի գուռը ծեծեցին:

— Եզո՛ր,— լավեց ջաղացպանի ձայնը: Եզրը վազեց դարբասի մոտ:— Ձեր էն կոթը կարճ բահը տուր... Մերը ջաղացումն եմ թողել...— Եզրի փոխարեն մայրը մեկնեց բահը:— աչքդ մեր հայաթին էլ պահի... Կրես ետ եմ գալու, զնամ ջաղացը...

Գզիրն էլ չէր կանգնում: Կես ժամում համարյա ամբողջ գյուղն էր հավաքվել, և այդ բազմությունը մրջյունի պես աշխատում էր ծռելու հեղեղի հոսանքը բլուրի փեշերով դեպի գերեզմանատան ձորն, ուր Այրումի առուն տրաքված գնում էր, ձորը բերնեբերան լցրած պղտոր ջրով: Լեղեղը վիշապի նման կլանում էր ճուռերի այն բարակ պատերը, որ առաջին եկողները փորձում էին դարսել:

Տեսարանը վիթխարի էր: Վերի առուն փլվել էր, հունը խորացել և դարձել մի հեղեղ, որի ակունքները շատ բարձրերում էին, այնտեղ ուր ճյունի շերտերը աղի պես հալվում էին վարար անձրևի տարափից: Պղտոր ջուրը հանկարծ էր դուրս գալիս անտառից և բերանն առած շոր տերև, կոճղ ու ճյուղ, սրընթաց արշավում գյուղի վրա: Հին ամբարտակը դիմացել էր մի պահ, ապա դեմ առած կոճղերը հրել էին հողաբլուրը, ձեղքել և ջուրը մանր առվակներով թափել գյուղի վրա:

— Ծառը կտրե՛ք,— բղավեց ջաղացպանը, երբ աչքով շափեց ամբարտակի ճեղքը: Ծմբոխից տասը հոգի վազեցին դեպի անտառի եզրը:

Ճարպիկ շարժումով Արզումանը, որի սապոգները լցվել էին ջրով ու տիղմով, պարանը նետեց ցցաշոր կաղնու բնին ու ձգեց: Պարանին մտեցան և մյուսները, ետ ու ետ քաշվեցին և երբ Արզումանը «նո՛ւ» արեց, տասնյակ բազուկներ ձգեցին, ծառը ճաքեց և շառաշով վայր ընկավ: Զաղացպանի խորհուրդն օգնեց, մի քանի ծառեր էլ կտրեցին: Մտիկ տներից բերին և խոտի խորձեր, խորձերի մեջ քարեր դրին և պեցեցին ջրի մեջ: Հեղեղը վիշապի նման մուտաց, գլուխը աչ ու ձախ դարձրեց, փորձեց ճակատով հրել բարձր ամբարտակը, ուժը չհաղթեց և դժգոհությամբ գլուխը թեքեց գերեզմանատան ձորը, վայր հոսեց իր հին ճանապարհով:

Այնինչ գյուղից դեռ գալիս էին: Վերջին եկողներից մեկը պատմեց, որ Քառասնաչորից եկող առուն բոստաններին շատ է վնասել... Լավեց կանացի բարձր «վա՛յ»:

— Հը՞... Ի՞նչ էր...

— Տեսես որ լաշառն էր...

— Փորձանք պատահած չլինի՞...

Տեր Նորընծան նկատեց, որ արագ քայլերով մեկը անցավ իրենց փողոցով, լուսի տակ երևաց վազող սովերը, և մինչև ինքը կվերկենար ու ձայն կտար, սովերը կորավ մութի մեջ, լավում էր միայն ոտքի ուժեղ դոփյունը:

— Տիրուհի՛... Ղարալուն ո՞վ էր... Դու էլ տեսա՞ր:

— Էն ո՞վ կանչեց... Ձեռը ներքևից էր, — պատասխանեց կինը: Բայց հենց այդ ժամանակ Ավան ամին ձայն տվավ:

— Տերտե՛ր, քնած չե՞ս...

— Արի՛, արի՛ վերև, Հովհաննես... Էս փորձության ժամին, այ օրհնյալ, մարդ արարածը կքնի՞... — Ավան ամին վեր բարձրացավ:

— Լավ թրջվեցինք, — ասաց նա փափախը թափ տալով:

— Տիրուհի... արող բեր Հովհաննեսին...

— Տերտեր, բա մի չես նայե՞լ գրքիդ... Ի՞նչ է ասում: Հո մեր վերջն չի... Էնա մի գլուխ կազատվենք, մեր հոգին էլ կդինջանա, մեր ջանն էլ...

— Նայել եմ... Միայն թե լուսնի հաշվով չի բռնում, — ականջը քթին դնելով, վերցրեց պատուհանին դրած գիրքը, որ միակ օրինակն էր թե Կարմրաբարում և թե ձորի գյուղերում:

Մի հին ձեռագիր էր այդ, որի մի մասը կոչվում էր «Թանգարան խրատուց», մյուսը՝ «Երազագիրք»: Կային և անթիվ ամաչուններ՝ գանազան ցավերի և հիվանդությունների դեմ: Վերջապես լուսանցքներում և «հիշատակարանի» համար թողնված էջերի վրա Տեր Նորընծայի գիտո-

ղություններն էին գյուղի գլխով անցած և իր կյանքում կատարված զեպերի մասին: Արդեն խունացած էջերի վրա կարելի էր կարդալ. «1906 ամի եղավ մեծ խոտվություն և անասելի տանջումներ: Մեր քերվա Սավալանին սպանեցին անիրավությամբ յուրյանց սեփական օթախումն»... Իսկ նրանից անմիջապես հետո «Նարգիզն բուղով եկավ օգոստոսի 15-ին: Կալամուտն պակաս էր, 37 փութ խառն ցորեն, նաև գարի»: Այդ օրվա հեղին էլ էր արդեն նշանակել. «Մայիս ամսվա 3, օրն շաբաթ, լույս կիրակի, քարեկարկուտ մեծ, ազգաբնակչության անասելի վնաս: Պտուղքն վնասվեց և մասուն պակաս լինի»:

Տեր Նորընծան կարդաց գրածը:

— Հա քո ասածն է... Էնքան էլ անիրավը ծաղկել էր: Թե սալամաթ պրծնեինք, հարյուր բեռը խնձոր հավաքող կլինեիր... Դու ասա քամին չկոտրատի թագա տնկած շիվերս... — ու երկնքին նայելուց հետո ասաց — կասես պարզում է, հը՞... Զրիկի գլխին հրեն ասող է երևում:

Տեր Նորընծան ձեռքը մեկնեց տեղացող կաթիլներին:

— Բարակում է... — ասաց: Փողոցով բարձրաձայն խոսալով անցան մի քանի հոգի:

— Ունա՛ն, — կանչեց Ավան ամին, ձայնից ճանաչելով, — Ի՞նչ արիք... Գրձա՞ք...

— Աչքն էլ չհանեցի՛նք, — պատասխանեց մի երիտասարդ:

— Գրձանք, համա մերն էլ մեզ հասավ... Երկար տախտում մի երկու օրավար գարի ունեմ, հիմա սրբել է տարել, — տխուր ասաց Ունանը:

— Է՛հ, ես էլ գնամ, տերտեր...

Փողոցում երբեմն երևում էին առվի բանդից վերադարձող խմբեր: Կերոններում բոցը ծուլ էր լինում, լուսավորում թրջված ու ցեխոտված մարդկանց, բահերը փայլում էին և ապա հանգչում:

Տեր Նորընծան թիկնել էր պատշգամբի սյունին և դիտում էր գյուղի գանազան ծայրերում դողողալով շարժվող կրակները: Նա հանգստացած շունչ քաշեց. նույնիսկ ժպտաց, ինչպես կծպտար գերդաստանի պապը, հարյուրամյա ծերունին, մահից առաջ թոռների բազմությանը նայելուց:

— Ա հե՛, մեր տերը հրեն զարթուն է հլա, — լսեց մի ձայն:

— Հիմի հալտրը սրտաճաք է եղել: Վախեցել է որ... — և շարունակությունը չսովեց: Քամու հակառակ հոսանքը ետ շարտեց գյուղացու խոսքերը և քահանան չիմացավ, թե ինչ ասացին: Մի բոպե հետո մըթնում մեկը քա՛հ-քա՛հ ծիծաղեց: Տեր Նորընծան փշաքաղվեց, սեղմվեց սյունին: Այդ ծիծաղն էլ, ինչպես և այն բառերը, որ քամին հետ շարտեց, պղտորեցին նրա մտքերի խաղաղությունը և հին հարցը անբաժան սովերի պես նորից եկավ:

Երբ Տեր Նորընծան միտք էր անում գյուղի առօրյայի մասին, մտքով կտրում էր անցած ճանապարհը և տքնում իմանալու, թե ուր պիտի հասնի իր ծուխը այն ժամանակ, երբ ինքը թաղված կլինի եկեղեցու պատի տակ, սառը քրտինքը պատում էր նրան, սիրտն ասես պոկվում էր, ընկնում ու տեղը մնում էր դատարկ: Այն, որ պիտի գար, մուկն էր, սևացած երկնքի պես:

Երբ ինքը դեռ երիտասարդ էր, փողոցով անցնելը հաղթական երթի էր նման... Մարդիկ կանգնում էին, խոնարհ գլուխ տալիս, իսկ կանայք, նույնիսկ պառավ կանայք, մոտենում էին և համբուրում երիտասարդ քահանայի աչքը: Իսկ հիմա... Մարդիկ քահանայի ծիծաղում են, ո՛վ գիտե ինչեր են ասում նրա մասին: Նա մտածում էի չարյաց արմատը գտնելու և միշտ գալիս էր նույն տեղը հասնում, որոշում, որ հավատը թուլացել է, և խճճվում այն բազմաթիվ պատճառների մեջ, որ նրա համար սատանի կծիկ էին, անլուծելի հանգույց:

— Արի քնի է՛... Բա չբեկարեցի՛ր... — ձայն տվավ կինը ներսից Տեր Նորընծան զարմացած նայեց: Այո՛, կինն է, որ օրնիբուն աշխատում է, լվանում, եփում, թխում և այդքան աշխատանքի ընթացքում ժամանակ գտնում հարևանի տուն գնալու, կամ գյուղի մյուս ծայրը ծնրե՛ր կանի համար «ծնունդ գավաթ» տանելու, իմանալու հազար ու մի լուր հարյուրավոր մարդկանց մտքերին ու հույսերին տեղյակ լինելու, մեկին սովորեցնելու, թե ինչպես են «սինեմաթի» եփում, մյուսի հետ պայմանավորվելու, որ միասին գնան սարը շուշանի, երրորդի աղջկա գեղեցկությունը գովելու այն տանը, որտեղից լուրը հարևան գյուղից եկած կնոջ միջոցով պիտի գնար նրանց մոտ և, ո՛վ գիտե աշխարհի բանը, մեկ էլ տեսար, եկան և բանը գլուխ եկավ: Ահա տունը. իր տունը, որ սարքել է քանի՛ տարի... Թախտը, այն լայն թախտը, որի վրա ամառվա գիշերներին հիանալի է քնելը և լույսը շքեղացած զարթնելը, այն ժամանակ, երբ ծտերը խոսում են, իրար կանչում և պաղ օդի մեջ լսվում է ժամի գանգերի ծլինգ-ծլոնգը: Տունը, որ տարիների ընթացքում լվակ է բարիքներով: Ում պիտի մնա այդ ամենը՝ իր այգին, արքայական խնձորենին, որի մասին նա թաքուն այն կարծիքին էր, թե եղեմական խնձորենու տեսակն է իր այգում եղած «շահ-ալմասին», գոմը, մառանը:

Նա, որգին երբեք գյուղ չի գալ, Բուղդանը, երբ դեռ երիտասարդ էր, ամառները տուն էր գալիս... Բայց հենց այն ժամանակ էլ տեք հայր նկատում էր, որ քիչ էլ մնա, թե երևի ամբանան, պիտի թուշի ուրիշ աշխարհ և էլ չպիտի գա: Նկատում էր և սարսափով նայում Բուղդանի գրքերին: Մի՞թե նրանք էլ գրքեր էին... Ո՛ւր մնաց «վարք սբրոցը»...

Քե՛ս պիտի մնա տունը... Հեղնարին, իր աղջկանը, իր օրինավոր ժամակին, անդրանիկ դատերը: Եվ հայրը հիշեց իր անդամալուծ պառավ աղջկանը, ձեռքը ծուռ, ինչպես շորացած ճյուղը, թույլ աղջկանը, որ ներքի տանն էր ապրում, ցերեկը նստում էր նեղլիկ պատուհանի առաջ և երբ բազում մարդ չէր լինում, դուրս էր գալիս, փայտի վրա հենված, սոփերը քարշ տալով: Տեր Նորընծան հիշեց իր աղջկանը, որին իր մշտնուն ընդունում էր վերուստ ուղարկած պատիժ, ու դեմքը կծկվեց: Մի՞թե միայն Հեղնարը պիտի մնա...

— Էքուց էս գուլպեքը կհագնես, — սասց կինը, երբ Տեր Նորընծան մոտեցավ անկողնին: Քահանան նայեց սպիտակ բրդե գուլպաներին, որ աղավառ թևերի պես ծալած էին իրար վրա: Նայեց և նրա սրտին իլավ նույն մեղմությունը, որ ուներ առաջ, ջուրը նորից պարզվեց և հաշտ ու խաղաղ գլուխն իջեցրեց փափուկ բարձին: Նրա աչքերի առաջ իր այգու արքայական խնձորենին էր, ծաղկած, ինչպես նորահարսը:

Գիշերվա մթնում Շալուն Սիմոնի տանը տեղի էր ունենում մարդու և պղտոր հեղեղի կոխը: Ասես զայրացած, որ մարդիկ իր ընթացքը փոխել ու թեքել են գերեզմանատան ձորը, — վերի առվի վտակները գյուղի փողոցներում իրար միանալով, գրոհում էին Ղարիբանոցի կողմը, գետը թափվելու... Այիքները ծառացան, դիզվեցին իրար վրա, հրեցին և տան կուրբը շոքեց, որովհետև փվեց փողոցին նայող քարաշար պատի անկյունը: Արզումանը բանգի մոտ լսեց ծվլթոց, լսեց ու ճանաչեց Մալբու ձայնը: Նա վազեց, առանց նայելու քար ու փոսի, առանց ուշք դարձնելու գազազած շներին հաշոցին: Այգիների ճանապարհը գետի հուն էր դառել. մի վայրկյան նա կանգնեց, ասես ուզում էր որոշել, թե Մարցա ջուրն իր ընթացքը չի՞ փոխել... Այդտեղ նա մի անգամ էլ լսեց ծանոթ ձայնը... նրան թվաց, թե կանչում են գետի մեջ խեղդվողները:

Սիմոնը չրի արագ հորդանալուց հասկացել էր, որ բանդը քանդվել է: Երեխաները քնած էին: Արթուն էր կինը և աղջիկը... Գրոհն այնպես հանկարծ եղավ: Ջրի բերանն ընկած մի ծանր քար թափով խփեց պատին, այուները դողացին. ճրագը հանգավ: Եվ մուկի մեջ հեղեղի վշտոցն ավելի պարզ լավեց... Սալբին կանչեց, բոլորը վազեցին դեպի երեխաները և պատի ճեղքով ջուրը ներս վազեց:

Երբ Արզումանը մոտեցավ նրանց տանը, նա մուկի մեջ ջոկեց երկու կանանց սովերը, որոնք բարձրանում էին դեպի մարագը:

- Արզուման, — կանչեց Սիմոնը, — Արզուման... տունս քանդվեց:
- Երեխեքը...
- Տարա՛ն... Երեխոցը տարան... Տունս քանդվեց, Արզուման...

Եւ երկուսով ներս վազեցին: Պատի ճեղքվածքից շուրջ հորդ աղբյուրի նման ներս էր թափվում: Թոնիրն արդեն լցվել էր: Զրի ախր-ները կույր օձերի նման դեսուդեն էին վազում և լիզում հատակին ընկած իրերը, ասես փնտրում էին լափելու ամենից թանկագինը: Սիմոնը կռացավ գետնից վերցրեց այլուրի պարկը: Քիչ էր թացացել. այդ վայրկյանին նա հիշեց այն սալաքարը, որ շորս օր առաջ դրել էր տանը, պարկի տակ: Մեկը ներս մտավ:

— Ճրագը վառե՞ք,— կանչեց Արզումանը: Նա կռացել էր և մութի մեջ փորձում էր ճեղքի հաստոցը որոշել: Մթնում լուցկին փայլատակեց ու հանգավ:

— Նավթը թափվել է...— Սալբին էր: Արզումանը լույսի տակ տեսավ նրան:

Կարծես բոլը մինչև օձորքն էր... Երեսն այնպես լուսավոր էր Գերանների ծայրերը կռացել էին և կախվել: Մյուս պատն էլ երեքաց, կտուրը պիտի նստեր... Քամին էր, թե՛ ծանրութունից էր, գերանները ճռճոտում էին, վերից ճլուփ-ճլուփ հող էր թափվում ջրի մեջ: Սալբին հավաքում էր գետնի թափած իրերը... Ահա պղնձի մեծ գավաթը: Կույր չկա...

Արզումանը դուրս վազեց: Մութի մեջ նա դիպավ Սալբուն: Աղջիկը կռացել էր: Ու բռնեց նրան, բռնեց, որ շնչկնի ու շքի: Հետո վազեց գետնի մոտիկ մարագը... Տկուր էր Սալբին, շո՞ր չկար հագին, թե արքան թրջվել էր, որ շորը չէր շոշափվում: Խոտի երկու խուրձ թե՛ տակ նա ներս մտավ: Ու խուրձը հրեց ճեղքի մեջ: Մի հոգի ներս եկավ, հետո երկրորդը:

— Նանի, նավթ չկա՞:

— Հը... հատել է՞... էս ո՞վ է... Հը... Արզուման...— Մեկը դուրս եկավ, երևի գնաց նավթի... Կինն էլ սկսեց փնտրել ջրի երեսին լողացող իրերը... Նրա բռի մեջ լորու հատիկներ ընկան...

— Աղջի... լորու պարկը կապած չէ՞ր...

— Հրես պարկը... էս չի՞...— ասաց Սիմոնը: Կինը ծնկներին խփեց: Եվ հետո հարցրեց:

— Ձավարը, ձավարը...

— Օջախի քարին է...

— էս ինչ գուլում էր...— Ով էր ասաց, Սիմոնը, թե կինը: Մեկը խոր հառաչեց, ասես շատ ճանապարհ գնալուց բեզարել էր:

— էս եղանը դիմհար տու,— կանչեց Արզումանը: Սալբին մտածեցավ ու բռնեց եղանի կոթից: Նրա մատները դիպան Արզումանի ձեռքին:

— էսպես բռնի,— ու թևից քաշելով ձեռքը մոտեցրեց պատի մեջ խրած խուրձին... Կռացավ ու շեմքի սալաքարը պոկեց:

— Հեռու, ոտիդ կընկնի,— Սալբին զգաց, որ կարմրատակում է: Ինչ լավ էր, որ մութն էր տանը: Դող անցավ մարմնով... Երևի շատ է թրջվել... Շապիկը ծեծում է մեջքն ու կուրծքը, ծեծում է սառնությամբ, խկ ինքը տաք է, ոտքերն այրվում են:

— Ա խիզան, կաշու ձողը ձեռներդ շնչե՛ր,— հարցրեց Սիմոնը, որ ձեռն ընկածը կախում էր պատի ցցերից, տեղավորում դարակներում և շուտ-շուտ այլուրի պարկին նայում:

— Դուան վրա եմ գցել...— պատասխանեց Արզումանը:

Այս էլ դուր եկավ Սալբուն. ամոթխած մի զգացում էր այդ, մութի մեջ, երբ պատի այն կողմը թշուրում էր հեղեղը և տանը լսելի էր, թե ինչպես քարերը գոռալով իրար են զարկում... Ուրեմն Արզումանն էլ խիզան է, մեր խիզանը, մտածեց Սալբին: Ժպտաց. ի՞նչ կա որ... Կաղն արև կանի ու կշորանա ամեն ինչ... Նանու լոբիները շնն լինի: Իսկ այս մարդը, որի տաք շնչառութունն այդքան մոտ է զգում, քրտնած ու թրջված մարմնի հոտը, սապոգների հոտը... Եվ քանի գնում, ավելի շատ է գալիս: Գալիս է, հոր հետ խոսում, աչքի տակով իրեն նայում: Ահա... ծունկն է՛ նրա ծունկը:

— Ջուրը բարակում է, հա... Սիմոն ամի... բանդը պրծել են, հրեա կհանդարտի,— ասաց Արզումանը:

Ու քիպ մոտեցավ: Մի ծանր բան իջավ Սալբու ուսին. հաստ մատները սեղմեցին ուսը, թուլացավ ու ձգվեց դեպի քրտնած ու թրջված մարմինը: Ինքը մոտեցավ, թե՛ իրեն քաշեցին... Խավարն ավելի թանձրացավ. սենյակը գլխին շուռ էր գալիս, ասես հեղեղի բերանն ընկած գնում է... Տանում են: Հետո տաք շունչը կռացավ այտերի վրա. այանչին մի բառ ասաց և շրթունքները դողացին:

— Իդ ինչ էր,— ասաց մայրը:

— Ոտս սկկաց, քիչ մնաց ընկնեի...— պատասխանեց աղջիկը:

— Դե հիմա էլ փրփրա,— ասաց Արզումանը, հեռանալով պատից.— մի կաթիլ էլ չի կաթում:

Հարևանը ճրագով ներս մտավ:

* *

*

Լուսարացին գյուղն արդեն ոտքի էր: Անձրևը դադարել էր, միայն ծառերի ճյուղերից ու կտուրների գերաններից էր կաթկթում շուրջ: Փողոցներով հոսում էին բարակ, գուլալ առվակներ, որոնց հատակի

խիճերը մեկ-մեկ կարելի էր համրել: Հեղեղը վերի թաղում Շուղանց Իսոյի կալատեղն էր քանդել, քարերը գլորել մինչև եկեղեցու զապիթի պատը: Փողոցներում, մի քանի տեղ խորխորատ էր փորել: Այս ու այնտեղ կիտած էր շոր ճյուղերի ու տերևների կույտ: Թելունց պառավի երկու հավը չկար, պառավը ծնկներին հարայ տալով բոլորին հավառացնում էր, թե գողացել են, թե ինքը ոտնաձայնին վեր է կացել ու վախից դուռը բաց չի արել: Լսողները ծիծաղում էին:

— Ա՛յ պառավ... էն սև գիշերը ում դարդն էր քո լղար ճտերդ:

— Ինչ ճուտ... Մինը թխամեր էր, էն մինն էլ տարին երկու խաթուձու էր ածում,— ասում էր պառավը, և մարդիկ, որոնք հավաքվել էին կտուրների վրա, և որոնք մեծ մասը գիշերվանից դեռ ոտաբորիկ էր, փողքերը մինչև ծնկները վեր քաշած, մարդիկ ծիծաղում էին և ավելի շարացնում Թելունց պառավին, որ սպառնում էր տանուտերով, պրիստավով ու դատարանով:

Լույսը չբացված մի քանի հոգի գնացել էին իրենց արտերի ու այգիների տեսության և վերադարձել էին: Կտուրներին հավաքված մարդկանց խոսակցության նյութը այդ մասին էր: Ասում էին, որ երկար տախտակների գարիքը թագնել են, և էլ հույս չկա, թե վեր կենան, որ Սուլթանա ծովում ձվի մեծությամբ կարկուտ է եկել: մի նեղ շերտով խփել մինչև սարի սեռը, որ Եզնարածի առուն քանդվել է ու քշել Չանեն ծուռ Ունանի դորուղը, այնտեղից թափվել Ունանի խամը և փոսերը քարով լցրել: Այգիներից եկողներն էլ պատմում էին, որ շատ ծառ է ճղակտոր եղել, և իբր նուանձորում կայծակ է խփել ծառերին: Բայց ականատեսներից և ոչ մեկը կտուրի վրա չէր. նրանք պատմել էին մեկին, այդ մեկը մյուսին և ամենքն էլ հավատում էին՝ որ այդպես է, մանավանդ նրանք, որոնց արտն ու դորուղը իբրև թե ամենից շատ էին վնասվել:

— Էդ լինելու բան չի,— ասաց դարբինը,— մենք հո սխտորաշենցի չենք, որ մեր հանդը չիմանանք... Ա խալխը, իսկի կլինի, որ Եզնարածի առուն տրաքի, Չանեն ծուռ Ունանի դորուղը քանդի, էնտեղից էլ տա Ունանի խամին... Առո՛ւն ուր, դորուղն ուր...

— Է՛հ... սարսաղ սարսաղ դուրս է տալիս,— վրա պրծավ մի ալիվոր,— բա չի՛ լինի...

— Այ ալևոր, բա էդ լինելու բան է՞... Զուրը թե՛ ունի, թե երկնքի գուշ է, որ էն եքքա սարը բարձրանա:

— Բա հասնիլ չի՞... Զոռեց, կհասնի էլի... Զբին ի՞նչ կա...

— Իմ խելքն էլ չի կտրում, որ հասնի,— ասաց մի ուրիշը,— գնացող մեր Սողոմոնը չի... Մերը չմեռածի սուտը շատ է, քան զորթը...

Եվ վեճը շարունակվում էր... Նոր լուրեր էին բերում, որ Նուանձորում կայծակ չի խփել: Ոմանք նույնիսկ ասում էին, որ այնտեղ անձրև էլ չի եկել: Հեղեղի վնասներն ավելի ճիշտ ու մանրամասն էր պարզում յուրաքանչյուրն իրեն տան, բակի, այգու և բոստանի համար, երբևէն հեռաքերովելով հարևանի վնասով: Կային, որ շար նախանձով էին նայում կողքի արտին, որ պատահմամբ ավելի քիչ էր վնասվել: Սակայն եթե քիչ էին նրանք, որոնք շար նախանձով էին նայում հարևանի պակաս վնասին և կամ ընդհակառակը ներքուստ հրճվում, երբ տեսնում էին, որ հեղեղն իր արտի կողքով անցել է և հարևանի արտը թաղել ավազի ու տիղմի հաստ շերտի տակ,—եթե քիչ էին այդպիսիները,—մեծամասնությունը, ավելի ճիշտ բոլորը, իրենց վնասի մասին պատմելուց ավելացնում էին, մեկը տասը շինում և հայտնում, որ գյուղում նրա շափ ոչ որ չի տուժել:

Ավան ամին այգիներում էր: Շաղաթաթախ, տրիխներն ու գուլպաները թրջված, շուխայի ծայրերը գոտկում խրած, այդ մարդը այգիների ծանոթ կածաններով գնում էր, վեր նայում՝ ծաղիկների փնջերին ու կենտոսի կանաչ գնդիկներին, գետնին նայում, որ տեղ-տեղ ծածկված էր կանաչ տերևներով, ձեռքով տնտղում, շտկում նոր ընկած շիվը, ստուգում՝ չի՞ շարդվել պատվաստը: Կարմրաքարում միայն նա ճիշտ հաշիվ կարող էր տալ, թե ինչքան են վնասվել գյուղի այգիները: Եվ քանի հեռանում էր, այնքան վնասվածն ավելի քիչ էր. կարծես հեղեղը թափվել էր միայն գյուղի գլխին:

Լուսաբացին Քառասնաչորի ուղղությամբ գնացողները շրամբարտակի մոտ տեսան Մկրտումին. կանգնել էր քարի գլխին ծխավոր յափնջու մեջ կառված և ինչպես ցինն է նայում վերից վար ու հետևում որսին, այնպես էլ Նա նայում էր Քառասնաչորի պղտոր ալիքներին, որ թոփով գալիս էին, ամբարտակին չհասած հանդարտվում, լճանում և ապա դեղնավուն փոփոքով թափվում ցած: Գիշերով մի քանի անգամ էր եկել: Մի անգամ անձրևի վարար ժամանակ նա Գողուն իջեցրել էր ներքև՝ ստուգելու հո չի՞ քանդվել ամբարտակը: Ամեն անգամ վերադարձել էր ուրախ, սակայն հենց սանդուղքի գլխին մի կասկած փշի պես ծակել էր միտքը. չի՞նի՞ մի բան պատահի, հազար շառ ու դուշման, գան... Հը՞... Եվ նորից էր վերադարձել:

Մկրտումը քարի գլխից նայում էր ցած և անհամբեր սպասում, թե երբ պիտի երևա ամբարտակի պատը... Զուրը ամբարտակի մեջտեղից,

շուղի համար թողած բացվածքով ահռելի շառաչով ցած էր թափվում: Զուրն այնքան շատ էր, որ այդ բացվածքը հերիք չէր անում ու թափվում էր պատերի վրայով: Մկրտումը նայում էր համառ ու շեշտակի, նայում էր ջրի ընթացքին, ասես ուզում էր հանդարտոր նրա թափը: Եվ ինչքան բարակում էր, ջրի տակից դուրս էին ցցվում ամբարտակի սպիտակ քարերը, այնքան էլ նրա դեմքի լարվածությունը մեղմանում էր, մկանները թուլանում էին: Դիմացի քարափի կրաքարը ապակու պես շողշողաց... նրա փայլն ընկավ ջրի մեջ, պղտոր ջրի մթությունը կորավ, ջուրը դարձավ դեղին: Մկրտումը ժպտաց: Մանր վտակները շքացան և ջուրը խոնարհ գառան պես ընկավ շուղի բացվածքը:

Ամբարտակը դիմացել էր. այդ էր ասում նրա հաստ և բառեր պատր, ոտ բազկի պես այս ափից մյուսն էր մեկնված: Զրի տակից դուրս եկած քարերն ու կրածեփ պատերը պսպղում էին ճարպոտ փայլով: Մկրտումը վայր իջավ, կանգնեց պատի գլխին ու նայեց ջրվեժի ցնցուղներին: Ու նոր միայն զգաց, որ արևի սպիտակ սկավառակը արդեն բարձրացել է: Գոլորշի էր ելնում յափնջուց... Մկրտումը նայեց ջրին, մեկ էլ վեր բարձրացավ... Ներքևում գյուղն էր: Գոլորշին խառնվել էր կապույտ ծիծ հետ: Եվ այդ քողի հետևից երևում էին կանայք, որոնք արևի տակ փռում էին կարպետ ու վերմակ, երեխաները կտուրների վրա վազվզում էին... Տղամարդիկ չէին երևում: Մի կին վազում էր պռլը ցցած ու կետ անող հորթի հետևից:

Մկրտումի նինջն եկավ... Հոգնել էր: Ու թիկնեց քարին, յափնջու մեջ կոլովվելով: Ինչ լավ է՝ աշխարհը... Կարմրաքարը: Եվ ինչքան բան կա դեռ անելու այնտեղ... Մկրտումը հիշեց այն, որ գյուղում իրեն ու իրենց տունը չեն սիրում, թեկուզ երեսին չեն ասում... Վախում են, հը՞, — մտածեց նա ու ձեռքը յափնջու տակից հանեց... Արևի շողերը խաղացին նրա կարծ ու մազոտ մատներին հետ: — Փողը, հը՞, — հարցրեց ու բուռը սեղմեց, ասես արևի շողերը ոսկի էին թափել բուռն մեջ:

— Անհասկ մարդիկ... Ես ձեզ ի՞նչ եմ արել... Սպասեք մի քիչ էլ... կտեսնեք, թե ես ինչ կանեմ, ես Մկրտում եմ խոշա-Հիրանի տղան... Ինչ կանեմ...

Թեկուզ հեղեղը վնասել էր գյուղին և մարդիկ դառնացած էին այդ առավոտ, — բայց և այնպես արևի ելքը, նրա առատ ջերմությունն ու փայլը մոռացնել տվավ գիշերվա սարսափը: Փայլում էր ամեն ինչ. եկեղեցու պղնձյա խաչին նայել չի լինում և երբ սարյակները թռչում էին, որ նստեն նրա թևերին, թվում էր, թե ընկնում էին կրակի մեջ:

Տեր նորընծան սովորականից կանուխ էր զարթնել: Բաց արել եր-

գահանը և կարդացել. «Երազն շար է և օրն կատարի»... Դողացող ձեռքներով շալն ուսն էր գցել և նուանձորի ճանապարհը բռնել: Վա՛տ, շատ վատ երազ էր տեսել... Իբր թե պատարագի ծանր ժամին, սկիհը ձեռին, շրջվում է, որ խաչակնքի բազմությանը, տեսնում է, որ բազմություն չկա, մարդ չկա եկեղեցում ու միայն իր աղջիկը՝ Հեղնարը, փայտին հենած, ոտները քարշ տալով մոտենում է հաղորդություն անելու... Եվ իբրև թե դրսում աղմուկ է, ներս են վազում մարդիկ: Խոշա-Հիրանի տղան պար է գալիս ու կանչում՝ որ կայծակը վառել է նրա խնձորենին, նուանձորի արքայական խնձորենին: Մինչև այստեղ սրտի դողով կարողանում էր հիշել Տեր նորընծան: Բայց շարունակությունը մտաբերելիս քիչ էր մնում դատողությունը խանգարվի... Իբրև թե սկիհից կաթ-կաթ, արյուն էր թափվում ոսկենկար և ասեղնագործ շուրջառի փեշերին:

Այգիների ճանապարհով անցնելիս նա տեսավ ջաղացպանին... Ուստա նազազն էր, կանայք, որոնք նրան տեսնելուց գլխաշորով երեսի մի մասը ծածկեցին. ջաղացպանը տեղից վեր կացավ, «օրհնյա ի տեր» ասաց, բայց Տեր նորընծան չլսեց:

— Տեր հայրը հիվանդի պես էր, — ասաց ուստա նազազը ջաղացպանին: Նա չլսեց: Արզումանը պատասխանեց.

— Բաղի դարդն ընկել ա ջանը, ուստա... Դու մեր դարդը քաշի... Եվ մոտեցավ քարերին: Ուստան գոգնոցը կապեց, մալան առավ:

— Ուստա մի պատ կշարես, որ Պորտ-Արտուրի կրեպոստիցն էլ պինդ լինի... Դե, երգդ ասի...

Տան առաջ Միմոնի կինը և Սալբին արևի տակ փռում էին թաց ձավարը, շորաթանը և բարակ միթեկները:

...Կեսօրի մոտ գյուղում իրարանցում ընկավ: Լուրը կայծակի արագ գությամբ կտրից կտուր թռավ, հասավ մինչև այգիները: Ավան ամին մեղրաճանձի քթոցներ էր տեղափոխում, երբ Բարիկոյին տեսավ այգիների ճանապարհով վազելիս...

— Բարիկո, ախի, էդ ու՞ր...

— Զաղացը... Ավան ամի, դազախները գալիս են...

— Ի՞նչ դազախ... Կաց տեսնեմ, — սակայն Բարիկոն արդեն կամրջի գլխին էր: Ավան ամին գոտու տակ խրած արխալուղի փեշերն արձակելով, ճանապարհ ընկավ, շուխայի մի թևը կախ:

— Արզումա՛ն...

— Հե՛յ...

— Տերության մարդ է գալիս:

— Հե՛... Գալիս եմ հրե՛...

Տներից, բակերից դուրս էին գալիս տղամարդիկ, կանայք: Երեխաները նրանցից առաջ էին վազում: Գլուղը մրջնոցի նման իրար էր խառնել, բոլորը շտապում էին դեպի փողոցը, ոմանք բարձրանում էին կտուրը և ձեռքները ճակատին դրած նայում հեռուն, ուր մի բան սեփն էր տալիս: Երևում էին երկու ձիավոր, ոտնցից մեկը առաջ էր ընկնում, երբեմն էլ ձիու գլուխը ետ դարձնում... Մեկն ասում էր, թե վերի գլուխ համար են գալիս, մյուսը՝ թե երևի ձիավոր զորքը պիտի սարը բարձրանա, որովհետև նրա լսածով քաղաքում խոտ չի ճարվում: Արզումանը խոր նայելուց հետո, բարձր ծիծաղեց...

— Այ խամ հեյվան... էն հո մեր խազեյինանց ստրումենտն են բերում... Պիլնու համար...

— Ա հե՛... սրա ասածը կլի հե՛,— ասաց մեկը:

— Ղազախն էստեղ ինչու՞ պիտի՛, ի՞նչ բան ունի...

— Կարելի է՞... Սպասի տեսնենք... Հրեն գլուխը հասավ կուս ետ շերին...

— էն առաջինն էլ Եփրեմն է... Ես ձի քշելուցն եմ իմանում,— ասաց Արզումանը... Ու մյուսն ավելացրեց.— հրեն հա՛, կարծիր մադյանն է էլի... Ես չեմ ճանաչում նրանց մադյանը...

Եվ սկսեցին ծիծաղել ղազախների գալու լուրը տարածողների վրա:

— Ա դե եսիմ է՞... Բոնցս հոտ չեմ արել, որ իմանամ... Ինձ էլ Մուքիլի տղան ասաց...

— Ես էլ կտրանը կանգնած էի, ականջովս ընկավ...

— Առաջինը թելունց պառավն ասեց...

— էնենց է ասել, որ հավերը ճարի...

Ու ծիծաղն ավելի թնդաց: Թեկուզ արդեն համոզվում էին, որ եկողները կողակներ չեն, դարձյալ չէին ուզում ցրվել: Հավաքվել էին խումբ-խումբ, տղամարդիկ ջոկ, կին ու աղջիկ՝ ջոկ: Շատերը գրկել էին մանուկներին: Ու միայն երեխաներն էին, որ այս խմբից այն խումբն էին անցնում, վազում շարքերի արանքով:

— Ա թույլ, դե դադար կաց է՛,— ասաց մի ալևոր, որին մի երեխա հրեց ու ձեռքի թուփունից մի քիչ թափեց: Երեխան վազեց ու բազմության մեջ գտավ մորը:

— Ինչ խաչը ջուրը գցելու ժողովուրդ կա,— ասաց մեկը:

— Հավատաս, որ ջրօրհնեքին էլ էսքան մարդ չի հավաքվի... Հրեն հա՛... Քաշալ Սային էլ է եկել...

Քաշալ Սային մի կույր ծերունի էր, որ կամ իր բոստանի շվաքում

էր պառկում, կամ տանը՝ քուրսու տակ: Ոչ գյուղամեջ էր դուրս գալիս և ոչ էլ երևում էր գյուղական տոներին: Կողքի գյուղերն էլ էին նրան ճանաչում, մի կարմրաքարցու հանդիպելիս, եթե հարցնեին գյուղի անցուդարձից, կարմրաքարցին ծիծաղելով պատասխանում էր, թե «Քաշալ Սային հլա բոստանումն է», այսինքն գյուղում նորություն չկա...

— Տեր նորընծան չկա՞...

— Գնացել է ստրումենտ սարքի, որ գա ժողովրդին օրհնի...

— Տնաշեն, խաչը ջուրը գցելիս օրհնում է... Բա մենք սաղ գեղով էս գիշեր ջրի մեջ ընկանք, ուրեմն շօ՞րհնի,— ասաց Արզումանը:

Այդ խոսքի վրա փողոցի ծայրում երևաց Եփրեմը: Նա ձիու գլուխը ձգեց, ձին հետևի ոտների վրա բարձրացավ ու պտույտ արեց:

— Շան որդու փորսին տես...

— Մարդ է գարմացնում, կակ բուզտո ձի չենք նստել,— ասաց Արզումանը:

— էն մադյանը որ քու տակին լիներ, հավատա ուրախությունից երկինք կթռչեր...

— Իմ տակին մի սրբակ կար, որ քեզ պոչից կապած կտանեի Սուտիկ պապիդ մոտ,— պատասխանեց Արզումանը և խեթ նայեց Սուտիկ Ոսկանի թոռ Գրդլ-Պուղուն, կարճիկ ու հաստ մի երիտասարդի, որին գյուղում չէին սիրում: Նրան անվանում էին «պրիստավի թագի»: Երկուսն էլ իրար աչքով չափեցին. այդ բուպին մեկը կանչեց.

— Տուրզունները...— և Եփրեմը ձին արագ քշելով անցավ փողոցով, ցեխի շիթեր շարտելով այս ու այն կողմ:

— Ձիդ թրքեց... խազեին,— բազմության միջից կանչեց մեկը. ոմանք ծիծաղեցին: Եփրեմը ետ նայեց ու գոռաց պատեղի տակ շար ընկած երեխաների վրա.

— Դենը փախեք, շան լակոտներ... Ընկնելու եք տակը, սատկեք... Եփրեմի բարկությունը մեղմելու նպատակով, թե բազմության մեջ աչքի ընկնելու համար Գրդլ-Պուղին հարցրեց.

— Եփրեմ, վերի կապովն եկա՞ք, թե ներքի ճամփով...

— Վերի կապն էլ քանդվի, ներքինն էլ... Սա երկիր է՞... Շան օր քաշեցինք...— և ձին քշեց:

— Պո-պոպո... էս ինչ քոսակ է՞...

— Կրիբալդի՛... Կրիբալդի...

Փողոցի ծայրին երևաց մի ձիավոր, երկար պաշար հագին: Գլխին դրել էր գլուղի համար արտասովոր գլխարկ, որի ծայրերը երկու կողմերից լուրջ ականջների նման կախվել էին: Մարդն անբեղ, անմորուս էր:

Նա նստել էր ձիուն այնպես, ասես պարաններով կապկպած էր: Գլուխը մազաշափ անգամ աչ ու ձախ չէր դարձնում: Կարծես գլուխը փողոցը նույն ճանձրալի ճանապարհի շարունակությունն էր, որով եկել էր նա մի օր շարունակ: Այդ ձիավորը գերմանացի էր, ներկայացուցիչն այն ֆիրմայի, որ փայտամշակման գործիքներ ու ստանդկներ էր մատակարարում ռուսական առևտրական տներին ու ստանդկների հետ միասին էլ առևտրական տների տրամադրություն տակ ուղարկում իր վարպետներին, որոնք պիտի սարքեին սղոցարանները և սարքած հանձնեին տերերին: Իր կյանքում նա շատ տեղեր էր ման եկել և ամեն տեղ էլ տեսել նույն հետամնաց ու կիսավայրենի վիճակով մարդիկ և եկել այն համոզման, որ աշխարհի աչքը՝ իր հայրենիքն է, որ մյուս երկրներին մատակարարում է բազմաթիվ մեքենաներ և իրեն նման մարդիկ, որոնք մեքենայի մի մասն էին: Նա գլուխը շփեքեց նայելու ոչ Կարմրաքարի եկեղեցուն, ոչ այն քարաշեն տներին, որ խմբված էին հին եկեղեցու շուրջը: Նա տեսել էր այդ մի անգամ և համոզվել, որ ինչքան էլ գնար այդ երկրում, պիտի տեսնի նույնը՝ սարեր, ձոր ու անտառ, ջրեր, — որոնց ուժով քանի՜ սղոցարան կբանեին, և մարդկանց՝ խեղճ, ռամիկ, մի քիչ էլ խորամանկ մարդկանց:

Աչ ու ձախ կանգնած ամբողջ զանազան նկատողություններ էր անում «Կրիբալդու» մասին, բայց հենց նա մոտենում էր թե չէ, խոսողները լուռ էին և պլշած աչքերով նայում տարօրինակ կոշիկներին, գլխարկին և կաշվե պայուսակին, որ մեջքին էր կապել և ոչ թե ձիու թամբին: Այս էլ սրախոսության նյութ դարձավ կտուրի վրա կանգնած տղամարդկանց համար: Բայց հենց այն ժամանակ, երբ մեկն ականարկ էր անում Խոջանսարեղինի և էջի փալանի պատմությանը, «Կրիբալդին» հանկարծ ձիու գլուխը բռնեց և վեռ հանեց իր գլխարկը, ճոճելով Արզումանի կողմը:

Կտուրի վրայից Արզումանը նրան ասել էր «գուտտեն մորգն»... Գերմանացին անշափ ուրախությունից գլխարկը հանել էր:

Նա գերմաներեն մի քանի խոսք ասաց, սակայն համոզվելով, որ կտուրի վրայի մարդն ավելին չգիտե, գլխարկը նորից հագավ ու սանձը բաց թողեց: Բայց և այնպես այդ խոսքն էլ նրան դուր եկավ:

— Մալադեց, Արզուման...

— Արզումանը լեմսի լեզու է խոսում...

Եվ շշուկը տարածվեց, հասավ մինչև կանանց բազմությունը ու գունավոր շորերի, թաշկինակների ծովի մեջ մի դեմք վարդագույն դարձավ, գլուխը խոնարհեց: Քանի՜ անգամ նրա անունը տվին ու մատով ցույց

տվին կտուրը, որի ծայրին նա կանգնած էր, զինվորական բաճկոնն ուսին: Սարին հիշեց գիշերվա հեղեղը...

Իրար հետևից երևացին ֆուրգոնները: Հոգնած ձիերը կապույտ փրփուրի մեջ վերջին ճիգերն էին անում ծանր բեռը քաշելու: Գուրբշի էր բարձրանում նրանց քրտնած մարմիններից: Ֆուրգոնի անիվները, ճաղերը, ձիերի ոտները, նույնիսկ կուրծքը, ցեխոտ էին, ասես ճղփալով անցել էին ցեխի հեղեղի միջով: Առաջին ֆուրգոնի մեջ մի հսկա արկղ էր, երկաթե ձողով կապկպած: Երկրորդ ֆուրգոնի հատակին ընկած էին երկաթե երկար ու զանազան հաստության ձողեր, որոնց ծայրերը ցեխի մեջ քարշ էին գալիս, ակոսներ քաշում: Երրորդ ֆուրգոնը երկրորդից բավական հեռավորության վրա էր: Չուզուհի պտուտակներ էին, տարբեր մեծությամբ, կտրատված երկաթներ, փոկերի ծալ-ծալ կապեր, փայտի արկղեր և ուրիշ մանրուք: Վերջին ֆուրգոնը բերնեբերան լցված էր թիֆղներով և դրա համար էլ ամենից շատ նա էր աղմկում, զրնգացնում:

Կարմրաքարն առաջին անգամ էր տեսնում այդքան ֆուրգոն և այդպիսի ապրանք: Ճիշտ է մի քանի անգամ Խոջա-Հիբանի որդիների խանութի ապրանքը դարձյալ ֆուրգոնով էին բերել, բայց նրանք երկձի էին, սովորական սայլից մի քիչ մեծ: Մի անգամ էլ պրիստավ Բեկտարեգովն էր եկել այնպիսի փոքրիկ կառքով, որին գլուղում անվանել էին ծախ բույն: Բայց այս անգամ շորս ֆուրգոն, շորսն էլ քառաձի և ի՛նչ ձիեր, ի՛նչ սարք ու կարգ: Կային այնպիսիները, մանավանդ կանանց մեջ, որոնք չէին տեսել նույնիսկ այն երկձի ֆուրգոնը, որ խանութի համար ապրանք էր բերում: Եվ զարմանքով, զմայլանքով էին նայում ֆուրգոնի ներկած ճաղերին, որ վրանի նման օրորվում էր:

— Այ ինչ ուխտ կգնամ դրանով... Մեջը քնի, ոչ արևն այրի, ոչ կարկուտը տա...

— Լավ ազալուխ կլինի դրա գլուխը...

«Աշխարհ տեսած» կանայք ծիծաղում էին նրանց վրա: Տեր նորընծայի կինը մի անգամ որդուն ուղեկցել էր քաղաք և տեսել կառքը:

— Անտերը դուշի նման է գնում... Անսա՛ս, անսաու՛ր... էնքան էլ կակուղ...

— Բա որ Բաքվա վագոնը տեսնես, — վրա բերեց մի ուրիշը, — ոտդ տափից կտրում ես թե չէ, պոկ է գալիս... Մին Գյանջա ես տեսնում, աչք խփում ես թե ննջաս, ըհը Բաքուն...

Իսկ նրանք, որոնք ոչ կառքն էին տեսել, ոչ էլ Բաքվա վագոնը, ուշադրությամբ լսում էին թե՛ նրանց պատմածը և թե՛ աչք չէին հեռացնում օրորվող ֆուրգոններից:

— Զէ՛... Կարմրաքարն էլ լուսավորվեց... Զավոդ բերին Հիրանի տղերքը...

— Բալագ մեռնի, փո՛ղ... Տես ինչը որտեղ դուրս բերեց... Զորս ձիանի փրզոնը Կարմրաքար հասնի՛... Որ աչքովս էլ տեսնայի, էլի կասեի սա մեր գեղը շի,— վրա բերեց Ունանը, որ ցաքանը ձեռին այգուց եկել էր մի կապ ցախ թևի տակ:

— Հմի կհավատա՞ս:

— Էլ չեմ հավատում...— տխուր ասաց Ունանը: Ասաց և հառաչեց, կարծես խոստովանեց մի դառն ճշմարտություն, որ ակնհայտ էր գարնան արևի նման, որի շողերն անտարբեր խաղում էին և պղնձե խաչի և փայլուն թիթեղների հետ:

Հաղթական երթի նման էր ֆուրգոնների անցնելը: Գեր ձիերը, նրանց նոր սարքը, արծաթ կոճակները, որ շարված էին սարքի կաշիների վրա, ձիերի վզից կախած գունավոր փնջերն ու զանգուլակները, որ ավելի դորեղ էին հնչում, երբ ձիերը ուժ էին անում ֆուրգոնը քաշելու, վերջապես ֆուրգոնների տեսքը, նրանց վրա դարսած իրերը, որոնք ֆուրգոնի նման նոր էին, առաջից գնացող ձիավորները,— այս ամենը մայիսյան արևի տակ փայլում էին, շլացնում և հաղթական երթի նմանություն տալիս: Արզումանը նայում էր ֆուրգոնների շարքին. նա մտքում ասաց. «Հիրանի տղորց արզը»: Մանյովրի ժամանակ այդպես էին նրանք մտնում անձանոթ ավաններն ու քաղաքները: Եվ ժողովուրդը շարք կազմած թամաշա էր անում: Իսկ ղինավորները, մանավանդ ձիավորներն ավելի վաղ էին երգում գլուղը մտնելիս: Ինչ «հրեշտակներ» կային...

— Օհո՛... Խրվեց... Նու՛...— լավեց մի խուլ աղաղակ: Ունանք կտուրներից թռան և առաջ վազեցին: Առաջին ֆուրգոնի շուրջը խմբվել էր բազմություն: Խանութից քիչ ներքև, ճանապարհի այն տեղը, ուր տարին բոլոր ցեխը չէր շորանում, որովհետև գետինը շուր էր դուրս գցում, ինչպես հիվանդ ու միշտ ճպոտտ աչքը,— ֆուրգոնի առաջին անիվը մինչև սունակը խրվել էր:

— Նու՛... Ծ՛...— կանչում էր ֆուրգոնչին, մտրակն օձի նման պտտացնում և շրափ իջեցնում միջի ձիերի գավակին: Ձիերն ուժ էին տալիս այնքան, որ պոստրոմկաների հետ միասին ասես իրենց ջերը պիտի կտրատեին, ուժ էին անում, դեսուղեն ծուլում և չէին կարողանում մի քիչ էլ առաջ անել:

— Սրան փոսի ցեխ կասեն է՛... Շատ նու մի անի... Ձիերը մեղ են,— ասաց մեկը:

— Սիմո՛ն, Արտե՛մ... Մոտեցե՞ք է՛...— կանչեց Ունանը,— բա է՞ս քորի մարդիկն ի՞նչ կասեն: Արզուման, առաջ ընկի...

Երիտասարդները կարծես այդ խոսքին էին սպասում: Մինչ այդ նրանք վարանած կանգնել էին ու շփտեին մոտենա՞լ թե ոչ: Արզումանն առաջ քաշեց:

— Ձիերի գլուխը պահի,— ասաց նա ֆուրգոնչուն և ուսը գեմ տվեց:

— Հը՛...— և բազմաթիվ ձեռքեր հրեցին ֆուրգոնն ու անիվները: Կաս-կարմիր էին կտրել նրանց դեմքերը: Սալբին գաղտագողի դիտում էր: Նրա սիրտը թրթռում էր: Հանկարծ ֆուրգոնը շարժվի՛, հետի անիվը վրան պարվի... — Շուտ շա՛,— ասաց մի կին: Աղջկա սիրտը ավելի արագ բաբախեց: Այդ բուպեին երիտասարդների խմբի մեջ նա տեսնում էր միայն Արզումանին, նրա թիկունքը և աղեղի պես ձգված ոտքը:

— Նու՛,— և ձիերը դուրս քաշեցին ֆուրգոնը: Օգնողները ետ փախան: Միայն մեկի գլխարկն ընկավ անիվի տակ ու խոր թաղվեց ցեխի մեջ:

Ֆուրգոններն անցան:



Խանութի դիմաց, փոքրիկ հրապարակում շարժվելու տեղ շկաբու Շարեար կապած ձիերը փոնչացնելով ուտում էին հարդախառն գարին, երբեմն էլ մոռութով փորփրում լայն տոպրակները և հարող թափում ստների տակ: Ֆուրգոնների վրա մուշտակների վրա կոլուլված պառկել էին հոգնած տերերը, որոնցից մեկը երբեմն գլուխը վեր էր հանում «նու՛» ասում ուտելիս իրար հետ կովոզ ձիերին և նորից գլուխը դնում հարդի տոպրակին:

Ֆուրգոններից քիչ հեռու դարսված էր ապրանքը: Ինչեր շկա՛ր... Արկղներ, երկաթալարի կապեր, հաստ մեխերի կիտուկներ, թիթեղ, բարակ ուլսեր, վագոնետների երկաթե մասեր: Մեծ ստանկը հինգ-վեց մարդու օգնությամբ իջեցրել էին և դրել խանութի դռանը: Չողերը հեռել էին խանութի պատին:

Տղամարդկանց մի բազմություն նայում էր յուրաքանչյուր իրը: Կեղևկանում, թե ինչու համար է, ինչ գործ պիտի անի: Եվ հակասական բաներ էին ասում: Ունանց ասելով վագոնետները պիտի փայտը սղոցեն, երկաթ ձողերը կամուրջի համար են, որի վրայով գերանները պիտի քարշ տան: Իսկ երեխաների խումբը չէր հեռանում վագոնետների մոտից:

«Ի՞նչ կզորվի գերեզմանատան բլուրից...», «Իշու արարա է», ասում էին նրանք: Կանայք հեռվից էին նայում կամ փողոցով անցկենալիս քայլերը դանդաղեցնում, որ մի քիչ ավելին տեսնեն: Հարս ու աղջիկ իրենց տների առաջ փոքրիկ խմբերով կանգնած սպասում էին, որ երեսաներից մեկն ու մեկը գա և նրանից տեղեկանան, թե ինչ «մաշիններ» կան արկղների մեջ, ճի՞շտ է՝ որ երկար ձողերով հոր են քանդելու, ինչպես ասում էր Շուղանց հարսը: Եվ երեսաներն ինչպիսի՜ առասպելներ էին պատմում...

Քոռան ուսից բռնած, մահակը գետնին տափտափելով երեկոյան դեմ եկավ և կույր Սային: Ոմանք ծիծաղեցին նրա վրա, ինչ պիտի տեսնենա. մյուսները սաստեցին ծիծաղողներին և ետ-ետ քաշվելով ճանապարհ բաց արին: Կույրը մոտեցավ, փայտն առջևն օրորելով, դիպավ ծանր պտուտակներին, կոացավ, սկսեց շոշափել: Ապա մոտեցավ վագոններին:

— Սայի դայի... Մեծ մաշինը հրեն դուքանի առաջը... — ասաց մեկը: Մերունին ու թոռը շրջվեցին այն կողմը: Ստանոկն արդեն բաց էին արել: Արևամուտի լույսի տակ պողպատի գորշ փայլով շողշողում էին նրա ողորկ լանջն ու ծանր ոտքերը: Մերունին գրկեց, ականջը կախեց, ասես լսում էր, և բոլոր մասերը շոշափելուց հետո, տեղում ձգվեց:

— Մկրտում... —

— Ի՞նչ է, Սայի ամի, — պատասխանեց Մկրտումը խանութից:

— Էլ հունար ունե՞ս, թե էս է... Բե՛ր էն էլ տեսնեմ: Հոգի ունեմ տալու: Գնալու եմ: Հիբանը հարցմունք է անելու, թե ի՞նչ տեսար ինձանից հետո: — Ու քիչ անց հարցրեց. — սաս շունի՞ սրան...

— Ունի, Սայի ամի, որ սարքենք, կլսես...

— Էդ էլ լսե՞մ... — ու դարձավ թոռանը. — Գնանք, բալաս... Տավարի գալու վախտն է:

Եվ փայտը գետնին խփելով ծերունին հեռացավ: Կանգնածները լուռ նայեցին նրա հետևից:

Մինչև մութն ընկնելը մարդիկ չէին հեռանում խանութի մոտից: Երեսաները, անսալով ծնողների կանչին, ֆուրգոնի ձիերի սանձից բռնած ութ-տասը հոգով, ձիերը տանում էին ջրելու: Ինչ հպարտությամբ էր քայլում սանձ բռնողը, իսկ մյուսները ետ ու առաջ էին վազում, զմայլանքով ձիերի փնջերն ու զանգուլակները նայում: Նրանք երբեք այդպիսի գեղեցիկ ձիեր չէին տեսել:

Գիշերով նրանց տանը հավաքվել էին տասը-տասնհինգ հոգի: Ֆուրգոններն էին, գերմանացիներ, պամոնջիկ Անտոնը, ուստան, Գրդե-Պո-

դին, Շալուն Սիմոնը և մի քանի մոտ ազգական ու բարեկամ: Երկու անգամ մարդ էին ուղարկել քահանայի հետևից:

Բակում, խարույկի առաջ մի մարդ կտրատում էր սյունից կախած ոլխարը: Սիմոնի կինը մեծ շերեփով խառնում էր կաթսան, շուտ-շուտ ածխակոթերը կաթսայի տակ հրում: Շողերը, Եփրեմի կինը, նրա մայրը ածխակոթի սանդուղքով վեր ու վար էին անում, տանում հաց, գինի, միս, պանիր, կանաչեղեն... Ընթրիքը գնալով թեժանում էր: Լայն պտուտակների վրա դարսած խաշլամանն ու խորովածն իրար հետևից էին տանում: Եփրեմը գինու մի փոքրիկ կարաս էլ էր բաց արել: Ֆուրգոնները ձիու նման էին խմում քաղցր գինին և ճաքճաք մատներով, կեղտոտ եղունգներով բռնում մսի մեծ կտորները: Նրանց ձեռքերից ձիու քրտինքի և կաշվի հոտ էր գալիս, սակայն նրանք այդ չէին գզում: Գերմանացին էլ էր տաքացել: Նա դեն էր գցել պլաշն ու պայուսակը և ագահությամբ կատարկում էր գինու գավաթները, ուշադրություն չդարձնելով այն կենացներին, որ ասվում էին, և ոչ էլ խմելու կարգին: Ուստա Նազարը փորձեց երգ ասել, բայց ֆուրգոններից մեկը քթի տակ ծիծաղեց: Սիմոնը գլուխը կախ ուտում էր, ինչպես կուտի առատ սեղանի մոտ նըստած աղքատը: Եփրեմը բացվել էր. շատ հազվագյուտ էր լինում նրանց տանը այդպիսի ճոխ ընթրիք: Եվ խմում էր առանց քաշվելու եղբորից, խմում էր ու պարապ գավաթը գլխիվայր շրջում: Իսկ գերմանացին հրոհրոհում էր...

— Ես տեսնում եմ, որ հայերը գործունյա մարդիկ են, — ասաց նա:

— Ասա՛ հայի մեռել գետնի տակ էլ կբանի, — վրա բերեց ուստա Նազարը: Սակայն նրա ասածը Եփրեմը չթարգմանեց:

— Հենրիխ ջան, — ասաց Եփրեմը, — խմի, գործի ժամանակ էլ բրտնի... Խարաշո, եյ բող:

— Ես մի այդպիսի սղոցարան էլ սարքել եմ կոռի... Ըմ... էլի հայ էր, հարուստ հայ... Թիֆլիս էլ տներ ունի...

— Եփրեմ, մի հարցրու տես նրանց մաշինն ինչ թավուր էր, — ասաց Մկրտումը:

— Սաղ մի ֆիրմայի է, բրատ ջան, արխեին կաց, — ասաց Եփրեմը գլուխն օրորելով:

Քեֆի տաք ժամանակ Մկրտումը վեր կացավ և աննկատելի դուրս եկավ:

— Էն տղայի համար մի քիչ հաց-մաց շինի, — ասաց նա կնոջը: «Էն տղան» Գոգին էր, որ այդ գիշեր պահակ էր մնացել ֆուրգոնների և խանութի առաջ շարած ապրանքի մոտ:

Գողին յոթ-ութ տարի էր, որ նրանց տան մշտական ծառան էր: Նրա շեշտ անմազ երեսին նայողը դժվար կորոշեր տարիքը: Վանող մի արտահայտություն կար նրա աչքերում: «Լորդուն ինչքան էլ վնասատու չի, բայց էլի կերպարանքն օձի է», ասել էր նրա մասին Ավան ամին: Եթե գյուղում մեկի շունը օր ցերեկով գետնին զարկեր իրեն, գետինը շանգռեր, փսխեր և շնչահեղձ լիներ, պիտի ասեին, որ Գողին է ասեղ տվել: Բայց մի քանիսն էլ ուրիշ կարծիքի էին՝ որ նա խեղճ է, վախկոտ, «աստու թակածը»: Համենայն դեպս նա Կարմրաքարի առեղծվածներից մինն էր: Եվ ինչեր չէին ասում... Իբր թե, ինչպես ասում էին պառավներից մի քանիսը, Գողու աչքերը հետևն էլ են տեսնում և դրա համար էլ վախենում էին ամառը կարող էր նրա հետևից շանչ անել: Նա կարմրաքարիցի չէր և այդ շրջանիցն էլ չէր: Տեր Նորընծան հաստատում էր, որ նրա «գրոց անունը» Գեղեոն է: Մի քանի անգամ հարցրել էին նրան այդ մասին, Գողին ուտերը թոթվել էր և ծիծաղել սառն ու շար ծիծաղով: Նրա մասին հաստատը հետևյալն էր՝ նա օձ էր որսում, կարողանում էր առանց վախի ձեռք տալ նույնիսկ թունավոր օձին և ապա՝ սուլում էր այնքան հիանալի, որ ոչ մի հովիվ սրնգով նրան չէր հասնի: Եվ երբ գիշերները նրա սուլոցն էին լսում՝ խեղճ, սիրտ կտրտող երգը, ասում էին, որ Գողին «աստու թակածն է»:

Գյուղը քնել էր ու միայն Հիբանի տանն էր ազմուկ, ձափ, հոհոց: Խանութի մոտ, կրակի առաջ Գողին նստել էր ու ննջում էր: Մկրտումի ոտնաձայնից վեր թռավ:

- Հը՞... հո սովել չես,— ասաց Մկրտումը,— առ:
- Մարդ-մուրդ հո չի՞ երևացել,— հարցրեց:
- Չէ... Համա խոսում էին Բոլոր-քարի մաս,— ասաց Գողին:
- Ո՞վ էր...
- Ավան ամին էր, Չետանց Ունանը, Արզումանը...
- Հը՞:
- Ավան ամին ասում էր, թե սրա վերջը լավ չի լինելու: Ժողովրդական հողում բերես զավոզ սարքես, առանցի մի թուլատուրության, մի թղթի— չի կարելի... Ասում է շամահաթի որոշը պիտի լինի, թե չէ գուցե ինն անուն— դանակ է...
- Հետո՞...— անհամբեր հարցրեց Մկրտումը:
- Ասում է ժողովուրդով պետք է միրսկի տանք, թող Քառասնադարը խազնեն մեզ ծախի...
- Մկրտումը քահ-քահ ծիծաղեց. գարու տոպրակի վրա կուցած ձիերը ականջները խլիչեցին և մի պահ չժամեցին:

— Քառասնադարը...— Ու կամաց հարցրեց.— հո քեզ շտեպան...

- Չէ...
- Լավ: Դե մղայիթ կաց: Տուրգոնչիները մի քիչ քեֆով են: Ուշքդ կրող պահի, քնով շանցնես,— ասաց Մկրտումը և շրջվեց տան կողմը: Նա մի քանի քայլ էր արել, երբ Գողին հետևից կամացուկ ասաց:
- Մկրտում ափի...— Մկրտումը ետ նայեց:— Բա մեր բանը Ե՞րբ դեռի գլուխ բերես, Ախր վախտ է անց կենում... վախենում եմ, որ...
- Ինչը՞:
- Էն էլի, որ քեզ գոմումն ասի...
- Մկրտումը ծիծաղեց:
- Չես դիմանում հը՞... Լավ, իրիկունս անպատճառ կասեմ: Միմոնին է, մորն էլ: Իմ հոգուս պարտքը: Էս անտերը մի խոտ գցենք: Հարսանիքդ արահալը գլուխ բերեմ: Մի հարսանիք անեմ որ...
- Եվ զնաց: Գողին ժպտեց երեսին դեռ երկար ժամանակ նայում էր մաթին և լսում հետզհետե հանգչող ոտնաձայնը:

5

Փռշին հասա շերտով նստել էր ճանապարհի եզրին բուսած արևա-ծաղկի թերթերի ու կարտոֆիլի թփերի վրա, առուն բարակել էր և օձանան պտույտներով բակերն էր մտնում, շտապ կտրում փողոցի լայնքը և արևի տապից փախչելով, իջնում բանջարանոցները, ուր արևածաղիկն ու եգիպտացորենը բարդիների պես սովեր էին գցում արվակի վրա:

Գյուղի փողոցներում անց ու դարձը դադարել էր, բակերում մարդ չէր երևում: Միայն Բոլոր-քարի մոտ աշխատանքի անընդունակ երկու ծերունի, որպես լուծից բեզարած եզներ, նստել էին, ջրակալած աչքերը հառել արվակին: Ով գիտե ինչ էին մտաբերում ծերերը վազող շրին նախիս: Երիտասարդ օրերի կարոտն էին քաշում, երբ ամառվա տապին հանգից տուն չէին գալիս և քնում էին թարմ խոտի վրա՝ երեսն աստղակա երկնքին, թե՞ հաշտ էին և դատապարտվածի նման սպասում էին անողորմի, որ պիտի գար և ուշանում էր: Գուցե և ոչ մի միտք պտույտ չէր անում նրանց ուղեղում, ինչպես կամքը կալում և հենց այնպես նստել էին՝ քարացած, իբրև արձան, իբրև Բոլոր-քարի մի մասը:

Նրանց դիմաց, կիսաքանդ մարագի սովերում, երկու հորթ ականջներն էին շարժում և որսում: Եկեղեցու գավթում հոտից ետ մնացած ուշաբուր, որի դմակը փաթաթված էր թաղիքի մեջ, պոկոտում էր պատերի տակ բուսած շոք խոտը: Գայլը ցրիվ էր տվել դմակը, տերը փաթաթել

էր վերջը, որ շոգից ու կեղտից որդնտակ էր: Քաղցած ոչխարը և պոկուտում էր խոտը, և ցավից դմակը պատեցին ու քարերին քսում: Գաժի ստվերում, փալանը փորի տակ կախ, շշմած կանգնել էր մի էշ և նայում էր ոչխարի շարժումներին: Արթուն և առույգ էին միայն աքլորները, որ քրքրում էին փողոցի աղբն ու արուի հպարտութեամբ կանչում հավերին:

Մառի տեքն էլ չէր դողում: Եվ տոթին, երբ մեղուններն էլ էին խմբերով իջնում առվակի խոնավ ափերին,— Բոլոր-քարի մոտ նստած երկու ծերունին լսում էին Քառասնաչորում թափվող ջրի ձայնը և բարակ զրնգոցը: Նրանց համար նորութուն էր այդ կարծես երկաթյա թևերով մի թռչուն իջել էր ձորը և նվում էր՝ թևն արնոտ բուր նման:

— Էլ էն Քառասնաչորը չի հե՛յ... — ասաց ծերունիներից մեկը ննջացող ընկերոջը:

— Ասում է ձորի մասրիքը շորացել են,— պատասխանեց նա և աչքերը՝ շոգից, հոգնածութունից, ծերութունից փակվեցին:

Ծերունին ճիշտ էր ասում: Քառասնաչորն էլ առաջվա փոքրիկ ձորակը չէր, ուր այնքան առատ էր լինում մասուրը, իսկ քարերի արանքում՝ մանուշակի ու մորենու թփեր: Թիթեղյա ծածկոցը թուխպի պես թևերը փռել էր, հենվել սյունների վրա, որոնց արանքում վագոնները բարակ ուլտերի վրա ետ ու առաջ էին գլորվում: Ծիշտ մեջտեղը, գերանների վրա ամրացված էր ստանոկը:

Պողպատյա սղոցը պտտվում էր, գերանը դժկամությամբ էր իր սպիտակ բունը մոտեցնում, սակայն վագոնները գլորվում էր և սղոցի սրածայր ատամները քրքրում էին փափուկ միջուկը, ավագի նման շարտում: Սղոցը գիլ էր զրնգում, երբ դեմ էր առնում կարծր կոշտի, ավելի արագ էր պտտվում, տաքանում և կոշտը ճեղքում: Գերանը երկու կտոր անելուց սղոցն ավելի հանդարտ էր զրնգում, նեղ ձորից դուրս եկող գետակի պես և սպասում, որ մի այլ գերան, սպանդանոց քվող եզան նման, վիզը մեկնի սուր դանակի տակ:

Ամբարտակից ջուրը բաց խողովակով թափվում էր հսկա անիվի վրա, որ հագցված էր երկաթյա երկար ձողին: Քառասնաչորի երկու ափին գտնվող փայտի սյուներն իրենց վրա էին կրում ոչ միայն գլխավոր անիվի և ձողի ծանրութունը, այլև նույն ձողին հագցրած փայտյա մի ուրիշ անիվի, որի բոխի փայտից շինած ատամները խրվում էին շուգունե պտուտակի ատամների մեջ: Տասը փութ ծանրութուն ունեցող այդ պտուտակը, որ ավելի կարճ ձողի էր հագցրած և հենվում էր ցածր սյուների վրա,— իր հերթին դարձնում էր մի այլ պտուտակ, որի ձողին ամրացրած երկաթյա անիվը հաստ փոկերով միացված էր ստանոկին: Այդ ամենը

չործվում էր, վզում, զրնգում այն ջրով, որ ամբարտակի բարձրութունից թափվում էր մեծ անիվի վրա: Ինչքան մոտենում էին ստանոկին, այնքան պտուտակներն ավելի արագ էին գտնում և մեծ անիվի ծանր պտուտը և փոկերը հարյուրապատիկ արագ թափ էին հաղորդում վիզին պտուտակին: Հերիք էր շլյուզի փականն իջեցնել, որ նույն վայրկյանում գաղար առնեին փոկերը, պտուտակներն ու անիվները և սղոցները մնային գերանի մեջ խրված, ինչպես թափով նետած սկավառակ:

Գերմանացին գնացել էր, պատմութունների և հիշողութունների մի շարան թողնելով գյուղում: Նրա մասին պատմելուց և՛ ծիծաղում էին, և՛ զարմանք արտահայտում: Եթե սղոցները շարնային, գուցե կասկածող լինեք, որ նա ամենևին Կարմրաքար չի եկել: Եվ այն ինչ ասում էին, թե թուփում էր ծամում, շարանալուց թքոտում, ոտը գետնովը տալիս, թե նա մշակների ներկայությամբ նույնիսկ Մկրտումի վրա էր շարացել, «տուռակ» անվանել, որովհետև քանդել էր տվել ստանոկը, մաս-մաս Քառասնաչոր տեղափոխելու համար: Ըմբովի Թյունու բեղը կտրելու պահանջը,— ահա այսպիսի պատմութունները հավատարի էին դառնում, երբ մարդիկ տեսնում էին նրա «ձեռացագործը», ինչպես ասում էր Տեր Նորնձան:

Բայց ինչ կարծիք էլ հայտնեին, ինչքան էլ զարմանային նրա հնարագիտության վրա, այնուամենայնիվ «Լեմսը» պարզամիտ և համարձակ մարդու համբավ էր թողել: «Զհինով մարդ էր, համա հալալ կաթնակեր էր»,— այս էր գյուղի ընդհանուր կարծիքը: Ամենից շատ պատմում էին Մկրտումի վրա շարանալու մասին, պատմում էին թուքը կուտալով, և քահ-քահ ծիծաղում, երբ պատմողը կրկնում էր Մկրտումի պատասխանը. «Շաշի մինն է, կտա կկոտրատի...»:

Սղոցարանը նա սարքել էր քառասուն օրում: Այս էլ զարմանք էր պատճառում, ողովհետև գալու երրորդ օրն իսկ նա այդպիսի ժամկետ էր սահմանել, որ կասկածի տակ էին առել գյուղացիք: «Քառասուն օրում թե նա գլուխ բերե՛ց, ըհը, ես բեղս կկտրեմ»,— ասել էր Ըմբովի Թյունին, որի ավել անունը «Թարսի ձի» էր, միշտ հակառակ և շատախոս լինելու համար: Այս մարդուն էր պահանջել գերմանացին, երբ ճիշտ ժամանակին առաջին գերանը սղոցել էր՝ Արզումանի և Գրդլ-Պուղու հետ:

Գյուղում եղած ժամանակ նա մտերմացել էր միայն Արզումանի հետ: Բացի քահանայից, որին տեսնելուց գերմանացին պատկառանքով էր բարձրացնում լայնեզր գլխարկը, բերանից ծխամորճը հանում,— մնացած մի հավասարի մարդիկ էին նրա աչքին, գորշ պատ, որի աղյուսներն իրարից ոչնչով չեն տարբերվում:

Նրա շինած «զավոդը» խոսակցության նյութ էր ոչ միայն Կարմրաբարում, այլև սարերի վրա, ուր վրանների տակ Սալյանից, Մուզանից և Արաքսի տափարակներից հազարավոր մարդիկ էին ապրում: Ոմանք հատկապես, ոմանք էլ ճանապարհով անցնելիս, հետաքրքրությունից դրդված ձիու գլուխը դարձնում էին Քառասնաչուր, տեսնելու Մկրտում քերվալի հարստության աղբյուրներից մեկը: Եվ նրանց աչքում Մկրտումը դառնում էր խանի չափ զորություն ունեցող մարդ. «շատ առաջ կգնա էն հայր», — ասում էին նրա մասին:

Բայց մարդիկ կային, որոնք ոչ միայն ոտ չէին դրել Քառասնաչուր, այլև սղոցարանի մասին խոսք բացվելուց իրենց դժգոհությունն էին հայտնում: Ունանը հաժատացնում էր, որ «զավոդի» պատճառով ձորի ջուրը համն ու գույնը փոխել է: Նրա ասելով բոստաններում լոբու դեղնելը ջրի «նադինը լինելուցն» էր, ջուրը «հարաքաթ» շունք, որովհետև ամբողջ ուժն անիվի վրան էր թափում:

Ավան ամին, երբ լսում էր կտրած ծառերի մասին, չէր կարողանում գայրույթը զսպել: Ավելի հաճախ նա Քառասնաչորի անտառի մասին էր խոսում և կարծիք հայտնում, որ սղոցարանի պատճառով մոտակա անտառը սիտի ոչնչանա, հողերը պիտի ընկնեն Հիբանի տղաների ձեռքը:

— Է՛հ, Ավան ամի, դու էլ դաղած կաշի ունես նրանց հետ, հա՛ բշտում ես, — ասում էր մեկը:

— Չես թողալու քյասիբը հաց ուտի... Զավոդը որ չբաներ, Շալոն Սիմոնը Կաղնուտի ձորը կգնար, — վրա էր բերում մյուսը:

— Թե Քառասնաչուրն իրենցն է, գերանն ինչի՞ են Կաղնուտից բերում:

— Էն եղոտ պատառ է. որ կերան, հետո էլ Քառասնաչորի ջանին են ընկնելու, — պատասխանում էր մեկը, որի սրտում Ավան ամու ասածը կասկած էր հարուցում:

— Չորս օր է բոստանս ջրի համար բառաշում է: Որ մթնում է, ջում էլ ցամաքում է:

— Այ բո բոստանը... Կատուն միջին թավալ չի տա:

— Նրանց ինչ կա՞... Օրենքից են վախենա՞մ, թե Կարմրաքարի աղվարներից: Միտդ չի՞ Եփրեմը Բեկտաբեգովի հետ, Հիբանի մեծ արտի տակին, ոնց էին խտիտ-խտիտի արջապար տալի՞...

Խոսքը անցյալ տարվա կերուխումի մասին էին, որ սարքել էին Հիբանի որդիները պրիստավ Բեկտաբեգովի Կարմրաքար գալու առթիվ: Արտի ծայրին մնում էր այն կաղնին, որին հարբած պրիստավը թրով

զարկել էր: Հաստ շրթունքի նման հարվածի տեղում կեղևը սպի էր կապել:

Տարօրինակ էր ջաղացպանի վերաբերմունքը: Ով էլ ջաղաց գար, նա հարցնում էր.

— Հիբանի փարբիկը ծուխ շունի, հը՞, այ կարմրաքարցի: Ձեր գյուղումն էլ ինչ մասխարություն կա... — հարցնում էր և ծիծաղում՝ սուր, սարկաստիկ ծիծաղով, կարծես ներսում մաղձը կաթ-կաթ թափվում էր, ինչպես դառն դեղ: Նրա վերաբերմունքի մեջ տարօրինակն այն էր, որ նա սղոցարանը հիմնելուց հետո Կարմրաքարը համարում էր ուրիշ գյուղ, այդ հակադրում էր մի այլ Կարմրաքարի, որի բնակիչներից միայն ինքն էր մնացել:

Տեր Նորընձան խուսափում էր իր կարծիքը հայտնելուց: Սղոցարանը նրա համար ոչ միայն անհասկանալի «երևույթ» էր, ինչպես երկնքից ընկած մետեորը, այլև կապված էր հեղեղի գիշերվա, իր ծանր մտքերի, արքայական խնձորենու կայծակահարման և իր սարսափելի երազի հետ: Երբ խոսք էր բացվում Քառասնաչորի շուրջը, մի ծանր նախապաշարում ծխի նման բարձրանում էր նրա ուղեղում: Եվ նա սպասում էր փորձանքի, դաժան բոթի, որ կայծակահար պիտի աներ իրեն ցցաշոր կաղնու նման:

Իսկ սղոցները գրնգում էին, միանգամայն անտարբեր, թե Կարմրաքարում ով ինչ է ասում: Գիշերը շլուզը փակում էին: Քառասնաչուրը մեռնում էր՝ ոչ ձայն, ոչ ծպտուն: Չուրը մոռալով հավաքվում էր, բարձրանում և ապակյա հալոցքի նման ամբարտակից թափվում: Չորի բարակ քամին թաց տախտակների բույրը տանում էր հետու, մինչև լեռան լանջը, ուր խուլ խշշում էին ծեր կաղնիները...

...Արևը թեժացրել էր թիթեղյա կտուրը՝ ինչպես թոնրի պատ: Արզումանը շապկանց ու ոտաբորիկ հրում էր վագոնետը: Եզորը սեպերը գեթանի բացվածքի մեջ էր խրում և մուրճով խփում: Մյուս սղոցի մոտ Պուղին և զրիկեցի մի երիտասարդ նույն աշխատանքն էին կատարում: Միայն երբ հարկավոր էր գերանը վագոնետի վրա դնելու՝ շորսն էլ միասին էին բարձրացնում:

Ձրիկեցին առաջին օրվանից զգացել էր այն խուլ հակամարտությունը, որ կար Պուղու և Արզումանի միջև: Նա տեսել էր և այն, որ սղոցարան գալուց Մկրտումը Պուղուց է հարցնում տախտակների հաշիվը, գերանների շորն ու թացը: Իսկ Արզումանն առիթ չէր փախցնում խոցելու նրան: Նրանց միջև տեղի ունեցած սուր խոսակցությունը երբեմն պատճառ էր դառնում, որ իրարից խոռով մնան: Բայց նույնիսկ այդպիսի օրե-

րին Արզումանը հանաք անելուց չէր դադարում: Լավ տախտակին «մատուշկա» էր ասում, վատին՝ «ղարաչի», ծոված և ճաքճքած տախտակին՝ «Քեյունց պառավ»:

— Եզոր ջան, էս երկու վերջոկանոցն էլ Սայի դայու համար բռնե՛ք: Քող երկար լինի, որ հալիվորի ոտները սլաբոննի մեկնի... Էնքան քոռ-քոռ քարերին է տվե՛լ...

Հանաք անելուց զրիկեցին չէր կարողանում փոթկոցը պահելու Իսկ Պուլին գայրանում էր, աչքով սաստում: Արզումանը շարունակում էր.

— Ի՛նչ ես ծիծաղում, ա՛յ զրիկա զկեռ... Ձեր գյուղացի էն մի նրստելում ութ լավաշ ուտողի համար դարաչուց մին դութի շինեմ, որ կողքաճաղերը կոտրատի: Քե չէ Զրիկը կերել է, նա մարսել...

Սղոցարանի մասին նա էլ իր կարծիքն ուներ:

— Պիլին գրողնի պունկտ է... Գյուղացու տղորց նման գերանները տաշում ենք, կլպում, փեշատը դնում: Դե ջոկի թե որ ծառիցն էր...

Կացինը գոտու արանքը խրած մի մարդ ներս մտավ:

— Բո՛... Շինական, ա՛յ դու բարով... Մենակ դու չէիր եկել էս թաղա ուխտատեղը: Հը՞, Ի՛նչ կա...

Շինականը մոտեցավ ստանոկին: Մի պահ զարմացած նայեց ու մոռացավ այն, ինչի մասին մտածելով գալիս էր:

— Հերսոտ ես երևում,— հարցրեց Արզումանը:

— Բա ոնց չ՛հերսոտեմ... Վեց ամիս է ինձ անկրակ խորովում է...

— Ո՞վ:

— Հիբանի տղան, ո՞վ: Հերու դուքանից ոչ բարով տասը մանեթի կտոր առա տան տկլորության մասին... Քո ազիզ արևը, մի տարի է, շաբաթն երկու անգամ իմ էշով փետ եմ բերել, դռանը կիտել: Որ տեսնես, կասես քսան արարա չի կրի: Հիմի ուրանում է, ասում է փետի փողն էն գլխիցն եմ տվել, դու իմ փողը բեր, թե չէ տունդ գրել կտամ: Ոտներն ընկա, աղաչեցի, ասի բանի ժամանակ է, մի քիչ խոտ ունեմ, խանձվում է, վերև աստված ներքև դու, ինձ ազատի: Ու՛մ ես ասում, լսողն ո՞վ է: Վերջը թե կացինն առ գնա Կաղնուտի ձորը:

— Պամոշնիկին գանգատ ես արե՛լ,— հարցրեց Արզումանը:

— Է՛հ,— և Շինականը հուսահատությամբ ձեռքն օդում ճոճեց:

— Փետն ուրիշին ծախի,— ասաց Եզորը:

— Ա՛յ որդի, որ անփող էլ տաս, ով սիրտ կանի նրա դռնից փետ տանի:

— Մարդ գցի մեջտեղ, թող մի բան պակասեցնի,— առաջարկեց Պուլին:

— Ինչ ասեմ է՛... իմ հաշվով հիսուն մանեթի փետ եմ բերել, բա զոր կորչե՛ր...

— Ոչ էն ես անում, ոչ էս: Դե գնա Կաղնուտը,— բարկացած ասաց Պուլին և մոտեցավ վագոնին:

— Լա՛վ ես ասում,— ու մի քիչ մնալուց հետո դանդաղ քայլերով նանապարճ ընկավ:

Եզորի մտքերը խոնավ էին: Ե՛վ նեղսրտում էր, որ չօգնեց Շինականին, և՛ շարանում ինքն իր վրա, թե ինչու շասեց մտքինը: Հիշեց Բագրատին՝ Շինականի որդուն, որ «աղբերացու էր»: Նրան ճանապարհ էցեց մինչև Լուս խաչերը... Բաժանվելուց ասաց. «Հորս վիզը ծուռ չթողաս»... Կացե հայրը հենց իրենից էր եկել օգնություն խնդրելու: Իսկ ինքը չհասկացավ: Ինչ կասի, երբ Բագրատն իմանա... Ո՞վ գիտե ինչ նեղումն է: Եզորը ետ նայեց. կածանով Շինականը բարձրանում էր: Եվ հանկարծ կանչեց.

— Ամի հե՛յ,— կանչեց ու վազեց: Արզումանը ձայն տվավ, սակայն նա չսեց:

— Տես, ինչ կատաղած լակոտ է՛...— ասաց Պուլին, երբ լուսթյուն տիրեց.— փորը մի քիչ տաքացել է:

— Դու էստեղ ստարշի՛ ես: Քո փորն ինչո՞ւ է ծակում,— գուռաց Արզումանը, մի քայլ անելով նրա կողմը:

— Բա դու Ի՛նչ ես...

— Ես քեզ նմանի ազրայելն եմ. շպիո՛ն:

— Բերանդ հավաք պահի՛:

— Դե սու՛ս, թե չէ սեպը բողազդ կկոխեմ:

— Ու՛մ:— Եվ երկու ախոյանները մոտեցան իրար: Զրիկեցին զլուրը կորցրել էր:

— Քո,— և ծանր ապտակը լախտի նման տրաքեց Պուլու երեսին, աչքերի առաջ մթնեց, օրորվելով ընկավ գետնի վրա:

Արզումանը կանգնել էր, հեացող կործքը դուրս ցցած: Ձեռքի թափց տծում էր: Զրիկեցին վազեց Պուլուն բարձրացնելու, բայց նա ճարպիկ ուսուցումով թռավ և ամբողջ թափով հրեց Արզումանին: Իրար բռնեցին՝ պինդ, ինչքան ուժ ունեին հաղթ բազուկներում: Ու մեկ էլ Պուլու թթից արյունը շատրվանի պես դուրս պոռթկաց: Նա ձգվեց, գետնին ընկած երկաթե սեպը վերցնելու, բայց Արզումանը ամբողջ ծանրությամբ ընկավ նրա վրա, ոտքով մեկնած ձեռքը սեղմելով:

Հանկարծ մեկը ձգեց Արզումանին: Զրիկեցին մոտ վազեց: Երկաթե

ձողերի նման մատները սեղմեցին Արզումանի կոկորդը, թուլացավ ու ետ-ետ քաշվեց: Պուղին տեղը կանգնեց:

— Ինչ եք իրար մսի ելել,— գոռաց Մկրտումը, Արզումանին բաց թողնելով,— էս ի՞նչ է... Ես էլ ասեմ գործ են անում: էս սհաթին ոհնիզ քաշի,— դարձավ նա Արզումանին:— Մշակ ես, թե մարդասպան: Քեզ էտապով քշել կտամ...

— Ես քո իմացած կարմրաքարցին չեմ,— պատասխանեց Արզումանը: Նոս աչքերը բոցկլտում էին, ունգները փնչացնում՝ ասես օդ չկար

— Բա ո՞վ ես... Գեներալ Կուտուզովի տղան ե՞ս:

— Արինը գլխիս է, հա՛, Մկրտում... Մարդդ ճանաչի:— Արզումանի աչքերը այնպիսի կատաղությամբ ոլորվեցին, որ Մկրտումն էլ ահ զգաց նրա արնակալած սպիտակուցներից:

— Եգորն ո՞ւր է,— դարձավ նա զրիկեցուն: Պատասխանի փոխարեն նա կմկմաց:

— էս սաղ նրա գլխին չէ՞ր... Շինականն էր եկել էստեղ... Գնաց նրա հետ: Ես ասի առանցի հարցմունքի չի կարելի, ասում է՝ դու ի՞նչ է, զավոդի ստարշին ե՞ս,— պատասխանեց Պուղին, արյունը արխալուղի փեշերից սրբելով:

Հենց այդ բուպին Եգորն իջավ կածանով: Նա ժպտում էր: Շինականը շատ էր ուրախացել, երբ նա առաջարկել էր իր մի ամսվա վատակը՝ վեց ուրլին:— Պա՛ պա՛... Ես հաց կհավաքեմ, քո արյունը քրտինքըդ չեմ տա էն արնախումին,— պատասխանել էր.— մի քանի օր էլ կբանեմ, հալբաթ Բագրատիս քյոմակը կհասնի:

Նրա դեմքին ժպիտը սառավ, երբ տեսավ Արզումանի պատռած շապիկը, Պուղու արնոտ երեսը: Մկրտումն հոնքի տակից նայեց նրան:

— Մոտ արի,— ձեռքով նշան արեց: Եգորի ծնկները դողացին, աչքը գցեց Արզումանին:

— Մոտ արի, ասում եմ,— բղավեց Մկրտումը, մի քայլ անելով նրա կողմը:

— Ի՞նչ ես ուզում էն երեխից,— մեջ մտավ Արզումանը,— ես եմ ասել, որ գնա...

Լավից ոտնաձայն: Արզումանը ետ նայեց. արագ քայլերով գալիս էր պամոշնիկ Անտոնը: Թփի մոտ կանգնել էր Գողին:

— էս ի՞նչ շամաթա է... ի՞նչ բունթ է,— կանչեց նա մոտենալով Արզումանին: Մկրտումն առաջ ընկավ: Ապտակի ձայն լավից, ասես ապակի շարդեցին: Արզումանը փորձեց վրա վազել, բայց Անտոնն առաջ կարեց:

— էս օրե՞նք է, որ դու երեխուն թակում ե՞ս... Ուժդ նրան պատեց հա՛...— բղավեց Արզումանը: Եգորը կանգնել էր տեղում, ախանջը վառվում էր: Այտի վրա մատների կարմիր հետքը պարզ նշմարելի էր: Նա գայրույթից պոռչն էր կրծոտում, հազիվ էր զսպում արցունքը, որ մեկ քվում էր, մեկ հալվում:

— Գնանք,— ասաց Արզումանը Եգորին.— համա էսօրը չմոռանա հա՛, խաղերն ջան...

Մկրտումը շար աչքերով նայում էր հեռացողներին:

* *
*

Արևը հասուն մրգի նման թեքվել էր: Ստվերները երկարում էին, ձգվում դեպի արևելք:

Ավան ամուլայում կանաչի վրա նստոտել էին մի քանի հոգի: Դարբին Վանեսը մեկնվել էր մեջքի վրա, աչքը գցել գառան շափ սպիտակ ամպին, որ ասես արածում էր՝ մեկ հանդարտ, մեկ էլ սուրում շինչ երկնքի վրա: Դարբինն ախանջը կախել էր գրույցին: Եվ միտք էր անում, իդուր են խոսում Ավան ամին էլ, Շուղանց հալետրն էլ... Միայն ինքը գիտե ուղիղ ճանապարհը: Իսկ նրանց ասածը՝ ինչպես անտառի արահետը թուկա օրին: Կգնա՛ս, կգնաս, և մեկ էլ տեսար էլի նույն տեղն ես...

Խոսակցությունն սկսվել էր Արզումանի և Եգորի հետ պատահած դեպքից: Արզումանը ինքն էր եկել Ավան ամուլ մոտ և եղելությունը պատմել:

— Ես իմ հոր տղան չեմ լինի, եթե պիլնումը նրա գլուխը չմաշանեմ,— ասել էր Արզումանը, մի քիչ զայրացել, հետո դառնացած վերջացրե:

— Դուռակը ես եմ... Ասա ի՞նչ ունես Կարմրաքարում: Չէ՛, ինչ պլան ուզում ես գյուղի համար քաշի, ես մնացողը չեմ: Կալը պրծնի թե չէ, հայդա, պիշի պրապալ,— հայտարարել էր և գնացել Եգնարածի առտի տակ ընկած շիմանները, որ խոտ էին հարում:

— Քո ասելով ուրեմն անբան կովի պես սուս անենք էլի,— դարձավ դարբինը Շուղանց ալետրին:

— Ա՛յ որդի, որ սուս շանես, ի՞նչ պիտի շինես: Բզի գլխին յում-բուզով կառա՛ս, թե շաքճով: էսպես եկել է, էսպես էլ գնալու է, մինչև բուզով կառա՛ս, թե շաքճով: էսպես եկել է... Անբան կո՛վ: Բա ինչ ենք: Կթում էլ պատանդ էլ մաշի, ոսկորդ էլ...

են, կործո՞ղ էլ են կտրում,— թեկուզ խոսելուց խզզացնում էր, շունչը երբեմն կտրվում էր, բայց ուշք չէր դարձնում:— Աստօ՞ռու ճանապարհից դուրս ես գալի, սատանի ճանապարհը մտնում...
Սերունու վերջին խոսքը դարբնի ցույց տված ճանապարհին էր վերաբերում: «Մեկի փորը ծխով լցրու, տես ոնց են խելքի գալիս»,— հայտարարել էր դարբինը:

— Դե մի առակ ասեմ, լսի,— շիրուխի կրակը թեծացնելով ասաց Ավան ամին:— Տես վերջում ինչ եմ ասելու... Հա՛, հորթարածի առաջից հորթն ագին ցցում է, կես անում: Էս նաչարը շատ է շարշարվում, վերջը մի կերպ բռնում է: Հիմի բռնել է, էնպե՛ս է լաց լինում: Մի դարբի մարդ ճանապարհով անց կենալիս տեսնում է հորթարածին. ա՛յ տղա, ասում է, ագին ձեռիդ է, էլ ինչու ես լաց լինում... Ասում է սրա համար չեմ լաց լինում, հրեն մնացածների ագին էլ է ցից:

Ունկնդիրներից մի քանիսը ծիծաղեցին, բայց Ավան ամին շարունակեց.

— Հիմա մեր գյուղի բանը: Մի երեխու սիլլա տալով աշխարհ չի քանդվի: Ծս էդ օրը չեմ լաց լինում: Հրեն Քառասնաչուրը մեր ձեռքից խլելու է... էն որ մավթուներ է բերել, բա ինչի համար է: Վերի լավ հողերն իրանը, առուտունն իրանը, օրենքի մարդն իրանը... Բա մենք էլ ժողովուրդ ենք չե՞... Գեղովի խելք-խելքի տանք, մին էլ տեսար ըն՛, լույսը բացվեց... Թե չէ ես էլ գիտեմ, որ օձի ագին կտրելով, օձն էլի կենդան է մնում:

— Ավան, ասում է՝ անողը պրծավ, ասողն ընկավ կրակը... էդ խոսքն էլ մի ասի: Գյուղացին ե՞րբ է մի բան շինել, որ հիմա շինի... Քանի մարդ թակած կլինեն հեր ու տղա, ի՞նչ արինք: Է՛հ, էլի լուծը կմաշի, մեր վիզը չի մաշի: Նրանք էլ Կարմրաքարի ցավն են է՛լի... Բա առանց ցավի գյուղը կլինի՞... — և հազը բռնեց: Խոսակցությունը մի պահ դադարեց: Սերունին հազում էր, խշշում էր կրծքի վանդակը, կարծես թոքերի փոխարեն ոսկորներով լի չոր պարկեր էին:

— Է՛հ, մեր սիրտը մսից չէ. մենք մղկտալ չգիտենք,— դանդաղ ասաց Ավան ամին, տխուր շեշտով, կարծես ծանր ու դառն խոստովանություն էր ասում:— Զուրն ինչպես որ եփում է եփում, հովանում, ապեքանում, էնպես էլ մենք: Մեր միսը կերել, ոսկորն են թողել, էլի համբերում ենք... Մեր ապրուստն էլ ապրուստ է՛... Շան թեփով ենք ապրում: Մի քանի տարի էլ ապրենք, մի պարկ թեփ էլ ավելի կուտենք...

— Զուրն արդեն հասել է կամրջին: Էսօր էգուց կամուրջը տանելու է,— լուռի մեջ, իրրև վճիռ, հայտնեց դարբին Վանեսը: Զրույցն ան-

եկատորեն մանր առվակների բաժանվեց, կորավ շատ հասարակ առօրյալի ծանծաղուտում...

...Քավշյա թաթերի վրա՝ անշշուկ մոտենում էր ամառվա լուսնյակ գիշերը: Մղրիդները զարթնել էին: Կամուրջի տակ գորտերը մեկ-մեկ կռում էին, ջրից գլուխները հանում և պլշած սպասում, թե երբ պիտի լափեն արծաթ շաղ տա ջրի երեսին: Հանդարտ ու խուլ աղմուկը, որ երևում էր ճահճուտներից, թփերից՝ ուր ծտերն էին ճկում, այգիներից,— մի աղմուկ, որ ով գիտե բյուրավոր ինչպիսի՞ ձայներից էր գոյանում,— նեղի նման իջնում էր գյուղի վրա:

Դաշտում տեղ-տեղ կրակներ էին վառել: Մի քանի գերանդավոր իրիկվա կիսամթնում դեռ հարում էին: Արևից տաքացած գերանդին հովանում էր լուսնի զով շողերի տակ:

— Հրե՛ հա, կասես գյուղը ձիավոր եկավ,— ասաց Արզումանը Սալբուն, Շնեթի հաշոց լսվեց: Սալբին նայեց ու թիկն տվավ խոտի դեզին:

— Պամոշնիկ Անտոնի դուանը վեր եկավ,— ասաց նա:

Քիչ հետո շները նորից կլանչեցին: Սև ստվերի նման ձիավորը սլացավ գետնի վեր, դեպի վերի գյուղերը: Փոշու ամպը վազում էր ձիավորի հետևից, վազում էր ու չէր հասնում:

— Է՛ հե՛-հե՛յ... Վա՛-սի՛լ... Վա-սի՛լ... — ալիքաձև տարածվեց գլխի ձայնը: Կանչում էին գրագիր Վասիլին, որ ով գիտե որ չիմանում էր քնած:

Կանչում էին, որ կարդար ուրյադնիկ Երոշի բերած շտապ և գաղտնի պրոթյունը պատերազմի և զորահավաքի մասին:

Գյուղում այդ մասին ոչ ոք չգիտեր: Մրարը դեռ փակ էր:

* * *

Պատերազմի լուրը պայթեց, ինչպես որոտը պարզկա երկնքում: Կարծես հրթիռ էր, որ պայթյունով վեր սլացավ, ձեղքեց խավարը, գյուղի վրա կրակի անձրև մաղեց և հալվեց: Առօրյալի մանր հոգսերը հանկարծ խոռոկեցին, ինչպես կռունկի երամն ամպ գիշերին:

Շուտանց Իսոն դարբասի քարին նստած տրեխների հողն էր թափ տալիս, երբ տեսավ Չանեն ծուռ Ունանին՝ մի խուրձ կանաչ խոտ մանգուղին հագցրած:

— Հը՞,— հարցրեց Ունանը, խարձն ուսից իջեցնելով:

— 513 —

28 — Ա. Բախանց, Երկեր

— Ի՞նչը:

— Բաս լսել չե՞ս...

— Ա՛յ է՛, սուտ կրինի... Տեսնես Վասիլն էսօր քանի փարշ է խնել, պրիստավի հրամանին գլխու չի... Մեր Սղոմունն ասում է թուղթը թակի փեշատած էլ չի... Կարելի է որ ուրյադնիկը փոխա գցած լինի: Խեղդ թ՛նչ է կտրում,— դարձավ Ունանին, ասես ուզում էր իր երկամանքը վերացնել:

— Ի՞նչ ասեմ... Բանի էս փիս վախաբ կռիվ պոռոյի տղան եթիմ մնա: Հունձ ունենք, կալ ունենք: Բա մեր սրտից ջուր խմած մի մարդ չկա, որ մեծամեծաց հասկացնի ժողովրդի ավհալաթը...— Ու մի քիչ մտածելուց հետո հարցրեց.— Իս՛, Ղարսա կռիվը ձմեռնամուտին չե՞ր...

— Բա ի՞նչ: Էն էր, յապոնացունն էր: Չէ՛, էստեղ մի հնարք կա, ասենք գլխու չենք: Թե բեզարած չես, գեղամեջ գնանք, տեսնենք ինչ են խոսում:

Բոլոր-քարք մտա այդ ժամանակ մարդիկ լսում էին քաղաքից նոր վերադարձած Հասրաթենց Սիմոնին, որին պրիստավը կանչել էր երկու տարի առաջ պատահած սպանության գործով, իբրև առաջնակարգ և շատ «խորհրդավոր» վկայի, որն ըստ նախնական քննության ավյալների կապ պիտի ունենար դեպքի հետ, այնինչ Սիմոնը կարականապես հրաժարվում էր ճանաչելու սպանվածին էլ, սպանողին էր:

— Էստեղ են ասել, անողը պրծավ, ասողն ընկավ,— դառնացած ասաց Սիմոնը, թեկուզ ունկնդիրներից և ոչ մեկն էլ չէր կասկածում նրա անմեղության: Սպանությունը կատարվել էր գյուղից շատ հեռու, վերի կապում, հենց ճանապարհի վրա: Սիմոնը քաղաքից վերադառնալուց տեսել էր և շտապել տեղեկացնելու պամոշնիկ Անտոնին: Այդ օրից էլ նրա անունը կապվել էր խորհրդավոր սպանության հետ: Սակայն այդ նույն օրից էլ Սիմոնը հանդիպած յուրաքանչյուր մարդու պատմում էր իր գլխով անցածը, մինչև վերջին մանրամասնությունը և երբ լսողը իր վերաբերմունքն էր արտահայտում, ասելով հին խոսքը, թե «ցավ լուսես, գնա վկա գրվիք»,— Սիմոնը նորից էր կրկնում իր պատմությունը, որպես ապացույց այդ հին ասացվածքի ճշմարտության:

Բոլոր-քարի մոտ հավաքված մարդկանց հետաքրքիր չէր Սիմոնի վերջին հանդիպումը պրիստավի հետ: Բայց Հասրաթենց Սիմոնը երբեք աչքքան ունկնդիր չէր ունեցել, և նա պատմում էր իբր,— մինչև մեկն ու մեկը կանչեր.

— Դե՛ սպանեցիր, էլի՛... Բան ասա, բան լսենք,— և Սիմոնը գտնում էր պատերազմի վտրին.

— Մի՛ն էլ նաշալնիկը փոշտից դուրս եկավ, թե՛ ժողովուրդ, ուռա՛... Հռոտա տվին, պատերից կարմիր կապույտ թղթեր կպցրին... Պրիստավն փնձ հետ էր ժամանակ խոսում էր... Նա դեռ գլխու չէր...

— Սիմոն, թղթերը դու տեսա՛ր...

— Բա ո՞նց...

— Ի՞նչ էին խոսում քաղաքի մարդիկ:

— Ի՞նչ պիտի խոսեին, ամեն մարդ իր դուքանում, իր առևտրի հեռեց: Ինձ ճանանչ մի գուքանչի ասում էր՝ շաքարը շատ կթանկի, նմանապես կտորը:

— Ո՞ր թիվն են կանչում,— հարցրեց Եինականը:

— Էդքանը շտեղեկացա... Համա ասում էին, որ մեր մհալի ժողովուրդը հազար մարդ կտա:

— Հազար՝ էլ տակին ի՞նչ կմնա:

— Ղալմաղալը որ չլիներ, շատ բան կտեղեկանայի պրիստավից, համա եկան, թե նաշալնիկը վաղ կանչում է:

— Ի՞նչ Ղալմաղալ, Սիմոն:

— Այ եսիմ է՛... Մեկ էլ դուքանները կապեցին, զորքը, ժողովուրդը մեյդան թափվեցին... Ուռա՛... հա ուռա: Հենց ուզում էի իմանամ, թե իմ գործը ոնց կլինի, ձեռքով արեց, թե գնա... Սա ասեմ մանեֆեստի տակով անեն:

— Միմո՛ն, տեղեկացա՞ր, լավ գերանդին քանի է,— հարցրեց մեկը:

— Անդարդի մինը, գերանդուի վախտ ես գտե՞լ,— վրա բերեց Իսոն: Սերունու հազը նորից բռնեց, ու գլուխը տմբամբացնելով ձեռքը կրծքին սեղմեց, որ ներսում մի բան պոկվեր ու հանգստանար:

— Տերտերն էն օրը զուր չէր ասում, թե երկիրս պիտի խառնվի,— ասաց Ավան ամին, որ մինչ այդ լուռ լսում էր խոսակցությունը: Բոլորը լռեցին ու միայն ձեռունի Իսոյի կուրծքն էր խզզում, ինչպես սղոցը: Ավան ամին շարունակեց.

— Էդ մեզ նման խավար ժողովուրդն է, որ բանից խաբարությունի... Թե չէ ուսումնագետ մարդիկ կանուխ էին իմանում... Տերտերն ասում է՝ սերրիացին որ թագավորի տղին սպանեց, էն օրը հայտնի էր, որ կռիվ պիտի լինի:

— Բա մեր ցանքը, մեր կալը,— հարցրեց Շուղանց Իսոն:

— Քարը որ գլորվում է, մամուռը չի պահում, ա՛յ Իսո... Տերություն ինչ հոգն է, թե ձեռք նեղումն է: Հրաման հանեց՝ տուր, տուր: Ի՞նչ պիտի անես,— պատասխանեց Ավան ամին:

— Լա՛վ, տանք... Թագավորի հողից ու՛ր պիտի փախենք: Ախր դե

տակին մնացածը չի կառավարում: Էն խաչած հողին ոչ արժանանամ, թե սուտ ասեմ, հրես հանդից կոտորատված եկել եմ, տանը մի գցելու լալ չկա: Բա որ մեր երեխուն տանեն, էն է ինձ գցեմ գետը... Սեւալն եկավ, կալատեղս քանդեց, մինչի հիմա էլ խանգարված է մնացել:

— Ա՛յ Իսո, հազար ասի, ո՞վ է լսողը:

— Բա վերջը, մի լուս չի՞ հասնելու մե՞զ: Էսպես խավար պիտի մնա՞նք...

— Զաղացդ էս է, թեփն ալյուրի հետ կես է. կաղաս էլ էս է, շաղաս էլ էս է... Բա՛, Իսո:

— Զրին ասին թե ինչի՞ ես խշշում, ասաց՝ տեղս քարոտ է... Հիմա մեր օրն է:

— Լա՛վ, դարդ մի անի է՛,— ասաց դարբինը:— Սրան ուսի թագավոր կասեն... Երկու ամիս չի քաշի՞ փափախներով խոիկ կտա գերմանացուն, տանի ծով կածի: Շա՛տ շատ երկու ամիս դիմանան: Հերու վարժակետն ասում էր, թե նրանց հացն առնովի է: Հաց որ չունենա, ինչ պիտի անի: Գու ասա հացի բանը լավ գնա:

— Հազարաստեղծ ասաված, թո խեղճն ենք... Մեծ գետի ճանապարհը մեծ է զինում... Գու ասա, որ մեր աղբյուրը լցամաքի,— ասաց Շուղանց ալևորը:

— Իսո ամի, հարուստի տունը զոնաղ եկավ, աղքատի ուր մորթեցին: Տրաքոցը որ ընկավ, մենք հո էս գլխից ենք ոտան տակի կորչելու,— տխրությամբ հարեց Ունանը:

Նա նստել էր անկյունում ու մտածում էր իր կրտսեր եղբոր մասին, որ երկու տարի առաջ վերադարձել էր զինվորությունից: Ինքը Միրանի տափն էր վարում, երբ տեսավ իր փոքր աղջկանը բլուրն ի վեր բարձրանալիս: Մաճը բաց թողեց ձեռքից. «չի՞նի՞ մի փորձանք է պատահել տանը»... Եվ մոտեցավ աղջկանը. «Խաչանը ե՛կել է՛...» կանչեց աղջիկը: Քի, հետո երևաց և իսախանը: Ինչ ուրախություն էր: Մոտեցավ ու փաթաթվեցին իրար: Այս հիշելուց Ունանը ժպտաց, նրա աչքերում արցունք երևաց: Ի՞նչ լավ էր վարում իսախանը հենց առաջին օրը, կարծես շրթ տարի զինվորության մեջ չէր եղել: Ունանը միտք ուներ մաճկալությունը թողնելու: Ահա քեզ... իսախանը գնալու է... կինը, երեխան: Ինչպե՞ս պատահեց: Գուցե սու՛տ է. բայց մարդիկ խոսում են: Ու ոչ մի օր չի հիշում իր կյանքում, երբ աշխատանքի ետոն ժամանակ այսքան բազմություն հավաքվեր Բուր-քարի շուրջը: «Տրաքոցը որ ընկավ»... Եվ Ունանը հիշեց իր խոսքը: Էդ ո՞վ գցեց տրաքոցը... Հանդարտ վար էին անում...

Երկրյան դեմ եղներն արձակեցին: Փեշի հողը թափ տալով մոտեցավ սովին, որ ձեռքերը լվանա: Հանկարծ իսախանը մոտեցավ, թե հրաման է կկել... Եվ ձեռքերը մնացին անլվա. նստեց աովի եղրին:

Փողոցում երևաց քահանայի կոացած սիւլուետը: Նա դանդաղությամբ էր քայլերը փոխում, կարծես կոոցրել էր մի բան, որ ուր որ է պիտի աչքին ընկնի իրիկվա կիսամուկում:

— Հրես տերտերը գալիս է: Նա խաբար կունենա,— ասաց Զետանց Ունանը:

— Ո՛րտեղից պիտի ունենա: Սաղ օրը Նուանձորի բաղից դուրս չի գալիս: Էսօր ասում էր, թե հեղեղի գիշերը փիս երազ եմ տեսել: Քառասունքը թամամելուց վախենում է գյուղի գլխին փորձանք գա,— ասաց Ավան ամին:

— Սրանից էլ պինդ փորձա՞նք,— վրա բերեց ծերունի Իսոն:

— Տերտեր, էսօր շատ ես միտքարար,— ասաց Ավան ամին, երբ քահանան մոտեցավ քարին: Մի քանի հոգի իրար սեղմվեցին, նրան տեղ անելու համար: Տեր Նորընծան քթի տակ ողջունելուց հետո, կանգնեց մի պահ, ասես միտք էր անում, թե ում մոտ է իրեն վայել նստելու, և ապա ծխատուփը հանելով, նստեց Շուղանց Իսոյի և Ավան ամու մեջտեղը:

— Ա՛յ Իսրայել, մտքիս հետ ներհակ ընկած գալիս էի...

— Տերտեր, էդ գազեթներում ի՞նչ են ասում կովի մասին...— հարցրեց մեկը: Բուրբը շունչ պահած սպասում էին նրա պատասխանին:

— Օրհնյալ, ճրագդ միշտ վարզար մնա... Մեղքը պտույտքի պես մի փորձանք է և ոչ եթե մարդ արարածը հոգին ծախի,— ասաց նա: Տերտերը քթումն էր խոսում, ձայնը զրնգում էր, ասես պարապ կարասի մեջ էր հնչում, և որովհետև միալար էր խոսում ու մի քիչ էլ ծոր տալով, դրա համար էլ բառերն իրար էին խառնվում, քսվում էր այնպես, ինչպես գետի խուլ վշշոցը մուկ գիշերին: Քահանան կարծես ինքն իր հետ էր խոսում և ոչ ոքի չբավարարեց նրա պատասխանը: Ինքն էլ զգաց այդ և ուվելացրեց:

— Առաջաքայլ և գիտակից անձնավորությունը հողագնդիս երեսին պակասել են, էլ ու՛մ մեղապառտես էս խառնակչության համար: Եփեմերգին ասում է, թե եղիցի արյունահեղ պատերազմ, թագավոր հյուսիսական ընդ արևելս, կոտորած ժողովրդյան, քարեկարկուտ և սև անձրև, և սով մեծ...

— Եվ սով մեծ...— կրկնեց Շուղանց Իսոն: Ամենից շատ Ունանը տարտափեց այդ խոսքից: Ու դարձյալ հիշեց եղբորը, իրենց մեծ տունը,

երեխաներին, որոնք ճտերի նման թխսամոր հետևից վազում են, հացն ուտում այնքան ազահ, ինչքան շերամի որդը թթենու տերևները... Շաբաթը մի տաշտ հերիք չի անում: Եվ ի՞նչ ցորեններ կան այս տարի,— մտածեց Ունանը:— Զաղացպանն իզուր չէր ասում, թե տարին զլխակիր է... Իմաստուն մարդ է շաղացպանը... Միայն նա կարող է ասել, թե ինչ պիտի անել, որ հաշանին զինվոր շտանեն:

— Յարաբ տեսնես մեր եզինքը ջրե՞լ են,— ասաց նա բարձրաձայն, և փեշերը թափ տալով վեր կացավ տեղից, իջավ ներքև: Նրա ախանջին ջնկավ Չետանց Ունանի հարցը...

— Տերտե՛ր, գերմանացին խաշապաշտ չի՞...— Ունանը քաջում էր ու մտածում. գերմանացին խաշապաշտ չի՞... Հա՛, հաշանն էլ է ավազանում մկրտված... Ի՞նչ պարզ միտն է այն օրը: Կնունքին մի ոչխար մորթեցին... Ի՞նչ խաշապաշտ: Ունանն անցավ եկեղեցու մոտով, մի վայրկյան կանգնեց ու գլուխը թեքեց վեր: Արդեն տարիքն առած մարդ էր, բայց չէր հիշում, թե եքրեկեց գիշերով նսչած լինե՞ր եկեղեցու խաչին: Նրան տարօրինակ թվաց, որ գմբեթի զլխի խաչը փայլում է զոդած խոփի նման: Խաշապաշտ են հաշանը, գերմանացին, ուտը... Այն մարդը, որ Քառասնաջրում դավոդ սարքեց: Նա շատ հարգանքով բարևում էր տերտերին: Իսկ հիմա... Հը՞, իսկ խաչը... Հենց այնպես է դրված, որ Քելունց պառապն աղոթք անի, երեխաներին բերեն և ավազանում մկրտեն, պսակի ժամանակ Տեր Նորրնժան օրհնի: Ու մի բան Ունանի ներսում պոկվեց, սուզվեց ինչպես քարը խոր լճի մեջ: Տեղը մնաց դատարի, ծառի փշակի պես և թե՛ թև, ինչպես քամու բերանն ընկած տերեղ...

Իսկ քահանան պատմում էր, որ գերմանացիք ուրիշ տեսակի խաշապաշտ են, «ֆրանսացոց ազգաբնակչությունը» ուրիշ, «անգլիացու հավատքն այլակերպ է», յապոնացին կրակապաշտ է, ուստաց ժողովուրդը պրավասլավինի խաշապաշտ է, որովհետև խաչը ծուռ են կնքում: Չետանց Ունանի գլխում մի հարց պտույտք էր անում, ինչպես կամը կալում: Փր տերտերը լոց, նա անհամբեր հարցրեց.

— Տերտեր, բա էդ խաշապաշտ ազգերը ո՞նց են իրար մսի ելի... էնա թող գնան յապոնացու երկիրն առնեն էլի...

Քահանան հանկարծակիի եկավ: Ու նորից հիշեց այն, ինչ ամենից սուկալին էր նրա համար: Չետանց Ունանն էլ...— մտածեց նա: Եկեղեցու աջ կամարի տակ նրա մշտական տեղն է... Չմեռը մի կիրակի չի բաց թողնում, գալիս է, ծունր դնում, փափախը գետնին ու գլուխը կախում: Ինձի վրայից քանի՞ անգամ է խաշակնքել նրա կողմը: Տեր Նորրնժան զգաց այն, ինչ ծանոթ է խրանիկ հիվանդություն անեցողին. ահա նշա-

նը: անառի՞ն ծանոթ: նշանը, որից հետո երկրորդը պիտի երևա, սիրուր բարախելու է, հետո սրարշավ վրա է տալու ծանոթ և սարսափելի ցավը:

— Հավատն էս բանի մեջ խառնվում չի,— Կճռական հայտարարեց դարբին Վանեսը և օգտվելով այն ազդեցությունից, որ ունեցավ իր ասածը, մի քիչ առաջ եկավ և շարունակեց,— ամեն տերությունն իր հաշիվն ունի... Ռուսը տաճիկի հետ է կոխվ անելու... Գերմանացին ֆրանցուսի հետ: Թե չէ ինչ խաշապաշտ, ինչ կրակապաշտ... էս էն Շահ Իւ-մայիլի վախտերը չեն...

— Հա՛, դե դու Հնդստանու կոնսուլն ես, դու ամեն ինչ գիտես...— հնդեական տոնով ասաց Ըմբովի Քյունին, որի մշտական սովորությունն էր հակառակ խոսելու: Իզուր չէին նրա անունը դրել «Քարսի ձի»:

— Գե Վանեսի ասածն է էլի՞... ինչ ես հակառակում,— մեջ մտավ Շինավանը,— Լեմսը որ եկել էր զավոդը շինելու, քիչ էր մնում բեղդ պոկեր: Բա նա խաշապաշտ չէ՞ր...— Մոռացված այս դեպքը հիշեցնելը շտտերին ծիծաղեցրեց: Նույնիսկ քահանան ժպտաց, և մոռացավ այն, ինչի մասին համառ մտածում էր:

— Որտեղ սպաս տեսնես, գալուց մեջ ես կոխում,— զայրացած դարձավ Քյունին՝ Շինականին: Բայց նրա խոսքը չսվեց ծիծաղի աղմուկով:

— Է՛, մեր օրը լաց եղեք... Ի՞նչ եք մասխարի գցել,— ձայնը բարձրացնելով ասաց Ավան ամին: Նրա հանդիմանական խոսքը ծանր ազդեց լսողների վրա. նույնիսկ քահանան փշաքաղվեց: Նրան թվաց, թե հանդիմանություն մի մասն էլ իր ասածի առթիվ է:— Սրան յոթը տերության կոխվ կասեն: Չորանի կոխվ չի, որ մահակներով իրար շափեն:

— Կավ է՛, Ավան ամի, էդքան հասկանում ենք, բա մեզ ի՞նչ ճանապարհ ես ցույց տալիս,— հարցրեց Չանեն ծուռ Ունանը,— վեր կենանք ուսի թագավորի դեմ բունթ անե՞նք...

— Չէ՛,— ընդհատեց Ավան ամին,— էգուց էս գնացողները կալն ո՞վ պիտի կալսի, նրանց կարտուն ո՞վ պիտի հավաքի... Իսկի մին խոսքը մտածու՞մ ես: Սաղ գլուղն տակովն է լինում, մի քանի մարդկանց սիրտն է դինջանում: Լա՞վ սարքվեցին Քառասնաջրում... էս ջահելներն էլ որ գնան, Սային ու ես պիտի նրանց առաջն առնե՞նք:

— Դրա ժամանակը չի, Ավան ամի,— պատասխանեց դարբինը: Ավան ամին զարմացած նայեց նրա կողմը: Ու չիբուխը դողաց: Մթնում ոչ ոք չնկատեց այդ և ոչ էլ Չետանց Ունանի դառն ժպիտը:

— Էն. ո՞ր օրվանից,— հարցրեց Ավան ամին:

— Էն. օրվանից,— կարտեկ պատասխանեց դարբինը: Նրանք հառ-

կացան իրար: Ի՞նչ պատահեց դարբնի հետ այդքան կարճ ժամանակում... Նա այգում հայտարարեց, որ կարճ ճանապարհը «մեկի փորը ծխով լցնելն է»:

— Ես ասում եմ, որ բոլորս պետք է սեր միաբան լինենք: Կովի ժամանակ հայերի մեջ խստահալուստն ըստի լինի,— ասաց դարբինը՝ կոահելով Ավան ամու երկմտանքը:

— Դե փիս չի ասում հո՞,— վրա բերեց Շինականը: Դարբինը նրա ասածից խրախուսված՝ շարունակեց.

— Մենք էլ մին ժողովուրդ ենք չէ՞... Մեր մեծամեծերը մեզ համար մի պլան քաշած կլինեն: Էսօր էգուց Տաճկաստանն էլ է կովին հասնելու... բա մենք սուս պիտի նստե՞նք:

— Ա՛յ հիմա «շաշ ուստա» ես,— վրա բերեց Ըմբովի Թյունին, նրանից վրեժ անելու համար: Այս անգամ նրան հաջողվեց, որովհետև ծիծաղեցին այնպես, ինչպես «Փարսի ձի» ասելուց: «Շաշ ուստան» դարբին Վանեսի մականունն էր: Այդպես էին կոչում անկանոն և շփոթ աշխատելու համար: Նա շատ լավ գիտեր իր արհեստը, բայց քմահաճույքով էր աշխատում: Երբեմն մաշված, ճաքճքված խոփն այնպես էր սարքում, որ տերն անգամ չէր ճանաչում. իսկ երբեմն էլ մուրճով այնքան էր ծեծում, որ խոփը կորցնում էր ձևը: Թոնրից նոր հանած լավաշի համար տասը ոտբլու աշխատանք կաներ և ընդհակառակը՝ գերանդուին կցան տալու համար հանկարծ ավելին էր պահանջում, քան գերանդուն արժեք: Ինքնուս արհեստավոր էր. նա և՛ հյուսն էր, և՛ ատաղձագործ, և՛ դարբին: Նրա շինած կողպեքների նմանը քաղաքում էլ չէին կարողանում գտնել: Բայց ամենից լավ «ձեռագագործը», ինչպես ասում էր Տեր նոր-ընծան, հրացանն էր. նա այնպես շնորհքով էր հրացանի փողը փոխում, կտրում մանր, նորոգում, որ տեսնողը չէր հավատա, թե կարմրաքարի դարբնի գործն է:

Երկու կիրք ուներ դարբինը, մեկը՝ որսորդութունն էր, մյուսը՝ գանազան արկածների պատմութուններ լսելը: Նա ոչ միայն լավ նշան էր խփում, այլև գիտեր, թե որ գազանը ինչ տեղով է անցնում ամառը, ձմեռը, գիշեր թե ցերեկ: Ամբողջ ձմեռը որս էր անում, երբեմն ձյուն ձմռանը երկու երեք օրով տուն չէր գալիս: Այդ օրերում գլուղում գիտին, որ նա մեծ որսի է հանդիպել՝ արջի, քարայծի, կիտարի... Եվ տուն էր գալիս մռայլ, երեսն ու ձեռքերը վառողի ծխից սևացած: Նա հազիվ էր ստորագրում իր անունը, բայց երկաթե կտորտանքի, ժանգոտած մեխերի և մանգաղների կողքին, դարբնոցի մուրից սևացած դարակի վրա շորս-հինգ գրքեր կային: Նրա սիրած գիրքը «Կայծերն» էր, բայց ամենա-

լավը՝ «Բուլղար ավազակապետի պատմութունը»: Աշխատանքի ընթացքում, փողոցով անցնող աշակերտին, կամ հենց նրան, ում երկաթն էր շիկացնում, ստիպում էր, որ մի քիչ կարգա: Շատ անգամ էր նա Եգորին կանչում իր արհեստանոցը: Նրա ասելով կարմրաքարում ոչ մեկը Շինականի տղայի՝ Բագրատի նման «սրտանց» չէր կարողում: Դարբինը խոփը կրակի մեջ էր դնում ու նստում կարգացողի մոտ:— Ուստա, սպիտակում է...— ասում էր խոփի տերը: «Հանի թող հովանա... Հրես էն տեղին ենք հասնում»: «Էն տեղը» արկածների հանգույցներն էին, երբ, օրինակ, բուլղար ավազակապետը շղթան սղոցում է ու պիտի իրեն բանտի պատուհանից գցի... Եվ հանկարծ ծառս է լինում, կաս-կարմիր խոփը հանում ու զայրույթից թե հրճվածքից մուրճն այնպես զարկում, որ հնար չէր զարկերը հաշվելու: Իսկ խոփի տերը, սրտի դողով, մեկ խոփին էր նայում, մեկ կայծերին, որ թռնում էր ծանր մուրճի տակից:

Բոլոր-քարի մոտ նստածների զույցին նոր նյութ տվավ Մուքեյի տղայի գալը: Նա քաղաքից էր վեճադառնում: Երբ նկատեց հավաքվածներին, նա գլխի ընկավ, որ պատերազմի լուրն արդեն գլուղն է հասել: Եվ քայլերը փոխեց նրանց կողմը:

— Ո՞ր թիվն են տանելու, չիմացա՞ր,— հարցրեց Շուղանց Իսոն:

— Ութ տարվա զապասն են հավաքում, Իսո դայի... Խոսք կա, որ աշունքն էլի կանչեն:

— Ուրեմն մինչև աշունքը կռիվ պիտի տա՞նք,— հուսահատ ասաց Թորոնին: Եվ ապա ինքն իր ձեռքն օդում տարուրբեր արեց, մրմնջալով «տարա՛ն... գնա՛ց»:

— Էլ ուրիշ ի՞նչ էին ասում... ճոթ ու կտորի կողմանից, թանկից, էծանից,— հարցրեց Ավան ամին:

— Խոսք չկա: Դուքանները տրաքվում են ապրանքից: Հա՛, դազխները գնացին: Մի թամաշա էր, որ...

— Ես էլ տեսա,— վրա բերեց Հասրաթի Միմոնը:

— Դե սուս է՛, թող տեսնենք, ինչ է ասում,— սաստեցին նրան:

— Վարդապետը, քահանաքը, քաղաքի պաշտոնի առուտուրականները խաշով, խաշվառով տարան նրանց ճանապարհ գցեցին... Ղազախների գնեերալը կոացավ, վարդապետի աջն առավ:

— Հայր Միմոնը շատ հարգեղոր է մեծամեծաց ասպարեզներումը, ուսլա՛ մարդ է,— ասաց քահանան: Նրան հաճելի էր այն, որ գնեերալը համբուրել է հայր Միմոնի աչքը, և քահանան պատրաստվեց հիշեցնելու տի դեպքը, երբ Մուքեյի տղան շարունակեց իր պատմութունը:

— Իսկանդարովը, Արգարովները, Գևորգ բեյի տղերքը, դաստե

կարգած, ուսին մեծ պատկանցի վրա դարձած եկան նաչալեկի դռանց կանգնեցին... նաչալեկը դուռն եկավ, ուստեղն խոսեց, էնքան չհասկացաւ: Համա ամեն խոսքին ուրա էին կանչում: Հետո պատկանցը ներս տարան...

— Երեմն նվիրատուութուն ենք անում զորքն հարկավորութեան մասին,— մեկնարանեց Տեր Նորրնծան, որը մեծ հիացմունքով էր լսում «Միջալեկի որդու» պատմածը քաղաքի ոգևորութեան և եռուզեռի մասին:

— Այ հայութուն,— ոգևորված բացականչեց դարբինը: — Մի պատնոց կտան, փողարթից տասը դուրս կբերեն,— կոն շեշտով հարեց Ավան ամին:

— Մինչի դուրս գալուս սհաթն էլ քաղաքն ուրախութունից դրձուում էք,— եզրափակեց Մուգեկի տղան:

— Շաշվել են, ինչ է... Մարդ էլ կովի համար ուրախանա՞... Եկաք թան շի կտրում:

Ավան ամին դեռ խոսքը չէր ավարտել, երբ մի ձիավոր ձին թափին ջրած, անցավ փողոցն ու ծովեց դեպի «պամոռնիկի օթախը»:

— Զրիկա դղիրն էր,— հայտարարեց Երեմականը:

— Վեր եկ գնանք: Անտոնի մոտ,— ասաց Շուրանց Խոն,— բալը, թագա հրաման կա...— և համարյա բոլորը տեղնեթից վեր կացան:

— Տեսնեմ մեր մաղանի առաջը խոտ գցող եղա՞վ թե չէ,— ասաց Զանեն ձուռ Ունանը: միմեւը մահակը տափափեցին:

— է, ինչի վրա ես միտք անում,— պատասխանեց Երեմականը:

— Քուռակամեր է ախր... — Խարուչիկի վրա կախած կաթնաչի մեջ քլթքլթում էր ջուրը, թշտով ընկնում կրակի վրա: Ընթրիքի համար վաղահաս կաքտոֆիչ էին եփում:

Խարուչիկի մոտ, գեանին խցած փողոցի գնդանի վրա ջողացապանը մորճով ծեծում էր գերանդու ծոած բերանը: Արմանը, որ նոր էր վերադարձնում Կաղնուտի ձորից, գանձակով քերում էր կացնի կոթին: հենած կաշվի ձողը: Նրա կողքին պատկել էր Արզումանը և ձեռքի ճիպոտով մերթ թեմքեմ նայում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում:

Սաչալեկի վրա կախած կաթնաչի մեջ քլթքլթում էր ջուրը, թշտով ընկնում կրակի վրա: Ընթրիքի համար վաղահաս կաքտոֆիչ էին եփում: Խարուչիկի մոտ, գեանին խցած փողոցի գնդանի վրա ջողացապանը մորճով ծեծում էր գերանդու ծոած բերանը: Արմանը, որ նոր էր վերադարձնում Կաղնուտի ձորից, գանձակով քերում էր կացնի կոթին: հենած կաշվի ձողը: Նրա կողքին պատկել էր Արզումանը և ձեռքի ճիպոտով մերթ թեմքեմ նայում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում:

Սաչալեկի վրա կախած կաթնաչի մեջ քլթքլթում էր ջուրը, թշտով ընկնում կրակի վրա: Ընթրիքի համար վաղահաս կաքտոֆիչ էին եփում: Խարուչիկի մոտ, գեանին խցած փողոցի գնդանի վրա ջողացապանը մորճով ծեծում էր գերանդու ծոած բերանը: Արմանը, որ նոր էր վերադարձնում Կաղնուտի ձորից, գանձակով քերում էր կացնի կոթին: հենած կաշվի ձողը: Նրա կողքին պատկել էր Արզումանը և ձեռքի ճիպոտով մերթ թեմքեմ նայում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում:

Սաչալեկի վրա կախած կաթնաչի մեջ քլթքլթում էր ջուրը, թշտով ընկնում կրակի վրա: Ընթրիքի համար վաղահաս կաքտոֆիչ էին եփում: Խարուչիկի մոտ, գեանին խցած փողոցի գնդանի վրա ջողացապանը մորճով ծեծում էր գերանդու ծոած բերանը: Արմանը, որ նոր էր վերադարձնում Կաղնուտի ձորից, գանձակով քերում էր կացնի կոթին: հենած կաշվի ձողը: Նրա կողքին պատկել էր Արզումանը և ձեռքի ճիպոտով մերթ թեմքեմ նայում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում:

Սաչալեկի վրա կախած կաթնաչի մեջ քլթքլթում էր ջուրը, թշտով ընկնում կրակի վրա: Ընթրիքի համար վաղահաս կաքտոֆիչ էին եփում: Խարուչիկի մոտ, գեանին խցած փողոցի գնդանի վրա ջողացապանը մորճով ծեծում էր գերանդու ծոած բերանը: Արմանը, որ նոր էր վերադարձնում Կաղնուտի ձորից, գանձակով քերում էր կացնի կոթին: հենած կաշվի ձողը: Նրա կողքին պատկել էր Արզումանը և ձեռքի ճիպոտով մերթ թեմքեմ նայում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում:

Սաչալեկի վրա կախած կաթնաչի մեջ քլթքլթում էր ջուրը, թշտով ընկնում կրակի վրա: Ընթրիքի համար վաղահաս կաքտոֆիչ էին եփում: Խարուչիկի մոտ, գեանին խցած փողոցի գնդանի վրա ջողացապանը մորճով ծեծում էր գերանդու ծոած բերանը: Արմանը, որ նոր էր վերադարձնում Կաղնուտի ձորից, գանձակով քերում էր կացնի կոթին: հենած կաշվի ձողը: Նրա կողքին պատկել էր Արզումանը և ձեռքի ճիպոտով մերթ թեմքեմ նայում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում:

Սաչալեկի վրա կախած կաթնաչի մեջ քլթքլթում էր ջուրը, թշտով ընկնում կրակի վրա: Ընթրիքի համար վաղահաս կաքտոֆիչ էին եփում: Խարուչիկի մոտ, գեանին խցած փողոցի գնդանի վրա ջողացապանը մորճով ծեծում էր գերանդու ծոած բերանը: Արմանը, որ նոր էր վերադարձնում Կաղնուտի ձորից, գանձակով քերում էր կացնի կոթին: հենած կաշվի ձողը: Նրա կողքին պատկել էր Արզումանը և ձեռքի ճիպոտով մերթ թեմքեմ նայում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում: Երկու ժացնում էր խարուչիկը, մեքթ հետո թաշղ հրահները հալաքում:

բարձրացնում, իսկ երբ Սալբին նստում էր իր տեղը, հնձվորը հոգնած դուրս թեքում էր խրճանը:

Արզումանը Միմոնին պատմել էր սղոցարանի դեպքը: Պատմել էր ներքին հպարտութեամբ, մի քիչ ավելին, քան իրականում էր եղել, պատմել էր այն անխուսափելի ձևով, որ հատուկ է երիտասարդ մարդկանց, երբ այդ պատմությանն ունկնդիր է և նրանց սիրելին: Միմոնն անորոշ պտասխանել էր, թե շար մարդու վերջը լավ չի լինում: Անհայտ էր, թե ո՞վ էր այդ շարը՝ Մկրտո՞ւմը, թե Արզումանը:

Հանդարտ էր խաղույկի մոտ... Զուրը թշտում էր, մուրճի հարվածներից գերանդին այնպես մեղմ էր զրնգում, կարծես խոր սափորի մեջ չրի կաթիլներ էին ընկնում... Արզումանը գլուխը վեր էր բարձրացնում, նայում Սալբուն, որի ստվերն ընկել էր խոտերի վրա: Աղջկա երկայն արտեաններն ավելի էին թանձրացնում աչքի խոռոչի սևութունը: Երեսը վառվում էր՝ հոգնածութունից ու կրակին հաճախ մոտենալուց:

Շուտով ընթրիքի կեստան... Ապա գերանդիները, գնդանը, մուրճը, չրի կուլան կապահեն խուրճերի տակ և կցրվեն տները: Զաղացապանն իր կնոջ հետ կգնան ներքին կամրջով, իսկ մայր ու աղջիկ կիջնեն գետի վրա և քարերի վրայով կանցնեն գետը, կբարձրանան այգիների կողմը, կհոգնեն փուլ եկած պատի կողքով, և տան դռնակը կճոճառ: Դաշտում կմնան Արզումանը, երկու հնձվորները, որոնք ընթրիքից հետո պիտի թաղվեն չոր խոտերի մեջ և քնեն մեռածի քնով: Ու լուսինը մայր պլտի մոտի, խաղարը պիտի թանձրանա... Արզումանն անցնելու է քարերի վրայով, չրի միջով, նրանց հետքով և փուլ եկած պատի մոտ կուշ գալու այնքան, մինչև դռնակը նորից ճոռա և շալի մեջ փաթաթված մի ստվեր տեսան, անշուք: մոտենա իրեն... Մոտենա ինչպես երկու օր առաջ, երբ էրուզին քնած մի թուղուն թևին արեց, աղջիկը դուրս պրծավ նրա գրկից և Արզումանին թվաց, թե պատի վրայից մարդ իջավ: Սպասեց, շատ սպասեց, և գուուը շրացվեց:

Սղոցարանից վերադառնալուց Արզումանը կուացավ, որ աղջկա ուսքի մոտ ընկած կիտուկը կապի,— կամացուկ նրան ասաց. «Էսօր կգաս»: «Հերո տանն է»... «Կգաս, բան եմ ասելու»... Եվ Սալբին կարճեց, եղանով շուտ սոված արդեն շրջած կիտուկը:

Ներքևում չոր խոտերը խշշացին: Արզումանը տեղից վեր ելավ, Սալբին էլ նայեց... Մի ստվեր վազում էր մութի կողմը:

— Եզրն է,— կամացուկ ասաց Սալբին, սակայն բոլորը լսեցին, րայի հնձվորից: Ու Եզրը հեխհ կատմեց, թե ինչ հրաման էր բերել սպառնիկ Երուշը:

— Օ՛ր ե՛... Չթողին էլ էս խոտը տեղաց անենք... Ասի անձրև չգա, շթրջի,— ասաց Արզումանն այնպիսի հանգստութեամբ, կարծես ոչ թե պատերազմի լուրն էր լսել, այլ անախտո՞ բեգլառի, ու հարկավոր էր երկու օր գնալ «թագավորական» ճանապարհում խիճ ջարդել: Միմոնը խոսք չգտավ ասելու. շաղացականը դադարեց գերանդին ծեծելուց: Նա մեկ Արզումանին էր նայում, մեկ Եգորին:

— Կարմրաքարի գլխին հլա շատ փորձանք է գալու,— ասաց նա: Արզումանը նայեց Մալբուն: Երկուսի հայացքն իրար դիպան: Ասես ծիածանի պես կամուրջ կապվեց և շասված խոսքեր կամրջի վրայով սրտից սիրտ անցան:

— Էսպես թագավորին ես... վախտը գտա՛վ,— ասաց Արզումանը:— Բեր, կարտուր բեր ուտենք:

Լուռ ընթրեցին: Մոռացան հնձվողին էլ զարթեցնելու: Նա խոր քնի մեջ մշշացնում էր, ինչպես հոգնած եզը ուռնու սովերում:

Աստղազարդ երկինքը ջինջ էր, ինչպես լեռնային լճակը: Հնձած խոտերի մեջ ծղրիդները կանչում էին: Շատ մոտիկ մի լոր բռռալով թռավ խոտի միջից: Մալբին կլպում էր կարտոֆիլը, հոր առաջ դնում: Ու մի սպիտակն էլ գզուլութեամբ գլորեց Արզումանի կողմը: Արզումանը նայեց նրան. աղջկա արցունքոտ աչքերում խարուկի կրակն արտացոլում էր:

— Եգոր, վեր կաց... Տեսնենք ինչ թուղթ է ստացել պարոն Վասիլը:— Ու երկուսով իջան գյուղի վրա:

Պամոշնիկ Անտոնի «կանցելարը», որ Կարմրաքարում ավելի շատ հայտնի էր որպես «պամոշնիկի օթախ», որովհետև այն միաժամանակ և բնակարան էր,— գյուղական մնացած սենյակներից տարբերվում էր միայն ոտքը կոտրած սեղանով, որի վրա, ինչպես և պատուհանին, դարսված էին մի քանի մատյաններ, որոնց մոտ, պատուհանի հովին,— ուր կոտրած ապակու անցքը տրեխի ջողով կապկպած էր, որ կատուն ու հավերը ներս չմտնեն, երբ տանը մարդ չէր լինում,— պատուհանին դրված էր մածնի մերուցքը:

«Օթախ»-ում կանգնելու էլ տեղ չկար: Անտոնը, որ նոր էր վերադարձել Հիրանի ամարաթից, գրագրին թելադրում էր տանուտերի ուղարկած գրության պատասխանը, որ պիտի ուղարկեր Զրիկից եկած գզրի մեքոնով: Տանուտերը գրել էր այն, ինչ հայտնի էր ուրյադնիկի հանձնած ծրարից: Բացի այդ, նա կարգադրել էր լուսաբացին կազմ ու պատրաստ ունենալ գորակոշի ենթարկվածներին:

Վասիլը դառնացած գրում էր պատասխանը և թեկուզ գլխավորեց կանգնած Անտոնը թելադրում էր նրան, բայց նա գրում էր այնպես, ինչ

պես ինքը գիտեր: Նա դառնացած էր և նրա համար, որ «օթախ»-ում եղած մարդկանց մոտ թելադրում է Անտոնը, բայց ավելի շատ՝ իր հանգիստն այդպես անակնկալ կերպով վրդովելու համար: Պամոշնիկը նկատում էր այդ, սակայն շարունակում էր թելադրելը:

Այդ երեկոյան Վասիլը, որ գյուղում թունդ հարեցողի հոշակ ուներ և, ինչպես քահանան էր ասում, «այդ տկարության կողմանից իրյան պապին էր քաշել»,— Վասիլը հարբած քնել էր գետափի ուռիների տակ, երբ թափահարելով նրան զարթեցրեց գզիրը: Գաղտնի գրության անունը նրան սթափեցրեց: Ու թոնթորալով վեր կացավ, բարձրացավ «օթախ»-ի կողմը: Գրության բովանդակությանը տեղեկանալուց հետո, խորիմաստ «հը՛մմ» արեց: Անտոնը դուռը փակել էր:— Հը՛,— անհամբեր հարցրեց նա:— Հե՛շ, պրիստավն է գրել...— Ժուլլ-ժուլլ ասաց Վասիլը, հաստատ իմանալով, որ իր պատասխանը շարացնելու է պամոշնիկին, նա սպառնալու է տանուտերին ռապորտ գրելով, և վերջում՝ աղաչանքով խոստանալու է «էն զահրումարից» մի շիշ: Երբ Վասիլը գրությունը կարդաց ու թարգմանեց, պամոշնիկ Անտոնի գլխին ասես տունը փուլ եկավ...— Ոնց թե կոխվ,— ասաց ու նստեց սկամուն: Ապա մեկից ծրոնգ եզավ, դուրս եկավ ու դուռը փակելուց գրագրին պատվիրեց, որ ոչ ոքի չհայտնի գրության մասին՝ մինչև իր վերադարձը:

Իսկ լուրը տարածվեց կայծակի արագութեամբ: Վասիլն ինքն էր հայտնում եկողին՝ կարծես նրան ուրախություն էր պատճառում այն արտահայտությունը, որ ունենում էր յուրաքանչյուր լսող: Վերադարձին Անտոնը զայրացավ, երբ տեսավ օթախում հավաքված մարդկանց:

— Այ խալիս, շամիշ չեն բաժանու՛մ... Թողեք մի տեսնենք ինչ պատասխան ենք տալիս... Մի աշիբկա լինի, նոմերը սխալմունք պատահի, գե եկ էդ դարագումեննու պատասխանը տուր... Սա թագավորական գործ է, հանաք մասխարա չի՛...

Վասիլը շտամպը մոտեցնում էր բերանին, փշում, ուռնգները լայն բաց արած ներս ծծում օդու հոտը, որ ելնում էր իր շնչի հետ: Փշում էր, ծուլլ ծուլլ շարադրում և քմծիծաղ տալիս պամոշնիկի խոսքերի վրա: Արզումանը դռան մոտ կանգնածներին հեկոլ ներս մտավ:

— Չեստ իմելու յավիցա, վաշ բլադարողի,— բղավեց նա գինվորական պատիվ տալով Անտոնին:

— Կանցիլարը շուտի տեղը չի՛,— զայրացած պատասխանեց Անտոնը և դարձյալ կուցավ սեղանին:

— Հա՛, լավ... Ռապորտը գրի, թե չէ գիտե՛ս՝ պալետյ սուդ, կաշիդ մեջքիդ կհանեն... վա՛յ, Վասիլ Պետրովիչ, դու էլ էստե՛ղ... Ուրեմն

հանաք չի էլի՛, կանտորա պիշեա: Հե՛յ, մերը շնորհի թագաւորի: Ան-
ուաց գլխի բնկավ, որ կարծաբարում գործ հաց ուտող շատ կա: Միտն
ապեր, — դարձավ նա մի կարճահասակ արեօրի, որին սեղմել էին ան-
կյունը, — դու էստեղ ի՞նչ գործ ունես: Քո թայրը թանուլը կերել են,
երազ են տեսնում:

— Երեխան էլ է, — լացակումած ասաց ծերունին:
— Ստեփան՛ը: Նա ո՞ր թվի սալգաթն է որ...
— Եսի՛մ... Վասիլի մոտ է թղթերը:
— Վասիլ Պետրովիչ, բա քեզ հետ ե՞րբ ենք մի կատիլուկից բոլը
ուտելու: Թե՛ մնում ես, վիզդ հաստանա, կուզի նման ընկնես խալթի
կնանոց ջանին:

— Ասում եմ բերանց շատ ցրիվ մի տա, — կանչեց պամոշնիկը: Իսկ
Վասիլը գլուխը կախել էր թղթի վրա, իբր թե չի լսում:

— Դե լավ հա՛... Խանչալիդ քարը վեր շընկավ: Էնպես չի՛, Վասիլ
Պետրովիչ... Դավթարում աղոեսս գրի. 117 պենգենսկի պոլկ, տրետի
բատալիոն, ավտարո ոտտա պալուչիտ Արզումանու Ծղիգարովու... Աղոես
գրելիս հավից ճուտից շատ շհավաքես, թե չէ մին էլ տեսար եկա դի-
վանիդ:

Մի քանի հոգի ծիծաղեցին, մեկը կամացուկ ասաց.

— Երանի Արզումանին: Գայլի սիրտ կերած է, — Արզումանը լսեց:
— Բա սուզ անե՛մ: Ինչ եք կարասն ընկած մկան նման թախել...
Մին էլ տեսաք ցեպ կապած ետ եկանք, դավալ դավալը գցեցինք...

— Ուր է, լեզվիդ մատաղ, քո ասածը լինի, — մրմնջաց Սիմոն ապե-
րը, — սող սալամաթ ետ գաք... Մենք էլ նաչար ենք:

— Դե, ժողովուրդ, լսեցի՛ք, — դարձավ պամոշնիկը ներկա եղող-
ներին: Գրում հավաքվածները մոտեցան դռանը: — Սպիսուկը սա է... —
ու նորից կարդաց անունները: — Լուսը շբացված գլուղամեջին հավաք-
ված լինեն, երեք օրվա պաշարով... Դե հիմա շաղ եկեք, տեսնենք ինչ
ենք անում...

— Հա, արևիդ մեռնեմ, — աղաչանքով ասաց Սիմոն ապերը, որի
որդու անունը ցուցակում չկարդաց, բայց մի մատյան ևս պիտի քրքրեին, —
մեր հոգատար իշխանը դու ես... Բոլորը քո ձեռքիդ են նայում...

Թագաւորուհու սկսեց ցրվել:

— Եզո՛ր, գնա տուն, ես մեր բաղովն անցնեմ, — ասաց Սրբաւոր-
հր: Կնկարով մթաթջան մեջ:

* * *

Գլուղի վրա բացվեց մի պղտոր առավոտ: Մոխրագույն ամպերը
ծխի նման բարդ բարդ վեր էին ելնում, կարծես վիթխարի կրահորի բե-
րան էին բացել:

Առավոտյան մուժի մեջ ծնգացին եկեղեցու զանգերը: Ժամհար
Բարսեղը սովորականից կանուխ էր զարթնել և կազ ոտը քարշ տալով
բարձրացել զանգակատունը: Հեովից նայողին այնպես էր թվում, որ ոչ
թե ժամհարն է քաշում զանգի պարանները, այլ զանգերն են ձգում նրա
թևերը, նախ՝ աչքը, ապա՝ ձախը: Կազ ոտը ձգած, գլուխը գետնին խոնար-
հած, Բարսեղը կարծես արձանացել էր, մոռացության տվել ծանոթ գա-
վիթը, պարանների կշիռը, որ սեղմում էր բռան մեջ, զանգակատանը
բույն դրած աղավնիներին, որոնք ամենօրյա ձևով թռան, երբ ինքը
անտրուզով վեր բարձրացավ, և շար ընկան գմբեթի ծայրին:

Ժամհարը կանուխ էր զարթնել: Գիշերն էլ անկողնում կողքից կողք
էր շըջվել, կարծես ներքնակի մեջ փշեր էին լցված: Նա երբեմն գլուխը
վեր էր հանում, նայում պատուհանին: Ինչ երկար էր ամառվա այս գի-
շերը...

— Աամսո՛ն, քնել չե՛ս... — ձայն էր տալիս որդուն:

— Չէ՛...

— Քնի, բալաս: Երկար ճանապարհ ես կտրելու: — Իսկ ժամհարի
կինը մթնում ման էր գալիս, պղինձները գրնգացնում, սնդուկը բաց
անում ինչ-որ բան հանում, կապում: Լսելի էր զսպած հեկեկոցի ձայն,
որ դադարում էր, երբ Սամսոնն ու հայրը լուռ էին: Մայրը հեկեկաց
բարձրաձայն, երբ խոսքի միջին ժամհարն ասաց.

— Հրես մեր տանն եմ ասում... նամակդ մշտական թող անպակաս
լինի: Դու էլ քեզ մղալիթ կաց... Հազար շառ, հազար փորձանք:

Մոր հեծկտոցի ձայնից երեխաներն էլ զարթնեցին: Ամենափոքրը
տեղերում նստեց ու կանչեց մեծ եղբորը: Երեխան կարծում էր, թե նա
գնացել է, ու իրան քնած են թողել:

— Բարսե՛ղ, օրհնյալ... բավական է, — ասաց Տեր Նորընձան՝ եկե-
ղեցու բանալին գրպանից հանելով:

— Էսօր շատ դարդոտ է զանգերը քաշում, — ասաց մի պառավ:
— Նաչարն ի՞նչ ունի: Մի տուն քուլփաթի պահողը Սամսոնն է, —
ու ներս մտան կիսամութ, խոնավ ու քարակոփ եկեղեցին:

Շատ երգիկներից էր ծուխ բարձրանում: Կապույտ ծուխը վախվիճելով
կողմեր էր վեր: ու սառը քամին նրա բաշից բռնած, թոցնում էր, կտուր-

ներից պոկում: Եփում էին, թխում: Կանուխ էին վեր կացել և նրանք, որոնք գինվորացու շունեին, գնացողը մեկի փեսան էր, մյուսի՝ հոր-բորոջ տղան... Պառավ կանայք, շալերի մեջ փաթաթված, փողացող ստվերների նման մեկ-մեկ անցնում էին գյուղի դատարկ փողոցներով ու կորչում եկեղեցու ներսի մթության մեջ: Բոլորն էլ համարյա նույն ձևով էին ծնկադրում, փղծկում, ճակատը կռացնում եկեղեցու սառը հատակին: Ոչ ոք չէր լսում Տեր Նորրենձայի ձայնը, որ արձագանք էր տալիս ծանր կամարների տակ, ինչպես հարվածը դատարկ կարասում: Կանայք ու ծերերը երկար չէին մնում: Հենց արցունքը ցամաքեր թե չէ, դուրս էին գալիս և շտապում տուն՝ մի բան էլ պատվիրելու գնացողին, մի քիչ էլ նայելու նրանց:

— Հիբանի տղերքն ի՞նչ են լսել, որ առավոտ կանուխ դուքանը բաց են արել, — հարցրեց Թելունց պառավը ժամհարի կնոջը:

— Է՛հ, նրանց սրտի խորհուրդն ո՞վ կիմանա, — պատասխանեց կինը:

Այդ առավոտ կարմրաքարում ամենից վաղ զարթնողը Մկրտումն էր: Լույսը չբացված Եփրեմը բազաք էր գնացել տեղեկանալու ապրանքի գներից ու կատարվող իրադարձություններից: Մկրտումը նրան շատ հանձնարարություններ էր տվել, մի քանի անգամ էր կրկնել իր ասածը, կրկնել էր տվել եղբորը, ինչպես ուսուցիչն՝ աշակերտին: Գիշերով Մկրտումն ինքն էր վեր կացել, իջել ներքև, Եփրեմին զարթեցրել, Գողուն պատվիրել ձին թամբելու և եղբորը ճանապարհ գցելուց մի անգամ էլ սպասրել քաղաքում անելիքը և գնացել խանութ:

Մկրտումը խանութի հատակին փռել էր գուլյնգուլյն և էժանանոց թաշկինակներ, որոնց մեջ բուռ-բուռ լցնում էր շամիչ, պնդուկ, նոխուր, ապա թաշկինակները կապոց էր անում, դարսում: Խանութում ոչ ոք չկար: Ամեն մի թաշկինակ կապելուց հրճվում էր, ինչպես մայրը, որ քնած երեխայի գլխավերևն ընծա է դնում: Մկրտումը մի վայրկյան մտածեց, ապա ետ դրեց կապած թաշկինակները, սկսեց բաց անել Մրգեղենն իրար էր խառնվել: Ու նա ձեռքը մեկնեց, դարակից վերցրեց մի կապ ծխախոտ, սկսեց մեկմեկ դարսել կապոցների մեջ: Մեկ էլ համարեց ծխախոտը, բարձրացավ վերևից ավելի աժանը և հասարակ վերցնելու:

Պատերազմի լուրը նրա վրա ևս շժմեցուցիչ տպավորություն էր արել: Բայց այդ տեղ էր միայն մի վայրկյան, ինչպես թեթև գլխապտույտ: Ու շատ հասարակ դասավորել էր այն բոլորը, որ բերելու էր պատերազմը

պուլի և իրենց տան համար: Պամոշնիկ Անտոնին նա սառնարտուփ բաժր պատասխանել էր:

— Սա պետք է լիներ... Անկարելի էր... Էս տրաքոցին վաղուց էին ուղարկում: — Զորակոչի ենթարկվածների ցուցակում միայն Գրդլ Պուզու տունն էր, ոչ զժգոհություն առաջացրեց նրա դեմքի վրա:

— Բա պի՛նի՞ն, — մտածեց նա: — Ու մինչև Անտոնը մյուսներին տեսնեցը կթվարկեր, Մկրտումն իր անելիքը որոշեց:

Փողոցներում անցուղարձն սկսվեց: Գրաստներին ուտելիք ու գործիքներ բարձած մի քանի հոգի գնացին աշխատանքի: Ինչքան էլ դաժան ու հանկարծակի էր պատերազմը, բայց և այնպես հարկավոր էր խոտը հարել, հարածը կիտուկներ անել, այգին ջրել, դեղնած գարիններին նայել, որ հունձը շուշանա: Երբեմն տներից երեխաները վազում էին Բողոք-քարի մոտ՝ նայելու հո շին հավաքվել: Կամ թե բարձրանում էին կոտորը և նայում պամոշնիկի «օթախի» կողմը, որի առաջ տկուր ձին գոկանաչ էր ուտում:

Իրենց դարբասի անկյունում Ունանը եղբորը համոզում էր այն, ինչի մասին երեկոյան խոսել էր, ու հաշանը գլուխն օրորելով ասել էր. «Վախենում եմ...»: Ունանը եղել էր ջաղացպանի մոտ. ճիշտ է, նա հայտնել էր միջոցը, սակայն ավելացրել էր. «Համա անտերն իսկական զահրումար է... Զանով տղամարդ պիտի լինի, որ դիմանա... Էն առաջ էր հիմա կարմրաքարում ու՞ր է էգպես ոսկոր...»: Խաշանից Ունանը պահել էր ջաղացպանի խոսքը, թե տղամարդը միայն կարող է դիմանալ այդ «զահրումարին...»:

Մի ներքին ձայն Խաշանին ասում էր, որ միջոցը վտանգավոր է: Բայց սիրտը մղկտում էր... Ինչպե՞ս պիտի ապրեն տունը, կինը, երեխան: Ամբողջ գիշերը կինը արցունք էր թափել բարձին, օրորոցի վրա, կրկնապես էր երեխային ծիծ տալու: Ու հենց ուզում էր բերանը բանա, կրկնապես էր երեխային ծիծ տալու: Այս երկրնորանքը Խաշանին ծանր մտատանջության մեջ էր գցել: Իսկ եթե խմի մի գավաթ ծխախոտի ջուր, ինչպես Ունանն էր ասում. կազատվի՞ ու տանը կմնա՞... Խաշանը կրկնում էր մոլորվածի նման. «տեսնե՞ք, կամիսիս ընկնե՞ք... Բուլի բրակ են դուրս բերում»:

Հանդում մեռակ մնացած եզան բառաչի նման հանկարծ լավեց զզրի հսկողու ձայնը:

— Հե՛յ, հե՛... գնացողը գա մեյդանը, հե՛յ...

— Բայդու՛շ, — ասաց Թելունց պառավը ու շատ ասել էր իրենց ուղղությամբ:

Խաչանը տեղում ձգվեց: Այդ կանչը նրան ազատեց երկրնարանից, պիտի գնալ: Ու շրջվեց դարբասով ներս:

— Կա՛ց,— ասաց Ռենանը, ձեռքը գրպանը տանելով:— Ձեռքի խաշուղ կանես, մինչև տեսնենք: Երեկ երկու բեռ խոտ եմ ծախել զրիկեցի Բախշուն... — ու նրա ձեռքին դրեց խոտի վարձը:

— Գալի՛ս են,— ասաց մեկն ու վազելով իջավ ներքին թաղը: Մի երեխա կտուրից կանչեց.

— Անտոնը ձին թամբում է...

Եվ իրարանցումն ընկավ: Սկսեցին կապել, կապկպել, տնետն վազել՝ թելի, պարանի, հաց փոխ առնելու, գրաստենք սարքելու: Մի մայր ծնկներին խփեց, նա մոռացել էր պաշարի մեջ աղ դնելու ու ձիգ էր անում հիշելու, թե որտե՞ղ է աղի պարկը:

Կարմրաքարից դնում էին Շուղանց Իսոյի տղան, Խաչանը, Սիմոն ամու որդին, որի անունը գտնվել էր վերջին ցուցակում և հայրը լացահումած վերադարձել էր տուն, մարդ ուղարկել, որ ոչխարատեղից նրան կանչեն: Գնում էր և Գրիբարի Թևանը, որ Արզումանի հետ էր զինվորությունից վերադարձել, իրեն հետ բերել նախշուն մի ցուցանակ, վրձն գրած՝ «ռաստովսկի պարիկմախեր»: Թևանի միտքը, որպես կետ նպատակ, Կարմրաքարում վարսավիրանոց բաց անեն էր: Պատերազմի լուրը լսելուց, նա անմիջապես կապտել էր ցուցանակը, գործիքների մի մասը, պինգ մեխել և տնեցոց պատվիրել մինչև իր վերադարձը չբացել: Իսկ մնացածը՝ ածելիները, մկրատը, գլուխ խուզելու մեքենան հետը տանում էր: Կանչում էին Գրզլ Պուղուն, ներքի թաղից երեք հոգու, ժամհար Բարսեղի որդուն:

Գյուղի ծայրին, Զրիկից եկող ճանապարհի վրա, երևացին մի քանի ձիավորներ, որոնք քշելով եկան հրապարակը:

— Գալիս ե՛ն,— ձայն տվին հավաքվածները: Լսվեց դմբղմբոց, ապա զուռնի բարակ ձայնը: Երևաց տանուտների սպիտակ ձի՞ն, ապա ուրյադնիկ Երոշը, որից հետո ձիավորների ու հետիոտն մարդկանց խումբ բազմությունը:

— Մարի արջերն եկա՛ն,— ձայն տվեց մի երիտասարդ ու վազեղ դեպի փողոց: Կարմրաքարցիք վերի գյուղացիներին այդ անունով էին կոչում անտառապատ լեռան տակ բնակվելու համար:

— Խալխի սրտին դանակ տաս, արյուն չի կաթի, սրանք էլ հարսանիք են գնում,— ասաց Ռենանը:

Վերի գյուղի եկողները հասան: Բալոր-քարի հրապարակին ու կանգ առան: Այնտեղ արդեն հավաքվել էր մի ուրիշ խումբ, որ ստվարացել

էր հրենա սհուղի աղմուկից: Մի քանի հոգի մոտեցան տանուտների ձիու սանձը բռնելու: Խոնված բազմությունը ճեղքելով, նրան մոտեցավ պատրիկը: Նրանց մոտ կանգնած մարդիկ լսեցին տանուտների հարցը և Անտոնի պատասխանը՝ «սավսեմ հազիր ենք»:

Ինչպես երկու հոտ խառնվում են իրար, երբ մակաղելու են քշում, այնպես էլ վերի գյուղից եկած բազմությունն ու Կարմրաքարի փողոցներում սպասողները իրար անցան: Մեկը փնտրում էր իր բարեկամի որդուն, մյուսը Կարմրաքար դալու առիթից օգտվելով խոսում էր խոտի փի մասին, պատվեր տալիս Կարմրաքարի բարեկամին, երրորդն իր հեռավոր ազգականի տեսությունն էր վազել և շտապ պատմում էր, թե ովքեր են դնում իրենց գյուղից, ինչ են խոսում Զրիկում: Անտոնը ետուզեռ էր, և հրապարակն ու նրան միացած փողոցները սևացել էին ձիավորից ու հետիոտն մարդկանցից, որոնց մի մասը ուղեկցելու էր մինչև քաղաք, մյուս մասը վերադառնալու էր Կարմրաքարից:

Պամոշնիկը մեկ տանուտների հարցին էր պատասխանում, մեկ՝ գլխին կամ առաջին հանդիպած կարմրաքարցուն ուղարկում ուշացողներին շտապեցնելու: Տանուտերը, որի տեսքին առանձին փաստաճեղուքներն էր տալիս երիտասարդ ու կայտառ ձիւն, մանավանդ չէր անհամբերությունից փռնաջնում, ոտով գետինը դոփում և կարմրած ոունդներով օղը ծծում, սանձը կրծոտում,— տանուտերը դիտում էր հավաքված բազմությանը, և ավելի հեռուն՝ կտուրների վրա խումբ-խումբ կանգնած հարս ու աղջիկներին: Նրա վզից կախած պղնձե շղթան ու կլոր նշանը լրացնում էին տեսքի հանդիսավորությունը: Գլխի թեթև շարժումով նա ընդունեց իր գյուղացիների բարևը, որոնցից մի մասը իրենց պագրոն էին համարում մոտենալ և լուռ սեղմել նրա ձեռքը:

— Բա ինչու՞ չես խնում,— հարցրեց Մկրտումը,— զակուսկի կանկիր, մինչի հավաքվելին...

— Ենորհակալ եմ, Մկրտում... Տեսնում ես էլի՞, զուգաս ինչքան է խոնված: Ետ դառնալիս դոնաղդ եմ:

Տեր Նորրեծան հենվել էր եկեղեցու պատին: Նա առավոտյան արարողությունը նոր էր ավարտել, ավելի ճիշտ համառոտել, որովհետև զուռնա սհուղի ձայնին եկեղեցում եղած ձերերն ու պառավները դուրս էին նստել, շտապել տները: Քահանան նայում էր ապակյա աչքերով, նայում էր խոնված բազմությանը, ձիավորներին,— ինչպես գետափի չոր կոճղը էր խոնված բազմությունը, ձիավորներին,— ինչպես գետափի չոր կոճղը էր սրբնթաց հոսանքին: Նրա կողքով շտապ անցնում էին մարդիկ, փոփ սրբնթաց հոսանքին: Նրան, ոմանք գլխով բարև էին տալիս: Երբեք էլ նա չէր նկատում նրան, ոմանք գլխով բարև էին տալիս: Նա զիտեր, որ սպիտակ ձիուն նստածը տանուտներն է... Ահա նրա հետ

խոսում է Մկրտումը. նրա կողքին «Գեղեոնն» է՝ Գողին, մի պարկ շալակած:

— Տերտեր, ճանապարհից հեռու կաց... Մարդը շատ է, կվնասեն,— քահանան շիմացավ թե ով ասաց: Եվ մեքենայաբար քայլերը փոխեց դեպի դիմացի կուռը: Ամբողջ գյուղն էր հավաքվել: Եկել էր նույնիսկ կույր Սային, որ մեջքը Բոլոր-քարին հենած լսում էր խոսակցութունները, կանչը, ձիերի վրնչոցը, մանուկների լացի ձայները, մեկի զիլ ծիծաղը... Ավան ամու կողքին կանգնել էր ուստա Նազարը և փափախով սրբում էր ճակատի քրտինքը: Ավան ամու այգուց նա երկու կողով խնձոր էր բերել և սպասում էր, որ բաժանի: Ուստան երեխայի նման ուրախացել էր և՛ նրա համար, որ գնացողներին Ավան ամին խնձոր է բաժանելու, և՛ նրա, որ ինքն է բերել կողովները:

— Ավան ամի, հենց հազարվել ես, ասես դու էլ ես գնալու,— ասաց Արզումանը, աչքը գցելով նրա կոկիկ ու պինդ կապած տրեխներին:

— Կոտորվելուն մենք ենք, որ շեն տանում,— ասաց ու բաց արեց կողովը.— առաջինը քեզ,— ու բոով լիքը լցրեց նրա գլխարկի մեջ: Խնձորների բաժանելն իրարանցում առաջացրեց: Շատերը մոտեցան: Գզիրն էլ մեկնեց իր գլխարկը, իսկ թելունց պառավը կտուրից կանչեց.

— Հրեն ծառերը կտորատվում են էլի... Հասնելուց կուտես, երեխոց փայլ մի կտրի:— Գզիրը փոշմանած ձեռքը ետ քաշեց, կորավ բազմության մեջ:

— Պա՛ պա՛... Կարմրաքարը զարգացել է՛... էս վախտ կարմիր խնձոր,— ասաց Արզումանը և խնձորները ձեռքին մոտեցավ կտրանք, որի վրա կանգնած էին շաղացպանի կինը, Բարիկոն, Սալբին, իր խորթ մայրը, ու թվաց, թե պարտեզից խնձոր է քաղել, ինչպես մանկության օրերին և ծոցերը լցրած շտապում էր յուրայինների մոտ: Թեկուզ Սալբին գլխաշորը երեսի վրա էր քաշել, բայց և այնպես նրա կարմրիկ Արզումանը նկատեց:

— Տեսեք է՛... Ավան ամին ինչ հոգեպահուստ է ունեցել,— ասաց և խնձորով լի գլխարկը մեկնեց:

— Պահ՛ի, ճանապարհին կծարավես,— ասաց խորթ մայրը:

— Չէ՛, վեր կալեք,— և դարձավ Բարիկոյին,— աղջի, Եգորին չե՛ս տեսել...

— Հրեն է՛, Խաչանի կողքին...— շաղացպանի կինը խնձորների մեկը վերցրեց և մեկնեց Սալբուն: Աղջիկն ամաչելով խնձորը պահեց գոգնոցի տակը:

Գզիրը տեղեկացրեց, որ բոլորը ներկա են: Վասիլը պատրաստ ծրարը հանձնեց: Մկրտումը Գողուն նշան արեց պարկը մոտեցնելու:

— էդ ի՞նչ է, Մկրտում,— ժպտալով հարցրեց գզիրը:

— Հե՛շ, ասում եմ տղերքն ուրախ գնան,— ասաց և մի կապոց, որ վերն էր դրված, մեկնեց տանուտերին, երկրորդը՝ ուրյադնիկ Երշոյին, որ ձիու վրայից կռացել էր պարկի վրա, վիզը ձգել, ասես ուզում էր մինչև տակը տեսնել:

— Իմ հոգուս պարտքը՝ տեղ հասնելուց նաշալնիկին էս մասին ապարտով հայտնեմ,— ասաց տանուտերը, մատներով կապոցը տրնտղելով:

— էհ, սա ի՞նչ է որ,— կեղծ համեստությամբ պատասխանեց Մկրտումը:

Գնացողները մեկ-մեկ մոտենում են, կապոցներն ստանում: Խաչանը ստացած կապոցը դրեց փոքրիկի գրկին: Դիլբարի Թևանը հենց տեղն ու տեղը բաց արեց մրգեղենը, զգուշությամբ լցրեց գրպանը ու թաշկինակը տնտղեց:

— Փեշքեշ ձիու առամին շեն նայի, է՛յ,— ձայն տվավ մեկը: Թևանը թաշկինակը ծալեց ու տեղավորեց պայուսակում:

— Ես էլ ասեմ առավոտ կանուխ դուքանը ինչի էր բաց,— ասաց Թելունց պառավը կողքին կանգնած մի կնոջ,— նա էլ ջան է չէ՛, ասենք մի քիչ շար նախանձ է...

— Հալբաթ նրա սիրտն էլ է մղկտում,— պատասխանեց կինը: Եվ Մկրտումի ընծաների լուրը բերն-բերան տարածվեց:

— Արզումա՛ն, է՛յ, մոտեցի՛,— կանչեց պամոշնիկը: Մկրտումը վերջին կապոցը ձեռքին նայում էր նրան:

— Խաղեխնս կոտր կընկնի, լավ չի՛,— բարձրաձայն ասաց Արզումանը, Տանուտերն ու Մկրտումը իրար երեսի նայեցին: Պամոշնիկը նրան ինչ-որ բան ասաց:

— Դե լա՛վ, բարիշեցե՛ք... Բա էսօր էլ մարդ իրարից խոսով մնա՛,— կանչեց տանուտերը: Մկրտումը մի քայլ արեց:

— Վաշ բաղաբողի, իմ առուն գրա աղբյուրից ջուր չի խմի՛...— ասաց Արզումանը և շրջվեց, բազմության մեջ Եգորին գտնելու:

Տանուտերը Անտոնին մի բան ասաց ու ձին շարժեց: Ուրյադնիկն ու մնացած ձիավորները հետևեցին նրան: Գզիրը սանձից բռնած բերեց Անտոնի ձին:

— Ռոտա ստորոյսա՛,— բղավեց Արզումանը,— դե լաց եղեք, նա էի, գիշի, հոքիր... Սար ու քուրը ձեզ: էլ տեսնելու չենք... Պա, պա՛, պտռշտին ջրի գին է,— ու վազեց կտուրի վրա հավաքված կանանց կողմը, շտապ-շտապ սեղմեց նրանց ձեռքը: Սալբին երեսը շրջեց, արցունք-եները պահելու համար: Եզորը մոտեցավ Արզումանին:

— Արի հետս, բան եմ ասելու...

Իրարանցումը գազաթնակետին հասավ: Կտուրներից իջան ու խումբ-խումբ հավաքվեցին սրա նրա մոտ: Զիալորներն զգուշությամբ առջանցան: Շուղանց Իսոյի հիվանդ կինը, որ անկողնուց վեր էր կացե, ճշաց ու կախվեց որդու վզից: Իսոն արցունքը սրբելով, կնոջ թևից բռնեց:

— Աղջի, երեխի սիրտը խարաբ մի՛ անի, թող պարզամիտ գնա...

— Տերտեր, չեղավ էլի՛ մեր գլխին Ավետարանդ պահես, ասես համո՞զ ես,— ծիծաղելով ասաց Արզումանը և սեղմեց տերտերի ոսկրոս մատները:

Արզումանը կտուրից նայեց սևացած փողոցին: Մեկը հեկեկում էր, գլուխը պատին հենած, մի ուրիշը արցունքը սրբելով հուսադրում էր քնացողին: Խաչանը երեխային գրել էր ուներին և զրուցում էր Ունանի հետ, իսկ կինը նրանից քիչ հեռու կանգնել էր, կապոցը ձեռքին: Փողոցում երևաց ջաղացպանը: Նա աչք էր ածում մեկին. Արզումանը տեսավ նրան ու մոտ վազեց:

— Անդրի ամի՛...— ու ջաղացպանը գրկեց նրան:

— Ես մեռած, դու սաղ... Արզուման, սալամաթ վերադառնաս, գու էլ խեղճ ես...

— Գալու եմ, Անդրի ամի: Հալա ի՛նչ օրեր ենք տեսնելու՞...

Կտուրի վրա խորթ մայրն էր, շաղացպանի կինը, Սալբին: Տերտերի կինը մի խմբից մյուսն էր վազում: Թեևրը լայն բաց արած, իբրև ծեր սագ, լնզլնզալով մոտեցավ Թեղունց պատվին ու փաթաթվեց Արզումանին:

— Մի մոր տղա էլ գու ես, բալա ջան, ինչ ես եթիմի պես կանգնել...— Արզումանը զգացվեց, աչքերը տաքացան:

— Չորտ ետ, խայտառակ են անելու հա՛,— ասաց նա, թևով աչքերը սրբելով:

Պամոշնիկ Անտոնը ձգեց ձիու սանձը: Նրա առաջից գնում էին գնդ զուտնան ու հետիտան մարդկանց խումբը: Եվ թափորը շարժվեց քանգաղ, անկանոն,— շարժվեց, ասես այդ գանգվածն իբր փենդանի մի պոկում էին գլուղի մարմնից, կտրատվում էին հազարավոր թելեր, անասելի ցավ պատճառում թե՛ նրանց, որոնք պաշարը շալակած գնում

էին ու կարտուսվ նայում ծանոթ տեսերին, կտուրի վրա հավաքված աղջիկներին, կանանց, և թե՛ նրանց, որոնք դատապարտված էին մնալու և սպասելու:

— Ավան ամի, է՛հ մնաս բարով,— ասաց Արզումանը:

— Չէ, գնանք... Մինչի լուս խաչերը հետդ կգամ:

— Արզուման, Արզուման...— Ուստա նազարն էր վազում:

— Ուստա ջան...— ու փաթաթվեցին իրար:

— Բարով վերադառնաս,— մրմնջաց ուստան:

— Արխային կաց, մեացողը չեմ:

— Ավան ամի, նամակս քեզ վրա է գալու,— ու քիչ անց ավելացրեց,— աչքդ էս երեխու վրա պահիր, մինչև տեսնենք,— ասաց Արզումանը, ցույց տալով Եզորին: Ավան ամին լուս էր, մտքերի հետ:

Արզումանը Եզորին մի կողմի վրա քաշելով, կամաց ասաց.

— Գլխի ես չէ՞ մեր բանք... Սիմոնի աղջկա հետ...— ու նայեց նրա աչքերին: Եզորը շիկնեց:— Հա, լավ, հո երեխա չես... Դե, վերջը, կարճ ասեմ: Ականջովս է ընկել, որ խազեհներ Գորու համար է ուզում տանի... Էդպես խոսք բացվել է: Հա՛, աղջիկը չի ուզում: Հիմա մեր բանն էլ էսպես գնաց: Չորտ ետ, կարող է գամ, կարող է չէ... Էդ մեր ֆելդ-ֆերեղ Իվան Իվանովիչը կասի... Աղջիկ է էլի, մի քիչ լաց կլինի: Վերջը գլուխը կախ կգնա: Ի՛նչ պիտի ասի: Թե որ չեկա, ուրիշի մեղքի տակին ինչի ընկնեմ: Ես էլ ստիճատ ունեմ, չէ՞... Հա, ինձ հանգամանքները մանրամասն կգրես: Ղուշի թևով էլ է կհասնեմ: Թե չէ, հո չէ...

Եզորի աչքերը արցունքալիցեցին:

— Տղամարդ կաց: Արզումանի գլուխը քարի տակին չի մնա...

Լուս խաչերում կանգ առան: Իրենց արտի կողքին կանգնել էր Խեղունը: Արտը ծովի նման ծփում էր. ծանր հասկերը քսվում էին իրար, հեղցնում տխուր լարի նման:

— Ունանը կհնձի, արի՛,— ասաց Արզումանը:

Եվ անխոս բաժանվեցին: Մնացին միայն նրանք, որոնք մինչև քաղաք պիտի ուզեկցեին:

Ճանապարհը շարունակեցին: Արզումանը ետ նայեց: Կողք-կողքի գնում էին Ավան ամին ու Եզորը... Հեռվում, արտի եզրին կանգնել էր Սալբին, կանգնել էր ու նայում էր: Հանկարծ արտերի միջից դուրս եկավ իրենց պատավ Բողարը ու փաթաթվեց ոտներին:

— Բողար... Բողար, ետ դառ...

Շունը նստեց հետևի ոտների վրա, լեզուն հանեց շոգից: Արզուման

նը մի անգամ էլ սաստեց շանը վերադառնալու... Երևում էին պոռոտի ծայրի տները, եկեղեցին ասես փոսի մեջ էր: Արդումանը ձեռքով արեց աղջկանը և վազեց ընկերներին հասնելու...

Բողարը մի բիշ էլ սպասեց, մինչև Արդումանը փոքրացավ սև կառվի շափ: Ու շունը վերադարձավ:

ՋԵՏՔԱՅԻ ԱՎԵՐՈՒՄԸ

(Մի գլուխ «ԿԱՐՄՐԱՔԱՐ» վեպից)

1

Կես գիշերը— Հեյթալի դիրքերը լռեցին:

Քյուրդ Մուրոն շվարել էր: Նրա հաշվով թշնամին պետք է ուժեղացներ դիմադրությունը, սպասվում էր և հարձակում: Այնինչ թշնամին պատասխանեց լուռությամբ: Նրա «ատրյաղը» երկու վիրավոր էր տվել, որից մեկը բառաչում էր ինչպես մորթվող անասունը, հայհոյում «մեռել, կենդան», հայհոյում ֆելդշեր Եղիշեին, խմբապետին, թշնամուն, աստծուն, անհայտ մարդկանց, հայհոյում էր կատաղած,— կարծես հայհոյանքը մեղմացնում էր ջարդված ազգրի վերքի մրմուռը: Մյուսը Զրիկի ձիավորներից էր: Նա ավելի ծանր էր վիրավորվել, և բարեկամները նրան կիսամեռ վիճակում գիշերը տարել էին գյուղը: Գնդակը ջարդել էր մեջքի ողնաշարը: Իսկ Մուրոն հայհոյել էր նրան.

— Հարիֆ, կոնակդ դարձրի՛ր, հա՛... Հախն է քեզ, իմանա՞րդ...

Այն կողմի դիրքերը լռել էին, բայց այս կողմից սարսափից և անքնությունից ջղախուցած զինվորները անկարգ կրակում էին: Նրանք սողալով, ոմանք թփերի և քարերի հետևը թաքնվելով, կամաց-կամաց բարձրանում էին լեռը: Կիսամթնում երևաց Բեղլու Վարդազարի սպիտակ ձին: Երեք ձիավորի հետ նա սլացավ լեռան գագաթը: Մլացավ գուռալով, աղմկելով:

Քյուրդ Մուրոն խուլ մոնչաց, երբ կիսամթնում տեսավ ձին ու ձիավորը: Եվ մոնչալով երեսը շոշեց: Նա հիշեց խնջույքը, Բեղլու Վարդազարի ծանր խոսքը: Հիմա էլ նա է գրավում դիրքերը: Այդ միտքը ծանր մտրակի նման շառաչեց: Եվ նա ցանկացավ, որ թշնամու դիրքերից կրակեն, ձին ու ձիավորը գլորվեն: Բայց դիրքերը լուռ էին, ինչպես քարերը: Սպիտակ ձիավորը լեռան գագաթին կանգնել էր ու հեռագիտակով նայում էր դեպի ներքև:

Բացվում էր գարնանամուտի առավոտը...

Չյունը դիմացի սարալանջին սպիտակին էր տալիս, բայց ձորերն ու գետահովիտները սև էին: Չյունի ջրերը քշքշալով գնում էին, ցող շարում կանաչի վրա: Անտառը սևին էր տալիս: Լուսաբացի խաղաղ օդը ձեղքեց ճնճղուկների երամը, որ քարերի վրա պտույտ արեց, ապա թռավ դեպի անտառը: Ծատ հեռվում սպիտակ ծուխ էր բարձրանում: Կաղնուտի ձորում խոզարածները զարթնել էին:

Քյուրդ Մուրոյի «ատրյաղը» հեիհև բարձրանում էր լեռը... Կարճ արահետներով գնում էին հետիոտն զինվորները: Այստեղ, այնտեղ թփերի հետևը գլուխները հանում էին գյուղացիները: Նրանցից մի քանիսը զենքով էին, իսկ մեծ մասն ուներ շամփուրներ, երկաթի լինգեր, ջուալներ, պարկեր: Ամբողջ գիշերը նրանց խումբը ցրտից դողալով սպասել էր կովի ելքին:

Երբ ձիավորները ետ էին նահանջել, այդ խումբը, որ մեծ մասամբ Զրիկից էր, ավելի շուտ էր վերադարձել գյուղը և լեղապատառ պատմել, որ թուրքերը լուսադեմին կմտնեն գյուղը: Աղմուկ իրարանցում անելուց հետո, նրանք նորից էին վերադարձել դիրքերը, տաքացել խարույկների մոտ, ոմանք հսկել էին ձիերը, ձիերի սոսորակից ծածուկ գողացել էին գաթի, լցրել գրպանները:

Քաղցածների այդ խումբը, ազոավների երամի նման, սպասում էր, որ հաղթողը մաշկի ոռսը, որպեսզի իրենք ուտեն լեշը: Նրանք կրակահոխ հետևում էին զինվորներին. նրանցից յուրաքանչյուրն իր մտքում վազուց որոշել էր, թե ու՞մ տունը պիտի գնա, ի՞նչ կա այն տանը, որտեղ թաքցրած կլինեն տնամեջը:

Երբ լեռան գագաթից Քյուրդ Մուրոն բղավեց. «Հառա՛ջ, տղերք» և կեռ թուրք շողշողաց լուսադեմին, ձիավորները սուսերամերկ սլացան դեպի գյուղը, թռան իրեն բազենքը,— սակայն ոչ մի տան, ոչ մի պատուհանի և ոչ մի թփի հետևից գնդակ չարձակվեց: Գյուղը լուռ էր, և միայն ներս խուժողների ձիերի սմբակներն էին դոփում սառած գետնին:

Գեռ մութը շրնկած, Զեյթան քոշել էր:

Նրանք վաղուց էին սպասում այդ հարձակմանը: Չուլախ Պուզանի բերած տեղեկությունը միայն հաստատել էր նրանց սպասելիքը: Նույն գիշեր առանց աղմուկի, քոշ ու քարվանդով գյուղը ճանապարհ էր ընկել դեպի լեռնաշղթայի ձյունոտ գագաթը, այնտեղից իջնելու տաք հարթալայթը:

Գյուղում մնացել էին 20—30 ձիավորներ, որոնց անակնկալ դիմադրությունը չփոթեցրել էր Քյուրդ Մուրոյին և հնարավորություն տվել,

որ ժողովարարը բավական հետանա: Կես գիշերին ձիավորները մեկ-մեկ իջել էին գործերից, վերջին անգամ նայել իրենց տուն ու տեղին և ինչպես գիշերահավեր, անաղմուկ ասպանդակել ձիերը, առաջ անցած քոչին հասնելու:

Լուսադեմին «ատրյադը» մտավ Զեյթա:

Նրանից առաջ հասել էին շամփուրավորները, լինգավորները, պարկավորները: Հետնապահ ձիավորները դեռ գլուզը չէին մտել, երբ նրանցից առաջ անցավ կանանց մի խումբ: Կարծես քարերի տակից էին բուսել, այնպես անակնկալ էր նրանց երևալը: Նրանք էլ էին շտապում դեպի Զեյթա, դեպի թալան:

Առաջին մտնողները սկսեցին բաց անել տների փակ դռները... Մի տեղ օջախը դեռ տաք էր ու մխում էր վերջին աթարը: Օջախի մոտ ընկած էր մեծ կաթսան, որ չէին կարողացել տանել: Ինչքան խոսք ու զրույց էր եղել այդ կաթսայի շուրջը: Ով գիտի տան պատավ Վանանի ի՞նչ արտասուքով է բաժանվել սևացած պղնձից:

Մի ուրիշ տան դուռը պատել էին քարով: Նոր ծեփը մատնում էր գիշերվա աշխատանքը: Մեկի մարագը կրնկահան բաց էր, կարծես տեղը դիտմամբ էր բաց թողել, որ թալանողը միջի հարդն ու խոտը տանի: Ե նրա աչքը շտենի ընկուզե փայտից քանդակած դուռը, որի նախշերը հին էին, շատ հին:

Կար մի գոմ, որ մաքուր ավլած էր, ճրագն իր տեղը, ցախավելն ու թիակը կողք-կողքի: Նույնիսկ հորթանոցում ամանի մեջ ջուր կար: Կարծես հիմա հորթերը սառից պիտի գային: Մի ուրիշ տան ոչինչ չկար սրբել, տարել էին, բացի երեխայի պատռուկած արեխները, որ շարտել էին տան մեջտեղը:

Կես ժամ շանցած սկզվեց թալանը: Ինչքան բացվում էր օրը, այնքան Զեյթայի փողոցներում ավելի շատ էին երևում մարդ ու կին, ձի ձիավոր: Հարյուրավոր բազմություն մեջ, եթե գոնե մի երեխա լինի, կարելի էր կարծել, որ քոչողը հենց նրանք են, որոնք փողոցում, տան բակերում կիսում էին այն ամենը, ինչ մոռացել էին, կամ շտապելուց թողել տան տերերը՝ պղինձ, կարասի, աբուր, ուրագ, մորթի, պանիր, մաշված կարպետ, ալյուր, ցորեն: Ախարատները բաժանվել էին փոքր բաժնիկ խմբերի: Խմբի մի անձամբ հսկում էր, մյուսները հավաքում է դաբառում էին ինչ ձեռք էր ընկնում:

Արդեն սրբել էին տնամեջը: Վերջին եկողները վերցնում էին այն, ինչ առաջինները չէին վերցրել՝ անարժեք լինելու պատճառով: Ակվիլ էր գետնի փոսիկները: Գործի էին լինելու, շամփուրները, սրածայր փայ-

տեր: Մակծկում, խփում էին գետնին, պատերին: Գետնի դրմբոցից գոնում էին թաքցրած իրերի տեղը, հորի բերանները և ազահուժյամբ փորում գետնի, ոմանք մատներով, ինչպես մարդագայլը գերեզմանը: Նրոնք էին հորի բերանի քարերը և դուրս հանում փախածների պահապար:

Երիտասարդ արևը ամպերի հետևից երեսը հանել և կամաց լողում էր սառը ոլորտում: Նրա շողերը խաղում էին սվինների հետ: շողշողում էին շամփուրները, պղինձները, սամովարները, սակայն այդ օրը բազմաթյունից ոչ մեկը գլուխը վեր չհանեց և առևին չնայեց: Կարծես ամառում էին և վախենում, որ արևը կծակվեր նրանց աչքերը և աչքերի ազահուժյունը:

Անցել էին վերջին արագին: Հանում էին դռները, երկաթե փենջարաները, տան գերաններն ու սյուները: Փոշի էր բարձրանում փլվող տներից, աղմուկով նստում էին կտուրները, պատերը ճեղք էին տալիս, ինչպես երկրաշարժի ժամանակ: Ահա մի տեղից պատից քար ընկավ, շարժեց մեկի գլուխը, որ գարու ծանր պարկը շալակին անցնում էր պատի տակով, հետևից նրա կինը՝ բեռնավորված ջուլ ու փալատով:

Կինը ճշաց, սակայն ոչ ոք չվազեց նրա ճիշին: Արյունը խառնվեց հողին: Կինը ետ քաշեց մարդու դիակը, ուղղեց գարու պարկը: Մի քիչ քարի է թափել: Եվ լալիս է, սզում մարդու համար, և՛ գարին բոռվածում պարկը: Նա մղկտում է աղիողորմ, անիծում է իր դառը վիճակը, աղբատուժյունը, տանը թողած երեխաների անունները մեկ-մեկ հիշում, սակայն աչքը գարու պարկին է, որ ծածկել է փալասներով, որպեսզի ոչ ոք չտեսնի: Կինը արցունքն աչքերին նայում է փողոցով արագ անցնող բռնակառն ու դատարկ մարդկանց, խնդրում, աղաչում է, բայց մարդիկ զբաղված են: Մեկը միայն մոտեցավ և շտապ խոստացավ իր ձին բերելու, դիակը գլուզը տանելու:

Մի տեղ մոռացել էին շունը: Հավատարիմ պահապանը հաշել էր առաջին ոտնաձայնից: Շղթան արդեն սեղմում էր կոկորդը, բայց կենդանին դեռ խզացնում էր և ջղաձգությամբ առաջ նետում իրեն, բերանը բաց ու խուփ անում նրանց վրա, որոնք շան հաշոցին ոչ մի ուշադրություն չդարձնելով երկաթյա լինգերով սեղմում էին գերանը՝ դուռը պոկելու համար:

Զեյթայի հրապարակում «ատրյադի» ձիերն ախորժակով խժում էին թարանած խոտը: Ինքը՝ Քյուրդ Մուրոն մուշտակի մեջ փաթափված մեկուկ էր փալու վրա և ննջում էր՝ գլուխը խուրձին: Զինավորներից մի քանիսը հսկում էին ձիերը, մյուսները խառնվել էին շամփուրավորներին:

և հաղթողի իրավունքով պահանջում ու խլում էին ավարի թանկագինը: Փյուզի շրջակայքն ուղարկած հետախույզները տեղեկութուն էին բերել, որ թշնամու հետքը չի երևում: Նրանք ձյունի վրա տեսել էին նախիրի ոտնատեղ, բայց որովհետև ոտնատեղերի շատը ձյունով ծածկված էր, նրանք հավաստիացնում էին, որ Ձեյթան գաղթել է երեք օր առաջ:

Քյուրդ Մուրոն նոր էր աչքը փակել, երբ Անդրսակից եկած ձիավորը նրան զարթնեցրեց և հայտնեց, որ պորուչիկ Կրասիլնիկովը շուտով պիտի գա, և որ նա կարգադրել է գյուղի շորս կողմը պոստեր դնելու, որ պեսզի առանց «մեր գիտության» ոչինչ դուրս չտարվի:

— Հարի՛Ֆ, պոստը մարդ կա՞, — բղավեց խմբագետը:

— Սերոբը հոն է, — պատասխանեց մի ձայն:

— Է լա՛վ, — և մուշտակը նորից քաշեց գլուխը:

Իսկ նոր եկած ձիավորը իր քրտնած ձիու սանձը մեկնեց պահակին ու շտապեց դեպի տները:

Օրը կեսօր չէր եղել, իսկ Ձեյթան մրջնոցի նման սևացել էր մարդկանց ու կանանց բազմությունից: Ամեն կողմից թափվել էին: Կարմրաքարից եկել էին Չուլախ Պուղանը, Մուքելի տղան, Միմոնը... Պուղանը Ավան ամու հանձնարարությունը եկել էր տեսնելու, թե ի՞նչ է կատարվում:

Նա աչքին չէր հավատում: Երեկ առավոտ նա այս գյուղումն էր Այս պատին մի «կաճե» թրիք էր ծեփում: Ահա դեռ մատների հետը մնում է: Այն ցախի մոտ ինքը խոսեց Քեմուրի հետ: Ահա տաշեղների կտորները. Քեմուրը տաշում էր արորի սեպը: Օրերը տաքանում են, վաղը մյուս օրը պիտի վար սկսվի:

Եվ նա զարմացած դռնեղուտ էր ընկնում, խառնվում բազմությանը և դժվարանում էր ճանաչել ծանոթ տները: Նա մեկին հանդիմանեց, բայց մի ուրիշը հրեց նրան և մինչև ոտքի կկանգնեք, երկու զինվոր հռհուրդ անցան նրա կողքով:

— Քախ թոփա՞լն էլ թալնի եկած է...

Չուլախը բղավեց, որ ինքը թալանի չի եկել, բայց փլվող տան ադմուկը խլացրեց նրա ձայնը: Նա կաղեկաղ իջավ Քեմուրի այգին: Նոր տունկիների բողբոջները սևացել, ուռել էին: Մի տեղ բացվել էին առաջին մուգ-կանաչ տերևները: Պատից քար էր ընկել. երեխանցել էին պտուի վրայով: Չուլախը պատի քարերը բարձրացրեց, դրեց տեղը:

Ու հոգնած նստեց պատի տակ: Արևը ջերմացնում էր քարերը: Բանջարի ծիւրերը աղվամազի նման սպիտակին էին տալիս: Կարմիր բողբոջները խոնվել էին քարերի տակ: Նրանք զուգավորվում էին. ծանրած էգերը տաք ավազի մեջ թաղվում էին և շարում սպիտակ ձվերը: Քարի արանքից մի խեղզ գլուխը հանեց, շարժեց լեզուն և համոզվելով, որ վտանգ չկա, պառկեց քարե անկողնու վրա:

Ձեյթալի իրարանցման աղմուկը հասնում էր նրան: Պորուչիկ Կրասիլնիկովը մի քանի սպաների հետ եկել էր: Նրանց միացել էին Անդրսակի Կուլյան, կոմիսար Տիգրանը և մի քանիսնեք, որոնք սեփական ձիեր ունեին, ձիեր, որոնք միշտ կերել էին ուրիշի քրտինքի գարին, ինչպես տերերն՝ ուրիշի վաստակը: Պորտաբույժ այդ մարդիկ թղթի վրա հիշատակվում էին զանազան պաշտոններում, սակայն մեծ մասը թրև էր գալիս սպաների հետ և կազմում էր, ինչպես Կուլյան էր անվանել, «ոսկե կամպանիան», որի թագուհին Իվան բեյի աղջիկն էր:

Այդ «ոսկե կամպանիային» մի քանի հոգի միացել էին «ինտերեսի» համար: Նրանք կռիվ չէին տեսել, եկել էին տեսնելու «ահեղ պատերազմ»: Սակայն գյուղ մտնելու առաջին ժամից հիասթափվեցին և շտեսան թըշնամուց գեղված բանակներ, թնդանոթներ, դիակի կույտեր: Սպանվել էր միայն մեկը և այն էլ ավարի ժամանակ: Սպանել էր ոչ թե թշնամու զնակը, այլ պատից ընկած քարը: Մի քանիսն էլ նույն եղանակով ջարդել էին թևերը: Մեկի ոտքն էր վնասվել. հորի բերանի սալ քարը ճեղքել էր թաթը: Իսկ թշնամին չէր թողել ոչ մի դիակ, ոչ մի վիրավոր: Եթե ունեցել էին սպանվածներ, կամ տարել էին դիակը, կամ հողին հանձնել:

Եկել էր պորուչիկը և բերնեբերան տարածվել էր նրա հրամանը՝ ոչ ոքի առանց խուզարկության գյուղից բաց չթողնելու: Փյուզի զանազան ճանապարհներից արդեն հսկում էին ձիավորները: Փյուզացիներից նրանք, որոնք ճողոպրել էին մինչև այդ, մնացողների նախանձի առարկան էին: Նրանք իրար ականջի փսփոտում էին այն կածանները, որոնցով կարելի էր ավարն անցկացնել ձիավորների օղակից: Սակայն ժամ առ ժամ շղթան պինդ էր սեղմվում: Մի քանիսը ետ էին վերադարձել: Պատվում էին լուրեր, որ պորուչիկը ձիավորներ է ուղարկել Զրիկ և մյուս գյուղերը՝ տները խուզարկելու:

Իսկ հրապարակում մի սպա և «ոսկե կամպանիա» Կուլյան ցուցակագրում էին գորգերը, նախիրը, ցորենը, գարին. որ ամբոխը հանել էր դոմբրից, հորերից, տներից: Այդ ամենը պետք է գնար «բանակի պետերին», ինչպես հայտարարել էր պորուչիկը: Մուրոյի ձիավորներից մի քանիսն առաջ էին անում հավաքած տավարը դեպի Անդրսակ:

Գյուղի հրապարակը նմանվում էր արեւելյան փառնեխուուն շուկայի: Մի տեղ պղինձն էր դարսված, մեծ ու փոքր կաթսաները, կծերը, դորակները, մյուս տեղը՝ զանազան ձևի հին ու նոր սամովարներ, երբորդ տեղը՝ մթերքը: Կարպետների և գորգերի փոշին երկինք էր բարձրանում և խառնվում փված տների փոշուն, ձիավորների խարույկների ծխին ու կրակին, որի շուրջը մոռթած անասունների արնոտ կաշի էր, փորտոփ, բաց ու սառած աչքերով եզան գլուխներ, որոնց երակներից դեռ կաթկթով էր արյունը:

Ձինվորները մտրակի կոթով, գոռալով, հայհոյելով ավերակ դարձած տների թաքստոցներից և փողոցներից դեպի հրապարակն էին քշում մարդկանց ու կանանց: Ոմանք շտապում էին թաքցնելու այն, ինչ քի առաջ ահագին դժվարությամբ հանել էին թաքստոցից, ոմանք թողնում էին շալակը և մտածում գլուխն ազատելու:

Կանայք կախվում էին ձիերի վզից, մտրակներից, ասպանդակների երկաթից և նրանցից յուրաքանչյուրը աղիտղորմ ձայնով, լալով աղաչում էր «մի կոտ գարի», «մի բուռ աղ», «էս պարկ ալյուրը տանք մնացած եթիմնեղի համար...»: Իսկ ձիավորները քշում էին մտրակով, ձիու գլխով, քշում էին ինչպես տեղին անվարժ նախիրը: Ոմանց հաշողվում էր ճողոպրել և՛ ծոր-ծոր քարերով, և՛ քարափներով. երեսն ու ձեռքերը արյունավա մայրը ազատվելով թակարդից, վիրավոր գազանի նման շտապում էր որջը, քաղցից բերանը բաց արած ձաղուկների մոտ:

Փողոցների ազմուկը հրապարակում ավելի էր սաստկանում: Մեկը գոռում էր, որ պարանը տնից է բերել, մյուսը հարեանին վկայության էր կանչում, թե գարու տեղը՝ Իմրանը իրեն տալացուկ է երկու սոմար և ես միայն մի սոմար է վերցրել, երրորդը խնդրում էր ամեն ինչ առնել, միայն կոռճ աղը թողնել նոր ծնած կովի համար:

Մակայն ոչ ոք ուշադրություն չէր դարձնում ո՛չ նրանց բողբոջին, ո՛չ աղբոսին: Ամբոխի մեջ արդեն լսվում էին ինքնանախատիների և անեծքի կանչեր:

— Հարեանի մայր հարամ է, ա՛յ խալխ...

— Մրա տերը հրեն սարումը սառչում է... — Եվ կանչողը ձեռք մեկնում էր կարպետին, որի մի ծայրից փաշում էր վինվորը, մյուսից՝ նոր տերը:

Ճշմարիտ էր կանչում մարդը:

Մեյր ըոպկեթն, երբ գյուղի հրապարակում խլխլում էին տներից հովաքած գույքը, տերերի առաջապահ մասը մեծ տանջանքով, բուք ու բորանը ճեղքելով արդեն անցել էր լեռնաշղթան, նրա ձյունոտ լանջերին

թորեկով բուքից խոնված և մոլորված անասուններին: Ինչ գնդակը չէր արել, կատարում էր դառնաշունչ բորանը: Երբ հալչեր ձյունը, լեռնաշղթայի կատարին բացվեց կանաչը, պիտի երևային ձյունում խեղդված և գայլերից հոշոտված անասունների մարմարի նման սառն ու մաքուր սկորները:

Չորախն աղմուկի վրա գեաց դեպի հրապարակը:

— Թխա՛յ, ձեռ տեղե՛ է, — ասաց նա: Երբ ձիավորը բռունցքով խփեց Մարգիի տղային, Պուղանը ուրախացած վեր-վեր թռավ:

— Հրեդ հա՛, մե՛կ էլ, մե՛կ էլ, մե՛կ էլ... — Չուխը բազմության մեջ տեսավ Շինականին:

— Դո՛ւ էլ, — ու հանդիմանանքով նայեց նրան:

— Պուղան, էս մեր Փահրատի եթիմների պղինձեղենն է... Հավաքել եմ շան փայ շիեթի Հիմի ճամփեքը պաստավոյ են դրել:

Պուղանը նրան գլխով արեց: Շինականը կապոցը շալակից իջեցրեց: Տեղի հետևով նրանք հասան Թեմուրի պարտեզը:

— Դի՛ր տափին... — Ու թռավ ցանկապատից, ցախերը հանեց, ծածկեց բնոր:

— Պուղան, ախր մեշուկը ի՛մն էր, — տրտնչաց Շինականը:

— Հետով, — խեղդված ասաց Չուխը, — թող հանդարտվի, հետով: Շինականը չոր ցախերի մի կույտ ավելացրեց վրան, ապա քար շարեց, որ քամին չցրեր ցախերի կույտը: Ու բաժանվեցին. Շինականը դեպի գյուղը, Պուղանը՝ Կաղնուտի ձորը:

Մարցա ջուրը Ջեյթայի տակովն է անցնում: Բարակ առուներ են, որոնք ջրում են գյուղի բուստաններն ու շիմանները, ապա աստիճանաբար միտխառնվում, միախառնվում Ջեյթայի ձորով եկող ջրին և Կարմրաքարին չհասած՝ անունն ու գույնը փոխում, մտնում Կարմրաքարի հանդերը, իրեն Մարցա ջուր:

Չուխը ջրի ափով իջնում էր ինքն իր մտքի հետ: Ինչպես ալիքն ալիքին հրում էր ու չէր հասնում, այնպես էլ նրա մտքերը վազում էին, մեկը չորացած, մյուսն էր ծնվում: Այդ խեղճ մաղղ մտածում էր լսածի և տեսածի մասին: Կարծես այդ օրը Ջեյթայում մեացել էր մի ուրիշ Չուխի և նրա փոխարեն վերադառնում էր ծանր խոհերով մարդը, որ ելք էր փնտրում, հազար դուռ է բախում ու ելքը չի գտնում:

Սա հիշում էր գյուղի խաղաղ առօրյան, ապա պղտորվելը: Երաջ

տանու ձեռով դեմ էին արել իրար: Ու գագաթից, ճիշտ խարույկի վրա, կախել էին գոմեշի շափ խոշոր տավարի մարմինը, որ թեժ կրակից կարմրելու և ճարպ էր կաթկթում: Դրանից բոցն ավելի էր բռնկվում:

Մրեկոյան դեմ, երբ Զեյթան դատարկվել էր, հանկարծ ձիավորները նկատել էին ամենի ցուլը, որ սարից պոկված ժայռի նման, գլորվում էր դեպի գլուղը: Նա մոնչում էր կատաղությամբ, փորփրում ձյունը, ամուր ճակատը խփում քարին, սառած գետնին, կարծես ուզում էր գլուխը ջարդել:

Ձիավորներից մեկն ասել էր, որ ցուլը կատաղած է: Մի քանիսն իրոք հավատացել էին և մոտեցել ձիերին: Եթե ցուլը հարձակվեր, նրանք պատրաստվում էին ձիերը հեծնելու: Իսկ ցուլը գլուղի վերևը մոնչացել էր, թաց ունգով հոտոտել գարնանամուտի գետինը: Նախիրի՞ց էր ետ ընկել, ճանապարհն էր մոլորել, թե՞ երնջի հոտ էր ընկել թթովն ու վերադարձել էր գլուղ:

Աղբյուրից ցուլը կուշտ ջուր խմեց, հանգստացավ: Ձիավորներից մի քանիսը մոտեցան, ցուլն արնոտ աչքերով նայեց նրանց: Նրա ճակատից արյուն էր կաթում, կաշին քերծել էր: Ցուլը նայեց, ապա հաղթ վիզը կեռացրեց, գլուխը խոնարհեց, որպեսզի ուսույուն գործի: Այդ վայրկյանին երկու հրացան միասին պայթեցին ու նա ուսույունի փոխարեն գլուղից մահվան ցնցումներով: Մեկի լայն թուրը վերջ տվեց նրա ցնցումներին ու խոոցին:

Այդ ցուլն էին կախել գերանների ետտանուց: Նրա մարմինը կարմրել էր և կրակի ցուլքը խաղում էր մկանների ողորկ խուրձերի վրա: Եթե զինվորների շողշողուն գենքերը չլինեին, հեռվից դիտողը կկարծեր, թե քարե դարի մարդիկ են հավաքվել խարույկի շուրջը և կրակի վրա կախել մի կենդանի, որից այժմ մնում են բրածո ոսկորներ:

Գիշերը թանձրանում էր: Խարույկի լույսը հասնում էր մինչև դիմացի անտառը: Լուռ տները չէին նմանվում ավերակների, որովհետև ոչ նրանց պատերն էին մամուտ, ոչ սևացած գերաններն էին երևում: Կարծես համր տների տակ քնել էր հողի մշակների հոգնած բազմությունը, քնել էր վարուցանքից հետո ու գիշերապահների կրակն էր հսկում նրանց անվրդով քունը:

Սարից քամի իջավ: Քամին խաղում էր կրակի ալիքների հետ, մերթ կրակը պառկում էր գետնի վրա, մերթ ծուլ լինում մինչև ետտանու գագաթը: Ցուլը ոսկեզույն էր դառնում: Կրակի շուրջը հավաքվածների ստվերը ձգվում էր մինչև անտառը:

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՒՈՎՅԱՆ

(Հատվածներ անավարտ վեպից)

ԴԵՊԻ ԼՅԱՌՆ ՄԱՍԻՍ

Դեմը դաշտն էր անծայր, իսկ հեռվում — Մասիսը:
Լյանն այն վսեմ, որի ճանապարհով մի օր
Բարձրացել էր ինքը և սառցանիստ
Գեղեցկությամբ գերվել:

Ե. ՉԱՐԵՏ

1

Ընթրիքից հետո պրոֆեսորը երիտասարդին դիմելով, ասաց.

— Այժմ անցնենք մեր գործին, սիրելի դիակոնուս...

Նրանք քաշվեցին պրոֆեսորի առանձնարանը: «Գործը» — ծխելն էր և այն զվարճալի գրույցը, որ ծխելու հետ սկսում էր պրոֆեսոր Պարրուր: Բայց այս անգամ նա սենյակի դուռը ամուր փակեց և երբ ընկղզվեց վոլտերյան բազկաթոռի մեջ, շասաց, ինչպես միշտ. «Մուխ է և ունայնություն աշխարհը, Սաադի, — եթե քեզ ճիշտ է թարգմանել իմ «Libing»-ը»: Նա վառեց պարսկական կեռասյա կոթով ծխամորճը: Մամը լուսավորում էր նրա դեմքի կեսը և երբ կապույտ ծուխը բարձրանում էր այդ լուսավոր կողմով, թվում էր, թե շարժվում էին նրա գանգուրները՝ ծխագույն և ծխի նման ոլորուն:

Երիտասարդը նստել էր մոմակալի մոտ, ձեռքին՝ ունելին, որ այն ժամանակ անբաժան էր մոմի ճրագից, որովհետև նրանով էին սարքում ճրագի պատրույզը: Երբեմն ծխի միջից երիտասարդին էր նայում մի այրող աչք: Դիակոնուսը հիշեց, որ այդ երեկո պրոֆեսորը տուն եկավ մտազբաղ և մոռյալ: Նա ամբողջ օրը եղել էր Դոմբերգի գագաթին՝ նոր մտազդիտարանում... Երբ տուն եկավ, նույնիսկ չզգվեց երեխաներին: Երիտասարդը ծուխի մեջ որոնեց նրա աչքը: Բայց աչքը փակ էր... Գուցե ցավում է մի տեղը: Երիտասարդը կարեկցանքով նայեց այդ փոքրիկ

* Դիակոնուս — զպիր, սարկավագ:

— Ես խնդրում եմ ներքե իմ հայրենակիցներին... Այդ գործի մեջ խառն է մեկի շար ձեռքը և իմ հայրենակիցները իրենք էլ չեն իմացել, թե ինչ են արել: Իսկ ես գիտեմ, թե ինչքան են ծեծել այն խեղճ գյուղացիներին, մինչև նրանց ստիպել են ետ առնել առաջին երդումը... Բայց ե՛ս եմ վկան, ե՛ս,— և նա ուժգին զարկեց կրծքին: Նրա շինչ աչքերի մեջ արցունքի շղարշի միջից ցլանում էր անխարդախ կիրթը,— պատվո խոսք եմ տալիս և երդվում եմ իմ կյանքով...

— Ես քանի անգամ խնդրել եմ, որ այդպիսի բաներ չասեք,— ընդհատեց պրոֆեսորը այն տոնով, որով նրան սովորեցնում էր պարզ հրեշնչել բառերը, բարձրաձայն ընթերցել, արտահայտությունների մեջ զուպ լինել, շերտվել ո՛չ աստծո անվամբ և ո՛չ ազնիվ խոսքով, այլ ասել միայն ճշմարիտը,— մի խոսքով դաստիարակի այն սառն եղանակով, որով գերմանացի պրոֆեսորն անխնա մկրատում էր արևելցու հախուռն բնավորությունը, համարելով այն հետևանք ասիական խավար միջավայրի Գիակոնուսն ուրիշ ժամանակ դպրոցականի նման կուղղեր իր սխալը բայց այս անգամ նա ազատ արձակեց սանձերը.

— Ես կապացուցեմ, որ մենք բարձրացել ենք գագաթը, որ նրանք անազնիվ ստախոսներ են... Եվ ես կիմանամ, թե ո՛վ է ստիպել գյուղացիներին ուրանալ իրենց երդումը... Միայն խնդրում եմ ներքե նրանց, իմ խեղճ, իմ անբան հայրենակիցներին...

Եվ զսպված արցունքները ցայտեցին: Նա հեկեկաց, ինչպես երեխան, որ լսում է մոր հանդիմանությունը, բայց հանկարծ բաց է ընկնում մի շիղ, մի մկան, ամեն ինչ խառնվում է և այլևս չի կարողանում արցունքները պահել...

2

Նա վերադարձավ յուր սենյակը... Փորձեց դասերը պատրաստել և շկարողացավ: Ապա վերցրեց մատիտը, որպեսզի շարունակի գծագրել ան քարտեզը, որի վրա նա աշխատում էր մեծ եռանդով, միտ դնելով իր գծած հայերեն առաջին քարտեզը («աշխարհացույցը»— ինչպես ծաղկանկարել էր արդեն), որ նվիրել էր բարերարին՝ Ֆրիդրիխ Պարրտին,— բայց աչքն ընկավ այն վանդակին, որտեղ պիտի գծագրեր Մասիոները, և մատիտը մի կողմ դրեց: Նա ընդոստ վեր թռավ տեղից և գնաց դեպի անկյունը:

Այնտեղ «մյուլդրին» էր, գույնզգույն թիթեղներով զարդարված սքեդուկը, որ Միրզամի հետ միասին գնել էին Երևանի շարսու-բազարում:

Պողպեթի լեզվակը մի քանի անգամ զրնգաց տխուր և երկար ելևէջով, ինչպես թառի սիմը: Մյուլդրին բացվեց և բարձրացավ մի հնամենի բուլբուլ: Այդ սնդուկի մեջ էր այն ամենը, ինչ նրան մնացել էր իրև հիշատակ հետո հայրենիքից. քաթանն մի շապիկ, որ ուներ մոխրաչորի և աթարի ծառի հատ, մի զույգ շորաբ, որ պաշարի հետ դրել էր հորաքույրը՝ Օսան Խաթունը, մի քանի գրքեր, որոնցից խոնավության և խունկի հոտ էր բախում, ճրագուրի մոմեր, խունկ, որ հետն առել էր օտար աշխարհում ծիսելու, երբ բոլորեին հայրենի տոները: Կարմիր աղլուխի մեջ փաթաթված էր ուրարը, սարկավագի շիրբուն և սաղրի քոշերը, որոնցով տնից ճանապարհ էր ընկել:

Նա մի կողմ հոց այդ բոլորը և սնդուկից հանեց սև դեյթանով կապած թղթերը: Քանդեց դեյթանը և աչքին ընկան զմուռսով կնքած ծրարներ, մի դեղնած թուղթ, որի վրա հազիվ ընթերցվում էին կիստորի թանաքով գրած առաջին ընդօրինակումը Մաշտոցից: Կար և սպիտակ թերթ, որի եզերքը ծաղկագրել էր վանքի դիվանատան ծաղկարարը: Թղթի այդ կապոցից նա վերցրեց մի տետր և մոտեցավ սեղանին:

Այդ տետրի մեջ էին նրա ճանապարհորդական տպավորությունները, գրված թարմ հետքերով... Նա ազահուստով սկսեց կարդալ... Յուրաքանչյուր տողը, նույնիսկ ջնջված բառերը նրա հիշողության մեջ արթնացնում էին ամբողջ ուղևորությունը՝ Մսրա դռներից մինչև լեռան գագաթը...

«Մխայր, խաղայր հորձանուտն Արաքս... Որդն կարմիր, ըստ տաճկաց հնշմանն՝ ղըրմըզ»: Գիտում էին Արաքսի կոհակները, երբ Շիմանը նրանց կանչեց: Նրանք տեսան նախիրը, որ գալիս էր, և բոլորի կճղակները, մոռութները, նույնիսկ մի քանիսի կուրծը, և փորի տակ ներկված էին կարմիր, ալ կարմիր. կարծես կովերն անցել էին արյան լճերով: Քուրք նախրապանը հասկացրեց օտարականներին, որ նախիրն անցել է սեղ խոտերի միջով, որոնց վրա վխտում են կարմիր որդերը: Նրանք քնացին նախրապանի ցույց տված կողմը և տեսան որդերով ներկված գաշտը, կարծես իրարից հեռու մորթել էին մատաղացու եզներ և արլունը շաղ տվել խոտերի վրա: Բեհազել Ֆոն Աղլերսկոնը, որ հավաքում էր զանազան տեսակի խոտեր, զեռուններ և քարեր, մի փոքրիկ սքրովակ լցրեց այդ որդերով, իսկ Արմենիներն ասաց, որ երբ վերադառնան, նա վանքում ցույց կտա մի ձերուհու, որն այդ որդերից պատրաստում էր ոսկեգույն կարմիր:

— Այս երկտասարդը մեզ շատ օգտակար պիտի լինի,— գերմաներեն ասաց պրոֆեսորը: Իսկ ինքն ամաչեց, ենթադրելով, որ նրանց

Ճանձրացնում է իր անտեղի զրույցով. «հեծեծմունք և ահ. սիրտ իմ ահ
մաշեր...»:

Արևն արշավում էր դեպի մուտքը, երբ նրանք մոտեցան սուրբ Հա-
կոթի վանքին:

Նվ նրա մտքի առաջ հաննեց խոժոռ վանահայրը՝ բիրտ, ինչպես
շրջապատի ապառաժները, քրձազգեստ և բոկոտն, կոշտ մազերով, որ
դուրս էին ցցվել մինչև իսկ ականջներից: Միրուբի սև մազերի միջից
երևում էր ահագին բերանը: Վանահայրը մի կիսավայրենի մարդ էր,
որին աքսորել էին այդ հեռավոր մենաստանը և էջմիածնում վաղուց էին
մոռացել նրա գոյության մասին: Այդ մենակյաց մարդը զարհուրեց, երբ
այդքան բազմութուն տեսավ և նրանց մեջ՝ օտարոտի արտաքինով գեր-
մանացիներին: Նա իսկույն փակեց վանքի դարբասը և ներսից ինչ-որ բան
գոռաց: Շնեբը, որոնք իրենց կյանքում ավելի հաճախ գազանների էին
տեսել, քան մարդկանց, վանահոր մոնչոցի վրա այնպես գազազեցին,
որ քիչ էր մնում վանքի պարիսպներից թոննին ցած և նրանց բզկտեին:
Այն ժամանակ դարբասին մոտեցավ հայ դպիրը. նա խնդրեց, սպառ-
նաց, ապա նորից խնդրեց, մինչև վանահայրը բաց արեց դարբասը, շը-
նեբին նախօրոք փակելով դռմի մեջ: Բայց և այնպես այդ մենակյաց
վանականը հրաժարվեց օրհնել այն խաչը, որ «անհավատներն» իրենց
հետ տանում էին դեպի գագաթ:

«Սեպտ. 27— Հայելի լեռան շողա ի թևս մարմանդարեր Զեփյու-
ռոսի...»

Նրանք ծվարել էին Քրիստոսից բարձր, ժայռերի խորշում: Երբորդ
վերելքն էր: Ետ էին դարձել նրանք, սարսափել էին՝ շնչելով Արարատի
ցուրտ մառախուղը և տեսնելով խորանդունդ վիհերը, քարանձավները,
որտեղ երբեք չէր թափանցել արևի շողը: Սահակը, Ակուռի գյուղացիներ-
րից մեկը, չէր վախենում ոչ ցրտից, ոչ սառցակույտից: Նա սարսափում
էր լեռան կատարից: Նրան թվում էր, որ մարդ արարածը չի կարող ոտք
դնել այնտեղ. կամ կայծակը կգարկի, կամ գետինը մի ահավոր զորու-
թյամբ կշտրացնի այդ ոտքը, կամ հանկարծ քարափը կճեղքվի և մեղավոր
մարդը կընկնի գեհնն:

Քրիստոսից բարձր, ժայռերի խորշում վառվում էր նրանց խարույ-
կը, առաջին կրակը, որ լեռան լանջին այդքան բարձր վառել էր մարդը:
Փայտը քիչ էր. շալակով էին բարձրացրել և դրա համար նրանք աշխա-
տում էին կլանել ողջ ջերմութունը: Լուռ էին. կրակի լույսով պրոֆեսորն
ինչ-որ նշումներ էր անում: Նա նույնիսկ դուրս սողաց խորշից և սկսեց
դիտել աստղերը:

— Ջանավարի սիրտ կլինի կերած,— ասաց ակուռեցին, սեղմվե-
լով Արովյանին, որի հոգևոր կոշումը նրան հավատ էր ներշնչում, թե
բուցե աստծուն ընդունելի է այդ վերելքը և ուրեմն այն կյանքում նը-
րան կարմրած շամփուրներով շեն խարանի, ինչպես սպառնում էր վա-
նահայրը:

Լուռ էին: Խարույկը հանգչում էր: Ինքը ձեռքերը պահել էր տաք
մոխրակույտի վրա... Այն ի՞նչ էր փշրվեց և զարհուրելի դղրդոցով գլոր-
վեց անդունդը, սառցակույտ էր, քարածա՞յո, թե՞ լեռան կատարը
քնցվեց: Լուռ են. կարծես ծղրտում են ձորում. հավար են կանչում՝
ա՛հ...հե... և արձագանքը դղրդոգ դրնգում է ձորի քարանձավներում,
որջում են, ծիծաղում են, ծափ են տալիս և նույնիսկ պարզ լավում է
սուրմաների զրնգոց, դազմայի արծաթների ձայն: Իսկ հիմա վշշում է,
ինչ-որ մոտիկ տեղ սառցաշուր է կաթում՝ զրը՛նգ, զրը՛նգ, կարծես կա-
թիներն ընկնում են պղնձե կուժի մեջ: Սահակի ականջները վշշում են.
նա գետին է խոնարհում ականջը: Պրոֆեսորը դիակոնուսին հարցնում
է, թե ինչու՞ է այդպես անում «Իսահակը...»:

— Նրան թվում է, թե ժայռերի տակով ջուր է գնում...

Հանկարծ դարձյալ ահագին աղմուկ: Էլի փլվեց մի բան: Քաւին
բերում է ձյունավազի հատիկներ:

— Բարձրանանք, պարոններ, արդեն լուսաբացը մոտ է,— ասում
է պրոֆեսորը: Նա նորից է շափում: Սահակը զարմացած նայում է ծան-
րաչափին: «Ի՞նչ տեսակ մարդիկ են էս նեմեցները... Նրանք էլ խաչա-
պաշտ են... փառք քեզ աստված, փառք քեզ»: Ապա Սահակը գոտիկից
հանում է կացինը և սկսում է սառույցի վրա ոտնատեղ փորել, առնում են
ձեռնափայտերը և սկսվում է վերջին վերելքը:

Քամին վրա է հասնում և ի սփյուռու աշխարհի ցրում մոխիրն առա-
ջին կրակի, որ վառել էին նրանք մարդու ձայն չլսած բարձունքում:

Բարձրանում են: Լուսադեմի խավարն է՝ Ադամա մուժը, այն ժամը,
երբ թանձր խավարից ճառագում է լույսը: Աստղերը գունատվում են:
Խորունկ երկնքում դեռ վառ են մի քանի սպիտակ աստղեր: Նրանք ավե-
լի մեծ են, ավելի շինչ... Ահա լուսաստղը... Կապույտ սառույցների մեջ
լի մեծ են, աստղերի սպիտակ դեղնավուն լույսը: Թվում է, թե ոտքերի
ցլանում է աստղերի սպիտակ դեղնավուն լույսը: Թվում է, թե ոտքերի
տակ ոչինչ կարծր բան չկա և բարձրանում են՝ կոխելով սառած ամպե-
րը, բարձրանում են դեպի անհունը, ուր կան միայն աստղեր:

Նա սկսեց տրորել քունքերը: Հոգնել է. քնելու ժամը վաղուց է ան-
թել, բայց այդ գիշեր քունը հեռացել է: Սառնութուն է գգում: Կարծես

հոգու մեջ է ցուրտ լուսթյունը՝ անեզր, անպարփակ, ինչպես այն լուսադեմին:

Մի ինչ-որ թերթ է ընկած տետրի արանքում... Ինքն է գրել. ահա պահել է ճրագի վրա և նույնիսկ մի տեղ թուղթը դեղնել է...

«Ե՛ր հանդարտասույզ մարմանդ հողմերը մեղմիկ զեփյուռին՝
«Գիմեցի երբեմն զբռնու ի ծոց Մասսյաց սուրբ լերին...»
«Ո՛ր ես առավոտ, քաղցր արշալույս, արև գերարփին...»

Արևելքում ամպերը շարժվում են: Ահա մեկը ձգվում է ինչպես հազարամյա կաղնի. երկու սև ամպ կանգնել են դիմաց-դիմաց, գոյացնելով ամպեղեն կիրճ: Ավելի խորունկ՝ գանգուրների նման ամպեր են, կարծես սպիտակ ոչխարներ են մակաղել: Բայց ահա մոխրագույն են դառնում ամպերը, կապտում են. նրանք նման են միսկարների պղնձին: Ահա ամպերի սև կիրճի մեջ շողաց առաջին ճառագայթը և ինչպես կապարմիր անիվ գլորվելով գալիս է արևը, շողում է կատարը: Ինչպես պղնձյա վահան և ցուլքերի մեջ անէանում են աստղերը:

Ինչ ահավոր վայրկյան է, ինչ խորհրդավոր ժամ... Ամբողջ դաշտը խավարի մեջ է. ինչպես կապույտ վրան երևում է Արազածի գագաթը և ուրիշ ոչինչ չի երևում՝ բացի արևի գունդը և Արարատի սկավառակը:

— Ահա կատարը, — բղավեց Պարրոտը:

Մեր է, անդորր, սառույցներ, լուսթյուն, սպիտակ լուսթյուն: Նա փափել է աչքերը և դեռ չի նայում, չի ուզում նայել. դեռ դողում է սիրտը հուզմունքից և հոգնությունից դողում են ոտքերը: Ապա հանկարծ ետ է քաշում ձեռքը, տեսնում է արևով ողողված սառցադաշտը, վազում է խելագարի նման. թևերը պարզած, վազում է դեպի արևի կարմիր գունդը, դեպի սառցածայտերը: Ապա փոփում է գետին, համբուրում է գետինը, ինչպես ուխտավոր համբուրում է հայոց լեռան նախաստեղծ կատարը...

Նա ժպտաց: Վերհիշեց այն վայրկյանը, երբ ինքնամոռացություն մեջ գրկեց ակուտեցուն, ապա փաթաթվեց Պարրոտի վզով:

Գերմանացին ասաց.

— Զգույշ. ծանրաշափը կշարդեք:

Իսկ ակուտեցին, որ բերանը բաց նայում էր սառցադաշտին, ահա ողողով հարցրեց.

— Հայր սարկավագ, բա ո՞ր ա տապանը...

Նրանք իրար նայեցին խոր, շատ խոր:

— Տապանը չի՞ եղել, — պատասխանեց վանքի դպիրը:

Ակուտեցի Սահակը ցնցվեց այդ պատասխանից: Նա մոռացավ իր հարեանին, որ սառույցների մեջ ամրացնում էր պրոֆեսոր Պարրոտի կապարե խաչը: Նրանք իրար հետ խոսեցին, ապա աներկյուղ նայեցին արևից լուսավոր սառցադաշտին: Նրանց աչքերից ընկավ խավարի վարագույրը և պարզ աչքերով էին նայում այդ երկու ռամիկ նախավկաները:

— Մենք չե՞նք բարձրացել լեռան գագաթը, — հանկարծ մոռնաց նա և լռեց: Սարսափելի էր այդ ձայնի արձագանքը գիշերային լուսթյան մեջ: — Դուք չեք հաղթի, խավարի որդիք...

Նա դեն դրեց տետրը և առավ փետուրե գրիչը:

Նա գրում էր զայրույթի սրբազան կրակով և աչքերի մեջ վառվում էր ատելությունը: Երբեմն կծկվում էր դեմքը, երբեմն ժպտում էր արհամարհանքով և մաղձ էր կաթում դեմքից: Այդպիսի րոպաները սովորեցնում են ցմահ ատել և այդպես է սկիզբ առնում ճամփաբաժանը:

«Որպես գրեմ, որ սիրելիդ իմ հասկանա ալեկոծումը հոգվույս: Օ՛, խտապարանոց և սոնքացյալ ջլբուրակերքն առաքելաշափիղ աթոռո, որ զանազանեն միայն օգուտ որկորի և ի մեջ թանձրացյալ խավարամոռության մնան իբրև անմաքուր խող ի տիղմն: Անարգեցին, ձաղկեցին և դարձրին ինձ իբրև խսիր արտաքո դրանն, երբ ես էի և մնայի խոնարհ դպիր: Անհաց, անշոր և անպաշար տարագրեցին ինձ, երբ ի կատարումն ցանկության իմ բարեբարի, որ և իմ կամքն էր, ուղի ընկա առ ի սովորեղ դուլչն ինչ գիտություն ի պետս հայ մանկանց: Որպես բորենի մի կամ չամ է ասել շնագայլ Սահակ վարդապետին նարդիվանի մոտ հարձակվեցին ինձ վրա չիք վարդապետն Հովհաննես, Ղազար վարդապետն խող կոչեցյալ, Ծնոք տիրացու Քյորոզլուն և այլք, որք առավել եպերելի են, քան որ գրեցի: Չամաչեցին հոգևոր կոշումից և թուք տեղացին իմ երեսին, ստորացնելով ինձ, որպես անարժան զավակի, նզովյալ լուտեբականի և այլ այսպիսի անարգանաց խոսքեր, որ չեմ մոռացել և չեմ մոռանա, որքան շունչ իմ կա և կմնա: Եվ այժմ փոխարեն մխիթարության և սփոփանքի առ ի մեղմել մենակյաց գոյություն իմ ի մեջ օտարաց, որք, ճշմարիտ է, սիրեն ինձ առավել քան կոչեցյալքն եղբայր ի Քրիստոս, — այժմ լուր հասավ ինձ, որ սևասիրտ և սևազուխ էջմիածնեցիք երզմամբ ուրանան վերելք մեր, որ է մեծագործություն և պարծանք միանգամայն ոչ միայն իմ, որ կամ և կը մնամ նվաստ որդի Հայաստանի, ալև համայն ազգին: Այստեղ անվանի գիտնականք ոչ դադարեն փառաքանել սխրագործություն մեր, իսկ այդտեղ հայրենիքն իմ իբրև վեհոտ և խարդախ ոմն ուրանա երզումն առաջին: Օ՛հ, մեղանչիմ, մեղան-

չիմ շարաշար. քանզի անպարտ է հայրենիքն իմ յայսմ ամենայնի և ինքն
ևս տառապի ի բարբարոս ձեռաց այնոցիկ, որք իբրև վարձկան հովիվ,
միաբանելով գայլերին, հոշոտեն և լլկեն զանմեղ հոտն: Աղոթիր առ
աստված, որ սիրելին քո՝ Խաչիկն անհայրենացյալ մնա ցայն օր մինչև
իսպառ չքասցին հաստապարանոցք...»:

Թեթևութուն իջավ սրտին: Տեսրը դրեց սնդուկի մեջ: Երբ ետ
եկավ, սեղանի վրա նա տեսավ սուսամբարի մի շոր տերև, որ ընկել էր
թղթերի արանքից: Նա վաղուց չէր տեսել այդ տերևը, որ մի օր ինքն էր
գրել «Գիրք Պիտոյից»-ի մեջ իբրև անավարտ ընթերցման նշան: Ապա
տերևը կորել էր թերթերի մեջ: Նա կուսցավ տերևի վրա, ձեռքերը բոլորեց
չորացած տերևի շուրջը: Նա շնչում էր հազիվ զգացվող բույրը նույն
ագահությամբ, ինչպես լեռան լանջին կլանում էր սառչող մոխրի ջեր-
մությունը:

Վեր կացավ: Հոգնած էր: Այլևս չէր բուրում տերևը: Նա ձեռքերը
գրպանում՝ սկսեց քայլել: Նայեց պատից կախված մի նկարի, որի վրա
էջմիածինն էր, զույգ Մասիսները և ուղտերի հեռացող քարավանը: Նա
երկար նայեց այդ նկարին, ապա աչքերը փակեց: Նրա առաջ պատկե-
րացավ այն, որ իսկականն էր, այն առանձինը և ուրույնը, որ չէր նկա-
տել օտարական նկարիչը: Այն, որ և՛ սիրելի էր, և՛ դառն:

Ապա ջուր խմեց, մոտեցավ, որ բաց անի պատուհանը: Հանկարծ
նկատեց դպիրի իր սև կապան, որի վրա արդեն փոշի էր նստել: Նա
նայեց զարմանքով. կարծես սենյակ էր մտել մի օտարական, որ նման
էր իր հին ծանոթին, որի դեմքն ինչ-որ վաղուցվա բան էր հիշեցնում:
Նա կապան առավ, շուտ ու մուտ տվեց, ինչպես հնավաճառը, որ ուզում
է որոշել զինը մի հնացած զգեստի, որ վաղուց է վայր ընկել տիրոջ
ուսերից:

Սև կապան նա գցեց պահարանը: Սենյակը կարծես զվարթացավ:

Ապա հանգցրեց մոմը:

«ԻՐՁԵՐ ԱՐՄԵՆԻԵՐ»

1

Ոչ սուրբ Իոհաննի տաճարը, ոչ գրանիտե դղյակը, որտեղ ըստ աս-
վանդության ապրել է շվեդների Գուստավ Ադոլֆ թագավորը, և ոչ էլ
Քարե կամուրջը, որ կապել էին Ստեֆան Բատորիի ժամանակ,— չէին
ստեղծել այն հուշակը, որ ուներ Գորպատը մի դար առաջ: Օտուկի

երկրներում կային այլ ուրիշ քաղաքներ, որոնք ավելի հնամյա հնու-
թյուններ ունեին, քաղաքներն ավելի բազմամարդ էին և բնակիչները
կարող էին ցույց տալ դաշտեր, որտեղ տեղի էին ունեցել այնպիսի ահեղ
պատերազմներ, որոնց հետևանքով ոչնչացվել էին ամբողջ թագավորու-
թյուններ,— բայց այնուամենայնիվ հուշակն, ինչպես անակնկալ փառք,
բաժին էր ընկել այդ խուլ քաղաքին, որ ընկած էր էմբախի երկու ափե-
րի վրա:

Գորպատի այդ հուշակը ստեղծել էր արքայական համալսարանը՝
կառուցված Ալեքսանդր I-ի կայսրության օրոք: Այլևս չկային սուրբ
Դիոնիսիոսի տաճարի ավերակները, որ երկու դար կանգուն էին Դոմ-
բորգի գագաթին և դեռևս հեռվից երևում էին նրա կիսավեր պարիսպ-
ները: Տաճարի ավերակների վրա կառուցել էին համալսարանի մատե-
նադարանը, իսկ ավելի ներքև, որտեղ եղել էր Գուստավ Ադոլֆի
Academia Gustaviana-ն, բարձրանում էր Մայր Ճեմարանի սյունա-
գարդ շենքը, սպիտակ կրաքարերից, շրջապատված լուրիների և կաղնիե-
րի անտառով, որտեղ գուցե դեռևս մնում էր մի նահապետ կաղնի, որի
սաղարթն աղմկել էր դեռ այն ժամանակ, երբ էմբախի ափերին չկար ո՛չ
Իոհաննի տաճարը, ո՛չ գրանիտե դղյակը և Քարե կամուրջի փոխարեն գե-
տի ափերն իրար էին միանում կաղնու գերաններով:

Երբ փորում էին նոր շենքերի հիմքը, փորողների բրիչները և բա-
հերը գետնի տակից հանում էին դեղնած ոսկորներ, հողով լցված գան-
գեր, որոնց աչքերի փոսից դուրս էին սողում անձրևային կարմիր ձի-
ճոճներ, նրանք կծկվում էին արևի տակ, ապա ներս մտնում գանգի խո-
ռոչը: Փորողները գտնում էին տեգեր, նիզակների կտորներ և կավե կա-
ռասի: Եվ որովհետև ավելորդ էր նոր գերեզմաններ փորել նրանց հա-
մար, որոնք ո՛վ գիտե ինչ մարդիկ էին և ինչ ազգի էին և մեռել էին
որպիսի մահով,— որովհետև ոչ մահարձան ունեին նրանք և ոչ տա-
պանագիր, ուստի բոլորի ոսկորները լցրին մի փոսի մեջ, ծածկեցին փո-
սը և հուշարձանի մարմարի վրա քանդակեցին հետևյալը.

«Այստեղ հանգչում են ոսկորները զանազան ժողովուրդների XIII
դարից մինչև XVIII դարը: Գորպատը նրանց հողին հանձնեց սուրբ
Մարիամի մատուռի մոտ: Նրանց գանգերի վրա Ալեքսանդրը կառուցեց
մուսանների նոր օթևան: Նրանց է հատկացվում այս վայրն ի հանգիստ և
ի խաղաղություն: Anno domini MDCCC VI»:

Գորպատն ուսանողների քաղաք էր («Burschenburg»): Վեց հա-
զար բնակիչներից երեք հարյուրը ուսանողներ էին՝ «ձեղունահարկի բնա-
կիչները», ինչպես նրանց մասին արտահայտվում էր պոլիցեյմեյստեր զնդա-

վայել է միայն թափառական գնշուններին, և ոչ թե արքայական համալսարանի ուսանողներին: Նրանք քայլում են սեղմ շարքերով, առանց կոճկելու մոնդիրը, ոմանք նույնիսկ առանց ժիլետի և փողկապի: մայթերից հրում են նրանց, որոնց չեն սիրում և պատահում է, որ ծեծի են ենթարկում մի հանդուգնի, մանավանդ ռուս աստիճանավորի, որ ինքնասիրությունից և պաշտոնի պատվազգացությունից դրդված չի կամեցել ենթարկվել հարթած ուսանողների քմահաճույթին: Այսպիսով նրանք խանգարում են ոչ միայն կարգը մեր հսկողության հանձնված քաղաքում, այլև անպատվում են կայսերական համալսարանի բարձրագույն անունը: Թեև նրանց արգելված է գիշերները վառած լապտերներով երկվալ փողոցներում և կամ մի տնից մյուսը գնալ, բայց նրանք մինչև անգամ լապտերներից վառում են սիգարները, ինչպես և ծխամորճները և օրենքի դեմ անպատկառ խոսքեր ասելով շարունակում են անպատիժ զբոսնել: Իսկ թե նրանք ինչեր են անում հասարակաց զվարճության վայրերում, դրա մի աննշան վկայությունը կարող է լինել հետևյալը, որին և մենք ականատես եղանք:

«Ազնվականների «Աֆրոդիտա» ժողովարանում, որտեղ ներկա էին բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ և զինվորականներ, նաև ժանդարմական գնդապետ Դոնցովը,— երբ սկսվեց դիմակահանդես և վերոհիշյալ բարձրաստիճան պաշտոնյաների մեծ մասը առանձնացավ հարևան սենյակը վիստ խաղալու, թողնելով, որ մյուսները զվարճանան,— ներս է մտնում անհայտ ոմն, փաթաթված սև դոմինոյի մեջ: Այն ժամանակ, երբ դահլիճում յուրաքանչյուր ոք շրջում էր իր դիմակով և յուր ընտրած տարագրով, սև դոմինոյի մեջ փաթաթված անհայտ ոմն մտնում է մի խումբ կանանց, որոնց մեջ լինում են ռատուհներ Ռոզենցվեյգի կինը՝ ջայլամի նման հագնված, լանդգերիտի ավագ դատավորի երկու աղջիկները՝ կապուցին վանականների զգեստով, կուրատոր ֆոն Ցանաուի կինը և դուստրը՝ առաջինն իբրև բեռնային արջ, իսկ երկրորդը սուլթանի հարճի զգեստով,— անհայտ ոմն հանկարծ դեն է շարժում սև դոմինոն և հարգելի տիկիներին, նաև նրանց դեռատի աղջիկներին ցույց է տալիս Ադամի զգեստը: Կանանց աղմուկի վրա մենք դուրս թափվեցինք սենյակներից, բայց անհայտ ոմն արդեն չբացել էր կուրատորի աղջկան, որ սուլթանի հարճի զգեստով էր, թողնելով ուշագնաց վիճակում, որպիսին,— ինչպես հավաստիացրեց նրա մայրը, նաև օգնության հասած զինվորական բժիշկ Վերետեննիկովը,— առաջացել էր սարսափից և ամոթխածության հարվածից: Արդեն ուշ էր, որպեսզի կանանավորներին շարագործին, որի ով լինելը մինչև օրս չի պարզված է

միայն կուրատորի վերոհիշյալ դուստրը պատմել է, որ անհայտ ոմն է համալսարանի ուսանող Ֆրիդրիխ անունով, բայց ինչպես է զզանունը՝ չի հիշում: Մեր մտադրությունը՝ հարցաքննել համալսարանի 23 Ֆրիդրիխ անունով ուսանողներին, նաև 24-րդին, որի անունը Ֆրիդրիխ չէր, այլ Ֆրեդերիքս,— չի բաժանում ժանդարմական գնդապետ Դոնցովը, որը հակառակ բոլոր իրական ապացույցներին, այդ պատմությունը համարում է հետևանք կանանց ջղերի արտակարգ զրգովածության և զգայականության, իսկ անհայտ ոմնին՝ աննյութեղեն տեսիլք, որը երևացել է կուրատորի դստեր աչքին:

«Լինելով անհանգիստ բարձի տեր և ունենալով ազատ ժամանակ,— նրանք դյուրաբորոք են պարապությունից: Բավական է մեկը մյուսին անվանի «dummer Junge» և ահա պատրաստ են էսպադոնով մենամարտելու: Իսկ եթե անվանեց «Hundsfoth», այն ժամանակ էսպադոնին փոխադրվում է պիստոլետը, որ շատերն ունեն և մինչև անգամ կան այնպիսիները, որոնց բնակարանը բոլոր տեսակի զենքերի արսենալ է: Շատերի դեմքը պատած է սպիներով, նաև ծեփոնով, որ հետևանք է սուսերի կամ հրազենի հարվածի: Դժբախտաբար տնատերերը վախենալով ուսանողների բանադրանքից, չեն հայտնում թե զենքերի և թե տեղի սենցոդ մենամարտերի մասին:

«Վերոգրյալն առաջանում է նաև այն պատճառով, որ պարոն պրոֆեսորները փոխանակ նրանց առաջնորդելու գիտության ճշմարիտ ճանապարհով, ոչ միայն թերանում են իրենց պարտականությունների մեջ և չեն ներշնչում բարոյական դաստիարակության ոգի, այլև նույնիսկ ոմանք հրահրում են իրենց սաների բնավորության հոռի կողմերը և իրենք են հանդիսանում վատ օրինակ, ինչպես հանգուցյալ ռեկտոր էվերսը, որը շնայած գառամյալ հասակին, սուսերամարտի դահլիճում մասնակցում էր վարժություններին, երիտասարդներին անընդհատ խրախուսելով սուսերը պատյան շղնել, մինչև այն չներկվի խոյանի արյունով:

«Երկրորդ պատճառը մեր հրամանատարության ներքո եղող ստիկանական մասի խիստ սակավաթիվ լինելն է և վատ սպառազինումը, որի մասին անցյալ տարվա հուլիսի 7-ի № 2206 ռապորտով պատիվ ենք ունեցել զեկուցելու ձեզ: Չի բեր չեն ստանում հարկավոր ապուր, նրանց արտաքին տեսքն այնքան խղճալի է, որ երբ ձիավարժության ենք գնում մանեծի դաշտը, մեզ վրա ծիծաղում են ոչ միայն ուսանողները, այլև մնացած ամբողջը: Նույնը կարելի է ասել ձիասարքի, նաև ձիավորների մասին, որոնց մեծ մասին վաղուց պետք էր քշել տանքը, որպեսզի նրանք

սավորին, որպեսզի օձիքն ազատի նպարավաճառներից, որոնք երկու-
զելով, բայց այնուամենայնիվ «պարոն ուսանողին» հիշեցնում են նրա
պարտքը. ուր որ է պիտի հայտնվի սպասավորը և երկու շաբաթ «տղան»
պիտի լսի այն դողող ձայնը, որ նրան հիշեցնում է հայրենիքը և ման-
կությունը: Այդ ձայնը նրան պիտի պատմի այն ամենը, ինչ որ տանը
պատահել է և որի մասին նրան չէին գրել, որովհետև իշխանը, ավելի
ճիշտ սենեկապետը՝ իշխանի անունից տարին երեք նամակ էր ուղար-
կում, երեք շնորհավորումն՝ Քրիստոսի ծննդյան, որդու անվանակոչու-
թյան և դարձյալ Քրիստոսի հարության տոնի:

Աստվածաբանության ապագա բակալավորը երկու շաբաթ լսում էր
այն մասին, որ Տուրո շունը իսպառ կուրացել է և այլևս որսի չեն տա-
նում, որ անցյալ ձմեռ իշխանուհու տաղավարում գայլերը հոշոտել են
Մենտորի քուռակը և դրա համար էլ իշխանուհին այլևս չի գնում տա-
ղավար, որ այժմ հայրը ապրում է այն փոքրիկ սենյակում, ուր մի ժա-
մանակ ապրում էր m-lle Annette-ն, որ... Բայց մի՞թե հնարավոր է
կրկնել այն բոլորը, ինչ պատմում էր ծերունի և շատախոս սպասավո-
րը երբեմնի տղային, որին նա հանձնել էր հոր ուղարկած տարեկան
ռոճիկը և մոր ծածուկ նվերը, և երիտասարդն արդեն վճարել էր իր բո-
լոր պարտքերը և նույնիսկ Ֆրաու Ֆոգելզանգն էր ստացել իր բաժինը,
պարոն աստվածաբանից հարցնելով նրա ծնողների առողջությունը, նաև
թե չե՞ն ուղարկել լորենու մեղր, որ այնքան սիրում է Ֆրաու Ֆոգել-
զանգը, — արդեն ամբողջ քաղաքում հայտնի էր դորմեզի գալուստը և
ծերունի սպասավորը հրեա կոշկակարի մոտ էր տարել «տղայի» մաշ-
ված կոշիկները և նրանից ծածուկ հարցրել էր իր պարոնի մասին, թե
արդյոք նա չունի՞ մի հարսնացու, արդյոք դեպք չի՞ եղել, որ կոշկա-
կարը նրա պարոնի պատվերով պատրաստի նաև կանացի կոշիկներ, Եվ
ստացել էր նույն պատասխանը, ինչ որ անցյալ տարի. «Պարոն ուսա-
նողը բարքով առաքինի է, խոհեմ և չի պատահել այդպիսի դեպք, այլ
պատահել է, որ ինքը կարկատել է նրա այնպես մաշված կոշիկը, որ
նույնիսկ ամոթ է ասել, թե ինչպես մաշված կոշիկ... Իսկ կանացի կո-
շիկ կամ այդ սեռի համար կոշիկ ինքը չի կարել և աստված մի արաս-
ցե, որ դեպք պատահի, որովհետև...»: Սպասավորն ու հրեա կոշկակարը
հին ամուրիներ էին և իրար երեսի նայելով, հասկանում էին, թե ինչ
ասել է «որովհետև»...

Արդեն «հավիտենական շտուղենտին» ձանձրացնում էր ներկայու-
թյունն իր հին բարեկամի, որը ծերունու նվազած հիշողությամբ երկ-

որդ անգամ էր պատմել Տուրոյի կուրանալը և արդեն մաքրել էր «տղա-
յի» կոշիկներն այնպիսի յուղով, որի գաղտնիքը միայն նրան էր հայտ-
նի և որի փայլը կմնար մինչև մյուս աշուն, — ծերունին արդեն մորթել
էր սագերը և նրանց բմբուլով փափկացրել էր երիտասարդ պարոնի
ներքնակը, անհայտ է, թե որտեղ վացել էր նրա բոլոր շափիկները և
կարել կոճակները (նույնիսկ «տղան» էր հետաքրքրվում, թե արդյոք
հենց ինքը՝ ծերունին չի՞ վացել և չի՞ կարել կոճակները գոմում, երբ
քնած էր լինում հարբած կառապանը, ձիերը խժուում էին գարին, իսկ
ինքը...), կոճակները, որոնցից մի քանիսը, ինչպես նկատում էր ծերու-
նին, պոկվել էին վաղաժամ և անբնական եղանակով, իրենց հետ տա-
նելով նաև զգեստի կտորից մի քանի թել:

Այդ բոլորն արդեն կատարվել էր և ահա աշնան մի անձրևոտ օր
ձիերը գլուխը դարձնում էին դեպի հայրենի գոմը, կայտառությամբ քա-
շելով թեթևացած դորմեզը, որի մեջ դատարկ վանդակներ էին, պար-
կեր, սնդուկներ և կողովներ, նաև «տղայի» մաշված շորերի կապոցը,
որ ծերունի սպասավորը, իբրև թանկ նվեր, տանում էր պառավ իշխա-
նուհուն: Դղրդում էր դորմեզը, իսկ ծերունին ննջում էր, փաթաթվելով
խարխլված քուրքի մեջ և աշնան տխուր անձրևի հետ միտք էր անում,
թե այլևս քանի վերագարձ մնաց, և ինչ պիտի ասի իր տիրուհուն հարս-
նացուի մասին, որ պիտի գար ու չէր գալիս:

Նաև կային ուսանողներ, որոնց համար հայրենիքը միայն տոհմա-
կան դղյակը չէր և ոչ էլ ազատությունը՝ սանձարձակություն վատնե-
լու այն բարիքները, որ անաշխատ կուտակում էին նրանց ծնողները և
նույնքան հեշտ վատնում էին որդիները: Այդ ուսանողներից ոմանք ամե-
նեկն շունեկն հայրենի կալված, նրանք աստիճանավորների զավակներ
էին, որոնց ծնողները կամ դժվարությամբ բարձրացել էին շինովնիկու-
թյան սանդուղքով և կամ կորցնելով երբեմնի կալվածքը, ապրում էին
վաճառելով վաղեմի հարստության փշրանքները. մի թուր, Դամասկոսի
հազվագյուտ գործ, որ իբրև թե նրանց էր մնացել նշանավոր նախահորից,
որը կռվել էր սարակինոսների դեմ, մի յուղաներկ նկար, որի վրայից
ներս էր աղամանդե խուլյով մի շքնաղ կին, կրակե գույնի գանգուր-
նայում էր աղամանդե խուլյով մի շքնաղ կին, կրակե գույնի գանգուր-
նայում էր աղամանալի գեղեցկուհի, որի կիսաբաց կուրծքը դեռ այժմ էլ
պղտորում է նայողի արյունը և չի կարելի ատանց նախանձի դիտել այն
պղտորում է նայողի արյունը և չի կարելի ատանց նախանձի դիտել այն
պղտորում է նայողի արյունը և չի կարելի ատանց նախանձի դիտել այն
պղտորում է նայողի արյունը և չի կարելի ատանց նախանձի դիտել այն

հին մահճակալները, որոնց սնարի վրա նկարել էին երջանիկ Արկադիա, և Պանը սրինգ էր նվագում մի զուգրի համար, որ ծաղկած նշենու տակ վայելում էր սիրո զարուհը: Երևում էին փոքրիկ փոսեր, որոնք վկայում էին, որ այդ ընտանեկան երջանկության նկարը երբեմն եղել է սաղափներով եզերված, բայց մի անարժան ձեռք սաղափը հանել է և վաճառել ավելի կանուխ, քան կվաճառեին վերջին ժառանգները:

Սահայն ամենից խեղճ ապրում էին թոշակառու ուսանողները: Առաջինները գիտեին, որ այնուամենայնիվ պիտի ժառանգեն հայրական կալվածքը և այդ հույսով զբաղեցնում էին ոչ թե ձեռնհասարկ, այլ ապրում էին հարուստ բնակարանում և նույնիսկ նրանցից ոմանք սպասավորներ ունեին: Երկրորդների համար հին հարստության մնացորդներն այնուհանդերձ ավելի լավ էին, քան ոչինչ շունենալը: Միայն թոշակառուներն էին, որ ծվարում էին ցուրտ ձեռնհասարկում և իրենց գահի բարձրությունից արհամարհանքով էին նայում և՛ աշխարհին, և՛ նրա գանձերին: Բայց նրանք մյուսներից ավելի մոլեգին էին զվարճանում, որովհետև ըստ այն ժամանակի սովորության, երբ սեղան էին նըստում բոլորը, բոլորն էլ դատարկում էին գրպանները, ով հանում էր թղթի ասիգնացիաների կույտը, ով կաշվի դրամ՝ «կուլբեն-մարկտ», ով պղինձ գրոշներ և ով՝ դրամների այդ կույտի վրա միայն դարձնում էր իր ունայն գրպանը:

Այդ ուսանողները կատաղի սուսերամարտիկներ էին: Պոլիցիյ-մեյստեր Կրուչինսկու հաղորդած «բոլոր տեսակի հրազենների արսենալը» գտնվում էր կղմինդրյա այն կտուրների տակ, որի բնակիչը,— երբ տխուր անձրևը թմբկահարում էր կտուրը,— կարոտով էր նայում թրագաշույնին, ապա առնում էր հին գերմանական երկար սուսերը և ձանձրությից մենամարտում էր սյունի հետ: Նրանք ջերմ պաշապաններն էին տրադիցիաների և երբ հանկարծ լսեին ընկերոջ օգնության աղաղակը, թռչում էին կատաղած վագրերի նման և վայ թշնամուն, եթե նա վաղօրոք չէր ազատի իրեն, ապավինելով արագավազ ոտքերին: Նրանք ունեին մի շոր գլուխ, որ ամեն ընկեր կարող էին փորձանքի տալ: Գուցե թե մի հեռավոր նահանգի խուլ գյուղում նրանք մայր ունեին կամ հայր և կամ ազգական, բայց ոչ նրանք գիտեին որդու մասին և ոչ որդին էր հիշում հեռավոր գյուղը: Նրանք ժառանգներն էին այն ըմբոստների, որոնք վարորդում խարուկի բոցերի մեջ վառեցին խավարամիտ գրքերը և սուսերները մերկացրին, երգվելով պայքարել հանուն պատվի, ազատության և հայրենիքի: Նրանց ականջների տակ դեռ հնչում էր որոտն այն գնդակի,

որով Մանհեյմում ուսանող Ջանդը սպանեց Ավգուստ Կոցերուին: Ու թեև նրանց օձիքների վրա ոսկեթելով գործված էր «Humanitas» բառը, բայց կանք ավելի նման էին ծովահենների և հազիվ թե առանց պատժի նրանց ձեռքից ազատվեր մեկը, որ կհանդգներ անարգել նրանց հայրենիք, Մայր Ճեմարանը և ուսանողների կորպորացիան:

Հնկերները նրանց անվանում էին «սև եղբայրներ», որովհետև նրանք հագնում էին սև «կրագեն»— երկար թիկնոցներ, որ իջնում էր մինչև կրունկը: Նրանց կարելի էր տեսնել տարօրինակ զգեստներով և գույնազգույն գլխարկներով, որոնց ծոպերը կախվում էին ականջի վրա, մազերը մինչև ուսերը,— նրանք անցնում էին փողոցներով, հավաքվում էին հաուպտվախտի առաջ և ծխելով հաստ ծխամորճը, բարձրաձայն հուհում էին, երբ նրանց կողքով անցնում էր մի հաստիկ ուսա կին: Նրանք խառնվում էին հրապարակների բազմությանը, երբեմն տեղն ու տեղը դատաստան էին անում մի հրեա նպարավաճառի, որը կամ կշեռքի մեջ խաբել էր, կամ ապրանքը մի գրոշի թանկ էր ծախել: Հենց որ փողոցի անկյունում նրանք երևային, նպարավաճառները իսկույն դադարեցնում էին աղմուկը, որպեսզի որևէ կերպ չգրավեն նրանց ուշադրությունը: Վերջապես նրանց խմբերը վերադառնում էին իրենց թաղերը՝ երգով և ծնծղանների նվագով և եթե խումբը նույնիսկ տասը հոգի էր, այնուամենայնիվ նրանք փողոցը լցնում էին այնպիսի աղմուկով, որ կարծես անապատից շարժվել և ահավոր զորություն մանցնում է վաշկատուն թափառականների մի ամբողջ բազմություն, և փողոցում լսվում են զենքերի շաշյուն, ձիերի դոփյուն, նախիրի բառաչ և ինչ-որ անծանօթ անցալին հնչյուններ:

Փողոցի բնակիչները հետաքրքրությունից բարձրացնում էին պատուհանի վարագույրը կամ դուրս էին գալիս պատշգամբ և գաղտագողի նայում էին տարօրինակ արտաքինով այդ երիտասարդներին, որոնց կրունկների պղնձե խթանները այնքան ախորժալուր էին զրնգում և զրնգոցն արձագանքում էր կանանց սրտերում: Պատուհաններից և պատշգամբից դիտողների մեջ կային, որոնք դժգոհում էին այդ աղմուկից, կային, որոնք միայն դիտում էին, բայց և կային, որոնք հիանում էին: Եվ երբ նրանք վաղուց արդեն անցել էին, պատահում էր, որ մի մանուկ աղջիկ դեռ չէր իջեցնում վարագույրը, երկար ժամանակ դեմքը էր հեռացնում պատուհանից և տխուր աչքերով նայում էր փողոցին, որտեղով անցավ այդ զարմանալի թափորը...

Տրաու Տոգելզանգի պանդոկը, որի մասին հիշատակում է պոլիցեյ-մեյստեր Կրուշինսկին, գտնվում էր Ռեկելտրասսեի վրա: Պանդոկն զբաղեցնում էր ներքնահարկը մի խարխուլ տան, որի վերին հարկում ապրում էին նախկին ծովագնացներ, որոնք իրենց կյանքի արևմուտն անց էին կացնում ձկնորսության և նավարկության էմբախ գետի վրա: Գետը հոսում էր պանդոկի կողքով և այն ժամանակ, երբ նավարաները կամ տանն էին, կամ պանդոկի ներքնահարկում, նրանց նավակներն օրորվում էին՝ կապված այդ հին տան պատերից:

Տունը թեև հին էր և նշմարվում էին այն ճեղքերը, որտեղից արդեն սկսվել էր շենքի մահը,— բայց զեղեցիկ էր, մանավանդ վերջալույսին, երբ Շլոսբերգի բլրակների վրայից արևը ոսկեզօծում էր գետը: Արևի տակ մուգ-կարմիր փայլում էին մաշված աղյուսները, իսկ պատուհանների պղտոր ապակիների մեջ արևն այնպես էր ցուլանում, որ կարծես ներսը վառել էին պղնձյա կանթեղներ: Այդ ժամերին Ֆրաու Տոգելզանգը սիրում էր ասել, որ տունը երբեմն եղել է Ստեֆան Բատորիի դղրյակը, որի զինանոցը իբրև թե գտնվում էր ներքնահարկում, ուր տեղավորված էր նրա նշանավոր պանդոկը:

Հազիվ թե ճշմարիտ էր պանդոկի տիրուհին. դրսից դեռևս երևում էր մի անհայտ նկարչի գործ, որով զարդարված էր պանդոկի դռան ճակատը. մի թռչուն՝ նման անտառաբնակ բուռի, քաշում էր զանգակի պարանը, մագիլների մեջ պահելով մի երիզ, որի վրա գրված էր էպիկորյանների վաղեմի խոսքը՝ *dum vivimus, vivamus*: Հազիվ թե ճշմարիտ էր Ֆրաու Տոգելզանգը, հավանորեն տունը կառուցված էր իբրև օթևան այն վաղեմի առևտրականների, որոնք արևելքից ուղևորվում էին դեպի Ռեկել:

Դորպատում այդ պանդոկից ավելի նշանավոր էր ինքը՝ Ֆրաու Տոգելզանգը: Նույնիսկ դժվար է ասել, թե արդյո՞ք այդքան անվանի կլինեք պանդոկը, եթե նրա տիրուհին չլինեք Ֆրաու Տոգելզանգը, որը ոչ միայն գարեջուր և մեղրագինի էր վաճառում Մայր Ճեմարանի սաներին, այլ հենց ինքն էր մի գթառատ մայր, մի մեծ մայր, որի գրկի մեջ սնվում և զվարճանում էր անհոգ երիտասարդությունը: Նա գիտեր բոլոր ուսանողներին՝ նրանց բնակարանը, քանի որ Ֆրաու Տոգելզանգն էր նրանց համար բնակարան վարձում և նրա միջնորդությունն էին հայցում տնտեսերը, երբ կենվորն ուշացնում էր բնակարանի վարձը և կամ այնպիսի խոտվահույզ կյանք էր վարում, որ տանտերերը

սկսում էին եռկյուղել իրենց դեռահաս աղջիկների համար, որոնք հասունանում էին, ինչպես կաքավի ձագերն արծվի հարևանությանը:

Տրաու Տոգելզանգը երկար տարիների ընթացքում լսելով ուսանողներին և նրանց խոսակցությունները, այնքան էր լավատեղյակ համարանի կյանքին, որ երբեմն, կտրտելով ապուխտած միսը կամ բաց անելով մեղրագինու նոր տակառ, խառնվում էր իր սաների վեճին. «Իսկ անելով մեղրագինու նոր տակառ, խառնվում էր իր սաների վեճին... Ափես կասեմ, որ այս կուրատորը կարող է միայն թուղթ խաղալ... Ափեսս չէ՞ր ծերունի Դիտրիխը: Եվ քննություններն էին մեղմ, և ուսանողները ոչ մի էկզեգետիկա չէին սովորում, և չկային այսքան խստություններ, այլ միայն կար հոմեոլեոտիկա, աստվածաբանություն և զվարթություն: Ահա թե ինչ կար, երբ կուրատորը բարի Դիտրիխն էր...»: Իսկ թե ի՞նչ է «էկզեգետիկան» և ի՞նչ «հոմեոլեոտիկան»,— միայն այդ չգիտեր Ֆրաու Տոգելզանգը, բայց գիտեր, որ ուսանողները մի ժամանակ ավելի շատ էին զվարճանում, քան այժմ: Եվ երբ այդպես էր ասում, ուսանողները հոհոում էին Ֆրաու Տոգելզանգի անկեղծ վրդովմունքի համար նաև այն պատճառով, որ պանդոկի տիրուհին գիտություններն իրար էր խառնում,— և դադարեցնելով վեճը, երկու կողմերն էլ համաձայնում էին, որ զվարճությունն առաջ ավելի կատաղի էր, և նորից լցնելով գավաթները, խմում էին առասպելական կուրատոր Դիտրիխի լույս հիշատակին...

Ահա թե ինչպիսի նշանավոր կին էր Ֆրաու Տոգելզանգը, և ծերունի Կրուշինսկին ամեն առիթով կարող էր ուստահեր մոզանցվելուցին ասել, որ պետք է փակել այդ «անբարոյականության ուղի», որտեղ պատանի մարդկանց մարմինը ծանրաբեռնում են ոգելից խմիչքներով և ապա, ինչպես կատաղած ցուլերի, բաց են թողնում անմեղ քաղաքացիների վրա...»:

Տրաու Տոգելզանգի պանդոկն ուներ այնպիսի հարմարություններ, որից զուրկ էին քաղաքի մյուս գինետները: Երբ պատահում էր, որ ուսանողների խրախճանքը երկարում էր և գինուց հաղթվելով նրանք զլորվում էին գետին կամ սեղանից այլևս չէին կարողանում բարձրացնել ծանրացած գլուխները, ինչպես թրադաշույնով զարկված գինվորներ, որոնք կովի դաշտում փովել են և մահվան քնի մեջ անշարժ են և միայն մեկը խռոցանում է,— ահա այդ ժամանակ ծխի գոլորշիների մառախուղի մեջ երևում էր Ֆրաու Տոգելզանգը՝ սպիտակ գոգնոցով և անարատ գլուխով, նրա հետևից ծերունի նավավառներ, որոնք կերակրվում էին խաշորով, նրա հետևից ծերունի նավավառներ, որոնք կերակրվում էին ուսանողների խնջուլքի մնացորդներով,— և հետևի դռնով դեպի նավակներն էին տանում նրանց անզգա մարմինները, որ ծանր բեռ էին ծերու-

կան բերետներ և ցածր ճտքով սապոգներ, որ պարուրում էին նեղ տա-
բատի եզրը:

Քոմաս Բրյուլլը ողջունեց, բարձրացնելով աչ բազուկը: Մի քանի
«Ֆուբա» մի անգամից ոտքի կանգնեցին, նրան առաջարկելով իրենց
աթոռները: «Սև եղբայրների» ավազը մոտեցավ մի բազմամարդ սեղա-
նի, մյուսներն էլ միացրին սեղանները և ստացվեց այնպիսի մի սեղան,
որի ծայրը չէր երևում ծխի մեջ:

Քոմասն իրար հետևից դատարկեց երկու գավաթ մեղրագինի:

— Աղբյուրներն անգամ ծարավ են, Քոմաս,— կանչեց նա, որ առա-
ջինն էր նրան ողջունել: Մյուսները ծիծաղեցին, որովհետև այդ ուսանող
Քոմասին հիշեցրեց հենց նրա խոսքը, որ խրախճանքի բորբոքված
ժամին կրկնում էր Քոմաս Բրյուլլը և այդ խոսքերից հետո բերում էին
նոր շշեր:

Քոմասն այս անգամ խոր նայեց երիտասարդին, որի երեսը վառ-
վում էր բաց կարմիրով և որի աչքերի մեջ կար երեխայական ժպիտ և
զեմքն ուներ մանկական մի գրավչություն:

Քոմաս Բրյուլլը գլուխը խոնարհեց:

— Մեր Քոմասն ինչ-որ ուրիշ է այսօր...

— Չլինի՞ բան է պատահել և մեզ չի ասում:

— Նրա հետ վերջերս լինում է մի ինչ-որ դանակ սրող...

— Ծս նրան տեսել եմ: Նա ապրում է հին զորանոցի մոտ:

— Իսկ ես Քոմասին երեկ տեսա հենց այն կողմերում:

Սեղանի շուրջ այդպես էին խոսում նրանք, որոնք դեռ գինով չէին:
Իսկ որոնք գինով էին, ուրախանալով «սև եղբայրների» ներկայություն-
նից, արդեն բաց էին թողել սանձերը և խմում էին, շփոթելով գավաթ-
ները, գինին և գարեջուրը: Սեղանի մի կողմը, ինչպես առաջին որոս,
հնչեց երգը՝ «Caudeamus igitur» և հետզհետե ծավալվելով մեջ առավ
բոլորին և վերջին բառերը՝ «nos habebit humus» — այնպիսի ուժգին
զղրդացին, որ ֆրաու Ֆոգելզանգին թվաց, թե գավաթները փշուկեցին:

— Հրմմ... ամեն ինչ հող կդառնա,— լուռության մեջ ասաց Քոմասը,
թարգմանելով երգի վերջը:

Նա ոտքի կանգնեց:

— Burschen,— և բոլորը լսեցին: Քոմասը գլուխը թափահարեց և
մազերը ծփացին ուսերի վրա:— Ծս ձեզ հիմա այնպիսի խոսք կասեմ,
որ երբեք չեմ ասել: Ծս ձեռ եղբայրն եմ և եթե սեղանի շուրջը նստած
են հայրենակիցներ, որոնց նոր ենք մկրտել, բայց և նստած են ընկեր-
ներ, որոնց հետ շատ տարիներ զվարճացել ենք և դժվար փորձություն-

ներից ենք անցել: Մենք բոլորս եղբայրներ ենք, մի մոր հարազատ սա-
ներ... Բայց ահա լսեցեք, թե ես ի՞նչ եմ մտածել և ասեք ճշմարիտ եմ,
թե՞ սուտ են իմ խոսքերը: Իսկ ես այն եմ ասում, որ մենք բոլորս սխալ
ճանապարհի վրա ենք...

Եվ շունչը պահեց մի րոպե, սուր աչքերով նայեց բոլորի աչքերին և
այնտեղ կարդաց և՛ տարակուսանք, և՛ հետաքրքրություն, և՛ զարմանք,
նաև ոչինչ չկարդաց, որովհետև կային գինու ոգուց թմրած աչքեր, որոնք
արդեն ննջում էին:

— Իսկ ինչո՞վ ենք սխալ ճանապարհի վրա: Որովհետև մենք մեր
օրերն անց ենք կացնում գինարբուքով, երբեմն սուսերամարտում ենք,
երբեմն արշավում ենք ձիերով, երբեմն աստվածաբանություն ենք սո-
վորում և այսպես կողոլում է մեր երիտասարդությունը, մեր ժամանակը
և կորչում ենք մենք: Մեզ հարկավոր չի այդպիսի կյանք:

— Ինչպե՞ս, Ուրեմն այլևս չզվարճանա՞նք, գինի չխմե՞նք:

— Ուրեմն դառնանք ճգնավորներ և շունենանք սիրելի կին:

— Իսկ աստվածաբանության մասին լավ ասացիր: Շատ լավ ասա-
ցիր: Բոլորովին ավելորդ տեղը կորցնում ենք մեր ժամանակը: Իսկ զվար-
ճության մասին՝ սխալ ես,— և Օտտոկար Դրիշը, որ ամենահին ուսա-
նողն էր և որի մազերը ճերմակել էին անջուն գիշերներից, որ նա անց
էր կացրել գինի խմելով, այդ խոսքն ասաց ու մոտ քաշեց գավաթը,
էր կացրել գինի խմելով, որ Քոմաս Բրյուլլի խոսքերից ոգևորված հանկարծ կշար-
երկյուղելով, որ Քոմաս Բրյուլլի խոսքերից ոգևորված հանկարծ կշար-
դեն գավաթները և շշերը կշարդեն, կշարդեն նաև պնակները և ամեն ինչ
կշարդեն և կերդվեն այլևս չխմել ոչ գարեջուր, ոչ մեղրագինի և ոչ այլ
տեսակ գինի:

— Լսեք իմ խոսքը: Դեռևս բոլորը չեմ ասել: Ծս չեմ ասում, որ այլևս
չխմենք և չմենամարտենք էսպաղոնով կամ պիստոլետով և կամ այլ
զենքով, եթե չինի թշնամի, որ անարգել է մեզ, մեր կորպորացիային և
կամ որևէ ծանր խոսք է ասել մեր հոգևոր մոր մասին: Նաև չեմ ասում,
թե այլևս մի գրկեք ձեռ սիրուհիներին, նրանց համար կիթառ մի նվա-
րեք և մի պարեք պարահանդեսներում:

— Հիմա որ միանգամայն ճշմարիտ ես, Քոմաս,— և Օտտոկարը
բարձրացրեց գավաթը,— ողջ լինես:

Մյուսները ևս բարձրացրին գավաթները:

— Դեռ սպասեք, սիրելի բարեկամներ: Թողեք, որ խոսքս վերջաց-
նեմ և այն ժամանակ դատեք, որ դատաստանով կուզեք:

— Թողե՛ք վերջացնի, թողե՛ք...

— Շարունակիր, Քոմաս,— կանչեց «սև եղբայրներից» մեկը:

— Հիմա կասեմ բոլորը, — Թոմասը ոտքը դրեց նստարանի վրա, ամբողջ մարմնով հենվեց ծնկան և ասաց, — Ինչի նման է, երբ մենք այստեղ զվարճանում ենք, իսկ այնտեղ մեր ընկերներին, մեզ նման ուսանողներին ծեծում են, ինչպես օրդոնանհաուզում ծեծում են անպաշտպան սուղատներին...

— Որտե՞ղ, ո՞վ, — և բոլորը վեր թռան, ոմանք ձեռքերը տարած դեպի սուսերները, իսկ Օտտոկար Դրիշը, որ շէր համբերել և գատարկել էր գավաթը, բղավեց.

— Ասա ու՞մն են ծեծել...

— Կասեմ ում են ծեծել... Ծեծել են Խարկովի համալսարանի ուսանողներին: Նրանց շեն ծեծել իրենց ընկերները և ոչ էլ ծեծվել են հարբած վիճակում որևէ շարաճճի արարքի համար: Նրանք ըմբոստացել են ռեկտորի դեմ, որովհետև նրանց հետ վարվում էին ինչպես ճորտերի հետ: Թքում էին նրանց երեսին և օրը ցերեկով ուսանողին պատժում էին, մերկացնելով մարմնի այն մասերը, որ ամոթ է ասել: Մերկացնում էին և ստիպում, որ ընկերները ճիպոտներով ծեծեն:

Ահա թե ինչպես են ապրում մեր եղբայրներն այնտեղ: Այդ կարգերից դժգոհ, նրանք ըմբոստացել են և փշրել ռեկտորի տան ապակիները...

— Այդ բանում նրանք մեզ նման են, — լսվեց մի ոգևորված ձայն:

— Նրանք ջարդել և փողոց են թափել ամբիոններն այն պրոֆեսորների, որոնք ոչ թե դասախոս են եղել, այլ հարբած կոզակ: Նրանք դուրս են եկել փողոց և խարույկի վրա հրդեհել ատելի գրքերը: Բայց այդ ժամանակ ռեկտորի հրամանով վրա են թափվել վայրենի կոզակները, կրակ են բացել և գերի բռնելով ուսանողներին, պատժել են սոսկալի պատիժներով: Իսկ ամենից համարձակներին հազցրել են սուղատի շենել և կնուտի տակ քշել են այնպիսի հեռավոր տեղեր, որտեղից ոչ ոք չի վերադարձել և չի վերադառնա... Ահա թե ինչի մասին է խոսքը: Իսկ մենք այստեղ միայն զվարճանում ենք և շենք հիշում մեր ընկերներին և ոչինչ չենք անում, կարծես մենք ստեղծված ենք միայն զվարճության և աստվածաբանության համար:

— Իսկ ի՞նչ անենք մենք:

— Մենք այդ մասին չէինք լսել:

Նվ այդ երկու ձայնից բացի, չլսվեց ուրիշ ձայն, տիրեց այնպիսի լուռություն, որ լսելի էր ջրի կաթկթոցը մի ինչ-որ պղնձի մեջ: Բայց շուտով այդ էլ չլսվեց, որովհետև Ֆրաու Ֆոգելզանգը, որ սովորություն ուներ խրախճանքի աղճուկի մեջ ննջելու, զարթնեց ահավոր լուռությունից ինչ:

պես ջրաղացպանը, որ վախեցած վեր է թռչում, երբ այլևս չի լսվում ո՛չ չի շառաչը, ո՛չ քարի աղմուկը: Ֆրաու Ֆոգելզանգը զարթնեց և ամբողջ տակառի ծորակը, որից մեղրագինին կաթ-կաթ ընկնում էր պղնձի փարչի մեջ: Ապա զարմացած նայեց ուսանողներին և նույնիսկ պղնձի փարչի մեջ: Երբ մոտենա նրանց, մոտենա և հարցնի, թե ինչու՞ են խոփր կացավ, որ մոտենա նրանց, մոտենա և հարցնի, թե ինչու՞ են նորհեղ գլուխները և ինչու՞ են չուռ ծխում ծխամորճերը և այլևս չեն հնչում այն զվարթ երգերը, որոնց շառաչի տակ ննջում էր Ֆրաու Ֆոգելզանգը:

— Իսկ մենք ի՞նչ անենք, Թոմաս...

Բայց ոչինչ չկարողացավ ասել Թոմասը, իսկ մյուսները չուռ մտած-ծանքի մեջ էին, ոմանք իրենց մտքում արդեն մի բան էին վճռել և մտալ նայում էին սառչող մեղրագինուն, երբ դռների մոտ լսվեց մի աղաղակ:

— Burschen, heraus, — և ներս ընկավ մեկը, որ ո՛չ գոպ ուներ, ո՛չ թիկնոց, և որի ձեռքից ալյուն էր կաթում և արյունոտ էր ճակատը և չէր իմացվում ճակատին ևս վերք կաո, թե նա արյունոտ ձեռքով սըրբել է ճակատը:

— Արշինավորները մերոնց ջարդում են Քարե կամրջի մոտ...

Ինչպես վազրը, որ ուսույունից առաջ պահում է շունչը և փակում փեմին, ապա ամենի թափով թռչում է որսի վրա և ահից գոչում է այնպես, որ սաբասափում են մյուս գազանները հեռու հեռուներում, — այնպես էլ «ձեզումահարկի բնակիչները» նախ ահաբեկվեցին այդ գույժից և գունատվեցին, ապա կատաղությունից այնպես մոնչացին, որ դրդա-ցին հին կամարները և հաշորդ վայրկյանին այլևս ոչ ոք չմնաց պանդոցին և միայն վայր ընկած աթոռները և մի քանի լիքը գավաթներ վկա էին, որ այստեղ խրախճանք կար, և անակնկալ պատահարից դուրս էին թռել զվարճացողները, որոնք ուր որ է պիտի ետ վերադառնան, և այն միայնակ թիկնոցը, որ դեռ պահում է տիրոջ մարմնի ջերմությունը, նորից պիտի հանգչի նրա երիտասարդ ուսերին:

Իսկ Քարե կամրջի մոտ կանոնավոր ճակատամարտ էր:

Օրը կիրակի էր և զբոսնելու էին դուրս եկել ոչ միայն քաղաքամիական բաղաբացիները, այլև մյուս քաղաքացիները, որոնց մի խումբ, մեծ մասամբ ուս վաճառականներ, հարբած վիճակում, կամուրջից ոչ հեռու, հանդիպել էին չոբս ուսանողի և ոչ միայն կտրել էին ամբողջ մայթը, փակելով երթևեկությունը, այլև նրանցից մեկն ուսանող Ստեփան Գյուն-

տերին մայթից հրել էր և անվանել «լեհական մուսթ»: Եվ այդ կայծից բռնկվել էր հրդեհը, և արդեն վաղուց Ստեֆան Գյունտերին, որ առաջինը քաշեց սուսերը, ընկերները տարել էին տուն արյունլվա վիճակում, արդեն հարբած բառաշում էր այն ուս վաճառականը, որի աչքերի առաջ երբեմն մթնում էր, երբեմն լուսանում, և նա տեսնում էր անկապ պատկերներ և զգում, որ իրենը չէին ո՛չ ոտքերը, ո՛չ ձեռքերը: Հարբած բառաշում էր այդ վաճառականը, որի ընկերները ծանր բռունցքով դիմավորել էին առաջին ուսանողներին, որոնք օգնության էին հասել զբոսավայրերից՝ թողնելով կիթառները և աղջիկներին:

Վաճառականներն և օգնություն ստացան, գետի մյուս ափից մի ահագին բազմություն՝ կոշկակարների, ներկարարների, կաշեգործների, օղետան սպասավորների և ինվալիդ զինվորների, որոնք օղետներում էին,— մի ահագին բազմություն՝ «ուղղափառներ, մերոնց ծեծում են» բղավելով, վազեցին դեպի կամուրջը՝ ցախավելներով, երկար ցուպերով և նույնիսկ մի պայտար վերցրեց այն պարանը, որով նա կապում էր անհանգիստ ձիու մուսթը,— սակայն, տեսնելով ուսանողների խմբերը, որ հենց այդ բոպեին զանազան փողոցներով վազում էին դեպի Քարե կամուրջը,— տեսնելով այդ, պայտարը պարանով կապեց մի ուս մահու դավաճառի, որին ընկերները դրել էին դրոգի վրա, նրան մի կերպ ազատելով ոտնակոխ լինելուց: Այնինչ մահուդավաճառը գազազած ուզում էր դուրս պրծնել ընկերների ձեռքից և նորից նետվել այն բազմության մեջ, որտեղից լսվում էին խուլ տնքոցներ, գոռոց, հայհոյանք: «Բաց թողեք ինձ, բաց թողեք, անխիղճներ», հետզհետե թուլացող ձայնով կանչում էր մահուդավաճառը, բայց այդ ձայնից արդեն հայտնի էր, որ եթե նրան բաց թողեին, նա հազիվ մի քանի քայլ կաներ և կզլորվեր գետին, որովհետև շատ անխիղճ էին ծեծել նրան:

«Ձթողնեք աղյուսներին մոտենան»,— բղավեց թոմաս Բրյուլլը, որ հենց առաջին վայրկյանին նկատել էր թշնամու մի փոքր խմբի: Այդ խումբն ուզում էր գերանների վրայով բարձրանալ և գործի դնել աղյուսների այն կույտը, որ ինչ-որ շինության համար գերանների հետ թափել էին հրապարակի մոտ: Եվ ինքն իսկույն թռավ այն կողմը, նրա հետևից «սև եղբայրները»: Օտտոկար Դրիշը, ինչպես գագաթից գլորվող ապուռած, ահագին թափով նետվեց բազմության մեջ և այնքան հեռու գնաց, որ հասավ կամուրջի կեսին, որտեղ աղմկում էին հակառակորդի պահեստի ուժերը, որոնք վայրենի աղաղակներով խրախուսում էին առաջիններին: Նրանք մի վայրկյան ետ քաշվեցին, Օտտոկարը գրատը փաթաթեց իբրև վահան և հարձակվեց այն ժամանակ, երբ շրջապատողները

վրա վազեցին: Այդ տեսարանը նման էր հողմի պտույտին, երբ երկնապայ սյունի մեջ իրար են խառնվել տերևներ, շյուղեր, փետուրներ և ամեն ինչ պտտվում է մի ահավոր արագությամբ, ոչինչ չի երևում թանձր փոշու մեջ և միայն հեռվից, մի հոգնած ուղևոր նայում է այդ սևակնած պտույտին և արագացնում է քայլերը, որպեսզի փրկվի վերահաս փոթորկից: Արդեն շատերն են գլորվել գետին, արդեն երևում են արյունոտ երեսները, ծվեն-ծվեն քրքրել են Օտտոկարի սյուրտուկը, փշրել են նրա սուսերը և ահա մի վիթխարի մարդ մեջքից գրկել է Օտտոկարին և գետնից կտրելով, նրան տանում է դեպի կամուրջի եզրը: Վայրենի հոհուում են մյուսները, իսկ մեկը ծվծվում է. «ջուրը, ջուրը գցիր շան ձագին», բայց Օտտոկարն արնամխած աչքերով տեսավ կամուրջի երկաթյա վանդակները, ոտքերով հենվեց երկաթին և թիկունքով այնպես հրեց մարդուն, որ տրաք-տրաքեցին նրա ձեռքերի մկանները և մարդն անզոր ընկավ: Օտտոկարը դուրս պրծավ նրա գրկից և նորից բորբոքվեց բռնցքափակվել:

Մի այլ տեղ ուսանողները շրջապատել են մսավաճառ Կոլեսնիկովին: Գեր մսավաճառը գործի է դրել կարճ բազուկները, ոտքերը, մինչև անգամ հաստ գլուխը, որով նա պոզահարում է այնքան գազազած, որ եթե հակառակորդը չթեքվի, այդ հարվածը պիտի փշրի նրա կրծոսկրը: «Կատողեցրե՛ք, ավելի կատողեցրե՛ք», բղավեց թոմասը և բազմությունը ճեղքելով, մոտեցավ մսավաճառին: Ապա ընտրելով հարմար վայրկյան, հետևից այնպես զարկեց նրա ոտքերին, որ մսավաճառի ծնկները ծալվեցին և նա փլվեց, ինչպես խարխուլ պատը, որի տակից քաշել են հիմնաքարը:

«Ոստիկանները, տղերք»,— կանչեց մի ուսանող, որ բարձրացել էր գերանների վրա: Իրար հետևից լավեցին սուլոցներ: Կամուրջի գլխին երևացին ձիավոր ոստիկանները: Նրանք գալիս էին մյուս ափից և, որպեսզի հասնեին հրապարակը, պիտի ճեղքեին վաճառականների և արհեստավորների պատնեշը: «Մերոնց ծեծում են», լալահառաչ առաց երկար մորուքով մի մարդ, բռնելով առաջին ձիու սանձը: Նա կռվին չէր մասնակցել, այլ միայն արձակել էր այնպիսի ձայներ, որոնցով որսորդը «քիս» է տալիս շներին: «Հեռու քաշվիր, քավթառ», և ձիավոր ոստիկանը բարձրացրեց մտրակը: Երկար մորուքով մարդը վազեց դեպի վախմիտքը, բայց այդ վայրկյանին դեպի ձիավոր ոստիկանները թռան աղյուսի կտորներ:

— Pereat*, — որոտաց մի ձայն գերանների հետևից:

Մի ձի ծառս եղավ և նրա ոտքին դիպավ այն աղյուսը, որ նետողը նշան էր բռնել ձիավորի կրծքին: Ձին հանկարծ ընկավ, ձիավորին թամբից գլորելով: «Քրեքը պատրաստ», — զոռաց վախձիստը և ձին խթանեց: Բայց այդ ժամանակ ուսանողներն առաջ հրեցին հակառակորդներին, որոնք մնացին ձիավորների և ուսանողների արանքում: Ոմանք անցան ցանկապատի մյուս կողմը և կախվեցին վանդակներից: Գերանների հետևից սաստկացավ աղյուսների տարափը: Ձիերը ետ քաշվեցին: Ուսանողները նոր թափով սեղմեցին հակառակորդին և բազմութունն ալիք-ալիք ետ նահանջեց կամուրջով, իրեն հետ տանելով ձիավորներին: Վախձիստը շրջեց ձիու գլուխը և անհայտացավ:

«Ցրվեք տները», — գերանների հետևից կանչեց Քոմաս Բրյուլը և ետ դարձրեց նրանց, որոնք հակառակորդին քշել էին մինչև կամուրջի ծայրը: Կամուրջը դատարկվեց: Գերանների հետևից դուրս եկավ «սև եղբայրների» խումբը: Այդ վայրկյանին լսվեց թմբուկների աղմուկ... «Ցրվեք տները», — բղավեց Բրյուլը, «մուշկետյորները գալիս են»: Նրևաց պատրուզավոր հրազեններով զինվորների շոկատը, որի առաջից գնում էր մի երիտասարդ սպա: Նրա դեմքին շողում էր ինքնագոհ ժպիտ: Նա նայում էր պատշգամբներին և պատուհանների կողմը, որտեղից նրան էին նայում աղջիկներ և կանայք, որոնց այդ երիտասարդ սպան կարծես ասում էր. «Տեսեք, ինչ շքնաղ են իմ ուսադիրները, իմ սաղավարտը և իմ ձին և ես»: Իսկ վերևից պատասխանում էին. «Մեչ երիտասարդն է այն սպան... Հազիվ քսան տարեկան լինի, բայց արդեն փոխ-գնդապետն է Ռեկյան մուշկետյորների գնդի...»:

Իսկ մսավաճառ Կոլեսնիկովը ոչինչ չասաց: Նա սթափվեց թմբուկների որոտից և մի կերպ ոտքի կանգնելով, քայլեց դեպի գերանների կույտը, որտեղից դուրս թռավ Քոմաս Բրյուլը: «Բռնե՛ք նրան, բռնեք», — աղաղակեց ուսը: Մուշկետյորները շարքի մեջ ժպտացին. նրանցից մեկն ընկերոջն ասաց. «Քաջեքը նրան լավ են փետրահանել...»: Իրավ որ Կոլեսնիկովը նման էր սագի, որին ժլատ տանտիկինն այլանգազել էր, շափից ավելի պոկելով բմբուլը: Նրա կոֆտան քթքրված էր և երբ նա օրորվելով անցավ կամուրջը, գետի քամին աստառի բուրբը տարավ հեռու՝-հեռու...:

Հրապարակն ամայացավ: Կամուրջի վրա երևում էին հաս ու կենս անցորդներ, որոնք տուն էին շտապում: Արդեն երեկո էր. Հեռվից լսվում

* Անկոտ:

էր թմբուկների խուլ աղմուկ: Նրիտասարդ սպան, հիացած իր գեղեցկությամբ և իրենով, դեռ շարունակում էր հեռավոր փողոցների բնակիչներին ջուլջ տալ իրեն և ուսադիրները և սաղավարտը, որ փայլում էր իրիկ-նային մթնշաղում:

6

— Դուք նորից ձեր հայրենակցի մո՞տ էիք, — հարցրեց տիկին Էլիզ Աուլենդերը մի երիտասարդի, որը ներս մտնելով, արձանացավ գառն մոտ, որովհետև նրան անսպասելի էր և՛ այդ հանդիպումը, և՛ տիկնոջ անհամբեր հարցը:

Բայց տիկինն ավելի արագ զգաց իր անզգուշութունը՝ որով մատնեց իր անհանգստութունը երիտասարդի բացակայման առթիվ, քան կատասխաններ երիտասարդը: Եվ կարծես այդ անզգուշության հետքերը ծածկելու համար, նա դարձավ իր խոսակցին՝ պրոֆեսոր Պարրոտի կնոջը, որն այդ ըուպին մոմի վրա կուցած թելում էր ասեղը:

— Ես այդպես էլ դիտեի, որ նրան ոչինչ չի պատահել... Բայց տեսե՛ք Գերմանին... Աստված իմ, ինչքան էր նա հուզվել, քանի անգամ հարցրեց...

Եվ կանացի հոտառությամբ տիկին Էլիզն զգաց, որ իզուր էր իր կասկածը և, որ իր բարեկամունհին չէր նկատել նրա անհանգստութունը և ակնապիշ դեռ նայում էր ասեղի ականջին:

— Դե հիմա պատմեք, — և տիկին Էլիզն անսեթևեթ նազանքով բարձրացրեց ձեռքը, խշշաց զգեստը և լայն թևքի միջից ձգվեց նրա մերկ բազուկը, ինչպես քամին օրորում է եղեգնուտը, և հանկարծ մերկանում է մի դալար եղեգ, որ չգիտի որ կողմը թեքվի և միայն խոնարհում է տերևները՝ ծածկելու իր բաց-կարմիր մարմինը: Նա սկսեց հարդարել կրակի գույնի խոպոպները, որ կախվել էին ճակատի կամարի վրա:

— Բայց ի սեր աստուծո, ասացեք ի՞նչ է պատահել... Ես ոչինչ չգիտեմ, — և երիտասարդն իր խելոք աչքերը, որ ավելի էին խոշորացել և՛ ուրախութունից՝ տիկին Աուլենդերին տեսնելու համար, և՛ անհանգիստ կասկածից, որ հետևանք էր տիկնոջ հանկարծակի հարցին, — երիտասարդն աչքերը հառեց նախ՝ տիկին Պարրոտին, ողջունեց նրան, և ապա սեղմեց տիկին Էլիզի ողորկ ձեռքը:

— Ինչ-որ բան է պատահել... Նախասենյակում օտարոտի վերնազգեստ է կախված, դրսում ինչ-որ կառք է սպասում... Չեմ հասկանում:

Տիկին Պարրոտը ժպտաց: Նրան ևս հաճելի էր երիտասարդի հետըզհետե անող հետաքրքրությունը, նաև այն, որ նա միամիտ երեխայի նման իր աչքերն ուղղում էր մերթ տիկին էլոիզին և մերթ իրեն, կարծես նրանց դեմքերի վրա գուշակում էր պատասխանն իր կասկածի: Իսկ տիկին Աուսլենդերն առանց թաքցնելու իր հիացմունքը, նայում էր երիտասարդի մաքուր սափրած երեսին, որ վարդագույն էր երեկոյի սառնից և նրա խելոք աչքերին, որոնց տիկին էլոիզն առաջին հանդիպումից հետո անվանել էր «մուր ծովեր»:

— Ո՞վ կա ներսը,— և երիտասարդը գլխով նշան արեց դիմացի սենյակի կողմը, որտեղից լսվում էին ինչ-որ խառն ձայներ:

— Տղամարդուն չի վայելում այդպիսի հարցասիրություն,— կեղծ լրջությամբ հանդիմանեց տիկին Աուսլենդերը և նրա վրա նայեց այնպես, ինչպես կնայի ամուսնացած կինն իրենից ավելի երիտասարդ տղամարդու, որի առնական միամտությունն ամեն ինչ ճաշակած կնոջը հիշեցնում է և այն, որ նրա համար անդարձ կորել է, և այն, որ դեռևս մնում է, ինչպես ծառի վերջին պտուղը՝ ցուրտ աշունքին:

— Ուրեմն դուք ոչինչ չե՞ք լսել այսօրվա դեպքերի մասին,— հարցրեց տիկին Պարրոտը:

— Ո՛չ, տիկին,— և նա ուզեց երդվել, բայց հիշեց, որ պրոֆեսորն արգելել է երդվելը իբրև «անվայել բան, որ հատուկ է միայն ուսաստիճանավորներին և վաճառականներին», ինչպես ասել էր պրոֆեսորը:

— Ես ճաշից հետո գնացել էի իմ հիվանդ բարեկամի մոտ...

— Ինչպե՞ս է հիմա այդ խեղճ մարդը,— և տիկին Պարրոտը թեթև հառաչեց:

— Նա երևի երբեք այլևս չտեսնի իր հայրենիքը,— տխուր ասաց երիտասարդը: Մի պահ լռեցին, կարծես երեքով միտք էին անում, թե ինչքան ծանր է երբեք չտեսնել հայրենիքը:

— Իսկ հետո ո՞ր գնացիք,— լուսթյունը խախտեց տիկին Աուսլենդերը:

— Այնտեղից ես գնացի Դոմբերգ, որովհետև այդ գրույցն ինձ ևս հիշեցրեց իմ հեռավոր հայրենիքը,— նրա ձայնը դողաց, դողողաց նաև ներքին շրթունքը: Տիկին էլոիզը խղճահարվեց և նրա սիրտը շահելու համար ասաց.

— Իմ երիտասարդ բարեկամը թող չտխրի... Դուք մի օր պիտի տեսնեք ձեր հեռավոր հայրենիքը... Այ, մենք երբեք չենք տեսնի ձեր հայրենիքը: Այդ անկասկած է... Իսկ դու՞ք: Երբ դուք վերադառնաք, ով գիտե, մենք այլևս կհանդիպե՞նք իրար, թե՞... Եվ այն ժամանակ դուք մեզ

խալառ կմոռանաք... Եվ ո՞վ գիտի, թե ի՞նչ կլինի վաղը...— տիկին էլոիզը լռեց, աչքերը հառելով իր բարեկամուհուն, որ զբաղված էր կարելով: Ապա նա ավելի խոր ընկղմվեց բազմոցի մեջ և գլուխը թիկնոցին հենած, ձգեց սպիտակ պարանոցը և նուրբ կզակը, որ թվում էր պարանոցի շարունակությունը. երիտասարդը չէր տեսնում նրա գլուխը, այլ միայն տեսնում էր պարանոցը և սպիտակ կզակը, որ նրան հիշեցնում էր մարմարե վաղեմի անդրի, որի կանացի գլուխը շարդել են բարբարոսները, և մնացել է միայն պարանոցը, որն այնուամենայնիվ վկայում է, թե ինչքան գեղեցիկ էր այն գլուխը:

— Իսկ այժմ մեր սիրելի Արմենիերին պատմենք այն, ինչ որ պատահեց այսօր...— և նա սթափվեց, ինչպես մի կայտառ աղջիկ, որ խռովում է մի վայրկյան, որպեսզի հաշորդ վայրկյանից սկսի պատմել զրնգան ձայնով:

Տիկին էլոիզը պատմում էր, ինչպես այդ պատահարի մասին կարող էր պատմել մի գերմանացի պրոֆեսորի կին, որը, ինչպես և նրա ամուսինը, չէր սիրում ուսեններին, մանավանդ ուս վաճառականներին, որոնց մասին նա իր էստուհի աղախնից և հրեա նպարավաճառից լսում էր միայն արտասովոր պատմություններ:

Պատմում էր տիկին էլոիզը, պատմում էր այն, ինչ որ նրան հազորդել էր աղախինը, որն, իբր թե, ականատես էր եղել դեպքերին մինչև այն վայրկյանը, երբ «գորքը դուրս եկավ թնդանոթներից», որից հետո նա փախել էր, որովհետև «մի կազակ ձին քշում էր ուղղակի նրա վրա»: Երիտասարդն ազահուսթյամբ լսում էր տիկնոջը և աչքը չէր հեռացնում սև ուլունքների շարանից, որ գրկել էր նրա պարանոցը և ճոճվում էր, երբ տիկին էլոիզը շարժում էր իրանը:

Տիկին Պարրոտը, որ ձեռագործի վրա գլուխը կախ լսում էր այն, ինչին արդեն տեղյակ էր,— երբեմն գլուխը բարձրացնում էր և նայում երիտասարդին: Ինչքան շուտ փոխվեց նա... Եվ ինչքան վարժ է խոսում գերմաներեն: Նա մի կատարյալ Edelmann է և ոչ ոք չի մերժի նրան իր աղչկա ձեռքը... Իսկ Արմենիերն առաջին օրերը չգիտեր ինչպես գործածի պատառաքաղը և չգիտեր կարտոֆիլն ուտելու կերպը:

Արմենիերն Արովյանն էր: Դորպատում նրան այդպես անվանեցին այն օրից, երբ բնակիչները քաղաքի փողոցներում տեսան նրա օտարոտի դեմքը, հարավի մարդու վառվռուն և մեծ աչքերը և մանավանդ հայ դպրի կապան և ջիբրուն, որ նա առաջին օրերը հագնում էր Պարրոտի տուն գնալիս: Նրա վրա նայում էին, ինչպես զարմանալի հրաշքի վրա, և ծանրամիտ բյուրգերները, որոնք երեկոները նստում էին դարպասների

առաջ, — երկար նայում էին նրա հետևից և նրանցից մեկը, որ դիպվածով եղել էր թաթարների երկրում կամ հասել էր մինչև Հաշտարխան, պատմում էր առասպելախառն պատմություններ հեռավոր հարավի մասին:

Կանայք և աղջիկները գաղտագողի հայացքով ուղեկցում էին նրան, իսկ ավելի համարձակները ժպտում էին և երբ նրանց կողմն էր նայում Արմենիերը, հանկարծ զվարթ քրթիջով պատուհանը փակում էին նրա վրա: Ոչ մի կասկած, որ այդ սենյակում, ուր հավաքվել էին տանտիրուհու աղջիկները և նրանց ընկերուհիները, դեռ շատ պիտի խոսեին նրա մասին. աղջիկների մեջ պիտի հայտնվեր մի Գրետխեն, որը պիտի հանդիմաներ ընկերուհիներին, երբ նրանց շարաճճի շազակրատությունն անցներ ամոթխածության սահմանից: Ընկերուհիները պիտի հարձակվեին Գրետխենի վրա, նրան պիտի բամբասեին, այդ աղջիկը հուզմունքից պիտի կարմրեր, և ապա առանձնության մեջ զգար մի քաղցր տառապանք:

Այդպես էին ճանաչել նրան և ինչպես հաճախ է լինում, առաջին տպավորությունը մնացել էր անջնջելի: Այդ բանին օգնել էր նաև Մարիա Աֆանասևնան, ռուս սարկավագի կինը, որի տանը մի քանի ժամանակ Արմենիերն ապրել էր: Անհանգիստ կաշաղակի նման մի բակից մյուսն էր մտնում այդ գնդիկ կինը և երբ հարցնեին նրա տան կենդրի մասին, նա երգելով ասում էր. «Ի՛նչ կենվոր, աստված իմ... Իսկական սուրբ: Մոմ է պահում, գիշեր-ցերեկ կարդում է, և իրենց լեզվով աղթում է... Եվ ինչպե՛ս է աղթում, այդ ինչ ձայն է, ինչ լեզու է: Թեև չեմ հասկանում, բայց հավատում եմ, որ սրբազան լեզու է... Իմ ամուսինն ասում է, որ նրանց լեզուն աշխարհի առաջին լեզուն է. նրանց լեզվով է խոսել Նոյը, հենց որ սարից իջել է: Ահա թե ինչ լեզվով է խոսում...» — «Ե՛սկ գինի խմու՞մ է, խոսու՞մ է կանանց հետ. պետք է, որ նրանց օրենքն արգելի այդ բանը», — հարցնում էին հետաքրքրված հարևանուհիները: «Սուտ խոսքեր են. նա կանանց հետ խոսում է, բայց խմել չի սիրում, ամբողջ օրն իմ աղջիկը նրա հետ է... Թեև փոքր է, բայց ես իմ աղջիկը նրան կին կտայի», — Մարիա Աֆանասևնան խորամանկ ժպտում էր. «Նրանց մոտ սովորություն է փոքր աղջիկ առնել... Բայց իմ Օլյգան շատ փոքր է, դեռ երեխա է և ոչինչ չի հասկանում այդ բաներից»: Եվ Մարիա Աֆանասևնան այնպես անկեղծ էր կակծում, որ աղջիկը փոքր է, և այնպես էր գովում իր տան կենվորին, որ հարևանուհիներն ակամա նայում էին իրենց հասած աղջիկներին:

Բայց ոչ մի Մարիա Աֆանասևնա չէր կարող Արմենիերի համբավը Դորպատում այնքան տարածել, եթե այդ բանին հակառակ լինեին բարեհոգի տնայտերերը և ռուսնուհիները, այսինքն Ֆրաու Յոզեֆանգի բա-

րեկամները: Պատահում էր, Ֆրաու Յոզեֆանգի պանդուկում ուսանողներից մեկը, որ քաջ գիտեր Արևելքի հին պատմությունը, նաև աշխարհագրություն, պատմում էր այն հեռավոր երկրի մասին, որտեղ գտնվում էր բերիական լյառը՝ Արարատը: Եվ ծայր էր առնում վեճը՝ կբարձրանա՞ «հերը» պրոֆեսորն այդ լեռան կատարը, թե՞ չի բարձրանա, արդյոք իրենց հայրենակցին կհաջողվի՞՝ Նոյան տապանի տեղը խրել այն խաչը, որ պատրաստել է իրենց քաղաքի դարբինը... Ֆրաու Յոզեֆանգի պանդուկում նրանք նստում էին մինչև ուշ գիշեր և հանկարծ ոտքի էր կանգնում մի ծերուկ ձկնորս, որը զրույցի ընթացքում առել էր առաջին քունը, և բարձրացնում էր գավաթը. «Հաջողություն մաղթենք մեր հայրենակիցներին, որոնք այժմ ով գիտե ինչ փոթորիկների մեջ են, որովհետև ինչպես ես գովում, այնպես էլ հավիտենական սառույցների վրա...»: Եվ նույնիսկ հուզվում էր Ֆրաու Յոզեֆանգը, երբ լցնում էր մաղթության գավաթները, որովհետև նրա համար ևս սառսափելի էր փոթորիկը հավիտենական սառույցների վրա:

Պրոֆեսոր Պարրոտին նրանք դիմավորեցին, ինչպես հաղթանակից վերադարձող զորավարի: Եվ շատ զարեջուր խմեցին այդ և հաջորդ օրերը, իրար հաղորդելով դժվար վերելքի այնպիսի մանրամասնություններ, տեսն բոլորը, և մինչև անգամ Ֆրաու Յոզեֆանգը և նույնիսկ այն ձկնորս ծերուկը, — բոլորը բարձրացել էին Արարատի գագաթը և այժմ իրենց տանը, հարազատների շրջանում վերհիշում էին այդ վտանգավոր նպատակները:

Դեռևս կենդանի էին զրույցները Արարատի վերելքի մասին և առանձին ահնածանքով էին գլուխ տալիս «հերը պրոֆեսորին», երբ հայտնվեց հայր՝ իսկական բնակիչը Արարատյան աշխարհի, որ երկրորդն էր բարձրացել և գերմանացու կապարե խաչի կողքին Արարատի գագաթին խրել էր իր ձեռագործ փայտե խաչը:

Ահա ինչը նրա համար Դորպատում ստեղծեց համբավ զարմանալի տրագոմիամբ և հենց հաջորդ օրից նա դարձավ մեկը, ուրիշ շատ տեհերում գրկաբաց կրնդունեին, որի անցնելուն սպասում էին փողոցի բնակիչները և որի մասին պատմում էին, թե մինչև Դորպատ գալը նա չգիտեր զարեջուրը և ինչպես փոքր տղա նա հրճվանքով դիտել էր գույնը գույն թղթերից սարքած այն օղապարիկները, որ ըստ այն ժամանակի սովորության տոն օրերին բաց էին թողնում օդի մեջ:

Բայց արդեն անցել էր այդ ժամանակը և փոշի էր նստել սև կապույի վրա: Նա հազնում էր մահուդե վերարկու և բարձրավիզ սյուրտուկ, որից ավելի էր երկարում հասակը: Նա կապում էր ծաղկանկար կրծ-

կայ և թավշյա փողկապ: Հյուսիսի սառն օդը փոխել էր նրա դեմքի ցոռն. սպուլներ, բայց աչքերը մնացել էին նույնը, հարավի մարդի խելոք և խորունկ աչքերը՝ «մութ ծովեր», ինչպես անվանել էր տիկին էլոիզ Աուսլենդերը, որն այլևս չէր հագնել նրանց համարող գեղեցկություններ:

7

Տիկին էլոիզը դեռ չէր ավարտել դեպքերի նկարագրությունը (ուսանողներին նա անվանում էր «խեղճ երիտասարդներ» և հաճախ պատմելն ընդհատում էր միջանկյալ դիտողություններով ուսանողների մասին, օրինակ՝ երբ հիշատակեց Քարե կամուրջը, նա դառնալով տիկին Պարրոտին, ասաց. «Ես ձեզ չեմ պատմել, թե ինչպես իմ Գերմանը հենց երեկ Քարե կամուրջի վրա կույծ է ուս կառապանի հետ... Ըջմարիտ որ կույծ է, միայն իհարկե, ոչ ինչպես խեղճ երիտասարդները... իսկ մեղավորը՝ առ կառապանն է: Նրա ձին կամուրջի վրա ընկնում է և փոխանակ օգնելու խեղճ կենդանուն, հիմար ուսն սկսում է ծեծել նրան և ինչպե՞ս՝ սապոգներով... Այդ ժամանակ իմ Գերմանը չի համբերում և սկսում է կառապանին հանդիմանել...), — տիկինը դեռ չէր ավարտել պատմելը, երբ դիմացի սենյակի դուռը բացվեց և դուրս եկավ մի ալեհեն մարդ՝ կապույտ մուռնդիրով և կարճ թրով, որի կոթից կախված էին կարմիր ծապավեն և ոսկեկար ծոպեր: Նա արդեն ալեհեն էր և ծերությունից նրա մեջքը կռացել էր: Նրա հետևից դուրս եկավ ռեկտորը՝ «հերր պրոֆեսոր» Ֆրիդրիխ Պարրոտը, նիհար և ցամաք երեսով մի կարճահասակ մարդ:

— Էվստարխ Իվանիչ, զուցե չմերժեիրք մի փոքր հանգստանալու մեր համեստ սեղանի շուրջը՝ ի վարձատրություն մեր հոգնություն, — ծերունուն դիմեց Պարրոտը:

— Որքան էլ հաճելի և քաղցր է ձեր հրավերը, բայց ես ստիպված եմ պատժել ինձ, զրկելով այդ հաճույթից, — և ծերունին փափուկ սապոգներն իրար զարկեց ինչպես հին ասպետ, և մեղմ զրնգացին նրա սապոգների խթանները: — Նաև ձեզ հայտնի է, Ֆրիդրիխ Գեորգելիչ, իմ պաշտոնի խստապահանջությունը, եթե ոչ՝ մեծավ ուրախությամբ, — և նա ծիծաղեց շոր ու կեղծ ծիծաղով, որ փոխվեց հազի՝ անախորժ և նույնքան չոր:

— Միայն մի գավաթ իսկական ռեյնվեյն, Էվստարխ Իվանիչ, եղբորում եմ չմերժել, — և տիկին Պարրոտը մոտեցավ պահարանին:

— Մերժել հարգելի տիկնոջ հրավերը՝ այդ արդեն չեմ կարող: Սակայն eine Minute, շատ եմ խնդրում, — և ծերունին թեթև հազաց, կոկորդը մաքրելով հոնոսյան գինու համար:

— Թույլ տվեք ներկայացնել ձեզ իմ Liebling-ին... Ղերր դիակոնոն Արովյան, որի մասին անշուշտ լսել եք:

— Օ, և այն էլ ինչպիսի պատմություններ... Ուրախ եմ սեղմելու ձեր ձեռքը: Շատ ուրախ եմ, — Արովյանը մի քանի քայլ արեց և թեթևակի խոնահելով գլուխը, սեղմեց ծերունու ձեռքը:

— Կարծեմ, որ նա չի մասնակցել այսօրվա անկարգություններին... — Եվ ծերունին դեմքը կեղծ զայրույթով խստացրեց, ուռեցրեց այտերը և բեղերը ցցվեցին՝ մեկը դեպի վեր, մյուսը՝ ներքև:

— Օ, ոչ, Էվստարխ Իվանիչ... Նա զբաղված է միայն իր դասերով, — և պրոֆեսորը ծերունուն մոտեցրեց գավաթը:

— Սիրում եմ, շատ եմ սիրում գիտությունը և կարդալու յուր շատ առաջ կգնաք այդ ճանապարհով, երիտասարդ, — և ծերունին բարձրացրեց գավաթը, գլուխը թեթև խոնարհեց տիկին էլոիզ Աուսլենդերին, ապա տիկին Պարրոտին և ետ գցեց գլուխը: Տիկին էլոիզին անհասկնալի էր տեսնել ծերունու կոկորդի ձգված երակները և մկանները և շոր կեղորդը, որ կծկվում էր գինու յուրաքանչյուր ումպի հետ:

Այդ ծերունին պոլիցեյմեյստեր Կրուչինսկին էր, որ եկել էր համալսարանի ռեկտորին հաղորդելու օրվա պատահարի, կամ ինչպես նա էր ասում՝ «ձեռնարկի բնակիչների անկարգության» մասին և պատժելու նրանց, որոնք «հակաօրինական բռնուտ էին սարքել» («УЧЕНИКИ ПРОТИВОЗАКОННЫЙ БУНТ»), աղյուսներ շարտելով հեծյալ ոստիկանների վրա: Նա եկել էր մեծ պահանջներով և դեպքն այնպես էր նկարագրել, որ նրա ասելով, եթե վախճատորը խոհեմ չլիներ, ապա անխուսափելի էին արյունահեղությունները երիտասարդ մարդկանց և ոստիկանների միջև, մանավանդ, որ վերջիններս պաշտպանում էին իրենց ազգակիցներին: Պոլիցեյմեյստերը հաղորդել էր նաև, որ զրգոված երիտասարդների խմբից լսվել են անթույլատրելի բացականջություններ, որոնց մասին եթե տեղեկանա գնեքրալ-նահանգապետը և մանավանդ քաղաքի ժանդարմական գնդապետ Դոնցովը, ապա կարող են առաջանալ մեծամեծ անախորժություններ, և կտուժի համալսարանի համբավը և կարող են այդ բանից օգտվել համալսարանի թշնամիները (իսկ թե ովքեր էին այդ թշնամիները՝ ծերունին շասաց) և առհասարակ քաղաքի այն բնակիչները, որոնք իրենք իրեն՝ պոլիցեյմեյստեր Կրուչինսկուն հաճախ են զանգատվում ուսանողներից:

Իր խոսքին կշիռ տալու համար ոստիկանապետն ակնարկել էր մի ինչ-որ գաղտնի շրջաբերականի մասին, որ նա ստացել էր Սանկտ-Պետերբուրգից պրոֆեսոր Պարրոտին հայտնի անձնավորության ստորագրու-

Մյամբ և որով առաջարկում էր հատուկ հսկողություն սահմանել ուսանողների վրա, ի նկատի ունենալով այն, որ մի քանի գորագույններ պետք է ձեռնարկել Դորպատում և ապա շուտով այդտեղից պիտի մայրաքաղաք վերադառնար Պավլովյան գունդը և երկու հետևակ գունդ, որոնք ետ էին գալիս Լեհաստանից և հնարավոր էր, որ երկար ժամանակով հանգրտանային Դորպատում, որպեսզի վայելուչ տեսքով ներկայանան Նորին կայսերական մեծության:

Ռեկտորը զգուշավորությամբ առարկել էր, որ երկուստեք են եղել անվայել բացականչություններ և հարկավոր չէ կարևորություն տալ զրգոված վիճակում արտասանած խոսքերին: Ինչ վերաբերում է ոստիկանների վրա աղյուս շարտելու փաստին, ապա ինքը համոզված է, որ օտանողները մի քանի աղյուս են նետել ոչ թե ոստիկանների, այլ իրենց հակառակորդների վրա և այն էլ ոչ թե որևէ մեկի մարմնին ծանր վնաս հասցնելու, այլ վախեցնելու դիտավորությամբ: Ռեկտորը հայտնել էր նաև, որ նախահարձակ են եղել հարբած վաճառականները և օտանողները միայն ստիպմամբ պաշտպանել են իրենց և ընկերների պատիվը «Այդ միանգամայն ճշմարիտ է, հարգելի Ֆրիդրիխ Գեորգեիչ», համաձայնել էր պոլիցեյմեյստերը. «այսպես են վկայում նաև շեղոք քաղաքի-ները»: «Շատ ուրախ եմ, որ այդպես է, սիրելի էմստարխ Իվանովիչ... Այն ժամանակ ներեցեք ինձ, եթե համարձակվեմ այսպիսի հարց տալու Ձեզ. ի՞նչ կասի պարոն գեներալ-նահանգապետը, եթե տեղեկանա, որ Ձեր հսկողության հանձնված քաղաքում ինչ-որ հարբած մարդիկ օրը ցերեկով հարձակվում են անմեղ ուսանողների վրա և... Կարո՞ղ է այդպես հարցնել: Կարող է: Եվ այն ժամանակ պարոն գեներալ-նահանգապետը կասի. իսկ որտե՞ղ էին ոստիկանները և հարգելի պոլիցեյմեյստերը, այդ ինչպիսի՞ բարձր են այդ քաղաքում: Հավատացնում եմ կասի և կավելացնի այնպիսի բաներ, որ կատարյալ անախորժություն կլինի Ձեզ հաժար, նաև համալսարանի համար, որն այսպիսով կարող է զրկվել Ձեր այնքան օգտակար բարեկամությունից»:

«Հերր պրոֆեսորը» միանգամից էր խառնել ծերունու բոլոր հուշիվները: Ռեկտորի ասածն այնքան ճշմարտանման էր, որ Կրուչինսկոն մի վայրկյան թվաց, թե այդ բոլորն արդեն կատարվել է, թե գեներալ-նահանգապետից արդեն ստացվել է այդ գրությունը և օր ծերության պաշտոնանկ լինելով նա թողնում է Դորպատը: Սառը ջրտինք երևաց նրա ճակատին և թաշկինակը ճակատին սեղմելով՝ նա շնչաց. «Իսկ իրավացի եք, Ֆրիդրիխ Գեորգեիչ, միանգամայն իրավացի եք... Սատանան ինչի հետ ասես, որ չի խաղա... Եվ ինչ լավ է, որ չեմ գրել ուսպոր-

որ: Հավատացնում եմ, որ մի քանի անգամ կանչեցի քարտուղարին, րպեսզի թելադրեմ: Բայց ինչ-որ ձայն ինձ ասում էր, թե գնա Ֆրիդրիխ Գեորգեիչի մոտ, նրա հետ խոսիր և ապա նոր... Ինչպե՞ս ասեմ: Նու, կարծեք թե ես ուզում էի նստել աթոռի վրա և կարծեք ամեն անգամ աթոռի միջից,—համարձակվում եմ ասել,—ցցվում էր մի սուր բան և չէր թողնում նստեմ... Ենթահակալ եմ, մեծապես շնորհակալ եմ... Ախր ես (և այդ խոսքի վրա նա ճակատին ձեռքով այնպես էր խփել, որ հարեվան սենյակում լսել էին այդ ձայնը և տիկին Պարրոտը մոտեցել էր դռանը), ախր ես, կարող եմ ասել, հիմար եմ: Եվ որտեղի՞ց ինձ խելք... Եվ առհասարակ ո՞վ է խելք տվել ուսանողին: Մեր բանն է աչ-ձախ կրակի, շարդել, թափել: Աստված մեզ խելք չի տվել և այդպես էր ասում նաև իմ հանգուցյալ հայրը, թե աստված խելք է տվել միայն գերմանացիներին...»: Այդպես նա երկար պիտի խոսեր, եթե նրան չընդհատեր պրոֆեսորը և շառաչարկեր. թե այնուամենայնիվ հարկավոր է «մի բան անել»: Եվ համաձայնեցին, որ պոլիցեյմեյստերն այդ օրվա պատահարի մասին տեղեկացնում է միայն իբրև պարզ անկարգություն և պատժում է առևտրականներից հանցավորներին (սեմ նրանց եղջյուրի նման կծրանեմ),—կանչել էր Կրուչինսկին),—իսկ համալսարանի տրիբունալը կպատժի հանցավոր ուսանողներին և այդպիսով կվերջանա պատժությունը:

— Դե արդեն ժամանակն է ճանաչելու պատիվը...— և ծերունի Կրուչինսկին դատարկեց շորրորդ գավաթը: Նրա ցամաք երեսը գինուց առույզացավ և կայտառացան աչքերը, որոնց մեջ մինչև այդ կար մեռելային սառնություն:— Իսկ գինու մասին, կարող եմ ասել, որ արքայական գինի է: Հոնոսյան վարդաշուր, տիկի՛ն, կատարյալ և առաքինի գինի: Այնպես չի՞, տիկին,— դարձավ նա տիկին էլոիզին, որը ոչ գինու համն էր ճաշակել և ոչ լսում էր պոլիցեյմեյստերին, այլ ասեղնագործում էր, մասներն արագ շարժելով, կարծես խաղում էր կլավիրի վրա:

— Այո, գինին անարատ է,— պատասխանեց Արմենիերը նկատելով, որ տիկին էլոիզը հանկարծակիի եկավ և կարմրեց:

— Եվ այլևս ոչ մի կարծիք: Այս կարծիքից հետո մենք լռում ենք, Ֆրիդրիխ Գեորգեիչ: Մենք լռում ենք, երբ խոսում է Արարատի սրդին և կարող եմ ասել Նոյի երկրից: Շատ ուրախ եմ, որ այսօր ես բախտ ունեցա սեղմելու Ձեր ձեռքը, պարոն թրովյանով, և կարող եմ ասել, որ երեսասարդը ուղիղ ճանապարհի վրա է շնորհիվ Ձեզ, ամենահարգելի Ֆրիդրիխ Գեորգեիչ և նաև ես, որ իմ բարեբարքն եք,— ուրեմն թույլ տվեք խոնարհվել և auf Wiedersehen, տիկին, որին ես պատիվ ունեցա ծանո-

Քանալի ի շնորհիվ Ձեզ, Քանկագին Տրիգրիս Գեորգևիչ, և ներողութուն, մեծ ներողություն... Ես արդեն ծեր եմ, իսկ այս գինին կատարյալ է, իսկական սուրիմենցիա...

Կրուչինսկին երկրորդ անգամ թոթվեց տիկին Պարրոտի ձեռքը, սեղ-Վեց նաև տիկին էլոիզի բարակ մատները և համբուրեց՝ մի քանի անգամ կրկնելով՝ «Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ», որ կարելի էր հասկանալ և իբրև ուրախություն անցկացրած երեկոյի համար, և ուրախություն, որ նրա դողացող մատները հպել են տիկին էլոիզի փափուկ ձեռքը:

— Այժմ հնություն, դեպի գործ, դեպի գործ... Կարող եմ ասել,— բայց այս անգամ այլևս ոչինչ չասաց, այլ միայն աղմկելով թրով և սպառզների խթաններով՝ քայլեց դեպի դուռը: Կանայք լսեցին նրա ձայնը նախասենյակից:

— Ոչ մի դեպքում... ոչ մի դեպքում այդպիսի գոեհկություն: Դուք իմ հովանավորն եք, Տրիգրիս Գեորգևիչ, իսկ այս երիտասարդը Արարատի որդին է և կարող եմ ասել հերթ դիակոնուս... Ոչ մի դեպքում:

Կանայք հասկացան, որ պոլիցեյմեյստերի առարկությունը նրա գրատի մասին է: Սերունին չէր թողնում, որ նրան հագցնեն ոչ պարոն ոսկատորը և ոչ Արմենիերը: Նա ուրիշ ինչ-որ բան ասաց, որից հետո բարձր ծիծաղեց և շուտով սանդուղքների վրա լսվեց նրա հեռացող ոտնաձայնը:

8

— Զարմանալի մարդիկ են ուսուստիճանավորները,— ասաց պրոֆեսորը ծերունուն ճանապարհելուց հետո,— իմ սիրելի բարեկամն ի՞նչ կասի նրա վարմունքի մասին՝ դրսում...

Արմենիերը, որին գայրացրել էր և ծերունի պոլիցեյմեյստերի գինարքուքը, և նրա խոսակցությունը, և այն, որ նա երկու անգամ սեղմեց տիկին էլոիզի ձեռքը և համբուրեց, որից ցնցվեց տիկինը, և Արմենիերը նրա աչքերում զզվանք տեսավ, որովհետև ծերունին առանց շոթունքները սրբելու էր համբուրել այդ ձյունափայլ ձեռքը,— Արմենիերի գայրույթը սաստկացավ, երբ պրոֆեսորը հիշեցրեց պոլիցեյմեյստերի գոեհիկ վարմունքը դրսում, երբ մոտեցան կառքին:

Կառապան գինավորը՝ երկար սպասելուց հոգնած քնել էր ոչ թե իր տեղը, այլ այնտեղ, ուր պիտի նստեր Կրուչինսկին: Այդ բանից սաստիկ բարկացավ ծերունին և այնպես բոթեց քնած մարդուն, որ խեղճը քունը գլխին թռավ մի քանի քայլ, բայց սանձերը ձեռքից շթողեց:

«Քշիր... և ես ցույց կտամ», բղավեց ծերունին այնպիսի ձայնով, որով չէր խոսել ոչ Տրիգրիս Գեորգևիչի առանձնասենյակում, ոչ տիկին-

ների ներկայությամբ և նույնիսկ անհավատալի է, թե այդ զառամ մարմնից կարող է դուրս ելնել այդպիսի ահավոր մոնչոց:

— Ես հիշեցի այն աղալարին, որ մեզ հրավիրեց իր վրանը, երբ մենք գնում էին դեպի սուրբ Հակոբի վանքը: Հիշում եք, չկարողացանք վրանի տակ նստել, երբ լսեցինք այն թշվառ մարդու աղիողորմ ձայները...

— Այն արդեն գազանային դատաստան էր,— և ապա ավելացրեց,— դուք ճշմարիտ եք. երկուսի մեջ նմանություն կա և երկուսն էլ ասիացի բնակալներ են, որոնք ստորադաս մարդու հետ բորենի են, իսկ մեծալորի առաջ՝ աղվես: Հիմար մարդիկ են... Այո՛:

— Իսկ ի՞նչ դատաստան էր,— հետաքրքրվեց տիկին էլոիզը:

— Ձեր ջղերը թույլ են լսելու այդ պատմությունը, որ իմ հայրենիքի թիրաբարքերն է վկայում:

— Բայց ավելի սոսկալի չէ, քան այն, երբ խանձել են ձեր մազերը:

— Ավելի սոսկալի է:

Եվ որովհետև տիկին էլոիզը խնդրեց, նաև խնդրեց տիկին Պարրոտը, Արմենիերը պատմեց, թե ինչպես ուղևորության ժամանակ, Արարատի ստորոտում նրանք հանդիպում են վաշկատուն քրդերի վրանների, որոնց պիսավորը («աղալարը») ճանապարհորդներին հրավիրում է յուր վրանը: Երբ նրանք ներս են մտնում, վրանի հետևից լսում են ինչ-որ աղբխարչ բացականչություններ: Մոտենալով, նրանք տեսնում են մի կիսամերկ ժարու, ձեռքը և ոտքը ամուր կապած և մեջքի վրա պառկած, այնպես, որ մարդը չէր կարող որևէ շարժում անել: Նրա վրա թափել էին մածուն և լոռի ջուր: Որովհետև շոգ էր, ուստի բազմաթիվ ճանճեր թափվել էին նրա վրա և ծծում էին մածունը և լոռի ջուրը: Երբ նրանք մոտեցան, ճանճերը մի կողմ թռան և պատժվածի մերկ մարմնի վրա նրանք տեսան արյան կաթիլներ: Ապա ետ եկան ճանճերը՝ մեծ և կանաչ թևերով, նաև փոքր ճանճեր և ուրիշ այլ ճանճեր, որոնք գազազել էին շոգից և առատ անդից և ծածկել էին մարդու մարմինը և վիստում էին կրծքի վրա, սկանչների մեջ և ունգների մոտ և աչքերի խողովում,— անօգնական մարդն արդեն նվաղած միայն աղիողորմ տնջում էր: Պրոֆեսորը գայրացավ և ուղեկից կազակներին կարգադրեց, որ անմիջապես արձակեն կապերը: Արմենիերը նկատեց, որ աղալարը դժգոհում է և նրան մի կողմ թռչելով հասկացրեց, որ գերմանացին ավելի հզոր է, քան ուսուստի լուսրու փաշան» և հորդորեց, որպեսզի աղալարն ինքն արձակի խեղճ մարդու կապերը: Քուրդը քրթմնջաց, բայց հանեց ահագին խանչալը և կտրտելով կապերը, կանչեց. «Այս աղանիթի դուլն ես, մունդառ...»:

Ամբողջ ճանապարհին նրանք խոսում էին այն մասին, թե քոբոզը նորից չի՞ կապկպի այն մարդուն: Նրանք որոշել էին վերադառնալ նույն ճանապարհով և սուտգել, բայց երբ վերադարձան, ոչ վրանները կային և ոչ ոչխարի հոտերը, այլ մնում էին միայն օջախի քարերը, մոխրակույտը և հողի մեջ խրված այն սեպը, որից կապկպել էին մարդուն:

— Իսկ ինչո՞ւ համար էին պատժել նրան:

— Նրանց գլխավորն ասաց, որ իբրև թե նա վրանից յուղ է գողացել:

— Ինչ խիստ են պատժում ձեր հայրենիքում, — ասաց տիկին Պարզ Դոնացու:

— Ասիան ավելի խիստ պատիժներ գիտեմ: Այնտեղ գողութեան համար ձեռք են կտրում, բողոքելու համար լեզու են կտրում, իսկ սուտգուլի համար կտրում են ականջը: Այդպես է Ասիան...

— Բայց ես լսել եմ, որ այդպես պատժում են նաև ուսուցիչներին և Զարթոնի, — առարկեց Արմենիերը:

— Իսկ ուսուցիչի երկիրը ինչո՞վ Ասիա չի, — տխուր պատասխանեց Պարթոտը. — և մենք ինչքան պետք է աշխատենք, որպեսզի այդ երկիրը դառնա մեր հայրենիքի նման: Լուսավորություն, ահա թե ինչն է պակասում ուսուցիչին: Լուսավորություն և այն ժամանակ այդ ժողովուրդը հրաշքներ կգործի:

— Իսկ մինչ այդ նրանք պիտի ծեծեն խեղճ երիտասարդներին, կծու ասաց տիկին էլոիզը:

— Պետք է ասեմ, որ մերոնք էլ պակաս հանցավոր չեն:

— Նրանք միայն պաշտպանվել են:

— Նրանի այդպես լինե՞ր... Ես միշտ ասել եմ, որ Ֆրանս Ծոգելզանգի պանդոկը բարի վախճանի չի հասցնի, — և պրոֆեսորը նայեց յուր սանիին այնպես, կարծես այդ խոսքերով նրան խրատում են զգուշանալ այդ պանդոկից: — Գինին և ճշմարիտ գիտությունն իրար թշնամի են:

— Բայց նրանք երիտասարդ են և նրանց զվարճանալ է պետք:

— Այո, տիկին, սակայն ոչ այնպես, ինչպես այսօր զվարճացան: Այդ զվարճության համար երևի մի քանիսը պատժվեն և որքան էլ ես օրում եմ նրանց, այնուամենայնիվ պետք է պատժել, որովհետև երիտասարդների համար ոչինչ այնքան կործանարար չէ, որքան վատ օրիշակը:

— Ես գիտեմ, որ պարոն պրոֆեսորը ողորմած է:

— Եվ յուր պաշտոնի մեջ խիստ, — ժպտալով վրա բերեց պրոֆեսորը. — իսկ ի՞նչ կասի այդ մասին մեր սիրելի Արմենիերը:

— Այդ սլատահարի մասին ինձ քիչ առաջ պատմեցին և ինձ շատ վրդովեցրին հարբած վաճառականների անիրավությունները:

— Ուրեմն, եթե դուք այնտեղ լինեիք, անշուշտ կմասնակցեիք կովին և արևելցու ձեր տաքարյունությունը գուցե ավելի հեռու գնայիք, քան ուսանող թոմաս Բրյուլլը:

— Ես չգիտեմ, բայց ես գու՞թ ունեմ:

— Դրա համար այնքան դառնացաք ծերունի կրուչինակուց:

— Նա մի ասիացի բռնակալ է, ավելի բրիտ, քան այն քուրդը, որ յուր լեռներից բացի ուրիշ ոչինչ չի տեսել... — նրա աչքերը բոցկլտացին ատելությամբ և ազնիվ գայրույթից գեղեցկացավ դեմքը: «Այս հայի հոգին գանձեր ունի, ինչպես նրա խավար երկիրը և արդյոք նա չափից ավելի չի՞ բորբոքում յուր ատելությունը», մտածեց պրոֆեսորը, որ նրան խնամում էր, ինչպես անդրծովյան երկրից բերած մի գաղսնի. որ ձեռնասուն էր դարձել և սիրում էր նրա խնամող ձեռքը, բայց ուներ նաև ճանկեր և մի անհայտ ուժ նրա մեջ երբեմն արթնացնում էր այլ բնազդներ:

Տիկին էլոիզը վեր կացավ, զանգատվելով, որ երկար է նստել և երևի արդեն անհանգստանում է նրա ամուսինը: Բոլորը ոտքի կանգնեցին:

— Արմենիերը կուղեկցի ձեզ և ապա կվերադառնա յուր բնակարանը և կպատրաստի դասերը, — ասաց պրոֆեսորը:

— Ես նրան միայն ցույց կտամ Գերմանին իբրև կենդանի ապացույց, որ նրան ոչինչ չի պատահել, — տիկին էլոիզը ծիծաղեց, ձգեց իրանը, նրա թավշե զգեստը ծալ-ծալ ծփաց, ինչպես կատվի մորթին, երբ տաք անկողնում զարթնում է կատուն:

Նրանք բարի գիշեր ասացին և հեռացան: Պրոֆեսորը սանդուղքի վրին պահեց լապտերը, մինչև նրանք դուրս եկան փողոց:

Դուրսը մու՞թ էր և մարդաձայն չէր լսվում:

— Երկար նստեցինք, — և տիկինը դանդաղեցրեց քայլերը: Նրանք յուր գնում էին կողք-կողքի:

— Դուք չե՞ք մրսում... Սառն է օդը:

— Ես ցուրտ չեմ զգում:

— Երիտասարդ եք և եռում է ձեր արյունը, իսկ ե՞ս, — և նրա ձայնը դողաց: Տիկին էլոիզը յոթ տարով մեծ էր Արմենիերից, սակայն նա խնամքով էր պահել իրեն և տարիքից ավելի երիտասարդ էր:

— Դուք դարձյա՞լ գայրացած եք:

— Այն ծերունու վրա՞ այ՞:

— Իսկ ի՞նչ էր պատահել դուրսը:

Արմենիերը պատմեց և ավելացրեց.

— Ինչպե՞ս կարելի է... չէ՞ որ նա էլ մարդ է: Եվ գիտե՞մ, որ այն Քշվառին երևի ավելի սաստիկ է պատժել, երբ հասել են պոլիցեյհանուզ նա ինքն արդեն սպառնաց:

— Բարի է ձեր սիրտը, իմ բարեկամ, և թող միշտ այդպես մնա, — և մի՞նում տիկինը սեղմեց նրա ձեռքը, ապա թուլացրեց և զգաց, որ օւղեկիցն այլևս չի թողնում այդ տաք և քնքուշ ձեռքը:

Նրանք այդպես լուռ գնացին՝ ջերմ անրջանքի մեջ և տիկինը միայն մտածում էր, որ շանցնեն իրենց տնակը, որովհետև երբեմն նրան թվում էր, թե ոչ թե քայլում են մուժ փողոցով, ուր խավարի մեջ ուրվագծվում էին տները՝ սրածայր կտուրներով, փակ դարբասները և ծառերը, որ դեռ մերկ էին և նոր էին ուռչում բողբոջները, — տիկին էլոիզին թվում էր, թե քայլում են մի անսահման դաշտով, որտեղ ոչ մարդ կա, ոչ մարդաձայն է լսվում, այլ միայն խշշում են խոտերը և եղեգնուտի մեջ քնել են երկու թռչուն՝ կտուց-կտցի:

Մանոթ դարբասին շուտ հասան:

Պրոֆեսոր Գերման Աուլենդերը դուռն մոտ գրկեց իր բարեկամին, կարծես նրան վաղուց չէր տեսել և երիտասարդը վերադառնում էր գեթուժյունից: Նա ծալեց գիրքը և ուրախ բացականչեց.

— Էլոիզը մեզ հյուրասիրում է սուրճով... Առանց առարկության:

Մագիստրատի աշտարակից ժամացույցը խփում էր կես պիշերո, երբ նա տուն վերադարձավ: Չէր հիշում, թե ինչքան էր շրջել դուրսը: Ինչ-որ մուժ բան դառնում էր նրա հոգու մեջ, խլրտում էր, ինչպես աճում է բողբոջը գարնան գիշերին: Նա մերթ հիշում էր Դոմբրգը, ուր եղել էր ցերեկը և առանձնության մեջ արտասվել էր մի անառիթ տխրությամբ, որ երբեմն պատում էր նրան և նրան մղում էր դեպի բլուրները և անտառը և էմբախի լուռ գետնազրը, մերթ ականջին հնչում էր ձայնը այն հիվանդ լեռնցու, որին ցերեկով այցելել էր. — մերթ զգում էր մի քաղցր ջերմություն և ուռչում էր կուրծքը, թվում էր իրենն է ամբողջ աշխարհը և ինքն աշխարհի ամենաբարձր մարդն է, բայց մի ուրիշ հույզ, ինչպես մշուշ, ծածկում էր գարնան պարզկա երկինքը և ոչինչ չէր երևում և միայն ծնտի վրա զգում էր նույն ձեռքի ջերմությունը:

— Հիմա արդեն սառն է և դուք կմրսեք, — տիկին էլոիզը նախասենյակում բարձրացրել էր նրա օձիքը, ինչպես մայրը, որ տաք փաթաթում է երեխային և այնպես դուրս թողնում:

— Մի դժբախտ մարդ ողջունում է քեռի Մարտինին և խնդրում է իրեն հյուրընկալել... —

Այդ խոսքերով մոտեցավ Քոմաս Բրյուլլը ծերունի Մարտինին, որը գեռ նոր էր տեղավորվել նստարանի վրա և թախտոտ տուփը ձեռքին ուղում էր ներս քաշել մի պտղունց, որից հետո պիտի ընթերցար երկնայան աղոթքը: Բայց ամեն ինչ խանգարվեց: Նա նստարանի վրա թողեց սկե տուփը, աղոթագիրքը, նաև ահագին թաշկինակը, որ ծերունին արևի տակ փռել էր, որպեսզի փոշտալուց հետո տաք թաշկինակով քիթը սրեր:

Նա գոտուց արձակեց բանալիների կապը:

— Բայց լավ չի, պարոն Բրյուլլ, լավ չի, որ այդքան հաճախ եք այցելում ինձ... Դեռ ձմեռ էր, որ ես ստորագրեցի ձեզ համար և հիմա նորից... Աստված վկա, լավ չի:

— Ավազից պարան ես հյուսում, քեռի Մարտին:

Նրանք ներս մտան մի նկուղ, որ ուներ միայն մի լուսամուտ այնքան բարձր, որ երկարահասակ մարդու ձեռքը չէր հասնի և այնքան փոքր, որ այդ նույն մարդը հագիվ կարող էր ձեռքը դուրս հանել, եթե բարձրանար աթոռակի վրա: Բակում մնաց միայն ավագ պեղելը՝ վիթխարի հասակով մի մարդ, որ թեև հագել էր կարճ կաֆտան և մինչև ծնկները բրդի գուլպաներ, բայց շարժ ու ձևերով հայտնի էր դարձնում, որ ծամանակին եղել է խտաբարո գինվոր և այդպիսին էլ մնացել է:

Պեղելը, որ ուղեկցում էր Քոմաս Բրյուլլին, թեև տակից հանեց մատյանը և քեռի Մարտինին ցույց տվեց ստորագրելու տեղը:

— Ընդունում եմ մի գլուխ, որ իրեն մեղավոր չի ճանաչում, մի սիրտ, որ ատելությամբ է լցված իր թշնամիների հանդեպ, մի զույգ ձեռքեր, որոնք մի օր պիտի շոշափեն նրանց կողերը և մի մարմին, որին յոթ օր, յոթ գիշեր պարտավոր եմ պահպանել հացով ու ջրով... Ստորի՞ր, քեռի Մարտին, — նկուղի դուռն մոտ արտասանեց Բրյուլլը և բազրի՛ր, քեռի Մարտին, — նկուղի դուռն մոտ արտասանեց Բրյուլլը և միևնույն ժամանակ ձեռքով նշան արեց «սև եղբայրներին», որոնք հեղին հետո նրան հետևել էին և այժմ փողոցից նայում էին դեպի բակը: «Սև եղբայրները» հասկացան, որ ավագ պեղելը հիմա պետք է վերադառնա և որպեսզի նրան չհանդիպեն, ցրվեցին՝ ինչ-որ նշան անելով իրենց ընկերոջը:

Ավագ պեղելը լուռ հեռացավ, մատյանը թեև տակ, գլուխը բարձր

բունած և այնպիսի քայլերով, երբ ծնկները չեն ծալվում և թվում է, թե ոտքերը ձուլված են թուշից:

— Եվ ինչո՞ւ համար հանգիստ չեք մնում, պարոն ստուգենտ...— Եվ քեռի Մարտինը տնքալով ներս բերեց ջրամանը, ապա մի հասո ներքնակ, որ երբեմն փռում էր արևին...— Հիմա ձեր ընկերների հետ կլինեիք, կարող էիք նավակով գրոսնել, մինչև անգամ կմտնեիք Ֆրաու Չոգելզանգի պանդոկը և ուրիշ էլ ինչեր չէիք անի... Տեսեք ինչ հիանալի երեկո է, ինչ գարուն է բացվում: Մինչև անգամ իմ արյունն է եռում... Չէ, երիտասարդ պարոն, ափսոս եք, շատ ափսոս... Եվ ինչպե՞ս պիտի յոթ օր յոթ գիշեր մնաք այս վանդակում:

Սերունին սրբում էր նկուղը և քրթմնշում քթի տակ: Այդ քեռի Մարտինի սովորությունն էր՝ խրատել սկզբում, ապա բարեկամանալ կալանավոր ուսանողի հետ, մինչև անգամ գաղտնի կերպով նրա համար հարմարություններ ստեղծել, պատճառաբանելով, որ ինքը քրիստոնյա է և չի կարող մերձավորի ծանր վիճակը շթեթևացնել: Բայց միշտ սկսում էր հանդիմանություններ և նախատինքով:

Թոմասը կանգնել էր նկուղի մեջտեղը և անտարբեր լսում էր ժերուսուն, բաց դռնից նայելով երկնքին, որտեղ արևն արդեն մանիշակագույն էր ներկում վերջալուստի ամպերը:

Համալսարանի տրիբունալը այդ օրն էր սահմանել վճիռը և ինչպես կարգն է, վճռի ընթերցումից հետո ավագ պեղելը մտեցել էր նրան. հասկացնելով, որ այժմ հարկավոր է գնալ ոչ թե գետափ կամ այգի և կամ էլ զվարճության, այլ պետք է յոթ օրով մնաս բարով ստել այդ բոլորին և քայլել դեպի «քեռի Մարտինի տնակը»:

Գործի քննությունը տևել էր մի շաբաթ: Կուրատորը հարցաքննել էր նաև այն ուսանողներին, որոնք Քարե կամուրջի կովին չէին մասնակցել: Շատերն էին երզմամբ վկայել, որ նախահարձակ եղել են ուսանողը, իսկ Ստեֆան Գյուտները, ցույց տալով իր մարմնի վերքերը, կուրատորի երեսին բղավել էր, որ եթե ուսանողին չպատժեն, ապա ինքը կբողոքի լուսավորության մինիստրին և կգրի, որ Դորպատի արքայական համալսարանը չի պաշտպանում ուսանողի կյանքը հարբած ամբոխից: Թոմաս Բրյուլլին հանցանքը թեթևացրել էին նաև այն մի քանի հարվածները, որ ստացել էին ուսանողներից ոմանք բռնցքամարտի ժամանակ, հարվածներ, որոնց հետքերը դեռևս երևում էին նրանց դեմքի վրա, իրեն կապտած ուռուցքներ: Այդ ակներև փաստերը անառարկելի էին դարձրել այն, որ հարձակվել էին ուս վաճառականները, իսկ ուսանողները միայն պաշտպանել են իրենց և եղբայրության պա-

տիվը: Բայց որովհետև Թոմաս Բրյուլլն առաջինն էր բռնցքակովից անցել աղյուս նետելուն և աղյուսներ նետել էին ամբոխի կողմը (այդպես էին վկայել բոլոր ուսանողները), որից կարող էին վնասվել պատահական մարդիկ, ուստի տրիբունալը որոշեց Թոմաս Բրյուլլին, իբրև չեղավարի, յոթ օրով նստեցնել կարցեր:

— Հապա, այդպիսի բաներ, պարոն երիտասարդ... Չեք լսում ժերուսուն, չեք լսում, և ահա թե ինչ է լինում վերջը:

— Քեռի Մարտին... Այդ բոլորը բարի՞: Բայց չե՞ս կարծում, որ այսպես մի քիչ կոշտ կլինի պառկել, մանավանդ, որ հիանալի երեկո է, հա՛, քեռի Մարտին:

— Տեսնեմ, գուցե մի բան ճարվի... Միայն թողեք, որ մթնի, թե չայն դժոխքի պահապանը երբեմն գալիս է հոտ քաշելու, թե չլինի քեռի Մարտինը մոռացել է կանոնները և մեղմ է վարվում կալանավորի հետ... Իսկ այժմ վառեմ ճրագը և տանք Կեսարինը Կեսարին:

Քեռի Մարտինը ճրագը վառեց և կողպեց դուռը:

— Իսկ մենք նորից թերթենք այս հին ալբոմը, — տխուր ասաց Բրյուլլը, երեսը դարձնելով պատին:

«Ալբոմը» հենց այդ նկուղն էր, որ տրիբունալի վճիռների մեջ կոչվում էր criminal carcer, իսկ ուսանողներն անվանում էին «ալբոմ», որովհետև տարիների ընթացքում կալանավոր ուսանողները նկուղի պատերի վրա գրել և փորագրել էին իրենց ազգանունները, կալանքի թվականը, ամբողջ ոտանավորներ, «հիշատակներ», նկարներ և մինչև անգամ հայհոյանքներ:

Ահա հենց դրան մոտ մի քաջ լատինագետ գրել է կամաքոս զորավարի խոսքը՝ Non licet in bellis bis peccare, իսկ մի ուրիշը, իրեն մեղավոր ճանաչելով, ավելացրել է. «Հայր, մեղանչեցի»: Մի ուրիշ տեղ, մի կալանավոր երևի տխրության ժամին գրել է՝ «Վայ մեռնակյաց մարդուն»... Ահա մի ամբողջ արձանագրություն գոթական սրածայր տառերով. «Հիշեցեք Թեոդոր Հերմանին Վյուրտեմբերգից, որ 1823 թվի հոկտեմբեր 12-ին ենթարկվեց կալանքի ութ օր, որովհետև նա քաջ սուսերամարտիկ էր»... «Այստեղ ապրել է Կազիմիր Կոստոլը, կուրատոր ֆոն Ցանաուի մահացու թշնամին»: Այս արձանագրությունների արանքում բազմաթիվ էին միայն ինքիցիսները՝ երկու կամ երեք տառ: Ահա միայն մի անուն՝ «Կարոլինա» և մի սիրտ, որի մեջ խրված է սուսերը: Ո՞ւմ սիրտն է այդ, ո՞վ էր Կարոլինան, ի՞նչ է մտածել կալանավորը այն աղչկա մասին. արդյոք նա՞ է խոցել երիտասարդի սիրտը սուր սուսերով, թե մի ուրիշը, որ խլել է աղչկա սիրտը, և կալանավորը երկար մտածել է սիրո և դավաճանության

մասին և ապա որոշել է ազատվելու հենց առաջին օրը մենամարտի կանչել ախոյանին: Ոչինչ չի ասում ո՛չ այդ անունը և ո՛չ խոցված սիրտը...

Բայց պատերի վրա ավելի շատ էին ծաղրանկարները և այնպիսի նկարներ, որոնց մասին չի կարելի գրել: Ահա մեկը, գրավել է պատի կեսը, նկարելով զանազան դեմքեր և արկածներ Գորպատի ուսանողների կյանքից. մի խումբ ուսանողներ կանգնել են մի տան դիմաց, իսկ նրանցից մեկը պարանոս սանդուղքով բարձրացրել է երկրորդ հարկը և պատուհանից ներս է նայում:

Երևում է, որ գիշեր է, որովհետև ներսը, սեղանի վրա վառվում է մոմը: Սենյակում քնած են ըստ երևույթին ամուսիններ... Հանդուփ ուսանողը բաց պատուհանից զմայլանքով է նայում անկողնում պառկած գեղեցկուհուն, որ քնի մեջ դեն է շարտել մետաքսի ծածկոցը և մոմի լույսով ցոլանում են դեռահաս մարմնի բոլոր սքանչելիքները և մանավանդ նուրբ ոտքը, որով ծունկ է արել կինը, ինչպես նժույզը՝ որ բարձրացնում է ոտքը՝ կաթավաքայլ սուրալու: Նրա կողքին քնած է մի ահագին մսագունդ, որ բարձի վրա երկարել է բրդոտ ձեռքը և նրա հաստ մատները հազիվ են հասնում կնոջ մերկ թիկունքին, որի վրա ինչպես ողկույզներ կախվել են գեղեցկուհու զանգուրները: Մի ուրիշ նկարի վրա նույն սենյակն է, բայց արդեն ցերեկ է, ուսանողներից մի քանիսը սպասում են միջանցքում, իսկ այն երիտասարդը, որ պատուհանից էր նայում, ներս է մտել և խոնարհ գլուխ տալով տանտիրոջը, ինչ-որ բան է հարցնում: Բրդոտ մսագունդը ձեռքերը խաչել է կրծքին և վախեցած նայում է. իսկ մարմաշե վարագույրի հետևից կիսով շափ դուրս է եկել այն երիտասարդ կինը և ամոթխած ծածկում է հոլանի պարանոցը և կուտծքը: «Կարլ Բրայտը փնտրում է ազատ ձեռունահարկ», — նկարի տակ ածուխով գրել է անհայտ կալանավորը:

Մի այլ տեղ նկարել են հրեա նպարավաճառին, որ երեկ գնացել է ուսանողներից հավաքելու ստանալիքը... Նա սարսափած ետ է փախչում. փրփոտում են կաֆտանի երկար փեշերը, նա արդեն ցեխի մեջ է թողել մի կալոշը, բայց վազում է, որովհետև նրա հետևից են ընկել գազազած ուսանողները՝ թրադաշտյաններով և երկար փայտերով, պատուհաններից դուրս են թափվել ուսանողները և խեղճ նպարավաճառի վրա շարտում են դատարկ շշեր, ձվեր, կաղամարներ, իսկ մեկը պիստոլետը նշան է բռնել և ահա ուր որ է պիտի բռնկվի հրազենը:

Ահա սեղանի շուրջը բոլորել են չորս հոգի: Նրանցից երկուսը կեղծ ծամով են, երրորդի գլխին փոշուգիական թասակ է, իսկ չորրորդը գրել է խեղկատակի գլխարկ երկու բոժոժներով: Սանդուղքի գլխին երևում է

մի ուրիշը, որ ուղղվել է դեպի այն սենյակը, ուր սեղանի շուրջ բոլորել են չորս հոգի: Այդ մարդը շալակել է գինու տակառը, որի վրա նստել է մի գեթ խոճկոր, նրան հետևում է մի երիտասարդ տղա, որ գրկել է կողովը՝ բաժակներով, ափսեններով, դանակ-պատառաքաղով. նրանից հետո բարձրանում է մի ավելի փոքր տղա, որ ձեռքերի վրա տանում է մի կարկանդակ, ապա բարձրանում է նրանից ավելի փոքր տղա, որ տանում է միայն աղամանը և նրա հետևից առանց աղամանի, շորեք-թաթ բարձրանում է մի երեխա և վերջապես՝ այդ բոլոր երեխաների մայրը և կինն այն մարդու, որ կքել է տակառի ծանրության տակ: «Pes aspesa ad astra»*, — նկարի տակ գրել է անհայտ նկարիչը, հավանորեն կամենալով պատկերել այն անցած ժամանակները, երբ Գորպատի բուրջը քննություն տալու համար գնում էր պրոֆեսորի տունը, նախօրոք այնտեղ ուղարկելով գինի և երշիկ և թեյ և շաքար, և ենթարկվելով խստագույն քննության, տուն էր վերադառնում հարբած, սակայն սրպես մագիստր աստվածաբանության:

Եվ դեռ ուրիշ շատ նկարներ կային այդ գետնահարկ գնդանի պատերի վրա, որտեղ ինչպես գերեզմանատանը, կողք-կողքի շար էին ընկել իրար անհարիր գրություններ, որոնց հեղինակները հաջորդաբար քնել էին նույն սառն անկողնում: Եթե մեկը կամենար գրել Գորպատի համալսարանի պատմությունը, ապա ամենահետաքրքիր էջերի նյութը կարող էին կազմել այդ հիշատագրերը՝ ածուխով, երկաթի կտորով, մատիտով և նույնիսկ եղունգներով, որոնց տերերը՝ բոլորը երիտասարդ մարդիկ, թողել էին իրենց թաքուն մտքերն այնպես սեղմ, ինչպես տազանագիրը: Ոչ ոք չէր ավերել և ոչ մի նշան, կուրատորների կուլեգիայի և ոչ մի անդամ ներս չէր մտնում այդ խավար կալանատունը, պեղելները կալանավորներին դուռն մոտ էին հանձնում քեռի Մարտինին, որի աչքերը չէին նշմարում գրությունները պատերի վրա, իսկ կալանավորները և հեղինակներն էին, և՛ ընթերցողները այդ զարմանալի գրքի, որով նրանք մեղմում էին մենակության ձանձրությունը:

Թոմաս Բրյուլլը դանակով մի ազատ խորշում փորագրեց. «Ծն գիտեմ, որ իմ սիրտը մի օր ինձ պիտի տանի դեպի հունական Պ տառը»*, — բայց և այնպես կեցցե հաջորդը»:

Ապա գբատը փոռեց և պառկեց մեջքի վրա:

* Դժվար է ճանապարհը դեպի աստղերը:

** Դեպի կախաղան, որին նման է Պ տառի պատկերը:

Պատի վրա խաղում է ինչ-որ ստվեր. կարծես թարթում է մի վիթխարի աչք, որի բիբն է լուսամուտը, հագիվ նշմարվող լույսով... Ոչ այդ ճրագն է պատրույզի ուրախ աղմուկով: Որեմն մայր է մտել արևը... «Արևը մայր է մտել, ինչպես մեռնում է դուցազներ»: Երևի քնել է մի ժամ, երկու ժամ, գուցե ավելի: Նա չի հիշում... Ինչ լավ էր Բոհեմիայի անտառներում, թռչնորս Վալտերը ցույց էր տալիս այն ավերակ դղյակը, որտեղ ապաստանել է Կարլ Մորրը: Ինչ խավար գիշեր էր... անտառի վրա կարկտախառն անձրև էր և դղրդում էր որոտը, կարծես տրաքվել էր հեղեղը և գալիս էր զարհուրելի զորությամբ... Այն ի՞նչ աղմուկ է դըրսում. լավում են ոտնաձայներ, ապա մի վայրկյան լուռում են: Պատուհանից ոչինչ չի երևում, լավում է մետաղի ձայն. քեռի Մարտինը բանալին դարձնում է կողպեքի մեջ և հանկարծ ներս են խուժում շորս հոգի, փաթաված սև թիկնոցների մեջ: Նրանք լապտերներով են:

— Տիդեյին... Դու է՛ր, Մորից... Նաև ինքը՝ Մունչ Արքան:

Եվ թոմասը գրկեց իր ընկերներին, որոնք դեն նետեցին օտարոտի թիկնոցները և գլխարկները, որ հագել էին կալանավորին հանկարծակի բերելու:

— Տես թե ո՞վ է եկել մեզ հետ, — ուրախ կանչեց Տիդեյինը, ցույց տալով մի երիտասարդի, որը դուռն մոտ կանգնած նայում էր քնկերների գրկախառնվելուն և միաժամանակ զարմացած դիտում էր համարասարանի հռչակավոր criminal carcer-ը:

Թոմասը մի քայլ մոտեցավ:

— Արմենիե՛ր, իմ սիրելի եղբայր... — Երիտասարդը ձեռքի կապոջ վայր դրեց և նրանք իրար գրկեցին:

Արմենիերի աչքերը լցվեցին: Նա ոչինչ չասաց և աչքերը խոնարհեց գետին:

— Մենք դեռ հեռվից լսեցինք ինչ-որ աղմկալի խոսակցություն, — արագ-արագ ասաց Տիդեյինը, որ մի բուրբուն տասն անգամ արդեն շափել էր կարցերն անկյունից անկյուն:

— Մի քիչ հանդարտ, պարոնայք ուսանողներ... Դրսից կարող են լսել, — բայց քեռի Մարտինի աղերսին ոչ ոք ուշադրություն չդարձրեց, և ժերունին բարվոք համարեց դուռը ծածկել և հեռացավ՝ շարունակելու ջունքը, որովհետև նրանց կապոցներից և կողովներից, որ ուսանողները ներս էին բերել լայն թիկնոցների տակ, քեռի Մարտինը եզրակացրեց, որ նրանք դեռ երկար պիտի նստեն...

— Ես մերոնց պատվիրեցի ապասել փողոցի անկյունում: Մտե-

ում եմ և ինչ եմ տեսնում... Արմենիերը կովի է բռնվել քեռի Մարտինի հետ: Նա նրան ներս չի թողնում՝ պահանջելով ցույց տալ մատրիկուլի թերթը: Այդ ժամանակ ես քեռի Մարտինին մի կողմ քաշեցի. «Գիտե՞ս սա ով է, քեռի Մարտին... Սա Արմենիերն է, ակտորի սիրելին և Արարատ բարձրացողը. բացի այդ, նա հոգևոր կոչումից է...»

— Դու կարող ես առյուծին դիմակով վախեցնել, բայց քեռի Մարտինն առյուծ չէ, այլ մի հեզ գառ, — ծիծաղեց թոմասը: — Իսկ ինչ նորություններ կասի իմ բարեկամը, — և նա Արմենիերին թևանցուկ մոտեցավ մահճակալին, — այլ պայմաններում ես բոլորիդ կմեծարեի. ինչպես վայել է, բայց այժմ երևակայեցեք, որ սա մի դղյակ է...

— Եվ մենք ավազակներ, — ասաց Տիդեյինը, որ արդեն կապոցից հանել էր երշիկ, եփած միս, ձու և փնտրում էր դանակը, — ամբողջ օրը բռն շեմ կերել և քաղցած եմ՝ ինչպես ժլատ մարդու շունը:

— Բայց մենք մեզ հետ մի ամբողջ կրպակ ենք բերել, — և Մորիցը կապոցի կողքին դրեց մի խորունկ կողով, որի մեջ խոնիրխունն դարսված էին բազմատեսակ ուտելիքներ, կարծես նրանք իրոք կողոպտել էին մի նպարավաճառի կրպակ:

— Իսկ ես բերել եմ տիկին էլոիզ Աուլենդերի նվերը և նրա ողջույնն անարդար պատժածին, — և Արմենիերը բաց արեց իր կապոցը, մեջը՝ մեղրահաց, կարկանդակներ և շաքարով պատրաստված մրգեր:

— Երևում է, որ պրոֆեսորի տնից է այս հարուստ նախաճաշը: Մեր ամբողջ թաղում շես գտնի այդպիսի ասեղնագործ սփռոց, — և Տիդեյինը բաց արեց սփռոցը, — այս վկայում է նաև տիկին Աուլենդերի ձիրքը...

— Նաև նրա վեհանձնությունը: Ես երբեք չեմ մոռանա այս շնորհը, — և թոմասը ձեռքերը կրծքին խաչելով, խոնարհեց գլուխը, — կհայտնեք տիկին Աուլենդերին, որ երախտապարտ եմ ողջունի և նվերի համար:

— Տիկինը նաև ջանք թափեց թեթևացնելու ձեռք պատիժը... Նա մի բարի հրեշտակ է...

Արմենիերի մարմնով մի շերմ գրգիռ անցավ, երբ այդ խուլ նկուղում, որ նման էր ձգնավորի խուցին, հնչեց տիկին էլոիզի անունը նրան հաճելի էր նաև, որ թոմասը, — նրա համար մի մեծագործ հերոս, — տիկնոջ մասին խոսեց այդպես գորովալի:

— Իսկ քաղաքում ի՞նչ են ասում այսօրվա մասին...

— Վասիլ Սերգեյիչը՝ ուսս սարկավազը ցնծության մեջ է... Արշիեպիսկոպոսները վճռից դժգոհ են. նրանք սպառնում են բողոք ուղարկել Ռիգա: Իսկ մերոնք վրդովված են և եթե մենք չուստեփնք, նրանք բո-

լորը կթափվեին այստեղ: Քանի դու կալանավոր ես, այդքան ժամանակ լսարանում քո նստարանի վրա կդնեն եղևնյա պսակ, իսկ սուսերամարտի դահլիճում՝ քո սուսերի վրայից կկախեն սև ժապավեն: Նաև այն են ասում մերոնք, որ այսօրվանից Ֆրաու Յոգելզանգի պանդոկում առաջին գավաթը կրարձրացնեն հանուն քո և մեր եղբայրության... Ահա ինչ են ասում մերոնք:

— Միայն Օտտոկարը, որ դեռ նստած է պանդոկում,—Տիդելինի խոսքը շարունակեց Մորիցը,—մեզ բոլորիս անվանում է վախկոտ միանձնուհիներ: Նա անվերջ գոռում է, թե քեզ պիտի կարցերից փախցընել և վրեժ լուծել...

— Անմիտ ծրագիր է,— տխուր ժպտաց Քոմասը,— «Արի գնանք Բոհեմիայի անտառները և ավազակ դառնանք, մի գաղափար, որ արժանի է աստվածարման...»,—արտասանեց Քոմասը՝ հիշելով իր անկապ մտքերը, երբ պառկած նայում էր ճրագի թարթող ստվերին, չկարողանալով որոշել՝ քնած է, թե արթուն:

— Անմիտ ծրագիր է... բայց Օտտոկարն ըմբոստ է և բորբոքվելով մի օր կարող է ժայթքել:

— Ֆրաու Յոգելզանգն էլ գթառատ մայր է և նրան այնպիսի մեղրագինի կտա, որ աշխարհը շուտ կգա նրա գլխի մեջ և ամեն ինչ կցնդի գինու գոլորշու հետ:

— Եվ վատ կլինի, Մորից... Իսկ գիտե՞ս ինչ կաներ Օտտոկարը, եթե այլ աստղի տակ ծնվեր. հիշո՞ւմ ես Կարլ Մոորն ինչ է ասում Շպիգելբերգին. «Օրենքը կրիայի քայլեր է անել տալիս այն մարդուն, որ կարող էր թռչել արծվի պես. օրենքը երբեք մի մեծ մարդ շտեղծեց, մինչդեռ ազատությունը հսկաներ է առաջ բերում և դյուցազուններ... Տուր մի գունդ ինձ նման կտրիճներ և Գերմանիան կդառնա մի հասարակապետություն, որի առջև կուսանաց վանքեր կթվան Հոռմն ու Սպարտան...»: Օ՛, Մորից, ահա այդ կտրիճներից է Օտտոկարը և հարկավոր չի, որ Ֆրաու Յոգելզանգի մեղրագինին թմրեցնի նրա ըմբոստ հոգին...

— Նա մի արջ է, որ կարող է անձնատուր լինել, եթե միայն սեղմես նրա ականջը...— Այդպես խոսեց Յան Ինդուանիսը՝ Մունջ Արքան, ինչպես կոչում էին ընկերները: Նա մի վիթխարի տղամարդ էր, ինչպես քարե սյունը, որ ցցված էր Պետերբուրգերշտրասսեի վրա՝ ի հիշատակ կոմս Շերեմետևի հաղթանակի: Ինդուանիսն ազգով էստ էր, ուներ մոնղոլական տափակ երես և շեղ աչքեր: Նրա ներքին ծնոտը նման էր ձիու ծնոտի և երբ խոսում էր, կարծես ատամների տակ գարի էր փշրո՞

ղում: Մինչ այդ նա անշարժ կանգնել էր, հագին արջենի քուրք, որ իջնում էր մինչև կրունկները:

Արմենիերը, որ նրանից քաշվում էր՝ կարծելով թե նա ուսանող չէ, ալ Քոմաս Բրյուլլի դրսի ծանոթներից, ասաց.

— Օտտոկար Դրիշն իմ հարևանն է և շատ սիրելի, շատ համեստ կրայր է... Եվ ես նրանից աշխարհագրություն եմ սովորում:

— Օ՛, նա քաջ գիտի աշխարհագրություն և պոետիկա, և լեզուներ էլ լավ գիտի, բայց և այնպես կատարյալ արջ է...

— Սիրելի Արմենիեր, չվիճենք Մունջ Արքայի հետ,—կիսակատակ ասաց Քոմասը,—նա մեծ վարպետ է արջաբանության և ինքը կես մարդ, կես արջ է, ինչպես վկայում է նրա արտաքինը, որ այսօր ավելի ուտած է:

— Իմ արտաքինը թող ձեզ կրկնակի ուրախություն պատճանի, և Մունջ Արքան, քանդելով քուրքի կապերը, թևերը տարածեց:

— Herr Cott sacramentum,— բացականչեց Տիդելինը:

— Ահա քեզ հրաշք:

— Այժմ հասկացա, թե ինչու աչքիս ուռած երևացիր:

Իսկ Մունջ Արքան կանգնել էր քուրքը լայն բաց արած: Քուրքի նստառի վրա, բազմաթիվ գրպանների միջից երևում էին շշերի գուլպաները, ինչպես գինետան դարակների վրա: Տիդելինն ու Մորիցը վրա վազեցին, նրանք շշեր հանեցին այդ գրպաններից, քուրքի այլ խորշերից, նրա տաբատի գրպաններից և էլ որտեղից ասես, որ նրանք գինի չհանեցին:

— Այսքանը ե՞րբ կարողացար հավաքել. չէ՞ որ ամբողջ օրը մենք միասին ենք,— և Տիդելինը նայեց գինու շշերին, որոնց մի մասը դրել էր գետնին:

— Ես երեկվանից եմ Բիաս հույն փիլիսոփան—*... Հույս ունեի, որ Քոմասը կազատվի և մենք սանդուղքի վրա նրան կողջունեինք: Բայց ֆորտունան այլ կերպ դարձրեց անիվը:

— Այժմ ի գործ, magister bibendi...** Բախտավորի համար ամեն տեղ երջանկություն է, նույնիսկ քեռի Մարտինի տնակում:

Տիդելինը, որ հայտնի էր նաև իբրև նկարիչ, մահճակալի վրա ըստ իր ճաշակի սարքել էր սեղան, մեշտեղը տապակած խոճկորը, շրջապատված եփած ձվերի օգակով: Ճրագի լույսի տակ խոճկորն այնպես էր փայլում, կարծես դեղին մարմարե քանդակ էր փղոսկրյա շրջանակի

* Մի անգամ հույն փիլիսոփա Բիասը բարեկամների այն հարցին, թե ինչու հրեհհիջ լողտեց իր գուլքը, պատասխանեց. «Եմ ունեցածը ես հետս եմ ման ածում»:

** Եմելու վարպետ:

մեջ: Նրա կողքին ձկների վտանն էր, որի մեջ երկու տափակաձուկ՝ բերանները բաց ահա պիտի կծեն խոճկորի յուղոտ ստրիկը: Իսկ կարմիր խավթարի հատիկները այնպես էին փայլում, ասե՛ս մարջան ուղուններ էին: Ապա երշիկները... Լիվորնոյի երշիկ, ծխահամ երշիկ և երշիկ, որ հորթի մսի համ ունի, նաև երշիկ, որը ոչ ծխահամ ունի և ոչ հորթի մսի համ, այլ հիշեցնում է Ֆլամանդուհու մերկ բազուկը: Եվ այդ ամենի մեջ իրարից պատշաճ հեռավորությամբ Տիդելենը շարել էր գինու շշերը, որոնցից մեկը նման էր կաթուղիկ արքահոր, մյուսը՝ կապույտ պիտակով և սուկե զմուռով հիշեցնում էր մուշկետյորների գնդի այն երիտասարդ սպային, որի սուկե սաղավարտը ցուում էր մթնշաղում:

Նրանք մի կերպ տեղավորվեցին, որովհետև հինգ հոգու համար կար միայն մի աթոռակ: Արմենիերը նստեց պարսկական ձևի՝ ծալապատիկ, մեծ զվարճություն պատճառելով ընկերներին: Մունչ Արքան կամեցավ նմանվել նրան, բայց տարատի կարերը բանդվեցին և քիչ էր մնում նրա մարմնի ծանրությունից մահճակալը շոքեր: Միակ աթոռակը նրան տվին:

Առաջին գավաթները դատարկեցին հանուն եղբայրության: Արմենիերը դժվարությամբ խմեց. գինին ծառի համ էր տալիս, ավելի ճիշտ՝ կուարի համ: Քնեթակներում արյունն արագ դոփեց: Եվ հաճելի, և դամ մի բան նեղար ճմվում էր, նա զգում էր մի տարտամ երկվություն, մի տարակուսանք:

— Իմ սիրելի եղբայր, բաժանիր մեր խորհրդավոր ընթրիքը:՝
անաց թոմասը:

— Երան դուր չեկավ մեր գինին... Իհարկե Նոյի երկրից հետո:

— Ամենևին ոչ,— և Արմենիերը դժգոհեց, որ ժառանգ իր տարակուսանքը,—ես դատարկել եմ իմ գավաթը:

— Մենք երկրորդն ենք դատարկել: Իսկ Մունչ Արքան արդեն մի շիշ լցրել է իր ներսի գրպանը:

— Թողեք, որ մեր բարեկամն իրեն ազատ զգա մեր ընկերության մեջ:

— Այս ամենն ինձ համար այնքան նոր է, որ ես... ես նույնիսկ չփորձեմ, թե այն ինչ է,— և մտառով ցույց տվեց խավթարը: Նա այդ ասաց միամիտ պարզությամբ և այնպես ժպտաց, որ անհնար էր չվարակվել: Մունչ Արքան գարմացած նայեց և ստոնեցին նրա շեղ աչքերը և նրան մնորը շարժեց:

Թոմասը մոտ քաշեց պնակը:

— Չկնկիթ է, կեր և տես...

— Ինձ չի կարելի,— և Արմենիերը զգաց, որ երեսն ամօթից այրվում է: Ապա խսկուն բարձրացրեց գլուխը և արագ ասաց,— ես ձուկ և ձկնկիթ չեմ սիրում:

— Այն ժամանակ խոզի միս կեր:

— Կուշտ եմ:

— Ա՛...— ծոր տվեց Մունչ Արքան, ինչպես հորանջում է քաղցած զազանը,— չէ՞ որ նա հայ է և նրանց կրոնը արգելում է ուտել օտարի ձնորով պատրաստած կերակուրը և հացը:

Արմենիերը վրդովվեց.

— Այդ մենք չենք, այդ պարսիկներն են... Իսկ մենք քրիստոնյա ենք և շունենք այդպիսի օրենք:

— Գու կշտացա՞ր, իմ սիրելի եղբայր... Գուցե քեզ վիրավորեց մեզներից մեկի ավելորդ խոսքը: Ինդուանիս,— դարձավ նա Մունչ Արքային,— այսօր դու խոսեցիր այնքան, որքան չէիր խոսել մի ամսում, այնինչ, եթե լսեիր, փրիստփա կլինեիր:

— Ինձ ոչ ոք չվիրավորեց, եղբայր թոմաս... Ես հանկարծ մի բան հիշեցի... Եվ... ես անչափ ուրախ եմ, որ ձեզ հետ եմ:

— Այն ժամանակ կեր և խմիր,— ասաց Մորիցը:

— Մորից, երբ խոսում է Ղոմը, լուում է աշխարհը,— աստեղ թոմասը և բոլորը հասկացան, թե ներկաներից ով էր Ղոմը և ով աշխարհը,— Տիդելեն, լցրու գավաթները...

Տիդելենը գավաթները լցրեց:

— Եղբայրներ,— և թոմասը բարձրացրեց գավաթը,— այս գավաթը դատարկենք մեր սիրելի Արմենիերի երջանկության: Նա ոչ ֆուքս է, ոչ բրենդեր և ոչ մեզ նման աստվածաբան կամ փրիստփա: Բայց նա բարձր է մեզանից: Որքան ես գիտեմ, նրա ժողովուրդն է misera contibuens, plebs*, ինչպես Սպիտակ արջի բուլոր հպատակները... Եվ նա գավակն է այդ ժողովրդի, առաջին աշծիվը, որ Արարատի երկրից թռել է այսքան հեռու: Նրա համար իր հայրենիքի ծուխը պայծառ է օտար երկրի կրակից... Սիրելի Արմենիեր,— և թոմասը նրա կողմը թեքեց իր գեղեցիկ գլուխը,— իմացիր, որ մենք դժբախտներին սովորեցնում ենք արյունով և քրտինքով հասնել ազատության և թող շատերից վախենա նա, ումնից շատերն են վախենում: Քո հայրենիքում ես կատարվում եմ բնություններ, ինչպես ամեն տեղ Ռուսիայում... Ահա մենք այստեղ խնջուլքի ենք, բայց Պոլոնիայում հասում է պատամբների արյունը, իսկ ցուրտ Սիբիրիայում սառչում են առաջին բարատ-

* Բշտա և հարկատու դամիկներ:

ները: Արիասիրտ եղիր. ամեն սկիզբ դժվար է, բայց հավատա, որ սաստիկ ձգված աղեղը մի օր կտրաքվի և այն ժամանակ սուրբ է նա, ով կովիլ է իր հայրենիքի համար՝ քրտինքով և արյունով: Mensch, bezahle deine Schulden*, — առել է Վեյմարի իմաստունը: Այժմ հասկեն այդ ժամանակները... Արիասիրտ եղիր, Արմենիեր:

- Նվ Քոմասը մի ումպով դատարկեց գավաթը:
- Pro patria**, — և Տիգելները դատարկեց գավաթը:
- Pro patria cemper***, — և Մորիցը դատարկեց գավաթը:
- Միրելի եղբայր... — և ուրիշ ոչինչ չկարողացավ արտասանել

Մունչ Արքան, որ Քոմասի խոսքի վրա երեք անգամ դատարկել էր գավաթը, որովհետև այդ հսկա տղամարդը բարակ սիրտ ուներ և երբ սաստիկ հուզվում էր, ներքին բոցը հանգսնում էր մեղրագինու ջրվեժով:

Արմենիերը գունատ էր: Նրա թավ արտևանունքները շղարշի նման ծածկել էին աչքերը: Կարծես ննջում էր: Ապա նա գլուխը ցնցեց և նայեց պարզ աչքերով:

— Լցրու գավաթները, եղբայր Տիգելին: Ըստ իմ հայրենիքի սովորության ես պատասխանի խոսք ունեմ:

Տիգելները գավաթները լցրեց:

— Իմ հոգու եղբայրներ, ինչ որ ասաց Քոմասը, ես չեմ մոռանա հավիտյանս հավիտենից: Ես որդի եմ մի հին ժողովրդի, որ խավար է ապրել և եկել եմ այստեղից լույս տանեմ այդ հեռու երկիրը: Այստեղ գաա իմ երկրորդ հայրենիքը: Բայց ես մի օր պիտի վերադառնամ իմ հին հայրենիքը, որ սպասում է ինձ, ինչպես մայրը որդու վերադարձին: Ես չպիտի մոռանամ իմ լեզուն, իմ սովորությունները, որպեսզի վերադարձին ինձ օտար չհամարեն: Ա՛խ, եթե դուք իմանալիք այն ամենը, ինչ որ եկել է իմ գլխին, իմանալիք իմ կյանքը և տեսած լինիք իմ հայրենիքը և նրա մարդկանց, — դուք կներեիք և իմ տխրությունը, և իմ մեծ կարոտը: Բայց ես երբեք չեմ ների իմ թշնամիներին, որոնք միայն իմը չեն, այլ ժողովրդի թշնամին են: Տեսնո՞ւմ եք այս սպին, — նա ետ քաշեց մազերը և ցույց տվեց ճակատի սպին՝ արասու մեծություն, — ես էի տասը տարեկան, երբ ինձ տարան վանք, գուցե լսել եք անունը՝ էլմիածին: Այնտեղ ես, — չգիտեմ ինչպես թարգմանեմ այդ բառը,

* Գյոթեի խոսքը. «Ով մարդ, կատարիր թո պարտականությունները»:

** Հանուն հայրենիքի:

*** Միշտ հայրենիքի համար:

այնտեղ ես մոնթ էի, հասկանո՞ւմ եք, մոնթ, որ հոգևորականի ծառան է, չուր է բերում նրա համար, ավլում է նրա խուցը, կերակրվում է ինչ որ կտա տերը, քնում է խարի վրա և այդ ամենի դիմաց հոգևորականը մենթին սովորեցնում է գրել, կարդալ: Հիմա էլ իմ հայրենիքում դեռ այդպես են սովորեցնում: Ես էի տասը տարեկան և այդպես մոնթ էի, ծնողներից հեռու, ինչպես գերի տարած երեխա: Գիշերները ծածուկ լաց էի լինում և կարոտում էի մեր հողն տնակը, իմ սուրբ մորը: Մի գիշեր ես պետք է կարդայի Դավթի սաղմոսները: Իմ ուսուցիչը քնելուց առաջ սիրում էր սաղմոս լսել: Այդ օրը ես փայտ էի կրել և հոգնել էի: Սկսեցի կարդալ, կապելով վանկերը և երգելով, ինչպես մեզ սովորեցրել էին կարդալ: Հետզհետե քունը հաղթում էր իմ ուսուցչին, իսկ ես կովի մեջ էի քնի հետ, բայց քունը գերեց ինձ և ես միայն հիշում եմ այն մեծ մոմերը, որ վառվում էին գրքակալի երկու կողմը: Հանկարծ ահագին ցավից վեր թռա. ինձ թվաց, թե գլխիս հալած երկաթ թափեցին: Գլուխս այրվում էր... Ես մի ծանր հարված զգացի մեջքիս և ընկա խարի վրա: Խավար էր և խավարի մեջ, ինչպես Նրիքովյան փող, որոտում էր իմ ուսուցչի ձայնը: Նա ինձ անիծում էր, գլուխս այրվում էր, զգում էի խանձված մազերի և այրված մսի հոտ: Ամբողջ գիշերը լաց եղա և երկու շաբաթ ցավը տանջում էր ինձ: Հասկանո՞ւմ եք ինչ էր եղել. քնել էի և իմ ուսուցիչը հանկարծ զարթնելով, քնիս մեջ ճակատիս էր խփել վառվող մոմը և մազերս բռնկվել էին: Տեսնո՞ւմ եք այս սպին:

Արմենիերը խոսում էր՝ երբեմն դժվարանալով գտնել համապատասխան բառ, երբեմն սխալ արտասանելով: Նա պատմում էր իր կյանքը գունեղ և զարմանալի հետաքրքիր՝ ինչպես արևելյան հեքիաթ: Նվ խոսքի վերջում՝ բլրորովին անկեղծ և զողացող ձայնով նա իր եղբայրներին ասաց, որ ինքը հոգևոր կոչումի լինելով, պահում է հայ եկեղեցու ծեսը, ըստ որի այժմ ծոմ է, որովհետև մեծ պասն է, և շուտով կլինի Զատիկը: Ահա թե ինչու նա բերանը չի առնում ոչ ձուկ, ոչ լուղահաց և ոչ երշիկ, այլ խմում է միայն մեղրագինի: Նա ասաց նաև, որ առանց այդ էլ իր հայրենիքում նրան արդեն համարում են հերետիկոս, ուստի ինքը պետք է անարատ պահի իրեն, ինչպես պատվիրել է նաև պարոն ռեկտորը և արդար հոգով վերադառնա հայրենիք:

— Իսկ դու հիմա կեր և խմիր... Այստեղ քեզ ոչ ոք չի լրտեսի, — ասաց Տիգելները խղճահարված, որ ինքն արդեն կերել է խոճկորի կեսը և հարթել է երշիկների բլուրը, այնինչ նույն սեղանի մոտ ընկերը կիսաբողջ նստած է:

— Հապա իմ խի՞ղճը,— մեղմ առարկեց Արմենիերը:

— Արիասիրտ եղիր, Արմենիեր, և պահիր քո հայրենի ծեսերը, եթե նրանք հարկավոր են քո գործի հաջողութեան... Բայց և մի մոռանա՛, որ գու ընտրյալ ես:

Նրանք դեռ երկար պիտի նստեն և դեռ լիքն էր այն շիշը, որ նման էր կաթոլիկ արքանոր և այն շիշը, որի ոսկե զմայր սաղավարտ էր հիշեցնում.— երբ հանկարծ դուռը բացվեց և ներս մտավ քեռի Մարտինը՝ գիշերային զգեստով. դրսից լսվեց մեկի գոռոտոցը՝ կիթառի հնչյուն, ներքի հետ:

— Ինչպե՞ս քեռի Մարտինին, սիրելի երիտասարդներ,— բայց քեռի Մարտինը խոսքը չվերջացրեց, որովհետև նրա հետևից ներս մտավ Օտտոկարը հարբած և աչքերն արյուն կոխած:

— Գնանք Բոհեմիայի անտառները... Ավազակներ դառնանք,— և կիթառով զարկեց ու վայր գլորեց ճրագը և քիչ մնաց, որ ինքը գետին փռվեր:

— Ինչպե՞ս քեռի Մարտինին,— աղեխարշ կանչեց ծերունին,— սրբ գոռոտոցը հասնում է մինչև Ռեկել և վաղը կուրատոր ֆոն Յանաուն ինձ պիտի պատժի:

Օտտոկարին մի կերպ դուրս տարան: «Սև եղբայրները» հրածեղ տվին իրենց առաջնորդին և բոլորը դուրս եկան դռան մոտ: Բոնաս Բրյուլլը նայեց խավարի մեջ օրորվող նրանց լապտերներին:

Իսկ Օտտոկարը քնած փողոցներում մոնչում էր ինչպես կրկեսի ցուլը, որին խմացրել էին մի տակառ մեղրագինի և բաց էին թողել քաղաքում:

— Կարթագենը պետք է կործանվի,— գոռում էր Օտտոկարը:

Նրան տանջում էր հայրենիքի կարոտը:

Գարուն էր բացվում և առաջին գարունն ավելի էր գորացնում այդ կարոտը: Իսկ ոչ ոք չկար այն հեռու երկրից, որ նրա հիշողության մեջ պայծառ էր, ինչպես մութ գիշերին հովիվների խարույկը լեռան վրա: Այդ մի անմարմին կարոտ էր՝ նման այն գոլորշուն, որ գարնանը բարձրանում էր ճահճուտներից, անտառներից և էմբախի ջրերից: Այդ մի ձայն էր, որ նրա ականջի տակ հնչում էր երբեմն մանուկ օրերի երգը՝ երբեմն պարզ լսում էր մոր ձայնը՝ «Խաչե՛ր, Խաչե՛ր...»: Եվ հանկարծ ետ էր նայում, բայց նանին չէր երևում, այլ երևում էր պարտիզալներ:

անդուլը շալակին, կամ փողոցով անցնում էր մի ֆրաու, որ կոճի ճաշող հայացքով նայում էր Արմենիերին:

Երբեմն ձայնը չէր լսում, այլ նայում էր դիմացի պատին և չէր տեսնում պատը, այլ տեսնում էր սպիտակ բարդիներ, նրանց խորքում Եսիր Եսայու ջրաղացը՝ դռնակը բաց և մուտքի մոտ ջրաղացայանի ծխացող օրսխը: Կամ բացվում էր մի բարակ ճանապարհ, որ բաղերի արանքով իջնում էր ձորը՝ դեպի Գոչգուշան... Ահա այն ընկուզենին, որից հետո կգա նովավոր աղբյուրը, որի ջուրն այնպես տխուր խոխոջում է աշնանը, երբ այլևս մարդ չկա բաղերում, հնձանները դատարկ են և ծտերը կտցահարում են կարմրած մասուրը, նաև մի դեղին դդում, որ մոռացել են բաղել: Ձորով իջնում է քամին և խշշում են ընկուզենիները՝ թափելով խնկաբույր տերև և ամբողջ ձորում կոնչում է միայն մի ազուավ, մի ծեղացած ազուավ, որ տեսել է բուք և բորան և ցուրտ ձմեռ, երբ սառչում է նովավոր աղբյուրը և այլևս չի երգում Զանգուն:

Երբ միտն էր գալիս նովավոր աղբյուրը, ծարավում էր. ականջի տակ աղբյուրի ձայնն էր, նրա զով վշշոցը, աչքերի առաջ թափվում էր կապույտ ջուրը, որ գրգռել գալիս էր ոսկեկանաչ մամուռների միջով: Ախ, նթե միայն մի անգամ ձեռքերը բուռ աներ և կոանար այդ հստակ ջրի վրա, խմե՛ր, խմե՛ր կու՛մ-կու՛մ՝ ականջի տակ ջրի ձայնը, ընկուզենիների խշշոցը, Գոչգուշանի շառաշը...

Զարթնում էր այդ կարոտը և նա փորձում էր ետ վանել, դասը սերտում էր բարձրաձայն, կամ գնում էր Պարրոտի տունը, կամ դուրս էր գալիս աննպատակ շրջելու փողոցներում, գնում էր շուկայի հրապարակը, որտեղ առավոտից մինչև երեկո նպարավաճառների և արհեստավորների մի ահագին բազմություն կրպակների առաջ կամ բացօթյա առնում կամ ծախում էր՝ գովելով ապրանքը և որտեղ դարբիններ, անիվագործներ, կոշկակարներ և այլ արհեստավորներ այնպիսի աղմուկ էին հանում, որ այդ աղմուկը և այլազգի ծխորը նրան մոռացնել էին տալիս նովավոր աղբյուրի ձայնը և ընկուզենիների խշշոցը:

Բայց երբեմն այդ կարոտն այնքան էր նեղում նրան, որ չէր հանդուստանում, լսելով հրապարակի աղմուկը, կամ քրքրելով այն իրերը, որ հետն էր բերել: Նաև չէր հանգստանում, երբ Պարրոտի տանը տեսնում էր խորասանի այն խալին և ղայլանը, որ նրանք միասին գնել էին Երեանի շարսու բազարում: Ինչպես մայրը, երբ հանկարծ մտաբերում է մեռած որդուն, միայնակ լաց է լինում և թել մանում, ողբ է ասում՝ մաքրելով ցորենը,— այնպես էլ նա գլուխը տետրակի վրա կախած արտադրում էր օրինակներ Երից կանոնի և ինքն իրեն դնում էր:

Երգում էր մեղմ, ինչպես սայլապանը, որ լուսնյակ գիշերով ճանապարհ է ընկել, երկար գնացել է սարերով, ձորերով, և ահա սայլը խուլ աղմկում է գյուղի փափուկ դաշտում, հոգնած օրորվում են եզները, արդեն մի կաթավ կանաչ սաղմոս է կարդում քարերի մեջ և լուսաբացի ճուղ բերում է իրենց դեզի բույրը... Երգ է երգում սայլապանը, այնքան մեղմ, որ հազիվ են լսում եզները և այնպես հստակ, ինչպես լուսաբացին կարդում է կաթավը:

Նա մեղմ երգում էր և աշխատում: Եվ երգի միջից, ինչպես ծով, այդ կարոտը հետզհետե բարձրանում էր, պատում նրան, աչքերի առաջ աղմկում էին գրեթե, հնչում էին այն հին ձայները, նանին կանչում էր՝ «եսաշատուր, հե՛յ...»: Ինչպես տղա ժամանակ, երբ փախչում էր բաղը, թակ նանին ղզլբաշ հարամիներից վախեցած՝ քարափի գլխից ձայն էր տալիս:

Այլ ի՞նչ գիրք, ի՞նչ Երից կանոն...

Այդ ձայները նրան կանչում էին քաղաքից դուրս, դեպի էմբախի գետափը, որտեղ ուռիները սովեր էին արել ջրերի վրա և կամ դեպի Գոմբերգ, ուր աղմկում էին ծեր կաղնիները: Նա թաքնվում էր մի խորշում և արահեստով պատահաբար անցնող մարդիկ լսում էին անծանոթ նվագի հնչյուններ, որ ելնում էին Արմենիերի հայկական սրինգից:

Հայրենաբաղձությունը նրան մղում էր պատմել հայրենիքի մասին: Եվ նա պատմում էր Պարոտին, ավելի հաճախ նրա կնոջը, պատմում էր տիկին էլոիզ Աուսենդերին, նույնիսկ երեխաներին էր պատմում: Երբեմն պատմում էր իր տանտիրուհուն և նրա հարևանուհիներին, որոնք մի գործով գալիս էին նրանց տուն և լսելով այդ անծանոթ պատմությունները հրաշալի Արևելքի մասին, մոռանում էին, որ սուրճը թոզել են կրակի վրա:

Իսկ Արմենիերը զարմանալի պատմող էր: Ժամանակը և հեռավորությունը նրան մոռացնել էին սովել այդ եղելությունների սովորակաբե և ամեն ինչ դարձրել էին արտասովոր և առասպելական: Հենց իրեն՝ Արմենիերին այդ պատմությունները երբեմն թվում էին առասպել, որ կարդացել է հին գրքերում: Մի՞թե գրքից չէր պատմությունն այն գիրի աղջկա, որ Սարդարի հարեմից իրեն նետում է կամուրջի վրա, երբ հարեմի պատուհանից տեսնում է իր սիրած տղային, որ հուսահատ ետ էր վերադառնում: Եվ կամ մի՞թե առասպելանման չի այն, որ իր հայրենի-

րում կանայք շարսավով են, աղջիկներին հարս են տանում, երբ նրանք դեռ անմեղ երեխա են և շխտական հարսը սկեսուրի հետ խոսում է մատներով, աչքերով: Ապա այն պատիժները, որ կային նրա հայրենիքում, ապա Մոսին, որին դաշտից փախցրել էին լեզգիները, ֆառաշնեյը, քե՞ վաչկատուն թարաքյամաները, երբ գյուղի երեխաները գնացել էին Մուրադ Թափայի բլուրը՝ սինձի:

Հաճախ նա համեմատում էր այն հին երկիրը և նրա բարքերն իր հոր հայրենիքի հետ: Ահա լալիս է մի փոքրիկ երեխա, բայց մայրը նրան չի ծեծում, այլ ուրախացնելով՝ լացը կտրում է. «յայս հայեցեալ, իսկոյն թոեան միտք իմ առ վիճակ մերոց երեխայից, թէ զիա՛րդ ծնողք աշխարհին մերոյ անհոգ կան վասն զաւակաց իւրեանց և զիա՛րդ երեխայք աշխարհին մերոյ առանց ինչ մխիթարութեան զարգանան, որով վասն արտասուալից աշօք, պղտորեալ սրտի սկսայ հոգ հանել...»:

Ահա ձեռք է բերել Ռոբերտ Քեր Պորտերի ուղեգրությունը և շտապում է իր բարեկամին ցույց տալու գիրքը և գրքի նկարները՝ Երևանի բերդը և Արարատը, պարսիկ սարբազներին և հարեմի մանկամարդ պարսկուհուն, որ զուգված կանգնել է՝ ձեռքին Գյուլիստանի վարդը, ասես հարցնում է, ո՞վ է գեղեցիկ՝ ինքը թե վարդը: Եվ նորից խոսք է բացվում հեռավոր Իրանի և Արմենիայի մասին, և նրա բարեկամը, նաև նրա դուստրերը հավանում են Յաթալի շահի նկարը, նրա հանդերձը և նույնիսկ շահի հուշակավոր միտուքն են հավանում, բայց չեն հավանում պարսիկ կնոջ հանդերձները և «ծածկելն նոցա զերեսս ամենքին անհաճոյ երեվին. և յիրաւի անհաճոյ»:

Նրա հիշողության մեջ հետզհետե պայծառանում էր այն, որ քաղցր էր և սիրելի. մայրը, Միրզամը և քույրերը, փոքրիկ եղբայրը, նույնիսկ իրենց Բողարը, որի հետ խաղացել էր մանկություն տարիներին: Ինչքա՛ն մանր և աննշան հիշողություններ էին զարթնում. պոռնկը կտորած պղնձն ջամը նայում էր նրան երկար, շատ երկա՛ր և ինչպես հին ծանոթ, նրան ասում էր. «դու ինձ չես մոռանա, Խաչեր, ինձ երբեք չես մոռանա...»: Այն կողմից դրնգում էր կարասը, որ ընկած էր էյվանի տակ. «ապա ի՞նձ... հիշո՞ւմ ես, գլուխդ կոացնում էիր ներս և կանչում դոնդոն, իսկ ես միշտ արձագանքում էի քո ձայնին՝ դո՛ն... դո՛ն... դո՛ն...»: Այսպես խոսում էին բակի քարերը, աղաքարը՝ որի վրա հայրը աղ էր ցանում և տավարը լիզում էր աղը, հետո եզները քարն էին լիզում իրենց փշոտ լեզուներով՝ խը22-խը22, կարծես գերանդիով հնձում են շորացած խոտը: Երգում էին դռներն ու դռնակները, ամենքն իրենց հանգով. համտան դռնակը՝ բարակ ու մեղմ, տան դուռը՝ ինչպես պատավ շուն՝

խապստ ու բամբ, իսկ ձմեռը, երբ դռան հետևից կախում էին թաղիք, տան դուռը խլանում էր: Բայց ամենից զիլ երգում էին դրսի դռները, որոնց ստնին որձաքարի մեջ էր: գռներն իրար էին գալիս, աչք միայն գամ էր պահում, իսկ ձախը զլում էր պարկապկուն, մինչև գռներն իրար գային և այն ժամանակ երկուսը միասին՝ դռը հա դռը խփում էին Աթա Թևանի թմբուկը:

Նրա հիշողության մեջ հետզհետե պայծառանում էր այն, և դառը մոռացվում էր և մնում որը քաղցր էր և սիրելի՝ քարերը, հին կարպուր, պղնձե ջամբը, հայրենի խեղճ խրճիթը, պառավ շունը, Գոչպոչանի ջրվեժը, ընկուզենիների խշշոցը, Նովավոր ազբյուրի ոսկեկանանաչ մամուռը և Զանգուն, սիրտ մաշող Զանգուն:

12

Հետո երկար ժամանակ վառ մնաց ձմռան այն օրը, երբ անհանգիստ կարոտով թափառել էր փողոցներում, ապա աննկատելի ընկել էր այն փողոցը, որով առաջին անգամ մտել էր Գորպատ: Նա հասել էր քաղաքի գռներին, որից այն կողմ անսահման դաշտն էր, ձյունով պատած, դեպի արևմուտք՝ եղևնիների սև երիզը, այս և այն կողմ կաղնիներ, որոնք հիշեցնում էին ձյունի մեջ մոլորված գրենազերներին, ահա այս մեկը փռել է սառած թեկերը, որոնցից մամուռը կախվել է ձորձերի նման, մի քիչ հեռու երկուսն այնպես են փաթաթվել իրար, որ մահն անգամ նրանց չի բաժանել, իսկ երբօրոք համարյա թաղվել է ձյունի տակ և ձյունի մեջ ցցվել է նիզակի նման մի շոր ձող: Հորիզոնի խորքում ժուղների գյուղն էր և ծուխը վախվխելով կծկվում էր խրճիթների վրա:

Նա կարոտով նայում էր ճանապարհին: Ոչ հեռու երևում էր առաջին շաղթառումը, որի մոտ խարույկ էր վառել պահապանը՝ ալեբարդով մի զինվոր: Նվ ուրիշ ոչինչ չէր երևում այդ անեզր տափաստանում, բացի խարույկը և միայնակ պահապանը, ծառերը և հեռվի գյուղը, որտեղից չէր լսվում ոչ շան հաչոց և ոչ աքաղաղի կանչ:

Արևը խոնարհվում էր եղևնիների հետևը և այն կողմում հրգեճվել էին բաց կարծիք ամպերը, եղևնիների պարիսպը հեռզհետե ավելի էր մթնում և միայն մի շող թափանցել էր անտառի սևի մեջ և դողողում էր այդ ոսկի շողը, կարծես վախենում էր բեկվել սառը ձյունի վրա: Նա զմայլած նայում էր անտառին և մայր մտնող արևին, երբ լսեց զանգակների ձայնն այնքան հստակ և մաքուր, ինչպես քարավանի զողանք, երբ ուղտերն անցնում են արշալույսին:

Քիչ հետո նրա աչքերը ճանապարհի խորքում նշմարեցին մի սև կեռ,

որ հետզհետե մեծանում էր: Բացառի միջով արևը ճեղքել էր անտառի սովորը: Երբ սև կեռը հասավ արևով ողողված ճանապարհին, նա տեսավ երեք ձի, որոնք սլանում էին բարձրացնելով ձյունի փոշի, որ արեից փայլվում էր արծաթի գույնով: Զանգակների ձայնը հետզհետե հզորացավ: Արդեն պարզ երևում էր կողքի ձին, որ պարանոցը կեռ պահած թռչում էր՝ խաղացնելով ոտքերը և ծածանելով երկար բաշը: Ահա նրանք մոտեցան շաղթառումին, ծերունի պահապանն արդեն բարձրացրել է ուղեփառ գերանը, զգալով, որ միևնույն է, այդ ձիերը կանգ չեն առնելու և նույնիսկ կարող են թռչել գերանի վրայով... Ձիերը սլացան նրա մոտով, ձյուն թափելով նրա վրա: Ձյունի փոշու մեջ հնչեց մի ծիծաղ՝ զվարթ, ինչպես զանգակների ձայնը: Սահնակի մեջ նա նշմարեց կանացի մի դեմք՝ կապույտ աչքերով և այտերը բաց վարդագույն: Հանկարծ այդ կինը ձեռքը օդում թափահարեց: Կարծես քուրքի միջից կինը հանեց մի սպիտակ աղավնի, որ ձյունի փոշու մեջ թափուց և նորից մտավ տաք բույնը: Արմենիերը բարձրացրեց գլխարկը, վազեց սահնակի հետևից, բայց սահնակը քաղաք մտնելով, աներևութացավ:

Նա զնում էր գլխաբաց, գլխարկը ձեռքին... Այդ փողոցները նրան օտար էին... Քաղաքի այդ մասում նա չէր եղել: Նա լսեց ուրիշ զանգակների ձայն և նայեց երկրորդ սահնակին: Անցավ նաև երրորդը... Սակայն ոչ ոք չնայեց նրան և այլևս չերևաց այն ցնորական տեսիլքը: Նա ուշքի եկավ, գլխարկը ծածկեց և սկսեց հետաքրքրությամբ դիտել սահնակներին: Իր կյանքում նա առաջին անգամ այդ օրն էր տեսնում սահնակը և նրա հիշողության մեջ առաջին սահնակը մնաց ինչպես զարմանալի հրաշք:

Հասավ զինվորական հիվանդանոցին: Այդտեղից երևում էր գերմանական եկեղեցին, որից այն կողմ փողոցները նրան ծանոթ էին: Հիվանդանոցի դարբասը բաց էր: Բակում երևում էին գլխաբաց զինվորներ, որոնցից մի քանիսը հեռակներով էին: Մեկի գլուխը փաթաթված էր զեղին շորով:

Մի ոտա կին դարբասի մոտ վաճառում էր արևածաղիկի բոված սերմեր: Մի քանի զինվորներ նրան շրջապատել էին և երևում էր, որ նրանք տատանվում էին՝ զնե՞լ թե ոչ: Գուցե թե նրանք կատակում էին կնոջ հետ, փարատելով իրենց ակամա ձանձրույթը:

Արմենիերը դիմացի մայթով տեսավ նրանց, տնտղեց գրպանները և անցավ մյուս մայթը: Հիվանդ զինվորները նրան տեսնելով լռեցին և իս քաշվեցին, իսկ կինն սկսեց գովել իր ապրանքը: Արմենիերը նայեց զինվորներին և խղճահարվեց...

Նրանք գեղնած և նիհար երեսով մարդիկ էին: Բոլորը մեծ միտու-
քով էին, մեկը ալեհեր էր, իսկ մյուսը երիտասարդ էր: Սակայն բոլորի
գեմքին գրոշմված էր ստրկության կնիքը:

— Ո՞րտեղացի եք, հայրենակիցներ,— հարցրեց Արմենիերը:

— Հեռվից ենք, ձերդ բարեծննդութուն, — պատասխանեց ալեհեր
զինվորը, դժկամելով, որ ընդհատվեց իրենց զրույցը, նաև այն սառ-
նությամբ, որ նշանակում է. «շարունակիր ճանապարհդ, բարին, ոչ մենք
ենք քո հայրենակիցը և ոչ էլ քեզ է հետաքրքրում, թե մենք որտեղացի
ենք»:

— Արևածաղիկ ուզո՞ւմ եք...

— Ինչո՞ւ չէ, կարելի է... Կարելի է, ձերդ մեծութուն, — և առաջինը
մոտեցավ ալեհեր զինվորը, ապա մյուսների գեմքին ևս երևաց կես-միա-
միտ, կես-քծնող ժպիտ:

— Լազարեթում շա՞տ զինվոր կա:

— Ո՞վ գիտե... Մենք չգիտենք...

— Իսկ ձեր զինվորների մեջ հայ չկա՞...

— Հա՞յ, — և նրանք իրար երեսի նայեցին: — Կարելի է որ լինի,
ձերդ մեծութուն. այստեղ ամեն ցեղից էլ կան, ով Դոնից է, ով Կալու-
գայից, մինչև անգամ Օրենբուրգից կա, և կարող է հայ էլ լինել... Ո՞վ
գիտե:

Արմենիերի աչքերը փայլեցին:

— Ես ձեզ համար էլի արևածաղիկ կառնեմ... Տեսեք, եթե հայ կա,
կա՛ն չեցեք դուրս:

— Կարելի է նաև առանց արևածաղիկի, — ասաց ալեհեր զինվորը:

— Դու քեզ համար պատասխանի, պառավ, ուրիշների հետ ի՞նչ
գործ ունես, — գայրացավ ոտա կինը, — կարող է, որ նորին բարեծննդու-
թյունն ուզում է այսօր բարեգործություն անել:

— Իսկ խիղճ կա՞... Թե՞ ոչ: Քոնը միայն փողն է, լիբր... — և դար-
ձավ Արմենիերին, — կարելի է... Բայց հայն ի՞նչպիսին է: Մեզ մոտ
ամեն ցեղից էլ կան, ով Դոնից է, ով...

— Կա՞ սև մարդ, սև աչքերով, քիթը՝ մեծ:

Ալեհեր զինվորը միտք արեց՝ նայելով իր ընկերներին: Նրանք էլ
էին միտք անում, կրճելով բոված արևածաղիկը:

Մի զինվոր ասաց.

— Իսկ որ վերջին ֆլիգելում է ապրում, նա հայ չի՞...

— Ո՞րը, — հարցրեց ալեհեր զինվորը:

— Նա, որ հաց էր գողացել... որին ձեռնեցին:

— Սատանի աճել, մի՞թե նա սև է, աչքերը սև՞ են, քիթը մե՞ծ է...
Աղբով է լցված գլուխդ: Չհասկացար ի՞նչ պատվիրեց նորին բարեծննդու-
թյանը՝ որ գլուխը սև լինի, աչքերը սև լինեն, ամեն ինչ սև լինի և քիթը
սև լինի...

— Աա՛, — երկար ծոր տվեց այն զինվորը, և դժվար էր հասկանալ,
թե ի՞նչ էր նշանակում այդ բացականչությունը:

— Քեռի Միտրիչ, — կանչեց երիտասարդ զինվորը, — իսկ եթե մա-
զերը սև են և քիթը մեծ է, բայց աչքերը սև չեն, այլ... — և երիտասարդը
դժվարացավ ասել, թե ինչ գույնի են աչքերը և հանկարծ բռնեց կնոջ
գլխաշորից և ուրախացած բղավեց, — այ այս գույնի, աստված վկա,
ճիշտ այս գույնի են աչքերը... Չի՞ լինի:

Կինը գայրացավ և խփեց զինվորի թևին:

— Թաթը քեզ պահի... Ես ամուսնացած կին եմ և ոչ թե ֆրաու...

Իոլորը նայեցին Արմենիերին: Եվ նույնիսկ ալեհեր զինվորը նայեց,
կարծես ուզում էր ասել, որ այդ հարցին պատասխանել կարող է միայն
ընտրին բարեծննդությունը:

— Բայց նա քրիստոնյա՞ է... Հայերը քրիստոնյա են:

— Աստված վկա չգիտեմ: Միայն գիտեմ, որ ուսերեն չի խոսում,
միշտ մենակ է շրջում, հոշպիտալում իր երկրացի մարդ չունի: Եվ անուճ
ինչ-որ ուրիշ տեսակ է, մերիններից չէ... կամ էանգայ է, կամ էամգայ
է, այդպես մի բան է: Եթե կլինի, գնամ կանչեմ: Նա միշտ պատի տա՞լ
մենակ ման է գալիս... Իսկ մազերը՝ սև, ինչպես, հիշո՞ւմ ես, Միտրիչ,
մեր գնդապետի ձին:

Երիտասարդ զինվորը մտավ բակը և քիչ անց վերադարձավ: Նրա
հետևից գալիս էր միջահասակ մի մարդ, փաթաթված պատառոտուն
գրատի մեջ: Երևում էր, որ նա մրսում է: Նա գալիս էր զգույշ քայլերով:
Դեմքի մկանները լարված էին. կարծես նա խուլ և մունչ էր և լսում էր
լայն բացած աչքերով: Նրա գեմքն արտահայտում էր դժկամություն.
գալիս էր, բայց և կասկածում էր, թե չլինի՞ իրեն խաբում են:

— Ահա՛, — և երիտասարդ զինվորը հեռու կանգնեց: Մյուսներն էլ
լուս ետ քաշվեցին:

Նրանք նայեցին իրար: Ինչ-որ հարազատ ցուք կար այդ մարդու
բաց կապույտ աչքերում: Արևը նույն արևն էր, հարավի տաք արևը,
բայց այդ արևը շողում էր բաց կապույտ մշուշի միջից:

Զինվորը հայ չէր:

— Թաթա՞ր, — նա գլուխը տարուրերից:

— Լեկզի՞, — զինվորի աչքերը փայլատակեցին:

— Զերբյազ,—ասաց նա:

Արմենիերը փաթաթվեց նրան:

— Ղարղաշ էրմենի:

— էրմենի զարղաշ...

— Փառք քեզ, տեր,—մելամաղձոտ ասաց լպնհեր գինվորը,—ինչպես հանկարծ բախտ ես տալիս մարդուն և բախտ ես խլում... Տես ինչպես լուսավորվեց երեսը... Իսկ շրջում էր մենակ, ինչպես անտառի բու... Տես ինչպես բացվեց լեզուն... Նրանցն էլ լեզու է, նրանք էլ ցեղ են և աստված ունեն, և հող են վարում, և մանր երեխաներ ունեն:

Զինվորները տխրեցին: Գուցե նրանք հիշեցին իրենց տնակները և մանր երեխաներին և իրենց կանանց, որոնք ով գիտե քաղցած են, ցուրտ է տնակում և գուցե նրանք այլևս կենդանի չեն: Մեկը մտայլ նայեց հիվանդանոցի բակին: Նա ձեռքը զայրույթով թափ տվեց և ներս մտավ: Իսկ մյուսները, թեև տխուր, բայց լսում էին նրանց զրույցը:

Նրա անունը Համզայ էր: Նա գիտեր մի քանի բառ ֆուրքերեն, մի քանի բառ ռուսերեն և գիտեր միայն իր մայրենի լեզուն, որին Արմենիերը անծանոթ էր: Եվ այդ խառն լեզվով Համզայը պատմեց, որ ինքը մասնակցել է պատերազմին, բայց այլևս «սիրտը չի ուզել» (նա ցույց տվեց սիրտը), վիրավորվել է և ահա երրորդ ամիսն է հիվանդանոցում: Ուրիշ ալլ բաներ ևս պատմեց Համզայը իր մայրենի լեզվով և Արմենիերը մի կերպ հասկացավ, որ Համզայը կարոտում է իր հայրենիքը, բայց այլևս այնտեղ չի վերադառնա, որովհետև «Թուրուխանը» նրա թշնամին է:

Հնչեց զանգը և եկան դարբասը կողպելու: Արմենիերը նրան մի անգամ էլ տեսավ բակի մեջ, շեքքեզը ձեռքով արեց և դարբասը փակեցին:

Այդ օրից նրանք մտերմացան: Յուրաքանչյուր կիրակի Արմենիերը գնում էր հիվանդանոց, իր բարեկամի համար նա տանում էր քաղցրավենիք, միքո: Երբեմն բաժին էր հանում իր աղքատիկ գրպանից: Հետզհետե ավելի էր հասկանում նրան: Այսպես, օրինակ, նա առաջին օրերը կարծում էր, որ «Թուրուխանը» Համզայի թշնամին է այնտեղ, նրա հայրենիքում: Բայց հետո հասկացավ, որ Թուրուխանը մայրը Տերյոխինն էր.—կայազորի պետը: Նա իմացավ նաև, որ Համզային դեռևս պիտի պատժեն, որովհետև իբրև թե նա ինքն էր վիրավորել իրեն, այլևս պատերազմ չգնալու համար: Եվ սպասում էին, որ նա կազդուրվեր: Այդպես էր սպասոնացել մայրը Տերյոխինը մի այցելության ժամանակ:

Արմենիերի համար շեքքեզն ուներ մի անպատմելի հմայք: Այդ լեռնականի դեմքի վրա, նրա լեզվի մեջ մի բան կար, որ չէր հագեցնում

Արմենիերի ծարավը, բայց հնչում էր ինչպես Նովավոր աղբյուրի ձայնը: Նրա աչքերի մեջ կար մի հարազատ ցուր: Այդ մի ծաղիկ էր, որ չէր բուրում, բայց հիշեցնում էր այն դրախտային ծաղիկը, որին օրում էր Զանգուն:

Համզայը մի անգամ երգեց: Այնքան քաղցր էր այդ երգը հետո հյուսիսում: Կարծես լեռան հետևից բարձրանում էր արևը և ձև էին առնում թփերը, ցողում շողում էր սպիտակ ջուրը: Նրա երգը օտար առարկաներին գույն էր տալիս և դարբասը փոխում էր տեսքը և նմանվում իրենց տան դարբասին, որի դռները երգում էին. ահա դիմացի գորշ պատը պայծառանում է ինչպես Զվարանցի քարածայրը, երբ նրա լանջին բացվում է մայր մանուշակը:

Համզայը նաև պատմում էր հիվանդանոցի կյանքից... «Շունը մեզից լավ է ապրում, զարղաշ... Ախ, եթե շուն լինեի, գնայի այս երկրից, գլուզերով գնայի, արտերի միջով գնայի, ցերեկը քնեի խոտերի մեջ, փշերը մինչև լույս գնայի և հասնեի մեր սարերին, մեր գյուղը, ոչխարը ասրը տանեի... Հիմա արդեն սարերը կանաչում են, զարղաշ...»:

Արմենիերը Համզայի վիճակը թեթևացնելու համար դիմել էր Պարթոտի միջնորդության: Պրոֆեսորը սառը պատասխանել էր.

— Ավելորդ է դիմել մայրը Տերյոխինին: Նա գազան է և հետևանքը կարող է լինել այն, որ ձեր երկրացու վիճակն ավելի կծանրանա...

Սենյակում մոմերը վառվում էին, դեղնավուն լույսի հետ սփռելով խաղաղութուն: Իրերն ընկղմվել էին կիսաստվերների մեջ. միայն պատից կախած նկարի ապակին էր իր մեջ հավաքել շողերը և արտացոլում էր, հիշեցնելով մի նեղ պատուհան, որից ներս է ընկել աստղալույսը: Խաղաղ էր նաև փողոցը, որտեղից երբեմն միայն լսվում էր մի անհայտ անցորդի ոտնաձայն:

Տիկին էլոիզը նայում էր պատուհանի կողմը: Երբ դրսում հետզհետե հանգում էին ոտնաձայնները, սենյակում լուռությունն ավելի էր թանձրանում և լսվում էր մոմերի ճարճատյունը, կարծես մեկը գիրք էր թերթու: Իսկ երբ անցնում էր քամին, մոմերի բոցերը մեկ ձգվում էին, մեկ ծալվելով նստում: Պատուհանի վարագույրները խաղում էին և տիկին էլոիզին թվում էր, թե մեկը դրսից իրեն է նայում:

Նա մոտեցավ կլավիրին: Ստեղների ուրախ հնչյուններից սենյակը ղվարթացավ: Նա աննպատակ նվագեց մի ինչ-որ կոնտրաբաս, կարծես չէր լսում նվագը, այլ ավելի հիանում էր իր մատների գեղեցկությունը:

ինչպես մի երիտասարդ աղջիկ, որ սրսփալով մտել է ջուրը և չի հիանում ոչ շարածհի ալիքներով և ոչ ափի ծաղիկներով, այլ հիանում է միայն իր պատկերով, որ ճոճվում է ջրի մեջ:

Ապա հնչեց հնամենի վալսը՝ հիշատակն այն օրերի, երբ դեռահաս աղջիկ էր, այն տարիքում՝ երբ ոչ անմեղ երեխա էր և ոչ կյանք ճաշակած կին, մի տարիք, երբ առաջին տպավորութիւններն անջնշկի դրոշմ են դնում հոգու վրա: Այդ տպավորութիւնները նման են զեղնած տերևների, բայց ոչ խոր աշնան, երբ մերկանում է ամբողջ այգին, շկան թիթեռները և տխուր խոխոջում է առուն, — այլ նման են այն առաջին տերևներին, որ զեղնում են աղմկոտ ամռանը և վայր են ընկնում կանաչ խոտերի վրա, որտեղ երգում են ճպուռները, բզեզները հարսանիք են սարքել և ամբողջ այգին, ինչպես մի երգեստն, հնչեցնում է պտղաբերութեան հավերժական երգը: Եվ ավելի զվարթ է հնչում այդ կանաչ երգը, երբ ընկնում են մահվան առաջին տերևները:

Տիկին էլոիզն այլևս չէր լսում ոչ դրսի ոտնաձայները և ոչ էլ նայում էր պատուհանի վարագույրներին, որ քամուց բարձրացնում էին հզորը և իսկույն իջեցնում, կարծես մեկին ցույց էին տալիս այդ գեղեցիկ պատկերը՝ տիկին էլոիզին, մոմերի լույսով, բատիստե սև զգեստով, և վառ կարմիր ծապավենի փնջերով, որ վարդերի նման բացվել էին նրա թևերի վրա և իրենց կարմրավուն ցուլով երևացնում էին նրա ակառնները՝ մոխրագույն գանգուրների մեջ:

Իսկ մաշված ստեղծերը լալիս էին: Նրանք անձրևում էին կարոտի հնչյուններ. երբեմն մեկը և երկուսը թավ զողանջում էին հեռվից, կարծես նավը գնում էր ծովի հեռուն և այնտեղից այդ ձայները հրաժեշտ էին տալիս սիրելի ափին:

Երբ նվագը վերջացավ և օդի մեջ դեռևս չէին հալվել վերջին ելևէջները, տիկին էլոիզը լսեց խուլ խշշոց: Հեռվում աղմկում էր անտառը՝ նա մոտեցավ պատուհանին: Երկինքը խավար էր: Նա լսեց ավելի խուլ աղմուկ, քան անտառի խշշոցը. կարծես շատ հեռվում դղրդում էր փոթորկած ծովը:

Տիկին էլոիզը ցուրտ զգաց: Նա կծկվեց բազմոցի վրա և ձեռքն առավ օձիկ կազմով գիրքը:

Երբեմն այդ գիրքը նրա բարեկամն էր: Ընթերցելով այդ գիրքը, նա արտասովել էր, ինչպես այն ոռոմանտիկ դարում գիտեին արտասովել երիտասարդ աղջիկները և երիտասարդ պատանիները, որոնք զգում էին անգո մի վիշտ տերևների սոսափի և իրենց հոգու մեջ: Այն կախարհական գիշերը, երբ լիալուսնի տակ ցցվել էր աշտարակը մի լուռ դղյակի,

որտեղ կռնչում էր բուն: Ինչպես այն դարի դուստր՝ էլոիզը ևս առանձնութեան մեջ լաց էր եղել մի անանուն գերեզմանի վրա, միտ դնելով, որ այդպես է նաև Վերթերի գերեզմանը կաղնիների պուրակում, որտեղ նա սպասել էր Շարլոտային: Այդ գրքի ծալքերում դեռ մնում էին շոր ծաղիկներ և տերևներ, մոռացված տարեթիվերով, մի ծվեն այն մետաքսից, որից կարել էին նրա հասունութեան զգեստը և թելի նման բարակ ծամ, որ ինքն էր հյուսել, որպես սուվենիր:

«Օ՛, ինչքան երեխա ենք մենք... ինչպես թանկ է մեզ համար սիրածի մի հայացքը... Օ՛, ինչքան միամիտ երեխաներ ենք մենք...»:

Տիկին էլոիզը շրջեց մի այլ էջ:

— Ինչո՞ւ է այս կարոտը, այս սիրտ մաշող սպասումը... Մայր է՛ մտնում արևը և ուզում է վերջին անգամ իր շողերով ողողել դաշտերը, և՛ անտառը՝ և՛ ջրերը, ցուլք տալ և այնպես կորչել... Ուռնմն ծերացել է արդեն և վերջին հրաժեշտն է տալիս: Եվ այլևս չի լինի այլ սեր...:

Տիկին էլոիզը նայում էր բաց էջին և չէր կարդում:

Նա տխուր նախազգում էր, որ այլևս կյանքը վերջանում է և այն, որ նրան գարուն է թվում, չէ այն երիտասարդ գարունը, որ խլրտում է զրոտ, այլ խաբուսիկ գարունն է ձմեռնամուտին, երբ դեռ չի մաղել ձյունը և աշնան արևից խաբված երկրորդ անգամ խոտը կանաչում է: Բայց հենց այդ զգացումն ավելի էր բորբոքում նրա կիրքը, նրա կանացի ծարավը՝ այս վերջին գավաթն ըմպելու կաթիլ առ կաթիլ և մինչև վերջ:

Ձմռան սկզբին էլոիզը վերադարձել էր Ռեկից: Առաջին հանդիպումին նմուտինը՝ պրոֆեսոր Գերման Աուսենդերը, ի շարս այլ նորութիւնների, նրան հաղորդել էր նաև Արմենիերի մուտքը Դորպատ: Տիկին էլոիզը նրան հանդիպել էր Պարրոտի տանը այն երեկո, երբ գնացել էր առաջին այցելութեան: Երիտասարդը, ծանոթանալով, մի քիչ զգկամութեամբ էր խոնարհել զուխը և մի քանի րոպե լուռ մնալուց հետո հեռացել էր:

— Նա դեռևս բիրտ է և իրեն խորթ է զգում.— ասել էր պրոֆեսորը, տիկնոջը հարց ու փորձ անելով Ռեկի ծանոթներից:

Իսկ մի շաբաթ հետո պրոֆեսոր Աուսենդերը կնոջն ասել էր, որ ինքը Արմենիերին երկրաշափութիւն է դասավանդելու: Նրանք պիտի պարապեն տանը, ինչպես խնդրել էր պրոֆեսոր Պարրոտը:

— Որովհետև նա մեծ է տարիքով և թույլ է գիտութեամբ, որպեսզի հաճախ սեմինարիա և կամ համալսարան: Նա պետք է արագ սովորի այն պարզ գիտելիքները, որ չեն սովորեցնում նրա հայրենիքում, ինչպես ասաց հերթ ուսուցիչը:

Այդ օրից շաբաթը երկու անգամ Արմենիերը գալիս էր նրանց տան, տեսարկները և քարե տախտակը թևի տակ, ինչպես դպրոցական տղա:

Պարոտի կինը տիկին էլոիզին պատմել էր, որ երիտասարդը գլուրաբորբոք է, երբ խոսում են նրա հայրենիքի մասին: Նա պատմել էր Արմենիերի ընդհարումը մեկի հետ, որը գոհհիկ էր արտահայտվել հայ տղջիկների մասին: Տիկինն ասել էր նաև այն, որ նա բարձրաձայն է խոսում, ինչպես լեռնցի, որ հոգևոր կոչումի լինելով: Նա խիստ բծախեղիք է իր հավատի և ծեսերի անաղարտության: Տիկին Պարոտը հատկապես խնդրել էր ուշադիր լինել նրա արտասանության, շարժ ու ձևերի և նրա ընավորության դաստիարակության, կանացի բնազդով զգալով, որ ոչինչ այնքան գեղեցիկ չի հղկում երիտասարդին, որքան միջավայրը կիրթ և ազնվամիտ կանանց:

Սակայն այլ էր տիկին էլոիզը: Այն ամենը, ինչ բիրտ էր Արմենիերի բարքի մեջ, նրա համար առնականի կատարելատիպն էր: Նա սիրում էր նրա կոշտ լեզուն, հնչեղ ծիծաղը, որի համար տիկին Պարոտը նրան խրատում էր, թե վայելուչ չէ այդպես աղմկալի ծիծաղելը տիկիների ներկայությամբ,—նրա պարզ միամտությունը, զգացմունքների անմիջականությունը, նույնիսկ հայ դպրի տարազը, որով Արմենիերը առաջին օրերը գնում էր նրանց տուն,—սիրում էր նրա կախարդական պատճուբյունները Արեելքի մասին, որտեղ խիստ են սիրում և խիստ են խանդում,—սիրում էր Արմենիերի ոճավոր խոսքերը և նրա զարմանալի երգերը, որոնց մեջ կար և՛ վիշտ, և՛ վախ:

Տիկին էլոիզը սիրում էր նրան: Սիրում էր ինչպես մայր, որ կրթով գուրգուրում է որդուն, սիրում էր և ինչպես կին, որ զգում է, թե այդ է վերջին զավակը կենաց խնջույքի, որից հետո այլևս ոչինչ չկա և չի լինելու: Նա և ուրախ էր, որ կյանքի ցուրտ միգում անախկնկալ բացավառվել էր այդ խարույկը, և տխրում էր, նախազգալով, որ կփշեն զորեղ հողմեր, կհանգչի կրակը և այլևս չի լինի ոչ սպասումի կարոտ, ոչ չերմացնող մտերմություն և նույնիսկ մոխիրը կսառչի:

Նրան թվում էր, թե որ շատ վաղուց աղչկային երազների մեջ երևվացել էր այդպիսի մի երիտասարդ: Երբ թերթում էր «Վերթերը»,—գրքի ծալքերում մոռացված ծաղիկները և ծամը նրան հիշեցնում էին այն թեթև սերերը և հանդիպումները, որ կանուխ շորացան, ինչպես առաջարի ծաղիկները, որոնք միայն վաղ գարնան և շատ կարճատև շքեղացնում են առապարը... Ապա հանդիպեց Գերմանին, որի զվարթությունը ցամաքել էր նույն օրը, երբ նա հրածեղտ էր տվել ուսանողական կյանքին մնայի համալսարանում: Այդ օրից սկսվել էր նրանց կյանքը:

աղաղակալի և միօրինակ, ինչպես օրերը այն համեստ բյուրգերների, որոնք ծնվում և մեռնում են միևնույն փողոցում և որոնց կյանքում, ծննդից մինչև մահ, միակ նշանավոր դեպքը ամուսնությունն էր գրացուցու հետ:

Փողոցում ոտնաձայն լսվեց: Նա է... Գալիս է: Տիկին էլոիզը սաթի կլավ: Մի տաք դող անցավ նրա մարմնով: Ահա նա բախում է դուռը: Միայն նա է այդպես բախում՝ ամուր և երեք անգամ:

— Մի՞թե անձրևում է:

— Անձրևում է:

Արմենիերը զարմացած նայեց տիկին էլոիզին, թվաց թե ուրիշ գուռ էր ծծծել և ներս էր մտել ուրիշ տուն, որտեղ ապրում էր ամենաքնաղն այն գեղեցկուհիներից, որոնք բարձրացնելով վարագույրի եզրը, հետաքրքիր նայում էին արևելցուն:

Նա աչքերը հառել էր ժապավենի կարմիր փնջերին:

— Ինչո՞ւ այսօր այդպես եք հագնվել:

— Իսկ ձեզ դուր չի՞ գալիս:

— Ցուրտ է... կարող եք մրսել,—ասաց նա կոշտ և առնական գորովով, ապա նայեց մյուս սենյակի դռներին, որտեղից սովորաբար ներս էր մտնում պրոֆեսոր Աուսլինդերը, լսելով նրա ձայնը:

— Գերմանն այսօր ուշ կվերադառնա...

— Ինչ մութ գիշեր է... Իսկ ո՞րտեղ է Մատիլդան:

— Նրա եղբայրը եկել է գյուղից: Խնդրեց այցելության գնալ:

Արմենիերը լռեց: Արտասովոր և քաղցր մի բան կար էլոիզի ձայնի մեջ: Մվ պրոֆեսորը տանը չէր, տանը չէր նաև աղախինը՝ Մատիլդան, և՛ տանը ուրիշ ոչ ոք չկար:

Իսկ տիկին էլոիզն այնքան գեղեցիկ էր, այնպես էին այրվում այն փնջերը նրա սև զգեստի վրա:

— Ինչպե՞ս շեք երկյուղում մութին տանը մենակ մնալ:

— Մեր տունը մութ չէ... Տեսեք քանի մոմ է վառվում,—հնչեց նրա ջղային ծիծաղը:

— Իմ հայրենիքում կինը կվախենա մութ գիշերով տանը մենակ մնալ:

— Բայց ես մենակ չեմ: Դուք այստեղ եք,—և նորից հնչեց նրա հեղձոտ ծիծաղը, որով տիկին էլոիզը ուզում էր խայթել նրան:— Այնպես չէ, դուք ինձ կպաշտպանեք, եթե շարագործները հարձակվեն մեր տան վրա, ինչպես հարձակվում են ձեր երկրում:

Արմենիերը ոչինչ չասաց. նա կանգնել էր կլավիրի մոտ և փորձում էր վերհիշել այն գամման, որ հնչում էր ինչպես վանքի զանգերի զողանքը:

— Ուզո՞ւմ եք ձեզ սովորեցնեմ կլավիրի վրա նվագել:

Արմենիերը տխուր պատասխանեց.

— Ինձ համար ուշ է արդեն... Մեզանում ասում են քառասունի մեջ սովորողը գերեզմանում կնվագի:

— Բայց դուք շատ հեռու եք քառասունից:

— Համբերություն չունեմ, տիկին էլտիզ:

— Հենց դրա համար էլ պիտի սովորեք նվագել:

— Կիթառի վրա՞ գուցե, թե չէ իմ հայրենիքում որտեղի՞ց է այդ գործիքը և ո՞վ գիտի, ես պիտի ունենամ տուն և ընտանիք:

— Այստեղ այնքան լավ աղջիկներ կան... Հնարեցեք մեկն ու մեկին և տարեք ձեզ հետ:

Արմենիերը չզգաց տիկին էլտիզի ո՛չ դողացող ձայնը և ո՛չ տխուր շեշտը:

— Նրանցից ոչ ոք ինձ հետ չի վերադառնա իմ երկիրը:

— Այն ժամանակ դուք մնացեք այստեղ:

— Չեմ կարող, ես պետք է վերադառնամ:

Ստեղծերը միալար դողանջում էին այն գամման, որ հիշեցնում էր վանքի զանգերը:

— Իսկ ձեր եկեղեցիներում չե՞ն նվագում...

— Ո՛չ, տիկին: Մեզանում միայն երգում են:

— Եվ երևի սքանչելի է խումբը երգիչ աղջիկների և տղաների:

— Աղջիկներին և կանանց արգելված է երգել մեր եկեղեցիներում:

Նրանք կարող են միայն աղոթել և այն էլ պետք է առանձին կանգնեն:

— Խեղճ աղջիկներ:

— Այո, տիկին, նրանք խեղճ են: Նրանք ոչ միայն չեն կարող եկեղեցում երգել, այլ և չեն կարող սիրել և գուցե թե իրենց սրտում գաղտնի սիրեն մեկին, բայց չեն կարող այդ մասին հայտնի ասել: Նրանց շատ կանուխ են ամուսնացնում: Մեզանում ասում են՝ գդակդ գարկիր աղջեկա մեջքին, եթե աղջիկը վայր չընկավ, ուրեմն ժամանակն է ամուսնացնելու...

— Եվ ամուսնացնո՞ւմ են:

— Եվ ամուսնացնում են: Իմ ազգականուհին, որ հիմա հագիվ լինի տասներկու տարեկան, արդեն երկրորդ տարին է, որ կինն է մի վայրենի մարդու, որ նրան հայր կապեր: Իսկ ինչքան կայտառ աղջիկ էր

Մայրանը: Ամուսնության հենց առաջին գիշերը նա վախից մունջ դարձավ, մունջ և անդամալույծ... Եվ այդպես էլ ես թողի նրան:

— Աստված իմ...

— Ահա թե ինչպես են նրանք խեղճ:

Արմենիերը լուռ մոտեցավ պատուհանին: Մութ էր. դրսից լսվում էր միայն անձրևի աղմուկը. մի ջրհորդանից թափվում էր անձրևաջուրը... Ինչո՞ւ հիշեց Մայրանին... Այն երկրում էլ խավար գիշեր է և ա՛յս անձրևն է գալիս, թե պարզկա գիշեր է, գարնան սպիտակ աստղերով... Տեսնես հիմա ի՞նչ է անում նանին: Երևի քուրսու վրա ոսպ է փռել և հոգնած աչքերով ջոկում է քարերը: Հանկարծ դռան հետևից կամաց կանչեր. «Ես եմ, նանի... Խաչերն եմ... Գուռը բաց»:

Տիկին էլտիզն աչքերը չէր հեռացնում նրանից: Արմենիերը ձեռքերը կրծքին խաչել և նայում էր մութ խավարին: Տիկինն զգաց, որ նա մտքով հեռու էր: Եվ ինքն իրեն հանդիմանեց, որ ավելորդ հարցասիրտությամբ լլատճառ եղավ վերհիշումների:

Այդ բուպեին եթե Արմենիերը գլուխը շրջեր և նայեր տիկին էլտիզին, նա կտեսներ այնպիսի հայացք, այնպիսի աչքեր՝ սիրով և քնքշանքով լի, որ կմոռանար ցնորքը: Բայց նա անշարժ նայում էր խավարին: Թվաց թե լսեց շան խուլ հաչոց շատ հեռվից, գուցե ժմուղների այն գլուղից կամ ավելի հեռվից:

— Ինչքան միանման են հաչում շները... Կարծես թե մեր Բողարի հայն էր:

— Ուզո՞ւմ եք ձեզ համար մի բան նվագեմ... Գերմանն ուշանում է: Արմենիերը շրջվեց: Նա կարծես մոռացել էր, որ օտարի տանն է և այդ տանը մարդ կա...

— Նվագեցեք:

Երբ տիկին էլտիզը վեր կացավ և քայլեց, այնպես քաղցր խշափ նրա զգեստը:

Հնչեց նույն վալսը... Երբեմն թվում էր, թե մութ գիշերին ստեպի վրայով անցնում է եռաձի կառքը և զրնգում են բոժոժները, երբեմն մեկը և երկուսը թավ դողանջում են հեռվից, կարծես նավը գնում էր ծովի հեռուն և այնտեղից այդ հնչյունները հրածեշտ էին տալիս սիրելի ակիին:

Պատի վրա այն նկարն էր, որի ապակին իր մեջ էր հավաքել լույսի շողեր և արտացոլում էր ինչպես պատուհանից ներս ընկնող աստղալույս: Արմենիերը նայեց նկարին և իսկույն աչքերը դարձրեց գեպի տի-

կին էլտիզը, որ ինքնամոռացութեան մեջ ետ էր թեքել գլուխը, և մոմերի լույսով ցոլանում էր նրա նուրբ պարանոցը: Նկարը պատճենն էր այդ պատկերի... Նույն մոխրագույն գանգուրները, նույն փոքրիկ քիթը, շքեղ ունգերով, որ փքվում էին կրքով, լույսի տակ երևացնելով վարդագույն արյունը,— նույն հրեական շրթունքները՝ հազիվ նշմարելի աղվամազով: Նույնաձև էր նաև զգեստը, այն տարբերութեամբ, որ երկնագույն էր և ոչ սև, բայց փնջերը նույնն էին, նույն վառ կարմիր վարդերը: Նկարի էլտիզն ավելի երիտասարդ էր: Նա նստել էր բազմոցին և ծնկները վրա պահում էր բացված գիրքը:

Արմենիերը նորից համեմատեց նկարը... Տիկին էլտիզը շունք տնկանալ ուլունքը, որի ծայրից կախված էր ընկուզի մեծութեան սև և տափակ մի քար: Իսկ այդ քարը և ուլունքի կանաչ շարանն ստվերագծում էին նկարի կնոջ երիտասարդ և զեղեցիկ դեմքը:

Սրբ տիկին էլտիզը նվազը վերջացրեց, Արմենիերը մտաեցամ նրան՝
— Իսկ որտե՞ղ են այն ուլունքները,— և մատը մեկնեց նկարին:

— Ուզո՞ւմ եք ցույց տամ,— նրանք կողք-կողքի գնացին դեպի փոքրիկ պահարանը՝ կարմիր փայտից և սաղափներով զարդարված: Այդ բույսին անձրևախառն քամին համկարծ խփեց պատուհանին և կաթիլներն աղմուկով թմբկահարեցին: Նրանք չտես նայեցին իրարը
— Սեծո՞ւմ են պատուհանը:

— Ո՛չ, անձրևն էր...

Տիկին էտիզը դարակից հանեց ուլունքների շարանը:

— Մայրս է նվիրել իմ հարսնութեան օրը,— մեղմ և թախծառ առաց տիկին էլտիզը, կարծես կարոտեց և՛ մորը, և՛ հարսնութեան երջանիկ առավոտը:

— Ինչ-որ բան է փորագրված քարի վրա,— և Արմենիերը քարը պահեց լույսի դեմ:

— Այո... գրված է amor vincit omnia, որ նշանակում է սերը հաղթում է ամեն ինչի... շոտլանդական քար է:

Քարի վրա քանդակված էր նաև մի աղջիկ, որի ոտքերի առաջ նրանց ջուռ էր պարտված առյուծը:

Արմենիերը ձեռքերը մեկնեց: Նա կամեցավ ուլունքները կախել տիկնոջ պարանոցով, ինչպես նկարի վրա էր: Նրա մատները շոշափեցին էլտիզի ջերմ պարանոցը: Տիկինը խոնարհեց գլուխը և նրա գանգուրները շփեցին Արմենիերի այտերը: Նրանք իրար չէին տեսնում, այնքան մոտ էին աչքերը:

Պատուհանի տակ նորից ազմկեց քամին և ծառերը խշշացին:

— Իմ սիրելի երեխա...

Տիկին էլտիզը գրկեց նրան, համբուրեց և ամուր սեղանեց կրծքին, կարծես վախենում էր, որ գարնան քամին նրան կխլի իր գրկից:

Առավոտյան Մատիլզան, աղախինը տիկին էլտիզի, եկավ այրի կին Աշինգերի տունը Գրունշտրասսի վրա, որտեղ բնակվում էր Արմենիերը: Մատիլզան տանտիրուհուն հարցրեց. «Վե՞ր է կացել պարոնը...»: Տանտիրուհին բախեց նրա սենյակի դուռը և ներսից պատասխան շառնելով՝ զուրը կամաց հրեց: Ներսը ոչ ոք չկար. սեղանի վրա բաց էր այն գիրքը, որին հավատո գիրք էր անվանում Արմենիերը, տանտիրուհուն արգելելով ձեռք տալ գրքին, երբ նա հավաքում էր սենյակը: Սեղանի վրա մտք մինչև վերջը վառված էր. հատակին թափված էր ծխախոտի մոխիր: Աթոսի թիկնոցի վրա փռված էր նրա սյուրսուկը, որից ջուր էր կաթում:

— Չկա մեր երիտասարդը,— և տանտիրուհին դուռը դրեց:— Սրվում է, որ նա ուշ է վերադարձել, որովհետև ես ջուն շունեմ և շատ ուշ եմ ընում... Իսկ երեկ գիշեր այնպիսի անձրև էր, ծառերն այնպես էին աղմկում, որ ես անկողնում երկար ժամանակ արթուն էի և ինչք չէին երևում իմ աչքերին: Իսկ նա չեկավ, որովհետև եթե գար, ես նրա ոտնաձայնը կլսեի: Մինչև անգամ անկողին չի մտել, այլ պառկել է շոքերով: Այ կտեսնեք, որ այդպես է եղել... Փառք աստծո, տալը տարի է այրի եմ և շատ կենվորներ եմ տեսել և նրանց այնպես եմ ճանաչել, որ նույնիսկ ոտնաձայնից եմ ճանաչել, ինչպես իմ հանգուցյալ ամուսինը ճանաչում էր նամակները, թե ով է գրել և ում են գրել, և ինչ է գրված նամակի մեջ...

Մատիլզան զարմանքից բերանը բաց էր արել, կարծես պոստմեյստեր Աշինգերի այրին նրան հրաշք էր պատմում, ինչպես երկկայան իր եղբայրը,— որ գյուղից էր եկել,— պատմում էր, թե հարևան գյուղում մի կով ծնել է ոչ թե իսկական հորթ, այլ հորթի գլուխ, միայն մի գլուխ, առանց իրանի և ոտքերի և, որ հորթի գլխին կպած է եղել պոչը, նույնպես իսկական պոչ և հորթի գլուխը ծնվելուց հետո երեք անգամ բառաչել է ու մեռել:

Իսկ տիկին Աշինգերը պատմում էր.

— Պատահում էր, որ հոգնած տուն էր գալիս հանգուցյալը: Հանում էր մի նամակ և ասում. «Մարթա, այս նամակն ուղարկել էն փա-

ուպան Հանս Տրաուբին, որի տունը ուսաների նոր աղոթատան դիմացն է... Եվ նրանք գրում են, որ հայրը մահացել է գլուղում»: Եվ իսկապես այդպես էր, ճշմարիտ աստված: Նա հագնում էր սև ֆրակը, հագնում էր նաև սև ձեռնոցները, որովհետև գիտեր, որ կառուպան Հանս Տրաուբին կարգավ չգիտե և իրեն պիտի խնդրի կարգավ այդ նամակը, որից հետո բոլորը պիտի ողբային ծերունու մահը: Եվ իմ հանգուցյալ ամուսինն առաջինն էր ասում մխիթարանքի խոսքը, նույնիսկ պատտորից առաջ: Եվ կառուպան Հանս Տրաուբին այդ օրից դառնում էր իմ ամուսնու բարեկամը և եթե նրան փողոցում հանդիպեիր, նա հեռվից կանչում էր. «բարև ձեզ, պարոն պոստմեյստեր», — և մինչև անգամ առաջարկում էր կառքը նստել, որովհետև հոր մահվամբ Հանս Տրաուբին ժառանգություն ստացավ... Այդպիսի մարդ էր իմ հանգուցյալ ամուսինը: Կամ բերում էր մի փոքր ծրար, այնքան փոքրիկ, որ կարելի էր ասել, թե տասը խոսքից ավելի չէր տեղավորի, — բայց նա ցույց էր տալիս ծրարը և ժպտում. «Մարթա, վաղը կարող ես շնորհավորել դատավորի կնոջը... Ինչպե՞ս է նրա կրտսեր աղջկա անունը»: «Ամալյա է անունը, տեր իմ...»: «Այս ծրարի մեջ Ամալյայի երջանկության բանալին է... Հիշո՞ւմ ես այն թնդանոթածիզ կապիտանին, որ այս ամառ գնդի տոնին ողջ-ողջ կուլ տվեց տասներեք ձուկ»: Եվ իսկապես, նա կուլ էր տվել տասներեք կենդանի ձուկ և ամբողջ քաղաքում խոսում էին այդ մասին: «Ահա այս նամակով պարոն կապիտանը խնդրում է դատավորի դուստր Ամալյայի ձեռքը»: Եվ ինչ. մի շաբաթ հետո դարձյալ իմ ամուսնու ձեռքով ուղարկում էին պատասխանը և ամիսը շբոլորած, մեզ ևս կանչում էին հարսանիքի: Ահա թե ինչպիսի պոստմեյստեր էր իմ հանգուցյալ ամուսինը. նստում էինք երկուսով, քանի որ աստված մեզ արժան չհամարեց զավակ ունենալ, — նստում էինք, նա խմում էր երեկոյան թեյը (նա սիրում էր ծաղկով թեյ և հիմա էլ դեռ այդ ծաղկից պահում եմ), — և միասին զրուցում էինք: Ամբողջ քաղաքում դեռ ոչ չգիտեր, թե ով է դժբախտացել և կամ ով է, որ պիտի երջանկանա և միայն մենք գիտեինք... Այդպիսի մարդ էր իմ ամուսինը:

Արդեն Մատիլդան զգացվել էր այրի Աշինգերի զրույցից և խեղճ աղջկա աչքերի մեջ արցունք էր երևում, այնինչ տանտիրուհին դեռ պատմում էր, մեծ եռանդով սրբելով ափսեները, որ ամենևին յուզող չէին, այլ միայն փոշոտ էին և այդ փոշին վկայում էր, որ պոստմեյստեր Աշինգերի մահից հետո ափսեներն այլևս չեն փայլել սեղանի վրա:

— Իսկ ինչ երիտասարդ է Արմենիերը, աստված իմ... Կարող եմ ասել, որ ահա տասը տարի է այրի եմ և այդպիսի երիտասարդ չեմ տե-

սել: Ինչքան եմ երախտապարտ տիկին Պարրոտին, նաև երախտապարտ եմ տիկին Էլտիդին: Ծնորհակալ եմ, որ շեն մոռացել երախտիքն իմ հանգուցյալ ամուսնու... Իսկ իմ ամուսինը պատահում էր, որ բուքին, երբ փողոցներում կրակ էին վառել, որպեսզի մարդիկ կարողանան շարժվել, իմ հանգուցյալ ամուսինը, որի նման պոստմեյստեր մինչև անգամ Պետերբուրգում չկար...

Այդ զարմանալի Աշինգերը ձյունամրրիկին ծրարներն անձամբ էր տանում ոեկտոր Գեորգ Ֆրիդրիխ Պարրոտին (այն ժամանակ որդին՝ Ֆրիդրիխը, որ ոեկտոր է այժմ, դեռ երիտասարդ էր...): Այդ հեռավոր ժամանակներից Աշինգերի այրին ինչպե՞ս պիտի հասներ եկեղեցի, որտեղ նա հանդիպել էր երկու տիկիններին և ապա տիկին Պարրոտը նրան հարցրել էր.

— Զգիտե՞ք մի հարմար սենյակ առաքինի տան մեջ մեր բարեկամ Արմենիերի համար... Եվ որ տանտիրուհին հոգա նրան, դաստիարակի, որովհետև նա խնամքի կարոտ է...

Մի ժամից հետո տիկին Աշինգերի խոսքը նորից դարձավ Արմենիերին:

— Ահա շուտով կլրանա վեց ամիս, ինչ նա ապրում է իմ տանը և ես միշտ փառք եմ տալիս աստծուն, որ հանդիպել եմ այդպիսի մարդու: Ո՛չ աղմկում է, ո՛չ նրան հարբած եմ տեսել, ո՛չ ուրիշ անիրավություններ է անում, ինչպես օրինակ՝ նա, — և տանտիրուհին այս խոսքի վրա ներ է անում, ինչպես օրինակ՝ նա, — և տանտիրուհին այս խոսքի վրա ներ է անում և բռնցքակով փող աշխատեր: Ա՛յ, եթե ողջ լինեիր իմ հանգուցյալ ամուսինը, նա նրան ցույց կտար: Բայց ես, այրիս, ի՞նչ կարող եմ անել: Իսկ Արմենիերը՝ անմեղ աղավնի է... Դեռ ամիսը չլրացած ծեծում է դուռս և ասում. «Կարելի՞ է, տիկին Աշինգեր... Ահա այս ամսվա վարձը՝ յոթ ուրբիս»: Եվ վճարում է: Ես գիտեմ, որ նրա թոշակը քսանհինգ ուրբի է և յոթ ուրբին ինձ է վճարում, բայց դրա փոխարեն նստում եմ ամենալավ սենյակը՝ երկու պատահանով և ծառուս նրան հատկացրել եմ ամենալավ սենյակի դուռը, — նաև ինքս եմ ղեկներով, — տիկին Աշինգերը բացեց սենյակի դուռը, — նաև ինքս եմ հավաքում սենյակը, լվանում եմ նրա ներքնաշորը և խնամում եմ, ինչհավաքում սենյակը, լվանում եմ նրա ներքնաշորը և խնամում եմ, ինչպես մայրը որդուն: Հենց մի շաբաթ առաջ նա ինձ թե՛ «տկար եմ, տիկին Աշինգեր»: Եվ ես նրան այնպիսի մուգ թեյ տվի և իմ տղրուկներով կին Աշինգեր: Եվ ես նրան այնպիսի մուգ թեյ տվի և իմ տղրուկները արյուն առա նրանից և նա մյուս օրը ոտքի կանգնեց... Նաև պատահում էինչև անգամ բուրգմեյստերի կնոջն են առողջացրել... Նաև պատահում է, որ մի տեղ կարը քանգվում է և թել-ասեղ է հարկավոր: Տղամարդ լի է, որ մի տեղ կարը քանգվում է և թել-ասեղ է հարկավոր:

նելով նա անհոգ է և մինչև անգամ չի նկատի, եթե կարգ քանդվելով հասնի Ռիգա, և կամ մի կոճակ այնպես է կախվում, որ խզճահարված ես, թե ինչու՞ է նա այդպես կախվել, ինչպես իմ ամուսնու Ֆրակի կոճակները և ամոթ է ասել տարատի կոճակները, որոնցից մեկն ու մեկը միշտ օրորվում էր թելի վրա, ինչպես հարթած գլուխ և ես դեռևս միտք եմ անում, թե արդյոք նրա բոլոր կոճակները վայելուչ տեսքով էին, երբ հանգուցյալին գրին դազազի մեջ...

Մատիլդան հառաչեց, որովհետև զգայուն էր և չէր կարող տանց հառաչելու լսել մահվան մասին:

— Եվ առանց խոսքի առնում եմ նրա տարատը կամ ժիլետը, կարում եմ քանդված կարը, ամրացնում եմ կոճակը, որովհետև մտածում եմ, մեր քաղաքում նա հարազատ մայր շունի, և՛ քույր շունի, և՛ կին շունի, և՛ մինչև անգամ խղճի ընդդեմ է, որ այդպիսի մարդը շրջի առանց կոճակի... Իսկ սենյակը ոչ մի պակասություն չունի: Եթե Գոմբերգի գազաթիֆն արև կա, արևն այս սենյակի մեջ է: Իսկ այն բազմոցը, որ տեսաք, իմ ամուսնու սիրած բազմոցն էր: Ծա այս սենյակը տեղափոխեցի թեև կանտրակտի մեջ չի հիշատակված, տեղափոխեցի, որպեսզի Արմենիերի օթևանը բոլորովին շքեղ լինի, ինչպես բարոնի որդու բնակարանը: Եվ ամենևին չեմ փոշմանել, քանի որ նա արժանի է... Իսկ այն մեկը, — տանտիրուհին մատը նորից վեր բարձրացրեց, — չեմ կարող առել, թե ինչպիսին է... Ամբողջ ձեռունահարկն զբաղեցնում է տարին առանձին օտարով և ինն ամիս է ոչինչ չի վճարել: Եվ մինչև անգամ վախենում եմ նրան խոսեցնել... Իսկ Արմենիերը, չեմ կարող ասել, ինչքան բարենոգի է: Երբեմն այնպես է երգում, այնպիսի քաղցր ձայնով է երգում, որ պատի հետեից ես լսում եմ, լաց եմ լինում, հիշելով իմ հանգուցյալ ամուսնուն: Իսկ թե ինչքան խելոքն է, այդ մասին էլ խոսք չկա: Իզուր է, որ պարոն պրոֆեսորը բոլոր հայերից միայն նրան է ընտրել:

— Այո, իմ պարոնն ևս ասում էր, որ նա խելոք է, — ընդհատեց Մատիլդան, — ես ինքս եմ լսել նրա զրույցը տիկնոջ հետ... Նա ասում է, որ եթե այսպես գնա, հերթ Արմենիերը կարող է մինչև անգամ պրոֆեսոր դառնալ:

— Եվ կրա՞նա... Անպատճառ կգուռնա... Նա գիշերները համարյա չի քնում և զարուհակ կարգում է: Տեսա՞ք մտքը, մինչև վերջ վառված էր: Իսկ երեկոյան գեռ բոլորովին նոր էր մոմը:

— Իսկ իմ տիրուհին ևս նրան շատ է սիրում:

— Օ, տիկին էլիզբ հրեշտակ է... Ամեն անգամ նրան ուզում եմ այցելության գնալ և շնորհակալ լինել նրա բարեխոսությունների համար, բայց դեռ չեմ գնացել:

— Երբ տանը քաղցրավենիք է լինում կամ կարկանդակ, իմ տիրուհին ինձ հարցնում է. «Մատիլդա, պահե՞լ ես Արմենիերի բաժինը...»:

— Հապտ Արմենիերն ինչպես գովեստով է խոսում տիկնոջ և պարոն Աուսենդերի մասին: Նա ասում է, որ հավիտյան չի մոռանա այդ տունը:

— Տիկին Աշինգեր, միայն ձեզ եմ ասում, — և Մատիլդան շշնջաց նրա ականջին, — իմ տիրուհին ասեղնագործում է տղամարդու այնպիսի կրծկալ, որ ամբողջ քաղաքում ոչ ոք չունի: Սև թավիշ է, վրան ոսկեթելերով և մարգարիտներով ալիպիսի շուշաններ, որ կարծես նոր են քաղել: Իսկ վզի վրա՝ վարդերի ժանյակ և երկու թիթեռ, մեկն սպիտակ, մյուսը՝ դեռ չի սկսել, այլ միայն նշան է արել...

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ, — և այդի Աշինգերը հիացմունքից փափուկ ձեռքք խփեց իր այտին և այդպես էլ պահեց ձեռքը: — Եվ ո՞ւմ համար է գործում:

— Ես այնպես եմ միտք անում, որ պարոն պրոֆեսորի համար չի գործում, քանի որ գուլները և նախշերը երբտասարդի են:

— Ուրեմն... Ա՛յ-ա՛յ-ա՛յ...

— Միայն խնդրում եմ, տիկին Աշինգեր, ոչ ոքի... Որովհետև դեռ չի վերջացրել և կարելի է, որ ուզում է անսպասելի նվիրել...

Տիկին Աշինգերը ոչինչ չպատասխանեց, այլ ճապաղած աչքերով նայեց Մատիլդային, ձեռքն այտի վրա... Նա խոր միտք էր անում, թե առաջ ո՞րին պատմի՝ կողովագործի կնո՞ջը, որ ապրում էր նրա տան ներքնահարկում, թե՛ հարևան վարսավիրի կնոջը: Եվ որոշեց, որ ավելի լավ է սկսել մահուղավաճառի կնոջից, քանի որ նա տիկին Աշինգերի ազրուկներն ավելի զորավոր է համարում վարսավիրի ազրուկներից:

— Իսկ շատով պետք է նվիրի, — սթափվեց պոստմեյստերի այրին:

— Չեմ կարող ասել: Այս առավոտ իմ տիրուհին թեև գունատ էր, բայց երբ պարոն պրոֆեսորը գնաց, վերցրեց թավիշը և սկսեց ասեղնագործել: Առաջ նա ճաշից հետո էր գործում, երբ քնում էր պարոն Գերմանը, իսկ այսօր առավոտյան կանուխ սկսեց...

— Ուրեմն շտապում է:

— Եվ ինձ ասաց, որ ծնկները փաթաթեմ, որովհետև իրեն վատ է զգում: Երեկ նա թեթե էր հագնվել և երեկ մքսել է...

— Երեկոները դեռ ցուրտ է... Իսկ ես ինչպես եմ մքսում:

— Երբ նրան փաթաթեցի, իմ տիրուհին հարցրեց, թե Մատիլդա, քո գիտե՞ս տիկին Աշինգերի տունը Գրունշտրասսեի վրա: Ես պատասխանեցի՝ այն տունը չէ՞, որտեղ հերթ Արմենիերն է ապրում... Հիշո՞ւմ եք, տիկին Աշինգեր, ձեռք ծննդյան տոնին մի անգամ եկա և պարոնի համար կարկանդակ բերի:

— Հիշում եմ, սիրելիս, և հիշում եմ, որ համեղ կարկանդակ էր...

— Ես այդպես էլ ասացի իմ տիրուհուն: Իսկ նա այնպես մանրամասն նկարագրեց տունը, թե երկու պատուհան ունի, որ նայում են փողոցին, կարմիր աղյուսե տուն է, դարբասը կանաչ գույնի և դարբասի առաջ երկու լորենի...

— Եվ ի՞նչ լորենիներ...

— Իմ տիկինն այնպես նկարագրեց, որ առանց մոլորվելու գտա ձեր տունը և դեռ հեռվից տեսա երկու լորենիներ...

— Որ տնկել է իմ հանգուցյալ ամուսինը, Մատիլդա, իմ և նրա լորենիները, երբ մենք նորապսակներ էինք և...

Բայց արցունքը նրան խանգարեց և պոստամեյստերի այրին գողնուցով սրբեց արցունքը:

— Իմ տիրուհին ասաց. «Մատիլդա, դեռ Արմենիերի առողջութունը հարցրու, նաև ողջունիր տիկին Աշինգերին և իսկույն վերադարձիր»: Նա ասաց, որ վատ երազ է տեսել և սիրտն անհանգիստ է:

— Բայց ու՞ր է Արմենիերը,— զարմացած հարցրեց տանտիրուհին և կարծես միայն այդ վայրկյանին նա հասկացավ, որ տիկին էլուիզն աղախնին ուղարկել էր Արմենիերի մասին տեղեկանալու:

— Ու՞ր կարող է լինել,— և նորից բացեց դուռը, երկուսով ներս մտան, կարծես ենթադրում էին, որ Արմենիերը կարող էր սենյակում լինել և կամ աննկատ ներս մտնել այն ժամանակ, երբ պատշգամբի վրա այրի Աշինգերը Մատիլդային պատմում էր հանգուցյալ պոստամեյստերի մասին:— Ուրեմն նա հագել է կապույտ սյուրտուկը... նաև գրատը չկա: Իսկ այդ սյուրտուկը դեռ թաց է...

Մատիլդան հետաքրքրությամբ նայում էր պատից կախված նկարին:

— Այդ նրանց գլխավոր տաճարն է... Ինքը՝ Հիսուսը գիշերով իջել է երկնքից, մուրճով խփել գետնին և ասել է. «Այստեղ կառուցել մի տաճար...»: Եվ այդտեղ էլ կառուցել են: Իսկ այն սարը, որ հեռվում երևում է, Մատիլդա, սուրբ սար է... Դա Արարատն է... Որտեղ Նոյի տապանն է իջել, իսկ այժմ այնտեղ հերթ պրոֆեսորը ցցել է մի խաչ, որ ինքս տեսել եմ, որովհետև այդ խաչը պատրաստել է Իոհանն Յիզևիբը, իսկ նրա կինն իմ հանգուցյալ ամուսնու հորեղբոր աղջիկն է...

Մատիլդան նայում էր այնպիսի սնահավատ երկյուղով, կարծես այդ նկարն էլ սուրբ էր և նա տատանվում էր՝ խաչակնքել, թե՞ համբուրել:

Բայց այդ ժամանակ ձեռնադրակից լավեցին ինչ-որ ձայներ: Տիկին Աշինգերը ձեռքը զարկեց ազդրին:

— Ա՛յ... Արմենիերն այնտեղ է: Այդպես էլ է, Մատիլդա... Երևի ես մառանումն եմ եղել, որ նա բարձրացել է վերև: Մատիլդա,— և նրա ձայնը մեղմեց, կարծես վախենում էր վերևից լսելին,— ինձ դուր չի գալիս նրանց բարեկամությունը... Իհարկե, ինձ անհարմար է Արմենիերին զգուշացնել, բայց դու ասա տիկին էլուիզին, ասա իմ անունից և թող Արմենիերն այլևս նրա հետ,— տանտիրուհին ցույց տվեց ձեռնահարկի կողմը,— բարեկամ չլինի... Այ, տեսնում ես,— և ձեռքը մեկնեց դեպի սրբաված անկողինը,— վերևի կենվորի շնորհքն է: Իսկ մինչև այդ, Արմենիերն այսպիսի բան չէր անում... Բոլորը նա է սովորեցնում: Ինչ ամիս է վարձը չի վճարել և դեռ ճանապարհից հանում է ազնիվ երիտասարդին:

Տիկին Աշինգերն սկսեց հարդարել անկողինը: Նա Մատիլդային խնդրեց բարձրանալ ձեռնահարկը, ուր հավանորեն պետք է լիներ Արմենիերը:

— Ես այնտեղ ոտք չեմ դնի, մինչև հարգելի պարոնը չվճարի իր պարտքը... Կտուրն էլ կաթի, ես դարձյալ չեմ բարձրանա:

Մատիլդան փայտե սանդուղքով վեր ելավ:

Դեռ սանդուղքի վրա լսեց, որ մեկը կարծես գոռոռում էր: Երբ մոտեցավ դռնակին, Մատիլդային թվաց, թե ներսը խոսում են անժանոթ լեզվով: Նա դուռը բացեց:

— Դուռը բաց է,— նորից դրոգաց մի ձայն:

Աղջիկը ներս մտավ: Ծխի մեջ նա տեսավ մի վիթխարի մարդ, որի գլուխը հասնում էր առաստաղին: Նա առանց շապիկի էր և նրա մերկ կրծքի վրա ինչ-որ սև գծեր կային: Մարդը ձեռքին բռնել էր երկար սուսեր: Նկատելով աղջկան, նա թիկնոցով իսկույն ծածկեց մարմինը և երկու քայլ արեց դեպի աղջիկը: Բայց այդ վայրկյանին Մատիլդան անկույտում նշմարեց ուրվականի պես զարհուրելի մի բան, որ գլխին ուսանողի գդակ ուներ և ատամներով բռնել էր այրվող ծխամորճը:

Մատիլդան սարսափից ճշաց, փակեց դուռը և իրեն նետեց պատըշգամբ:

Տիկին Աշինգերը դուրս վազեց սենյակից: Պատշգամբ բարձրացավ նաև կողովագործը, որ բակում կիտել էր կողովները և այդ բուպին ուզում էր դարբասը բաց անել՝ կողովները շալակելով տանելու համար: Նա առաջինը նկատեց աղջկա վայր իջնելը: Բայց մինչև բարձրանար, տիկին Աշինգերն արդեն գրկել էր ուշագնաց Մատիլդային:

— Զուր, մի գավաթ ջուր,— կանչեց տանտիրուհին:

Կողովագործը ջուր բերեց:

Տանտիրուհու կանչին դուրս վազեց նաև կողովագործի կինը, նրա հետևից երկու երեխան: Նրանք բոլորը բարձրացան պատշգամբ:

Մատիլդան ուշքի եկավ.

— Այնտեղ... Կտուրի տակ սատանա կա... Նա ծխում էր ծխամոր-
ճը, իսկ մի ուրիշը թուրը ձեռքին պահապան էր կանգնել:

— Հիսուս Քրիստոս,— և տիկին Աշինգերն ահից այլևս ոչինչ չա-
սաց: Կողովագործի կինը գիրկն առավ փոքրին: Բուրը կանայք լուռ նա-
յեցին միակ տղամարդուն՝ կողովագործին, որը նույնպես լուռ էր:

Ձեղունահարկի բնակիչը, որից այնքան զանգատվում էր տանտի-
րուհին, Օտտոկար Դրիշն էր, մեկն այն առաքինի ուսանողներից, որոնք
մեղրագինին խմում էին ձիու պես, բռնցքակովի մեջ առյուծ էին, զվար-
ճանում էին ինչպես ազատ թռչուն, բայց և գիտեին եզի նման շարքաշ
աշխատել:

Մտնենում էին քննությունները և մի շաբաթ էր, որ Դրիշը ձեղունա-
հարկում, ուր լույսն ընկնում էր կտուրի մեջ բացված կտր պատուհա-
նից,— սերտում էր anatomia regionum...

...Այն, ինչ որ Մատիլդայի աչքին երևաց, որպես զարհուրելի ուր-
վական, մարդու կմախք էր՝ ոչ բուր սակորներով, որ հավաքել էր Օտտո-
կար Դրիշը սուրբ Մարիամի մատուռի մոտ, այնտեղ, ուր Ալեքսանդր I-ը
հողին էր հանձնել «ոսկորները զանազան ժողովուրդների»: Եվ որովհետև
պակասում էին մի քանի կողոսկրներ, ուստի Դրիշն իր մարմնի վրա
ածուխով նկարել էր այդ ոսկորները:

Իսկ մնացածը՝ ինչ տեսել էր Մատիլդան, իրական էր: Օտտոկարը
իր բերետը հագցրել էր զանգին և ծխամորճը կոխել էր նրա բերանի խո-
ռուրը և ոչ միայն արտասանում էր հարյուրավոր ոսկորների անունները
և սուսերով ցույց էր տալիս ոսկորը, այլև կմախքի հետ բարձրաձայն
խոսում էր.

— O, maxill superior (և սուսերի ծայրով դիպում էր վերի կզա-
կին), որը տիկին Աշինգերին նմանեցնում է զառամյալ կապիկի, նաև
գուր vertebrae collus, որ թաղվել եք նրա ճարպի մեջ... Ապա այս նիհար
costae-ները (և սուսերի ծայրը ցատկոտում էր կրծքի վանդակի ոսկոր-
ների վրայով և ոսկորները ստեղների նման ձայն էին հանում), այս
ոսկորն վանդակի մեջ, ով անհայտ homo sapiens, թո սիրտը արդյոք
ըմբոստացնել է երբևիցե, բարախե՞լ է մի վսեմ նպատակի համար, թե
եղել է հում մսագունդ:

Օտտոկար Դրիշը այդպես էր ուսանում ոսկորաքննությունը և pelvis-ի
ոսկորների հետ խոսում էր այնպիսի քննություններ, որպիսին ոչ ոք չի
խոսել սիրած կնոջ հետ:

Նկատելով անձանոթ աղչկա հանկարծակի աներևութանալը և լսե-

րով նրա ճիշդ, նաև աղմուկը պատշգամբի վրա,— Օտտոկարը շտապ
հագնվեց և իջավ ներքև այն ժամանակ, երբ բոլորը լուռ նայում էին կո-
ղովագործին, իսկ նա նայում էր կողովների կույտին, մտածելով, որ
իբր կորչում է ժամանակը և այսօր հազիվ թե վաճառի երկու կողով:
Սանդուղքի վրա տեսնելով Օտտոկարին, կողովագործը բարևեց նրան
և հանդարտ ասաց.

— Լավ կատակ չեք անում, պարոն ուսանող...

Եվ իջավ բակը՝ դարբասը բաց անելու:

— Ի՞նչ է պատահել,— Օտտոկարը սիրալիր նայեց Մատիլդային,
զգալով, որ դուռն այդ աղջիկը բացեց: Մատիլդան հարդարեց մազերը և
զոգնոցը, նույնիսկ թեթև շիկնեց, նա աչքերը գետին խոնարհեց: Այն-
քան անմեղութուն կար նրա դեմքին, որ Օտտոկարը խղճահարվեց:

— Ձեզ երևի վախեցրեց կմախքը և իմ անհամեստ տեսքը: Ներե-
ցեք ինձ...

Մատիլդան թաքցրեց ծայրեր: Տիկին Աշինգերը ակնհայտ դժգոհ էր
ալգալիսի վախճանից: Նա սպասում էր, որ Մատիլդան նախահարձակ
լինի, ապա կխառնվի կողովագործի կինը և ապա ինքը մի անգամից
կթափի կուտակված մաղձը:

Բայց այդպես չեղավ: Մատիլդան ամոթխած ասաց.

— Ես բարձրացա տեղեկանալու Արմենիերի մասին և հանկարծ...
աստված իմ:

Այդ ժամանակ դարբասով ներս մտավ մահուդավաճառի կինը, նրա
հետևից վարսավորի կինը, ապա մի կին, որի ամուսինը ոչ մահուդա-
վաճառ էր և ոչ վարսավոր, այլ վաղուց խեղդվել էր ջրում, նաև շորորո-
ղը, որ կին չէր, այլ ձկնորս էր և ապա հինգերորդը՝ ընկնավոր վասիլի-
սան և երբ վեցերորդը երևաց, որը հայտնի չէ, թե ինչու ներս մտավ ճի-
լոպը գլխին գցած,— կողովագործի կինը իսկույն նկատեց բացակայումը
իր երկրորդ տղայի և հասկացավ, որ նա էր փողոցում հրդեհ գցել: Կինը
դուրս գնաց, գնաց և Մատիլդան, պատշգամբի վրա թողնելով տիկին
Աշինգերին, որը հետզհետե բորբոքվելով հանկարծ ծայթեց:

Օտտոկարը մի պահ նայեց բազմության, ապա վեր բարձրացավ և
թիչ հետո վերևից կախվեց կմախքը, զանգի վրա կանաչ բերետը, ծնոտ-
ների մեջ՝ ծխամորճը և ձեռքին՝ պիստուկն: Կանայք վախից ճչացին և
զարձրին երեսները, իսկ որոնք երիտասարդ էին, զոգնոցները քաշեցին
գեմքներին և այդպես փախան: Միայն ձկնորսը, որ կին չէր, այլ պա-
ռավ տղամարդ, ծխամորճը բերանից հանեց և թռեց:

Ցրառու Ցոգելզանգի պանդոկում այդ ձկնորսը հետո պատմում էր,
որ իբր թե կմախքից կախված է եղել նաև հողանդական երշիկ և այնպես
է կախված եղել, որ ձկնորսը ամաչել է պատմել:

րի: Բայց և այնպես այս եռանկյունին մի քիչ ծուռ է, այնպես չէ՞, իսկ այս գծեր ավելորդ է, հավատացնում եմ, որ առանց այս գծի էլ կարելի է ապացուցել, որ ճշմարիտ էր ծերունի Պյութագորասը...»: Սակայն պրոֆեսորն ուշանում էր և Մատիլդան չկար: «Լա՛վ է ինձ հետ», և տիկին էլոիզը այնպես էր նայում, Արմենիերը պատասխանում էր այնպիսի հայացքով, որ երկուսն էլ հասկանում էին, թե այդպես շատ լավ է և այդպես կարելի է ապրել նույնիսկ եղեգնյա վրանի տակ, մի հեռավոր լճակի ափին, որտեղ ուրիշ ոչ ոք չկա և աշխարհում ոչ ոք չկա, այլ միայն ծառեր կան, որ աղմկում են, որպեսզի քաղցր լինի շնչալը և քամին շաշում է, որ ցուրտ լինի, և ջերմությունը մնա միայն նրանց գրկի մեջ և իրար գրկած լսեն, թե ինչպես ջրհորդանի մեջ երգում է անձրևը:

Պատուհանը ծեծեցին: Տիկին էլոիզը վեր թռավ: Արմենիերը դուռը բացեց: Նախասենյակի կիսամութի մեջ նա նշմարեց Մատիլդային, որ հեծն է ներս մտավ:

— Ինչ անձրև է, աստված իմ, — Մատիլդան սենյակի շնմբան կանգնեց:

Նրա դեմքը կարմրել էր: Անձրևը քրքրել էր աղչկա մազերը և զգեստըն այնպես էր փակցրել մարմնին, որ գծագրվում էին մարմնի բոլոր մասերը: Կարծես մարմարե արձան էր, որին հագցրել էին մարմարե զգեստ և անձրևն ավելի էր գեղեցկացրել աղչկա մարմինը: Տիկին էլոիզը նախանձով նայեց այդ պարզ և երիտասարդ գեղեցկություն:

Արմենիերին նկատելով Մատիլդան շփոթվեց.

— Իսկ ես կարծեցի, թե դուք պարոն պրոֆեսորը բաց աբեց... Բարի երեկո: Ինչպիսի՞ անձրև է...

— Մատիլդա, գնա և շորերդ փոխի...

Աղչկա մուտքի հետ կարծես ընկավ մի ինչ-որ շղարշ և ամեն ինչ մերկացավ: Արմենիերը նայեց տիկին էլոիզին: Նրա աչքին նեհար և գունատ երևաց տիկին էլոիզը: Առաջին անգամ նա նկատեց նրա երկար մատները: Նրանք չոր էին և ոսկրոտ: Ինչո՞ւ է նա այդպես գլուխը թեթել և ձեռները հուսահատ դրել է ծնկներին վրա:

— Իսկ ինչպե՞ս պիտի գա պարոն պրոֆեսորը, — խոհանոցից ամաց Մատիլդան և երևաց քաթանե զգեստով, որի մեջ նա նման էր գյուղական աղչկա:

Արմենիերն ամոթ զգաց: Նրա արևելյու գիտակցության մեջ պատահածը հանկարծ թվաց նամարդ գործ: Դիմացը կանգնեց բարի պրոֆեսորը, որ ահա ով գիտե ինչ դժվարություններ խավար փողոցներով տան է գալիս և թրջվում է շտապելով, որ հարցնի նրա դասը: Իսկ ինքը...

Արմենիերը նայեց Մատիլդային և կարծես աղչիկը ևս հանդիմանում էր նրան.

— Լավ չէ, պարոն Արմենիեր... Ձեզ այնքան է սիրում պարոն պրոֆեսորը, նաև իմ տիրուհին է սիրում, բայց դուք... Ահա վշտացրել եք իմ տիրուհուն և նա լուռ է. կգա պարոն պրոֆեսորը և նա էլ շատ կվշտանա, որովհետև նա շատ է սիրում տիկին էլոիզին, շատ է սիրում, բայց դուք...

Հետզհետե այդ գիտակցությունը սաստկացավ: Նա նույնիսկ վախ զգաց, ինչպես միամիտ տղան, որ խաղ է արել և խաղի ժամանակ փշթել է մի թանկագին սկիհ և խաղով տարված դեռևս չի զգում, թե ինչ է փշթել և թե որքան նվիրական էր այդ անտթը մոր համար: Բայց ահա զգաց, նկատելով բեկորները... Ձգաց և խաղը վերջացնելով՝ ուզում է իրար միացնել բեկորները, բայց մատները դողդողում են և շեն միանում բեկորները...

— Մատիլդա, կրակ աղա... Ցուրտ է, — տիկին էլոիզը շալը փաթաթեց ուսերին: Շալը ծածկեց ժապավենի կարմիր փնջերը և ուլունքի շաբլ:

Արմենիերը հավաքեց տետրերը և քարետախտակը:

— Դուք արգեն գնո՞ւմ եք, — և տիկինը նրան նայեց համր աղերսանքով:

— Ուշ է:

— Սպասեիք մինչև անձրևը դադարեր:

— Տաք անձրև է, — և նա տրորեց գլխարկի եզրը, — կարո՞ղ եմ

ինդրել այս գիրքը...

Երբ Մատիլդան մոմը բռնած բաց արեց դուռը, քամու ալիքը ներս խուժեց և անձրևի կաթիլները թրջեցին տիկին էլոիզի դեմքը: Մոմի լույսով նա խավարի մեջ միայն մի ակնթարթ տեսավ Արմենիերի սիլուետը և այլևս ոչինչ չերևաց:

...Գիշերը չէր քնել և ընթերցել էր «Վերթերը»... Նրա գրգռված երեկակալության մեջ իրականը և այդ գիրքը, և հիշողությունները խառնվել էին: Երբեմն աչքին երևում էր տիկին էլոիզը, երբեմն այդ գրքի կինը՝ Շարլոտան նրան պատկերանում էր տեսիլքի նման, ինչպես այն կինը, որ ձյունափոշու մեջ ձեռքով արեց և սահնակով սլացավ:

Երբ ծառերն աղմկում էին, նրանց կատարներն իբրևից հեռանալով բաց էին անում երկնքի կապույտ շերտը: Արտևանունքների միջից նա վեր էր նայում և թվում էր, թե ծառերի բարձր ճյուղերը ճոճվում են շինչ կապույտի մեջ: Խոտերը սվավում էին: Խշխշան շորերով մի կին ման էր գալիս ծառերի արանքում և երբ հանդարտվում էր քամին, այդ կինը

Թաքնվում էր մթին ավերակում: Երբեմն պատահածը նրան երազ էր թվում, մեկը այն շողշողուն երազներից, որոնցով նա զարդարել էր իր աղքատ պատանեկությունը: Եվ միտն էր գալիս Հաղպատի վանքը, ժամերգությունն ուխտի օրերին...

Նիհար, դեղնած երեսով մի պատանի դպիր, որի ուղարը փաթաթվում էր ոտքերին, նիհար դպիրը խնկարկում էր ուխտավորներին: Բուրվառից թռնում են ածուխի կայծեր և խունկի ծուխի հետ բարձրանում է բորբոսնահոտ, որից գլուխը պտտվում է: Մոմ է և ոտքերը քաղցից դողում են... Արդեն երեք անգամ խնկարկել է սրբոց պատկերներին և խորանին, և քարե ավազանին, խոնարհելով խնկարկել է նաև եկեղեցական դասում՝ Անտոն եպիսկոպոսին, որ փափուկ բարձերի վրա շոքած ննջում էր, խուլ Հովհաննես վարդապետին, որ խոժոռ է նայում երիտասարդ դպիրին և փնթփնթում է, որ դպիրը չի թեժացրել կրակը և կայծերը ճայթում են, գրավելով ուխտավորների և ժամասացների ուշադրությունը, — ահա արդեն խնկարկել է նաև աշխարհական դասում կոռվա մելիք Փարսադանյանին, որ շուխաչի թևերը վեր քշած ձեռքերը կոխել է արծաթակուռ գոտու մեջ, գոտի, որ ահագին ծանրություն ունի և, որի մեջտեղից բարակ շղթաներով կախված են ոսկեզօծ գնդեր: Նա արդեն խնկարկել է մյուս տղամարդկանց, որոնց բրդոտ փափախները և բոփ արտաքինը կիսախավարի մեջ հիշեցնում են քարափի ցից քարերը, նաև ինչ-որ կոճղեր և ցցաշորի, երբ անտառում աղչամուղչ է: Նա քաղց է զգում գլուխը պտտվում է: Վերջին բուրվառն է բարձրացնում դեպի վերնատան տախտակամածը, որտեղ շար են ընկել կանաչք: Վանքի նեղ լուսամուտից հանկարծ ներս է ընկնում արևի շողը: Խունկի ծուխը ոլորվում է շողի վրայով: Արևի շողով ցուլանում է այն լոռեցի աղջիկ երեսը: Նա գլուխը փաթաթել է ծաղկավոր աղլուխով և վերնատան մահաջառի մոտ կանգնած նայում է երիտասարդ դպիրին: Բուրվառի ծուխը շղարշում է նրա դալար մարմինը. աղջիկը կարմրում և ցած է խոնարհում աչքերը, զգալով, որ իրեն երկար է նայում դպիրը:

Այդ աղջիկը երկու անգամ էլ ուխտ եկավ Հաղպատ և այլևս չերևաց: Հետո, Համբարձման տոնին, երբ ուխտավորներն աղբյուրի մոտ քեֆ էին անում, իսկ հարս ու աղջիկ ընկուզենու ճյուղից կախել էին ճոճք և զվարթ կանչերով ճոճվում էին անդունդի վրա, նա տեսավ մի նորահարսի, որի լաջվարդ զգեստը փոփոկում էր քամուց, ընկուզենու ճյուղը ճոռում էր, երբ հարսը թափով բարձրանում էր ընկուզենուց էլ վեր և բարձրերում կանչում էր արտույտի նման: Երիտասարդ դպիրը ճանաչեց այն աչքերը, որ մի անգամ ամոթխած խոնարհվել էին:

Երբեմն միտն էր գալիս այդ լոռեցի աղջիկը, ինչպես մանկության ցնորք: Նրա հետ զարթնում էին կոռվա սարերը՝ գազաթելերն ամպերի մեջ, լանջերին մթին ծամակներ... Ապա ծառերը խշշում էին և գալիս էր այն կինը, որի մարմինը թպտաց նրա գրկի մեջ, գալարվեց ինչպես կրակը, որ վաղուց է բռնկվել տան նեղուր, հետզհետե լափել է մերձակա իրերը, պապ շարագուշակ բոցերով լուսավառել է խավար պատուհանները, մուկզնած խփել է առաստաղին և ինչպես հրեղեն սյուն ահա այրվում է խավարի մեջ...

Գարնան արևը բորբոքել էր նրա արյունը և արյունն անզուսպ եռում էր, ինչպես կյանքը տաքացած հողի մեջ: Փրաջան մրջյունները դեսուդեն վազվզելով կրում էին ծղոտներ և սերմեր, որ մնացել էին հողի երեսին: Կարմիր դատիկները շղթայվել էին ձու դնելու մուլուցքով: Ոսկեփորիկ իշամեղուն երբեմն կնճիթը թաթախում էր քաղցր խեժի մեջ և խեժի բույրով արբած թռչում էր՝ լողանալու արևի շողերով: Մառերի մթին խորքում սուր ձայնով կտկտացնում էր կոցարը:

Այնտեղ հիմա վար են անում. հարաքաշ են իրենք, Միրզամը, Ղլիճ Ղազարի խալխը: Ամբոլին լծել են իրենց Ջեյրան եզը և Ղլիճ Ղազարենց Միրանը: Մալաղոնդի Ղևոնդը շուխան մեջքին քլավանդ արած բռնվել է վեսկու պողբից, իսկ հայրը հորովել է ասում և նրա ձայնից թնդում են Քանաքեռի քարափները: Ազուսները ծանր-ծանր գնում են ակոսների հետ և կոցում են արևերես ընկնող ճիճուների: Նոր ակոսներից տաք գուրջի է բարձրանում: Նանին աղլուխի մեջ հաց է կապել և ասում է. «Ետաչեր, սիրտս հանդի հաց ուզեց... Ղաղեղ առնի նանին, մի էս հացը տար հանդին նշանց սուր, բեր: Հրեն զագարակի արտերը վարում են... Տար, բալա ջան»: Հացն առնում էր և չէր գնում զագարակի արտերը, այլ գնում էր Ապրանքափոսի բաղը, պարսատիկով քար գցելու կաշաղակի բներին կամ քեջան առվի վրա ջաղաց շինելու...

Իսկ ինչ կասեն վանքում, եթե իմանան այդ պատմությունը, եթե խաչատուր դպիրին տեսնեն տիկին էլիզի հետ... Նա հեզնոտ ժպտաց: Եվ աչքին պատկերացան խցերը, վանքի գավիթը, ձիթհանքի քարերը, որտեղ հիմա արևկող են արել վանականները... Ահա կարծես գետնի տակից դաշտամուկի նման դուրս եկավ կուզ Բաղդասար վարդապետ եղբոր օղլին: Նա հոտոտեց մուկի նման և մանր քայլերով արագ-արագ գնաց և իսկույն մտավ Շիրաճի Բարսեղ սարկավազի խուցը. «Խաբա՞ր ես, խաբա՞ր ես, քանաքեռցի խաչատուր չիք-դպիր լյուտերականաց հետ... միանգամայն է...»: Իսկ Շիրաճին դեռ նոր էր զարթնել քնից և կեղտոտ եղունգներով քաղցր քորում է մարմինը և միայն մնչում է... Մուկը դուրս է վա-

զում մի ուրիշ խոսք, որտեղ ամբարապետ Կյուրեղ հայր-սուրբը վիթխարի քրեղանի մեջ մածնաբրդոշ է արել և թոնրի կրակով խորոված ուլի մսերը բրդոշից հետո մատնեհով մղանում է բերանի քարանձավը: «Ինչպար օլանըն իմանը...» և ամբարապետն ավելացնում է այնպիսի բառ, որ խցի մոնթը, որը ջրամանը ձեռքին կանգնել է,— ամոթից շրջում է երեսուր: Եվ ի վերջո երգը օղլին լուրը տանում է ձիթհանքի քարերի վրա արեկող արած վանականներին՝ Ջրպուն Բարսեղ եպիսկոպոսին, Մարտիրոս վարդապետին, որ կոչվում է «կենդանի նահատակ», տիրացու Իգնատիոսին, որ ճան է խաղում դուքանչի Դանել վարդապետի հետ, ապա գալիս են Շիրաճի Բարսեղը, ամբարապետ Կյուրեղ հայր-սուրբը և բճապիկն աղմուկով բոլորը դողում են, բամբասում, քրքրում են նրա անունը, ինչպես ազուպները լեշի միսը...

Հետզհետե մտքի թելը բարակեց: Քնի և երազի սահմանում նորից երևաց տիկին էլոիզը... Ինչքան շքնաղ էր նրա դեմքը կիսաստվերում... Աչքերի մեջ պղտոր փայլ կար, շրթունքները լցվել էին մուգ-կարմիր արյունով: Երբեմն նա աչքերը փակում էր և կուրթի նման շոշափում նրա գլուխը, դեմքը, կարծես ուզում էր հոգու մեջ հավիտյան դրոշմել նրա պատկերը: Երբեմն մոտ էր պահում նրա գլուխը և նայում էր առանց աչքերը թարթելու, կարծես ասում էր. «Ի՞նչ կա քո աչքերի մեջ, սիրելի երեխա, որ գրավել է ինձ... Առա, ի՞նչ կա...»: Բայց նա բառ չէր արտասանում, այլ երբ այդպես մոտ նայում էր նրան, ամուր գրկում էր և երկար երկար համբուրում...

Շոգ էր... Վանքի հարավային դարբասը փակ էր: Ինքն իջնում էր դիվանատան նարգիվաններով: Ատենադպիր Թադե վարդապետը նրան ուղարկել էր ձեթի: Վանքի գավիթով արագ անցավ թվանքչի Քումասը... Նրա հետևից հազիվ էր հասնում կոնդեցի Սահակ եպիսկոպոսը: Նա գնում էր և վեղարը փոփոխում էր: Նրանք մոտեցան դարբասին: Թվանքչի Քոսմասը դարբասի փոքր դուռը բաց արեց, իսկ կոնդեցին ամբողջ մարմնով դուռը կաշնեց: Կարծես ուզում էր դուրս գալ և դուռը նեղ էր: Նա ետ քաշվեց... Իրար հետևից ներս մտան վեց-յոթ օտարականներ, օտարօրինակ զգեստներով: Ապա թվանքչին բացեց մեծ դարբասը և ձիերը քաշելով ներս մտան հրացանավոր մարդիկ: Նրանք ձիերը տարան ախոսատան կողմը, իսկ օտարականները՝ կոնդեցուն շոշապատած եկան դեպի վանք... Ինքը ձեթի ամանը ձեռքին կանգնել էր: «Է՛յ, տանձի գող բանաբեցի,— բզավեց կոնդեցին,— ի՞նչ նս ճանառի նման ուխտը բաց արել... Մեռա նիզնայք ասելով: Արի ջուղաբը տուր է, ուսյալ անգրամ»

* Ուրացողի հավասար...

Մոտեցավ նրանց: Այդպիսի դիմագծեր նա իր կյանքում չէր տեսել: Ռուսներ չէին... Մի նիհար մարդ խմբից անջատվեց և նրան ուսերեն հարցրեց. «Դու՞ք եք հերը դիակոնուս Աբովյանը...»: «Այո, ես Խաչատուր քարին եմ, գրագիր դիվանատան և թարգման»: «Ձեր ուսուցիչը՝ հայր Ալեմդարը, Թիֆլիսում մեզ ասաց, որ վանքում միայն դուք կարող եք թարգման և ուղեկից լինել մեզ: Ես պրոֆեսոր Պարրոտն եմ...»: «Էս դարիբականներին տար աթոռակալ սրբազանի կուշտը, տես ինչ կասի... կարող են զիանլու մարդիկ լինեն, մղայիթ կաց»: Պարրոտը նայում էր մեկ դպիրին, մեկ եպիսկոպոսին և ոչինչ չէր հասկանում: Ձեթի ամանը դրեց նարդիվանի վրա և նրանց առաջնորդեց Մաղկավոր էյվանի հայաթը:

Շոգ էր: Արևը այրում էր: Նա գրասը քաշեց քարի ստվերը և կողքի վրա դարձավ: Շորի մեջ փաթաթած գիրքը դրեց գլխատակին... Քունը հաղթում էր: Մտքի մեջ հարավային դարբասն էր: Ամառվա շոգ ցերեկը, երբ վանքի բակում օքմին չէր երևում, թվանքչի Քումասը մեկնվում էր դարբասի ստվերում: Նա ասում էր, թե դարբասի տակով զլզլան հով էր փչում... էլոիզը երեկոյան ինչքան նման էր իր պատկերին: Երիտասարդ, բոլորովին երիտասարդ աղջիկ էր, երբ պոռչները կարմրել էին. ուր շափազ էր տալիս, սպիտակ ուտը... Գնում են՝ ինքը և աղջիկը... Թվանքչի Քումասը դուռը բաց կանի, թե՛ ոչ: Գուռն ինքն իրեն բացվում է և փակվում: Բոլորովին մեռակ կանգնել է վանքի բակում: Աղջիկը չկա... Բայց ո՛չ վանքն է երևում, ո՛չ խցերը, ո՛չ Ղազարապետը: Մացառներ են, վայրի խոտ և ուղտափուշ... Այնպես են խճճվել, կարծես երբեք արոտի խոփը չի առել այդ հողը: Մի բարակ ճանապարհ է նշմարում խոտերի մեջ... Գնում է ճանապարհով, օձ է երևում՝ կանգնում է: Մի ձայն տառն է. «Խաչատուր, վանքի քանքանի օձեքն են, մի վախի...»: Գնում է նեղ արահետով, լափոթի փշեր են՝ վրան սև թրթուրներ... Քրթուրի բարակ ուսայնի թելով կախվում է մի կարմիր կարիճ: Վախեցած առաջ է վազում, ինքն իրեն հարցնում. «Կարիճը մի՞թե կբարձրանա ծառը...»: Ետ է նայում՝ կարիճը գալիս է, ոնց է գալիս, պոչը մեջքի վրա պահած վազում է, ինչպես բրդոտ շունը... Բողաքն է... Բողաք, անխրավ, էս որտեղից... Այլևս արահետը չկա, այլ կանաչ բլուր է, դագաթին մի քար: Բարձրանում է քարի վրա, ուզում է տեսնել, թե ո՞ր է վերջը մացառուտի, շորս կողմը մարդու հետք չկա, ո՞ր է ընկել ինքը... Կանգնել է ոչ թե քարի վրա, այլ մի ավերակ եկեղեցու բեմի վրա: Ո՛չ զարկ կա, ո՛չ շահ, ո՛չ վարազույր... Եկեղեցին սյուներ չունի և գմբեթ չունի: Բաց դռնից նայում է դուռ: Հանկարծ թփերը շարժվում են, խոտերն օրորվում են: Եվ մեկ-մեկ թփերի արանքից, խոտերի միջից դուրս են գալիս երեսուներ

և մտնում են դռնով: Նրանք երկար ճանապարհ են անցել և շարշարվել են: Ահա մեկի ճակատը փուշն արյունոտել է, այն մյուսի թշերն է շանդրոն, երրորդը քրտնած հետև է... Բոլորը նայում են խելոք աչքերով: Նրանք դեռ գալիս են, գալիս են և վերջը չի երևում... Ինչքան գալիս են, այնքան եկեղեցու պատերը հեռանում են: Ներս մտնողները նստում են քարերի վրա և լուռ նայում են իրեն: Ինքը թևի տակ ունի մի գիրք... Բաց է անում այդ գիրքը: Բոլոր բառերը կարմիր են, միայն իր անունն է սև թանաքով: Կարդում է և կարդացած բառերն իսկույն շքանում են, կարծես իր շնչով այրվում են կարմիր բառերը և կայծերի նման թռնում են... Հանկարծ երեխաների միջից ոտքի է կանգնում պրոֆեսոր Պարրոտը և ձայն է տալիս. «Բարձր կարդա...»: Եվ նա ձայնը բարձրացնում է... Բայց ինչու՞ թևը ծանրացավ և այլևս չի կարողանում շրջել էջը: Գիրքն էլ ծանրացավ: Մատներն այրվում են, գիրքը կարծես պղնձից է ձուլած և տաքացել է... Նա ուզում է գիրքը վայր դնել, բայց մատները ձուլվել են գրքին: Ու մեկ էլ բռնկվեց գիրքը: Շորերի վրա կաթկթում է կարմիր պղինձը... Կաթում է և այրում... Մուխ է... էլ ոչ ոք չի երևում: Ուզում է կանչել, բայց ձայնը կոկորդից չի ելնում... Նա բարձր է պահում վառվող գիրքը, որ կրակը հեռվից տեսնեն... Կապույտ ծուխի մեջ երևում է նանին... Գալիս է դանդաղ, պառավ կնոջ քայլերով: Գալիս է և հաճախ կռանում. կարծես «ծոխ պաշար» է քաղում: Նրա հետ գալիս է մի աղջիկ, զառ մանդիլը զլխին... Ինչու՞ է այդպես հագել էլոիզը: Եվ ո՞րտեղ է հանգիպել մորը: Կանչում է, բայց ձայնը նրանց չի հասնում, կանչում է ոչ յուր ձայնով, այլ բարակ ու քաղցր ձայնով: էլ չի կանչում, բայց այդ ձայները գալիս են, այդ ձայները դեռ հնչում են:

Նա աչքերը բաց արեց: Ի՞նչ ձայներ են... Երազի մե՞ջ է, թե արթուն է... Աչքերը տրորեց և նստեց: Իսկ այն ձայներն ահա պարզ լսվում են և հնչում են ինչպես երազի մեջ: Նա շուրջը աչք ածեց, ապա նայեց վերև:

— Կոռնկները, կոռնկները...

Եվ ձեռքերը վերև պարզեց:

Կոռնկների երամը գնում էր բարձրերով: Նրանց կանչերը զրնգում էին շինչ օդի մեջ և երկնքի յոթ կամարն արձագանքում էր այդ ձայներին:

16.

էմբախի վրա լողում էր մի նավակ:

Արմենիերը վերևից ձայն տվեց և նավավարը, որ կարծես նիրհել էր, գլուխը բարձրացրեց վեր: Այդ ամառի ափերին նրա համար անակրեկալ էր որևէ մեկին հանդիպել: Նավակը նա մոտեցրեց ափին:

— 640 —

Արմենիերն արագ իջավ, ցատկեց նավակը և միայն այդ ժամանակ նկատեց մի փոքրիկ աղջկա, որ անշարժ նստել էր նավավարի դիմաց: Արևը ողողել էր նրան՝ մուգ-դեղին մազերից մինչև բոբիկ ոտքերը: Առաջին հայացքից փոքրիկ աղջիկը թվաց դեղնամոմից սաքթած տիկնիկ, որ չի թարթում աչքերը, չի խոսում, այլ միայն նստում է՝ ձեռքերն անշարժ: Սակայն աղջիկն աչքերը թարթեց և միամիտ անմեղությամբ նայեց պղտոր ջրին, որի երեսին լողում էին տերևներ և չոր ճյուղեր, որ ո՞վ գիտե ինչ դաշտերից հավաքել էր գիշերվա հեղեղը:

— Աղջիկս է,— ասաց նավավարը, որսալով նրա ուշադիր հայացքը.— հիվանդ է, պարոն... Ասում են արևը և գետի զովը նրան օգտակար է:

— Իսկ ինչու՞ է հիվանդ:

— Չգիտեմ... Այսպես մոմի նման հալվում է, հալվում է և մի օր էլ... Ի՞նչ ասեմ: Չորրորդ երեխաս է, պարոն...

— Եվ շորսն էլ այսպե՞ս են:

— Չորսից երեքն այսպես էին և հիմա չկան: Սա շորրորդն է:— Հայրական այնպիսի քնքշանք կար նրա դեմքին,— ասում են, որ պետք է լավ սնել, կաթ և յուղ և ձու տալ: Իսկ ո՞վ է մեզ տվել կաթ և յուղ և ձու... Ահա իմ ամբողջ օրվա աշխատանքը,— և նա ոտքով հրեց ուռկանի կույտը, որի տակ, նավակի հատակին, թարմ ձկներ էին,— այս էլ դժվար է... Հիմա ձուկը սիրում է ծանծաղ ափ, որտեղ և արև կա, և խոտ: Իսկ ծանծաղ ափերը մերը չեն...

— Հապա ու՞մն են:

— Պարոններին են... Այ տեսնո՞ւմ ես այն կաղնին: Նրանից այն կողմ բարոն Կելեմբախի հողերն են: Ե՛վ գետն է նրանը, և՛ ձուկը, և՛ հողը, և՛ անտառը, և մարդիկ էլ նրանն են... Իսկ ի՞նչ ձուկ կա, ի՞նչ ձուկ կա,— նա լռեց, հասկացնելով, որ այնտեղ շատ լավ ձուկ կա,— ձուկն էլ գետի, թե որտեղ է ապահով: Այս կողմերում այնքան սոված մարդիկ են շրջում... Եվ ձուկը մեր կողմերով խորքով է գնում և այնպես զգույշ է, որ չես բռնի: Իսկ այնտեղ՝ այնտեղ ուրիշ բան է: Կարող ես ձեռքով էլ հանել, ինչպես թե տակաոփց հանես: Այդպես է: Աստված այդպես է բաժանել, ինչպես թե տակաոփց հանես: Այդպես է: Աստված այդպես է բաժանել. լավ հողերը և դաշտերը տվել է պարոններին, անտառներն արժանել. լավ հողերը և դաշտերը տվել է պարոններին, անտառներն արժանել է տվել, իսկ մեզ... Այ թե ինչ է տվել,— և նա թիակը թողնելով օդի մեջ, ձեռքով կիսաշրջան գծեց: Նա պղտոր գե՞տն էր ցույց տալիս, գետի աղբատ ափե՞րը, դիմացը նստած հիվանդ աղջկա՞ն, թե՞ այդ ամենի հետ միասին նաև իր ցնցոտիները:

— Իսկ մեզ մոտ այդպես չէ... Այնտեղ ամեն մարդ կարող է ուզած ջրում ձուկ բռնել:

— 641 —

— Ո՞րտեղ ձեզ մտո՞ւք:

— Հայերի երկրում:

Նավավարն այդպիս երկրի անուն չէր լսել: Եվ այդ նրան ճնշեց այնպես, ինչպես հասարակ մարդկանց ճնշում է խրթին բառը:

— Չեմ լսել և չեմ կարող ասել,— մոռաց մարդը,— բայց կարող եմ ասել, որ ես էլ օտարական եմ և այս կողմերի մասին էլ ասում էին, թե ազատ երկիր է և պարելը հեշտ է... Բայց այդպես չէ: Աշխարհում որտեղ մի կուշտ կա, այնտեղ հարյուր քաղցած կա: Ահա ես հիսուն տարեկան եմ և շատ աշխարհներ եմ տեսել, Մոսկվայի հրդեհն եմ տեսել, եղիլ եմ Բերեզինայի կովում և նույնիսկ մինչև Պրուսիա քշել եմ ֆրանսիացիներին և երկու ձմեռ ձմեռել եմ Ստոնկեկում... Կա այդպիսի տեղ լեհաստանում: Այնտեղ է, որտեղ ասում են պան Տվերնիցկին մերոնց լավ շարժել է... Տոնավաճառի մի գինվոր պատմեց ինձ: Նա էլ մեր կողմերից է և վիրավորվել է, բայց ոչ Ստոնկեկում, այլ Կավրենիշկի մոտ... Եվ ահա,— բայց այդ խոսքին մի ուժեղ ալիք խփեց նավակին, ջուր ցայտեց և փոքրիկ աղջիկը վախից աչքերն արագ թարթեց,— վախեցա՞ր, Մարֆուշա,— աղջիկը թույլ ժպտաց:

Նավավարը լռեց, մոռանալով ասելիքը: Նրա հայացքը պղտոր և մութ էր, ինչպես էմբախը, որ անաղմուկ հոսում էր, լուսթյան մեջ թաքցրնելով մի ահավոր ուժ: Նավակն էլ հնադարյան էր և նավավարն էլ քրքրված և թրջված զգեստով, նույնիսկ ուռկանի շատ հանգույցներ կապկրված էին զանազան թելերով,— բայց և այնպես թե՛ նավակը և թե՛ նավավարը դեռևս այնքան դիմացկուն էին, որ այդպես կարող էին լողալ թեկուզ մի դար:

Արմենիերը նայում էր աղջկան. «...Մոմի նման հալվում է, հալվում է և մեկ օր էլ...»: Նրա մանկական ուսերն այնքան նիհար էին: Աղջիկը բորիկ ոտքերը մեկնել էր արևի տակ և չէր հագնում ջրին նայելուց: Երբ երկու ալիք իրար էին զարնվում, նա ժպտում էր, ինչպես հիվանդ երեխան, որին մայրը մոտեցրել է պատուհանին և պատուհանից նա նայում է իր ընկերներին, որոնք բակի մեջ խաղում են շան լակոտի հետ: «...Ճշմարիտ որ հալվում է... Եվ շուտով կհանգչի նրա ճրագը...»:

Նա մի ինչ-որ նմանություն տեսավ այդ աղջկա և Եղսան հոգիի Մայրանի միջև. երկուսն էլ վտիտ էին, համարյա հասակակից, երկուսն էլ պատահողոված շորերով և ոտաբոբիկ: Մայրանի հյուսերը սև էին, իսկ Մարֆուշան ուներ մուգ-դեղին մազեր: Բայց երկուսի աչքերը նույնն էին արտահայտում: Կարծես այդ մանուկներն իրենց կյանքում տեսել էին մի ահավոր սարսափ, որ նրանց մինչև մահ պիտի հալածեր:

Արմենիերը երեսը շրջեց: Գետը հետզհետե հանգստացրեց նրան... Այլևս չէին լսվում կունկների կանչերը: Միայն երբեմն մանր կոհակները գետի միջից երամ-երամ վազում էին դեպի ափերը և երբ ընկնում էին ավազի վրա, ավազը խուլ զնգում էր:

— Իսկ նա ուզում էր մեզ ազատություն տալ,— ինքն իրեն խոսելով մտածում էր նավավարը,— և կտար, բայց մեր թագավորը չթողեց և պրուսացին չթողեց, և անգլիացին չթողեց... Այսպես էլ մնացինք, պարոն... — Ինձ ինչու՞ պարոն ես ասում,— սրտնեղեց Արմենիերը:

— Ինչու՞,— նավավարը դառն ժպտաց,— որովհետև այդպես է... Ամեն բանից երևում է, որ պարոնը ես չեմ:

— Ես գյուղացու որդի եմ:

— Կարող է... Այժմ ասում են այնպիսի պարոններ են դուրս եկել, որոնք ժողովրդի հետ են: Այ հենց նրանք, որոնք Պետերբուրգում կրակեցին թագավորի վրա: Իսկ վարչավայում նույնը չի... Դպրոցի աշակերտները և պարոն ուսանողներն առաջինն են հարձակվել բերդի վրա: Իսկ վարչավայի բերդը, կարող եմ ասել, որ բերդ է և ոչ թե հողե ֆորտեցիա... Իսկ ժողովուրդը տեսել է, որ պարոններն իրենց հետ են, ուրեմն՝ սով՞ք գեներալներին... Դեռ երկար կքաշի այս պատերազմը... Եվ ո՞վ է իմանում, զուցե մի բան լինի:

— Ի՞նչ ես սպասում, որ լինի:

Նավավարը շեշտակի նայեց Արմենիերին:

— Պարոն... Եվ կամ եթե այդ ձեզ հաճելի չէ՞ եղբայր, սիրելի եղբայր, այստեղ ես եմ և դու ես, վերև աստված է լսում, ներքև միայն այս խեղճ երեխան: Եվ ուրիշ ոչ ոք չի լսում մեզ,— նա կոացավ դեպի Արմենիերը,— ինչի՞ է սպասում աղքատ գյուղացին: Աղքատ գյուղացին սպասում է մի կտոր հողի և ազատություն: Եվ ուրիշ ոչինչ չի սպասում: Եթե նա հաղթեր, մեզ կտար և՛ հող, և՛ ազատություն:

— Ո՞վ կտար:

— Կատակ եք անում, պարոն եղբայր... Դուք ինձնից լավ գիտեք, թե ով կտար:

— Պատվովս եմ երդվում, որ չգիտեմ: Եվ որտեղի՞ց պետք է իմանայի: Ութերորդ ամիսն է այս երկրում եմ և ուսանում եմ միայն գիտություններ: Իսկ այդպիսի բանի տեղյակ չեմ...

— Եվ տեղյակ չեք լինի, ձեր գրքերում չեք գտնի իմ ասածը: Իսկ ով գիրք չի կարդում, այլ ժողովրդի մեջ է, նա գիտի, թե ով կտար հող և ազատություն,— և կարճատև լուսթյունից հետո շարունակեց,— ֆրանսիացին կտար, ինքը՝ նապոլեոնը կտար... Ստոնկեկում, որտեղ մեր գուն-

զը ձմեռել էր, կար մի գերի ֆրանսիացի: Նրա մի ոտքը ցուրտը տարել էր և նա մեր գնդի խոհանոցում սպասավոր էր: Իսկ անունը Միշել էր, Միշկա, եթե մեր լեզվով ասենք... Մի գիշեր ես պահակատեղից վերադարձա խոհանոց, որ տաքանամ: Տեսնեմ Միշկան կրակի առաջ նստել ծխում է: Մխում է և միտք է անում: Իսկ թե ի՞նչ է միտք անում, հայտնի բան է, թե ինչ միտք կանի գերի զինվորը, որը չգիտե, թե ինչպես են տունը, երեխաները: արդյոք մեռե՞լ են, թե՞ դեռ հիշում են... Վերջապես, Իրար ողջունեցինք և ես էլ սկսեցի ծխել: Խոհանոցում մեզնից բացի ոչ ոք չկար, այ ինչպես հիմա... Եվ այսպես էլ դիմաց-դիմաց նստած էինք: Ի՞նչ ասաց Միշկան: Նա հառաչեց և ասաց. «է, Վասիլի (այդպես են կոչում ինձ), հիմարացաք, դուք շատ հիմարացաք: Ախր արդեն գրված պատրաստ էր մանիֆեստը: Եվ նա պետք է ինքը կարդար Կրեմլի հրուպարակում: Իսկ դուք լսեցիք Կուտուզովին և թագավորին լսեցիք: Գոնե սպասեիք մի տարի, ազատութուն ստանայիք և հող ստանայիք և ապա մեզ խոկեիք»... Միշելն էլ այսպես ասաց և այս իսկական ճշմարտութուն է, որ ոչ մի գրքում չի գրված:

Նա պատմում էր հմայիչ ձայնով: Նրա խոսքերից ճառագում էր մի ջերմութուն, որ հետզհետե գրավել էր Արմենիերին: Նրա պարզ բառերի մեջ ինքը՝ իմաստուն ճշմարտութունն էր՝ արևի նման հստակ... Նա քաղցր էր պատմում, ինչպես Միրզամը ձմռան գիշերին պատմում էր Շարմաղ աղջկա և յոթ եղբոր հեքիաթը:

— Ծշմարիտ է և այն, որ հասել է ահեղ դատաստանի՝ օրը: Ամեն տեղ կռիվ է, պատերազմ: Ժանտախտը, որ ուղղակի հնձում է... Ասում են, Տուլայի նահանգում գյուղացիները հրդեհել են իրենց տների ագարակները, որովհետև հայտնվել է մի սուրբ, որ քաղաքի հրապարակում երեք անգամ ասել է. «Հրդեհեցեք հարուստ տները և վաճառատները, որովհետև նեղը այնտեղ է բնակվում»: Ինքը նահանգապետը հրամայել է սպանել խոռվարարին, բայց ժողովուրդն սկսել է կրակի տալ խանութները և հարուստ տները... Իսկ Խերսոնի նահանգում, ասում են, ժողովուրդը փախել է ստեպները, փախել է թաթարների երկիրը և ամբողջ քաղաքում մնացել է միայն քաղաքապետը և նա էլ հրամանի է սպասում, թե ում հանձնի պաշտոնը: Գոնի կազակները իրենց ատամանին գաղտնի ուղարկել են անգլիական թագավորի մոտ՝ «չինք ուզում այլևս հպատակ լինել ռուսաց թագավորին, այլ կամենում ենք քեզ ենթարկվել...»: Իսկ Վոլգայի կողմերում սով է. ժողովուրդն, ասում է, ամեն ինչ կերել է, ծառերի կեղևն է կերել և կավ է կերել, և հիմա բոլոր ճանապարհ են ընկել դեպի Մոսկվա, ամբողջ ժողովուրդը՝ ծերեր, երեխաներ, կանայք, աղջիկներ, ռուսներ, թաթարներ, ղալմախներ, բաշկիրներ, բու-

լորը, բոլորը... Եվ գալիս են ասելու՝ կամ հող տվեք, հաց տվեք, կամ մենք մորեխի պես կոչնչացնենք ձեր քաղաքները: Հապա, այսպես է... Թեև մենք գիտե չենք կարդում, բայց տեղյակ ենք աշխարհի բաներին: Պատահում է, որ տոնավաճառում ենք լսում, պատահում է, որ զինվորներից ենք լսում, իսկ անցած օրը, երբ ես Քարե կամուրջի տակ պարապ կանգնած էի, մոտեցան երկու լեհ ռուսանոց և կանչեցին ինձ: Ես ասացի, որ իմ նավակը նրանց վայել չէ, որովհետև ես ալյուր էի տեղափոխել: Նրանք զայրացան և համառեցին: Այն ժամանակ ես նրանց տարա մինչև հին զորանոցները... Իսկ նրանք, տեսնելով, որ ռուս եմ, սկսեցին խոսել իրենց մայրենի լեզվով: Ես թիավարում էի և լսում... Ես մինչև անգամ դանդաղ էի թիավարում, որովհետև շատ էի ուզում լսել նրանց խոսակցութունը: Իսկ նրանք պատմում էին, որ պրուսացիք միացել են ռուսներին և ուրեմն լեհացիների բանը վատ կլինի, և որ իբրև թե պան Խլոպիցկին վիրավորվել է, բայց և մարշալ Դիրբին է լավ կերել... Եվ ասում էին, թե այժմ մի ուրիշ գեներալ է գալիս և որ Դիրբին կանչել են Պետերբուրգ, գլուխը կտրելու, որովհետև նրա պատճառով շատ ժողովուրդ է փշացել:

Արդեն երևացին ձկնորսների հյուղակները և այն ավերակ հողմաղացը, որ այդպես էլ պիտի մնար մինչև ինքն իրեն փտեր: Նրանք հանդիպեցին մի քանի նավակների, որոնք վերադառնում էին քաղաքից:

— Վասյա, Վասիլի... — և մեկը ձեռքով արեց:

— Սատանա, դե... Առանց լակելու չի կարող, — մոմոսաց նավավարը: Շուտով երևաց «ռուսական ծայրամասը»:

— Այ, մայրիկը... Տես, — և աղջիկը ձեռքը մեկնեց, — մա՛... — Թույլ ձայնով կանչեց նա:

Մոտեցան ափին:

— Գուցե ձեզ տանեի՞ մինչև Քարե կամուրջը, — առաջարկեց նավավարը:

Մի կին գրկեց աղջկան և նավակից հանեց: Արմենիերը ոտքը դրեց ցամաքին: Մայրն աղջկա հետ գնաց դեպի գետնափոր տնակը:

Նավավարը նավակը քաշում էր ցամաքի վրա:

Արմենիերը դատարկեց բոլոր գրպանները և ամաչելով մոտեցավ նրան:

— Շատ եք վճարում, պարոն...

— Ավելին չունեմ, որ վճարեմ, — ապա արագ հեռացավ:

Արվարձանի ցեխոտ փողոցներով նա գնում էր գլուխը կախ: Նույն ճանապարհով նա տուն էր վերադառնում: Այլևս չկար լուսաբացի մշուշը: Փողոցներում գորշ առօրյան էր... Ահա այստեղ նա զգաց թարմ հացի հոտը: Բաց դռնակի մոտով նա անտարբեր անցավ: Նրա գլխում ուրիշ մտքեր էին... Խշխշան շորերով այն կինը մնաց ժառերի մթին խորքում: Նույնիսկ արևը այն չէր, որի տակ կողք-կողքի պատկել էր խելոցների զույգը և կարմիր զատիկները շղթայվել էին ձու գնելու մոլուցքով:

Քաղաքում ուրիշ արև էր, գնդիկ և սպիտակ երեսով մի տանտիրուհի, որ չորացնում էր գուբերի ջուրը, եղաններով ցանցում էր խոնավ խոտը, լվացքը փռել էր ցանկապատի վրա, նայում էր լվացքաջրի գուրջու միջից և չէր թափանցում գետնափոր տնակները:

ԳՈՐԾ ՄԱՅՐԱՆՍ, ԴՍԵՐ ՄԿՐՏՈՒՄԻ

1

Այդ օրը Երևանի հայոց վիճակային կոնսիստորիան, որի ատենապետը թեմակալ առաջնորդի փոխանորդ Ստեփաննոս արճին էր, Մսաբուր մականունով, — քննել էր չորս գործ:

Առաջինը խոչեցի ման չորս աստիճան ջահրնկալ տիրացու Թադեոսի «ապօրինի շաղաշարութեան» գործն էր «մեղավոր աղախին» այրի Աննայի հետ: Երկրորդը վերաբերում էր Քրդեանի քահանա Տեր Ղազարին, որը բինայում մի նորածին մանուկ մկրտել էր ոչ թե սրբալույս մյուռնով, այլ կոփի արդար յուղով: Ավելի հետաքրքիր էր երրորդ գործը՝ «հաղապս ոչ հոժարելոյ ժողովրդականաց Երևանա քաղաքի տալ գտերունի կողոպուտս ննջեցելոց յուրեանց»:

Գործը հարուցել էին քաղաքի ծխատեր քահանաները, որոնք Երևանի բնակիչներից պահանջում էին շխախտել «կողոպուտի» վաղեմի սովորութիւնը, ըստ որի մեռած մարդկանց զգեստը պատկանում էր թաղող քահանային: Երևանցիների այդ նոր սովորութիւնը քահանաները համարում էին նաև սրբապղծութիւն, հիշեցնելով, որ ինքը՝ Քրիստոս թաղվել է բոլորովին մերկ: Այդ «գործի» մեջ մինչև այժմ մնում են բնակիչների խնդրագրերը, նաև քաղաքի ավագների բանավոր գանգատները: Ավագներից մեկը՝ մյուլքադար Սահակ Տեր-Նդիազարովը հայտնել է, որ իրենք ամաչում են ցույց տալ ննջեցյալների մերկութիւնը, մանավանդ, երբ մեռածը իզական սեռի է: Հոգևոր ատյանի անդամներին նա հիշեցրել է, որ «այլազգիները» լկտիաբար ծիծաղում են, երբ քամին շարտում է դիակի մահվան սավանը: Մյուսը՝ ուստաբաշի («պարագլուխ արհեստավորաց») Սաղաթել Իսկանդարովը հայտնել է, որ իրենք մեռելներին թաղում են նոր զգեստով, իսկ հենքը նվիրում են աղքատներին և կամ մահացածի մերձավորներին: Վիճակային կոնսիստորիան դժվարանալով կամ չկամենալով վճիռ արձակել, գործը մատուցանում է ի վերջնական տնօրինութիւն «առ ոտս նորին ամենաբարձր վեհապառութեան առաջելաշարիդ եպիսկոպոսպետ և պատվական հայրապետ ամենայն հայոց Տեառն Ներսեսի ամենաիմաստ կաթողիկոսի»:

Չորրորդ գործը ժամանակի նշանավոր գործերից է և հայտնի է «Գործ Մայրանա, դատեր Մկրտումի» անունով: Ստույգ է, որ դեռ 1838 թվի օրագրութիւնների մեջ հիշատակվում է այդ պատմութիւնը, որի բուն սկիզբը պիտի ընդունել 1829 թվի ձմեռը, Մայրանի ամուսնութեան գիշերը:

Գործի բովանդակութիւնը հետևյալն է:

1829 թվի ձմեռը քանաքեոցի այրի Նղսանը իր դուստր Մայրանին տասը տարեկան հասակում («ի 10-րդ հասակի») բռնութեամբ ամուսնացնում է Երևանաբնակ ման նիկողայոս Սուքիասովի հետ: Պսակի գիշերը

եկեղեցում, ինչպես հայտնի է առաջին քննութիւնից, Մայրանը պսակող քահանային չի տալիս իր համաձայնութիւնը: Ըստ Մայրանի ցուցմունքի, քահանան բռնադատում է նրան համաձայնութեան ու մինչև իսկ փայտով ծեծում է Մայրանին («գանեաց զնա փայտիվ»): Վկաներից մեկը պատմում է, որ Մայրանը եկեղեցում աղաղակ չի բարձրացրել, իսկ եթե նա գլխի նշանով է հայտնել իր անհամաձայնութիւնը, ապա ինքը չի տեսել, քանի որ հարսի երեսը ծածկված էր քողով, և նա կանգնած էր՝ երեսը դեպի պսակող քահանան: Ինքը՝ փեսան, Նիկողայոս Սուքիասովը հայտնել է, որ Մայրանը սուրբ սեղանի առաջ անհամաձայնութիւն չի հայտնել, այլ թե պսակող քահանան տեսնելով, որ աղջիկը չի կամենում խոնարհել զուխը, բռնութեամբ խոնարհեցրել է:

Պսակից հետո, երբ նրանք մտնում են ամուսնութեան առագաստը, Մայրանը փախչում է և մի քանի օր թաքնվում ձյունի տակ («տարիքի անկատարելութեան պատճառով չկարողանալով դիմադրել յուր ամուսնու՝ Սուքիասովի արական զորութեան, — երբ նրանք մտել էին ամուսնութեան առագաստը, — Մայրանը փախչում է և թաքնվում է ձյունի տակ»): Վկաներից երեքը՝ Քանաքեոի տանուտեր Վիրաբը, Հարութիւն Աբովը և մի ուրիշը, որոնք կանչված են եղել հարսանիքի «վասն հացակերութեան», — առանձին խնդրագրով վկայել են, որ Մայրանն այն ժամանակ չէր հասկանում, թե ինչ է ամուսնական կյանքը, և այդ գիշեր «աղջիկը դարձավ լալ և անդամալոյծ երկար ժամանակ և ետ առողջանալոյն ոչ գնաց առ այրն»: Եվ այդպես նրանք բնակվում են «անսեր և անշատ ի մի միանա»: Մայրանի երկարատև հիվանդութեան փաստը չի հերքել և ինքը՝ Նիկողայոս Սուքիասովը, որը երեք տարուց հետո Ձեյվա գյուղում գտնում է մի այրի կին՝ դարձյալ Մայրան անունով և «մտանելով ընդ նմա յամուսնութիւն», այդ անպսակ և ապօրինի հողորդակցութիւնից ունենում է երկու զավակ: Այդ ժամանակ մահանում է Մայրանի մայրը՝ Նղսանը և աղջիկն այդ օրվանից դառնում է կատարյալ որբ:

Հոգևոր ատյանը աներկբա է համարում, որ Մայրանին անկատար հասակում ամուսնացրել են բռնի և հակառակ սեփական ցանկութեան: Ինչ վերաբերում է պսակող քահանայի գանահարութեան փաստին, անհավատալի չհամարելով աղջկա ցուցմունքը, ատյանը կարծում է, որ Մայրանը ամոթխած եղանակով է հայտնել իր անհամաձայնութիւնը, և պսակող, քահանան, չնշմարելով այդ, բռնութեամբ առ իրար է խոնարհեցրել նրանց զուխները: Ատյանը հաստատում է նաև Մայրանի երկարատև հիվանդութեան փաստը, և այն, որ Նիկողայոս Սուքիասովը տեսնելով, որ իր օրինավոր կին Մայրանը բազմազգիմի հնարներից հետո չի համաձայնվում կենակցութեան, Ձեյվա գյուղում ամուսնանալու մտադրութեամբ «բնակութիւն» է սկսում նրա վրա սիրահարված այրի Մայրանի հետ, առանց պսակի և առանց հոգևոր կառավարութեան թույլտվութեան:

Կոնսիստորիայի վճիռը, ինչպես ընդունված էր այն ժամանակ, գրված է շափազանց ընդարձակ և մանրամասն: Յուրաքանչյուր կետ հաստատված է եկեղեցական և արքունի օրենքների ճշգրիտ հիշատակութեամբ: Օրինակ, սուրբ Սահակ Հայրապետի սահմանած 27-րդ հոդվածը պատվիրում է ամուսնութիւն չանել՝ մինչև միմյանց հաճութեամբ

տեսնելը, սուրբ Բարսեղի 219-րդ հոդվածն արգելում է պակադրելը՝ մինչև տղան հասնի յուր շափին և ճանաչի յուր հաճույթը: Այդ բոլոր հոդվածները բերված են համոզելու, որ Մայրանը իրոք մանուկ էր և պատրաստ չէր ամուսնության: Հոգևոր ատյանի օրագրության մեջ հիշատակված են Ատն և Կոստանդիանոս բարեպաշտ թագավորները, Եղեկիել մարգարեն, Մխիթար Գոշի դատաստանագիրքը և Նիկիայի ժողովի վճիռները, կարծես ատենադպիրը կամեցել է փայլել եկեղեցական և արքունի օրենքների զարմանալի գիտությունը:

Արդար ճանաչելով Մայրանին, հոգևոր ատյանը որոշում է թուլատրել նրանց նոր պակադրությունը կենակցելու միմյանց հետ, եթե կամենան, իսկ եթե ոչ՝ ազատ արձակել ամուսնանալու, որոնց հետ կամենան. նիկողայոս Սուրբասովին ենթարկել եկեղեցական ապաշխարության երկու տարով՝ մյուս Մայրանի հետ ապօրինի կենակցելու և այդ շաղկապից երկու զավակ ունենալու համար. երկամյա ապաշխարության ենթարկել նաև մյուս Մայրանին, որ համարձակվել է ունենալ ամուսնական կապ Սուրբասովի հետ, գիտենալով առաջին Մայրանի կենդանությունը, իսկ պակադր քահանա տեր Մարգարին կարգալուծ անել, որովհետև նա տեղյակ էր Մայրանի անկատար հասակին: Սակայն տեր Մարգարի մահվան պատճառով սույն վճիռը թողնվում է «աստծոյ կամքին»: Նաև ապացուցված համարել Մայրանի մոր՝ այրի Եղսանի մեղավոր բռնադատությունը և նրա մահվան պատճառով պատիժը թողնել ոչ թե աստծո կամքին, այլ նրա ահեղ վրեժխնդրության: Եվ որովհետև, համաձայն տերունական Կոճղ Օրինացի հոդված 43-ի (հատ. 10) պակադրումն գործերը ենթակա են Սյունհոգոսի անբեկանելի վճռահատության, ուստի Երևանի հայոց վիճակային ատյանը սույն վճիռը առանց ի կատար ածելու, մատուցանում է ի հաստատություն Սյունհոգոսին էլ-միածնի:

Ուրեմն Մայրանը դեռ պիտի մնար «օրինավոր կին» Սուրբասովի, որի արական զորությունից նա սարսափահար փախել էր մի ձմռան գիշեր, փախել էր ինչպես եղջերուն ահավոր վտանգից: Նա պիտք է դարձյալ լսեր անարգ նախատինքը, որ այն խավար դարում թափում էին ամուսնաթող և անպաշտպան կնոջ վրա: Նա պիտի լռեր, եթե մի շար կին բամբասեր նրան և անվաներ անառակ լիրբ: Կանայք դարձյալ պիտի խուսափեին նրանից, որովհետև այդ կապը կարատավորեր նրանց անունը: Տղամարդիկ երես պիտի դարձնեին՝ բամբասանքի ահից: Եվ, մինչև չէր լինի Սյունհոգոսի վճիռը՝ նա պիտի շղթաված մնար առաջին հարսնության առգաստի կայմին:

Այդպես էր այն դառն ժամանակ, որի մասին հայ ոմն Շամախի քաղաքից անստորագիր նամակով զանգատվել է իրեն՝ «բրիցս երանեալ» ներսես կաթողիկոսին. «դու գիտում ես ժամանակիս շարությունը, որ զուր տեղից մարդոց վնասում են... Ես մին օրեր անցրած շատ բան տեսած մարդ եմ, ահա հիմիկ իմ մխիթարությունս սուրբ եկեղեցին է, որ իմ հոգուս փրկությունը խնդրեմ, բայց որ տեսնում եմ էդ սուրբ տեղերն էլ պիղծ մարդերով ապականված, էն ժամանակ հուսահատվում եմ և վայ ֆնձ, չեմ իմանում որտեղ գնամ...»:

Ապականված էին եկեղեցին և նրա մարդիկ: Ոտքից մինչև գլուխ ախտավոր էր և մարմնավոր իշխանությունը: Արքունի և հոգևոր օրենքները գոյություն ունեին այդ ապականությունն անխախտ պահելու: Անլիզու մշակների բազմությունը հեծում էր ահռելի ծանրության տակ և հազարները սուզվում էին դեպի չքավորության հատակը: Երկրի և մարդկանց վրա հետզհետե թանձրանում էր ասիական խավարը, որի մեջ, ինչպես վկայել է մի տաղանդավոր ժամանակակից, հազիվ խլրտում էին առաքինության կրակները:

2

Քանաքեռցիներն Աբու Հայաթի մոտով բարձրանում էին դեպի գյուղը: Նրանց հետևում էր մի մանկամարդ կին, փաթաթված սպիտակ շարսավի մեջ: Ամայի էին այգիները և բարակ ճանապարհը, որով գնում էին: Այդ ամայության մեջ շարսավով կինը նման էր սրածայր գեթեգմանաքարի, որը պոկվել էր մահամեղականների հանգստարանից և գնում էր գյուղի վրա: Ավելի մոտ թվում էր, թե սպիտակ գերեզմանաքար չի շարժվում, այլ գերեզմանից դուրս է եկել մի թարմ դիակ, որին հենց նոր փաթաթել էին սպիտակ քաթանի մեջ և իջեցրել մոռացության խորքը: Վերադառնում էին բոլոր քանաքեռցիները, բացի Հարություն Աբովը, որը նույն ժամին Չորագյուղի կողմից իջնում էր Չարսուփ վրա: Նա քայլում էր նեղ փողոցներով, որոնց երկու կողմը կավե ցածր և կիսախարխուլ պատեր էին, կիսով շափ գետնի մեջ ցածր դռնակներով, որ համարյա միշտ փակ էին: Պատերի հետևից մարդաձայն չէր լսվում, կարծես ամայի էին տները, որոնց բնակիչները հեռացել էին ով գիտե որտեղ: Տասնհինգ տարի էր ուսները գրավել էին Երևանը և միայն Շհարի մահալում էին կառուցել քարաշեն երկու տուն և մի զորանոց՝ ոչ հեռու Մարգարի ջավահիր ամարաթից: Չարսուն և մանավանդ խուլ թաղերը ավելի էին խարխուլ, որովհետև բնակիչները դժվար էին բարձրացնում այն աղյուսը, որ հին կամարներից ընկնում էր ժամանակի հետ: Շատ տներ ավերվել էին ուսուպարսկական պատերազմին, մի մասն անմարդաբնակ էր, որովհետև նրանց տները ահից փախել էին և օտարության մեջ հիշում էին իրենց հին բակի ուրիները: Մնացողները ևս չէին նորոգում իրենց տները. կյանքի թանկության հետ միասին ժամանակն առհասարակ անհանգիստ էր: Ոմանք ակնկալում էին սարդարների վերադարձը, իսկ ոմանց համար կյանքը դառնություն հին լուծն էր, որ պիտի մաշվեր այդ լուծը քաշողի պարանոցի հետ:

Փողոցների կեղտոտ լճակներից բարձրանում էր զարշահոտություն: Շատ թաղերում կիսավեր էին առուները և այլևս չէին ծաղկում բախլաները: Զկային և պարսիկ միրաբները, որոնք ջուրը, իբրև կենարար դեղ, բաշխում էին մինչև վերջին կաթիլը: Կանաչ էին միայն հին բարդիները և շինարները, որոնք անտերությունից ավելի փարթամացել և վայրենացել էին, երբեմնի մշակված պարտեզները դարձնելով մուխ անտառ:

Անմարդաձայն փողոցներով իջնում էր Հարություն Արովը՝ լեզգի-
ների աշխարհից եկած առասպելական Արով պապի ժառանգը, որին
ազգականներն անհայտ է ինչու անվանում էին «Միրզա ամի» կամ «Միր-
զամ»: Նա ավագն էր Արովների հին տոհմի:

Քաղաք գալու առթիվ նա հագել էր տոնական իր միակ զգեստը՝
Քիրմանի շալի չուխան: Բուխարա սրածայր գլխարկն ավելի էր բարձրաց-
նում նրա հասակը, իսկ մեջքի արծաթ գոտին երևացնում էր ճկուն մար-
մինը: Նրա հուշիկ քայլերից զրնգում էին գոտուց կախ հրահանը և հով-
վական մեծ դանակը:

«Միրզամի» ողջ արտաքինի վրա ևս երևում էին խունության հեռ-
քերը: Կարծես ամեն ինչ, նույնիսկ գոտու զրնգոցը, վկայում էր, որ
երբեմնի թարխանը այլևս չի հագնելու նոր զգեստ: Այն, ինչ վրան էր,
պիտի մաշվեր տիրոջ հետ և այդ մաշված շորերի մեջ տերը պիտի գե-
րեզման իջներ: Այդ էին ասում գղահի մաշված մորթին, դալամքյար,
արխալուդի կտրտված թելերը և մանավանդ չուխայի խունացած կուրծքը,
որ ծերունին ծածկել էր նույն չուխայի փեշով: Ամենից նոր նրա ծաղ-
կանկար գուլպաներն էին՝ զարմանալի նախշերով: Մանր քառակուսիների
մեջ գունավոր թելերով սպիտակի վրա վարպետուհին գործել էր վար-
դեր ու գույնզգույն նարգիզներ: Կային և հեքիաթային կենդանիներ, թրո-
շաններ և զանազան նշաններ, որոնցից յուրաքանչյուրը երբեմն ունեցել
է իր իմաստը: Գուլպաների եզերքին սև թելերով ծուռումուռ ձգվում էր
մի բարակ գիծ, որ կտրատվում էր և մանր կետերի հետ միասին նման-
վում արաբական գրերի: Կարծես «Միրզամը» մեծ մանուկ էր, որին
մայրը հագցրել էր այդ «նորափեսայի» գուլպաները և ահա նա մուր-
ված գնում էր խուլ փողոցներով և այդ փողոցներում փնտրում էր մի
սիրելի դուռ:

Հետզհետե մեղմանում էին նրա խղճի խայթերը, Մայրանի հետ
կապված այն ներքին վրդովմունքը, որ ինչպես ամոթ, այրում էր նրա
գեմքը: Այն ձմեռ Եղսանը՝ Մայրանի մայրը, ի թիվս ուրիշ բարեկամ-
ների, խնդրել էր նաև Միրզամի խորհուրդը՝ Մայրանի ամուսնության
ժառանգ: Եվ Միրզամը չէր հակառակել: Նա նույնիսկ վկայել էր, որ փեսա-
ցուն՝ Նիկողայոսը կայքով մարդ է: Իսկ հարսանիքին, ինչպես հայտնի է
գործից, «վասն հացակերության» ներկա է եղել նաև Հարություն Արովը:
Սակայն Միրզամը գիտակցում էր և մի ուրիշ հանցանք, որ նրան խա-
բազանում էր առաջինից ավելի անխնա: Նա գնում էր իր մտերիմ մար-
դու մոտ, մի մարդու, որին ծերունի Միրզամը սիրում էր ավելի, քան
հարազատ որդուն: Միրզամը պարծենում էր նրանով, այդ երբեմնի շաք

տղայով, որին քանի անգամ ուսերի վրա Ապրանքափոսի բաղից տարել
է տուն: Այդ սիրելի մարդը դեռ երիտասարդ ժամանակ ամբողջ հոգով
հակառակ էր Մայրանի ամուսնության: Նա Միրզամին սպանացել էր
գլուխն առնել և այլևս չվերադառնալ Քանաքեռ, եթե մանկահասակ
աղջկանը («Քյորփա բեխուն») ստիպելին հարս գնալ: Միրզամը չէր լսել
նրա աղերսը և սպանալիքը, նրան ևս համարելով գեռահաս տղա, որ դեռ
չի ճաշակել դառն կարիքը: Եվ ահա կյանքը հաստատեց, որ ճշմարիտ էր
ոչ թե ինքը՝ հազար շար ու բարի տեսած արևհեր մարդը, այլ այն սիրե-
լի տղան, որի անփորձությունն ինքը ծաղրում էր:

Առաջին հանցանքի գիտակցությունը Միրզամը մեղմացնում էր՝
շվաք անելով անպաշտպան որբի վրա: Անարգանքի թունավոր ծովում
Մայրանի համար նրա տունը միակ կղզին էր: Միրզամը համառությամբ
հետամուտ էր Մայրանի «գործին», կարծես իր խղճի վրայից սեփա-
կան մատնելով քերում էր արյունոտ կեղտը: Նա այդպիսով զգում էր,
հոգու թեթևություն, սակայն ոչ մի կերպ չէր դիմանում իր հարազատ
մարդու հանդիմանող հայացքին:

Միրզամն ահա գնում էր մարդուն պատմելու հոգևոր ատյանի վճիռը
Նրան մերթ թվում էր, որ այն մարդը գոհ է լինելու վճռից, մերթ կաս-
կածում էր՝ հիշելով վճռի վերջին բառերը.

— Ի վճռահատ զննություն Սինհոդոսին էլ միածնի...

Կարծես այդ բառերը գալիս էին գետնի մթին խորքերից, որտեղ
հովերժական խավարն է և մեռելների երկիրը:

Գնում էր Միրզամը ծանոթ փողոցներով և ինչքան ավելի էր մտնում
փողոցների լաբիրինթի խորքը, այնքան խաղաղվում էր նրա անհան-
գիստ միտքը: Տների, պատերի և փողոցների դանդաղ մահը, որին սկա-
նառես էր, — նրան կարծես հաշտեցնում էր մի այլ մահվան՝ մոռացու-
թյան հետ: Երբ մտածում էր Մայրանի և այն հին ժամանակների մա-
սին, նրա հիշողության մեջ բացվում էին հենց այն փողոցները, միայն
շատ շատ տարիներ առաջ: Նրա միտքն ընդհատվում էր, երբ տեսնում
էր հնամյա փառահեղ մի դարբաս, սակայն առանց պատերի, առանց
ներսի տան և ծաղկած բախշայի: Անցնում էր քարե կամրջակի վրայով
և ջարդված քարերը վկայում էին, որ շատ վաղուց ջուր չի հոսել այդ
առվակով: Եթե այդ խուլ փողոցում նա շտեսներ մի իշապանի, որ անի-
ծելով հրում էր իշին, պառավ թրքուհիների, որոնք պղտոր լճակում ողոր-
դում էին հին կարպետներ, կիսամերկ մանուկների, որոնք խաղում էին
մոխրակույտի վրա, վերջապես եթե մի բախշայից շվվեր թառի լացող
նվազը, մի փակ դռան հետևից աղջկային մի ձայն զվարթ չըբջջար,
ենթադրելով որ մարդ չի անցնում փողոցով. — եթե այդ ամենը չլիներ,

Միրզամը կմտածեր, որ հրաշքով ընկել է մի այլ քաղաք, որտեղ նույն խանձված մոխրապատերն են, նույն նայիզ քարերը, դռնակների նույն թաղբանդ կամարը, բայց չբացել է արևելյան քաղաքի շքեղութունը և այն մարդիկ, որոնք ծաղկած պարտեզներում վայելում էին այդ շքեղութունը:

Մի փողոցում դիմաց-դիմաց երկու շինարի սաղարթը խանել էին իրար: Նրանք փողոցի վրա կապել էին կանաչ կամար և սարյակների ժիր երամը ճովողում էր սաղարթի թանձրության մեջ: Պատի տակ սալ քար էր: Նրանից էր, որ հազար-հազար մարդ նստել էր այդ քարի վրա, թե անձրևն ու քամին էին լվացել,— ստվերի մեջ քարը կապույտ ցուլ էր տալիս, ինչպես ջնարակած կավն անոթը:

Միրզամը նստեց քարի վրա: Նա շատ լավ գիտեր այդ տեղը: Պատի հետևը սեյիդ էհսանի տունն էր, այն նշանավոր սեյիդի, որի անվան հետ կապված պատմությունները աշուղական երգերի նյութ դարձան: Սեյիդ էհսանը Միրզամի հոր քերվան էր: Աշխանը, երբ նրանք վերադառնում էին ուխտից, մի գիշեր հյուր էին մնում այդ տանը: Ամեն տարի նույնն էր ու թեև ուղղափառ մուսուլմանները նզովում էին այդ բարեկամությունը,— սեյիդ էհսանը շարունակում էր այն,— յուրաքանչյուր տարի Միրզամի հորը պարզեկելով նոր խալաթներ և նրանից ստանալով նույնքան և ավելի արժեքավոր ընծաներ: Սեյիդն ուներ մի աղջիկ, անունը Ֆաթմա: Աշուղի երգը նրան անվանում է «դրախտային հավ և դաշտի շուշան»: Միրզամն աղոտ հիշում էր աղջկա նշած և աչքերը և սպիտակ ատամները, որոնք լույս էին տալիս թուխ երեսին: Եվ ահա տեղի է ունենում մի սովորական դեպք, որով այնքան հարուստ էր սարդարների արևելքը: Քոռ-Նուսեին խանը փախցնում է Ֆաթմային: Սեյիդ էհսանը հնար չի գտնում հարեմից ազատելու Ֆաթմային: Գալիս է մի գերվիշ և Սեյիդին սովորեցնում հմայելու գաղտնիքը: Նրանք երկուսով դուրս են գալիս դաշտը, ուր կանայք խմբերով շանաքում էին բամբակը: Կախարդությամբ և ով գիտե ինչ կերպ դերվիշը կանանց աչքերի առաջ («առ աչոք տեսիլ», ինչպես նույն մարդու մասին գրել է ժամանակակից մի գրիչ) երևացնում է պղտոր գետ... կանայք բարձրացնում են փեշերը և սրունքները մերկ քայլում, իբրև թե անցնում են պղտոր ջրով: Քաղաքում իրար են խանվում և ամբողջ վազում է տեսնելու հրաշքը:

Մյուս օրը այդ անմեկնելի և խորհրդավոր ուժը դուրս է հանում սարդարի կանանց: Զավահիր ամարաթի ներսից ելնում են չքնաղ վրացուհիներ, խափշիկ կանայք, հայուհիներ՝ ցորնազույն մորթով, կազմտանից գերի առած աղջիկներ, շերքեզ կանայք և պարսիկ գեղեցկուհիներ,— մի խոսքով Քոռ-Նուսեին սարդարի ամբողջ հարեմը: Սեյիդ

էհսանը սրունքները մերկ կանանց մեջ ճանաչում է իր աղջկանը և վազում է: Ղեպի ամարաթի դուռը: Բերդի պահակները հագիվ են փակում դարբանները, որպեսզի անդիմադրելի այդ գորութունը չխայտառակի սարդարին:

Դերվիշը նույն գիշերը փախչում է քաղաքից: Սեյիդ էհսանին կուրացնում և թշում են Ղազվին: Ասում են, որ դեռ շատ տարիներ ապրել է կույր սեյիդը: Նա դուրս է գալիս Ղազվինից և նստում հյուսիսից եկող ճանապարհի եզրին: Երբ գալիս էր քարավանը, նա ողջունում էր քարավանի պետին և հարցնում «Իրավան շհարից»: Եվ այդպես շատ տարիներ նա ողբացել է իր գերութունը:

Այդ պատի հետևն էր սեյիդ էհսանի տունը և երբեմն հենց այդ քարի վրա նստում էին Միրզամի հայրը և նրա քերվան:

...Փողոցով անցան երեք թուրքեր, որոնցից մեկը թաքաղի մեջ գլխի վրա տանում էր խոնշան: Միրզամը լսեց, թե ինչպես նրանք ասացին իրար.

— Մեր քուլաներում ինչ գործ ունի էս հայը...

Ապա նրանցից մեկը ետ նայեց: Նա տեսավ Միրզամի գեմքի ալեզաւդ խաղաղութունը և գլուխը կրծքին կախեց:

Սերունին վեր կացավ:

3

Դեպի Կոնղը Գյուլըջի քարավանսարան էր, գրակ կարողների և մաշակարների փոքր ու միանման կրպակներով: Դեպի հարավ՝ բերդի կողմը, խուրդավաթ վաճառողների մրջնոցն էր: Այդտեղ էին նաև պղնձագործները, դարբիններն ու պայտարները, որոնց մուրճերի աղմուկը, քուրանների բոցը, պողպատի ու պղնձի սուր զրինգը խլացնում էր Չարսուի բազմաձայն ժողորը: Առանձին թաղ էին կազմում ներկարարները, համետ կարողները, բրուսները և կաշեգործները: Երբ իջնում էր մառախուղը, դարբինների և պղնձագործների կրակները մառախուղների մեջ առանձին խորհրդավորութուն էին տալիս մրից սևացած մարդկանց, որոնք ծանր մուրճերով կարծես գետնին էին զարկում և գվվում էր գետինը, կայծերի շատրվանով լուսավորում մառախուղը: Արհեստանոցների մյուս թաղերն ընկղմվում էին մառախուղի մեջ:

Եվ ընդհակառակը, արև օրերին, առաջինները նման էին հրդեհից խանձված գետնափոր տների, այնինչ ներկարարների թաղում ծփում էին լաջվարդ, ալաշա, «գյուլգյազ» և այլ գույնի կտավի զուլերը: Անխտիբ բոլոր թաղերն էլ կեղտոտ էին, պայտարների առաջ աղբի և սմբակների քերվածքի դեզեր էին, կաշեգործների դիմաց մազեղեն, հում և բորբոս-

նած կաշվի կտորներ: Ներկարարները քացախած ներկերը թափում էին հենց արհեստանոցի առաջ և այդ գունավոր ջրերի գուրբրից բարձրանում էր կծու գարշահոտ: Նույնիսկ անտիրական շները, որոնք հարյուրներով էին վխտում մանավանդ դասաբխանայում, — չէին մոտենում այդ աղտոտությանը և բաղնիքների տաք մոխրակույտը գերադասում էին բոբրոսնած կաշվի դեզերից:

Հազարավոր արհեստավորների մեջ չէր կարելի տեսնել առողջակազմ և վարդերես մեկին: Նրանք վտիտ էին, մեռելագույն և անկրակ աչքերով: Միայն դարբիններն էին հաղթամարմին, բայց նրանք էլ կուղ էին. կայծերից այրված նրանց աչքերը ուռել էին ցավագար կարմրությամբ և ավելի ահարկու էին մրից սևացած երեսի վրա: Ոմանք, ինչպես ներկարարները, համարյա ամբողջ օրը արևի երես չէին տեսնում, նրանք գետնի տակն էին, որտեղ թաղված էին ներկի խոր կարասները: Մշտական խոնավության մեջ ներկերի թուլնը հյուծել էր նրանց: Նրանք ավելի նման էին վհուկների, որոնք գետնի խավարից երկար ձողերով դուրս էին քաշում վառ գույներով ներկած կերպասներ, կտավ և բրդե գործվածքներ: Առավոտից մինչև մուրջը աշխատում էին, ոմանք՝ ինչպես կաշեգործները՝ մինչև ծնկները ջրի մեջ, ոմանք՝ գլուխը վեր չհանելով, ոմանք՝ թանձր ցեխի մեջ, ինչպես բրուտները: Նրանք նման էին թիապարտների, որոնց անողոք կարիքը ցմահ շղթայել էր անուրախ և անհուսաշող կյանքին: Շատ հազվադեպ էր հնչում երգը և եթե այնուամենայնիվ երգում էին, ապա կսկծում էին իրենց օրերի դառնությունը, երգում էին լացի և անել կյանքի երգը, սիրտ մաշող արևելյան մի երգ այն մասին, որ կյանքը փակ դուռ է, ուզում ես լաց եղիր, ուզում ես ծիծաղիր, միևնույն է, նա երբեք չի բացվի: Եվ պատահում էր, որ մի ծեր դարբին ծանր մուրճին կաթնած լսում էր այդ երգը և կաշվե գոգնոցով սրբում կարմրած աչքերը:

Բայց միայն այդ չէր Երևանի հուշակավոր Չարսու բազարը: Ավելի ճիշտ խլուրդի այդ քները ամենևին էլ բազար չէին համարում նրանք, որոնց կրպակները ծածկված շուկայում էին: Նրանք ծաղրում էին այդ խեղճ արհեստավորներին և նրանց շուկան անվանում «Բյուլխանե», այսինքն մոխրանոց և կամ «Բիթ-բազար», այսինքն ոչլի բազար, որովհետև այդ արհեստավորները գործ ունեին շուկայի մուշտարիների հետ և բացի այդ, նրանց թաղումն էին գտնվում այն մանր սարաֆները, որոնք շնչին գնով գնում էին պարտքի տակ խեղդվող գյուղացիների վերջին թաղիքը, միթիլ վերմակը, չուխան: Սակայն տարբերությունը միայն այն չէր, որ ծածկված շարսուի սովորաբարները արհեստավորների շուկային անվանում էին «Բիթ-բազար», իսկ իրենցը՝ «Եան-բազար»: Տար-

բերությունն ավելի խորն էր. մաշակարի համար մտրազ էր խմել Չարսուի շայխանների թեյը՝ ծաղկավոր և ոսկեկար ֆինջաններից, այն նշանավոր թեյը՝ որ ուներ վարդաջրի բուրմունքը: Նա խմում էր ապիլ պղտոր ջուրը և կամ այն հասարակ թեյը, որ ինքը շաշին էր պտտացնում արհեստանոցից արհեստանոց: Այնտեղ նստում էին կորասանի խալիների վրա, այստեղ մաշված փոստի կամ խարի վրա: Այնտեղ օդը հագեցած էր չորացած մրգերի՝ հնգկական հիլի, պարսկական դումաշ կտորների, հոտավետ թութուների, Հալեպի սապոնի, քեհհրաքհրի, ուհաթ լոհումի, Ջուզայի շավզի, քաղզի բազամի և այլ տեսակի քաղցրավենիների, օծանելիքների և թանկարժեք կերպասների բույրով... նույնիսկ անօթևան շները, — որոնք ցնկնում էին տաք աղբակույտերի մեջ, — նույնիսկ շներն էին երկյուղում նշանավոր Չարսու բազարից: Նրանք մթնով մոտենում էին նրա բարձր կամարներին, և արբեցած այն եղեմական բույրով, որ ելնում էր կողպած դարբանների ճեղքերից, — շները ոռնում էին և հուսահատությունից հաշում լուսնի վրա:

Անհայտ ճանապարհորդ Անտոնիո Զիովանելլին, կապուցին վանական, որ ճանապարհորդել է Տրապիզոնից մինչև Պարսից ծոցը, այսպես է նկարագրում Երևանի նշանավոր շուկան. «Բյուլխավոր դարբասից կարող են ներս մտնել զույգ ուղտեր կողք-կողքի, եթե նույնիսկ նրանք բարձրված են բեռներով: Մի հույն ոսկերիչ, որ բազմաթիվ անգամ ճանապարհորդել է Թավրիզից Տրապիզոն և հակառակը, ինձ վկայեց, որ իբր թե դարբասի ճակատին զարգերով քանդակված է Ծիր-կտորով շահի Կերմանը, որով շահը սահմանել է առևտրի կանոնները: Իսկ մի տեղացի վաճառական, որի խանութում ես եղել եմ չորս անգամ և տեսել եմ այնպիսի գորգեր, որոնք արժանի են իմ հայրենի Ֆլորենցիայի Santa Maria Novella տաճարի հատակը զարդարելու, — ինձ ասում էր, որ հույնը խաբել է և որ ճակատի զարդերը ոչինչ չեն վկայում, բացի կառուցող վարպետի շնորհքը: Ես ավելի եմ հավատում այդ տեղացի վաճառականին, որը հայ էր ազգով, քան հույնին, որովհետև ինչպես հիշատակեցի իմ ուղեգրությունից սկզբում, հույները ինձ նենգություն բարեցին, ինչպես նենգ և խարդախ է նրանց հավատը»:

«Ես ականատես եմ եղել, թե ինչպես քարավաններն անվերջ մտնում էին դարբաններից ներս և նրանց բեռները գոյացնում էին բլուրներ: Մի անգամ նույնիսկ հաշվեցի, թե քանի ուղտ եկավ մի քարավանի հետ: Ես

* Տրապիզոնում մի հույն, որի տանն էր իջել Անտոնիո Զիովանելլին, փոխում էր իրապետ մատանի թանկարժեք բարդ և տեր միայն երգում հասնելուց է նկատում այդ Ակնարկը դրա և նման պատահարների մասին էլ Ա. Բ.

Ինչպիսի գորգեր չկային Չարսու բազարում՝ Բայբուրթի խորանավոր խալիչայից մինչև Քաքյանահամադի թաղիքները: Կային խալիներ, որոնց լայնքը ավելի էր քսան խան արշինից. կային և մետաքսե թելերով հյուսված մանր գորգեր, որ կարելի էր թաշկինակի նման դնել գրպանը: Շատ գորգերի վրա կարելի էր տեսնել մի ամբողջ դիցաբանություն, բոլոր մանրամասնություններով. կարծես շնաշխարհիկ նկար էր, որ հարկավոր է շրջանակել և դնել ապակու տակ: Ինչպիսի ծաղիկներ, ինչ մրգեր, ինչ անդրծովյան թռչուններ, որոնք ասես կենդանի էին և թաքնվել էին կախարդական պարտեզներում: Մի քանի գորգերի վրա հյուսել էին որսի տեսարաններ, անապատ՝ ուղտերի հեռացող քարավանով, բաշը կրակի գույն առյուծ, որը դուրս է գալիս որջից ավելի ահավոր քան ինքը՝ կենդանի առյուծը: Բայց ամենից ավելի բազմություն հավաքվում էր այն գորգերի առաջ, որոնց այրում էր կանացի մերկ մարմինների նկարը: Նույնիսկ մորուքները հինայած և պատկառելի ախունդները շէին կարողանում անխռով անցնել առանց մի ակնթարթ նայելու Նրիտասարգները երազում էին նրանց, ինչպես այն փերիներին, որոնք ապրում են ջեննաթի մշտադալար պարտեզներում: Հաշիշից դեղնած մի գերվիշ ժամերով նայում էր այն գորգին, որի վրա հյուսել էին մերկ տղայի վարդագույն մարմինը, ձեռքին ոսկեթև բազե:

Կրպակների առաջ ծփում էր բազմազգի և բազմալեզու մարդկանց ծովը: Հայեր, թուրքեր, պարսիկներ, սեյդիլի թաթարներ, թարաքյամա՝ որոնք աչքի էին ընկնում գլխի սև ապարոշներով, եզիզի քոզեր, վերջապես լեռնական հրեաներ, որոնք տարբերվում էին իրենց քաղցրական ծալ-ծալ միտքներով և երկար շուրթբաներով: Արևելյան խայտաբղետ տարազներին շէր մերվում «վարտալնի դեսյատնիկներին» գորշ մունգիրը: Բոլորը նրանց անվանում էին «սալդաթ» կամ «ղազախ»: Այդ ոստիկանները մեծ մասամբ նախկին զինվորներ էին, որոնք մասնակցել էին ռուս-պարսկական պատերազմներին: Նրանք արդեն հասակավոր մարդիկ էին և ոմանց կուրծքը զարդարված էր արծաթյա մեղալներով: Նրանք ունեին մինչև ականջները հասնող փարթամ բեղեր և ճուղավոր միտք, որ ծփում էր կրծքի վրա: Մանր թուրք և ալեբարդն ավելի էին խստացնում նրանց անհրապույր արտաքինը: Նրանցից մի քանիսը հանդարտ ննջում էին գլխավոր մուտքի պահականոցում, իսկ մյուսներն իրրև օրենքի պահապաններ, շրջում էին միջանցքների լաբիրինթոսում, իսկ ավելի շատ այն կրպակների առաջ, որտեղ վաճառում էին չոր մըրգեր: Նրանք կերակրվում և ապրում էին Չարսու բազարում: Հաղթողի գերագույն իրավունքով նրանք մտնում էին շայխան և իսկույն տերը

ինքն էր մատուցում մի բաժակ: Նրանք անցնում էին մրգավաճառի խանութի մոտով և մի անհաղթահարելի ուժ նրանց մղում էր հաճելի նախունայի: Եվ վերջապես պարապ ձանձրույթից նրանց բոունցքն իջնում էր մի համաշարու վզակոթի և պարսիկ մշակն առանց բողբոջի գետնից բարձրացնում էր գդակը, իսկ նրա շուրջը հնչում էր ստրկական քծնող քրքիշը:

Նրանք շէին մոտենում ո՛չ գորգավաճառի, ո՛չ ոսկերիչի և ո՛չ էլ ճոթեղենի խանութներին: Այդ շարքերում ավելի հաճախ, մասնավանդ ճաշից հետո, թափառում էին մանր շինովնիկները՝ ջերմախտից դեղնած ուսներ, որոնց ով գիտե որ հանցանքի համար ներքին նահանգներից քշել էին «աշխարհի ծայրը»: Վաճառականները նրանցից շէին վախենում, այնինչ «ոռու սալդաթները» քաշվում էին շինովնիկներից, որոնց ներկայությունը ոստիկաններին ստիպում էր ավելի հարգել օրենքի տառը: Այդ շինովնիկներից ոմանք ունեին իրենց սիրած իրը՝ մի թանկարժեք գորգ կամ արծաթյա գավաթ և կամ պարսկական թուր: Նրանք երազում էին գնել այդ իրը, որպես հիշատակ ասիական աշխարհից: Սակայն չէր գալիս այդ երջանիկ օրը, որովհետև թղթախաղն ու գինին կլակայն չէր գալիս այդ երջանիկ օրը, որովհետև թղթախաղն ու գինին կլակայն չէր նրանց ռոճիկը: Այնուամենայնիվ նրանք հույս ունեին, իսկ մինչ այդ երբեմն դիտելով բավականություն էին ստանում և կամ սև պղնձագրամով գնում էին պարսկական պարզ մի շիրուխ, դարձյալ որպես հիշատակ: Չարսուի սովորաբարները նրանցից այլ օգուտ էին ստանում: Այդ կորած մարդիկ չնչին վարձով վաճառականներին ցույց էին տալիս օրենքը ոտնահարելու ամենադյուրին ձևը, երբեմն նրանց համար խնդրագրեր էին գրում և առհասարակ իրենք ևս աշխատում էին բարեկամություն պահպանել որևէ խանութպանի հետ՝ ավելի հեշտ ապրելու համար:

Վերջապես նրանցից ոմանք շարսու էին մտնում իրենց կանանց հետ: Նրանց հետ գալիս էին և այն կանայք, որոնք ըստ հին սովորության կրկակոխ գնում էին զորամասերի հետևից, կազմելով բանակի անխուսափելի մասը, ինչպես այն մարկիտանտները, որոնք անհայտ է թե ինչ կերպ երևում էին դեռ ծխացող ռազմադաշտում՝ ասեղներով, հայելիներով և հազար մանրուքով: Ահա այդ կանայք, ինչպես և իրենց ամուսներով և հազար մանրուքով: Ահա այդ կանայք, ինչպես և իրենց ամուսինների հետ եկող կանայք էին, որոնք, կարելի է ասել, կենդանացնում էին Չարսու բազարը, որի կամարները հազիվ թե մինչև ուսների մուտքը էին Չարսու բազարը, որի կամարները հազիվ թե մինչև ուսների մուտքը տեսած լինեին որևէ կնոջ: Նրանց բոլորին անվանում էին «մաթուշկա», տեսած լինեին որևէ կնոջ: Նրանց բոլոր ոստիկաններին՝ «սալդաթ»: Հին Չարերբեմն «հանրմ», ինչպես բոլոր ոստիկանների՝ «սալդաթ»: Հին Չարսու բազարում օտարոտի և զարմանալի էին այդ կանանց զգեստները,

բաց երեսները և այն, որ ուրիշները տեսնում էին շարժվող մարմնի ձևերը: Նրանց մեջ կային շեկ և կապուտաշյա կանաչք, որոնք բարձր ժիժաղում էին առողջ կրծքով: Այդ ժիժաղը հնչում էր սանձարձակ կըրքով,— կարծես կանաչ մարգագետնի վրա վրնջում էր էգ ձին: Եվ այդ ժամանակ երիտասարդ վաճառականներին թվում էր, թե գորգի միջից դուրս է եկել այն կինը, որի մարմինը հրդեհվում էր գորգի գույների հետ...

* * *

Չարսու բազարում կար մի խորշ, որտեղ չէին մտնում ոչ միայն ուստիկանները և ուսու շինովնիկները, այլ նույնիսկ տեղացի վաճառականներից ոմանք: Այդ մասում ևս նույն ձևի կրպակներ էին, ինչպես մյուս միջանցքներում: Սակայն կրպակների առաջ ապրանք չկար և չէր աղմկում մարդկային ժխորը: Սովորաբար շքեղ շէր և այդ կրպակների ներսը: Գորգերի վրա նստած մարդիկ կամ քաշում էին դայլանը և կամ դանդաղ զրուցում՝ թեյի բաժակները դատարկելով նույն դանդաղատուժյամբ: Երբ մտնում էր հաճախորդը, նրանք առաջարկում էին թեյ կամ մոտակա սրճարանից բերել էին տալիս մի գավաթ սուրճ:

Այդ անշուք արտաքինով կրպակները ողջ շուկայի կենտրոնն էին, այն ժամանակվա բոսան: Այդտեղ սարաֆներն էին, որոնք իրար էին փոխանակում բազմատեսակ դրամներ՝ պաճախ ոսկի, մինալթուն, արասի, դուան, արծաթ մանեթներ, ուսական թղթադրամ՝ «ասեղնացի»: Նրանց մոտ կարելի էր գտնել անգլիական, հոլանդական և այլ երկրների դրամներ: Սարաֆները և փոխանակում էին, և մանրում, և դրամ փոխադրում Տրապիզոնից մինչև Բուշիր և ավելի հեռու: Միաժամանակ և այդ խանութները քաղաքական լուրերի կենտրոնն էին և նույն ճանապարհներով, որոնցով նրանք ստանում էին այդ լուրերը, Երևան էին մտնում և դուրս գալիս մաքսանենգները:

Թավրիզ—Տրապիզոն առևտրական ճանապարհի Բայազետի վրայով ընկնելը,—որով օտարերկրյա վաճառականներն ազատվել էին ուսաններից սահմանված տրանզիտային բարձր մաքսից,— սաստիկ հարվածել էր Չարսու բազարի առևտրականներին: Եվ միայն սարաֆներն էին, որոնք ոչ միայն տեր էին մաքսանենգների խոտոր ուղիներին, այլև ճարպկությամբ օգտվում էին բազմաթիվ դրամների անընդհատ փոփոխվող արժեքից: Նրանցից շատերն իրոք ունեին այնքան հարստություն, որ կարող էին գնել ամբողջ քաղաքներ, ինչպես նկատել է Անտոնիո Զիովանելլին:

* * *

— Խոշ եկար, սաֆա եկար, Արթին քիրվա...

Այդպես սապ Միր Բաղիր Իսֆահանելին, Երևանի հայտնի սարաֆներից մեկը, երբ Միրզամը կոանալով ներս մտավ նրա կրպակը:

— Չայֆե բերեք Արթին քիրվայիս... Ինչպե՞ս ես, հալը ավհալդ...

Միրզամը հրաժարվեց սուրճից: Նա հարցեց սարաֆի ողջությունը:

— Ի՛նչ հալ, Արթին քիրվա... Մերը գնա՛ց. գնդակ էլ գցես չի հասնի անցածին: Գնաց խեր բարաբաթը...

Միրզամը բարի և միամիտ նայեց սարաֆին: Մի՞թե նրա համար ևս ցամաքել է երբեմնի լիությունը: Միրզամը կսկիծով հառաչեց: Կարծես սարաֆը նրան հիշեցրեց մեռած հարազատի սիրելի անունը: Ապա նա գրպանից հանեց մի մեծ ոսկեդրամ, որ հայտնի էր «պոլումպերիալ» անունով: Սարաֆը ձեռքի փոքրիկ կշեռքով կշռեց դրամը և պահեց ծնկի տակը: Նա փոխարենը համրեց արծաթե և պղնձե դրամների մի բուռ և ուսական մի քանի ասիգնացիներ:

— Սա՛ կտորեց մեր մեջքը, Արթին քիրվա,— և սարաֆը խշշացրեց թղթադրամը.— Ի՛նչ կա սրա մեջքը, ախր...

— Հեչ զատ, Միր Բաղիր, հեչ զատ...

Եվ Միրզամը հրաժեշտ տվեց հին ծանոթին:

Թելումով Սիմոնի «մաղազայում» նա գնեց սաղրի քոշեր, մի կապ թթախոտ և երեխաների համար խոշկյաբար: Երբ նա հագնում էր նոր քոշերը, Թելումով Սիմոնը նկատեց նրա զարմանալի գեղեցիկ գուլպաները:

— Թագա փեսայի շորաբ ես հագել, Միրզա ամի...

Միրզամը թափ տվեց գուլպաների փոշին և ինքն էլ հիացավ, կարծես գուլպաները նոր էր տեսնում: Եվ նորից հիշեց Մայրանին: Առաժկոտյան, երբ նրանք պատրաստվում էին քաղաք գալու, երևաց Մայրանը մաշված շարսավի մեջ: Կինը շարսավի տակից մեկնեց այդ գուլպա՝ ներք և ձեռքով հասկացրեց, որ գործել է Միրզամի համար:

Երևունին գնեց նաև մի գյուլի աղուլիս և դուրս եկավ Չարսու բազարից: Կարծես մի ծանրություն ընկավ այդ ալեհեր երեխայի սրտից, երբ մտածեց, որ երեկոյան, երբ խոշկյաբարը կբաժանի մանուկներին, երբ քաղաքում կտա պառավին, ծաղկավոր աղուլիսն էլ կտա Մայրանին, որ թթախոտը կտա պառավին, ծաղկավոր աղուլիսն էլ կտա Մայրանին, որ Միրզամի վերադարձը:

...Միրզամը գնում էր ճահճուտների միջով՝ այն բարակ ճանապարհով, որ Չարսու բազարից անցնում էր դեպի Շիլաչի մահլան: Մուրջը՝

կիսավերակ այգիներում փոքրիկ տնակներ էին՝ հնձանների նման։ Բարդինների արանքից նշմարվում էր Պողոս-Պետրոս եկեղեցին։ Ճահ-ճուտի մեջ նստել էին գոմեշները։ Մխում էր այն բաղնիսը, որի ջրերը գալիս էին ճահճուտներից։

Միրզամն արդեն մոռացել էր Չարսուն, սեյիդ էհսանի տան կապույտ քարը, իր սրտի մորմոքը՝ հին քաղաքի և նրա լիության հանգեպ, որ թեև էր, ինչպես Չարսուի սիրամարգը։ Նորից զարթնել էր Մայրանի հոգսը, այն, որ ճնշում էր նրան, սրտի արյունոտ այն խոցը։ Մի անբացատրելի վախ կաշկանդում էր նրան. թվում էր գնում է մի մութ անտառով, որտեղ հազար հարամի սպասում են ծառերի հետևը։

Գնում էր վախից և կասկածից խեղճացած, կարծես քաշում էին ահեղ դատաստանի։

4

Երևանի արքունի դպրոցի («նահանգային վարժարան») արտաքենչ դաժան և անհրապույր էր, ինչպես Նիկոլայ կայսեր կազարման։ Մի հարկանի քարե տան երկու թևերին ուսուների օրոք կառուցել էին ֆլիգելներ, որոնք դպրոցի շենքից անջատված էին ներսի բակով։ Քե՛ ֆլիգելները և թե՛ դպրոցի շենքը շրջապատված էին հաստ պարսպով, որի վրա, ինչպես փայտե զինվորների տողան՝ երևում էին սուր ցցերը։ Այդ պարիսպը և ցցերի շարքը դպրոցը նմանեցնում էին նաև բանտի։ Դարի ոճն էր այդ, դպրոցը բանտ էր, երկուսը միասին՝ արքունի գորանոց՝ ծանր, մռայլ և ամենը unheimlich, ինչպես ասել էր էմիլիա Լոռզեն՝ նահանգային վարժարանի տեսչի գերմանացի կինը, երբ ամուսինը նրան ցույց էր տվել իրենց բնակարանը՝ ներքևի ֆլիգելում։

Բոլոր պատերը դրսից ծեփած էին դեղնակարմիր կրաքարով, որ արևից կորցրել էր կարմիրը և նման էր վառած կավի։ Բայց ամենամռայլը՝ ծանր դարբասներն էին և պողպատե զինանիշները, որոնք ամբողջված էին դարբասների ճակատին։ Սրբ արևը խփում էր դարբասներին՝ զինանիշի երկզլխանի արծիվների սովերը բաց պատուհանից ընկնում էր դասարանի ներսը։ Արծիվներն անցնում էին պատերի վրայով և երկյուղած աշակերտները շէին համարձակվում նրանց ձեռք տալ։ Իսկ Իվան Բոնդարչուկը՝ առաջին կլասի վայելչագրության դասատուն, ձգվում էր ճակատի, կարծես պատի վրայով անցնում էր իմպերատորի սովերը։

Սովորաբար երկաթե դարբասները կողպ էին։ Անցուդարձը լինում էր այն փոքրիկ դռնակներով, որ բացվում էին հենց դարբասների մեջ։ Աշակերտներից շատերը դպրոցի բակն էին մտնում կողքից, որտեղ պարիսպն ավելի ցածր էր և մի քանի տեղ փշովել էին փայտե ցցերը։ Դրպրոցի երեք կողմը անմարդաբնակ տարածություն էր։ Հետեի մասում

այսրիսպը սահմանակից էր մի կիսավեր այգու։ Շրջապատի ամայությունն ավելի էր խստացնում շենքի մռայլությունը, մանավանդ ամառը, երբ աշակերտները ո՞վ գիտե որտեղ էին, իսկ դիմացի հատուկենտ մացառները և արևից խանձված խոտը ծածկվում էին փոշու ծանր շերտով։ Միայն կանաչ էր մի հին շինարի, որի կլոր սովերում հանգստանում էին հիվանդ հորթերը և էշերը, որոնք խանձված խոտի համար ամառվա շոգին գալիս էին նույնիսկ Չորավորի թաղից։

Այդ ամայի տարածությունը, որ քաղաքի կամերալ մատչանում արձանագրված էր իբրև «ոչ ոքի չպատկանող անապատ առանց սահմանի», — կենդանացնում էին ուղտերի քարավանները, որոնք նախիջևանից բերում էին աղ և բրինձ, Օրդուբադից՝ շոր միրգ, Ուղտապանները այդտեղ էին գիշերում և նրանց խարույկը բարձրանում էր մինչև շինարու ճյուղերը։ Ընթերցելով Անտոնիո Զիովանելլու ուղեգրությունը, կարելի է կասկածել, թե արդյոք նրա նկարագրած ծառը այն շինարին չէ՞ր, որին խանձում էր խարույկի բոցը, մաշկում էին ուղտերը՝ իրենց կեռ պարանոցները քսելով նրան և բազմաթիվ կեղևակեր բզեզները ձմեռում էին նրա կեղևի տակ։ Երևանի արքունի դպրոցի գործերի մեջ դեռ մնում են գրովություններ՝ ուղղված այդ շինարու դեմ։ Տեսուչ Լազարի Հաջի-Ֆոտիկը գրում է, որ այդ մենավոր ծառը աշակերտների մեջ առաջացնում է «թախիժ և հանցավոր ցրվածություն» («наводит уныние, а так же преступную рассеянность»), իսկ առաջին կլասի վերակացուն տեղեկացնում է տեսչին, որ աշակերտները գերադասում են դուրս փախչել դեպի շինարին, քան թե խաղալ դպրոցի բակում՝ ըստ դպրոցական կանոնադրության։ Կա և գրագրությունների մի ամբողջ կապ, որ կոչվում է «գործ անտիրական ուղտի, որ հայտնվել է դպրոցի բակում անհայտ կերպով»։

* * *

Հետևեալ օրը ծամն էր։ Դասարանները դատարկ էին. դատարկ էր և դպրոցի բակը։ Վերի ֆլիգելից լսվում էր աղմկալի խոմփոց։ Իվան Բոնդարչուկը՝ առաջին կլասի դասատուն, խմել էր կես փարջ պղտոր գինի և ընկել մեջքի վրա։ Զերմախտի «չար ոգուն» նա հալածում էր այդ ձևով, միաժամանակ և կարճելով երկար օրը։ Նրա ծառան՝ յասսուլ Ֆեդրոն, լիզել էր պնակները, խմել զինու մնացորդը և գլուխը կախ ձայնակցում էր տիրոջը՝ խոռացնելով նրանից ավելի սաստիկ։ Նրանց երկուսի դիրքը, ինչպես և սենյակի խառնիխուռն իրերը հիշեցնում էին ուղեգրաշարը, որտեղ Իվան Բոնդարչուկը կարծես խփվել էր մեջքից և միանգամից սառել, իսկ նրա թիկնապահը գրկել էր փշոված ոտքը և արդեն ավանդում էր վերջին շունչը։

Գպրոցի բակում արթուն էր միայն մի մարդ՝ ոմն Հովհաննես, որ յմերաքանչյուր ամիս «մի մանեթ արծաթ ստացա» նախադասութեան գիմաց դրողմում էր բուժ մատը: Նա լվացել էր դասարանների հատակը, հոլանդական վառարանները և հորի մեջ դատարկում էր արտաքնոցի աղբի սայլակները, որոնք Նրեանում նշանավոր նորամուծութուն էին և իբրև այդպիսին՝ ծաղրի առարկա:

Հանդարտ էր նաև ներքևի Ֆլիգելում: Սենյակներից մեկում, որի պատուհանները նայում էին դեպի շինարին, — այդ ժամին մի մարդ գորգի վրա շորեքթաթ գնում էր: Մարդը հանել էր սյուրտուկը և շտիբուսները: Նրա մեջքին, ինչպես ձիու վրա, նստած էր կապուտաշյա մի երեխա՝ սպիտակ և կլոր երեսով: Նրեխան քաշում էր մետաքս ղեյթանը, որ սանձի նման հագցրել էր հոր գլխին և միաժամանակ հոր երկար ծխամորճով խփում էր «ձիուն», որ պտույտ էր անում, երբեմն մեջըը ցնցում, որից երեխան զվարթ ծիծաղում էր: Ներսի սենյակից լսվում էր կանացի ձայն և օրորոցի թրխկոց: Մայրը կոացել էր օրորոցի վրա, օրորում էր և երգում:

Այդ մարդը արքունի դպրոցի տեսչի պաշտոնակատար երիտասարդ Արտեմիչ Աբովյանովն էր, հաշատուր Աբովյանը, իսկ երգող մայրը՝ նրա կինը՝ էմիլիա Լոռզե-Աբովյան:

«Ձին» գլուխը դարձրեց դեպի լոյդ քարտեզները, որ ծածկում էին սենյակի մի պատը, երբ զգաց, որ հեծվորն այլևս չի քաշում սանձը: Նրեխան նույնիսկ փորձեց իջնել: Հայրը գլուխը բարձրացրեց: Դուռն մոտ կանգնել էր Միրզամը. կանգնել էր և բարի ծպիտով նայում էր այդ անմեղ տեսարանին:

— Միրզա ամի,— և նա վազեց դեպի դուռը: Ներսի սենյակից կինը գլուխը դուրս հանեց, աչքերով բարևեց, ապա փակեց դուռը, որպեսզի աղմուկ չլսվի:

Տիկին էմիլիան արևելցիներին չէր սիրում: Նրանք բոլորը բարձրախոս էին և շունեին հանդարտ ու խուլ ձայն, ինչպես ինքը և յուր ազգակիցները: Գերմանուհին չէր սիրում մանավանդ ամուսնու գլուղացի բարեկամներին, որոնք նրա սենյակների մաքուր հատակին թողնում էին տրեխների փոշոտ հետքը, ծղնտտի փշրանք, իսկ ներսը՝ կծու և անախորժ հոտ, որը բարձրանում էր նրանց շուխաներից, կեղտոտ փափախներից և տրեխների հում կաշվից: Նրանց հեռանալուց հետո քթին էր մոտեցնում վարդաչրի մեջ թաթախած թաշկինակը, իսկ սպահանցի Ասատուրը՝ նրանց տան սպասավորը, բաց էր անում պատուհանները, հատակը սրբում, մինչև «այլազգի կինարմատը» հանգստանար և այլևս

քթի տակ շասեր անհասկանալի բառեր, որ մոգական զորութուն ունեին Ասատուրի համար: Բայց նույնիսկ խստապահանջ գերմանուհու համար Միրզամը բացառութուն էր: Նրան նույնիսկ հաճելի էր Edelmann Mirsaam-ի ներկայութունը:

Դուռն մոտ Միրզամը քոշերը հանեց և մաքուր գուլպաներով մոտեցավ ցածր թախտին: Նա հանեց և մեծ թաշկինակը, որ կապած էր գոտուց, և սրբեց երեսի քրտինքը: Փոքրիկ երեխան նստեց նրա ծնկանը: Մերունին զգուշութամբ գրկեց երեխային, կարծես փխրուն իր էր, որ ամուր սեղմելուց կփշրվեր: Տարվա այդ ժամանակ հազվագյուտ էր թարմ միրզը, բայց Միրզամը գրպանից հանեց երկու կարմիր խնձոր: Մաքուր և շողշողուն էին խնձորները, որոնց կարմրութունը ավելի նկատելի էր՝ սպիտակ և փափուկ ձեռքերի մեջ: Նույնիսկ հայրը, որ արագ հագավ շտիբուսները և կոճկեց ծիլետը, նույնիսկ հայրը հիացած նայեց այն բարիքներին, որ դեռ ընծայում էր Աբովյանից, այն հին այգին, որի ծառերի տակ խաղալով անցել էր նրա կանաչ մանկութունը:

— Միրզամ, էս մեր ճաքած ծառի խնձորը չի՞:
— Չէ, որդի, սրանք շահալմաստի են: Սամթով պահես՝ մինչի աշուն կանա...

— Դե, պոպոշ ջան, գնա, բալիկս,— և ձայն տվավ կնոջը: Սենյակի դուռը բացվեց, տղան գնաց՝ քարշ տալով մետաքսե ղեյթանը:

— Ո՞նց եղավ,— անհամբեր հարցրեց նա, մատները խրելով մազերի մեջ: Միրզամը շփոթվեց և նորից հանեց թաշկինակը... Ինչքան խաղաղ էր այդ մի քանի րոպեն, երբ դռնից նայում էր, երբ խնձորները հանեց, «արքայական» խնձորները: Կարծես սկսվում էր սովորական զրույց: Միրզամն ափսոսաց, որ երեխան գնաց: Մենակ՝ երես առ երես, ավելի դժվար էր: Ապա նայեց նրա կապտավուն աչքերին, նրա պարզ աչքերին, որ մանավանդ ցուլում էին, ինչպես աստղերը ջրհորի ջրի մեջ՝ խորը, խորը: Ու թեև այդ աչքերը նայում էին անհամբեր հետաքրքրությամբ, բայց նրանց խորքում Միրզամը տեսավ հին, շատ հին, իրեն շատ ծանոթ և սիրելի պատանու պատկերը: Եվ ծերունու հիշողության մեջ զարթնեց այդ պատանու վաղեմի անունը՝ որ այլևս չէր արտասանվում: Այդ մարդը՝ շրջապատված գրքերով, օտար և նրան անծանոթ իրերով և նույնքան օտար զգեստով, այդ մարդը իր հաշերն էր, շար հաշերը, հաշոն, հաշատուրը, ծիծեռնակի բույն քանդողը, այն շար տղան, որ ուներ մի ծեր շուն, շանը կապում էր ձիերի ախոտում և ստիպում, որ շունը խոտ ծամի:

Միրզամի ձայնը դողաց.
— Խաշեր, բալա ջան, էսպես եղավ եղելութունը...

սուրբ օջախին, օր ծերութեան մուրազս անկատար մի անյո՛ւ Ի՞նչ պիտի ասի որ... Կանի, Խաչեր, կանի... Դու թուղթը գրի. Չէ՞ ախր մեղք է էն բառալոյ էթիմը:

Միրզամը լոեց, նա վախեցավ, որ Խաչերը կդառնա և իր երեսովը կտա հանդիմանութեան և նախատինքի մուրը: Եվ տեղը կուշ եկավ: Իսկ եղբորորդին Միրզամին չէր լսում: Նա կշռադատում էր այն միակեղքը, որ ցույց էր տալիս ծերունին: Նրա համար իրոք որ դժվար էր այդ ճանապարհը: Նա այդ ուղին բռնել էր շատ անգամ և միշտ նրա առաջ ցցվել էր հաստ պարիսպը և փակ դուռը: Նա բախել էր այդ դուռը, և աղերսել, և արտասովել, և հուսահատութիւնից զայրացել էր: «Աբով-յանն ասաց ինձ,—գրում է գերմանացի բանաստեղծը,—երբ նա ինձ ուղեկցում էր դեպի էջմիածին, թե կարծեք նրա գլխին սառը շուր էին մաղում, երբ նա ոտք էր դնում հին պարիսպներից ներս: Այսպես մեծացավ նա լացի, աղոթքի և պահքի մեջ, մի վայրենի, ամեն ազնիվ բանի համար բթացած և անբնական հեշտութեանց մեջ ապականված շրջապատում»:

— Միրզա ամի, քանի անգամ գրեմ, քանի ասեմ... Աբիխը որ գնում էր Ամարաթ, դեռ էն ժամանակ խնդրեցի: Դրանից առաջ վեհափառը Ջանիբեգովի միջոցով ինձ իմաց էր արել, որ Մայրանի արձակման թուղթը կտա: Ո՛ւր է, տվե՛ց: Խերողինով Սոլոմոնի ոսկիները պիտի լինեին, որ Սինդը չհասը հաս աներ: Շամախեցի Բարխուդարը թոմա Ղորղանովի շեքերը լցրեց և էն քյորփա աղջկանը առավ: Էս էլ քանի անգամ է, որ կոնսիստորը քննում է աստժո լույսի պես պարզ էս գործը: Ասում են գրի. ախր ո՞ւմ գրեմ, ի՞նչ գրեմ...

— Այ որդի, դե խնդրելով կլինի, բա ո՞նց: Մին էլ դրիր: Բա պտի գրես, որ ուհմի գան,— և նրան համոզելու որպես վերջին միջոց, Միրզամը ձայնին տխուր շեշտ տալով ասաց:— Նանիդ էլ թամբահ արեց, թե կմտնես Խաչատուրի մոտ, կասես, որ մի ճար անի:

— Նանի՛ն... Մաջալ շեմ գտնում, որ վերևանամ տուն:

Եվ նրա աչքի առաջ պատկերացավ կուշ եկած մայրը, միշտ ինչ-որ աշխատանքի՝ օջախի առաջ, տանը, գոմում, ցախատանը,— ոտքերին հին քոշեր, միշտ ինքն իրեն խոսելիս: Ամեն ինչից դժգոհ այդ կինը կարծես դառնացել էր, որ մահը նրան մոռացել է: Ահա պառավ նանին՝ սև խորշմաներով, մի քիչ անփուլթ հագնված, ինչպես պառավները,— ավլում է բակը և անիծում հավերին, հորթերին, շանը, որ հետևում է պառավին, ինչպես սովեր և սպասում է, որ պառավը լցնի լոռաջուրը:

— Էն էլ խեղճ է, Խաչեր... Ոտքերի սանջուն էլի բռնել է: Առաջ-ներս կիրակի է, ուզում են ձին ուղարկեմ, արի:

— Հազար հոգս, հազար ցավ: Կիրակի են թողնում: Ինչպե՛կտորից հրաման կա, որ վեղոմոստները վերջացնեմ, ուղարկեմ: Վերջացնեմ, կվերևանամ:

Մյուս սենյակից ներս մտավ էմիլիան: Նա ձեռքը մեկնեց Միրզամին: Մերունին բարեկեց, ինչպես բարեում էին այդ ժամանակ՝ մատները հազիվ հպելով:

— Լա՛վ ես,— հարցրեց էմիլիան: Այդ նրա իմացած հայերեն խոսքերից մեկն էր, որ գերմանուհին արտասանում էր ճիշտ:

Միրզամը ժպտաց:

— Ինչի՞ շեռ գալի դեպի մեզ: Նանին քեզ համար փոխինձ ա մաղել...

Միրզամը և Խաչերը ծիծաղեցին: Փոխինձի հետ կապված էր մի զվարճալի դեպք, որ այն օրից Քանաքեռում հիշում էին: Սրբ առաջին անգամ նրանք մտան Քանաքեռ, նանին հյուրերի համար խաշիլ եփեց: Չիմանալով ուտելու կերպը՝ էմիլիան վառել էր շրթունքները և վեր կացել:

Գերմանուհին բնազդով զգաց, որ ծիծաղը իրեն է վերաբերում: Նա ներս քաշվեց, ինչպես խխունջը և նորից անցավ ննջարանը: Միայն ամուսինը նկատեց նրա զուսպ դժգոհութիւնը:

Խոսակցութիւնը դարձավ ուրիշ նյութերի: Միրզամը հաղորդեց, որ եղանակը շորային է, գիշերները կանաչը մրսում է: Գյուղացիները երկյուղ էին կրում երաշտից: Այնինչ շատերը դեռ չէին վճարել «օդուն-փուլին» և ոչ էլ ցորենի տասանորդը:

— Էսպես որ գնա, շատերի ծուխը կհանգչի: Հիմա որտեղի՞ց տան մի խալվար զագարակ, տասնութ խալվար ցորեն: Էնպես տուն կա, որ կրակը տաս խանձահոտ չի լինի: Ընկել են հետին չքավորութեան դուռը: Մի շաբաթ առաջ քյորթվան ստացավ թագա խարջի պուրլիկացիան. էս սոսաթին ասում է, ստիպմամբ խարջը հավաքի, տուր խաղեն: Թագասահթին ասում է, ստիպմամբ խարջը հավաքի, տուր խաղեն: Թագավորական ճանապարհի բեգլառն էլ մի կողմից: Տասը թուման վեց միլիարդն էլ պիտի աթոռահաս տանք: Մի խոսք, ամեն կողմից նեղութիւնը ժողովուրդին խեղդում է, շենք իմանում ոնց կլինի:

Նրա սիրտը ճմլվում էր, երբ նրան գանգատվում էին կոռ ու բեգլառի ծանրութիւնից: Բայց դրանով էլ վերջանում էր նրա վերաբերմունքը: Նման խոսակցութիւններ նա չէր սիրում, որովհետև ներքնապես զգում էր, որ անօգնական է նույնիսկ խորհուրդ տալու: Սակայն նա ինքը չի կարող ինքնասեր էր և չէր սիրում ուրիշներին ցույց տալ, որ ինքը չի կարող նույնիսկ խորհուրդ տալ: Նա նրանցից չէր, որոնք շոր սանուկայամբ անդամահատում են միջավայրը իբրև կենդանի մարմին, մերկացնում:

ՐՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Ակսել Բակունց— Սուրեն Ազարս- յան 3	Նամակ ուսաց թագավորին . . . 153
Մթնաձոր 28	Բրուտի տղան 165
Վանդունց Բաղին 33	Սև «Հացը» 191
Աքարում 48	Սպիտակ ձին 212
Այու սարի լանջին... 53	Պրովինցիայի մայրամուտը . . . 231
Միրանի տափ 66	Սև ցիլերի սերմնացանը . . . 244
Միրավ 78	Անձրևը
Մինա բիրին 81	Հյամբաթի ձորը 253
«Խաղաղացավ» 88	Տիգրանուհի 258
Զորբան 92	Մուրոյի «գրույցը» 262
Օրանչիա 97	Անձրևը... 267
Մրոց 101	Քեռի Դավոն 271
Մթնաձորի «լարբը» 106	Պատմվածքներ
Խոնարհ աղբիկը 115	Իվան բեյը 290
Լառ-Մարգար 127	Րևան, Րևան... 301
Ալպիական մանուշակ 135	Մայրը 324
Սև ցիլերի սերմնացանը	Նղրայրության ընկուզենիները . . 334
Միրանի փողը 144	ԿՅՈՐԵՍ 361
	ԿԱՐՄՐԱՔԱՐ 424
	ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՑԱՆ 517

Ակսել Բակունց. երկեր

АКСЕЛЬ БАКУНЦ. Сочинения.

(На армянском языке). Издательство «Советакан грох». Ереван, 1986.

Խմբագիր՝ Ս. Գ. Սահակյան, նկարիչ՝ Մ. Ռ. Սասոյան, տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճան-
նազանյան, գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան, վերստուգող սրբագրիչ՝ Է. Ա. Սեյ-
րակյան

ИВ 5545

Հանձնված է շարվածքի 28. 11. 85: Ստորագրված է տպագրության 12. 03. 1986 թ.:
Յորմատ 60X84¹/₁₆: Բուլթ՝ տպադր. № 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»:
Տպագրություն՝ բարձր, 39,06 պալմ. տպ. մամ., 39,4 պալմ. ներ. թերթ., 35,85 հրատ.
մամ.: Տպաքանակ 51.000: Պատվիր 3466: Գինը 3 ռ. 20 կոպ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական
կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфия и книжной
торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.